

ԱՅ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

www.naregatsi.org

www.naregatsi.org

1226



www.naregatsi.org

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ СКАЗКИ

V

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1966

www.naregatsi.org

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԴԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

A II 40387-91

V

891.99-34

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1966

www.naregatsi.org

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

ԱՌԱՔԵԼՑԱՆ Բ. Ն., ՋՈՐՑԱՆ Ս. Ե., ՀՈՎՆԱՆ Գ. Ն.,
ՂԱՆԱԼԱՆՑԱՆ Ա. Տ., ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՑԱՆ Կ. Ա.,
ՆԱՋԻՆՑԱՆ Ա. Մ. (գլխավոր խմբագիր)

Հատորի բնագիրը և ծանոթագրությունները
Ա. Մ. ՆԱՋԻՆՑԱՆԻ և Մ. Մ. ԳՐԻԳՈՐՑԱՆԻ (ՍՊԱՆԴԱՐՑԱՆ),
Ճախաբանը գրեց Ա. Մ. ՆԱՋԻՆՑԱՆԸ

Խմբագիր՝ Ս. Գ. ԱԲՐԱՀԱՄՑԱՆ

www.naregatsi.org

www.naregatsi.org



Բանասեր—բանահավաք ՄԱՐԳԱՐԻՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ (Սպանդարյան)

www.naregatsi.org

ՆԱԽԱԲԱՆ

«Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության V հատորում ընդգրկված են պատմական Մեծ Հայքի Արցախ նահանգի վարանդա, Ջրաբերդ, Գյուլիստան, Խաչեն, Դիզակ գավառների (այժմյան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Շուշու, Ստեփանակերտի, Մարտունու, Մարդակերտի և Հադրութի շրջանների) շատ գյուղերի ու քաղաքների հեքիաթներ։ Հատորում տեղ գտած բոլոր հեքիաթները գրի է առել բանասեր-բանահավաք Մարգարիտ Գրիգորյանը (Սպանդարյան) 1922—1953 թթ. ընթացքում, որոնք տպագրվում են առաջին անգամ։

Պատմական Արցախը դարերի ընթացքում շատ փոփոխությունների է ենթարկվել՝ հայերի կողմից կոչվելով Գարգար, Արցախ, Փոքր-Սյունիք, Խաչենք, Սև Այգի, իսկ պարսիկների ու թուրքերի կողմից՝ Ղարաբաղ։ Մինչև 387 թ. Արցախը Արշակունյան տիրապետության տակ էր, իսկ 387 թ. Հայաստանը երկու մասի բաժանումից հետո ենթարկվում էր միացյալ Աղվանքի մարզպանությանը։

IX—XIII դարերում Արցախում, որն այդ շրջանում ավելի հայտնի էր Խաչեն անունով, կային հայկական մի քանի իշխանություններ։ Դրանց իշխանական տերիտորիայի մի զգալի մասը Գագիկ Ա-ն (989—1020) գրավեց և միացրեց Անի-Շիրակի թագավորությանը։ XIV դարից Արցախում հիմնվում են մելիքություններ, որոնք տնտեսական ու քաղաքական խոշոր դեր էին կատարում ժողովրդի ինքնուրույնության պահպանման գործում։ Լեռնային

www.naregatsi.org

Ղարաբաղում հայտնի էին իրար սահմանակից հինգ մելիքություններ՝ այսպես կոչված խամսայի մելիքությունները (Գյուլիստան, Ջրաբերդ, Խաչեն, Վարանդա և Դիզակ), որոնք իրենց գոյությունը պահպանեցին մինչև XVIII դարի վերջերը։

XVI դարում, Շահ-Աբասի տիրապետության ժամանակ, Ղարաբաղը կազմում էր Գյանջայի խանության մի մասը, իսկ XVIII դարում այնտեղ հիմնվեց առանձին խանություն, որը կոչվում էր Ղարաբաղի կամ Շուշու խանություն: Արցախի բնակչությունը շատ է տուժել թուրք-պարսկական պատերազմների շրջանում (1578—1590), և ավելի ուշ՝ XVIII դարի վերջերին (1797—1798)։ Արցախի բնակչությունը մեծ զոհեր տվեց սովի և ժանտախտի համաճարակի պատճառով։ Մի շարք գյուղեր ու ավաններ ամայացան։ Բնակչության մի մասը գերեվարվեց Պարսկաստան, մի մասն էլ հարկադրված տեղահանվեց դեպի Վրաստան և Ադրբեջանի մյուս շրջանները։

XIX դարի սկզբներին Ղարաբաղի խանությունը վերջնականապես միացվեց Ռուսաստանին և ընդունեց ռուսական տիրապետությունը։

Արցախը գեղեցիկ է իր բնությամբ։ Լեռներից նշանավոր են Մռավը, Քիրսը, Քեթը, գետերից՝ Կուրը, Գարգարը, Խաչենագետը, Թարթառը, լճակներից՝ Ալհարակը, Տղրկածովը և այլն։

Արցախն ունի անտառապատ գեղեցիկ հովիտներ ու բազմատեսակ բուսականությամբ առատ դաշտեր, սառնորակ աղբյուրներ ու հանքային ջրեր։ Արցախի գյուղերում հնուց ի վեր մշակվել են ցորեն, գարի, բամբակ, զբաղվել են այգեգործությամբ ու շերամապահությամբ։ Առանձնապես ուժեղ զարգացած էր Արցախում ձիաբուծությունը։ Ղարաբաղյան նժույգները ոչնչով հետ չէին մնում փառաբանված արաբական ձիերից։ Արցախն ունի պատմական շատ հուշարձաններ, որոնց մեջ աչքի են ընկնում նշանավոր Ամարասի վանքը և Հիրհերի տաճարը Վարանդայում։ Արցախն իր ստրատեգիական դիրքով գրեթե անմատչելի մի երկիր է եղել, շրջապատված բազմաթիվ ամրոցներով ու բերդերով։

Արցախի բնակչությունը խառն է եղել։ Հայերի հետ միասին բնակություն են հաստատել աղվանները։ Երկու ժողովուրդները հաճախ միասնական ճակատով դիմագրավել են օտար նվաճողներին։

Արցախը իր ազգագրական կերպարանքով, լեզվով, ներքին ընտանեկան սովորույթներով, կենցաղով ու ապրելակերպով յու-

www.naregatsi.org

րահատուկ շատ գծեր ունի, որոնք անդրադարձում են գտել նաև նրա հեքիաթներում։ Հայ ժողովրդական հեքիաթների ընդհանուր այուժեներին զուգահեռ, Արցախի հեքիաթները ինքնատիպ երանգավորմամբ ցուցադրում են տեղի ազգաբնակչության նախնական պատկերացումներն ու ըմբռնումները՝ բնության երևույթների ու հասարակական հարաբերությունների վերաբերյալ։ Չնայած օտարերկրյա տիրապետության երկարամյա լծին, Արցախի հեքիաթներում հարազատորեն ու անաղարտ ձևով պահպանվել են ազգային հին սովորույթներն ու ծեսերը, դարերից փոխանցված բարոյական բարձր ու վսեմ ավանդները։ Արցախի հեքիաթներում զգացվում է լեռնային բնության շունչը և հերոսական այն տրամադրությունը, որը դարերի ընթացքում ուղեկից է եղել նրա պատմական ճակատագրին։ Գեղարվեստական տեսակետից Արցախի հեքիաթները տոգորված են ջերմությամբ և անկեղծ հուզով։ Այդ հեքիաթներում շատ որոշակի երևում է ժողովրդի նուրբ երգիծանքը հասարակական ու կենցաղային արարքների նկատմամբ։

Ներկա հատորի հեքիաթների լեզուն՝ լեզվաբանության մեջ ընդհանուր ճանաչում գտած Ղարաբաղի բարբառն է։ Բարբառագետների հավաստմամբ հայ բարբառների մեջ այն ամենից մեծն ու տարածվածն է։ Ղարաբաղի բարբառը քերականական ու հնչյունաբանական տեսակետից մի շարք հետքեր է պահպանել գրաբարյան շրջանից։ Ղարաբաղի բարբառի մեջ խոսվածքային բնույթի շատ տարբերություններ կան։

Բարբառագետները ելնելով ձևաբանական առանձնահատկություններից, նույնիսկ առանձնացնում են Հադրութի և Քելվան-Շաղախի խոսվածքները՝ որպես առանձին բարբառներ։ Իրողությունն այն է, որ անցյալում Արցախի տերիտորիայում հավանաբար գոյություն են ունեցել մի քանի բարբառներ, որոնք հետագայում շփվելով ու փոխազդելով միմյանց՝ ստացվել է ներկա վիճակը։

Այսպիսով, քերականական ու հնչյունական տարբերությունները հաշվի առնելով, հնարավոր չէ սահմաններ գծել կամ պատնեշներ դնել Ղարաբաղի խոսվածքների միջև։ Օրինակ, այն քերականական յուրահատկությունները, որ բնորոշ են Հադրութի գյուղերին, նկատվում են նաև Ստեփանակերտի որոշ գյուղերի խոսվածքներում (Շուշիքենդ, Քարինտակ և այլն)։ Մարտակերտի ու Մարտունու գյուղերի խոսվածքներում նույնպես կան տարբերություններ և ընդհանրություններ։

Ներկա հատորում Ղարաբաղի հեքիաթների տեղաբաշխման

www.naregatsi.org

հարցում բարբառային այդ տարբերությունը նկատի չի առնված, որովհետև այդ հնքիաթները միևնույն տերիտորիալ-աշխարհագրական և էթնիկ-ազգագրական միջավայրի արդյունքն են։

Այդ իսկ պատճառով հնարավոր է, որ բնագրերի մեջ լինեն շեղումներ ընդհանուր օրինաչափություններից։ Բոլոր դեպքերում բանահավաքը ձգտել է հնարավորին չափով հարազատորեն պահպանել ասացողի հաղորդած բարբառային օրինաչափությունները։

Անհրաժեշտ ենք համարում համառոտակի նշել Ղարաբաղի բարբառի հնչյունաբանական և քերականական առանձնահատկությունները, օգտագործելով բարբառագիտական ուսումնասիրությունների տվյալները։ Ղարաբաղի բարբառում նշանակալից տեղ են գրավում պարսկական և թուրքական փոխառությունները, իսկ XVIII դարից հետո՝ նաև ռուսական փոխառությունները։ Իր բաղաձայնական սիստեմով այն պատկանում է երկաստիճան ձայնեղազուրկ բարբառների խմբին։ Հատկանշական է այն երևույթը, որ բարբառում բացակայում է Ֆ հնչյունը, որին փոխարինում է Փ-ն։

Ղարաբաղի բարբառում լայնորեն տարածված է բաղաձայնների քմայնացումը՝ կՅ, քՅ, գՅ (կյառնը, քյնալ, հենգյ և այլն)։ Քմայնացման (փափկացման) են ենթարկվում նաև Ս, (օ) (Ո), Ու ձայնավորները (պՅը, ծՅր, ուրՅուգյՅուն)։

Արդի գրական լեզվի համեմատությամբ Ղարաբաղի բարբառի հնչյունական կազմը հետևյալ պատկերն է ներկայացնում.

Ձայնավորներից՝ ա-ի դիմաց Ղարաբաղի բարբառը հաճախ ունենում է ա, ա, ո, ու, ե. օրինակ՝ հաց>հաց, լավ>լաւ, գրալ>քրթՅալ, զոքանչ>զեմքուչ, բամբակ> պեմբակ։

ե (է)-ի դիմաց հաճախ ունենում է՝ ի, ը, ա, ու. օրինակ՝ աճելի>ճիլի, կեսօր>քյըսօր, մեջ>մաչ, լեզու> լիւզու և այլն։

Ի-ին հաճախ համապատասխանում է ե, ու, ը, օրինակ՝ նինջ> նենչ, կարմիր>կյարմուր, ճիպոտ>ճըպատ։

Ո-ին բառասկզբում համապատասխանում են ը, օ (ո) ձայնավորները. օրինակ՝ ողողել>ըղողել, ոռնալ>օռնալ, եզակի դեպքերում՝ ճո, ճը, վրե հնչյունակապակցությունները (ուր ճ-ն հավելում է). օրինակ՝ ոգի > հոքյի, ոլորել > հրլՅորել, ոչխար> վրեխճար։

Ու-ն մեծ մասամբ դառնում է օ (ո), օրինակ՝ թուխս> թոխս, թութ>թոթ, ուժ>օժ, տուն>տոն և այլն։

Ու-ի դիմաց բարբառը երբեմն ունի ու, ո, ը. օրինակ՝

www.naregatsi.org

ուլունք>հուլունքյ, ուլ>հուլ, ուրախություն> ուրխութուն, ուղեղ> իրղող և այլն։

Ո(օ)-ին երբեմն համապատասխանում են ու, ա, ո, ը։ Օրինակ՝ գոմեշ> կյումաշ, գոմ>կյում, խոռով>խըռավ, ձոր>ծոր, հոտ>վըետ, կով>կավ։

Ը ձայնավորից առաջ բառասկզբում հաճախ ավելանում է որևէ բաղաձայն, սովորաբար հ. ընկեր> հընգեր, ընտրել>հընդրել։

Բաղաձայնների առթիվ պետք է նկատել, որ գրական լեզվի ձայնեղների դիմաց Ղարաբաղի բարբառը բառասկզբում, հաճախ նաև բառամիջում ու բառավերջում, գործածում է խուլեր։ Բաղաձայնների համակարգում կան հետևյալ հիմնական տարբերությունները ժամանակակից գրական հայերենի համեմատությամբ.

Բ>պ, փ. օրինակ՝ բերան>պերան, բռնել>փըռնել և այլն։

Գ>կ, կց, ք, գց. օրինակ՝ գիժ>կյիժ, գերան>կյերան, գդալ>իրթըլ, գնալ>իյնալ, հինգ>հենգյ և այլն։

Դ>տ, թ. օրինակ՝ դանակ>տանակ (տենակ), դուր>տուր, դմակ>տըմակ, բուրդ>պուրթ։

Ջ>ծ, ց, թ. օրինակ՝ ձագ>ծեքյ, ձու>ծու, բարձր>պեցիր, խուրձ>խորթըն։

Ջ>ճ, չ, շ. օրինակ՝ ջուր>ճուր, արջ>արչ, մեջք>մաշկ։

Պ>երբեմն փ, բ. օրինակ՝ պսակել>փսակել, պիտի>բիդի, պատարագ>բադարաքյ։

Տ>երբեմն դ, թ. օրինակ՝ ընտրել>հընդրել, տաքանալ> թըքանալ։

կ>գ, գց, ք, ց. օրինակ՝ ականջ> անգուճ, ծաղիկ>ծաղեգյ, կշեռք>իրշեռք, կեղտոտ>յեխտուտ և այլն։

ծ>չ, ս. օրինակ՝ ածուխ>անճող, ծածկել>ծասկել։

ճ>չ, չ. օրինակ՝ ճանճ>ճանչ, կճապ>քըչեվ։

թ>երբեմն տ. օրինակ՝ հաղթել>հախտել։

չ>շ. օրինակ՝ աչքեր>աշկեր, քաչկեր>քաշկեր։

ղ>խ. օրինակ՝ թուղթ> թոխտ և այլն։

ց>ս, ճ. օրինակ՝ լվացք>լվասկ, ցախ>ճեխ։

Տն կապակցությանը երբեմն համապատասխանում է նն, իսկ թս կապակցությանը՝ երբեմն ցց. օրինակ՝ վոտն>վրեննը, վաքսուն> վացցուն և այլն։

Ձայնավորների և բաղաձայնների սույն փոփոխությունները հաճախ տարբեր խոսվածքներում խախտվում են։

Ղարաբաղի բարբառում շեշտը դրվում է նախավերջին վանկի

www.naregatsi.org

վրա, բայց կենդանի խոսքում հանդիպում են կրկնակի շեշտադրություններ և բազմաթիվ շեղումներ, որոնք կապված են խոսքի էմոցիոնալ դրսևորման նրբերանգների հետ: Ինչպես գրական լեզվում ու մյուս բարբառներում, Ղարաբաղի բարբառում էլ գոյություն ունեն հնչյունների անկում, հավելում և այլն:

Ձևաբանության տեսակետից Ղարաբաղի բարբառում ուշագրավ է հոգնակերտ մասնիկների առատությունը: Հոլովման սիստեմում բացառական հոլովը հոլովական աև վերջավորությունից բացի կազմվում է նաև աճա և նրեստա մասնիկների կցմամբ:

Խոնարհման մեջ առատ են երկրորդական բաղադրյալ ժամանակները: Ղարաբաղի բարբառում որպես շաղկապներ հանդես են գալիս՝ նաև (և), ու, յա (կամ), քա (թե), վեր (վրեր, վար):

Սույն հատորի հեքիաթներում միշտ չէ, որ պահպանվում են Ղարաբաղի բարբառի համար վերը նշված հնչյունական օրինաչափությունները. ժամանակը իր դերը խաղացել է բարբառի աղավաղման գործում: Բանահավաքն աշխատել է գոնե պահպանել միօրինակություն նույն ասացողի հաղորդած նյութերի մեջ: Շեղումներն անխուսափելի են տարբեր բնակավայրերի ու տարբեր ասացողների նյութերում:

Ինչպես նախորդ հատորներում, այս հատորում ևս պահպանված են «Հայ ժողովրդական հեքիաթներին» գիտական հրատարակության համար ընդունված տեքստաբանական ընդհանուր սկզբունքները.

1. Պահպանված է հեքիաթների պատումների ամբողջականությունը: Բնագրերի նկատմամբ խմբագրական որևէ փոփոխում (հապավում, հավելում և այլն) չի կատարված: Ասացողների «սխալները»՝ պատմելու ընթացքում սյուժետային գծից խոտորումներ, դեպքերի, դեմքերի, թվերի շփոթում ու անհամաձայնություն և այլն, չեն ուղղված, բայց դրանց մասին նշված է ծանոթության կարգով: Հեքիաթների վերնագրերը թողնված են այնպես, ինչպես սկզբնաղբյուրներումն են:

2. Հեքիաթների լեզուն չի փոփոխված, այսինքն՝ թողնված է այնպես, ինչպես գրի է առել բանահավաքը ասացողներից: Նյութերը գրված են նոր ուղղագրությամբ: Կոնկրետ յուրաքանչյուր ասացողի հաղորդած նյութի բնագրում բառերի գրության խայտաբղետություն չստեղծելու համար միօրինակ են դարձված նույն բառերի գրության տարբեր ձևերը:

3. Ճշտված և ուղղված են բնագրերի տրոհության և առոգա-

www.naregatsi.org

նության նշանները, բնագրերի պարբերությունների ու երկախոսությունների բաժանումը։

Բացի հատուկ անուններից, բնագրերում մեծատառով են գրված նաև կենդանական ու բուսական աշխարհի առանձին ներկայացուցիչների անունները և հեքիաթներում գործող հերոսներին տրված մականունները։

4. Սկզբնաղբյուրներում հանդիպող՝ բանահավաքների ընդմիջարկումները (բառերի և արտահայտությունների բացատրություններ, առանձին դեպքերի ու դրվագների մեկնաբանություններ և այլն) առանձնացված են բուն բնագրից և դրված են էջատակին՝ համապատասխան ծանոթագրությամբ։ Բոլոր տեսակի ճշտումների, բացատրությունների ու ծանոթագրությունների դեպքում նշված է՝ Ծ. Բ. (ծանոթություն բանահավաքի), Ծ. Կ. (ծանոթություն կազմողի), Ծ. Ա. (ծանոթություն ասացողի)։

Այս ընդհանուր սկզբունքների ու կանոնների կիրառմանը զուգընթաց հաշվի են առնված նաև սույն հատորի նյութերի առանձնահատկությունները։

Հաշվի առնելով Ղարաբաղի բարբառում որոշ ձայնավորների ու բաղաձայնների քմայնացումը, աշխատել ենք պահպանել այդ երևույթը՝ համապատասխան հիշյալ ձայնավորների վերը նշանակելով երկու կետ (ӧ, ӱ, ӧւ), իսկ քմայնացած բաղաձայններին կից դնելով յ կիսաձայնը։ Սովորաբար բառամիջում լսվող ը հնչյունը չի գրվում, սակայն սույն հատորի նյութերում մեծ մասամբ պահպանված է՝ Ղարաբաղի բարբառի արտասանական յուրահատկությունները արտահայտելու համար։

Արցախի բնակավայրերից հավաքել ու գրի են առնվել հեքիաթներ ավելի վաղ շրջանից, որոնցից մի քանի նմուշներ տպագրվել են անցյալում։ Հետագայում նոր նյութեր են հավաքվել այլ բանահավաքների կողմից, բայց ցանկանալով այս հատորի միասնականությունը և ամբողջականությունը չխախտել, որոշվեց այդ բոլոր նյութերը ընդգրկել հաջորդ հատորում։

«Հայ ժողովրդական հեքիաթներ» 5-րդ հատորը, ըստ կառուցվածքի, ներկայացնում է հետևյալ պատկերը։

Հիմնական բնագրերի տակ ներկայացված հեքիաթները՝ հաջորդական կարգով խմբավորված են ըստ շրջանների (Շուշի, Ստեփանակերտ, Մարդակերտ, Մարտունի, Հադրութ) և նույնիսկ ըստ ասացողների։ Այդպիսի խմբավորում կատարելով՝ նպատակ ենք ունեցել նեղ սահմաններում ևս պահպանել նյութերի ազգագրական-

www.naregatsi.org

տեղագրական և լեզվա-գեղարվեստական միասնությունն ու ամբողջականությունը։ Ամեն մի բնակավայրի հեքիաթները ներքին կարգով դասավորված են ըստ բնույթի՝ սկզբում ներկայացնելով կախարդական (հրաշապատում), ապա կենցաղային-իրապատում հեքիաթները։

Հավելված բաժնում տեղավորված են այն նյութերը, որոնք հեքիաթի ժանրին ձուլված զրույցներ, լեգենդներ ու ավանդություններ են. դրանք արդեն կորցրել են իրենց ժանրային նախկին կերպարանքը։ Հավելված բաժնում տեղ են գտել նաև այն հեքիաթները, որոնք բովանդակության ու գեղարվեստական-արտահայտչական տեսակետից համեմատաբար լիարժեք չեն հիմնական բնագրերի նյութերին և կամ աննշան փոփոխությամբ նրանց տարբերակներն են։

Նանոբագրությունների մեջ հերթականությամբ լուսաբանվում է հատորում տեղ գտած բոլոր հեքիաթների գրառման պատմությունը։

Բառարանն ընդգրկում է հատորում տեղ գտած բարբառային դժվար հասկանալի և փոխառյալ բառերի բացատրությունը։

Ցանկերը ներկայացնում են հատորում պարունակվող հեքիաթները, ըստ սյուժետային խմբերի, տեղի և ասացողների, այբբենական կարգով, ինչպես նաև հեքիաթների մեջ եղած հատուկ անուններն ու առարկանեռ։

www.naregatsi.org

ԱՐՑԱԽ



www.naregatsi.org

www.naregatsi.org



1. ՎՐԵՍԿԵ ԽԸՆՁՈՐԸ

Ինունմ ա, չինունմ մին թաքավեր։ Էտ թաքավերին ինունմ ա իրեք տըղա, իրեքըն էլ մինը մինան ղաշանգյ, մինը մինան ղոչչաղ, ամմա պուճուր տըղան լոխճան ղոչչաղըն ա ինունմ, համ էլ լոխճան խելունքը։

Ըտրանց ինունմ ա մին գյունլլու բաղ։ Բաղ, հի՞նչ բա՞ղ, վրեր աշխարքիս ամմեն ջուռա պըտուղ ըտրա մաչին կար, աշխարքիս ամմեն ջուռա ծաղիկնին ըտրեղ փըսնում ար, վրեսը տամ չորս ղոլին։ Նախշուն-նախշուն, ռանգյ-ռանգյ ծըտերը ծլվըլում ին, ունրանց քախծըր ծենավը մարթի սրերտ փառավրե՛րըմ։

Ամմա էտ գյունլլու բաղին մաչին լոխճան կյեղեցիկը, լոխճան ղաշանգյը մին վրեսկե խընձորի ծառ ար։ Մին Թըմա՛շա, մին պատիժ պրեն, մին արմա՛նք... Էտ խընձորին ծառը վրեր ծաղկըմ չա՛ր, ունրանց պեց կյարմունր նան սրպտրկռանգյ ծաղիկներավը վրեսը աշխարքըս օնըմ ար... Մարթ ասըմ ար օտիմ վրեչ, խըմիմ վրեչ, էտ խընձորին ծաղկին վրեսը քաշիմ... Ամմա դե հի՞նչ կանիս, վրեր էտ խընձորնին հրսնըմ ար մըչծ-մըչծ, ղաշանգյ, պըծըպածին տալիս, ինքն էլ վրեսկե, խնձորներավ լըցնըմ, քըշերը կյամ ին, կյուղանըմ, էլ թողըմ չին, թա տաըը մինն էլ ա, տրեսնա։ Վրեչ թա մինաւկ թաքավերը, լհա էն խրեղճ բաղվանչին, վրեր պահալ ա, մըծըցրալ, մինը տրեսնա։ Իտի ամմեն տարի կյամ ին, կյուղանըմ։

Վերչը մին օր թաքավերը կանչըմ ա տըղորցը ունրան կոշտը, ասըմ. — Ա՛ խոխերք, ա՛ ասլանի ճըտեր բալեքյ, ախեր իստի-

www.naregatsi.org

պըեն չի ինիլ, վրեր ամմեն տարի կյան մրեր բաղին վրեսկե խընձոր քաղին, տանին։ Յրեկեքյ մին թահր անինք, մին պըեն անինք, էլ թողինք վրեչ, վրեր կյան կյուղանան։

Մրեծ տըղան ասըմ ա. — Ա՛ հայր, մունք էլ ընք մաթաչ մընացալ, մրեր անըմին հետի էլ չի լավ, թող էս քըշեր յրես քյինիմ ղարավուլ կենամ, տրեսնամ, էտ հո՞ւ վա կյամ մրեր վրեսկե խընձորը տանըմ։

Էն մին ղոլան միշնակ տըղան ասըմ ա. — Հազըր յրես կքյինիմ իլի՞։

Պուճուրըն էլ թա. — Ջէ, յրես կըքյինիմ, խե՞, յրես ծըզանա պակա՞ս ը՞մ։

Թաքավերն ասըմ ա. — Թող ծրեր մրեծ ախպերը քյինի՛, տուք կացեք։

Մրեծ ախպերը ուրան զենքը-զրահը կապըմ ա, ուրուդյունատեմ քյընըմ բաղըմը էտ վրսկե խընձորին տակին ղարավուլ քաշըմ, վրեր կյողին փըռնի, մրեչան էրկու անի՛։ Քըշերը ամառնան քըշեր ա ինում, երգինքը ասթխերավ լի՛ քյը, ծրլծրլը՛մ, սարերան հով ա կյամ ծառերը ըրորըմ, ասիս լհա ասըմ ըն. «Քո՛ն իլ, ա՛ տըղա, քո՛ն իլ»։ Ամմա թաքավերին մրեծ տըղան քոն չի ինում։ Անց ա կրենըմ մին խիլլա վախտ, վախտը վեշ մին պըենի եշըմ չի, անց ա կրենըմ, տրեռնըմ ա քըշերվա կեսը։ Քըշերվա կեսանը տրենը թաքավերին մրեծ տըղին քոնը տանըմ ա։ Հիշքան օղըմ ա քոն չինի, էլհա ամաչ չի կյամ, տա քընավ ա ընցնըմ։

Ուռուբանա եր ա կրենըմ, տրեսնըմ վրեսկե խընձորան մին խիլլա քաղած, տարած։

Հըմընչիլավ, իրեսը սրեվ, քյընըմ ա հորը կոշտը, ասըմ. — Ա՛ հայր, պա ասել չը՞ս, քըշերվա կեսին քընավ ըմ ընցալ, եկալ ըն խընձորը քաղալ, տարալ։

Հայրը կըզնըվըմ ա, ասըմ. — Դե, քյինա աշկաս հեռու, քյըղանա պըեն չի տունս կյալ, լհա մրեծ-մրեծ խոսըմ ըս, քյըեզ թարիփ անըմ, անըմըտ կա, ըմանըմըտ չիկա՛...

Էն մին քըշերը միշնակ տըղին ա ղարկըմ, վրեր վրեսկե խընձորին ղարավուլ քաշի։

Միշնակ տըղան ուրան զենքերը յոր ա օնըմ, քյընըմ։ Քըշերը ղով, ծառերը ըրորվըմ, ասթխերը թա մրեծ, թա պուճուր լոխ տունս եկած, վարթերին վրեսը ընդեղերք ընգած, բունչբունչը յրերքըմ... Էտ տըղան միշև քըշերին կեսը կանանչ խուտերըմը թեքյ ընգած երգյինքին ա եշըմ, ամմա կես քըշերանը եսը քոնը տանըմ

www.naregatsi.org

ա, հիշքան օղըմ ա, թա քոն չինի, կարըմ չի, աշկերը ինքյը-ինքյը հուի ա կյա՛մ...

Ուտուբանա վրեր եր ա կրենըմ, տրեսնըմ ա էլհա եկած, մին խիլլա խրնձոր քաղած։

Տա մրտածըմ ա, թա հո՞ւնց քյինի ուրան հորը իրեսին եշի, հաճուե ա, մին էլ ճարը կըտրած քյրնըմ ա, հորրն ասըմ. — Ա՛ հայր, դե ինձ հինչ օղըմ ըս ըրա, հինչ պատիժ օղըմ ըս տո, կես քըշերին քոնըս տարալ ա, կըրեցալ չըմ ինձ պահիմ, դե կրնեբիս։

Հայրը կըղնըվըմ ա, ասըմ. — Տու նան քու մրեծ ախպերըտ լհա մին ըք, ճոխտըտ էլ թունի հարա՛յ ըք, դե համոթ ծրեզ հետի, դե տու վէլ աշկաս կորի... Մըղափուն էն հաց, վրեր տուք ըք կրեբա՛լ...

Էն մին դոնըմըն էլ թաքավերին պուճուր տրղան ա քյրնըմ ղարավուլ քաշըմ, էլհա ուրան զենքը-զրահը եր կալած։ Քյնըմ ա թուշ, էտ ծառին քըշտի մին քուլի տակի խե՛ լաւ կանանչ խոտ կար, ընդեղ պըրանվըմ։ Քըշեր, հի՛նչ քըշե՛ր, ասթխերը կըթկաթըմ օքըստոսի քըշեր՛, երգյինքյը ծիր-կաթին կյոտեն կապած, լուսնընգյան սարին քըմական տունս կյալիս, հունցու մին թաղա հարս, գյարդակին քըմական տունս կյալիս, ուրան լուսին տակին ծառերին տիրևնին փլըստրատին տալիս, մոք-փուրուզա քըշե՛ր, հովը մին ղոլան ա քոն պըերըմ, ծաղիկներին վրեսը՝ մին ղոլան։

Կես քըշերը վրեր անց ա կենըմ, թաքավերին պուճուր տրղին քոնը տանըմ ա։ Հիշքան անըմ ա վրեր քոն չինի, էլհա քոնը տանըմ ա։ Տա տենակը ջուբան հանըմ ա, մաննը կըտրըմ, յրան աղ ածըմ, վրեր հրեռան քոնը տանե վրեչ։ Մին էլ ա տրեսնըմ, վրեր մինը թըմփթըմփալավ, զըմփզըմփալավ, դղըրդալավ, մըրթմըրթալավ էս ա կյամ ա։ Նշըմ ա տրեսնըմ մին մրեծ, օխտը կըլխանե դոլ ա, կյամ ա, թա վրեսկե խրնձորնին կյուղանա։

Էտ տրղան եր ա թըռչըմ տրեղան, թորավը թըխըմ, չորս կըլոխը կըտրըմ, մրնըմ ա իրեք կըլոխը։ Էտ դոլը փախչըմ ա, քյրնըմ։

Թաքավերին պուճուր տրղան վախըմ չի, ըտրա հրետան քյրնըմ ա, մին գյոհ հետքը կուրցունում ա, ամմա մին էլ ճարըմ ա, ոռնին կըթկաթած տրեղերավը քյրնըմ ա, տրեսնըմ, էտ դոլը նի մրտավ մին խոր վրեր։ Թաքավերին տրղան ետ ա տրեռնըմ ուրանց բաղը, վրեսկե խրնձորնին հրվաքըմ, պերըմ ուրանց պալատը։

Թաքավերը տրեսնըմ ա, ուրխանըմ, տրղին իրեսան պաչըմ, ասըմ. — Շատ ապրիս, բալաս, թա իմ թախտըս ավադ անիս, տու յրս ընելու, մրնացածը մին կապեկ չծժին։

www.naregatsi.org

էքյսը ըխպըրքյ-ախպերքյ հրվաքվըմ ըն, վրեր քյինին դովին ըսպանին։ Ընդրանք ուրիշնց նըհետ պաշար, զենք-զըրահ, քյանդիր, տես-տեն ըն յոր օնըմ, քյընըմ։

Էլհա ճընապարին վրեղին յրան ասնին կաթերին եշիլավ քյընըմ ըն, քյընըմ, հրանըմ էտ խոր վերին։

Մրեծ ախպերն ասըմ ա. — Առաչ ինձ կախ տվիք։

Մրեծ ախպորը մրեշկան քյանդիր ըն կապըմ, կախ տամ։ Հաւլա վրերին կեսին հրսած վրեչ, տա ճրղճրղոց ա տամ, թա. — էրվեցի՛, էրվեցի՛, տունս պրերիք, տունս պրերի՛ք։

Ախպերքը տունս ըն պրերըմ։

Ընդրանա ետը միշնակ ախպորը մրեշկան ըն կապըմ, վրերին մրեչան կախ տամ։ Հաւլա վրերին կեսը հրսած վրեչ, բրղբրղոց ա տամ. — Վա՛յ, հարա՛յ, էրվեցի՛, էրվեցի՛, տունս պրերիք, շուտ ըրի՛ք, վա՛յ էրվեցի՛։

Ախպերքը տունս ըն պրերըմ։ Նորաթը կյամ ա պուճուր ախպորը։ Պուճուր ախպերը ասըմ ա. — Հիշքան յրես ասիմ՝ էրվեցի՛, էրվեցի՛, ինձ տունս չօնիքյ։

Պրերըմ ըն քյանդիրը ընտրա մրեշկան պենդ կապըմ, կախ տամ։ Հաւլա վրերին կեսին չրհրսած, տա ծեն ա տամ. — Վա՛յ ըրվեցի՛, ըրվեցի՛, հընեցիք ինձ, ըրվեցի՛, վա՛յ։

Ամմա ախպերքը հանըմ չըն, քըշըցնըմ ըն մինչև վերին տակը։

Թաքավերին պուճուր տըղան տրեսնըմ ա ուրիշն տիմացը մին տոռնը։ Էտ տոռնը պրենըմ ա, նի մընննըմ, տրեսնըմ էտ օթախին վրեսկե թախտին մին կյեղեցիկ ախճիգյ նըստած, ընդրա ծունյնին էլ դովը կըլոխը տիրած քոն ա իլալ։ Ըտրանց կոխկին էլ մին արծաթի ըստող, ըտրա յրան էլ մին վրեսկե ղափազըմ մին զառ բըլբռնել։

Էտ ախճիգյը վրեր տրեսնըմ ա թաքավերին պուճուր տըղին, ասըմ ա. — Ա՛յ ղաշանգյ տըղա, պա տու մեխկը չը՞ս, վրեր յրեկալ ըս ըստրեղ, շուտ ըրա ետ տրեռ, թա չէ դովը քընուտրեղա եր կը կենա, քյրեզ կոլ տա։

Թաքավերին պուճուր տըղան ասըմ ա. — Յրես դևան վախըմ չըմ, եր կըցըրու, թող կյա նհետս կըռըեվ անի։

Ախճիգյը տրեսնըմ ա, վրեր էտ տըղան վախող ունչուվար չի, ճարը կըտրած՝ դովին եր ա կըցընըմ։

Դովը օզըմ ա, թա էտ տըղին կոլ տա՞, ամմա էտ տըղան թորավը մին հենց թըխըմ ա, վրեր էտ դովին էն մընացած իրեք կըլոխը մին դոնըմ ա կըտրըմ։ Ըտրանա ետը թաքավերին պուճուր տըղան նի յա մընննըմ էտ օթախին մրեչավը պեցվող մին օրիշ օթախ,

www.naregatsi.org

տրեսնըմ վրեսկե թախտին յրա մին ընդրանա էլ իվիլ կյեղեցիկ ախճիգյա նըստած, էնքան կյեղեցիկ, վրեր արևին ասըմ ա. «Տու տունա մի կյալ, յրես ըմ տունա կյալուա։ Ըտրա ծընգնին ուրան կըլինը տըրած՝ քոն ա իլալ մին դովվ, վրեր եկողին սըերտը կըճաքի, էնքան անճոռնի ար, ինքըն էլ քառասուն կըլխանի։

Էտ ախճիգյը վրեր տրեսնըմ ա թաքավերին պուճուր տըղին, ասըմ ա.—Այ՛, խրեղճ տըղա, էտ հո՞ւնց ըստըեղ ընգիր, շունտ ըրա փախ, թա չէ դովը եր կըկենա, քյեզ կոլ տա։

Թաքավերին պուճուր տըղան ասըմ ա. — Յրես ըտրանա վախողը չըմ, եր կըցըրու, ուրուր նըրհետ կըռըեվ անինքյ։

Ախճիգյը ճարը կըտրած եր ա կըցընըմ։ Ըսկըսըմ ըն ուրուր նըրհետ կըռըեվ անելը, ըտրանց կըռվան երգյիրը տուրուր ա կյամ, երգյինքը թոզի թըխպերավ ծասկվըմ։ Ախրը-վրերչը թաքավերին տըղան ուրան թորավը էն քառասուն կըլինխ էլ կըտորըմ ա, դովվին եր քըցըմ։ Ախճիգյը ուրխանըմ ա, վրեր ուրան ազադից էտ դովվին ճանգյան։

Համին էտ օթախին մըեչավը մին օրիշ օթախ էլ ա պըենվըմ։ Թաքավերին տըղան նի յա մընընըմ էտ օթախը, տրեսնըմ, էլհա վրեսկե թախտին նըստալ ա մին օրիշ ախճիգյ, վրեր ըտրա քըշտին էն էրկունը մին ղոզ, էնքան կյեղեցիկ, սիպտակ ճըրաքյ, արևի լունա, աշխարքիս օխտը կյեղեցկութունը։

Ընդրա քըշտին տիրած վրեսկե ըստուլին յրան, մին վրեսկե ղամիաղըմ զառ բունչրունչը յրերք ա ասըմ։ Քըռասունըրիրք կըլխանե մին դովվ, ծրեռքը չանին տակավը տիրած՝ էտ ըխճըկանը ծրնգնին քոն ա իլալ։

Ախճիգյը վրեր էտ տըղին տրեսնըմ ա, ասըմ ա. — Ա՛յ ջահիլ տըղա, պա տու մըեխկը չը՞ս, վրեր քու վրեննավըտ, քու ծրեռքավըտ, յրեկալ ըս էս դովվին կոշտը, վրեր քյըեզ կոլ տա։ Շու՛տ ըրա, փախի՛, քյինի՛։

Թաքավերին տըղան ասըմ ա.—Յրես դովան վախողը չըմ, զուրթընըցուրու, վրեր նըրհետը կըռըեվ անիմ։

Ախճիգյը տրեսնըմ ա վրեր ճար չիկա, ասըմ ա. — Ա՛յ ղոզչաղ տըղա, դե վրեր իտի յա, մըետըտ պահի, վրեր դովվին կըլխընին կըտրիս, ինքյը ասի. «Մին էլ թըխի», էլ թըխիս վեչ, թա չէ դովը սըղանալու յա, քյըեզ կոլ տա։

Ասըմ ա պըրծընըմ, դովվին եր կըցընըմ։ Կըռըեվ անիլը ըսկըսըմ ըն։

Ընտրանց կըռվան աշխարքըս դղըրդըմ ա, երգյինքը ըրոտըմ։

www.naregatsi.org

Թաքավերին տղան մին-մին դիվին կըլխնին կտրում ա, վերչի կլինան էլ վրեր կըտրըմ ա, դիվը եր ա ընգնըմ, համ էլ ասըմ.— Մին է՛լ թըխի, մին է՛լ թըխի։

Թաքավերին պուճուր տղան ասըմ ա. — Յրես իմ մոր փորան մին հրետ ըմ ծընվալ, էլ թըխիլ չըմ։

Դիվը ըստակըմ ա։ Թաքավերին տղան ճռնոտ թորը սըրփըմ ա, տընըմ ուրան տրեղը, կյամ նստըմ էտ ըխճըկանը կոխկին։ Ախճիգյը ուրխոթունան խըտտըմ ա ընդրան, վրեր ուրան ազադալ ա դիվին ճանգյերիան։

Ըտրանա ետը էտ ախճիգյը նան թաքավերին տղան, քյընըմ ըն էն մընացած օթախնին, էտ դևերի վրեսկե-արծաթը, հարըստոթունը լոխ յոր օնըմ, վրեսկե խընձորնեն էլ յոր օնըմ, ետ տրեռնըմ, կյամ էտ էրկու ըխճըկանը կոշտը, ընդրանց էլ յոր օնըմ, ընդրանց ստուին զոռ բուլբուլնին էլ յոր օնըմ ուրանց վրեսկե ղափազավը, ընգնըմ քունջըպոճախ, լոխ հրվաքըմ, կյամ էտ վրերին մրեչը։

Թաքավերին տղան ախպորցը կանչըմ ա, վրեր քյանդիրը կախ տան։ Կախ ըն տամ։ Առաչ հանըմ ըն էն առաչի օթախին կյեղեցիկ ըխճըկանը, ուրան զոռ բուլբուլավը, ուրան օթախին հարըստոթունավը, ետավ հանըմ ըն էրկունչի օթախին ըխճըկանը, ուրան զոռ բուլբուլավը, ուրան հարըստոթունավը։ Նորաթը կյամ ա իրեքինչի օթախին ըխճըկանը։

Ախճիգյն ասըմ ա. — Առաչ տու տուն եկ, ետավ յրես։

— Չէ՛, առաչ տո՛ւ տուն եկ, ետավ յրես։

— Ախեր յրես գյուղում ըմ, վրեր քու ախպերք քյրեզ տուս չըն օնելու, քյրեզ նախանձվելու չըն, մընալու յրս էս վրերըմը։ Դե վրեր իտի յա, էս ա ըստրեղ մին տոռնը կա, պեց կանիս, կտրեսնաս ընդեղ էրկու վրեչխար ուրուր նըհետ կըռրեվ ըն անըմ, ուրուր ղոչի չըն տամ։ Շուտ կանիս նըստիս սիպտակ վեչխարին յըրան, վրեր սրեվ վեչխարին յըրան նըստեցիր, քյրեզ սրեվ աշխարքըն ա տանելու, ամմա վրեր սիպտակ վրեչխարին յըրան նստեցիր, քյրեզ լուս աշխարքըն ա տանելու։

Էտ լուսի պատառ ախճիգյը ուրան մաննան մտանին հանըմ ա, տամ էս տըղին, ասըմ. — Ինք առ էս մըտանին, վրեր նրեղ տրեղ ընգնիս, քյրեզ քյոմաձյ կանի։

Ասըմ ա, պըրծընըմ, թաքավերին պուճուր տղան քյանդիրը ըտրա մրեչկան կապըմ ա, եր հանըմ, ետավ էլ ըտրա զոռ բուլբուլը, վրեսկե ղափազըմ տիրած, յրետավ էլ ուրան օթախին վրեսկեն, բըռըլյանդը, իլած-չիլածը լոխ եր հանըմ, ինքյը մընըմ վրե-

www.naregatsi.org

րըմը, ըսպասըմ, վրեր էս ա ախպերքը քյանդիրը կախ կըտան, վրեր ինքն էլ տուս կյա։ Ամմա ախպերքը քյանդիրը կախ չըն տամ, ուրուր նըհետ խոսկ ըն կապըմ, վրեր պուճուր ախպորը վրերըմը թողին, էտքան վրեսկեն, էտքան հարըստոթունը, էտ իրեք ախճիգյը յոր օնին, տանին պալատը, ուրանց հորը ասին, վրեր ուրանք ըն դովին ըսպանալ, ուրանք ըն էտքան հարըստոթունը, էտ ըխճըկերքը, զառ բուլբուլը, լոխ հինչու կա, ուրանք ըն պերալ, պուճուր ախպորըն էլ դովը կոլ ա տըվալ։ Իտի էլ անըմ ըն։

Ըտրանց թողինք ուրանց ճընապան քյինին, տրեղ հըսնին, կյանք թաքավերին պուճուր տըղան խոսինք։

Էտ տըղան վրեր տրեսնըմ ա, ախպերքը ուրան թողալ ըն, ետ ա տրեսնըմ վրերին մաչին տես եշըմ, տեն եշըմ, տրեսնըմ մին տոռնը։ Պննըմ ա տրեսնըմ երկու ղոչ էն ըն ուրուր պըզըհարըմ, ուրուր ղոչի տամ։ Էս տըղան հիշքան օզըմ ա սիպտակ ղոչին յըրան նըստի, ամաչ չի կյամ, սրեվ ղոչը տակըն ա տամ, էլհա հիշքան օզըմ ա սիպտակ ղոչին յըրան նըստի, սրեվ ղոչը տակըն ա տամ, ըտրան տանըմ սրեվ աշխարքը, ըշտեղ օրըքըշիր միշտ էլ մըթեն ա։ Էտ տըղան շատ ա տըխըրվըմ, քյեփը կոտրըմ ա, ամմա դե, էլ հի՞նչ, ընցածը ընցալ ա. ճարը կըտրած քյընըմ ա տրեսնա մին տրեղ կըճարի՞, վրեր ընդեղ պատառ դինջանա։

Տես ա ընգնըմ, տեն ա ընգնըմ, վերչը մին պառավի տոն ա ճարըմ։ Պառավը օզըմ չար էտ տըղին ընթունի, ամմա էտ տըղան ըտրան մին հափուռ վրեսկե յա տամ, պառավը ընթունում ա։

Թաքավերին պուճուր տըղան խե շատ ծըրավըմ ա։ Ասըմ ա. — Ա՛յա, մին մի փառչ, յա մին դուչա ճուր տո խըմիմ, ծարավ ճիգյըրս էրվըմ ա։

Պառավը ասըմ ա. — Ա՛ բալա, ճուր չօնինք։

Ասըմ ա. — Լհա՛ մին խրեգյ, մին ջամ ճուր տո։

Ասըմ ա. — Ախեր վրեր ճուր չիկա, ըշտըղա՞ տամ։

Վրեր տրեսնըմ ա, ճար չիկա, էտ պառավը դուչին մաչին թաքուն կյուզուում ա, պըներըմ տամ էտ տըղին։ Տըղան խըմըմ ա, տրեսնում ախեր էտ ճուր չի՞։ Ասըմ ա. — Ա՛յա, էտ հի՞նչ տըվիր ինձ, ախեր էտ ճուր չար։

Ասըմ ա. — Այան քյըրեղ մատաղ, ըստուծանա թաքուն չի, քյըզանա հի՞նչ թաքուն ինի, էս քաղաքըմը լոխ ճըրի կարոտ ըն։ Մին վարար ախպուր օնինք, էն էլ էն ա մին օխտը կըլխանի օշափ ակնը կալծա, թողըմ չի ճուր յոր օնինք։ Ամմեն ճուր յոր օնելավ բիդի մին ախճիգյ քըցինք ըռեխը, վրեր թողի ճուր յոր օնինք։ Էտ

www.naregatsi.org

օշափը հազարներավ մարթ ա կոլ տըվալ, ըսօր էլ էս քաղաքին թաքավերին ըխճըկանը նոբաթն ա, բիդի պըերին ըռեխը քըցին, վըեր թողի ճո՛ւր յոր օնինք։

Թաքավերին պուճուր տըղան սուսըփուս ըտըղան տո՛ւս ա կյամ, քյընըմ էտ ըխպըրան մուտանըմ, տրեսնըմ էս ա լաց, սոքյ ընելավ թաքավերին պալատականնին, պարեկամնին, ծառեքյը ծըռքընեըին խոնչեքյ, լավ-լավ պըեներավ լիքը, թաքավերին ախճիգյըն էլ եր կալած կյամ ըն։ Ժողովուրթն էլ ամեգյը մին կոժ եր կալած հըվաքվալ ըն, թա ճո՛ւր տանին։ Լհա՛ օշափը պըերանը պեց ըրավ, թա ըճխըկանը կոլ տա, թաքավերին պուճուր տըղան կըծծակի մընան յրա յա հըսնըմ, թորավը հենց թըխըմ, վըեր օշափը էրկու կես ա ընո՛ւմ։

Ճո՛ւրը ըսկըսըմ ա վըրըխկալ, ամմա հա՛լա ա՛ռնի նըհետ։ Թաքավերին ախճիգյը ծըեռքը թաթախ ա անըմ օշափին ա՛ռնին մաչին, թաքուն էտ տըղին մըեշկին փիչատ թըխըմ։ Ճո՛ւրը վըեր թըմըզվըմ ա, լոխ ժողովուրթը ո՛ւրա՛նց կոժերը լըցնըմ ըն, օրախ-օրախ ճո՛ւր տանըմ։ Ժուղովուրթը շատ ա ուրխանըմ, վըեր ազադվեց էտ օշափան, վըեր ո՛ւրա՛նց խըխորցը էլ օշափը կոլ չի տալ, վըեր էլ ճրի նեղուբթուն չըն քաշիլ, վըեր ճո՛ւրը վարար կյամ ա, հիշքան օզըմ ըն յոր օնին։

Թաքավերը վըեր տրեսնըմ ա ո՛ւրա՛ն ախճիգյը սաղ սալամաթ ետ ա տրեռալ, վըեր լըսում ա օշափին ըսպանալ ըն, ճո՛ւրն էլ վարար կյամ ա, աշխարքըս ո՛ւրա՛ննն ա տրեռնըմ, էնքան ուրխանըմ ա։ Ասըմ ա. — Շո՛ւտ արիք էն տըղին քիթիք, պըերիք, տրեսնամ էտ քաջը հո՞ւ վա իլա՛լ։

Թաքավերին մեծամեծնին քյընըմ ըն տրես ման կյամ, տրեն ման կյամ, էտ տըղին ճարըմ չըն։

Ախճիգյն ասըմ ա. — Ա՛ հա՛ր, յրես ընդրա մըեշկին օշափին ա՛ռնան իմ ծրեռքավրս փիչատ ըմ տիրալ, թող էտ փիչատին յրան էտ տըղին ճընանչին, պըերին։ Իտի էլ անըմ ըն։

Տըղին ճարըմ ըն, պըերըմ թաքավերին կոշտը։ Թաքավերն ասըմ ա. — Ա՛ ղոչչաղ տըղա, քու էտ վարմունքիտ հետի հի՞նչ ըս օզըմ քյըեզ տամ։

Ասըմ ա. — Թաքավերը ապրած կրենա, վըեշ մին պեն օզըմ չըմ։

Թաքավերն ասըմ ա. — Չէ՛, վըեր չէ՞, քու ըրած լըվութունըտ մըտաս քըցիլ չըմ, ամմա բիդի ասիս, թա հինչ ըս օզըմ։ Օզըմ ը՞ս

www.naregatsi.org

ախճիդյս քյրեզ տամ, օղըմ ը՞ս թաքավերուբռունիս կեսը քյրեզ տամ, հի՞նչ վրեր օղըմ ըս, տամ։

էտ տըղան ասըմ ա. — Թաքավերն ապրած կըենա, յըես օրիշ նպատակ օնիմ, յըես էտ նպատակին հետան ըմ քյընըմ, յըես կարիլ չըմ էս մըթենն աշխարքըմըս կըենամ, թա օղըմ ըս ինձ լըվոթուն անիս, մին թաՀր ըրա, էս մըթենն աշխարքան տուռս կյամ, ընգնիմ լուս աշխարքը։

Թաքավերն ասըմ ա. — Տա շատ տըժեր պըեն ա, տա իմ օժաս վրեր պըեն ա, տա վրեչ յըես, վրեչ էլ իմ երգյիրիս իմաստունին գյիդաալ չըն, մինակ էտ պըենին թաՀրը կըգյիդա Ջուամրուտ ղուշը։ էն էլ էն ա օխտը սարի քըմակի, օխտը ծառի քըմակի, մին ղալին, մըեծ ծըմակըմ, թա վրեր կըրեցիր ճարիս, էնա լավ կինի, քյրեզ էլ, վրեր պըեն պըեթկը կյա, կըկյաս ինձանա օզիս։

Թաքավերին պուճուր տըղան շունրակալ ա ընում, քյընըմ։

Քյընըմ ա, քյընըմ, օխտը սարի, օխտը ծառի քըմակի մին ղալին, մըեծ ծըմակըմ, մին մըեծ ծառի տակի, վրեր ճըղնեերը մինչև երգյինք ա հըսնըմ, տիրևնին էլ թողըմ չի թա տակը մին պատառ լուս ընգնի, թեքյ ընգնըմ, թա մին խըրեգյ դինջանա։ Մին էլ ա տըեսնըմ մին մըեծ, շահմար օխծը, մին աժդահա, մին սարի չաք, էս ա յըեկավ, էտ ծառավը պըըրացավ թա Ջուամրուտ ղուշին ճոտերը կոլ տա։ էտ տըղան յըեր ա թըռչըմ, էտ ճըտերին ծըվծըվոցան սաւրսաւրի իլած, թորավը մին հենց թըխըմ էտ օխծեն, վրեր օխծը ծառան դաստի եր ա ընգնըմ, ըստակըմ։ էտ տըղան էտ օխծեն լըեշը կտորկտոր ա անըմ, ծառին կոխկին կյուտ տամ, ինքը էլհա քյընըմ թեքյ ընգնըմ, քոն ինըմ։

Ջուամրուտ ղուշը քյնացալ ար ուրան ճըտերին հետի կոտ ճարի, օտելի պըեն ճարի, պըերի։ Վրեր կյամ ա տըեսնըմ ընդրեղերք չոխ արուն, պուննը ասնոտ, գյուդում ա, թա էտ ծառին տակին քոն իլած տըղան ա ուրան թըշնամին, գյուդում ա, թա էտ տըղան ա ամմեն տարի կյամ ուրան ճոտերը կոլ տամ։ Ջուամրուտ ղուշը օղըմ ա էտ տըղին կուտուցավը պըտրաստ անի, ճոտերը ըսկըսըմ ըն ծըվծըվալ, ճըղճըղալ, մորը հըսկըցնըմ ըն, վրեր վեչ թա էտ տըղան ա ուրանց դուշմանը, ուրանց դուշմանը էն շահմար օխծըն ա, վրեր յըեկալ ա, թա ուրանց կոլ տա, էտ տըղան թըխալ ա, ըսպանալ։

էն վախտը Ջուամրուտ ղուշը ուրխանըմ ա, վրեր ազադվալ ա էտ աժդահա օխծան, վրեր ամմեն տարի կյամ ա իլալ, ուրան ճոտերը կոլ տամ, աշկը թողըմ կոնյա լհա մին ճըտի յրա։

www.naregatsi.org

Ձիւմրիւտ ղուշը պրեց ա անըմ ուրան թևերը, էտ տըղին հով անըմ, վրեր քախծըր քոն ինի։ Վրեր էտ տըղան զուրթնանըմ ա, եր կենըմ, Ձիւմրիւտ ղուշն ասըմ ա. — Ա՛յ տըղա, տու վրեր իմ ճոտերըս ազադեցիր էն աժդահա օխծան, վրեր տու իմ դուշմանիս ըստի կտոր-կտոր ըրիր, հի՞նչ ըս օզըմ — քյըեզ տամ։

Տըղան ասըմ ա. — Վրեշ մին պրեն չըմ օզըմ, լհա թաքյ ինձ լուս աշխարք տուս պրերիս։

Ձիւմրիւտ ղուշը ասըմ ա.— էս իմ աշկիս յըրան, յըես քյըեզ լուս աշխարք տուս կօնիմ, մինաւկ տու բիդի իմ մին թևիս օխտը վեչխարի տըմակ տինիս, էն մին թևիս էլ օխտը տեգյ ճուր, ամմեն մին կըռընչելավըս բիդի մին տըեգյ ճուր, մին վեչխարի տըմակ քըցիս պրերանըս։

Թաքավերին պուճուր տըղան խոսկ ա տամ, վրեր էտ լոխ կըճարի պրերի։ Տա քյընըմ ա սրեվ աշխարքին թաքավերան օզըմ, լոխ պրերըմ ըտրեղ, Ձիւմրիւտ ղուշին մին թևին օխտը տեգյ ճուր ա տընըմ, էն մին թևին էլ օխտը վեչխարի տըմակ, ինքն էլ մըեշ տրեղը նըստըմ, Ձիւմրիւտ ղուշը յոր օնըմ, Թըռչըմ բիդի լուս աշխարքը։ Թըռչըմ ա, թըռչըմ, սուվրծացած տրեղը կըռընչըմ։ Էտ վրեր կըռընչըմ ա, էտ տըղան մին վրեչխարի տըմակ, մին տըեգյ ճուր ա քըցըմ պերանը։ Իտի վեց հետ կըռընչըմ ա։ Խրեգյ ար մընացալ, վրեր լուս աշխարքը տուս կյան, վրեր օխտինջի դռնըմը կըռընչըմ ա, մին էլ ա տրեսնըմ, վրեր օխտինջի տըմակը ծրերքան եր ա ընգնըմ։ Էտ տըղան ճարը կըտրած տենակը հանըմ ա, ուրան բուդան մին կըտորը կըտրըմ, քըցըմ ղուշին պրերանը։ Ձիւմրիւտ ղուշը դաստի գյուդում ա, էտ բուդին կտորը կոլ չի տամ, լուզվին տակին պահըմ ա։

Վրեր լուս աշխարք ըն տուս կյամ, Ձուամրուտ ղուշըն ասըմ ա. — Դե քյինի, մին տրեսնամ հունց ըս քյընըմ։ Էտ տըղան կըղլըգյե տալավ ա քյընըմ։

Ձիւմրիւտ ղուշըն ասըմ ա. — Ինքյ աու բուդիտ մրեսը, յրես կոլ չըմ տրվալ, լուզվիս տակին պահալ ըմ։ Էս Թրեփուտըն էլ եր կալ, մրեսը տիր բուդիտ յրան, Թեփուտավըս քրսի, լավանալու յա։ Ասըմ ա պըրծընըմ, ինքը ետ Թրուչըմ։

Թաքավերին պուճուր տըղան իտի էլ անըմ ա։ Յարան լըվանըմ ա, էլ կըղլըգյի չի տամ։

Տա ըտրղան ճանապարվըմ ա բիդի ուրանց պալատը, բիդի ուրան հայրենիքը։ Տա օզից վրեչ բուրդան ուրանց տոն քյինի։

www.naregatsi.org

Ասից հաւլա մին պատառ կենամ, տրեսնամ հի՞նչ կա, հի՞նչ չիկա մըեր քըղաքըմը։

Ըտրա հետի նա շորերը փոխից, քյինից մին զարգյարի քըշտի շաղյերդ նի մըտավ։ Մին օր էտ ուստան ըտրան ասըմ ա. — Պա դյուդում ըս հինչ կա, էս քանի օրըս թաքավերին մըեծ տըղան օղըմ ա փըսակվե ուրաննց պըերած էն լոխճան կյեղեցիկ ըխճըկանը նհետ։ Մըհենգյ էն ախճիգյը օղըմ չի, ասըմ ա, թա. «Ինձ հըետի մին վըեսկե շոն, մին էլ մին կատու շինիլ տո, ամմա վըեր ուրուր նըհետ կըորեվ չանին, էն վախտը յըես քյըեզ կըկյամ»։ Էտ մին շատ տըժեր կործ ա, էն էլ ինձ ըն տըվալ, վըեր անիմ, մըհենգյ մընացալ ըմ մաթաչ։ Գյուդում չըմ, թա հինչ անիմ, վըեր էտ ղազաբան պըրծընիմ։

Թաքավերին պուճուր տըղան տըեսավ, վըեր ուրան ուստան շատ ա մըտածըմ, մըետը քըցից ուրան սիրած ըխճըկանը մըտանին, ընդրա ղորութունը։ Ասից. — Ա՛յ ուստա, քընենքյ, մանիլ, քյինի ինձ հետի մին փուճ տըկողին առ պըեր, յըես էս քըշեր կըշինիմ...

Ուստան հաւլա հըվատըմ չի, ամմա մըթկըմը ասըմ ա.— Մին փուճ տըկողինը հի՞նչ ա, առնիմ տամ ուրան, տրեսնամ հի՞նչ ա անըմ։

Քըշերը էտ տըղան տըկողին օտեւլավ շինըմ ա։ Քըշերավ ուստան կյամ ա տրեսնըմ պադրաստ, յոր օնըմ, տանըմ պալատը, տամ ուրանց։

Էտ իրեք ըխճըկորցան լոխճան պուճուրը, էն լուսի պատառ ախճիգյը, դաստի գյուդում ա, վըեր էտ թաքավերին պուճուր տըղին պըենն ա։

Հըրսանիքյը ըսկըսվըմ ա։ Թաքավերին պուճուր տըղան ուրան ուստան թաքուն սրեվ շորեր ա կյենըմ, սրեվ ծի նըստըմ, քյընըմ հըրսանիքյը խընգարըմ։

Մին քանի օրանը ետը ուստան էլհա բեքյեփ կյամ ա, ասըմ.

— Պա ասիլ չը՞ս, մըհենգյ էլ թաքավերը օղըմ ա էտ լուսի պատառ ըխճըկանը ուրան մաշնակ տըղին նըհետ փըսակի, ամմա ախճիգյը օղըմ չի, ասըմ ա. — «Ինձ հետի մին վըեսկե կատու, մին վըեսկե մոկըն շինիլ տա, վըեր ուրուր նըհետ խաղ անին, ամմա կատուն մոկնը օտի վըեչ»։

Թաքավերին տըղան ասըմ ա. — Ո՛ւստա, քընենքյ մի անիլ, էս քըշեր յըես կշինիմ, մինաակ ինձ հետի մին փուճ շըմբալուճ առ, վըեր օտիմ։

www.naregatsi.org

Ուստան քյընըմ ա բըզարան մին փութ շըմբալութ առնըմ, պըերում ունրան տամ, քյընըմ տոն։

Էտ քըշեր ուստան նան ունրան կընէգյը կյամ ըն դունքյանին տըռնին ծական թաքուն եշըմ, տրեսնան, հի՞նչ ա անելու էտ շագյերդը։ Ըտրանք կարըմ չըն մին պըեն տրեսնան, ըտրեղ էլ քունավ ըն ընցնըմ։

Քըշերավ ուստան զաբթնըմ ա, տոռնը պըեց անըմ, տրեսնըմ վըեսկե կատուն նան մոկնը էնա պադրաստ։ Ուստան մընըմ ա մաթ մընացած, ամմա պըեն չի ասըմ, լհա յոր ա օնըմ, տանըմ թաքավերին պալատը։

Էտ լունի պատառ ախճիգյը էլհա գյուդունմ ա, թա էտ հունր ծրեռքի հունաբ ա՞

Ունրունգյունը թաքավերին պուճուր տըղան ուստին անա թաքուն կյարմունր շոռեր ա կյենըմ, կյարմունր ծի նըստըմ, քյընըմ պալատը, էլհա հըրսանիքյը խանգարըմ։

Էքյսը թաքավերը հրամմայըմ ա, վըեր էտ հըրսանիքյը խանգարող տըղին ճարին։ Ման ըն կյամ, ման, կարըմ չըն ճարին։

Թաքավերին պուճուր տըղան գյիդալով վըեր իտի յա, սիպտակ շոռեր ա կյենըմ, ուստին անա թաքուն, սիպտակ ծի նըստըմ, քյընըմ պալատը, թուշ ունրան հորը կոշտը, լոխ հորը նաղլ անըմ։

Հաբրը ըտրեղ ուրխանըմ ա, վըեր տրեսնըմ ա տըղան սաղ-սալամաթ յըեկալ ա, վըեր հունցը ասալ ին, դանվը կու չի տըվալ։

Թաքավերը իրավունք ա տամ էտ պուճուր տըղին, վըեր հինչ օզըմ ա անի, վըեր ունրան էտ փիս, նախանճկոտ ախպորցը հինչ պատիժ օզըմ ա, տա։

Թաքավերին պուճուր տըղան օզըմ ա ախպորցը ըսպանի, մին էլ սաղ ա թողըմ, հրամմայըմ ա, վըեր ախպերքը ունրանց էն էրկու կյեղեցիկ կընանոցը յոր օնին, ըշտրեղ քյընըմ ըն, քյինին։

Ախպերքը տրխուր, աշկրունքան աղու կաթըմ, յոր ըն օնըմ ամեգյը ունրանց կընանեքյը, մրեծ ախպերը մրեծ ախճիգյը, միշնաբկը՝ միշնակ ախճիգյը, քյընըմ, հրռանըմ ունրանց երգյիրան։

Թաքավերը ունրան թախտան եր ա կյամ, ունրան պուճուր տըղին թախտին նստըցընըմ, ասըմ. — Մըհենգյանց տեղը տու կինիս թաքավերը, յըես էս ա պըռավալ ըմ։

Պըերըմ ա տըղին մին էլ էն լունի պատառ ըխճըկանը ունրունր նըհետ փըսակըմ, օխտը օր, օխտը քըշեր հըրսանիքյ ըն անըմ, սաղ ժողովուրթին կանչըմ, ուտըցընըմ, խըմըցընըմ, կըլխըններին վըեսկե շաղ տամ։ Իտի էլ թաքավերին պուճուր տըղան թաքավեր ա տրեռ-

www.naregatsi.org

նըմ, էն լուսի պատառ ախճիգյըն էլ թաքուհի։ Մին տըեղ մինչև ուրիանց էրգյան գյանքին վըերչը ապրըմ ըն սիրավ, լավ, ժողովուրթին էլ շատ ըն սիրըմ։

Ըտրանք հասին ուրիանց մուրազին, տուք էլ հասնիք ծեր մուրազին։ Երգյինքան իրեք վըեսկե խընձոր եր ընգավ. մինը՝ ըսողին, մինը՝ կյրողին, մինն էլ՝ էս հաքյաթը լուս աշխարք հանողին։



www.naregatsi.org



2. ՍԻՆԱՆ ԹԱՔԱՎԵՐԸ

Ինըմ ա, չինըմ մին թաքավեր ա ինըմ։ Ըտրան ինըմ ա իրեք տըղա։ Թաքավերը ուրաշն տըղորցը նասյաթ ա տամ, վըեր ինքը մըեռնի, ուրաշն կյըրեզմանին յրան օխտը օր ղարավուլ կենան։ Թաքավերը վըեր մըեռնըմ ա, մըեծ տըղան քըշերը փայնայրը յոր ա օնըմ, քյընըմ ղարավուլ քաշըմ։

Տըղան նըկատըմ ա, վեր մին վագր ա կյամ։ Էտ վագրը կըտաղած կյամ ա կյըրեզմանը քանդըմ, թաքավերին մեյիդը հանըմ, իրեսին իրեք հետ թըքըմ, էտ տըղին էլ մին լավ կյոսուըմ, քյընըմ։

Քըշերավ տրեսնըմ ըն, վըեր էտ տըղան կյամ չի, եր ըն կենըմ հետան քյընըմ, տրեսնըմ էտ տըղին օշը տարած, ըտրեղ եր ընգած, մեյիդն էլ էն ղոլին եր ընգած։ Մեյիդը թաղըմ ըն, էտ տըղին էլ յոր օնըմ, կյամ։

Էն մին ուրուշդյունը թաքավերին միշնակ տըղան ա քյընըմ ղարավուլ կաղնըմ։ Քըշերը էլհա էտ վագրը կյամ ա, կյըրեզմանը քանդըմ, մեյիդը հանըմ, իրեսին իրեք հետ թըքըմ, քյընըմ։ Էտ տըղան էլ վախելան նըրհետ օշը տանըմ ա։ Էքսը կյամ ըն տըղին ետ պերըմ, մեյիդը թաղըմ, քյընըմ։

Իրեքինջի ուրուշդյունը պուճուր տըղան ա քյընըմ։

Քըշերվա կեսին տրեսնըմ ա, վըեր վագրը կյամ ա։ Տա կյողլը կացած տրեղան թըվինգյը թուշ ա օնըմ, թա ըսպանի, վըեր լհա վագրը ըսկըսըմ ա կյերեզմանը քանդիլը, էտ տըղան գյուլլան յրա յա անըմ թուշ ճըկատան տամ։ Վագրըը հալա սատկըմ չի, փըչըմ ա,

www.naregatsi.org

թա էտ տըղան կորչի, ամմա տըղան մընըմ ա տըեղը կաղնած, մինակ ծրեռքին փանաիրը հանգչըմ ա։ էտ տըղան մին էլ ա գյուղլյան յրա անըմ, վագրը եր ա ընգնըմ, ստակըմ։ էտ տըղան վագրին մորթին մաշկըմ ա, յոր օնըմ, ետավ յեշըմ ա, տրեսնըմ մին հեռու տրեղ կրակ ա ըրվըմ, տա էտ մորթին թողըմ ա ըտրեղ, ճընապարվըմ դիբի կրակը, վրեր փանաիրը նի կըցընի։ Ճընապարին պըտահըմ ա մին պառավ մարթի։ էտ մարթը նըստած, թիլ ար կըծկըմ, սրեվ թիլը պըռծած, օղըմ ար թա սիպտաիկը ըսկըսի։

էտ տըղան ասըմ ա. — Պարո՜վ, ա ղորփեր։

— Պարո՜վ, ա ախպոր տըղա։

— Հի՞նչ ըս անըմ։

— Կրծեգյ ըմ կըծկըմ։

— Ըտրանք էտ հի՞նչ կըծկընի յա՜։

— Էս սրեվը քըշերն ա, էս սիպտաիկը ցիրեկը, քըշերը պըռծալ ա, մըհեգյ էլ սիպտաիկըն ըմ կըծկըմ։

— Ա՛ ղորփեր, տու հաալա քըշերը պահի, հաալա սիպտաիկը կրծկիլ մի, վրեր ես քյինիմ, էն հրեռու տրեղան կրակ յոր օնիմ, փանաիրը նի կըցընիմ, կյամ։

— Պա՛հ քու տոնը շինվի՜, միչև տու ընդեղ քյինիս, կյաս, մին տարի կտրեռնա, հի՞նչ ա, օղըմ ըս ժողովուրթը մին տարի քոն ինի՜։

Ըտրանք ուրուր նըհետ հաջաթ ըն տամ։ էտ տըղին կոխկը հաստ ար, ուրան ասածի, պառը կո՜շտ։ Տա էտ պառավ մարթին կըռնները կապըմ ա, կրծկընին էլ կըտորըմ, թող անըմ քըցըմ մինը էս ղոլը, մինը էն ղոլը, ինքը քյինըմ կրակի։

Վրեր տրեղ ա հըսնըմ, տրեսնըմ ա էտ կրակին կոխկին չըրքըպուլլար քառասուն օշափ քոն իլած, մեշ տրեղըն էլ էտ մրեծ, դրոդոռանչի նման կրակըն ա, յըրան էլ քառասուն ունգյնաիվեր մին ղազան, մրեչին քառասուն վեխճար ա իփոտ։ էտ թաքավերին պուճուր տըղան քյընըմ ա ըտրանց կըլխավը լոք տամ, ղազանը էրկու ծրեռքավ պըցըրցնըմ, էն ղոլին տընուի, կըրակ յոր օնըմ, փանաիրը նի կըցընըմ, ղազանը կըրակին յրան տիրած քըսկարինքին տընուի, թա ետ տրեռնա, էտ օշափներան մինը զարթնըմ ա հարայ տամ, թա. — Ըր կացիք, հա՜, եր կացի՜ք, մըեր մուրազը կադարողը յրեվալ ա...

Լոխ եր ըն կրենըմ էտ տըղին փըռնըմ, ասըմ. — Թա մըեր մուրազը կըկադարիս, քյըեզ սաղ կթողինք, թա կադարիլ չըս, քյըեզ կոլ ընք տալու։

www.naregatsi.org

Տըղան ասըմ ա. — Հի՞նչ ա ծեր մուրազը։

— Ըստըղան մոտե մին թաքավեր կա, ըտրան մին ախչիգյ օնի, մունք օզըմ ընք, տամ չի, բիդի քյինիս օղիս, պըերիս մըեզ տաս։

Էտ տըղան ճարը կըտրած խոսկ ա տամ։ Ըր ըն կըենըմ, քյընըմ էտ թաքավերին պալատին կոշտը։

Էտ տըղան ասըմ ա. — Քյըեցեքյ մըեծ-մըեծ մեխեր պըերիք էս պատին, Թըխինք, յըես պըցրանամ պալատին կըլոխը, ծըղ էլ մին-մին պըցըրցնիմ։ Մեխերը Թըխըմ ըն։ Ամմա առաչ էն տըղան ա պըցրանըմ, ետավ էտ օշափնին մին-մին ըսկըսըմ ըն պըցրանալը։ Էտ տըղան պըցրացածին կըլոխը կտրըմ ա, քըցըմ պատին էն ղոլը. գըվաքիս Թա անց ա կըցընըմ։ Իտի էտ քառասուն օշափին կըլխընին կըտրըմ ա, ըսպանըմ, ինքը քյընըմ, տըեսնըմ մին տոռնը։ Տոռնը պըեց ա անըմ, տըեսնըմ մին նախշուն ախճիգյ ըտեղ քոն իլած։ Վընններին նան կըլխին ղոլին մին-մին վըեսկե կոլա, մաչին մըղրաճռւր։ Էտ տըղան մըղրաճռւրը խըմըմ ա, էտ ըխճըկանը մին լավ պաչըմ, Թա քյինի, մին էլ ա տըեսնըմ մին օշափի չանք օց պատան տռւս յըեկավ, օզըմ ա Թա էտ ըխճըկանը կոլ տա։ Էտ տըղան վըեր Թըխըմ ա էտ օցին, օցը նի յա խըրվըմ պատը։

Տա փռնաը էլհա վառըմ ա, ետ տըեռնըմ հորը հանգյիստը։ Ճընապարին էլհա ջիհըմ ա համին էն պառավ մարթին, ասըմ. — Պարյօր ղորփեր։

Ասըմ ա.— Ասծու կրակը կըլխիտ։

Ասըմ ա. — Խե՞։

Ասըմ ա.— Ժողովուրթը էս ա մին տարի յա կըտորվըմ ա առանց արևի լռւսի։

Էտ պառավ մարթը վըեր իտի յա ասըմ, էտ թաքավերին պուճուր տըղան թիլերը հըվաքըմ ա, տամ էտ մարթին։ Էտ մարթը կըծկընին յոր ա օնըմ Թա կըծկի, տըեսնըմ ա տըեղ-տըեղ կըտորած։

Էտ տըղան ասըմ ա. — Էս խե՞ յա իստի։

Էն պառավ մարթը ասըմ ա. — Հիշքան կըտորած տըեղեր կա, էնքան էլ մարթ ա մըեռալ։ Էտ տըղան յոր ա օնըմ Թաղադռւն էտ թիլերը կապըմ, սիպտակը՝ սիպտակին նըհետ, սրեվը՝ սրեվին, էլհա առաչվա նման կործը առաչ ա քյընըմ։

Տըղան քյընըմ ա, քյընըմ, հըսնըմ ուրռւն հորը հանգյիստը։ Լռւսանըմ ա, ըտրանց պալատըմը գյուդում ըն, Թա վագրը ըտրան կերալ ա, կյամ ըն տըեսնըմ փռնաըր ծրեռքին սաղ-սալամաթ կաղնած, վագրին մաշկած, մորթին ընդեղ եր ընգած։ Ըտրան շատ ըն Թաըրիփ անըմ, տանըմ պալատը, քյըեփ անըմ։

www.naregatsi.org

Մին քանի վախտանը ետը էտ տըղան մըետն ա քըցըմ են ըխ-
ճըկանը, համ էլ ախպորցը խնթրըմ ա, վեր քյինին ուրանց համար
ախճիդյ օդին։ Ախպորցը յոր օնըմ, քյընըմ էն պալատը։ Ըտէղ էն
օցը պատավը քըշացալ ար, թա էն ըխճըկանը կոլ տա։ Օցին սպա-
նըմ ա։

Քյընըմ ա, տըեսնըմ մին խիլլա ժողովուրթ ըն հըվաքվալ,
էտ ըխճըկանը հաւր թաքավերը ասըմ ա. — Ա՛յ ժողովուրթ, հու
վըեր էն օցին սպանալ ա, թող տունա կյա, ախճիդյըս ընդրան ըմ տամ։

Ժողովուրթին մաչան մինն ասըմ ա. «Ցըեա ըմ ըսպանալ».
էն մինն ասըմ ա. «Ցըեա ըմ ըսպանալ», լոխ սըտըսոտ։

Էն թաքավերին պուճուր տըղան ղրաղ կաղնած լըսըմ ա, ետավ
մուտանըմ ա էտ թաքավերին, ասըմ. — Թաքավերը ապրած կըեննա,
յըեա ըմ ըսպանալ օցին։

Թաքավերն ասըմ ա. — Բա հո՞ւնց ըս ըսպանալ։

Տըղան լոխ նաղլ ա անըմ։ Թաքավերն ասըմ ա. — Դե վըեր
տու յըս ըսպանալ, հը օցը պատան տունա պըեր։

Տըղան քյընըմ ա օցը պատան տունա պերըմ։ Թաքավերն ասըմ
ա. — Ինձ իրեք ախճիդյ օնիմ, իրեքան էլ քյեզ ըմ տամ։

Թաքավերին պուճուր տըղան մըեծ ախճիդյը տամ ա մըեծ ախ-
պորը, միշնակ ախճիդյը տամ ա միշնակ ախպորը, պուճուր ախճի-
դյըն էլ ինքն ա յոր օնըմ։

Էտ ըխճըկերքը յոր ըն օնըմ, ետ տըեռնում բիդի ուրանց հայ-
րենիքը։ Ճընապարին ըտրանք մին ծովի քըշտի չադիր ըն յեր թո-
ղըմ, վըեր քըշերը կըեննան։ Քըշերավը մըեծ ախպերը եր ա կըեննըմ,
թա քյինի իրեսը լըվանա, տըեսնըմ ա, մին օշափի չանք օց չա-
դիրին չորս ղոլավը փըթաթվալ ա, կըլոխն էլ տիրալ տըռնին առա-
չին։ Էտ մըեծ ախպերը մին էլ նի յա մըննըմ չադիրը, թեքյ ընգնըմ
ուրան տըեղը։

Միշնակ ախպերըն էլ ա իտի անըմ։ Պուճուր ախպերը վըեր
զուրթնանըմ ա, լոխճին եր ա կըցըննըմ վըեր տունա կյան չադիրը
քանդին, քյընան։

Էտ օցը մըեծ ախպորը ուրան կընգանը նըհետ ա թողըմ, տունա
ըն կյամ, քյընըմ։ Միշնակ ախպորը ուրան կընգանը նըհետ թողըմ
ա, տունա ըն կյամ, քյընըմ։ Պուճուր ախպերն էլ ուրան կընգանը
նըհետ օզըմ ա թա տունա կյա, օցը թողըմ չի։

Թաքավերին պուճուր տըղան ասըմ ա. — Խե՞ չըս թողըմ,
քյընինք։

www.naregatsi.org

Օցը ասըմ ա. — Յրես մուրազ օնիմ, բիդի կադարիս։

— Հի՞նչ մուրազ ա։

— Բիդի քյինիս Սինան թաքավերին թաքուն պրենները, սերը-սեկրետը, գյիդաս, կյաս, ինձ ասիս։ Վրեր գյիդաս վրեչ, քյրեզ կոլ ըմ տալու։

Էտ տըղան ասըմ ա. — Բա կընե՞գյս։

— Կընգանըտ քըշերը յրես մարթ կըտրեռնամ, մարթոթուն անիմ, ցիրեկն էլ օց կըտրեռնամ։

Թաքավերին պուճուր տըղան մընըմ ա մաթաչ։ Դե հինչ ա՞նի, յաղու ծրեռք ա ընգա՛լ։

Տա ճընապար ա ընգնըմ, քյընըմ։ Քյընըմ ա, քյընըմ, շատ նան խրեգյը աստուծ կգյիդաս, քյընըմ ա հրսնըմ մին պառավ մարթի։ Էտ պառավ մարթը ասըմ ա. — Ա՛ բալա, էտ ըշտրե՞ղ ըս քյընըմ։

— Քյընըմ ըմ Սինան թաքավերին սերը-սեկրետը պերիմ։

— Վա՛յ, վա՛յ, խրե՛ղճ տըղա, տու կարիլ չըս Սինան թաքավերին սերը-սեկրետը գյիդաս, եք կոշտըս, քյրեզ սըվըրցընիմ։ Վրեր իտի քյինիս, քու առաչըտ ա կյալու մին ղաչին ծըմակ, վրեր էտ ծըմակը տրեսնաս, կասիս. «Էս հի՞նչ լաւ ճընապար ա», վրեր ասիս վրեչ կարելու չըս անց կրեննաս։ Ետավ քյընաչին չըս, քյրեզ պըտրհելու յա Ջունմրունդ ղուշը։ Էս ա քառասուն տարի յա էտ ղուշին վրեննը քարկեծ ա տրեռալ։ Ըտրեղ մին չաղիր եր կըթողիս, մաչին կրեննաս։ Վրեր էտ ղուշը կյա, մին սոր փրեդավ վրեննը կծակիս, վահարը տունս կրկյաս։ Հաչլա առաչը ըսեելու յա. «Էտ հո՞ւ վրս, տունս եք, քյրեզ հում-հում օտիմ...»։ Ետավ վրեր վրեննը դինջանա, ըսեելու յա. «Էտ հո՞ւ վրս, տունս եք, հինչու օզիս, քյրեզ ըմ տալուս»։ Տունս կրկյաս, ասիս. «Յրես Սինան թաքավերին սերը-սեկրետն ըմ օզրմ գյիդաս»։ Վրեր իտի ասիս, Ջունմրունտ ղուշըն ըսեելու յա. «Քյրեզ սըվըրցնողին վիզը կոտրի՞»... Դե վրեր իտի յա քյինի, քու առաչըտ ա կյալու մին ծով։ Էտ ծովին ճունրը վրետած ա ինելու։ Կողի վրետած, մին խըրեգյ կխմիս, ասիս. «Ուխաա՛յ, էս հի՞նչ լաւ ճունր ա»։ Կասիս, պըրծընիս ճընապա ընգնիս, վրեր ասիս վրեչ, ծովը քյրեզ հրդե չի տալու։ Ինք առ, քյրեզ մին թեփուռ էլ տամ, վրեր փիս տրեղ ընգնիս, թեփուռը վառի, կթուչիմ, հրսնիմ։

Թաքավերին տըղան քյընըմ ա, Ջունմրունտ ղուշը հունցը ասալ ա, իտի յա անըմ, վերչը քյընըմ Սինան թաքավերին պալատին քըշտին մին քարի յրա նըստըմ։ Մարթ ա ղըրկըմ, թա. «Մին տըղա յա յեկալ, օզրմ ա քյրեզ տրեսնաս»։

www.naregatsi.org

Սինան թաքավերը ասըմ ա. — Թող կյա, բա էտ տըղան տրեհնըմ չի՞ էս պալատին չորս ղուլին վըեսկըռնի՞ն, պա ըտրան վախ չունի՞, ահ չունի՞, կըլխան ծրեռք ա յեր կալա՞լ։

Թաքավերին պուճուր տըղան կյամ ա նի մննըմ, ասըմ. — Թաքավերը ապրած կենա, իմ կըլոխըս կըտրիլը կըտրելու յըն, լավն էն ա, տու կըտրիս։ Խընթըրըմ ըմ քու սերըտ-սեկրետըտ ասիս, ետավ կըտրիս։

Թաքավերն ասըմ ա. — Ինձ իլալ ա մին կընեգյս, մին ախճիգյս, մին զեմքուչ։ Յրես հիշքան լավ ծի պահողնի փըռնեցի, վըեր իմ ծիյանքըս լավ պահի, էլհա քյընըմ ի տրեհնըմ ծիյանքըս լղար, նըղացած, էրկուսն էլ քըռթընքած։ Վըեր հըրցընըմ ի ծիյապահներին, թա. «Խե՞ յա իտի», սուս ին անըմ։ Յրես էլ ըտրանց կըլոխը կըտրիլ ի տամ։ Նորաթը կյամ ա մին քյասիբ տըղի, վըեր ծիյանքը պահի։ Յրես էլ էտ քշերը քյընըմ ըմ թաքուն ղարավուլ քաշըմ, տրեհնամ էտ խե՞ յա իտի։ Մին էլ ըմ տրեհնըմ կընեգյըս նան զեմքուչս եկին, ծիյանքը եր իլին, քյեցին։ Մինչև ծրքծրքոտելը տրեհնամ էս ա եկին, ծիյանքը կըպեցին, նի մըտին պալատը։ Քյընըմ ըմ թա էտ տըղին կլոխը կտրիլ տամ, ասըմ ա. «Թաքավերը ապրած կըենա, իմ կըլոխըս կըտրիլ մի, էս քըշեր տու եք ծիանքը պահի, կգյիդաս»։ Էտ քըշեր յրես ծիյապահին շորերը կյենըմ ըմ, քյընըմ, վըեր ծիյանքը պահիմ։ Մին էլ ըմ տրեհնըմ էլհա կընեգյս, զեմքուչս եկին ծիյանքը օզեցին։ Ծիյանքը տվի ըտրանց, յրես էլ մին օրիշ ծի նստեցի, ըտրանց հետան քյեցի։ Քյընըմ ըմ տրեհնըմ մին մրեծ կարան, էտ կարանին մրեչին քառասուն ղաչաղնի, ըտրանք քյընըմ ըն լոխճին նըրհետ ուրանց գյըղացածը անըմ, ետ տրեհնըմ։

Ըստրեղ էտ թաքավերը սուս ա անըմ, թառանչ քաշըմ, մին հետ ուրան վրեսկե նախշերավ չուբուխը քաշըմ, թանճըր ծոխը նի քաշըմ, էլհա նաղլ անըմ.— Վըեր էտ տրեհնըմ ըմ, հալա սուս ըմ անըմ։ Ամմա զեմքուչս շատ օխծը կծածրն ար, խորամանգ աղվես, փանդը-փիլ գյըղող, լուզվավը օխծը պուհնան հանող, մին օզգյա պրե՞ն։ Տա կըլխու յա ընգնըմ, վըեր յրես ուրանց քըմական թաքուն քյեցալ ըմ։ Տա էտ ղաչաղներին իմաց ա տամ, ըտրանք ինձ փըռնըմ ըն վըեննըծեռքըս կապըմ, եր քըցըմ։ Զեմքուչըս էլ ծրեռքին մին ճըպատ ա ինըմ, էտ ճըպատավը համ ինձ թըխըծ ա, համ էլ ասըմ. «Թաքավերը շոն տրեհնա, թաքավերը շոն տրեհնա...»։ Յրես շոն ըմ տրեհնըմ։

Վըեր կյամ ըն պալատ, տրեհնըմ ըն ուրանց հացթուխը հաց

www.naregatsi.org

թըխելիս, ըտրա ախճիգյըն էլ խոնչին յրան պռւլերը կըրելիս։ Ջեմքուչըս էտ ըխճըկանն ասըմ ա. «Ախճի՛, էտ շանը տար հաց տո, տար ծեր տանը պահի»։ Էտ ախճիգյը շոնը տոն ա տանըմ, համ էլ ասըմ. «Ա մա՛ր, էս շանը աշկերը հենց ա մըեր Սինան թաքավերին աշկերը ինի։ Մա՛րն ասըմ ա. Ծըենտ կըտրի, Սինան թաքավերը կըլսի, կկյա՛ քյըեզ կը սպանի»։ Էտ ախճիգյը կյամ ա պալատը, ման կյամ, մա՛ն, տըեսնըմ թաքավերը պալատըմը չի, մին օթախի տըռանը քըմակին էլ մին ճըպատ տիրած։ Էտ ախճիգյը շռւտանց լըսած ա ինռւմ էտ ճըպատին մասին, գյուդռւմ ա ինռւմ ըտրա զորուԹռւնը։ Ճըպատը յոր օնըմ քյընըմ, քըԹենըմ շանը, ճըպատավը Թըխըմ, ասըմ. «Մըեր թաքավերը հունցու շոն ա տըեռալ, ինդի էլ թաքավեր տըեռնա»։

Ցըես, Սինան թաքավերս, Թաղաղռւն մարԹ ըմ տըեռնըմ, նըստըմ իմ թախտին։ Էտ ճըպատը յոր օնըմ, կընգանս Թըխըմ, ասըմ. «Մին սըեվ էշ տըեռ, մեշկիտ էլ մին մըեծ յարա»։ Իտի էլ տըեռնըմ ա։ Ջեմքուչիս կանչըմ ըմ էտ ճըպատավը Թըխըմ, ասըմ. «Ա՛ ջեմքուչ, ազար-բըեզա՛ր, մին սըեվ ակռավ տըեռ, քյընա՛ ամեն օր ըխճըկանըտ մըեշկին յարան կըտկոտի»։ Իտի էլ տըեռնըմ ա։

Ըստըեղ Սինան թաքավերը ռւրռւն խոսկը պըրծընըմ ա, ասըմ. — Էս ա իմ սերս-սեկրետս, ա՛ ջռւհիլ տըղա։ Դե մըհեգյ էլ բիդի քու կլռխտ կըտրիլ տամ։

Թաքավերին պռւճռւր տըղան ասըմ ա. — Թաքավերը ապրած կըենա, Թող տռւս կյամ մին խըրեգյ ըշխարքիս եշիմ, էլհա կյամ։

Թաքավերը Թողըմ ա։ Էտ տըղան քյընըմ ա մին քյռւնջ նի մընընըմ, Ջռւմրռւտ ղուշին Թեփուռը ջուբան հանըմ, վառըմ։ Վըեր վառըմ ա, Ջռւմրռւտ ղուշը ծըեռաց կյամ ա, թաքավերին պռւճռւր տըղան նըստըմ ա ընդրա մըեշկին Թևերին Թափ ա տամ, Թա Թըռչի, Սինան թաքավերին ախճիգյը ասըմ ա. — Հինչ կինի ինձ էլ նըրհետըտ տանիս, հունցու քու կընեգյըտ։

— Ցըես կընեգյ օնիմ։

— Դե հո՞ւնց անինք, ինձ էլ տար։— Ըտրան էլ ա յոր օնըմ տինըմ Թևերին, քյընըմ ընւ։

Հարայը պալատըն ա ընգնըմ, Թա թաքավերին սերը-սեկրետը տարին, ախճիգյը տարին։ Էտ վըեր Սինան թաքավերը լըսըմ ա, ծըեռաց սըեռտը ճաքըմ ա, մըեռնըմ։

www.naregatsi.org

Ըտրանք թըռչըմ ըն, քյընըմ հաւմին էտ օցին կոշտը. թաքավերին պուճուր տըղան Սինան թաքավերին սերը-սեկրետը ըտրան նաղլ ա անըմ. օցըն էլ ըտրա կընեգլը տամ ա ուրաւն, յոր ա օնըմ էտ ըխեըրկանը նըհետ կյամ ուրաւն հայրենիքը, ուրաւն հորը պալատը։ Ըտրեղ լավ հըրսանիք ըն անըմ, լավ էլ ախպերք-ախպերք ապրըմ, ժողովուրթին էլ լավ եշըմ։



www.naregatsi.org



3. ՎՂԵՍԿԵ ՂՈՋԸ

Ինձում ա, չինձում մին թաքավեր ա ինձում։ Էտ թաքավերին ինձում ա վեց տըղա. մինը մինան ղաշանգյ, մինը մինան օժավ։ Անց ա կենըմ մին խիլլա վախտ, էտ տըղերքը մըծանըմ ըն, ըտրանց փըսակվելի վախտը կյամ ա։

Մին օր մըեծ տըղան հորըն ասըմ ա. — Ա՛ հայր, թող յըես քյինիմ յարմուկա, տըեսնամ՝ հինչ կա, հինչ չի կա։

Հայրը ռազի յա կըենըմ։ Էտ տըղան քյընըմ ա յարմուկա, ետ տըեռնալիս մըթենն ա ընգնըմ։ Ճընապարին մին տոն ա ինըմ։ Տա էտ տոնը ղոնաղ ա ընգնըմ։ Քըշերը քոն ա ինըմ, ուռուբանա եր ա կըենըմ, տունս կյամ հայաթը, թա իրեսը լըվանա, բունդյան մին իշեղ ա ընգնըմ աշկավը, էլհա կորչըմ։

Տա գյուդում չի, թա էտ հինչ ա, ասըմ ա. — Հայըթ արևըն ա, տունս ա կյամ։

Տա իրեսը լըվընալյանը ետը տոն ա նի մընըմ։ Տանտըրունչան հըրցընըմ։

Տընատարը ասըմ ա. — Էտ թաքավերին ախճիգյն ա։ Նա մինակ ամման ուռուբանա յա տունս կյամ, էլհա իթտըբաթտի ընում։ Հիշքա՞ն տըղերքյ ըն եկալ թա օղի՞ն, ամմա կըրացալ չըն։ Հայրը էտ փըեսացուններին ժամանակ ա տըվալ, ասալ.«Թա կարիքյ իմ ախճիգյըս ճարիք, ծրեզ կըտամ, ծրեզ հալալ, թա չէ ծրեզ կըտորել ըմ տալու»։

www.naregatsi.org

Թաքավերին տըղան վըեր էտ լսըմ ա, դաստի քյընըմ ա էտ ըխճըկանը հորը կոշտը։

Էտ թաքավերը ըտրան վեց օր վախտ ա տամ։ Վեցինջի օրը էտ տըղան ճարըմ չի ըխճըկանը։ Էտ տըղին հունցու պայման ին կապալ, ինդի էլ անըմ ըն, տանըմ ըն ըսպանըմ։

Էտ տըղին թաքավեր հաըը, ախպերքը շատ ըն մըտածըմ, թա խե՞ չի կյամ, խե՞ յա ետանըմ։ Թաքավերը գյուդունմ ա, վըեր մին օրիշ թաքավերութունի մեչի մարթ ըն սպանըմ։ Թաքավերը տըրըկյուռնմ ա։

Անց ա կըենըմ մին խիլլա վախտ։ Թաքավերին էրկունջի տըղան էլհա ղաչանք ա անըմ հորը, վըեր ուրան թողի, քյինի յարմուկա։ Թաքավեր նան թաքուհին թողըմ չըն, ամմա էտ տըղան զոռըմ ա, քյընըմ։ Էտ տըղան էլհա ղոնաղ ա ընգնըմ էտ տոնը, էլհա համին էն ըխճըկանը դաըդան ըտրան սպանըմ ըն։

Իսի թաքավերին հինգ տըղերքը քյընըմ ըն էտ ըխճըկանը դաըդան կըլխընին բադա տամ։

Մընըմ ա լոխճան պուճուր տըղան։

Մին օր էտ պուճուր տըղան կյամ ա հորը կոշտը, ղաչանք անըմ, վըեր թողի, քյինի յարմուկա։ Թաքավերը թողըմ չի, էտ տըղան շատ ա ղաչանք անըմ, ասըմ. — Ա՛ հաը, լավ ա, թող քյինիմ տըեսնամ ախպերքըս ըշտըեղ ըն, քյինիմ ընդրանց յա ազադիմ պըերիմ, յա ընդրանց նըհետ մինտըեղ մըեռնիմ։

Հաըը շատ կըզնըվըմ ա, ասըմ. — Քյընըմ ըս, քյինի, ջըհանդամը-դյոռը թա քյընըմ ըս, սըեվ ատակը թա քյընըմ ըս, իստիբուջաղը թա քյընըմ ըս։ Յըես էլ կասիմ, թա իսկի տըղա չօնիմ...

Էտ տըղան հիշքան կարըմ ա, վըեսկե յա յոր օնըմ, էն մին օրը հըղե ինըմ յարմուկա։

Քյընըմ ա յարմուկա ետ տըեռնալիս մըթեն ա ընգնըմ, քյընըմ ա հաամին էտ տոնը ղոնաղ ընգնըմ, քըշերը ըտրեղ կըենըմ, էքսը եր կենըմ, ուռուբանա տունս կյամ տոռնը, թա իրեսը լըվանա, մին շափաղ ա աշկավը ընգնըմ, մին էլ կորչըմ։ Էտ տըղան գյուդում ա թա արևըն ա շոխկը քըցա՛լ, մին էլ Թըխպավ ծասկվալ։ Կյամ ա տոն տընըտըրունչըն անա հըրցընըմ։ Տընատարը նաղլ ա անըմ էտ լոխ, հինչու մըեծ ախպորը նաղլ ա ըրալ։ Ըտրեղ էտ թաքավերին պուճուր տըղան դաստի կըլոխ ա ընգնըմ, վըեր ուրան ախպերքը ուրանց կըլոխը ըտրեղ ըն բադի տըվալ։

Էտ տըղան տունս ա կյամ, քյընըմ թաքավերին կոշտը պայման կապում, վըեր չորս օրըմը կըճարի ընդրա ըխճըկանը, վըեր ճարի,

www.naregatsi.org

ներհետը փըսակվելու յա։ Ըտրանա ետը կյամ ա համին էտ տոնը, վրեսկեն յոր օնըմ, քյընըմ մին զարգյարի կոշտ, ընդրան ասըմ, վրեր մին վրեսկե ղոչ շինի, վրեր ինքը մեչին տըղվարվի, մեչի ղոլան էլ տոռնը քըլլի։

Հունցը ասըմ ա, իտի էլ զարգյարը ղոչը շինըմ ա։ էտ տըղան մին խիլլա վրեսկի յա տամ, ղոչը յոր օնըմ, քյընըմ։ Ետավ մին էրկու մարթի փող ա տամ, վրեր էտ էրկու մարթը էտ ղոչը էտ քաղաքին քոռչոցավը ման ածին։ Ինքն էլ վախտին նի յա մընընըմ մեչը։ Էտ էրկու մարթը էտ ղոչը սաղ քյոռչոցավը ման ըն ածըմ, պըտրըմ թաքավերին պալատին կոխկավը թա տանի՞ն, թաքավերին ծառեքը տոռնա ըն կյամ, թմաշա անըմ։ Ըտրանցան մինը քյընըմ ա թաքավերին ասըմ, թա խստի-խստի պըտեն կա։ Թաքավերը տոռնա ա կյամ էտ ղոչը պըտրիլ տամ ուրրան հայաթը թըմաշի հրետի։

Թաքավերին ախճիգյը, միշտ տափին տակին մին պալատ կար, ընդրեղ էր ապրըմ, վրեր վրեշ մինը ուրրան տըեսնա վեչ։ Նա մինակ ուրրան պալատին ըխճըկորցը, ուրրան ղուլլուղչոցը իրեսն ար տըեսնըմ։ Ըտրանց նըրհետ խոսըմ, ասըմ, ինքը տոն չար կյամ, քանի վրեր արևին նըման շըղշողըմ ար։

Վրեր ղոչը պըտրըմ ըն, էտ ըխճըկորցան մինը կյամ ա, ասըմ. — Քու հաըր մին վրեսկե ղոչ ա թողալ պըտրին պալատին հայաթը, վրեր տըեսնաս քյեփըտ կկյա, էնքան գաշանգյ ա, թող քյըտեղ էլ թողի, տըեսնաս։

Ախճիգյը հորը խընթըրըմ ա, վրեր վրեսկե ղոչը պըտրին տըեսնա։

Հաըր էտ էրկու մարթին խիլլա փող ա տամ, ասըմ. — Հի՞նչ կինի՛, վրեր էտ ղոչը էրկու օրավ թողիքյ իմ պալատըմըս։ Էտ էրկու մարթը փողը յոր ըն օնըմ, վրեսկե ղոչը թողըմ պալատըմը, քյընըմ։

Էտ ղոչը տանըմ ըն թաքավերին ըխճըկանը տափին տակին պալատը։ Թաքավերին ախճիգյը միշև քըշերվան կրեսը քոռն չի ինըմ, էտ ղոչին ա եշըմ։ Էնքան գաշանգյ ար շինած, վրեր քըշերը լուս ար տամ։ Էտ ախճիգյը էնքան հայիլ-մայիլ ա ինըմ, վրեր հաց չի օտըմ, կերակուրը մընըմ ա։ Շատ եշիլանը ետը քոռնը տանըմ ա։

Թաքավերին տըղան վրեսկե ղոչին տոռնը պըտեց ա անըմ, տոռնա կյամ, թաքավերին ըխճըկանը պաժին հացը, կերակուրը օտըմ, էչհա նի մընընըմ ուրրան տըեղը։ Ուտուբանա էտ ախճիգյը տըեսնըմ ա, վրեր կերակուրը կա վեչ, մընըմ ա մաթ մընցած, թա հո՞ւ կինի կերած։

Մըթկըմը տընըմ ա էն մին քըշերը բուսը պահի, տըեսնա էտ հո՞ւ վա, կյողին փըռնի։

www.naregatsi.org

Իտի էլ անըմ ա։ Քըշերվա կըեսին էտ տըղան տունս ա կյամ, թա կերակուրը օտի, էտ ախճիդյը ըտրան տըեսնըմ ա։ Էտ տըղան էնքան կյեղեցիկ ա ընում, վըեր տըեսնալըն ըքաստ սիրահարվըմ ա։

Էտ ախճիդյըն ասըմ ա. — Տու իմ սըերտըս հըմայալ ըս, ամմա իմ հաըր ինձ քյըեղ չի տալ, միչև մին հարց էլ կա, պադասխանը տաս վեչ։ Իմ հաըր վեց ըխճըկա մին տեսակ շունրերըմ, մին տըռնա տունս ա օնելու, ասի. «Վրե՞րն ա իմ ախճիդյըս», տու բիդի գյիդաս, թա վրեր գյիդացիր վեչ, էլհա քյըեզ ըսպանելու յա։ Յըես քյըեզ դունյուղ կանիմ, իմ աչ վրեննըս կըծրռիմ, տու ըտրանավ ինձ կը ճընանչիս, վրեր յըես ըմ։

Վրեր էրկու օրը անց ա կենըմ, կյամ ըն վրեսկե ղոչը տանըմ։ Թաքավերին տըղան պայմանին օրը կյամ ա։ Տա քյընըմ ա թաքավերին կոշտը։

Թաքավերը հըրցընըմ ա. — Հը՞, ճարեցի՞ր, թա ըշտրեղ ա իմ ախճիդյըս։

Տըղան ասըմ ա. — Ճարեցի։

Թաքավերը մընըմ ա ըրմացած, թա էտ տըղան հո՞ւնց ա տըեղը գյիդացել։

Ասըմ ա. — Կկարի՞ս նշանց տաս։

Թաքավերին տըղան ասըմ ա. — Կկարիմ։ — Համ ասըմ ա, համ տանըմ նշանց տամ։

Թաքավերն ասըմ ա.— Լավ, էտ գյիդացիր, մըհեկ քյըեզ մին հարց կըտամ, թա գյիդացի՞ր, համ ախճիդյըս, համ էլ թաքավերութունիս կեսը քյըեզ կըտամ, թա գյիդացիր վեչ, էլհա քյըեզ ըսպանել ըմ տալու։

Թաքավերին տըղան ռազի յա կըեննըմ։

Էն մին օրը թաքավերը ուրյան ախճիդյը օրիշ վեց ըխճըկա նըհետ լոխ մին տեսակ շորեր կյեցած, տունս ա պըեըրըմ պալատին հայաթը, ասըմ. — Կկարի՞ս գյիդաս, թա վրե՞րն ա իմ ախճիդյըս։

Ախճիդյը աչ վրեննը ծրռըմ ա։ Թաքավերին տըղան դաստի գյուդում ա, տանըմ ա դունյ ծրեռքն օսին տինըմ։

Ըտրանա ետը էտ թաքավերը տըրած պայմանը կադարըմ ա։ Օխտը օր, օխտը քըշեր հըրսանեքյ անըմ, մըեծ հարըստութունով, մըեծ պեժինքյավ ըխճըկանը ճընապար տինըմ դիբի էտ տըղին հայրենիքը։ Էտ տըղան վրեր ուրյանց պալատըն ա կյամ, ըտրա հաըր նան մարը ուրխանըմ ըն, թաղադան օխտը քըշեր, օխտը օր

www.naregatsi.org

հըրսանիք ըն անըմ, սաղ ժողովուրթին կանչըմ, հարսին կըլխին վրեսկե շաղ տամ։

Ըտրանա ետը հաւրը էտ տըղին կարքըմ ա թաքավեր, էտ ըխճըկանն էլ՝ թաքուհի։

Էն պարզ, ղաշանգյ երգյինքան իրեք խընձոր ա եր ընգնըմ. մինը՝ աստղին, մինը՝ էս հաքյաթը կաթողին, մինն էլ՝ տիպողին։



www.naregatsi.org



4. ՊԻՐԱՆԱՆ ՎԱՐԹ, ՄԱՆԻՇԱԿ ԹԱՓՎՈՂ ԱԽՃԻԳԸ

Մին շատ քյաւիբ մարթ, մին կընեգյ ա ինում։ Ըտրանց շրեննըմը թողըմ չըն կենան. տուս ըն քըցըմ, հունց վեր քյաւիբ։ Տա քյընըմ ա օրիշ շեն։

Մին վեց ամիս ըտեղ կենըմ ա, ետավ կընեգյը եր կալած, ըտըղան տուս ա կյամ, ասըմ ա. — Ա՛ կընեգյ, դե վըեր վըեշ մին տըեղ մըեզ թողըմ չըն կենանք, եք քյինինք քյ ծըմակը, ընդըեղ կենանք։ Հալբաթ կաղեն, ղրկեու, սրեզնը, տրեզնը, ծըմակի տանձը, խընձոր, մրհասուր, մող, տես-տեն ուտելավ մին թաւհրավ կապրինք, յոլա կքյինինք։

Կընեգյըն ասըմ ա. — Հինչ կինի՞։

Ըտահանք քյընըմ ըն, քյընըմ մին ղալին ծըմակ ըն քյըթնըմ, մընըմ ըտեղ։ Էս ծըմակըմը տիրև, խազալ, ճըղներ, տես-տեն ըն հըվաքըմ, ըտեղ մին պուճուր մարաքյի մնան տոն շինըմ, ապրըմ։

Շատ ըն կենըմ, թա խըրեգյ, վըերչը էտ կընեգյը մին խոխա յա պըերըմ, ինքն էլ ախճիգյ։ Էտ կընեգյը խոխին տիրևների մեչի պըտաւտըմ ա, պաւրուր շինըմ, տինըմ կոխկին։ Իտի մին թաւհրավ պահըմ ըն։

Մին դաւնըմ տրեանըմ ըն իրեք կընեգյ ըն կյամ էտ տոնը։ Ամման մինը էտ խոխին մին լավ պրեն ա ասըմ։

Առաչին կընեգյը էտ խոխին ասըմ ա. — Յրես ըստրա մին հենց կյեղեցկութուն կըտամ, վըեր հու վըեր տրեանա, հայիլ-մայիլ ինի, ուրաւնան տուս կյա, էնքան սիրի էտ ըխճըկանը։

www.naregatsi.org

Էրկունջի կընեգյը ասըմ ա. — Յրես էս ըխճըկանը մին հենց օժ տամ, վըեր մին օրըմը մին տարու չանք մըծանա, լաց ինելիս աշկերան մարքարիդ եր տըեռնա ըրտուսունքի տըեղ, ծըծըղելիս պիրանան վարթ, մանիշակ թափվի, ման եկած տըեղն էլ վրեննը-տըեղերը վրեսկե քյարփուճնի տըեռնա։

Իրեքինջի կընեգյն էլ ասըմ ա. — Յրես ըտրան մին խաչ ըմ տամ, վըեր տա անմահ ինի, էտ խաչըն էլ ճիտըմը պահի։

Ըտրանք ասըմ ըն, պըրծընըմ, անհետ կորչըմ։ Էս մարթին նան էս կընեգյը մընում ըն ուրուր իրեսի եշելիս, մարթ մընացած։

Էն օրանը ետը էտ խոխան լաց ինելիս աշկերան մարքարիդնի յա եր ածըմ։

Հարը նան մարը մընըմ ըն ըրմացած։ Էս մարքարիդնին հըվաքըմ ըն մին պուլիգյ ածըմ, պահըմ։

Մին քանի օրանը ետը էտ կընեգյը ասըմ ա. — Էս մարքարիդը տար օրիշ քաղաք ծախի, շոր, տըեսըտրեն առ, պըեր։

Էտ մարթը պուլիգյը յոր ա օնըմ, քյինըմ մին քաղաք։ Էտ քաղաքըմը մին առըտուրական տըեսնըմ ա, էտ մարթին կըռնան փըռնըմ, տենը տանըմ, ասըմ. — Ախպեր, եք էս ղոլը, հինչ ասիս քյըեզ կըտամ, ըտրանա մին խըրեգյ ինձ տո։

Էտ մարթը մին հափուռ տամ ա ըտրան։ Էտ էլ շատ փող ա տամ ըտրան։ Էտ մարթը մին ըրբա յա առնըմ ամմեն հինչան առնըմ, ածըմ մաչը, մընացած փողերն էլ ածըմ մաչը, տանըմ կընգանը կոշտը, վըեր էտ փողերավը տոն շինին։ Իտի մին քանի հետ քյընըմ ա քաղաք, կյամ, խիլլա փող թուփ անըմ։ Մին հետ էլ ուրան նրհետ քաղաքան ուստա-փայհլա յա պըերըմ, վըեր տոնը շինի։ Տա շատ լավ տրներ ա շինըմ։ Պալատնի՞... Էտ պալատներին քյարփուճնին լոխ վրեսկե յա ինում։ Ըտրա հետի էլ հրեռու տըեղան ըլըվալավ ա անըմ, եշողին աշկերը ծկծկոտըմ։ Ախճիգյըն էլ յավաշ-յավաշ մըծացալ ար, ինքն էլ էնքան նախշուն ա ինըմ, վըեր էլ խոսկավ ասվիլ չի։

Մին օր թաքավերին տըղան ուրան նազիր-վազիրավը վըերսի յա կյամ էտ ծրմակը։ Հեռվան-հեռու տըեսնըմ ա, վըեր մին պըեն փըլըստրատին ա տամ։

Ուրան հընգյերունցը ասըմ ա.— Քյինինք տըեսնանք, էն հի՞նչ ա արևին տակին ինդի շողշողըմ, պըծըպածի անըմ։ Կոզի հեռու տըեղ, ամմա լավ պըեն ա ըրվըմ։

Ըտահանք քյընըմ ըն։

Շատ ըն քյընըմ, թա խըրեգյ, վըերչը հրսնըմ ըն էտ տոնը։

www.naregatsi.org

Թաքավերին տըղան շատ ա խընթըրմ, վըեր թողին նի մըննի էտ տոնը տըեսնա։ Ըտահանք համեցեք ըն անըմ։ Թաքավերին տըղան նի յա մընընըմ էտ պալատը, էտ ըխճըկանը տըեսնալն ըքաստ սիրահարվըմ ա, վըեչ մին պըեն չի կարըմ խոսի, օշը կուրցունում ա։

Վըերչը ասում ա. — Յըես եկալ ըմ ծըեր ախճիգյը օղիմ։

Էտ ըխճըկանը հաըը-մաըը ասըմ ըն. — Մունք ախճիգյ չօնինք քյըհղ տալի։

Տըղան ասըմ ա. — Զորք կհըվաքիմ, կյամ ծըեզ կըտորիմ։

Վըերչը մին խոսկի յըն կյամ։ Իրեք օրան ետը բիդի կյան ախճիգյը տանին։ Թաքավերին տըղան հոըը նան մոըը ասըմ ա լոխ։

Ընդրանք ռազի չըն կըենըմ, ասըմ ըն. — Մըեր անըմին լայըղ չի՞, վըեր մունք քյինինք ծըմակին ախճիգյը պըերինք մըեզ հարս։

Տղան ասըմ ա.— Չէ, էտ ախճիգյըն ա, օզըմ ըք, օզեցիք, օզըմ չըք, մին ա ես օղելու յըմ, կլինա ըմ յոր օնելու, կորչիմ։

Անց ա կըենըմ ժամանակ։ Թաքավերին տըղան լավ-լավ շորեր ա կարիլ տամ, լավ-լավ պըեններ ա առնըմ էտ ըխճըկանը հետի։ Վերչը հաըը-մաըը ղաբուլ ըն կըենում, եր ըն կըենըմ պադրաստոթուն քաշըմ, մարթիքյ ղարկըմ, վըեր քյինին հըրսնացուն պըերին։ Էտ ղարկած մարթկանցը մեչին ա ինըմ թաքավերին պալատին ղուլլուղչին, ուրյան սրեվտեղ ըխճըկանը նըհետ։ Էտ ղուլլուղչուն աշկը շուտանց ար թաքավերին տըղին յրան, օզըմ ար ուրյան ախճիգյը տա ընդրան։ Տա աղի պիլիթ ա թըխըմ էտ ըխճըկանը ուտուցընըմ։

Վեր փայտոննին ուրուր հետա հըրսընքավերնին եր կալած քյընըմ ըն, էտ ղուլլուղչին ուրանց փայտոնը մին խըրեգյ ետըցընըմ ա։ Էտ պիրանան վարթ-մանիշակ թափվող ախճիգյը շատ ա ծըրավըմ։

Ասըմ ա.— Հի՞նչ կինի՞, մին խըրեգյ ճուր տաք ինձ։

Էտ ղուլլուղչին ճուր չի տամ։

Վերչը վըեր էտ ախճիգյը շատ ա ղաչանք անըմ, էտ ղուլլուղչին ասըմ ա. — Ճուրը աշկի լուսավ ա, թող աշկըտ հանիմ, տըեղը ճուր տամ։

Էտ ախճիգյը ռազի յա կըենըմ, էնքան ծարավ ա ինըմ։ Ղուլլուղչին աշկին մինը հանըմ ա, տինըմ ջուրուիմը, էտ ըխճըկանը մին խըրեգյ ճուր տամ։

Քյընըմ ըն, քյընըմ, էտ ախճիգյը էլհա ծըրավում ա, ասըմ. — Հի՞նչ կինի, ինձ մին խրեգյ ճուր տաք։

Ղուլլուղչին ասըմ ա.

www.naregatsi.org

— Ճուրը աշկի լուսավ ա, թող աշկըտ հանիմ, տըեղը ճուր տամ։

Էտ ախճիգյը ռազի յա կըենըմ։ Ղուլլուղչին էն մին աշկըն էլ ա հանըմ, քըցըմ ջուրը, էլհա մին խրեգյ ճուր տամ։

Վըեր էրկու աշկավ քուռուցնըմ ա, պըրծնըմ, էտ ղուլլուղչին գյրաավա յա քըցըմ էտ ըխճըկանը փըսակին շորերը հանըմ, ուրան ըխճըկանը կյաց տամ, ըտրան էլ կուպի տամ, քըռի տամ, փայտոնան տըեն քըցըմ։ Փայտոնը քըշըմ ըն, քյինըմ։

Էտ ախճիգյը մըննըմ ա ճընապարին ղրաղի մի խանդակըմ, աշկերը քոռ, լաց ինելիս։ Վըեր տըսնըմ ա սաս-սամուր չիկա, էտ ախճիգյը էտ մոշին քոլերը, էտ բիզի մնան տուս տեռած փոշերը ծըեռքերավը տըես-տըեն ընելավ, փուրսող տալավ, մին թահրավ ըտըղան տուս ա կյամ, նի մըննըմ ծըմակը, ծըերքերավը տըփտըփելավ քյընըմ ա մին ծառի տակի նըստըմ, էնքան լաց ինըմ, վեր էտ ծառին տակը լցնըվըմ ա մարքարիդավ, վըեսկե քյարփուճավ։

Մին էլ լըսըմ ա ծըմական մին կացնի սաս ա կյամ։ Տա էլհա տափերը չումգռոտելավ փուրսող քյընըմ ա մին խրեգյ մուտանըմ, ծեն տամ։ Վեր շատ ծեն ա տամ, էտ ծենին յրա մին պառավ մարթ, վըեր ծըմակն ար եկավ փաղ անելի, լսըմ ա։ Էտ սասին յրա կյամ ա տըեսնըմ մին քոռ ախճիգյ, իրեսը ծըեռքերը չընգռոտած էն ա ըտեղ եր ընգաճ։

Էտ ախճիգյը էտ պառավ մարթին նաղլ ա անըմ ուրան կլխավը ընցածը, ասըմ. — Ա՛ հոր տըեղ հայր, ինձ եր կավ տար ծըեր տոն, ես քյըեզ շատ օքուլթ կտամ, ինձ թողիլ մի էս յաբանա ծըմակըմը, ինձ կյուվի, կազանի պաժին մ՚անիլ։

Էտ մարթը ասըմ ա. — Ա՛ բալա, մին կըտոր հաց օնիմ ինք առ քյըեզ տամ, ամմա կարիլ չըմ քյըեզ տոն տանիմ, էնա տանը օխտը ախճիգյ օնիմ, օխտեքան էլ կյըշըկյրող, մինաակ մըեչընեերին մինն ա պատառ լավ։ Դե քու աշկերտ էլ քոռ ա, տանիմ քյըեզ հի՞նչ անիմ, հունց ապրիմ։

Էտ ախճիգյն ասըմ ա. — Ինձ վեչ մին պեն պետքը չի, թաքյ լհա տոն տանիս, հալա ես ըմ ծըեզ պահելու, հենա էն խանդակըմն էլ, էն ծառին տակին էլ էնքան վըեսկե, մարքարիդ կա՛, քյինի եր կավ ինձ էլ նըհետըտ տիր արաբին յրան, տար։

Էտ պառավ մարթը ուրխանըմ ա, քյընըմ ա լոխ վըեսկին նան մարքարիդը յոր օնըմ, էտ ըխճըկանն էլ ըրբին տինըմ, տանըմ տոն։

Կընեգյը նան ըխճըկերքը վեր տըեսնըմ ըն, կըզնըվըմ ըն հորը

www.naregatsi.org

յրան, ասըմ. — էտ հո՞ր ըս էտ քոռը եր կալալ, պերալ, մունք իսկի կարըմ չընք ապրինք, ըտրան էլ կըլխավըն ըս պըերալ։

Լոխճան կուճի ախճիգյը ասըմ ա. — Լավ ըս ըրալ, ա՛ հայր, վրեր պերալ ըս, ես կպահիմ։

Հայրը ըխճըկորանցը յրան կըղնըվըմ ա, ասըմ. — էտ ախճիգյը մըհղ լոխճիս էլ պահելու յա, մին տըեսեքյ հիշքան վրեսկե, մարքարիդ ըմ պըերա՞լ։

Էտ վրեր տըէսնըմ ըն, ըսկըսըմ ըն էտ ըխճըկանը առաչին ծառայթուն անիլը։ Ճուր ըն տինըմ, էտ ըխճըկանը լըղըցընըմ, թիմըզցնըմ, յորղան-դոշակի մըեչի տինըմ։ Էտ վրեր վրեննը ըշտըղին տիրալ ար, լոխ վրեսկե քյարփուճճի ար տըեռալ, էտ ըխճըկերքը հրվաքըմ ըն։

Անց ա կըեննըմ մին խիլլա վախտ, էտ ախճիգյը էտ պառավ մարթին մին քանի փոնջ վարթ, մանիշակ ա տամ, ասըմ. — Ա՛ հայր, էս մին փոնջ մանիշակը նան վարթը տար քըղաքըմը թաքավերին պալատին քըշտին ծախի։ Վրեր առնող ինի, ասի ես փողավ չըմ ծախըմ, աշկի լուսավ ըմ ծախըմ։ Վրեր ասին, պա աշկի լուսավ պրեն կինի՞, ասի թա պա էս ծուռը մինչև կյոտկատրեղ եկած, ծուռն ծըմեռնը վարթ, մանիշակ կինի՞, համ էլ լավ եշի, տըես աշկը աչ ջուբան ա հանըմ, թա ծախ, մըետըտ պահի։

Էտ պառավ մարթը յոր ա օնըմ մին պուճուր զանբուլի մեչի տինըմ, տանըմ քաղաք, թաքավերին պալատին քըշտին կանչըմ. — Ա՛յ լա՛վ վա՛րթ, այ լա՛վ մանիշա՛կ։

Դաստի էտ ղուլլուղչին տուս ա կյամ, ասըմ. — Ա՛յ վա՛րթ, մանիշակ ծախող, եք ըստեղ, քանի՞ յը՛ս տամ էտ վարթը նան մանիշակը։

Էտ պառավ մարթն ասըմ ա. — Ցըես փողավ չըմ ծախը՞մ, աշկի լուսավ ըմ ծախը՞մ։

— Պա աշկի լուսավ պեն կինի՞։

— Պա էս ցորտ ծըմեռնը վարթ, մանիշակ կինի՞։

Ճարը կըտրած էտ ղուլլուղչին աչ ջուբան էտ ըխճըկանը աշկին մինը տուս ա օնըմ, տամ էտ պառավին, վարթը, մանիշակը տանըմ, թաքուն տամ ուրիշն սրեվտեզ ըճխըկանը, ասըմ. — Ինք առ, տիր քըթիտ տակի քըթկալին մեչին, վրեր թաքավերին տըղան կյա՛, սրտըսոտ ծըծաղի, էտ վարթ նան մանիշակը եր քըցի, վրեր գյիդա՛, թա տու էն ախճիգյըն ըս։

Էտ պառավ մարթը էտ մին աշկը պըերըմ ա աչ տըեղը քըցըմ։ Էտ աշկը սըղանըմ ա։

www.naregatsi.org

Մին քանի վախտան յետը, էլհա էտ ախճիգյը ծրծըղելիս պիրա-նաան եր տրեռած վարթը, մանիշակը տամ ա էտ պառավ մարթին, ասըմ. — Ա՛ հաըր, տար քաղաքը, էլհա պալատին քըշտին ծախի, վրեր առնող ինի, ասի աշկի լոյսավ ըմ ծախըմ։

Իտի էլ անըմ ա։ Տանըմ ա քաղաք, պալատին քըշտին կանչըմ. — Ա՛յ լավ վա՜րթ, մանիշակ։

Էտ ղուլլուղչին դեհա, դեհա, յրա պըրծած, թայդի, տոյս ա կյամ, ասըմ. — Ա՛յ վարթ, մանիշակ ծախող, եք ըստեղ։ Էտ պառավ մարթը քյինըմ ա կոշտը։

Էտ ղուլլուղչին ասըմ ա. — Քանի՞ յը՜ս ծախըմ։

— Աշկի լոյսավ ըմ ծախըմ։

— Պա աշկի լոյսավ պըեն կինի՞։

— Պա էս ծոյն-ծըմեռնը վարթ, մանիշակ կինի՞

Ճարը կըտրած էն մին՝ ծաչխ ջուբան աշկին լոյսը հանըմ ա, տամ էտ պառավ մարթին, վարթը, մանիշակը տանըմ տամ ըխճըկանը, վրեր տինի քըթկալին մեչին, վրեր թաքավերին տըղան կոշտը կյա, ծիծաղի, եր քըցի, վրեր դյիդա, թա էն ախճիգյըն ա։

Էտ պառավ մարթը պըերըմ ա էն ծաչխ աշկըն էլ տըեղը քըցըմ, էտ ախճիգյը լըվանըմ ա։

Մին շաբաթանը ետը էտ ախճիգյը էտ պառավ մարթին շատ վրեսկե յա տամ, ասըմ. — Մեր քաղաքան մին խրեգյ հրեռու ինձ հետի մին պալատ շինիլ տո, վրեր թաքավերին պալատան լավ ինի։

Էքսը պառավը ուատա-փաչհլա յա փըռնըմ, էտ ըճխըկանը վրեննին տական տոյս եկած վրեսկե քյարփուճներան մին վրեսկե ամարաթ ա շինիլ տամ, վրեր արևի մընան ալավ-ալավ ա անըմ։ Էտ ախճիգյը ըսկըսըմ ա էտ պալատին երի առաժըմը ապրիլը։ Տոնը լըցնըմ ա աշխարքիս լավ-լավ սարքերավը, լոխճան ղաշանգյ պըեներավը։ Լավ օտելի պեներավը... Էտ պառավ մարթին ըխճըկորանցը մարթի յա տամ, էն պուճուրըն էլ պերում ոսրան կոշտը։

Էտ պիրանաան վարթ նան մանիշակ եր տրեռնող ախճիգյը ցիրեկը բախրա յա տրեռնըմ, ընգնըմ ծըմակնին, քըշերը ախճիգյ ա տրեռնըմ, կյամ պալատը։

Նշանտիրիքյին վախտը թաքավերին տըղան էտ ըխճըկանը մին մըտանի յա ինըմ տրված։ Էտ մըտանին էն ա ինըմ են ղուլլուղչուն ըխճըկանը մաննըմը։ Էտ ղուլլուղչուն ախճիգյը էտ պըրանաան վարթ, մանիշակ եր տրեռնող ըխճըկանը անիցկ ա տամ, վրեր էտ ախճիգյը ամմեն օր շտափի, քանի վրեր ընդրա դառդան թաքավերին տըղան ոսրան սիրըմ չի՞, ոսրան կոշտը չի կյա՞մ, էն կըլխան էլ գյոդում

www.naregatsi.org

ար, վրեր տա ուրան նշանածը չի։ Ետրա հետի էլ տա ուրան պալատին հայաթըմը մին չադիր ար եր թողալ, ընդեղ ար ապրըմ։ Ցիրևկըն էլ քյընըմ ար վրերսի։

Մին հետ ծրմակըմը թաքավերին տըղան մին բախրա յա տըեսնըմ, հիշքան քըմական ա ընդնըմ, թա փըռնի, կարըմ չի՞։ Թըվանգյը տըրըքցնըմ ա, դյուլլան կյամ ա էտ բախրին վըեննան կըենըմ։ Բախրան փախշըմ ա, կյամ էտ վրեսկե պալատը, ախճիգյ տըեռնըմ, քյինըմ երի ատաժին ուրան օթախը, թեքյ ընդնըմ։ Թաքավերին տըղան հետան վաղ ա տամ, թա փըռնի, տըեսնըմ ա աշկան կորավ։ Տա ատնին հետքավը քյինըմ ա, եր ինըմ էտ պալատին երի ատաժը, նի մընըմ էտ ըխճըկանը օթախը, տըեսնըմ մին ախճիգյ վրեսկե կարավաթին յրան պառկած, օշը տարած, կըռնան էլ ըրուն ա կյամ։ Էտ տըղան տըեսնըմ ա, վրեր էտ ախճիգյը ուրան նշանածին շատ նման ա։ Տա ճուր ա շաղ տամ, էտ ըխճըկանը ետ պերըմ, ետավ էլ կըռնին յարան կապըմ։ Ախճիգյը վրեր օշը կըլոխն ա հրվաքըմ, լոխ էտ տըղին նաղլ ա անըմ ուրան կըլխավը ընցածը։ Պատմելիս լաց ա ինըմ, արտասունքնին մարքարիդ ա տըեռնըմ, վրեր ծիծաղըմ ա, պիրանան վարթ, մանիշակ ա եր տըեռնըմ։ Թաքավերին տըղան ճնանչըմ ա ուրան սիրածին, ուրան նշանածին։ Էլ տոն չի քյընըմ, մըհեկ էլ էտ ըխճըկանը պալատին քըշտին մին չադիր ա եր թողըմ, ըտեղ ապրըմ։

Հաբը ըտրա հետան ման ա կյամ։ Հընգյերունքը տըեղը քըթնուն ըն, օղըմ ըն պալատը տանին։ Ամմա էտ տըղան ասըմ ա. — Իմ հոր ըսեցիք, վրեր յըես տոն չըմ կյալու, միչև էտ ըխճըկանը օղիմ վեչ, միչև ըստրա սըերտը կըկըղցնիմ վրեչ։

Անց ա կըենըմ մին խիլլա վախտ, վրերչը թաքավերին տըղան էտ ըխճըկանը սըերտը կըկըղցընըմ ա, մին հանդավ ըտրա նըրհետ ապրըմ։ Ըտրանա մին ախճիգյ ա ինըմ։ Էտ ախճիգյը տըեռնըմ ա չորս տըրեկան։ Մին հետ հորը նըրհետ էտ խոխան քյընըմ ա թաքավերին պալատը։ Ինքըն էլ մորը շատ նման ա ինըմ, ղաշանգյ-սիրուն։ Թաքավերը նան թաքուհին վրեր տըեսնըմ ըն, ուրախանըմ ըն։

Թաքավերը տըղին ասըմ ա. — Եկեք ըստեղ ապրեցեք։

Էն պըրանան վարթ, մանիշակ թափվող ախճիգյը խոխին ասած ա ինըմ, վրեր ուրան մուտանան թաքավերին հարսիցը օղի, պերի ուրան տա։

Էտ պալատըմը էտ խոխին շատ բաղարկեք ըն տամ։ Ամմա նա էտ մուտանան ա օղըմ։

Թաքավերին հարսը տամ չի, ամմա ըստըղան-ընդըղան էնքան

www.naregatsi.org

ասըմ ըն՝ «Տո հա, տո» վրեր էտ սև տեզ հարսը մաննան հանըմ ա, տամ էտ խոխին։

Խոխան վրեր մտանին յոր ա օնըմ, ասըմ ա. — Էս իմ մոր մըտանին ա, քու ծրեռքիտ հի՞նչ ա անըմ, էլ քյըեզ չըմ տալու։

Թաքավերին կյեշ հարսը կըզնըվըմ ա մարթին յրան, վրեր խոի պեներ ա փըռնալ։ Ամմա դե էլ ըշտե՛ղ։ Թաքավերին տըղան լոխ ուրան հոր նան մորը նաղլ ա անըմ։

Թաքավերը վրեր լոխ ըսկանըմ ա, ասըմ ա. — Դե քյինա հըվաքի պըեր ըստըեղ։

Նա շատ ա ուրխանըմ, վրեր ուրան հարսը ճարվալ ա։ Մըեծ պադրաստոթուն ա քաշըմ, քյինըմ ըն վրեր պերին։

Վրեր էն կյեշ հարսը օզըմ չի մտանին տա, մըտանին մաննան ծիքյ-ծիքյ ընելիս էս կյեղեցիկ ըխճըկանը օշը տանըմ ա։ Մըտանին խոի զորութուն օնար։ Կյամ ըն տրեսնըմ օշը տարած, կարավաթին եր ընգած։ Էլհա վրեր մըտանին քըցըմ ըն մաննը, ծրեռաց եր ա կըենըմ, էլ շտափըմ չի։

Ըստրանք ուրանց հարսը տոն ըն պերըմ, քառասուն օր, քառասուն քըշեր հըրսանիք ըն անըմ, ուրխանըմ, քյեփ անըմ։ Էն սրեվ տեզ հարսըն էլ ուրան չարոթունան ճաքվըմ ա, մըեռնըմ։

Ըտրա մորն էլ ծիյին հաքյվան կապըմ ըն, քաշ-քաշ անըմ, մըեծ պատառը անգուճըն ա մընըմ։

Էտ ախճիգյը էն պառավ մարթին կուճուր ըխճըկանը պըերըմ ա պալատ, փըսակըմ թաքավերին տըղին հընգյեր մին տըղի նհետ։ Էն պառավ մարթին էլ միչև ուրան գյանքին վերչը պալատըմը պահըմ ա։

Էտ պիրանաան վարթ, մանիշակ թափվող ախճիգյը ուրան մարթին, ուրան խոխին նըհետ ըտեղ ապրըմ ա, օրախ, սիրավ, շատշատ տարինի։

Ընդրանք հասին ուրանց մուրազին, մունք էլ հասնինք մեր մուրազին։

Էն պեցուր արևին անա վրսկըշափաղ տրեռած երգինքան արևի օխտը շոխկ ա եր ընգնըմ. մինը ասողին, մինը լըսողին, մինը էս հաքյաթը լուա աշխարք հանողին, մինն էլ տիպողին։ Էն իրեք արեվին շոխկըն էլ լավ, սըերտը պեց մարթկանց, վեր դըլվըմը սար չունեցող մարթկանց քյոմաքյ ա անըմ պարի խոսկավ։ Արևին էդ շողերը թող տանին ամեգյը ուրանց տրնները լուսավըերին, օթախնին ղաշանգյցընին, սարքին, վրեր ամմեն նի մընելիս սըրտընին փառավերվի՞։

www.naregatsi.org



5. ԿՈՋՆԻ ՏԸՂԱՆ

Ինըմ ա, չինըմ մին մարթ, մին կընեգյ։ Ըտրանց խոխա չի ինըմ։ Ըտրանք շատ քյասիբ ըն ինըմ։ Ամմեն օր մարթը նան կընեգյը ուրիշուր իրեսի եղըմ ըն, սուս անըմ։ Լոխճան շատ քընեննքյ ըն անըմ խուխի գաղրա։

Էտ մարթին ասըմ ա. — Բա մըեզ մին խոխա չինի՞, բա մըեր կոճին տակին մին խուխու ծեն չի կյա՞։

Անց ա կըենըմ մին խիլլա վախտ։ Մին գընըմ էլ էտ մարթը ծըմական ճըեխ պերելիս, ճընապարին, մին չըփարի տակի մին կողնու ճոտ ա ճարըմ, յոր օնըմ, տոն պըերըմ։

Կողնուն տանը թախտին տակին ըն պահըմ։ Մին օր էլ մարթըկընեգյ խոսըմ ըն էլհա խոխի անա, վըեր ուրանց խոխա չօնին, էտ կողնին թախտին տական տուս ա կյամ, մարթի մնան խոսըմ, ասըմ. — Յըես ծըեր տըղան ըմ, վախիլ միք, յըես ծըեզ լավ ըմ պըհելու։

Մարթըկընեգյ մընըմ ըն զարմացած, տափան կացած։ Կողնին էլհա խոսըմ ա, ասըմ. — Յըես ծըեր տըղան ըմ, քյեցիք, թաքավերին ախճիգյը ինձ մըհար օղեցիք։

Էտ կընեգյը ասըմ ա. — Բա թաքավերը ուրան ախճիգյը կողնուն կտա՞։

Մարթն ասըմ ա. — Քյինի օզի իլի՞, բալքյաս տըվավ։

Ար ըն կըենըմ մարթըկընեգյ քյընըմ թաքավերին գաղրաձին հարանըքարին նըստըմ։

Կյամ ըն ըտրանց տանըմ թաքավերին կոշտը։ Ըտրանք հըմըն-

www.naregatsi.org

չելավ, կոչ-կոչ կյալավ, լուզունն փալթանգյ շինած ասըմ ըն.— Թաքավերը ապրած կենա, մունք եկալ ընք ծրեր ախճիգյը օզինք մրեր տըղին հետ։

Թաքավերը շատ ա ըչըղվըմ, կըզնըվըմ, օզըմ ա թա ըտրանց կլոխնին կըտրիլ տա, մին էլ մտածըմ ա, թա ըտրանք հի՞նչ ըն, վրեր հալա կըլխընին կըտրելի հրամման էլ տա։ Վրճռըմ ա ըտրանց մին հենց պրեն ասի, վրեր քյինին, էլ կյան վրեչ։

Ըտրանց ասըմ ա.— Թա իմ պալատիս մրնան մին ղաշանգյ պալատ կըշինիքյ, հալա իմ պալատաս էլ լավ, ախճիգյըս ծրեզ կըտամ։

Մարթըկընեգյ կյամ ըն տոն, նաղլ անըմ ուրանց կոզնի տըղին։

Կոզնի տըղան ասըմ ա. — Վրեչի՛նչ, ա՛ հար, քյինի ըշտըղան ինձ եր ըս կալալ, ընդեղ ասի. «Կոզնին մին կտոր մարմար ա օզըմ»։ Էտ մարմարը քյըեզ ըն տալու, եր կալ պրեր, թաքավերին պալատին առաչին եր քըցի։

Էտ մարթը իտի էլ անըմ ա։ Քըշերը թաքավերը եր ա կրենըմ, տրեսնըմ մին ուրան պալատան լավ պալատ ա շինած ըտեղ։ Մընըմ ա մաթ մընացած, փանթ տրեռած, կործը տանիլ տըված։

Էն մին օրը կոզնուն մարը էլհա քյընըմ ա հարսնըքարին նըստըմ։ Կյամ ըն տանըմ թաքավերին կոշտը։

Մարն ասըմ ա. — Թաքավերը ապրած կենա, ասածըտ կադարալ ընք, մըհեկ հի՞նչ կասիս։

Թաքավերն ասըմ ա. — Մըհեկ էլ էս ղաշանգյ պալատին առաչին մին հենց բախչա-բաղ շինի, վրեր աշխարքիս բարը-նուբարը մեչին ինի, աշխարքիս ծաղիկնին, ղուշերը մեչին ինին...

Կոզնուն մարը վրեր լըսըմ ա, քուռուփրեշմանն էտ ա տրեռնըմ, կյամ տոն, լոխ կոզնուն նաղլ անըմ, ասըմ. — Մըհեկ էլ թաքավերը մին հենց բախչա յա օզըմ, վրեր աշխարքիս բարը-նուբարը մեչին ինի, նախշուն ղուշերը, ծաղիկնին մեչին ինին։

Կոզնին ասըմ ա. — Ա՛ հար, եր կաց քյինի համին էն տրեղը, վրեր ինձ քըթալ ըս, ընդեղ կաղնի, ասի. «Կոզնին մին տիրև ա օզալ»։ Տիրևը եր կալ, պրեր քըցի թաքավերին տանը առաչին շինած մրեր պալատին հայաթը։

Իտի էլ անըմ ըն։ Ըտեղ մին լավ բաղ ա տրեռնըմ փանտաննեռավ, ծըլվըլալիս ղուշերավ, հո՛ւ վա գյուդում էլ հինչերա՛վ։ Վրեր թաքավերը էքսը տրեսնըմ ա, օզըմ ա, թա օշը տանի։

Էն մին օրը էտ կընեգյը էլհա քյընըմ ա թաքավերին դըրբըզին

www.naregatsi.org

հարանըքարին նըստըմ։ Ծառեքը կյամ ըն ըտրան տանըմ թաքավերին կոշտը։

Թաքավերն ասըմ ա. — Թա էտ պալատին լոխ պատերը կըծամակի թանգյակին գյաբոցավ, լավ-լավ սարքերավ, մախմուր տըրըմթիկոցավ, լավ ճուղուպրի ըստոլներավ, վրեսկավ, արծաթավ, էն վախտը ախճիդյըս քու տըղիտ կըտամ։

Մարը կյամ ա նաղլ անըմ լոխ։ Կոզնին ասըմ ա. — Ա՛ հաբր, կըյինիս ինձ քըթած տեղը կաղնիս, ասիս. «Կոզնին մին կըտոր մախմուր ա օղըմ»։ Մախմուրը պերելու յըն քյըհզ տան, յոր կոնիս պերիս, քըցիս էն պալատին մաչը։

Իսի էլ անըմ ըն։ Պալատին օթախնին լցնըվըմ ա թանգյակին սարքերավ, իլած-չիլածավ։ Կոզնուն մարը մին էլ ա քյընըմ հարանըքարին նըստըմ։ Կյամ ըն գյըղոտենքյը ըտրան տանըմ թաքավերին կոշտը։

Թաքավերն ասըմ ա. — Դե, մըհեկ ախճիդյս տամ ըմ, քյինա՛ տըղիտ պըեր, տըեսնամ։

Էտ կընեգյը կյամ ա տոն, տըղին տինըմ մին մըժմահու յրա, տանըմ, ասըմ. — Թաքավերն ապրած կըենա, հետե իմ տըղաս։

Թաքավերըն ասըմ ա. — Կոզնի յա, թա հու վա, վըեր խոսակ ըմ տըվալ, պիտի ախճիդյըս տամ։

Ըտահանք օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ։ Ամմեն քըշեր կոզնին մին կյեղեցիկ տըղա յա տըեռնըմ, ցիրեկը էլհա կոզնի յա տըեռնըմ։ Կոզնին հաբլա՛ միշև ուրան կընգանը նըհետ կապվիլը ընդրան ասած ա ինըմ, թա մինըն ու մինը գյիդա՞ էտ պըենը, վըեր ինքը մարթ ա տըեռնըմ, ինքը հավիդյան կորչելու յա։

Հունց ա պըտահըմ, թաքավերին ախճիդյը ուրան մարթին կյեղեցիկ ինելը նաղլ ա անըմ ուրան հընգերունցը քըշտին, ըտրանավ օղըմ ա պարծանք համարի, վըեր ուրան մարթը քըշերը մին ղաշնդյ տըղա յա տըեռնըմ, վըեր խսի, վըեր ինդի, հու վա գյուդում էլ հի՞նչ...

Ըտրանա ետը կոզնին քյընըմ ա, կորչըմ։

Ախճիդյը ման ա կյամ, ման, էլ քըթնըմ չի։ Էտ ախճիդյը արկաթի տըրեխնի յա շինիլ տամ, մին արկաթի կավազան էլ նըհետը յոր օնըմ, քյընըմ։

Քյընըմ ա քյընըմ ճընապարին հարցըփորց անըմ, վրեչ մինը տըեղը գյուդում չի։ Արկաթի տըրխնին վրեր մաշըմ ա, ետավ վընըստեպիգյ ա շոռ կյամ մարթին հրետան։ Ըտրա շորերը ճըրդոտվըմ ա, վրեննները ճըքճըքոտըմ, իրեսը արևն էրըմ, էլհա ետ չի տըեռնըմ,

www.naregatsi.org

իտի սոված-ծարավ մանն ա կյամ սարան՝ սար, ծորան՝ ծոր, անց ա կրենըմ փըշփըշոտ տեղերավ, նեղ կածաններավ, ծըմակներավ, կյետերավ, վրեչ մին տրեղ մարթին ճարըմ չի։ Ախրը վրերչը մին հեռու ճընապարի նըղացած եր ա ընգնըմ։ Մին էլ վրեր օշը կըլոխն ա կյամ, տրեսնըմ ա ուրուն եր ընգած տրեղին քըշտին մին խոր փոս կա։ Էտ փոսըն ա նի մընըմ, տրեսնըմ մին տոռնը։ Թաքավերին ախճիգյը տոռնը պենըմ ա, նի մընըմ, տրեսնըմ մին օթախ, էրկու կարավաթ տիրած։

Ասըմ ա.—Քալքաս իմ մարթըս ըստրե՞ղ ա, նի մընիմ էս կարավաթին տակը, թաքուն եշիմ։

Վրեր մըթնըմ ա, տրեսնըմ ա, էսա մարթը եկավ, ուրուն կարավաթին թեքյ ընգավ։ Թաքավերին ախճիգյը կյողյը կացած տրեղան տուս ա կյամ, մարթին վիզավը ընգնըմ, ղաչանք-պըղատանք անըմ, վեր ետ տրեռնա, կյա պալատը։ Իտի մին կերպ համոզըմ ա։

Կոզնուն մարը ուռուբանա տրեսնըմ ա, վրեր ուրուն տըղան փախալ ա։ Տրես ա շոռ կյամ, տրեն ա շոռ կյամ, ճարըմ չի։ Դաստի գյոտոմ ա, վրեր թաքավերին ախճիգյը կինի տարած։ Ըսկըսըմ ա ըտրանց հետան քյինիլը։

Թա թաքավերին ախճիգյը մին վերստ ա փախչըմ, մարը տասը վերստ ա յրա հրսնըմ։ Վրեր ըտրանք տրեսնըմ ըն՝ մարը յրա յա հրսալ, մինը ծառ ա տրեռնըմ, մինը՝ օխծ, յրան փըթաթված։ Ըտրանա ետը վրեր մարը հրռանըմ ա. էլհա ուրուանց ճընապան շարունակըմ ըն։ Վրեր մարը էլհա կյամ ա, հրսնըմ, մինը ճեղաց ա տրեռնըմ, մինը՝ ճըղացպան։ Վրեր մարը հրռանըմ ա, էլհա մարթ ըն տրեռնըմ, փախչըմ։

Վրեր մարը էտ տրեսնըմ ա, ասըմ ա. — կա՛ցիք, փախչիլ մի՛ք, էլհա մարթ տրեռիք, թա տուք ուրուր արժան ըք, յրես ծրեղ կփըսակիմ։

Ըդրանք կաղնըմ ըն։ Մարը տրեսնըմ ա, վրեր ուրուր արժանի յըն, ասըմ ա. — Քյնացիք ծրեղ հետի բախտավեր ապրեցեք։

Մըեր էն սըրսարոտ, ղաշանգյ Ղարաբաղին Ղըղղալա շենին կյինան իրեք ըստաքան լըցած ա, տիրած ստոլին, եր կալիք, խմեցիք, էս մին ստաքանը՝ ասողին, էս մին ստաքանը՝ լսողին, էս մին ստաքանն էլ՝ էս հաքյաթնին լուս աշխարք քըցողին։ Էտ պըծըպածի ասըմ, էտ արևին համ նան հոտը, մեչին կյինան հու վրեր խմի, էլ մահ, մըեռնիլ չօնի, չունքյի անմահական ա։

www.naregatsi.org

6. ՄԱՐԹ ՕՏՈՂ ԱԽՃԻԳՅԸ

Ինըմ ա, չինըմ մին կընեգյ։ Էտ կընգանը ինըմ ա մին տըղա, էրկու ախճիգյ։ Մըեծ ախճիգյը շատ օտող ար։

Մին օր ըտրանց մարը օղըմ ա հաց թխի։

Տըղին ասըմ ա. — Քյինի ճախ պեր, տանինք թորենը վառինք։ Ցրես էլ ճիրի յըմ քյինըմ։

Տանը վեչ մինը կար վեչ։ Էտ ախճիգյը ըրըրոցան տուս ա կյամ, քյինում մեղաիրին յրան փըռած պուլերը լոխ օտըմ։

Ախպերը կյամ ա, տրեսնըմ, մրնըմ մաթ մնացած։

Ասըմ ա. — Ա՛ մար, քանի էս վեչ մրծացած, տափան կացածը պուճուր ա, տար մին տեղ ուդ ըրա, էտ վեր մրծանա, մեր տոնը քանդիլու յա։

Մարը հրվատըմ չի։

Մին դոնըմ մարը կյողլ ա կրենըմ, ըտրա բուսը պահըմ։ Տեսնըմ ա ախճիգյը ուրուրուցան տուս եկավ, ամաններին մածունը լոխ կերավ, էլհա նի մտավ ուրուրուցը։

Տըղան մորըն ասըմ ա. — Ա՛ մաեր, յրես էլ իստի կարիլ չըմ ապրիմ, էս վեչ մրխթաերածը մեր կըլեխը մին օլին ա պերելու, վերչը մրեզ օտելու յա։

Ասըմ ա, պըրծնըմ, մին չորանի մրհակ յոր օնըմ, հրդե ինըմ, քյինըմ հետու տեղեր։

Շատ ա քյինըմ, խըրեգյ ա քյինըմ, մին քյարվանի յա ջիհըմ։ Էտ քյարվանին մրեծը ըտրանա հրըցնըմ ա, ասըմ. — Ախպեր,

www.naregatsi.org

ծեռքիտ մըհակը հի՞նչ փեդա յա, թա գյիդացիր, յըես քյըեզ մին օղտի պեռնը վըեսկե կտամ։

Էտ տըղան վեչ մին պեն չի ասըմ, սուսըփուս ուրըն ճընապարըն ա քյինըմ։

Քյինըմ ա, քյինըմ, տըեսնըմ մին ծորըմ մին ծոխ ա եր ինըմ։ Մըթկըմը տինըմ ա, վեր հինչ էլ ինի, էտ ծոխին յրան քյինի։

Քյինըմ ա, տըեսնըմ էրկու քոռ մարթ, մին տան մեչի ապրըմ ըն։ Ըտրանք շատ հարուստ ըն ըրվըմ, վեչխարի սուրսունը տըռանը, ամմա պահող չի կա, ժառանգ էլ չօնին, թա ուրանց վեչխարը պահի։

Էտ տըղան մըթկըմը տինըմ ա ըտրանց քըշտին կենա, ըտրանց վեչխարը պահի, ասի էլ վեչ, թա ինքյը հո՞ւ վա՞։

Անց ա կըենըմ մին խիլլա վախտ։ Մին օր էտ քոռ մարթը ասըմ ա. — Ա՛ կընեգյ, համոթ չինի հըրցնիլը. էս ա շատ վախտ ա, փորըս քըշտանըմ չի։

Կընեգյըն էլ մարթին ա ասըմ, թա. — Ա՛ մարթ, բա ասիլ չը՞ս, իմ փորըս էլ չի քըշտանըմ։

Մարթըկնեգյ խոսկը մին ըն անըմ, փըռնին, գյիդաին էտ հո՞ւ վա, վեր ուրանց փայը թաքուն օտըմ ա։

Էտ տըղան էլ ա օզըմ, վեր գյիդաին, թա ինքը հո՞ւ վա։

Վերչը տըղան նաղլ ա անըմ, թա ինքը հու վա, հունց ա ըտեղ ինգալ, ասըմ ա. — Յըես ծրես օքուտ կտամ, թաք լհա ինձ յոր օնիք, հունցու ծեր վերթին։

Էտ պառավնին ռազի յըն կըենըմ, համ էլ ասըմ. — Ա՛ բալա, վեչխարին սուրսուն ամմեն վախտ կըքշիս բիդի էն վեր արևը մար ա մընընըմ, էն ղոլը, բիդի արևը տուս կյամ ղոլը չի քըշիս, էտ ղոլին շատ հարամիքյ կան։ Տըղան լըսըմ չի, քըշըմ ա բիդի արևը տուս կյալի ղոլը։ Վեչխարը ըրըծրցնելավ տանըմ ա սարերը, ծըմակնին, տեսնըմ մին օռնոց ա կյամ։

Էտ օռնոցին յրան էտ տըղան քյինըմ ա, տըեսնըմ մին ծորըմ, մին կյուլ ծընըմ ա։

Էտ կյուլը ըտրան ասըմ ա. — Ա՛յ տըղա, վեր վըեննըտ քըցալ ըս ըստեղ, լավ չըս ըրալ։ Վեր ճոխտ ծընեցի, գյիդա վեր քյըեզ օտիլ չըմ, վեր կենդ ծընեցի, քյըեզ կօտիմ։ Էտ տըղին սերտը օզըմ ա, թա ճաքի վըխնուրթունան։ Վեր էտ կյուլը ծընըմ ա, էտ տըղան մինը յոր ա օնըմ, քըցըմ ուրան թորբան։

Ըտրանա ետը կյուլը էրկուսըն էլ ա ծընըմ։ Էլ ետ տըղին օտըմ չի՞։

Էտ տըղան էրկու ծաքյ յոր ա օնըմ, կյամ տոն։ Ծըմակավը անց կըենալիս մին հըրսանիքի ծեն ա լըսըմ։

www.naregatsi.org

Ասըմ ա. — Մին մուտանամ, տրեսնամ, բաւլքաս էտ հըրսընքըմը ծանոթ մարթ ինի, մեր տանան հըրցնիմ։

Տըղան շատ ա քյինըմ, թա խըրեգյ, տրեսնըմ ա մին դուզ տեղ կյուլերին հըրսանիքն ա։

Էտ կյուլերը ըտրան ասըմ ըն. — Յա բեդմա հում մես օտիս, նտավ էլ մեր ասած հարցերին չողաբը տաս, յա թա չէ, քյըեզ օտելու ընք։

Էտ տըղան մին կոճ ա կտրըմ, ընդըմ, սրեսկը մեչին տընըմ ըտրանց, սրտըսոտ ասըմ. — Լաւ, հի՞նչ կինի, մինաւկ տուք ծրեր թաթերը պերնք տիրնք էս փեդին ղաթըմը, էն սիպտակ տեղը փափուկ ա, ծեր թաթերը լաւ ա ինելու։

Էտ կյուլերը ուրանց թաթերը տանըմ ըն տինըմ փեդին ղաթըմը։ Էտ տըղան փեդին ղաթան սրեսկը հանըմ ա։

Էտ կոճը ըտրանց թաթերը հոփ ա տամ ցըվըցնըմ։ Կյուլերը ղաչանք ըն անըմ, վեր ուրանց պեց թողի։

Էտ տըղան պեց չի թողըմ, ասըմ ա. — Ծրեզ պեց կթողիմ էն վախտը, վեր տուք տաք իմ հոր նան իմ մոր աշկերը, համ էլ ասիք, թա հունց բեդմա լիվըցնինքյ։ Էտ տըղան կյուլերին պեց ա թողըմ։

Ըտրանց մեծը քյինըմ ա, մին տիրևըմ փըթաթած, աշկերը մին էլ մին թեփուռ պերըմ, տամ էտ տըղին, ասըմ. — Ինք առ, հեսե աշկերը, քյըեզ ընք տամ։ Կըտանիս տեղերը տինիս, էս թեփուռն էլ կքըսիս լիվըցնիս։

Տըղան օրաս-օրաս կյամ ա տոն, ըտրանց աշկերը տեղը քըցըմ, թեփուռավը քըսըմ, լիվըցնըմ, էտ քոռ մարթն նան կընեգյը լըվանըմ ըն, աշխարքըս ուրանցըն ա տրեռնըմ։

Էտ տըղան ուրան թորբան հանըմ ա էն էրկու կյուլին ծաքը, ասըմ. —Ա մար, ըստրանց լաւ եշի, թող մըծանան, մրեզ պեթկը կրկյան։

Տանն իլած վախտըն էլ ինքըն ա ուրան ծեռքավը օտել տամ։ Էտ ծաքերը ըտրա յրան սրվերըմ ըն, մրծանալավ ըտրան քյոմաքյ ըն անըմ։

Անց ա կենըմ մին խիլլա վախտ։ Մին օր էլ էտ տըղան ուրուգյունը տանը նստած քընենքյ ա անըմ, մրետըն ա քըցըմ ուրան հարաղաթ մորը, օղըմ ա քյինի ընդրանց տրեսնա, ամմա հըմանչըմ ա էտ էրկունջի ծընողներեն ասի, լհա տրխուր նըստըմ ա։

Էտ պառավնին հըրցնըմ ըն, թա. — Ա՛ բալա, խե՞ ըս բեքյեփ։

Տըղան ասըմ ա. — Դե աստուծանա թաքուն չի, ծրղանա հի՞նչ

www.naregatsi.org

թաքուն պահիմ, օզըմ ըմ մին էրկու օրավ քյինիմ տուս, մեր խալխին տրեսնամ։ Ըտրանք համոզ ըն ինըմ։

Մարըն ասըմ ա. — Բա՛լա, քյինի, ամմա էրկու-իրեք օրան իվիլ կրենաս վեչ, մունք քյըեզ սըվերալ ընք, կարիլ չընք առանց քյըեզ կրենանք։

Տըղան ուրան էն ալվալի մըհակը յոր ա օնըմ, քյընըմ։

Հըսնըմ ա տոն, ուրանց ակուշկավը եշըմ, տրեսնըմ քյուրը եխտոտ, շորերը ճըրղոտած, մազերը թախկուճ տրեռած, հեն ա տանը նըստած։

Քյուրը վեր ախպորը տեսնըմ ա, ասըմ ա. — Ա՛յ ախպեր, պարով ըս եկալ, հազար պարի յըս եկալ, պեր վըրեննավըտ մին կանանչ-կյալմուր թիլ քըցիմ, վեր էսքան վախտ եկալ չըս, մըհեկ եկալ ըս։ Դե եք տոն, եք նըստի դինջայց։ Յըես էլ քյինիմ ծիտ կապիմ։ Ախպերը տանը նըստըմ ա։ Մին խրեգյ ետը քյուրը կյամ ա, ասըմ. — Ա՛յ ախպեր, ծիտ չորս վրեննանի յա իլա՞լ, թա իրե՞ք։

Ախպերը դաստի կըլոխ ա ընգնըմ, վեր ծիյին մին վրեննը կրերալ ա։ Ճարը կըտրած ասըմ ա. — Ձիս իրեք վրեննանի յա իլալ։

Քյուրը մին էլ ա քյինըմ ծիյին մին վրեննը օտըմ, կյամ ասըմ. — Ա՛յ ախպեր, ծիտ իրեք վրեննանի յա իլալ, թա էրկու։

Ախպերը ճարը կըտրած էլհա ասըմ ա.— Ծիս էրկու վրեննանի յա իլալ։

Քյուրը մին էլ ա քյինըմ, ծիյին էն էրկու վրեննը օտըմ, կյամ ասըմ. — Ա՛յ ախպեր, ծիտ առանց վրեններ ա իլալ, թա վրեննա՞վեր։

Ախպերը ասըմ ա. — Հա՛, ա՛ քյուր, ծիս առանց վրեններ ա իլալ։

Վեր քյուրը մին էլ ա քյինըմ, ըտրանց հըրևանը կյամ ա, էտ տըղին ասըմ. — Շուտ ըրա, տուս եք, քյինի, ծիտ լոխ օտելու յա, կյա քյըեզ էլ օտի, փախի, ազադվի, քու մոր կրերալ ա, ամմեն հինչ կրերալ ա, քյըեզ էլ ա օտելու։

Ախպերը վրեր էտ լոխ ըսկանըմ ա, մին տոպրակ մոխերավ լըցնըմ ա, պատալոկան կախ տամ, վեր քյուրը կյա, գյիդա, թա ինքըն ա, օզի թա օտի, աշկերը մոխրավ լըցնըվի, կարի վեչ շուտ հետան հըսնի։

Էտ ախճիգյը սաղ ծին օտըմ ա, կյամ, թա ախպորըն էլ օտի, տեսնըմ ա ախպերը տանը չի։ Տա յրա յա ընգնըմ էտ մոխրավ լիգյը տոպրակին, գյուդում ա, թա էն ա ախպերը մեչին։

Վեր տոպրակը ճըղվըմ ա, մոխերը եր ա տրեռնըմ, տրեռնըմ

www.naregatsi.org

աշկերը։ Տա միշև աշկերը սըրփըմ ա, էտ տըղան խիլլա՛ տեղ փախչըմ ա։ Ախճիդյը կըռքընին սրած, կըռքընին ղըրճըցնելավ, կյըզաղած, կըտաղած ախպորը հետան վազ ա տամ, խե հո՞ւնց ա վազ տամ, Բընչընա՛փա՛սը եր իլած, տըհանելավ, քըրտընքթաթախ։

Ճընապարին քյինող-եկողա հըրցնըմ ա։

Քյինող-եկողնին էլ վըխելան նըհետ ասըմ ըն տըեղը։ Էտ ախճիդյը ախպորըն ա հըսնըմ էն վախտը, վեր ախպերը հըսած ա ինըմ մին դա՛ռ տըեղ։ Ըտեղ էլ ինըմ ա էրկու ծըերանի ծառ։

Ախպերը տեսնըմ ա, վեր քյո՛ւրը հըսալ ա ո՛ւրա՛ն, եր ա ինըմ մին ծըերանի ծառ։

Քյո՛ւրը կյամ ա, ըսկըսըմ էտ ծըերանի ծառը կըռքընեռավը կըռծկործիլը։

Էտ տըղան վախտին էն պառավ ծընողներին ասալ ա, վեր թա ո՛ւրա՛ն մին պեն պըտահի, օրվան կըթած կաթնը սըվընալու յա, էն վախտը թող դա՛ստի պեց թողի էն էրկու կյո՛ւլին ճոտերին։

Մարը եշըմ ա, տըեսնըմ, օրվան կըթած կաթնը սըվացալ ա։ Տա պեց ա թողըմ էտ կյո՛ւլին ճոտերին։ Ըտրանք վազ տալավ, թանչոց տալավ, լո՛ւզո՛ւնին հանած, կյամ ըն հըսնըմ էտ տըղին, համին էն վախտը, վեր քյո՛ւրը էտ ծառը կըռքընեռավը կըտրալ ար եր քըցալ, ախպերըն էլ էն մին ծըերանի ծառին ճըղան փըռնելով անց ար կացալ էն մին ծառը, քյո՛ւրը էլհա կըռքընեռավը էտ էրկուջի ծառըն էլ ա կըտրըմ, խրեկ ա մընըմ, թա եր քըցի, ախպորը օտի։ Էտ կյո՛ւլին ճոտերը յըրա ըն պըրծընըմ մին շընչըմ էտ ըխճըկանը պըտրո-պատառ անըմ։ Ախպերը ազադվըմ ա։ Համ ազադվըմ ա, համ էլ քյըվորը մեխկըն ա կյամ, լհա՛ մին տիրև ա յոր օնըմ, ա՛ռնան թաթախ անըմ տինըմ ծոցըմը։

Էտ տըղան ետ ա տըեռնըմ հըղե ընգնըմ, վեր կյա տոն, էն պառավներին կոշտը։ Ճընապարին էլհա էն քյարվանը ետ տըեռնըմ ա ինըմ։

Քյարվանին տա՛ըր էտ տըղին անա հըրցնըմ ա, ասըմ.— Ա՛յ տըղա, թա՛ կարիս ասիս էտ ծըեռքիտ մըհակը հի՞նչ ծառա յա, լոխ քյարվանըս քյըեղ կտամ, թա՛ կարիս վեչ ասիս, կըլնխըտ պուք ըմ տալու։

Էտ տըղան էրգա՛ն մըեթկ ա անըմ, գյուդում չի, թա՛ հինչ ասի։ Էտ վախտը բիրդա՛ն քյըվորը ա՛ռնա՛ն, էն վեր տիրևը թաթախ էր ըրալ, մին սա՛ա ա կյամ։

— Ճըռռ ճապկե, ճապկեճըլապկե։

Էտ տըղան իտի էլ ասըմ ա։

Տո՛ւ մի ասիլ, մըհակը լհա՛ ճապկե ծառան ա ինըմ։

www.naregatsi.org

էտ տըղան ասըմ ա. — Մըհակըս ճապկե ծառան ա։

էտ քյարվանին տաըը լոխ օղտերը ուրաննց պըեռներավը էտ տըղեն ա տամ։ Տա յոր ա օնըմ, քյինըմ։ Վեր տոն ա հըսնըմ, էտ պառավնին ուրխանըմ ըն, պերըմ ըն ըտրա հետի մին լավ ախճիգյ օզըմ, փըսակըմ։ Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ։

Ըտրանա ետը լոխ լավ ըն ապրըմ։

www.naregatsi.org



7. ԴԸՌԴՈՒՏՎԱԾ ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆԸ

Իլալ ա, չիլալ մին առուտուրական։ Ըտրան իլալ ա մին կընեգյ։ Տահանք շատ հարուստ ըն իլալ, համ էլ շատ սերավ ըն իլալ։

Մին խիլլա վախտանը եսը էտ վաճառականը քյինում ա խոհդի, ետ տրեհնում, կյամ տրեհնըմ էտ կընեգյը ուրան փոխալ ա։

Էտ առուտուրականը կընգանը հրդըցան տուս կյալի հետի, բուսը պահըմ ա, տրեհնըմ դուղ ա։ Տա ընըմավեր մարթ ա ինըմ, ստիպված կընգանը տուս ա քըցըմ։

Ըրփըվերի մընալանը եսը, էրկան վախտ օրիշ կընգա նըրհետ վախտ ա անց կըցնում։ Էտ մին կընեգյըն էլ ա ըտրան փոխըմ։

Առուտուրականը շատ ա քնհնքյ անըմ, ասըմ ա. — Պա՜, համ հարուստ ըմ, համ դաշինգյ, պըհնը հինչո՞մն ա, վեր կընանեքյը ինձ փոխըմ ըն։

Էտ էրկունջի կընեգյը ուրան անըմը թամուզ պըհելի հետե կեղծավերոթուն ա անում։ Մարթը տրեհնում ա պհնին թահրը, էրկունջի կընգանն էլ ա խրոխտ տամ, տուս քըցում, ալլաթ-սալաթ ինում։ Էտ առուտուրականը շատ ա մըտածում, նըստում ա, ընգնում մըթկհն դոնը։

Մին օր տանը նստած մըտածելիս, հըրևանը կյամ ա, ասըմ. — Պարյօր, ա՛ հըրևան, յաղուզ մտած՞ըմ ըս, յաղուզ օրփաթա՞խոս ըս տրեհալ, խոսըմ չը՞ս...

Առուտուրականը դրոդրհան ա ինում, համ էլ էտ վախտը մըթվավրն անց ա կրհնում, վեր հըրևանին կընեգյը ըրկուհուքյիս ա։

www.naregatsi.org

Առուտուրականը էտ հըրևանեն ափաթը կտրում ա, թա եք մին պայման կապինք։ Ըսկացալ ըմ, թա կընեգյըտ խուխավ ա, թա ախճիգյ պիրի, իմ բախտես, թա տըղա պիրի, քու բախտետ, հախը տամ ըմ, թաքյի վեց ըմսեկան ինձ տաս։

Առուտուրականը մտծիս ա, վեր ախճիգյը յոր օնե ինքյը դաստիրակե, մծըցնե, պահե ուրաշն հետե հունցու կնեգյ։ Գյուդում ա, թա դըստըրակելան ա։ Մին ղաշանգյ օր էտ կընեգյը ազադվում ա, մին ախճիգյ պիրում։ Վեց ամեսը վեր թըմամում ա, էտ առուտուրականը մըեծ փողեր ա տամ, էտ ըխճըկանը յոր օնում, տանում ուրաշնց տոն։ Էտ վաճառականը ամեն մի հարմարութունը տամ ա, թաքուն պահըմ, վըեր աստուծուն լուսան էլ չի տըեսնա միչև մըծանալը։

Տասնըհենգյ-տասնըվեց տարե պահում ա, դաստիրակում։

Տասնըվեց տարե ախճիգյը մնում ա ախճիգյ։ Առուտուրականը մին օր քյնում ա առուտուրի։ Ախճիգյը բուրդաշն կըլխի յա ընգնում, վեր հուրթավը մին թիքյա լուս ա ըրվում։

Մըտածում ա. «Էս հի՞նչ ա, հի՞նչ պըեն ա»։ Մըտածում ա, մըտածում, պիրում տաբուրետկեքյը տընում ուրուր յրա, եր իննում հուրթաշվը տուս կյամ, հուրթեն ղրաղեն նըստում։

Մարթիքյը քյնաշամ ըն, կյամ ըն, էտ ախճիգյը զըրմանըմ ա։ Ասում ա. — Էս հի՞նչեր ըն, հի՞նչ զատեր ըն, հի՞նչ պեներ ըն, ըն ջուվարը նան հեյվանը ճոկում չի։

Մին օր էլ չգյիդալով մին քար ա յոր օնըմ, թող անում։ Քարը քյնում ա, մին տըղու նի կյամ։

Տըղան էլ մին քար ա յրա անում, ըխճըկանան տամ։

Տըղան ասում ա. — Հաալբաթ ինձ սիրում ա, անդուր ա քարավ տամ։

Մուտանում ա էս ըխճըկանը, ասում. — Տու հո՞ւ վըս, հո՞ւր ախճիգյ ը՞ս, խոսիլը կարում ը՞ս, թա չէ։ Բաալքյաս երգյինքան քըշացած հրեշտակ ըս։

Էտ ախճիգյը խոսելը կարըմ չի, լհա ծըեռքավը նշանց ա տամ, վեր հուրթան ա տուս եկալ։

Տըղան ըխճըկանը յոր ա օնըմ, քյնում տոն։ Ըտրանք ապրըմ ըն միչև առուտուրականին կյալը։ Օխտանասունինջի օրը առուտուրականը կյամ ա, տոռնը պենում։ Տըղան կյողլ ա կըենում։ Առուտուրականը տըեսնում ա, դաստի կըլխա ա ընգնում, վեր ախճիգյը համինը չի, իրեսեն եշում ա, ամմա վեչ մին պեն չի հըրցնում, որո-

www.naregatsi.org

շում ա կըլոխ յոր օնե, կորչի, վեր ըխճըկա շոխկ էլ տըեսնա վեչ, վեր իտի անըախտ ա։ Իտի էլ անում ա, հըղե յա ընգնում, քյնում։

Շատ ա քյնում, խրնդյ ա քյնում, դըբրոնգյոն չախը հըսնում ա մին ախպոնըրի։ Էն ալմաստ ճիրան, էն ցորտ-ցորտ վըրխկալի ճիրան մին լալ խոռում ա, սըներտը հուվըրցնում, օղում ա թա թնքյ ընգնի, էն մոտե ծառին տակին քոն ինի, մին էլ մտածում ա՝ ծառը պըցրանա, ծառեն քոն ինի։ Իտի էլ անըմ ա։

Ամմա օխծը կրծածեն քոն կըկյա, ըտրա աշկերեն քոն չի կյամ։ Մին էլ տեսնում ա, մին մարթ կլոխը քաշ քիցած կյամ ա։

Տրան բուսը պահում ա, տեսնում ա եկու, հայմանն ըխպրին անա ճոր խոից, էտ ըխպրին քշտեն նատից, ջուբան մին յալլըխ տոնա կալալ, մեկնից, հաց, պաներ տըրալ, էն մին ջուբան մին խրնձոր տոնա կալալ, ծրեռքումը հանց հըլլորից, տրեռալ մին ղաշանգյ ախճիդյ։ Մին տրեղ նատեցեն, հաց կերեն, խուտեցեն։ Էն ծառեն յրա առուտուրական մարթը վուրուվոնրդ ա անում, ասում ա, վեր ներ կյա, քյրնա հըրցնի, տեսնա էն խրնձորը ըշտղա՞ յա, մինն էլ ինքյը քյնի առնե, պիրի օտե։

Ըտրանք հացը կերին, մարթը կլոխը տիրալ կրնգանը ծոյնին, քոն իլալ։

Կրնգյը մարթին կլոխը տինում ա տափեն, ծոցան մին ասեղ տոնա օնում, հանց հըլլորում, հանց պըլլորում, վեր մին ղաշանգյ տղա յա տրեռնում, էտ ըխճըկանը սիր ա տամ, սիր առնում։

Էտ առուտուրականը էտ լոխ տեսնում ա ծառեն յրան, մրնում մաթ, ասում.— Չէ, կրնանուցը ճար, հնար չինի՞լ, վեր ղրփազում էլ տինիս, մին ա, մարթին կփոխե։ Պա հո վրե,՞ էս հի՞նչ պեն ար, պա ծրեր մաասաըը ճաքե՞ կրնանե՞ք, պա ծրեր օխտը պոռտը, պա ծրեր խտինը-ինդինը հա՞։

Էտ քոն իլած մարթը հի՞նչ ա գյուդում, վեր կրնգյը օխծը կրծած ա, վեր կրնգյը մին քիմասամբեռ ա, մին ասծու կրակըն ա, անջախ ասըմ ար, վըեր էն ա ուրան կոխկեն, վըեր կրնգանը տրեղը գյուդող չի կա, հի՞նչ կա՞, մին ալլախ-մալլախ նի կապի, քոն ինի՞ ուզուն ախմախի նման, օղտին ընգուճումը քոն իլածի նման։

Էտ կրնգյը, վեր ուրան մարթին եր կրնալի վախտը կյամ ա, էտ ղաշանգյ, թշերը կյարմուր, ինքյը սիպտակ տղին, էտ սրեվ մաղերավ, սրեվ աշկ-ունքավ, վրուվրում տղին հանց հըլլորից, հանց պըլլորից, վեր էլհա մին ասեղ շինից, կոխից ծոցը։ Մարթին կլոխըն էլ պըցրցրավ, տիրալ գյուրգյումը, նըստից, ասիս լհա վեչ մին պեն

www.naregatsi.org

չի գյուդնում, ասիս լհա աշխարքաս բեխաբար մին կըթնակեր ա՞, հալա թազա յա կըռքնեն տունս կյամ։

Մարթը եր ա կըենում, կընգանը պըշպըշորում, հըլլոր-պըլլոր անըմ, մին խընձոր շինում, տինում ջուբումը, էլհա ուրան հըղեն քյընում։ Հիշտեղ քյընում ա, էտ առուտուրականը հետան։ Վերչը հըսնում ա ընդրա հետան, հըրցնում. — Ախպեր, ըշտե՞ղ ըս քյընում։

Էտ մարթն ասում ա. — Ցրես էլ չըմ գյուդնում, քյնում ըմ իլի՞։

— Դե մին չինինք, էրկու ինինք, եք քյինինք։

— Հի՞նչ կինի։

Ըտրանք քյընում ըն, քյընում, հըսնում ըն թուշ էն առուտուրականեն շենը։ Էտ մարթը մըտածում ա, թա հիշտեղ ղոնաղ ընգնին, քըշերը կըենան։

Էտ առուտուրականն ասում ա. — Ըստեղ կաց, յըես մին ծանոթ օնիմ, քյնաամ կոշտը, էլհա կյամ էս սհաթիս։

Առուտուրականը նի յա մըննում դըրբըզավը, էտ վախտը էտ ախճիգյը էտ տղին նհետ սիր ա տամ։ Լհա վեր տըռնեն չըխչըխկոցը լսում ըն, էտ տղան նի յա մննում տըխտատեղը։ Առուտուրականը կյամ ա տոն, ըխճըկանը կարքատիրում, վեր էն մունուտին մին խորագյ պըդրաստե վեց աման, վեց քըթոլ կոխկեն։ Մին բոթուլ կյինի, վեց ստաքան կոխկեն, իտի մին սհաթանը ետը հազը ինի։

Ասում ա, պըրծնում, տունս կյամ, քյընում էն մարթին կոշտը։ Պատառ զրուց ա անում, ըտրան յոր օնըմ, կյամ տոն, տեսնում լոխ պադրաստ։

Նստում ըն հաց օտին, էն ախճիգյն ասում ա. — Բա հո՞ր ըն հնգյերունքտ։

Առուտուրականն ասում ա. — Նստե, կըկյան։ Ախճիգյն էլ ա նստում։

Առուտուրականն ասում ա. — Էն տըղան էլ կինի սովածա, պեր հաց օտե։

Ախճիգյը լաց ա ինում, ասում. — Հի՞նչ տղա յա, գյուդնում չըմ, լունս աշխարք չըմ տունս եկալ, մըեռունը ճըկատիս, տու խե՞ յըս իտի պեն ասըմ։

— Դե լավ ա, կլկոնճի մի տալ, շուտ ըրա հանե։ Ախճիգյը աթկազ ա անըմ։

Առուտուրականը օզում ա, թա էտ ըխճկանը սպանե։ Վըխելան նըհետ էտ ախճիգյը սիրականեն տունս ա օնըմ։

Առուտուրականը ըտրան նըստըցնում ա ստոլեն քըշտեն։

www.naregatsi.org

Ծառավ էտ մարթին ասում ա. — Ախպեր, նշանածտ էլ կինի սոված, բլբսօրին կերածննետ ա, հանի պեր հաց օտե։

Էտ մարթն ասում ա. — Հի՞նչ նշանած ա, հի՞նչ պեն։

Առուտուրականն ասում ա. — Ցրես էլ ըմ գյուղում, պեր, ջուբետ պենը տունս կալ։

Հընդյերը տունս ա օնում, խրնձորը հըլլորում-պըլլորում, մին ախճիղյ ա տրեռնում, տնում ստոլեն քըշտին։

Օղում ըն, թա հաց օտին, առուտուրականը էտ ըխճկանն ասում ա. — Դոշիտ ասեղը տունս կալ, սոված կինի, թող հաց օտե մըղնըհետ։

Էտ մարթը տեսնում ա, վեր առուտուրականը դուղ ա ասում, ինքյն էլ մին ղոլան ա ստիբում։

Կընեգյը ճըղճըղամ ա, մարթին ուշունց ա տամ, մարթին հորը գյոռավ ասում, բըղբըղամ, թա. — Մինչի օրս մինը գյուղում չի, թա մունք կանք։ Խե՞ յըս պերալ էս ըխամախեն կոշտը։

Ստիբում ըն, վեր էտ կընեգյը ասեղը հանե։ Ասեղը հանում ա, հըլլորում, պըլլորում, մին նախշուն տղա շինում։ Ըտրան էլ ըն նըստըցնում ստոլին, վեր հաց օտի։

Էտ առուտուրականը յոր ա օնում բոթուլը, ըստաքաննին լըցնում, ասում. — Հիշտեղ միյամիտ մարթ կա, ընդրան կյենացը։ Հիշքան չըրչըրվեցինք մըեզ հալալ չի տեռավ. էս ուրուգյունըս մեզ բախտ չօնինք։ Ուրեմնս ըստահանք թող մընան։ Ցրես ու տու տունս կյանք էս ըշխարքաս քյինինք։

Թա հըշտեղ ա օղըմ քյինի, մահլում չի անում։

www.naregatsi.org



8. ԷՐԿՈՒ ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆ

Էրկու առուտուրական հընգյերանըմ ըն, ամմեն դընըմ առուտուրը մինտեղ ըն անըմ, ուրիշնք էլ շատ սերավ ըն ինըմ։

Ըտրանք ուրիշը խոսկ ըն տամ, վեր էս մինին՝ թա տըղա ինի՛, էն մինին ախճի՛գյ, մըծընալանը ետը ուրիշը նըհետ փսակին, պարեկամ տրեռնան, լհա իտի էլ ինըմ ա։

Մինին ախճիգյ ա ինըմ, մինին՝ տըղա։

Պուճուր վըխտանց ախճիգյը նան տըղան մին տեղ ըն մըծանըմ։ Ըտրանց փըսըկելի վախտը կյամ ա։ Ըտրանց հաբերը լավ հընըսանիք ըն անըմ, փըսակըմ։ Ուրիշնք էլ էնքան սերավ ըն ինըմ, վըեր էլ ասվիլ չի՛։

Ըտրանք ամմեն օր ասծու ղաչանք ըն անըմ, վըեր էրկուսին միշտ էլ իտի սերավ պահի, մըռնելի վախտն էլ մին տրեղ տանի։

Ամմա ինդի յա պըտահըմ, վըեր աստուծ մին տրեղ չի տանըմ։ Առաչ կընգանն ա տանըմ։

Տըղան վրեչ օտըմ ա, վրեչ խմըմ, օղըմ էլ չի, թա լուս աշխարք տուս կյա։ Նա թողըմ չի վըեր կընգանը թաղին հանգյիստարանըմը, թաղիլ ա տամ ուրիշն օթախին տեմացը, վըեր ամմեն օր ընդրա կյրեզմանը տրեսնա։

Մին քանի օրանը ետը նա լոմը յոր ա օնըմ, ուրիշն օթախան միչև կընգանը հանգյիստը տափին տակավը քանդըմ։ Քըշերնին քյընըմ ա կընգանը ղուբռուն կոշտը, ցիրեկնին կյամ ուրիշն օթախը։

www.naregatsi.org

Մին դռնըմ ուրան կընգանը դուռուն քըշտան վրեր կյամ ա ուրան օթախը, տրեսնըմ ա ատոլին յըրան մին կյիր տիրած։

Էտ կյիրը յոր օնըմ, պեց անըմ կարթըմ, տրեսնըմ կյիրին յրան կյըրած. «Էս կյիրը վրեր մրեռած մարթի քըշտի կարթիք, մրեռած մարթը կըսըղանա»։

Տըղան դաստի կյիրը տանըմ ա դուռուն կոշտը, իրանք օր ուրուր հետա կարթըմ, պըրծընըմ։

Մին էլ ա տրեսնըմ, վրեր կընեգյը մրեռած տրեղան եր կացավ։ Ըտրանք էտ տափին տակին քանդած տրեղավը տուս ըն կյամ, կյամ ուրանց օթախը։ Տըղան հրամմայըմ ա ծառին, վրեր էրկու փայ օտելի պրեն պրերի։ Ծառան զարմանըմ ա, թա խե՞ յա էրկու փայ օղըմ։ Էտ հի՞նչ պրեն ա, առաչ իսկի մին պաժին էլ չար օտըմ, մրհնդյ էրկու պաժին ա օտըմ։ Էտ ծառան թաքուն տրուանը ծական աշըմ ա, տրեսնըմ, վրեր էտ տըղան ուրան կընգանը նըրհետ նստած հաց ա օտըմ։ Տա դաստի քյընըմ ա էտ տըղին հորը ասըմ։

Տըղին հարը կյամ ա տրեսնըմ դուզ։ Մարթ ա ղըրկըմ ըխճկանը հարը կյամ ա, տրեսնըմ, ուրխանըմ։ Էտ վախտը ինդի մին ադաթ կար, վրեր մրեռած, մին էլ սըղացած մարթին նըրհետ ապրիլ չըն, ժողովուրթըն էլ կլսի, լավ չի՞։ Ըտրա հետի էլ ըտրանց ասըմ ըն, վրեր մարթըկընեգյ եր կրենան քյինին մին օրիշ քաղաքըմ ապրին։ Տըղան ռազի յա կրենըմ։ Հարները լավ փող ըն տամ, վրեսկե, ամման հինչ, ըտրանց ճրնապա տրնըմ։

Մին դռնըմ էտ քաղաքին թաքավերը ըտրանց տանը քըշտավը անց կրենալիս տրեսնըմ ա էտ կյեղեցիկ կընգանը, ասըմ. — Տու էտքան կյեղեցիկ, փըսակվալ ըս մին դուքյանչու նըրհետ, էն քյրեզ սազըմ չի, քյրեզ թաքավերական թախտ ա սազըմ։ Թա օզըմ ըս, նք իմ կրենեգյս տրեու, յրես քյրեզ թաքուհու նման կըպահիմ, կըլխիտ էլ թաքյ կտինիմ։ Էս քաղաքը իմն ա, էս ժողովուրթն էլ իմ դյադնքս ըն։

Էտ կրենեգյը փառքը-պատծանք սիրող ա ինըմ, ռազի յա կրենըմ, դաստի ըտրա նըրհետ փայտոն ա նըստուամ, քյընըմ, խոխան թողելավ հրետան լաց իննելիս։ Քյըսօրին մարթը կյամ ա, թա հաց օտի, տրեսնըմ կրենեգյը կա վրեչ, տոնը լոխ եր ածած, խոխան լաց իննելիս։

Հըրևաններան հըրցնըմ ա, թա կրենեգյը հո՞ր ա, ըդրանք ասըմ ըն, վրեր թաքավերին նըրհետ փայտոն նստած քյեցալ ա, համ էլ ասալ ա, վրեր տու ուրան ըսպասիս վրեչ։

Էտ մարթը մրնըմ ա մաթալ, տրեղը կաղնած։ Էքսը դուքյանը

www.naregatsi.org

քըլլըմ ա, տոն, տրեղ թողըմ, քյընըմ կընգանը հետան։ Նըհետն էլ մին խիլլա փող, վրեսկե յա յոր օնըմ։

Թաքավերը էտ կընգանը տանըմ ա ծովավը անց կըցնըմ դիբի տեղը, հրամման տամ, վրեր վրեշ մինը էտ ղոլերքը անց չի կըեննան, քյինին վեչ։

Էտ առուտուրականը մին նավ ա առնըմ, ծովավը քյընըմ, քյընըմ, հըսնըմ մին օրիշ քաղաք։ Էտ քաղաքըմը ման ա կյամ, մա՛ն, մին սապոժնիկի յա թուշ ինըմ։

Առուտուրականը ընդրան ասըմ ա. — Ախպե՛ր, օրը հի՞շքան ըս փող ըշխադրըմ։

Սապոժնիկն ասըմ ա. — Եշած կործին, հիշքան տամ ըն, էնքան էլ յոր ըմ օնըմ։

Էտ առուտուրականն ասըմ ա. — Ես ըխպրանանք յըես նան տու, հիշքան փող ըս օղըմ, քյըեզ կըտամ, մինակ թաք լհա ինձ դեմ չի քյընաս, թաք լհա ինձ նըհետ մին խոսկի ինի՞ս, դուզ ինիս։

Էտ սապոժնիկը ռազի յա կըեննըմ։

Առուտուրականը մին խիլլա փող, վրեսկե ա տամ ըտրան, համ էլ ըտրան ա տամ էն մըեռալ սըղըցնող կյիրը, ասըմ. — Ցըես լըսալ ըմ, վրեր իմ նամարդ կընեգյըս պերալ ըն ըստրեղ, էն ա թաքավերին ծրեռքին, յըես քյինալու յըմ պալատըմը գյադա նի մընիմ։ Բալքաս ինձ նըհետ մին պրեն ա պրտահըմ, բալքաս ինձ սպանըմ ըն։ Էս կյիրը կտինիս քըշտիս, կկարթիս կըլխանըս երը կաղնած, էն վախտը յըես եր ըմ կրեննալու, սըղանալու յըմ։

Էտ առուտուրականը քյասիբի շորեր ա կյեննըմ, քյընըմ կաղնըմ քաղաքին մեյդանըմը, ըշտեղ հարուստնին կյամ ըն ուրանց հետի գյադա-գյուդա փըռնըմ։

Մին էլ ա տրեսնըմ թաքավերին վեզիրը կյամ ա դիբի ուրան, ասըմ. — Ա՛յ գյադա, կկարի՞ս փեդ կըտորիս, ճուր կըրիս, հայաթ սըրփիս։

— Խե՛ չըմ կարիլ, հալա ջանըս էլ տուս կկյա։

Վեզիրը ըտրան յոր ա օնըմ, տանըմ պալատը։

Կընեգյը վրեր մին քանի օրանը ետը տրեսնըմ ա ուրան մարթին, թաքավերին անա խնթրըմ ա, վեր էտ մարթին տուս քըցին, ամմա թաքավերը ասըմ ա. — Օզիլ չի՞, թող ըստեղ կենա գյադաթուն անի։

Մին հետ էլ թաքավերը էտ կընգանն ասըմ ա. — Ա՛ կընեգյ, էսքան վախտ ա քյըեզ նըհետ ապրըմ ըմ, ամմա հալա իմ մրեծա-

www.naregatsi.org

մրեծնիս գյուղում չըն, թա տու իմ կընեգյս ըս, եք մին լավ թաքավերական քյեփ սարքինըյ, կյան մըեղ շնհավեր անին։

Էն մին օրը բակըմ ըն պադրաստոթունի քաշիլը։ Էտ գյադին էլ հրամմալըմ ըն, վըեր ճորին առաչը քըցի, քյինի, առած տըեսըտրինը կըրի։ Գյադան իտի էլ անըմ ա։ Ամմա էտ կընեգյը ըտրա պերածը թաքուն լոխ կյետն ա ածըմ։

Թաքավերը ուրուգյունը առոր-փառոր կյամ ա մրեծ զալըմը նատըմ, վըեր սեղան պեց անին, տըեսնըմ ա՝ զատ չի կա։

Կընգանան հրըցրնըմ ա, թա. — էս հի՞նչ պըեն ա, էս հինչ կործ ա, բա խո՞ չըք իմ անըմըս, իմ պադվըս տափը քըցըմ, պա հո՞ր ա սարքած ստոլը, բա համոթ չի՞, էս ա նաղիր-վաղիրնիս, մրեծա-մրեծնիս կյալու չըն։

Էտ կընեգյը ասըմ ա. — Հի՞նչ պադրաստոթուն ըս քաշալ, հի՞նչ ինի։ Թաքավերը կանչըմ ա ծառաներին, գյղոտանցը, ասըմ. — Պա խո՞ չըք իմ հրամմանես կադարալ։

Ծրոտոնքը ասըմ ըն, — Թաքավերը ապրած կըենա, հինչու՞ հրամմալալ ըս, լոխ կադարալ ընք, օտելի պեները ճորավը կըրողն էլ էս ա իլալ։

Թաքավերը կըղնըվըմ ա, ասըմ. — Տարեք, էս սրհաթիս ըտրա կըլոխը կըտրեցնեք։

Էտ մին գյադան թաքավերին վըեններն ա ընգնըմ, ասըմ. — Թաքավերը ապրած կըենա, հինչու առալ ըն ինձ տըվալ, ճորոնն չըտան պեռնած լոխ կըրալ ըմ, պըերալ պալատը։

Թաքավերը հըվատըմ չի։ Ղոնաղնին սկսըմ ըն հըվաքվիլը։ Ճարը կըտրված թաքավերը հրամմալըմ ա՝ պալատին քաշի ըմբրնիրըմը հինչ օտելի պըեն կա, ընդրանա աշպազնին իփին, պադրաստին, լավ ստոլ պըեց անին։ Իտի էլ անըմ ըն։

Վըեր լոխ հըվաքվըմ ըն, ուրանց տըեղերը նըստոտըմ, թաքավերը տըեղան ևր ա կըենըմ, ասըմ.—Պատվըելի նաղիր-վաղիրնի, հարկելի մրեծամրեծնի, չըես հրամմալալ ըմ ծրեղ հետ մին լավ քյեփ սարքին, մին ամման հինչավ լեզը մրեծ ստոլ պըեց անին, ամմա մըեր անխելք գյադան հինչու առալ ընք, պալատը չի պերալ, ինձ էլ ծրեր քըշտին թողալ ա համոթալի։ Էտ գյադան մըհենգ էն ա դուսադխանըմը, ընդրան թողըմ ըմ ծրեր դադաստանին, հինչ պատիժ ասիք, ինդի չըմ անել տալու։

Էտ ղոնաղ մրեծամրեծնին որոշըմ ըն էտ գյադին էն մին օրը մեչդանըմը կախ տան, սաղ ժողովուրթին առաչին։ Քըշերավը թաքավերը հրամման ա տամ, վըեր մեչդանըմը մին սուն տրնգին, էտ

www.naregatsi.org

գյաղին կախ տան։ Սաղ ժողովուրթը հրվաքվըմ ա։ Համին էն սապոժնիկն էլ ա կյամ։ Քյանդիրը քըցըմ ըն էտ գյաղին վիզը, կախ տամ։

Կընեգյը թաքավերին անա խընթրըմ ա, վեր տանին մին հեռու տրեղ թաղին, յրան էլ պահակ կըղնցնին, տանին վրեչ հանգյիստարանը։ Էն մեռալ սրղըցնող կյիրին անա խոսըմ չի, թաքուն ա պահըմ։ Դե էտ թաքավերը հի՞նչ ա գյուդում, թա էտ գյաղան էտ կընգանը առաչվա մարթն ա։

Իտի էլ անըմ ըն։ Տանըմ ըն մին հեռու տրեղ թաղըմ, յրան էլ պահակ կըղնըցնըմ։

Սապոժնիկը էտ լոխ գյուդում ա։ Մին բոթիլ ըրաղ ա յոր օնըմ, քյընըմ էտ պահակին կոշտը, ասըմ.— Խեր ինի ախպեր, խե՞ յըս ըտեղ կաղնած։

Պահակը ասըմ ա. — Մըեռալին յրան պահակ ըմ կաղնալ, վրեր փախչի վրեչ։ Ըստրա գյոռը ըստի-ըստի... սաղ փըդացալ ըմ, էնքան ցորտ ա, հինչ ցորտ, այազ ա, ղըյամաթ ա, տրեսնըմ չը՞ս հունց ա ասթխերը փըլըստրատին տամ, այազ վախտը միշտ իտի յա ընը՞մ։

Էտ սապոժնիկն էլ ասըմ ա. — Բա յանի իտի պրեն կինի՞, իտի օյին կինի՞, վրեր մըեռալին էլ ղարավուլ քաշին։

— Էլ ասիլ մի, մըեր թաքավերը էնքան հիմմարացալ ա, վրեր մըհենգյ էլ խուտուրու-մուտուրու հրամմաննի յա տամ, խելքը քամեն տարալ ա։ Ասի, ա սարսաղ շան տըղա, բա յանի մըեռալին յրան էլ ղարավուլ կքաշին... էտ էլ թաքավեր չի տրեռավ մըեզ յրա, մին դռրդրբալա տրեռավ, մին օզգյա բաբաթ պրեն տրեռավ։

— Ա՛րա, պրեն չօնի՞ս, ղարավուլըս վե՞րն ա, նըստի մին խըրթեգյ ըրաղ խըմինք, քյեփընիս պրեց անինք։

Սապոժնիկը համ ասըմ ա, համ էլ ըրաղը ուրուր հրետա ածըմ, էտ ղարավուլչուն խըմըցնըմ, հըրփրցնըմ։ Ղարավուլչին կոնձելանը ետը թեքյ ա ընգնըմ, քոն ինըմ։

Սապոժնիկը ծրեռաց կյըրեզմանը քանդըմ ա, մեյիդը հանըմ, էտ կյըրեզմանը հունցը իլա ա թաղադան ինդի շինըմ, մեյիդը յոր օնըմ, տոն կյամ, մեյիդը թողըմ տանը, ինքը էլհա քյընըմ էն ղարավուլչուն կոշտը, տրեսնըմ հալա էն ա քոն իլած։

Եր ա կըցնըմ ասըմ.—Ե՛ր կաց, ա՛րա, եր՛ կաց, բա տրեսնըմ չը՞ս, լուսանըմ ա, եր կաց տրեղտ կաղնի, թա չէ մըեռալը կփախչի, թաքավերն էլ քյըեզ կտինի էտ մըեռալին տրեղը։

Վրեր էտ ղարավուլչին եր ա կրենըմ, էտ սապոժնիկը հետ ա տրեռնըմ, կյամ ուրան տոնը։ Էտ մեյիդին քըշտին իրեք օր էտ կյիրը կար-

www.naregatsi.org

Թըմ ա, մեյիդը սըղանըմ ա, տըեղը կաղնըմ։ Էտ առուտուրականը շատ շունըրակալ ա ինըմ էտ սապոժնիկան։

Մին քանի վախտանը հոր մին խաբար ա չավ ընգնըմ, թա Թաքավերին մադար տըղան ծանդրը հիվանդ ա, հաքիմնին կարըմ չըն, թա ճար անին։ Թաքավերը հրամման ա տըվալ, վըեր հու վըեր ուրան տըղին լըվըցնի, Թաքավերությունին կըեսը ընդրա կըտա։

Էտ առուտուրականը վըեր էտ խաբարը լըսըմ ա, իրեսը եր ա անըմ, լավ-լավ շորեր ա կյանըմ, կյիրն էլ յոր օնըմ, քյընըմ պալատը։

Թաքավերին դյաղեքը ասըմ ըն, վըեր իստի-իստի մին մարթ ա նկալ։

Թաքավերը ուրան կոշան ա կանչըմ, ասըմ. — Պարով, հազար պարի չըս նկալ, թա կըրեցիր իմ տըղիս մին ճար անիս Թաքավերությունիս կըեսը քյընդ ըմ տալու, թա կըրեցիր վըեչ, կըլոխտ Թըռցընելու չըմ։

Լհա էտ խոսկին մըեչըմը, գյդոտենքը լաց ինիլավ կյամ ըն Թաքավերին առաչին շորըմ, ասըմ. — Թաքավերը ապրած կըենա, վըեղը կըլխաններիս ա տըեռալ, տընեներնիս քանդվալ ա, բա ասիլ չը՞ս խոխան մըեռալ ա։

Թաքավերը սոր հանըմ ա, թա էտ ասողին կըլոխը կըտրի, էտ առուտուրականը բըլական փըռնըմ ա, Թողըմ չի էտ դյաղին սպանի, ասըմ ա. — Թաքավերը ապրած կըենա, վախիլ մի, չըես կսըղըցնիմ, մինակ մին պայմանավ, վըեր իրեք օր Թողիս վըեչ էտ օթախան մինն էլ ա մուտանա։

Թաքավերը խոսկ ա տամ, վըեր Թողիլ չի...

Իրեք օրանը հոր Թաքավերին տըղան սաղ-սալամաթ քյընըմ ա ուրան հորը առաչին կաղնըմ։

Թաքավերը էտ առուտուրականին ա տամ Թաքավերությունին կըեսը։ Ամմա էտ առուտուրականը օզըմ չի, ասըմ ա. — Տեր-Թաքավեր, մինակ լհա իրեք օրավ քու Թաքավերությըտ ինձ տո, ընդրանա հոր քյըեղ ինի։

Թաքավերը ռազի յա կըենըմ։

Վեր էտ առուտուրականը Թաքավերին Թախտին նըստըմ ա, էն սապոժնիկին կանչըմ ա լավ-լավ բադարկեք տամ, համ էլ Թաքուն ասըմ. — Յըես էրկու օրանը հոր ժողով ըմ ընելու, ժողովուրթը մեյդանըմը հրվըքվելու չըն։ Յըես ըսելու չըմ, Թա էս Թաքավերը հինչ փիս պըեներ օնի, ըսեցիք։ Տու կասիս, Թա էտ Թաքավերը ըստի-ըստի փիս պեններ ա ըրալ, դյաղին կախ ա տըվալ, հոսավ իտի փիս-փիս պըեններ կասիս։

www.naregatsi.org

Իտի էլ անըմ ըն։ էտ առուտուրական-թաքավերը ժողովուրթին հրվաքըմ ա, հրրցնըմ, թա. — Ա՛յ ժողովուրթ, ասեցիք տեսնամ ծրեր թաքավերը ծրեզ հո՞ւնց ա պահալ, հու չըրչարալ չի՞, հու ծրեր ջանին եղը քաշալ չի՞, հու ծրեզ մանգյանի տակ չի՞ քրցալ, վախիլ մի՛ք, ասեցիք, հինչու գյունդում ըք։

Դե հիշքան չինի ժողովուրթին աշկը վախած ա, էն հու՞ կը կարի մին խոսկ ասի, լոխ սուս ըն անըմ, կուրկուփ կյամ, թա ծունկնը կխոսի, ինդի էլ ուրանք։

Համին էտ վախտը ժողովուրթին մեչան մինը ծայն ա խընթրըմ, էտ համին սապոժնիկն ա ինում, ասըմ ա. — Թազա թաքավերը ապրած կրենա, տու գյուդում ըս էտ թաքավերը հինչ սրեվ սըտանա յա իլա, մին զուլում, մին պատիժ, աստուծ ըտրա յրան կըրակ եր ածի, հինչու օտի քըթըծկերավը եր ածի՞, տա մրեզ կրերալ ա, պըկին մրնա մրզանա կրերա՞ծը, տանը պեն չի մրնա մրզանա տարածան... էն օրը՛ն էլ ուրան գյադին կախ տըվավ, հալա ղարավուլչի ել տիրավ կյրեզմանին քըշտին, վրեր եր չի կրենա, փախչի։ Պա ըտրան աստուծ օնի՞։

Էտ վախտը էն իսկական թաքավերը աշկերը էտ սապոժնիկին յրան պըլըզըմ ա, չըզըմ, ամմա էլհա սապոժնիկը ասըմ ա. — Պա ըտրան ինսափ օնի՞, հենց ա լհա կյարմուր կյունլ ինի, էնքան կրերալ ա, մին առչ ա տրեռալ, հենց ա լհա մին տրըտոմբալ ինի՞, մին քառասուն վրեդրանոց կյինու պոժկա ինի՞։ Ա՛ ժողովուրթ, թող կյա հալա ծրեր առաչին կըրպընդրիկի տա՞, վրեր լոխ ասըմ չը՞մ, մին փարա պրեներ կյեղըմ ը՞մ։

Թազա թաքավերն ասըմ ա.— Ա՛ ժողովուրթ, պա հինչ պա՞տիժ տանք էս թաքավերին։

Ժողովուրթը ասըմ ա. — Կախ տանք, կախ տանք էտ ծռնախոսին։

Պրերըմ ըն մեյդանըմը մին սուն տընգըմ, էտ առաչվա թաքավերին կախ տամ, մեյդըն էլ տանըմ համին էն «գյադին» կյրեզմանին քըշտին թաղըմ։

Ըտրանա ետը էտ առուտուրական թաքավերը քյընըմ ա ուրան կընգանը կոշտը, ասըմ. — Տու ինձ ճընանչըմ ը՞ս։

Էտ կընեգյը ուրան ինդի յա նշանց տամ, գյվնքիս ճընանչըմ չի։

Էտ առուտուրականը կըզնըվըմ ա, ասըմ. — Ա՛յ հարամ կաթնակերը, ա՛յ իրեսը սրեվ, պա տու ինձ ճընանչըմ չը՞ս, քու ըստինըտինդինըտ։ Ասըմ ա, սորը հանըմ, էտ կընգանը կըլինխը թըռցնըմ։

Ըտրանա ետը էն թաքավերին թախտը մընըմ ա տրեռտակ,

www.naregatsi.org

ժողովուրդը ունայն մրնչան արժանի մարդ ա ճոկում, վրեր կառավարի։ էլ վրեչ մին մարդ վախում չի, ըսկըսում ըն ազատ ապրելը, ազատ խոսիլը։

էտ առուտուրականըն էլ ունայն հետի մին լավ, հավատարիմ կընկեր ա ճարում, նրհետը փըսակվըմ, բախտավեր ապրըմ։

www.naregatsi.org



9. ԱՂՎԵՍԸ

Ինում ա, չինում մին թաքավեր ա ինում։ Էտ թաքավերին ինում ա իրեք տըղա։

Մին օր մին պառավ մարթ կյամ ա թաքավերին կոշտը, ասում. — Մըեծ թաքավերը ապրած կենա, քու պալատըմըտ ամմեն հինչ կա, մինակ վըեսկե ղուշը չիկա, հունցը օզում ա ինի, բեդմա ծրեռք պիրիս։ Էտ վըեսկե ղուշը էն ա օխտը սարի քըմակի։

Էտ խոսկը թաքավերին շատ ա տանջում, մըեթկ ա անում, մըեթկ, տըեսնում էս ա տըղերքը եկին։

— Ա՛ հաըր, յաղուզ իտի բեքյեփ ըս, դաըրդը-ղեյիդտ հի՞նչ ա, ասի, մունք էս ընք սարի մնան դըլվումտ կաղնած, մունք կըքյինինք, ճարինք հինչ էլ ինի։

Թաքավերը տըղորցը լոխ նաղլ ա անում։

Մըեծ տըղան ասում ա. — Ա՛ հաըր, յըես կքյինիմ, պըերիմ։

Տա ճընապարի պադրաստոթուն ա քաշում, հըղե ինում։

Ճընապարին մին Աղվես ա ջըհում, ասում. — Թաքավերի տըղա, ճընապարիտ էրկու տոն ըս տըեսնալու, մինը՝ մըթեն, մինը՝ լուս։ Էտ լուս տանը քյեփ ա իննելու։ Նի կըմըննիս մըթեն տոնը, վեր դինջանաս, վեր կարիս էքսը քըշերավ հըղետ քյինիս։

Էտ տըղան ըջըղվում ա, Աղվեսին թըխում, քյընում։ Քյընում ա, քյընում, շատ ա քյընում, թա խրեգյ, ինքյը կըգյիդա, վերչը հըսնում ա Աղվեսին ասած տըներին։ Նի յա մըննում մըթեն տոնը, թա կենա, ամմա էն մին տանը ծափը-ծիծաղը, յըերքը-պարը, զուռ-

www.naregatsi.org

նա-ղավալին ծենը թողում չի, թա էտ մըթեն տանը կենա, տունս ա կյամ, նի մընում էն լունս տոնը, ըշտեղ քյեփ ին անում։

Տա ըտեղ լոխ մըտան քըցնում ա, համ վրեսկե ղուշը, համ հորը խոսկը, մընում ըտեղ։

Մին քանե վախտ ընցնելանը հետը, թաքավերը տրեսնում ա, վրեր տըղան կյամ չի, միշնակ տըղին ա ղարկում։ Էս հինչ վրեր էտ մըեծ տըղին կըլոխան ա յըեկալ, էտ լոխ էլ միշնակ տըղին կըլոխան ա կյամ։

Թաքավերը տրեսնում ա, վեր ուրան մըեծ նան միշնակ տըղերքը կյամ չըն, շատ բըքյըփանում ա։

Համին էտ վախտը պուճուր տըղան կյամ ա, ասում. — Ա՛ հայր, թող յըես քյինիմ իմ ախպորց հետան, տրեսնամ հի՞նչ տրեուին, համ էլ վրեսկե ղուշը պըերիմ։

Հայրը ոազի չի կըենում, ամմա տըղան ղաչանք ա անըմ։ Էտ վախտը թաքավերը ասըմ ա. — Քյընում ըս, քյինի, մըեծ նան միշնակ ախպերքըտ հի՞նչ տրեուին, վրեր տու հինչ տրեունաս, ծրուքըներավտ պրեն եկող տըղերք չը՞ք, ծերը էն ա պարապ-սարապ ման կյաք, մրեշտրեղ օտիք, ղրաղ շոու կյաք։

Պուճուր տըղան ճընապարվըմ ա. Աղվեսը էլհա առաչըն ա տունս կյամ, էն հինչ վրեր մըեծ նան միշնակ ախպորցը ասալ ար, ըտրան էլ ա ասըմ։ Էտ տըղան Աղվեսին խոսկը լսում ա, քյընում։

Շատ ա քյինում, խըրեզ ա քյինում, շատ նան խըրեզը ինքն ա գունդում, մին էլ ա տրեսնում՝ Աղվեսը էլհա առաչը տունս եկավ, ասից։ — Դե վրեր տու իմ խոսկըս լսալ ըս, եք հաքյվիս նստե, քյըեզ տանիմ վրեսկե ղուշին կոշտը։

Էտ տըղան իտի էլ անըմ ա։

Քյինում ըն, հըսնըմ մին պալատ, ըշտեղ վրեր էտ վրեսկե ղուշըն ար։

Աղվեսը ասըմ ա. — Վրեր նի մընինս պալատը, ղարավուչքյը քոն իլած ըն ինիլու, վրեսկե ղուշը էն ա ինիլու մին ստուլի տըրած։ Էտ ստուլին էրկու ղանփազա յա ինիլու, մինը վրեսկե, մինը՝ փադի։ Ջահտ կանիս, ղուշը տինիս փադի ղափազումը, վրեր վրեսկե ղափազումը տիրիր, ղուշը ծեն ա հանիլու ղարավուչչոցը եր կըցնե։ Էն վախտը քյըեզ փըռնելու չըն։

Էտ տըղան շիլ ա ընգնում, ղուշը տինում վրեսկե ղափազումը։ Ղուշը ծըեն ա հանըմ, ղարավուչչոցը եր կըցընըմ, ըտրանք էտ տըղին փըռնըմ ըն։

Ամմա տրեսնըմ ըն ջահիլ, ղաշանգյ տըղա յա, էլ սպանըմ չըն,

www.naregatsi.org

ամմա ասըմ ըն. — Մունք քյըեզ սպանըմ չընք, ամմա ըտրան ավ՚ազը տու քյինիլ բեզիս վըեսկե ծին ուրան սարքավը պերիս մըեզ տաս։ Էն վախտը վըեսկե ղուշը մունք քյըեզ կըտանք, կըտանիս։

Թաքավերին պուճուր տըղան տուն ա կյամ, ուրան ճընապարը ընգնում, քյընում։

Մին էլ ա տըեսնըմ էտ Աղվեսը էլհա առաչը տուն եկավ, ասից. — Բա յըես քյըեզ խըելքըխրատ չի տվի՞, խե՞ ինձ լըսեցիր վըեչ։ Դե հաքյվիս նստե, քյըեզ հրսցընիմ վըեսկե ծիչին կոշտը։— Աղվեսն ասըմ ա.— Վըեր կյումը նի մընննիս, ղարավուչչիքյը քոն իլած ըն ինիլու։ Վըեսկե ծին էն ա ինիլու ընդեղ։ Ընդրա կոխկեն էն ա ինիլու մին փաղդի թամք, մին էլ մին վըեսկե թամք, թա վըեսկե թամքը տինի՞ս, ծին սաս ա հանելու, ղարավուչչիքյը յըեր ըն կընալու քյըեզ փըռնին, ամմա թա փաղդի թամքը տինիս, վեչ մին պեն չի իննելու՞։

Տըղան նի յա մընննըմ կյումը, վըեսկե թամքը տըեսնըմ, վըեսկե ծին տըեսնըմ, աշկերը ծիլի-վիլի յա անըմ, թամահը զոռ ա անըմ, էտ տըղան վըեսկե թամքըն ա յոր օնըմ, թա տինի ծիչին մըեշկեն, ամմա ծին սաս ա անըմ, ղարավուչչիքյը եր ըն կրենըմ, էտ տըղին փըռնըմ։

Տըղին սպանըմ չըն, ամմա մին հենց տըեղ ըն ըղըրկըմ, վըեր սպընելան փիս ա։

Ասըմ ըն. — Քյինի մըեզ հետի տափեն կըլխան ա, թա տափեն տական ա օշափին կյեղեցիկ ախճիգյը պեր, էն վախտը վըեսկե ծին ուրան վըեսկե սարքավը քյըեզ կըտանք, կըտանիս։

Թաքավերին պուճուր տըղան տուն ա կյամ, քյինըմ։ Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրեգյ, շատ նան խըրեգյը ինքն ա գյուդում, մին էլ ա տըեսնում էլհա Աղվեսը ուրան առաչը տուն յըեկավ, ասից. — Կոզի տու ինձ լըսեցիր վըեչ, ամմա էլհա հաքյվիս նըստե քյըեզ տանիմ օշափին ըխճըկանը կոշտը։

Քյինըմ ըն, քյինըմ, վերչը հասնըմ ըն էտ ըխճըկանը տանը կոշտը։

Էտ դաըրըմը էտ ախճիգյը տուն ա յըեկալ, վըեր կյետըմը լըղանա։

Աղվեսը էտ տըղին ասըմ ա.— Քյինի սուտըփուս էտ ըխճըկանը կոռնան փըռնի, պեր։ Հիշքան խուսուցնի, խոսիս վըեչ։

Թաքավերին պուճուր տըղան քյինըմ ա, իտի էլ անըմ։ Ախճիգյը ընգնըմ ա էտ տըղին հրետան, կյամ։

Ճընապարին էտ ախճիգյն ասըմ ա. — Յրետ տըեռ քյինանք իմ հոր, իմ մոր տըեսնանք, ետավ կյամ։

www.naregatsi.org

էտ տըղան սխալըմ ա, յըետ տըեռնըմ, հենց վըեր տոն ըն քյինում, էտ ըխճըկանը հաբը-մարը էտ տըղին փըռնըմ ըն, ասըմ. — էն ա մըեր քըվորը տոնը օխտը սարի քըմակե, թա կարիս էտ օխտը սարը հենց դուզուցնիս, վըեր ըստըղան միչև մըեր քըվորը տոնը ըրվա, ախճիգյը քյըեզ կըտանք, թա կարեցիր վըեչ դուզուցընիս, էն վախտը քյըեզ սպանիլու յընք։

Էն մին օրը տըղան ըսկսըմ ա վըեղը քանդիլը։ Վեց օր վըեղը քանդըմ ա, զոռավ մին խըրեգյ վըեղ ա ինում քանդածը։

Օխտինջի օրը Աղվեսը կյամ ա տըղին տըեսնըմ էտ ղազաբին մաչին, տըղին անա լոխ հըրցնըմ, դյուդում, էտ տըղին ասըմ. — Տու քյինի դինջ քոն իլ, քյըեզ կործ չօնիս։

Էքսը տըղան եր ա կըենըմ, տըեսնըմ, վըեր օխտը սարը կա վըեչ, քըվորը տոնն էլ ըրվամ ա։

Մարթ ըն ղարկըմ տըղին հետան։ Տըղան կյամ ա, օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ, էտ ախճիգյը տամ էտ տըղին։

Տըղան էտ ախճիգյը յոր ա օնըմ, ճընապար ընգնըմ։ Էլհա պըտահըմ ա հաճին էն Աղվեսին։

Աղվեսն ասըմ ա. — Ա՛յ տըղա, հենց պիտի անինք, վըեր ախճիգյը տանք վըեչ, ծին յոր օնինք, տանք քյըեզ, ղուշը յոր օնինք փախճինք։ Առաչ կտանիս ախճիգյը տաս, ծին յոր օնիս, ետավ կասիս. «Թուղեցեք էտ ըխճըկանը մնանք պարով ասիմ»։ Թողիլու չըն, էն վախտը ըխճըկանը ծրեռք կըտաս, քաշիս տինիս թամքետ, հայդա, փախճիս։ Վախիս վըեչ, ծիտ շուտ ա փախճելու, հետան հրսնելու չըն։ Ետավ ախճիգյը կթողիս իմ քըշտես, ծիտ քըշիս էն պալատը, ղուշը յոր օնիս, ետ փախճիս։

Էտ տըղան իտի էլ անըմ ա։ Մին խիլլա ճընապար քյինելանը ետը, Աղվեսը առաչըն ա տուս կյամ, ասըմ. — Ցըես քյըեզ էսքան լըվոթուն ըմ անըմ, տու վէլ ինձ բեդմա լըվոթուն անիս, բեդմա իմ վըեննըրըս նան վիզըս կըտրիս։

Էտ տըղան ռազի չի կըենըմ։

Աղվեսն ասըմ ա. — Վեր օզըմ չըս, էն վախտը, յըես քյըեզ մին քանե խըրատ տամ։ Տըես, ճըրավերի քըշտի նստիս վըեչ, կախաղան պըցրացած մարթին ազադիս վըեչ։

Աղվեսը ասըմ ա, պըոծընըմ, քյինըմ ուրան կործին։

Էտ տըղան ճընապար ա ընգնըմ, քյինըմ, հասնըմ էն տոնը, ըշտեղ ուրան ախպերքը քյեփի յըն նստած, կարտ ըն խաղ անըմ, ղումարի յըն տամ, տանիլ տամ։ Ըտրանք յա տանիլ տըված փողը բեդմա տան, յա կըլխընեն պուք ըն տալու։

www.naregatsi.org

էտ պուճուր ախպերը էտ մրեծ կումարը տամ ա, ախպորցը ազադրմ, ըտրանց էլ յոր օնըմ, ճընապարվըմ։

Մրեծ նան միշնաչկ ախպերքը թաքուն ուրիւր խոսկ ըն տամ, վրեր պուճուր ախպորը սպանին։

Ըտրանք նըստըմ ըն մին ճըրաւվերի քըշտի, վրեր հաց օտին։ Ըտրեղ մրեծ նան միշնաչկ ախպերքը էտ պուճուր ախպորը քըցըմ ըն ճըրաւվերը, էտ ըխճըկանն էլ ասըմ ըն, վրեր վրեչ մինին ասի վրեչ։

Ըտրանք քյինըմ ըն, հասնըմ պալատը։

Հաւրը հրցնըմ ա, թա. — Բա հո՞ր ա ծեր պուճուր ախպերը։

Ըտրանք ասըմ ըն. — Ա՛ հաւր, մունք ընդրան տրեսալ չը՞նք։

Էն օրանը տրեխը համ ախճիգյը, համ ծին, համ ղուշը մաշվըմ ըն, մաքրովըմ, հաւլաք տրեխընըմ, տրեխընըմ հունցը մին չուփ։

Շատ վախտ ա անց կրեխընըմ, թա խըրեգյ, մին օր էլ Աղվեսը կյամ ա էտ ճըրաւվերեխն կոշտը, մաչին եշըմ, տրեսնըմ էտ տըղան էն ա էտ վրերըմը։

Էտ տըղին անա լոխ հըրցնըմ ա, գյուդումֆ։

Աղվեսը էտ տըղին ճըրաւվերան հանըմ ա, ասըմ.— Շուրերտ կըփոխիս, վրեր քաղաքը նի մըննիս։

Տըղան իտի էլ անըմ ա։

Ետնան իտի օրիշ շուրում քյինըմ ա հորը պալատը, հորը կոշտը։ Էն սըհաթին ախճիգյը, ծին, ղուշը ուրխանըմ ըն։

Տըղան լոխ հորը նաղլ ա անըմ։ Հաւրը հրամմայըմ ա մրեծ նան միշնաչկ տըղին կախ տան։ Իտի էլ անըմ ըն։

Մին օր, մին էլ ըն տրեսնըմ Աղվեսը յրեկավ։ Էտ վախտը թաքավերին պուճուր տըղան նան էն ախճիգյը ուրանց բաղըմը ման ին կյամ։

Աղվեսը մուտանըմ ա տըրանց, պարյօր տամ, ասըմ. — Շատ ըմ ղաշանք, մինննաթ անըմ, իմ վեզս վրեննեըրս կըտրեցիք։

Թաքավերին պուճուր տըղան օզըմ չի, ամմա էն ախճիգյը ռազի յա կըցընըմ։

Էտ տըղան Աղվեսին վիզ նան վրեննեը կըտրըմ ա։ Աղվեսը տրաքվըմ ա, ճըղվըմ, մին ղաշանգյ տըղա տրեխընըմ, համին էտ ըխճըկանը ախպերն ա ինուֆ։

Ախպերը ըտրեղ օխտը օր, օխտը քըշեր քըվորը հրետի հըրսանիք ա անըմ, ինքը թողըմ, քյինըմ ուրանց պալատը։

Թաքավերը շատ ա ինուֆ պըռավածծ, եր ա ընգնըմ, մրեխընըմ։ Կահը մընըմ ա էտ պուճուր տըղին։ Պուճուր տըղան տրեխընըմ ա թաքավըեր, էտ ախճիգյը՝ թաքուհի։ Էտ տըղան լաւ-լաւ օրենքնի

www.naregatsi.org

յա տունս պըներըմ, ժողովուրթին ազադըմ ա կոռը-բեգյառից, քյա-սիբ-քյունահըբի օքնըմ ա, ազադոթուն ա տամ, իտի լավ կառավա-րըմ ա երգյիրը։

Ուրանք էլ ուրուր նըհետ սերավ ապրըմ ըն միչև ուրանց գյան-քին վերչը։

Էն կյարունքվա երգյինքան, էն պըհց կյապուտ ռանգյի եր-գյինքան իրեք խընձոր ա եր ընգնըմ. մինը ասողին, մինը լըսողին, մինն էլ էս հաքյաթը լունս աշխարք քըցողի՜ն։

www.naregatsi.org



10. ԾՈՒԿՆԻՆ ԾԵԾԱՂԸ

Ինըմ ա, չինըմ մին շատ լուզունն սոր, խելունք տըղա յա ինըմ, ինքըն էլ ծուկնը փըռնողւ

Մին օր կյետըմը թոռը քըցած ծուկուն փըռնելիս մին շատ ղաշանգյ վըհսկե ծուկըն ա փըռնըմւ

Ինքը ինքը ասըմ ա. «Էս հի՞նչ լավ պեն տըհռավւ Էս ծուկնան շատ օքութ կկյա, տանիմ մըեր թաքուհուն բադարկա տամ»ւ Իտի էլ անըմ աւ

Թաքուհին վեր տըհսնըմ ա էտ վըհսկե ծուկնը, էնքան ղաշանգյ, էնքան սուրուն, մին ալամաթ պըե՞ն, վեր մընանը կա վեչ, տըհսալ չի ուրան գյանքըմը՞, յոր ա օնըմ, վեր միշտ եշի, քյեփը կյա, վեր օրիշնին էլ տըհսնան նախանձվին, վըեր թաքուհին իտի լավ ծուկնը օնիւ

Էտ թաքուհին էտ տըղին ասըմ ա. — Էս ծուկնը յըհս յոր կօնիմ, քյըեզ էլ վըհսկե կըտամ, մինաք ինձ ասի, սա էքյ ա, թա վըերց։ Թա վըերց ա, պեթկը չի։

Էտ ծուկնը լըսըմ ա թա չէ, մին լավ, քա՛հ-քա՛հ ծըծաղըմ ա թաքուհուն խուսկերքին յրան։

Թաքուհին մաթ ա մընըմ, թա ծուկնը կծըծաղի՞, մին էլ ինքյը ուրան մըեչին, նըղանըմ ա, ասըմ. — Էս ծուկնը հի՞նչ ա, վեր հալա յրաս էլ ծըծաղըմ աւ

Թաքուհին ըչըղվըմ ա էտ տըղին յրան, պալատան տուս քըցըմ, քյինըմ թաքավերին էլ կյենգյատ անըմւ

www.naregatsi.org

Թաքավերը կանչում ա էտ տղին, հարցփորց անում, ասում. — Էն խե՞ յա վրեսկե ծունկնը ուրան թաքուհուն յրան ծրծաղալ, բաչքյա՞ տընա՞ղ ա տրվալ։ Դե, շունտ ըրա ասի, թա չէ քյրեզ կախ տալ կրտամ։

Էտ տղան ասում ա. — Հինչ օգում ըս ըրա, ամմա ասիլ չըմ։

Թաքավերը հրամմայում ա կախաղանը պըդրաստին։

Էտ տղան թաքավերին ասում ա. — Թաքավերը ապրած կենա, վեր ասիմ փիշմանելու յրս, վեր ասիմ վեչ, ինձ կախաղան պըցրցըննին, էլհա յրս փիշմանելու։

Թաքավերը տրեսնում ա, վեր տա մին հետամընաց խոխա չի, խելունք ա, համ էլ մին պեն ա գյունդում, հրամմայում ա զընդանը քըցին։

Էքսը էլհա կանչում ա էտ տղին, ասում. — Դե մըհեգյ ասի տրեսնամ խե՞ կփիշմանիմ, վեր քյրեզ կախ տալ տամ, խե՞ խոխ ըսեցեր։

Էտ տղան մին նաղլ ա ասում, էտ հարցին բադասխանին տրեղը։

Ասում ա, «Ինում ա, չինում մին հարուստ մարթ։ Էտ հարուստ մարթը վրեսկավ լիքյը խուրջինը տինում ա ծիչին թամքին, ինքըն էլ յրան նըստում, հըղե ինում մին հրեռև տեղ։ Շոնըն էլ ընդրա հրետան ա քյինում, թըքըն-թաքուն, վեր տարը յրետ չի տա։ Ճընապարին էտ հարուստին վրեսկավ լիքյը խուրջինը եր ա ընգնում ծիչան, ինքը գյուդում չի, ծին քըշում ա, քյինում։ Շոնը էտ լոխ տրեսնում ա, հաչելավ վազ ա տամ, ծիչին առաչը ընգնում, օգում ա կըղնըցնի, ետ տա ընդրան։ Շատ ա հաչում, կըղկոնձում, օռնում, ամմա տարը հըսկանում չի ընդրա մեթկը, հաչա շանը յրան ըչըղվում ա, գյիդում ա, թա շոնը կըտաղալ ա, տրեռած շոն ա, շաշկավը թըխում ա, ծանդըը յարալամիշ անում, թողում, քյինում։

Շատ ա քյինում, թա խըրեգյ ա քյինում, մըթկին դոնը ընգած քյինում ա, բիրդան խուրջինը մրետըն ա քըցում, ծիչին գյավակին եշում, տրեսնում խուրջինը կա վեչ։ Օշը կըլխան ընգնում ա, աշկերը չըռում, սըներտը փըռնում, գյունդում չի, թա հինչ անի։ Ետ ա տրեռնում, մին խիլլա՞ քյինում, տրեսնում խուրջինը ճընապարին մեչ տեղը եր ընգած, շոնն էլ տունչը տիրած յրան, սատկած։ Թա՞զա յա հրսկանում, թա խե՞ յա շոնը հաչել։ Էտ մարթը ուրան արածին յրան շատ ա փիշմանում։ Լաց ա ինում, դե էլ ըշտե՞ղ, ըրածը ետ չի կյա՞լ։ Տու էլ, թաքավեր, շատ կըփիշմանիս քու ըրածիտ յրան։

Թաքավերը էլհա պեն չի կըլոխ ընգնում, ինքը ուրան ասում ա. — Էս սրամիտ, գյուդող տղին անա շատ պեն տունս կըկյա, հրամմայում ա էլհա տանին զընդանը քըցին։

www.naregatsi.org

Անց ա կենըմ մին քանի օր, թաքավերը հիշքան մըտածըմ ա, վեչ մին հընար չի քըթնըմ էտ տըղին սեկրետը գյիդա, էլհա հրամմայըմ ա ուրյան կոշտը պերին էն տըղին։

Թաղդան հարցըփորց ա անըմ, էտ տըղան վեչ մին պեն չի ասըմ, կողի թաքավերը ընդրան համ պեցուր տեղ, համ պալատըմը օզըմ ա կործ տա, փող, վրեսկե տա, էլհա էտ տըղան պեն չի ասըմ, ճարը կըտրած լհա մին օրիշ նաղլ ա ասըմ։

«Ինըմ ա, չինըմ մին թաքավեր։ էտ թաքավերը սիրըմ ար վըերսի քյինիլը, ուրյան ղուզղուննին, ուրյան վըերսի շընները, ուրյան թեգյունքը պահողնին եր կալած։ Մի հետ տա վըերսի յա քյինըմ, շատ տըեսուտրեն ա ման կյամ, վըերսի շոռ կյամ, օրըն էլ արև ա ինըմ, տաք-կըրակ, տա շատ ա ծըրավըմ, ուրյան թեգյունքը պահողներան մինին ասըմ ա, վեր մին ստաքան ճուր ճարին, ըշտըղան օզըմ ա ինի։ էտ թեգյունքը պահողը ման ա կյամ, ման, ճուրչի ճարըմ։

Քյինըմ ա մին սարի տոշըմ տըեսնըմ մին քարա ճուր ա կաթըմ։ Ստաքանը տեմ ա անըմ, մին խիլլա կաղնըմ, մի չև էտ ստաքանին կեսը էտ ճըրավը լըցնըմ ա։ Տա օզըմ ա, թա տանի տա թաքավերին, թաքավերըն էլ օզըմ ա, թա խըմի, բիրդյան ղուզղունը թևավը թըխըմ ա, էտ ճուրը եր ածըմ։ Թաքավերը կըտաղըմ ա, էտ ղուզղունին կըլոխը պուք տամ։

Թաքավերը մին օրիշ պալատական տըղի յա ղըրկըմ ճիրի։ էտ տըղան քյինըմ ա ճիրի ման կյամ, տըեսնըմ էտ սարին կըլխան վեչ թա ճուր ա կըթկաթըմ, մին մեծ օցի լըղի յա կըթկաթըմ տըեղին ռանգյի։ էտ տըղան տըեսածը կյամ ա թաքավերին ասըմ։ Թաքավերը էտ տըղին անա շունըրակալ ա ինըմ, էն առաչին տըղին պատժըմ, ինքըն էլ շատ ա փիշմանըմ, վեր սպանալ ա ուրյան գյանքը աղադող ղուզղունին։ Շատ ա փիշմանըմ, լաց ա ինըմ»։

Թաքավերը վեր էտ նաղլը լըսըմ ա, վերչը ուրյան մըթկըմը տինըմ ա էտ տըղին անա հեռու կըենա։ Լավ մըտածելի հետի էտ թաքավերը հրամմայըմ ա էլհա էտ տըղին մին քանի օր զընդանըմը պահին։ Մին քանի օրանը ետը էլհա կանչըմ ա էն տըղին ուրյան կոշտը, էլհա օզըմ ա սեկրետը տուն քաշի, ամմա ամմալ չի կյամ։ Օզըմ ա էլհա կախաղան պըցրցնի։

Ամմա էտ տըղան ասըմ ա. — Թաքավերն ապրած կըենա, տու փիշմանիլու յըս, հունցու փիշմանալ ա էն թաքավերին տըղան, վեր դաչըմը խոխան թողալ ա ըրօրոցըմը, պառավ նանին քըշտին, ինքը կընգանը նըհետ կառնավալ քյինացալ։ Մին մեծ օխտ նի յա մըտալ ակուշկավը էտ խոխին թա կոլ տա, էտ թաքավերին տըղին բուլ-

www.naregatsi.org

դոկ շոնը պըտրտ-պատառ ա ըրալ օխծին, ուրուրոցին քըշտին եր ածալ։ էն պառավ նանին էլ նըստած տըեղը քոն իլած ա իլալ։

Ըտրանք վեր կառնավալան կյամ ըն, տըեսնըմ ըն ըրօրոցը ծառնոտ, գյիդըմ ըն, թա շոնը խոխին կերալ ա։ Թաքավերին տըղան թափանչան հանըմ ա, շոնը ըսպանըմ դաստի։ Ամմա մին խըրեգյ ետավ տըեսնըմ ըն, վեր խոխան կողի ծառնոտ, ամմա էն ա սաղ-սալամաթ տըեղը մըշմըշալի քոն իլած, օխծըն էլ պըտրտ-պատառ ըրած։ Ըտրեղ էտ թաքավերին տըղան էնքան փիշմանըմ ա, վեր էլ գյիդալ չը՛մ, լաց ա ինը՛մ, դե էլ ըշտե՞ղ։

Էտ լոխ վեր թաքավերը լըսըմ ա, ասըմ ա.—Ա՛յ տըղա, յըես քյըեզ սպանիլ չըմ տալ, մինաւկ տու էտ սեկրետը ասի։

Էտ տըղան ասըմ ա. — Թաքավերը ապրած կըենա, դե վեր էտքան ասըմ ըս, քու թաքավերական իրավունքնիտ մին սըհաթավ ինձ տո, յըես լոխ ասիմ քյըեզ։

Թաքավերը շատ ա մըտածըմ, ուրան մըթկըմը ասըմ ա. — Հինչ պիտի անի մին սըհաթըմը մին տըղա, մին սըհաթավ թաքավերութունըս տամ ուրան։

Իտի էլ անըմ ա։

Էտ տըղան հրամմայըմ ա թաքուհուն պերին կըղնըցնին, ուրան երեսուն կընեգյ ղուլլուղյոցը նըհետ։ Լոխ կյամ ըն կաղնըմ. ըտրանց դիմացը կաղնըմ ա թաքավերը։ Էտ տըղան հրամմայըմ ա լոխճին, վեր շորերնին հանին։ Թաքավերը հանըմ ա շորերը, վեր թաքուհին տըեսնըմ ա ընդրա կյեղ ջանը, ծրծաղըմ ա։

Էտ տըղան հըրցընըմ ա, թա — Խե՞ յըս ծրծաղըմ։

Թաքուհին ասըմ ա. — Տըկլոր ա, ծրծաղըմ ըմ։

Էտ տըղան ասըմ ա. — Նա տըկլոր չի, քու աշկիտ ա իտի ըրվըմ, իմ վեսկե ծունկնին աշկին էլ տու վրս տկլոր ըրվացալ, էն էլ ծրծաղալ ա։

Թաքուհին հիշքան օզըմ ար ասի, հըսկըցնի, վեր ինքյը տըկլոր չի իլալ, ամաւլ չի կյամ։

Էտ տըղան հրամմայըմ ա, վեր թաքուհին էլ շորերը հանի։ Դե թաքավերը միչև մին սըհաթը ըչըղվելի իրավունք չօնի։ Թաքուհին շորերը հանըմ ա, լոխ տըեսնըմ ըն, վեր կընեգյ ա։

Հերթը հասնըմ ա էն երեսուն կընեգյ ղարավաշներին։ Ըտահանց էլ ա հրամմայըմ, վեր շորերնին հանին։ Ըտահանք օզըմ չըն, ամմա էն տըղան ասըմ ա. — Վեր շորերնիտ հանիք վեչ, ծրեզ էս սհաթիս կախ տալ կըտամ։

www.naregatsi.org

Ըտրանք շոռերնին հանըմ ըն։ Լոխ տըեանըմ ըն, վեր ըտահանք լոխ տըղերք ըն։

Էտ տըղան ասըմ ա. — Թաքավերը ապրած կըենա, մըհեգ եշի տըես, վեր թաքուհուն ղուլլուղչոցը վեչ մինը կըենեգ չի, տըղամարթ ա կընգա շոռերըմ։ Բա վեր իտի յա, հո՞ր ա հըրցընըմ. «ծոռկնը էքյ ա՞, թա վըերց, թա վերց ա, օզըմ չըմ»։

Ըտրա հետո էլ ծոռկնը ծըծաղալ ա։

Էտ տըղան ասըմ ա պըրծընըմ, լոխճին աշկան կորչըմ։



www.naregatsi.org



11. ԾԱՂԿԱԾ ԲԱԽՉԱՆ

Ինըմ ա, չինըմ մին թաքավեր։ Էս թաքավերին ուրան պալատին առաչին մին մրեծ, բարը-նուբարավ լիդյը, ծառերավ, ծաղիկներավ լիդյը բաղ ա ինըմ։ Էտ բաղը էնքան լաւ, էնքան կյեղեցիկ ա ինըմ, վեր անց կենողնին ծրեռքըերնին ճրկատին տըրած, վըեր արևը աշկըերնին ծրկծրկոտի վրեչ, եշըմ ին, եշըմ էտ բաղին, էլհա քըշտանըմ չին։

Վըեր կյարունքը յասամաննին պրենվըմ չա՞ր, վըետը աշխարքըս յոր ար օնըմ։ Էն սիպտակ նան մանիշակի ռանգյի յասամաննի՞ն... Բա վարթե՞րը, ռանգյ-ռանգյ կյեղեցիկ, ասիս լհա՛ քաշովի յա՛, վըետը, էտ թաւզա պեցված վարթերին վըետը, աշխարքըս օնըմ ար։

Թաքավերը էնքան սկուպոյ ար, վեր ծրեռքին Թրխիս կորեկ չար եր ընգնիլ, ծրեռքը՝ կարճ, լուզունն՝ էրգյան, հենց ար լհա՛ տըժոխկի տըրնապահ ինի՛, հենց տըղտոողըմ ար։ Էտքան բարերան էտ դաղվածը վրեչ ինքն ար օտըմ, վեչ էլ Թողըմ ար մին օրիշը օտի։

Մին հետ էլ մին ախկադ եկավ, մին բար օզից, ամմա թաքավերը ասից. — Տու վիր պակա՛ս, վըեր կյաս իմ բախչաս, բար օզիս օտիս։

Էտ ախկադը անեսկ տըվավ, ասից. — Թող քու բաղըտ չուրանա, մին կանանչ ծառի հասրաթ մընաս, աշկըտ մընա մին բարի յրա։

Էտ անեսկանը յրետը թաքավերին բաղը յավաշ-յավաշ տըղնըմ ա, չուրանըմ։

www.naregatsi.org

Թաքավերը կըզնըվըմ ա, օզըմ ա, թա պըլանա, հրամմայըմ ա էտ ախկադին փըռնին պըերին ուրեան կոշտը, վըեր կլինը կըտրին, ամմա ծըռոտենքը հիշքան ման ըն կյամ, ճարըմ չըն։ Քոռըփրեշմեան ետ ըն տրեռնըմ, կյամ պալատը։

Թաքավերը շատ ա մեթիկ անըմ, քնենքյ անըմ ուրեան բաղին հետի։ Նա ուրեան կոշտն ա կանչըմ մեծամեծներին, գիդնականներին, վըեր մին ճար, մին հընար անին, վըեր բաղը-բախչան կընանչի։

Ըտրանք խորուրթ արին, խելք խելքի տըվին, թա. — Թաքավերը ապրած կենա, վըեր օզըմ ըս բաղը-բախչատ կընանչի, բիդի մին ժամ շինիս, վըեր ըտրա նմանը սաղ աշխարքըմըս ինի վըեչ։ Ժամը շինելանը ետը նի մընիս մեչը, աղոթիկ անիս։

Թաքավերը լավ-լավ ուտտոց կանչիլ տըվավ, մին շատ ղաշանգյ ժամ շինիլ տըվավ, նի մըտավ ժամը վըեր աղոթիկ անե, աղոթկին կըեսըմը մին ղուրուլթու աշկին ըրվաց, ասից. — Շինիլ տըվածժամըտ շատ ղաշանգյ ա ուրեան շենքավ-շընորքավը, ամմա մին պըեն պըկասըմ ա։

Թաքավերը օզըմ ա ըտրանա մին խորուրթ հըրցընի, մըեթիկը գյիդա, ամմա ղուրուլթուն աշկին առաչան կորչըմ ա։ Թաքավերը շատ մըտածելանը ետը հրամման ա տամ, ժամը քանդին, թաղադան մին ըտրանա լավը շինին։ Ըսկսըմ ըն ժամը շինիլը էնքան ղաշանգյ, պըեցուր, էնքան լավ, քարերը լհա կուրուժվավեր ինի՞, ասիս մին քաշած պատկյեր ինի՞ տական միչև կըլինա, վըսկըվառաղ, պըծրպածի ընելիս, վըեսկե խաչըն էլ յրա՞ն։

Լհա վըեր շինըմ ըն, պըրծընըմ, թաքավերը նի յա մընըմ, թա աղոթկ անի, վըեր բաղը-բախչան կընանչի, էլհա աղոթկին կեսըմը էտ ղուրուլթուն ըրվըմ ա, ասըմ. — Թաքավերը ապրած կըենա, լոխ շատ լավ ա շինած, քարերը թընգյանոց, լավ տաշած, կըրուժվավեր, վըեսկե խաչըն էլ յրան, ամմա էլհա մին պըեն ա պըկասըմ։

Էտ մունուտին թաքավերը ըտրա արմունգան փըռնըմ ա, ասըմ. — Ա՛յ պարի ծերունի, ասի տըեսնամ հի՞նչն ա պըկասըմ, հի՞նչ ասիս, կանիմ, հինչ օզիս, կըտա՞մ, թաքյ լհա բաղը-բախչաս կընանչի։

Էտ ծեր մարթը հրաժարվից ամմեն հինչան, ասից. — Վըեր օզըմ ըս բաղը-բախչատ կընանչի, բիդի վըսկըշափաղ, էն լավ յրերքող ղուշը, զաւ բունչրունչը պըերիս, տինիս բաղը-բախչըմըտ, վըեր յրերքի, բաղըտ կընանչելու յա։ Ամմա ըտրան պերելի հետի շատ ըս չըրշարվելու։ Ըտրան պերողը պիտի անց կըենա չոր անապատնե-

www.naregatsi.org

րավ, տըժեր տըեղերավ, հըրեշներին մաչավը, մեյիդներին կըլխավը, սարավ, քոլավ, կյետավ, ծիրավ։ Ամմա լոխճան տըժերը զաւռ բռւլբռւլին յըերք ասել տալըն ա, վըեր յըերք ասից, դաստի բաղըտ կընանչելու յա։ Էտ ղուրուլթուն ասըմ ա, էլհա կորչըմ։

Թաքավերը մընըմ ա մինաւկ մըտածմունքի մըեչի։ Նա էնքան շատ ար մըտածըմ, քընեքյ անըմ, վըեր հալվալ-մաշվալ ար, չոր չոփ տըեռալ, հըլավավը մին տեռա՜լ։

Էտ թաքավերը իրեք տըղա օնար։ Մըեծը նան միշնաւկը անըմ-նին խելունք ին եր ըրալ, ամմա պուճուրին կյիժ ին ասըմ։ Էտ պուճուրը սաղ օրերը խաղ ար անըմ էն գյդոտանցը, խխորցը նըհետ, սաղ օրը տռնտռմն ար ինըմ, թակըմ, թակվըմ, թռվիլ տամ, պըլը-կընդրիկի տա՜մ, կըռըեվ անըմ, հախտըմ, հախտվըմ, կյեփերը ճը-ղոտըմ։ Իտի էլ մըծանըմ ա։ Հաւրը կանչըմ ա իրեք տըղին էլ ռւրռան կոշտը, լոխ ասըմ, ռւրռան դռրդերը նաղլ անըմ, բաղին չուրանալին հըետի։

Մըեծ տըղան ասըմ ա. — Ա՛ հաւր, մըեր չուրացած բաղը կը-նընչացնելի հըետի կոզի հինչ ինի՞, կոզի հըեռն տըեղ ինի՞, ճընա-պեքյն էլ փի՜ս, յըես կըքյինիմ զաւռ բռւլբռւլը պըերիմ։

Էն էրկու ախպերքն էլ ըսեցեն. — Ա՛ հաւր, մունք հինչա՞վ ընք պակաս, մունք էլ կքյինինք։

Իտի թաքավերին իրեք տըղերքը ռւրռանց զենքը-զըրահը, ճընա-պարին պաշարը յոր ըն օնըմ, իրեքան էլ ծի յըն նըստըմ, քյընըմ։

Քյընըմ ըն, քյընըմ, շատ ըն քյընըմ, խրեգյ ըն քյընըմ, շատ նան խրեգյը աստուժ ա գյուղըմ, անց ըն կենըմ հալա մարթի վրենը չի կոխած տըեղերավ, հալա մարթի ծրեն լըսած վրեչ սարերավ, վըերչը հըսնըմ ըն մին տըեղ, ըշտըղան իրեք ճընապար ա տռնա կյամ։ Ըտըեղ նստած ա ինռւմ մին պառավ մարթ։ Էտ պառավ մար-թին անա հըրցըփորց ըն անըմ, թա էտ ճընապարնին ըշտըե՞ղ ա տանըմ։

Էտ պառավ մարթը ասըմ ա. — Ա՛յ բալեք, առաչին նան էր-կունջի ճընապարնին պարի յա, ամմա իրեքինջինը շատ շառ ա, ըտըղավ անց կենողը ետ չի տըեռնըմ։

Իրեք ախպերքը տըես մըտածեցին, տըեն մըտածեցին, վըեր մըեծ նան միշնաւկ ախպերքը քյինին էն էրկու պարի ճընապարնե-րավը, ամմա պուճուր ախպերը քյինի էն շառ ճընապարավը։

Իտի էլ անըմ ըն։ Մըեծ նան միշնաւկ ախպերքը ուրխանըմ ըն, վըեր իտի իլավ, համ ռւրռանց չի մին պըեն ինիլ, համ էլ էտ կյիժ ախպորըն անա կազադվին։

www.naregatsi.org

Իրեքան էլ ուրուր խոսկ ըն տամ, վրեր հու շուտ ետ տրեռնա, ըտրեղ ըսպասի էն մնացած ախպորըը։ Ըտրեղ ուրուր պարի ճրնապար ըն ասըմ, ամմեն մինը ուրան ճրնապարրըն ա ընգնըմ։

Մրեծ ախպերը քյինից, քյինից, վերչը հրսավ մին քաղաք։ Ինքը ուրան մրեթկ ըրավ, մրեթկ, վրերչը ուրան մրթկըմը ասից. «Էչ հո՞ր ըմ քյրնըմ, կլոխս բադի տամ, լավրն էն ա ըստրեղ մին կործի նի մրննիմ, ըստրեղ էլ կրեննամ»։

Միշնակ ախպերը քյինից, քյինից, շատ չըրչարվից, շատ տրժերոթունի քաշից, վրերչը մին քաղաքըմ մին մարթի տան ծառա նի մրտավ, ուրան պրերանը պրհելի հրետի։

Պուճուր ախպերը քյինից, քյինից, անց կացավ յաբանա չոլեր, քոլեր, անց կացավ անճանանչ տրեղեր, էրգյան ճրնապարնի, անց կացավ կյուլու կաղանավ լիքը ծրմակնի, ծորեր, քոլեր, վրերչը հրսավ մին հենց վրեղի, վրեր ռանգյը կյարմուր ար։ Էտ կյարմուր վրեղավը քյինից, քյինից հրսավ մին մրեծ ամարաթի, վրեր վրեչ տոռնը օներ, վրեչ էլ ակուշկա։

Թաքավերին կուճի տրղան տես եշից, տեն եշից, թա տրեսնա, հո՞ւ վա ըտրեղ կրեննըմ, պրեն չի տրեսավ։ Բիրդան աշկին մին կյեղեցիկ ախճիգյ ըրվաց, ըրեքնական է՛լ իվիլ վառ։

Էտ կյեղեցիկ ախճիգյը ըրմացած եշից էտ տրղին, ասից. — Ա՛յ խրեղճկրակ, տու հո՞ւ վրս, վրեր ըստրեղ ըս յրեկալ, մեխկ ըս, շուտ ըրա փախի, թա չէ, էսա օշափը կյալու յա քյրեզ կոլ տա։

Էտ տրղան ասից. — Հայլա նըրհետտ խոսալ չըմ, հայլա կոշտտ ղոնաղ չըմ ընգալ, տու՛ ինձ վրխցնըմ ըս, դե նաղլ ըրա տրեսնամ, բա տու հո՞ւ վրս, էս անտոռնը, անակուշկա բըերթըմը հի՞նչ ըս անըմ։

Ախճիգյը նաղլ ըրավ, ասից, վրեր ինքը թաքավերի ախճիգյ ա, կյերի յա ընգալ կյարմուր օշափին ծրեռքը, վրեր կյարմուր օշափը ուրանց երգյիրը քանդալ ա, վրղրմոխրեր շինալ, լոխ մարթկանցը կրերալ, էտ մարթկանց ուրունան էլ էտ վրեղը կյըրմըրալ ա։

Թաքավերին տրղան ասից. — Յրես վրեչ մին օշափա, պրենա վախըմ չըմ, յրես քյրեզ պիտի ազադիմ էս օշափին ծրեռքան, թողիմ վրեչ մինակ, անդար։ Ամմա խրնթրըմ ըմ ասի, թա ըշտրղավ ա կյալու էտ օշափը։

Մին էլ տրեսին աշխարքը դրղըրդաց, վրեղը տրեղան տուրուր եկավ, էն մրեծ սարին կըլխան օշափը ըրվաց, փրնչալավ-մըռընչիլավ վրերսը առաչըն ըրած եկավ, բուրդան էտ տրղին տրեսավ, մին ինդի ծեներ հանից, վրեր ղուշ նան կազաննին սաւսան փախին, ուրանց կըլոխը ազադեցին։

www.naregatsi.org

էտ օշափը իտի կըտաղած ասից. — էտ հո՞ւ վըս, հո՞ մնց ըս ընգալ ըստըեղ, անըմըտ հի՞նչ ա, ազկըտ հի՞նչ ա, դայիտ հո՞ւ վա, ղորփերըտ հո՞ւ վա, հո՞ւր տըղա յըս, վըեր ինձանա վախալ չըս, եկալ ըս հըսալ ըստըեղ։

Թաքավըերին պուճուր տըղան ասից. — Յըես քյըեզ համար ըմ եկալ, վըեր քյըեզ փըչըցընիմ, քյըեզ ըսպանիմ։

էտ խոսկերքը լըսելավ օշափը կըտաղից, ըրունը կըլխավը տըվավ, աշկերը կյըրմըրից, պըրանան կըրակ թափելավ յըրա պըրծավ էտ տըղին, թա կոլ տա։ էլհա աշխարքը դըղըրդաց, թոզը երգյինքյը հըսավ, էտ տըղան, էտ թոզըմը կորավ։

Օշափը գյիդաց, թա տըղան կորավ, թոզ տըեռավ։ Մին քանի մունուտանը ետը թոզը վըեր թըմըզվից, օշափը տըեսավ, վըեր էտ տըղան սաղ-սալամաթ էն ա կաղնած։

Օշափը լափ կըտաղից, էրկունջի դոնըմը հիշքան օժ օնար, յըրա պըրծավ տըղին։ Աշխարքըս տոնըրուր եկավ, թոզը իրիքյնակին իրեսը ծասկից, օշափը էս դոնըմըս էլ մըղափուն եկավ էն տըղին, վըեր թոզ տըեռավ, վըեր ուրան պաժին չի մնաց, վըեր օտի։ էլհա մին քանի մունուտանը ետը վըեր թոզը քաշվից, տըղան սաղ-սալամաթ ընդեղ կաղնած ծըծաղըմ ար։

Օշափը իրեքինջի դոնըմը ինդի՞ կըղնվից, ինդի՞ կըտաղից, փըրփըրից, վըեր էլ ասվիլ չի, յըրա պըրծավ տըղին։ Աշխարքըս թընդաց, ասիս լհա թոփեր ինի տըրըքտրաքըմ, ըրոտըմ, թոզը արևին իրեսը ծասկից։ Օշափը գյիդաց, թա էս դոնըմ տըղան թոզ տըեռավ, վըեր մըրթավըեռ էլ չի մընաց։ Մուտացավ վըեր վըեռ քաշի, տըեսավ տըղան տեմացը կաղնած։ Օշափը մընաց մաթ մընացած։

Թաքավերին պուճուր տըղան ետ տըեռավ, ասից. — Դե մըհեկ նորաթը ի՛մն ա, մըհեգյ յըես պիտի քյըեզ ճըռթըփըշուր անիմ, մըեծ պատառըտ անգուճըտ թողիմ, պուռթ տամ, պեմբակ կյիզիմ։

Ասիլը նան սորավը թըխիլը մին իլավ։ Օշափը եր ընգավ, սատկից։ էտ տըղան ըտրա անգուճնին կըտորից, եր կալավ, տարավ էն ըխճըկանը նշանց տա, վըեր էտ ախճիգյը գյիդա, հըվատա վըեր օշափը սատկած ա։

էտ ախճիգյը վըեր տըեսավ, ուրխացավ, ընգավ տըղին խըտետը, պըչպըչըրից, ասից. — Դե մըհեգյ եք փըսակվինք, վըեր տու ինձ ազադեցիր։

էտ տըղան ոազի չի կացավ։ Ասից. — Յըես հալա մին նըպատակ օնիմ, միչև էտ նըպատակը կադարիմ վըեչ, փըսակվելու չըմ, վըեչ

www.naregatsi.org

էլ տոն ըմ քյընաւլու։ Յրես հաւլա բիդի քյինիմ զաւռ բռւլբռւլը պլերիմ, վրեր մրեր բաղը, բախշան կրնանչի։

Էտ ըխճըկանը աշկը վախից, վրեր էտ տըղան ինդի փիս ճրնապարներավ պիտի քյընի, վրեր քյընացողը ետ չի կյամ։

Տըղան էտ ըխճըկանը սրերտ տրվավ, վրեր վախի վրեչ, արխային ըրավ, ասից. — Տու ըստըեղ կաց, միչև յրես կըկյամ, քյըեզ յոր օնիմ, քյինիմ։

Տըղան էլհա ճրնապար ընգաւվ, քյինից։

Քյինից, քյինից, ընգաւվ փիս-փիս տրեղեր, հրսաւվ մին ռանգյը սրեվ վրեղի։ Քյինից տրեսավ մին պլեցռւր ամարաթ, ակուշկեքյը տրռնները փակ։

Էտ տըղան ամարաթին դըրբըղան պլեց ըրավ, նի մըտավ, տրեսավ մին շատ կյեղեցիկ ախճիգյ ըրվաց, հունցը մին պլըլլռրած լռւանըննգյա։

Էտ ախճիգյը վրեր տըղին տրեսավ, շատ տրխրվից, ասից. — Ա՛յ տըղա, տու հո՞ւ վրս, ըշտրեղա յրս եկալ, էս ա սրեվ օշափը կյալու յա, շռւտ ըրա փախի, թա չէ, քյըեզ կոլ ա տալու։ Կողի կյըրմռւր օշափին ղազաբան անց ըս կացալ, ամմա սրեվ օշափը ընդրա նըման չի, մին օզգյա բաբաթ ա, հրեռաց, քյինի... Տու կարիլ չըս ինձ շոնա, կյուլա, օշափա աղաղիս...

Էս վրեր ըստի յա ասըմ, թաքավերին պուճուր տըղին քյեփին նի յա կյամ, ասըմ ա։— Ա՛յ նախշուն ախճիգյ, հաւլա ինձ ղոնաղ չըս ըրա՞լ, հաւլա մին քախծըը խոսկ չըս ասա՞լ, ինձ ծրեր օշափավը վրխացընըմ ը՞ա։ Դե հո՞ւնց անիմ, ջրհանամը թա սրեվ օշափը կկյա, ինձ օտի, գյոռը, իստիքռւջաղը, մին օր ծրնվալ ընք, մին օր էլ կմրեռնինք։ Մինաւկ նաղլ ըրա, թա տու հու վրս, կրլռխրտ հինչ ա եկալ, օշափը ըշտրղավ ա կյալու։

Ախճիգյը լաց իննիլավ նաղլ ըրավ, վրեր ինքյը թաքավերի ախճիգյ ա, օշափը եկալ ա ռւրանց երգյիրը քընդրքար ըրալ, Ակուռի շինալ[1], ժողովուրթին կրտորալ, ռւրան էլ պրերալ ըտրեղ կյերի։

Էտ ախճիգյը թաքավերին տըղին մրեխկըն ա կյամ, ասըմ ա. — Ա լռւանըննգյա ախճիգյ, լաց մի իննիլ, յրես քյըեզ կազադիմ, մինաւկ մին խըրեկ հաց տո օտիմ, շատ ըմ սովածա։

Էտ տըղան, էտ ըխճըկանը մեխկըն ա կյամ, տանըմ ա ռւրան կոշտը, ուտըցընըմ, նըհետը զռւրռւց անըմ։ Մին էլ ա տրեսնըմ ամարաթը տրեղան տռւրռւր եկավ։

---

[1] Հիշատակություն Արարատի հրաբխային ժայթքումից տուժած Ակոռի գյուղի մասին (Մ. Բ.)։

www.naregatsi.org

էտ տըղան զարմացած հըրցըրավ. — էս հի՞նչ պըեն ա, էս խե՞ յա ամարաթը տըեղան տո՛ւրո՛ւր կյամ...

էտ ախճիգյը վախից տըղտողալավ ասից, թա. — էտ օշափըն ա կյամ, եք քյըեզ կյողը կըցընիմ։

— Կյողը կըցընիլըս վըե՞րն ա, վախիլըս վըե՞րըն ա, յըես լհա՛ ընդրա հետի յըմ եկալ։

Օշափը վըեր եկավ էտ տըղին տըեսավ, կըտաղած ասից. — Տու հո՞ւ վըս, ըշտեղա՞ն ըս եկալ, իտի համարծակ ըտըեղ կաղնա՞լ։

— Յըես եկալ ըմ քյըեզ ըսպանիմ, ա՛րո՛ւնըտ խըմիմ։

Սըեվ օշափը վըեր տըեսավ էտ տըղան էտ հո՛ւնա՛ըրին տա՛ր ա, ասից. — Մըեր ա՛ղա՛ըը իստի յա. առաչ ղոնաղին հացը ըն տամ, ուտուցընըմ ըն, խըմըցնըմ, քըշերը պահըմ, էն մին օրը նըհետը կըռըեվ անըմ։

Ըտրանք իտի էլ անըմ ըն, օտըմ ըն, խըմըմ, թեքյ ընգնում, թա քոն ինին։

Սըեվ օշափին քոնը տանըմ չի՛, մըթկըմը ասըմ ա. — էս վըեր իմ ախպոր, կյա՛ըմո՛ւր օշափին հախտալ ա, կարող ա ինձ էլ հախտի, լա՛վըն էն ա, եր կըենամ էս քըշեր ըտրա կըլո՛ւխը օտիմ։

Թաքավերին պուճուր տըղան յաման գյիտական ար, խափիլը տըժեր, դա՛ստի կըլխու ընգավ օշափին մըեթկը։ Ամարաթը վըեր էլհա տո՛ւրո՛ւր եկավ, էտ տըղան եր թըռավ տըեղան, սորը հանից, յըրա պըրծավ օշափին, հենց թըխից, վըեր կըլո՛ւխը տըեղան թըռավ։

Աշխարքըս ասիս լհա՛ դինջացավ, լո՛ւսավերվից։ Ըտրա անգուճնին էլ կըտորից, տարավ էն ըխճըկանը նշանց տըվավ։ Էտ ախճիգյը վիզա՛վըն ընգավ, պըչկըչորից, կըլո՛ւխը սըղալից, ասից. — Եք փըսակվինք, մին տըեղ ապրինք։

Տըղան էտ ըխճըկանն էլ մըեռժից, խոսկը կոտրից, քըշացավ էտ ամարաթին քաշի ատաժնին, հիշքան փըռնած հեյվանների կար, ազադից։ Ըտրանք ուրխացած քյնացին ո՛ւրանց պո՛ւնները։ Ետավ ըտըեղ մին քանի օր մընաց, էլհա ճընապարի պադրաստո՛ւն տըեսավ։ Վըեր էտ տըեսավ, ըխճըկանը քյեփը կոտրից։ Տըղան նաղլ ըրավ, վըեր ինքյը նպատակ օնի, բիդի քյինի զա՛ռ բո՛ւլբո՛ւլը պըերի, վըեր երքի, ո՛ւրանց բաղը-բախչան կընանչի։

Վըեր էտ լըսից, ախճիգյը վախից, օզից թա սըերտը ճաքի, վըեր տըղան օզըմ ա կըլո՛ւխը բադի տա։ Տըղան եշից վըեչ, եր կացավ ճընապար ընգա՛վ։

Շատ քյինից, թա խըրեգյ, անց կացավ շատ փիս-փիս տըեղերավ, մըթեն ծըմակներավ, խոր-խոր ծո՛րերավ, պեցուր սարերավ,

www.naregatsi.org

վըերչը ընգաւվ մին սիպտակ վըեղ, մին խրեգյ էլ քյինից, ըտրան առաչը եկավ մին սիպտակ ամարաթ, մարթի կըլխի վըեսկուռնըերա շինած։ Էտ ամարաթին դըրբըզան պըեց ըրավ, նի մըտավ, տըեսավ մին շատ ղաշանգյ ախճիգյ, արևին լուսաւն էլ իվիլ լուս տըվող, ընդրան շըենքը-շընորքը իրեսկըհատը մին օրիշ պըե՞ն։

Էտ ախճիգյը վըեր էտ տըղին տըեսավ, կըլոխը շոռ տըվավ, օզից թա եր ընգնի, ասից. — Ա՛յ տըղա, ըստըեղ հի՞նչ ըս անըմ, հո՞ւնց ըս եկալ էս օշափներին երգյիրը, դե շուտ ըրա ետ տըեռ, թա չէ սիպտակ օշափը կյալու յա քյըեզ օտի։

Էս խոսկերքը էլհա տըղին քյեփին նի եկավ, ասից. — Ա՛յ ախճիգյ, հալա ինձ ղոնաղ չըս ըրա՞լ, հալա պարյօր-ասծուպարին չըս ասա՞լ, ինձ տուս ըս անըմ։ Ինձ վըխացընըմ ըս սիպտակ օշափավը։ Լավըն էն ա, նաղլ անիս տըեսնամ տո՞ւ հունց ըս ընգալ ըստըեղ։

Ախճիգյը լաց ինելավ նաղլ ըրավ, վըեր ինքը թաքավերի ախճիգյ ա, ամմա էտ սիպտակ օշափը եկալ ա ուրանց երգյիրը պըրիշակ ըրալ, լոխճին կըտորալ, ուրան էլ կյերի եր կալալ։ Էտ ախճիգյը տըղին մըեխկը եկավ, ասից. — Ցըես լհա ըտրա հրետի չըմ եկալ, վըեր ըտրա կըլոխը պուք տամ, քյըեզ ազադիմ, իմաց տո, կյա, կըռեվ անինք։

Տըղան շատ սուված ար, մին լավ հաց կըերավ, քըշտացավ։

Մին էլ տըեսին սիպտակ օշափը կյամ ա մըրթմըրթալավ, լընգլընգալավ, ըրօրվելավ։ Ամմեն վըեննը փոխելիս տափը տուրուր ար կյամ։

Եկավ նի մըտավ տոն, չորս ղոլան վըետ քաշիլավ ասից. — Փուՙհ, էս հի՞նչ մըրթավետ ա կյա՞մ, էս հո՞ւ կա ըստըեղ։

Վեր տըղին տըեսավ վե՛չ արծակ-համարծակ կաղնա՛ծ, շատ ըչըղվից, փընթփընթաց, ասից. — Տու հո՞ւ վըս, հո՞ւնց ըս ընգալ էս ղոլերքը։

Թաքավերին պուճուր տըղան ասից. — Եկալ ըմ քյըեզ նըրհետ կըռեվ անիմ, քյըեզ ըսպանիմ։

Էտ դևը մըտածից, ինքը ուրան նըրհետ մըսըլըհաթ ըրավ, վըեր էտ տըղան ուրան էրկու ախպորը ըսպանալ ա, ունդուր ա եկալ ըտրեղ հըսալ։

Ընդրանք տուս եկին, վեր տուսումը կըռեվ անին։ Նորաթը էտ օշափինն ար։ Նա ուրան ախպորցան էլ իվիլ օժավ ար։ Իրեք հրետ քյեցավ-յրեկավ թըխից, ամմա տըղան անփորց ազադվից։ Նորաթը հըսավ էտ տըղին։ Նա ըսկսից սորը օշափին կըլխին խըղըցնիլը, օշափին ըսպանից, ընդրա անգուճնին կըտրից, տարավ էտ ըխճըկանը կոշտը։

www.naregatsi.org

Ախճիգյը տրեսավ, ուրխացավ։ Էտ տղին վիզավը փրթաթվից, ասից. — Մըհեկ, յրես քունն ըմ, տու՝ իմը, եք փրսակվինք։

Իրեք օր տղան մընաց ըտրեղ, մին լավ դինջացավ, մին օր էլ հացի նըստած թառանչ քաշից, տրեղան եր կացավ, ասից. — Յրես քյընըմ ըմ։

— Ըշտրե՞ղ ըս քյընըմ։ Քյինիլ մի, յրես առանց քյըեզ կարիլ չը՞մ։

— Յրես նպատակ օնիմ, պիտի կադարիմ, քյընըմ ըմ զառ բռնլբռնլը պըերիմ, վրեր յերքի, մըեր բախչան կընանչի։

Ախճիգյը վրեր լըսից, շատ վախից, վրեր տղան կըլոխը բադի կըտա, վրեր ըտրեղ քյընացողը էլ ետ չի տրեռնըմ։ Տղան կոխկըհաստոթուն ըրավ։ Ախճիգյը տրեսավ վրեր տղան ուրան ասածի յա, սըվըրցրավ, թա հո՞նց պիտի զառ բռնլբռնլը պըերի՞։

— Կըքյինիս, շատ տրժըրրոթուննի կքաշիս, ամմա մըհալ չի տինիս, տրժըրրոթուննին կըկյա, անց կենա։ Հարկավեր ա համփերոթուն, խրելք, արկաթե չան։ Կրհրսնիս մին մրեծ դուզ տրեղի յրա շինած մին մրեծ ամարաթի, պեց տրոնները կրծասկիս, ծասկած տրոնները պեց կանիս, հրսնիս թաքավերին օթախին։ Թաքավերը քոն իլած ա իննելու, յավաշ-յավաշ կը պըտրտիս զառ բռնլբռնլին օթախին պիլանին, տոռնը պեց կանիս, ղուշը յոր օնիս, տունս կյաս, կյաս։

Էտ տղան, հինչ վեր էտ ախճիգյը ասալ ար, լոխ կադարից։

Էտ դաբռնմը աման ղոլա հարայ տըվին. — Հա՛յ, հարա՛յ տարի՛ն, հա՛ տա՛րին, փրոնեցի՛ք։

Էտ տղան վեչ մին պենի եշից վեչ՝ շունտ ըրավ, առանց ետ եշելի զառ բռնլբռնլը ծրեռքին եկավ էտ ըխճըկանը կոշտը։

Ախճիգյը տափան միչև երգյինք ուրխացավ, աշխարքըս ուրանը տրեռավ, փրթաթվից էտ տղին վիզանվը, կոլավրն ընգավ, պըչպըչորից։

Ըտրանք խոսկը մին արին՝ մինտեղ քյինին տղին հայրենիքը։ Լոխ հարուստոթունը՝ վրեսկեն, առծաթը եր կալին, օղտերը պեռնեցին, քյեցին։

Քյեցին, քյեցին, շատ քյեցին, թա խրեգյ քյեցին, հրսին սրեվ աշխարքը, ըշտեղ էտ տղան սրեվ դևին սպանալ ար, էն մին ըխճըկանը ազադալ։ Ըտեղ էլհա լոխ հարուստոթունը եր կալին, իրեքավ հրղե իլին։

Շատ քյեցին, թա խրեգյ քյեցին, հրսին կյարմուր դևին աշխարքը, ըշտեղ էտ տղան սպանալ ար կյարմուր դևին, էն մին ըխճըկա-

www.naregatsi.org

նը ազատալ։ Ետեղ էլ լոխ հարուստութունը եր կալին օղտերը պետնեցին, քյեցին։

Մին խիլլա վախտ էլհա քյեցին, հըսին համին էն տըեղը, ըշտեղ ախպորցն անա պըժանվալ ար։

Ետեղ էլհա էն պառավ մարթը նստած ար։

Թաքավերին էտ պուճուր տըղան հըրցըրավ.— Ապե՛ր, բա իմ ախպորցաս վեչ մինը եկալ չի՞։ Ախեր մունք պայման ընք կապալ, վեր հու վեր շուտ կյա, ըստեղ սպասի, մինչև էն մինուռքն էլ կյան։

Էտ պառավ մարթը տըեղան տըմբըհան իլավ, ասից. — Չէ՛, բալա, եկող չիլա։

Էտ տըղան թա. — Ապեր, դե վեր իտի յա, էս ըխճըկերքը թողիմ քըշտիտ, էս վըեսկավ, անկյին քարերավ պեռնած օղտերը լոխ թողիմ քըշտիտ, յըես քյինիմ իմ ախպորցը հետան, տըեսնամ հի՛նչ տըեռին, տըեսնամ ընդրանց կըլոխը հի՛նչ եկավ, ճակատնին վե՞ր սարի, վե՛ր քարի նի եկավ։

Ասըմ ա, հըղե ինուն։ Ճընապարին հարցըփորց ընելավ քյինում ա, քյինում, հըսնում ա մին տան, ընդեղ ղոնաղ ընգնըմ։

Ետեղ հըրցըփորց ա անըմ, թա հո՞ւնց քյիթնի ուրան ախպորցը։

Տընատարն ասըմ ա. — Էտ պենը մինուկ մին թուհրավ կարող ըս գյիդա։ Բեդմա քյինիս ժամին տըռանը մին մատաղ մորթիս, լոխ ղարիբներին կանչիս, մատաղը պըժանիս, բալքա ընդրանց մեչին էլ քու ախպերք ինին։

Էտ տըղան քյինում ա, ըտըղան մոտիկ մին քաղաք կար, անըմը Շուշի-Ղալա, ըտեղ էլ մին մըեծ ժամ կար, Ղազանչեցունց ժամ ին ասըմ, ընդեղ էտ զանվարրաղ խաչերավ ժամումը տես եշից, տեն եշից, ըտրա էտ պեցուր կամարներին եշից, լափ էն պեցուր կմբեթին եշից, տըեսավ յողնեգյնին ընդեղ պուտուտ-պուտուտ ըն կյամ, լոխ էլ սիպտակ։

Ասից. — Ա՛ յողնեգնի՛, տըեսնաս իմ ախպորց տեսալ չըք հու։

Էտ յողնեգյներան մինը լուզու առավ, ասից. — Թաքավերին պուճուր տըղա, տու քու ախպորցըտ քըթնելու յըս, ամմա վա՛յ քու կլոխըտ։

Գյըրաքյի օր ար։ Ժողովուրթը ժամը լիգյը։

Վերչը էտ տըղան մատաղ ա մորթում, ժամհարին նըհետ մին տեղ իփում, ուրան ծըեռքավ մըեսը լավաշին մեչին տնում, կընդ-կընդ պըժենըմ։

Մատաղը պըժանելին վերչումը էտ տըղին միշնակ ախպերը

www.naregatsi.org

եկավ, վեր Շուշի-Ղալա քաղաքումը ծառայոթուն ար նի մտալ Հարունանց Տանիյելին քըշտին։

Պուճուր ախպերը վեր ըտրան տըեսավ խտետրն ընգավ. պըչպըչորից, հըրցըփորց ըրավ, գյիդաց հունց ա, հունց չի՛, ետավ քյինեցին միշնաք ախպորը խաղայինին կոշտը, վեր րասչոտ յոր օնին։

— Իմ ախպոր փողը տո,— ասից պուճուր ախպերը,— հաշիվը վերչացրու, մունք քյինըմ ընք։

Խաղայինը ասից. — Դե հի՞նչ ըմ ասըմ, օղըմ ըս եր կալ։ — Ասըմ ա պըրծնըմ, փողը հաշիվ անըմ ծրեռքին տինըմ։

Պուճուր ախպերը միշնաք ախպորը տարավ Շուշի-Ղալա քաղաքին մեծ մագազինննին ման ածից, լավ-լավ շորեր առավ կյեց տըվավ։ Ետավ ինք նան միշնաք ախպերը ճրնապար ընգին, քյեցին մեծ ախպորը ճարեցին, իրեքավ հըղե իլին դիբի էն ըխճըկերքը։

Վերչը էրգյան ճրնապա կյալանը ետը հասին ընդեղ, ըշտեղ թողալ ին օղտերին քյարվանը, մին էլ ըխճըկերքը։ Պուճուր ախպերը լոխ նշանց տըվավ, լոխ նաղլ ըրավ։ Մեծ ախպերը նախանձից օղըմ ար թա տրաքվի, վեր ըխճըկորցը պաժին ըրին, էն լոխճան պուճուր, ամմա լոխճան կյեղեցիկ ախճիգյը պուճուր ախպերը եր կալալ, զան բուլբուլը ծրեռքին։

Ըտրանք ճրնապա ընգին ուրանց քյարվանի նըհետ։ Շատ ար տաք, ծարավը մարթ ար ըսպանըմ։ Շատ քյինալանը ետը հըսին մին կյետի։

Ետեղ մըեծ ախպերը թա. — Եկիք լըղանանք։

Քյարվանը առաջ ընգավ, ուրանք մնացին, լըղացին։

Ետեղ մեծ ախպերը ետ տըեռավ միշնաք ախպորը թաքուն ասից. թա. — Ըք մըեր պուճուր ախպորը կյետըմը խեխտինք, զան բուլբուլը մունք տանինք տանք մըեր հոր։

Միշնաք ախպերը ոազի չի կացավ, ասից. — Լավն էն ա, վեր վըննը-ծրեռքը կապինք, աշկերը հանինք, թողինք էս կյետին ղրաղին, մունք քյինինք։

Ըտրանք իտի էլ ըրի՛ն։

Վըեր հըսին քյարվանին, էն ըխճըկորցը կոշտը էտ ըխճըկերքը թա. — Պա հո՛ր ա ծըեր պուճուր ախպերը։

Մըեծ ախպերը թա. — Բա ասիլ չը՛ք, կյետըմը լըղընալիս վախտը ճիրըմը խեխտվից, կրեցինք վեչ, թա ազադինք, վա՛յ-վա՛յ մեր պուճուր ախպեր,— սըտըսոտ ուրանց ծընգնները թակեցին մեծ նան միշնաք ախպերքը։

www.naregatsi.org

էտ ըխճըկերքը շատ լաց իլին, առուի շատ լաց իլավ լոխճան պուճուր, լոխճան կյեղեցիկ ախճիգյը, զաւռ բունլբունլը ծրեռքին, ամմա դե էլ ըշտե՞ղ...

Թաքավերը լսալ ար, վեր էն ա տըղերքը կյամ ըն։ Մեծ պադրաստոթունավ, նաձիր-վաձիրներավ, մրեծամըեծներավ տունս ա կյամ ըտրանց առաչը։

Սաղ քաղաքը վրեննի յրա ար, լոխ օղըմ ին տրեսնան զաւռ բունլբունլին, լոխճան շատ էլ թաքավերն ար օղըմ տեըսնա, վրեր տինին ունրանց բախչըմը, երք ասի, բախչան կընանչի։

Ամմա վեր թաքավերը տրեսավ պուճուր տըղան կա վեչ, շատ զարմացավ, քար կըտրից թա. — Պա հո՞ր ա ծրեր պուճուր ախպերը։

Մրեծ նան միշնակ տըղան պադասխանեցին թա. — Ա՛ հաըր, բա ասիլ չը՞ս, լըղանալիս վախտը ճըրըմը խեխտվալ ա՞։ էս ըխճըկորցը մինը իմ կընեգյս ա, մինը՝ միշնակ ախպորս, էս մինն էլ, էս իրեքինչինը քյըեզ հետի ծառա յընք պերալ։

էն պուճուր ախճիգյը թա. — Սոտ ա, սոտ ըն ասըմ։

Թաքավերը ըտեղ մին պեն կլխու ընգաւվ, տրխըրվից, ամմա անց կացավ ունրան իսկական ցավին, վեր զաւռ բունլբունլը երքի, բախչան կընանչի։

Նա կանչից ունրան տըղորցը, թա. — Դե պերիք զաւռ բունլբունլը մըեր բախչան, վեր երքի, բախչան կընանչի, համ էլ ըսեցեք տրեսնամ հո՞ւ վա պերալ զաւռ բունլբունլը։

Մեծ ախպերըն ասըմ ա. — Յրես ըմ պերալ։

Միշնակը թա. — Չէ, յրես ըմ պերալ։

Հաըր մրեծ տըղին ասըմ ա. — Դե վեր տու վրս պերալ, ասի վեր երքի՞։

Մրեծ տըղան հիշքան անըմ ա, զաւռ բունլբունլը երքըմ չի՞։

Հաըր մհեգյ էլ միշնակ տըղին ա ասում. — Թա տու վրս պերալ, ասի զաւռ բունլբունլը երքի։

Միշնակ տըղան հիշքան չըրշարվըմ ա, ամմա զաւռ բունլբունլը երքըմ չի՞, տուխուր նստած ուրան դաւփաձունը, վեչ օտըմ ա, վեչ խմըմ, օրանցօր մաշվըմ ա, տրեռնըմ մին պրճըռանք։

Մրհեգյ խոսինք, տեսնանք հի՞նչ տեռավ թաքավերին պուճուր տըղան՝ վեննըծեռքը կըպկըպոտած, կյետին ղրաղին եր քըցած։

Անց ա կենըմ մին քանի օր, բիրդաւն էտ կյետին ճըրերին թաքուհին տունս ա կյամ կյետան, տրեսնըմ էտ տըղին։ Վեր իտի տրեսնըմ ա, մեխկըն ա կյամ, ծրդքըվենները պեց ա անըմ, աշկերը տինըմ ուրան տրեղը, անմահական ճուր քըսըմ, էտ տըղին լըվըցնը՞մ։

www.naregatsi.org

Տըղան օղըմ ա, թա շունրակալ ինի, մին էլ ա տրեսնըմ ճըրերին թաքուհին ընդեղ չի՞, աշկա կորալ ա՞։

Թաքավերին պուճուր տըղան շարունակըմ ա ուրան ճընապան, դիբի ուրան հորը քաղաքը, նի հրսնըմ ըտեղ, ամմա տրկլոր ինելին դարդան հրմանչըմ ա քյինի հորը պալատը։

Նա մին հարուստ մարթի տան ծառա յա նի մրննըմ, ճուր կըրըմ, փեդ կոտրըմ, մին թահրավ կըլոխը պահրմ։

Մին ամիս անց կրնալանը ետը էտ քաղաքը մին ղըլմըղալ ա ընգնըմ, ժողովուրթը ըսկըսըմ ըն մին պենի հետի պադրաստվիլը։

Էտ տըղան զարմացած հըրցընըմ ա ուրան խազեյինին անա, թա տա հի՞նչ պեն ա։

Խազեյինը ըշղվըմ ա էտ տըղին յրան, ասըմ. — Հիմմար, էշի կըլոխ, բա հալա գյուդում չը՞ս, Սիպտակ թաքավերը եկալ ա ուրան ղոշունավը չադիրնի եր թողալ քաղաքին չորս ղոլավը, օղըմ ա զառ բուլբուլը ետ ինք օնի՞, համ էլ օղըմ ա զառ բուլբուլը պերող տղին տրեսնա։

Էտ տըղան համարծակ, առանց քաշվելի ասըմ ա. — Էս սրհաթըս քյինի թաքավերին կոշտը, ինձ համար մին ծրեռք լավ շոր պեր, մին էլ մին լավ ծի։ Ցրես կըքյինիմ Սիպտակ թաքավերին ջողաքը տամ։ Խազեյինը ասըմ ա. — Դե ծենտ կտրի, տու հի՞նչ ըս, վեր հալա քյինիս Սիպտակ թաքավերին օշափներին նըրհետ կըռեվ անի՞։

Էտ տըղան շուտ ա անըմ, քյուչյան տուա կյամ, տրեսնըմ էն ըն ժողովուրթը ուրուրոցավ ընգած, ուրան մրեծ ախպերն էլ ծի նըստած քյինում ա Սիպտակ թաքավերին օշափներին նըրհետ կըռեվ անի։

Նա կրղնըցնըմ ա ախպորը ծին, ասըմ. — Տու եր եք, յրես եր ինըմ, քյինիմ կըռըեվ։

Թաքավերին մեծ տըղան ըտրան կուփի յա տամ, եր քըցըմ, ինքը քյինըմ, տրեսնըմ քաղաքին չորս ղոլը սիպտակալ ա չադիրներան։

Ղարավուլչիքյը վեր ըտրան տրեսնըմ ըն, հրցնըմ ըն, թա ըշտեղ ա քյինըմ։

Ղարավուլչիքը նշանց ըն տամ Սիպտակ թաքավերին չադիրը։ Տա քյինիմ ա նի մննըմ թաքավերին չադիրը, կլոխ տամ մինչև տափը, ասըմ. — Թաքավերը ապրած կրենա, յրես ըմ թաքավերին տըղան, յրես ըմ պերալ զառ բուլբուլը։

Սիպտակ թաքավերը ասըմ ա. — Դե վեր տու վրս, ասի տրեսնամ զառ բուլբուլը հո՞ւնց ըս պերալ, հո՞ւնց ըս համարծակվալ, եկալ իմ թաքավերութունը։

www.naregatsi.org

Տղան նաղլ ա անըմ, ասըմ. — Ըսկի հու՞նց, եկի ծըեր երգյի-
րը, նի մտի ծըմակը, ծառին յրիցը եր կալի զառ բռնլբռնլը, եկի՞:

Սիպտակ թաքավերը տըսավ, վեր տա չի զառ բռնլբռնլը պերողը, ասից. — Տու չըս զառ բռնլբռնլը պերողը, քյինա ադ իլ ըստըղեր-
քան, թա օղըմ չըս կլոխտ պուք տանք: Համ ասըմ ա, համ էլ հրամ-
մայըմ գյադոցը ըտրան մին լավ թակըմ ըն:

Միշնակ ախպերը տըսնալավ վեր մեծ ախպերը ճարթըփու-
շուր իլած ա եկա՛լ, հորն ասըմ ա. — Ա՛ հայր, յըես քյըհզ ըսեցի վեչ՛, վեր յըես ըմ ղուշը պերալ, յըես էլ կքյինիմ պադասխան կը-
տամ:

Տա զենքը ղրահը յոր ա օնըմ, ծի նստիմ, կյամ Սիպտակ թաք-
վերին կողտը: Ճընապարին էլհա պըտահըմ ա պուճուր ախպորը, ուրուր ճընանչըմ չըն, էլհա պուճուր ախպերը խնթրըմ ա, վեր ծին տա ուրան, ինքը քյինի Սիպտակ թաքավերին պադասխանը տա: Էտ վախտը միշնակ ախպերը ըտրան մին լավ թխից ուրան ղամ-
շավը, ծին քըշից, քյինից, հրսավ Սիպտակ թաքավերին չադիրին, նի մըտավ, կըլոխ տըվավ թաքավերին, ասից. — Յրես ըմ թաք-
վերին տըղան, յրես ըմ պերալ զառ բռնլբռնլը:

Թաքավերն ասից. — Դե վեր տու վըս, նաղլ ըրա, տըեսնամ հունց ըս պերալ զառ բռնլբռնլը իմ աշխարքաս, վեր օցն ուրան պոռ-
տավը, ղուշն ուրան թևավը կարըմ չի, թա նի մընի՛:

Տըղան ասըմ ա. — Նի մըտի ծըմակը, ծառը պըցրացի, ղուշը ուրան պունան հանեցի, պերի:

Սիպտակ թաքավերը էլհա թռնդըմը ըչըղվից, մի լավ սիլլա տըվավ էտ տըղին, սոտ ըսելի հետի: Տըղին օշը տարավ, եր ընգավ: Մին թահրալ իրեսին ճուր շաղ տալավ ետ պերին:

Էս դոնըմ Սիպտակ թաքավերը ապունը աշկերը կալած, կըտա-
ղած հրամմայից, ասից. — Մին սըհաթ վախտ ըմ տինըմ, թա ղուշը պերողին ղըրկիք, ղըրկիք, թա չէ, քարը քարին յրան չի մնա՛լ էս քաղաքըմը, մին շունչ չի մնա՛լ, լոխճին կըկըտորիմ:

Խաբարը կյամ ա հըսնըմ էս թաքավերին, ժողովուրթը ըսկը-
սըմ ըն լացըկոծ անիլը, փախուստը:

Թաքավերին պուճուր տըղան փեդ ար կուտրատըմ, վեր տեսավ ուրան խազեյինը օղըմ ա փախչի, հրցրավ, ասից. — Էտ հի՞նչ ա՛ պըտահալ, էտ խե՞ փախչըմ ըք:

Ըտեղ խազեյինը յրան կըզնվից, հրամմայից թա. — Շուտ ըրա, տու վչլ մին տեղ կյողը կաց, թա չէ Սիպտակ թաքավերը էս ա մեր աշխարքը օրան-վերանա յա անելու, լոխճին կուտուրելու յա:

www.naregatsi.org

Տըղան ուրաձն խազեյինին սըերտ տըվավ, ասից. — Քյինա թաքավերին կոշտը, ասի մին ծրեռք շոր, մին ծի, զենքը-զրահ տա, յըես քյինիմ պադասխանը տամ։

Ըտեղ խազեյինը թունդըմը ըջըղվից ըտրա յրա, շալա-քունլան հվաքից, փախավ։

Էտ տըղան լոխ վեր իտի տըեսավ, որոշից ինքը քյինի թաքավերին կոշտը ծի, զենք յոր օնի, քյինի Սիպտակ թաքավերին ջողաբը տա՞։

Իտի էլ ըրավ, խոնարվից, կլոխ տըվավ, ասից.— Թաքավերը ապրած կենա, ինձ մին ծրերք շոր տո մին ծի, զենք-զըրահ, յըես քյինիմ Սիպտակ թաքավերին պադասխանը տամ։

Թաքավերը էտ տըղին անա մնաց արմանք զարմանք տարած, անգուճին հրվատաց վեչ, մին էլ մըթկըմը ասից թա՝ ջրհաննամը, բալքաս դուղ ա ասըմ։

Ետ տրեռավ էտ տըղին, թա.— Դե վեր իտի յա, քյինի տու հավան կաց ծիյին, շորերին, զենք-զըրահին, կյեց, ծի նըստի, քյինա։

Էտ տըղան, թա.— Դե վեր իտի յա, թաքավեր, քու առաչիտ մին պայման ըմ տինըմ։ Թա կարեցի պադասխանը տամ, տու մին քանի օր թաքավերոթունըտ պիտի ինձ տաս, յըես դադաստան օնիմ մին քանի մարթկանց նըհետ, իմ ծրեռքավըս պիտի կադարիմ։

Թաքավերը ռազի յա կրենըմ։

Տըղան հաքնըվըմ ա, ծի նըստըմ, քյինըմ Սիպտակ թաքավերին կոշտը։ Ըտեղ ղարավուլչոցը անա հրրցըփորց ըրավ, գյիդաց, թա ըշտեղ ա ընդրա չադիրը, ծին քըշից, հրսավ ըտեղ, նի մըտավ, առանց կլոխ տալի առաչին կաղնից։

Թաքավերը ըտրա յրան ըջըղվից, ասից. — Տու հո՞ւ վրս, վեր իմ առաչիս կըլոխտ խոնարըմ չը՞ս։

Էտ տըղան թա. — Յըես զաւռ բունլբունլը պերող տըղան ըմ, էս քաղաքին թաքավերին պուճուր տըղան, կըլոխս յոր չօնըմ, վեր քու առաչիտ խոնարիմ, թա կըռըեվ ըս օզըմ, աշկիս յրան, կըլխիս յրան, եկ կըռըեվ անինք։

Սիպտակ թաքավերը ըջըղվից, ուրաձն թըփըհարից, ասից.— Դե վեր իտի համարծակ ըս, պատմի տեսնամ հո՞ւնց եկիր իմ երգյիրըս, հո՞ւնց ղուշը պըերիր։

Տըղան լոխ նաղլ ըրավ։ Սիպտակ թաքավերը համոզվից, վեր էտ ա պերալ զաւռ բունլբունլը։ Ըջըղվից, օզից թա տըղին ըսպանի, մին էլ ասից։ — Դե վեր իտի յա, հունցը պերալ ըս, ինդի էլ տար տիր ուրաձն տեղը, թա՛չէ, ծեր երգյիրը տըկըկլոխ կանիմ։

www.naregatsi.org

էտ խոսկերքին յրան տըղան ծրծաղից, ետավ ինքը ուրյան հըվաքից, նետը սազ ըրավ դիբի թաքավերը, յրա ըրավ։ Թաքավերը մին պենդ կյոռռաց, եր ընգալվ։

էտ կյոռռոցը վեր ղոշունը լըսից, ըսկսից փախչիլը, ըշտըղան եկալ ար, քյեցավ ընդեղ։

Խաբարը հըսավ թաքավերին, վեր էն տըղան ըսպանալ ա Սիպտակ թաքավերին, աղադալ ժողովուրթին։

Թաքավերը մըեծ պադրաստոթունավ, պադարկաներավ քյինըմ ա էտ քաջ տըղին առաչը, յոր օնըմ կյամ պալատը։

Էտ վախտը տըղան թաքավերան հըրցըրավ, թա. — Ճընանչը՞մ ը՞ս ինձ։

Թաքավերը թա. — Չէ՛։

Տըղան թա. — Յըես քու տըղատ ըմ, քու պուճուր տըղատ։

Թաքավերը մաթ մնաց, կըլոխը շոռ տըվավ, օզից, թա եր ընգնի՞։ Մին էլ օշը կըլոխը հըվաքից, ասից. — Դե վեր տու իմ տըղաս ըս, եք զառ բոնըբոնըը խոսիլ, երքել տո, վըեր մըեր բախչան կընանչի։

Տըղան քյինաց էն օթախը, ըշտեղ ղուշն ար, ընդրան ղափազից հանից, կլոխ տըվավ ընդրան, խընթրից, վըեր երքի։

Զառ բոնըբոնըը թըփհարից թևերը, օրախ-օրախ ըսկսից երք ասիլը։

Բախչան կընանչից, օթը լավացավ, ղուշերը ըսկըսեցին երքիլը։

Թաքավերը ուրխացավ, խոտից ուրյան տըղին, ասից. — Դե վեր տու խոի քաջ ըս, իմ տըղաս ըս, ինք առ իմ թաքավերոթունըս քյըեզ, հինչ օզըմ ըս, ըրա։

Տըղան հորը կահը եր կալավ, ըսկսից ուրյան կըլխավը անց կացածը նաղլ անիլը։

Կոզի խընթրալ ար, վեր թաքավերոթունը ուրյան տա, ուրյան ախպորըը դիվանը անի՞, ամմա մին էլ խղճաց ընդրանց, ասից. — Ա՛ հայր, քանի վեր ընդրանք ինձ սաղ ըն թողալ, յըես էլ ուրյանց սաղ կըթողի՞մ, խընթրըմ ըմ հրամմայիս, վեր էս երգյիրան հեռանան, ուրյանց խոխա-րախան յոր օնին քյինին։

Իդի էլ իլավ։ Էտ օրվանից թաքավերին էրկու տըղերքը հեռանըմ ըն էտ երգյիրան, թա ըշտեղ ըն քյինըմ, հալա մինչև մըհեգյ էլ խաբար չիկա։

Սաղ աշխարքըս էտ օրվանից կընանչից, ծաղկից, ժողովուրթը ուրխացավ...

Թաքավերին պուճուր տըղան փըսակվից էն լոխճան պուճուր, լոխճան կյեղեցիկ ըխճըկանը նըհետ։ Օխտը օր, օխտը քըշեր հըրսա-

www.naregatsi.org

նիք ըրին։ Ըտրանա եաը տըղան մնաց ուրան հորը կահին, ըսկսից երգյիրը լալ կառավարիլը։ Ուրան ժողովուրթին նըհետ բախտավեր ապրիլը։

Երգյինքան իրեք մըեծ, տեղին ոանգյի, մին ղոլըն էլ կյարմուր շավթալի եր ընգավ. մինը՝ ասողին, մինը՝ լըսողին, մինն էլ՝ կարթողին։



www.naregatsi.org



12. ԽՈՍՈՂ ԾԻՆ

Ինըմ ա, չինըմ մին թաքավեր ա ինըմ։ Էտ թաքավերին ինըմ ա իրեք տըղա։ Մին օր թաքավերը ծանդր հիվանդանըմ ա։

Նա կանչըմ ա ուրիշ տըղորցը, ասըմ. — Ա՛ բալե՛ք, ծեր հայր ծանդըր հիվանդ ա, նա կըլիվանա էն վախտը, վեր լըղանա ինդի վրեղավ, վեր հայլա մարթի վրենը չի նի եկալ։

Մեծ տըղան ասըմ ա. — Ա՛ հայր թաքավեր, յըես կըքյինիմ էտ վրեղը անպաճառ կըճարիմ պերիմ, քյըեզ առողճըցնիմ։

Էտ թաքավերին մին հըրեղան ծի յա ինըմ, վեր ղուշա շուտ ա թըռչըմ։ Էտ ծին պահըմ ին քաղաքան հետու մին տըեղ, մին խոր ծըմակըմ։ Քըշերավը շուտ մըեծ տըղան եր ա կրենըմ ծի նըստըմ, ճնապար ընգնըմ։

Շատ ա քյինըմ, թա խըրեգյ, վերչը հըսնըմ ա մին մըթեն ծըմակ։ Ըտըղան տըենը էլ կարըմ չի քյինա, լհա մին փոսա մին խրեգյ վրեղ ա յոր օնըմ, կյամ տոն։

Հայրը վեր լըսըմ ա, շատ ա ուրխանըմ։

Տըղան վեր վրեղը տամ ա հորը, հայրը քարտեզը յոր ա օնըմ, տինըմ տըղին առաչին, ասըմ. — Դե ինձ նշանց տո համին էն տըեղը, ըշտըղան վրեղը եր ըս կալա։

Տըղան քարտեզին յրան նշանց ա տամ տըեղը։

Հայրը եղըմ ա տըղին, ծրծաղելավ ասըմ. — Վերթի, օզըմ ըս ինձ խափի՛ս, յըես գյանքիս շատը ըտեղերք ըմ անցկըցըրալ, դե քյինի քոն իլ, քյըզանա պեն չի տուս կյալ։

www.naregatsi.org

էտ վախտը միշնաք տըղան ասըմ ա. — Հաըր թաքավեր, թող յըես քյինիմ պերիմ։

Հաըրը ռազի յա կենըմ։ Քըշերավ շունտ միշնաք տըղան ծին նըստըմ ա, ճընապար ընգնըմ։

Շատ ա քյինըմ, թա խըրեգյ, վերչը հըսնըմ ա մին խոր ծորի։ էլ կարըմ չի ճընապարը շարունակի, ըտըղան էլ մին խրեգյ վրեղ ա յոր օնըմ, ետ տրեռնըմ։ Հաըրը մին խիլլա ուրխանըմ ա, վեր լըսըմ ա տըղան եկալ ա։

Տըղան վրեղը տամ ա հորը, համ էլ քարտեղին յրան նշանց ա տամ, թա ըշտըղան ա եր կալալ, հաըրը մին խոր թառանչ ա քաշըմ, համ էլ ասըմ. — Է՛հ, վերթի, հի՞նչ ա՛, օզըմ ըս քու հոր խափի՞ս, յըես սաղ գյանքըմըս ըտրեղերքան ըմ վրերս ըրալ, քըշերնին ըտեղերք շատ ըմ քոն իլլալ, շատ ըմ քեփեր ըրա՛լ էտ ծորերըմը, քյինա՛ւ, քյինա՛ւ քոն իլ, քյըղանա պեն չի տունա կյալ։

Էտ վախտը պուճուր տըղան մուտանըմ ա հորը, ասըմ. — Թաքավեր հաըր, թող մըհեկ էլ յըես քյինիմ վրեղ պերիմ։

Թաքավերն ասըմ ա. — Ըստրան եշեցեք, մըեծ ախպերքը քյինացալ ըն, պեն չըն պերա՛լ, էս պիտի պերի՛։

Պուճուր տըղան թա. — Հաըր թաքավեր, ինձ հըվատա, յըես կպերիմ, մինաք քյինելան առաչ ինձ օրթնի։

Հորը մեխկըն ա կյամ պուճուր տըղան, ասըմ ա. — Քյինի՛, բա՛լա, հազար պարով քյինի, սաղ սալամաթ ետ տրեռ եք, քու հոր ուրխըցըրու։

Պուճուր տըղան գյուդունամ չար, վեր հաըրը, հըրեղան ծի օնի, ըտրա հետի էլ վրեննավ ա քյինըմ։ Վեր օզըմ ա, թա քաղաքան տունա կյա, մին պառավ մարթի յա ջըհըմ։

Էտ մարթըն ասըմ ա. — Իտի քըշրհանա հո՛ր ըս քյինամ, ա՛ բալա։

Տըղան թա.— Ապեր, քյինամ ըմ իմ հոր հետի վրեղ պերիմ, վրեղ, վեր ուրան գյանքըմը վրեննը էտ վրեղին տիրած չինի՛։

— Ա՛ բալա, էտ վրեղը մինաք քու հոր հըրեղան ծին կպերի, էտ էլ էն ա մին ծըմակըմ։ — Ըստեղ կաց մինչև մըթնիլը, վեր մըթնի, քյինի քու հոր օթախը, պատան կախ տըված մին ղամշի կա, եր կալ, թաքուն տունա եք, քյինի ծիլին կոշտը։ Մին վեր քյըեզ տեսնա, կյալու յա, թա քյըեզ օտի։ էն վախտը տու ղամշիտ կըպըեցրցընիս, ասիս. «Ա՛ ծի, քու տաըրտ ըմ»։ Մին դաստի կաղնելու յա, տու կնստիս, ըշտեղ օզըմ ըս, կքյինիս։

Տըղան ասից. — Շունըրակալ ըմ, ապեր, գե մըհեկ յըես ճընապարվիմ։

www.naregatsi.org

Ասըմ ա, պըրծնըմ, ծին նստըմ։ Մին դաստի թըռչըմ ա, կաղնըմ մին ծովի քըշտի։

Ըտեղ տըղան տեսնըմ ա տափին ավազին յրան էն ա մին լուս տըվող թեփուր կա։ Դաստի յոր ա օնըմ։ Մին վեր էտ տեսնըմ ա, մարթի նման ըսկըսըմ ա խոսիլը։

— Ա՛յ տըղա, հալա ջահիլ ըս, գյուղըմ չը՞ս, կըլոխըտ շատ օյին կըկյա, էտ թեփուրը յոր մ՚օնիլ։— Ամմա տըղան լըսըմ չի, յոր ա օնըմ։

Ըտրանք քյինըմ ըն, քյինըմ, վերչը հըսնըմ ըն մին սև աշխարքի, մին պառավ կընգա տան քըշտի կաղնըմ։

Էտ տըղան թեփուրը հանըմ ա, տինըմ ստոլին։ Դաստի սաղ քաղաքին լուս ա տամ, լուսավերըմ։ Ըտեղի թաքավերը հրամմայըմ ա ուրան նազիր վազիրներին վեր քյինին դաստի գյիդան, թա տա հինչ պեն ա։

Նազիր վազիրնին կյամ ըն էտ տըղին քըթնըմ, տանըմ թաքավերին կոշտը։

Թաքավերը եղըմ ա, եղըմ էտ թեփուրին, ասըմ.— Ա՛յ ղարիբ տըղա, տու հո՞ւ վըս, վեր մեր էս սև աշխարքան օզըմ ըս ազադվիս։ Ցրես քյըհզ իրեք խնթիր կտամ, թա կարեցիր գյիդաս, էն վախտը ազադված կինիս։

Տըղան ասըմ ա. — Թաքավերը ապրած կենա, յրես պադրաստ ըմ ծրեզ լըսիմ։

Թաքավերը թա. — Առաչինը էն ա, վեր պիտի պերիս էն ղուշը, վերին անա էս թեփուրը պուք ա եկա՞լ։

Տըղան թա. — Թաքավերն ապրած կենա, ըտրա հետի ինձ մին օր ժամանակ տվիք, վեր մտածիմ։

— Օզըմ ըս լհա իրեք օր մտածի, թաք լհա պերիս։

Տըղան տուխուր քյինըմ ա ծիլին կոշտը։ Մին հըրցնըմ ա. — Իմ կլխիս տաղը-տըրաղական, էտ խե՞ իտի տուխու՞ր ըս։

Տըղան ասըմ ա. — Էս երգյիրին թաքավերը ինձանա օզըմ ա էն ղուշին, վերին անա էս թեփուրը պուք ա եկալ։

Մին թա. — Էն վախտը վեր ինձ լըսած ինիր, էս օյինը քու կըլոխտ չար կյալ։ Ամմա դե էլ հինչ, անց ա կացալ, մտածիլ մի, քյինա թաքավերին ասի՝ քսան բոթու ցրաղ տա, մին թի, մին քյեչա, եր կալ շուտ եք։

Թաքավերը էտ տըղեն պահանջը կադարըմ ա։

Ուրգյունան վախտը ըտրանք սև աշխարքան տունս ըն կյամ։

www.naregatsi.org

Մին դաստի հրսցնըմ ա համին էն տեղը, ըշտեղ էտ ղուշն ա՝ Հրսնըմ ըն մին ախպուրի։

Մին կաղնըմ ա, ասըմ. — էս քյեչոցավը ըխպըրին պերանը կապի, վեր ճուր չի կյա, ըխպըրին էրկու ղոլին էրկու փոս կըտրի, մինին մեչը յրես նի մննիմ, մինինը՝ տուն։ Արաղը ածի նովին մեչը։ Արևը վեր անց կենա, էտ վախտը էտ ղուշը կյալու յա, թա ճուր խմի։ Լոխ արաղը խմելու յա, հարփի, եր ընգնի, թա քու կոխկիտ եր ընգնի՞ տու փըռնի, թա իմ կոխկիս եր ընգնի՞ յրես փըռնիմ։

Ուրուգյունը էտ ղուշը կյամ ա, արաղը խմըմ, կաղնըմ էտ տղին կոխկին։ Տըղան դաստի վըննեըան փըռնըմ ա։

Ղուշը հինչքան ղաչանք ա անըմ, լաց ինըմ, ամմա տըղան պեց չի թողըմ։ Պերում ա, տամ թաքավերին։

Էն մին քըշերավը թաքավերը կանչըմ ա էտ տըղին ասըմ. — Տու իմ տված առաչին խնթիրքս կադարեցիր, մըհեկ էլ էրկունչի խնթիրքըս կասիմ։ Էտ էն ա, վեր մըզանա շատ հեռու ապրըմ ա մին շատ կյեղեցիկ ախճիգյ։ Էտ ախճիգյը քառասուն շուտ վազ տըվող կով օնի՞, էնքան շուտ վազ տըվող, վեր քամին էլ չի հետան հրսնըմ։ Տու պիտի էտ ախճիգյը ինձ հետի պերիս։

Տըղան ասըմ ա. — Լավ, մինուկ վախտ տիր, էրկու օր մըտածիմ։

Տըղան տուխուր քյինըմ ա ծիլին կոշտը։ Մին ասըմ ա. — Իմ կըլխիս տարը-տըրական, խե՞ տուխուր ըս՞։

Տղան թա. — Թաքավերը ինձանա պահանջըմ ա, վեր ուրուն հետի մին հեռու տեղա մին ախճիգյ պերիմ, վերը օնի քառասուն քամու մրնան վազ տըվող կով։

Մին թա. — Յրես ճրնանչըմ ըմ ընդրան նան ընդրա կըվերին, ամմա տա շատ տըժեր խնթիրք ա, դե վեչինչ, էտ էլ կանինք։

Տըղան առավոտը ճրնապարվըմ ա։ Շատ ա քյինըմ, թա խրե՞կ, վերչը հրսնըմ ա մին մրեծ ամարաթի։ Էտ ամարաթին քըշտին եր ա կյամ ծիլան։

Մին թա. — Հես է, ըստեղ ա ապրըմ էն ախճիգյը։ Մունք պիտի նի մրննինք դաբրաշավը, վեր հասնինք փալաքաննեըին, էն վախտը տու մին ղոլին կյողլը կկենաս, յրես՝ էն մին ղոլին։ Քըշերավ շուտ նա տուս ա կյալու իրեսը լըվանա. դաստի կըփըռնիս ընդրա մազերան։ Հշքան վեր ղաչանք անի, պեց չի թողիս, ամմա վեր ասի. «Իմ մոր հալալ կաթնը վկա, յրես քունն ըմ», պեց կթողիս։

Իտի էլ անըմ ըն։ Էտ տըղան պեց չի թողում, ամմա վեր ասըմ ա. «Իմ մոր հալալ կաթնը վկա, յրես քունն ըմ», պեց ա թողըմ։ Ընդրանք էրկուսավ ծի յրն նստում, կյամ սրեվ աշխարքին թաքավերին կոշտը։

www.naregatsi.org

էն մին քըշերավը թաքավերը կանչըմ ա տըղին, ասըմ. — Մնացալ ա մին խնթիրքս, թա էն էլ կադարեցիր, սաղ-սալամաթ կըքյինաս ծեր լուսավեր աշխարքը։ Տու պիտի ինձ հետի պերիս էն ըխճըկանը քառասուն շունտ վազ տըվող կովերը։ Ընդրանց կաթնը մարթի թաղաշան ջահիլցնըմ ա։

Էտ տըղան էլհա տուխուր քյինըմ ա ծիլին կոշտը, լոխ նաղլ անըմ։

Մին մին խիլլա մտըծելանը հետը ասըմ ա. — Տա մեր օժը պատիվ չի՞։ Ըտրա մասին քյինի էն ըխճըկանան հըրցըրու։

Տըղան կյամ ա ըխճըկանը կոշտը։ Ախճիգյը վեր ընդրան տեսնըմ ա, իտի տըխուր լաց ա ինըմ։ Տըղան լոխ նաղլ ա անըմ։

Ախճիգյը ասըմ ա. — Դունդ ա, տա քու օժատ երը կործ ա։ Ինք առ էս մտանին, քյինի ծիտ նստի, ճընապա ընգի։ Վեր հասնիս ճընապարին կըեսը, էն վախտը շատ հեռու կովերը ըրվալու չըն։ Էտ մըտանին թափ կը տաս օթըմը։ Ընդրանք վեր տեսնան մըտանի՞ն, յրա յըն պըռծնելու, վեր քյըեզ պունդրհարին, դաստի ետ կըտեռնաս, փախչի՞ս։ Միյիտ կոխկին ինդի կթըխիս, վեր կովերը կարին վեչ ծրեզ հասնին։

Տըղան իտի էլ անըմ ա։ Միյին կոխկին հենց թըխըմ ա, վեր կովերը կարըմ չըն հասնի՞ն։ Վեր մըտանին տըեսնըմ ըն, մին ահռելի ծեն ըն հանըմ, ընգնըմ տըղին հետաև, կյամ հասնըմ դըրբըզին։

Էտ վախտը ախճիգյը տունա ա կյամ դըրբըզան, ասըմ. — Այ կովե՞ր, կաղնեցի՞ք, ծրեր տաՙրը ըստեղ ա՞։

Թաքավերը օգըմ ար փըսակվի էտ ըխճըկանը նըհետ, ամմա ախճիգյը աթկազ ար անըմ։ Կովերը պիրելանը հետը թաքավերը կըթիլ ա տամ, կյամ ըխճըկանը խնթրըմ, վեր կյա ունրաՙն էտ կաթնավը լըղըցնի, վեր ջահիլանա։ Ախճիգյը կաթնը իփ ա ածըմ, ածըմ թաքավերին կըլխին, թաքավերին ըսպանըմ։ Ըտեղ տըղան նաև ախճիգյը ունրունր նըհետ փըսակվըմ ըն։

Մին օր տըղան ասըմ ա, վեր ինքը քյինիլ պիտի վրեղը պերի։ Ախճիգյը ընդրան մին դաՙնըմ պաչըմ ա ճընապա տինըմ։

Տըղան շատ ա քյինըմ, խրեգյ ա քյինըմ, հասնըմ ա մին ծովի ղրաղ։ Ըտեղ ծիյան եր ա կյամ։

Մին ասըմ ա.—Յրես նի մննիմ ծովը, ընդեղ շատ էքյ նաև վերց ծիյանք կա, թա էքյերին կոշտը ընգի, անպաճառ վրեղը կըպերիմ, թա վերցերին կոշտը ընգի, գյիդաՙ, վեր յրես կյալ չը՞մ։ Էն վախտը ծովին ճունրը ուռնոտ ա տըեռնալու, տու կարող ըս քյըեզ ծովը քըցիս։

Մին ասըմ ա, պըրծընըմ, ունրաՙն ծովը քըցըմ։ Ընգնըմ ա էքյ

www.naregatsi.org

ծիյանցը կոշտը, լըխճին հախտըմ ուրան կըճեղակավը վըեղ յոր օնըմ ծովին տական, տուս կյամ։ Հալա միչև էտ, վեր ծին կըռավ ա անըմ էքյ ծիյանցը նըհետ, յարալու յա տեռնըմ, ծովին տական ճուրը մին խրեգյ կյըմրըմ ա։ Տըղան, վեր էտ տըեսնըմ ա, օզըմ ա ուրան ծովը քըցի։ Բիրդան ծին ըրվըմ ա։

Տըղան ընդրա վըեննին կըճըղակին ղաթըմը պերած վըեղը յոր ա օնըմ, ածըմ մին յալլուխի մեչ, տինըմ ջուբումը, ետ տեռնըմ ուրան սիրած կընգանը կոշտը։ Մին քանի վըխտանը ետը էտ տըղան կընգանը թողըմ ա ըտեղ, ինքը քյինըմ հորը պալատը։ Վեր հասնըմ ա, ծին տանըմ ա կյոմումը կապըմ, ղամշին թաքուն տանը ուրան տըեղան կախ տամ, վըեղը տանըմ տամ թաքավերին։

Հաւրը վեր տեսնըմ ա, մաթ ա մընըմ, եր ա թըռչըմ տեղան, ասըմ. — էտ քու պենըտ չի, էտ իմ ծիս ա պերա՛լ, քյինի շուտ ծիս պեր, յըս ընդրանա հըրցընիմ։

Տըղան վազ տալավ, քյինըմ ա, թաւ ծին պերի, հենց համին էն տըեղը պըտահըմ ա էն պառավ մարթին։

Տա հըրցընըմ ա թա.— Ա՛ բալա, իտի թըմթամնած էտ խե՞ յըս վազ տամ։ — Քյինըմ ըմ ծին պերիմ։

— Պա առանց ղամշո՞։ Դե՛, ետ տըեռ քու հոր ասի, վեր քու ծիտ իտի յա, խե՞ յը՞ս ինձ ղարկըմ ընդեղ, խրեգյ մնաց, թա ինձ ըսպանի։ — Տըղան իտի էլ անըմ ա։

Էտ վեր հաւրը լըսըմ ա, ըչըղված քյինըմ ա ծիյին կոշտը, ղամշին մըտան քըցած ա ինըմ. ծին մուտանըմ ա ընդրան, ամմա հիշքան ասըմ ա. «Ցրես քու տաւրըտ ըմ», ծին լըսըմ չի՞, ըսպանըմ ա ընդրան։ Տըղան ուրխանըմ ա, աղաղվըմ տանջանքից, քյինըմ ուրան սիրած ծին կոշտը։ Ընդրանք հասին ուրանց մուրազին, մունք էլ հասնինք մըեր մուրազին։

Ըսօր աշունք ա, վըեսկե աշունք, աշխարքը պըտուղավ լիգյը։ Լըցած տրաքըմ ա Երևանին վըեսկե աշունքին բազարը։ Ընդղան էն մըեծ-մըեծ շալվաճառցան, վեր մինը խրեգյ ա մընըմ թա մին կիլոինի, ծրեզ ըմ պըժանըմ, ա հաքյաթ լըսողնի, ա հաքյաթ կարթողնի, ա հաքյաթ լուս աշխարք քըցողնի, տըրանց անա մին լավ հըսած շալվաճալի էլ ինձ, վեր էս հաքյաթը ծրեզ ասեցի։

www.naregatsi.org



13. ՀԱԲԵԴ-ԿԱՐԱԲԵԴԸ

Մին շենըմ, մին քյոհնա տան մեչի, կըենըմ ին մին մարթ, անըմը Հաբեդ-Կարաբեդ, մին էլ ըտրա կընեգյը։ Ըտահանց խոխա չունին։

Էտ մարթը ռանչպար մարթ ար, քըշերավ շուտ քյընըմ ար ուրան կործին, ուրուգյունը կյամ, նըղացած, բըզարած թախտին եր ընգնըմ։

Ըտրա կընեգյը էտ մարթին լավ ար եշըմ, իլած-չիլածան խնայըմ չար, արտը հաց ար տանըմ, եզներըն ար քըշըմ, մաճը փըռնըմ ար, ուրուգյունը վրեր կյամ ար, վրեննները լվանըմ ար։

Ամմեն ուրուգյուն քոն ինելիս էտ մարթը աղոթկ ար անըմ, թա. — Ա՛յ աստված, մըեզ ապրուստ տո, աշխարքըս կըռև չինի՞, աշխարքըս լիգյը ինի՞, ամմեն հինչ իժան ինի՞, մունք էլ սաղ-սըլըմաթ ինինքյ, բանգյը մըզանա ռազի ինի, մըեզ թակի վրեչ, տարին լավ, բուլըղ ինի՞, կարկուտը կյա վրեչ արտը տանի՞, եզներիս կրեր ինի՞, վրեր ծըմրռնըհան ինին, կըռնըմըս էլ օժ ինի՞, աստո՞ւծ, թըշնամու սըրտավ չանիս, նամուսըս տափը չի քըցի՞ս, ամմե՞ն։

Ասըմ ա, իրեսին խըչըկնքըմ, քոն ըն ինըմ։

Մին օր էլ կընեգյը ասըմ ա. — Հաբեդ-Կարաբեդ, էտ խե՞ էն մնացած մարթկանցը նման ասըմ չըս. «Ա՛յ աստված բանգյին թական, կընգա սաղանայոթունան ինձ հետու պահիս»։

— Բանգյին թակին հետի ասալ ըմ, վրեր բանգյին աշկը մըզերա

www.naregatsi.org

քախծըր ինի, ամմա կընեգյը հի՞նչ ա, վըեր յըես կընգա հետի աղոթկ էլ անիմ, ասիմ. «կնգա սադանայոթունան ինձ հըեռու պահիս»։

Կընեգյը էտ տընազը մըտան քըցըմ չի, մըթկըմը ասըմ ա. «Տընազ, էտ ըշտե՞ղ ըս քյընըմ, թա. «Քյընըմ ըմ տընազ տամ». դե լավ, հաչըթ յըես մին հըետ աչըղը կհանիմ, թա յըես՝ յըես ըմ, իտի թողիլ չը՞մ, հաչա ըտրան եշի, գյըվաքիս ինձանա շատ ա պեցուր, փասոն ա տամ, գյըռանըմ ա, աղոթկ անելիս ասըմ չի, թա կընանոցը սադանայոթունան ինձ հեռու պահիս... Դե լավ, հի՞նչ ըմ ասը՞մ»։

Մին օր էտ կընեգյը քյընըմ ա մոտիկ քաղաք Շուշի-Ղըլեն բազարը, իրեք թաղա քուլուտակե ծունկնը առնըմ, տանըմ տոն։ Քըսօրին մարթին հետի ճաշ տանելիս, էտ ծունկները յոր ա օնըմ, թաքուն տանըմ արտը, մարթը վեր ճաշը օտըմ ա, պատառ թեքյ ընգնըմ, թա քոն ինի, էտ կընեգյը թաքուն էտ ծունկները տանըմ ա արտեն ծըրին երի ղուլին ըստեղ-ընդեղ վրեղավ անըմ։ Հենց թաղըմ, վըեր մարթը վար անելիս տըեսնա, յոր օնի։

Կըես սըհաթանը ետը էտ մարթը եր ա կըենըմ, վար անելը սկսըմ։ Լհա՛ վըեր արտին ծըերը միչև վըերչը տանըմ ա, ծունկները տունա ըն կյամ։ Էտ մարթը ծունկները յոր ա օնըմ, տամ կընգանը, ասըմ. — Ա՛յ կընեգյ, տար տանը մին լավ փլավ խփի, էս ծունկներըն էլ տակեն տիր, ուրուգյունը կյանք օտինք։

Կընեգյն ասըմ ա. — Շատ լավ կինի, հինչ ըմ ա՞սըմ։

Ուրուգյունը վըեր տոն ա կյամ, կընեգյը մարթին ծըեռքին ճուր ա ածըմ, մարթը իրեսը լվանըմ ա, ետավ կընեգյը ըտրա վրենները լվանըմ ա, ըռըշկետանավը սըրփըմ, ետնան նըստըմ ըն, թա հաց օտին։ Կընեգյը փըլավը պըերըմ ա, ամմա ծունկնը չի ինըմ։

— Ծունկնըն էլ պեր, վեր մինտեղ օտինք։

— Հի՞նչ ծունկնը, ծունկնը ըշտըղա յա՞։

— Էն ծունկնը, վեր արտըմը քյըեզ տվի, պերիս փլավին տակին տինիս։

Կընեգյըն ասըմ ա. — Ա՛յ մարթ, արազ ըս տըեսա՞լ, արտըմը ծունկնը կինի՞, արտը հու կյետ չի՞, ծով չի՞, ծունկնը արտըմը չի փըսնըմ, հու խոտ չի։

Մարթն ասըմ ա. — Բա մըտատ քըցալ ը՞ս, էն վեր էրկունջի ծիրը քաշելիս, իրեք ծունկնը ճարեցի քյըեզ տվի։

Կընեգյըն ասըմ ա. — Հաբեդ-կարաբեդ, մին տըեղ ասիս վրեչ, քյըեզ յրա կրծրծաղին, թա արտը վարելիս ծունկնը ա տունա եկալ, կասին սոտ ա, կասին, հաչըթ արազըմն ա տըեսալ։

www.naregatsi.org

Մարթը եր ա կըենըմ ըչըղված, օռված, փըռնըմ կընգանը մին լավ կյոսռըմ, մին լավ թակըմ, մին լավ տըմբզըմ, ճաշը իփըմ։

Կընեգյը հարայ ա տամ, ասըմ. — Վա՛յ հարա՛յ, ըսպանի՛ց, ա հըրըվըննե, էտ խե՛ կյամ չըք ինձ էս մարթին ծրեռքան ազադ անիքյ։

Մին մունուտումը տոնը հըրըվըննեռավ լցնվըմ ա։ Կընգանը մարթին ծրեռքան ազադըմ ըն։

Մարթը ծրոքերին, վըններին ա անըմ, վըեր մին քյոթաձյ էլ տա, ամմա թողըմ չըն։

Կընեգյը հըրըվըններին նաղլ ա անըմ էտ ծռվկնին անա, ասըմ ա. — Ա՛ հըրըվըննե, էտ հո՞ւ վա տըեսալ վեր արտըմը ծռվկնը տռնա կյա, վըեր էս մարթը ինձ թակըմ ա, ինձանա ծռվկնը օզըմ, էս մարթը պըլացալ ա, թա ըրազըմն ա տըեսալ՛, գյռւդռնմ չըմ։ Ամմա վար ազադ թողիք, էլհա ինձ թակելու յա, լավըն էն ա, ըտրան էս սյռւնան կապիք, միչև խելքը կըլռխը կըկյա, չըես ետավ պեց կը թողիմ։

Հըրևաննին մին էրգյան քյանդիրավ ըտրան կըպռտըմ ըն տանը սյռւնան, տռնա կյամ, քյինըմ։

Կընեգյը փըլավը տանըմ ա քաշի տոնը, կյամ ասըմ. — Ա՛յ մարթ, հենց ա խելքըտ կըլռխտ եկած ինի՛, եկ քյըեզ պեց թողիմ։

Մարթն ասըմ ա.— Իմ խելքս միշտ էլ կըլխիս ա ըլալ, թա էն անդեր ծռվկները աշկիս ըրվին վըե՞չ...

Կընեգյը մարթին քյանդիրը ետ ա անըմ, քյընըմ տակի տոնը, փըլավը ածըմ բռւլռւդին մեչը, ծռվկները տակին տինըմ, մինաչ կըլխընին պեց անըմ, մընացած տեղերը փլավավը ծասկըմ, պերըմ տինըմ մարթին առաչին։ Մարթը սկսըմ ա օտելը, լհա քըթալը իրեքինջի դռնըմը պերանը տարած, ծռվկնին կըլռխը տեսնըմ ա։

Հաբեդ-Կարաբեդը քնենքյ ա անըմ, վեր էլհա ծռվկնը աշկին ըրվաց, շռւտ ա անըմ բռւլռւդը շոռ տամ, մըհեկ էլ սկսըմ էն մին ղոլան օտիլը։ էլհա էրկունջի քըթալը պերանը տարած, մըհեկ էլ էն մին ծռվկնին կըլռխըն ա ըրվըմ, էս դռնըմ էլ ա բռւլռւդը շոռ տամ, վեր ծռվկնը աշկին ըրվա վեչ։

Իրեքինջի դռնըմը էլհա վեր մին պատառ օտըմ ա, իրեքինջի ծռվկնին կըլռխըն ա տռնա կյամ։

Հաբեդ-Կարաբեդը շշկլվըմ ա, ոռրան կուրցընըմ ա, գյուղում ա, թա ծռվկնին պատկերն ա, վեր Շուշի-Ղըլան առած բռւլռւդին մեչին ըրվըմ ա, մին էլ ա եշըմ, տեսնըմ ծռվկնին պատկերը չի, լհա ծռվկունըն ա, տեղան եր ա թրուչըմ, սունին քըշտին կաղնըմ, ասըմ.

www.naregatsi.org

— Ա՛ կընեգյ, շուտ ըրա ինձ սյունան կապի, էլհա ծունկնը աշկիս ըրվըմ ա։

Կընեգյը էլհա մարթին սունան կապըմ ա, միչև լուս իտի վեչ կընեգյըն ա քոն ինըմ, վեչ էլ մարթը։

Լուսը պեցվելին նըհետ, կընեգյը ասըմ ա. — Ա՛ մարթ, մըեր էն Ծաղեգյ ընըմավեր կովը, վեր ծընըմ չի, հինչի յա՞ պեթկ, ընդրանա մին օքուտ չօնինք, եր կալ տար Շուշի-Ղալին բըզարըմը ծախի, փողը տոր, ճոթըկտոր առ, պեր տոն, յորղան-դոշակի իրես-աստառ, ինձ մըհար շորացու, մին ճոխտ կանաչ ռանգյի սաղրի չըմոշկ, քըթերը կրեռ-կրեռ, էն վըեր Նաիրինանց քալվանսարին էն ղաթըմը մին տըռռոզ մարթ դուքան օնի, ընդեղ իտի չըմըշկնի կա։ Ետնան քյըեզ հետի չուխա-արխալուղ, դե տըրխնիտ տու անըմ ըս, ետնան լամբի շուշա, տես-տեն, միկա խոշկյաքաո, ետավ շաքաո, սանդր, սապուն, լեղակ, թիլ, ասեղ առ, նի տո խուրջինըտ, օսուքըտ քցի՛, եք։ Ամմա մղայիթ կաց, քյըեզ կուրցնիս վեչ, մնացած փողըն էլ յըլլեխըմըտ մին պենդ կապի, տիր շըլվարիտ ջուբումը։ Դե վեր քյըեզ կուրցունիս վեչ, շորերիտ յրան նշաննի պիտի անիմ։

Էտ կընեգյը պեըըմ ա ըտրա մոթալ փափաղը ծիքյ-ծիքյ ընելավ, մին թաՀրաալ պըռտըտուն ա անըմ, կըլխին տինըմ, չուխին մեշկին էլ մին մըեծ սիպտակ ռանգյի կրկատան ա քըցում, մին կարկաժի ղաբուղ էլ կոխըմ ա կյոտկեն մեչը, ասըմ.

— Հաբեդ-Կարաբեդ,
Կըլխետ-փափաղը,
Մաշկետ-շափաղը,
Կյոտկետ-ղաբաղը,

էլ տու կորչիլ չը՞ս, քյինի Ծաղեգյ ընըմավը կովը կապի քյանդիրաավ, քյանդիրին ճոնդրն էլ փըռնի, տար Շուշի-Ղալին բազարը, ղասաբ Ավետիսին կոշտը, հունցու մըսացուք ծախի։

Վեր մարթը կյուման կովը տուն ա օնըմ, հղե ինըմ, էտ կընեգյը վազ ա տամ հարանց տոն, ախպորը ասըմ. — Ա՛յ ախպեր, էս քըշեր Հաբեդ-Կարաբեդը իսկի քոն չիլաալ, էտքան ճընապան միչև Շուշի-Ղալա վըեննավ կարելու չի քյինի։ Մին տեղ նըստելու յա դինջանա, քընավ ա ընցնելու։ Տու հետան քյինա՛, ամմա հենց քյինա՛, վեր քյըեզ տըեսնա վեչ, հենց վեր նըստի, դինջանա, քոն ինի, տու յավաշ-յավաշ փափաղը եր կալ, մեշկին սիպտակ ռանգյի կըրկատանը պուք տո, կարկաժին ղաբուղըն էլ կյոտկան հանի, ետավ փոխի, քու փափաղըտ տիր ուրուն կըլխին, մեշկին սիպտակ մեծ կըրկատանը քու մեշկատ կըպցրու, կարկաժին ղաբուղըն էլ կոխի քու կյոտիտ,

www.naregatsi.org

Ծաղեգյ կովին չաթուն փըռնի, տար Շուշի-Ղալան, Ղասաբ Ավետիսին յրան ծախի, հունցու մըսացուք, փողըն էլ եր կալ, տար էն լիգյը-լիգյը դուքաննըերան ճոթը-կըտոր առ, պեր յորղան-դոշակի իրես-աստառացու, ինձ հետի կանանչ ռանգյի սաղրի չըմշկնի, էտ մարթին հետի չուխա, արխալուղ, լամբի շուշա, շաքյար, սանդըր, սապուն, լեղակ, թիլ, ասըեղ, մին պատառ էլ խոշկյաբար: Մընացած փողըն էլ յալլըխատ ղրաղեն պենդ կապի, պեր ինձ տո:

Ախպերը ճընապար ա ընգնըմ, քյընըմ, ըտրա հետան հասնըմ, ուրան հրոսքաշ ըրած քյինըմ:

Քյինըմ ըն, քյինըմ, էտ Հաբեդ-Կարաբեդը մըթկըմը ասըմ ա. — Հի՞նչ կինի՞, վեր մին խըրեկ քոն ինիմ: Շատ ըմ նղացած:

Նստըմ ա մին կանանչ տեղ, Ծաղեգյ կովին պոզերան կապած քյանդիրին մին ճոնդրն էլ ուրան վրեննան ա կապըմ, թեքյ ընգնըմ, քոն ինըմ:

Կընգանը ախպերը կյամ ա, յավաշ-յավաշ կովը պեց թողըմ, փափաղը փոխըմ, կրկատանը մեշկան պուք տամ, ուրան մեշկին կպցնըմ, կարկաժին ղաբուղըն էլ հանըմ կյոտկան, ուրան կյոտին կոխըմ, քյինըմ: Մին պատառ վեր քոն ա ինըմ, Հաբեդ-Կարաբեդը զուռթենանըմ ա, տըեսնըմ կովը կա վեչ, կըլոխը շշկըլվըմ ա, ճարը կըտրած Շուշի-Ղալին քըեռծը նըյեր պըցրանըմ ա, էտ տըժեր պըեցուր քըրքարոտ ճընապար նըյեր, քըրթընքած, քըրթնունքը ծըլծըլալիս, տըհանիլավ նի մընընըմ Շուշի-Ղալան: Հալա բըզարին հասած վրեչ, տըեսնըմ ա առաչին մին մարթ Ծաղեգյ կովը տանըմ ա, վազ ա տամ մուտանըմ, տըեսնըմ մեշկին մին մեծ սիպտակ կըրկատան, փափաղը պըռտըտուն, կըրկաժին ղաբուղը կյոտին կոխած:

Ինքը-ինքը ասըմ ա. — Սա ինքը լհա Հաբեդ-Կարաբեդն ա, բա յըե՞ս հու վըմ: Թող մին տըեսնամ հի՞նչ ա անելու: Տա էտ կովը տանողին հետան քյինըմ ա, տեսնըմ վեր էտ կովը տանողը թուշ քյինից ղասաբ Ավետիսին դուքյանը, կովը, մին խըրեկ չանա թակելանը ետը, ծախից, փողը եր կալավ, յըլլեխըմը կապից, տրալ ջուբումը:

Հաբեդ-Կարաբեդը մըթկըմը ասից. «Տեսնամ մըհեկ հի՞նչ ա անելու, թա կընգանըս ասած պենըրը առավ, ուրեմըն տա Հաբեդ-Կարաբեդն ա, բա էն վախտը յըե՞ս հու վըմ»:

Էտ կընգանը ախպերը, քյինըմ ա էն լիքը, տրաքըմ բազարը շոռ կյամ էն միչև պատալոկը տուրաած ճոթը-կտորին թուփերավը լիգյը մագազինին շոռ կյամ, էն հինչ վեր քուրը ասալ ար, առնըմ:

Հաբեդ-Կարաբեդը քնենքյ ա անըմ, ասըմ. «Հալըա՛թ տա Հա-

www.naregatsi.org

բեդ-Կարաբեդն ա», համ ասըմ ա, համ լափ առուի շշկըլվըմ, համ շըշկըլվըմ ա, համ էլհա հըռանցն հետան քյինըմ։

Կընգանը ախպերը ետ ա տրեռնըմ, խուրջինը լիգյը օսուքը քըցած, Շուշի-Ղալին քըերծավը քըշանըմ, ուրանց շենին հըղեն ընգնըմ, քյինըմ։

Քյինըմ ա, քյինըմ, հըսնըմ ուրանց շենը, նի մընըմ քըվորը տոնը։

Հաբեդ-Կարաբեդըն ասըմ ա. «էս մեր տոն նի մըտավ, յըես էլ հըռանցն եշիմ, տեսնամ հի՞նչ ա ինելու։ Էս ա լհա մըթնըմ ա, թաքուն նի կըմննիմ սրահը, ակուշկավը եշիմ։ Թա էտ մարթը նի մըտավ կընգանըս ծոցը, ուրեմն Հաբեդ-Կարաբեդն ա, պա էն վախտը յըե՞ս հու վըմ»։

Վըեր լափ մըթնըմ ա, քըշեր տրեռնըմ, ճարը կըտրած կյամ ա տոն նի մընըմ, ասըմ.

— Ա՛ տընաատաեր, հի՞նչ կինի էս քըշեր ինձ ղոնաղ պահիք։

Կընեգյըն ասըմ ա. — Ղոնաղը աստծունն ա, խե՞ չընք պահիլ։ Համեցե՛ք, համեցեք՛յ, թող մինը չինի, էրկուսը ինի։

Հաց ըն օտըմ, չայ խըմըմ, էտ կընեգյը եր ա կըենըմ տախտան էրկու ծըեռք յորղան- դոշակ տուս օնըմ, էրկու տրեղ քըցըմ ուրուր կոխկի, ասըմ. — Դե եր կացեքյ, քոն իլիք։

Վեր ըտահանք նի յըն մընըմ ուրանց տեղերը, էտ կընեգյըն էլ նի յա մընըմ ախպորը դլվավը, իրեսը էն ղոլը ըրած քոն ինըմ։

Հաբեդ-Կարաբեդը ասըմ ա. — Ա՛յ քուր, էքուծ ինձ շուտ եր կկցնիս, օրիշ տեղ ըմ քյինալու։

Կընեգյըն ասըմ ա. — Աշկի՛ս յրան, շուտ եր կկըցնիմ։

Հենց վեր քոն ըն ինըմ, կընեգյը եր ա կըենըմ, Հաբեդ-Կարաբեդին շորերը տինըմ ախպորը քըշտին, ախպորը շորերը՝ Հաբեդ-Կարաբեդին քըշտին։ Հալա լուսը պեցված վեչ էտ կընեգյը եր ա կըենըմ մարթին եր կըցնըմ։ Տա շուշուտ շորերը կյենըմ ա, դեհա՛, դեհա՛ անըմ, էտ տանան տուս կյամ, քյինըմ։

Վեր մին խրեկ քյինըմ ա, ինքըն ուրան ասըմ ա. — Տոնը իմըն ար, կընեգյըս էլ ար իմը, յըես էլ, յըես, բա էն հո՛ւ վա, վեր կընգանըս նհետ քոն իլավ։

Վեր արևը տուս ա կյամ, եշըմ ա տրեսնըմ կյեցին շորերը էն մարթին շորերըն ա, ասըմ ա. — Պահովե՛, քյըեզ կընեգյ ասողին օխտը պոռտը... Ցրես քյըեզ ըսեցե՝ ինձ շուտ եր կըցըրու, թա էն մարթին։

Ետ ա տրեռնըմ կըզնըվածկյամ տոն, թա. — Ա՛ քուր, բա յրես

www.naregatsi.org

քյրեզ ըսեցի վու՞չ, ինձ շունտ եր կըցըրու, տու էն մարթին ըս շուտ եր կըցրալ։

Կընեգլըն ասըմ ա. — Քյրեզ ըմ շունտ եր կըցրալ, Կարաքեդ, քյրեզ, էն մարթը հաչլա քոն իլած ա։

Հաբեդ-Կարաբեդը մաթ ա մընըմ, ասըմ ա. — Հի՞նչ ըսեցեր, Կարաբե՞դ, բա վեր Կարաբեդը յըես ըմ, բա նա հու վա՞։

— Էն իմ ախպեր Հաբեդըն ա, ե՛ք, ե՛ք, ա մարթ, տոն ե՛ք, մըհեկ հունց ը՞ս, աղոթկ աննելիս ասելու վը՞ս թա. «Ալ աստված, քագլին պատիժան, կընգա սադանայոթունան ինձ հեռու պահիս», թա չէ՞։

Հաբեդ-Կարաբեդըն ասըմ ա.

— Հա՛, ասելու յըմ, կըլխավըտ շոռ տամ, ջանըս քը մատաղ, աշկերըտ օտիմ, ասելու յըմ, ասելու։



www.naregatsi.org



14. ԼԱՎՈՒԹՈՒՆԻՆ ՏԸԵՂԸ ՓԻՍՈՒԹՈՒՆ

Ինըմ ա, չինըմ մին մարթ, մին կընեգ ա ինըմ։ Ըտրանք ուրուր նըհետ փըսակվալ ըն թա չէ, միշտ էլ օրին հացին կարոտ ըն իլալ։

Օրվան հացը տոն քըցելի հետի, էտ մարթը քյինըմ ա իլալ ծըմակը, օտելի պըհներ ճարըմ. մոշ, մըռամոշ, մալինա, սրեզնը, տրեզնը, զրկեռ, մըհասուր, կաղին, տանձը-խընձոր։ Ըտրանա կըման սաղ կյարունքը բուլթուն ժենգյալ, խալյար, խընջըլոզ, ծընեփակ, թուրթունջուվկ, ճըրըկոտեմնը, տրեսնը, կըռըմուզուկ, փխփերթ, շեպ, կընձըմընձուկ, պըհնջար, պեխի, շուշյան, ճըռճըռոկ, պըռավի պորտ, էլ հու՞ վա գյուդուկ հինչ ժնգյըլնի յըն քաղալ, պերալ իփալ կը երալ։

Մին դոնըմ էտ մարթը քյընըմ ա ծըմակը փայդ անի։ Ճընապարին աստուճ-աստուճ անելավ քյընըմ ա, վըեր աստուճ պըհնը հաճող անի։

Քյընըմ ա հրսնըմ ծըմակը, ըսկըսըմ փայդ անելը։ Մին էլ ա տրեսնըմ, մին խիլլի ճախ մին քոլու տակի կյուտած։

Էտ մարթը ճախը յան-յան ա անըմ, տրեսնըմ տակին մին սանդուղ, յրան էլ ղուփուլ քըցած։ Էտ մարթը շատ ա ուրխանըմ, սածուն փառք տամ, վըեր ախրը-վըերչը ուրանց ռուզին հրսցրալ ա, մին լիքը սանդուղ վրեսկե-արծաթ ա տրվալ։

Միչև էտ սանդուղը պրեց անիլը, էտ մարթը հազար տրեսակ լավ-լավ պրհներ ա մրտածըմ. «Ինձ հրեսի շորեր կինի, վրննաման կինի, տըրխընիս էլ մաշալ ա, կընգանըս հրեսի շուկվի շորեր կինի,

www.naregatsi.org

ընդրա թոհմաթան կըպըրծընիմ, դե վըսկեղեն կինի՞, միկա կընգանըս կըտամ, միկա էլ կըծախիմ, տոնըս հացավ, եղը-պիրինձավ կըցնիմ, տանըս կըլխին, տոն կըշինիմ, սունները վըհսկե, ամման օր չամիչ օտելավ ման կկյա՜մ, իտի լավ կապրինք մարթըկընեգյ միչև մըեր գյանքին վերչը»։ Տա սանդուղը պըեց ա անըմ, հի՞նչ տըեսնըմ... Բուրդան մին շահմար օխծ ա տուս կյամ էտ սանդուղան, փըթաթվըմ էտ անմեղ մարթին վիզավը։

Էտ մարթը վըխելան նըհետ ուրան կուրցըրավ, վերչը օշը կըլսխը հըվաքից, հիշքան օղից էտ օխծան ազադվի, կարից վըե՞չ։

Ճարը կըտրած ըսկսից ղաչանք անիլը էտ օխծին։ Ասից.—Օ՛խծ ախպեր, ախեր յըես քյըեզ հի՞նչ ըմ ըրալ, վըր տու ինձ իտի չըրչարըմ ըս, եք, ինձանա եր եք, ճընապատ քյինա, ախեր յըես մըեխկ ըմ, բա իտի պըեն կինի՞։

Օխծը եր չի եկավ, հաչա էլ իվիլ ըտրան կոչ ածից, կոխկերքը հոփ տըվավ, ասից. — Բա լհա մարթը չի՞ ինձ էս սանդուղը քըցա՜լ, յըես մարթան իմ աջըղըս պիտի հանիմ, հաչա էտ հի՞նչ ա, մին տըես քյըեզ հիշքա՜ն ըմ չըրչըրելու։

Էտ մարթը լըղըպատառ ա տըեռնըմ վըեր տըեսնըմ ա կոխկերքը, մըեշկը լափ ճըռճըռացնըմ ա, հոփ տամ, ըսկըսըմ ա ճըղճըղալը, ծըվծըվալը, թա. — Հա՜յ, հարա՜յ ըսպանից, եկեք հըրայիս հասե՜ք։ Ըտրա ծըենը մին աղվես լըսըմ ա, կյամ, թա տըեսնա՝ տա հինչ պըեն ա։

Աղվեսը ասըմ ա. — Ջըհաննաամը թա քյըեզ ըսպանըմ ա, ինձ էլ աջըղ օնիմ մարթկանցան հանելի՞, վըեր տուք խեղճ հեյվաններին միշտ տանջըմ ըք, ըսպանըմ, մաշկըմ, հո՞ւնց ա ինըմ, մըհեկ էլ տու տանջվի, էտ քյըեզ արժանի պատիժ ա։

Էտ մարթն ասըմ ա. — Լավ ա, յըես քը մատաղ, էս դաննըմ ինձ քյամաղյ ըրա, ազադի, ետավ տու վրս գյուդումա։

Էտ մարթը վըեր շատ ա ղաչանք անըմ, էտ աղվեսը ըղվըսոթուն ա անըմ, օխծին ասըմ.

— Օխծ ախպեր, էտ հի՞նչ պըեն ա, վըեր տու իտի մըեծ մին պըեռնը օխծ ինիլավըտ, էտ պուճուր սանդուղումը տըղվարալ ըս։

Օխծը օղից վըեչ էտ մարթին անա եր կյա, մին էլ մըտածից, թա աղվեսը կգյիդա, թա ինքը մին անպըեն հեյվան ա, ծըեռքավը պըեն չի կյամ, մին շընորք չօնի, լոքյ ա, լանթ ա։ Ըտրա հըետի էլ օխծը քըշանըմ ա, հուլլար-պուլլար ընելավ քյընըմ, նի մընընըմ սանդուղը, ծըլծալվըմ, նըստըմ։ Էտ դարըմը աղվեսը սանդուղին տոռնը ծասկըմ ա, էտ մարթըն էլ քյիլլիդը քըցըմ ա յրան, քըլլըմ։

www.naregatsi.org

Ետնան ճախ ըն հրվաքըմ, յրա տամ, վառըմ։ Օխծը տըրաքըմ ա, էրվըմ։ Համին էտ վախտը էտ լավոթուն չըդյիդող մարթը աղվեսին վիզեն պինդ փըռնըմ ա, վիզեն կապըմ, ծառան կախ տամ։ Աղվեսը գյուդում ա, թա ուրեն լավոթունին ավելը մարթը մին լավ պըեն ա օզըմ անի, ամմա տըեսնըմ ա վըեր իտի չի։

Ասըմ ա.— Մա՛րթ ախպեր, ինձ պըեց թող քյինիմ, յըես քյըեզ հի՞նչ փիսոթուն ըմ ըրա՛լ։

Մարթըն ասըմ ա.— Ցըես վըեշ մին պըեն չըմ գյուդում, մինակ իմ աշկըս էն ա քու պըծըպածին անըմ մորթուտ յրան։

— Մա՛րթ ախպեր, ինձ ըսպանիլ մի, պուճուր ծաքյեր օնիմ, մըեխկ ըն, սոված կմըեռնին։

Ամմա էտ մարթը էլ իվիլ ա քյանդիրը ծիքյ տամ, համ էլ ասըմ.— Բա ըշտըեղ ը՞ն քու ծաքյերտ, սոտ ըս ասըմ, ծաքյեր չօնիս։

Աղվեսը ղաչանք-պըղատանք անելավ տանըմ ա պինը նշանց տամ։ Ետավ ծըեն ա հանըմ ծաքյերը տինս ըն կյամ պինանան, հենգյ ծաքյ, ղաշանգյ, թուփա՛լ, ամմա սոված, տինզնը։

Աղվեսը գյուդում ա, թա մարթը վըեր ուրեն մըեխկը չի եկալ, ծըքյերին մըեխկը կըկյա... Ամմա ըշտըե՞ղ, էտ մարթը վըեր ծաքյերին տըեսնըմ ա, ուրեն մըեխկըմը աղվեսի վեց մորթի յա հաշիվ անըմ, թա վըեր տանի ծախի, հի՞շքան փող կփռնի...

Էտ դաըրըմը էտ մարթը սոր տըեննակավը աղվեսին բողազը կըտրըմ ա, ետավ էլ տըեննակը սըեռտը կոխըմ։ Էտ վըեր ծաքյերը տըեսնըմ ըն, վըխելան նըհետ նի յըն մըննըմ պինը։

Էտ մարթը ըտրանց պինը ծոխ ա տամ, էտ պուճուր ծաքյերին խեխտըմ։ Ըտրանա ետը ըտրանց էլ ա մաշկըմ։ Տըեռնըմ ա աղվեսի վեց մորթի։

Տա յոր օնըմ, կյամ տոն, կընգանը լոխ նաղլ անըմ, կընգանը քյեփը կյամ ա ըտրա արածան։ Ասըմ ա.— Շատ լավ ըս ըրա՛լ, կըտանիս քաղաքըմը ծախիս, լավ-լավ պեներ առնիս, պըերիս։

Էտ կընեգյը ինքը խոխա չօնար, ըտրա հետի էլ գյուդում չար, թա հինչ պըեն ա մար իննիլը, ըտրա հրետի էլ սըեռտը քար ար, խըեղճը մըեռած, ըտրանք ուրանց գյանքըմը էլհա շատ տըժըրութուն քաշեցին, իտի էլ մըեռին։

www.naregatsi.org

15. ՊՈՒՃՈՒՐ ՀԱՐՍԸ

Ինձում ա, չի ինձում մին մարթ ա ինձում։ Էտ մարթին ինձում ա իրեք տղա։ Վեր էտ տղերքը մծանըմ ըն, հաՙրը ըստրանց փսակում ա։

Սինվթա՛ փսակում ա էրկու մեծ տղորցը։ Վեր տրանք փսակվում ըն, ամմենը սկսում ըն բդի ուրաՙն ծիքյ տալը, վեր ուրաՙնց հետե տոն տինին։

Մին խոսկավ, ըտրանց տոնը մին տեսակ շաղ եկած ար։ Հիբը պուճուր տղան մծանում ա, հաՙրը ընդրան էլ ա փսակում, ամմա էս մին հարթինը լոխճան լավն ա ինձում։

Տա սկսում ա տոնը կարքի պիրիլ, ետավ էլ ասում ա. — Օրաս ետը հու վեր հանդաՙն տոն կյա, թող ուրաՙն նհետ մին պեն պիրի, ինի քա՛ր, փա՛դ, շոՙր, ուտելի պեն, իտի շատ պեներ։

Տրանք պուճուր հարթինանը ասածը ըսկանում ըն, իտի էլ անում ըն։ Տրանից ետավ էլ սկսում ա ուրաՙնց տոնը կարքի կյալը, ուրուՙր նհետ ապրում ըն սիրավ, օրախ։

Մին հետ մեծ ախպերը, մին էլ պուճուր ախպերը հանդաՙն կյամ տեղը մրննըրներան ընգնում ա, վեր մին պեն պերին։

Կյամ ըն ուրաՙնց տանը տակին մրննըռեն ա ընգնում, ուրաՙնց պուճուր հարթինեն ասածը։ Ետ ըն քյինձում, ուրաՙնց հրևանին չափարին տական մին քար յոր օնում, վեր պիրին։

Տեսնում ըն, վեր էտ քարեն տակեն մին պեն կա պապղե տամ։ Էտ քարեն տեղը մին օրիշ քար ըն տնձում, էն քարը պիրձում տոն։ Գյիդաՙլավ, վեր էն քարեն տակեն վրեսկե կա, վեչ մինին վեչ մին

www.naregatsi.org

պեն չըն ասում, սուա ու փուա կյամ ըն տոն, հաց օտում, քոն ինում, վեր լոխ քնավ ըն ընցնում, էտ էրկու ախպերը, եր ըն կենում, քյինում էտ վրեսկեն տուս օնում, պերում տոն, մին էլ էն քարը տնում տեղը, վեր գյիդան, թա ծեռք նի եկած չի՞: Տրանա եաը սկսում ըն առոք-փառոք ապրելը: Ուրուր ջան ըն ասում, ջան ըսկանում:

Մին հետ էլ մեծ ախպերն ասում ա. — Ա՛խպեր, քանի մունք սերավ ընք, ուրուր նհետ կռվալ չընք, եկեք ուրուր անա տուս կյանք, թա չէ, վեր կռվելավ տուս կյանք, լավ չի ընիլ:

Էտ ախպերքը մեծ ախպորը ասածը ըսկանըմ ըն: Ըտրանք ըսկըսում ըն ճոկվելը: Ասըմ ըն, վեր լոխճան խելունքը մեր պուճուր հարթնըն ա, թող նա փայ անի: Էտ հարթնը քթած վրեսկեն, տանը իլած ապրանքին նհետ էրկու տեղ ա փայ անում, քոռ հաըն էլ մին տեղ: Քթած վրեսկեն մին էլ տանը ապրանքը ընգնում ա մեծ նան մաշնակ ախպորը, պուճուր ախպորը՝ քոռ հաըը: Սրանք ամեգյը ուրանց փայը յոր օն օնում, տոնը թողում մեծ ախպորը, ուրանք տուս կյամ:

Պուճուր հարթնը ուրան մարթին ասում ա. — Ըստեղ կենանք, հի՞նչ անինք, եք քյինանք քաղաք, մըղհետե տոն շինինք, ընդեղ ապրինք:

Էտ հարթնեն ասածը մարթը ըսկանում ա, տի էլ անում: Ուրանց քոռ հորը յոր ըն օնում, քյինում բդի քաղաք: Մարթըկնեգյ էտ պառավին շատ ըն սիրում: Հղեցը տղան շլակած ա տանում, վեր նղանում ա, մին էլ հարթնըն ա շլակում:

Վերչը շատ ըն քյինում, թա խրեգյ ըն քյինում, տա մունք գյուդում չընք, հղեցը էտ հարթնը մեռնում ա: Տըղան ըտրան թաղում ա ըտեղ, մին էրկու օր ըտեղ մնում, էրկու օրանը եաը հորը շլակում ա, քյինում քաղաք: Թա շատ ա քյինում, թա խրեկ, վերչը հըսնում ա քաղաք:

Էտ քաղաքումը մին հարուստ մարթ ա ինում, քյինում ա ընդեղ, տրան հետե փոխհրթումն անում:

Մին քանե տարե կնալանը եաը, էտ հարուստ մարթին ախճիգյը սիրահարվում ա էտ տղին յրա: Ընդրան խնթրում ա, վեր ուրան օգի, ամմա տղան ասում ա. — Չէ, յրես օգում չըմ փսակվիմ:

Էտ ախչիգյը տրեսնում ա, վեր առանց ընդրան չի կարում ապրի, խնթրում ա հորը, վեր ընդրան մին լավ կործի տինի, վեր ընդրան տինի դուքյանումը, վեր տրանավ էտ տղին բդի ուրան քաշի:

Հաըը ըխճըկանը սըեռտը գյիդում չի, թա հինչու հետե յա իտի

www.naregatsi.org

ասում, ամմա վեր ինքը շատ ար սիրում ըխճկանը նրան ասածը կադարում ա։

Հաՙրը էտ փաՙհլին տնում ա դուքյանումը։ Տա ընդեղ կործ ա անում, էտ հարուստ մարթին ապրանքնին ծախում, ամսական մին քանե մանեթ ստանում, տրանավ ինքյը նան ուրաՙն քոռ հաՙրը ապրում ըն։ Հարուստին ախճիգյը էլհա յա խնթրում էտ տղին, վեր ուրաՙն օգի։

Էս դաՙնում էլ էտ տըղան ասում ա. — Իմ սրտումըս մին պեն կա, թող տեղ տամ, ետավ։

Էտ ախճիգյը ասում ա. — Հի՞նչ կա, ասե, վեր յըես քյաՙմաձգյ ինիմ քյըեզ, վեր դիլաՙկտ շուտ տեղ տաս։

Էտ տղան էլ ասում ա. — Յըես ըստեղ կյամ վախտը հղեցը կնեգյս մեռնըմ ա։ Յըես ընդրան պարտական ըմ, ընդրա հնգյիստին քար պեդմա քցիմ, համ էլ վըեսկե տառերավ յրան անըմը կյիրիմ։ Մին պեն էլ կա, վեր տու իմ հաՙր պահիլ չը՞ս, տու հարուստ մարթի ախճիգյ ը՞ս, տու տի մարթկանց եշիլ չը՞ս։

Ըտեղ ախճիգյն ասում ա. — Յըես քյըեզ ըմ կյամ, վեր տու ընդրան խոի յըս եշում, յըես տրա հետե քյըեզ շատ ըմ հավան։

Տղան էլ ըտեղ ասում ա. — Մինաՙկ հորս լաՙվ եշիս, յըես քու ասածտ կանիմ։

Վերչը էտ տղան ուրաՙն կընգանը հաՙնգյիստին քար ա քցում, վըեսկե տառերավ յրան կյիրում, վեր քարը քըցում ա, պրծնում, կյամ ա, վեր էտ հարուստեն ըխճկանը ՙօգի, էտ մարթը ուրաՙն ըխճկանը տամ չի, ասում ա. — Յըես հարուստ մարթ, խոտի ընըմատար, յըես իմ ախճիգյըս տա՞մ մին քյաՙսիբ մարթո՞ւ, վեր վեչ մին պեն չօնե՞, չէ՛, յըես տամ չը՞մ։

Ըստեղ ախճիգյը ասում ա. — Ա՛ հաՙր, օգըմ ըս տո, օգըմ ըս տալ մեր, յըես քյինաՙմ ըմ էտ տղեն։

Ախճիգյը ուրաՙն ասածն անում ա։

Էտ տղան քյինաՙմ ա էն ըխճկանը օգում, պիրում։ Նորու հըրսանեքյ ըն անում, առոք-փառոք ապրում։ Էտ մին հարթնըն էլա լաՙվը ինաՙմ, ուրաՙն պտրունին ամմեն օր լղցնում ա, տաք խորագյ ա տամ, տինաՙմ ա տեղըմը, քընըցնում։ Միշտ էլ էն պառավը օրախ ա ինաՙմ, ուրաՙն հարթնավ նան տղենավը, վեր տրանք իտի ասըլ ըն։

Մին հետ տրանց տոնը էրկու փայ հվաքող ըն կյամ։ Էտ հարթնը պիրում ա տրանց հաց տամ, տրանք յոր ըն օնում, քյինաՙմ։ Տրանց ծենը վեր հաՙրը սկանում ա, սկսում ա լաՙց ինիլը։ Հարթնը գյիդաՙմ ա, թա վեր հաց ա տվալ ընդրանց, տրա հետե յա լաՙց ինաՙմ։

www.naregatsi.org

Ուրուգյունը վեր մարթը կյամ ա տոն, տրան ասում ա. — Լսօր մեր տոնը էրկու փայ հվաքող ըն եկալ։ Ձրեա ընդրանց հաց ըմ տվալ, տրա հետե ապերը սկսալ ա լաց ինիլը։

Մարթն էլ ասըմ ա. — Ուրաւն հաց ը՞ս տվալ։

Ասում ա.— Հաց ըմ տվալ, համ էլ լըղըցրալ ըմ։ Մինաւկ գյիդում չըմ խե՞ յա լաց իլալ։

Մարթը, վեր տա սկանում ա, տոնա ա կյամ տոռնը, էրկու խոխա ղարկում էտ փայ հվաքողներեն հետաև։ Ընդրանք քյինում ըն, տեսնըմ էտ փայ հվաքողնին մին թոռնի քշտի նստած։ Տրանց յոր ըն օնում, պիրում էտ մարթին կոշտը։

Քշերը տա մին վեչխար ա մորթում, տրանց ղոնաղ անում։ Վեր հացը օտըմ ըն, պրծնում, տրանք տոնա ըն կյամ վեր քյինաւն, էտ մարթը թողում չի՞։

Պիրում ա, տրանց տեղը քցում, տրանք ընդեղ քոն ըն ինում։

Էքսը եր ըն կենում, սկսում հարցըփորց անելը։ Տեսնում ըն վեր տրանք ուրաւն ախպերքյն ըն, հաւրն էլ տրանց դաւրդաւն ա լաց իլալ, վեր տրանք տի քյասիբաւցալ ըն, փայ հվաքող ին տեռա՞լ։

Պուճուր ախպերը տրանց տանում ա դուքյանը, ամմեն հինչա տամ, համ էլ ասըմ. — Ա՛խպերքյ, պա էնքան վրեսկեն, էնքան ապրանքը ծրեզ տվենք, հի՞նչ ըրիք, վեր մըհեգյ էլ հաց հվաքող ըք տեռալ, խե՞ էնքանը ծեզ հերիք չըե՞րավ։ Ինձ հի՞նչ ըք տվա՞լ, մին քոռ հաւր, տրանա կման էլ վեչ մին պեն։

Ախպերքյն էլ ըսեցին. — Մունք ըպրեալու թաւհրը գյիդում չը՞նք, վեր գյիդաւնք, իստի չընք տեռնա՞լ։

Ասըմ ըն, ուրաւնց տեսը-տենը յոր օնում, քյինում։

Տրանք քյինում ըն տոն, ուրաւնց պուճուր ախպորըն անա նաղլ անում, ուրաւնք էլ սկսում լաւվ ապրուստը, պուճուր ախպորը ունգյունաւվը։



www.naregatsi.org



16. ԻՄԱՍՏՈՒՆՆԻՆ

Ինըմ ա, չի ինըմ իրեք ախպեր ըն ինըմ։ Տրանց ինըմ ա մինաւկ մին եզնը։ Մին օր էտ եզնը կյուղանըմ ըն։ Ըտրանք քյնաւմ ըն ամեն տեղ ման կյամ։

Մեծ ախպերն ասըմ ա. — Մեր եզնը կյուղունողեն անըմը Մուսա յա։

Մաշնակ ախպերն ասըմ ա. — Անըմը Մուսա յա, համ էլ բոյը կարճ ա։

Պուճուր ախպերն ասըմ ա. — Բոյը կարճ ա, համ էլ կլոխը քաշալ ա։

Ըտեղ իրեք ախպեր քյնաւմ ըն ման կյամ, ուրաւնց եզնը կյուղունողեն ճարին։

Մոտի կյուղավը անց կնալիս, տեսնըմ ըն մին մարթ, անըմը Մուսա, բոյը կարճ, ինքն էլ քաշալ։

Տրանք տրան յօր ըն օնում, տանըմ պրիստավեն կոխկը։

Պրիստավն ասըմ ա. — Հո՞ր ըք եկալ։

Մեծ ախպերն ասըմ ա. — Էտ մարթը մեր եզնը կյուղացալ ա, թող տա։

Պրիստավն ասըմ ա. — Պա հշտե՞ղան ըք գյուտնում, վեր կյուղացալ ա։

Մեծ ախպերն ասըմ ա. — Մունք իմաստուն ընք։

Պրիստավն ասըմ ա. — Դե տուք տուս եկեք։

Պրիստավը պիրնում ա դռշակեն տակեն մին սրկեվիլ տինում։

www.naregatsi.org

Ախպորըը կանչըմ ա, ասըմ.— Տուք թա գյիդաք դաշակեն տակեն հի՞նչ կա, էն վախտը ծեր եզնը յօր ըմ ունենական, ծեզ տամ։

Մեծ ախպերը տեսնում ա, վեր դաշակեն տակեն մին պունչըր պեն կա։ Ասըմ ա. — Պունչըր ծուվի նման ա։

Միշնակ ախպերն ասում ա. — Թա ծունվի նման ա, տեղին ա։

Պուճուր ախպերն ասում ա. — Թա տեղին ա, սրկեվիլ ա։

Ըստեղ պրիստավը հըվատում ա, վեր տրանք իմաստուն ըն, էն մարթին ասըմ ա. — Քյնա, տրանց եզնը տոր ուրանց։



www.naregatsi.org



17. ՎՂԵՐՍԿԱՆ ԱՎԵՏԻՍԸ

Ինըմ ա, չինըմ, մին հըլիվեր մարթ ա ինըմ։ Ըտրան ինըմ ա մին կընեգյ։ Ըտրանց խոխա չի ինըմ։ Մարթը քյընըմ ար վրերս անըմ, կընեգյըն էլ տանը կար, տանը պրեներ ար անըմ։ Ըտրանք իտի մին թահրաւ ապրըմ ըն։

Ընդրանք շատ ին քընեննքյ անըմ, վրեր ունրանք խոխա չօնին, վրեր ունրանց սրերտը դաղվածա ա, օջաղը հանգյածա ա։

Մին դոնըմ էտ մարթը ծըմակըն ա քյընըմ վրերս անի։ Էտ ծըմակըմը իրեք ըլըբաստրակ, վրեննները քյաստրակ ա փըռնըմ։ Էտ ըլըբաստրակներին մինը խե՞ շա՞տ ղաշանգյ ա ինըմ։

Տա էտ հըլիվերին ասըմ ա. — Ա՛յ անճանանչ վրերսկան, մրեզ պրեց թող քյինինք, մունք քյրեզ շատ լըվոթուն կանինք, քյրեզ հրետի, գյանքիտ հրետի։

Էտ հըլիվրերը խոսկ ա տամ, վրեր պրեց կը թողի։

Էտ ըլըբաստրակնին ասըմ ըն. — Քյրեզ մին տըղա կինի, ամմա ընդրա ծընվելանը օխտը օր ետը, տու մրեռնելու յըս։

Հըլիվերը ուրխանըմ ա, ըլըբաստրակներին պրեց ա թողըմ մին պայմանավ, վրեր խոխա չինի, էլհա կյա փըռնի, յետավ կյա տոն։

Անց ա կրեննըմ մին խիլլա վախտ, ըտրան մին տըղա յա ինըմ։ Կոզի ինքը օխտը օրան ետը պիտի մրեռնար, ամմա էլհա շատ ա ուրխանըմ։ Վեց օր անց կընալանը ետը հարը էտ տըղին անըմը Ավետիս ա տընում։ Կընգանը կանչըմ ա ասըմ. — Ա՛ կընեգյ, վրեր Ավետիսը մըծանա, տրեռնա տասը տըրեկան, ընդրան ղարկի տը-

www.naregatsi.org

բացուվին կոշտը կարթիլը սըվըռրի, կյիրին սևըսիպտակը ճոկի, մըեղ մընան ախմախ չի մընա։ Ընդրանա ետը վըռր հենգյ տարի էլ անց կըկրենա իմ Թըվանգյս կըտաս ուրան, ինձանա էլ նաղլը կանիս։

Էտ հըլիվըռրը օրը իրեք դընըմ կյամ ա խոխին ըրորոցին կոշտը, չոքըմ, աղոթկ անըմ, ետավ էլ ասըմ. — Ավետիս ջան, իմ հաբր, իմ մար քը մատաղ, մըղափուն վըռր էրգյան գյանք չօնիմ, վըռր բոյըտ տըեսնամ, վըռր էտ ըլըվալավ անըմ իրեսըտ տըեսնամ, էտ սրնվ-սրեվ աշկերըտ, էտ կրեռ-կրեռ ունքերըտ տըեսնամ։

Վըռր վերչին օրը կյամ ա, հըլիվըռրը քըշերը քոն իլած տեղը հրեշտակնին կյամ ըն, թա տանին։ Տա ղաշանք ա անըմ, վըռր թողին՝ ուրան խոխին մին հետ պաչի։

Հըրեշտակնին թա.— Դե շուտ ըրա, թայդի յընք, օրիշներին հետան էլ պիտինք քինիլ, հու մինակ տու չըս։

Հըլիվըռրը մին էլ խոխին պաչից, ասից. — Ավետիս ջան, դե ինձ տանըմ ըն մըթեն աշխարքը, տու քու հոր օջաղը ավադ կանի՞ս, թըշնամու սըրտավ չանի՞ս, նամուսավ կինի՞ս, ղեյրաթավ կինի՞ս, պատիվ-հաւրմաթավ կինի՞ս, քու մոր էլ լավ կը եշիս, վըռր ասին վըռչ մարթը մըեռած, անդար կընեգյ ա։

Ասըմ ա պըրծընըմ, հրեշտակնին կյամ ըն ըտրան տանըմ, մին պեցուր սարի կըլխի մին ամարաթ ա ընում, էտ ամարաթին սուրթունան կապըմ, մին լավ կյոսուըմ։ Թա էլլա՞ ըլըբաստրակ կը փըռնի՞ս։

Էտ հըլիվըռրը տըմանըմ չի, ասըմ. ա — Ամա՞ն, ա՛ հրեշտակնի, ասծու սերին, ինձ իտի թակիլ միք, լավըն էն ա, վըռր լհա ըսպանիք։

Էքսը էտ հըլիվըռրին կընեգյը յեր ա կրենըմ, տըեսնըմ մարթը կա վըռչ։ Էն ըլըբաստրակներին խոսկավը գյուդում ա իլալ, վըռր մարթը մըեռնելու յա։ Ըսկըսըմ ա լաց ինիլը, ծընգները թակիլը։ Ըտրանա յետը մաըրըտըղա ապրըմ ըն։

Տըղան մըծանըմ ա, տըեռնըմ տասը տըրեկան մին ղաշանգյ, շենքավ-շընորքավ տըղա, խելունք, ծրեռքավը պըեն եկող, ինքն էլ ղոչաղ, վախ էլ չօներ, քյընըմ ար ծըմակը, թա ծրեռքավը աղվես, ըլըբաստրակ փռնի, պերի տոն։ Ամմա մարը թողըմ չար։ Ավետիսը վեչ թա տարավ ար մըծանըմ, այլ օրավ։ Հաալա տասը տըրեկան ար, վըռր եշողը գյուդում ար, թա քսանըրհինգ տըրեկան ա։ Ծառեր ար պուվում, վարար կյետերավ անց ար կրենըմ, ծըմակին հեյվաններին քարավ ըսպանում ար։ Հունցը հարըն ասալ ար, մարը Ավետիսին տանըմ ա տըրացուվին կոշտը։ Տըրացուն մին խըրեգյ կյիրիլ-

www.naregatsi.org

կարթիլ ա սրվըրցնըմ, ամմա փող չինելի հետի, էլհա տունս ա կյամ, քյինում դիբի ծրմակը։

Մին դռնըմ ծրմակըմը էն իրեք ըլըբաստրակը կյամ ըն ըտրան ըռուջահ ինըմ, հրրցընմ, ասըմ.

— Հո՞ւր տըղա յըս։

Ասըմ ա. — Յրես Ավետիսըն ըմ, էն հըլիվեր վըերսկանին տըղան։

Ըլըբաստրակնին դաստի ճընանչըմ ըն, իրեք վըեսկե յըն տամ, տոն ղարկըմ։ Ավետիսն էլ պերըմ ա մորը տամ։

Մին օր էլ մարը տեսնըմ ա, վեր Ավետիսը թաքուն օզըմ ա պըցրանա, հորը թըվանգյը պատան յոր օնի։ Մարը թըվանգյը տամ ա տըղին, համ էլ հորն անա նաղլ անըմ։

Մին օր էլ Ավետիսը թըվանգյը օսավը քըցած կյամ ա տոն, ասըմ. — Ա՛ մար, յըես բիդի քյինամ իմ հոր ճարիմ։

Մարը թողըմ չի։ Ամմա Ավետիսը լըսըմ չի մորը, քյինում ա։

Քյընըմ ա, քյընըմ, հըսնըմ մին մրթեն ծրմակ։ Ըտրղան մին խոխի ծեն ա լըսըմ։ Ավետիսը վազ ա տամ քյընըմ, տեսնըմ քյարվանան յետ մընացած մին խոխա յա, կյունլերն էլ յրա տեռած օզըմ ըն, թա ըտրան օտին։

Տա թըվանգյը յրա յա անըմ, կյունլերը փախչըմ ըն, խոխան ազադվըմ ա, ասըմ. — Թա վըեր կարիս ինձ տանիս մրեր քյարվանին հըսցընիս, իմ հաըր քյըեզ մրեծ հարըստոթուն կըտա։

Ավետիսը էտ խոխին շըլակըմ ա, տանըմ դիբի ինդի, ըշտեղ էտ խոխան նշանց ա տամ։

Քյընըմ ըն, քյընըմ, վերչը հըսնըմ ըն Շուշի-Ղալին քըմակի ղոլին մին պեցուր, պունլլոր թումբի։ Ըտրղան եշըմ ըն տեսնըմ բիդի Կըրկըժան շենին ղոլը էնա կյետին կոխկին չանդիրնի կա եր թողած, ծոխ ա պըցրանըմ։ Ըտրանք քյընըմ ըն հըսնըմ էտ կաղնած քյարվանին։ Էտ պուճուր տըղին հաըրը, վըեր շատ ար ունրան տըղին հետան ման յեկալ, ամմա քըթաչ չար, շըներին սանին յըրան եր ա կենըմ տունս կյամ, տեսնըմ էն ա կյամ ըն։ Հաըրը, մարը շատ ըն ուրխանըմ, Ավետիսին տանըմ ըն լոխան լավ չադիրը, լավ ուտուցընըմ, խըմըցընըմ, փափուկ յորղան-դոշակին մեչին քընըցընըմ։ Էքսը վըեր եր ըն կենըմ, հաըն ասըմ ա. — Ավետիս, վըեր տու իմ խոխիս քըթաչ ըս, սաղ-սալամաթ պերալ, իմ հարստոթունիս կըեսը քյըեզ ըմ տամ։

Ավետիսն ասըմ ա. — Յրես քյըզանա վրեշ մին պեն չըմ օզըմ, լհա էս քըշեր էլ թողեցիք ըստեղ կենամ, էքյուց կը քյընամ։

Ըտրա հետի լավ տեղեր ըն քըցըմ։ Տա քոն ա ինըմ։ Էքսը ըռա-

www.naregatsi.org

վոտը վրեր եր ա կրենըմ, տեսնըմ ուրիշն փըթաթալ ըն մին քիհնա գյաբի մեչի, քյարվանն էլ թողալ ա քյեցալ։ Ավետիսը հրսկանըմ չի, թա խե՞ յըն իտի ըրալ։ Օզըմ ա ետ տրեռնա տոն, մին էլ ասըմ ա. «Մին տրեսնամ ըստեղերք հի՞նչ կա, իմ մար ասալ ա թա՛, վրեր քյարվանը քյընըմ ա, բիդի քյինիս, ման կյաս տրեղը, տեսնաս հի՞նչ ըն թողալ, հի՞նչ չըն թողալ»։

Տա ետ ա տրեռնըմ ման կյամ, տրեսնըմ մին մրեծ, հանգյած կրակի կոխկի մին կյոտի, մին թուբաքգյ, մին էլ մին ճաղավ ըրած փափաղ։ Տա լոխ յոր ա օնըմ, կյամ տոն։

Հրսնըմ ա տոն, տրեսնըմ մարը էնա լաց ինումա, գյուդումա, թա տրղան կորալ ա, կյուլի փայ ա տրեռալ։

Վրեր տրղին տրեսնըմ ա, շատ ա ուրխանըմ, ասըմ ա. — Խե՞ յըս էսքան ետացալ, բա վախըմ չը՞ս ծըմակին ջանավարներան։ Ավետիսը լոխ մորը նաղլ ա անըմ։ Մարը էտ պենները յոր ա օնըմ, թող անըմ, քըցըմ մին պոճախ։ Տղին էլ ասըմ, վրեր քյինի Ղալին էն լիքը բըզարան օտելի պեներ առնի, պերի։

Ավետիսը քյընըմ ա Շուշի-Ղալան։ Նա տրեսնըմ ա, վրեր մին մրեծ, ղաշանգյ տան առաչի մին թուբուն ջահիլ տրղերք, մին-մին չամադան ծեռքընեերին կաղնած, ըսպասըմ ըն։ Ավետիսը հրրցընըմ ա, թա ըտրանք խե՞ յըն իտի կաղնալ, ամմա էտ ջահիլնին ջողաբը տամ չըն։ Տա քյինըմ ա թուշ բազարը, մարը հինչու ասալ ար առնըմ. խնձորին լավ-լավ տրղերան, տրկողնին լավ-լավ տրղերան, շըմբալուբին լավ-լավ տրղերան, չամչին լավ-լավ տրղերան, նոխուդին լավ-լավ տրղերան, խոշկյամբարին լավ-լավ տրղերան, փխստաբադամին, նողրլ-նաբաթին, խուրմա-ծրերանին, չոր թոթ-ճըղուպըրին լավ-լավ տրղերան, էն իրեք ըլըբաստրակին տրված վրեսկավը առնըմ, ետ տրեռնըմ, թա կյա տոն, տրեսնըմ էլհա էն ջահիլ, լավ շորեր կյեցընեերին տրղերքը հեն ըն ընդեղ կաղնած։

Ըտրանց մին էլ ա պարով տամ, ամմա էլհա բադասխանը տամ չըն. ասըմ ա. — Բալքյաս հայեվուր գյուդում չըք, յա լավ ըք կյեցված ըտրա հետի՞ յա, վրեր ինձ մըհալ չըք տրնում։

Էտ տրղերքը Ավետիսին փասոնին, ընդրա թևը թեգյունքին վրեր եշըմ ըն ջանեերնին տող ա ընգնում, վրխելնան նըրհետ ասըմ ըն. — Սա թաքավերին ըխճըկանը պալատն ա, էտ ախճիգյն էլ դունյագյոզալի յա, էնքան կյեղեցիկ ա, օզըմ ընք մրեծ կումարնեերավ բալքյաս ընդրան տրեսնանք։

Ավետիսը կյամ ա տոն, լոխ մորը նաղլ անըմ։ Ասըմ. —Ցրես էլ ըմ օզըմ էն ըխճըկանը տրեսնամ...

www.naregatsi.org

Մարն ասըմ ա. — Բալա, էտ քու կործտ չի, էտ հու վըեր շատ փող օնի, ընդրան պըեննն ա։

Ավետիսն ասըմ ա. — Չէ, յըես քյընաձլ բիդիմ տըեսնամ։

Ասըմ ա պըրծընըմ, էն քըթաձ կյոտին կապըմ, քյընըմ։ Մարը տըղին ջուբումը մին քանի կապեկ ար տիրալ, տա վըեր ծըեռքը ջուբն ա քըցում, փողերը թա հանի, տա էտ պալատին տոռնը պահողին, վըեր թողի նի մընննի, տըեսնըմ ա սըեվ փողերը վըեսկե յա տըեռալ։ Էտ տոռնը պահողն ասըմ ա. — Էտ վըեսկավըտ օրը իրեք դոննըմ, ինքն էլ իրեք օր կարող ըս կյաս թաքավերին ըխճըկանը տըեսնաս։

Վըեր Ավետիսը քյընըմ ա, նի մընննըմ, տըեսնում էտ ջահիլնին ուրանց ափաթ պեներան ըն նաղլ անըմ, ուրանց ղոչաղոթունան, հա՛յ մունք էս արինք, հա՛յ մունք էն արինք, մունք էս ը՛նք, մունք էն ը՛նք։ Վըեր Ավետիսին էտ օթախըմը լոխ տըեսնըմ ըն, սուա ըն անըմ, մըկնին ծակը օխտը թումանավ ճարըմ չըն, թա նի մընննին։

Էտ ախճիգյը վըեր Ավետիսին տըեսնըմ չի՛, վըեր ընդրա իրեսկըհատը, բոյը-բուսաթը, շենքը-շընորքը տըեսնըմ չի՛, սիրահարվըմ ա, լոխճին տուս անել ա տա՛մ։

Ըտրանք ըսկսըմ ըն զուրուց անելը, սեր փըշրիլը, ուրուր խոսկ տալը, ուրթուս-հավատ անի՛լը։ Իստի իրեք օր, օրը իրեք հետը Ավետիսը կյամ ա էտ ըխճըկանը կոշտը։

Ջորսինջի օրը թաքավերը հրամմայըմ ա, վըեր ախճիգյը գյիդա, թա էտ տըղին, էտքան փողը ըշտըղա յա։

Թաքավերին ախճիգյը ըտրան քըշերը ուրան քըշտին ա թողըմ, վըեր էտ պըեննը գյիդա։

Ասըմ ա. — Ա՛յ ղաշանգյ տըղա՛, ա՛յ ղոչաղ տըղա՛, ասի տըեսնամ էտքան փողը քյըեզ ըշտըղա՛ յա՛։

Ավետիսն ասըմ ա. — Իմ կյոտուս օժան ա՛, վըեր սըեվ փողերը վըեսկե յա շինը՛մ։

Թաքավերը թաքուն լըսըմ ա, քըշերը թաքուն էտ կյոտին յոր օնըմ, Ավետիսին էլ ըռավոտը ըտըղան տուս քըցիլ տամ։

Ավետիսը կյամ ա ուրանց տոն, աշկը ունքան աղու կաթըմ։ Ուրան մըթկըմը ասըմ ա. — Մին ա, յըես էս ախճիգյը հինչ էլ ինի բեդմա օզիմ, իմ հոր էլ ըշտըեղ ինի, բեդմա ճարիմ, տոն պըերիմ։

Մարըտըղա էլհա ըսկըսըմ ըն փես ապրիլը։

Մին օր մարն ասըմ ա. — Ավետիս, մին էս փափաղը տիր կըլխիտ, բալքյաս ըստրա մաչին մին պըեն կա, մին հունար կա։

www.naregatsi.org

Ավետիսը փափաղը կըլխին ա տընըմ, էլ ըրվըմ չի։ Մարը ընդրան տրեանըմ չի, ըսկըսըմ ա կանչիլը։ — Ավետիս, հա՜ Ավետիս...

Ավետիսը թա. — Հի՞նչ ա, ա մար, — ասիլ նըբաստ փափաղը կըլխան յոր ա օնըմ, մարը տրեանըմ ա, վըեր Ավետիսը էնա համին ընդեղ կաղնած, ըշտեղ իլալ ա։

Ըտեղ մարըտըղա կըլխու յըն ընգնըմ, վեր փափաղը տընողը ըրվըմ չի։

Ավետիսը էտ փափաղը կըլխին տիրած քյընըմ ա թաքավերին ըխճըկանը կոշտը, տրեանըմ էտ ախճիգյը ուրան դաբդան լաց ա ընում։ Փափաղը վըեր կըլխան յոր ա օնըմ, էտ ախճիգյը կյամ ա խըտեաը ընգնըմ, պըչպըչորվըմ ըն։ Իտի իրեք օր կրեանըմ ըն։ Թաքավերը էչհա ըխճըկանը հրամմայըմ ա, վըեր փանդը-փիլը գյիդա, ամմա ախճիգյը ասըմ չի։ Կոզի ասըմ չի՞, թաքավերը թաքուն աշկ ա ածըմ, գյուդում, փափաղը յոր օնըմ, ուրան տուս քըցըմ։

Էտ դոնըմ Ավետիսը լաց ա ինըմ, կյամ ա մորը կոշտը լոխ նաղլ անըմ։ Ըտրանա եաը ըսկըսըմ ա թուբաջգյը ածիլը սըվերիլը։ Վըեր սըվերըմ ա, ածըմ, մին էլ ա տրեանըմ ուրանց տունը տրեղան պուք եկավ, քյընից մին հեռու ծըմակըմ կաղնից։ Մին էլ ա տրեանըմ չորս ղոլան օխծեր, ջանավարնի յրա յըն տրեռալ, թա նի մընանին... Ավետիսը էչհա ըսկըսըմ ա թուբաջգյը ածիլը։ Վըեր էրկու հետ ածըմ ա, տունը էչհա տրեղան պուք ա կյամ, քյինըմ ուրան տրեղը։ Էտ պըեանը վըեր գյուդում ա, Ավետիսը քյինըմ ա քաղաք։ Էտ ըխճըկանը պալատին առաչին կաղնըմ, տրեանըմ վըեր ըտրա քյուչին ակուշկավը լացի, սաքյի սաս ա կյամ, վըեր էտ ախճիգյը ուրան հետի յա լաց ինըմ։

Ավետիսը ըսկըսըմ ա թուբաջգյըն ածիլը։ Թաքավերին պալատը տրեղան պուք ա կյամ, թըռչըմ, քյինըմ մին ղալին, մըթեն ծըմակըմ եր կյամ, չորս ղոլը կյուլը-կազան, օխծեր։

Թաքավերը հրամմաև ա տամ սաղ աշխարքին, թա. — Հու վըեր կարի էտ տըժեր տրեղան ուրան ազադի, ախճիգյը ընդրան ա տալու։

Ավետիսը քյինըմ ա, ասըմ։ — Թաքավերն ապրած կենա, յըես կկարիմ ազադիմ։

Վըեր թուբաջգյը էրկու հետ ածըմ ա, թաքավերին պալատը տրեղան պուք ա կյամ, թըռչըմ, քյինում ուրան առաչվա տրեղը։ Ախճիգյը ուրխանըմ ա, վըեր ուրան սիրածին ա արժանանալու։ Ամմա էտ մուտատա թաքավերը ուրան խոսկը կադարըմ չի. Ավետիսին անա

www.naregatsi.org

թունթաշգյը ինքյա օնըմ, ուրան տունս քրցըմ։ Ավետիսը էլհա լացինելավ կյամ ա տոն։ Դե էլ հի՞նչ անի, կոզի մարը թողըմ չի, ամմա ինքը եր ա կրենում, թա քյինի սրեվ աշխարքը, օշափներին հաղուղին բաղը, ընդրանց ամարաթը։

Տա մին ճըվարան ա յոր օնըմ, հղղե ինըմ, էտ ըխճըկանը պատկերը, իրեսկըհատը աշկին առաչին, սերը սըրտըմը, էտ սերը ըտրան հույսը-հավատ ա տամ, ամեն տըժեր տրեղա կարըմ ա տունս կյա, օժը իվիլցընըմ ա։

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյընըմ, թա խըրեգյ, աստուծ ա գյուղում, հեռվան հեռու տրեսնըմ ա մին ամարաթի քրեթ։ Քյընըմ ա հրսնըմ ըտեղ, տրեսնըմ հաղուղին բաղին չորս ղոլը պրեցնուր չափար ըրած, էտ չափարին ցրեվքին պըտկըններին էլ մարթի քյայլեքյ նի կոխած... Տու մի ասիլ, էտ մարթկանցը էտ օշափնին ըն կերա՞լ... Ըտահանք Ավետիսին մընան ղոչաղ տըղերք ըն իլալ, եկալ ըն ըտեղ, թա ըտեղ մին ջադու պառավ կա, ընդրանա հրրցընին ուրանց դարդին դարմանը, ամմա կըրացալ չըն։

Ավետիսը էտ պրեցուր չըփարավը պըցրանըմ ա, եր կյամ, նի մըննըմ հաղուղին բաղը։ Հաղուղի բաղ, հի՞նչ բա՞ղ, մին ալամաթ, մին հըրաշկ, մին ճոկ պրեն։ Մրեծ, լիքը-լըցած, սրեվ նան սիպտակ հաղուղին ճիթերը կախ-կախ իլա՞ծ... Ամմա թանագյին կոխկերքին մարթի չուրացած կըլխընի, չուրացած վրեններ, կըլոխ նըյեր կախ տըված մարթիքյ...

Ավետիսը ըտըղան անց ա կրենըմ, քյինում ըտրան կըպած մին օրիշ բաղ։ Ըտեղ տրեսնըմ ա, վրեր օշափնին ուրուր նհետ հոջաթ ըն տամ։ Օշափնին ըտրան տրեսնըմ չըն, ամմա օշափներին մարը ըտրան տրեսնըմ ա, հրամմայում ուրան տղորըցը, վրեր ըտրան կոլ տան։ Էրկու օշափ կյամ ըն, թա կոլ տան, Ավետիսը վրեր ուրան սորավը նի յա շըլալը՞մ, էրկու օշափին կըլոխը պուք ա կյամ։ Իտի լոխ օշափներին կըտորըմ ա, մընըմ ա մարը...

Մար օշափը եր ա կրենըմ կրռեվ անըմ, ըտեղ Ավետիսին սորը կոտրըմ ա։ Ավետիսը դաստի կյողը ա կրենըմ։

Թաքավերին ախճիգյը ըրաղըմը տրեսնըմ ա, վրեր ուրան սիրած տըղան նրեղ տրեղ ա... Տա ուրան փոշտալյոն յըղոնեգյին մին սոր ա տամ, ղարկըմ։ Յըղոնեգյը սորը հրսցընըմ ա Ավետիսին։ Ուրան սիրած ըխճըկանան սորը վրեր ըստանըմ ա, Ավետիսը առուն յա ղուշաղանըմ, տամ ա, էտ օշափներեն մորը կըլոխը կըտորըմ։

Տա ըտըղան քյինըմ ա, վրեր էն ջադու պառավին քրթնի, հրր-

www.naregatsi.org

ցընի, թա հո՞ւնց բիդի ուրան հորը ճարի, հո՞ւնց բիդի ուրան սիրածին արժանանա։

Քյընըմ ա, պըցրանըմ մին սարի ղաթավ, հըսնըմ էն ամարաթին, տրեսնըմ մին մըեծ — եքյա, աղու տըվող օխծը էնա ըտեղ ծիլվծալ իլած, կըլխըն էլ տիրած ամարաթին տըռնին քըշտին։ Ըտեղ Ավետիսը վախըմ ա։ Թաքավերին ախճիգյը էլհա ա՛րաղ ա տրեսնըմ, վըեր Ավետիսը նըեղ տեղ ա։ Եր ա կըենըմ ուրան փոշտալյոն յըղոնեգյին անավ մին մըծըցընող հիլի ղարկըմ։ Ավետիսը էտ մըծըցնող հիլին տանըմ ա թաքուն տընըմ էտ շահմար օխծին առաչին։ Քըշերավը օխծը զա՛րթնըմ ա, տրեսնըմ, վըեր ուրան անա մըեծ մին օխծ էնա ուրան թուշումը տեմատեմ կաղնած։ Էտ օխծը օղըմ ա յրա պըրծընի, ամմա վախըմ ա, վըխելան նըհետ քյինըմ ա ընգըմ ծովը։

Ավետիսը եր ա կըենըմ, քյընըմ, թա ամարաթը նի մընի, ամմա տրեսնըմ ա տըռնները պենդ ծասկած։ Հիշքան չըրշարվըմ ա, կարըմ չի պեց անի։

Տա ըտեղ մին խիլլա՛ կըենըմ ա։ Թաքավերին ախճիգյը էլհա ա՛րաղըմը տրեսնըմ ա, վըեր Ավետիսը նըեղ տրեղ ա։ Նա փոշտալյոն յըղոնեգյին մոտ ա տամ, թա. «Տար»։ Էտ մոտը Ավետիսը կոխըմ ա պըլանուն ծակը, տոնա օնըմ, տրեսնըմ էնա պըլանուն թա՛հրը յրան։ Էտ մոտը տամ ա յըղոնեգյին։ Յըղոնեգյը դա՛ստի պերըմ ա, տամ Թաքավերին ըխճըկանը։ Թաքավերին ախճիգյը, տանըմ ա դամոնըչուն ղակազ տամ, վըեր էտ չափսավը մին պըլանի շինի։ Պըլանին շինիլանը ետը, յըղոնեգյը պըերըմ ա, տամ Ավետիսին։ Ավետիսը ամարաթին տո՛ռնը պըեց ա անըմ, նի մընըմ տրեսնըմ ըտըեղ էտ ջադու պառավը աղոթկ ա անըմ։ Ավետիսը ըտրանա հըրցընըմ ա, թա հո՞ւնց բիդի ուրան հորը քյինի, հո՞ւնց ուրան սիրածին արժանանա։ Էտ ջադու պառավըն ասըմ ա. — Քու հա՛ր էն ա էն մին սարեն կըլխին։ Ինք առ էս թեփուռը, տար քսի ընդրա վըեննեերին տակին վըեղին, ետավ տիր ընդրա քըթին տակին, ծրեռաց սըղանալու չա, եր կըենա։

Էն ըխճըկանը հետի էլ մին ճըվարան հաղուղ ըմ տամ, կըեսը սրեվ, կըեսը սիպտակ։

Սրեվ հաղուղը թաքավերին կտաս օտի, վըեր լհա՛ օտի, դա՛ստի կըլխին յրան ա կաղնելու, ղաչանք ա ընելու, վըեր ազադիս։ Կասիս. — Խոսկ տո, վըեր ախճիգյըտ ինձ կըտաս, քյըեղ ազադիմ, վըեր խոսկ տա, սիպտա՛կ հաղուղան կտաս օտի։ Վըեր օտի, եր ա կըենալու, դո՛ւզ կաղնի։

www.naregatsi.org

Ավետիսը չըրչըրվելավ, մին թաՙհրաՙվ քյինըմ ա, պըցրանըմ էն սարը, ըշտեղ ուրան հաՙրըն ար կապած, չուրացած։ Տա ըտեղ լոխ հըրեշտակներին կըտորըմ ա, ետավ թրեփուտը քըսըմ հորը վրեննին տակին վրեղը, ետավ յոր օնըմ, տինըմ հորը քըթին տակին։

Հաՙրը եր ա կրենըմ, տրեսնըմ տըղան եկալ ա ուրան ազադալ, լաց ա ինում, ըսկսըմ ա տըղին պըչալըչորիլը... Ասըմ ա.— Բալաս, տու համ քու հոր օչաղը վառ պըհեցիր, համ էլ քու հոր ըզըդեցիր։

Ըտրանք ետ ըն տրեռնըմ, կյամ տոն, տրեսնըմ մին օրիշ թաքավերի տըղա եկալ ա, թա էտ ախճիգյը օզի։ Ավետիսը նաՙզիրին ըխճըկանը անավ սրեվ հաղուտը ղըրկըմ ա թաքավերին հետի, գյվաՙքյիս թա վրեր օտի, գյանքը էրգյան կինի, քանի վրեր սրեվ աշխարքան ա պըերալ։

Թաքավերը օտիլը նըբաստ կըլխին յրան տընգվըմ ա։ Հիշքան ծիքյ ըն տամ, կարըմ չըն, թա պոլան պուք տան։ Տա հըրամման ա տամ, թա.— Հու վրեր ինձ ազադի, ախճիգյըս ընդրան ըմ տալու, թաքավերոթունիս կեսն էլ նըրհետը։

Ավետիսանը կըման, վեշ մինը կարըմ չի ըտրան պուք տա։ Նա քյինըմ ա պալատը, սիպտաՙկ հաղուտին ճիթը մուտրըցընըմ թաքավերին պըրաՙնաՙն։ Թաքավերը օզըմ ա թա եր կրենա, ամմա Ավետիսն ասըմ ա.— Չէ, հաՙլա իմ թոխկաս տո, ետավ։

Թոխկան, պերըմ ըն տամ ուրան, յոր օնըմ մրեշկը կապըմ։ Սիպտաՙկ հաղուտին ճիթը մին խրեգյ էլ ա մուտուցընըմ, թաքավերն օզըմ ա եր կրենա։

Ասըմ ա.— Չէ, հաՙլա թուՙթաՙգյըս նան փափաղըս էլ պերիք ինձ տվիք, ետնան։ Պրերըմ ըն թուՙթաՙգյը նան փափաղը տամ ուրան։ Ավետիսը մին խըրեգյ էլ ա սիպտաՙկ հաղուտին ճիթը մուտուցընըմ թաքավերին պըրաՙնին։ Թաքավերը օզըմ ա, թա եր կրենա։

Ավետիսըն ասըմ ա.— Չէ, հաՙլա ախճիգյըն էլ պերիք ինձ տըվիք, ետնան։

Քյինըմ ըն ախճիգյըն էլ պըերում ուրան տամ։

Ավետիսը սիպտաՙկ հաղուտին ճիթը կոխըմ ա թաքավերին պերանը։ Թաքավերը օտըմ ա, եր կրենըմ, տրեղը կաղնըմ։

Ըտրանա ետը ուրան ախճիգյըն էլ ա տամ Ավետիսին, թաքավերոթունին կրեսն էլ։

Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ։

Ըտրանք հասին ուրանց մուրազին, տուք էլ հասնիք ծրեր մուրազին, ա՛յ բալեքյ...

www.naregatsi.org

18. ԱԼԱՄ ԹԱՔԱՎԵՐԸ

Ինձամ ա, չինձամ մին շատ մրեծ, անըմը աշխարքավրս մին եր իլած թաքավեր։ էտ թաքավերին անըմը Ալամ ա ինձամ։ Ալամ թաքավերը մրեծ երգչիր, շատ զորք օնար Հընդըստանա սահմաննեըումը, ինքն էլ ժողովուրթաւեր ար։ Ժողովուրթն էլ ձրաձն ար սիրում։ Թըշնամին մուտացած վախտը ժողովուրթը թողում չար, վըեր նի մըննի ձրաձնց երգչիրը, յա ձրաձնց թաքավերին վրեննը փոշ նի մըննի։

Ալամ թաքավերը հաչլա տրեսած չար, վեր թշնամին վրեննը տինի ձրաձն վրեղումը։ Նա սիրում ար ձրաձն հայրենիքը, ձրաձն ժողովուրթը։

Շատ վախտ Ալամ թաքավերը շորերը փոխած քինում ար ձրաձն ժողովուրթին մաչը ման կյամ, տրեսնա ժողովուրթը հո՞նց ա ապրըմ։

Մին գոնըմ էլհա շորերը փոխած, ձրաձն վեզիրներին նհետ քյինձամ ա, վեր ձրաձն երգչիրին սահմաննին տրեսնա, ժողովուրթին տրուրթունը գյիդա։

Հունցու ամման վախտ, էս գոնըմըն էլ ձրաձն խաթուն անըմավեր կընգանը նստրցընում ա կահին յրան, վեր միչև ձրաձն կյալը ղեկավարի։

Շատ ըն քյինձամ, թա խրեգյ ըն քյինձամ, շատը նան խըրեգյը ձրաձնք ըն գյուդձամ, օրերան մին օր հասնըմ ըն ձրաձնց երգչիրին սահմաններին։

www.naregatsi.org

Ալամ թաքավերը ուրաշն վեզիրներան մինին՝ Թուրամին, ղարկըմ ա մին մոտի շենում քըշերը կընալու տըեղ քիթնի։ Թուրամը միչև տափը կլըխ տալավ օզըմ ա, թա քյինի, Ալամ թաքավերըն ասըմ ա. — Թուրա՛մ, տըես, լոխճան քյաուիբ տոն կքըթենաս հա՞...

Թուրամն ասըմ ա. — Թաքավերն ապրած կենա, ծառա յըմ հրամմանիտ։

Մըհեկ թաքավերին թողինք ըստըեղ, տեսնանք Թուրամը թո՞ր ա քյինում։ Ըտեղ մին մոտիկ շեն կար բաղերի, արտերի մեչին զոռավ ար ըրևում։

Թուրամ վեզիրը քըշերվա կըեսին ման կյալալավ կյամ ա ըտեղ, վերչը մին խեղճ, պառավ կընգա ճարում։ Էտ պառավ կնեգյը վեչ խոխա օնար, վեչ էլ մարթ։

Թուրամը ըտրան ասում ա. — Ա՛ նանի, ասծու խեղճ մարթիքըն ընք, ղարիբ տըեղա եկած, տոն չօնինք, տեղ չօնինք, թող էս քըշեր տանըտ կենանք, հիշքան քըրեհն ա, կըտանք։

Պառավըն ասըմ ա. — Դե, վերթի, ղոնաղըն ասծունն ա, ամմա հի՞նչ արած, վըեր ծըեզ հարմար տոն, տըեղ, յորղան-դոշակ, հաց նան ճուր չօնինք։

Թուրամ վեզիրն ասըմ ա. — Նա՛նի, վեչինչ, մունք քու ասած մարթկանցան չընք, թաքյ լըհա էս պուճուր օթախը ինի, մին քյունջում յոլա կքյինինք։

Պառավըն սուրը եր ըծելավ ասըմ ա. — էն Ալամ թաքավերին արևը, էն իմ մադար տըղիս արևը, վեր կորալ ա վրեննավ-ծըեռքավ, տըեղ չօնիմ, հնարը-ճար չօնիմ, ապրուստ չօնիմ, յըես մին խըեղճ կնեգյ ըմ։

Թուրամ վեզիրը ընդրա խոսկը շաքյարավ կըտրելավ ասըմ ա. — Վեչինչ, նա՛նի, մունք քյըեզ հաց, փող, հինչ ասիս կտանք, մինակ թող էս քըշեր օջաղիտ կոխկին կենանք, էքյուճ ուտուբանա էլհա կըքյինինքյ։

— Ա՛ վերթի, դե վեր իտի յա, եկեքյ, ամմա ավել-պակասը կբախշիքյ։

Թուրամը քյինից Ալամ թաքավերին կոշտը, լոխ նաղլ ըրավ։ Մըթնըքըշեր ար։ Ընդրանք մին թաւհրաւ եկին էտ պըռավին տանը քըշերը կըենան։ Պառավը գյուդում չար, թա ըտահանք հուվ ըն։

Ալամ թաքավերը ըսկսից պըռավին նհետ զուրուց անիլը։

— Ա՛ մար, էտ խե՞ տըղա, ախճիգյ չօնիս, վեր քյըեզ պահին, էսքան քյաուիբ չի ինիս...

www.naregatsi.org

— Ա՛ վրեննը պարի ղոնաղ, մին մաղար տըղա յա իլալ, աստվածՔյըհղ էլ պահի, ընդրան էլ։

— Բա տըղատ հո՞ր ա։

— Շունտանց ա կորալ, գյուդում չըմ սաղ ա՞, սեյրու վա՞, մինակ քըշեր, ցիրեկ, ըրտասունքըս ըշկերիս ասծծուն աղոթկ ըմ անըմ, վեր բալիս չարից, փորցանքից հրեռու պահի, վրեննը քարին նի չի կյա, էն սուրփ Սարքսիսին ծիլին վրեննին տակին բալիս թըշնամիքը փըչանան, բալաս էլհա սաղ-սըլմաթ կյա ուրան հորը հանգյած օջաղը էլհա վառի։ Դե այանը ծրեղ մատաղ, ա ղունուղնե, խոխաս հալա ջահիլ ար, քըսան տըրեկան, եշողը գյուդում ար, թա մին սար ա ընդեղ կաղնած, թեզյունքը լեն, ճակատը լեն, իրեսը ղաշանգյ, հենց ար լհա մին թաղա պլլորած լուսնինյգա ինի, աշկերը սև-սև, ասիս լհա հաղուղի գյլա, եշուղըն ասըմ ար. «Ներա՞կ քու մո՞ր, դե մըհեկ հոր ա՞, ինձ տո, քյըհղ տամ»։ Մարթս էլ խոխիս խըտետն առած մըհռա՞վ։ Մըռնելիս էլ ասից. «Ա՛ կընեգյ, խոխիս աշկաթող չանիս, լավ կպահիս», ասելըն նան էն անմեղ հոգին փըշիլը մին ըլա՞վ։ Յըրես նան իմ նախշուն բալաս, իմ էն սարերի արծիվըս, մընացինք մինակ։ Հիշքան կարըմ ի, հիշքան օժս պատում ար, օրիշի հետի կործ ընելալ բալիս պահըմ ի։

Աստուծ ծրեղ էլ գյանք տա՞, մըեր Ալամ թաքավերին էլ, քյասիբներան օխտը տարով խարջ չի յոր օնըմ, միշև ընդրանք պատառ հըրուատանան էն միներին հասնին։ Դե, յըրես էլ չըմ խարջ տըվալ, իտի ապրում ինք բըլես նհետ։ Հենե էն պըտըհանըմը մին ղաշանգյ, մին հունրունփաւրի ըխճըկա պատկեր կա, հի՞նչ ախճիգյ, մին լուսնընգյա՞, մին մարալ-ջեյրա՞ն... էտ ախճիգյը ապրըմ ա օխտը ծովի մեչի մին պուճուր ցըմաքում, ուրան ղուլլուղչոցավը, ուրան գյադոցավը, ղարավուլչոցավը, ուրան պալատումը։ Ասըմ ըն, թա շատ տըղերք ըն քյինացալ, թա էտ ախճիգյը օզին, լավ-լավ քաջ տըղերք, ամմա էտ ախճիգյը վեշ մինին հավան չի կացալ, հըրամմայալ ա, լոխճին նի յըն ածալ ծովը։ Բալաս ըշտըղան-ըշտեղ էտ պատկերը տեսնում ա, սիրահարվում։ Մին օր բալաս եկավ, աշկը-ունքը յըրա պերած, ուրուր տըված, վեչ խոսում ա, վեչ ծրծաղում, լհա ղու ըրած ա՞խ ա քաշում։ Մին առավոտ էլ ինձ մնաք պարով ասից, քյինից։ էն քյինիլըն ա, վեր քյինից։ էն օրանը ետը վեչ խաբար կա, վեչ կինի։ Մընացալ ըմ իստի խըեղճ, անդեր-ընդերու, օրվան հացըս ղոռալ ըմ ճարըմ։

Էտ պառավ կնեգյը ուրան տըղին նաղլը ըրավ, պըրծավ, էլհա ախ քաշից, ըրտուսունքնին չուրացած իրեսան սրփից, ետնան եր

www.naregatsi.org

կացավ, քյինից պըտըրհանան էտ պատկյերը պերավ, նշանց տըվավ թաքավերեն։ Ալամ թաքավերը մին լավ եշից էտ պատկյերին, ետավ ասից. — Էս հի՞նչ հրաշկ պատկյեր ա, սա հողածին ա՞, թա՞ երգյինքան ա եր եկալ։ Ըստրան լայըղ հո՞ւ կինի՞...

Ալամ թաքավերը մըթկըմը տիրավ, վեր հինչ էլ ինի՞, էտ ըխճըկանը ուրան տըղին հետի օղի։ Ետնան մին հափուռ վրեսկե փող տըվավ էտ պառավ կընգանը, քաշվից մին անգյունն։ Թաքավերին գյաբան փըռեցին ընդրա հետի, նա յրան թեքյ ընգավ, ամմա կարից վեչ աշկը հոփ օնի, քոն ինի։ Հաչա լուսը պեցված վե՞չ, թաքավերը ուրան վեզիրներին նհետ պառավին տանան քյինից։ Պառավը էտ փողերավը լավ տըներ շինից, լավ ապրուստի տեր տըեռավ, գյուդում ար, թա տըղան կյալու յա։ Ալամ թաքավերը էլ վեչ մին տըեղ վրենը կախ չըրավ, վեչ մին տըեղ չի քյինից, թուշ քյեցավ ուրան պալատը, կահին յրան նստից։

Նա քըշեր-ցիրեկ մըտածում ար, թա կործը հո՞նց փըռնի, վեր ամալ կյա, վեր վերչը լավ ինի։ Շատ քնենքյ ընելանը ետը, ուրան կոշտը կանչից ուրան մադար, աշկին սըվըսիպտակ՝ Ալմա անըմավ տղին։

— Ա՛ վերթի, անգուճ կալ, աշխարքըմըս մահ կա, մրեռնիլ կա՞, վեչ մինը ըտրանա կարիլ չի փախչի, եք քյըեզ փըսակիմ, քանի հաչա աշխարքըս ծրեռքիս ա, քանի հաչա ծրեռքըմըս ղըվաթ կա, զոռ կա՞։ Քու հասակըտ էլ հըսալ ա, օզըմ ըմ տրեսնամ քու հըրսանիքըտ, օզըմ ըմ թոռներ տրեսնա՞մ... Քյըեզ հետի մին անըրման ախճիգյ ըմ ճարալ... Տուբըդի ընդրան հարսնացու յոր օնիս, նհետը փըսակվիս։

Էտ ըսելանը ետը տըղին նշանց տըվավ էն պատկերը, վեր էն պառավ կընեգյը ուրան ար տըվալ։

Տըղան վեր էտ նկարը տրեսավ վե՞չ, խրեգյ մնաց, թա կյիժվի։ Ուրան մին թաՀրալ պահից, միչև տափը հորը առաչին կլոխը քըշըցըրավ, սուս ու փուս տուն եկավ։ Հաչրը դաստի գյիդաց, վեր տըղան ռազի յա, ամմա հըմանչում ա ասի։

Էն մին օրը Ալման քյինից թաքուհի խաթուն մորը կոշտը։ Հորը ասածնին լոխ նաղլը ըրավ, ետնան մորը զաչանք ըրավ, վեր հորն անա յոր օնի էն ըխճըկանը պատկերը, պերի ուրան տա։

Թաքուհին էտ պատկյերը եր կալավ, տրեսավ, էտ ըխճըկանը սիրից, հունց վեր ուրան հըրսնացուին, ետավ տարավ տըվավ տըղին։

Ալման քըշեր-ցիրեկ քոն չօնար, վեչ հաց ար օտըմ, վեչ ճուր խմըմ, օրկանցօր մաշվում ար, էն պատկերին եշելավ նա քնենքյ

www.naregatsi.org

ար անում, թա տըեսնաս էս ախճիգյը ըշտե՞ղ ա՛, երգյինքան եկած ա, թա հողածին ա։

Մին օր էլ թաքավերը կանչից տըղին, ասից.— Ալմա՛, վերթի, դե հըղըրվի, վեր քյինիս ման կյա՞ս, հըրանըցուիտ ճարիս, պերիս։

Ալման օրախուբռունան գյուղում չար, թա հի՞նչ անի։ Կըլոխը քաշ քըցից, հունցու խոնար ծառա, հորը աչ ծըեռքը պաչից, տո՛ւս եկավ։

Էտ օրը Ալման, հորը խաղնա՛, դափնա օներ, էտ խաղնիցը եր կալավ շատ վըեսկե, անկյին քարեր, զենքը-զըրահ, մին լավ ծի, մարն էլ հրամմայից լավ պաշար պըդրաստին։ Ետնան Ալման եկավ հորը կոշտը, հորը օրթնանքը ըստանա։

Հա՛րը օրթնից տըղին, համ էլ ասից.— Ա՛ վերթի, ճընապարըտ պարի ինի։ Մըեղ մըտատ քըցիս վեչ, համ էլ մըտատ քըցիս վեչ, վեր տու թաքաժառանգյ ըս։ Խոնար կը կենաս, լավ անըմ կհանիս, թաքավերին տըղին լայըղ անըմ։ Մին կործ վեր օղիս փըռնիս, օխտը չափի, մին կըտրի, առաչ մին լավ մըտածի, ետավ ըրա։ Տու մինա՛կ ըս քյինո՛ւմ, մըեր օջաղին օրենքյը իտի յա, վեր մին պեն հիշտ ինի, տըժեր ինի, հախտիս, թա հաշտվիս, մինա՛կ տու քու օժավըտ անիս։

Հա՛րը օրթնելանը ետը, թաքուհի մարը օրթնից, արտասունքը աշկերըմը, ասից. — Ա՛ բալա, թող իրեսըս տինիմ քու վըեննիտ տակին։

Տըղան պըցըրցըրավ մորը, ասից. — Ա՛ մար, լա՛ց մի ինիլ, մինա՛կ աղոթկ ըրա ինձ հետի։ Մարը տըղին թշերան պաչից, Ալման մին էլ մուտացավ հորը ծըեռքը պաչից, մորը խըտետան ընգավ, մարը պըչպըչորից տըղին կըռըզնոտ մազերը, ճընապար տիրա՛վ։ Ծառնքը չորս ղոլավը տըեռած տո՛ւս եկին պալատան ընդրան միչև քաղաքին դըրբըզան տարին, ետ եկի՛ն։ Ալման քյինո՛ւմ ա, քյինո՛ւմ, ինքն էլ չի գյուղում, թա ըշտեղ, վերչը մին օր կյամ ա, հրանում մին հենց տեղի, ըշտըղան իրեք ճընապար ա ըսկըսում։ Էտ իրեք ճընապարին պըժանման տըեղը նստած ար մին պառավ մարթ։

Ալման ընդրան պարյօր տըվավ, ասից. — Պա՛պի, պարով։

— Աստծու պարին, պարով, հազար պարի յըս եկալ, ա՛ բալա։

— Պա՛պի, էս ճընապարնին ըշտե՞ղ ըն տանում։

— Բա՛լա, էս ճընապարնին հիշքան համ էրգյան ըն, համ անծանոթ, էնքան էլ էրգյան պատմութի՛ւն օնին։ Տըե՞ս, էս մինը առաչին ճընապարն ա, էս ճընապարը տանում ա դիբի օխտը ծովին հո՛ւրու-փարին։ Էրկունջի ճընապարը տանում ա կյերի մարթկանց աշխարքը, իրեքինջի ճընապարը տանում ա դիբի մըթեն ծըմակնե,

www.naregatsi.org

խոր-խոր ծառեր։ Առաջին ճրնապարավը քյինացալ ըն շատ շատերը, ամմա ետ չըն տրեռալ։ Էրկունչի ճրնապարավը քյինում ըն, քիթնին կորած կյերինեռին։ Քու պապ, շատ կըռվարար մարթ ար, նա բազի վախտ հախթում ար, բազի վախտ էլ կործը տանիլ ար տամ։ Վերչի դինըմը կարից վեչ հախթի, ուրան ղորքը սաղ կյերի քըցից, ինքըն էլ էտ ճրնապարին ըսպանվից։ Հենե հա՜, ընդրա կյըրեզմանը, տրե՜ս, յըրան փոշ ա փըսալ։ Իրեքինչի ճրնապարը տանում ա դիբի էս աշխարքաս զըրկված, ուրան գյանքումը մին լավ օր չըտեսած մարթիքյը։ Էտ մարթիքյը կոզի մին ծրետ էլ չըն ըսպանալ, կոզի մին մըրչեմնը էլ չըն կոխ տրվալ, ամմա չար մարթի ծրեռքա, չար մարթի լուզվա փախալ ըն, ընգալ խոր-խոր ծառեր, արևին լուսին կարոտ, գյանքա զըրկված, հիվանդ, էտ ծառերըմը ջանավարներին ճանգյըն ըն ընգալ։

— Շունրակալ ըմ, պա՛պի, յըես պիտի քյինիմ էն օխտը ծովին մեչին էն աննըման ըխճըկանը հետան։

— Դե, ա՛ բալա, քյըեզ հի՞նչ ասիմ, կըլնախտ շատ օյին ա կյալու, տու ջահիլ ըս, ջահիլին կըլխումը հալա կյիժ քամի յա ընում, տու կարիլ չըս էտ կախարթ ըխճըկանը պիրիս, տու հի՞նչ ըս գյուդում ընդրա կըլխըմը հի՞նչ կա՜։

— Չէ՛, պա՛պի, յըես պիտի քյինամ, վեր մըռնիմ էլ պիտի քյինամ։

— Դե, քյինա, բալաս, աստված քյըեզ նհետ։ Ամմա տրեսնում ըմ շատ ըս նըղացած, եք ինձ անգուճ կալ, ըսօր մընա մըեր տանը, էքուճ ըռավոտը շուտ կըքյինիս։ Հենե՜ ընդեղ ժողովուրթը հրվաքված առտուր ա անըմ, ընդեղ բազար ա, միկա քյինի շոռ եք, տրես ընդեղ հի՞նչ կա, հի՞նչ չիկա, հի՞նչ պեներ կա, վըեր հալա տու տրեսալ չը՜ս։

Ալման ռազի կացավ, քյինից բազար։ Ընդեղ թաղա պեներ տրեսավ, թաղա ըպրընքնե, թաղա մարթիքյ, լհա օզըմ ար, թա բազարան տուս կյա, տրեսավ մին քյասիբ մարթ, մին ղաշանգյ յաշիգյ շըլակած ծրեն ա տամ.— Ա՛յ լավ յաշիգյ, ա՛յ լավ յաշիգյ, համ առնողը փրեշման, համ ծախողը փրեշման, լավ յաշիգյ։

Ալման մաթ մընացած հըրցրավ.— Ա՛յ մարթ, էտ հի՞նչ յաշիգյ ա, վեր համ առնողըն ա փրեշման, համ ծախողը, բա իտի առտուր կինի՜... դե, հինչ կինի՜, կինի՜ պեր առնիմ, կըտանիմ տամ էն պապին, վեր քըշերս տանը կենալու չըմ։ Դե ասի տրեսնամ քա՞նի յա՜։

— Հունցու օգիս, ա՛ ջահիլ։

www.naregatsi.org

Վերչը Ալման մին վրեսկե յա տամ, յաշիգը յոր օնըմ, տանըմ էն պառավ մարթին տոնը։

Սաղ օրը յաշիգը պեցին վեչ։ Ուրուգյունը լհա նոր ին նի մըտալ տեղերը, վեր էտ յաշիգին զընդոցը եկավ, յաշիգը պեցվից, ընդրա մեչան մին պառավ մարթ տուս եկավ, բոյը՝ մին մետր, մըրոքը՝ էրգյան, էրկու մետր, մին կացին էլ կյոտկըմը։ Ալման նան էն պառավ մարթը խիլլա վրեսեցին։

Ամմա էտ մարթը հանդարդ մուտացավ Ալմին՝ ասից. — Իմ անըմըս Կուպլիկ ա, յըես քյըեզ ծառա, հինչ ասիս, հինչ օժատ վեր ա, յըես կկատարիմ։

Ըտեղ Ալման տրեսավ, վեր ըտրանա ջամբար չիկա, խոսկ տըվավ, պայման կապեցին, վեր ուրուր նհետ լավ ինին, ուրուր հավադարիմ ինին։

Էն մին օրը Կուպլիկը նան Ալման ճընապար ընգին, քինաձին։

Կուպլիկը համ էտ ըսեճըկանը տրեղն ար գյուդում, համ էլ ընդրան մին հետ տրեսալ ար։

Ըտրանք շատ ըն քյինում, խրեգյ ըն քինում, հասնըմ ըն էտ ըսեճըկանը պալատին։

Կուպլիկն ասըմ ա. — Ա՛լմա, յըես քյըեզ սըվըրցընիմ, թա տու հունց բիդի էտ ըսեճըկանը քու մրեթկըտ հրսկըցընիս։ Վեր պըցրանաս պալատը, էտ ախճիգյը դաստի գյիդալու վա, վըեր տու ուրան ուզելի յըս եկալ։ Նա հրամմայելու ա ուրան ծրոտանցը, ասի. «էտ ջահիլ տըղին տարիք պատիվ տվիքյ։ Ծառեքը գյուդում ըն, թա էտ խուսկերքավը նա հինչ ա ասըմ։ Քյըեզ պըցըրցընելու յըն լոխճան պրեցուր պալատը, ընդրղան քյըեզ ծովն ըն քըցելու։ Նըհախ տրեղան վեր տու մրեռնիս վեչ, կասիս. «Շունրակալ ըմ, յըես պատիվ չըմ օղըմ, յըես քյըեզ ըմ օղըմ»։ Վեր իտի ասիս, նա կդյիդա, վեր տու ուրան օզելի հետի յըս քյինացալ։

— Լավ, Կուպլիկ, իտի կասիմ։

Ընդրանք նի մըտին պալատը, մարմար փալաքյաննեռավը պըցրացին ըսեճըկանը օթախը։ Հալա միչև էտ, ըսեճըկանը ծառեքը ասալ ին, վեր մին տղա յա կյամ, էտ ախճիգյն էլ թողալ ա, վեր կյա։

Ալման էտ արմաղ-շարմաղ ըսեճըկանը վեր տրեսնում ա, օզըմ ա, թա օշը տանի, եր ընգնի, գյուդում ա, թա ըրազըմն ա տրեսնում։

Էտ ախճիգյը վեր տրեսնում ա իտի յա, հրամմայում ա ուրան ծառաներին, ասըմ. — Տարեք, էտ երիտասարթին պատիվ տըվեք։

Ալման կարըմ չի վեշ մին պեն ասի, լհա աշկը քըցած էտ ըսեճըկանը աշկը, մընում ա սառած, կաղնած։ Ծառեքը ըտրան պըցըրցը-

www.naregatsi.org

նում ըն էն պեցուր տրեղը, ընդրղան ծովը քրցո՞մ։ Կուպլիկն էլ էն սրհաթը ուրան ծովըն ա քրցըմ, մին թահրավ Ալմին ծովան հանըմ, տանըմ պալատին քրշտին մին կանանչ տեղ տընում։

Վեր օշը կըլոխըն ա կյամ, Կուպլիկն ասըմ ա. — Բա յրես քյրեզ ասեցի վե՞չ, հինչու յրես ասըմ, ինդի ասի...

Կուպլիկը իտի յա ասըմ. ետնան Ալմին մին լավ չըմփալախ տամ։

Ալման ասըմ ա. — Լավ, էլ մըտաս քրցիլ չը՞մ։

— Դե տրես, Ալմա, էս դոնըմ վեր քյինիս, կասիս, հինչու յրես քյրեզ ասալ ըմ, թա չէ, նա թաղաղան քյրեզ ծովը քրցիլ կտա։

Ալման մին էլ պըցրացավ էտ ըխճըկանը պալատը։ Ծառեքը մին էլ քյեցին էն ըխճըկանը ըսեցին։ Ախճիգյը հըրամման տըվավ, վեր թողին կյա։ Ախճիգյը զարմացալ ար էտ տըղին ղոչաղ ինիլան, ընդրա սըերտը սեր ար ընգալ։

Ախճիգյը ընդրանա հըրցրավ, թա. — Հի՞նչ ըս օզըմ իմ պալատաս, բաղքյաս իմ ղուլլուղչիներաս մինին ըս օզում, բաղքյաս վըեսկե յըս օզըմ։

Ալման էս դոնըմ իրեսը պեց ասըմ ա. — Յըես համ շատ վըեսկե օնիմ, համ էլ շատ ղուլլուղչի կա մըեր պալատումը։ Յըես եկալ ըմ քյրեզ ուզելի հետե։ Լըսալ ըմ, թա լոխճին ծովը քրցիլ ըս տամ, ամմա յրես եկալ չըմ, վեր ծովըն ընգնիմ, յրես եկալ ըմ ասիմ, վեր քյրեզ սիրըմ ըմ, եկալ ըմ քյրեզ տանիմ։

Էտ ախճիգյը էլ կարըմ չի մին խոսկ ասի, տրեղան եր ա կըենում Ալմին ծրեռքան փըռնում, անըմը հըրցընում ետնան ասըմ. — Ալմա՛, վեր տու ինձ սիրըմ ըս, պիտի ինձ նհետ ըստեղ մընաս, իմ օխտը ծովերիս թաքավերը տրեռնաս։

Ալման «չէ» յա ասըմ։ — Յըես հայրենիք օնիմ, թաքավեր հեր, թաքուհի մար օնիմ, ընդրանք ինձ ըն ըսպասում, ինձ ա ըսպասում թաքավերին կահը, մըեր ժողովուրթը։

Ախճիգյը ռազի յա կըենում։ Կուպլիկին կանչըմ ըն պալատը, մին լավ օթախ տամ։ Ուրանք էլ պալատին լոխճան լավ օթախնեըրմը օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ։

Ըտրանա ետը պադրաստվում ըն՝ ճընապարվին։ Ախճիգյը կանչըմ ա ուրան ծրեռտանցը լոխճին, արտասունքը աշկերըմը ասըմ։ — Դե, մնաք պարով, իմ պալատըս էլ, կահըս էլ, իլիծ-չիլիծս էլ, լոխ ծրեզ ըմ տամ, յրես քյինում էս քաջ տըղին նհետ։ Դե թա ետավ հի՞նչ կինի, գյուդում չըմ։

Հիշքան էլ ծառեքը ղաչանք ըրին Ալմին, վըեր քյինի վեչ, ամմա Ալման ուրան ասածը ըրավ։ Ընդրանք հրդէ իլին դիբի ուրանց տոն։

www.naregatsi.org

Շատ քյինեցին, թա խըրեգյ, վերչը հըսին ընդեղ, հիշտեղ էն պառավ մարթը նըստած ար։ Իրեք ճընապարին տըեղը։

Էտ պառավ մարթը մնացալ ար զարմացած, թա հունց ա Ալման էտ ըխճըկանը պերալ։ Նա շընհավեր ա անըմ ընդրանց փըսակը, Ալման ծիյան եր ա կյամ, էտ պառավ մարթին ծրեռքը պաչըմ, մին էլ ծի յըն նստում, քյինում։

Քյինըմ ըն, քյինըմ, վերչը հըսնըմ ըն ուրանց թաքավերոթուն։ Կուպլիկը ճընապարին կորչըմ ա։

Խաբարը տանըմ ըն Ալամ թաքավերին, թա տըղատ կյամ ա, մին հուրու-մալագյ էլ նհետը։ Ալամ թաքավերը օրախոթունան ուրան խաղնին տըռները պըտց ա անըմ ժողովուրթին առաչին։

Խաբար պերողներին մուշտըլուղը անկյին քարեր ար։

Ալման նան ուրան թաղա հարսը կյամ ըն պալատին առաչին կաղնըմ։

Թաքավերը նան թաքուհին տունա եկին ընդրանց տարին պալատ, կըլխըներին վրեսկե, անկյին քարեր շաղ տըվին։ Ժողովուրթը հարուստացավ, լոխ ուրախացին։

Ալամ թաքավերը հրամմայից ուրան վեզիրներին, վեր հըրսանիքի պադրաստոթուն տըեսնան։

Հըրսանիքը ըսկըսվից, շատ ղոնաղնի էլ ին եկալ օրիշ երգյիրներա։ Ըստողնին ամմեն հինչավ լիգյը, օտել-խըմե՞լ, հինչ ասի՞ս...

Թաքավերին պալատումը ապրում ար Ուրան անըմավ մին վեզիր։ Էտ վեզիրն էլ մին տըղա օնար, անըմը Դևուկ։ Դևուկը վեր տըեսնում ա էտքան կյեղեցիկ հարսին, սիրում ա։ Հենց վեր սիրում ա, ուրան մըթկըմը տինում ա, վեր Ալմին ըսպանի, ինքը հարսին յոր օնի։

Հըրսանիքին իրեքինշի օրըն ար։ Էլհա սաղ ժողովուրթը օտըմ ին, խըմում, քյեփ անըմ։ Էն կանանչ դռուզերըմը մին վարար կյետ ար քյինում, կյարունքվա վախտ ար։

Դևուկը միշտ Ալմին քըշտին ար ընում նըստած։

Ասըմ ա.— Ա՛լմա, էս ա իրեք օր ա օտըմ ընք, խըմըմ, մըհեկ էլ եր կաց, քյինինք, մին լավ ծի քըշինք, կերածնիս մարսինք։

— Հի՞նչ ըմ ասըմ, քյինինք։

Ծառեքը լավ-լավ ծիյանք ըն պերում։ Ընդրանք նըստում ըն, քամու նման քըշռում, քյինում, համին էտ վարար կյետին կոշտը։

Խիլլա հեռու ին քըշալ։ Միյանքը քըրտնընքալ ին։

Ալման ասից.— Դե բոլ ա, ետ տըեռնանք։

Ամմա Դևուկը թողից վեչ։ Ալման ծիան եր եկավ Դևուկըն էլ։

www.naregatsi.org

ուրանք գյեղին մին խրեկ ման կյան կյետին քըշտին։ Կյետը շատ վարար ար։ Համին էտ վախտը Ալմին ծիյին կապը պեց ա ընգնըմ, ծին փախչում ա։ Դևուկը ուրան ծին նստում ա, գյվաքյիս թա քյինի Ալմին ծին փըռնի։ Էտ մունուտին էլ խանչալը հանըմ ա, թըխում, Ալմին կըլոխը կես անըմ։ Յետավ ծիյան եր ա կյամ, մեյիդը քյըցըմ կյետը, ինքը շորերը ճըրղոտելավ, կըլոխը թակելավ ետ տըեռնըմ։ Ալամ թաքավերը միչև էտ, տըեսնըմ ա, վեր տըղան կյամ չի՞։ Մարթ ա ղարկում հետան, վեր ետ տըեռնան։

Էտ ծառեքը տըեսնըմ ըն, վեր Ալմին ծին խըրխընջալավ ընգալ ա էն դռնզերը։ Ըտահանք կըլոխ ըն ընգնում, վեր մին պեն ա պըտահալ, ետ ըն տըեռնըմ թաքավերին ասըմ. թաքավերը մընըմ ա շշկըվածե

Ժողովուրթը ուրուր ա ընցնըմ։

Դևուկին ծառեքը քյթնում ըն, տափին եր ընգած։

Էտ սըտըսոտ լաց ինելավ, մազերը քանդելավ ասըմ ա. — Մունք էրկուսավ ծիյանցը կապան փըռնած ման ինքյ կյամ, բըրդան մին էլ տըեսնանք, մին մարթ կյետըն ընգած, կյետին քըշտի ծառին մին պըերակ ճըղնա փըռնած, օքնըթուն ա կանչըմ։ Ալման ծըեռքը մըեկնից, վեր ազադի, էտ մարթը Ալմին ծըեռքան փըռնից ազադվից, ամմա Ալման ընգալ կյետը։ Կյետը քըշից տարավ։ Էտ մարթը օզից ինձ էլ քաշ տա, տանի քըցի ճուրը, յըես թուրս հանեցի, ընդրա սըերտը կոխեցի։ Նա իտի էլ ընգալ ճուրը։ Յըես էլ գյուդում չի, թա հի՞նչ անիմ, ցավը ինձ էս օրը քըցից։

Դևուկը համ ասըմ ա, համ էլ մազերը քանդըմ, իրեսը ճըպռոտըմ, գյըվաքիս թա սըերտը շատ ա ցավըմ Ալմին հետի։

Ծառեքը ընդրան փըռնըմ ըն, տանըմ թաքավերին կոշտը։

Թաքավերն ասըմ ա. — Օցի ճոտ, իմ թաղա փըեսա բալաս հո՞ր ա, լոխ ասի, աշկերտ կհանիմ, լուզուտ կըկըտրիմ վեր ծոռ ասիս։

Դևուկը կարից վեչ խոսի, ծառոցը մինը, Դևուկը հինչ ասալ ար, նաղլ ըրավ թաքավերին։

Թաքավերը էլ համփերից վեչ, կանչից դահիճներին ասից.

—Տարեք ըտրան աշկերը հանեցեք, լուզուն կըտրեցեք, քըցեցեք մին նամ, մըթեն տըեղ։

Իտի էլ անըմ ըն։

Ալամ թաքավերը կանչից Դևուկին հորը՝ Ուրան վեզիրին, ընդրա լուզուն նան ծըեռքերը կըտորիլ տըվավ, քըցիլ տըվավ տըղին կոշտը, էն նամ, մըթեն տըեղը։ Հաըրըտըղա կարըմ չին ուրուր նհետ խոսին, հաըրը կարըմ չար տղին քյումաց անի, լհա թավիլ-թավիլ

www.naregatsi.org

ար անըմ տըղին վընաներին տակին։ Ըտրանք իտի ցավեր քաշելավ էլ մըեռին։

Հըրսանիքին չորսինջի օրը սաքի օր տըեռավ։ Թաքավերը նան թաքուհին սև կյեցին, թաղա հարսըն էլ սև կյեցավ։ Թաքուհին ուրան մաղերը կըտրից, սաքյ ըրավ, վրեղ ածից կըխլին, իրեսը չընդռտից։

Ալամ թաքավերը ուրան հարուստ պալատումը էն մըեկալ վեղիրներեն նհետ, ուրան կյեղեցկուհի հարսին ուրան ախճիգյ եր կալավ, կահը ընդրան տըվավ, ասից. — Անգուջ տիր, բալաս, մըհեկանց տենը էսքան ցավըդարդանը ետը, յըես շատ ապրիլ չըմ, իմ կահըս էլ, երգյիրըս էլ քյըեզ ըմ տամ։

— Չէ՛, յըես Ալմայից ետավ կարիլ չըմ էս լիգյը պալատներըմը ապրիմ, Ալմայից ետը, յըես օզըմ էլ չըմ ապրիմ։ Տու մըեծ, աշխարքիս տար թաքավեր ըս, կընստիս քու կահիտ հաստատ միչև վերչը։

Իտի յա ասըմ էտ հնուրի-փաշրին, տունս կյամ քյինում պալատին նրի քըեթը, ընդըղան ուրան քըցըմ տակը, մըեռնըմ։

Թաքավերին դաշրդերը միևը հազար ա տըեռնում։

Նազիր-վազիրնին կարըմ չըն, թա մին խոսկ ասին։ Ալամ թաքավերը էլ ուրան կահին, ուրան թաքավերական թախտին նըստում չի։ Տըղին նան հարսին ամմեն մին մընում մըեռը պահելի հետի, ուրան պալատին թաքավերական թախտին յըրան էրկու շատ զաշանգյ ծաղկաման ա տընում ուրուր կողքի, մեչին կուվում վարթեր, ամման մին վարթի յրա մին բունչըռնչ, էրկու օցի պունն էլ վարթին քըշտին։

Լհա վըեր բունչըռնչը երք ա ասըմ, էտ կուվում վարթերըն էլ հանդարդ ըրորվելավ օզըմ ըն ուրուր նի կյան, պըեցվին, էտ սև օցը պունանն տունս ա կյամ, վարթին ճըղներավը պըցրանըմ, թա բունչըռնչին կըծի, աղու տա, ըսպանի։ Էտ վախտը Ալամ թաքավերը հինչ դաղաստան էլ անելիս ինի, տղին նան հարսին մըեռն ա քըցում էտ մըեղավերնևրին էլ, լոխճին էլ ազադութուն տամ։

Ջարըն՝ ընդեղ, պարին՝ ըստեղ։



www.naregatsi.org



19. ԱՐՄԵՆԸ ՆԱՆ ԶԱՐՄԵՆԸ

Ինըմ ա, չինըմ մին շատ հարուստ թաքավեր։ Էտ թաքավերը ունրան կընգանը նըհետ ապրըմ ըն իլալ մին շատ ղաշանգյ, մարմարի աշտարակներավ, սունները սաղ վրեսկավ, թանգյակին քարերավ, մարջան-մարգարիդավ զարթարած պալատըմ։ Ընդրա սանդուղնին խաղնավ վրեսկավ, անկին քարերավ լիքըն ին։

Ամմա լոխճան ղաշանգյը ընդրա հունրի-փարի կընգյըն ար, զառխարա խաս շորերըմ, վրեսկըմ, պըռլյանդըմ կորած, ինքըն էլ մին ծաղիկ, պըտկան ծաղկած։

Էտ թաքավերը մին կյեղեցիկ, կանանչ բախչա օնար, սաղ ծաղիկնի, վարթեր, մեխակնի, օրիշ ծաղիկնի, լավ-լավ ծառեր, լոխ բար եր կալած, թընգյակին։

Դե հի՞նչ արած, վեր էտ հարստոթունին հետի ժառանգյ չի կար։

Ընդրանց սըերտը միշտ տըխուր ար, արտասունքը աշկերին։

Դե կոզի ասըմ ըն ամմեն հինչը մարթ փողավ կառնի, ամմա սուտ ա, դե եք ժառանգյը փողավ առ, թա օնիս վեչ, յա էլ եք հիվանդ մարթին փողավ ետ պեր, էհ լոխ սուտ ա՜...

Կարըմ ըս լհա ջահիլ վախտըտ մին օր տես, թա չէ լոխ սուտ ա։ Սերը սուտ ա, տերը սուտ ա, մին կա, մին կա վրե՞չ։

Մին օր ըտրանց պալատըն ա կյամ մին դարվիշ. սև-սընդաքար, քեթը կրեռ, պուզտի փափաղավ, մաշված, էրգան, չոր-չափ։

Կյամ ա պալատին հայաթը, մին քարի նստըմ, ասըմ. — Թաքավերըն ապրած կենա, վեր ծեր օրը օրախ անց կենա, ինք առ էտ

www.naregatsi.org

կյարմուր խրնձորը, կեսը տու կեր, կեսը թաքուհին։ Մրեզ էրկու տըղա կինի, մինը ծրեզ, մինը՝ ինձ։ Թա ռազի յըք, խնձորը եր կալիք, թա ռազի չըք, յոր միք օնիլ։

Թաքավերը նան թաքուհին ռազի յըն կրենըմ։ Էտ դաւրվիշը խրնձորը տամ ա ընդրանց, ինքը աշկա կորչըմ։ Էտ խրնձորին կեսը թաքավերըն ա օտըմ, կեսը՝ թաքուհին։

Անց ա կրենըմ իննը ամիս, իննը օր, իննը ժամ, իննը մունուտ, իննը սեկունդ, աստված ըտրանց էրկու տըղա յա տամ։ Մին խըրեզ մեծին անըմը Արմեն ըն տինըմ, ըտրանա պուճուրին անըմը՝ Զարմեն։ Ըտրանք վեչ թա ամիսներերավ, օրերավ ըն մըծանըմ, կյեղեցկանըմ, տրեռնըմ կյեղեցիկ տըղերք։

Մին օր, մին էլ ըն տրեսնըմ դաւրվիշը մըռխկված, պըճըճնած ունքերը ուռռուր տրված, եկավ, առանց խոսելի եր կալավ Արմենին, թա տանի։ Դե հի՞նչ անին թաքավերը նան թաքուհին։ Ընդրանց սըերտը շատ ար ցավըմ, լաց ին ինըմ, դե էլ օրիշ թաւհրը չիկար, խոսկ ին տրվալ։

Տանըմ վախտը թաքուն Արմենը Զարմենին ասըմ ա. — Զարմեն, վեր մեր բախչին վարթերը չուրանան, էն վախտը իմ հարայիս հըսի, հա՞։

Դաւրվիշը ըտրան եր կալավ, քյինից։

Արմենին հետան հաւրը նան մարը էնքան լաց իլին, վեր ընդրանց ըրտասունքը գյուլեր տրեռին։

Ըտրանց թողիք ըտեղ, տրեսնանք հի՞շտեղ տարին Արմենին։

Արմենին դաւրվիշը տարավ մին շատ հեռու հաւնդ, ընդեղ մին մեծ բախչա կար, բախչին մեչին մին ամարաթ։ Նի մըտին էտ ամարաթը։ Ամարա՞թ, հինչ ամարա՞թ, պատերը վրեսկե, պուլը շուշա, լոխ օթախնին լիքը աշխարքիս լավ-լավ պեներավը, սըրքերավը, օտելեղենավը։ Էտ դաւրվիշը մին կախարթական կավազան էլ օնար։ Ըտրանավ նա մարթկանցը քըցըմ ար թորենը, խըրավըմ, օտըմ։

Դաւրվիշը օզըմ ար Արմենին էլ քըցի թորենը, օտի։ Նա Արմենին թողըմ ա տանը, ինքը քյինըմ հեռու սարերան վըրի էծ վրերս անե, պերի, խրավածանի, ուտուցնի էտ տըղին, վեր քյուքանա, քյուքանալանը եսը, խըրավի, օտի։

Դաւրվիշը կյամ ա, մին լավ էծ վրերսած, օսավը քըցածա։ Թորենը վառըմ ա, պուլլաւրցնըմ, կյրմըրցնըմ, էտ էծը խրավըմ ըն, օտըմ։ Իտի Արմենը համ մըծանըմ ա, համ քյուքանըմ։

Մին օր էլ վեր դաւրվիշը քյինըմ ա էծու վրերսի, Արմենը էտ ամարաթին օթախնին շոռ ար կյամ, մին էլ ա տրեսնում, մին օթախի

www.naregatsi.org

պատի մեչի մին հիլի։ Բիրդեան էտ հիլուն մեչան մին թըրըխկոց լսից, տըեսավ էտ հիլուն մեչին մին ախճիգյ ըրվաց, մին հի՜նչ ախճիգյ, վեր օտիս վեչ, խմիս վեչ, ըտրան եչիս։ Էտ ախճիգյը ըտրան կըլխու յա քըցում, վեր դաւրվիշը օղըմ ա ըտրան օտի։ Հաւլա վեչ էս, վեչ էն, մին էլ տեսին դաւրվիշը եկավ, մին էծ նըհետը պըերած։ Էտ էծին աշկերը հենց ար լհա ծովին ճուրը, պոզերըն էլ հենց ար լհա կըեռ-կըեռ թորը, լհա պողվատ, լհա ալմաստ, հենց շըղշողըմ ար։ Տա էտ էծին էլ խրավից, կըերին, ետավ դաւրվիշը էլհա թորենը մին լավ կըծըցրավ, ըսկսից թոռնեն չորքըպուլլորը պար կյալը, Արմենին էլ կըլոխ տըվավ, վեր ինքըն էլ պար կյա, վեր Արմենին վըեննան էն կավազանավը փըռնի, ծիք տա, քըցի թորենը, խրավի, օտի։

Ամմա Արմենը գյուդում ար, էն ախճիգյըն ար ասալ, ըտրա հետի էլ ասից.— Դաւրվիշ բաբա, յըես ըսօրի էնքան ման ըմ եկալ, վեր նըղացալ ըմ, կարիլ չըմ պար կյամ։

Դաւրվիշը հիշքան կըլոխ տըվավ, ղաչանք ըրավ, թաւ նք, պար նք, Արմենը եկավ վեչ։

Ըտրանա ետը, ճարը կըտրած, եկավ նի մըտավ ամարաթը, ըսկսից զրուց անիլը։

Ջուրուցին վախտը Արմենն ասից. — Դերվիշ բաբա, յըես էլ ըմ օղըմ կյամ էն սարերը, յըես էլ ըմ օղըմ էծ վըերս անիմ։

Դաւրվիշը հաւլա առաչ օղից վըեչ, ետավ՝ ոազի կացավ։

Էքսը քյինում ըն վըերսի։

Էտ օրը շատ ման եկին, էծ չի քըթին։ Ինդի վախտը էծավ լիքը կիներ, ամմա էտ օրը կար վեչ։

Նտ տըեռնալիս տեսին մին կանանչ լենջի մին շատ կյեղեցիկ բախրա յա ըրածըմ։

Արմենը ծիյին նոխտան պեց ա թողըմ, ծին քըշըմ էտ բախրին հետան։

Էտ բախրան բախրա չար, մին ջադու պառավի ախճիգյ ար։ Տա ամմեն օր բախրի մորթի ար շոռ օնըմ, տունս կյամ, ջահիլ-ջըհնուլ վըերսկան տըղորց ուրան անավ անըմ։

Տա փախչըմ ա, նի մըննըմ մին մեծ, խոր կարան։ Արմենը ըտրա հետան կյամ ա, թա նի մըննի կարանը, մին էլ ա տըեսնըմ ուրան առաչին մին պառավ կըննեգյ, կըլխին յրան կաղնած պըռոշնին միչև տափը կախ ընգած, ծեռքին մին կավազան։

Էտ պառավ կըննեգյը ըջըղված ասից.— Հեռու կաց էտ կարանան, տու քանի՞ կըլխանի յըս, վեր եկալ ըս իմ վըեղըս հերիք չի՜

www.naregatsi.org

հալա օղըմ ըս իմ նախշուն ջեյրանըս էլ փըռնիս։ Օխծը ուրան պոռտավը, ղուշը ուրան թևավը էս ղոլերքը եկած չի, վըեր տու եկալ ըս։

Արմենը, վըեր տարվալ ար էտ ջեյրանավը, ասից.

— Ա՛յ պառավ, եք քու ախճիգյըտ ինձ տու։

Պառավը շատ խոսելանը, շատ տես-տեն ծիքյ տալանը ետը ասից. — Լավ, հի՞նչ ըմ ասըմ, մինակ ախչիգյըս օղողը բեդմա ուրդյունան սհաթի վեցան ըսկըսած, միշև քըշերավան սըհաթի օթը ինձ նհետ կարտի հաղ անի։ Ճըրաքյըն էլ կտինինք կատվին կըլխին, թա ճըրաքյը եր ընգավ, կատվին կըլխա՞ն, էն ա տու հախտեցիր, թա ճըրաքյը եր չընգավ կատվին կըլխան, էն ա յըես քյըեզ իմ կախարթական կավազանավըս քար ըմ շինելու, հունցու հետե՞, իտի առաչիտ տըեսնը՞մ ը՞ս, բաղչերի, խաներին, թաքավերներին տըղերքը, լոխճին քար ըմ շինա՞լ։

Արմենը ռազի յա կըենըմ։

Ճաշը օտելանը ետը ըտահանք նըստըմ ըն կարտի հաղ անըմ։ Սկսըմ ա ծեքյը տալը, ամմա հալա կատուն տեղան տուրուր չի կյամ։ Արմենին հույսը կըտրըմ ա։ Վերչը վեր լուսանըմ ա, էտ պառավը Արմենին քար ա շինըմ։ Արմենին ըտեղ քար թողինք, կյանք էտ Զարմենան խոսինք։

Զարմենը քըշերավը եր ա կըենըմ, տըեսնըմ, վեր ուրանց բախչին վարթերը ճըլլըրալ ըն։

Հորը նան մորը դուլուղ ա անըմ, ուրան զենքը-զրահը յոր օնըմ, հրեղան ծին նըստըմ, քյինըմ ախպորը հըրայչին։

Զարմենը ծին քըշըմ ա, հըսնըմ մին դուզ տեղ, էտ դուզ տեղը հասար քաշած մին բախչա, բախչին մեչին մին ամարաթ, էտ էլ դաբվիշին ամարաթը։ Տա վեր նի յա մըննըմ էտ ամարաթը, դարվիշը գյուդուս ա, թա Արմենն ա, էնքան ուրուր նըման ըն ինըմ։ Ասըմ ա. — Բալա ջան, նըղացած կինիս, եք նստի, դինջաց։

Ըտրանք սկսըմ ըն զուրուց անիլը։ Դարվիշըն ասըմ ա.

— Բա վըերոը հի՞նչ իլավ, վըերս չիկա՞ էն սարերըմը։

Վեր իտի յա ասըմ, Զարմենը դաստի գյուդուս ա, թա ճուրը ըշտըղավ ա քյինըմ։

Ասըմ ա. — Դա՛րվիշ բաբա, վըերս չի սլըտահաց, յըես էքուշ էլ կըքյինիմ, բաղքյաս էքուշ վըերս պըտահի։

Վեր մին խըրեգյ լուսանըմ ա, դաբվիշը եր ա կըենըմ, քյինըմ սարը, Զարմենն էլ ուրան պադրաստոթունն ա քաշըմ, վեր քյինի ախպորը հետան, մին էլ ա տըեսնըմ մին թըրըխկոց լըսվից։ Տես-

www.naregatsi.org

նըմ ա պատին հիլուն մեչին մին կյեղեցիկ ախճիգյ։ Ախճիգյը գյուդունմ ա, վեր էտ Արմենը չի։

Ըտրան հրսկըցնըմ ա, ասըմ. — Ա՛յ կյեղեցիկ տըղա, դե վեր քյինըմ ըս ախպորըտ հարալին, մեռըտ պահի խոսկերքըս։ Վեր էս դունդ տըեղերան տունս կյաս, թա քյինիս բիդի սարերը, առաչըտ մին թումբ ա տունս կյալու, էտ թումբին դալուն կընցնիս, ընդեղ մին կանանչ հանդըմ մին ղաշանգյ բախրա յըս տըեսնալու ըրածըմ։ Էտ բախրան էնքան ղաշանգյ ա իննելու, վեր ասելու վըս թա օտիմ վեչ, խըմիմ վե՞չ, էս բախրին եշիմ։ Վեր ընդրա հետան ընգնիս, նա փախչելու յա, նի մըննի մին կարան։ Ընդրան կարիլ չըս փըռնիս, քանի վեր նա մին ջադու պառավի ախճիգյ ա, վեչ թա էն սարին սիրուն բախրան։ Հաղա միչև էտ, էն դունդ տըեղավը քյինաղիս իրեք մոկըն կը փըռնիս, քըցիս ծոցըտ։ Ըտրանք վերչըմը քյըեզ պետկը կըկյան։

Զարմենը էտ լոխ վեր լըսըմ ա, ունրան զենքը-զըրահը յոր ա օնըմ, հրեղան ծին նըստըմ, քյինըմ։ Ճընապարին իրեք մոկըն ա յոր օնըմ, տինըմ ջուբուռը։ Զարմենը շատ տըեսըտըեն ման եկավ, պեն չի ճարից, վերչը լհա օզըմ ար, թա էտ տըեռնա, մին էլ տըեսավ մին կյեղեցիկ բախրա վազ տալավ եկավ առաչը ընգավ, փախավ, քյինից նի մըտավ կարանը։ Զարմենը բախրին հետան ծին քըշից, կարանը հըսավ, սկսից էտ կարանին քարերը քանդիլը, վեր նի մըննի, բախրան փըռնի, ամմա մին էլ տըեսավ մին ջադու-պառավ ա կյամ, կախարթական կավազանը ծըեռքին։ Էտ պառավը մին կյըշըկյրող, մին սըփաթ կըտրված զատ ար, պըռոշնին էրգյան, միչև տափը։

Տա կըզնըվածծ, աշկերը ճառնաղ լըցած կյամ ա, վըեննը տափին կյամ, ասըմ. — Տու քա՞նի կըլխանի յըս, վեր վըեննըտ իմ վըեղըմըն ըս տիրալ։ Օխծը ունրան պոռտավը, ղուշը ունրան թևավը կարիլ չի ըստեղ կյա, տու եկալ ըս, հը՛ը՛ը՛, հաղա էտ հերիք չի՞, իմ ըխճըկանըս հետան էլ ըս ընգա՞լ։

Զարմենը պառավին խոսկերքը իսկի վեջան չի քըցից։ Նա տըեռավ ասից. — Իմ կյեղեցիկ բախրաս էս ա ըստեղ, բեդմա հանիմ։

— էտ բախրա չի, իմ ախճիգյըն ա։

Զարմենը թա. — Վեր իտի յա, բեդմա հանիմ։

Ասից. — Տու մինաղ մին պայմանավ կը կարիս ընդրան յոր օնիս։ էտ պայմանըն էլ էն ա, վեր էրկուսավ բեդմա կարտի տանք։ Ճըրաքյը հեն ա իննելու կատվին կըլխին, թա վեր ճըրաքյը կատվին կըլխան եր ընգնի՞, ախճիգյըս քյըեզ հալալ, քու մոր կաթնին նըման, թա ճըրաքյը կատվին կըլխան միչև լունս եր չընգնի, յըս քյըեզ

www.naregatsi.org

քար ըմ շինելու։ Հալա եղի, տբես էն քարերը։ Ընդրանք լոխ քյրեզ նըման ջահիլ տըղերք ըն իլալ, լոխ բագյզադա-խանզադեքյ, լոխ թաքավերի տըղերք։

Զարմենը ռազի կացավ, ասից. — Թա կարիմ վեչ, Թող քու կավազանըտ ինձ էլ քար շինի։

Ըտրանք ըսկըսեցին կարտի տալը մին օթախի մեչի, օթախին մեշտեղը մին ստոլի յրա։ Էտ ստոլին կոխկին էլ կատուն, ճըրաքյը՝ կըլխին։ Ուրուդյունանց միչև քըշերվա կըեսը ըտրանք կարտի տըվին, ամմա հալա կատուն տըեղան տուրուր չար եկալ։ Զարմենը մին մուկը հանից, քըցից կատվին առաչը։ Կատուն օզից տուրուր կյա, ամմա պառավը յրան ճըղղաց։ Ըտրանք կարտի տվին, կարտի՞, Զարմենը տբեսավ, վըեր վըերցակնին կանչըմ ըն։ Ըրգյինքըմը ասթխերը մար ըն մընընըմ մինը մինին հետան, սարերին քըմական էն ուրուր յրա կյուտ-կյուտ իլած Թըխպերին մին ղուլը ըսկըսալ ա կյրմրին տալը, լուսը մըհենգյ-մըհենգյ կը ծագյի։ Զարմենը էրկունջի մոկնը ծոցան թաքուն հանից, քըցից կատվին առաչը։

Կատուն օզից յրա պըրծընի, մոկնը փրունի, ամմա պառավը մին հենց ճըղղաց, վեր կատուն սառավ տըեղըմը։ Վեր ծեքյը տըվավ, Զարմենը իրեքինջի մոկնը քըցից կատվին առաչը։ Կատուն ճըրաքը Թող ըրավ, վազ տըվավ մոկնին հետան։ Պառավը օզից, Թա կավազանը յոր օնի, Զարմենին Թըխի, քար շինի, ամմա էտ մունուտին Զարմենը պառավին ծըեռքան կավազանը ինքյ կալավ, յրա պերավ պառավին կըլխին, ասից. — էս մունուտիս ասի, Թա իմ ախպեր հո՞ր ա։

Պառավը Թուլացած, օժա ընգած, տարավ նշանց տըվավ էն լոխ քարերը, էտ լոխ քարերանը տբենն էլ Արմենին քարը։

Զարմենը Թորը հանից, էտ պառավին կտոր-կտոր ըրավ։ Նստավ էն կավազանավը Թըխից էտ քարերին լոխճին էլ սըղըցրավ։ Լոխճան վերչըմըն էլ ուրան ախպորը սըղըցրավ։

Վեր լոխ կենթանոթուն ըստացին, էտ բագյզադեքյը, խանզադեքյը, Թաքավերին տըղերքը եկին ուրանց ազադողին ծըեռքը պաշեցին, շունըրակալ իլին, քյեցին ուրանց հայրենիքը։

Արմենը նան Զարմենը էտ ըխճըկանը եր կալին, եկին դռըվիշին ամարաթը։ Դռըվիշը վեր ըտրանց տբեսավ, շատ ուրխացավ, մըթկըմը ասից. «Մինս էրկու յա տբեռալ, էրկուսս՝ իրեք՞»։

Տա Թորենը վառից, Թիժըցրավ, չուրքուպուլլըր կյրմըըցըրավ, ալավը երգյինք հըսավ։ Տա պերավ մին էծ խըրավից, կըերին, ետավ

www.naregatsi.org

սկսից Թոռնին չորս ղուլին պար կյալը։ Արմենին ասից, վըեր կյա, պար կյա։

Արմենը սայաղ կացավ, ասից. — Դաւրվիշ բաբա, առաչ տու պար ես, ետավ՝ յըես։

Էտ վեր լսից դաւրվիշը մին էլ սկսից պար կյալը Թոռնին ղըրղընեըավը։ Զարմենը կախարդական կավազանը քըցից վըեննը, շոու տըվավ։ Դաւրվիշը ընգավ Թորենը, էրվից։

Համին էտ վախտը էն պատին հիլուն մեչին ախճիգյը ճըղղաց, ասից. —Դե հա՜, շուտ ըրիք Թոռնին իրեսը ծասկեցիք, թա չէ, դաւրվիշը մին էլ տուն կըկյա։ Զարմենը դաստի Թոռնին իրեսը ծասկից։

Դաւրվիշը հիշքան հարայ տըվավ, վեր Թորենը ծըհանավը խաուներին, ամմա ախճիգյը ասից. — Խաունիք վեչ ծըհանավը, վեր խաունեցիք դաւրվիշը սըղանալու յա, ծըեզ օտի։

Խաունըմ չըն, իտի էլ Թողըմ ըն, միչև վեր դաւրվիշը էրվըմ ա, մոխեր տըեռնըմ։ Արմենը շուտ ա անըմ, ճելլի-ճելլի պատին հիլին կոտրըմ, էն ըխճըկանը հանըմ։ Էտ ախճիգյը էնքան կյեղեցիկ ար, վեր մարթ եշելիս օզըմ ար, թա օշը տանի։

Արմենը նան Զարմենը դաւրվիշին հարուստոթունը լոխ յոր ըն օնըմ, էտ էրկու ըխճըկորցը նըհետ, ճընապա ընգնըմ ուրանց հայրենիքը ուրանց պալատը։

Հաւրը նան մարը վեր տըեսնըմ ըն ուրանց տըղերքը սաղ-սալամաթ ըտեղ կաղնած, շատ ուրախանըմ ըն։ Ըտրանց հետի քառասուն օր, քառասուն քըշեր հըրսանիք ըն անըմ, փըսակըմ էն ըխճըկորցը նըհետ։ Ժողովուրթըն էլ ա լիանըմ։ Ետավ ըտրանք օրախ ապրըմ ըն։ Հաւրը շատ ար պըռավալ։ Ուրան հարուստոթունն էլ կես ա անըմ, կեսը տամ Արմենին, կեսըն էլ՝ Զարմենին, իշխանոթունն էլ ուրանց տամ։ Իտի էլ մարթըկընեգյ օրախ, բախտավեր ապրըմ ըն միչև ուրանց գյանքին վերչը, ուրանց սարի մընան կաղնած տըղորցը դըլվըմը։

Զարը պատժվից, պարին հախտից։

www.naregatsi.org



20. ԹԸԵՎԱՎԵՐ ԾԻՆ

Ինըմ ա, չինըմ մին թաքավեր։ Էտ թաքավերին ինըմ ա իրեք տղա։

Մին օր էտ թաքավերը մահու յրա յա ինում, կանչում ա տըղորցը ուրան կոշտը, ասում.— Ա՛ բալեք, ըշտեղ օղըմ ըք, քյինեցիք, ամմա դիբի արևը մար մընննելի ղուը քյինիք վեչ։

Հաՙրը ուրան տըղորցը խելքը-իրատ տալան ետը մրեռնում ա՞։

Անց ա կրեռնում մին քանի տարի։ Մրեծ տղան ախպորցն ասըմ ա.— Ա՛յ ախպերք, տրեսնաս մրեր հաՙր խե՞ ասից, թա դիբի արևը մար մընննելի ղուը քյինիք վեչ։ Ցրես քյինալու յըմ, տրեսնամ հի՞նչ կա ընդեղ։

Ասըմ ա հու՞ ճընապարվըմ։

Քյընըմ ա, քյընըմ, շատ ա քյընըմ, թա խրեզյ ա քյընըմ, շատ նան խրեզյը ինքը կըզյիդաՙ, վերչը հրսնըմ ա մին բաղի։ Էտ բաղը իրեք տաՙռնը օներ։

Առաչին տըռնավը նի յա մընննըմ, տրեսնըմ ըտեղ մին տոն կա։ Մին խրեզյ ըտեղ նըստըմ ա, թա դինջանա, մին էլ ա տրեսնըմ երզյինքը ըրոտաց, կըծընկեծին ըրավ, էն մըթեն Թըխպերին մեչան Թևավեր ծի նստած մին ախճիզյ վըեր եկավ, Թորը հանից, մին հենց Թըխից, վըեր էտ տղին կըլինը Թըռավ, հաՙյա միչև օրըս էլ Թռչում ա։

Իտի էլ միշնաՙկ ախպերըն ա կյամ, ասըմ. — Ա՛ մար, ախպերս քյինից, եկավ վեչ, քյինիմ տրեսնամ էն արևը մար մընննըմ տրեղը հի՞նչ կա, վըեր ախպերըս եկավ վեչ։ Ասըմ ա, ճընապար ընգնում։

www.naregatsi.org

Քյնըմ ա, քյնըմ, շատ ա քյնըմ, թա խրեգյ, շատ նան խրեգյը ինքն ա գյուդնւմ, հրանըմ ա մին բաղի։ Էտ բաղը իրեք տոռնը օներ։ Տա էրկունջի տրոռնավը նի յա մըննըմ, նստում, թա պատառ դինջանա, մին էլ ա տրեսնըմ երգյինքը ըրոտաց, կըծրնկեծին ըրավ, էտ մըթեն Թըխպերին մեչան մին թևավեր ծի նստած ախճիգյ քըշացավ, սորը հանից, մին հենց Թըխից, վըեր էտ միշնակ տըղին կըլոխը Թըռավ, միչև մհեկ էլ հաչա Թըռչըմ ա։

Պուճուր ախպերը տրեսնըմ ա վըեր ուրան ախպերքը կյամ չըն, մորն ասըմ ա. — Ա՛ մար, ախպերքս քյեցին, էլ եկին վեչ։ Ցրես էլ քյինիմ, տրեսնամ էն արևը մար մրննում տրեղը հի՞նչ կա, վըեր ախպերքս եկին վեչ։

Մարը տրեսնըմ ա, վըեր պուճուր տըղան դուզ ա խոսըմ, կոզի սըերտը խըրըվխարավըն ա կյամ, կոզի օղըմ չի Թողի, ամմա ուրան մարթին կրակի Թորը հանըմ ա կյեղած տրեղան, տամ էտ տըղին, ասըմ.

— Ըր կալ էս Թորը, տու ըտրանավ անհաղթ կինիս, էս Թորը հուր ծրեռք ընգնի, էն շատ օժավ կինի։

Թաքավերին պուճուր տըղան էտ Թորը յոր ա օնըմ, քյընըմ։ Քյընըմ ա քյընըմ, շատ ա քյընըմ, թա խըրեկ, շատ նան խըրեկը ինքն ա գյուդնւմ, քյընըմ ա հրանըմ մին բաղի, համին էտ բաղըն ա ինում, իրեք տրոռնանի։

Տա նի յա մըննըմ իրեքինջի տրոռնավը, տրեսնըմ մին ախպուր։ Էտ ըխպրին քըշտին նըստում ա, թա պատառ դինջանա, տրեսնըմ ա երգյինքավը մին յողնեգյ ա Թըռչում։ Նրետը պեց ա Թողըմ, յողնիգյը վըեր քըցըմ, խըրավըմ, թա օտի, մին էլ ա տրեսնում երգյինքը ըրոտաց, կըծրնկեծին ըրավ, էն սրեվ, մըթնած Թըխպերան Թևավեր ծի նստած մին ախճիգյ եր եկավ, սորը հանից, թա թաքավերին պուճուր տըղին կըլոխը Թըռցնի, էտ տըղան ուրան Թորը կըլխանը երը պահից, էտ Թևավեր ծիյավերը ծիյան եր ընգավ։ Էտ տըղան օղից ընդրա կըլոխը կըտրի, ամմա էտ ախճիգյը ղաչանքպըղատանք ըրավ, մասկան հանից, ասից. — Ցրես ախճիգյ ըմ, ինձ սպանիլ մի։

— Սպանիլ չըմ, վըեր ինձ կյաս։

Էտ կյեղեցիկ ախճիգյը ռազի յա կրենըմ, լհա օղըմ ըն Թա նի մըննին տոն, էտ տըղան մին էլ ա տրեսնում էտ ախչիգյը աշկին առաչան կորավ, բաթմիշ իլավ։ Տես ա եշըմ, տեն ա եշըմ ախճիգյ չի կա։

www.naregatsi.org

էտ տըղան հույսը, հավատը կըտրած թողըմ ա, հեռանըմ, էլհա ընձապար ընդնըմ, քյընըմ։

Քյընըմ ա, քյընըմ, հրանում մին պրեցուր ամարաթի։ էտ ամարաթին ա նի մըննում, տրեսնում մին դև. էն էլ կընեգ դև։ էտ կընեգ դևը հըրցըփորց ա անըմ, թա էտ տըղան ըշտե՞ղ ա քյընըմ։

էտ տըղան լոխ նաղլ ա անըմ։ Ասըմ ա. — Յրես մըհեկ քյընում ըմ էն ըխճըկանը հետան, վեր աշկիս առաչան կորալ ա։

էտ կընեգ դևը ըտրան ընձապարը նշանց ա տամ, ասըմ. — Տու իտի քյինա, կրհանիս մին ծովի։ էտ ծովին յրան մին կարմունջ կա, կարմունջին ղերավ անց կը կրենաս, կտրեսնաս մին արկաթի տոռնը։ էտ արկաթի տրունին էրկու ղոլան, էրկու առուծ ա իննելու կապած։ Միտ կրես կանիս, կրեսը մին առուծին տաս, կրեսն էլ՝ էն մին։ Տոռնը կպեննաս նի մըննիս մին բախչա։ էտ բախչին քըշտին մին կյում ա իննելու, ըշտեղ էտ ըխճըկանը ծիյանքը կապած ըն։ Կյումին տոռնը պեց կանիս, նի մըննիս։ էն ծիյանցը մեչին իննելու յա համին էն թևավեր ծին։ Նի կը մըննիս թևավեր ծիյին փորին տակը, կյողլը կրենաս, ընդրա փորին տակին մին տըմբլա կա կապած։ Վեր նի մըննիս փորին տակը, էտ ծին վրննեռավը թըխելու վա էտ տըմբլին։ Տըմբլան սաս ա անելու։ էտ վախտը տու տոնա կրկյաս ծիյին փորին տական, մին քյունջում կյողլը կրենաս։

Տմբլին սասին յրան էտ ախճիգյը կյալու յա, թա տրեսնա, խե՞ յա ծին տըմբլան թակըմ, հու մին պեն չը պըտահա՞լ։ Տրեսնալու յա վեչ մին պեն չի կա, ծիյին յրան կըզնվելու յա, ետ տրեռնա։ Տու տոնա կը կյաս մի՛ն էլ նի մըննիս ծիյին փորին տակը, էլհա ծին վրննեռավը թըխելու յա տըմբլին։ էն ախճիգյը կյալու յա, տրեսնա, վեչ մին պեն չիկա, մըթկըմը ասելու վա. «Բաղքաս սոված ա, օտել ա օղըմ»։ Մին խըրեգյ չամիչ ա տալու ծիյին, քյընաս։ Տու էլհա կյողլը կացած տրեղատ տոնա կրկյաս, նի մըննիս ծիյին փորին տակը։ Մին վրննեռավը էլհա տըմբլան թակելու վա։ Սասը եր ա իննելու։ էն ախճիգյը էլհա կյալու յա, տրեսնա վեչ մին պեն չիկա, ասելու վա. «Ա՛յ ծի, խե՞ յըս իտի անըմ, հի՞նչ կա, հինչքան խըլըշկոտում ըմ, պեն չի կա, դե մըհեկանց տրեսը էլ տըմբլին սասը հանիս վրեչ, թող մին խըրեգյ դինջ քոն ինիմ»։ Զորսինջի դռնըմը էլհա նի կը մըննիս ծիյին փորին տակը։ էլ ծին վրննեռավը թըխելու չի տըմբլին, էլ սաս չի հանելու։ Տու դինջոթունավ տոնա կը կյաս, քյընաս էտ ըխճըկանը օթախին տոռնը պեննաս, տրեսնաս ախճիգյը քոն իլած։ Թորը ծրեռքիտ ընդրա կըլխանը երը կը կաղնիս։ էն ըրաղըմը տրեսնալու վա, վըեր ինքը հախտված ա, եր ա թըռչելու տրեղան, քյըեզ տրես-

www.naregatsi.org

նալ նըբաստ ունրթունմ ա օտելու, վըեր էլ ինքը քյըեզ խափիլ չի։ Տու հըվատաս վեչ, միչև ինքը ասի վեչ. «Մորըս ծծած կաթնը վկաս։ էն վախտը կըհվատաս, վըեր դունզ ա ասըմ։ Վըեր ինքը էտ խոսկը ասի վեչ, տու ասել կըտաս, զոռ կանիս, վըեր ասի։

էտ կընեգյ դևը էտ խոսկերքը ասելանը ետը, էտ տըղին մին ճըրաչի ճար ա տամ։ Տա խըմըմ ա, էլ իվիլ օժավանըմ։ Ետնան էտ կընեգյ դևը ունրաչն մազերան էրկուսը տամ ա, ասըմ. — Վըեր տըժեր տըեղ կընգնիս, ունրունր կը քսիս, յըես էն մունուտը քըշտիտ կինիմ, քյըեզ քյոմաչգյ կանիմ։— Ասըմ ա պըռծնըմ, աշկա անհետանըմ, կորչում։

էտ տըղան հունցը էն կընեգյ դևը ասալ ար, իտի էլ անըմ ա։

Վըեր թորը հանած կաղնըմ ա էտ ըխճըկանը կըլխանը երը, ախճիգյը արագըմը տըեսնըմ ա, վըեր ինքը հախտված ա, եր ա թըռչըմ տըեղան, ունրթունմ օտըմ, թա էլ խափիլ չի, տըղան ասըմ ա. — Դե ունրթունմ կըեր քու մոր ծըծած կաթնավը։

Ախճիգյը ունրթունմ օտելանը ետը ասըմ ա. — Քյըեզ սըվրցնողին լունզուն պըպանձվի՞։

Ըտրանք ըտեղ հաշտվըմ ըն։

Մին դռնըմ առավոտը էտ տըղան թևավեր ծին նըստում ա, քյընըմ վըերսի։ Ծուխան էն ղուլը անց կընենալավ, տըեսնըմ ա մին բախրա։ Օգըմ ա թա վըերսի, ամմա էն ըխճըկանը պատկերը մըեսն ա ընգնում, ծըեռքերը թունլանըմ ա, էլ կարըմ չի, թա վըերս անի։ Մին քանի հետ, վըեր իտի ծըեռքը թունլանըմ ա, էլ կարըմ չի, թա վըերս անի, կյամ ա տոն, էն ըխճըկանը ասըմ։

Ախճիգյը ասըմ ա. — Դե վըեր իտի յա, մըհեկ էլ յըես կքյինիմ վըերս անիմ։

Տա թևավեր ծին նստըմ ա քյընըմ, մին հենգյ մունուտանը ետը աշխարքի վըերս ըրած, ծիլին պըեռնած կյամ ա։

Իտի մին քանի վախտ ապրըմ ըն։ էտ տըղան ասըմ ա. — Իտի պեն չինիլ, ա յըես քյըեզ մատաղ, վըեր յըես տանը նըստիմ, տու քյինիս վըերս անիս, պերիս։ Լավն էն ա, մին պատկերհան պըերինք, պատկերտ քաշի, յըես էլ պատկերըտ տինիմ ծոցըմըս, ընդրանա ետը քյինիմ վըերս։

Իտի էլ անըմ ըն։ Մին պատկերհան ըն կանչըմ, պըերըմ, պատկերը քաշըմ ա։ Պատկերը քըշելանը ետը էտ պատկերհանին քըցըմ ըն ծովը, խեխտըմ, վըեր էտ ըխճըկանը տըեղը վեչ մինը գյիդա վեչ։ Մին դռնըմ տըղան պատկերը տընում ա ծոցըմը, քյընըմ վըերսի, վըեր վըերսին վախտը պատկերը ջուբան հանի, եշի, սըեռտը պենվա,

www.naregatsi.org

հշիլան օժը շրտանա։ Մին հրետ վրեր իտի յա անըմ, հակառակի նման ծովան քամի յա փըշում, էտ պատկերը ընգնում ա ծովը, լափուն տանըմ ա հետուս

Տըղան մընըմ ա մաթաշ։ Քուռուփեշմեն ետ ա տրեռնում, կյամ տոն։ Մին քանի վախտ առանց էտ նկարի, մին թահրաշվ վրերսի յա քյընըմ։ էտ նկարը ծովին էն մին ղոլըն ա ընգնըմ, մին օրիշ թաքավերոթուն։ էտ թաքավերին ծիյանքը մին օր պըերըմ ըն, թա ճուր տան, ամմա ծիյանքը ճուր չըն խըմըմ։ Դյադեքյը կյամ ըն թաքավերին ասըմ։ Թաքավերը ըշըղվըմ ա, հրամմայըմ, վրեր էն սհաթը ծիյանցը ճուր տան, ամմա էլհա ծիյանքը ճուր չըն խըմըմ։ էտ դյադեքյը ըտեղերքը մին լավ շոռ ըն կյամ, թա տրեսնան հի՞նչ կա, վրեր ծիյանքը խըրթնըմ ըն, ճուր չըն խըմում, տրեսնըմ ըն ըտեղ մին ալագյոզ ըխճըկա պատկեր։ Ցոր ըն օնըմ, տանըմ ուրանց թաքավերին տամ։

Թաքավերը տրեսնալը նըբաստ սիրահարվըմ ա, օշը տանըմ ա, եր ընգնըմ։ էն մին օրը հրամմայում ա, զորք ըն հրվաքում, զորք ա ղրկըմ ծովին ղրաղը, վրեր էն ըխճըկանը քըթնին։ Համին էտ օրը էտ տըղան վրերսի ար տուս նկալ։ Վրեր հրսնըմ ա ծովին էտ մին ղրաղը, զորքը տրեսնըմ ա, հրցնըմ ա. — էտ խե՞ յըք հրվաքվալ ըտրեղ։

Ըտրանց մրեծը ասըմ ա. — Մին ըխճըկա պատկեր ըն ճարալ, թաքավերը մրեղ ղըրկալ ա էտ ախճիգյը ճարինք, տանինք ուրան հետս։

էտ վրեր լըսըմ ա, էտ տըղան թևավեր ծին երգյինքյ ա հանըմ, ընդըղան քըշանըմ ըտրանց յրան, լոխճին կըտորըմ։ Մինաւկ մինն ա սաղ մընըմ, էն էլ քյընըմ ա, էտ լոխ ուրանց թաքավերին նաղլ անըմ։

էտ թաքավերը վրեր լըսում ա, թազդեան զորք ա հրվաքըմ, ղըրկըմ ծովին ղրաղը։

Թաքավերին պուճուր տըղան էլհա յա նըստում թևավեր ծին, պըցրանըմ երգյինքը, քըշանըմ լոխճին կըտորըմ։ Մինաւկ մինն ա մընում, էն էլ խաբարը տանըմ ա թաքավերին, թա խտի-խտի պրեննը։

Թաքավերըն էլ զորք չօնար, նա քընեննքյ ա անըմ, թա հունց անի, մին հրնար, մին ճար քըթնի, էտ ըխճըկանը ուրան ծրեռքը քրցի։

էտ վախտը մին պառավ կընեգյ կյամ ա թաքավերին կոշտը, ասըմ. — Թաքավերը ապրած կրեննա. յրես կըքյինիմ էտ ըխճըկանը պըերիմ, քընեննքյ մի անիլ։

www.naregatsi.org

Թաքավերը վրեր լսում ա, ուրխանում ա, էտ պառավին ասում ա.

— Ա՛ պառավ, վրեր էտ ըխճըկանը ճարիս, պըերիս քըշտոթունավտ մին վրեսկե յըմ տալու։

Պառավը ճընապարվըմ ա, քյընըմ էտ ըխճըկանը հետան։

Խիլլա ճընապար քյընելանը ետը, պառավը նի յա մընըմ մին կըրասի մըեչ, ամմա հենց էտ սըհաթը թաքավերին պուճուր տըղան վրերսի քյեցած ա ինըմ։ Տըեսնըմ ա առաչին մին կարաս, մուտանըմ ա, տըեսնըմ կարասին մըեչին մին պառավ։

Հըրցընըմ ա, ասըմ. — Ա՛ նանի, տու հո՞ւ վրս, ըշտղացի՞ յըս, ըշտե՞ղ ըս քյընըմ։

Պառավըն ասըմ ա. — Այան քը մատաղ, մըեր քյարվանը ըստեղ ա իլա՛լ, քըշրհանա քյեցալ ա, յըես էլ էն ըմ իլա՛լ քոն իլած, մընացալ ըմ ըստեղ։

Թաքավերին պուճուր տըղին մըեխկըն ա կյամ, էտ պառավին յոր ա օնըմ, տանըմ ուրանց տոն։

Վրեր օզըմ ըն թա նի մընին բախչան, տըռնին քըշտին էրկու առուծնին օզըմ ըն, թա էտ պառավին ճոթ-ճոթ անին, պըտռնեն աչու ծախ քըցին, ամմա էն տըղան թողըմ չի, պըռավին տոն ա տանըմ։

Կընեգյը կըզնըվըմ ա, ասըմ. — էտ հո՞ր ըս պըերալ, էտ քոսոտ էծ կընգանը։

Էն տըղան էլ ասըմ ա. — Վեչինչ, թող կըենա, մըեզ հինչ ա՞ անելու, պենա-կյործա կանի, քյոմաքյ կինի։

Մին առ ժամանակ էտ պառավը ըտըեղ կըենըմ ա, տըեսնըմ ա, վրեր համին էն ախճիգյըն ա, վրեր նկարըմը իլա՛լ ա։

Էտ ախճիգյըն էլ սըվերըմ ա էտ պըռավին, միշտ մին տըեղ ըն տուս կյամ, քյընըմ ծովին ղրաղին ման կյամ։

Պառավը միշտ էլ հըրցնըմ ա, թա ըշտեղ ա ընդրա մարթին օժը, հինչի՞ մըեչի յա, ամմա ախճիգյը ասըմ ա, վրեր գյիդուսմ չի։

Պառավը էտ ըխճըկանը ատիբըմ ա, վրեր մարթին օժին տըեղը գյիդա՛, ուրան ասի։

Էտ ախճիգյը, մարթը վրեր կյամ ա, հըրցընում ա։

Մարթը միյամիտ տըեղան ասըմ ա.

— Իմ օժըս էն ա աչ կուռանես յրան մին քար կա կապած, ընդրա մաչին։— էտ ախճիգյը դա՛ստի պառավին ասըմ ա։

Մին դա՛նըմ մին լոթկի մըեչի պառավը նան էտ ախճիգյը քյընըմ ըն ման կյալ։

www.naregatsi.org

Պառավըն ասըմ ա. — Ջոնթիկըտ մըտատ քըցալ ըս, քյինիմ, պերիմ։

Պառավը տոն ա կյամ, տրեսնըմ էտ տըղան քոն իլաժ։ Նա թորը յորա օնըմ, կոխըմ ըտրա սըեռտը։ Ետավ պառավը պեց ա անըմ ընդրա կրոնեն կապած քարը, մին քյանդիր էլ յոր օնըմ, կյամ, վազ տամ լոթկան։ Քարն էլ ծովըն ա քըցում, հենց վրեր լոթկա յա նըստըմ, էտ ըխճըկանը ծրեռքերը նան վրեննները կըպոտըմ ա, լոթկան քըշում դիրի էն թաքավերին պալատը։

Վրեր տուա ըն կյամ ծովին էն մին ղըրաղը, էն թաքավերին ծառեքը ըտրանց տանըմ ըն թաքավերին կոշտը։

Թաքավերին պուճուր տըղան յարալու յա ինըմ, մին խիլլա վախտ իտի մընըմ ա, վեր պատառ օշը կըլոխըն ա կյամ, էն կընեգյ դևին տված էրկու մազը ուրուր ա քըսըմ, էտ կընեգյ դևը կյամ ա։ Տա յարան լուդում ա, էտ տըղան լավանըմ ա։ Էտ կընեգյ դևը գյիդալավ վրեր էն օժը տըվող քարը պառավը ծովըն ա քըցալ, քյընըմ ա հանըմ, էլհա պերըմ կոռնը կապըմ։ Էտ տըղան էլհա էն համին տըղան ա տրեռնըմ։ Տա ուրան թևավեր ծին նստըմ ա, քյընըմ էտ քաղաքը, ըշտեղ էտ ըխճըկանը տարալ ըն։ Հեռվից-հեռու տրեսնըմ ա մին թուրուն մարթ հըվաքված։ Քըյնըմ ա մուտանըմ, տրեսնըմ ուրուրոցավ ըն ընգալ, մըեծըպուճուր լոխ ճուր ըն կըրըմ։ Ասըմ ա. — էտ հինչ ա պըտահալ, վրեր իտի ճուր ըք կըրըմ։

Ընդրանք կըլխընին կուրցրած ասըմ ըն. — Մըեր թաքավերը մին ախճիգյ ա պըերալ մին օրիշ երգյիրա, ընդրա օշը տարալ ա, ընդրան քըցալ ըն մին արծաթի օթախ, մունք էլ ճուր ընք կըրըմ, ածըմ էն օթախը, վրեր էն ախճիգյը օշը կըլոխը հըվաքի։

— Էտ խե՞ մինուկ ճուր ըք կըրըմ, մին օրիշ ճար չըք անըմ։

— Ախճիգյըն ա իտի ասալ։

Թաքավերին տըղան մաննը կրծում ա, կըլոխ ա ընգնըմ, վրեր գյիդացկանց ա իտի ըրալ։ Մուտանըմ ա մին կուճի ըխճըկա, ասըմ.

— Հինչ կի՞նի, կոլատ տաս, մին խըրեգյ ճուր խըմիմ, լհա մին էրկու կում։

Ախճիգյը կոլան տամ ա։ Էտ տըղան էն ըխճըկանը տըված մըտանին պըրանան քըցում ա կոլին մեչը։ Էտ ախճիգյը կոլին ճուրը տանըմ ա, ածըմ էն արծաթի օթախը։ Էն ախճիգյը տրեսնըմ ա, վրեր մին պըեն զընգաց։

Տըղան եր ա թըռչըմ, տրեսնըմ ուրան մըտանին ա, լոխ կըլխու վա ընգնըմ, ասըմ.— Դե բոլ ա, հերիք ա, հիշքան ճուր ըք կըրալ։

Թաքավերը ըսկըսըմ ա հըրսանիքի պադրաստոթուն տրեսնալը։

www.naregatsi.org

Համին էտ քըշերը էտ տըղան թաքավերին մեծամեծներին խընթ-
րըմ ա, վըեր ինքըն էլ հըրսանիք կյա։

Ըտրան համեցեք ըն անըմ։

Հըրսանիքը ըսկըսվըմ ա, մինը երք ա ասըմ, մինը պար ա
կյամ, լոխ էլ ուրխանըմ ըն։

Էտ տըղան էլ թաքավերան իրավունք ա ստանըմ, վըեր ընդրա
պատվին, ինքըն էլ ուրիշ թևավեր ծիյավը պար կյա։ Թաքավերը
թողըմ ա։

Էտ տըղան աչըծախ կտորըմ ա ժողովուրթին, թողըմ մինակ
թաքավերին, էն ըխճըկանը, մին էլ էն պառավին, մին էլ էն խաբար
տանողին։ Թաքավերին նան խաբար տանողին կապըմ ա ծիյին
հաքյվին, քաշ-քաշ անել տամ, վըեր մըեծ պատառը անգուճըն ա
մընըմ։ Պառավին քըցըմ ա մին կարաս, պերանը մին լավ կապըմ,
վըեր քյինի սուաճ սատկի։

Ըխճըկանը, ուրիշ նկարը յոր ա օնըմ, կյամ տոնը, իլաճ-չիլաճը,
վըեսկե-արծաթը լոխ հըվաքըմ, կյամ ուրիշ հայրենիքը, մորը
կոշտը։ Տըեսնըմ ա մարը պըռավալ ա, էնքան տղին ճրնապարը
պահալ ա, էնքան եշալ ա, աշկը ճիր ա տըեռալ, մազերը սիպտակ-
կալ, թան տըեռալ, բալոցը դաշդան կոչ եկալ, կըծեզ տըեռա՜լ։

Էտ տըղան տըեռնըմ ա թաքավեր, ուրիշ հորը թափուր թախ-
տին նստըմ, էն ախճիգըն էլ՝ թաքուհի։ Ըտրանք ուրիշ նըհետ
շատ սերավ ապրըմ ըն։ Մորը պատիվը հարսը նան տըղան պահըմ ըն,
աշկի լուսի նման սիրըմ ըն, միշև ընդրա մրեռնիլը։ Ըտրանա ետը
խուխատար ըն տըեռնըմ, օրախ, բախտավեր ապրըմ։

Ժողովուրթըն էլ ա լավ, բուլըղ պահըմ։

Ընդրանք հասին ուրիշնց մուրազին, տուք էլ հասնիք ծըեր
մուրազին։ Ըշտեղ մին աշկը ճրնապարին մար կա, բալին ըսպասող
մար կա, պարով կյա, աշկը տըեսնա, սըերտը ուրխանա։ Ըշտեղ
մին մուրազը սըրտին մարթ կա, պարով մուրազը կատարվի, ինձ
նման մրնա վեչ անկադար, աշկը ճրնապարին, սաղ գյանքըմը սպա-
սըմ, օշը մրեթկը հալա մուրազին յրան, սըերտը սև։

Լոխ էլ լավ ապրին, օրախ, բախտավեր, իմը ընցա՜լ ա։

www.naregatsi.org

21. ԾՈՒՎԻՆ ԾԱՌԸ

Ինուիմ ա, չինուիմ մին թաքավերի պառավ մար։ Էտ պառավին մին թոռն ա ինուիմ, ինքըն էլ տըղա։ Տա մին օր ըշկոլան կյալիս, տըհսնըմ ա մին օրիշ պառավ կընեգյ, կաթնավ լիգյը կյեվաթը ծրևոքին քյընըմ ա։ Էտ թաքավերին թոռնը մին քար ա յրա անըմ, կյեվաթը կոտրըմ, կաթնը եր ածըմ։

Պառավը ըտրան անիսկ ա տամ, ասըմ. — Ըստուծանա կըխըն-թըրիմ, վըեր տու ծունվին ծառին տըրանաս։

Տըղան տոն ա կյամ, հաց օտըմ, տունա կյամ, թա քյինի, տատն ասըմ ա. — Ա՛ բալա, էտ ըշտե՞ղ ըս քյընըմ։

Թոռնը ասըմ ա. — Քյընըմ ըմ ծունվին ծառը ճարիմ։

— Բալա, ծունվի ծառ չի ինըմ, ծունն հավրն ա ածըմ։

— Բա վըեր ծունվի ծառ չի ինըմ, խե՞ յա էն պառավը ինձ անիսկ տըվալ, ասալ. «Ծունվին ծառին տըրանաս»։

Էտ տըղան տատին լըսըմ չի, ճընապարվըմ ա, քյընըմ։

Քյընըմ ա, քյընըմ, մին պառավ մարթի ռուջահ կյամ։

Էտ պառավ մարթը ասըմ ա. — Ա՛յ տըղա, էս ճընապարավը քյինիլ մի, ըտըղավ քյընացողը ետ չի կյամ։

Էտ տըղան անգուճ չօնըմ, քյընըմ ա։

Էտ պառավ մարթը ասըմ ա. — Դե վըեր քյընըմ ըս, քյընա՛։ Առաչտ մին սար ա կյալու։ Էտ սարին քըշտին մին փոսըմ կյողլը կը կըենաս։ Վըեր մըթնի, մին խիլլա՛ հեռու մին պեցուր ծառ ա ըր-

www.naregatsi.org

վալու։ Էտ ծառին յրան իրեք ծոռ յա ինելու, վրեր ճըրաքի մընան լոնա ա տալու։

Էտ ծառին տակին իրեք դով ըն ինելու քոն իլած։ Տու կըլոխտ կը պըցրցնիս մին լավ եշիս։ Էտ դովերը ծեն չըն հանելու։ Մին էլ կյողլը կը կենաս, էլհա կլոխտ պըցրցնիս եշիս։ Էլհա դովերը ծեն չըն հանելու, քոն իլած ըն ինելու։ Էտ վախտը յավաշ-յավաշ եր կըկենաս քյինիս էտ փըլըստրատին տըվող իրեք ծոռն պուք տաս, յոր օնիս։

Էտ տըղան քյընըմ ա, իտի անըմ։ Ծոռվին ծառին տակին քոն իլած ըն ինըմ իրեք դով, վրեր տըղան իրեք ծոռն պուք ա տամ, փախչըմ դիբի սարին էն ղոլը, ըտրանք զնոթինըմ ըն, հարայ տամ։

— Հա՜յ, հարա՜յ, տարա՜վ, հողածինը տարա՜վ...

Դե էլ ըշտե՞ղ, պըենը պըենավը անց ա կացալ։ Էտ տըղան փախչելիս ծոռվին մինը ջուբան եր ա քըցըմ, կոտրըմ։

Ըտրա մեչան մին կյեղեցիկ ախճիգյ ա տոռս կյամ, ասըմ.

— Վա՜յ, հաց տվիք, վա՜յ, ճոռր տըվիք, սուրած, ծարավ մըեռի՜։

Ամմա վրեչ հաց ա ինըմ, վրեչ ճոռր։ Էտ ախճիգյը իտի էլ մըեռնըմ ա։

Էտ տըղան կյամ ա, կյամ, շատ էրգյան ճրնապար ա կյամ, տրեսնըմ մին կյետ։ Էտ կյըետին ղրաղին ծոռվին մինը կոտրըմ ա, մըեչան էլ ավելի կյեղեցիկ ախճիգյ ա տոռս կյամ, ասըմ.— Վա՜յ ճոռր տըվի՜ք, վայ հաց տըվի՜ք, սուրած, ծարավ մըեռի։

Ճոռրը ինոռմ ա, ամմա հաց չի ինըմ։ Էտ ախճիգյըն էլ ա մըեռնըմ։ Ծըեռքին մընըմ ա մին ծոռ։ Էտ տըղան սուրփը-սուրփոց անելավ պահըմ ա աշկին լոնային մընան։ Էնքան պահըմ ա, վրեր համ հաց, համ ճոռր ա ճարըմ։ Ուրանց պալատան մուտանըմ ա, ընդրանա ետը ծոռն կոտրըմ։ Ծոռվին մըեչան էն էրկու ըխճըկանան էլ ավելի կյեղեցիկ մին ախճիգյ ա տոռս կյամ, դաստի ճըղղըմ։

—Վա՜յ, հաց տվիք, վա՜յ, ճոռր տըվի՜ք, սուրած, ծարավ մըեռի՜։

Էտ տըղան համ հաց ա տամ, համ ճոռր։ Էտ ախճիգյը մըեռնըմ չի։

Տըղան ըտրա նըհետ կյամ ա ուրանց տանան մուտանըմ, մին ըխպըրի քըշտի էտ ախճիգյը ասըմ ա. — Ա՛յ տըղա, քյընա ինձ մըհար մին ծրեռք շոր պըեր, վրեր կյենամ, կյամ ծրեր տոռն, իտի համոթ ա։

Ըտրեղ մին չինարի յա ինոռմ։ Էտ ախճիգյըն ասըմ ա. — Ա՛ չինարի ծառ, կըռաց, ես եր ինիմ քու էն պըեցոռր ճըղնին կաղնիմ, միչև ինձ հրետի շոր կպերին։

www.naregatsi.org

Չինարին կըռանըմ ա, ախճիգյը ճրղնին նըստըմ ա, ծառը էլհա պըցրանըմ ա։

Էտ տրղան քյընըմ ա, թա շոր պըերի, մին կյըշըկյրող ախճիգյ կյամ ա ախպոնրը, վրեր ճուր տանի։ Էտ ծառին յրա ըխճըկանը շոխկը տըված ա ինըմ նովին ճիրին։ Էտ սըվըտըռածակ ախճիգյը կըլոխը պըցրցնըմ ա, նշըմ, տըեսնըմ մին մարալ-ջեյրան ախճիգյ ծառին յրան։ Տա ցավի ցըցի յա կյամ, օխծին հալավը շոռ ա օնըմ, օղըմ ա, թա ուրան օտի, վրեր էտ ախճիգյը էտքան կյեղեցիկ ա, ինքը՝ կյիշ։ Համ էլ մին խըրնկ ետը մաննը կրծըմ ա, կըլխու յա ընգնըմ թա էտ հուր հետի յա։

Ետ ա տըեռնըմ էտ նախշուն ըխճըկանը ասըմ. — Ա՛յ ախճիգյ, հի՞նչ կինի, ինձ էլ կոշտտ տանիս։

Էտ մարալ-ջեյրան ախճիգյը ասըմ ա. — Ա՛յ չինարի ծառ, կըռացա։

Չինարին կըռանըմ ա, էտ կյեշը-լամփոշ ախճիգյը պըցրանըմ ա ծառը, էտ նախշուն ախճիգյը ասըմ ա. — Չինարի, պըցրացա։

Չինարին վրեր պըցրանըմ ա, էտ կյըշըկյրող, ցավի-ցցի եկած ախճիգյը ըտրան կուփի յա տամ, քրցըմ ծառին տակը։ Էտ ղաշանգյ ախճիգյը տըեռնըմ ա մին թոխպ, նի մընընըմ էտ ծառին փըշակը։

Տըղան կյամ ա, տըեսնըմ մին կյեշ, ասծու անիծած տըռըտոմբալ ախճիգյ ծառին յրան։

Ասըմ ա. — Խե՛ յըս իտի կյեշացալ։

Էտ ախճիգյըն ասըմ ա. — Էնքան հրղետ նշեցի, աշկըս ճուր կըտրից, շիլդի տըեռի, արևը էրից, սըվացի, քյոմուր տըեռի։

Էտ տրղան մընըմ ա շշկըլված, կըլոխը օռած... Էտ կյեշ ախճիգյը ասըմ ա.— Ա՛ չինարի, կըռացա։ Հիշքան ասըմ ա, չինաւրին կըռանըմ չի։ Տըղան մին թաւհրաւվ ըտրան քրցըցնըմ ա, լաւվ-լաւվ շորեր կյեց տամ, փայտոնըմը նըստըցնըմ, տանըմ տոն։ Էտ վախտը էտ թոխպ տըեռած ախճիգյը մին վարթ ա տըեռնըմ, ըտահանց փայտոնին ակնան կախ ընգնըմ։

Վրեր պալատն ըն քյընըմ, էտ վարթը տաշեղ ա տըեռնըմ, ընգնըմ ըտրղան մոտի մին պառավ կընգա տոն։ Էտ պառավը տոնը սրփոտ ա, թա տանի ղիբիլը տըեն ածի, էտ տաշեղը մին շամփուր ա տըեռնըմ, ընգնըմ փիչին տակը։

Վրեր պառավը քյընըմ ա օրիշ տըեղ, էտ շամփուրը ախճիգյ ա տըեռնըմ, տոն-տըեղ անըմ, հրվաքըմ, սըրփըմ, սարքըմ։

Պառավը կյամ ա տըեսնըմ ամմեն հինչը ըրած։

www.naregatsi.org

Մին դռնըմ էտ պառավն ասըմ ա. — Էս հո՞ւ կինի, հո՞ւ չի ինիլ, մին բուսը պահիմ, տըեսնամ։

Բուսը պահըմ ա, տըեսնըմ մին կյեղեցիկ ախճիգյ ա տռնս կյամ շամփուրին մաչան։

Պառավը էտ ըխճըկանը պինդ փըռնըմ ա, ասըմ. — Ինձ վըեչ մինը օնիմ վըեչ, եք տու ինձ ախճիգյ տըեռ, յըես էլ քյըեզ մար, մին տըեղ ապրինք։

Ախճիգյը ռազի յա կըենըմ, ասըմ ա. — Ա՛յա, ճռւր տիր, ինձ լըղըցրու։

Պառավը ճռւր ա տընըմ, լըղըցնըմ։ Էտ ախճիգյըն ասըմ ա. — Այա, հաչա ճռւրը տըեն չածիս, հա՞, թող կըենա։

Պառավը ուռուբանա եր ա կըենըմ, տըեսնըմ ճռւրը վըեսկե յա տըեռալ։ Էտ պառավը մընըմ ա մաթ մընացած, գյունաքար։ Ըտրանա ետը էտ ախճիգյը ամման դռնըմ կլռխ լըվռնալիս, լըղանալիս, իրես լըվռնալիս, ճռւրը վըեսկե յա տըեռնըմ։

Ըտրանք շատ ըն հարուստանըմ, լռվ-լռվ տըներ ըն շինըմ։

Հընգյեր-հըրեան ըրմանըմ ըն, թա էս վըեսկեն ըստրանց ըշտըղա՞ յա։

Մին դռնըմ թաքավերին ծիյանցը կըերը պըկասըմ ա։ Ընդրա վեզիրնին կանչըմ ըն ժողովուրթին ասըմ. — Ա՛յ ժողովուրթ, ամեգյը մին ծի եր կալիք, պըհեցիք, թաքավըերին հրամմանն ա։

Էտ ախճիգյը պառավին ասըմ ա.— Ա՛յա, տու վէլ քյինի մին ծի պըեր, պահինք։

Պառավը քյինըմ ա, պըերըմ։

Վեզիրնին ծրծաղըմ ըն, ասըմ.— Ա՛ պառավ, տու հի՞նչավ պիտի պահի՞ս։

Պառավը ասըմ ա.— Ծրեր կործը չի, հինչավ կըպահիմ, կըպահիմ, հաչա պըենին վրեռչըմը կըծրծաղին, հաչա ճռտերը աշունքը կըհմբարին, օզըմ ըք լհա էն լոխճան մաշված, փորը մրեշկան կացած ծին տըվիք, տանիմ, պահիմ։

Էտ պըռավին իտի մին լղար ծի յըն տամ, վըեր պահի ծըմրեռնը, ղայսարը, ցորտը, վըեր տռնս ա կյամ, կյարունքը կյամ, կյարմուր արևը տռնս կյամ, աշխարքըս կըենանչըմ ա, ծաղկըմ, էտ վախտը, էտ ախճիգյը ասըմ ա. — Ա՛յա, քյինի թաքավերին տըղին ասի, թա կյա ծին տանի, տու կարելու չըս տանիս, շատ ա քյուքացալ, համ էլ խըմացալ, քացի կը տա։

Թաքավերին տըղան կյամ չի, լայըղ չի անըմ, ուրան գյատ ա պահըմ, ուրան գյաղան ա ղարկըմ։

www.naregatsi.org

Էտ ախճիգյը ծիյին ասըմ ա. — Ա՛յ ծի, վըեր քյըեզ տանին քըշին, ըշտըեղ էլ տանին, ըշտըեղ էլ քըշին, էլհա կը կյաս մըեր տըռանը պենդ նըստիս, հիշքան ասին եր կաց, եր չըս կըենալ, կասիս. «Թող ինձ պահողը կյա, եր կըցընի»։

Ծին իտի էլ անըմ ա։ Գյաղան հիշքան չըրշարվըմ ա, կարըմ չի եր կըցնի։

Քյընըմ ա թաքավերին տըղին ասըմ էտ լոխ։

Թաքավերին տըղան կյամ ա, թա եր կըցընի, ծին եր չի կըենըմ, հիշքան չըրշարվըմ ա, ամաչ չի կյամ։ Ծին ասըմ ա. «Թող ինձ պահողը եր կըցնի»։

Էտ ախճիգյը տանան տուս ա կյամ, էրկու դռնըմ էտ ծիյին թըխըմ, ասըմ. — Քու տարըտ, առանց էտ էլ անբախտ ա, տու խե՞ յըս իտի անըմ։ Ծին եր ա թըռչըմ տըեղան։

Թաքավերին տըղան մընըմ ա մաթաչ։ Էտ ըխճըկանը կյեղեցկոթունն էլ մին ղոլան ա ըտրան շըշկըլցնըմ։ Էտ ըխճըկանը եշըմ ա, եշըմ, քյընըմ։

Մին քանի վախտանը ետը էտ ախճիգյը պառավին ասըմ ա՝ լավ պադրաստոթուն քաշին, թաքավերին տըղին նան ուրան կընգանը կանչին ղոնաղ։

Մինչև ղոնաղ կանչիլը, էտ ախճիգյըն ասըմ ա. — Յըես մին կյարմուր խընձոր ըմ տըեռնալու, թաքավերին տըղան վեր տուս կյա, թա քյինի կը տինիս ընդրա ջուբռումը։

Ղոնաղնին կյամ ըն լավ օտըմ, խըմըմ, ուրախոթուն անըմ։ Տոն քյինելիս, պառավը էտ կյարմուր խընձորը թաքուն տընըմ ա թաքավերին տըղին ջուբռումը։ Քըշերը վըեր լոխ քոն ըն ինըմ, էտ կյարմուր խընձորը տըեռնըմ ա մին մարալ-ջեյրան ախճիգյ, կյամ նի մընընըմ թաքավերին տըղին ծոցը։ Տըղան զաւռընըմ ա, տըեսնըմ մին հուլու-մալագյ ախճիգյ ուրան ծոցըմը։ Էն մին կոխկին էլ մին կյըշըկյըրող քըրըթանթռուշ, ուրան կընեգյը։

Թաքավերին տըղան ասըմ ա.— Ա՛յ մարալ-ջեյրան, տու հո՞ւ վըս...

Էտ ախճիգյը խըտըմ ա ըտրան պըչկըչորըմ, ասըմ. — Յըես էն ախճիգյըն ըմ, վըեր թողեցիր չինարի ծառին յրան։

Ըտրեղ լոխ նաղլ ա անըմ, հինչ վըեր ուրան կըլխավը անց ա կացալ։

Տըղան հրամմայըմ ա, վըեր էտ ևև քըրըթանթռուշ կընգանը ծիյին հաքյվեն կապին, էնքան քաշ տան, վըեր մըեծ պատառը կըեռիքյը մընա։ Հրամմանը կադարըմ ըն։

www.naregatsi.org

Ըտրանա ետը օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ։ Սաղ աշխարքըս ուրխանըմ ա։ Ըտրանք էլ միչև ունրանց գյանքին վըերչը սերավ ապրըմ ըն։

Ըտրանք հասին ունրանց մուրազին, մունք էլ հըսնինք մըեր մուրազին։

Ըստուծանա իրենք մըեծ-մըեծ հունլի շավթալի եր ընգնի. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ տըռնըտական անջուկ տընողին։

www.naregatsi.org



22. ԴԱՐՎԻՇԸ

Ինում ա, չինում մին առտուրական ա ինում։ Կտրան ընում ա իրեք ախճիգյ։ Հաբը ամման դռնըմ ասըմ ա. — Յրես իմ ըխճըկերքս ինդի մարթի բեդի տամ, վեր իմ տոռնըս օղտերը պրեռնած վրեսկե պերի։

Մին դարվիշ էնա ընում մին հրեռու տրեղ ապրըմ։ Էս վեր լըսում ա, վեր էս հինչ առուտուրականը ըստի խոսկ ա ասալ, օղտերը վրեսկալ պրեռնըմ ա, հրդե ինըմ, քյընում։

Քյընում ա, քյընում, վերչը հասնըմ ա էտ առուտուրականին տոնը։ Կտեղ դարվիշը ուրան նըպատակը ասըմ ա, առուտուրականն էլ ոադի յա կրենում։

Հըրսընքին թադարեքյը քաշըմ ըն։ Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ։ Հըրսընքանը ետը դարվիշը հրդըրվըմ ա, ախճիգյը յոր օնըմ, հրդե ընդնում։

Շատ ըն քյընում, խրեգյ ըն քյընում, էս ախճիգյը տրեսնըմ ա վեր, ախեր, էս ճընապարին վերչ չիկա։ Ասըմ ա. — Էսքան էրգյան ճընապարը մրեզ ըշտրեղ ա՞ տանըմ։

Դարվիշը խեթ-խեթ ընդրան եշըմ ա, ասըմ. — Ծրենտ կըտրի, թա ըշտրեղ ընք քյընում, էտ քու կործըտ չի՞։

Վեր իտի յա ասըմ, ախճիգյը մրնում ա մաթ մրնացած, ջանը տող ա ընգնըմ, մրնում ա սուս ըրած։

Շատ ըն քյընում, խըրեգյ ըն քյընում, էտ դարվիշըն ա գյուդում, վերչը հրսնըմ ըն մին ամարաթի։ Մին մրեծ ըրկաթի դըրբըզավ նի

www.naregatsi.org

յըն մընում էտ ամարաթը։ Էրկունջի օրը էտ դաշվիշը էտ ըխճըկանը մին հում ջիգյար ա նշանց տամ, ասըմ. — Յըես օխտը օրավ քյընըմ ըմ վըերսի, քյընեզ էլ օխտը օր ժամանակ ըմ տամ, վեր օխտը օրանը ետը կյամ, տըեսնամ էս ըխճըկա ջիգյարը կերած, տու իմ կընեգյըս ըս, հավիդյան ինձ նհետ կապրիս, յըես էլ քյընեզ հունցու հավադարիմ կընեգյ, իմ լոխ թաքուն պըեններս կասիմ, իմ օխտը օթախներիս պընաշխքյը քյընեզ կտամ, թա կերիր վըեչ, գյիդաշ վեր, քու ջիգյարըտ էլ ըմ ընդըղան կախ տալու։

Ըտրանա ետը ծին նըստըմ ա, քյընըմ վըերսի։ Ախճիգյը հի՞նչ անի, շատ մըտածելանը ետը, յոր ա օնըմ վեցինջի օրը էտ ջիգյարը թաղըմ վըեղին մեչին, ինքըն ուրաան ասըմ.— Դե, կըկյա, կասիմ կըերալ ըմ, հի՞նչ ա գյիդալու։

Իտի ինքը ուրաան սըերտ տինելավ ըսպասըմ ա դարվիշին։ Օխտինջի օրը դաշվիշը ջանավարի նման մըռընչալավ կյամ ա։ Դարբաշվը նի մընընըմ, կանչըմ էտ ըխճըկանը, հըրցընում. — Ջիգյարը կերալ ը՞ս, թա չէ։

Ախճիկն ասըմ ա. — Հա, կըերալ ըմ։

— Դուզն ասի...

— Դուզն ըմ ասըմ, կըերալ ըմ։

Վեր շատ ըստըբում ա, ախճիգյն էլհա ասըմ ա կըերալ ըմ, դաշվիշը կըզնվածծ կանչըմ ա. — Ջիգյար, ջիգյար, ըշտե՞ղ ըս, սաս չի լըսվըմ։

Էրկունջի գոնըմըն էլ ա հըրցընըմ, էլհա ծրեն չի լըսվըմ։

Իրեքինջի գոնըմը վեր պըեցուր, կյըռկյոռալավ ասըմ ա. — Ջիգյա՛ր, ջիգյա՛ր, ըշտեղ ը՞ս, ջիգյարն ասըմ ա. «Էն ըմ վըեղեն տակինա»։ Համ ասըմ ա, համ էլ վըղըթաթախ տուն կյամ։

Դաշվիշը էնքան աջըղվըմ ա, վըեր էտ ըխճըկանը կըտոր-կըտոր ա անըմ, մինաք ջիգյարն ա թողըմ, էն էլ տանըմ ա բըլկոնան կախ անըմ։

Իրեքինջի օրը դաշվիշը ծին նըստըմ ա, քյընաշմ, համին էն առուտուրականին կոշտը։

Տըեղ հըսնելանը յետը ասըմ ա. — Ծրեր ախճիգյը շատ ա տուխուր, սաղ օրը լաց ա ընում, ինձ զարկալ ա, վըեր միշնաք քյուրը տանիմ, մին քանի շըեբեթ քըշտին կընենա։

Առուտուրականը ռազի յա կընենում։ Միշնաք ախճիգյը դաշվիշին նըհետ ճընապար ա տինըմ։

Էրգյան ճընապար քյընալանը ետը, էտ ախճիգյըն ասըմ ա. — Բա էսքան քյընըմ ընք, հի՞ բ պիտի տըեղ հըսնինք։

www.naregatsi.org

— Շրենըտ կըտրի, էտ քու կործըտ չի։
Քյընըմ ըն, քըյնըմ, վերչը տրեղ ըն հրանըմ։
Ախճիգյն ասըմ ա. — Բա հոր ա՞ քյուրըս։

Դռրվիշը նշանց ա տամ բըլկոնին պատան կախ տըված ջիդյարը, ասըմ.—էս քու քըվոր ջիդյարն ա։ Յրես քյըրեզ օխտը օր ժամանակ ըմ տրնում։ էտ օխտը օրըմը, թա էս ջիդյարը կըերիր, կըերիր, էն վախտը տու իմ հավադարիմ կընեգյըս կինիս, իմ լոխ սեկրետնիս քյըրեզ կասիմ, օխտը օթախնիս պըլանիքյը քյըրեզ կըտամ, թա վեր կըերիր վեչ, քու քըվոր մրնան քյըրեզ ըսպրնելու յըմ, ջիդյարըտ էս պատան կախ տամ։

Ասըմ ա պըրծրնըմ, ծի նըստըմ, քյընում։

Ախճիգյը մրնըմ ա, հունց վեր ասըմ ըն, էտ կոտրած տաշտակին առաչին կոչ եկած։ Հի՞նչ անի, հո՞ւնց անի, ինքն էլ չի գյուդում։ Օրերըն էլ անց ըն կրենում, դռրվիշին կյալի օրը մուտանըմ ա։ Ճարը կըտրած էտ ախճիգյը էտ ջիդյարը տանըմ ա, զախոտը քըցըմ։

Օխտինջի օրը դռրվիշը կյամ ա հըրցրնում. — Ջիդյարը կրեբալ ըս։

Ախճիգյն ասըմ ա.— Հա՛, կրերալ ըմ։ Էրկու դռնըմ էտ ըխճըկանան հրրցրնըմ ա։ Ախճիգյը էլհա ասըմ ա. — Հա, կերալ ըմ։

Իրեքինջի դռնըմը կյոռալալ ասըմ ա. — Ջիդյա՛ր, ջիդյա՛ր, ըշտրեղ ըս, տռւս եք, տրեսնամ։

Ջիդյարը զախոտան տռւս ա կյամ, թռվիլ-թռվիլ ընելալ ընգնըմ դռրվիշին առաչը։

Դռրվիշը վեր տրեսնըմ ա խոի յա, կըտաղըմ ա։ էտ ըխճըկանը կըլռխը կըտրըրըմ ա, ջիդյարը հանըմ, համին էն պատան կախ տամ։

էն մին օրը ծի յա նըստըմ, ճրնապարվըմ, վեր քյընի մըհեկ էլ էն պուճուր քուրը պրերի։

Քյընըմ ա, քյընըմ, վերչը հրանըմ ա հանորը տոնը, ասըմ. — Միշնակ ըխճըկանըտ մին լռվ, ղռշռնգյ տըղա օզըմ ա, նըշրնտրեքյ ա, քուվերքը օզըմ ըն, վեր ռւրռնց պուճուր քուրն էլ կյա։

էտ հանները էնքան միամիտ ա ինըմ, վեր հրվատըմ ա, եր ա կրենում էս պուճուր ըխճըկանն էլ ղարկըմ։ էս պուճուր ըխճըկանը մին շատ սռւրռւն կատու յա ինըմ։ էտ կատուն թաքուն յոր ա օնըմ, տինըմ կրռնըտակին, ծի նըստում, ճրնապարվըմ ըն։ Շատ քյընռւլռնը եաը, տրեղ ըն հրանում։

Ախճիգյը հրրցրնում ա, թա. — Բա ըշտրե՞ղ ըն իմ մրեծ նան միշնակ քըվերքս։

Դռրվիշը ասըմ ա.— Շրենըտ կըտրի, հինչ քուր, հինչ պրեն,

www.naregatsi.org

հենե քուրըտ էն բըլկոնին պատան տըված ջիգյարըն ա։ Տըեսըմ ը՞ս, էտ ջիգյարը էտ քու քըվոր ջիգյարըն ա, օխտը օր քյըեզ վախտ ըմ տինըմ, յըես վըերսի քյընըմ, վեր եկի տըեսի էտ ջիգյարը կըերած, գյիդա՞ վեր տու իմ հավադարիմ կընեգյըս ըս, հինչու օնիմ քյըեզ ըմ տալու, հինչ թաքուն պըեներ օնիմ, քյըեզ ասելու յըմ, թա վեր եկի, տըեսի ջիգյարը կըերած վըեչ՞, քյըեզ ըսպանելու յըմ, ջիգյարըտ հանիմ, հայմանն տըեղան կախ տամ։

Ասըմ ա, պըրծընում, ծին նըստըմ, քյինըմ։

Էս ախճիգյը տըես ա մըտածըմ, տըեն ա մըտածըմ, մին հընար չի քթնըմ։ Բըրդան մըետն ա քըցըմ ունրան կատվին։ Էտ ջիգյարը խրեգյ-խրեգյ կըտորում ա, ամեն օր տամ էտ կատվին։

Օխտինջի օրը ջիգյարը պըրծընըում ա։

Մըռընչալավ, փուհ-փուհ ընելավ դաշրվիշը կյամ ա, հըրցընըմ.

— Ջիգյարը կըերալ ը՞ս։

— Հա՛, կըերալ ըմ։

— Դունզըն ասի, կըերալ ը՞ս, թա չէ...

— Դե, կըերալ ըմ, իլի՛։

Դաշրվիշը կյոռըմ ա։ — Ջիգյա՛ր, ջիգյա՛ր ըշտըե՛ղ ըս։

— Էս ըմ սըրտին տակին։

Դաշրվիշը իրեքինջի դռնըմըն էլ ա հըրցընում, էլհա ջիգյարըն ասըմ ա. — Էս ըմ սրտին տակին։

Դաշրվիշը շատ ա ուրխանըմ, ասըմ ա. — Տըեսնըմ ըմ, վեր տու կինիս իմ հավադարիմ կընեգյըս, իմ տանըս, իլած-չիլածիս տարը։ Քյըեզ կըտամ իմ օխտը օթախներիս պլանիքը, քյըեզ կասիմ իմ լոխ թաքուն պըեներըս։

Իտի էլ անըմ ա։ Պըլանիքը տամ ա էտ ըխճըկանը, ասըմ.— Օտելի հետի տու վեշ մին պըեն չի իփիս։ Տըեսնըմ ը՞ս էս պատին մեչին կընոպկան, վեր մին հետ հուփ տաս, մին ստոլ ա տունա կյալու աշխարքիս օտելի լավ-լավ պըեները էն ա ինելու յըրան։ Կօտիս, կը խըմիս, մին էլ հուփ կը տաս, էտ ըստոլը ինքն ունրան քաշվելու յա։ Ըտրանա կըման էտ օխտը օթախներին տըռները իրավունք օնիս պըենաս, վըերչի օթախան կըման։

Դե թա հի՞նչ կա էտ վերչի օթախըմը, վեր դաշրվիշը թողըմ չի պեց անի, գյուդունմ չի՞։ Էտ լոխ ըսելանը հետը դաշրվիշը ծի յա նըստըմ քյինաժ վըերսի։

Էտ ախճիգյը էտ օխտինջի օթախան կըման, մընացած օթախնին պեց ա անըմ, տըեսնըմ, վըեսկավ, արծաթավ լիգյը, անկին քարերավ, լավ-լավ շշերավ, լավ պըեներավ լիգյը օթախնի...

www.naregatsi.org

Վերչը մին օր էլ, շատ ա օղըմ տրեսնա, թա էտ օխտինջի օթախըմը հի՞նչ կա, օղըմ ա հինչ էլ ինի՞, պրեց անի։

Վեր էտ օթախին տոռնը պրեց ա անըմ, բիրդան ասիս լհա մին թոփ ա տրրաքըմ, ըտրղան տուս ըն տրեռնում մին խիլլա մարթ, լոխ սոված-ծարավ, մաշված, տեղին, հունցու մըեռալ։

Էտ մարթիքյը օղըմ ըն գյիդան, թա ուրանց հու վա ազադալ դաբվիշին ծրեռքան, օղըմ ըն մին լավոթուն էլ ուրանք անին, ամմա հի՞նչ օնին, վեր հինչ լըվոթուն անին։

Էտ ախճիգյը վըխելան մընացալ ար կոչ եկած տրոնեն քըմակին կաղնած։

Էտ մարթիքյը, վեր էտ ըխճըկանը գյանքը ազադին դաբվիշին անա, վեր դաբվիշը կյա վեչ ըտրա կըլոխը կըտրի, ուրան էլ փըռչըփարա անի, թա խե՞ յա տոռնը պրեցալ, պրերըմ ըն մին յաշիգյ չինում, էտ ըխճըկանը մըեչին տինում, նհետան էլ օտելի պեներ տինում, քրցում ըտրղան մոտի կյետը։

Դաբվիշը ըրոտալավ, կյըռկյոռալով կյամ ա ուրան ամարաթը, տրեսնըմ լոխ վըեղին հավասար ըն ըրալ, քանդաչ։ Մընըմ ա մաթ մընացած։

Ըչըղվելան սաղ ջանը տրղտոդըմ ա։

Դաբվիշը դաստի գյուդում ա, վեր էտ էն ըխճըկանը պրեն ա, վեր ախճիգյն ա էտ վերչի օթախին տոռնը պրեց ըրալ։ Նա օղըմ ա ըշտրեղ էլ ինի էտ ըխճըկանը ճարի, կըտոր-կըտոր անի։

Յոր ա օնըմ տրժոխկին կավազանը, երգյիր-երգյիր շոռ կյամ, վեր էտ ըխճըկանը քյըթնի։

Մըհնգյ դաբվիշին թողինք էտ ըխճըկանը հետան շոռ կյալիս, մունք քյինինքյ տրեսնանք էն յաշիգյը վեր ըխճըկանը մըեչին ըն տրրաշ, ըշտրե՞ղ քյինից, հի՞նչ տրեռավ։

Մին տրեղ մին թաքավեր ա ինում, ըտրան ինում ա մին մադար տրղա, քրսանէրկու տրրեկան։ Մընողնին հիշքան օղըմ ըն էտ տրղին փըսակին, տրղան ռազի չի կրենում։

Մին օր էլ, հիբը ինքը տանը մինակ ար, տուս ա կյամ ուրանց պալատին կյետին ղոլի բալկոնը, կյետին մըեչը ընգած արևին շոխկին եշըմ։ Էտ վախտը տրեսնում ա վեր կյետը մին յաշիգյ պրերավ, էտ յաշիգյըն էլ մին քարի թուշ իլավ, կաղնից։

Թաքավերին տրղան ուրան ծառան ղարկըմ ա, վեր քյինի էտ յաշիգյը պրերի։ Ծառան քյինում ա, պրերում, թաքավերին տրղան հալա յաշիգյը պեց չանում, տրնում ա ուրան օթախըմը, իտի էլ թողում։ Ծառան վեր կյերակուրնի յա պրերում թաքավերին տրղին

www.naregatsi.org

հետի, էտ ախճիգյը յաշիգյան տունս ա կյամ, կրեան օտրմ։ Իտի էլ միշտ օտրմ ա, կրես թողրմ։ Մին հրետ էլ ծառան դուդուղ ա ջիհում, թաքավերին տըղին ասըմ։ Թաքավերին տըղան բուսը պահըմ ա։ Առաչ ինքը կյերակուրին կրեսը օտում ա, կրեսը թողում, ետնան քյընում ա հունրթան եշում, տրեսնըմ էտ յաշիգյան մին ախճիգյ տունս եկավ, կյերակուրին մընացածը կերավ, լհա օզըմ ար, թա նի մընանի յաշիգյին մաչը, թաքավերին տըղին պատկերը հիլումը տրեսնում ա, վեր հունրթան ունրան ա եշում։ Ախճիգյը ինքն ունրան ասըմ ա. «էս հի՞նչ կյեղեցիկ տըղա յա, դե հի՞նչ արած, վեր իմը չի»։ Էտ ախճիգյն էլ ա շատ կյեղեցիկ ինում, վեր արևին ասըմ ա. «Տու կաց, յրես քու տրեղ լունս տամ»։

Տըղան ըտեղան քըշանըմ ա, կյամ էտ ըխճըկանը խըտտըմ, ասըմ. — Վըերչը խըտետրս ընգյիր, քյրեզ մըհար էս ա հինգ տարի յա, մըտածըմ ը՞մ։

Էտ մասին նա ունրան ծընողներին ասըմ ա. ծընողնեն համոզ ըն կրենում, ըտրանց փըսակում ըն։

Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ։ Օթինչի օրը դռրվիշը կավազանը ծեռքին հրսնում ա էտ քաղաքը։ Մին օր էլ, վեր էտ ախճիգյը ունրանց պալատին փաչաքյաններավը պըցրանում ար, դռրվիշը տրեսնում ա էտ ըխճըկանը։ Նա ունրան կավազանավը տափին թըխում ա, լոխ քարանըմ ըն, էտ ըխճըկանան կըմանս։

Դռրվիշը մին մրեծ կրակ ա անըմ, մին ճիրավ լըցած ղազան տընում կրակին, վեր ըխճըկանը կըտոր-կըտոր անի, իփի։ Հենց վեր էտ վախտը մուտանըմ ա, էտ պալատին կոխկի կյետին ղոլան մին կյեռթնուկ ա կյամ, տունս կյամ, էտ ըխճըկանը ասըմ. — Ա՛յ նախշուն ախճիգյ, քու օթախըմըտ իտի մինակ նըստած լաց մի իներ, տրես քյրեզ հի՞նչ ըմ ասըմ։ Կյետին ծրեր ղոլի ղրաղի քոլերըմը էնա մին ծուռ կա, քյինի եր կալ, էրկու ծրեռքավ հուփ տո, կոտրի։ Դռրվիշին օժը էնա էտ ծունվին մեչին, վեր կոտրիս, դռրվիշը թունլանալու յա, եր ընգնի։ Էն վախտը էլհա սաղ աշխարքըս եր ա կենալու քարացած տրեղան, մարթիքյը զըրթնելու յըն, էլհա կանանչը փըսնելու յա, սաղ աշխարքըս կենթանանալու յա։

Ախճիգյը իտի էլ անըմ ա։ Դռրվիշին ասըմ ա. — Դե տու ինձ օտիլը ուտելու վըս, թող քյինիմ տունս, էլհա կյամ։

Դռրվիշը էտ վախտը տրենակնին սըրում ար։ Նա թողըմ ա։ Ախճիգյը քըշանում ա, քյինում էն քոլերըմը ման կյամ, ծունն ճարըմ, էրկու ծրեռքավ հուփ տամ, կոտրըմ։ Դռրվիշը թունլանըմ ա, եր ընգնում, սատկըմ։

www.naregatsi.org

էլհա աշխարքըս ղուրթնանըմ ա, մարթիքյ քար տըեղան եր ըն կրենըմ, ծառերը կընանչըմ ըն, վարթերը պըեցվում՝ թըռչուննին՝ երքըմ։ Աման տըեղ լուս, օրախոթուն, լիքը աշխարք, արև, կյարուն, շահիլոթուն...

Մինաւկ էս հաքյաթը ասողը, մին էլ կյրողը չի ինը՞մ...

Թաքավերը թաղադան օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ա անըմ, էտ քաղաքին սաղ ժողովուրթը ղոնաղ կանչըմ։ Աման տըեղ զուռնա, տըմբըլա, պար նան երք։ Մինչև օրըս էլ էտ ախճիգյը հաւլա ապրըմ ա բախտավեր, ուրան սիրած տըղին նհետ, վեր աման մարթի բախտ չի, վեր իտի ինի՞... Դե դաւրդերըս շատ ա, թող լըհա տուս անիմ, մըհնդյ էլ մին օրիշը թող հաքյաթ ասի[1]...

---

[1] Վերջին նախադասությունը ասացողի հավելումն է (Ե. Կ.)։

www.naregatsi.org

23. ՏԱՍՆԷՐԿՈՒ ՅԸՂՈՆԵԳՅԸ

Բոլնան ալլալա ընում ա, չընում մին թաքավեր։ Էտ թաքավերը շատ հարուստ ա ընում, ամմա շատ բեքյեփ ա ընում, սաքաբը էն ար, վեր խոխա չօնար։

Ղուլերը, ղարավաշնին ընդրան ամման վախտ հըրցընում ին, թա խե՞ յա բեքյեփ, թաքավերն ասըմ ար. — Հալբաթ մին պեն կա իլի՞, վեր բեքյեփ ըմ։

Մին դռնում էլ թաքավերը ուրան թեգյունքը պահողներեն նհետ քյունում ա վրերսի։

Մին օր անց, վրերս ընելանը ետը ծըրավում ա, ուրան ղարավաշներեն ղըրկում ա, վեր քյինան ճուր պերին։ Ղարավաշնին շատ ըն ման կյամ, վերչը մին ճըրավեր ըն ճարում։ Քյընում ըն մուտանում, վեր ճուր յոր օնին, ճուրը ետ ա քաշվում ճըրըվներեն տակը։ Ընդրանք մնում ըն ըրմացած։ Վեր մին պատառ տեն ըն քյընում, ետ ըն եշում, տրեսնում ճուրը էլհա լցվալ ա, ճըրըվներեն պըրանան եր ա տրեռնում։ Ընդրանք մին էլ ըն քյընում, թա ճուր յոր օնին, էլհա ճուրը ետ ա տրեռնում ճըրըվներեն տակը։

Ղարավաշնին շուտ ըն անըմ, քյընում թաքավերեն ասըմ։ Թաքավերը կըզնվում ա, ասըմ. — Իտի պեն չինիլ, քյընացիքյ ճուր պերիքյ։

Ղարավաշնին մին էլ ըն քյընում, վեր ճուր յոր օնին։ Ճուրը էլհա ետ ա տրեռնում ճըրըվներեն տակը։ Ըտրանք մին էլ ըն քյընում, թաքավերեն ասըմ։ Թաքավերը էս դռնում կըզնըված ինքյըն

www.naregatsi.org

էլ ա ղարավաշներեն նհետ կյամ ճըրըվներեն կոշտը։ Ամանը քըշըցընում ա, վեր ճուր յոր օնի, խըմի, էս դռնում ճուրը քըշանում չի։ Նա ամանավը ճուր ա յոր օնում, թա խմի, մին էլ ա տրեսնում մին ղըրըլթու ուրան պենդ խտտալ ա, մին թոխտ ա նշանց տամ, վերին մեչան էլ մին ծեն ասըմ ա.

«Էտ թուխտեն տակեն ծրեռք քաշի, դե հա՛, շուտ ըրա՛...» Թաքավերը չշմիշ ա ինում, ծեռք քաշում։ Վեր էտ ղըրըլթուն ուրան պեց ա թողում, քյնում ճըրըվներեն ճուրըն էլհա շըտանում ա, լըցնվում։ Ըտրանա ետը, վեր ղարավաշնեն մուտանըմ ըն ճուր յոր օնին, էլ ճուրը քըշանում չի։

Էտ լօխ թաքավերը տրեսնում ա, սուսուփուս ետ տրեռնում ուրան պալատը։ Հենց վեր պալատըն ա կյամ, ղարավաշնին վազ ըն տամ թաքավերեն առաչը, աշկալյունանք տամ, ասըմ. — Թաքավերը ապրած կենա, աշկտ լուս, քյըռզ մին տղա յա իլլալ։

Թաքավերը ըտրանա շատ ա բըքյփանում, վեր էնքան տարի յա անց կացալ խոխա չի իլլալ, մըհենգյ էլ իլլալ ա, էն փիս պըտահմունքին վախտը։

Անց ա կենում մին խիլլա վախտ։ Թաքավերին կընեգյը մրեռնում ա։

Մահվան յրա, կանչըմ ա ուրան տըղեն, ընդրան մին խաչ ա տամ, ասըմ.—Կա՛ էս խաչը, վեր նրեղ տրեղ ընգնիս, մրետտ քըցի, քյըռզ կազադի։

Տըղան վեր տրեռնում ա քըսան տըրեկան, հորն ասըմ ա. — Ա՛ հայր, միչև հի՞ բեդմա էս պալատում մընամ փակվածե։ Թող տուն կյամ, տրեսնամ աշխարքումըս հինչ կա։

Հայրը ռազի յա կրենում, տըղեն պեց ա թողըմ։

Տըղան ամեսներավ ճընապար ա քյընում։

Քյընում ա, քյընում, տրեսնում ա մին բաղ։ Էտ բաղումը լավ-լավ ծառեր, կանանչ խոտ, ծաղեգյ, հիշքա՛ն ասիս կա։ Նի յա մընում, տրեսնում մին լավ գյուղ։ Ինքյը նըղացած, էտ գյուղին քըշտի կանանչ տրեղը թեգյ ա ընգնում, վեր դինջանա։

Տրեսնում ա, վեր հեռու տրեղան տասնէրկու սիպտակ յըղոնեգյ ըն թըռչում, կյամ էտ ծառերին նան կանանչներին մեչը, դիբի գյուլին ղուլը։ Մին էլ ա տրեսնըմ, վեր էտ յըղոնեգյնին ուրանց թևերը հանեցին, տրեռին տասնըէրկու ախչիգյ, ըսկըսեցին գյուլին մաչին լըղանալը։ Համին էտ վախտը, էտ տրղան սիրահարվում ա էտ ըխճըկորցան լոխճան պուճուրին յրան։

Էտ տրղան յավաշ-յավաշ խոտերեն մաչավը կյողլը կենալավ

www.naregatsi.org

քյընում ա էտ լոխան պուճուր ըխճըկանը թևերը յոր օնըմ, կյեղում։

Հիբը վեր լոխ լըղանում ըն, գյոլան տուս ըն կյամ, ուրանց թևերը կյենում, ամմա էտ պուճուր ախչիգյը տըեսնում ա, վեր ուրան թևերը կա վեչ։ Տա ըսկըսում ա լաց ինիլը։ Էն տասնըմին յըղոնեգյը տըեմ չըն կենում, թըռչում ըն, քյընում։ Էտ վախտը, էտ տըղան քուլերին մեչան տուս ա կյամ, թևերը տամ էտ ըխճըկանը։

Համին էտ վախտը, էտ ախճիգյն էլ սիրահարվըմ ա էտ տըղեն յըա։ Ախչիգյը նան տըղան ըսկըսում ըն ուրուր նհետ խոսիլը։

Ախճիգյն ասըմ ա. — Ըկ քյընինք մըեր երգյիրը։

Տըղան ջողաբը տամ ա, ասըմ. — Ախեր յըես թևեր չօնիմ։

— Յըես երգյինքավը կթըռչիմ, տու վէչ տափավը կըկյաս ուրուր հավասար, մին տեղ էլ կը հըսնինք մըեր երգյիրը։

Տըղան ռազի յա կըենում։ Ախճիգյը կյենում ա ուրան թևերը երգյինքավը թըռչում, տըղան էլ տափավը կյամ ա ըխճըկանը հավասար հըսնում ընդրա հորը երգյիրը։ Ախճիգյը շուտ ա անըմ, քյընում, նի մնում ուրան օթախը, տըղան էլ նի յա մըննում պալատը։

Վեր նի յա մըննում պալատը, թաքավերը տըեսնում ա էտ տըղին, յրան աչըղվըմ, ասըմ. — Էսքան վախտ էտ ըշտրե՞ղ ըս իլալ, քըսան տարի յա յըես քյըեզ ըսպասըմ ըմ, ամմա տու մըհեկ ըս կյա՞մ։

Տըղան ըտրա ջողաբը տամ ա, ասըմ. — Յըես միչև մըհենգյ, վեշ մին պեն չըմ գյուդում, մըհենգյ էլ չգյիդալավ ըմ յեկալ։

Թաքավերն ասըմ ա. — Քսան տարի ըստրանա առաչ, յըես քու հոր նհետ կանդրախտ ըմ կապալ, ինքն էլ ծըեռք ա քաշալ, վեր հիբը ուրան տըղա ինի, հենց առաչի օրը ղարկի իմ կոշտըս։ Իմ մըեթկըս էն ար, վեր քյըեզ պըհի, մըծըցընի, իմ թաքուն պենըս, գյիդացածըս քյըեզ սըվըրցընի, պուճուր ախճիգյըս էլ քյըեզ տվի։ Մըհենգյ տու մըեծ ըս, ըստրանա ետը քյըեզ հի՞նչ ըմ անըմ, եկալ ըս, վըեր քու կլոխըտ կտրի՞մ...

Էս թաքավերը կախարթ ա ինում, ուրան ըխճըկերքըն էլ ըն կախարթ ինում։ Թաքավերն ասըմ ա. — Տու մին խըրեգյ մըեխկըս ըս կյամ, յըես քու կըլոխտ հաչա կըտրում չըմ, մինուկ մին պայմանավ, վեր իմ տըված իրեք ասածըս անիս։

Էն մին օրը թաքավերը էտ տըղին կանչում ա ուրան կոշտը, ասըմ. — Իմ առաչի ասածըս, վեր էքուծ քըշերավ պիտի կադարիս, է՛ն ա, վեր յըես տասնըէրկու ախչիգյ օնիմ, լոխ էլ սիպտակ յը-

www.naregatsi.org

ղոնեգյի թևեր կյեցած, ընդրանց մեչին մրեծն նան պուճուրը կարիլ չըս ճոկիս։

Քըշերավը լոխճին առաչը ցորեն ըմ ածելու։ Ընդրանք պիտի դինջ օտին։ Տու պիտի իմ պուճուր ըխճըկանըս ընդրանց մեչան ճոկիս։

Թաքավերը էտ տըղին մին ճոկ օթախ ա տամ, վեր մըտածի։ Տըղան քյընում ա ուրան օթախը։ Ուրուգյունատեմ ա ինում։ Տըղան քննենքյ ա անըմ, թա էտ տասնէրկու յղոնիգյներին մեչան պուճուր ըխճըկանը հո՞ւնց ճարի։

Էտ վախտը մին էլ ա տրեսնում մին ճանջ տըզզալավ ակուշկավը նի մըտավ։ Ճանջը տրեռավ համին էն պուճուր ախճիգյը, ասից. — Իմ հաբ քյրեզ հի՞նչ ասից.

— Ասից, վեր էքյուծ քըշերավ լոխճիտ առաչը ցորեն ա շաղ տալու, վեր օտիք, յրես էլ էտ տասնըէրկու յղոնեգյեն մեչան պիտի քյրեզ ճարիմ։

Ախճիգյը լըսելանը եռը, ասից. — Ըտրանա էլ հիշտ պե՛ն... Քըշերավ մունք լոխըս սիպտակ թևեր կյեցած տուս ընք կյալու բաղը, իմ հաբ պերելու յա մըեր առաչը ցորեն ածի։ Էն վախտը կտեսնաս վեր ըտրանցանա մինը ցորենը յոր ա օնըմ կըտուցավը, էլհա քըցում տափը, եռավ մին էլ յոր օնըմ, պըրաննըմը պահըմ. մին խըրեգյ ըսպըսելանը եռը, կը տրեսնաս վեր ցորենն օտըմ ա։ Էն վախտը կըգյիդաս վեր յրես ըմ։ Հաչլա մըհեգյ դինջ թեքյ ընգի, քոն իլ։

Էտ ըսելանը եռը, էտ ախճիգյը մին ճանջ ա տրեռնըմ, ակուշկավը տուս կյամ։ Տըղան մին խըրեգյ մըտածելանը եռը թեքյ ա ընգնում, քոն ընում։

Քըշերավը թաքավերն ուրան ղարավաշնին ղարկըմ ա, վեր էտ տըղին կանչին։ Տըղան զաբթնում ա, շորերը կյենում, տուս կյամ բաղը։ Մին խըրեգյ եռը տրեսնըմ ա, վեր էտ տասնըէրկու յղոնիգյնին էլ եկին բաղը։ Թաքավերը ըտրանց առաչը ցորեն ա ածըմ, լոխ ըսկըսում ըն օտիլը։ Մին պատառ եռավ թաքավերը էտ տըղեն անա հըրցընում ա, թա. — Վրերն ա պուճուր ախճիգյըս։

Էտ վախտը տըղան տրեսնում ա, վեր ըտրանցանա մինը ցորենը կըտուցավը յոր ա օնըմ, էլհա տափը քըցում, մին էլ ա յոր օնըմ, պըրաննըմը պահըմ, մին խըրեգյ եռը օտըմ։ Տըղան նշանց ա տամ էտ պուճուր ըխճըկանը։ Թաքավերը տրեսնում ա, վեր դուզ ա ասալ, քընենքյ ա անըմ, թա էս հո՞ւնց գյիդաց, էս հո՞ւ ասից, բաքյաս ըխճըկորցանը մինը կապ օնի ընդրա նհետ։

www.naregatsi.org

Թաքավերն ասըմ ա. — Լաւ, էտ մինըտ գյիդացիր, մըհեգյ էլ իմ էրկունջի ասածըս պիտի կըդարիս։ Մին քըշերվա մեչին տու պիտի իմ պալատիս տիմացը մին իտի պալատ շինիս։

Ուրյան խոսկը ըսելանը ետը թաքավերը հրամմայում ա էտ տըղին, վեր շուտ անի, քյընա ուրյան օթախը։ Տըղան քյընում ա ուրյան օթախը, ըսկըսում քնենքյ անիլը։ Մըթնալ ար, մին էլ ա տըեսնում ակուշկավը մին ճանջ եկավ, էլհա ախճիգյ տըեռավ, ասից. — Իմ հար քյըեղ հի՞նչ ա ասալ։

Տըղան ասըմ ա.— Քու հար ասալ ա, վըեր մին քըշերվա մեչին իմ պալատիս առաչին մին հենց պալատ շինի, վեր իմանն էլ լավ ինի։

— Էտ ա՞ մին պե՞ն, քընենքյ մի անիլ, թեքյ ընգի, քյըեղ հետե քոն իլ։ Ուռուբանա եր կը կենաս, կը տըեսնաս պալատը հազըր ա։

Ախճիգյը էլհա ճանջ ա տըեռնում, ակուշկավը տուս կյամ։ Քըշերավը տղան շուտ եր ա կենում, տըեսնում թաքավըերին պըլատեն նման մին պալատ ա շինած։ Նա մընում ա մաթաչ։ Տուս չի կյամ օթախան, ըսպասում ա, վեր թաքավերը ինքը կանչի։ Թաքավերը քըշերավը շուտ զըեռնում ա, տըեսնում, վեր պալատը շինած ա, կըլխու վա ընգնում, վեր էտ տըղին պենը չի՞, վեր ուրյան ըխճըկորցան մինը կապված ա էտ տըղին նհետ։

Կանչում ա տըղին ուրան կոշտը, ասըմ. — Իմ էրկու ասածըս ըրալ ըս, վըեր իրեքինջի ասածըս էլ կադարիս, քյըեղ ըսպանելու չըմ, վեր կադարիս վեչ, կըլոխտ կըտրել ըմ տալու։ Էքյուծ ուռուբանա, տու իմ կոխկիս կընըստիս, մին մունուտումը մին ճոխտ վըննաման կըկարիս։ Մըհեգյ քյընա քու օթախտ մըեթկ ըրա։

Տըղան շատ բեքյեփ քյընում ա ուրյան օթախը մըետք անըմ, թա հո՞ւնց անի, հի՞նչ անի, վեր էտ դյուրդյան տուս կյա։ Կըես քշերը անց ար կացալ, վեր ակուշկավը ճանջը նի յա մընում օթախը, ախճիգյ տըեռնում, հըրցընում, թա հարը հինչ ա ասալ։

— Քու հար էս դյունըմըս առուռ շատ մին տըժեր պեն ա ասալ, վեր յըես պիտի ուրյան կոխկին նըստիմ, մին ճոխտ վըննաման կարիմ, մին մունուտումը։ Քու հար հըսկացալ ա, վըեր յըես կապ օնիմ ուրյան ըխճըկորցան մինին նհետ։ Ըտրա հետի էլ առուռ տըժեր պեն ա ասալ, վեր կարինք վեչ կադարինք, վեչ յըես, վեչ տու։

Ախճիգյը ասըմ ա. — Հնար չիկա, վեր ասեր ճոկ նըստի կարի, յամալ կըկյար։ Ամմա ասալ ա, վեր ուրյան քըշտին նըստիս։ Գյուդում չըմ, թա հինչ անիմ, էլ օրիշ ճար չիկա, պիտի փախչինք։ Էրկուսըն էլ ռազի յըն կըենում, վեր փախչին։

www.naregatsi.org

Ախճիգյն ասըմ ա. — Առաչ տու ակուշկավը տունս եկ, ետավ՝ յրես։

Իտի էլ անըմ ըն։ Քըշերավը թաքավերն ուրյան ծրռոտանցան մինին ըղարկում ա, վեր էտ տղին կանչին ուրյան կոշտը։ Ծառան տոռնը թակում ա, տրեսնըմ վեր պեց չի՜։

Թաքավերը հրամմայում ա, ասըմ. — Շունտ եր կըցըրեքյ, պերեքյ ըստրեղ, ըտրա մահը յրա յա հրսալ, էտ խե՜ չի զյրթնըմ։

Ծրռոտենքյը քյընում ըն տոռնը թակըմ, տեսնում սյու, սյումուր չի կա։ էն վախտը օզըմ ըն ակուշկավը նի մըննին, տրեսնըմ ըն ըխճըկանը պատկերը շունշին մեչան ծրծաղում ա ծրռոտանցը յրան։

Ծրռոտենքյը քյընամ ըն թաքավերին ասըմ։ Թաքավերը շատ ա ըչըղվում, ուրյան ծրռոտանցը մին էլ ա հրամմայում, վեր ըտրանց ճարին, ամմա հիշքան էլ ման ըն կյամ, վեչ ախճիգյն ըն ճարում, վեչ էլ տրղան։

Թաքավերը էտ վեր լրսում ա, ծրռոտանցը հրամմայում ա, վեր քյընան ընդրանց քյըթնին։ Ծրռոտենքյը հըղե յրն ընում, վեր ընդրանց ման կյան, ճարին։

Ախճիգյն ասըմ ա. — Իմ հյար մըեր հետան ա ղարկալ, բիդի կյողլը կբենանք։

Տըղան ասըմ ա. — Հի՞նչ անինք։

Ախճիգյն ասըմ ա. — Ցրես մին կարմունջ տրեռնամ, տու էլ իլ կարմունջին տակավը քյընող ճուր։

Իտի էլ ինում ա։ Ախճիգյը տրեռնում ա կարմունջ, տրղան՝ կարմունջին տակավը քյընող ճուր, ծիյանքն էլ՝ քար։

Թաքավերեն ծրռոտենքյը միչև կարմունջը կյամ ըն, տրեսնում վեչ մին պրեն չի կա, ետ ըն տրեռնում, քյընում։

Թաքավերն ասըմ ա. — Ճընապարին հի՞նչ տրեսիք։

— Թաքավերն ապրած կենա, տրեսինքյ մին կարմունջ, ընդրա տակավը քյընող մին կյետ։

— Թուռ՛, հարամզադեքյ, բա տուք գյուղում չը՞ք, վեր մըեր քըղաքան մոտիկ կարմունջ չիկա։

Ծրռոտանցը մին էլ ա ղարկըմ, վեր քյինին ըխճըկանը ճարին։

Ախճիգյը էտ գյիդալով տըղին ասըմ ա. — Էլհա հյարըս մարթ ա ղարկալ մըեզ քըթնին։ Ցրես տրեռնամ մին սունն, տու էլ՝ ընդրա յրրան մին փունար, ծիյանքն էլ քարեր։

Իտի էլ անում ըն։ Ծրռոտենքյը կյամ ըն, ըտեղավ անց կենում, պեն չըն տրեսնում։ Կյամ ըն թաքավերեն ասում, վըեր ճարալ չըն։

www.naregatsi.org

Թաքավերը առուի յա ըլըղվում, ասըմ. — Ցրես ինքըս կըքյինիմ ընդրանց ճարիմ։

Ախճիգյը գյուդում ա, ասըմ. — Հարկավեր ա իմ հոր քըղաքան տունս կյանք, օրիշ հնար չի կա՞։

Էտ վախտը տըղան մըտոն ա քյըցում մորը տված խաչը։ Ըտրա զորութունավը էտ քըղաքան տունս ըն կյամ, քյընամ մին օրիշ քաղաք։ Ախճիգյը տըեռնում ա ժամ, տըղան էլ տերտեր, ծիյանքն էլ զինգեր։

Ըխճըկանը հայրը տըեսնում ա, վեր ըտահանք կան վեչ, հույսը կըտրած նի յա մընում ժամը, տերտերին անա հըրցընում.

— Տեր հայր, տըեսիք վեչ մին տըղա մին ախճիգյ ըստեղավ անց կենալիս։

— Թաքավերն ապրած կենա, տըեսի—էրկու կյարմունր ծիյավեր, մին սըհաթ ըստրանա առաչ, էս հըղըցավը քյընալիս։ Թաքավերը հույսը կըտրած ետ ա տըեռնում ունրան քաղաքը, տըղան նան ախճիգյը ունրանց ճընապարը շարունակում ըն։ Հիբը հըսնում ըն էն տըղին հորը քաղաքը, ախճիգյը ասըմ ա. — Ցրես տըեռնամ մին ծաղեգյ, էս կանանչ, ծաղեգյներավ լիգյը տըեղը. տու քյինի ծրեր պալատը, տըես քու հայր հունց ա, սաղ ա, սըեյրու ա, հի՞նչ կա, հի՞նչ չիկա ծրեր քաղաքումը։ Ետնան կըկյաս ինձ տանիս։ Ըտրանա կըման, հըղեցը տու պըտըհելու յըս մին պուճուր, կյեղեցիկ խոխի, ղաստ ըրա վըեր պաչիս վեչ, թա վեր պըչեցիր, ինձ մոռանալու յըս։

Տըղան կյալիս ա դիբի ունրան հորը պալատը։ Հըղեցը պըտահում ա մին պուճուր, նախշուն խոխի։ Օզըմ ա պաչի, ամմա մըեռն ա քըցում էտ ըխճըկանը ասածնին, մին էլ հըռանում ա։ Մին էլ մըտածըմ ա, ունրան մըթկումը ասում. վեր «խե՛ պիտիմ էն ըխճըկանը մոռանալ», ետ ա տըեռնում, էտ խոխին պաչըմ։ Վըեր պաչըմ ա, ծրեռաց մոռանում ա էն ըխճըկանը։

Հիբը պալատն ա հըսնում, հայրը, մարը ուրխանում ըն։ Մըեծ պադրաստութունավ տըղին ընթունում ըն։

Մին քանի վախտ անց կենալանը ետը, հայրըն ասըմ ա. — Ա՛ բալա, էտա հըսալ-փըսալ ըս, հարկավեր ա քյըեզ հետի ախճիգյ օզած, քյըեզ փըսակած։ Տըղան ոազի յա կըենըմ։

Էս քաղաքիցը մոտիկ մի օրիշ թաքավեր կար։ Ընդրան օնար մին շատ ղաշնագյ ախճիգյ։ Էտ ըխճըկանը նշան ըն տամ էտ տըղին հետի։ Մին քանի շեփտանը ետը հըրսանիք բեդմա անին։

Համին էտ քաղաքումը ապրըմ ար մին շատ լավ նկարիչ։ Նա նկարում ար սարերը, հանդերը, չոլերը, ղաշնագյ տըեղեր։ Նա մին

www.naregatsi.org

դռնում էլ տրեսնում ա, վըեր էտ ծաղեգյներեն մեչին կա մին շատ նախշուն ծաղեգյ։ Նա մուտանում ա, տրկռիքյավը հանում, տանում տոն, տինում մին ծաղկամանի վրեղի մեչի։ Էտ նկարիչին տանը վեչ մին մարթ չիկար, ինքն էլ սուբեհ ար, խալաստոյ. ինքն էլ՝ քյասիբ ար։ Ամուն օր, հիբը էտ նկարիչը կործի ար քյինում, էտ ծաղիկը ախճիգյ ար տրեռնում, ըսկըսում տուխուր երքեր ասիլը,— տոն-տրեղ հըվըքելիս լաց ինիլը։

Նկարիչը կյամ ա, տրեսնում տոնը, տրեղը հըվաքած, ղաշնագյ։ Տա մընամ ա զարմացած, թա էտ հու կինի, հու չինիլ։ Մին էրկու դռնում վեր իտի յա անըմ, էտ նկարիչը կյողլ ա կրենում, տրեսնում, վեր ուրան պրերած ծաղիկը ախճիգյ տրեռավ, ըսկսից մին ղոլան տոնը հըվաքիլը, մին ղոլան էլ տխուր երքեր ասիլը։ Էտ վախտը նկարիչը կյողլը կացած տրեղան տուս ա կյամ, տրեսնում մին հուլումալագյ ախճիգյ։ Ախճիգյը հըմանչում ա, մընում տրեղը կաղնած, լաց ինում։ Նկարիչը մընամ ա ըրմացած։

Ասըմ ա. — Ըշտըղացի՞ յըս, ըշտըղա՞յըս եկալ, թո՞րն ըս քյընում հո՞վ ըս, հո՞ւ չըս։

Ախճիգյը լոխ նաղլ ա անըմ, ետնան ասըմ. — Մըեր քըղաքումը էն տըղան նըշանվա՞լ ա՞։

Նկարիչն ասըմ ա. — Էս քըշեր ընդրա հըրսանիքն ա։

Ախճիգյը նկարիչին ղաշանք ա անըմ, ասըմ. — Քյինա՞ էն հըրսընքատըեռնը ասի. «Իմ ախճիգյս շատ լավ թխվածկնի յա թըխըմ, թող կյա ծրեզ քյումագյ անի»։

Նկարիչը քյինում ա, ասըմ։ էն պադրաստոթուն քաշողնին ասըմ ըն. — Թող կյա։

Ախճիգյը կյամ ա, թըխվածքնի թըխում, մուտանին մեչին տինում, ասըմ. — Էս թըխվածքը տարիք տըվիք փեսացուվեն։

Հըրսընքատարերը կադարում ըն էտ ըխճըկանը խնթիրքը։

Տըղան թըխվածքը օտելիս, մըտանին ընգնում ա ընդրա պերանը։ Նա պերանիցը հանըմ ա, տրեսնում, դաստի օշը տանըմ ա։

Լոխ վախըմ ըն, թա հի՞նչ պըտահի՞ց փըսըցուվին։ Վեր տըղին օշը կյլոխն ա կյամ, հրամմայում ա ուրան կոշտը պերին էն թըխվածքը թըխողին։ Վեր պերում ըն, թաքավերին տըղան պաչում ա ընդրան, ետավ մեղա յա կյամ։ Ախճիգյը ներում ա։

Տըղան հըրսընքատերերին լոխ նաղլ ա անըմ ուրան կըլխավն անց կացածը։ Ասըմ ա. — Յըես պիտի էս ըխճըկանը նհետ փըսակվիմ, վեչ թա էն թաքավերին ըխճըկանը նհետ, թող էտ թաքավերը նըղանա վեչ։

www.naregatsi.org

Հենց էտ քըշերը հըրսանիք ըն անըմ։ Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ։

Հըրսընքանը ետը ընդրանք շատ օրախ, բախտաւէր ըն ապրըմ, մինչև ուրանց Սիմոն ծուրուննի տըեռնալը։

Երգյինքան էտ քըշեր աստխեր ծըլլացին, հու մուրազ օնի, թող ասի, վեր կադարվի։ էտ քըշեր Շուշի-Ղալին կանանչ-կյարմուր բախչոցան, էն տեսակ-տեսակ, ռանդյ-ռանդյ թոփ վարթերան շաղ տվին փունջերավ... փունջերին մինը՝ ասողին, մինը՝ լըսողին, մինն էլ՝ կյըրողին, վեր վըետ քաշին էն անմահական վըետը, ուրանց հոքին փառավըերի՜։

www.naregatsi.org

24. ԴԱՐՎԻՇ ԹԱՔԱՎԵՐԸ

Մին օր հայոց Անի քաղաքին թաքավերը շորերը փոխըմ ա, դարվիշի շորեր կյենըմ, թաքավերությունը ուրան վեզիրին թափշուր անըմ, ինքը քյընըմ ժողովուրթին մըհչը, տրեսնա ժողովուրթը հունց ա ապրըմ, ուրան անա ռազի՞ յա, թա չէ, մին վեզիր էլ նըհետը յոր ա օնըմ, հընգյրոթուն ընելի հետ։ Մին խիլլա էլ վրեսկե, թընգյակին քարեր ա յոր օնըմ, քյընըմ։

Քյինըմ ըն, քյինը՞մ, շատ քաղաքնի, շեններք ըն ման կյամ, շատ մարթկանց նըհետ ըն նստըմ, եր կրենը՞մ, շատ խասյաթնի յըն տրեսնըմ, չար նան պարի, շատ պեներ ա ըտրանց կըլոխը կյա՞մ։

Վերչը շատ ըն քյինըմ, խրեգյ ըն քյինըմ, շատը նան խըրեգյը աստուծ կըգյիդա, հրսնըմ ըն մին անծանոթ երգյիր։

Թաքավերը վեզիրին ասըմ ա. — Քյինինք բազար, ախկադի նման փող հրվաքինք, տրեսնանք ժողովուրթը հունց ա քյոմագյ անըմ ախկադներին։ Մինակ յրես բազարին էս կըլխան նի մրննիմ, տու էն կըլխան...

Իտի էլ անըմ ըն։ Թաքավերը մուտանըմ ա մին առուտուրականի, փող օզըմ։ Առուտուրականը քյոմագյ ա անըմ, փող ա տամ։ Դարվիշը ռազի յա քյընըմ։

Էտ առուտուրականը ուրան գյադին ասըմ ա. — Էտ ախկադին բուսը պահեցիք, ուրուգյունը մըեր տոն պըերիք։

Ուրուգյունը էտ դարվիշին ղոնաղ ըն կանչըմ։ Ասըմ ա. — Ցրես

www.naregatsi.org

կը կյվի, ամմա մունք էրկու հոգի յընք, ընդրան թողիլ չըմ, յրես կյամ։

Ծառիքը ետ ըն տրեռնըմ էն առուտուրականին ասըմ։

Առուտուրականը ասըմ ա. — Քյեցիք էրկուային էլ պերիք, աշկիս յրան տրեղ օնին։

Էրկու դաւրվիշ քյընըմ ըն էն առուտուրականին տոնը։ Առուտուրականը լավ ղոնաղ ա անըմ էտ դաւրվիշներին, ասըմ. — Իմ տոնըս ծրեզ ղուրբան, հիշքան օզըմ ըք մնացիք ըստեղ, հիբը օզիք էս քաղաքան տունա կյաք, կարող ըք տունա կյաք։

Իտի մին քանի օր մընըմ ըն էտ քաղաքըմը։ Մին օր էլ էտ թաքավեր-դաւրվիշը բըզարըմը տրեսնըմ ա, մին մարթ օղտը կըղնըցըրալ ա բազարին մեչին, օղտին մեշկին էլ մին պուճուր օթախ տիրած, կանչըմ ա. — Հու վըեր օզըմ ա մին դունըմ իմ օղտիս յրան տիրած պուճուր օթախին մեչին եշի, թող իցուն մանեթ վրեսկե տա՞։

Վեչ մինը մուտանըմ չի էտ պըլըխելունք մարթան։

Դաւրվիշը վըեր լըսըմ ա, մուտանըմ ա, իցցուն մանեթ վրեսկե փող տամ, էտ օթախին մրեչին եշըմ։ Վըեր եշըմ ա, օշը տանըմ ա, եր ընգնըմ։

Ժողովուրթը զարմանըմ ա, թա էտ դաւրվիշը խե՞ նըհախ տրեղան համ հրվաքած փողը, վերչի կրպրկնին տրվավ, համ էլ օշը տարավ։ Վեր դաւրվիշը օշը կըլօխըրն ա հրվաքըմ, էտ օղտապանին անա հրրցնըմ ա. — Հիշքա՞ն փող տամ քու էտ օթախիտ։

— Իրեք հաւրուրիցցուն վրեսկե տո, քյե տամ։

Հրվաքված ժողովուրթին անա վեչ մինը մուտանըմ չի, դաւրվիշը էտ կումարը տամ ա, էտ օղտին յրա օթախը առնըմ։ Էտ օթախը մրըն էլ մին հունրիփաւրի ախճիգյ։ Վըեր ժողովուրթը էտ ըխճըկանը տրեսնըմ ա, մրընըմ ա մրլորվա՜ծ։ Գյիդըմ ըն, թա երգյինքան ա, էս երգյիրաս չի։

Էտ քըշեր կյամ ըն էն առուտուրականին տոնը։ Էքսը դաւրվիշ-թաքավերը ունրաւն վեզիրին ասըմ ա. — Տու ետ տրեռ քյինի պալատը, երգյիրը լավ կառավարի, յրես հալա ըստեղ կրենալու յըմ։

Դաւրվիշը ամմաւն օր բազար ա քյընըմ, ամմաւն ջուտա օտելի պեներ առնըմ, պրերըմ տամ էտ ըխճըկանը։

Վերչը ըտրա փողը պըրծընըմ ա։

Դաւրվիշը տրխուր նըստըմ ա, քընենքյ անըմ, թա էն մին օրը էտ ըխճըկանը հի՞նչավ պիտի պահի, ջուտաբաջուտա օտելի պեներ ըշտեղան ճարի, վեր փող չիկա։

Էտ ախճիգյը տրեսնըմ ա, վըեր դաւրվիշը, ախեր շատ ա բեքյեփ

www.naregatsi.org

մուտանըմ ա, կոլայվը ընգըմ, պաչըմ, ասըմ. — Սիրելի դայրվիշ, խե՞ յըս բեքյեփ, բայքաս ինձանա սա՞ռալ ըս, ամմա յըես քյըեզ շատ ըմ սիրըմ, տու ինձ էն կյող-ավազակին ծրեռքան ազատեցիր, քու վերչին կըպըկնիտ տըվիր, ինձ հետի մըեծ-մըեծ խարջեր ըրիր, բա մըհեկ խե՞ իտի յըս։

Դայրվիշը ետ ա տըեռնըմ էտ ըխճըկանը աշկին մըեչին եշըմ, ասըմ. — Չէ, քըմատաղ, յըես քյըզանա սառալ չըմ, յըես քյըեզ շատ ըմ սիրըմ, տու իմ աշկիս լուսըն ըս, կըլխիս թաքյըն ըս, իմ ջանս-ջիգյարն ըս, ամմա քյըզանա հի՞նչ կյեղիմ, փողըս պըրծալ ա։

Էտ ախճիգյը ըտրան իցցուն մանեթ վըեսկե յա տամ ուրայն ծրեռքին կյեղած-պահած, իլած-չիլած լոխ փողը էտ ա ընում, ասըմ ա. — Դայրվիշ ջան, քնենքյ մի անիլ, օրախ կաց, ծրծաղի, էս փողըն էլ ինքյ կալ, քյընա բըզարան ջուտաբաջուտա, ամման ռանգյի թիլեր առ, պըեր, գյաբա կյործիմ, տար թանգյ կյինավ ծախի։

Դայրվիշը իտի էլ անըմ ա։ Սաղ քըշերը էտ ախճիգյը քոն չի ինըմ, մին ղաշանգյ գյաբա յա կյործըմ։ Ուտուբանա դայրվիշը եր ա կրենըմ, մընըմ մաթ մընացած։

Ախճիգյը ասըմ ա. — Սիրելի դայրվիշ, էս գյաբան տար բազար, ծախի, ամմա էրկու հարուրը իցցուն վըեսկա վեչ իվիլ, վըեչ պակաս, ծախիս վեչ, վեր շատ էլ տան, տաս վեչ։

Դայրվիշը էտ գյաբան տանըմ ա բազար, վեր ժողովուրթը տրեսնըմ ա, մընըմ ա մաթ մընացած, պըերաննին պեց ըրած, չըտեսի նման եշըմ ըն։ Դայրվիշը էտ գյաբան դուզ էրկու հարուր իցցուն վըեսկավ ծախըմ ա, օրախ-օրախ ամման օտելի պեն, թիլեր առած, կյամ տոն։

Իտիյոթունավ մին խիլլա վախտ էտ քաղաքըմը ապրըմ ըն։ Ախճիգյը իտի գյաբեքյ ա կյործըմ, էն առուտուրականը տինըմ ա ուրայն դուքյանըմը ծախըմ։

Էտ ախճիգյը Հայաստանի զահմանեն տրենը, Իրանին շահին ախճիգյըն ա ինըմ։ Մին աշխարքիս հայտնի ղաշաղ ման կյալի վախտը ըտրան կյուղանըմ ա, պըերըմ Հայաստան, ըտըղան էլ անց ըն կրենըմ Ղարաբաղ, գյիդալավ վեր Շուշի քաղաքըմը շատ հարուստ առուտուրականնի կան, պըերըմ ա ըտեղ ծախըմ, հեռանըմ, քյընըմ, կըլոխը ջանջալա ազատըմ։

Իրանի շահը հրամման ա տամ, ուրայն երգյիրըմը լոխ սոքյ պահին, սրեվ կյենան։ Մարթիքյ ա ղարկըմ հըրևան երգյիրնին, ըխճըկանը ճարելի հետի։

Նըշանց ըն տամ էտ ըխճըկանը կյործած գյաբեքյը, ասըմ.

www.naregatsi.org

Բալքյաս իստի կյործած գյըբոցը յրան ճընանչիք։ Իտի էտ ըխճըկանը հետան ման ըն կյամ ման, վեչ մին տըեղ ճարըմ չըն։ Վերչը Իրանի էտ մարթկանցից մինը ընգնըմ ա Շուշի-Ղալան, ըշտեղ էտ ախճիգյըն ար։ Տա քյինըմ ա բազար, համին էն առուտուրականին դուքյանըմը էն ըխճըկանը կյործած գյաբոցը նըման գյաբա ճարըմ։

Մուտանըմ ա, կյինը գյուդունմ, ասըմ.— էտ գյաբոցան ինձ շատ ա հարկավեր, էտ հո՞ւ վա՞ կյործըմ։

Դարվիշը մուտանըմ ա էտ մարթին, ասըմ. — Ցըես ըմ կյործըմ։ էտ մարթին էլ յոր օնըմ տանըմ տոն։ Քըշերը կըենըմ ըն։

էտ ախճիգյը մարթին ասըմ ա. — էս մարթը իմ աշկիս լավ չի ըրվըմ, էտ ըշտեղ ա քյըեղ չհաբ, վեչը-փոչ պիտեր չհա՞ծ էտ մարթը, պըլլորըս ըտրա տանեն հա՞, օխծը ըտրա վիզավը փըթաթվե՞։

Վերչը մին թահրյավ ըտրանք քոն ըն ինըմ։

Քըշերվա կըեսին էտ մարթը եր ա կըենըմ, տըեսնըմ ըտրանք քոն ըն, շորերը կյենըմ ա, ըտրանց քըթին տակին քընըցնող ճար ա տընըմ, պինդըմը քընըցնըմ, էտ ըխճըկանը յոր օնըմ, ծիլին թամքան կապըմ Արասխը անց կըցնըմ, տանըմ Իրան։

Էքսը էն առուտուրականը տըեսնըմ ա դարվիշը եկավ վեչ։ Կյամ ա տոն, տըեսնըմ դարվիշը խոր քոն նի մըտած։ Մին թահրյավ ըտրան եր ա կըցնըմ։ Դարվիշը եր ա կըենըմ, տըեսնըմ կընեգյը կա վեչ, ղոնաղըն էլ չի կա՞։ Տա օղըմ ա, թա պըլանա, կյիժվի, ընգնի էն սարերը։

Վերչը էտ առուտուրականին ասըմ ա. — Ցըես պիտի քյինիմ իմ խելունք, կյեղեցիկ, մաննները վըեսկե կընգանըս ճարիմ։ Ասըմ ա, ճընապար ընգնըմ, քյինըմ։

Շատ ա քյինըմ, թա խըրեգյ ա քյինըմ, շատը նան խըրեգյը ինքը կգյիդա, հըսնըմ ա մին երգյիր, տըեսնըմ սաղ ժողովուրթը կյարմունր ա կյեցալ։

Դարվիշը մուտանըմ ա մին մարթի, հըրցընըմ։ էտ մարթը, ասըմ ա. — Ա՛յ մարթ, բա գյուդունմ չը՞ս շահին հրամմանը, վեր պիտի քառասուն օր կյարմունր կյենան։ Շունտ ըրա տու վել կյարմունր շորեր կյեց, թա չէ շահը կըլոխտ կըտրել կտա՞։

— Ախեր սաբաբը հի՞նչ ա, վեր կյարմունր ըն կյեցալ։

էտ մարթն ասըմ ա. — Շահին ըխճըկանը հըրսանիքըն ա, համ էլ ղաչաղնին էտ ըխճըկանը փըխցրած ըն իլալ, մին մարթ քյեցալ ա ճարալ, պերալ, մըհեկ էլ ուրան ախպորը տըղին յրան փըսակըմ ա։

www.naregatsi.org

էտ վեր դաւրվիշը լըսըմ ա, ասըմ ա. — Ա՛յ մարթ հիշքան փող օզըմ ըս, կըտամ, մինաւկ ինձ մին պեն ասի։ Տըեսնամ էտ ըխճըկանը հո՞ւնց տըեսնամ։

էտ մարթը վեր վըեսկուն անըմը լըսըմ ա, ասըմ ա. — Հաւլա մին ծրեռք կյաւրմուր շուր պըերիմ, կյեց, ետնան կասիմ։

Տա կյաւրմուր շուրեր ա պըերիմ, դաւրվիշը կյենըմ ա, ասըմ. — Դաւրվիշ ախպեր, էտ ըխճըկանը տըսնալի հետի մինաւկ մին թաւհրը կա։ Ուրուդյունը յըես քյըեզ կըտանիմ շահին կոշտը, կասիմ, վեր տու օզըմ ըս մեչիդըմը ծառայիս։ Նա քյըեզ յոր կօնի մեչիդըմը կծառայիս։ Շահին ախճիգյը նան փըեսացուն կյալու յըն մեչիդ, մոլլին քըշտին փըսակվին, քյաբինը կըտրին։ էտ վախտը տու կարող ըս էտ ըխճըկանը տըեսնաս։ Ամման մունուտ տու պիտի սայաղ կըենաս, թա չէ, կըլինխտ տիրևի նման թըռչելու յա, յա քու կըլինխըտ, յա մին հավու կըլինխ ա իննելու։ Փըեսացուն էլ ա իննելու մեչիդըմը։

Իրեք օր, իրեք քըշեր մեչիդըմըն ըն իննելու, մըեր ադաթը իտի յա։ էտ վախտը ղաստ ըրա ըխճըկանը տըես, խոսի, թա կարիս ըխճըկանն էլ եր կալ, փախի քու երգյիրըտ։

էտ մարթը իտի էլ անըմ ա։ Ուրուդյունը քյինըմ ա շահին պալատը, շահին խընթըրըմ, վեր էտ տըղին մեչիդըմը ծառա յոր օնի։ Շահը հրամման ա տամ, վեր յոր օնին։

Մին օր հըրսանիքին օրախ սաւսը կյամ ա մեչիդը։ Շահին ախճիգյը նան փեսացուն մընում ըն մեչիդըմը, մընացած ղոնաղնին քյինում ըն ուրաւնց տընեըը։ Շահին ախճիգյը քըշերը տուս ա կյամ մեչիդին հայաթը, ընդեղ տուխուր նըստըմ, լաւց իննում, մըետը քըցըմ դաւրվիշին, ախ քաշըմ, ընդրա սըերտը դաւրվիշին յրան ար։ Լաւց ա իննում լաւց, էտ ախպուրին ճըիրաւվը իրեսը լվանըմ, էլհա նի մընընըմ մեչիդը։

Էրկունջի քըշերըն էլ ա իտի անըմ։ Դաւրվիշը էտ լոխ տըեսնըմ ա։ Իրեքինջի քըշերը փըսակը պիտի պըրծներ։

Դաւրվիշը ռիսկ ա անըմ, տուս կյամ էն հայաթին ըխպրին կոշտը, ըշտեղ էտ ախճիգյը կյամ ար, նըստըմ լաւց իննըմ։ Ըտեղ ըտրանք ուրուր տըեսնըմ ըն, պըչպըչորվըմ, լաւց իննըմ։

Ախճիգյըն ասըմ ա. — Դաւրվիշ, տու էս քըշեր պիտի էտ տըղին կըլինխը կըտրիս, թաւ կարեցիր կըտրիս, էնա հու յըես քունն ըմ, թա կարեցիր վեչ կըտրիս, էլ պըրծավ, էլ վեչ յըես, վեչ տու։

Դաւրվիշը ռազի յա կըենըմ։ էտ ախճիգյը նի յա մընընըմ մեչիդին մեչի օթախը, նըշընածին ասըմ. — Հի՞նչ կինի, էս մեչիդին

www.naregatsi.org

ծառայողին ասիս կյա հաքյաթ ասի, քոնս տանըմ չի՛, համ էլ քըշերը էրգյա՞ն ա։

Իտի էլ անըմ ըն։ Դաբվիշը կյամ ա վրեննին յրան կաղնած էնքան հաքյաթ ասը՛մ, վեր ըտրանց քոնը տանըմ ա։ Դաբվիշը տրենակը հանըմ ա, էտ տղին սըերտը կոխըմ, ախճիգյը յոր օնըմ, փախչըմ։

Քյընըմ ըն, քյընըմ, շատ ըն քյընըմ, թա խըրեգյ ըն քյինըմ, վերչը մին ախպըւրի քըշտի նստըմ ըն, թա դինջանան։ Ախճիգյը կըլնիսը տինում ա դաբվիշին ծընգնին, քոն ինըմ։ Դաբվիշը ըտրա մազերը սըղալելիս տրեսնըմ ա խըզըտակին մազերին մեչին մին ճուղուպրի չանք պին։ Յավաշ-յավաշ հանըմ ա, տրեսնըմ մին շըղշողըմ բուլյանդի քար ա։ Մինչև դաբվիշը էտ քարին եշիլը, մին մրեծ ըրծիվ դաստի քըշանըմ ա, քարը կըտուցավը չանթըմ, ետ թըռչըմ, մին մունուտի մեչի։

Դաբվիշը մընըմ ա դարդի մեչի։ Ասըմ ա.— էս ախճիգյը քունըտեղա եր կըկենա, կգյիդա թա կյուղացալ ըմ, աշկըս յրան ա՛, էլ գյիդալ չի՛, թա էնա իմ խաղնաս իտի քարերավ լիգյը, դափնաս լիգյը։ Բա էս հո՛ւնց անիմ, հո՛ւնց չանի՛մ, վեր լավ ինի՛։

Վերչը կյամ ա էն մրթկին, վեր քյինի էտ քարը ճարի։ Էտ ըխճըկանը թողըմ ա իտի քոն իլաճ, ինքը էն մրեծ ղուշին հետան քյընըմ, տրժեր տրեղերավ, սարնըեր պըցրանըմ։

Իտի սաղ քըշերը էտ ղուշին հետան ման ա կյամ, կարըմ չի քըթնի։ Ծրեքյը տալիս էտ ղուշըն էլ կորչըմ ա։

Դաբվիշը ետ ա տրեռնըմ, կյամ էտ ըխճըկանը կոշտը, տրեսնըմ ախճիգյը կա վրեչ։ Դաբվիշին ըտեղ թողինք, խաբարը տանք էտ ըխճըկանան։

Տա վեր եր ա կրենըմ, տրեսնըմ դաբվիշը ըտեղ չի, մաթ ա մընըմ, գյուդում ա, թա ուրան թողալ ա, եր ա կրենըմ, քյինըմ հետան ման կյամ։ Վեր շատ ման ա կյամ, ճարըմ չի։ Մին տրեղա հըրցընըմ ա Անի քաղաքին ճրնապան։

Վեր Անի քաղաքան մուտանըմ ա, մին չոբանի անա ընդրա շորերը խրնթրըմ ա, ասըմ. — Ա՛ չոբան ախպեր, հինչ օզիս կըտամ, թաքյ լհա քու շորերըտ ինձ տաս, իմը տու յոր օնիս։

Չոբանը շորերը տամ ա։ Տա տրղամարթի շորեր ա կյենըմ, նի մրննըմ Անի քաղաքը, հունցու տրղամարթ մին մրեծ դուքյանըմ մին առուտուրականի քըշտի պրիկասչիկ ա նի մրննըմ։ Հալա մին խըրեգյ վախտ անց կացած վե՛չ, աշկի յա ընգնում, հունցու լավ առուտուր անող։

Մըհեկ էլ դաբվիշին անա խաբար տանք։

www.naregatsi.org

էս դաւրվիշը էտ ըխպըրին քըշտին վեր ճարըմ չի էտ ըխճըկանը, մընըմ ա մըլորված, նըստած։ Բիրդան տրեսնըմ ա էտ ըխպըրին քըշտին մին հափուռ վրեսկե։ Տա մընըմ ա մաթ մընացած։ Եշըմ ա տրեսնըմ մկները տափին տական վրեսկե յըն կըրըմ, ըտեղ թուփ անըմ, համ էլ ուռուր նըհետ խոսըմ, ասըմ. — էս դաւրվիշը խե՛ յա մաթ մընացալ աշխարքիս պրեներին յրան, էսքան վրեսկեն տափին տակին փըշանըմ ա, ինքը օզըմ չի տաւր տրեռնա էս վրեսկուն, էսքան հարըստոթունը թողած, ինքը մին բրուլյանդի հետի յա քընեննքյ անըմ։

Դաւրվիշը ասըմ ա. — էս արաղ ա, թաւ ըրըկյոճի։ Ըր ա կրենըմ մին փաղավ էտ փափուկ վրեղը քանդըմ, տրեսնըմ խիլլա վրեսկե կա։ Լոխ յոր օնըմ, թուփ անըմ, խոտավ, ժանգյալավ ծասկըմ, նըստըմ։ Ըտըղավ քյընող մին շենացի ըրըբան լըծած, պարկերը մաշին, քյընըմ ար ցորեն պրերի։ Էտ ըրըբան կըղնըցնըմ ա, պարկերը տուս տամ, վրեսկավ լըցնըմ, տինըմ ըրըբին յրան, էտ մարթին էլ մին խիլլա վրեսկե տամ, ճրնապար տինըմ։ Ինքը արաբան քըշըմ ծովին ղրաղը։ Էտ ծովին ղրաղի շըհաւրան աղ ա առնըմ, պարկերին կըլոխը լըցնըմ, վեր գյիդյան վեչ, թա վրեսկե յա, նավին յրան տինըմ, ղարկըմ Անի քաղաքը, ինքը մընըմ ա, վեր էլհա ուռան սեր տըված, սեր առած ախճիգյը ճարի։

Էտ դաւրվիշը քյինըմ ա շատ քաղաքնի ման կյամ, քյինըմ ա Սպահան, օրիշ թաքավերոթունննի, ամմա վեչ մին տրեղ ճարըմ չի։

Վրեսկավ նան աղավ պրեռնած նավերը էրգյան վախտ անց կենալանը ետը Անի յրն հրսնըմ։

Պեռները եր ըն տինըմ, ամմա տարը տուս չի կյամ։ Էտ վախտը Անի քաղաքըմը աղ չի կար։ Ժողովուրթը առուտուրականներան աղ ար օզըմ։ Էտ պրիկասչիկ ախճիգյը, տրղամարթի շաւրերըմ կյամ ա պայման կապըմ, վեր տարը տուս կյա՞, ապրանքը, յա փողը տան տըրուչը։

Էտ աղին պեռները տանըմ ա դուքյանըմը ծախըմ։ Վրեր ծախըմ ա, տրեսնըմ ա տակը վեսկե յա՞, հալա գյուդուսմ ա, թա աղը վրեսկե յա տրեռալ, աշկերին հրվատըմ չի, ետավ խազայինին ասըմ ա։

Խազայինն էլ ասըմ ա. — Վրեսկեն թող իտի էլ կրենա, վեր տարը տուս կըկյա տըրուչը կը տանք։

Դաւրվիշը անց ա կրենըմ Սպահան, Խորասան, օրիշ շատ քաղաքնի, ամմա վեչ մին տրեղ էտ ըխճըկանը ճարըմ չի։ Ճարը կըտրած էլհա ետ ա տրեռնըմ, էն ծովին ղրաղի մրեծ քաղաքը, ըշտըղան ուռան ապրանքը՝ աղը նան վրեսկեն նավավ ղարկալ ար Անի։ Ըն-

www.naregatsi.org

գրեղ բեքյեփ կաղնած մրեթիկ ար անըմ, մին էլ ա տրեսնըմ էրկու մարթ խոսելավ քյընըմ ըն։

Ըտրանց անա մինը ասըմ ա. — էս դաւրվիշին եշի, ուրան վրեսկեն թողած, ինքը մին անկին քարի հետա յա շոռ կյամ, մին էլ մին ըխճըկա հետա։ Էլ գյուդում չի, վրեր անկին քարը ճարելու չի, ամմա էն ախճիգյը էն ա Անի քաղաքին մին առուտուրականի հարուստացընըմ ա, ընդրա պրիկասչիկն ա։

Դաւրվիշը օղըմ ա մուտանա մին լաւվ հըրցնի, ամմա էտ էրկու մարթը աշկան կորչըմ ըն։

Դարվիշը նավ ա նըստըմ, ճանապարվըմ Անի քաղաքը։ Վեր հըսնըմ ա, կըռանըմ ա վրեղան պաչըմ, մեղա կյամ, վեր էտքան վախտ անդար ա թողալ։ Ծտավ հըրցնըմ ա աղին պըռոներին անա, ասըմ ըն, թա. «Էս հինչ հարուստ առուտուրականին պրիկասչիկը տարալ ա, քյինի, ընդրանա օղի»։

Դաւրվիշը կյամ ա, էտ մագազինին առաչին կաղնըմ, տրեսնըմ ուրան սիրած ախճիգյը հեն ա ընդեղ, տրղամարթի շորերավ կործ ա անըմ թայդի-թայդի։ Դաւրվիշը մուտանըմ ա էտ առուտուրականին, խընթրըմ, վեր քըշերը մին տրեղ տա, քոն ինի, էքսը քյինալու վա թաքավերին կոշտը, վեր ուրան մին խըրթագյ քյոմաքյ ինի։

— Է՛, դաւրվիշ ախպեր, բա թաքավերը ըստե՞ղ ա, վեր քյըեղ քյոմաքյ ինի, ընդրա տրեղը վեզիրն ա, նա քյըեղ հի՞նչ քյոմաքյ կանի՞։ Լհա էս քըշեր դուքյանին քըմակի օթախըմը կաց, էքուծ եր կըկըենաս, քյինիս։

Դաւրվիշը խընթրըմ ա, վեր էքսը էտ առուտուրականը մին մարթ ղարկի պալատը, վեզիրին ասի, վեր մին դաւրվիշ ընդրան կանչալ ա։

Էտ առուտուրականը մընըմ ա մաթաւլ էտ դաւրվիշին իրեսը պեց ինելին հետի։ Տա տըրրկուսըմ ա, թա տրեսնաս սա հո՞ւ վա։ Էքսը մին խելունք մարթ ա ղարկըմ պալատը, էտ լոխ ասըմ...

Վեզիրը լոխ ըսկանըմ ա, դաւստի գյուդում ա, թա տա հու վա՞, հրամմանն ա տամ նազիր-վազիրնին կյամ ըն, ածողնի յա կանչըմ, հրամմայըմ ա քաղաքը զաւրթաւրին, լաւվ-լաւվ շորեր կյենան։

Դաւրվիշը էտ առուտուրականին անա հըրցընըմ ա, ասըմ. — Կադարեցի՞ր խընթիրքըս։

— Կադարեցի։

— Դե վրեր կադարեցիր, մըհենգյ մին ծրեռք թաւզա շաւր տո ինձ, իստի համոթ ա վեզիրին նըհետ խոսիմ։ Ըտրան մին ծրեռք թաւզա շաւր ըն տամ, կյենըմ ա։

Դաւրվիշը տրեսնըմ ա, վեր էտ առուտուրականը մին տրեսակ

www.naregatsi.org

տուխուր ա։ Տա մին էլ ա հանըմ կյեցին շորերը, էլհա դարվիշի շորերը կյենըմ, մուտանըմ էն տըղամարթի շորերը կյեցած ըխճըկանը։ Էտ ախճիգյը ճընանչըմ ա ուրան։ Ըտահանք ուրուր կոլավ ըն ընգնըմ, լաց ինըմ։

Էտ առուտուրականը գյուդում չի, թա էլ հի՞նչ անի, մընըմ ա շշկլված, աշկերին հըվատըմ չի՞...

Վեզիրը մըեծամըեծներին նըհետ, նազիր-վազիրներին նըհետ կյամ ա թաքավերին առաչը, ըտրա թաքավերական շորեր ըն կյեց տամ, ըտրան նան էն ըխճըկանը պալատ տանըմ։ Էտ ախճիգյը գյուդում չի ինըմ, թա դարվիշը հու վա՞։ Վեր տըեսնըմ ա թաքավեր ա, մընըմ ա զարմացած։

Դարվիշ թաքավերը թախտին նըստըմ ա, էն ախճիգյըն էլ թաքուհի յա տըեռնըմ։ Ըտրանք ժողովուրթին լավ ըն պահըմ։ Ուրանք էլ սերավ ըն ինըմ։ Ըտրանք հասին ուրանց մուրազին, մունք էլ հասնինք մըեր մուրազին... Երգյինքան իրեք խընձոր եր ընգավ. մինը՝ ասողին, մինը՝ կյըրողին, մինն էլ՝ լըսողին։

www.naregatsi.org

25. ԿՅԵՌԹՆՈՒԿ ԱԽՃԻԳՅԸ

Ինուիմ ա, չինուիմ մին թաքավերու էտ թաքավերեն ինուիմ ա իրեք տղա, իրեքն էլ շատ խելուք ըն ինուիմ, հորը խոսքավն ըն քյնուիմ։ Էտ տղերքը մծանում ըն։

Մեհհետ էտ տղերքը ուրիշնց հորն ասըմ ըն. — Ա՛ հայր, օզում ընք փսակվինք։

Հայրն ասում ա. — Ցրեա էլ ըմ համոզ, մինակ մին պայմանավ։

Թաքավերը պերըմ ա տղորանցը ամեգյը մին Թունվինգյ տամ, ասում. — Տըրքցրե՛ք, ամմա հունր գյունլլա շենն ընգավ, ընդրան շենումն ըմ փսկլական, հունր գյունլլա էլ վեր շենան տունա եկավ, ընդրան աշկս տեսնա հուչ, տանան տունա ըմ քըցլական։

Թաքավերեն տղերքյը իրեքան յոր ըն օնում Թունվընգյնեն տրքցնում։

Մեծ նան մաշնակ տղորանցը գյունլլան շենն ա ընգնըմ, ամմա կուճուր տղեն գյունլլան շենան տունա ա վեր ընգնըմ։

Թաքավերը Թունդունմը կըղնվում ա, պրծնըմ, կուճուր տղեն տանան տունա քցըմ, էն էրկու տղեն էլ առոք-փառոք հրսանիք ա անըմ, պըլատումը Թողըմ։

Թաքավերն նան ուրիշն էրկու տղէն Թողինք ըտեղ, տեսնանք էն խեղճ կուճուր տղան՝ Սարումը հի՞նչ ա տեռնում։

Կուճուր տղան շատ մտածելանը ետը կլինա ա եր օնում, քյնուիմ։ Քյնամ ա, քյնամ, մին կյետու քշտի նստում, լաց ընըմ։ Մտածում ա, Թա՞ ըշտե՞ղ քյնա, հո՞ մց ապրե։

www.naregatsi.org

Վերչը էտ տղան ըտեղ ծռնկըն ա փըռնըմ, կրակ անըմ, մին թահրաւ ապըրմ։

Քյնաւմ ա ծմական ճպատ քաղըմ, խեչակ կտրում, պռւրռնւմ կյետեն քշտեն մին կուճուր տոն շինըմ, վեր մաչին յոլա քյնա։ Տոնը շինիլանը ետը Սարոմը քյինաւմ ա վըերսի, ղուշա, ծըտա, ծռնկընա փռնըմ, պռւրռնւմ, տրանավ ապըրմ։ Մեհետ Սարոմը քյնաւմ ա վըերս անիլ։ Ռւրռնգյռնը կյամ ա տոն, պրանվում, ըսկսում մտածելը, վեր հաըը խե՞ ռւրան տանան տյռւս քցից։ Ասըմ ա. «էքռնւծ քյննական ըմ ընդեղ, ըշտեղ գյռւլլաս վեր ա ընգալ, տըեսնամ գյռւլլան ընդեղ ա՞, յոր օնիմ»։ Շատ մտածելանը ետը Սարոմը քոն ա ինռւմ։ Քըշերավը եր ա կենում, իրեսը լվանըմ, մին պատառ տեսա-տենա օտըմ, քյնաւմ։

Քյնաւմ ա, քյնաւմ, հասնըմ գռւլլան վեր ընգած տեղը, տըեսնըմ մին կյեռքենուկու պռւն։ Էտ պռւննին ըռաչին մին կյեռքենուկ վեր ընգյած, գյռւլլան էլ քշտեն։ Սարոմը մին պատառ վըենն ա կենում, ասում. «Ըստի բախտը մզուած, հաըըթ իմ ճկատեն էլ էս ա կյըրվաձ, իմ փայս էլ էս կյեռքենուկն ա»։ Ասում ա պրծնում, կյեռքենուկը յոր օնում, բեքեփ պռւրռնւմ տոնը, թող անում, քցում կարավաթեն տակը։ Սարոմը խիլլա վախտ իտի ապրըմ ա։ Քյնամ ա վըերս անում, ինքը խորագյ, պեն շինում, կլռխը պահում։ Մեհետ Սարոմը վըրսըտըեղա կյամ ա տոն, ղուշերը տնռւմ տանը, ինքյը քյնում կյետեն կոշտը, վեր ծռնկռւն փռնե։ Ռւրռնգյռնը մըեն կյամ ա տոն, տըեսնում կրակը նիկցրած, խորաձյը իփած, տոնը սրփած։ Սարոմը մնըմ ա զըրմացած։ Ասըմ ա. «էս հի՞նչ պեն ա, էս հո՞ւ բիդի ըստըեղ կյա, հո՞ւվ ա ըստեղ ճնանչում»։ Հացա, պենա օտում ա, քոն ինռւմ։ Քշերավ եր ա կենում, քյնաւմ ծմակը՝ վըերս անի։

Ռւրռնգյռնը կյամ ա, տեսնում էլհա տոնը սրփած, կրակ ըրած, խորաձյը իփած։ Կըզնըվում ա, ասըմ. «Ըստրա բուսը պըհլական ըմ, փռնիմ, տըեսնամ էս հո՞ւվ ա, հինչացո՞ւ վա՞, վեր կյամ ա ամուն օր նի մննում տոնըս»։ Սարոմը էն մին օրը տանը մաչին կյողլ ա կենըմ, եշըմ, տեսնըմ կարավաթեն տական մին ղաշանգյ ախճիգյ ա տռւս կյամ, տոնը սրփըմ, խորաձյը իփըմ, ինքյն էլ նըեստա պատառ օտըմ, պըրծընում, թա կյա նի մննե կյեռքենուկեն մորթեն, էտ վախտը Սարոմը տրան փռնում ա, ասըմ. «Տու հո՞ւ վըս, հի՞նչ ըս անըմ ըստեղ»։

Թողնում չի վեր էն ախճիգյը տանան տռւս կյա։ Կյեռքենուկեն մորթեն քցում ա կրակը, էրում։ Էտ ըխճկանը անումը Գյուլվարթ ա ինռւմ։

www.naregatsi.org

Սարումը շատ ա ուրխանըմ, ըտրանավ։ Մեհետ էլ մին քանե մարթ կյետավըն ընցնըմ ըն, կյամ, տեսնըմ Գյուլվարթը տանը ակուշկավը ինգած երք ա ասըմ։ Նահանց էտ երքը շատ տուր ա կյամ։ Ասըմ ըն. «Տոռնը պեց անինքյ, տեսնանք էս ղրաղ տըեղս մինաւկ հի՞նչ պենի յա»։ Ամմա Գյուլվարթը տոռնը պենում չի։ Էտ մարթիքյը հըրցըփորց ըն անում, գյուդում, վեր տա Սարումեն կնեգյն ա։ Նահանց աշկը յոր չօնըմ վեր Սարումը ղաշանգյ կնեգյ օնե։ Ասում ըն. «Քյնանք, թաքավերեն ասինքյ տղատ մին կնեգյ օնե, վեր ընդրամնանը իննիլ չի՞»։

Էտ մարթիքյը քյոնում ըն թաքավերեն ասըմ. — Թաքավերը ապրած կենա, Սարումը մին մարալ կնեգյ օնե, ուրանք էլ էն ա մին ղրաղ տըեղ մին տոն շինած, լավ ապրում ըն։

Թաքավերը, վեր ըսկանում ա, կանոխ տղեն ծեն ա տամ, պուրում ուրան պալատը, ասըմ ա. — Ա՛ տղա, քյնա՛ ինձետե մին նոռնը ճարե պեր, վեր հինչքան ժողովուրթ կյա, հվաքվե, հինչքան օտին, ամմա նոռնը պրծնե վուչ։ Թա ասածս ըրեր վուչ, գյիդա՛ վեր տու սաղ ապրըլական չըս, յա էլ կնեգյըտ ծեռքատ ինգյլական ա։

Սարումը մըտըծելավ կյամ ա տոն, բեքեփ նստում, հաց էլ չի օտում։

Գյուլվարթն ասըմ ա. — Խե՞ տի բեքեփ ըս, Սարում։

Սարումն ասըմ ա.— Իմ հա՛ր հանց պեն ա ինձ ասալ, վեր ուրան հետի տանիմ, վեր ըշխարքումս ինդի պեն ճարվիլ չի՞։

Գյուլվարթն ասըմ ա. — Վախում մեր, տու ասե, տեսնամ հի՞նչ ա ասալ, յըես կճարիմ։

Սարումն ասում ա. — Մին նոռն ա օզալ, վեր սաղ ժողովրթը օտեն, ամմա պրծնե վուչ։

Գյուլվարթն ասըմ ա.— Վախում մեր, քյնա՛ էն պունին առաչը, վեր գյուլլաթ ընդեղ ա իլալ վեր ընգյած, յըես էլ ընդրեղ ըմ իլալ, պունին առաչեն վրենը կաց, պապե ծեն տու։ Վեր ծեն տաս, պունան մին պառավ կյերթնուվ ա տունս կյլական։ Էն իմ պապես ա, կասիս թոռնըտ հիվանդ ա, մին նոռն ա օզալ, նա ըշտղա վերե յա քթընաւկեն ա, քյըեզ տա, տու վել յոր կօնիս, կյա՛ս ըստըեղ, ըստղան էլ տանիս տաս քու հոր։

Սարումը օրախ-օրախ քյնամ ա Գյուլվարթին ասած պունին առաչը, «պապես» ծեն տամ։

Պյունան մին պառավ կյերթնուվ ա տունս կյամ, ասըմ. — Տու հու՞վ ըս, հի՞նչ ըս ասըմ։

www.naregatsi.org

Սարումն ասըմ ա. — Պապե թոռնըտ հիվանդ ա, պեն չօտըմ, ասըմ ա՝ քյնաց եքյ իմ պապու ըսեցեքյ մին նոռնը ղարկե, օտիմ։

Էտ պառավ կյեռբինուվը նի յա մննում պունը, մին պատառ կենում, մին նոռնը ծեռքեն պուրռում ա տամ Սարումեն, ինքյը նի մննում պունը։

Սարումը ուրխացած նոռնը յոր ա օնում, կյամ տոն։ Գյուլվարբեն ասըմ ա. — Դե տար, տո քու հոր, ծեռքան ըզադվե։

Սարումը նոռնը յոր ա օնում, տանում տամ թաքավերեն։ Թաքավերը սաղ ժողովրթեն ծեն ա տամ, պուրռում։ Ասըմ ա. — Էտ նոռնը կերեքյ։

Ժողովուրթը ըսկսում ա նոռնը օտելը, ամմա նոռնը պրծնըմ չի՞։ Թաքավերը ժողովրթեն յրան կըզնվըմ ա, ասըմ. — Էս սհաթեն հենց կերեքյ, վեր յրան մին գյուլուլ էլ չի մնա։ Ժողովուրթը հիշքան օտըմ ա, նոռնը պրծնըմ չի։ Թաքավերը շատ ա կըզնըվում։ Նի յա մննում պալատը, տղեն ծեն տամ կոշտը, ասըմ. — Սա՛րում, մին պեն էլ ասիմ, վար կարաս վեչ անիս, քյըեզ թուղլական չըմ սաղ կենաս։

Սարումն ասըմ ա. — Ասե, տրեսնամ մհենգյ հի՞նչ ըս ասում։

Թաքավերն ասըմ ա. — Քյինա՛, մին գյաբա պեր, վեր սաղ ժողովուրթը յրան նստե, էլհա տեղ ինի։

Սարումը էլհա բըքյըփանըմ ա, կյամ տոն։

Գյուլվարբեն ասըմ ա. — Մհենգյ հի՞նչ ըս քնենքյ անըմ, մհենգյ էլ քու հոր ասածը ըրալ ըս։

Սարումն ասըմ ա. — Մհենգյ էլ իմ հաբր ասըմ ա. «Քյնա՛ մին գյաբա պեր, վեր սաղ ժողովուրթը յրան նստե, պրծնե վուչ»։ Թա վեր կարամ վեչ քթենամ, թաքավերը կյլական ա ինձ սպանե, քյըեզ էլ տանե ուրան հետե։

Գյուլվարբեն ասըմ ա. — Սարում, վախում մեր, քյնա՛ էլհա իմ պապու ասե, էն տլական ա։

Սարումն ասըմ ա. — Պա հի՞նչ ասիմ։

Գյուլվարբեն ասըմ ա. — Քյնա էլհա էն պունին առաշկը «պապե» ծեն տո։

Սարումն իտի էլ անըմ ա։

Պապեն տունա ա կյամ, ասում. — Հի՞նչ ըս ասըմ։

Սարումն ասըմ ա.— Պապե, թոռնըտ հըրսնքեն ա, մին գյաբա՛ յա օզալ, վեր վեչ մին տեղ ինդի ինի վուչ։

Էտ պառավ կյեռբինուվը նի յա մննում պունը, մին պատառ կենըմ, տունա կյամ, գյաբան ծեռքեն։ Գյաբան տամ ա Սարումեն,

www.naregatsi.org

ասըմ. — Տար տո թոռանըս, համ էլ ասե պապեն ասալ ա շընհավուր ինի։

Սարոումը ուրխացած գյաբան յոր ա օնում, կյամ տոն, տանըմ տամ թաքավերեն։ Թաքավերը գյաբան յոր ա օնում մեկնըմ, սաղ ժողովըրթեն ծեն տամ, ասըմ.— Գյաբեն յրա նստեցեք։

Ժողովուրթը հիշքան նստում ա, գյաբան թազդան ա ծալերը ետ տանում, տեղ անում։ Թաքավերը շատ ա կըզնըվում։ Գյաբան յոր ա օնում, քյնամ ուրան պալատը։ Թաքավերը քնենք ա անըմ, թա մհենգ հինչ ասե տղեն, վեր կարի վուշ անե։ Թաքավերը քըշեր-ցիրեկ մետք ա անըմ, մետք, վերչը Սարոումեն ծեն ա տամ կոշտը, ասըմ. — էս իրեքինչինն ա, վեր կրեցիր կըղարիս, գյիդա վեր սաղ ըս կննական, կնեգյըտ էլ քունն ա, ամմա վեր կդարիս վուշ, էն վախտը յրես կգյիդամ՝ հինչ կանիմ։ Մհենգ քյնա սրեվ աշխարքը, էն ա քու նանեն ընդեղ մեր վրեսկուն ըմբարեն պինալին ծեռքեն։ Երկալ պեր։

Սարոումը ասըմ ա. — Պա յրես հո՞ւնց քյնամ սրեվ աշխարքը։

Թաքավերն ասըմ ա — Ըտ էլ տու յրս գյուդըմ, հունցու պուրում ըս, պեր։

Սարոումը լաց ինիլավ կյամ ա տոն, ասըմ ա. — Գյուվարթ, ումեդտ ինձանա կտրե, իմ հար հանց պեն ա ասալ, վեր կարըմ չըմ անիմ։

Գյուվարթն ասըմ ա. — Հի՞նչ ա ասալ։

Սարոմն ասըմ ա. — Վեր ուրան ասած գյաբան տարե, թաքավերը կըզնըվեց, ինձ ծեն տուավալ պալատը, ասից, վեր քյինի սրեվ աշխարքը քու նանու ծեռքեն վրեսկու ըմբարեն պնալին պեր։

Գյուվարթն ասըմ ա.— Վեչինչ, ըտըղեղ էլ ըս քյննական, վեր ինձ անջուկ օնիս։

Սարոմն ասում ա. — Հինչքան անջուկ օնիմ, կվախիմ քյնամ սրեվ աշխարքը։

Գյուվարթն ասըմ ա. — Վեչինչ, վախիլ չըս, կքյնաս։

— Վերչը ասե տեսնամ, հո՞ւնց քյնամ։

— Քյնա էլհա իմ պապու կոշտը, ասե ստի պեն կա, օզում ըմ քյնամ սրեվ աշխարքը, ամմա հըղեն ճնանչըմ չըմ, համ էլ վախըմ ըմ։

— Լավ, էտ էլ կանիմ, թաքյի իմ կռապաշտ հորս անա ըղադվիմ։

— Վեչ մին վախտ վախս վեչ, ըրխայինն քյնա, իմ պապեն գյուդում ա հի՞նչ ա ընննակա՞ն։

Սարոումը հաց ա օտում, հաց յոր օնում, քյնամ կյեռթնուվեն պունին առաչը, «պապե» ծեն տամ։

www.naregatsi.org

Մին խիլլա վրենն ա կենում, վրեննը, ամմա կյեռթնուվը տունս չի կյամ։ Սարումն ասըմ ա. —

— Մհենգյ վեր կըլական չըմ իմ հոր ասածը անիմ։ Պրանվում ա ըտրեղ քնավ ընցնըմ, սաղ քշերը ըտեղ քոն ա ինում։ Քշերավը եր ա կենըմ, էլհա «պապա» ծեն տամ։ Կյեռթնուվը տունս ա կյամ, ասըմ. — Հի՞նչ ա։— Սարումը լոխ նաղլ ա անըմ, ասըմ, վեր, օզըմ ըմ քյնամ սրեվ աշխարքը, ամմա գյուղում չըմ հո՞ւնց քյնամ։ Էտ կյեռթնուվը նի յա մննում պունը մին պատառ վախտ ընցած տունս ա կյամ մին յաշիգյ ծեռքեն։ Սարումին ասըմ ա. — Նի մըտ մաչը տանիմ, թողիմ սրեվ ըշխարքըմը, յըես կյամ։

Սարումը յաշիգյումը պրանվում ա. կյեռթնուվը շլաքում ա, հղե ինում։

Շատ ա կյամ, խրեգյ ա կյամ, վերչը հըսնըմ ա սրեվ աշխարքը։ Յաշիգյը վեր ա տինում, մին պատառ դինջանում, էլհա շլաքում, հղե ինում։ Մին պատառ էլ ա քյնամ, սրեվ ըշխարքեն տոռնը պենում, յաշիգյը վեր տինում, Սարումը յաշիգյան տունս ա կյամ, մին պատառ դինջանում, կյեռթնուվը ասում ա. — Հասե սրեվ աշխարքը։ Սարում, քյնա, ամմա քյնալիս հետատ լոխ ծեն ըն տլական, վեչ մինին անջուկ չօնես, թա չէ, տու էլ մեռալ կտեռնաս։

Կյեռթնուվը ըտի յա ասըմ, պրծընըմ, ետ տեռնըմ, ուրան պունը կյամ։ Սարումը հղե յա ինըմ բիդի նանուն կոշտը, շոռ ա կյամ քթենա, նանեն հրեռե յա ընում թաղված։ Ըռշկեն մին կյետ ա ինում, կըրմունջեն քրերավը ընցնըմ ա, օզըմ ա վրեննները հանե։ Էտ վախտը կյետեն ղրաղեն մին պառավ մարթ ա ինում, տա թողում չի, վեր Սարումը վրեննները հանե։ Էտ պառավ մարթը ասըմ ա. — Հանել մեր։

Սարումն ասըմ ա. — Պա հո՞ւցն կյետը ընցնիմ։

Էն մարթն ասըմ ա.—Ել մաչաս ճղե, տիր կյետըմը, քաւրվազ շինի, ընցեր։

Սարումն ասըմ ա.— Խե՞ տու ինձ հի՞նչ ըս ըրա՞լ, վեր յըես քյըեզ տի անիմ։

Պառավն ասըմ ա. — Վեչինչ, տու հունցու ասըմ ըմ, ինդի ըրա։ Քյնա, կյալիս կասիմ, խե՞ յըմ տի ասըմ։ Սարումն էտ մարթին մաչան ճըղըմ ա, քցում կյըետը, քաւրվազ շինում, ընցնում։

Քյնամ ա, քյնամ, տըեսնըմ ա մին կանանչ տեղ մին մարթ նստած, ամմա ընդրա կլոխը պղուճնեն օտըմ ըն։

Սարումը մնամ ա ըրմացած։ Ասըմ ա. — Դայի, ախեր էն ա աշկերըտ պեց, տու սաղ, պա խե՞ թողըմ ըս կլոխտ պղուճնեն օտին։

www.naregatsi.org

էն էլ ասըմ ա. — Վեչինչ, քյնա՛, ետ տռնալիս ըռաշկավս կկյա՛ս, կասիմ։

Սարումը տրան էլ ա թողըմ ըտեղ, քյնում։ Մին պատառ քյնամ ա, տեսնում մին կնեգյ թռռնեն հաց ա թխում։ Քշտեն հացը կյուտած, ամմա ինքյը ասըմ ա.— Վա՛յ, սոված մըեռե՛, վա՛յ, սոված մըեռե՛։

Սարումն ասըմ ա.— Բիբի, խե՛ յը՛ս սոված մըեռնըմ, հատե կոշտըտ հացավ լիգյը, կեր, քշտացե։

Էտ կնեգյը Սարումեն ասըմ ա. — Քյնա, ետ կյա՛լիս, կասիմ։

Սարումը ըտրան էլ ա թողըմ, քյնըմ։ Քյնա՛մ ա տրեսնում մին հըղըցըմ մին կնեգյ նստած մին կուտուր հաց ծեռքեն, ասըմ ա. — Վա՛յ փորս տրաքի՛ց, էսքան հաց կօտի՛ն։— Էտ կնեգյը Սարումեն ասըմ ա. — Բալա, սոված կինիս, տանիմ տոն, հաց տամ։

Սարումն ասըմ ա. — Սոված չըմ, էնա հաց օնիմ։

Էտ կնեգյը շատ ա օզըմ լոխճին տանե ղոնաղ։

Սարումն ասըմ ա.— Բիբի՛, մին թիքյա հաց օնիս, տա վեր օրիշի տաս, պա տու հի՛նչ ըս ուտլական։

Էտ կընեգյը ասըմ ա. — Քյնա, ետ կյա՛լիս կասիմ։

Սարումը քյնամ ա, տրեսնըմ էրկու ղա՛շանգյ վարթ ուրուր քշտե փսած, ամմա էտ վարթերեն մաչ տեղը մին փոշ էլ կա փսած։

Սարումն ասըմ ա. — Ա՛ վարթեր, տուք շատ ղա՛շանգյ ըք, խե՛ թողալ ըք էտ փոշը էտ մաչ տրեղը փսնի։

Էտ վարթերն ասըմ ըն.— Մունք հի՛նչ մեղավեր ընք, վեր ըստեղա փսալ էտ փոշը։ Քյնա՛, ետ տրեռնալիս կասիմ, թա էս հի՛նչ փոշ ա, վեր թողում չի ուրկոքանս ուրուր քշտի ինինքյ, վեր խոսինքյ։

Սարումը էտ վարթերեն էլա թողըմ, քյնա՛մ։ Քյնամ, ա քյնա՛մ, տրեսնըմ մին դուզ տրեղ ուրա՛ն նանեն մին լա՛վ ծառու շոքըմ նըստած, չխարակ ա մանըմ։

Սարումը ծեն ա տամ, ասըմ. — Նանե, Սարումն ըմ, եկալ ըմ քյըեզ տանիմ։

Նանեն կյամ ա Սարումեն անա պչպչորում, քշտեն նստըցնըմ ա, ասըմ. — Հինչո՞ւ վը՛ս եկալ, հի՛նչ կա էս սըեվ ըշխարքումս։

Սարումն ասըմ ա. — Նանե, յըես ու յըես չըմ եկալ, ապան ա ղարկալ, թա քյնա՛ սըեվ աշխարքը, էնա վըեսկուն ըմբարեն պինա՛լին նանուն քշտեն, եր կալ պեր ըստեղ, հարկավեր ա։

Սարումը վեր տի յա ասում, նանուն կըզնըվոցը կյամ ա Սարումեն յրա։ Ասում ա. — Խե՛ քու հոր խոսկավ ըս ընգալ, էն օզըմ ա վեր քու կլո՛խտ վարե, տրա մըհար էլ քյըեզ ղըրկալ ա սըեվ աշ-

www.naregatsi.org

խարքը, հանցու վեր տու էլ մրեռալ տրեռնաս ըստեղ։— Նանեն թաքավերեն շատ ուշունց ա տամ։

Սարոմն ասըմ ա. — Նանե, պնաչլին ինձ տո, քյնաչ։

Նանեն ասըմ ա.— Պինաչլին իմ ծեռքես չի, էն ա սրահումը մին սուրթունու տակե, վեր քյնաս, յոր կօնիս, վեչ մինին տաս վեչ։ Դե մհենդյ կանուխ ըրա, քյնա։

Սարոմն ասըմ ա.—Սրերտս օղում ա, պապեն տրեսնամ ըշտե՞ղ ա, քյնաչ տեսնամ, էլհա կյամ։

Նանեն ասում ա. — Էս ծառեն թուշավը կըլխյեր քյնա, ընդեղ ա։ էն վեր ծոխ ա պըցրանում։ Սարոմը քյնամ ա թուշ ծոխեն յրա, տրեսնըմ վեր մին կրակ էնա նիկացած, ուրան պապեն էլ էտ կրակումը էրվում ա։

Սարոմն ասըմ ա. — Էս հի՞նչ անիմ, վեր իմ պապեն կրական տուս օնիմ։

Սկսում ա «պապե» ծեն տալը, ամմա պապեն ըսկանըմ չի, ալավը լափ պըցրանըմ ա, Սարոմը կարում չի պապուն տրեսնա, կյամ ա ետ նանուն կոշտը, ասըմ. — Նանե, պա կըրեցե վուչ պապեն տրեսնամ, էս հի՞նչ անիմ պա։

Նանեն ասըմ ա. — Վեչինչ, կանուխ ըրա էս սրեվ ըշխարքան տուս եք, քյնա։

Սարոմը նանուն նհետ ծեռք ա տամ, նանեն ընդրան պչպչրում ա, թաքավերեն անեսկ տալալ Սարոմեն ասում ա.— Քյնա, ամմա հունց վեր ըսեցի, ընդի կանիս, հանցու էս սրեվ ըշխարքան տուս կյաս, վախի՞ս վեչ, քամակատ ծեն ըն տլական, վեր «եք մեր կոշտը», ամմա դըբետ եշիս վե՞չ, կլնխատ քաշ քցած, քյնա։

Սարոմը քյնամ ա։ Առաչինը պտահում ըն էն վարթերը, վեր շատ ղաշանգյ ըն, ամմա ուրանց ղաթըմը փոշ ա փսած։ Սարոմն ասում ա. — Դե ըսեցեք տեսնամ հի՞նչ ըք ասըմ։

Էտ վըրթերեն մինն ասըմ ա. — Հի՞նչ ասինք, մունք լուս ըշխարքումը վխտեն մըրթըկնեգյ ընք իլալ, ուրուր նհետ շատ սիրավ ընք իլալ, ամմա մըեր սկեսուրը մին կռապաշտ կնեգյ ա իլալ, օզալ ա, վեր մունք ուրուր նհետ լավ չինինք, կըռև անինք, նշանածըս ինձ թակե։ Ըսկեսուրս ամեն վախտ ուզեցալ ա մեր մաչը կըռև քցի՛, ամմա մունք կըռև չընք ըրա՛լ։ Մհենդյ էլ լուս ըշխարքան եկալ ընք սրեվ աշխարքը, էլհա իմ ըսկեսուրըս եկալ ա փոշու նման մեր ղաթըմը փսալ, թողում չի, թա լհա ըստեղ ինի, ուրուր նհետ խոսինք, մոտիկ ինինք։

www.naregatsi.org

Սարոմն ասըմ ա.— Վերչը մղափուն տուք, վեր էտ ցաքյին փոշը ծեր ղաթումն ա։— Սարոմը ըտի յա ասում, պրծնում, քյնաւմ։

Քյնաւմ ա հասնըմ ընդեղ, վեր մին կնեգյ մին կուտուր հաց ծեռքեն ասըմ ա. — Վայ փորս տրաքի՛ց,— համ էլ ղարիբ հրըղացավերեն, քյնող-եկողու օզում ա տանե տոն, ղոնաղ անե։

Սարոմն ասըմ ա.— Բիբի՛, դե ասե, տրեսնամ էտ խե՞ յըս իտի անըմ։

Էտ կնեգյը ասըմ ա. — Բալա ջան, հի՞նչ ասիմ, լուս ըշխարքըմն ըմ իլաւլ, աշկս ուրուշու յրա չի իլաւլ, վեր ծեռքես մին կուտուր հաց ա իլաւլ, հուրու վեր տեսալ ըմ, տարալ ըմ հաց տուվալ, լօխ էլ մնացալ ըն ինձանա շընուրհակալ, մհենգյ էլ եկալ ըմ էս սրեվ աշխարքը, էլհա աշկս կոշտ ա, ծեռքս պեց, աշկս ուրուշու յրա չի, կոզի տանս մին կուտուր հաց չինի՞, էլհա ինձետե վրեչի՞նչ։

Սարոմը ասըմ ա. — Էտ ա յըես էլ ըմ շնուրհակալ քյըզանա, վեր իտի կնեգյ ըս, ինձ օզում ըս տանիս, հաց տաս։

Սարոմը էլհա քյնաւմ ա էն կնգանը կոշտը, վեր քշտեն ցորեն հացը լիգյնա ինուամ, ամմա ասում ա. — Վայ աստուծ, սոված մրեռե՞։

Սարոմը ասըմ ա. — Բիբի, խե՞ էտ բոլ հացան օտում չը՞ս, քշտանա՞ս, պա էտ քու հացտ չի՞։

Էտ կնեգյն ասըմ ա.— Հինչու դուղն ա, դուղն ասիմ, յըես սոտը ասել չը՞մ։ Բալա, յըես լուս ըշխարքումն ըմ իլաւլ, տոնս հացավ, դանավ լիգյն ա իլաւլ, ամեն հինչավ լիգյն ա իլաւլ։ Դե հի՞նչ անիս, վեր աշկս ծակ ա իլաւլ, աշկս ուրուշու յրան, փորս սոված, ծեռքըս պատ չար կյամ, թա էնքան հացան մին պատառ կտրիմ, օտիմ։ Ուրուշու անա չի օզըմ օտըմ, մհենգյ էլ եկալ ըմ սրեվ աշխարքը, էլհա ինդի յըմ, աշկս ուրուշու յրա յա, կոշտս հացավ լիգյը, կարըմ չըմ մին պատառ օտիմ էս ցորեն հացան։

Սարոմն ասըմ ա. — Դե իտի յըս սրվերա՛լ, պրծա՛վ, էլ կարել չըս սրվերածըտ թոբա անիս։

Սարոմը էտ կնգանը թողըմ ա, քյնաւմ։

Քյնաւմ ա էն մարթին կոշտը, վեր աշկերը պեց ա, ինքը սաղ, ամմա պղուճնեն կլոխն օտում ըն։

Սարոմը քյնաւմ ա էտ մարթին քշտին մին խիլլա վրեննը կեննում, պրծնում, ասըմ.— Դայի, տու ասե, տրեսնամ խե՞ յըն էտ պղուճնեն քյըեզ օտըմ։

Էտ մարթն ասըմ ա. — Բա՛լամ, էն լուս ըշխարքըմն ըմ իլաւլ, ինձհետե ապրալ ըմ, իմ հացս կերալ, իմ ճրաքյս էրալ, ամմա միշտ

www.naregatsi.org

էլ ուրուշու անա յըմ խոսալ, ուրուշու վրետան տակ ըմ քանդալ, մհենդյ էլ եկալ ըմ սրեվ աշխարքը, հուր վրետան տակ քանդալ ըմ, նահանք եկալ ըն կլոխս ծակալ, օտում ըն։ Յրես էլ էն ըմ սաղ, ամա կարում չըմ տեն անիմ։

Սարումն ասըմ ա. — էտ դուշմաննիտ ըն եկալ, քյըեզ օտում ըն։

Ասըմ ա, պրծնում, քյնամ էն մարթին կոշտը, վար մաշան ճըղալ ա, տիրալ կյըետումը, ընցալ։

Էտ մարթն ասըմ ա. — Բա՛լամ, հի՞նչ ասիմ, քյըեզ նման ջահիլ վխտես, մին տեղ քյինալիս մին կյետ ա պտահալ, վեր կըրացալ չըմ ընցնիմ։ Ուզեցալ չըմ վեննեըս հանիմ։ Կետեն ղրաղեն մին պառավ մարթ ա իլալ նստած։ Էտ մարթին մաշան կես ըմ ըրալ, քցալ կյետը, ընցալ։ Դե մհենդյ էլ եկալ ըմ սրեվ աշխարքը, ըրածս առաշկս ա եկալ։

Սարումը էլ ետ չի եշըմ, կյամ ա, թա սրեվ ըշխարքան տունս կյա, էտ վախտը սրեվ ըշխարքան հետան ծեն ըն տամ, ասում. — Ե՛ք քշտընե՛ս։

Ամմա Սարումը ուրան նանուն ասածը մեննն ա քցում, դբետ եշում չի՞։ Սարումը կյամ ա սրեվ ըշխարքան տունս կյամ, կյամ տոնս։ Գյուլվարթը հրցնում ա, թա. — Ախըը պնալին պերալ ը՞ս։

Սարումն ասըմ ա.

— Հի՞նչ պինալի յա՛, հի՞նչ պեն, հի՞նչ դարդ նան ղազաբ, իմ հար ուզեցալ ա կլոխս վարե, ամմա կարից հուշ, քյնացալ ըմ նանուն կոշտը, ասալ, իմ հար պրնալին օղալ ա։ Նանեն ասալ ա, պնալին էնա տռանը սուլթունեն տակեն, քյնա տու եր կալ։ Սարումը քյնամ ա հորը տոնը, տրեսնում հարը մռնելու յրա յա, շատ ա ուրխանում, շադդաղ անըմ։ Ասըմ ա.

— Էս լոխ նանուն պեններն ա, վրեսկեն լոխ յրես յոր կօնիմ։

Սարումը հորը տանը պատառ կենըմ ա, տրեսնում, վեր հարը մեռնըմ ա։ Հորը մըռնելանը ետը Սարումը ախպորցը նհետ հորը տանըմ ա, թաղում, կյամ պալատը, ախպորցը տունս անըմ, պրծնում, քյնամ ուրան տոնը, Գյուլվարթին ասըմ, վեր իմ հար մըռռել ա, տարալ ընք թաղա՛լ։ Գյուլվարթը շատ ա ուրխանըմ, ինքը նան Սարումը կյամ ըն թաքավերեն պալատը։ Սարումը քյնամ ա վրեսկուն պնալին սուլթունեն տական տունս օնում, պրծնում, վրեսկեն տունս տամ, կեսը քյսիրներեն պըժենըմ, կեսն էլ ուրանց մհար պահում։ Ընդետանը ըսկսըմ ըն լավ ապրիլը, ժողովուրթեն լավ եշիլը։

Ըստուծանա իրեք խրնձոր ա եր ընգնում. մինը՝ ըսողեն, մինը՝ լսողեն, մինն էլ՝ կյրողեն։

www.naregatsi.org

26. ԳԸՄԳԸՄ ՍԱՐԵՐԸ

Ընուամ ա, չընուամ մին թաքավեր։ Էտ թաքավերին խոխա չի ընուամ։

Քըշեր-ցիրեկ մտածմունքի մեչի, կլոխը քաշ ըրած, ունքերը ուռուր տված ար կըենում։

Մին դռնըմ էլ իտի բիքյեփ ման ար կյամ ուրան էն տրախտի մընան բախչըմը, բիրդան անգուճավն ա ընգում, վեր մինը բիդի ուրան ա կյամ։ Ետ ա տըեռնըմ եշըմ-տրեսնըմ մին դռրվիշ էն ա ընդեղ կաղնած։ Դռրվիշը պարով, ասծու պարին ա ասըմ, հըրցընըմ.

— Թաքավերն ապրած կըենա, խե՞ յըս էտքան բեքյեփ։

Թաքավերն ասըմ ա.— Ա՛յ ղարիբ, անճանանչ մարթ, էտ հի՞նչ գյիդացիր, թա յըես բեքյեփ ըմ։

— Դե վեր իտի յա, յըես կասիմ, թա խե՞ յըս բեքյեփ։ Տու քըշեր-ցիրեկ քընենքյ ըս անըմ, թա խե՞ խոխա չօնիս, խե՞ ջառանգյ չօնիս։ Մըհենգյ անգուճ կալ, ծըեր էս տրախտի նման բախչըմը էնա մին խընձորի ծառ կա, էս ա օխտը տարի յա պըտուղ չի տամ։ Էտ ծըեր բաղվանչին էլ ա գյունդում։ Էտ ծառը ըս տարի մինակ մին խընձոր ա տալու։ Էտ ծառին լալ եշեցիք, վեր էտ խնձորը հըսնի։ Հըսննելանը ետը պուք տո, կըեսը տու կըեր, կըեսը տո, թաքուհին օտի։ Ըտրանա ետը ծըեզ խոխա կինի։

Միչև թաքավերը օշը կըլոխը հըվաքիլը, էտ դռրվիշը կորչըմ ա։ Թաքավերը մընում ա մաթ մնացած։ Նա կանչըմ ա ուրան

www.naregatsi.org

բաղվանչուն ասըմ. — Մըեր բախչըմը ըստի-ըստի մին խընձորի կա՞, վեր էս ա օխտը տարի յա բար չի տամ։

Բաղվանչին ասըմ ա. — Թաքավերն ապրած կըենա, իտի մին ծառ կա, բախճին կըլխին, մին շատ ղաշանգյ ծառ ա, ամմա հի՞նչ կանիս, վեր էս ա օխտը տարի յա բար չի տամ։

Թաքավերն ասըմ ա. — Դե վեր իտի յա, եք, քյինինք տրեսնանք։

Ըտրանք էրկուսը մին տրեղ քյնում ըն։

Օրը կյարունք ար, բախչին ծառերը ծաղկած, չորս ղոլը լավ-լավ ծաղիկնի, վրեսը ընգած ըտեղերք, կանանչ-կյաշմանդ թեփուտներավ ղուշերը երք ասելիս։ Թաքավերը մթկին դոնն ընգած բաղվանչուն հետան քյընում ար։ Վերչը հասնըմ ըն էտ ծառին։

Բաղվանչին ասըմ ա. — Տեր Թաքավեր, հեսե էն ծառը։

Թաքավերը աշկերը պըլըզած եշըմ ա, տրեսնում ծաղիկ, պեն չիկա։ Բաղվանչուն ասըմ ա.— Ե՛կ, տու վէլ եշի, տրես ծաղիկ կա՞ յրան։

Բաղվանչին մին լավ տընդըղըմ ա, ետավ ուրխացած ասըմ. —Տեր Թաքավեր, հենե՞ էն լոխճան պըեցուր ճրղնին յրան մին ծաղիկ կա։

Թաքավերը սըերտը թմփթըմփալավ մուտացավ, եշից, տրեսավ էտ ծաղիկը, աշխարքիս ուրխութունը ասիս լհա ուրան տվին։

Մին խըրեգյ կենալանը ետը, ետ տրեռավ բաղվանչուն ասից. — Գյուղում ը՞ս հինչ կա՞, էս ծաղկի հետի տու քու կըլխավոտ բաղասխանատու յըս, ըտրա էտ մին պըտուղին հետի, տանավ-տրեղավ բաղասխանատու յըք։ Էտ ծաղիկը էն հանգին կը պահի՞ս, վըեր էլ գյուղում չը՞մ, հունցու քյըղանա իլած խոխան։

Բաղվանչին մընաց տըրըկուսած, թա խե՞ յա իտի ասըմ։ Նա ծըեռքը սըրտին տըրած միչև տափը կըլխ տըվավ ուրան տըրուչը։

Թաքավերը ետ տրեռավ, եկավ պալատը։ Խիլլա վախտ կարըմ չար գյիդա, թա էտ հի՞նչ պըեն ա, ուրան էտ օրան լըսածան տրեսածան մնացալ ար մաթ մընացած, հավատը կյամ չար, թա ուրան էլ խոխա կինի, ամմա սըրտըմը մին ուրխութուն կար։

Անց ա կըենում օրեր, շաբաթնի։ Ամմեն օր Թաքավերը քըշանըմ ար բախճան, էտ ծաղկին եշըմ, տրեսնըմ ծաղիկը խընձոր ա փըռնալ, փըռնած խընձորն էլ մըծանըմ ա, Թաքավերը ըտրանավ ուրան սըրտըմը ամեն օր ուրխանում ար։ Վըերչը խընձորը հըսնըմ ա։ Ծառան պուք ըն տամ, պըերում տամ Թաքավերին։

Պալատըմը Թաքավերը նան Թաքուհին օտըմ ըն։ Ըտրանա ետը անց ա կըենում Թաքավերին մըհար շատ էրգյան իննը ամիս, իննը

www.naregatsi.org

օր, իննը սրհաթ, իննը մունուտը։ Թաքուհին մին լավ տըղա խոխա յա պըերըմ։

Թաքավերը աշխարքիս չանք ուրխանըմ ա, քառասուն օր ղոնախլըղնի յա սարքըմ, քյասիբներին փող ա պեց թողըմ, էլ հինչ լըվներուն ասիս անըմ ա։ Ըտրանա ետը թաքավերը որոշում ա ուրաին տըղին հենց տըեղ պահի, վեր դաշրդըղազաբ չի տըեսնա, վեր աշկավ չի տան, վեր փիս պեններ չի տըեսնա, վեր շունտ չի պըռավի։

Անց ա կըենում շատ օրեր, տարի, ամըես, շափաթ, թաքավերին տըղան մինակ օթախին մեչին մըծանըմ ա։ Մըծանըմ ա, ամմա վեշ մին պեն չի գյունդում, վեշ թաքավերական կործերին անա, վեշ էլ ժողովուրթին անա։

Մին դոնըմ թաքավերին աշպազը սխալվըմ ա, թաքավերին տըղին ամանին մըեչը մին վրեսկուռ ա թողըմ։ Էտ տըղան ճաշը օտելանը ետը ըսկըսըմ ա էտ վրեսկուռը կոռծիլը։ Կոռծից, կոռծից, պըեն չի տունս եկավ։ Էտ տըղան ըջըղվից, քըշկոտվից վրեսկուռը եր կալավ, յրա ըրավ, ակուշկան տըվավ, ակուշկին հիլին կոտրից զըրընգզըրընգալավ եր տըեռա՜վ։

Թաքավերին տըղան քյինից ակուշկեն էտ կոտրած տըեղան եշից դիբի քյունչան։ Իտի պըեն տըեսած չար, լհա իստի մնաց ցըմաքած։

Ժողովուրթ, քյինիլ-կյա՜լ, մարթիքյ, դունքյաննի, լիքյը տըրաքըմ... էլ հի՜նչ ասի՜մ, էլ վե՞րը ասի՜մ, վե՞րը թողի՜մ...

Նա էլ օզից վեշ պալատըմը կըենա, ճըղճըղոցը քցից ըտըեղերք, տոռնը-ակուշկա կուտրատից, լոխ տըկրկլոխ ըրավ։ Էտ սասին յրան ծրոռտենքյը եկին, հըվըրքվեցին, տըեսին, ետնան խաբարը տարին տըվին թաքավերին։

Թաքավերն ասից. — Պա՜հ, մըղափո՜ւն, տըղաս շունտ ա աշխարք մըննըմ, էլ օզըմ չի պալատըմը կըենա, ամմա էլ օրիշ ճար չիկա, քյեցիք պըերիք ընդըղան, բաքյա դինջանա։ Թաքավերը սաղ օրը քնենքյ ա անըմ, թա հի՞նչ անի, վեր ամալ կյա։

Ասըմ ա. — Լավ կինի, վեր մին փեշակ սըվըերի. իմ երգյիրըմըս լավ փրեշակավերնի շատ կա, թող լոխ տունս կյան մեյդան, ուրանց շինած, տունս պըերած պաներավը, ուրանց ծրեռքին շընորքավը, տըղաս տըեսնա, վերը հավան կըենա, էն էլ սըվերի։

Գյրագյի օրը լոխ փրեշակավերնին հըվաքվըմ ըն մեյդան, ուրանց ծրեռքավը եկած, ուրանց վրեսկե մաններավը շինած պըեներին նըհետ։

Էս թաքավերին տըղան լո՛ւն մին-մին տըեսնըմ ա, լոխ տընդը-

www.naregatsi.org

ղըմ, ետավ կյամ ա թաքավերին կոշտը, ասըմ. — Ա՛ հայր, յրես օզըմ ըմ վըերսկան տրեռնամ, հենե տրեսնըմ ը՞ս էն վըերսկանին, սարի մընան ընդեղ կաղնած, օզըմ ըմ ընդրա հընգերը տրեռնամ։

Թաքավերը կանչըմ ա էտ ջահիլ, բոյավ բուսաթավ, ղաշանգյ տըղին, պատրոնդաշիքը դաշը պատած, թըվանգյը լրեն թըեգյունքավը քըցած ար տըղին, հըրցըփորց անըմ, տրեսնա հո՞ւ վա, հո՞ւ չի, տրեսնում ա աշկըմը իշեղ կա, ծրեռքավը պրեն կրկյա՞, ուրայն էլ ա տուր կյամ։ Տրեսնըմ ա, էն էլ ա մադար տըղա։ Ասըմ ա.— Բա՛լա, ըսօրանը ետը տու կինիս իմ մադար տըղիս մրեծ ախպերը, ընդրա թեգյունքին սարը, ըսօրվանը ետը ընդրան մըղայիթ կրկենաս մինակ չըս թողիլ, ըշտրեղ քյինի, հետան կըքյինիս տու էլ ըս մադար, ինքյն էլ ա մադա՛ր։

Էտ ջահիլ վըերսկանը աշկերը պըցըրցընում ա, թաքավերին եշըմ, տրեսնըմ, վեր ուրայն սըերտն էլ մին պրեն ընգավ, ասիս լհա՞ թաքավերը ուրայն հայրը ինի՞։

Ընա չոքըմ ա թաքավերին առաչին, ասըմ.— Տե՛ր թաքավեր, յրես քու առաչիտ չոքած ուրթունմ ըմ օտրմ, վեր յրես իմ գյանքաս շատ կը սիրիմ ընդրան, միշտ նըհետը կինիմ, նրեղ տրեղը ընգած վախտը, դրլվըմը կաղնած կինիմ։

Թաքավերը էրկուսին ճկատան պաչից, ուրայն կոխկին նըստըցըրավ։

Ժողովուրթը տունմը կաղնած ըսպասըմ ար, վեր տուս կյան, տրեսնան ըտրանց էրկուսին։

Վեր թաքավերին տըղին ծի նստած տեսնըմ ըն, ուրայն մրեծ հընգյերին նըհետ, շատ ըն ուրխանըմ, էլ ծափ, էլ ծրծաղ, էլ ուռռա, գյուդունմ չին, թա հինչ անին։ Մինակ մինն ար տուխուր, մինին աշկը յոր չար օնըմ էտ ըրխոթունը։ Էտ էլ թաքավերին մրեծ վեզիրն ար։

Տա հայլա շունտանց սըրտըմը կար, վեր անժառանգյ թաքավերին կահին ուրայն տըղան նըստի, ընդրան կըլոխը չար մընընըմ, վեր թաքավերը տղա օնի՞, լհա մին պրենի ար ման կյամ, վեր թաքավերին տըղին տոնը քանդի, կըլխին մին օյին տինի, կըլոխը օտի, փըչըցընի։

Անց ա կրենըմ խիլլա վախտ, թաքավերին տըղան վըերս անիլը սըվերըմ ա, ուրայն մրեծ հընգյերին էլ շատ ա սիրըմ, մին մունուտ կարըմ չի, թա առանց ընդրան կրենա։

Էլ սար չըն թողըմ, էլ ծըմակ, էլ ծոր, ամման տրեղ շուռ ըն կյամ։

Թաքավերին տըղան տրեսնըմ ա, վեր ուրայնք հըշտրեղ ասիս

www.naregatsi.org

ընում ըն, ըշտեղ ասիս քյընըմ ըն, ամմա բիդի աչ ղուլի պըեցնուր սարերը քյընըմ չը՞ն։ Նա մըեծ ախպորան հարցմունք ըրավ, մըեծ ախպերն էլ ասից, վեր դիբի էն ղուլերը վըերս չիկա, նըհախ տըեղան հի՞նչ քյինին։

Նա օզըմ ար վեր թաքավերին տըղան ծըեռք քաշի էտ մըթկան, ամմա տա ըսդիբում ա, թա. — Չէ, վեր չէ, յըես օզըմ ըմ տըեսնամ էն սարին քըմակին հի՞նչ կա։ Մըեծ ախպերը լավ ար գյուդում, վեր էն սարին քըմակին օխտը օշափ ըն կըենըմ ուրանց, հունըփաերի, դունյա գյողալի քվորը նըհետ։ Մըեծ ախպերը օզըմ չար, վեր թաքավերին տըղան էտ օշափներին տըեսնա ընդրանց իրես-իրես ինի, վըերչը վեր թաքյաժառանգյը էրկու վըենը մին չմըշկըմ ա տընըմ, թա յըես ըմ, վըեր յըես ըմ, բամդա քյինիմ տըեսնամ, ճարը կըտըրվաձ մըեծ ախպերը ղաբուլ ա կըենըմ ընդրան սարին էն ղուլը տանի։

Հալա թաղա յին անց կացալ սարին էն ղուլը, վեր մին վըրըխկալի ըխպիրի քըշտի էն օխտը օշափին քըվորը, էն հունլլու-մալյագյին տըեսին ընդեղ կաղնած։

Վեր թաքյաժառանգյը ըտրան տըեսավ, օշը տարավ, եր ընգավ։ Ախճիգյըն էլ հունց աշկա կորավ, ասիս լհա մին ղուշ ար, թռավ, քյինից։

Վեր օշը կըլոխը եկավ, ըտրանք ըտըղան էլ ետ տըեռին բիդի պալատը։ Ըտըեղ թաքավերին տըղան ասից.— էն հո՞ւ վար էն մարալ-ջեյրան ախճիգյը, յըես ընդրան սիրեցի։

Մըեծ ախպերացուն ասից. — Էս սարըմը կըենող օխտը օշափ կա, ընդրանց քյուրն ա։

Էլ միչև պալատ հըսնիլը վեչ մին խոսկ չըսեցին։ Ըտրանա ետը թաքավերին տըղան վեչ օտըմ ար, վեչ խըմըմ, վեչ ասըմ, վեչ խոսըմ, տըեռալ ար աշխարքաս ծըեռք եր կալած, բեքյեփ, էլ վեչ մին պըեն ուրան տուր չար կյամ։

Պալատըմը ուրուր անավ ին ընգյալ, վեչ մինը գյուդում չար, թա խե՞ իտի յա, ըտրա դաշդը ղըեյիդը հի՞նչ ա, հի՞նչ չի։ Մինաւկ էն վըերսկան տըղան ար գյուդում, էն ախպերացուն։ Էն էլ հիշքան քնենքյ ար անըմ, գյուդում չար, թա հինչ անի։ Լհա էն ար գյուդում, վեր տա շատ տըժեր պըեն ա, վեր էտ օխտը օշափը ուրանց քյուրը տալու յըն մին հենց տըղի, վեր ուրանց օխտըքանան էլ օժավ ինի։

Շատ ա անց կըենըմ, խրեգյ ա անց կըենըմ, շատ նան խըրեգյը աստուձ ա գյուդում, մին օր էլ թաքավերին տըղան նան ուրան մըեծ ախպերացուն ծիյանքը նիհ իլած քյինըմ ըն բիդի էտ սարը։ Վըեր պըցրանըմ ըն ըտեղ, ախպերացուն ըտրան մին փոսըմ կյե-

www.naregatsi.org

ղըմ ա, ծիյանքը ըտրեղ կապըմ, ինքը թուշ, զոննի, քյընըմ բիդի էտ օշափներին ամարաթը։

Տրեսնըմ ա տունսունը էնա մին մրեծ կըրակ ըրած, յրան էլ մին օխտը ունգյնանի եքյա ղազան տիրած։ Էտ ղազանին մրեչին էլ օխտը կով ա իփում պըլթպըլթալի, հալա թըշշ-թըշշալի էլ ղըրղնըներան եր տրեռնըմ։

Էտ մրեծ ախպերացուն մուտանըմ ա, պարյօր տամ էտ կըրակին պունըլըրքավը նըստոտած օշափներին։ Ըտահանք իսկի տրեղըներան տունրունր չըն կյամ, իսկի ջողաք չըն տամ։ Վեր մին էլ ա պարյօր տամ, ըսկըսըմ ըտրանց խոսացնիլը, ըտրանց անա մրեծը ասըմ ա. — Էտ ղազանը պըցըրցրու, տական կրակ հանի, տար։

Էտ ախպերացուն հրսկանըմ ա, թա ըտրանավ հի՞նչ ըն օգըմ ասին։ Տա ղազանին էրկու ունգյունան փըռնըմ ա, յոր օնըմ, տինըմ տաւիին, տական կրակ յոր օնըմ, էլհա ղազանը տնըմ կըրակին, առանց խուսելի ետ տրեռնըմ։

Էտ օխտը օշափնին ունրունր եղըմ ըն մաթ մընացած։ Մրեծ օշափը ասըմ ա. — Էլ հի՞նչ ըք նըստոտալ, եր կացիք քյեցիք էն տըղին կանչեցիք կյա, տա մըեր քըվերը լայըղ տըղա յա։

Պուճուր ախպերը վազ ա տամ ծրեն տամ, էտ ախպերացուն ետ ա տրեռնըմ, կյամ օշափներին կոշտը։ Մրեծ օշափը ասըմ ա. — Դե, վեր տու իտի ղոչաղ տըղա յըս, մըեր քունրը քյրեղ հալալ։

Էտ ախպերացուն ասըմ ա.— Յրես եկալ ըմ ծրեր քյունրը վրեչ թա ինձ հրետի տանիմ, եկալ ըմ տանիմ իմ պուճուր ախպորս հետի։

Ասըմ ըն. — Հի՞նչ կինի՞, տար։

Ըտրեղ պայման ըն կապում, թա վեր օր կյան ախճիգյը տանին։ Էտ ախպերացուն մըտանի յա տամ, մըտանի յոր օնըմ։ Ըտրանա ետը ախպերացուն կյամա թաքավերին տըղին կոշտը, տրեսնըմ ըտրա քեթը-պըռռղը ծրունն ա։ Մընըմ ա գյունաքար, ետավ կըլնխ ա ընգնըմ, վեր ինքը ղազանը պըցըրցրալ ա, տաւիին տիրալ երգյրաշարժ ա իլալ, սարը գըմբ-գըմբալի տունրունր ա եկալ, թաքավերին տըղին իրեսը նի յա եկալ փոսին պատին, քըեթը ճառթալ, ըռնըթաթախ ըրա՛լ։

Ըտրեղ էտ մրեծ ախպերը նաղլ ա անըմ, թա հի՞նչ իլավ, հի՞նչ ըսեցին, եր կալած մըտանին էլ տամ ա ըտրան։ Էրկուքան էլ օրախ-օրախ կյամ ըն պալատը թաքավերին լոխ նաղլ անըմ։

Պալատըմը լոխ ուրխանըմ ըն, ըսկսըմ ըն բադրաստոթուն քաշիլը հըրսընքին հրետի։

Թաքավերը ուրխընալան նըհետ, էտ ղոչչաղ տըղին պադվեն,

www.naregatsi.org

իրեք օր ուրեն թախտը տամ ա ըտրան, համ էլ խաչախպեր ա ունթունում ըտրան։

Մըեծ թափուրավ քյինըմ ըն հարսին պըերին։ Էլ թըվանգյ տըրըգցընիլ, էլ պար, էլ երք, էլ քյեփ, հի՞նչ քյե՞փ, աշխարքավըս մի՞ն։

Հարսին յոր ըն օնըմ, թա կյան, կես ճընապարին մին ղուշ թըռչըմ ա, կյամ էտ ախպերացու-խաչախպորը օսին կաղնըմ, անգուճումը ծըլվըլըմ, ասըմ. — Ա՛յ ախպեր, մին խրեգյ ետ ընգի, պըեն ըմ ասըմ։

Ախպերացուն մըհաւ չի տընում, էտ ղուշը մին էլ ա, ասըմ էրկու էլ ա ասըմ, ախրը-վըերչը էտ ախպերացուն ետ ա մընում։

Ղուշը ընդրան ասըմ ա. — Ա՛յ ղոչչաղ ախպեր, լավ գյիդա՜. վեզիրը, ընդրա տըղան, ընդրա հարսը լավ, լավ բադարկեք ըն պերելու Թաղա՜ հարսին նան Թաղա՜ փըեսին հետ։ Թողիս վեչ փըեսան նստի ընդրանց պըերած վըեսկե թամքավը ծիլին յըրան, ծին — կըտաղած ծի յա, թամքըն էլ աղու ճար քըսած ա, վեր յըրան նըստի, մըեռնելու յա։ Թողիս վեչ, վըեր Թաղա՜ հարսը ըտրանց պըերած տուպլիքյը կյենա, մըեռնելու յա։ Մին պըեն էլ բիդի ասիմ,— էտ էլ էն ա, վեր տու էլ լոխ թաքուն բիդի պահիս, քու գյանքըմըտ վեչ մինին ասիլ չիբիդիս, լհա՜ վեր ասեցիր, քար ըս տըռնալու։

Էտ ղուշը լոխ ասըմ ա, ինքն էլ թըռչըմ, քյինըմ։ Էտ ախպերացուն մընըմ ա մաթ մընացած, թա էս հի՞նչ պըեն ա, էս հի՞նչ զատ ա, վեր եկալ ա իմ կըլոխը։ Համ ասըմ ա, համ էլ շուտ անըմ, քյինըմ հըրսանիքին հըսնըմ, գյըվաքյիս թա վեչ մին պըեն չիլալ։

Վեր պատառ մուտանըմ ըն, ճընապարին, ազկ-պարեկամ, մըեծամըեծնի, նաղիր-վաղիր, լոխ տուս ըն կյամ Թաղա՜ փըեսին նան Թաղա՜ հարսին առաչը։ Էտ ախպերացուն լհա՜ աշկը յրան ա պահըմ, տըեսնա համին էտ վեզիրը հի՞նչ ա անելու։ Վեր լափ մուտանըմ ըն պալատան, տըեսնըմ ա համին էտ վեզիրին տըղան եկավ, մին վըեսկե թամք յրան տիրած Ղարաբաղի մին շատ լավ ծի վըեսկե գյաբա մեշկին փըռնած, պըերավ, թա տա թաքավերին տըղին։ Ըտրա կընեգյըն էլ մին վըեսկե մըժմահու մըեչի գաղավ ծասկած, մին ճոխտ ղաշանգյ տուպլի պըերավ, թա տա Թաղա՜ հարսին։ Էտ ախպերացուն, վեր մինչև էտ տըրըկյունըմ ար էն ղուշին ասածին յրան, մըհեկ լափ հըվատաց, վեր ղուշը դուզ ա ասալ։

Նտ ա տըեռնըմ վեզիրին տըղին հրամմայըմ, ասըմ.— Առաչ ծին տու նըստի, ետավ փըեսան, էս տուպլիքյն էլ առաչ Թող կընեգյըտ կյենա, ետավ հարսը։

www.naregatsi.org

Ըտրեղ պատառ ղըլմըղալ ա պըցրանըմ, թա իտի պըճն չինի՞լ, օրենքյ կա, ադաթ կա, բադարկան առաչ պըճրողը չի պընըցընիլ, էտ վեզիրին տըղան նան ուրան կընեգյը իսկի օզըմ էլ չըն, թա կընեգյը տուպլիքյը կյենա, ինքն էլ ծին նըստի, ամմա ախպերացուն ըսդիբում ա։ Ըտրանք ճարը կըտրած իտի էլ անըմ ըն։ Լհա վեր վեզիրին տըղան ծին նըստըմ ա, ծրեռաց մըեռնըմ ա, կընեգյըն էլ լհա վեր տուպլին կյենըմ ա, էլհա էն սըհաթը մըեռնըմ ա։

Հըրսընքավերնին մընըմ ըն մաթ մընացած, սառած-սըքառած, քար տըեռած։ Նոր ըն կըլխու ընգնըմ, վեր խե ար էտ ախպերացուն իտի տական-կըլխան, նըհախ տըեղան խոսըմ։ Ըսկըսըմ ըն ըտրան հարցըփորց անիլը, ամմա տա վեշ մին պըճն չի ասըմ, լհա ասըմ ա, թա. — Հըրսանիքը շարունակեցիք, էլ վեշ մին պըճն։

Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ։ Հի՞նչ հըրսանիք, թա հի՞նչ... Ասիս լհա աշխարքիս լավ-լավ պըճնները, պըճրալ ըն էտ ըստոլնըերին ածալ, էլ օտի՞լ, էլ խմի՞լ, էլ վըճակե, պըռըլյանդ շաղ տա՞լ... Ամմեն հի՞նչ...

Ախպերացուն շատ օրախ ար, վեր չարը խափանալ ա, ամմա թաքավերին տըղան տուխուր ար, ուրան մըեծ ախպերացուին յրան նըղացած, թա խե՞ էտ պըճնը թաքուն ա պահըմ, ուրան ասըմ չի՞։ Վերչը էլ կարից վեչ ուրան պահի, ասից. — Բա մունք ախպերք չը՞նք տըեռա՞լ, էտ խե՞ չըս ինձ ասըմ, թա հինչ ա իլա՞լ։ Էտ հի՞նչ մըեծ պըճն ա, վեր ինձ ասըմ չըս։

Ախպերացուն տըեսնըմ ա, վեր տա շատ ա ուրան անա նըղացալ, ասից. — Տու գյուդում ըս, վեր յըես քյըեզ իմ գյանքաս իվիլ ըմ սիրըմ, քյըզանա վեշ մին թաքուն պըճն չօնիմ, կասիմ, էտ լոխ կասիմ, ամմա տու կը փըշմանիս, քու սըերտըտ կըցավի, կը տանջվիս, քըշեր-ցիրեկ աշկըտ հոփ չի կյա՞լ։

Էտ ախպերացուն, լոխ նաղլ ա անըմ, հինչ վեր իլա՞լ ա։ Լհա վեր վըերչին պառը ասըմ ա, ուրանք էլ մուտացալ ին իտի խոսելավ թաքավերին տըղին օթախին, իտի լհա վեր ասըմ ա, պըրծընըմ, էտ օթախին ակուշկին տակին էտ ախպերացուն քար ա տըեռնըմ*։

---

* Ջանըս ծրեզ մատաղ, ա հաքյաթ լըսողնի, էս ա կըես քըշեր ա տըեռալ, ըսօր հիշքան էս հաքյաթը նաղլ ըմ ըրալ, բոլ ա։

Քյընացիքյ քոն իլիք, կըեսն էլ էքյուծ ուրունգյունը նաղլը կանիմ։ Տըեսիք է՞, երգյինքին ասթխերի՞ն, շամփուր-քըշեռքը տունա ա եկալ։ Հենե՞, էն խուրդա, թուփ եկած ասթխերը տըեսնըմ ը՞ք, էն «Պազումքըն» ա՞, էն էլ ա տունա եկա՞լ, էն ղոլան էլ

www.naregatsi.org

Թաքավերին տղան վեր տրեսնըմ ա ախպերացուն քար ա տրեռալ, պադրաստոթուն ա քաշըմ, քյինի աշխարքիս էն ճընդան էլ ա, մին ճար պըերի ախպորը լիվըցընի՞, սըղըցընի՞։ Իտի էլ կըլնի ա յոր օնըմ, քյինըմ։

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրեզ, ինքն էլ չի գյուդում, մին դուզ, լավ տրեղ պըտահըմ ա մին մըեծ եքքա ամարաթի։ Տրռնավը նի յա մընննըմ, տրեսնըմ մին մարթ ըտրեղ կաղնած... էտ մարթը օզըմ ա, թա տրռնավը տունս կյա, ըտրա կըլնին էրկու մըեծ պոզ ա փըսնըմ, մինը պատալոկին մին քյունջըն ա նի մընննըմ, էն մինն էլ պատալոկին էն մին քյունջը։ Ամմա վեր էլհա ետ ա տրեռնըմ օթախին մըեշտրեղը կաղնըմ, պոզերը ինքը-ինքը կորչըմ ա։

Իտի էտ մարթը սաղ օրը չըրչարվըմ ա, թա տունս կյա, պոզերը փըսնըմ ա՞, էլ կարըմ չի՞, մին էլ ետ ա տրեռնըմ։

Թաքավերին տղան ինքն ուրյան ասըմ ա. — Բալքյաս էս մարթը, վեր իստի ղազաբի յա եկալ, մին պըեն ա գյուդում, մին փանդրփրել ա գյուդում, մին ճար, մին դարման ա գյուդում ախպորըս լիվըցընի, մին ասիմ, տրեսնամ՝ հինչ կասի։

— Քու քար տրեռած ախպերտ ինձանա բախտավըեր ա, վեր քյըեզ նման ջանը յուղուրըմը տիրած ախպեր օնի. ինձ իտի մին ջընըյանա մարթ չօնիմ, վեր մին ճար, մին դարման անի ինձ։ Քյըզանա էլ յըես շատ ըմ խընթըրըմ, վեր ախպորըտ հետի ճար անող քյիթնիս, ինձ մըհար էլ հըրցըրու, բալքյաս ինձ հետի էլ մին պըեն անի։ Դե իմ ծրեռքավըրս պըեն չի կյամ, պըեն չըմ գյուդում քու ախպոր հետի՞։ Թաքավերին տղան խոսկ ա տամ էտ պոզավեր մարթին, վեր թա իտի պժիշկ ճար, կըհըրցընի։ Ասըմ ա էլհա ճընապար ընգնըմ, քյինըմ։

էն կյիրմիրին տըվող ասթըխը, էն կրավի ասթըխն էլ ա տունս եկա՞լ, ա՞խ կրռև չինի, մըեր ջահիլ բալեքը սաղ ինին, լոխ լավ ինին, ընդրանց մեչին էլ իմ բալեքս... էն վեր աչ ղուլինն ա՞... Դե պարի քըշեր լոխճիտ...

— Այան ծրեր կըլխավը շոռ տա, դե եկեք բալկոնըմը ըստուին կոխկին նըստեցիք, էս ա էս սունրմա-կոճակավ խըլեղըս հանիմ, տաք ա, մընա տակին կյարմունր հալավըս, կյամ հաքյաթին կրեսըն էլ ասիմ, էն սարին քըմական էլ մին տեսեք հի՞նչ լունընդյա յա տունս կյամ, հենց ա լճա՞ էն թաքավերին հարսը ինի՞, պունլլերիրես, պըծրպածին ընելիս՞, նախշուն՞... Դե մըհեկ լըսեցիք։

www.naregatsi.org

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրեգյ ա քյինըմ, գյուդում չի, վըերչը հրանըմ ա մին ճրնապարհի։ Էտ ճրնապարին դալուն մին մըեծ քարի տեմ տըված մարթի։ Էտ մարթը վեր օզըմ ա, թա եր կըենա, ասըմ ա, թա.«Փառք ասծու, էս ա եր կացի», էտ քարը մըեշկան ա կըենըմ, ճաքըմ, ճըքճըքոտըմ, մըեչան էլ վըեսկե յա եր տըեռնըմ, ամմա էտ մարթը կարըմ չի տըեղան տուրուր կյա։ Ամմա վեր դինջ տըեղը նըստըմ ա, քարը մըեշկան պուք ա կյամ, ինքն էլ դինջանըմ ա։ Իտի սաղ օրը տարի էտ մարթը տանջվըմ ա։

Թաքավերին տըղան ըտրան էլ ա լոխ նաղլ անըմ, հըրցընըմ ուրան ախպորը հետի մին ճար, մին դաշըման, ամմա էտ մարթը գյուդում չի՞, հալա ինքն ա ղաչանք-պղատանք անըմ, վեր ուրան հետի էլ մին տըեղ, մին դաշըման գյուդա, հիբը մին գյուդող ճարի։

Թաքավերին տըղան էլհա ճրնապար ա ընգնըմ, քյինըմ։ Քյինում ա, քյինում, հասնըմ ա մին շենի։ Տըեսնըմ ա էտ շրենը ուրուրոցավ ընգած, ղըլմըղալ, խոսկը զուրուց։ Տա մուտանըմ ա մին հլիվեր, մազերը ծուն տըեռած մարթի անա հրրցընըմ, թա.— Ապեր, էս հի՞նչ ղըլմըղալ ա։

Էտ աղասխկալ մարթը ասըմ ա. — Ա՛ բալա, քառասունինջի դոնըմըն ա, վեր մեր շենըմը ժամ ընք շինըմ, մըեծ ծախսեր անըմ, ըրշարվըմ, տանջվըմ, ամմա լհա վեր տերտերը նի յա մընընըմ ժամը, թա պադարագյ անի, ժամը տուրուր ա կյամ, մին հենց քամի յա պըցրանըմ, վեր էլ խոսկ չըմ քըթենըմ ասիմ, լոխ պարան ա տամ, Սոդոմ-Գոմոր շինըմ, իլած-չիլածըն էլ քըշըմ, տանըմ։ Ամմա ժողովուրթը էլլա յա շինըմ։ Ըսօր էլ քառասունինջի դոնըմը պարան եկավ, էլհա ակուռի տըեռա՜վ։

Էտ հլիվըերը վեր գյուդաց էտ թաքավերին տըղին դարդերը, ասից. — Ա՛ բալա, ասծու օրթնանքը քյըեզ յրա ինի, վեր քյինիս քու ախպոր հետի մին ճար անող քյիթնիս, մըեր ժամին հետի էլ կասիս, բալքյա մին թահր անի, էլ մըեր ժամը քանդվի վե՜չ։

Թաքավերին տըղան ըտրան էլ ա խոսկ տամ, էլհա ուրան ճրնապարը ընգնըմ։

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրեգյ, մին պըեց տըեղ, մին դուզ հանդի մըեչի մին արշինաբոյ մարթ ա տըեսնըմ, մըրոքը՝ էրգյան, ինքը՝ կարճ։ Ուրուր պարյօր-ասծու պարին ըսելանը ետը թաքավերին տըղան էտ մարթին ուրան դարդը ասըմ ա։

Էտ կարճ բոյավ մարթը ասըմ ա. — Ա՛ թաքավերի տըղա, քու բախտըտ տու ճարալ ըս։ Էտ ճրնապարավը վեր մին խըրեգյ էլ քյինիս, մին տըզտըզոց ըս լըսելու։ Էտ տըզտըզոցին հրետան

www.naregatsi.org

կըքյինիս, միչև վեր կըհըսնիս համին էն մարթին, վըերին տու ման ըս կյամ։

Թաքավերին տըղան ուրխացած, աշխարքըս ուրաննը տըեռած, ճընապար ա ընգնըմ, քյինըմ։

Մին պատառ ետը մին տըղզոց ա լըսըմ, էտ տըղզոցին հետան քյընըմ։ Մին խիլլա վեր քյընըմ ա, էտ տըղզոցը նի յա մընընըմ մին խոր ծոր։ էտ ծորին վըերչըմը, էտ տըղին առաչին մին տոռն ա պըեցվըմ։ էտ տըռնավը նի յա մընընըմ, տըեսնըմ մին փալաքյան։ էտ փալաքյանավը քառասուն վըեննը քըշանըմ ա քաշ, նի մընընըմ օխտը օթախ, ուրուր մեչավ տըռներ։ Քյինըմ ա անց կըենըմ էտ օթախներին մըեչավը, մարթ չի տըեսնըմ։

Մինակ օթինջի օթախըմը տըեսնըմ ա մին պառավ, սիպտակ մըրքավեր մարթ, մին ըստուխ քըշտի նըստած, կյիր ա կյիրըմ։

Թաքավերին տըղան յավաշ-յավաշ եկավ էտ մարթին կոշտը, չոքից, ծըեռքը պաչից, ուրան դաշրդը նաղլ ըրավ, էտ հըլիվըեր մարթան մին ճար, մին դաշրման ղաչանք ըրավ, ուրան ախպորը հետի։ էտ պառավ մարթը ետ տըեռավ էտ տըղին եշից, մըեխկը եկավ, մըթկըմը տիրավ ըտրան քյումաքյ ինի։

Մաննան հանից ուրան մըտանին, տըվավ էտ տըղին, ասից. — Ա՛ վըերթի, էս մըտանին եր կալ, ըշտըեղ հինչ պըենդ պըեն ինի, վեր քըսիս, ճուր ա տըեռնալու, հիշքան էլ կակող պըեն ինի, ճիրի նըման պըեն ինի՞, վեր քըսիս պըենդելու յա։ Լհա հինչի վեր քըսիս, հի՞նչու վէլ օզիս յա մըթկըմտ տինիս, էս մըտանին թըռչի, քըսի օզածըտ կադարվելու յա։

Թաքավերին տըղան ասըմ ա.— Շատ շունըրակալ ըմ, պապի՛, մինակ մին խընթիրք էլ օնիմ, հո՞ւնց քյումաքյ ինիմ էն պոզավըեր մարթին։

— Էլհա էտ մըտանին թըռչի ճիրըմը, պոզերը քըսի, լավանալու յա, պոզերը հալվելու յա։

Էն ճընապարին նըստած մարթըն էլ թող տըեղան եր կընալիս ասի վեչ «Փառք քյըեզ աստվածա», ասծու անըմը տա վեչ, էն վախտը քարը մըեչկան պուք ա կյալու, տըեղան եր կըենա, ուրան ճընապան քյինի։

Էն ժամըն էլ պարան չի կյալ էն վախտը, վեր պատերը շինելիս, շենին տերտերը պատըմը տինին, հեմնին։

Թաքավերին տըղան էտ պառավ մարթին կըլոխ ա տամ, շունրակալ ինըմ, մըտանին մաննը քըցըմ, քյինըմ, ճընապար ընգնըմ բիդի տոն։

www.naregatsi.org

Կյամ ա, կյամ, հրսնըմ էն շենը, ըշտըեղ ժամը շինըմ ին, էլհա քանդվըմ ար։ Ըտըեղ ըտրանց լոխ ասըմ ա, հինչ վեր էն պառավ մարթը ասալ ար։

Ասելանը ետը էլհա շարունակըմ ա ուրյան ճրնապարը, կյամ համին էն քարը մրեշկան կացած մարթին, ըտրան էլ լոխ ասըմ, վեր էլ ասծուն փառք չի տա։ Քարը մրեշկան պուք ա կյամ, էտ մարթըն էլ ըտրեղ ա ազադվըմ, վրեսկին յոր օնըմ, կրեսը թա տա թաքավերին տըղի՞ն, ամմա նա յոր չօնըմ, ասըմ ա.

— Ցրես իմ ախպոր հետի յըմ քըրըքար ընգալ, վրեղ թա վրեսկուն հետի։—Ասըմ ա պըրծընըմ, էլհա ուրյան ճրնապան ընգնըմ։

Հրեռըվան հրեռու, մին սարի կըլխի տրեսնըմ ա, իրեք հրնգյեր կաղնած, ուրուր նըրհետ հոջաթ ըն տամ։

Թաքավերին տըղան քյընըմ ա ընդրանց կոշտը, ասըմ. — Ա՛ջա՛հիլ տըղերք, էտ խե՞ յըք ուրուր նըրհետ հոջաթ տամ։

Ընդրանք ասըմ ըն. — Հրեսե ըստըեղ էրկու ճրնապար կա, մինը տանըմ ա բիդի մըեր հայրենիքը, մինը բիդի մահ։ Մըհեգյ խստի ուրուր նըրհետ հոջաթ ընք տամ, խրելք-խրելքի յընք տամ, տրեսնանք վեր ճրնապարավ քյընինք, վեր լավ ինի...

— Բա ծրեզ հի՞նչ կործ օնիք մահվան ճրնապարին նըրհետ։

— Էտ ճրնապարը տանըմ ա Հելահել թաքավերին պալատը։ Էտ թաքավերն էլ, մին ինդի կյեղեցիկ ախճիգյ օնի, վեր սաղ աշխարքըմըս ճարիլ չըս։ Էտ թաքավերը օզըմ ա ուրյան ախճիգյը մին հենց մարթի տա, վրեր կարի մին մեծ կաթնավ լիքը ղազան պըցըրցընի ուրյանց տըռանը փըսած չինարի ծառին պըտոկը, ընդրղան էլ քըշանա քաշ էն թաՀրյավը, վեր էտ ղազանան մին կաթ կաթնը չի եր տրեռնա։ ՀաՀրուրավեր ջահիլ տըղերք էտ ըխճըկանը դաՀրդան կըլոխ ըն տիրալ։ Ընտրանց կըլխընեռան Հելահել թաքավերը պալատնի յա շինալ, մրհեգյ էլ մունք ընք օզըմ քյընինք, տրեսնանք մըեր բախտը պըերըմ ա, թա չէ, տրեսնանք սաղ կը մընանք, թա մըեր կըլխընին է՞լ ընդեղ կըմընան։

Թաքավերին տըղան էս վեր լսից, ճրնապարը թրեք տըվավ բիդի Հելահել թաքավերին պալատը։ Էն տըղորցըն էլ ասից.— Տուք հինչ օզըմ ըք, արիք, յըես քյինըմ ըմ իմ բախտս փորցիմ։

Վեր տրեղ հրսավ, քյինից թաքավերին կոշտը։ Հելահել թաքավերը ուրյան թախտին պազմած, աշկերը ծառնավ լըցած, հրմբարդ նըստած ար։ Վեր լըսից թաքավերին տըղան եկալ ա ուրյան ախճիգյը օզի, ասից.— Բա տու գյուդում չը՞ս էն պայմանը, հու վեր իմ ախճիգյըս օզի, բիդի կադարի։

www.naregatsi.org

Թաքավերին տըղան ասում ա. — Գյուդում ըմ, լըսալ ըմ։

Պըերին էտ կյեղեցիկ ըխճըկանը նշանց տըվին։ Թաքավերին տըղան ինքը ուրան մըթկըմը ասից։

— Իստի կյեղեցիկ ըխճըկանը հըետի մարթ կըլնխն էլ բադի կըտա, ջանն էլ։ Ամմա վեր չինարի ծառին պըցրոթունը տըեսավ վե՞չ, աշկը վախի՞ց, ուրան մըթկըմը ասից. «Ցանի մարթ ըխճըկա դարդա ուրան մատաղ կանի՞։ Ամմա դե տըղամարթը ուրան թըքածը լուզիլ չի՞, տըղամարթին խոսկը՝ խոսկ ա, տափին չի քըցիլ, ըտրա հետի էլ սուս ըրավ, կաղնից։

Պըերին կաթնավ ծըլպըծըլպան լիգյը ղազանը տիրին առաչին։ Տա եր կալավ դինջըմը, առանց թայդի ընգնելի նիհ ըլավ ծառը։ Ծառը էնքան պըեցուր ար, վեր ըտըղան ուրան երգյիրը ըրվաց։ Թաքավերին տըղին սըերտը մըղկըտաց, աշկերան արտասունք թափվից։

Ծառին տակին թուփ եկած ժողովուրթը, ծառեքը տըեսին վեր երկու կաթ կաթից, ծառին տակին փըռած զնոխառա գյաբին յըրան։ Թաքավերը փառռաշ կանչից, վեր տըղան ծառան եր կյա, կըլոխը կըտրին։ Թաքավերին տըղան յավաշ-յավաշ ծառան եր եկավ, կաթնավ լիքը ղազանը տըրավ առաչին, մընաց մաթաչ, թա էտ հի՞նչ պըեն ա, վեր Հելահել թաքավերը փառռաշ ա կանչալ։

Թաքավերը նշանց տըվավ էտ էրկու կաթը։ Տա շատ մըտածից, թա տա հինչ պըեն ա, բա ինքը կաթնը քար ա շինալ, էտ հի՞նչ ա։ Բիրդան մըետն ընգավ, վեր լաց ա ըլալ, վեր էտ ուրան արտասունքնին ա։

— Թաքավերը ապրած կըենա, էտ կաթնը չի, էտ իմ արտասունքնիս ա։ Թող մին պըժիշկ կյա, քընննի։

Պըժիշկը եկավ քընննից, տըեսավ՝ աղի յա, կաթնը չի, արտասունք ա։ Ըտըեղ թաքավերին տըղան ուրան կըլխավը անցկացածը լոխ նաղլ ըրավ։

Ըտրանա ետը Հելահել թաքավերը մըեծ հըրսանիք սարքից, ղուռնա-ղավալավ, տաշփ-քյամանչավ, մըեծ պըեժինքավ ախճիգյը ճընապար տիրավ։ Թաքավերին տըղան վախտին ասալ ար, վեր ախճիգյը վեչ թաա ուրան հետի յա տանըմ, տանըմ ա ուրան մըեծ ախպորը հետի։

Հըրսանիքը վեր եկավ հասավ ուրանց պալատը, թաքավերին տըղան լոխ ժողովուրթին կըղնըցըրավ, վազ տըվավ ուրանց բախճան, մին դռլչա ճուր եր կալավ մարմար ավազանան, մըտանին մըեչը քըցից, պըերավ ածից ուրան մըեծ ախպերացուին կըլխին։

www.naregatsi.org

Տա աշկերը պըեց ըրավ, ասիս լհա վըեշ մին պեն չի պըտահալ, ըսկսից նաղլին կըեսը ասիլը։

Պալատը դըրընգաց ուրխոթունան։ Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք արին էտ մըեծ ախպերացուին հետ։

Թաքավերը ուրան թագը տիրավ էտ մըեծ տըղին կըլխին, տա թաքավեր տըեռավ։

Ուրանք էլ համեշա խոր լավ, սըերավ ապրեցին մինչև ուրանց գյանքին վըերչը։

Ընդրանք հասին ուրանց մուրազին, տուք էլ հասնիք ծըեր մուրազին։

Էն ասթխաերավ լիգյը կյապուտ երգյինքան իրեք մըեծ-մըեծ մին թոշը կյարմուր մին թոշը կանանչ խընձոր եր ընգավ. մինը՝ ասողին, մինը՝ լըսողին, մինն էլ՝ էս հաքյաթը տիպըել տըվողին...



www.naregatsi.org



27. ԿԼԼՈՒԽԸ ՆԱՆ ՍԸԵՐՏԸ

Ժուկավ ժամանակավ մին շենում մին պառավ մարթ ար կենում, էտ մարթը մին կնեգյ, էրկու խոխա օներ։ Էտ պըռաված մարթը ամուն օր քյընում ար ծըմակը փայդ անըմ, տանըմ բազար, ծախըմ ըտրանավ մին կերպ ապրըմ ին։

Մին դաննըմ էլհա քյընում ա ծըմակը, կացինը հանըմ ա, թա ծառը կըտրի, մին էլ ա տըեսնում ծառին փըչական մին ղաշանգյ ղուշ տաիս թըռավ։

Էտ մարթը էտ ղուշին հետան ա ընգնում, թա փըռնի, տանի տոն, խըխորցը տա, ուրխանան, ամմա կարըմ չի։ Վերչը շատ չըրչարվելանը ետը էտ ղուշը փըռնում ա, պերում տոն։ Խոխերքը ըտրանավ հաղ ըն անըմ, սուված ինիլը մըտընեբան քըցըմ։

Կընեգյը մարթին իրեսը նըյեր խոսըմ ա, ասըմ. — Ա՛ մարթ, էտ խե՞ փայդ չըս ըրալ, ընգալ ըս ղուշին քըմական, խըխորցը սուված թողալ։

Մարթն ասըմ ա. — Վեչինչ, թող խոխերքը հաղ անին։

Էտ մարթը, էտ ղուշին հետի մին ղափաղա յա շինըմ, ղուշը տընում մըեչին։

Շատ ա անց կըենում, թա խրեգյ, էտ ղուշը ըսկըսում ա ծու ածելը։ Ծուն վեչ թա իժանանոց ա ինըմ, այլ ինըմ ա թինգյանոց, պըռըլյանդի։ Ամմա էտ պառավ մարթը հի՞նչ ա գյուդում, պըռըլյանդը հի՞նչ ա։

www.naregatsi.org

Ցոր ա օնըմ, տանըմ բազար, թա ծախի։ Բըզարըմը ըսկըսըմ ա կանչիլը. — Ա՛յ լավ ծո՛ւ, ա՛յ լա՛վ թա՛զա՛ ծո՛ւ։

Մին առըտուրական կյամ ա հըրցընըմ։ — Քանի յըս ծախըմ էտ ծո՛ւն։— Համ հըրցընըմ ա, համ էտ ծո՛ւն տընդրըմ։

էտ մարթն ասըմ ա. — Հիշքա՞ն կտաս։

— Հենգյ հազար մանեթ, օզըմ ըս ծախի, օզըմ չըս ծախիլ միր։

— Հի՞նչ ա, ինձանավ մազաղ ը՞ս անը՞մ, դե լա՛վ տընաղ մի տալ...

— Օխտը հազար, իվիլ էլ տալ չը՞մ։

էտ մարթը լափ մընըմ ա գյունաքար, ծրեռքերը տրղտո՛ղըմ ա, փողը յոր օնըմ, թուշ տոն կյամ, դեհա դեհա, էլ քըմակին եշըմ չի՞։ Հըսնըմ ա տոն, լոխ կընգանը նաղլ անըմ։ Ըտեղ ըտահանք նոր ըն գյո՛ւղո՛ւմ, վեր ծո՛ւն վեչ թա խուտուրու-մուտուրու յա ըլա՛լ, այլ թընգյանոց ա իլա՛լ։

Ըտրանա ետը ամուն օր էտ պառավ մարթը մին ծո՛ւ եր կալած տանըմ ա քաղաքը, հա՛մին էտ առըտուրականին տամ, փողը յոր օնըմ, պերըմ տոն, էտ առըտուրականը շատ ա քընեննըյ անըմ, թա էտ հի՞նչ պեն ա, հո՞ւմց անի, վըեր էտ ղուշը ո՛ւրա՛ն ծրեռքը քըցի։

Ըտրա հետի տա կյամ ա էտ շենը, հա՛մին էտ պառավ մարթին տոնը քըթենում, ըտրանց սերը-սեկրետը մին պառավ կընգանա գյո՛ւղո՛ւմ, ասըմ. — Ա՛ պառավ, քյըեզ շատ փող կըտամ, հի՞նչ կինի՞, ինձ տանիս ընդրանց տոնը, էտ մարթին կընգանը նհետ մին խրեկ զըրո՛ւց անիմ։ էտ պառավ կընեգյը էն մին օրը կանչըմ ա ո՛ւրա՛ն տոնը էտ պառավ մարթին կընգանը ասըմ.

— Ա՛խչի, էլ ըտրանա լա՛վ պե՞ն, մին առըտուրական ա եկալ քաղաքական, քյըեզ օզըմ ա, հի՞նչ ըս անըմ էտ պառավ մարթին, տու էլ ընդրան սիրըմ չըս, տու՝ ջա՛հիլ, ինքը՝ պառավ, հետե ըտրան քյինի՞։

էտ լոխ ըսեյանը ետը պառավը ըտրանց թողըմ ա մինաակ, ինքը տանան տո՛ւա կյամ։

էտ վաճառականը էտ կընգանը խելքա տանըմ ա։ Ասըմ ա. — Յըես քյըեզ նհետ կըփըսակվիմ, թա՛ք լյհա՛ մին խընթիրք օնիմ կըդարիս։

էտ կընեգյն ասըմ ա.— Հի՞նչ խընթիրք ա, քյըեզ նման տըղը-մարթին հետի հինչ ասիս, կանի՞մ...

էտ առըտուրականն ասըմ ա. — էն ղա՛շանգյ ղուշը մորթի, սըերտը նան կըլո՛խը պեր ինձ տո, օտիմ։—Ասըմ ա պըրծընըմ, մին մըտանի, մին էլ մին բրաալեդ տո՛ւա օնըմ, տամ էտ կընգանը։

www.naregatsi.org

էտ կընեգյը իտի էլ անըմ ա։ Կյամ ա տոն, տրեսնըմ խոխերքը հաղ ըն անըմ էտ ղուշին նըհետ։

Տա խըխորցը ղըրկըմ ա ծըմակը, թա. — Քյեցեքյ ծըմական տըզզան, մոշ, մըհասուր, տես-տեն հըվըքեցեքյ, թորբան նի ըծեցեքյ, պերեքյ։

Ինքը ղուշը մորթըմ ա, թըեփռըմ, իփըմ, տընըմ ըստուլին, վըեր քյինի էն առըտուրականին կանչի, կյա օտի։ Մարթն էլ էն ա ընում քաղաքըմը ծուռ ծախելիս։

Մինչև հանգը-հունգը մըթնըմ ա, խոխերքը յետ ըն տրեռնըմ կյամ, տրեսնըմ մարը տանը չի, ղուշն էլ ղափաղըմը չի, իփած, հըզըրած, էն ա ըստուլեն յըրան։ Ըտրանք գյուդում ըն, թա մարը ձուրանց հետի յա իփա՞լ։ Մըեծ ախպերը յոր ա օնըմ կըլոխը օտըմ, պուճուր ախպերն էլ սըեռտը։ Ուտելանը եաը տուս ըն կյամ, քյընում հաղ անին։

Էտ կընեգյը էտ առըտուրականին նհետ կյամ ա, տրեսնըմ իփած ղուշը կըեռած։

Տա կըղնվում ա էտ կընգանը յըրան, ասըմ. — Էս սըհաթես քյինի խըխորցտ ճարի, ըսպանի, ընդրանց փորան ղուշին կըլոխը նան սըեռտը տուս կալ, պեր ինձ տո, օտիմ։

Էտ կընեգյը խոսկ ա տամ, վեր իտի կանի։

Վըեր մարթը տոն ա կյամ, կընեգյը կըղնվում ա յրան, մարթին խափըմ, գյըվաքյիս թա ղուշը մորթալ ա, իփալ մարթին հետի, ամմա խոխերքը եկալ ըն, կերալ։

— Դե քյինի, քյինի ընդրանց ճարի, ըսպանի, կըլոխը նան սըեռտը հանի պեր, պա՜հ, պա՜հ, պա՜հ, պա՜հ, բա իտի լակուտ կը խրատի՞ն, բա տու մա՜րթ ը՞ս...

Էտ պառավ մարթը վախելան նըհետ, վեր կընեգյը դուզ-դուզ խըխորցը կը սպանի, տուս ա կյամ, քյընաւմ խըխորցը կոշտը, թաքուն լոխ նաղլ անըմ։ Ետավ իրեաներան պաչըմ, ճընապար տընում բիդի ղարիբըթուն։

Էտ էրկու ախպերը շատ ըն քյընըմ, թա խըրեգյ ըն քյընըմ, հասնըմ ըն էրկու ճընապարի։ Ըտեղ մին մըեծ քար ա ընըմ, յրան կյրած՝ «Աչ ճընապարը տանըմ ա դիբի ուրխութուն, ծախը՝ դիբի չըրչարմանք»։

Ըտրանք էրգյան քընենքյ ըն անըմ, թա վեր ճընապարավ քյինին։ Վըերչը մըեծ ախպերը աչ ճընապարավըն ա քյընում, պուճուր ախպերը՝ ծախ։

Մինչև քյընիլը մըեծ ախպերը ուրան ջուբին լոխ փողերը տամ

www.naregatsi.org

ա պուճուր ախպորը, ասըմ. — Եր կալ, յրես աման քըշեր իմ կըլխըտակաս հինգ հարիւր մանեթ ըմ յոր օնըմ։

Ըտեղ ախպերքը ուրիւր անա պըժանվըմ ըն։

Մըեծ ախպերը քյընըմ ա, քյընըմ, հըսնըմ մին երգյիր, մին պառավ կընգա կոշտ ղոնաղ ինըմ։ Ղուշ ըն պըեց թողըմ։ Էտ ղուշը հուր կըլխի նըստի, ընդրան էլ թաքավեր պիտի ճոկին։ Ղուշը կյամ ա, նըստում էտ տըղին կըլխին։

Հըվաքված ժողովուրթը օզըմ չի, ասըմ ըն. — Մին էլ պըեց թուղեցիք ղուշը։

Իտի իրեք դռնըմ պըեց ըն թողում, էլհա ղուշը կյամ ա էտ տըղին կըլխին կաղնըմ։ Ըտրան էլ թաքավեր ըն ճոկըմ։ Տանըմ ըն թաքավերին թախտին նըստըցնըմ, թաքյը տյընըմ կըլխին։

Մըհեկ էլ կյանք պուճուր ախպորան խոսինք։

Պուճուր ախպերը էտ դիբի չըրչարմանքը տանող ճըն ապարավը շատ ա քյընըմ, խրեզյ ա քյընըմ, հըսնում ա մին քաղաքի։ Ուրիշն համար մեծ-մեծ տրներ ա շինում, ըսկըսըմ լավ ապրելը, քանի վըեր աման քըշեր, պըերցին տական հինգ հարիւր մանեթ փող ա յոր օնըմ։

Քաղաքին հըրևաննին մաթ ըն մընում, թա էս ըշտըղա յա էսքան փողը, էս տըղան վեչ կործ ա անըմ, վեչ մին պըեն, խստի ապրըմ ա։ Հալա էն սուփրան, վեր պենըմ ըն, ամեն լավ-լավ օտելի պեներավ լըցնում ար, մին էլ էն գյաբան, վեր իշտեղ օզում ար, տանում ար, մին էլ փափաղը, վեր կլխին ար տինում, ըրվում չար ծրեռք ար պերա՞լ։

Համին էտ քաղաքըմը մին շատ կյեղեցիկ ախճիգյ ա ընում։ Հու վեր օզըմ ար ընդրան տրեսնա, բիդի հինգ հարիւր մանեթ փող տա։

Մին դռնըմ էտ պուճուր ախպերը փող ա յոր օնըմ, վեր քյընի ընդրան տրեսնա։

Տրեսնալն ըրաստ սիրահարվում ա։ Ընդրա նհետ մին խիլլա զուրուց ա անըմ, կյամ տոն։

Իտի աման օր քյընըմ ա ընդրա կոշտը, աման դռնըմ էլ հինգ հարիւր մանեթ փող տամ։

Էտ ախճիգյը օզըմ ա գյիդա, թա էտ փողը ըշտըղա՞ յա։ Էտ երի ատաժը պակաս տըղան լոխ ասըմ ա։ Էտ ախճիգյը հրամմանա տամ, ուրան ծառոցը, վեր էտ տըղին մին լավ թակին։ Ծառեքը էնքան թակըմ ըն, վեր էն ղուշին սըերտը կյամ ա պիրանավը եր ընգնում։ Էտ ախճիգյը յոր ա օնըմ կոլ տամ։ Էտ ախճիգյը ըտրան սիրում չի, փիս-փիս եշըմ ա, օզըմ ա տուն քըցիլ տա, ամմա վըեր տրեսնըմ

www.naregatsi.org

ա ընդրա ծրեռին սուփրան, էն ղաշնագյ գյաբան սրտրսոտ քըմքը-ծեծաղ ա տամ, տանըմ տոն, նրստըցնըմ։

Էտ տըղան սուփրան հանըմ ա, ասըմ. — Ա՛ սուփրա, քյըղանա կօզիմ ախշարքըմս հինչ լավ օտելի պրեններ կա, տուն պրերիս։ Մին մունուտ չի քաշած, սուփրան լըցնըմ ա ամման ջուռա լավ-լավ օտելի պրեններավ։

Էտ վախտը ախճիգյը հրամմայում ա ուրան ծառոցը, վրեր կյան էտ տըղին մին լավ թակին, տուս քըցին։ Իտի էլ անըմ ընս։ Փափաղը, գյաբան, սուփրան ծրեռքան ինքյ ըն օնըմ, մաշկին մին լավ քացի տամ, աքսորըմ մին անհայտ կըղզի։

Էտ կըղզըմը էտ տըղան խիլլա վախտ հիվանդ ա մընըմ, ետնան տրես ա քյընըմ, տրեն ա քյընըմ, թա մին տրեղ ճարի, տուս կյա, տրեղ չի ինում։ Ամման օր կյամ ա, ծովին քըշտին նրստում, եշըմ-եշըմ, մին էլ մընըմ մաթաշ։

Իտի օխտը տարի էտ անհայտ կըղզըմը ապրըմ ա։ Օխտինջի տարին էտ տըղան մին ծառի թըռեգյն տըված էլհա եշըմ ա ծովին, տրեսնըմ վրեր ծովան դիբի ուրան եկին իրեք յըղոնիգյ։

Էտ յըղոնիգյներան լոխճան պուճուրը ասըմ ա. — Էս տըղան հո՞ւնց բիդի էս կըղզուցը տուս կյա։

Մըեծ յըղոնիգյը ասըմ ա. — Վրեր էտ մարթը ուրան թըռեգյն տըված ծառին ղաբուղան կըտրի, տըրեխ շինի կյենա, նա կարող ա անց կրենա էս ծովավը։ Ըտրանա գյման էս ծառան վրեր մին մըհակ կըտրի, էտ մըհակին կախարթական զորութուն կինի։

Էտ պուճուր ախպերը լոխ լըսըմ ա, ծառին ղաբուղան տըրեխ ա շինում, կյենըմ, մին մըհակ էլ կըտրըմ, ծովավը անց կրենըմ։ Մին օրվան մեչին էլհա հրսնըմ էն քաղաքը, ըշտրեղ համին էն կյեղեցիկ ախճիգյն ա։

Քյընըմ ա, նի մննըմ էն ըխճըկանը կոշտը։ Վրեր ախճիգյը ընդրան տրեսնըմ ա, ծառոցը հրամմայըմ ա՝ տուս անին։ Ծառեքը յրա յըն պըրծընըմ, թա մին լավ թակին, էտ տըղան մըհակավը յրա յա պրերում ըտրանց, լոխ էլ էշեր ըն տրեռնըմ։

Ախճիգյը վրեր տրեսնըմ ա, ղաչանք ա անըմ, վրեր ծառոցը էլհա մարթ շինի, ամմա էտ տըղան անգուճ չոնըմ, ասըմ ա. — Իմ գյաբաս, սուփրաս, փափաղըս տո, էլհա մարթ շինիմ։

Ախճիգյը վրեր լոխ պրերըմ ա ուրան տամ, էն վախտը տրենակը ջուբան հանըմ ա, թա էտ ըխճըկանը ըսպանի։ Ախճիգյը վախըմ ա, վըխելան նհետ պիրանան էն ղուշին սըերտը եր ա ընգնըմ։ Էտ տըղան

www.naregatsi.org

յոր ա օնըմ, դաստի կոլ տամ։ Ախճիգյը տրեսնըմ ա, վրեր աման հինչ ծրեռքան ընգալ ա, ռազի յա կրեննըմ էտ տըղին նհետ փրսակվի։

Պուճուր ախպերը ըտրան նըստըցնըմ ա գյաբին յրան, ասըմ. — Ա՛ գյաբա, ինձ տար իմ մրեծ ախպորըս կոշտը։ Մին սրհաթանը ետը հրանըմ ըն մրեծ ախպորը կոշտը։

Ընդրա թաքավերական պալատըմը փրսակվըմ ըն։ Մին լավ հըրսանիք ըն անըմ, իտի էլ հաշտ ապրըմ ըն։

Երգյինքան իրեք խընձոր եր ընգալ. մինը՝ ասողին, մինը՝ լըսողին, մինն էլ՝ տըռանը տական անջուկ տընողին։



www.naregatsi.org



28. ՕՎՉԻ ՓԻՐՈՒՄԸ

Ինըմ ա, չինըմ, մին վըերսկան, անըմը Փիրում։ Կօզի նա լոխճին թաւրիփլամիշ իլած վըերսկանն ար, ամմա քյաւսիը ար ապրըմ։

Մին դինըմ վըերսի քյընաւլիս օվչի Փիրումը տըեսնըմ ա մին սրեվ օց, մին սիպտակ, ղաշանգյ օցի փըթաթվալ ա։

Օվչի Փիրումըն ասըմ ա. — Ա՛յ վա՜յ, աշխարք, միշտ խոի յըս իլալ, ա՛յ հա՜յ, տանճին լավը առչըն ա օտըմ, տըես է՜՜՜, հունց ա էս սրեվ-թըրեքյ օցը էս սիպտակ, ղաշանգյ օցին փըթաթվալ։ Ա՛յ հա՜յ, էս աշխարքըմըս լավը լավին չի ընգնըմ։

Օվչի Փիրումը եղը՜մ ա, եղը՜մ, քընեննքյ անըմ աշխարքիս պեներին յրան, ասըմ. — Դուզ ա, ըստահանք օցեր ըն, ամմա աշկըս յոր չօնըմ։

Համ ասըմ ա, համ էլ թվանգյը յրա անըմ, թա սրեվ օցին սպանի, ամմա գյուղլյան նի յա կյամ սիպտակ օցին հաքյվին, հաքյին յարա անըմ։

Սրեվ օցը փախչըմ ա, սիպտակ օցը մին թաւրրավ քյինըմ ա, նի մընըմ ուրան պունը։

Տու մի՛ ասիլ, էտ սիպտակ օցը օցերին թաքավերին ախճիգյըն ա։

Օցերին թաքավերը ըղըղվըմ ա, կըղնվըմ, կանչըմ ուրան մեծամեծներին, ասըմ. — Էս հո՞ւ վա կըլխան ծրեռք եր կալալ, իմ ըխճըկանըս յըրալու ըրալ։

Ընդրանք ասըմ ըն. — Օվչի Փիրումն ա խոի յարալու ըրալ։

Օցերին թաքավերն ասըմ ա. — Ցրես ընդրանա աղըղըս բեդմա

www.naregatsi.org

հանիմ, վեր գյիդա հո՞ւ վըմ յըես, վեր գյիդա թվինգյը հուր յրա յա յրա անըմ, վեր գյիդա եղը մածնան ա։ Թող էրկու կըեռքին տակին ղհարը շատ՝ սըեվ օց քյինին, վեր օվչի Փիրուամը ղոնաղ քյինի ուրան հընգյերին տոնը, չըմշկնին տռանը հանի, քյինի նի մըննի տոն, ընդրա չըմըշկներին մեչը նի մընննին, վեր տոն ետ տրեռնալիս օզի չըմըշկնին կյենա, դըբընններան մին լավ կըծին, սպանին։

Իտի էլ անըմ ընւ էրկու սըեվ օցը քյինըմ ըն նի մընննըմ Օվչի Փիրուամին չըմշկներին մեչը։ Համին էտ վախտը Օվչի Փիրուամը հընգերին նաղլ ա անըմ, թա հունց ա օզացալ էն սըեվ օցան սիպտակ օցը աղադի, ամմա գյուլլան վրեչ թա սըեվ օցին ա նի եկալ, սիպտակ օցին ա յարալու ըրալ։

Հընգյերըն ասըմ ա. — Յըես էլ ասիմ խե՞ իտի տուխուր ըս։

Օվչի Փիրուամըն ասըմ ա. — Մըհեկ էլ էս ա իստի տուխուր ըմ ըտրա հետի, իսկի մըթկաս ընգըմ չի։

Էտ վեր էտ էրկու սըեվ օցերը լսըմ ըն, ետ ըն տրեռնըմ, ուրանց թաքավերին լոխ նաղլ անըմ։

Օցերին թաքավերը վրեր էտ լսըմ ա, հրամմայըմ ա կանչին Օվչի Փիրուամին ուրան կոշտը, վեր բադարկեք տա, վեր նա օզացալ ա լավոթուն անի, վեչ թա փխոթուն։ Ընդրա հետան ա ղարկըմ ուրան մեծամեծերին։

Էտ օցերին մեծամեծնին վեր քյինըմ ըն, ասըմ, օվչի Փիրուամն ասըմ ա. — Յըես հի՞նչ կործ օնիմ օցերին թաքավերին քըշտին։

Ամմա օցերին թաքավերը մին էլ ա հետան ղըրկըմ, զոռավ տանիլ ա տամ։

Էտ մըեծամեծերին անա մինը օվչի Փիրուամին ասըմ ա. — Վըեր մըեր թաքավերը քյըեզ փեշքեշ տա, օզի մին պեն բախշի, տու ասի. «Թաքավերը ապրած կըենա, յըես վեչ մին պեն օզըմ չըմ»։ Վըեր շատ անի, ասի. «Թաքավերըն ապրած կըենա, յըես քու լուզվիտ տակին մուտանան ըմ օզըմ»։

Օվչի Փիրուամը իտի էլ անըմ ա։ Թաքավերը հիշքան էլ ստիքուամ ա, ասըմ ա. «Թաքավերըն ապրած կըենա, յըես վրեչ մին պեն չըմ օզըմ»։ Վեր շատ ստիքըմ ա, ասըմ ա. «Յըես քու լուզվիտ տակի մուտանան ըմ օզըմ»։

Օցերին թաքավերն ասըմ ա. — Տու մեղավեր չըս, քյըեզ ասողըն ա մեղավեր, ամմա իմ խոսկըս խոսկ ա։ Մըտանին կը տամ, ամմա մին պայմանավ, վեր ընդրա օժին անա վեչ մինին ասիս վեչ։

Օվչի Փիրուամը խոսկ ա տամ, վեր վեչ մինին ասել չի։ Էտ մը-

www.naregatsi.org

տանուն սեկրետն էլ էն ա, վեր հոլր ծրեռքի ինըմ ա, լոխ հըյվընները-ին, ղուշերին, աշխարքիս կենթանիներին լոլզուն գյոլդոլմ ա։

Օվչի Փիրոլմը ըտրանա ետը էլհա վրերս ա անըմ։

Մին դոնըմ կընգանը նհետ, կընգանը ծի նստըցրած քյինըմ ա մին լենջավ։

Կընգանը տակին ծիլին քոռակը խրխընջըմ ա, ասըմ ա. «Ա՛ մաը, յըես շատ ըմ նըղացալ, էլ կարըմ չըմ կյամ»։ Մարը խրխընջալով ասըմ ա. «Բա վեր տու կարըմ չըս կյա՞ս, յըես կարըմ ը՞մ։ Քյըեզ յրա վեչ մին պեն չի կա, ինձ յրա հինգ հոգի կա։ Մինը Օվչուն կընեգյը, ոլրան խոխան գյվակին, ճոխտըն էլ փորըմը, մին էլ յըես, մինն էլ փորըմըս ա, էլհա էս լենջերավը տանըմ ըմ»։ Էս խոսկերեն յրա Օվչի Փիրոլմը ծիծաղըմ ա։

Կընեգյը հըրցնըմ ա, թա. — Խե՞ յըս ծրծաղըմ։

— Լհա՛ ինդի։

— Լհա՛ ինդի պեն չինիլ, խե՞ յըս ծրծաղըմ։ Ջէ, տու վըս վեր, ասի, խե՞ յըս ծրծաղալ։

Օվչի Փիրոլմը սուս ա անըմ, ասըմ չի։ Սաղ ճընապարին միչև ոլրանց տոն մեթկ ա անըմ, քընենքյ անըմ աշխարքիս պեններին յրան, կընանոցը խասյաթին յրան, տանըմ կընգանը թողըմ ոլրանց տանը, ինքը ետ տեռնըմ, քյինըմ դոլզոթուն, արթարոթուն, ճշմարդոթուն ճարելի հետի։

Քյինըմ, ա քյինըմ, վերչը մին սարի լենջի թոլշ ինըմ, ըտեղ, մընըմ, վեր մին քանի օր դինջանա։

Էտ սարին լենջին չոբանը սոլրոլյավ վեչխարնի ար պահըմ։ Օվչի Փիրոլմը լոխ հեյվաններին լոլզուն գյոլդոլմ ար։

Մին դոնըմ չոբանին ալաչուխումը նստած լսըմ ա, վեր էրկու շոն հաչըմ ըն, ոլրոլր նըհետ կըռև ըն անըմ, հոջաթ ըն տամ։ Ինքն էլ եշում ար էն դիմացի պեցոլր սարերին, ոլրան մըթկին դոնն ընգած, տըխուր, ասիս լհա մար մընննող արևին նըհետ ինքըն էլ ար օզըմ մար մընննի, մըթենն էլ եր ար կոխըմ։

Պրռավածծ շոնը ասըմ ա. «Վեր իմ տաըրս ինձ լավ չի ուտուցընի՞, յըես էս վեխճարներին տանելու յըմ կյոլլերին փայ անիմ»։

Ջահիլ շոնն էլ ասըմ ա. «Ծրես էլ թողելու չըմ, սոլրոլն տանելու յըմ մին հենց տըեղ, վրեր կյոլլերան հետու ինի՞»։

Էն մին օրը տրեսնըմ ըն վեր վեխճարին սոլրոլն կա վեչ։ Չոբաննին տես ըն ման կյամ, տեն ըն ման կյամ, վերչը Օվչի Փիրոլման հըրցնըմ ըն տըեղը, ասըմ.— Վեր տեղը քըթնինք, քյըեզ հի՞նչ օգիս տալու յընք։

www.naregatsi.org

Օվչի Փիրոնմը վեշ մին պեն չի օղըմ։

Քյինըմ ըն սուրուն քըթնըմ, պերըմ, հալա էրկու կյառնը էլ իվիլացած։

Էտ էրկու կյառներան մինը ասըմ ա. «Յրես մին քանի սուրու վեխճարների հար ըմ իննելու»։

Էքյըն էլ ասըմ ա. «Յրես հազար կըլոխ էքյի մար ըմ իննելու»։

Օվչի Փիրոնմը էտ վեր լըսըմ ա, էտ չոբաննին էլ, վեր ստիրըմ ըն, ասըմ ա. — Դե վեր ինձ օղըմ ըք մին պեն բախշիք, էն իվլացած էրկու սիպտակ կյառնը ինձ բախշեցեքյ։

Վրեր էտ կյառները բախշըմ ըն, տանըմ ա մին օրիշ սարի լենջի էն ղաշանդյ ծաղիգյներին, կանանչին մըեչին պեց թողըմ, ինքը կյամ, էլհա ման կյամ սըրըսար ընդաձ։

Մին քանի տարի վեր անց ա կրենըմ, քյընըմ ա համման էն սարին կըլխան եղըմ, տրեսնըմ ընդեղերք սիպտակ վրեխճարի սուրուն կալալ ա, ըտրանք էն էրկու սիպտակ կյառնան ըն ծրնվալ։

Օվչի Փիրոնմը ըտրանց պահըմ ա, ինքըն էլ վեխճար ա մորթըմ, օտըմ, բենջար, ծրմակի պըտուղնի, կաթնը, իտի պեններ։

Մին հետ վեր էլհա վրեխճար ար մորթալ, էտ վեխճարին մնացած ջամդաքին յրան էրկու ղըզղուն ըն թըռչըմ, կյամ, եր կյամ։

Ընդրանցանա մինն ասըմ ա. «Էս լենջին մեծ քարը վեր պիցըրցնին, տակին վրեսկե յա իննելու»։

Օվչի Փիրոնմը լըսըմ ա, գյունդունմ, թա ընդհանք հի՞նչ ըն ասըմ։

Էն քարը պըցրցնըմ ա, տակին տրեսնըմ մին տոռնը կա։ Տոռնը պենըմ ա, նի մրննըմ, տրեսնըմ մին օթախ վրեսկավ լիքը, ջուրերը վրեսկավ լըցնըմ ա, թա տուս կյա, տոռնը պենվըմ չի, ջուրերին վրեսկեն վեր եր ա ածըմ, տոռնը պենվըմ ա։

Տա տուս ա կյամ, ասըմ. — Բախտըմըս իստի, ինդի, համ էլ վրեսկու նհետ յրես հի՞նչ օնիմ, վրեսկեն մարթի բախտ չի տամ, ջան-սաղութուն չի տա՞մ, վրեսկեն պիբիլ ա, ծեռքի եխտ ա, իմը աշխարքիս դուզութունն ա, էն էլ ճարվըմ չի՞։ Համ ասըմ ա, համ էլ քյինըմ ուրան վեխճարներին կոշտը, տեսնըմ էն ա մըթենը եր ա կոխըմ էն սարին քըշաթոխպըն էլ մին ղոլան ա եր կոխըմ, էտ քըշաթոխպին մեչան մին ղըրրթու յա ըրվում։

Էտ ղըրրթուն կյամ ա, մուտանըմ։ Տա Օվչի Փիրոնմին տղան ա ինըմ, կյամ ա, թա հորը տոն տանի՞։ Օվչի Փիրոնմը թվանգյը թուշ ա օնըմ, թա սպանի, ճրնանչում չի ուրան տրղին։

Տղան ծեն ա տամ, հորը անըմը տալավ մուտանըմ, հորը կոլավրն ընգնըմ, պըչպըչորըմ, ասըմ. — Ապա, եք էտ տրեռ, տոն քյինինք։

www.naregatsi.org

Օվչի Փիրունը ասըմ ա. — Չէ, միչև աշխարքիս յրան դունչը-թունն չինի, ճրկըճոկի անիլը պըռծնի վեչ, արթարոթուն չինի, ճըշ-մարդոթուն, հավասարոթուն չինի, վեր լոխճին մին աշկավ եշին, վեր ազադոթուն չինի, յըես տոն չըմ կյալ...

Տըղան քուռըփեշման ետ ա տըեռնըմ, քյինըմ։

Ինքը մընըմ ա էն պեցուր սարերին դալուն տեմ կալած, հըմ-բարտ, մըհակը ծեռքին, աշկը էն հեռու սարերին քըցած, արևին ծե-քյին եշելի՛՛՛ս։



www.naregatsi.org



29. ԽՈՍԿԻՆ ՕԺԸ

Մեհետ ինում ա, չի ինում մին քյասիբ կնեգյ, մին մարթ ա ինում։

Մին օր էտ մարթն ասում ա. — Ա՛ կնեգյ, եր կաց քյնինքյ փիրփեթ, ծրնեփակ, կըռըմըզում, պենջար, կյըզանով, պըլանուվ, խրնջըլոզ, ուտեմ-տիտեմ, խաղող, կըռուբենը, շոշ քաղինքյ, պիրինքյ, խրխոցը պահինքյ։

Քյնում ըն։ Շատ ըն շոռ կյամ, խրեգյ ըն շոռ կյամ, նի յըն հրսնում «Շաքյար» ընըմավ հողամասեն։ Ըտեղ տեսնում ըն մին օխծը։ Էտ օխծը թքանում ար քարեն ճեխքումը։

Էտ օխծը լուզու յա առնում, հըրցնում ընդրանց. — Թո՞րն ը՞ք քյնաս։

Մարթն ասում ա. — Քյնում ընք փիրփեթ, խրնջըլոզ, ուտեմ-տիտեմ, տեսնը, ճըրկուտեմն, շեպ, ավուվ, պեխի, ծրնեփակ, խաղող, խալյար, իտի հրզեր ճուռա պեն քաղինքյ մեր խխոցը պահինքյ։

Օխծը տըսնալավ էտ մարթը քյասիբ մարթկանց անա յա, ասում ա. — Յրես ծրեզ հարուստոթուն կըտամ։

Տա կըլխավը թըխըմ ա, քարան մին գյուրգյ վըռսկե յա եր տրեռնըմ։ Ընդրանք հրվաքում ըն վըռսկեն, ետ կյալիս տոն։ Խոխերքյը տըսնալավ վըռսկեն ուրխանըմ ըն։

Էտ վըռսկավը ըտրանք ցորեն, անասուն ըն ինքյ օնըմ, ակսըմ կյարունքավար։

www.naregatsi.org

Իսոի տրանք հարուստանըմ ըն, լալ ապրում, լալ-լալ տրներ շինում։

Մին խիլլա վախտ ընցնելանը ետը, էս մարթը մին օր կնգանն ասում ա. — Ա՛ կընեգյ, էդ օխծը մըեզ լըվնթունն ըրավ, եք մունք քյնինքյ ըտրան տրեսնանք՝ հո՞ մնց ա։

Տեսան-տեննան շինում ըն, կաթնալ ճաշ ըն անում, քյնում օխծին տրեսնան։ Քյնում ըն, տրեսնում օխծը էլհա էն ա ուրան տեղը։

Մարթն ասում ա. — Տես օխծը հո՞ մնց ա շան նման չլմփ-չլմփցնելավ օտըմ։

Օխծը լսում ա, էլ օտում չի։

Մարթն ասում ա. — Խե՞ չըս օտում, կեր։

Էլհա օտում չի, ստիբված ճաշը յոր ըն օնում։ Օխծը նի յա մընըմ պունին մեչը, ետավ էլ ջանեն կեսը տունա օնում, ասում.

— Քու մհակավըտ հենց թխի ինձ, վեր ըրունն կյա։ Մարթը թխում չի, ամմա օխծը ստիբում ա։ Վերչը մարթը թխում ա, ըրունն ա քյնում։

Օխծը հըրցնում ա. — Մաշկս հո՞ մնց ա։

Մարթն ասում ա.— Ըրունն ա քյնում, ճիլաթալ ա։

Օխծն ասում ա. — Շունըրակալ ըմ, քյեցեքյ։

Մարթը նան կնեգյը կյամ ըն տոն, ամմա ամմեն վախտ էլ մտածում ըն, թա խե՞ իսոի իլավ։ Անց ա կենըմ վեց-օխտը ամես։ Մարթը քյնում ա օխծեն տրեսնալի։

Էտ վախտը օխծը տունա ա կյամ, սաղ ջանավը մին մեկնվում, ասում. — Մին տես մաշկես յարան սղացա՞լ ա, թա չէ՞։

Մարթըն ասում ա. — Սղացալ ա՞։

—Դունդ ա մաշկես յարան սըղացալ ա, ամմա սրտես յարան սըղացալ չի՞։ Օխծը ըտեղ ասում ա, թա հինչի հետե յա նղացալ։



www.naregatsi.org



30. ԿՅԻՐԻՆ ԱՆՈՒՄԸ

Ընձում ա, չընձում մին ջահիլ հարս ա ընձում։ Տա շատ կյեղեցիկ ա ընձում։ Էտ հարսը սիրըմ ա մին օրիշ ջահիլ տըղի։

Էտ հարսին մարթը մին օր օզըմ ա քյինի մին մոտիկ շեն։ Տա կընգանը ասըմ ա. — Ա՛յ կընեգյ, էս քըշեր կյալու չըմ, վախիս վրեչ, տոռնը պենդ քըլլի, քոն իլ։

Կընեգյն ասըմ ա. — Ա՛ մարթ, լավ, իտի կանիմ, յանի աշըղ չըմ տրեռնալու նեյնիմ-նեյնիմ անիմ, դաստի քոն ըմ ինելու, հաչա արազըմս քյըրեզ տրեսնալու յըմ։

Էտ օրը վրեր էտ հարսը մարթին ճընապար ա տինըմ, եխտոտ շորերը հըվաքըմ ա, քյնում կյետը լվացք անի։ Ըտրեղ ուրան սիրած տըղին չըհըմ ա, ասըմ. — Ջա՜նըս, ջիգյա՜րըս, տոնս, տրեղս, արևըս, աշխարքըս էս ուրուգյուն կըկյաս մըեր տոն, մարթըս քյընացալ ա օրիշ շրեն։

— Լավ, կըկյամ, կարոտս կառնիմ, մուրազս տրեղ կըտամ։

Էտ տըղին ծրեռքին մին կյիր ա ընձում։ Էտ հարսը ասըմ ա. — Իմ հաչր, իմ մաչր քյըրեզ մատաղ, կըլխավըտ շոռ տամ, էտ կյիրին անըմը հի՞նչ ա, քու կյիրիտ էլ մատաղ, քյըրեզ էլ, ա՛յ իմ ուսումնավեր կըրթացո՜ղ։

— Յըրես քյըրեզ մատաղ, ջանիտ մատաղ, բոյիտ մատաղ, աշկերտ օտիմ, անգուճնիտ օտիմ, պըռըշնիտ, թշերտ, ունքերտ, վիզտ, հինչու օնիս լոխ օտիմ, էս կյիրին անըմը էրգյան վախտ ա հարկավեր, վրեր ասիմ։

www.naregatsi.org

էտ տըղան ասըմ ա, ետավ օրախ-օրախ տոն քյընում, վըեր տանը մին լավ քոն ինի, մին դոյընջա դինջանա, վըեր ուրուդյունը քյինի էտ հարսին տոնը։

Հարսը շորերը լվանըմ ա, չուրըցնըմ, ծալըմ, հըվաքըմ։ Ամմա աշը-մըեթկը հեն ա ընում էն տըղին յրան։ Իսկի գյուդում էլ չի, թա հո՞նց ա թըռթըռալի կործ անըմ։

Դըբրուդյունը էտ հարսը կյամ ա տոն, սկսըմ պադրաստրթուն քաշիլը, վըեր սիրածը կյալու յա։ Հավ ա մորթում, եղածու յա անըմ, փլավ ա իփըմ, քաշի տանան կյինի յա տուս օնըմ։

Հալա լամբերը թազա յին վառալ, վըեր էտ տըղան կյամ ա, պառուդյուն տամ, ծրեռքին կյիրը տնըմ ստոլին յրան, նըստըմ։

Էրկու մեչերնին ալավ ընգած սիրահարնի սկըսըմ ըն ուրուր պըշպըշորիլը, ուրուր խտետ ընգնիլը, սեր փըշրիլը, էլ հո՞ւ վա գյուդում հի՞նչ խոսկերք, փանդը փելա՞, հինչե՞ր։

Մին խըրեգյ ետը էտ հարսը մին լավ ստոլ ա պրեց անըմ, էրկուսավ նըստում ըն, օտրմ, խըմըմ, ղաթըմը էլհա պըշպըշորվըմ, էլհա ուրուր կյենաց խըմըմ։

Էտ դաշրըմը տուս ղոլան ծիյի վրննասաս ա կյամ։ Ըտրանք բիրդան կըլխու յրն ընգնըմ, վըեր էտ կրնգանը մարթն ա։ Ըտրանց կրերած-խըմածը կըլխներին հարամ ա տրեռնըմ։

Էտ հարսը շուտ ա անըմ, էտ տըղին կոխըմ սանդուղին մրեչը, քըլլըմ, պլանին տրնըմ ջուբումը։

Ետնան սրերտը պատառ դինջացած, տոռնը պրեց ա անըմ, օրախ-օրախ մարթին վիզավը ընգնըմ, պըշպըշորըմ, ասըմ. — Ա՛ մարթ, լավ ըս ըրալ, վըեր եկալ ըս, ախեր սրերտս գյուդում ար, ախեր սըրտըմըս տըվավ վըեր կյալու յըս, ասիս լհա մինն ասից, եր կաց, մին լավ ստոլ պադրաստի, մարթտ կյալու յա։ Յրես էլ եր կացի ստոլ պրեցի։

Վըեր իտի յա ասըմ, մարթը մին խիլլա ուրխանըմ ա, գյըռանըմ ա, մրթկըմը ասըմ ա. «Տրես հիշքան ա կընեգյս ինձ սիրում, ամմա յրես նշանց չի տամ իմ ուրխոթունըս, թա չէ կըլխես կընստի, իրես չի տամ, թա չէ կըլխիս ճուդուպուր կը կոտրի, ա՛յ հա՛յ, յրես էլ հու պրել Աստանը չըմ, յրես էլ հու փլան, փըլանքյասը չը՞մ, վըեր կընգանըս իրես տամ»։

Ըտրանք նըստըմ ըն, թա հաց օտին, էտ կընեգյը հավին վրեսկուռը յոր ա օնըմ, ասըմ.—Ա՛ մարթ, եք մարդ կյանք, հու վըեր տանիլ տա, էս կրես քըշերին քյինա բաղը, խընձոր պրերի։

www.naregatsi.org

Մարթը ռազի յա կրենըմ, բա հունց չի ռազի կրենա, անջախ ա կրնգանը լուղունն ուրան յրան քախծըրացալ։

Շատ ըն չըրչարվըմ, վեշ մինը կարըմ չի մարջը տանի։ էտ կրնեգյը օղըմ ա, թա ճաքվի, փոլ կյա, պըտրոնին ընդըղավ մին անի՞, մին հրըրշնըմ ա, մին սփառթնըմ, աշկերը տրեռալ ար բաստըրմա կրերած կատվի աշկեր, մին հենց փըլըստրատին ար տա՞մ։

Ախըր-վըերչը էտ կրնեգյը ասըմ ա. — Ա՛ մարթ, գյուղունմ ըս, հինչու դուղ ա, դուղ ա. էս ստոլը քյըեզ հետի չըմ պըեց ըրա՞լ, իմ սիրականիս հետի յըմ պըեց ըրա՞լ։

Էտ մարթը էտ վըեր լըսըմ ա, ոանգյը վըեղ ա տրեռնըմ, ասըմ ա. — Բա հոր ա՞ սիրականըտ։

Կրնեգյը ջուբան պըլանին հանըմ ա, տամ մարթին ասըմ. — Հենե՞, էն սանդուղումն ա։

Մարթը շուտ ա անըմ պըլանին ծրեռքան յոր օնըմ, թա սանդուղը պրենա՞, կրնեգյըն ասըմ ա. — Տարա՞ծ։

Էտ մարթը դաստի թուլանըմ ա, տրեռնըմ թուլ պրենջար, պըլանին էլ ծրեռքան եր ա ընգնըմ։

Կրնեգյը ասըմ ա.— Տրեսի՞ր, հունց տարի քյըեզ, դե քյինի խրնձորը պրեր, պայմանը պայման ա։

Մարթը ճըվարանը յոր ա օնըմ, քյինըմ բաղը էտ կրես քըշերին։

Էտ հարսը սանդուղը պրեց ա անըմ, էտ տրղին հանըմ ըտրղան, մին լավ պըշպըշորըմ, ասըմ.— Ասի տրեսնամ էն մին ստոլին տրրած կյիրին անըմը հի՞նչ ա։

Էտ տրղան ասըմ ա. — Կրնգա խորամանգրթուն ա՞։

Ըտրեղ էլհա թաղաղան պըշպըշորվըմ ըն, ուրանց կարոտը առնըմ, ետավ էտ տրղան տունս ա կյամ, քյինումմ ուրանց տոն։



www.naregatsi.org



31. ԾՈՒԿՆԻՆ ԿԼԱՒԽԸ

Ընում ա, չընում մին քյաւսիբ մարթ նան կընեգյ։ Ըտրանց ընում ա մին օթ տըրեկան տըղա խոխա։ Էտ մարթը ծուկըն փըռնող ա ընում, ուրյան մին կուտուր հացը ըտրանավ ա աշխադըմ։

Մին օր էտ խըեղճ մարթը եր ա ընգնըմ, մըեռնըմ։

Կընեգյը նան տըղան մընըմ ըն սուաճ-ծարավ։

Էտ կընեգյը վըեր տըեսնըմ ա ուրյան աշկին սևը-սիպտակ խոխան օրանցօր մաշվըմ ա, ասըմ ա. — Այանը քը մատաղ, ա՛յ իմ բալա, այ իմ աշկիս լուս, իմ աշխարքըս, իմ կյանքս, արևըս, իստի սուաճ եր ընք ընգալ, հի՞նչ անինք։ Էլհա քու հոր սաղ վախտը ծըեռքաւը մին պըեն ար կյամ, շատան, խըրեգյան ծուկըն ար փըռնըմ, տանըմ բըզարըմը ծախըմ, էլհա մին կուտուր հաց ար ընում, բա մըհեգյ հի՞նչ անինք։

Էտ տըղան էլ մին շատ խելուանք, կյեղեցիկ, շատ է՛, շատ կյեղեցիկ տըղա յա ընում։

Էտ տըղան ասում ա. — Ա՛ մար, իմ հոր թոռը տո, յըես էլ քյինիմ ծուկնը փըռնիմ, պըերիմ։

Մարն ասըմ ա.— Բոյիտ մատաղ, ջանիտ մատաղ, հաւլա պուճուր ըս, կարիլ չըս, օժըտ պատիլ չի թոռը յոր օնիս, մըեշկիտ ցավ կըտա, մըեշկըտ կը ճըմի։

Էտ խոխան ըտրան լըսըմ չի, թոռը շըլաւկըմ ա, քյընըմ ծովին ղրաղը։

www.naregatsi.org

էն մրեծ թոռչուցը եշելավ, թոռը ճնուրն ա քրցըմ, միչև ուրուդյունը ըտրեղ չըրշարվըմ, մին քանի ծնվկնը փըռնըմ, տոն պըերըմ։

Մարը վըեր տրեսնըմ ա, շատ ա ուրխանըմ ուրաւն մըթկըմը։ Պըչպըշորըմ ա տըղին, կըլոխը սըղալըմ, ասըմ. — Այան քյըեզ մատաղ, մըհեկանց տրենը հի՞նչ դաւրդ օնիմ, վըեր տու իտի խելունք ըս, ծրեռքավըտ պըեն ա կյամ։ Մարըն էլ խըրեգյ-մըրեգյ օրիշի կործ ա անըմ։

Իտիյուիթնավ մարըտըղա մին թաւհրաւվ ապըրըմ ըն։ Էտ տըղան օրանցօր շատ ա ծնվկըն փըռնըմ, ինքըն էլ յավաշ-յավաշ մըծանըմ ա։

Մարըտըղա մին խոսկի յըն կյամ, վըեր քյինին ուրաւնց անա մոտիկ քաղաքըմը ապրին։ Իտի էլ անըմ ըն։ Տըղան ուրաւն փըռնած ծնվկնը պըերըմ ա քաղաքին բազարըմը ծախըմ։ Վերչըն էլ մին դուքյան ա պըեց անըմ, ծնվկնը ծախըմ։

Անց ա կրեննըմ մին քանի տարի։ Էտ տըղան մրծանըմ ա, տրեռնըմ մին չըտեսնված կյեղեցիկ տըղա։ Թաքավերին ըխճըկորցանը մինը էտ տըղին տրեսնըմ ա, յրան սիրահարվըմ։

Մին օր էլ համին էտ թաքավերին ախճիգյը ուրաւնց մին վեզիրին ասըմ ա. — Մըհեկանց տրենը թող էտ ծնվկուն ծախող տըղան ինքը ուրաւն ծրեռավը ծնվկնը պըերի մըեր պալատը, համ էլ կյա իմ կոշտըս։

Էտ վեզիրը կյամ ա էտ տըղին դուքյանը, կըլոխ տամ, ասըմ. — Թաքավերին ախճիգյը ասալ ա, վըեր ծնվկնը տու ինքըտ պըերիս մըեր պալատը, ընտրանա ետը քյինիս էտ ըխճըկանը կոշտը, քյըեզ պըեն ա ասելու։

Էտ տըղան քյընըմ չի։ Թաքավերին ախճիգյը մին քանի հետ վեզիրին ղարկըմ ա, ամմա էտ տըղան էլհա չի քյընըմ։

Թաքավերին ախճիգյը էլ իվիլ ա էտ տըղին յրան թըքանըմ։ Քըշեր-ցիրեկ ըտրա հետի յա քընենքյ անըմ, հացա, ճըրա կտըրվըմ, մաշվըմ-մաքրուվըմ, տանջվըմ, լաց ընում, ամմա կարըմ չի ուրաւն սերը վրեշ մինին ասի, հըմանչըմ ա, համ էլ հորըն անա վախըմ ա, գյունդում ա, վըեր հաւրը ուրաւն էտ տըղին չի տալ։ Վըեր էտքան հալվըմ ա, մաշվըմ, մին օր էլ թաքավերը օզըմ ա գյիդաւ ըտրա մանին։ Վըերչը էտ պըենը պարզվըմ ա։

Թաքավերը էնքան շատ ար սիրըմ էտ ըխճըկանը, վըեր ըտրա խաւթրը կոտրըմ չի, խոսկ ա տամ էտ տըղին նըրհետ ըտրա փըսակի։

Եր ա կրեննըմ մին խիլլաւ վրեսկե, տրեսըտրեն շինըմ, ուրաւն պալատին մին քանի մարթկանց նըրհետ ըղըրկըմ էտ տըղին տոնը։

www.naregatsi.org

էտ մարթկանցան մինը էտ տըղին նան ուրան մորը ասըմ ա.
—Դե պեց ասիմ, վրեչ հըմանչիմ, թաքավերը օզըմ ա՝ ուրան ախճիգյը տա քու տըղիտ։

Մարըտըղա մընըմ ըն մըլորված, մորը հավատը կյամ չի, թա թաքավերը ուրան տըղին ախճիգյ կըտա, ախճիգյը կը պըերի կոխի էտ քյասիբ տոնը, ուրանք ուրանցավ ապրող տըեղը։

Թաքավերին էտ ղարկած մարթը պադարկեքը տընում ա ըստոլին, համ էլ ասըմ.— Ա՛ քյուր, խե՞ յըս դարդ անըմ, վրեր թաքավերը ախճիգյը տըղիտ տա, հու իտի չըք մընալու, հու տըղատ ծուկըն փըռնող չի կըենալու, մըեծ հարուստոթունի տեր ա տըեռնալու։

Մարն ասըմ ա. — էտ խոսկը էնքան սըրտանց ըս ասըմ, վրեր հըվատըմ ընք։ Դե հիշ կինի, թաքավերին աշկըն էլ մըզ յրա քախծըր կինի, մունք էլ մին մարթի թայ կը տըեռնանք, իստի կոչ չընք կյալ, կըծեգյ տըռնալ։

Ըտըեղ ուրեր խոսկ ըն տամ, ռազի յըն կըենըմ, էտ պըենը ամաչ կյալի պըեն ա տըեռնըմ։ Մին քանի օրանը ետը թաքավերին պալատըմը մին շատ ափաթ հըրսանիք ըն անըմ, հի՜նչ հըրսանիք, մին օրիշ պըեն, ըստոլնին լիգյը աշխարքիս լավ պըեներավը, օտելի, խըմելի պըենները լիգյը—լափու տամ, սաղ քաղաքը զըրթարըմ ըն զատկի, զըրզարթարի մընան, վըեսկե արծաթըն էլ կյետի մընան քյընըմ ա։ Օխտը օր, օխտը քըշեր վրեր հըրսանիք ըն անըմ, պըրծնըմ, առաչին քըշերը... Ախեր առաչի քըշեր էլ կա՞, առաչի քըշեր էլ։ Հենց առաչի քըշեր կա, էրկու ղոլան սերավ, հենց առաչի քըշեր էլ կա, վրեր անսեր ա ընում, դե իտինին տոնը քանդված ա, սըերտը կոտրած ա հավիդյան, դե իտինը լավ ա քյինի վախտին սըեվ վրեղը նի մընինի։ Ըտրանց առաչին քըշերը սերավ ա ընում։ Ամմա հունց ա պըտահըմ առաչին էտ քըշերը, տըղան ըսկըսըմ ա էտ ըխճըկանը սիրիլը, կըլոխը սըղալիլը։

Էտ ախճիգյը ասըմ ա.— Է՛յ, յավաշ, էտ հու ծուկնի կըլոխ չի՞, թաքավերի ըխճըկա կըլոխ ա՞։

Դե բալքյա էտ ախճիգյը առանց փիս մըթկի յա ասըմ, չունքի վրեր էտ տըղին շատ ար սիրըմ։ Ամմա էտ տըղին քյեփին շատ ա նի կյամ։ էտ տըղան եր ա կըենըմ, տունս կյամ, քյընըմ։ Քյընըմ ա ծովին ղըրաղը, ընդըղան էլ պըրախոդ նըստըմ, քյընըմ։ Շատ ա քյընըմ, թա խըրեգյ, վրերչը հըսնըմ ա մին օրիշ թաքավերոթուն։ Ըտըեղ ուրան ինդի յա նըշանց տամ, գյըվաքյիս թա լուզունն լալիգյ ա։

Նի յա մընըմ մին աշպազխանա, ընդըեղ ծառա տըեռնըմ։ Ըտրա կյեղեցկոթունան, հու վրեր տըեսնըմ ա, մաթ ա մընըմ,

www.naregatsi.org

ՀԱՅ ասում ա. «Օտիմ վրեչ, խրմիմ վրեչ, քըշեր-ցիրեկ էս տըղին Թըմաշա անիմ». մին պատկեր, մին օզգյա պըե՛ն։

Ըտրա կյեղեցկութունին ծրենը ըտըղին թաքավերին անգուճավըն ա ընգնըմ։ Էտ թաքավերը ըտրան ուրուն պալատըն ա տանըմ, նաժիր-վաղիրին կանչըմ, ասըմ.— Ա՛ նաժիր-վաղիրնի, էս տըղան էսքան կյեղեցիկ, մեխկ ա իստի լալեգյ թողինքյ, քյեցեք սաղ աշխարքավըս մին ջառ կանչիլ տըվիք, թա. «Հու վրեր կարի էս լալեգյ տըղին խուսուցընի քըշըռութունավը մին վրեսկե յըմ տալուս»։

Էս նաժիր-վաղիրնին ջառ կանչիլ ըն տամ։ Ամմա վրեշ մինը կարըմ չի էտ տըղին խուսըցնի. հու վրեր կարըմ չի, թաքավերը կըլոխը կըտրիլ ա տամ։

Վրեր իտի շատ ման ըն կյամ, խաբաերը հրսնըմ ա թաքավերին ըխճըկանը, թա մին կյեղեցիկ տըղի խուսըցընելի հրեատի մարթ ըն ըսպանըմ։ Տա էն մունուտին գյուղտամ ա, վրեր ուրուն մարթըն ա, հայտնըմ ա, վրեր ինքը կը խուսուցընի։ Մըեծ պարախոդ ա նըստըմ, կյամ էտ վրեղը։

Կյամ ա էտ թաքավերին կոշտը, ասըմ. — Թաքավերը ապրած կըենա, ինձ իրեք օր ժամանակ տո, յըես խուսուցընիմ, թա կարիմ վրեչ խուսուցընիմ, կըլոխըս կըտրի։

Էտ իրեք օրըմը թաքավերին ախճիգյը էտ օրիշ թաքավերը կաղնած, ընդրա քըշտին հիշքա՛ն օզըմ ա էտ տըղին խուսուցընի, էտ տըղան խոսըմ չի, ղաչանք ա անըմ, պըղատանք ա անըմ, ամմա էտ տըղան խոսըմ չի։ Թաքավերը հրամման ա տամ էտ ըխճըկանը կախ տան։ Մեյդանըմը մին մըեծ սուն ըն տընգըմ, ըխճըկանը կըղնըցնըմ դաբրեսակին, քյանդիրը անց կըցընըմ էտ ըխճըկանը կըլոխը։

Էտ մունուտին էտ ծուկըն փըռնող տըղան ասըմ ա. — Թաքավերը ապրած կըենա, հու էտ ծուկնի կըլոխ չի, վրեր իտի յըք անըմ, էտ թաքավերի ըխճըկա կըլոխ ա։

Իտի վրեր էտ լալիգյ տըղան խոսըմ ա, լոխ ուրխանըմ ըն, թաքավերը նըեըրըմ ա։

Ըտրեղ ըտրանք ուրուր նըհետ հաշտվըմ ըն, ուրուր խըտեստ ըն ընգնում, էլ ուրուր քյեփի նի չըն կյամ։ Եր ըն կըենըմ, քյընըմ ուրանց երգյիրը։

Ըտրեղ թաքավերը թաղաղան մըեծ հըրսանիք ա սարքըմ, մըեծ քյեփ ա ընում։

Ըտրանա ետը երգյինքան իրեք կյաղմուր խընձոր ա եր ընգնըմ, մըեղրի մընան քախծր. մինը՝ ասողին, մինը՝ կարթողին, մինն էլ՝ տիպողին։

www.naregatsi.org

32. ԻՐԵՔ ԿԼՈՒԽ

Մին քաղաքըմ ապրըմ ար մին քյաւսիբ մարթ, մին լոխճին աշկան ընգած, լոխճին քըշտին սըվիրես տրեռած ալլահ եթեր, բեշ բեթեր մարթ։ էտ քյաւսիբ մարթը ամման օր բըզարըմը կտավ ար ծախըմ։ էտ կտավը նա հանըմ ար էտ մրեծ քըղաքին կյըրըզ-մաններան ըշտեղ ինքը կյըրըզմաննի ար կտրըմ։ Վրեր մրեռալը տանըմ ին թաղըմ, ինքը քըշերը քյընըմ ար կյըրեզմանը քանդըմ, պատանը հանըմ, կյըրեզմանը էլհա վրեղավ անըմ, պատանը յոր օնըմ, կյամ տոն, էքսը տանըմ, բըզարըմը ծախըմ։

Մին դոնըմ էլ մրեռավ էտ քաղաքին մին շատ հարուստի ախճիգյ, ինքն էլ մադար-գյոուդաւր, մորը, հորը աշկը յրան, մորը, հորը աշկին լոուսը։

էտ ըխճըկանը հաւրը քյինըմ ա էտ պատան հանողին կոշտը, ասըմ. — Օրական քա՞նի մանեթի յրս կըտավ ծախըմ։

էտ մարթը թա. — Օրական քսան մանեթի։

— Դե վրեր իտի յա, ինք առ էս իրեսուն մանեթը, ամմա, տրես, իմ ըխճըկանըս կյըրեզմանը քանդիս վրե՞չ, կտավը հանելի հետի՞։

էտ քյաւսիբն ասըմ ա. — Լաւվ կինի։

Հիբը ըխճըկանը թաղըմ ըն, պըրծընըմ, էտ կյըրեզմանը քանդող քյաւսիբ մարթը էլհա քյինըմ ա, քըշերը էտ ըխճըկանը կյըրեզմանը քանդում։

Բըրդան էտ մեյիդը լուզու վա առնըմ, ասըմ. — Ա՛յ մարթ, էտ հինչ աշկըտ ծակ մարթ ըս, էտ խե՞ յրս իմ պատանըս հանըմ,

www.naregatsi.org

բա իմ հայր քյրեզ իրեսուն մանեթ փողը էլ հո՞ր ա տրվալ... Դե վրեր իտի փուղասեր ըս, իտի աշկտ ծակ ա, թող իմ պատանս յրաս մնա, յրես քյրեզ փողի տրեղ ասիմ, քյինի եր կալ։ Իմ կյըրեզմանատա պատառ դիբի աչ ղոլը, մին տասսը վրեննը տենը, քյընա տափը քանդի։ Էնա ընդեղ մարթի իրեք չոր քյաղլա կա, եր կալ, տար բազար, ծախի։ Ընդրանց կյինը միչև քու գյանքիտ վերչը, վրեր օտիս, բոլ ա քյրեզ։

Էտ մարթը էտ ըխճըկանը պատանը էլ հանըմ չի, թաղդանն ըտրան կյըրեզմանըմըն ա տընում, թաղըմ... Ընդրանա մին տասսը վրեննատրեղ տափը քանդըմ ա, քանդած տրեղան մարթի իրեք չոր քյաղլա յա տունա կյամ։ Էքսը էտ քյասիբ մարթը յոր ա օնըմ, տանըմ բազար։

Օրը գյրածգյի ար, բազարը մարթավ լիգյը։

Հու ճոթ ար ծախըմ, հու խոշկյաբար, հու վրեննաման, հու շունրեղան, հու մեյվա, ամմա էտ քյասիբն էլ բազարին մեչին տրեսըտրեն քյինելավ կանչըմ ա։

— Ա՛յ լավ կըլոխ առնող, հու վա օղըմ չոր քյաղլա։

Բըզարին մարթիքը խեթ-խեթ ըտրան ըն եշըմ, ամմա վրեշ մինը մուտանըմ չի։

Ախրը վրերչը մին առըտուրական կյամ ա, ասըմ.— էտ հի՞նչ քյաղլեք ա, վրեր ծախըմ ըս։

— Հեսե ըստի քյաղլեք ա։

Առըտուրականը մին լավ տընդրղըմ ա, ետավ ասըմ.— էտ իրեք քյաղլեքն էլ մըզանա մին տասը արշին տրենը տիր, տու վէլ հեռու կաղնի։

Էտ քյասիբ մարթը իտի էլ անըմ ա։

Առըտուրականը թըվանգյը յոր ա օնըմ, փըստոնը մեչին տինըմ, տըրըքցընըմ։ Առաչին քյաղլին գյունլլան նի չի կյամ, ղըրաղավրն ա անց կրենըմ։

Էրկունչի քյաղլլան, վրեր թըվանգյը տըրըքցընըմ ա, ծակվըմ ա, գյունլլան մեչան տունա կյամ։ Իրեքինչի քյաղլլին վրեր թվանգյը տըրըքցընըմ ա, ծակվըմ ա, գյունլլան մընըմ մեչին, էլ տունա չի կյամ։

Առըտուրականն ասըմ ա.— էտ քյաղլլան պրեր, յրես առնիմ։

Էտ քյասիբն ասըմ ա.— Պա հո վրեեե՛, էտ հի՞նչ ալափռանգյի պեներ ըս անը՞մ։

— Պա հինչ ըս գյիդացաղ, գյիդացաղ ըս, թա չոր քյաղլա առնիլը հալվա յա՛...

Վրերչը էտ քյասիբը իրեքինչի քյաղլլան պրերըմ ա, տամ էտ առըտուրականին։ Առըտուրականն ասըմ ա. — Հիշքա՞ն փող տամ։

www.naregatsi.org

էտ քյասիբն ասըմ ա.— Դե հինչ կըտաս, կըտաս իլի՛։

— Հինգ հազար մանեթ տա՛մ։

— Հունց թա հինգ հազար մանե՛թ,—արմանքը կալած ասըմ ա էն քյասիբ մարթը։

— Տասը հազա՞ր տա՛մ.— յրա յա պըերըմ առըտուրականը։

— Վըեեե՛, տասսը հազարըս վըե՞րն ա, ինձանավ մազաղ ը՞ս անը՛մ,— ափաթը տարած ասըմ ա էտ քյասիբը, մին ղոլան էլ հըվատըմ չի, թա իտի պըեն կինի՛։

Էտ առըտուրականը հանըմ ա տասնըհինգ հազար մանեթը տինըմ էտ քյասիբ մարթին ծըեռքին, ասըմ. — Դե լավ, տասնըհինգ հազար տամ։

Ըտրանա ետը էտ առըտուրականը խանչալը հանըմ ա, թըխըմ էտ իրեքինջի քյալլին, վըեր առալ ար, մեչան կըես անըմ։

Էտ քյալլին մեչան եր ա տըեռնում էլ պըռըլյանդնի, էլ թընգյակյին ջավահիր քարեր, էլ զունմրուտ քարեր, էլ փուրուզա քարեր, էլ ալմաստ, էլ լալ նան յաղուդ էլ հի՛նչ, հի՛նչ շատ թընգյակյին քարեր պըծըպածին ընելիս, շըփըղշափաղ ընելիս, վըեր մարթի աշկեր շաղվըմ ա եշելիս։

Էտ քյասիբ կյրեզմանափորը մընըմ ա քար կըտրած, աշկերը ծիլի-վիլի ընելիս, ամմա դե էլ ըշտրե՞ղ, պըեննը-պըեննավը անց ա կացալ, ծախալ ա, պըրծալ...

Վըեր առըտուրականը էտ մարթին իտի տըեսնըմ ա, ասըմ ա. — Ա՛ մարթ, անգուճ տիր ինձ, էս աշխարքըմըս իրեք ջուռա քյալլեք կա։ Քյալլա՞ կա՛, վըեր ինքը հենց ա մին դարանադաղ, էնքան մըեծ ա, ամմա մըեչին պըեն չիկա՛, հինչ էլ ասըմ ըս, կոխկավըն ա անց կըենում, հունցու էն քյալլան, վըեր գյուլլան յրա ըրին, կոխկավը անց կացավ։ Իտի քյալլեքը էս աշխարքըմըս իլած, չիլած մին ա, ըտահանք մին պարի պըեն չըն անըմ, լավ ա իսկի ինին էլ վըեչ։ Էտ առաչի քյալլան։ Էրկունջի քյալլան էն ա, վըեր լավ խոսկը լըսիլը լըսըմ ա, ամմա էլհա պըեց ա թողըմ, ըստըղավ տամ ա, էն ղոլավը տուս քցում։ Սաղ վախտընին էլ մին լավ պըեն չըն անըմ, ամմա չար պըեն հիշքան ասիս անըմ ըն։ Բաղի վախտ էլ մարթ մըտածըմ ա, թա էս օգի ճըտերը յանի մարթի անա յա իլած, թա սըտանի, ըտահանք թաւրսի ծին եր իլած ըն իլալ էս աշխարքըմըս, ըտրա հետի էլ գյուլլան ծակից, ամմա մեչին չի մնաց, էն ղոլավը տուս եկավ։ Իրեքինջի քյալլան էլ էն ա, վըեր հինչ լավ պըեն կա, յոր ա օնըմ, լավ խոսկ կա, կըլխըմը պահըմ ա, խըելունք ա, պարի կործեր ա կըդարըմ, վըեր ուրան անա ետը ասին վըեչ, թա

www.naregatsi.org

գյոռիտ խտի-ինդի անին, ուրան անա ետը ժողովուրթը, քյասիբ-քյըսուրբ, իրփիվըերի կնանիք, եթիմ խոխերք, քյինըմ ըն ընդրա քա-րան պաչըմ, ղորմի տամ, հունցու վըեր էն Թամիրանց Թաթավոսին կյըրեղմանը, էն վըեր Շուշի-Ղալըմը մըեծ-պուճուր լոխ ղորմի յին տամ, էն վըեր սաղ քաղաքին հետի էն հեռու, թըխպըմը կորած սարերան ճուր պըերավ, կոզի Ղալան էրված, էլհա ընդրա ղորմին կա հու կա՞, ընդրա շինած ախպուրնին մընըմ ա՞, ըտրա մընան մար-թին կըլոխան էլ խտի թանգյակյին քարերավ ա լիգյը, ըտրա հետի էլ վըեր գյուլլան յրա ըրի, մեչին մնաց, էլ տուս չի եկավ, խելոնք, շինարար, ծրոքերը վրեսկե, կըլոխը իմաստուն մարթի քյաղլա յա-ղավ կիներ, վըեր քու կըլոխըտ էլ իտի իներ։

Էտ առըտուրականը էտ լոխ ասըմ ա, պըրծընըմ, էտ թընգյակին քարերը հըվաքըմ, նի տամ էլհա էն չոր քյաղլին մըեչը, յոր օնըմ, քյընըմ ուրանց տոն։

Էտ քյասիբ մարթը մընըմ ա տըեղը կաղնած, արմանքը տարած, մազերան ճըլոլանք իլած, վրննըծրեռքը տափան կտրած, էտ առը-տուրականին քըմական եշելիս...



www.naregatsi.org



33. ՂԱՐԱԲԱՂԵՆ ԱՐԱՂԸ

Վաթրանդան մըեծ մելիքոթուն ար Ղարաբաղի հենգյ հայ մելիքոթուներին մեչին։ Էտ Վաթրանդին Մելիքին տըղան արաղ խմող ար։ Դե հո՞ւնց չի խմի՛, ըշտղին եշըմ ըս, թթի բաղեր, էտ բաղերըմը թոթա արաղ քաշողնի՛, լոխճին տանը արաղու պոժկընի՛, արաղ, հի՞նչ արաղ, մին քյահրըբա՛ր, պեց տըեղին քյահրըբա՛ր, սաղ աշխարքիս հրեատի տըեղըճար։

Մին հետ համին էտ Մելիքին տըղան հաթրփռում ա, ուրանց բաղըմը մին լաւ, տիրանին շուկվի, շըղշողում, մըեծ թթի ծառի տակի թեքյ ընգնում, քոն ինում։

Էրկու արծիվ գյիդում ըն, թա մըեռած ա, կյամ ըն աշկերը հանում։ Էտ տըղան մնամ ա քոռ։

Ըտրա հաթը՝ Վաթրանդու Մելիքը պաճճառը վըեր գյիդում ա, հրամմայում ա, վըեր հիշքան թթի բաղեր կա, լոխ տակռավը հանին, տեն քըցին, վըեր էլ արաղ չի քաշին, վըեր էլ մին թթի ծառ չինի՛։

Դե Մելիքին հրամմանը հո՞ւ կկարի տափը քըցի, մին կըծըկրակ ա, մին օրիշ թաթրի պե՞ն։ Հունց ա ինըմ, մին ըրփըվերի կընգա մին պուճուր թթի բաղ ա մընըմ հաղուղին բաղերին մեչին կյողը կացած։ Էտ ըրփըվերի կընեգյը ամառնը էտ թոթը թաւփըմ ա, հվաքըմ, ածըմ մին պոժկու մեչ, ըտրանա թաքուն-թաքուն արաղ քաշըմ ուրանց տանը հետե։ Լոխ մին քանի վեդրա յա ինըմ, տինըմ տանը տակե օթախըմը, կյեղըմ։

Ամմեն օր էրկու ստաքան հանըմ ա, մինը տամ ուրան մադար

www.naregatsi.org

տըղին, մինն էլ ինքը խըմըմ։ Էտ արաղան օժ առնելանը ետը, քյընըմ կործի։

Մին օր էտ ջահիլ տըղան անց ար կրենըմ Մելիքին պալատին քըշտավը, բուրդյան ընդրա յրան ա պըրծնըմ մին կրտաղած ծառուծ։ Էտ ծառուծին հալա թուլա վախտը, Իրանին շահըն ար բադարկա տվալ Մելիքին։

Էտ տըղան ուրյան կուրցընըմ չի, փըռնըմ ա ծառուծին պըկան, չանան եր քաշըմ, ծառուծին ըռեխը ճըղըմ, քըցըմ էն ղոլը։

Էտ վըեր Մելիքը ուրյան բալկոնան տրեսնըմ ա, լափ կրտաղըմ ա։ Կանչըմ ա էտ տըղին ուրյան կոշտը, վրեննան միչև կըլոխ եշըմ, ասըմ.— Ախկադի լակուտ, տու հունց էն ծառուծին ըռեխը ճըղեցիր, ասի տրեսնամ քու օժըտ հի՞նչան ա, ըշտըղա յա՞։ Էտ տըղան սու՞ս ա անըմ, կըլոխը քաշ, կաղնըմ։

Մելիքըն ասըմ ա.— Դե վըեր իտի օժավ ըս, ըսօր գյիրագի օր ա, լոխ տանը։ Էն մին ծառուծին նըհետ էլ բաս կը մընանիս, կորեվ կանիս, մըեր լոխճին առաչին, յա ընդրա ըռեխըն էլ կըճըղի՞ս, կրտեռնաս Ղարաբաղի ծառուծի ճոտ տըղորցան լոխճան օժավը, էն վախտը քյըեզ սաղ-սըլըմաթ կըթողի՞մ, յա էլ ծառուծը քյըեզ պըտրու-պատառ կանի, մունք էլ թըմաշա կանինք։ Էտ էրկու պայմանան մինը բիդի կըդարիս։

Էտ տըղան ասըմ ա. — Լավ, Մելիքը ապրած կրենա, էլ օրիշ հի՞նչ կկարիմ խոսիմ, լհա թող քյինիմ իմ մոր տրեսնամ, էլհա ետ կյամ։

Էտ տըղան կյամ ա տոն, լոխ մորը նաղլ անըմ։ Մարը տրեսնըմ ա, վըեր էտ աշկերը ծրուն կալած Մելիքան պըռծում չի կա՞, քյինըմ ա տանը տակե օթախան էրկու ստաքան ծրած պըերըմ, տըղին խըմըցնըմ, ասըմ.—Ա՛յ բալա, քյինի, վախիս վեչ, էտ արաղին մեչին ա քու հայրենի վրեղիտ օժը, քյինի էն մին ծառուծին էլ սըտկըցրու։

Էտ տըղան քյինըմ ա։

Էտ Մելիքը գյադոցը հրամման ա տըվալ, վըեր ծառուծին լավ ուտուցնին, մին սաղ վրեխճար տանն։

Ղոնաղնին հըվաքվալ ին էն պրեցուր բալկոնը, վըեր ընդրղան եշին։ Հու վըեր սըրտըմը խեղճ օներ, էտ տըղին մեխկըն ա կյամ, հու վըեր ծնողի սըերտ չօներ, ծրծաղըմ ա, թայդի տամ։ Դե՛հա, հա դե՛հա, շունտ պըերին հայաթը էն ծառուծին, վըեր էն տըղին պըտրու-պատառ անի, ուրյանց քեփին էլ կյա։ Կրնանիքյ, մարթիքյ տունա ին տեռալ, բալկոնը մըե՞ծ, լե՞ն։ Մելիքը տունա ա կյամ, բեղերը հունըլը՞-

www.naregatsi.org

ռելավ, կարակռւլ փափաղը կըլխին, թընգյանոց չոխան, արխալուղը կյեցին, աշկերը կյրմըրոտած, հրամման ա տամ՝ սկսին։ Վրեր իրեքինջի զանգյը տամ ա, էն տըղին տռւս ըն պերըմ, էն մին ղոլան էլ առռւծը պահող նռքյարը առռւծին կապը պեց ա թողըմ։ Կընանիքը տըղտռղըմ ըն, վրեր առռւծին տրեսնըմ ըն, շատերը աշկերնին կապըմ ըն։

Էտ տըղան մին լավ եշըմ ա առռւծին տռւրռւր կյալը, ինքը ռւրաև հրվաքըմ, առռւծը վրեր լոք ա տամ էտ տըղին յրա, էտ տըղան դաստի առռւծին կոխկըն ա անց կրենըմ, կոխկան փըռնըմ չանին էրկու ղոլերան, մեչան ճըղըմ էն ղոլը քրցըմ։ Հռւրը սըրտըմ ծնողի սեր կար, խրեղճ կար, ուրխանըմ ա, վրեր էտ մադար տըղան ազադվից, հռւրը սըրտըմ ծնողի սեր չիկար, սըերտըն էլ քար ա, արռւն-կալած, էն էլ տըխրվըմ ա։

Մելիքը էն ղալին էրգյան հունքերը ռւրռւր ա տամ։

Վրեր լոխ քյընըմ ըն ռւրանց տները, Մելիքը էտ տըղին կանչըմ ա, ասըմ.— Դե վրեր իտի յրս ըրալ, պիտի ասիս, թա քու օժըտ հի՞նչա յա։

Էտ տըղան վեշ մին պեն չի ասըմ։ Վրեր Մելիքը շատ ա սդիբըմ, ասըմ ա.— Մելիքը ապրած կրենա, թող քյինիմ իմ մոր տրեսնամ, կյամ քյրեզ ասիմ։

Մելիքը ռազի յա կրենըմ։

Էտ տըղան քյընըմ ա տոն, լոխ մորը նաղլ անըմ։ Մարըն ասըմ ա.— Ա՛ բալա, օժիտ փանդը ասիս վայ ա՛, ասիս վեչ էլհա վա՛յ ա՛, բա էս հո՞ւնց անինք,— բա հո՞ւնց ասինք, վրեր մրեր թթի բաղը կենըմ ա, մունք արաղ ընք քաշըմ, էտ արաղը հայրենի վրեղին օժը խմողին ա տամ, արևին օժը խմողին առռւծի օժ ա տամ։

Մարը տըղա մըտածըմ ըն, մըտածըմ, վերչը կյամ ըն էն մըթկին, վրեր քյինին ասին, հինչ վրեր դռւզըն ա։

Մարը մին բոթռւլ արաղ ա տամ տըղին, թա տանի տա Մելիքին, համ էլ ասի, թա օժը հինչտրեղա յա։

Տըղան կյամ ա Մելիքին կոշտը, ասըմ.— Մելիքը ապրած կրենա, քու վրեղըմըտ վեչ մին թաքուն պրեն չի ինիլ, իմ օժըս էս բոթռւլին մեչին ա, էտ էլ մրեր բաղան ա, բաղը օժ ա առալ մայր վրեղան, վրեղը աշխարքըմըս լոխճան օժավըն ա, խրնթրըմ ըմ պըրոր ըրիք, տրեսիք սո՞տ ըմ ասըմ, թա՞ ղորթ։

Մելիքը մին ստաքան խըմըմ ա, տրեսնըմ ա քյեփը եկավ, ծըծաղը, երքը եկավ։

Էրկունչի ստաքանը վրեր խըմըմ ա, տրեսնըմ ա սաղ պալատը

www.naregatsi.org

էնա ծրեռքին մրեչին, ինքն էլ պըցրանըմ ա, թա թըռչի ուրան սարերին արծիվներին նման, շրռտըշռռտու անի երգյինքում։ Իրեքինջի ստաքանը վրեր խըմըմ ա, տրեսնըմ ա, վրեր լոխճան ծանդր պենները ուրան ծրեռքին հունցու մին տրկողին, մին ճուղուպուր, մին նոխուդ, էնքան թիթև ա ինըմ։

Էտ վրեր Մելիքը տրեսնըմ ա, վրեր արաղը իտի օժավ պրեն ա, մարթի օժ ա տամ, ուրաղրն էլ ստանըմ ըն, էն մրեղրի համավ, էն մարթի պըրանըմ մըղրաճ ուր տրեռնող թոթան, էն ամման մինը մին բրամի չանք, բեդանա թոթան, թթի ծառերըն էլ ուրանց օժը ստանըմ ըն մայր վրեղան, հրամման ա տամ Ղարաբաղին մելիքներին, ուրան էլ նըհետը, վրեր սաղ Ղարաբաղի վրեղին կրեսը, հալա կրեսան էլ շատ, թթի բաղեր քըցին։

Ըտրանա ետը լոխճան առաչ ուրան վրեղըմըն ա թթի բաղեր քըցըմ, էն տակռավը հանած ըրանա վրերանա բաղերը թազադան թթի բաղեր ըն քըցըմ, ավադ անըմ, մրեծ-մրեծ բաղերըմը արաղ քաշելի քյարխանա յըն տինըմ։ Էն ղազանգյ շըղշողըմ շուկվի տիրևներավ, մարթի սըրտի մնան, կոխկերքը սրռսեռուտ տիրևներավ ծառերը մրծանըմ ըն, հաղուդի պուճուր գիլի մրնան ուրուր անա կացած թոթը, մին բըրամի չանք, հրսնըմ ա, շափաթը մին հետ բաղերը թոխմախավ թափըմ ըն, մրեծ շալին ղրղներան փրռնող հարթները, ըխճըկերքը օրախ-օրախ, ծրծղելավ, ասելավ-խոսելավ, ուրուր նրհետ հանաղյ ընելավ, թոթը տանըմ ըն ածըմ պուժկենեն, քըցըխելանը ետը արաղ ըն քաշըմ, պեց տեղին, քյահրըբա՜ր, օժ տըվող, հիվանդին դարմանն, սաղ աշխարքիս հայտնի Ղարաբաղի արաղ։ Վրեր խըմողը ասըմ ա.—Արաղ չի է՜, մրեռուն ա, մրեռու՜ն...

Օժավանըմ ըն, լիյանըմ, քյըեփ անըմ, գյուդում ըն, թա աշխարքիս լոխճան բախտավեր մարթիքն ըն։

Էլհա ճուրը ուրան ճրնապարավըն ա քյինըմ, էլհա լոխ օրա՜խ, զրվա՜րթ, օժա՜վ, մին մին առուծնի։ Էլհա տրնազին ծիծաղը պըրրններին, սոր խոսող, խոսկի հետի ծրեռքը ջուրը չի տանո՜ղ, էն վախտը առանց ուսումի, ամմա խելունք ղարաբաղցիք։

Ըտրանա ետը Վարանդու Մելիքը, վրեր պրռավըմ ա, ուրան կոշտըն ա կանչըմ, ուրան ծրեռքին տակին կյիր, հրամման, օրենքյ, տես-տեն կյրողին, կտակ ա կյիրիլ տամ։ Ղարաբաղին անա, շատ պեներ ա կյիրիլ տամ, ըտրանց կոխկին էլ կյիրիլ ա տամ, ասըմ. — Ա՛ բալեքյ, հու վրեր Ղարաբաղին նի կյա, ընդրա թթի բաղերին նի կյա, տանավ, տրեղավ կորչելու յա, կըլոխը օյիննի յա կյալու, փրեշմանն ա մընալու, էտ պենը իմ կլոխս եկած ա, Ղարաբաղի թթի

www.naregatsi.org

բաղերին նի կյըվողը նըհախ տրեղան ա նի կյալու՞, վրերչը էլհա ճռուրը ուրան ճընապարավըն ա քյինալու, թթի բաղերին նի եկողը, թթի ծառերը կըտորիլ տըվողը վրերչը մընալու յա քոռըփրեշման։ Ա՛ բալեքյ, ծրեր բաղերը քանդիքյ վրեչ։ Ծրեր օջաղը հընգյըցնիք վրե՞չ։

Իտի լոխ, հինչու հարկավեր ա, կյիրիլ ա տամ, ինքը մրեռնըմ։ Ղորմի ընդրանց, էտ մելիքներին, ղորմի մըեր նան ծրեր նամուսավ, ղեյրաթավ պապերի՛ն։



www.naregatsi.org



34. ԼՕՒՆ ՆԱՆ ՄԸԵԾԱԿԸ

Ինում ա, չի ընում մին լու, մին մրեծակ։ Կտրանք մարթըկնեգյ ըն ընում։ Լուն ասըմ ա. — Ա՛ կնեգյ, ծուռը եկալ ա, աշխարքը կալլալ, մեր կտրեն նստալ, կտերն էլ ծոռ ա, կաթիլու յա՛, քյինիմ ծուռը տրեն տամ։

Մրեծակն ասըմ ա. — Ա՛ մարթ, տու մին պուճուր պրեն ըս, հո՞ւնց կըքյինիս ծուռը տեն տաս։

Թա. — Չէ՛, քյունում ըմ։

— Բա վեր ծուռին տակեն մնաս, էն վա՞խտը։

— Ա կնեգյ, վըեր դըխդըխկոց լսեցիր, գյիդա վեր սաղ ըմ, վեր լսեցիր վուշ, գյիդա վեր մրեռալ ըմ, ծուռին տակավըն ըմ իլալ։

Լուն քյունում ա։ Մրեծակեն քյեփավը չի տաոնում։

Անգուճ ա օնըմ, տրեսնըմ սաս-սեմոնը չի կա՞։ Տուս ա կյամ կըտորը, տրեսնում լուն ծուռին տակավն ա իլալ, սատկալ։ Սկսըմ ա կլուխը թակիլը, կլխին մոխեր շաղ տալը, ըսկըսըմ ա սոքյ ասիլը։

Մին ակռավ կյամ ա կտրին նստում, ասըմ. — Ա՛ մրեծակ, խե՞ յըս կլխետ մոխեր շաղ տամ, հի՞նչ ա իլալ։

Մրեծակն ասըմ ա. — Բա հո՞ւնց անիմ, վեր շաղ չիտամ, մարթս ա մրեռալ, տուս եկավ, թաս ծուռը տեն տա՞, ծուռին տակավն ըլավ։

Ակռավն ասում ա. — Վա՛յ, վա՛յ, խըեղճ լու ախպեր, էս հո՞ւնց կանինք, էս հի՞նչ կանինք, ըսկսում ա ուրան թեփուտնին պուք տալը, լաց իլիլը։ Ետավ թռչում ա, նստում մին ծառի։

www.naregatsi.org

Ծառն ասում ա.— Ա՛յ ակռավ, բա տու ամեն օր սև նան ղալին թեփուտներավ ըս իլնալ, ըշտեղ՞ ա քու թեփուտնիտ։

Ակռավը ծառին յրան ասըմ ա.— Բա ասիլ չը՞ս, լուն ծուննը տրեն տալիս սատկից, մըեծակը կլխին մոխեր շաղ տվավ, յրես էլ թեփուտնիս թափեցի։

Ծառն ասըմ ա. — Խըե՞ղճ, վա՛յ, վա՛յ։ Ինքն էլ ուրան տիրևնին ա թափու՞մ։

Ծառին տակը մին վեչխար ա կյամ, վըեր սաղրինումը նստի։ Տեսնում ա ծառը տակլոր ա, ասում ա.— Ա՛ ծառ, ըրեգյի տու ղըրթարվածը ըս իլնալ նախշուն տիրևնըերավ, ամմա ըսօր մնացալ ըս տակլոր, էտ ըշտե՞ղ ա քու տիրևնիտ։

Ծառն ասըմ ա.— Յրես հի՞նչ անիմ, հի՞նչ չանիմ, հի՞նչ վըեղ տամ կլխիս, հի՞նչ ցեխ տամ կլխիս, բա ասիլ չը՞ս լուն կըտերը եր իլնավ, վըեր ծուննը տրեն տա, ընգավ ծուննին տակը, սատկից, մըեծակը կլխին մոխեր շաղ տվավ, ակռավը թեփուտնին պուք տըվավ, յրես էլ տիրևնիս թափեցի։

Վեչխարն ասըմ ա. — Վա՛յ, վա՛յ, էս հո՞ւմց կանիմ, էս հի՞նչ կանիմ,— համ լաց ա ինում, համ էլ ուրան կեռ պոզերը կուտրատում։

Վեչխարը քյունում ա կյըետին կոխկը ճուր խմի։ Ճուրը տեսնում ա ըտրա կեռ պոզերը կուտրատած, ասըմ ա. — Ա՛ վեչխար, հո՞ր ա քու կեռ-կեռ պոզերըտ, երեգյ իտի չի եկեր իմ կոշտս։

— Է՛հ, հի՞նչ անիմ, վըեր պոզերս կուտրատիմ վե՞չ, լուն ծուննը տեն տալիս, ընգավ ծուննին տակը, սատկից, մըեծակը կլխեն մոխեր շաղ տվավ, ակռավը թեփուտնին պուք տվավ, ծառը տիրևնին թափից, յրես էլ իմ պոզերս կոտրեցի։

Ճուրըն ասըմ ա. — Էս հի՞նչ ալամաթ պրեն ա, էս հի՞նչ կանինք, էս հո՞ւմց կանինք։ Վա՛յ, վա՛յ յրես էլ տեռնամ արուն։

Մին պառավ կնեգյ կյամ ա կոժն օսին ուրան խանումին մհար ճուր տանի։

Տըեսնում ա ճուրը արուն ա տեռալ, ասում ա.— Ա՛յ ցորտ ճուր, բա տու ինդի թամունգ իր, համավ իր, էտ խե՞ յրս արուն տրեռա՞լ։

Ճուրըն ասըմ ա.— Դե, հի՞նչ անիմ, վըեր փոխվիմ վեչ, լուն ծուննին տակեն մնաց, սատկից, մըեծակը կլխեն մոխեր շաղ տվավ, ակռավը թեփուտնին պուք տվավ, ծառը տիրևնին եր ածից, ղոչը պոզերը կուտրատից, յրես էլ արուն տեռի։

Պառավը վա՛յ ա տամ ուրան կլխին, դարդան կոժը կոտրում, քյնում ուրան խանումին կոշտը։

www.naregatsi.org

Խանումը ասում ա.— Ա՛ պառավ, բա հո՞ր ա կոժը։

Պառավը լաց ինչլաւ ասըմ ա. — Բա ասիլ չը՞ս, լուն ծուռնը տուռս տալիս վախտը ծուռնին տակավը ընգավ, սատկից, մըեծակը կըլխին մոխեր շաղ տվավ, ակռավը թեփուռնին պուք տվավ, ծառը տիրևնին թափից, ղոչը պոզերը կուտրատից, ճուռըն էլ արուն ա տեռավ, յըես էլ դաւրդերաս նըրհետ կոժս կոտրեցի։

Խանումը մեծ դաւրդի մեչ ա ընգնում։ Ասում ա.— Վըեր իտի յա, յըես էլ իմ ծամերս կկտրիմ։

Քշերը աղան կյամ ա տոն, տեսնում խանումը ծամերը կտորած։ Զոռի ըչըղվում ա, ասում.— Հո՞ր ա քու ծամերդ։

Խանումն ասում ա. — Մեծ դաւրդ ա պըտահավ, բա ասիլ չը՞ս, լուն ծուռնը տուռս տալիս ընգաւլ ծուռնին տակը, սատկից, մըեծակը մոխեր շաղ տվավ յրան, ակռավը ուրաւն թեփուռնին պուք տըվավ, վեչխարը ուրաւն պոզերը կուտրատից, ծառը ուրաւն տիրևնին թափից, ճուռը արուն տեռավ, պառավն էլ կոժը կոտրից, յըես էլ ծամերս կտրեցի։

Աղան ասում ա. Վըեր իտի յա, յըես էլ իմ բեղերըս կտրիմ, էլ հի՞նչի՞ յա պետք։

Էն մին օրը տխուր տրտում քյունում ա կործի։

Զոռանը շվվի ածելիս տըեսնում ա, վըեր աղան տխուր ա։ Հըրցնում ա.— Աղա ջա՞ն, բա խե՞ յըս տխուր։

Աղան լոխ նաղլ ա անում։ Զոռանը շվվին կոտրում ա, տխուր, օնքերը ուրուր տված քյնաւմ ծմակը։ Մին ծառի տակե նստում ա մտածում։

Քաշկերը կյամ ըն, ասում.— Զոռան, խե՞ յըս իտի տխուր, ախեր տու միշտ շվվի չիր ածում, օրախ-օրախ, բա քյըեղ հի՞նչ իլավ։

Զոռանն ասում ա. — Բա իստի-իստի պեններ.— Մեր պարեկամ լուն ծուռնը տուռս տալիս տակավը ընգավ սատկից, մըեծակը մոխեր շաղ տվավ կլխին։ Ակռավը թեփուռնին պուք տըվավ, պառավը ճըի քյնաց, կոժը կոտրից, ծառը ուրաւն տիրևնին թափից, վեչխարը ուրաւն պոզերը կուտրատից, աղան ուրաւն բեղերը կտրից, խանումը ուրաւն ծամերը, յըես էլ էտ լոխ տըսնալավ իմ շվվիս կուտրեցի։ Բա յըես տխուր չինի՞մ, հո՞ւ ինի՞։

Քաշկերը հրռհրռում ըն, հրռհրռում, ասում.— Լոխ չորան ըք իլա՞լ, վեր իտի-իտի պեններ ըք փռնա՞լ...

www.naregatsi.org



35. ԿՅՈՂ ԹԱՔԱՎԵՐԸ

Ինըմ ա, չինըմ մին թաքավեր։ Էտ թաքավերը միշտ դաւրվիշի շորեր կյըհացած ման ա կյամ ուրաւն երդյիրըմը, տըհանա ուրաւն անա հի՞նչ ըն խոսըմ։

Մին դինըմ տա մին ծըմակ ա ընգնըմ։ Ըտրան էտ ծըմակըմը իրեք կյող ըն ջըհըմ։ Էտ իրեք կյողերը էտ դաւրվիշին նըհետ հրնգերանըմ ըն, կյուղոթուն անըմ, ապրըմ։

Մին օր դաւրվիշը լոխճան հըրցընըմ ա, թա հու հի՞նչ կը կարի անի, հո՞ւնց ըն կյուղոթուն անըմ, հի՞նչ թաւհրավ։

Մինն ասըմ ա. — յըհս մին ինդի կյող ըմ, վըհր ըշտեղ քյինիմ, շընորը հաչին, գյիդաւլու յըմ, թա հի՞նչ ըն ասըմ էտ շընորը։

Էն մինն էլ ասըմ ա. — Ցըհս մին ինդի կյող ըմ, վըհր ըշտըհղ մին քըլլած ղուփուլ ինի, կը պհնամ, վըհր քըշտին աղոթկ անիմ։

Էն իրեքինջի կյողըն էլ ասըմ ա. — Ցըհս մին ինդի կյող ըմ, վըհր մարթկանց կը ճընանչիմ, հիշքան փոխված, յա պըռաված ինի։

Ըտրանա ետը էտ կյողերը դաւրվիշին անա հըրցընըմ ըն.— Բա տու հի՞նչ կանիս, ծրեռքավըտ հի՞նչ կըկյա, բա քու հոնաւրըտ վե՞րըն ա։

Դաւրվիշըն ասըմ ա.— Ցըհս մին ինդի մարթ ըմ, վըհր աչի բեղըս հըլլաւրիմ աշխարք կը շինիմ, վեր ծաւխի բեղըս հըլլաւրիմ աշխարք կը քանդիմ։

Անց ա կըհնըմ մին խիլլաւ վախտ։ Էտ դաւրվիշըն ասըմ ա. — Ցըհս խոխատաւր մարթ ըմ, օղրմ ըմ տոն քյինիմ, տրհանամ խոխա-րա

www.naregatsi.org

խաս հի՞նչ իլին, քյուլփաթըս հո՞ւնց ըն յոլա քյինըմ, օղլըշաղըս հո՞ւնց ա։

Էտ կյողերը պեց չըն թողըմ։ Ասըմ ըն. — Չէ՛, վրեր չէ՛։

Դաւրվիշըն ասըմ ա.— Դե, վրեր իտի յա, եկեք քյինինք թաքավերին խաղնան կըտրինք։

Թաքավերը մին ղոլան էլ օզըմ ար գյիդա՝ դուղ ըն ասա՞լ, թա շան լուղու յըն գյուդուս, աղոթկավ ղուփուլ ըն պեց անըմ, մարթ ըն ճրնանչըմ։ Էտ լոխ օզըմ ար գյիդա, վրեր էքծան օրը ուրան խաղնան վեր կյան կըտրին, յա կյան ղուփուլնին պեց անին, գյիդա։

Քըշերը խոսկը մին ըն անըմ, ճրնապա ընգնըմ։ Վրեր հրսնըմ ըն թաքավերին պալատին կոշտը, շոնը հաչըմ ա։ Թաքավերը դաւրվիշի շորեր կյեցին, վնչ մինը գյուդում չի, թա տա թաքավեր ա, էն շան լուղու գյիդացողան հրրցընըմ ա.—Հը՞ը՞, շոնը հի՞նչ ա ասըմ։ Էն կյողըն ասըմ ա.— Շոնն ասըմ ա. «Մրեր տարը ծրզ նըհետ ա, էտ հո՞ր ըք քյինըմ»։

Լոխ մրնըմ ըն ուրուր իրեսի եշըմ։ Մինն ասըմ ա. «Տու վրա», էն մինն ասըմ ա. «Չէ, տու վրա»։ Սկըսըմ ըն ուրուր նըհետ հոջաթ տալը։ Թաքավերը գյուդում ա, վրեր էտ կյողը դուղ ա ասըմ, ամմա սուս ա անըմ։ Վրեր ուրան էլ ըն մեղատրըմ, թաքավերին մին թունդ ուշունց ըն տամ։ Էտ էրկունչի կյողը կյամ ա խաղնին տրունին առաչին կաղնըմ, աղոթկ անըմ։ Վրեր աղոթկ ա անըմ, լոխ ղուփուլնին պեցվըմ ա։ Ըտրանք մեշոկնին վրեսկավ լըցնըմ ըն, քյինըմ ուրանց պունը։

Դաւրվիշը մին թաւհրավ վրեսկեն ըտրանց մեչին փայ ա անըմ, մին թաւհրավ ազադվըմ, կյամ պալատը, կահին նըստըմ։

Մին քանի օրանը ետը թաքավերը հրամման ա տամ, կյողերին կանչին ուրան կոշտը։ Ինքըն էլ կրնգա շորեր ա կյենըմ, իրեսը ծասկըմ, մինակ մին աշկը պեց թողըմ, քյինըմ կյողերին ճրնապարը պահրմ։

Վրեր կյողերը կյամ ըն, մուտանըմ, տա կրնգա շորեր կյեցած, իրեսը ծասկած, մինակ մին աշկը պեց, ծրնգները թակըմ ա, ասըմ.

— Թաքավերը կյաւրմուր ա կյեցա՞լ, ծրեզ կըտորելու յա, բա հո՞ւնց կանիք, բա հի՞նչ կանիք։

Էն մարթ ճրնանչող կյողը ասըմ ա.— Քյրեզ մրնանին նըհետ հրնգյեր ինողին օրըն էլ խատ կինի։

Թաքավերը դաւստի գյիդաց, վեր ուրան ճրնանչալ ըն, քյինից պալատը, կյաւրմուր շորեր կյեցավ, էտ կյողերին կանչից ուրան կոշտը։ Իրեքըն էլ եկին։

www.naregatsi.org

էն մարթ ճընանչող կյողը խոսկ խընթրից, ասից. — Հինչ իլալ ա, իլալ ա, մըհեկ խընթրըմ ընք աչի բեղըտ հըլլորիս, տա լոխճան լավ կինի, մըզ էլ մահից կազադիս։

Ըտեղ թաքավերը ծըծաղըմ ա, տըեսնըմ ա, վըեր էտ մարթը ուրան ճընանչալ ա։

Թաքավերը տրանց էլ կախ չի տամ, ազադըմ ա, ասըմ.— Դե, մըհեկ ազադ ըք, քյինացիք ծըեր տընեերը, ծըեր խոխա-րախին կոշտը, էն խազնան տարած վեսկեն էլ ծըեզ բոլ ա, միշև ծըեր գյանքին վերչը։ Քյեցեք մին աշխադանք էլ ըրիք, կործ ըսկսեցեք, յա արհեստ սըվըրեցեք, արհեստ պինըցրեք, էլ մըհեկանց տեննը կյուղոթուն չանի՞ք։

www.naregatsi.org



36. ԿԸՆԶՄԸՆԶՈՒԿԸ

Ինիս ա, չինիս մին դեր։ Ըտրան ինիս ա մին կնեգյ, շատ ղէշանդյ։ Դերը տըսնաս ա, վեր կընեգյը շատ ա ղէշանդյ, թուղես չի, թա տանան տունա կյա, մին տեղ քյինի, մին ջվար տեսնա, թա հինչ ա կըտեսնան, հավան կը կենան, կփխչըցնին։ Տանը ճուրը, հացը, լոխ ինքն ա ըլալ պիրիս, կընեգյըն էլ մին խանըմ շինած, տանը տըրած։

Էտ խեղճ տերտերը թուղես չի իլալ, թա տունը մին ղոնաղ կյա։ Ըտահանց շենըմը մին քանե ջահիլ-ջըհնուկ ղոչչաղ տղեք ըն ինիս։ Տահանք ուրուր նհետ մարջ ըն կյաս, թէ հո՞ւ կկարե մին ուրուդյունն քյինի դերին տունը, ղոնաղ ընգնե, համ էլ կընգանը տեսնա, կյա։

Ըտեղ մին ջահիլ քյալագյբաղ տըղա յա ինիս։ Էտ ըսես ա. — Յըես կգյինիմ։

Հընգերուքը ըսես ըն. — Վեր կարիս քյինիս, հենգյ չեթվեր կյինի յընք ինքյ ուննական, մին լավ քյեփ անինքյ։ Ամմա վեր կարրս վուշ քյրնրս, քյնփը քու հաշվիտ ա իննական։

Էքսը էտ տղան եր ա կընաս քյինիս տեսա, տենա ինքյ ունես, մին խուրջին լըցնես, եր կընաս դըբրուդյունն վախտը քյինիս դերին տունը։

Մին խիլլա վեր կընաս ա, մին փիս էլ շաղ ա նի օնես, երգյինքյը թուխպես։ Էտ տըղան դերին դըրբզան Թըրկես ա։

Դերը կյաս ա, տոռնը պինաս, թա.— Հի՞նչ ըս ուզի՞ս։

Էտ տըղան ըսես ա. — Ա՛ դեր, յըես քըմատաղ, հեռե տեղա

www.naregatsi.org

յըմ կյաս, անծանոթ մարթ ըմ, տեղ չըմ ճընըննչիս, եկալ ըմ լհա մըղակըտ, ղանչանք ըմ ընես, լհա թող դըրբզեն քմակեն նստիմ, կենամ։

Դերը ըսես ա.— Ամաչ չի կյալ, յըես քը մատաղ, յըես էսքան տարե յա, ըստեղ կընաս ըմ, հալա մին մարթ պահած չըմ տանըս, յըես քյըեզ հո՞ւնց պահիմ, էքուց վեր շենումը ըսկանան, հի՞նչ կասին ինձ։

Էտ տղան ըսես ա. — Ցըես քյըմատաղ, ա՛ դեր, թոռը նի կալած, յըես հիշտե՞ղ քյինիմ, պա աստուծ չօնի՞ս, թող լհա կյամ էտ դըրբըզեն քմակեն նստիմ, հանցու լըհա կյունլու, գըղանու փայ չի տեռնամ, սաղ քյինիմ, տեղ հսնիմ։

Դերը տըսնաս ա, վեր ճար չի կա, ըսես ա. — Նք լհա դըրբըզեն քըմակեն նըստե։

Էտ տըղան ուրեն մաչին ուրխնաս ա, թա. «Էս ա կուծի-կուծի պեներըս դիբի լավըն ա քյինիս»։ Կյաս ա դըրբզեն քմակեն խուրջինը վեր տընիս, նստես։

Դերը քյինիս ա տանը մին խիլլա կընաս, կնգանը ըսես ա. — Ա՛ կնեգյ, ախեր մին ղոնաղ ըմ պերալ, էն ա դըրբըզըմը նստած։

Կնեգյը ըսես ա. — Ա՛ դեր, դե էսքան տարե յա վեր ղոնաղ չըս պահալ, մըհենգ էլ պերալ ըս, թողալ դըրբըզըմը, ինէլ թոռեն տակեն։ Էտ մինը լավ չի, հու վեր ըսկանա, պա հի՞նչ կասե։

Դերը ըսես ա. — Վեր իտի յա, թող քյինիմ պերիմ բալկոնը։

Քյինիս ա, թա. — Ա՛ ղոնաղ, եր կաց եք բալկոնը թըռչվիս վուչ։

Էտ տըղան ըսես ա. — Ա՛ դեր, լավ ա, նեղութուն մեր քաշիլ, ըստեղ էլ յոլա կըքյինիմ։

Դերը շատ ա ստիբիս, թա. — Եր կա՛ց, եք։ Վերչը եր ա կընաս քյինիս բալկոնը։

Դերը քյինիս ա տոն, տահանք սկսես ըն հաց օտելը։

Կընեգյը ըսես ա.— Ա՛ դեր, պերալ ընք բալկոնը, թող կյա տոն էլ, հաց կօտինքյ կպըրծնինքյ, էլհա ինքյը կքյինի բալկոնեն կենա։

Դերը եր ա կընաս էտ տըղեն մին էլ պիրիս տոն։ Էտ տըղան պիրիս ա խուրջինը պընաս, մեսը տունս ունես խըրվես, քյաթա, կըթնահունց, ըրաղ, պեն տունս ունես, մին լավ քյեփ ըն ընես պըրծնես, միչև կես քշերը զուրուց ընես, եր կընաս քոն ինիս։

Քշերը էտ տըղան եր ա կընաս կոժը յոր ունես տըռանը ճուրը թըփես, պըրծնես ըսկըսես կրխկրխկցընելը։

Դերը եր ա կընաս թա.— Էտ հի՞նչ ա, յըես քը մատաղ։

Տըղան թա.—Ա՛ դեր, վեչինչ,— ուզեցե թա ճուր խըմիմ, կա վուչ։

www.naregatsi.org

Դերը ըսես ա.— Դե թող եր կենամ, տանիմ կոժը լըսնիմ, պիրիմ։

Տըղան թա.— Չէ, լաւ մին թաՀրաւ կըկենամ։

Դերը ըսես ա.— Չէ՛, բիդի քյինիմ։

Դերը եր ա կընաս, կոժը յոր ունես, թա քյինի, ըսես ա. — Ղոնաղ, անըմըտ հի՞նչ ա, ասե, հանցու կյամ ծեն տամ դըրբըզան պենաս։

Էտ տըղան ըսես ա. — Ա՛ դեր, անըմըս մին տըժեր անըմ ա, համ էլ լաւ անըմ չի, հո՞ւնց ասիմ։

Դերը թա.— Ասե, վեչինչ մատտաղ, ասե։

Էտ տըղան մտըծես ա, թա հի՞նչ անըմ ասե, վեր հնգյերունքը ըսկանան, մին լաւ էլ ծրծաղին, դերին ըսես ա՝ անըմըս կընձմընձուկ ա։

Դերը եր ա կընաս կոժը յոր ունես քյինիս ճուրը, կյաս տըսնաս դըրբըզան քըլլած, ղոնաղեն անըմը մընենան ընգնես ա, ըսես ա. — Պա յըես հո՞ւնց ծեն տամ,— մնաս ա տըռանը վրեննը կացած։

Վեր տըսնաս ա շատ ա մընաս, տոռնը թըկես ա, թա. — Ղոնա՛ղ, ղոնա՛ղ, տոռնը պեց։

Էտ ղոնաղը տուս ա կյաս, թա.

— Ղունաղեն հաՀրն էլ, քու հաՀրն էլ, շան տըղա, էս կես քըշերեն հի՞նչ ըս եկալ քոնըս հարամ ընես։

Խեղճ դերը «մեղա աստված» ընելավ քյինիս ա հիրըվանին մղակը թըկես, թա հաւլբաթ մըթեն ա, շաղվալ ըմ, էս մեր դըրբըզան չի՞։

Վերչը սաղ միհլին դըրբըզեքյը թըկես ա, լոխ տուս ըն կյաս, ուշունց տաս, քյինիս։ Դերը տըսնաս ա, վեր լուսընաս ա, ըսես ա համոթ ա, վեր լուսանա ժողովուրթը տըեսնան էս կոժը ծեռքես հըղըցըմը վրեննը կացած, ինձ հի՞նչ կասին։

Եր ա կընաս քյինիս ուրանց դամուրչուն կոշտը, դամուրչին մնաս ա ըրմացած, թա. — Ա՛ դեր, էս վախտ կոժը ծեռքետ ըստեղ հի՞նչ ըս ընես։

Դերը ըսես ա.— Մին ղալաթ ըմ ըրալ, ախպեր, էս ա էսքան տարե յա ղոնաղ չըմ պահալ կընգանըս դարդաՀն։ Մըհենգյ էլ ուրգյուննեն մին տըղա յա եկալ, խեղճըս ա եկալ, պերալ ըմ տոն, մինակ թողալ կընգանս քշտեն, յըես եկալ ճուրը, մին էլ, թա քյինիմ տոն, տըեսալ դըրբըզան քըլլած։ Անըմը մննաս ընգալ ա։ Մըհենգյ եկալ ըմ քու կոշտա անըմը ասիս, քյինիմ ծեն տամ, տոռնը պենաս։

www.naregatsi.org

Դամուրչին ըսես ա. — Պա յրես անըմը հի՞նչ ըմ գյիդաս, հի՞նչ ա։

Դերը ըսես ա.— Տու ըխշարքես տակեն հինչ ժընգյալու անըմ ըս գյիդաս, ասե, յրես գյիդլական ըմ։

Դամուրչին ըսես ա. — Կյինձը, կուտամնը, պենջար, ճրոճռոկ, փուրփուտ, քյավառ, քյարավուզ, թըրթունջուկ, ավլունկ, տըտըպաշար, ուտամ-տիտամ, նանա, ռեհան։

Տերտերը ըսես ա.— Չէ, չէ, էտ չի։

Դամուրչին ըսես ա.— Ա՛ բալամ, չէ, մին պեն ա մնացալ ասիմ, պրծնիմ։

— Ասե։

Դամուրչին ըսես ա. — Կընձըմընձուկ։

Դերը ուրխնաս ա, թա. — Լհա էտ ա, վեր կա, ըղորմի քու հոր։

Եր ա կընաս, կյաս դըրբըզան թըկես, «Կընձմընձուկ» ծեն տատ

Էտ տըղան ուրան կործը վըրչըցրած տուս ա կյաս, քյինիս տոռնը պընաս, կոժը դերին ծեռքան ինք ունես, պիրիս տոն, միկա կեղծավերոթուն ընես, ետնան ուրան տեսը տենը յոր ունես թա. — Ա՛ դեր, դե շատ շնուրհակալ ըմ, քյինիս ըմ։

Դերը ըսես ա.— Լավ ըս ընես, բալամ, դե կոզի մին պեն չըս ըրալ, ամմա խընթրես ըմ վեր շենըմը ասիս վուչ, թա դերին տանը ղոնաղ ըմ իլալ։

Էտ տըղան կյաս ա դաստի հընգյերուցը կոշտը, տահանք թա. — Պա հինչա՞վ գյիդանք, թա քյեցալ ըս։

Էտ տըղան ըսես ա. — Թա վեր հըվրտաս չըք, քյեցեք դամուրչուն կոշտը հըրցրեք։

Տահանք քյինիս ըն դամուրչուն անա հըրցնես, տըսնաս վեր դուզ ա։ Մին լավ ծուծուղտելավ կյաս ըն քյեփ ընես, ետնան էլ հինչու իլալ ա, շենավը մին փըռես։

www.naregatsi.org



37. ՉԸԿԱՄ ՀԸՐԵՎԱՆԸ

Ինիս ա, չինիս մին մարթ, մին կնեգյ։ Ըտրանց ինիս ա օխտը տղա։ Էտ տղերքյը միշտ քյիս ըն իլալ ուրանց հնգյերունցը կոխկը։ Խուսես ըն, պեն ըն ընես, էլհա ետ տըռաս, կյաս տոն։

Մին օր էլ ըտրանք քյեցալ ըն ուրանց հնգյերունցը կոշտը։ Էտ հնգյերունքը ըսկսալ ըն ուրանց քուվերցը անա խոսիլը, էտ ախպերքյը շատ ըն բիքյիփացալ, ուրանց քուր չի իլալ, վեր ուրանք էլ ուրանց քուվերը անա խոսին, տրանք ըստղան շատ բեքյեփ տուս ըն կյաս, կյաս տոն։

Մարը հրցնըմ ա, տղերանցը, թա. — Բալա, խե՞ իտի բեքեփ ըք։

Մեծ տղան ասում ա. — Ա՛ մար, խե՞ մըեզ էլ չօնինք մին քուր, վեր մունք էլ մեր քուվերը անա խոսինքյ, էտ մինն էլ վեր պիրիս, տղա ինի, մունք տանան կըլնիս ընք յոր ուննական, քյնինքյ։

Էտ տղերանցը մարը էտ մին քանի օրեն ղաթըմը պիտի խոխա պիրեր, տղերքը եր ըն կնաս տսնաս մորը քեփը խարաբ ա։

Ըտրանք մուտունաս ըն մորը ըսես.— Ա՛ մար, դե մունք քյիս ընք վրերսի, վեր տու իտի յըս, խոխան վեր պիրիս, թա ախճիգյ ինի, չխարակը կտինիս կտրեն, թա տղա ինի, կյուլթանը կտինիս, վեր տուս կյանք շենին կլնիսը, հանցու վեր գյիդանք տղա յըս պիրա՞լ, թա ախճիգյ, հանցու վեր գյիդանք, տոն կյալի չինք, թա չէ՞։

Էտ տղերքյը եր ըն կացալ քյեցալ։ Մարը վեր խոխան պիրալ ա, ախճիգյ ա իլալ, չխարակը եր ըն կալալ, տարալ տիրալ կտրեն։ Ուրուգյնատեմ ուրանց հըրևան մին չար պատավ էտ չխարակը եր ա կալալ,

www.naregatsi.org

տեղը կյուլթանը տիրալ։ Էտ տղերքյը վեր եկալ ըն, տըեսալ ուրանց տանը կտրեն կյուլթանը տըրած, էտ օխտը ախպերը ըտեղատ մին էլ ետ ըն տեռալ, կըլոխ եր կալալ, քյեցալ։ Տրանք քյեցալ ըն, քյեցալ, մին ծմակըմ վրեննը կացալ, ուրանց հետե մին ըպրեվի տեղ ճարալ, ըտեղ ըսկսալ ապրիլը։

Տրանք կուճի ախպորը թողալ ըն տանը, ուրանք քյեցալ վըերսի, էլա ուրուդյունը լոխ եկալ ըտեղ հավաք իլալ։

Շատ ա անց կընաս, խրեգյ ա անց կընաս, էտ ախճիգյը մըծընաս ա, ըսկսես ա տունս կյալը, ուրան հնգյերունցու կոխակը քյինիլ կյալը։

Մին օր էլ կոլան յոր ա ունես, քյինիս հնգյերունցու նհետ ճուրը։ Ըտեղ հնգյերունքը մարթը ուրանց ախպորցը անա ըսկսալ ըն խոսիլը։ Էտ ախճիգյը մնացալ ա սուս ըրած, վեչ մին պենա խոսալ չի՞, բըքյըփացալ ա։ Շունտ կոլան ճիրավ լցալ ա, եր կալալ, եկալ տոն։

Տա վեր եկալ ա տոն, սկսալ ա լաց ինիլը, մարը հրցրալ ա, թա. — Բալա, խե՞ լաց ըս ինիս։

Ախճիգյն ասալ ա,— Հո՞ւնց չի լաց ինիմ, մհենգյիս քյեցալ ըմ ճուրը, լոխ ըսկսալ ըն ուրանց ախպորցու անա խոսիլը, յըես էլ մնացալ ըմ ղրաղեն սուս ըրած, հաքլաթ վեր ինձ էլ մին ախպեր ինար, մին խոսկ էլ յըես կըսի, ախեր մին ախպերը հի՞նչ ա, վեր ինի վըե՞չ, վեր պերալ չը՞ս։

Ըտեղ մարը լըցըկումած ըսես ա.— Բալա, դե հի՞նչ անիմ, չարեն աշկը տունս կյա, ախեր քյըեզ մին ախպեր չի իլալ, մինին տեղ օխտըն ա իլալ։ Մհենգյ մինն էլ ա չի կա, լոխ կլոխ ըն եր կալալ, քյեցալ։

Ախճիգյը մորն ըսես ա. — Պա խե յըն քյեցալ։

Մարը ըսկսես ա նաղլ անիլը.— Օխտը ախպերըտ ա իլալ, տրանք էլ քյըեզ նման տունս ըն եկալ ուրանց հնգերունցը կոխակը, հնգերունքը սկսալ ըն ուրանց քուվերցը անա խոսիլը, ուրանց էլ մին քուր չի իլալ, վեր ուրանք էլ ուրանց քվերը անա խոսին, յըես էլ հեն ըմ իլալ քյըզանավ ծանդր, պիտար էտ օրերը տու ինիր։ Ըտրանք իտի քյըեզ նման, բեքյեփ կյաս ըն տոն, հրցնես ըմ ըտրանց անա, ըսես ըն թա. «Դե մըեզ մին քուր չօնինքյ, վեր մունք էլ մեր քվերը անա խոսինքյ, դե էլ վեր ախճիգյ չինի, մունք տանան եր ընք հիննական, կլոխ յոր օնինքյ, քյնինքյ»։ Տրանք վեր վըերսի յըն քյնիս, տըսնաս ըն վեր քյեփս լավ չի։ Ըսես ըն. «Ա՛ մար, դե ըսօր մունք քյիս ընք վըերսի։ Խոխան վեր տղա ինի՞, կյուլթանը կտինիս հըտրեն, ախճիգյ ինի՝ չխարակը, հանցու վեր շենին կլխան եշինքյ,

www.naregatsi.org

տեսնանք ախճիգյ ա՞, թա՞ տղա։ էս ա ասում ընք։ վեր քու ախպորցըտ կյալի վախտն ա տռնաս, էտ մըեր հըրեվան չար պառավը, չխարակեն տեղը կյուրթեն ա տինիս։ էնա քու ախպերք կյաս ըն, տըսնաս կյուրթեն ա, կլոխ ըն յոր ունես, քյիս։ Հալա միչև մհենգյ էլ վեչ մին խաբար չիկա։

էտ մարը վեր իտի լոխ ըսես ա, պրծնես, ախճիգյն ըսես ա.—Դե վեր իտի յա, յըես բեդի քյինիմ իմ ախպորցս ճարիմ։

Մարը տուս ա կյաս, խնթրես, ըղըչես, թա.— Մինաք տու վըս մնացալ, տու վչէ քյիս ըս, մինաք ըմ մնաս, քու հար էլ մըեռած ա։

Ախճիգյը սես ա.— էտ լոխ ինձ հետի վեչ մին պեն չի, յըես պիտի կլոխ յոր օնիմ, քյնիմ։

էտ լոխ ըսես ա, կլոխ յոր ունես, քյիս։

Քյիս ա, քյիս, ընգնես ա էլհա էտ ծըմակըտ։ էտ ծմակումըտ շատ ա քյիս, խրեգյ ա քյիս, տըսնաս ա մին հեռե տեղ, մին ծոխ ա եր ինիս։ էտ ծոխեն յրան ախճիգյը քյիս ա, տուս կյաս ըտեղ։ Ըսկըսես ա տոռնը թակելը։ Մին տղա տոռնը պնաս ա, տսնաս, մին ախճիգյ ըտեղ վրենը կացած։

Հրցնես ա.— Պա տո՞ւ հու վըս, հո՞ մց ըս եկալ, հըսալ ըստեղ։

Ախճիգյն ըսես ա.— Հնգյերումցս նհետ ծըմակն ըմ եկալ, ընդահանց կուրցրալ ըմ, մհենգյ էլ մթնալ ա, գյդաց ըմ հի՞նչ անիմ, լհա էս ծոխեն յրան եկալ ըմ, տուս եկալ ըստեղ։

էտ տղան ըսես ա.— Դե վեր իտի յա, եք մաչ ղոլը։

էտ ախճիգյը քյիս ա մաչղոլ։

Վեր մթնես ա, տսնաս ա, վեր վեց հուքյի էլ եկեն վրեըս ըրած։ Ըտրանք ըսկսես ըն հրցնիլը.— էս հո՞ւ վա՞, հի՞նչ իլլաթ միլլաթ ա, վեր եկալ ա, տուս եկալ ըստեղ։

էտ ախճիգյը ըսկսես ա կլխավը եկածը քաթ ընես։ Վրեր ուրան օխտը ախպեր ա իլալ, տրանց քուր չի իլալ։ Ըտրանք մին օր ուրանց մորն ասալ ըն. «էտ մինն էլ վեր ախճիգյ չի պիրիս, տանան կլոխ ընք յոր ունենական, քյինինք»։ Էնա տրանք քյըեցալ ըն վրեըս, մորն ասալ. «Վեր տղա պիրիս՝ կյուրթեանը կտնիս կտրեն, վեր ախճիգյ պիրիս՝ չխարակը»։ Էն ա իմար ինձ ա պիրիս, եր ա կնաս չխարակը տինիս կտրեն։ Վեր ախպորցուս կյալի վախտըն ա ինիս, մեր հըրեվան չար պառավը չխարակը յոր ա ունես, տեղը կյուրթեանը տինիս։ Ախպերքս վեր կյուրթեանը տըսնաս ըն, էտ ըն տըռնաս, քյինիս։ Էն քյնիլն ա վեր քյինիս ըն։ Վեր յըես մծացալ ըմ, իմ մոր անաս հրցրալ ըմ, վեր խե՞ մին ախպեր չօնիմ, իմ մար ըսկսալ ա էտ լոխ քաթ անելը, վեր քաթ ա ըրալ, պրծալ, ասալ ըմ. «Մամա՛, օզում ա հի՞նչ ինուս

www.naregatsi.org

ա ինի՞, յրես բեդմա քյինիմ իմ ախպորցըս ճարիմ»։ Իմ մար շատ ա լաց իլալ, թա պա յրես մնաս ըմ մինաք, քու հար մեռած, պա յրես էս տանը մինաք հո՞նց անիմ։ Ամմա յրես լսալ չըմ, ասալ ըմ վեր բեդմա ասածս կադարիմ։ Տանան կլնխ ըմ եր կալալ, եկալ ընգալ ըստեղ, էս ծմակը, իմ ախպորցս քթենալի հետե։

Էտ ախճիգյը վեր պատմում ա, պրծնում, տրանք էտ ըխճկանը յոր ըն օրնմ ուրանց կոշտը, սկսըմ ըն լաց ինիլը, վեր տու վըս լհա մեր քուրը, մունք էլ քու ախպերքտ։ Էտ պեները լհա լոխ մեր կլնխն ա եկալ։

Ըտեղ էտ ախճիգյը ուրխնաս ա։

Տրանք ամեն օր տրան թուղես ըն տանը, ուրանք քյիս վրերսի։ Ամմեն դինում տրան պահ ըն տաս, վեր կրակը հընգյցնի վուչ, միշտ կրակը վառած պահե, տոռնը պեց չանի, վեր կյան ասին, ուրանց անա կման։

Տրանք ամեն օր իտի պահ ըն տաս, քյիս վրերսի։

Մին օր էլ ախճիգյը տանը նստած ա ինիս, մարը մենն ա ընգնես, շատ լաց ա ինիս, ըսկսես նղվարվիլը, իտի քունավ ա ընցնես։ Տա վեր քունավ ա ընցնես, բուրդան մին էլ վեր ա կընաս տըսնաս կրակը հանգյածե։ Հի՞նչ անի, հի՞նչ չանի, տուս ա կյաս տոռնը, տես ա յիշիս, տեն ա յիշիս, տսնաս մին հեռե տեղ մին ծուխ ա եր ինիս։ Էտ ծուխեն յրա քյիս ա, քյիս, ախրը հսնես ա էտ ծուխեն։ Տոռնը թիկես ա։ Տոռնը պենաս ըն։ Տըսնաս ա մին պառավ էն ա կրակեն կոխկեն նստած։

Պառավը վեր տրան տըսնաս ա, ըսես ա.— Բա՛լա, շուտ ըրա քյինի, հի՞նչու վըս եկալ, էնա օխտը կլխանի դռվը նստած, վեր եր կենա, քյըեզ ուտլական ա, օխտըինջի օրն ա, վեր էնա քոն։ Ըսօր պըտի եր կենա, շուտ ըրա, ճելլի քյնի։

Էտ ախճիգյը ասըմ ա. — Յըես կրակու վըմ եկալ, մին կրակ տոք, յոր օնիմ, քյինիմ։

Պառավըն ասըմ ա.— Պա հո՞նց տամ, դռվը պողերը հմբարալ ա, ետավ քոն իլալ։

Ախճիգյն ասըմ ա.— Լավ, լհա մին պածե տո,— ետնան ուրան կլխավը եկածը ըսկսես ա նաղլ անիլ։

Պառավը տըսնաս ա, վեր շատ ա ղաչանք ընես, ըխճկանը ըսես ա. — Դե լավ, վեր իտի յա, հենե մկրատը ընդեղ տիրածե, քյնի պեր, պողան կտրիմ քյըեզ տամ։

Էտ ախճիգյը ըսես ա.

— Լավ։

www.naregatsi.org

Քյիս ա մկրատը պիրիս, տաս պըռավենս։ Պառավը պողան կտրես ա, տաս ուրյան, յոր ա ունես քյիս։ Էտ ախճիգյը վեր տռնավը ուզիս ա թա տունս կյա, ջուբումը մին թիլի կծեգյ ա ինիս։ Էտ կծկեն ճոնդը մնացած ա ինիս տռանը տակըմը։ Էտ թիլը հըղըցումը ետ տալավ էտ ախճիգյը կյաս ա տոն։ Վեր կյաս ա հսնես ուրյանց տոնը, կծեգյն էլ պրծնես ա։ Նի յա մննես տոնը, կրակը վռես։

Ախպերքը կյաս ըն տոնը, հաց ըն ուտես, քոն ինիս, էլհա էքսը եր ըն կնաս, քյիս վրերսի։ Քուրը մնաս ա էլհա տանը։

Պատառ անց ա կընաս էտ ախճիգյը քյնալյան ետը, դյավը եր ա կնաս տըսնաս վեր կծկեն ճոնդը էն ա տանը մաչին։ Պառավան հըրցընես ա. — Սա հի՞նչ պյան ա։

Պառավը խուսես չի։

Ըսես ա.— Ըստեղ հո՞ւվ ա եկալ, հո՞ւ չի եկալ,— տյոռնը պնյաս ա, էտ թիլին ճոնդը տսնաս ա, վեր հսնես ա մին օրիշ տեղ։ Յոր ա ունես էտ թիլին ճոնդը կյաս, տունս կյաս էտ օխտը ախպորցու տոնը։

Ախճիգյը պեց չընես։ Դյավը մին էլ ա տյոռնը թըկես, ըսես ա. — Վեր պեց չըս ընես, մաննըտ տունսավը տունս կալ։

Էն ա ինիս քուրը տանը մինյակ նստած։ Տյոռնը թըկես ա, թա պեց ըրա։ Քու ախպերքըտ մին մուտանա յըն քցում մաննըտ։ Էտ ախճիգյը մաննը մկնես ա։ Էտ դյավը սկսես ա էտ ըխճկանը մաննը ծծելը։ Էնքան ծծես ա, վեր ախճիգյը ըշտըփես ա։ Դյավը քյիս ա։ Ախպերքը կյաս ըն տյոռնը պինյաս, նի մննես, տսնաս ուրյանց քուրը ըշտափած։

Ետ ըն պիրիս, հրցնես ըն, թա.— Հո՞ւնց ա իլալ։

Քուրը պտմես ա։ Ախպերքը կլխու յըն ընգնես, վեր էտ դյավին պեներն ա։

Ըստեղ տրանք մին պեն ըն սրքես, վեր դյավին կանչին, սպանին։

Յոր ըն ունես օխտը ղղղան ճուր իփըցնես, մին մեծ վեր կտրես մղակեն ըռաշկին։ Դյավին ծեն ըն տաս միթամ ղոնաղ, դյավը կյաս ա, լհյա կարպետը կոխելիս կլխեն յրան ընգնես ա վերեն մաչը։ Ախպերքյը էտ օխտը ղղղան իփած ճուրը ըծես ըն կլխեն։ Վեղըն էլ կլխավը յրա տաս, ըստըկցնես։ Կյարյունք ա կյաս։ Էտ ախճիգյն ուզես ա լավ ժնգյալավ հաց թխես։ Էտ դյավին ապրած տեղը խե լավ ժանգյալ ա ինիս։ Քըղես ա կուտապ թխես։ Ուրուգյունը ախպերքյը կյաս ըն, ժընգյալավ հաց ա տաս ախպորցը։ Մին էլ տըսնաս ա վեր ախպերքյը վեչխար ըն տռնաս, օխտըն էլ լոխ վեչխար։ Քուրը լաց ա ընիս, գյիդյաս չի, թա հինչ անես։ Ճարը կըտրած ամուն օր օխտը վեչխարնեն առաչն ըրած տնես ա ըրըծցնես, լաց ինիլավ, էլա պիրիս տոն։

www.naregatsi.org

Մին օր էլ վեր իտի լաց ինիլավ էտ վեչխարնեն տընես ա պըհես, մին ղուշ տանաս ա վեր էտ ախճիգյը լաց ա ինիս, ղուշը լուզու առած հրցնես ա.— Ա՛յ ախճիգյ, խե՞ յըս լաց ինիս։

Էտ ախճիգյը կլխավը եկածը պտմես ա էտ ղուշեն։ Էտ ղուշը տրան մին թեփուռ ա տաս, ըսես.

— Էտ թեփուռը տար թուչի ճըրուիմը, քսե ամման մինին աշկերը, սընննական ըն։

Էտ ախճիգյը էտ թեփուռը յոր ա ունես, կյաս տոն։ Էտ թեփուռը թուչիս ա, քսիս վեչխարներեն աշկերը։ Ըտրանք մարթ ըն տըռնաս։

Քուրը սկսես ա ուրխանալը, վեր ուրան ախպերքը սղացալ ըն, Ախպերքը ըսես ըն քուվերը.—Դե վեր իտի յա, եկեք քյնինքյ մեր ծնողներեն կոխկը։

Ըտրանք եր ըն կընաս, քյիս։ Քյիս ըն, քյիս տուս կյաս ուրանց տոնը, տըսնաս մարը պըռավածե։

Էտ պառավը հրցնես ա.— Բալա, պա տուք հո՞ւ վըքե։— Էտ տղեքյը ըսկսես ըն պատմիլը։ Էտ պառավըն էլ ուրան կլխավըն անցկացածն ա պըտմես։ Ըստեղ մարը կլխի յա ընգնես, վեր ըտրանք ուրան տղեքյը նան ախճիգյն ը՞ն։ Տրանք էլ կլխի յըն ընգնես, վեր տա ուրանց մարըն ա՞։ Ըտրանա ետը լոխ մին տեղ սիրավ, միշև ուրանց գյանքեն վերչը ըպրես ըն։

Ծրգինքան իրեք խընձոր ա եր ընգնիս. մինը՝ ըսողեն, մինը՝ կյրողեն, մինն էլ՝ լըսողեն։

www.naregatsi.org



38. ՔԱԼԱԳՅԲԱԶՆԵՆ

Մհետե մին մարթու տոն տունընաս ա։ Մին քշեր հաճին էտ մարթտ եր ա կնաս, էրկու եզն ա ինիս, մինը յոր ա ունես, տնես բազարը, թա ծախե։ Իրեք քյոսա ունրունր ըն ընգես, վեր եզնը դնու կյինավ ինքյ օնին։

Մին քյոսա մի խիլլա շրտու-մորտե յա ընես, շրտու-մորտե, ախրը կյաս էտ մարթիտ ըսես.— Ա՛ հընգեր, էտ դանան հի՞նչավ ըս տաս։

Համին էտ մարթտ մին խիլլա մտածես ա, մտածես, ըսես. — Պա, յըես եզն ըմ պերա՞լ, եզնեն դանան թողալ ըմ կյումումը, էս խե՞ իտի յա ասըմ։

Մի խիլլի վախտ անց, քյոսեն էն մին հնգերը տսնաս ա, վեր ուաշկենը խեր չըրավ, ինքյը կյաս ա ժուլիկվաչի ըսես. — Ա՛ հընգեր, էտ դանան հի՞նչավ ըս տաս, հո՞ ընց ըս տաս։

Էտ մարթտ առուն շըշկլվես ա, գյիդաս չի, թա հինչ անե, ըտրա ջողաբը կրես չի տա, ղայամիշ ա ինիս, մնաս դիքյ վրեննը։

Մին խիլլա կնալանը ետը զինքյը կլոխն ա հվրքես, ըսկսես ինքյը-ինքյը քնենքյ անելը, թա տրեսնա դա՞նա յա պերալ բազար, թա եզնը։

Հաճին էտ վախտըտ քյոսին իրեքինջի հընգերը կյաս ա, ըսես. — Դայի, էտ բիժին հինչա՞վ կտաս, յըես մունշտաքրի պիրիմ, վեր ծախես։

www.naregatsi.org

էս դռնումըս էտ մարթը առուն դուղն ասած շշկլվես ա։

Պատառ կնաս ա, ինքյն-ինքյը մտածես, ըսես ա.— Բալի շիլ ըմ ընդալ, դանան պերալ եզանը տեղ։

Պատառ շրտը-մորտի յա ընես, վերչը էս մրեծ եզնը դնու կյինալ տաս քյունեն։ Փուլըն էլ խրջիս չի, իրեսեն ճիրայվը ծլիս ա, տինիս չըբռումը, ընգնես հղեն, կիճի-կիճի բիդի շենը կյաս։ Ամմա հղեցը կյաս տեղը, տեղը տեղ չի տաս, օժով ընգնես ա տոն։

Մին խիլլա վախտ ըսկի ըտրա մհար խուսես չի։ Կնեգյը վրետները լվընաս ա, փթրոկ ա ինիս ըրած, մին աման նի յա քցես, տաս մարթենն։ Մարթը ուտես ա, նի մննես տրեղը։ Ամմա տրեղմը քոնը տնես չի, մըտածմունքը ըտրան վեր ա կուխես։

Ախրը էտ մարթտ հալա հինչու ըրալ ա, ըրալ չի, էտ ուրան տրեղը, կնգանը յրան էլ կղնվես ա, ըսես.— Ճրաքյը նի կցրու, քյինի տես դանան ըմ տարալ բազար, թա եզնը։

Կնեգյը լաչառ-հայասըզեն մինն ա ինիս, էտ լհա վեր մարթը էտ խոսկը ըսես ա, ըսկսես ա ծվծվալը. — Հա՛ քու մար, հա՛ քու հար, տրես հալա՛, հո՞ւնց թա դանան ըմ տարալ, թա՞ եզնը, շոնշան տղա, էն մեծ եզնը դանու կյինալ ծախալ ըս, եկա՛լ, ըսօրե աշխատանքիտ անըմը շատ ա իլա՛լ, քյեցալ ըս բազար ինձ հետե դրեյի կյործա՛լ։

Կնեգյն էլ ա մնաս շշկլված։

Մին խիլլի վախտ մտածես ա, վերչը ճրաքյը նի կցնես, քյիս յշիս, տրեսնա բալքյաս շիլ ա ընգալ մարթը, դանան տարալ բազար։

Էտ վեր քյինաս ա կյումը, տրսնաս ա եզնն ա տարալ, դուզ վեր դուզ տարալ ա դնու կյինալ տվալ, եկալ, թուխթումնը թուխթիշ ա ինիս։ Կյաս ա, տրեղը տրեղ չի տաս, նի յա մըննես տրեղը քոնը տնես չի՛, թա քոն ինի՛։

Քշերը շընըմուտտաս ըրըզնե յա տրսնաս։

Մին թաՀրալ մարթը կնեգյ էտ քշեր լուսըցնես ըն։

Ըռուբանան մարթը եր ա կրնաս, խելքը կլոխը հվրքես, տսնաս, վեր ըսկի ուրան ըրածը մին պեն չի՛, մրթըվարի չի՛։ Ըսկսես ա կրնդանը քաթ աննելը, թա հո՞ւնց ա պտահալ։

Ըսես ա.— Տրեռած պենին հետան խոսիլ չըն, հինչու տրեռալ ա, տրեռալ ա, պրծալ.—կնգանը ըսես ա.—Փուլը խարջիլ չպիտինքյ, պահիլ պիտինքյ, բալի կարիմ համին էտ քյունեննուն քալագյ կյամ։

Էն մին օրը եր ա կնաս, քյունեննուն տված փուլը յոր ունես, հղե ընիս դիբի բազարը։ Վեր հաննես ա բազարը, տսնաս ա, համին քյունեննեն հեն ըն մին քյավթաու ծի տուս կալած բազարը, թա ծա-

www.naregatsi.org

խին։ Մին խիլլի կնաս ա, համ էլ մտծես, թա հունց քյալաթդյ կյա էտ շան տղրոցը։ Վերչը էտ մարթտ ըսես ա, վեր բիդի քյալաթդյ կյա։

Մուտունաս ա ըտրանց նեստա, ըսես. — էտ քոռակտ հինչա՞վ կտաք, հո՞ւնց կտաք։

Քյունեննեն, վեր տսնաս ըն էտ մուշտարին շատ ա ճնուր, ուրխընաս ըն։ Ըսես ըն. — Պա էս քյավթառ ծիս, վեր սկի բաշիր չընես, թա կյորի օտե, հո՞ւնց լավ մարթ ա, վեր քուռակու կյինավ ինքյ ա ունես։

Էտ մարթտ դնեն հախեն նստա մին խիլլա խրեգյ տաս ա, ծին ինքյ ունես, մնացած փուլն էլ տաս ա ուանգյ ինքյ օնես, տնես։

Մին հետու տեղ, մին յաբանա դունդում, ծին կպես ա, ուանգյ տաս, եր օնես տնես բազար։

Քյունեննեն ուզիս ըն թազա լավ ծին ինքյ օնեն։

Շոռ ըն տաս, շոռ, կլոխ չըն ընգնես, թա ուանգյ տված ծին ուրանց քյավթառ ծին ա։ Ըտրանք իրեք տակ փուլ ըն տաս, ծին իքյ ունես։

Էտ մարթտ էլ փուլը յոր ա ունես, դիբի շենը փխչիս։

Քյունեննեն ծին տնես ըն կպես, կյորեն քցես առաշկը։ Մին խիլլա վախտ կնաս ըն, ետնան քյիս տսնաս կյորեն հունցը առաչ ըն քցալ, ընդի, ծին պռոշն էլ ա նի չի տվա՞լ։

Հաամին էտ վախթտ կլա՛խ ըն ընգնես, վեր էտ մարթտ ուրանց քյալաթդյ ա եկալ։ Ըտրանք մալահաթ ըն ընես, վեր հնգեր-հնգեր քյինին համին էտ մարթտ սպանեն, փուլը յոր օնեն։

Կնեգյը ըսկնաս ա, վեր կյլական ըն մարթին ըսպանեն, մարթին կնդ-կնդ պտմես ա։

Մարթը վեր անջուկ ա ունես, պրծնես, եր ա կնաս, քյիս ծմական էրկու ըլըբաստրակ փռնիս, պիրիս, մինը կրըվաթեն վրեննան, կպես, մինը յոր ունես, քյիս հնձ։

Քյունեննեն կյաս ըն, ըտրա կնգանան հըրցնես։ Կնեգյըն ըսես ա, վեր մարթը հեն ա հունձատեղ։ Հղեն նշանց ա տաս, ըտրանք քյիս ըն։ Վեր տեղ ըն նի հաննես, էտ մարթտ ըսես ըն. — Քյրեղ ըսպննական ըք, մեր տված փուլը մրեզ տոր։

Էտ մարթտ ըսես ա. — Պատառ դինջացեք, հաց կերեք, քշերս էլ քոն կինիք, ետնան էլ հինչ կանիք-կանիք։ — Ուրան նհետ տարած ըլբաստրակեն մինին ըսես ա. «Քյինի կնգանս ասե, հաց պըդրաստե, տեղ շինի»։

www.naregatsi.org

Կտի յա ըսես, ըլըբաստրակը պեց թուղես։ Ըլըբաստրակը պեց ա ընգնիս, թլակա պըրծածու նըման յաբանա դուզնըվեր փխչիս։

Ուրուգյունան չախը ըտրանք կյաս ըն տոն, տսնաս կնեգյը հացը խուրուգյնեն հրզըրած, մնաս ըն մաթ մնացած, վեր տեսնաս ըն ըլըբաստրակը կրըվաթան կապած։ Կլոխ չըն ընգնես, գյիդաս ըն, թա համին ըլըբաստրակն ա։ Ըսես ըն. — Հինչքան փուլ ուզիս ըս, տանք, թաքի էտ ափաթ պենըտ մրեզ յրա ծախիս։

Քյուանենեն մին խիլլի փուլ ըն տաս, ըլըբաստրակը յոր օնես, դիբի ուրաննց տոն հղե ինիս։ Հղենեի ըլըբաստրակը պեց ըն թողես, թա խաբար տանե, տանան հաց ըղարկեն։ Ըլըբաստրակը մին տըղներր ճղես ա, ծըլկես։ Ըտրանք ըսես ըն, թա տուզնըթունան մրեռնին, վեր կյաս ըն տըսնաս հացը պադրաստ չի՞։

Քյուանենեն մին էլ ըն հզրվես, վեր կյան էտ մարթետ ըսպանին։ էտ մարթետ, վեր ըսկնաս ա, մին հավ ա փռնես մուրթես, ճղմաղենքյը ըռնավ լցնես, քցես կնգանը ճիտը, համ էլ կնգանը սվրցնես ա, թա վեր ինքը ասե, էս ըրա, էն ըրա, հանցու վեր կնեգյը ղասիդ տեղան ետրետե տուրուր կյաս։

Քյուանենեն կյաս ըն ըսես. — Քյրեզ ըսպնական ընք, տու մրեզ խաբափալ ըս։

էտ մարթետ ըսես ա. — Նկեքյ հաց օտինք, զուրուց անինքյ, ետավ։

Կնգանը հըրըմըյես ա վեր փլավ շինի, ճաշ խփի։ Կնեգյը ղասիդ տեղան ետրետե յա տուրուր կյաս։ էտ վախտետ էտ մարթետ ղամաճան տըննես ա, քսիս կնգանը վզին, ճղմաղենքյը կտրես, կնեգյը խրուխրուցնես ա, ստըսոտ մրոնես։

էտ մարթետ մին թուբաղյ ա յոր օնես, տյնես կնգանը վզին փչես, կնեգյը լոք ա տաս, եր կնաս։

Քյուանենեն մաթն ըն մնաս։ Ըսես ըն. — Հինչքան ուզես ըս փուլ կտանք, թաքյ լհա էտ թուբաղյըտ մրեզ տաս։

Փող ըն տաս, թուբաղյը յոր ունես տնես։ Կիճի հնգյերը տնես ա կնգանը վեզը կտրես, էտ թուբաղյավըտ փչես, ամմա կնեգյը եր չի կնաս։ էտ մտածես ա, ըսես. «Խե՛ բիդի յըես իմ կնգանս ըսպանիմ, իմ հնգյերս ըսպանի վեչ»։ Թուբաղյը տաս ա հնգերեն, ըզետ տնես ա կնգանը ըսպնես, թուբաղյը տնիս վզեն, փչես։ Կնեգյը յեր չի կընաս։

էտ էլ էն մինին նման մտածես ա, ըսես. «Խե՛ բիդի յըես իմ կընգանըս սպանիմ, էն մին հնգերս ուրան կնգանը սպանե վեչ»։

Թուբաղյը տաս ա էն մին հընգերեն, էտ հընգերտ տնեսա ուրան կնգանը ըսպնես, թուբաղյին լուլյավը փչես, կնեգյը ետ չի կյաս։

www.naregatsi.org

Քյոնսենեն կյաս ըն ուրուր պտմես, ըսես. — Էս դեռնումն էլ էտ մարթըտ մըեզ լավ քյալեգյ եկավ։

Ըտրանք մալըհաթ ըն ընես, վեր քյինին, էտ մարթեն ըսպանեն։ Էտ մարթտ էլ, վեր ըսկնաս ա, կյաս ա ուրեն բխշումը մին փոս ա փորես, նի մննես մեչը, կնգանը ըսես. — Ա՛ կընեգյ, վեր կյան հրցնեն, կասես մըեռալ ա։

Քյոնսենեն կյաս ըն հրցնես, կնեգյն ըսես ա. — Մեռալ ա։

Ըտրանք փոխըփեշմեն ետ ըն տունաս, քյիս ուրենց տները։ Էտ մարթըտ էլ տուն ա կյաս, ըսկսես ըն մինտեղ լավ ապրելը։

Ժողովուրթեն խոսկը ըտրա հետե ըսես ա. «Վեր կտրե, խոր կտրե, տու վրս մեչը ընգլականն»։

www.naregatsi.org



39. ԲԱԴԱՐԱՔՅԸ

Մըհետե մին մարթ հեն ա ըլլալ մին տեղավ քյիս։ Տըեսալ ա հեն ըն ըտեղ մին տեղ բաղարաքյ ընես։ Հաւմին էտ բաղարաքյ անողը մին հարուստ մարթ ա ինիս, ըտրա հաւրը մեռած ա ինիս։

Էտ մարթտ վեր մտունաս ա, հաւմին էտ բաղարաքյին տարը ըտրան ըսես ա. — Տու վէլ բաղարաքյին մասնակցե։

Էտ մարթտ էլ քյիս ա բաղարաքյին մասնակցե։ Վեր բաղարաքյը պրծնես ա, լոխ հվքվես ըն, թա քյնին տոն, էտ մարթտ էլ ա եր կնաս, թա հղե ինի։

Բաղարաքյին տարը ծեն ա տաս ըտրան, տանես կոխկը։

Մին խիլլի վախտ ըտրա նհետ հըրցըփորց ա ընես, վերչը վեր պրծնես ա, պրզվես ա, վեր ղոնաղը շենին խլնք-խելունք մարթկանցան մինն ա։

Բդրաքյեն տարը ըսես ա. — Լավ, վեր խելունք ըս, ասե տեսնամ իմ հաւր տրախտըն ա քյեցալ, թա տժոխկը։

Էտ մարթտ ըսես ա. — Ըզետ ընդի պեն ա, վեր Ղարաբաղու ճիրաւն խմիմ վեչ, կարիլ չըմ ասիմ։

Բդրըքյատարը քյիս ա կուպրունը պտռես, տանաս մաչին արաղը պրծած։

Մին պուշ մարթ ա ըղրկիս, քյինի տանան արաղ պիրի։ Մին խիլլի վախտ անց ըրաղու քյեցած մարթը կյաս ա շենը, մին սհաթուսը արաղը յոր ունես, քյիս։

Բդրաքյին տարը ըրաղին բոթուլը յոր ա ունես, մին ստաքան

www.naregatsi.org

ըծես, տաս համին էտ խելունք մարթիտ, ըսես. — Խմե, ամմա բեդի դուղն ասիս, թա իմ հաւր տըրախտը քյեցա՞վ, թա տըժոխկը։

Էտ մարթը խմես ա, մին խիլլի շուլի-մուլի ընես, հալա խուսես չի։ Խելունքը ժուլիգյ մարթ ա ինիս, էտ ուրուր ա ընես ջողաբը, ըսէս. — Հղե յա իլաւ, դիբի տըրախտը քյինի՞։

Բդրաքյեն մեծը ըսես ա. — Ջհաննամը-գյուղը, մին էլ ըմ ա՛րաղ տըլական, թաքյ լհա դուղն ասի, թա ըշտեղ քյեցա՞վ։

Մին ստաքան էլ ըծես ա, տաս, էտ մարթտ խմես ա, պրծնես, մին խիլլա՛ մըտըծես բըդըրըքյատուրուչը ջողաբը տաս. — Նի յա հսաւ, հալա գյիդաս չըմ, վեր հըղրցավ ա քյըեցալ, բդի տժոխկը տանող հըղրցա՛վը, թա՞ բդի տրախտը տանող հըղրցավը։

Բդրաքյատարը մին ստաքան էլ ա ըծես, տաս, հանցվեր գյիդա՛, թա հա՛րը շտեղ քյեցավ։

Խելունքը խմես ա, պրծնես, ըսես. — Ըկալ ա, հեն ա մին փադ եր կալած մեհետ տժոխկեն տըռանըն ա թխես, մեհետ տրախտեն։

Բդրաքյատարը մին ստաքան էլ ա ըծես, տաս, համ էլ հըրցնես. — Բա հի՞նչ տեռավ, իտի շտեղ քյեցավ։

Խելունքը ետ ա տըռնաս, ըսես. — Դե հալա՛ տըռները պեցալ չըն, ամմա ինքյը պատեն յըռա վեննը կացած ա, գյիդում չի, թա վե՞ր թրա՛փավ լոք տա։

Բդրըքյատարը ըսես ա. — Վնաս չօնէ, մին ստաքան էլ կտամ, թաքյ լհա՛ դուղն ասես, թա շտեղ քյեցավ։

Հը՛, հի՞նչ տեռավ, տըժոխկըն ընգավ, թա տրախտը։

Վերչը մին ստաքան էլ ա տաս։ Խելունքը խմես ա, ետնան ըսես. — Լոք տվավ, թրմփոցը ըսկացե, ամմա թա գյիդում չըմ տժոխկը ընգա՞վ, թա տրախտը։

Խելուքը մին ստաքան արաղ էլ ա խմես, ըսես. — Տրախտը ընգավ։

Էտ մարթտ պիրիս ա նորու բադարաքյ սրքես, ժողովուրթ կընչես, ըսես.— Իմ հաւր տրախտն ա ընգալ, ա՛ ժողովուրթ, քյեփ ըրեքյ։ Էտ մարթիտ մին լավ պադեվ ա տաս։

Էտ մարթտ եր ա կնաս, քյինիս ուրանց տոն, կնգանը քաթ ընես, վեր իտի քյալագյ ա եկալ։

Մին խիլլա վախտ ընցնես ա, մարթըկնեգյ լավ ըպրես ըն։

Մին օր կնեգյը հեն ա ինիս տանը, տըեսնաս ա մին մարթ եկու։

Տուս ա կյաս տոռնը, յիշիս, էտ անծանոթ մարթտ ըսես ա. — Ա՛ կնեգյ, մարթտ տանն ա՞։

— Տանը չի, ախպեր։

www.naregatsi.org

— Դե, քյինի ասե կյա տոն, նհետը կործ օնիմ, հարկավեր ա։

Կնեգյը մին խըխու ղրկես ա մարթին հետան։ Մարթը վեր հըսկնաս ա պլուճիկնեն ուրուր ա տաս, գյիդաս ա, վեր էտ նաղլետ քամակը լավ չի իննական։ Վերչը կյաս ա, տսնաս համին էտ բդրըքյատարը։

Էտ մարթտ ըսես ա. — Ըրազումս տեսալ ըմ հաըս եկած, շատ բեքյեփ, նհետս մին խիլլի վախտ խոսալ չի։ Ախրը մին խիլլի վախտ խոսավ կնալանը ետը, օշը տեսն ա ըրալ, լաց ընելավ ասալ, վեր ընգալ ա տժոխկը, ըտեղ էլ ուրան դինջոթըն չըն տաս, գյիդաս չի, թա հո՞ւնց անե, վեր ընգնե տրախտը։

Էտ խելուքը ըսես ա.— Ըստեղ ասրաղ բդի տուրուր կյա, վեր կարիմ մին պեն ասիմ։

Էտ մարթտ ճարը կտրած եր ա կնաս, քյիս, մին կոլա արաղ յոր ունես, կյաս։ Մին ստաքան ըծես, տաս խելուքին։

Խելուքը ըսես ա. — Վեր խմեցե, քու հաըր տեսե. շատ տխուր ար, ըսեցե եք ծեռքատ փոնիմ, տանիմ տրախտը, օզից վեչ, լաց իլավ։ Ըտրանա ետը խոսից վեչ։

Ընդրանա ետը էտ խելուքտ մին ստաքան էլ ա խմես, ըսես. — Քու հաըր տրախտան մուտացավ, ամմա վըննը տափը թակից, թա յըես քյինաիմ ըմ քյոհնա տըեղա։

Մին ստաքան էլ խմելանը ետը, խելունքն ասից. — Վերչը լավ կինի, վերչը տրախտը կընգընի՞։

Էտ քյուհի մարթը հվըտաս ա։ Մհենգյ լոխչին հաճողվես չի, իտի պեներ անին։ Ժողովուրթը ըսես ա. «Մերը սվերը կօտե»։



www.naregatsi.org



40. ԿՅՈՒՔՅՈՒՆ ՇԱՎԹԱԼԸ

Ինչս ա, չինչս մին մարթ։ Ըտրան ինչս ա մին սուրու խոխեքյ։ Մին տարե սով ա ընգնես։ Տա եր ա կնաս մին էրկու չվալ յոր ունես, քյինիս, թա դաշն պիրի, խոխեքյը պահե։

Շատ ա քյինիս, թա խրեգյ, էտ գյիդվաշ չի, առաչը տուս ա կյաս մին բախճա։ Ձեշիս ա, տսնաս շաւվթալոտը լիգյը։ Ուզիս ա, թա չափարը կուտրատե, քաղե, բխչումը մին պառավ ա ինիս։

Էտ պառավը ըտրան վեր տսնաս ա, ծեն ա տաս կոշտը, թա. — Ախպեր, տու հըղրցու մարթ ըս, ամմա էն ա մթնալ ա, մըհեն-գյաս տենը հի՞շտեղ բեդմա քյինիս, եք էս րուգունը շաւվթալոտը պահե, յըես քյինիմ տոն, էքյուց ուռուբանա հացտ նան ճուրըտ յոր օնիմ, կյամ, ծառերը քաղինքյ, տննական ըմ ծախիմ, հիշքան ուզիս ըս, կեր։

Էտ մարթը ռազի յա կըենըմ, քյինիս ա բախճան, պառավը ըրխյին քյինիս ա տոն։

Կյուքյին ցիրեկավ աշկա ըծես ծուերեն, տսնաս ա վե՞րն ա լաւ, վերն ա փիս։ Քշերը եր ա կնաս ծառերը քղես, էրկու չվալը լըցնես, էշին պըռնես, քյինիս տոն։ Խոխեքյը ըրմնաս ըն, թա էս հինչքան մեծ-մեծ դաշն ա, ամմա Կյուքյին ըսես ա. — Դաշն չի, շաւվթալ ա, կերեքյ։

Խոխեքյը ուտես ըն, տսնաս մաչին կորեզ էլ օնե, վիս ըն օտին, ըսես ըն. — Էս հի՞նչ պեն ա, վեր ըստի յա։— Ախեր ըտրանց տեղերը

www.naregatsi.org

շավթիալի ծառեր չի վսնես, ըտրա դիրդին էլ ըրմնալի յա ուրինց հետե։

Տնացեքյ հրցնես ըն, թա.— Պա պառավը քյըեզ հո՞ւնց դավերյա ըրավ բախճան։

Կյուքյին սկսես ա նաղլ անելը.— Վեր նի մտե բախճան, պառավը պերավ միկա ինձ տվավ, թա կեր։ Ըր կալի տրի պերինըմըս, մըն էլ վեր քցեցե, կասիմ. «Ըստի պենը մունք վեր օտինք, յա կմեռնինքյ, յա կպլանանք։ Պառավ, յըես տի պենները օտել չըմ, հալա մաչին էս ա մին պեն էլ կա, վսես ըմ տրաքե, ինձ սպանե, ծեռքըս էլ նի չըմ տա՞լ»։ Պառավը հվտացալ ա, դավերյա ըրալ, ինքյը ըրխչին քյըեցալ տոն, յըես էլ քմակեն եր ըմ կացալ, քաղալ, եկալ մեր տոն։

Պառավը ուտուբճանա կյաս ա, տսնաս վեչ կյուքյի կա, վեչ էլ շավթիալ։ Պըլընաս ա, սկսես ծըվծըվալը, ամմա դե պենը պենեն ընցած ա ինիս, ճարը կտրես ա, սուս ա ընես։



www.naregatsi.org



41. ԱՐՋԻՆ ՏԸՂԱՆ

Իլալ ա, չիլալ, մին թաքավեր ա իլալ։ Էս թաքավերեն մին մադար ախճիղյ ա իլալ։ Ախճիղյը վեչ մին տեղ մինաչ քյինալիս չի իլալ։

Մին օր հինգերունցը նհետ քյինամ ա, վեր բաղերը ման կյար ա ընում ծառան, թա խընձոր քաղի, էտ ղաթումը մին արչ ա կյամ։

Լոխ ըխճկերքը փախչում ըն։ Էտ ախճիղյը շատ ա վախում, վեր արչին տեսնում ա, ծառան վեր ա ընգնում։ Արչը շլակում ա, փախչում դիբի ուրան պունը։

Էտ ախճիղյը արչին քշտեն շատ ա կենում, թա խրեղյ ա կենում, մին տղա յա ինում։ Էտ տըղան վեչ թա օրերավ ա մըծանում, այլ ժամերավ ա մըծանում։

Վեր մըծանում ա, խելքը կտրում ա, վեր ուրան մարը կյերի յա արչին քշտեն։

Մին օր, վեր արչը տուն ա կյամ, քյինում վըերսի, էտ կնեգյը նան ուրան տղան ճընապար ըն ընգյնում, վեր քյինան ուրանց տոն։ Շատ ըն քյինում, թա խրեղյ ըն քյինում, մին էլ ետ ըն եղում, տըեսնում արչը կյամ ա, հունց ա կյա՞մ, աստված հետու պահե՞։

Տղան մորն ասում ա. — Վախիս վե՞չ։

Արչը վեր կյամ ա, մուտանում, տղան արչին սպանում ա։ Մարըտղա շարունակում ըն ուրանց ճընապարը։ Վեր քաղաքան մուտանում ըն, սաղ ժողովուրթը աշկալուսանք ըն տամ թաքավե-

www.naregatsi.org

րեն, ասըմ թաքավերըն ապրած կըենա, ախճիգյտ կյամ ա, մին տղա հետան։

Վերչապես մարըտղա հըսնում ըն թաքավերեն տոնը։ Թաքավերը շատ ա ուրխանում։

Մին քանի ժամանը ետը տղան տուս ա կյամ հայաթումը խաղ անե։ Խաղ անելիս խըխոցը կլխընեն կըտրում ա, թող անում։

Էս վեր ժողովուրթը տեսնում ա, կյամ ա թաքավերեն կնգանը ասում։ Կընեգյն էլ մարթին ա ասում։

Թաքավերը մտածում ա, թա հո՞ւնց անե, վեր տրան կուրցնե։ Ըր ա կենում տրան ղարկում փադու մին ինդի ծմակ, ըշտեղ վեր կյուլեր, ջանավարնի կան։ Մին խոսկավ ընդեղ քյինողը ետ չի կյամ։ Էտ տղան արաբան լըծում ա եզներավը, ճընապարվում։ Վերչապես քյինում ա, տեղ հըսնում, մին արաբա փայդ անում, վեր եզինքը լծե կյա, տեսնում ա եզանը մինը կյուլերը կերած։ Ցրա յա հըսնում, մին ջանավար փռնում, պերում եզանը տրեղը լծում, ճընապարվում դիբի ուրեն քաղաքը։

Թաքավերը վեր տեսնում ա, շատ ա զարմանում, վեր սաղ սալամաթ կըրացալ ա կյա։

Ժողովուրթը վեր ջանավարին տրեսնում ա, շատ ա վախում։

Կյամ ըն թաքավերին ղանչանք անում։ Թաքավերը էտ տղեն խնթրում ա, վեր ետ տանե ծմակումը ջանավարը պեց թողե։ Էտ տղան յոր ա օնում, տանում, թա թողե ծմակումը։ Էս դռնըմ թաքավերը նան ախճիգյը մտածում ըն, թա սաղ սալամաթ էլհա կյալու յա, մին օրիշ հնար ճարին։

Մարը որոշում ա, ասում.— Ցրես սուտ-սուտ հիվանդանամ, ասելու վա. «Հի՞նչ ըս օզում», յըես էլ կասիմ. «Ջուսմրուտ ղուշին ծուն»։ Տրան հետե էլ կքյինի, կմնա ընդեղ, մունք էլ կպրծնինք ընդրանա։

Տղան վեր կյամ ա, մարը սուտ-սուտ տեղան տնքտնքում ա։

Տղան ասում ա. — Հի՞նչ ա պտահալ։

Մարն ասում ա.— Հիվանդացալ ըմ։

Տղան ասում ա. — Շտաՙհրտ հի՞նչի յա տամ։

Մարը ետ ա տեռնում, թա. — Ջուսմրուտ ղուշեն ծվան մինը ինի օտիմ, կլըվանամ։

Տղան ասում ա.

— Պա էտ ա՞ մին պե՞ն, էս ահաթիս քյինիմ հշտղա վերե յա ճարիմ, պիրիմ։

Տղան մին քանի հաց ա յոր օնում, հըղե ընգնում։

www.naregatsi.org

Շատ ա քյինում, խրեգյ ա քյինում, շատ նան խրեգյը աստուծ կգյիդա, մին էլ տրեսնում ա մին մարթ իրեք ծառ ծեռքին, խըղըցնում ա։

Էտ տղան շատ ա զարմանում, ասում. — Ա՛յ մարթ, էտ ծառը խե՞ իտի յըս անում։

Էտ մարթն ասում ա. — Լըսալ ըմ էն քաջ տղին անա, ըստի յըմ անըմ, եք կըռեվ անինքյ, թա յըես հաղտի՞մ, յըես շտեղ քյինիմ, տուինձ նհետ կյաս, թա տու հաղտիս, տու շտեղ քյինիս, յըես քյըեզ նհետ կյամ։

Ստեղ կըռեվ ըն անըմ։ Քաջ տղան հաղտում ա։ Էս մարթը ըտրա նհետ մին տրեղ շարունակում ա ճըրնապարը։

Շատ ըն քյինում, թա խրեգյ ըն քյինում, մին էլ ըն տրեսնում մին մարթ ճըղացու քարեր ծեռքեն խըղըցնում ա։ Արչին տըղան ըստրա նհետ էլ ա համին էն պայմանավը կըռեվ անում, հաղտում։ Էս մարթին էլ նհետը յոր օնըմ, քյինում։

Քյինում ըն, քյինում, մին էլ ըն տրեսնում, մին մարթ, մին խիլլա ծտեր առաչըն ըրած տես ա քշում, տեն ա քշում։ Էլա համին էն պայմանավը արչին տըղան ըստրա նհետ էլ ա կըռեվ անում, ինքյը հաղտում։

Չորս հնգյեր մինտեղ շարունակում ըն ուրանց հրղեն։

Քյինում ըն, քյինում, շատ ըն քյինում, թա խրեգյ ըն քյինում, հըսնում ըն մին ծմակ։ Էտ ծմակում մին կուճուր տոն ա ինում, նի յըն մննում էտ տոնը, տեսնում տերտակ։ Որոշում ըն չորս հոգի էտ տանը կենան, հերթավ քյինին վրերսի։ Մեքյը վեր տամ ա, վեր յուսանում ա, իրեք հոգի քյինում ըն վրերսի, մինը տանը կենում ա։ Էտ տանը կենողը տոնը հրվաքում ա, սըրփում, խորագյը պադրաստում, ամեն հինչը պադրաստում, որ հնգյերունքը պիտի կյան, օտին։

Մին էլ ա տրեսնում մին օշափ եկավ, ասից.— Խորագյ տոր օտիմ։

Էտ հնգյերը մին տալերք խորագյ ա քցում, տամ ուրան, թա օտե։

Օտում ա, պրծնում, թա. — Տա իմ պենս չի, ղղղանը տեսը տոր։

Տղան վախում ա։ Օշափը ղղղանը առաչին ա տինում, օտում, պրծնում, քյինում։ Տղան թաղաղան սկսում ա խորագյ պադրաստելը, հնգյերունքը կյամ ըն, թա. — Էս հի՞նչ պեն ա, վեր միչև մհենգյ խորագյը պադրաստ չի։

Էտ տանը մնացած հնգյերը մըհանա յա քցում, թա հաճողվալ չի։

Էն մին օրը համին էտ պենը էրկու հնգյերունցը նհետ ա կադարվում, իստի լոխ էլ մինը մինին անա կյեղում ըն էտ պենը։ Մին օր

www.naregatsi.org

էլ հերթը հրսնում ա էտ տղեն։ Նա տոնը սրփռնմ ա, հվաքում, խորագյը պադրաստում, տրեսնում՝ օշափը եկավ։

Օշափը կյամ ա, թա. — Պատառ խորագյ տո, օտիմ։

Էտ տղան մին տալերք քցում ա, ընդրան ըռաշկեն տինում։

Օտում ա պրծնում, ասում.— էտ իմ պենս չի։

Վեր իտի յա ասում էտ տղան ընդրան հունց թխում ա, վեր վեր ա ընգնում, թոլ ինում։ Օշափը թոլ ա ինում, էտ տղան հետան։

Քյինում ա, թա տրեսնա հրշտեղ ա ընգալ։ Օշափը քյինում ա, ընգնում մին ծակ։ Էտ տղան ետ ա կյամ տրեսնում հնգյերունքը եկած։ Պատմում ա ուրան տրեսածը, ասում. — Խե՛ յրք տուք ինձանա կյեղալ էտ պենները։— Հիրը վեր տահանք հաց ըն օտում, պրծնըմ, էտ տղան ասում ա.—Եկեք քյինինք, տեսնանք էտ օշափեն։

Եր ըն կենում չորս հոգի քյինում, վեր նի մըննին վերին մեչը։

Սվթա հնգյերունց մինին ըն կախ տամ, հնգյերը սկսում ա ճըղճըղալ, ասում ա. — Էրի՛ց, էրի՛ց։— Վեր իտի յա ասում, տուս ըն օնում։

Էն մին հնգյերնըն էլ ա իտի տեռնում։ Իտի վերչը էլ կարում չըն, թա նի մննին, օշափեն տրեսնան։

Հերթը հսնում ա էտ արչին տղեն։ Տղան ասում ա. — Տղերք, յրես հինչքան էլ վեր ասիմ «էրի՛ց», տուք ինձ հանիք վեչ, կախ կտաք։

Իտի հնգյերունքը կախ ըն տամ տղեն։ Հինչքան կանչում ա, թա. «էրի՛ց, էրի՛ց», տրան մհալ չըն տնում։

Տղան տեսնում ա ըտեղ մին ճոկ աշխարք կա՛։ Առաչին օթախումը տեսնում ա մին ղաշանգյ ախճիգյ նստած, օշափեն կլոխը տրած գյուրգյումը, օշափը քոն մտած։ Էտ ախճիգյը վեր տրան տեսնում ա, սկսում ա վա՛յ-վա՛յ անելը։ Ասում ա.— Ա՛յ տղա, սիրուն տղա, տուս եք, քյինի ըստղաս, քանի օշափը եր չի կացալ, վեր եր կենա, քյըեզ պրտրոնե կանե։

Էտ տղան լըսում չի, քյինում ա էրկունջի օթախը, տրեսնում ա ըտեղ էլ մին է՛լ իվիլ ղաշանգյ ախճիգյ նստած։

Էլհա էտ ախճիգյը ասում ա. — Ա՛յ տղա, տուս եկ, շուտ քյինի ըստղաս, թա չէ օշափը քոն մտած ա, եր կկենա, մըեծ պատառըտ անգուճըտ թողի։

Էտ տըղան էլհա էտ ախճիգյը թողում ա ըտեղ, նի մննում իրեքինջի օթախը, տրեսնում ըտեղ մին ախճիգյ ա նստած, վեր վեչ օտիս, վեչ խմիս, մինչև էտ ըխճկանը եշիս։ Էնքան ղաշանգյ, իսկի չիլա՛ծ։

Էտ ախճիգյը վեր տեսնում ա՝ էտ տըղեն, սկսում ա ախ քաշիլը,

www.naregatsi.org

ասում ա. — Ղաշանգյ տղա, էս սհաթես տունս եք, քյինի, թա չէ օշափը քանի քոն մտած ա, եր կկենա քյրեզ սաղ կոլ տա։

Տղան էտ ըխճըկանան օղում ա գյիդա, թա էտ օշափը քա՞նի օրավ ա քոն մտալ։

Ախճիգյը ասում ա. — Ցրես քյրեզ մին պեն ասիմ, տու ըտրանավ հիշտ կսպանիս օշափեն։ Հատե էտ օշափեն օժը էտ բոթուլումն ա։ Վեր տանիս բոթուլը փշրնե անիս, տու կհախտիս օշափին։

Տղան մին չըրթմա յա թխում, բոթուլը փշուր-փշուր ա ինում, օշափը եր ա կենում, էտ տղեն նհետ սկսում կըռեվ տալ։

Քառասուն օր, քառասուն քըշեր կըռեվ ըն տամ։ Տըղան վեր չը հախտում ա ըտրան։

Քյինում ա էն մին օթախնին, լոխ օշափներին էլ սպանում, էտ իրեք ըխճկորանցը յոր օնում, վեր կյա, տունս կյա։ Հնգյերունքը սպասելիս ըն ընում։ Էտ էրկու ըխճկանը տունս ըն օնում, պրծնում, հերթը կյամ ա ամենաղաջանգյ ըխճկանը, վեր պիտի տունս օնին։

Էտ ախճիգյը օղում չի, թա տունս կյա։ Ասում ա. — Սնվթա տու տունս եք, հանան՝ յրես։

Տղան մնամ ա զարմացած։ Ասում ա. — Խե՞, հի՞նչու հետե։ Ախճիգյը ասըմ ա.— Քու հնգյերունքտ, վեր յրես տունս կյամ, քյրեզ թողելու յըն ըստեղ. հինչքան անում ա, թա տղան առաչ տունս կյա, տեռնում չի, տղան օղում չի։

Ախճիգյն ասում ա. — Դե վեր իտի յա, յրես քյրեզ մին պեն ըմ ասում, մին ա քյրեզ թողելը թուղուլական ըն ըստեղ։ Վեր մին խիլլա կենաս, էրկու վեչխար ըն կյալու առաչտ. մինը՝ սրեվ, մինը՝ սպիտակ, տու հաբաքյաթ կանիս սպիտակեն յրա ընգնիս, վեր ընգնիս սպիտակ աշխարքը։ Ամմա թա ընգիս սրեվին յրա, ընգելու յըս սրեվ աշխարքը։

Տղան հվատում չի, ասում ա. — Իտի պեն չինիլ, վեր իմ հնգյերունքս ինձ դավաճանին։ Խե՞ կյիժվալ ըն, խե՞ ուրանց մրեսը կերալ ըն։

Սիվթա էտ աղճիգյն ա տունս կյամ։ Հերթը կյամ ա էտ տղեն։ Հնգյերունքը քյանդիրը քցում ըն, թա տունս օնին, ղասիդ տեղան քյանդիրը կեսումը կտրում ըն, թողում։

Տղան մնամ ա ընդեղ մտածմունքի մեչի։ Նստում ա, քընենքյ անըմ։

Շատ ա կենում, թա խրեգյ ա կենում, մին էլ ա տեսնում էրկու վրեխճար, մինը սրեվ, մինը սպիտակ, ղոչիղոչի ընելով կյամ ըն։ Տղան հաբաքյաթ ա անում, թա սպիտակեն յրա ընգնի; հո՞ւնց ա

www.naregatsi.org

պտահում, հակառակու նման, ընգնում ա սրեվին յրա։ Քյինում ա, տուս կյամ սրեվ աշխարքը։

Ըտեղ մին պառավ կընգա տան ղոնաղ ա ընգնում։ Էտ պառավեն ոչ մին պեն չի ինում, մինակ ինքն ա կնալիս ինում։

Էտ երգյիրումը ճուր չի ինում, ժողովուրթը միշտ մնում ա անճուր։ Սաքաթը վեր ախպրին ակնումը մին օշափ ա ինում նստած։ Էտ օշափը միշև վեր մին խոխա չըն տանում, ռեխը քցում, ճուր չի տամ ժողովուրթին։ Մին օր ճուր ստանալի հետե ժողովուրթը վեր ծարավ մրեռնի վեչ, բիդի թաքավերեն ըխճկանը տանին, վեր օշափը օտե։

Քշերավ սաղ ժողովուրթը կյամ ըն, մըժմահիքը ծեռքներին։ Թաքավերին ախճիգյըն էլ ա կյամ օշափան մուտանում, վեր օշափը առաչ ամման հինչավ լիգյը մըժմահիքյը կոլ տա, ետավ ուրան։ Արչին տըղան դաստի օշափին սպանում ա։ Արուինը ճըրին նհետ խառնվում ա։ Թաքավերին ախճիգյը ծեռքը թաթախ ա անում էտ տղեն մաշկեն նշան անում, վեր ետնան ճնանչին։

Սաղ ժողովուրթը ուրխանում ա, ազատ ճուր ըն յոր օնում։ Թաքավերը էտ գյիդալավ հրամման ա տամ, վեր օշափեն սպանողը կյա ուրան կոշտը։ Էտ տղան սրվթա օզում ա, թա քյինի, մին էլ վեր սկանում ա, թա թաքավերը մին խմաստուն օխծ ա ղարկալ տները, վեր ուրան ճարին, եր ա կենում, քյինում թաքավերին կոշտը։ Թաքավերը տրան շատ վեսկե յա տամ, ճընապար տնում։

Էտ տղան քյնամ ա ախպուրը, թա ճուր խմե, տեսնում ա մին ծի օզից, թա ճուր խմի, ամմա ասից.— Ցրես վեր գյիդամ, թա հուվ ա էս ախպուրը տուս քցալ, յրես մին լավ թուն կանիմ ընդրան։

Արչին տըղան ետ ա տեռնում, թա. — Հի՞նչ կանիս, յրես ըմ ըլալ։

Մին ասում ա.— Հինչու սերտտ օզում ա, ասե, էս սհաթին անիմ։

Արչին տըղան ասում ա. — Քյըզանա մին պեն չըմ օզըմ, լհա թաքյ ինձ տուս պիրիս լուս աշխարհք։

Մին ասում ա. — Դե վեր իտի յա, մաշկես նստի, յրես քյըեզ տանիմ։

Արչին տըղան մաշկին նստում ա, ծին ըտրան տանում ա, մին ծառու տակե վեր տինում։

Արչին տըղան շատ նղացած ա ինում, տա քնավ ա ընցնում։ Աշկերը պենում ա, տեսնում մին Ջուլմրուտ ղուշու ճըտեր ծվծվում ըն։

Մին օխծ տրանց մաշին ա ինում։ Եր ա կենում էտ օխծին սպա-

www.naregatsi.org

նում, մին էլ նորու քնավ ա ընցնում։ Ձունմրնւտ ղուշը կյամ ա, գյուղում ա, թա տա եկալ ա ճրտերեն օտի, յրա յա հանում, թա թեվավը թխե, սպանե, ճրտերը տիյերան ծվծվամ ըն, թա. — Թխել միր, տա յա մրեզ ազադալ, խե՞ յրս թխում։

Էտ դաբռումը արչին տըղան զունրթնաննում ա, վախում։

Ձունմրնւտ ղուշը ըտրան ասում ա. — Վախել մեր, ասի տեսնամ, հի՞նչըս օղում, վեր յրես քյրեզ հետի անիմ։

Արչին տըղան ասում ա. — Քյրզանա կօզիմ, վեր ինձ տանիս, տունս պիրիս մեր վրեղը։

Ասում ա.— Քյինի օխտը շախկա մես ինքյ կալ, շտեղ ծրվամ, մինը քցի պերանս։ Արչին տըղան եր ա կենում, քյինում մես ինք օնում, նստում Ձունմրնւտ ղուշեն մաշկենս։

Ձունմրնւտ ղուշը թռչում ա։ Ճընապարին շտեղ ծրվում ա, տա մին շախկա մես ա քցում ռեխը։

Հունց ա պտահում, տա մին շախկա մեսը ճընապարին, գյուղում չի, վեր ա քցում։ Ձունմրնւտ ղուշը վեր մին էլ ծվվամ ա, խեղճ տղան վետանը անա մես ա կտրում, քցում Ձունմրնւտ ղուշեն ռեխը։ Ձունմրնւտ ղուշը դաստի գյիդում ա, վեր տա էն մսան չի, լունզվին տակեն պահում ա։

Վեր կյամ ըն վեր կյամ, Ձունմրնւտ ղուշն ասում ա. — Դե քյինի։

Տղան վեր քյնամ ա, ղուշը տեսնում ա, վեր կըղըզյի յա տամ, Ձունմրնւտ ղուշն ասում ա.— Նտ տեռ ըստեղ։

Տղան հտ ա տեռնում, կյամ։ Ձունմրնւտ ղուշը լունզվին տական տունս ա օնում մեսը, կպցնում, ծին տամ ուրան, թա.— Դե քյինի։

Արչին տըղան շատ շունրակալ ա ինում, օրախ-օրախ ճընապար ա ընգնում, քյրնում դիբի ունրանց օջաղը։ Կյամ ա, կյամ, շատ ա կյամ, թա խրեզյ, մին էլ ա տրեսնում, մին սաս ա կյամ։ Կյամ ա տեսնում իրեք ախպերք ունրունր նհետ շատ փիս կըռեվ անըմ։ Հըրցնում ա, թա պատճառը գյիդա։

Էտ իրեք ախպորը ինում ա մին սուփրա, վեր ասիս. — Ա՛ սուփրա, քյրզանա կօզիմ էս հինչ պենները,—դաստի սուփրան լըցնըվում ա։—Նտավ էտ իրեք ախպորը մին գյաբա յա ինում վեր ասին. — Ա՛ գյաբա, քյրզանա կօզիմ էս հինչ երգյիրը տանիս, դաստի գյաբան թռչում ա, տանըմ։

Նտավ մին ինդի շալվար նան ոտնամանն ա ինում, վեր մարթ կյենա, մաշին ըրեվալ չի։

Տրանք՝ էտ իրեք ախպերը, ըտրա հետե կըռեվ ըն տամ։ Արչին տըղան ասում ա. — Գյիդում ը՞ք հինչ կա, էտ լոխ ինձ տվեք,

www.naregatsi.org

յըես ըստեղ վենը կենամ, տուք քյեցեք հեռու, շատ հեռու, հու վեր շունտ ետ կյա, գյաբեն նրանն ա, հու վեր նրանա ետը կյա, սուփրան նրան կտամ, հու վեր ըտրանա էլ էտը կյա, շալվարը նան վրննամանը նրանն ա։

Էտ իրեք ախպերքը վեր քյունում ըն, ըստեղ վենը կենում, արչին տըղան վրննամանը նան շալվարը կենում ա գյաբեն յըրան նստում, քյունում։ Էտ իրեք ախպերքն էլ ըստեղ մնում ըն ուրիր նհետ կըռեվ տալիս։ Արչին տըղան կյամ ա մորը յոր օնում, կյամ համեն էն ծմակը, ըշտեղ վեր ինքը ուրեն հնգյերունցը նհետ կենում ար։ Ըստեղ մարըտղա միասին կենում ըն։ Ըտրա մարը շատ փիս կնեգյ ա ինում։ Օշափներեն նհետ ա ընգնում։ Մնհետ էլհա սուտ տեղան հիվանդանում ա։

Տղան ասում ա. — Խե՛ հիվանդացալ ըս։ Հի՞նչ կօտիս։

Մարը ասում ա. — Վեր անմահական ճուր պիրիս, խմեմ, կլավանամ։

Էտ անմահական ճուրը շատ փիս տեղ ա ընում։ Հու վեր քյունում ա ըստեղ, էլ ետ չի կյամ։

Արչին տըղան քյունում ա, քյունում, շատ ա քյնում, թա խրեգյ, մին էլ ա տեսնում առաչը մին լավ բաղ եկավ։ Օղում ա, թա նի մննե էտ բաղան խնձոր քաղե, տեսնում ա, որ էտ բաղը չըփարած ա։ Մին կերպ նի յա մըննում մաչը, տեսնում մին օշափ թուփփուղը ծեռքին եկավ։ Ընդրա նհետ կըռեվ ա անում, տրան ըստեղ սպանում։ Ետնան կյամ ա, մուտանում էտ ըխպրին, շտեղ անմահական ճուր պիտի յոր օնե։ Շատ տժվեր տեղ ա ինում ըստեղ։

Ըստեղ էրկու քար քյընում ըն, կյամ, ուրուր թխում։ Տա մին կերպ նի յա մննում, ճուրը յոր օնում, մին կուճի բութուլում տընում ջուբումը։ Ետնան ետ ա տեռնում, վեր կյա տոն։

Կյամ ա թաքուն եշում, տեսնում մարը էտ օշափներեն նհետ քեփի յա նստալ։ Վեր նի յա մննում, լոխ օշափնին փռնում ըն տրան։ Մարը նան իրեք օշափ խոսկը մին ըն անըմ, վեր սպանին, ամմա իրեք օշափն էլ խոսկը մին ըն անում, վեր աշկերը տուս օնեն։ Վերչը աշկերը տուս ըն օնում։ Ըստեղ մին թուլա յա ինում, դաստի աշկերը յոր ա օնում, պրանըմը պահըմ, էտ տըղան, էտ թուլեն նըրհետ ճրնապար ըն ընգնում, քյնում։

Շատ ըն քյնում, խրեգյ ըն քյնում, բիրդան մին հըրսընքուսաս ըն ըսկանում։ Նի յըն մննում էտ հըրսանիքը, վերը համեն էն ամենաղաշանգյ ըխճկանը հըրսանիքն ա ինում։

www.naregatsi.org

Ղաշանգյ ախճիգյը ճրնանչում ա էտ տղեն, հրրցնում ա, թա. — Խե՞ աշկերըտ իտի յա՝ էտ վախտտ Թուլեն անա աշկերը յոր ա օնըմ, էտ ըխճկանը առաչին վեր քցում՝ էտ ախճիգյը յոր ա օնըմ, թա քցի տեղը, ամմա աչի աշկը քցում ա ծախի աշկեն տեղը, ծախի աշկը քցում ա աչի աշկեն տեղը՝ էտ տղան լիվանում ա, ամմա մին խրեգյ շիլդի յա ինում՝ էտ տղան եր ա կենում, վեր կյա մորը կոշտը՝

էտ ախճիգյը ասում ա. — Քյինի՛լ մե՝

Ամմա էտ տղան եշում չի՝ Ասըմ ա. — Տու հաչա փըսակվել մեր, մին պեն մըհանա քըցի, կաց, յըես կյաչու յըմ՝ Եր ա կենում, վեր կյա մորը տեսնա՝

Կյամ ա տեսնում էչհա համմեն էն օխտը օշափնեն ուրեն մորը նհետ քեփ ըն անում՝ Վեր օշափնեն տեսնում ըն էտ տըղին, լոխ կյողչ ըն կենում՝

Էտ տղան նի յա մըննըմ տոն, թա. — էն հու վա իչալ վեր ասալ ա՝ սպանինք, էս ղրաղին կաղնի, ամմա հու վեր վեր ասալ ա՝ աշկերը տուս օնինք, էն մին ղոլեն կաղնի՝

Իրեք օշափ մին էլ մարը օզալ ըն, վեր սպանին, ամմա իրեքն էլ օզալ ըն, վեր աշկերը հանին՝

Էս տղան էն իրեք օշափեն նան մորը սպանում ա, ամմա են իրեք օշափին էլ տոնը, տեղը լոխ ուրենց ա տամ, ասում. — Հու վեր վեր ծեր քեփին նի կյա, տուք իմ անըմըս տվեք, ծրեզ վեչ մին պեն չըն ընելու՝

Էս քաջ տղան շարունակում ա ուրեն ճրնապարը, ուրեն առաչվա հնգյերներին ճարելի հետե՝ Լոխճին ճարըմ ա, սպանըմ, ինքն էլ քյնում ուրեն սիրած ախճիգյը յոր օնըմ, նըհետը փսակվըմ, բախտավեր ապրըմ՝ էն վերան տուս պերած էնքան վրեսկեն էլ ուրեն ա մընըմ՝



www.naregatsi.org

42. ՄԱԴԱՐ ՏԸՂԵՆ ԲԱԽՏԸ

Ինխս ա, չինխս մին մարթ, մին կնեգյ։ Ըտրանց խոխերքյը ամման պրիլավ մըռնես ըն իլալ, վըեննը չըն իլալ կընաս։

Մին օր ըտրա մարթը եր ա կընաս, թա. — Քյննական ըմ մին գյիդողու կոխկ, տըեսնամ ախրը պենը հիննչումն ա, վեր պիրած խոխերքյս վըեննը չըն կընաս։

Էտ գյիդող մարթը լոխ տրան դուզ-դուզ պտմես ա, վեր քանեննն ա պերալ, քանեննն ա թաղալ։ Ըսես ա. — Վեր մհենգյ ել մինը պըրլական ա, էլ տրանա կըման ծրեզ խոխա չի իննական։ Ըտ էլ կյուլու փայ ա տրռնըլական։

Էտ մարթը ետ ա տրռնաս ըսես.— Ցրես էլ միշտ տանն ըմ պըհըլական։

Էտ գյիդող մարթն ըսես ա. — Մին ա ըշտեղ պահիս, պահիս վուչ, տանատ տունս ա կյլական, քյինի։

Էտ վեր խոի յա ըսես, քուտուփեշման ետ ա տռնաս, կյաս տոն։ Կնեգյը խոխան պիրիս ա։ Տրանք էտ խոխեն լալ ըն պըհես, վեչ մին տեղ տունս չըն օնես, սաղ օրը տանը մաչին։ Էտ խոխատ կյաս ա տրռնաս տասնչորս տրեկան խոխա տանան տոռնը չըն տունս ունես։

Մին օր էտ խոխան հորն անա թաքուն տունս ա կյաս շենը, մարթկանց մաչը։ Մարթիքյ վեր տրսնաս ըն, մնաս ըն մաթ մնացած, ըսկսես ըն ըստղան, ընդղան խոսելը, վեր էտ էն մարթին տղան ա, վեր քյեցալ ա եշիլ տվալ, ասալ ըն կյուլի փայ ա տռնլական։

www.naregatsi.org

էտ խոխան կյաս ա տոն, սկսես ա հորը նաղլ անիլը. — Ախեր ըսօր տունս ըմ եկալ շենը, մին պեն ըմ ըսկացալ։

Հաՙրն ասըմ ա. — Ասե տըեսնամ։

Տղան ասըմ ա.— Տունս եկե շենին մաչը, մարթիքյ մաթ-մաթ ինձ եշեցեն, ըստղան, ընդղան ուրուր նհետ խուսեցին, թա էս էն տղան ա, վեր հորն ասալ ըն կյուլուն փայ ա տըռնլական։

Հաՙրը միչև էտ կյեղած ա պահալ, տղեն ասալ չի, թա հի՞նչու հետե յա տանը պըհես, թուղես չի, թա տունս կյա, մհենգյ էլ կյեղելը կարում չի։

Հաՙրն ասըմ ա. — Հի՞նչ կյեղի՞մ, դուզ ա, իտի յա իլալ։

Տղան ասըմ ա. — Դե վեր իտի յա, էս դենըմ կլնի ըմ յոր ունես քյնիմ, տեսնամ վերչըս ախրը ըշտե՞ղ ա տըռնաս, հինչա՞վ ա վերչընաս։ Հաՙրը թուղես չի, շատ ա խնթրես, ըղաչանք պղատանք ընես, վեր քյնի վեչ։

Տղան ըսես ա. — Օղում ա հինչ էլ տեռնա, յըես բիդի քյինիմ։

Հաՙրը տսնաս ա, վեր ճար չիկա, տղան քյնաՙկան ա, խնթրես ա, թա. — Դե վեր իտի յա, եք քյըեզ փսակիմ, ետնան քյնի։ Լհաՙ վեր տանը, տոանն ինիս վեչ, տանը հարթնենը յիշիլավ սըեռտըս կպենվա։

էտ վեր հաՙրը իտի յա ըսես, տղան հոժար ա կընաս։ էտ մարթը տըղեն փըսըկես ա, հարթնը պիրիս տոն։ էտ տղան մին քանի օր կընաս ա, ետնան մին թվանգյ նան մին տենակ տինիս ջուբումը, տունս կյաս։ Հաՙրը լաց ա ինիս, վեր քյինի վուչ։ Ըսես ա. — Բա մունք հո՞նց կանինքյ, ըշտե՞ղ ըս քյիս, հի՞նչ գյիդանք, թա տու սաղ ըս, թա չէ։

Տղան ըսես ա. — Ա՛ հաՙր, դե վեր իտի յա, տունս եք տոՙնը, յըես քյըեզ մին պեն ասիմ։

Հաՙրը տունս ա կյաս տոՙնը։ Տղան ծեռքեն մուտանան տունս ա ունես, հորը տաս, ըսես. — Ա՛ հաՙր, տըսնաս ը՞ս էս մուտանան, վեր գյիդաՙքյ, թա սաղ ըմ, էս տնունմ ըմ, հասե, էս պըտըրհանեն մաչին, ծեռքյ չի տաք հաՙ, մինաՙկ ամեն քշերավ ուտուբանա եր կըկենաք պըտըրհանան եշիքյ, թա մուտանան հունց ա տըրաՙծ։ Թա վեր էն ինի ինդի տիրաՙծ, հունցու յըես ըմ տիրաՙլ, գյիդացեքյ վեր սաղ ըմ, թա եր կացեքյ, տըեսեքյ էն ա պըտըրհանան վեր ընգած, գիդացեքյ վեր յըես մաղբուն ըմ։ Ամմա մին էլ ըմ ասըմ, վեր նի չի կյաք, հունց վեր տինըմ ըմ, թողիքյ ինդի կենա։

Հաՙրըն ասըմ ա. — Լաՙվ։

Տղան մուտանան տինիս ա պըտըրհանումը, հորը նհետ պռոշտի ընես, իտի կլնի եր կալաՙծ քյիս։

www.naregatsi.org

Քյիս ա, քյիս, շատ ա քյիս, խրեգյ ա քյիս, շատը նան խրեգյը ինքյը կգյիդա՛, քյիս ա մին տեղ տունս կյաս, առաշկը մին մեծ շըհա՛ր, վեր էլ տեղ չկա քյինալի։

Էտ տղան ինքյն-ինքյը ըսես ա. — Դե էլ հինչ կինի՛, կինի՛. քյինիմ էտ շհա՛րը։ Էտ տղան քյիս ա, քյիս, տսնաս ա մին պառավ կնեգյ նստած, մին քանե դեվու ճոտեր կոխկեն։

Պառավը վեր տրան եշիս ա, ըսես ա. — Բալա, տու հո՞ւնց ըս ընգա՛լ ըստեղ, տունս եք, քյինի՛, մեծ դեվը ըստեղ չի, էս ա վեր կյա, քյըեզ կոլ ա տըլական։

Տղան ըսես ա. — Հունց անիմ, էլ հինչու կինի՛, կինի՛, էտ էլ իմ բախտըս։

Պառավը մին էլ ա հըրցնես, թա. — Ախըը հի՞նչու վը՞ս եկալ, շտե՞ղ ըս քյի՞ս։

Էտ տղան լոխ պըտմես ա, վեր. — Իմ մոր խոխեքյ ըն իլա՛լ, վրեննը չըն կացալ, լոխ մրեռալ ըն, յըես էլ վեր իլա՛լ ըմ, ասալ ըն, թա տա էլ կյո՛ւլո՛ւ փայ ա տըռնլական, ըտրան դա՛ըդան կլո՛խ ըմ եր կա՛լա՛լ, քյիս ըմ տեսնամ ախըը իմ վերչըս հի՞նչավ ա պըրծնես։

Էտ տղան վեր խոի յա ըսես, պառավըն ըսես ա. — Դե վեր խոի յա, եք քյըեզ կյո՛ղը կըցընիմ վեր դա՛վը կյա՞, Թըրթամնած յրա չի պրծնե, քյըեզ կոլ տա։

Էտ պառավը տղեն կյո՛ղ ա կըցնես։ Մին խրեգյ անց ա կնաս, դա՛վը կյաս ա, թա չէ, պըռավին ըսես ա. — Էս հի՞նչ ինսանավըետ ա կյաս։

Պառավըն ըսես ա. — Ըստեղ ինսան չիկա։

Դա՛վըն ըսես ա. — Չէ, ինսանավըետ ա կյաս, ասի տեսնամ, հո՞ւ կա ըստեղ։

Պառավըն ըսես ա. — Մարթ չիկա։

Էտ վեր ըսես ա մարթ չիկա, էտ դա՛վը եր ա կնաս, թա շոռ կյա։ Պառավը տրեղան պիցրինաս ա, թա.—Դե ըսպասե,—ըսկսես ա նաղլ անիլը, թա. «Իստի մին տղա կա, տունս կպիրիմ, մինա՛կ նի չի կյաս»։

Էտ դա՛վը ըսես ա. — Լա՛վ։

Պառավը տղեն տունս ա պիրիս, տա մին էլ տղեն անա յա հըրցնես, թա՛ — Տու խե՞ յըս եկալ, տունս եկալ ըստեղ։

Տղան հինչու պառավեն ա պատմալ, էտ լոխ էլ դա՛վին ա պըտմես։ Վեր պըտմես ա, պրծնես, ըտեղ պիրիս ըն հաց, ճո՛ւր տաս, հըղըցեն հետի ճո՛ւր հաց տինիս, ճընապարհ քցիս, նհետըն էլ էրկու իմաստուն շոն տաս, ըսես. «Էս շները եր կալ, ըտրանք ըշտեղ քյինին, տու վէլ նհետնեն կքյինիս։ Օրիշ տեղավ յան չի տա՛ս։ Էտ շները վրեննները

www.naregatsi.org

ըշտեղ տնին, տու վէլ ընդեղ կտինիս, օրիշ տեղ չի տինիս, վեր ճուր նի մննիս, ըշտեղավ քյնին, տու վէլ հետներան կքյինիս։ Մին էլ շատ փիս տեղեր ըս ընգնըլական, հանց ըրա, խաչվիս վեչ, հա՛, շները հետատ միշտ կտանիս։ Վեր ասին կաց, կաց, կենաս վեչ։

Տղան ասըմ ա. — Լաւ։

Տղեն ծնողնեն ամեն ուռուբանա եր ըն կընաս պըտըրհանեն յիշիս, տըսնաս էն ա մուտանան հալա տրած տեղը։ Արխային ըն ինիս, վեր ուրանց տղան հալա հեն ա սաղ։

Տղան էտ շները յոր ա ունես, քյիս։ Քյիս ա, քյիս, շատ ա քյիս, խրեգյ ա քյիս, շոնը ըռաշկեն, ինքը շանը հետան, թուլան էլ քըմակեն։ Կյաս ըն տուս կյաս մին վարար կյետե յրա։ Տղան ըստեղ շըղվիս ա, վեննը ուզիս ա, թա տինի ճըրին մաշին, շոնը փեշկան ծիքյ ա տաս, տրան ըզըդես։ Շոնը քյիս ա, քյիս մին պերնակ տեղ ճըրիս, վեր անց կենան։ Շոնը լոք ա տաս, ետավ տղան, ետավ կուճի թուլան։ Ըտրանք ըտըղավ ընցնես ըն։

Քյիս ըն, քյիս, շատ ըն քյիս, խրեգյ ըն քյիս, քյիս ըն տուս կյաս մին օրիշ շըհար։ Էտ տղան տըսնաս ա, վեր էտ շհարըմը մին մարթ էլ ա կա վեչ։ Լավ տներ, լավ շըհար, տները էրկու ըտրժանես։ Էտ շըհարը շատ ըն ման կյաս, խրեգյ ըն ման կյաս, մարթ չըն պըտրհես։ Շոնը քյիս ա ըռաշկեն, տղան հետան, թուլան էլ տղեն հետան։

Էտ շոնը շատ ա շոռ կյաս, խրեգյ ա շոռ կյաս, կյաս ա, տուս կյաս մին էրկուինջի ըտաժանես տան առաշկ։ Տըսնաս ա էն ա տանը քըլկոնըմը մին լավ կյեղեցիգյ հարթնը։ Էտ հարթնը վեր տղեն տըսնաս ա, հըրցնես ա, — Հո՞ւր ըք ուզիս։

Տղան ըսես ա, վեր եկալ ըմ իմ ծանոթես տոնը։

Էտ հարթնը ըսես ա. — Դե լավ ըք ըրա՛լ, վեր եկալ ը՛ք, դե եք, տրեանամ ծանոթըտ հո՞ւ վա։

Տղան պիցրընաս ա, շոն նան թուլան հետան։

Էտ հարթնը ըսես ա. — Տա հի՞նչ ա, տրանք հո՞ր ըն կյաս։

Տղան ըսես ա. — Վեչինչ, տրանք թաւմուզ, թաքյուզ ըն, վեչ մին պեն չըն ըննական, թող կյան։

Հարթնը ըսես ա։ — Դե լավ։

Էտ տղան քյիս ա, տոն նի մննես։ Շոնը մղակըմը նստես ա։ Էտ հարթնը տղեն անա հրցնես ա, թա.— Պա պարիկամտ հո՞ւ վա։

Էտ տղան հի՞նչ ասի, ըսես ա.— Ախպերս, պարիկամս շոնն ա, եկալ ըմ վրերսի։

Էտ հարթնը ըսես ա.— Լավ ըս ըրալ։

Էտ հարթնը հունց ա ընես, տղեն խելքա տնես ա։

www.naregatsi.org

Մին օր տրան ըսես ա, թա.— Նք լհա յըես քունը, տու իմս ինինք։ Տղան ըսես ա.— Հի՞նչ ա ընննական։— Ըտրանք իտի էլ ընես ըն։

Շատ ա անց կնաս, խրեզյ ա անց կնաս, էտ հարթնը ուզիս ա էտ տղեն ըսպանես։

Էտ հարթնը կյուլ տառած ախճիզյ ա ինիս, ըտրան հնգերը մին կյուլ ա ինիս, տըրանը թոռնեն մաչին կյեղած ա ինիս։ Էտ շըհայրըտ, էտ էրկու հոքյին մինակ ուրանք ըն ինիս կերած։ Մհենզյ էլ ուզես ըն, վեր էտ տղեն էլ օտին։

Էտ շները տրան թուղես չըն, միշտ կլխի յըն ընգնես, խրնգրես, շոնը տղեն կոխկան հրըրնաս չի, տղան ըշտեղ նստես ա, շոնը կոխկեն, քոն ա ինիս, քյիս ա տըղեն կոխկեն նստիս։

Էտ հարթնը վեր քըշերը տղան քոն իլած ա ինիս, եր ա կընաս, թա քյինի կյուլին ասի, վեր կյուլը կյա օտե։

Շոնը կլխի յա ընգնես, էտ հարթնենը, կյաս ա, փռնես։

Վերչը էտ շոնը ըշլաման չի տաս էտ հարթնենը։

Էտ հարթնը կրզնըվես ա տղեն յրան.— Էս հի՞նչ ա, ըստեղ հի՞նչ ըք անում, շները հեն ըն քշտետ։

Տղան ըսես ա.— Վեչինչ, թաման ըն։

Վերչը էտ հարթնը տրան հո՞ւնց ա խրելքա տընես, վեր էտ տղան մին օր եր ա կընաս, թա քյիս ըմ վրերսի։

Հարթնն ըսես ա.— Լավ կինի, մինակ մեծ շոնը կապե, կուճինը քյըեզ նհետ եր կալ։

Տղան ըսես ա.—Չէ՛։

Էտ հարթնը հո՞ւնց ա ընես, հո՞ւնց ա խրելքա տընես, վեր տղան հոժար ա կընաս։

Մեծ շոնը պիրիս ա ժինջիլավ ծառան կըպես, կուճինը յոր օնես, քյիս վրերս։ Էտ տղան լհա անց ա կընաս պատեն քամակը թա չէ, էտ հարթնը կյաս ա, թորենը պընաս կյուլին մորթին շոռ օնես, կյուլին էլ ըսես.— Տուս եք։

Տրանք տուս ըն կյաս, քյիս։ Քյիս ըն տղեն հղցումը ըսպասես։ Տղան կյաս ա։ Հարթնը տղեն վրզան ա փռնես, կյուլը վրններան պիցիրցընես ըն, թա տանին, ծմակըմը օտին։

Էտ վախտը մուտանան պտրհանան եր ա ընգնես։ Մարը, հայրը եր ըն կընաս, տըսնաս, մուտանան վեր ընգած։ Ըստրանք ըսկսես ըն լաց ինիլը, վեր ուրանց տղան կա վեչ, մարթըկնեզյ շատ ըն լաց ինիս։ Հարթնն էլ ա լաց ինիս։

www.naregatsi.org

Մին քանի օր անց ա կընաս, հարթինը ըսես ա. — Դե վեր ծրեր տղան էլ կա վեչ, յրես կընաս ըմ հի՞նչ անիմ։

Տուս ա կյաս, քյիս հարյանց տունը։

Էն վախտը վեր տրանք էտ կյուղը նան հարթինը, էրկուսավ սահբաթ ըն ընես, թա էտ տղեն ըսպանին, ետնան օտին, կուճի թուլան, խաբյարը պըրես ա հրացնես մեծ շանը։ Շունը հո՞ւնց ա ընես, հունց չի ընես, վեր ժինջիլին նհետ սուրթունան պուք ա կյաս, զնգզնգըրնելավ քյինիս, հրսնես էտ տըղեն։ Շունը կյուղին հունց յոր ա ունես, վեր կյուղը բուշունաս ա։ Կյուղին ըսպըրնես ըն։ էտ դարըմը տղան ուրյան ջուբան տենակը տուս ա ունես էտ հարթինենը բուդերը ճըղես։

Հարթինը կյուղին մորթեն կյեցը փխչիս ա, կյաս մորթեն կյղես, ինքյն էլ նի մննես տեղը։

Տղան կյաս ա, նի մննես տունը, տըսնաս ա հարթինը տեղեն մաչին, չիգյիդյալը տրաժ հրըցնես ա.— Պա խե՞ յըս նի մտալ տեղըտ։

Հարթինը ըսես ա. — Հիվանդ ըմ, մըրսալ ըմ։

Տղան հաց ա չինիս ըսես. — Կեր։

Հարթինը ուտես չի, ըսես ա. — Կարըմ չըմ օտիմ։

Տղան ըսես ա. — Վեչինչ, պատառ կեր։

Հարթինը ըսես ա. — Կարըմ չըմ, օտում չըմ։

Տղան ըսես ա.— Դե լավ հենա քըրթընքալ ըս, եր կաց դաշակըտ փոխիմ։

Հարթինը ըսես ա. — Յրես քըրթընքած չը՞մ։

Տղան տըսնաս ա, վեր տա եր չի կընաս, ինքյը տեղը շինիս ա, զոռալ ըտրան յուրղանան պիցիրցընես, տսնաս ա տեղը ծրնոտ։

Տղան հրըցընես ա, թա.— Պա էս խե՞ յա ըստի։

Հարթին ըսես ա.— Վեչինչ, բըլկոնան վեր ըմ ընգալ, փոշը վրեննս ա իլալ։

Էտ վեր իտիյա ըսես, տղան էն համաճն տենակը տուս ա ունես ջուբան, ըսես. — Տու՛ ինձ քյալաղյ կյա՞ս, դե քյնա։— Տենակը ըտրա ընգուջտակեն ա տաս, ըտրան էլ ըստեղ ըսպնես։

Էտ տղան շներեն նհետ ընգնես ա էտ շրհարը, ըսկսես ման կյալը, տըսնաս խե շատ լավ-լավ տներ, լոխ լիգյը ջուտաբա ջուտա պեննըրավ՝ թա վսկեղան, թա շորեղան, մինաչ մին մարթ չիկա, քաղաքը տեռտակ, սաս սեմոնր չիկա։ էտ հարթինենը տունն էլ լհա վրեսկավ լիգյն ա։ էտ տղան էտ շներեն նհետ քյիս ա, տուս կյաս մին տան յրա։ Տառնը պնաս ա, նի մննես, տըսնաս տանը էրկու ծի, հանց ըն լհա յըղրթաթախ ինին։ Ախուռը լավ շինած, խոտը, ճուրը ընդեղամեն հինչ հըզըրած, տրաժ ըռշկներեն։ Տրանք վեր նի յրն մննես,

www.naregatsi.org

էտ ծիանքը ըսկսես ըն խըրխընջալը։ էտ տղան ծիչին մինը եր ա ինիս, տունա կյաս, մինը թուղես ըտեղ։

էտ տղան ծին պիրիս ա քըղաքեն վըեսկան, գյըենան, կըրպետնան պիռնիս, ետնանըս ուրեն պարիպասավը, էտ շներեն նհետ էլհա ընգնես հրղեն։

Կյաս ըն, կյաս, հըսնես մեծ շանը պունը, էն պըռավեն նան դովեն կոշտը։ էտ տղատ վիեյան նհետ կոչ ա կյաս։ Շոնը վեր նի յա մննես տոնը, դովը տըսնաս ա շանը վեզը յարա։

Դովը ըսես ա.— Պա քյըեզ հի՞նչ ըսեցե, ըսեցե վո՞ւչ, թա շոնը կապիս վե՞չ։

Տղան ըսես ա. — Դե էլ հինչու իլալ ա, իլալ ա, շիլ ըմ ընգալ։ Դովն ըսես ա.— Լհա մեր թուլան մինչի ըստեղ պերալ ըս, էտ էլ ա քոլ, ահետ տու քու տեսըտ-տենըտ եր կալ հղե յիլ։

էտ տղան մեծ շանը նհետ կուճի թուլան էլ ա տաս ընդանց, ինքյը ուրեն ծին եր ինիս, կյաս։ Կյաս հըսնես ուրենց շենը։ էտ տղան վեր կյաս ա, հանես ուրենց տոնը, հղցումը տըսնաս ա մին հարթենը էնա քյիս ճուրը, էտ լհա ուրեն կնեգյն ա ինիս, վեր քյեցալ ար ճուրը։

Ըստրանա ետը ուրեն էտ հարթենեն ետա տաս հրղըցան, ըսես. — Ա՛ հարթենը, ինձ տար, փլան տոնը նշանց տու։

էտ հարթենը տըսնաս ա, վեր ուրեն պըտրունանց տոնն ա քյիս, տրան հետան քյիս ա։

էտ տղան էտ հարթենանը ըսես ա. — Պա տու ինձ ճընըչես չը՞ս...

Հարթենն ըսես ա. — Չէ՛։

էտ տղան ըսես ա.— Ցըես քյըեզ ճընըչես ըմ։

Հարթենը մնաս ա մաթ մնացած, թա տա հո՞ւ վա, վեր ուրեն ճընըչես ա։ Տա մնաս ա նիգյուրեն։ էտ տղեն նհետ թուշ կյաս ա, կյաս, հըսնես ուրեն պըտրունանց տոն։ Տղան վեր կյաս ա, ճընըչես ա հորը, մորը։ Ամմա մարը, հայրը ուրենց տղեն ճընըչիս չըն։ Տղան մտածես ա, ըտրանց հո՞ւնց հրսկըցնել տա, վեր տրանք վախին վեչ։

Հորըն անա հըրցնես ա, թա.— Քյըեզ տղա յա իլալ, հո՞ր ա՛։

Հայրը ըսես ա, — Հա՛, քյեցալ ա, կորա՛լ։

Մարը ըստեղ կույնը փուխես ա։ Հայրն էլ ա կույնը փուխես, ռանգյ-ռանգյ ինիս։

Տղան ըսես ա. — Մին պեն ասիմ, մինակ վախիքյ վեչ, սըրտընետ պենդ պըհեցիքյ, մին էլ ըմ ասըմ, վախիքյ վեչ։

www.naregatsi.org

Հայրն ընկա ա.— Լավ, ասի։

Տղան հորն ընկա ա մուտանան հշտե՞ղ ա, վեր հեն ա իլալ պըտորրհանումը։ Հայրը նան մարը հուշուրներան քյինիս ըն։

Տղան ըտրանց ետ ա պիրիս, ընկա.— Պա ըսեցե վու՞չ, թա վախիքյ վեչ։ Դե յըկա ծեր տղան ը՞մ։

Ըսկսա ա կլոխը եկածը լոխ նաղլ անիլը։

Կնեգյը քար ա կտրա, մընաս տըեղը վրեննը կացած, ընկա ա.— Պա հո՞ւնց ա իլալ, վեր տու սաղ, սըլըմաթ եկալ ըս։

Տղան ըստեղ մորը, հորը, ետավ կնգանը, կոլավն ա ընգնես, պշպշորես։ Խաբարը հըսնես ա շենը։ Լոխ կյաս ըն ըշկըլոնւսանք։ Ըստրանա ետը հայրը, մարը, տղան, հարթնը ըսկսես ըն լավ ապրիլը, խուխաստար, թոռնատար տեռնալը։ Ըստուծանա իրեք խընձոր ա վեր ընգնես. մինը՝ ըսողեն, մինը՝ լըսողեն, մինն էլ՝ մեր հըեռե հնգերեն։



www.naregatsi.org



43. ՔՅԱՍԻԲ ՏԸՂԱՆ

Մեհետ անանուն թաքավերեն տղան՝ Թեմուրը, ուրաշն շըքախըմբավը տուա ա կյաս Թյդաղա ծմակը, հանցու վեր վրերս անե։ Ըտրանք տուա ըն կյաս մին պեցուր սարու պտոկ, ընդեղ նստես, վեր դինջանանա։ Թեմուրեն մեծ ծառան դուլդուլը յոր ա ունես բիդի հեռուն չիշիս, տանաս մին փլստրատե տաս պալատ, ըտրան մաշին էլ մին իրիքյնակու նման պեն պսպղե յա տաս։ Կյաս ա, էտ լոխ պըտմես Թեմուրեն։ Ըտրանք սկսես ըն բիդի էտ պալատը հղե քյինիլը։ Ըտրանք չորս օր ճուր չըն ինիս խմած։ Տրա հետե կյաս ըն մին ըխպրա թա ճուր խմին, տըսնաս ըն մին շորերը ճղորտած, քյասիբ տըղա էն ըխպրին ղըրաղեն նստած, մին վրեսկե աման էլ ծեռքեն։

Թեմուրը տըրանա ճուր ա ուղիս։ Էտ քյասիբ տըղան աման լըցնես ա, ուղիս ա տա Թեմուրեն, էլհա ետ ա տաս։ Թեմուրը կըզնըվելան նհետ ղամանն տուա ա ունես, թա տըրան սպանե։

Էտ տըղան ըսես ա. — Մին խրեգյ կաց, ամհետ ինձ սպանե։

Քյասիբը էտ ըմանավը սաղ զորքեն ճուր ա տաս, լոխճին քամկեն էլ Թեմուրեն ա ճուր տաս։ Թեմուրը ինքը շատ խոլունք մարթ ա ինիս։ Զքելանը վեր մին պենը լավ գյիդաս չի իլալ, մարթու քյոռուղ չի տվա՛լ։

Թեմուրը էտ տըղեն նըհատա հըրցնես ա, թա.— Էտ խե՞ ինձ իրեք հետ ուզեցիր ճուր տաս, էլհա ետ քշեցեր։

Էն քյասիբ տըղան ըսես ա. — Ցրես ընդրա հետե չըմ քյըեզ հլըրհալ ճուր տվալ, քանի վեր տու քրտնքած ըս ըլալ, շատ ծրավածա,

www.naregatsi.org

վեր քյըեզ հլըըհ՜ալ ճո՜ւր տի, նի կկյա՜ր քյըեզ, տու հլըըհ՜ալ կմըրսիր, ըտրա դ՜ըրդ՜ան յըես քյըեզ ճո՜ւր չըմ տվալ, հանցու վեր ծըրվոթու-նըտ ընցնե՜ս։

Թեմո՜ւրը յշիս ա, տսնաս, վեր էտ խո՜ւլունք տըղա յա, ըտրան յոր ունես, մին ծի՜ եր հըրնես, ո՜ւրա՜ն նհետ տընես։

Թեմո՜ւրեն էն մեծ ծառան շատ աղվես մարթ ա ինիս, կլո՜խ ա ընգնես, վեր էտ քյա՜սիբը իմաստուն մարթ ա, ընդրա դ՜ըրդ՜ան Թեմո՜ւրեն ըսես ա. — Պա համոթ չի՜, վեր իտի քյա՜սիբ տըղան մեր շըքախըմբեն նհետ շոռ ածինքյ։

Մին խիլլա՜ հղե քյինիլանը ետը հանես ըն հա՜մա՜ն պապղե տաս պալատեն տո՜ռնը։ Թեմո՜ւրը ո՜ւրա՜ն ծռեն հրամման ա տաս, վեր քյինի տեսնա էտ տանը հու՜ կա, հու՜ չիկա, միկա ճո՜ւր ո՜ւքյ օնե, պիրի խմին։ Մին պատառ կնալանը ետը տըսնաս ըն ծառան էն ա սփո՜ւրթ-նած, փախած կյաս ա։

Կյաս ա, ըսես.— Թե՛մո՜ւր աղա, մին պառավ ինձ մին հարց ա տուվալ, վեր վըեննեըս տափան կտրալ ա. ըսես ա. «Մեր տանան հու՜ վեր ուզիս ա, թա ճո՜ւր խմե, բիդի իմ տուված հրցերեն ջողաբը տա, ընդրանա ետը ճո՜ւր խմե»։

Թեմո՜ւրն ըսես ա. — Մին ասե տեսնամ, էտ հի՜նչ հարցեր ա՜։

— Ա՛ղա, ըսես ա, վեր մին օղտ մորթիքյ, քա՜նե փուբ կկյա, վեր խրեգյ ինի, էտ օղտեն մսեն տու տա՜ր ըս տո՜նըլական, թա թուղ-լական ըս, քյինիս։

— Բա տո՜ւ հինչ ըսեցեր, լհա՜ անջուկնետ կախ ըրե՜ր։

— Յրես էլ ըսեցե՜, վեր օղտեն գյո՜ղռակը խրեգյ կը կյա, մաշնա-կը՝ շատ, մեծը ընդրանա շատ։

Սաղ շըքախումբը կընդ-կընդ քյիս ըն, կրես չըն, թա պռավեն հարցեն ջողաբը տան։

Թեմո՜ւր խանը շատ ա հմընչիս, վեր ո՜ւրա՜ն շըքախմբումը մին մարթ չիկա, հանցու վեր էտ պռավեն փո՜ւնդը-փեյը գյիդա՜։ Էն քյա-սիբ տըղան տըսնաս ա, վեր Թեմո՜ւրը հըմընչիս ա, ըսես ա. — Խանը ապրած կենա, թող յըես քյինիմ, հանցու վեր ջողաբը տամ։

Ամմա դո՜ւղն ասած, Թեմո՜ւրեն ծառան ուզիս չի, վեր էտ քյա՜-սիբ տըղան քյինի պռավեն ջողաբը տա։

Թեմո՜ւրը ըսես ա. — Թող մեհետ էլ էտ քյասիբ տըղան քյինի։

Էտ տըղան քյիս ա, ըսես. — Էտ օղտը հինչքան կյա, թա՜ փթած ինի, թա՜ վետած ինի, տարը յըես ըմ։

Էտ պառավը բո՜ւրդ՜ան ճպղես ա, վեր ընգնես։ Պլատեն տո՜ռները բո՜ւրդ՜ան պինվաս ըն։ Էտ պլատեն ըռշկեն կաղնած տըղան յիշիս ա,

www.naregatsi.org

տըսնաս էն ղոլան մին իրիքյնակու նման ախճիգյ էն ա շափաղ-շափաղ ընելավ կյաս։ Ախճիգյը կյաս ա էտ տըղեն յրա պրծնես։ Էտ տըղան սկսես ա փախչիլը։ Ախճիգյը հըսնես ա, ծեռքը տինիս ա ընդրան ջնաղեն։ Էտ տըղան վեր ա ընգնես։ Ախճիգյը ըտրան քաշ ա տաս, տնես ուրրան տոնը։ Տըղան եր ա կընաս։ Ախճիգյը մին ստաքան ճրաւվ լցնես ա, տինիս ստոլեն յրան։ Տըղան մաննը իրեք հետ թրչիս ա, ետնան սըրփես։ Ախճիգյը պիրիս ա մին կյաւրմուր խընձոր, մին տեննակ, մին նոռնը, մին թուփ ասեղ, մին մկրատ, մին սիպտակ թոխտ տինիս ստոլեն։ Տղան պիրիս ա խընձորը տնաւկավը մաչան կես ընես տինիս ստոլեն, նոռնըն էլ ա կտրես, տինիս ստոլեն յրան, սիպտակ թոխտը մկրատավը կուտուրես ա, տինիս ստոլեն, ամմա ըսըղնեն նի յա կուխես խընձորին մաչը։

Ստաքանը նշնկես ա, վեր ուզի՞ս ըս համամ քյինիս։ Էտ քյաւսիբ տըղան վեր ծեռքը քցալ ա ճուրը, մին էլ տուս կալալ, ըտրանավ ուզես ա ասե, վեր ինքյը քյասիբ տըղա յա, ինքյն էլ եխտուտ, բիդի համամ քյինի։

Էն խընձորը, վեր տիրալ ա ընդեղ, ախճիգյը ըտրանավ ուզիս ա ասե. «Իմ սերը իստի կյաւրմուր ա, բա քու սերըտ հո՞ւնց ա»։

Տըղան վեր խընձորը տընակավը կտրես ա, ուզիս ա ասե. «Իմ սերս քու սերետ նման ա, ասիս մին խընձոր ինի, մաչան կես ըրած»։

Էն նոռնավրն էլ ըսես ա. «Իմ սերս իտի հալա մին հատեգյ ա, ետնան տըռնըլական ա մին նոռան մչանք»։ Էն սիպտակ թոխտավը ուզիս ա ասե. «Իմ սերըս իստի թամուզ ա, վեր բուրդան մեթկըտ փոխվե, կդավաճանի՞ս ինձ, թա չէ»։ Էն տըղան էլ վեր մկրատավը կուտուրես ա, ըտրանավ ուզես ա ասէ. «Ինձ իստի թքյա-թքյա կտորին, քյըեզ դավաճանել չըմ»։

Ըսըղնեն կուխես ա խընձորը, ըտրանավ ուզիս ա ասե. «Վեր ինձ իստի ծկոտին, քյըեզ դավաճանել չըմ»։

Ըստրանա ետը տըղան խնթրիս ա, էտ ըխճկանը, ըսես. — Խանը էն ա ուրրան շըքախըմբավը տըռանը մարաղ կացած, ինձ պեց թողե, քյինիմ։ Ախճիգյը թուլ չի ընես։ Ընդրանք էտ քըշեր քոն ըն ինիս։ Մին էլ ախճիգյը եր ա կնաս, տսնաս լուսացալ ա։ Ախճիգյը տըղեն եր ա կցնես, հղե տինիս։

Թամուրը պլատեն քշտեն խիլլա կնալանը ետը, կզնվես ա, հղե ինիս, քյիս ուրրան երգյիրը։ Ամմա քղաքեն չորս թրաւփեն պահակ ա տինիս, վեր էն քյաւսիբ տըղան կյա, հըլբհալ վեզը կըտրին։

Էտ քյաւսիբը կյաս ա, քաղաքը հըսնես։ Ընդրան տնես ըն, թա

www.naregatsi.org

կախ տան։ Հենգյ րոպե վախտ ըն տաս, հանցու վեր ուրյան սրտենը ասե։ Ըզեն վեչ մին պեն չի ըսես։

Բուրդյան էտ դռրըմը հվաքված ժողովուրթը յիշիս ա տսնաս յիրգյինքավը մին սիպտակ ղուշ ա թռչես, կյաս, ժողովուրթավը շորս հետ շոռ տաս, համ էլ մին մեծ ծմերուկ վեր քցիս ժողովուրթեն մաշին, ինքյը թրռչիս, քյիս։ Ծմերուկը ցըրեվ ա կյաս։ Բուրդյան էտ քյասիբ տըղան ծծղես ա, համ էլ խնթրես, վեր ուրյան թուլ անին, քյինի թեմուր աղեն կոխկը։

Քյասիբը քյիս ա թեմուրեն կոխկը, լոխ ըսկսես նաղլ անելը, ըսես.— Խանն ապրած կենա, էն պառավը ինձ հարց ա տուվալ, վեր մին օղտ մորթի, քանե փութ կկյա, համ էլ վեր մեսը վրետած, փթած ինի, յըես ընդրա տաորըն ըմ, թա չէ, էտ ինդի յա նշընըկես, վեր տու քու ըղետ նհետ հետե տեղա եշալ ըս, շփաղես յըրա եկալ, հանցու վեր ինձ օղիս, պա բալի վեննս կոտրած ա, իրեսըս ղաշա՞նգյ։ Վեր վրեննս կոտրած ինի, ինձ պհլական ը՞ս, թա ըսլական ըս՝ տուս եք։ Յըես ասալ ըմ. «Պհլական ըմ»։

Ըտրանա կման էտ տըղան պըտմես ա, վեր ինքյը ըխճըկանը կոշտը քյինիլանը ետը, ըզեն ուրյան ըռաշկեն պերալ ա, ստոլեն յրան տիրալ, մին ստաքան ճուր, մին կյարմուր խրնձոր, մին տենակ, մին նոռնը, մին սիպտակ թոխտ, մին մկրատ, մին թուփ ասեղ։ Յըես էլ գյդացալ ըմ ըտրանցավ հինչ ա ուզիս ասե։ Լոխճին ջողաբը տուվալ ըմ։

Խրնձորը, — ըսես ա էտ տըղան, — նշընըկես ա, վեր յըես քյըեզ սիրիս ըմ էն կյարմուր խրնձորեն նման։ Ամմա յըես էտ կլոխ ըմ ընգալ, պերալ ըմ խրնձորը կտրալ, թա.— «Յըես էլ ըմ քյըեզ սիրիս, սերտըս քու սըրտետ նման ա, ասիս լհա մին խրնձոր ինի մաշան կես ըրած»։

Էն ստաքան ճուրը նշընըկես ա, թա ուզիս ը՞ս քյինիս համամ։ Ամմա յըես էրկու հետ ծեռքըս վեր քըցալ ըմ, տուս կալալ, ըտրանալ ուզեցալ ըմ ասիմ, վեր յըես մին քյասիբ, եխտուտ տըղա յըմ, ուզիս ըմ համամ քյինիմ։

Էն նոռնը նշնկես ա, թա իմ սերս մհենգյ մին հատեգյ ա, նոռնու նման, վեր մըծանա, շտննական ա, տըեռնա մեչին հատեգյներեն մչանք։ Ամմա յըես կտրալ ըմ մաշան, վեր իմ սերս համանն ա, ասիս մին նոռնը ինի մաշան կես ըրած։

Էն սիպտակ թոխտը նշընըկես ա, վեր ուրյան սերը թամուզ ա, էտ թոխտեն նման, վեր մի պեն պատահե մեր մեչին յըես տա՞րն ըմ, թա չէ։ Յըես էլ թոխտը կըտորալ ըմ։ Տա նշընըկես ա, վեր թա ինձ

www.naregatsi.org

խստի կտորեն, հունցու էտ թոխտս յըես ըմ կուտուրես, էլհա իմ սերս կըմնա թամ՛ուզ, հունցու էս թոխտս, վեր հինչքան կուտուրես ըմ, էլհա մնաս ա սիպտակ։

Էն թուփ ասեղը նշընըկես ա, վեր թա ինձ ծակոտին, յըես իմ սերաս կհեռանա՞մ, թա չէ։ Ցըես էլ ասեղնին քըղեցե խընձորը, ըտրանավ ըսեցե, թա վեր ինձ խստի ծկոտեն, յըես էլհա կսիրիմ։ Հունց վեր խընձորը ծըկոտելան փախչում չի, վեր ինձ էլ ծկոտին, յըես էլ չըմ փախչիլ քու սիրուցըտ։

Տրանց անա կման տղան պըտմես ա էն ծմերուկեն անա, վեր էն ղուշը պերալ ա, վեր քիցալ, ժողովուրթեն մաչին, էն մունուտին վեր ինքյը էն ա իլալ կախաղանեն ուրշկեն վրեննը կացած, հենգյ րոպե վախտ տված, վեր խոսե, էն ծմերուկը պերալ ա, վեր քըցալ էն ախճիգյը։ Ընդրանավ ուզիս ա ասե, վեր սերըտ ամեն տեղ հայտնի, վախել մել, քյըեզ թո՛ւլ ըն ընանական։

Խանը ըզետ վեր ըսկնաս ա, ըսես ա. — Քյինա՛ քու սիրածետ նհետ գյանքըտ անց կըցրու։

Էտ տըղան քյիս ա ո՛ւրեն սիրած ըխճըկանը կոշտը, ըսկսիս ո՛ւրեն գյանքը օրախ, բախտավեր անց կըցընիս միչև մհենգյ, միչև ըսօր էլ։

Էն ասթխոտ երգյինքան իրեք ասթըղ վեր ընգավ. մինը՝ ըսողեն բախտեն, մինը՝ լըսողեն բախտեն, մինն էլ՝ էն բըլկոնան անջուկ տընողեն բախտեն։



www.naregatsi.org

44. ԱՐԱՋԸ

Ինիս ա, չինիս, մին դռւլգյար մարթ ա ինիս։ Տրան քշտեն շագյերդ ա ինիս մին խոխա։ Տահանք շատ սերալ ըն ինիս ուրուր նհետ։ Շագյերդն էլ ուստեն տանն ա կընաս։

Էտ երգյիրին թաքավերը քյոհնա շորեր ա կյընաս, քյինիս տրեսնա ուրան երգյրին մարթիքյը հի՞նչավ ըն ըպրես։

Թաքավերը սուվթա կյաս ա էտ ուստեն տոնը, քշերը ըտեղ կընաս։

Ուռուբանա քշերավ ուստան կյաս ա շըգյիրդեն ծեն տաս, թա.— Դեհա, հա՛, դեհա, եր կաց, էս մարթին հարկիլ պիտինք։ Էտքան քոն չըն ինիլ։

Գյիրթ էտ շագյերդը աշկերը պինաս ա, թա.—Պա, ուստա, հո՞ր իտի ճելլի եր կըցըրիր, թուղեցեր վուչ տեսնամ, մղափուն իմ ա՛րա՛զ։

Ուստան շագյերդին ըսես ա, թա. — Աստ տեսնամ էտ հի՞նչ ա՛րա՛զ ա, վեր էտքան մղափուն ըս կյաս։

Էտ խոխան պենդ վրենն ա կընաս, թա.— Ասել չըմ, վեր ասե՛լ չըմ։

Տահանց տանը մարթը ըսես ա. — Յրես նիգյա՛րան կմեռնիմ, վեր գյիդամ վեչ, թա էտ խոխան հի՞նչ ա՛րա՛զ ա տրեսալ, վեր ուստան էտքան ստիբիս ա, ինքյն էլ ըսես չի։

Տահանց տանը մարթիքյ քյինիս ըն ուրանց պալատը։ Թաքա-

www.naregatsi.org

վերը էլհա նըստես ա թախտին, ըսես, վեր փլան ուստեն շաղյերդը ծեն տվեք կյա կոշտս։

Կյաս ըն էտ խոխեն տընես թաքավերեն կոշտը։ էտ համ քյինիս ա, համ դաստի գյիդաս, վեր ըրաղեն հետե յա իննաական, հալբաթ սկացալ ար։

էտ խոխան քյինիս ա թաքավերեն կոշտը, թաքավերը տրանա հըրցնես ա, թա. — Ասի տեսնամ, հի՞նչ ա՛րաղ ըս տեսա՛լ։

էտ խոխան պենդ վրեն ա կընաս, թա.— Իսկի իմ ուստես ասալ չըմ, լհա ըստեղ ասի՛մ։

Թաքավերը շատ կըղնվես ա, վեզիրներին ըսես ա, — Տարեք յ սպանեցեք յ։

Վեզիրներեն մաչին մին խելոնքը ինիս ա, ըսես ա. — Խե՛ սպանինք յ, վեր համ ըրաղին ըս մննական նգյարան, համ էլ երգյիրատ մին ջահիլ ա կուրչուլական, թող կաց ամեն օր թակինք յ, պադվալը քցինք յ, մին կտոր չոր հաց տանք։ Վեր ասիլ չի, մին էլ կթակինք յ, էլհա վեր ասիլ չի, մին էլ կթակինք յ, կասե։

Թաքավերը ըսես ա. — Լավ կինի։

էտ խոխեն ամեն օր թըկես ըն, քցիս մթեն պադվալը, էլհա չի ա՛րաղը ըսես։ Տրա լացին սաասը թաքավերեն ախճիգյը ըսկնաս ա։

Ծրուեն ղրկես ա, թա.— Քյինի տըես էն հի՞նչ լացու սաս ա։

Ծառան քյիս ա, յիշիս, տըսնաս, պըդվալումը մին ջահիլ տղա յա, ամմա շատ սերուն։

Կյաս ա ըսես, վեր իստի-իստի մին տղա յա։

Թաքավերեն ախճիգյը քյիս ա տըսնաս, դաստի սիրահարվես տղեն յըրան։

Ամեն օր լավ-լավ խորագյնի, հաց ա տընես տաս էտ տղեն։

էն համաան պարի վեզիրը ըսես ա. — Էս լհա թըկես ընք, օշը կըլխան քցես, թող ամեսը մին դոնում թակինք յ։

էտ վեր իտի յա ըսես ընդրան հետե, վեր թաքավերեն ախճիգյը տրան վրեսկե յա իննիս ռուշվաթ տվածե էտ տղան էլհա չի ա՛րաղը նաղլ ընես։

Թաքավերեն ախճիգյը վեզիրին ըսես ա. — Թող պիրին էս պըլըտներեն մինումը կրենա։

Իտի էլ ընես ըն։ Միշտ թաքավերեն ախճիգյը էտ տըղեն ըսես ա. — Վխես ըմ ուրուր արժան չի տեռնանք։

Ամմա էտ տղան ըսես ա. — Վեչինչ, արխային կաց։

Մեհետ մին օրիշ թաքավեր զորք ա ղըրկես էս մին թաքավերոթունին կոշտը, թա մին պեն ընք ըսլական, վեր գյիդացեք յ,

www.naregatsi.org

էնա հու գլիդացեքյ, վեր գլիդացեքյ վեչ, յա կորեվ ընք եր կընանական, յա էլ ախճիգյա ընք տընանական։ էն թաքավերեն զորքը կյաս ընչ, բարանց նշանց ըն տաս քառասուն խոխա, լոխ մին բոյու, մին շորիրավ, լոխ ուրուր նաման։

Տրհանք բսես ըն.

— Թա գլիդացեքյ, ըստահանց վե՞րն ա ախճիգյ, վե՞րը տըղա, էն ա հու քընանական ընք, թա գլիդացեքյ վեչ, յա կըռեվ ընք ընանական, յա ախճիգյը տընանական ընք։

Էս թաքավերը սաղ ուրան երգյիրին խմաստուն մարթկանցը ծեն ա տաս, վերչ մինն էլ գլիդաս չի։

էն տղան բսես ա. — Ցրես կը գլիդամ։

Թաքավերեն ախճիգյը բսես ա. — Դե վեր կգլիդաս, իմ հոր պասե, թա ախճիգյա ինձ կտաս, կքթենամ, թա չէ՝ չէ։

Թաքավերը սուվթա կըղնվես ա, վեր էտ տղան իտի յա բսես։ Մին էլ բսես ա.— Լավ կինի։

էտ տըղան պիրիս ա մին ղղղան ճըրաւվ լցնես, կըծըցնես, էտ խխոցը մին մին ծոքըրնեն տինիս էտ կած-կած ճրին մաչին։ Վերը վեր ճելլի յա տուս ունես ծեոքը, բսես ա. «էտ ախճիգյ ա»։ Վերը ետե յա տուս ունես, բսես ա. «Տղա յա»։

էտ զորքը ետ ա տըռնաս, քյինիս։ Ամմա էտ տղեն էլլհա թըկես ըն։ Բսես ա.— Պա ծեր փեսան չը՞մ։

Բսես ըն. — էտ ըրաղեն հախկըն ա։

Մին էլ մին օրիշ խնթիրք ըն պիրիս։ Իրեք ծի յըն պիրիս, մին բոյու, մին ռանգյի, թա. — Բսեցեքյ տեսնանք վե՞րն ա մին տըրեկան, վերը էրկու, վերը՝ իրեք։

էտ տղան բսես ա. — Ինձ նշանեցեքյ ծեր ըխճկանը յրա՞ն, ասիմ։

Իտի էլ ընես ըն։ Պիրիս ա մին աման կաթնը, մին տըեղ տինիս, միկա յինջա՝ մին տեղ, միկա կյարին էլ՝ մին տեղ։ Վերը վեր քյինիս ա, թա կաթնը խամե, բսես ա. «էս ծին մին տրեկան ա»։ Յունջա օտողեն բսես ա. «էրկու տրեկան ա»։ Կյարին օտողեն բսես ա. «էս ծին էլ իրեք տրեկան ա»։

Տահանք մին էլ ըն ետ տըռնաս, քյինիս, թա. «Քիթալ ընա»։

Իրեքինջի դինուամը պիրիս ըն իրեք խնձոր մին ռանգյի, ուրուր նաման, ուրուր մըչանք, բսես.— Քյիթեք տեսնանք վե՞րն ա ուռուբանան կտրած, վերը՝ քյըսօրին, վերը՝ ուրուզյունը։

էտ տղան բսես ա.— Հըրսանեքյ ըրեքյ, ասիմ։

www.naregatsi.org

Պիրիս ըն փսըկես թաքավերեն ըխճկանը յըրա, տինիս մին պլատում։

Մհենգյ էլ թաքավերեն փեսան պիրիս ա մին ղզղան ճուր լցնես, վեր տինիս, էտ խնձորնեն քցիս ճրին մաչը տըսնաս մինը տակ ա ընես, մինը ճրին մաչին վրեննը կընաս, մինն էլ ճրին կլոխն ա ընցնես։ Ըսես ա. «Ճրին տակենը ուտուբանա յըն կտրալ, մաչենը՝ քյըսորեն, կլխենը՝ ուրուգյունը»։

Էն թաքավերեն զորքը ետ ա տըռնաս, քյինիս, թա լոխ մին տըղա յա քթալ, ախճիգյն էլ փսակալ ըն էտ տղեն յըրա։ Տահանք տեղան տուրուր չըն կյաս, էլ կռըվ չըն կյաս։

Թաքավերը մծացալ ար։ Փեսան նան ախճիգյը շատ սերավ ին ուրուր նհետ։ Թաքավերը էնքան վախտը քյըսցալ չար ըխճկանը պալատը։ Մհետ քյինիս ա, թա նի մըննե փըսեն տանը մըղակավը, ախճիգյը հեն ա ինիս մարթին կըլխանը երը նստած, գաստի վեր հարը տըսնաս ա, հըմըննչելան փըխչիս ա։ Թաքավերեն փեսան ըտեղ գաստի ծրծըղես ա։

Թաքավերը ըսես ա. — Յաղուզ ծրծըղեցեր։

Փեսան ըսես ա. — Մին պեն ա մեռս ընգալ։ Մհենգյ կասիմ, մուրազիս հըռալ ըմ, պրծալ։

Թաքավերը թա. — Արա՞ զը։

Թա. — Հա՛։ Էն քշերին ըրազի, մհե տըսնի, իրիքյնակը կլխիս տիյերան շուռ կյար։ Գյիրթ վեր լուսինը տուս կյար, իրիքյնակը կյողը կենար։ Մհենգյ իրիքյնակը ախճիգյտ ա կլխանս վերը, տու տուս եկեր, հըմննչելան փախավ։

Թաքավերը ըսես ա. — Էտ ա՞ իլալ ըրազը՞տ։

Փեսան, թա. — Հա, էս ա իլալ, մհենգյ իմ աշկավս տեսի, ըրազս ըսեցի։

Մին քանե վախտանը ետը թաքավերը մռնես ա։ Տըղան թաքավեր ա տըռնաս, ախճիգյըն էլ՝ թաքուհի։ Տրանք շատ սերավ ուրուր նհետ ըպրես ըն։

www.naregatsi.org

45. ՄԱՐԴ ՆԱՆ ՆԱՄԱՐԴ ԱԽՊԵՐՔՅԸ

Ինխա ա, չինխա էրկու ախպեր։ Տրանք մին օր հաց ըն թխես, քյիս ղարիբոթուն։

Քյիս ըն, քյիս, հրղրցըմը տուզնըննաս ըն։ Մարդն ըսես ա.— Պեր քու հացտ օտինքյ։

Նամարդըն ըսես ա. — Պեր քու հացտ օտինքյ։

Վերչը մարդ ախպորը հացըն ըն օտըմ, պըրծնում։

Քյիս ըն քյիս, մին էլ ըն տուզնըննաս։

Մարդն ըսես ա.—Դե ախպեր, իմ հացըս պրծալ ա, պեր մհենգյ էլ քու հացտ օտինքյ։

Նամարդըն ըսես ա. — Հաց չօնիմ քյրեզ տալի։

Ըտրանք ըստեղ ուրուր անա ճուվվես ըն։ Նամարդը քյիս ա, քյիս, մարդը ետ ա մնաս, հրղրցնեն փուխես ըն։

Մարդը քյիս ա, քյիս, տսնաս ա մին ծամակում ծոխ ա եր ինխա։ Էտ ծոխեն յրա քյիս ա, տսնաս մին ճեղաց, նի յա մննես։ Տսնաս ա ճղացպանը մին քյոմբա քարան տված ըտեղ։

Տա կրակ ա ընես, քյոմբան թխցնես, ուտես, ճղացեն մաչին քոն ինխա։

Մին էլ տսնաս ա քըշերեն կեսըմը իրեք հոքյի՝ կյուլը, արշը, աղվեսը նի յըն մըննես ճրեղացը։ Տրանք ըսկսես ըն ուրոնց անա թարիփ անելը։

Արշըն ըսես ա.— Մին չինարու տակե օխտը կարաս վրեսկե օնիմ։

www.naregatsi.org

Աղվեսն ըսես ա. — Մին պարկ վրեսկե էլ յըես օնիմ։

Կյուլն էլ ըսես ա. — Մին չոբանի վխճարներե մաշի, մին սիպտակ վեխճար էլ յըես օնիմ, ընդրա կլոխը վեր կարին կտրին, տանին թաքավերեն տղեն հետե, ընդրա աշկերը կըլիվանա։

Մարդ ախպերը էտ լոխ ըսկըսնաս ա։ Տրանք, վեր լուսըսնաս ա, տուս ըն կյաս։ քյինիս։

Մարդ ախպերը տուս ա կյաս տրանց հետան քյինիս ա, տսնաս աղվեսը վրեսկուն պարկերը տուս ա կալալ, թա արև տա։

Մարդ ախպերը փափաղը պրտըտուս ա ընես, յրա պրծնես, Աղվեսը փըխչիս ա։

Մարդ ախպերը վրեսկեն հվքես ա, քյիս չոբանեն վխճըրներեն հետան։ Քյիս ա տրան քթնիս, յոր ա ունես էտ վրեսկան, ըտրան տաս։

Չոբանը վեխճարը տաս չի, ըսես ա. — Խրեգյ ա։

Չոբանեն ըսես ա. — Իրեք կյից վրեսկե էլ կտամ։

Չոբանը վեխճարը մուրթես ա, մեսը ուտես ըն, կլոխը տաս ա մարդ ախպորը։

Տա էտ կլոխը եր կալած կյաս ա դիբի թաքավերեն տոնը։

Մարդ ախպերը մարթկանց անա հրցնես ա, թա. — Թաքավերեն տոնը վե՞րն ա։

Նշանց ըն տաս, ըսես. — Թաքավերը հի՞նչիտ ա պեթկ։

Մարդըն ըսես ա.— Յրես քյիս ըմ ընդրա տղեն աշկերը սղըցնիմ։

Տրանք ըսես ըն. — Քյինիլ մի՛, խեղճ ըս, քու կլոխըտ էլ ըն կտրելու, լոխճին կլոխը կտրալ ա, վեր կրեցալ չըն տղեն աշկերը սղըցնին։

Մարդ ախպերը ըսես ա. — Հո՞ւնց անիմ, վեր կարիմ վեչ, թող իմ կլոխս էլ կտրե։

Էտ մարթիքյը թաքավերեն անա հրցնես ըն, վեր. — Ստի մին մարթ ա եկալ, ուզիս ա կյա տղետ աշկերը սղըցնե, թողինքյ կյա, թա՞ չէ։

Թաքավերն ըսես ա. — Թող կյա։

Մարդ ախպերը քյիս ա թաքավերեն տոնը։ Թաքավերըն ըսես ա. — Դե վեր եկալ ըս սղըցնելի, մին պեն ասիմ, վեր սղըցնիս թաքավերոթունիս կեսը քյըեզ ըմ տլական, թա չէ, կլոխտ կտրլական ըմ։

Մարդն ըսես ա. — Լավ, մինակ մին պեն, տղատ իրեք օր մեռած ա մնենական։

Թաքավերն ըսես ա. — Վեչինչ։

Մարդը տհենց էլ ընես ա։

Իրեք օր թաքավերեն տղան մեռած ա մնաս, իրեքինչի օրը

www.naregatsi.org

յավաշ-յավաշ եր ա կնաս, աշկերը պնաս, հորն ըսես. — Ըրեվուտ աշխարքը մըգամ ըստի յա՞ իլալ, յըես խե՞ ինդի ըմ իլալ։

Թաքավերն ստըեղ մարդին ըսես ա. — Թաքավերութիս կեսը քյըեղ ըմ տաս։

Մարդըն ըսես ա. — Ուզիս չըմ, տու մինաք ինձ օխտը ճորե, օխտը քյանդիր տո, վեչ մին պեն ուզիս չըմ քյըզանա։

Թաքավերը էտ լոխ տաս ա ըտրան։

Մարդը էտ լոխ յոր ա ունես քյիս աղվեսին չինարուն տակը։ Թաքավերեն նոքյարներեն նհետ չինարուն տակեն քարը պարան ըն տաս, աղվեսեն վրեսկեն պըռնես էտ օխտը ճորուն, քյիս։ Քյիս ըն հրաքցումը տսնաս մին մարթ հաց ա ուզիս։ Ուրան ախպերն ա ինիս։

Կյաս ա հետան հսնես, տսնաս վեր ախպերն ա։ Ըսես ա. — Ախպեր, հո՞ ւնց ըս, մին պեն տնես ըս, թա չէ։

Ըսես ա.— Չէ, լհա հարուր մանեթ ըմ աշխադանք ըրալ։

Նամարդը վեր տսնաս ա մարդ ախպորը ճըրոտենքյը, ըսես ա. — Ախպեր, պա էտ, շտղան ա՞։

Մարդն ըսես ա, վեր իստի, իստի տրեղան։ Ըտեղ նամարդ ախպերը հարուր մանեթը տաս ա մարդին, թա տար տո մերուցը, թող յոլա քյինին, յըես էլ ետ տեռնամ քյինիմ էտ ճրեղացը։ Մարդ ախպերը էտ օխտը ճորեն յոր ա ունես կյաս ուրանց տոն։ Նամարդը քյիս ա, քյիս, էտ ծմակումը ճղացեն ա հրսնես։ Նի յա մրննես մաչը, քշերը մնաս։

Տու մի ասիլ էլա էտ իրեք հոքյին կյաս ըն, նի մրննես ճեղացը։ Տրանք սկսես ըն պտմես, վեր տրանց վրեսկան տարալ ըն, վեխճարեն կլոխը տարալ ըն։ Տրանք իտի խոսելիս տեղը աղվեսը եր ա կնաս ըսկսես ճեղացը շոռ կյալը։

Շոռ ա կյաս, ըստեղ-ընդեղ եշիս, եշի՞ս, ախրը պըցրընաս ա, վրեննը տնիս տաղտին յրան, տսնաս մին մարթ ըտեղ։ Էն էրկուսին ըսես ա. — Սյ ախպերքյ, մեր դուշմանը քրթալ ըմ, էն ա ըստեղ։

Տրանք եր ըն կնաս նամարդ ախպորը ըտրղան տուս ունես, մաչան էրկու կես ընես։

www.naregatsi.org



46. ԸՐԱԾԸՏ ԱՌԱՋԸՏ ԿՅԱ

Ընիս ա, չինիս մին հարուստ մարթ։ Էտ մարթին լավ հեյվըննի յա ընիս, տափեր ա ընիս, վերչը հարուստ մարթ ա ընիս, ինքյն էլ մին շատ սկպոյ մարթ ա ընիս, հանց հըմարե, հինչ նոքյար վեր ընիս ա, ըտրանա կյենդատ ընելավ ըն շոռ կյաս։ Էտ մարթն ուրան նոքյարնուն հախկըն էլ չի թամամ տաս, վեր քշեր-ցիրեկ էն ըն ընիս ուրան հետե չըրչըրվես։

Մին տարե սով ա ընգնես, ըտրա հեյվանը, պեհը լոխ փուչընաս ա, տափերը ծեռքան ինքյ ըն ունես, թուղես լութ-մամայիս։ Էտ մարթը միկա յա մնաս, թա պըլանաս։

Մին օր եր ա կնաս, թա վեր ըստի քյիսիբացալ ըմ, էն ա մին լավ խոսկ օնիմ, տանիմ ծախիմ, պիրիմ ընդրանավ ապրիմ։ Եր ա կընաս քյնիս։

Շատ ա քյնիս, թա խրեգյ, էտ աստուծ կգյիդա, ըտրա առաչը տուն ա կյաս մին ծիավուր, թա՛.— Ախպեր, թո՞րն ը՞ս քյնիս։

— Քյնիս ըմ խոսկ ծախիմ։

— Հի՞նչ խոսկ ա, վեր ծիես ըս, պահե, քյըեզ հարկավեր կկյա։

Էտ մարթը ըսես ա.— Անկյին խոսկ ա, վեր մուշտաըրի տուն կյա, տլական ըմ։

Էտ ծիավուրը ըսես ա. — Դե վեր շատ ըս թաըրիփ ընես, յըես մին մուշտաըրի, ասե կյինը, ինքյ օնիմ։ Համ էլ ասե, տըեսնամ էտ հի՞նչ խոսկ ա։

www.naregatsi.org

էտ քյըսըբացած մարթը, թա՛. «Ըրածըտ առաչըտ կյաց», խոսկս էս ա, հախկըն էլ վեց մանեթ ա։

էտ ծիավուրը ըսես ա. — Հա, լավ խոսկ ա, խոսկըտ, ամմա հախկըտ թանգյ ա, ծեռքես ավալ — ախըր իրեքյ մանեթ փուլ կա, պեր ինձ տոր, յոր օնիմ։

էտ մարթը ըսես ա. — Լավ, եր կալ։

Իրեք մանեթը յոր ա ունես, տոն կյաս։ Էն ծիավուրն էլ քյնիս ա տոն, թա. — Մին խոսկ ըմ սըվերալ, տանիմ տեսնամ, հիշտեղ հարկավեր կկյա, յըես էլ կխարջիմ։

Քյնիս ա մին մեծ քաղաք հըսնես, տըսնաս ժողովուրթը օրախ, քյեփըրնեն քյոք, ամմենը ուրանց կործեն։ Հրցընես ա, թա.— Ա՛ ժողովուրթ, ծըղանա մինին ըսկյի մին դռրդ չօնե, վեր ըտի լոխ օրախ ըք։

Ըստահանք ըսես ըն. — Մեր թաքավերը հանց թաքավեր չի, վեր մընդ յրա դռրդ թողե, հինչըրնես ա պակաս, վեր օրախ չընինքյ։

էտ եր ա կնաս, քյնիս ըտահանց թաքավերեն կոշտը, թա. — Թաքավերը ապրած կենա, հինչու անիս, առաչըտ կըկյա։ Թաքավերը գյիդաս ա թա, վեր երգյիրը բուլլուղ ա պըհես, ընդրա դռրդեն ա ըտի ըսես։ Պիրիս ա, ըտրան լավ պադեվ տաս, վըեսկե տաս, թա հիբը սըերտըտ պեն օղե, եք. էտ մարթը օրախ-օրախ եր ա կնաս, քյնիս։

Մին քանե վըխտանը ետը մընէլ ա կյաս, թաքավերը մնէլ ա տեսը-տենը տաս, հրդե տինիս։ Մին օր ուղիս ա, թա կյա, սխտոր կերած ա ընիս, մըթկումը ըսես ա, վեր քյինիմ թաքավերեն կոշտը, պըրանաս վըետ կկյա։ Պիրիս ա պերանը մին լաչակ կապես, քյինիս։

Թաքավերեն նաղիր-վաղիրներան մինին կլոխը յոր չունես, վեր էտ մարթը կյաս ա։ էտ վեզիրը ըսես ա. — Մին խտուրու խոսկու հետե, խե՞ պադեվ ա ընես էն փորմեն։ Ցրես հո՞ւնց անիմ, վեր ըտրա սպանիմ, էլ կյա վուչ։

էտ մարթը վեր քյինիս ա, վաղիրը քյինիս ա թաքավերեն կոշտը ըսես. — Թաքավերը ապրած կենա, էն մարթը վեր կյաս ա, խե՞ հրըցընես չը՞ս, ասիս. «Պերանըտ խե՞ կապալ ըս»։

Թաքավերը ըսես ա. — Դե, բալամ հի՞նչ հրըցնիմ, մարթ ա, բալի մին դռրդ օնե, կապալ ա։

Վաղիրը ըսես ա. — Թաքավերը ապրած կըենա, էտ մարթը ըսես ա, վեր թաքավերեն պըրանան վետ ա կյաս վեր քյինիս ըմ կոշտը, կըպես ըմ, հանցու վետը գյիդամ վեչ։

Թաքավերը ուրան մթկըմը կզնըվես ա։ էտ դռնումըն էլ էն

www.naregatsi.org

մարթը, վեր կյաս ա, թաքավերը խուսես չի։ Մին թոխտ ա կյիրիս, տաս ուրիշն, թա տար տոր մեր ղըսաբեն։ Թոխտումը կյիրած ա ընիս, թա՝ «Հինչ մարթ կյա կոշտտ, սպանես»։

Էտ մարթը յոր ա ունես թոխտը, էլ մաչինը կըրթիս չի, թա հինչ ա կյրած։ Տունս ա կյաս, քյինիս, մղակումը էն վաղիրին մին տղա յա ինիս, քսան տրեկան։ Էտ տղան ըսես ա. — Էտ թոխտը ինձ տոր, յըես լհա քյինիս ըմ ղսաբեն կոշտը, տանիմ ուրիշն տամ։ Թա վեր թայդի յըս, տու քյինի տոն։

Էտ մարթը էտ թոխտը տաս ա վաղիրին տըղեն, ինքյը ըրխըյին քյինիս ուրիշնց տոն։ Ամմա վաղիրին տղան էտ թոխտը, վեր տնես ա ղըսաբեն տաս, ղասաբը դաստի փռնես ա, մուրթես։

Էքյսը էտ մարթը մըն էլ ա կյաս թաքավերեն կոշտը։

Թաքավերը մնաս ա ըրմացած, թա. — Պա էս խե՞ սաղ ա հալա։

Վաղիրին ծեն ա տաս, հըրցնես, տսնաս սոքյ-շիվանը ընգած ընդրա տոնը, թա տղան մորթալ ըն։

Ետնան ամմեն հինչը վեր պըրզվիս ա, էն մարթը թաքավերեն ըսես ա. — Վեչինչ, թաքավերն ապրած կենա, ըրածտ առաչըտ ա եկալ։



www.naregatsi.org



47. ՇԱԳՅԻՐԴ ՄՈՒԽԱՆԸ

Ինխա ա, չինխա մին քյաւսիբ կընեգյ ա ինխա։ Մեհետ տահանք եր ըն կընաս, քյինխա քաղաք։ Քյինխա ըն էտ կնգանը ախպորը տոնը։ Մին քանի օր ըտեղ կընալանը ետը, տըսնաս ըն վեր ըտեղ փխս ա։ Ուրանց փխս ըն յըշխա։

Էտ կընեգյը եր ա կընաս, թա՝ — Բալա՛, եք, քյինքինքյ տոն, բաւլի մին թաւհրաւվ ապրինքյ։

Տղեն անըմը Մուխան ա ինխա։ Էտ տղան յոր ա ունես, ըսես. — Ա՛ մար, տու քյինի, յըես ըստեղ կընաս ըմ։

Դային ըտրան ըսես ա. — Վախի մեր, դային քյըեզ էնքան օքուտ կտա, վեր քու օխտը պորտիտ էլ հերիքյ ա, լհա թաւքյ իմ խոսկիս անջուկ օնխա։

Մուխանեն մարը լաց ինելաւվ հղե յա ընգնես բիդի տոն։

Մին օր Մուխանը թա.— Դայի էշը եր կալ քյինքինքյ շըհաւրը։

Էշին յըրա մին քանի չըվալ, պեն ըն տինխա, հղե ինխա բիդի թաքավերեն վըեսկուն ամբարը։ Մուխանը պիցիրնաս ա հունրթը, ահետ ընդղան քյինդիրաւվ կախ ինխա բիդի կըլխիվեր, վըեսկեն ըծես չըվալը։

Դային տիյերան ծիքյ ա տաս պըցրցընխա։ Քյանդիրը թաւզադաւն կախ ա տաս, Մուխանը պիցրընաս ա։

Ահետ տինխա ըն էշին յրան, քըշխա, պիրխա ունրանց տոն։ Ըտրանա ետը մին խիլլա վախտ տրժըրոթուն չըն քըշխա։

Թաքավերեն մարթիքյը քյիս ըն, թա վըեսկե յոր օնին, տըսնաս

www.naregatsi.org

ըն վեր, վրեսկեն պըկասալ ա։ Հինչքան մեչը մարթ ըն քըցիս, կըրես չըն, թա կյողեն ճարին։

Թաքավերը վեր էտ ըսկնաս ա, ըսես ա թա կյիժվի, ճըղճըղաս ա ուրան վազիր-նազիրին յրան, թա. — Քուռակու տղեքյ, տուք ըշտեղ ը՞ք իլալ, վեր մեր մուլքյը կյուղացալ ըն։ Դե քյեցեքյ վրեսկուն ըմբարեն չորք թըրաչիվը չալա կտրեցեքյ, մաչը կուպրավ լըցեքյ, վեր կյողը կյա մաչն ընգյնե, փըռնինքյ։— Թաքավերեն մարթիքյը տի էլ ընես ըն։

Մուխանը տըսնաս ա, վեր վրեսկեն պրծնելի յրա յա, էլլա դայուն նհետ, էշը ըռշկընեն ըրած հղե յըն ինիս բիդի թաքավերեն վրեսկուն տեղը։

Դային ըսես ա. — Էս ղոնումս էլ յըես նի մննիմ։

Լհա վրեննը փուխիս ա, բուրդեն խրվիս ա կուպրավ լիգյը չալան, էլ կըրես չի, թա տուն կյա, էլ մին էլ ճար չինիս։

Մուխանը ճարը կտրած ղոմեն տուն ա ունես, դայուն կլոխը կտրիս, ջանը թողիս կուպրըմը խրված։ Ետ ա տեռնաս, կյաս տոն։

Կլոխը թըղիս ա, ետնան դայուն կնգանը ամեն հինչը ըսիս։

Էքյսը թաքավերեն մարթիքյը քյիս ըն տըսնաս մին անկլոխ մարթ կուպրուսը խրված։

Մնաս ըն մաթ մնացած։ Մեյիդը տուն ըն ունես, տինիս հղցեն մաչին, էրկու ստրաժնիգյ էլ կոխկեն։

Մուխանը էտ սկնաս ա ըսես.— Քռակեն, քյննական ըմ դայուն կյուղանամ, պիրիմ։

Մին եղան ա յոր ունես, էշին նատիս, տըմբըլա թխելավ քյիս հանիս դայուն մեյիդին։ Վեր ստրաժնիկնեն ըտրան տըսնաս ըն, ըսես ըն. — Ա՛յ մարթ, առաշկըտ ծամակ ա կյաս, քշերըս ըստեղ կաց, ուռուբանա. կըքյնիս։

Մուխանն ըսես ա. — Չէ, քյինիլ բիդիմ, վրխիս ըմ էտ անկլոխ մարթը էշս կյուղանա։

Վերչը մընաս ա, հաց, արաղ ա տուն ունես, ստրաժնիկներեն հրփցնիս, լուլ շինիս, դայուն մեյիդը կըպես ա էշին, էշը հըղն տինիս, ինքյն էլ ըտրանց քըշտին պարանց ընգնիս, քոն խնիս։ Էշը ինքյը-ինքյը թուշ հըսնես ա տոն։ Քռակենը մեյիդը թըղիս ա։ Ուռուբանա եր ըն կընաս։

Էտ Մուխանը էշըս, հա՛ էշս ընելավ, ճղճղաս ա, լաց խնիս

Ստրաժնիկնեն պիրիս ըն էշին հախը տաս Մուխանեն, հղ։ տինիս։ Ուրանք էլ քյիս թաքավերեն ըսիս։

www.naregatsi.org

— Թաքավերն ապրած կենա, քըշերես եկալ ըն մեյիդը կյուղացալ։

Թաքավերն ըտանց յըրան կըզնվես ա։

Էս դինումս էլ Թաքավերը պիրիս ա մին քանե օղտ ուրուր անա կըպուտիս, թա. — Մհենգյ էլ հու վեր կըրիս ա, թող կյա կյուղանա։

Մուխանը մին պերաք սիմ ա յոր ունես, կպիս ըռաշկե օղտեն չըվալան, կյաս տոն։

Քշերը վեր ղարավուլչիքյը քոն ըն ինիս, սիման ծիքյ ա տաս, օղտերը լոխ պիրիս ուրանց տոնը, պեռները վեր ունես, օղտերն էլ մըրթուտես, ըծիս կըրըսնեն։ Էքյսը Թաքավերը վեր սկընաս ա, ընդրանա շատ ա կզնըվես։

Էտ վախտն էլ մին օրիշ Թաքավեր խայտառակ ա ընիս, էս Թաքավերեն, թա. — Տու հի՞նչ Թաքավեր ըս, վեր կրիս չըս մին ժուլիգյ փոնիս։

Էս Թաքավերը ղըզաբու յա կյաս։ Հրամմանն ա տաս, ըսես. — Հու վեր կյողը քթենա, ուրան քաշավը մին վրեսկե յըմ տըլականս։

Մին պառավ կնեգյ տուն ա կյաս, Թա յըես կըքըթնամ։ Քիյս ա տոն, շենը շոռ կյալալ օղտու մես ուզիս։ Մուխանանց տանը քռակենը պիրիս ա օղտու մես տաս էտ կնգանը։ Ահետ էտ Մուխանը տուն ա կյաս տըռնան տըեսնաս, վեր պառավը դըրբըզեն նշան ա ըրալ, ինքյն էլ օղտու մըեսը ծեռքեն քյնիս ա։ Մուխանն ըսես ա. — Ա՛ պառավ, էտ խե՞ խրեգյ ըն տվալ, քյինինքյ շատ տամ։

Տնիս ա կլոխը կտրես քցիս կարասը։

Թաքավերը տըսնաս ա պեն չի տուն կյաս, մին պեն ա կյիրիս շըհյարեն պըտերեն նեստա տաս, վեր էտ կյողը հու վեր վերե յա, թող տուն կյա։

Մուխանը տուն ա կյաս։ Թաքավերը պիրիս ա, թա քըցի դուսաղխանան, վեր էքյսը բիդի կախ տան։

Մուխանը ղարավուլչուն ըսես ա. — Թողեցեքյ քյնամ չոլը, էլհա կյամ.— Պիրիս ըն ծեռքը բըխով քցիս, Թա՝ քյինի։

Ա՛յ հա՞յ Մուխա՞ն, բըխովը քարեն տո, կոտրե ետնան, էն վեր էն օղտեն մեսը ըզող պռավեն կոռնը էնա իլալ կուտնուտակեն, էտ չուրացած կոռնը կկապե մին քոլու անավ, ինքյըտ փախե։

Ղարավուլչին ծիքյ ա տաս, ծեն ա տաս, Մուխանը քյիս չի, Մին խիլլա վախտանը ետը տրանք քյիս ըն տըսնաս քոլու անա մին չոր կոռն ա կապած։ Քյիս ըն Թաքավերեն ըսիս։

www.naregatsi.org

Թաքավերը լափ կըտղես ա։ Թաքավերեն ախճիգյը ըսես ա. — Ա՛ հաբր, ինձ պեց թող, յըես քյինիմ կյողեն քթենամ։

Թաքավերը թուղես ա։ Ախճիգյը յոր ա օնես սաղ քղաքեն ժողովուրթը հրվըքես, պիրիս ղալ ընես։ Իրեք օր տունըն, ծարավ պըհիս։ Մեր Մուխանը սուարփուս եր ա կնաս, քյինիս Թաքավերեն ըխճկանը կոխկը, ըսես Թա. — Հինչ ըրալ ըմ, յըես ըմ ըրալ, դե հինչ օգըմ ըս, ըրա։ Ինքյն էլ շատ նախշուն տղա յա ինիս, պարանց ա ընգնիս, Թաքավերեն ըխճկանը նըհետ քոն ինիս։ Ջրերը, վեր կործը պրծնիս ըն, Մուխանը քոն ա ինիս։ Թաքավերեն ախճիգյը մըկրատավը Մուխանեն բեղեն կեսը կըտրիս ա, ինքն էլ քոն ինիս։ Էս դռնըմ էս Մուխանը եր ա կնաս, մկրատը յոր ունես հինչքան բղաւվուր մարթ կա, էտ Թուփ եկած ժողովուրթեն մաչին, լոխին բեղին կեսը կտրիս։

Էքսը Թաքավերեն ախճիգյը ծրծըղելավ քյիս ա, Թա. — Ա՛ հար, կյողեն քըթալ ըմ, հունրուն բեղեն կեսը կտրած ինի, էն ա։

Հի՛նչ... Քյիս ըն տըսնաս լոխ էլ կես բիղանի յը՛ն։

Թաքավերը ուրթունմն ա ուտես, Թա. — Հու վեր վերե յա, թող կյա, ասի։ Ցրես ընդրան նի չըմ կյըլյական։

Մուխանը քյիս ա, Թա. — Թաքավերն ապրած կենա, լոխ յըես ըմ ըրալ։

Թաքավերն ըսիս ա. — Դե, լյավ, Թաքավերոթունս քյըեզ ըմ տամ, ախճիգյս էլ, թյաքի ինձանավ շուլուղ անող Թաքավերին կլոխը մին պեն պիրիս։

Մուխանը Թա.— Մին կյունլուն մորթե տո, ընդրան սաղ-սաղ պիրիմ։

Թաքավերը, հինչ ուզիս ա, տաս ա։ Մուխանը մին ղուբի էլ յոր ա ունես, մին փայտոնե մաչի տինիս, քյիս էն օրիշ Թաքավերեն դըրբըզավը նի մրննիս, հունցու ղոնաղ։

Ջրերը եր ա կրնաս բաղըմը կյունլին մորթեն շոռ ունես, քիշերեն կեսըմը նի մննես Թաքավերեն կըլխանը երը զընգոլակնեն զընգզընգցնելավ, ղաման ծեռքեն վըեննը կրնաս, Թաքավերը եր ա Թուչիս։ Մուխանը, Թա.— Ցրես Կափրիել հրիշտրակն ըմ, եկալ ըմ քյըեզ տանիմ, հրվաքվի, քյիս ընք երգյինքյը։

Թաքավերը տունղտունղաս ա, Թա. — Ջանըս քե մատաղ, թող էքյուծ կենամ բաղարաքյ անիլ տամ, խոսցըս, պենին տըեսնամ, ահետ եք ինձ տար։

— Լյավ։

Էքյսը քըշերվա էտ վախտը տեղան տունս ա կյաս, կըրըվաթեն

www.naregatsi.org

տակեն կյեղած կյուլին մորթեն ուրան զնգոլակներավը յոր ունես, փըթըթես, վեր սաս չանե, քյինիս թաքավերեն կյումըմը կնաս, յավաշ-յավաշ կյաս թաքավերեն ըկուշկավը նի մննես, կլխանը երը կըղնիս։ Թաքավերը մնաս ա բըղըրյար։

Մուխանն ըսես ա.— Դե եր կաց քյինինքյ։

Թաքավերը եր ա կընաս։ Մուխանը ըտրան տընես ա բաղը, ըշտեղ ծըռերեն տակեն էն ղութին կյեղալ ար։ Ըսես ա. — Նի մուտ մաչը։ Թաքավերը նի յա մննես ղութին։

Մուխանը մին թաՙհրաՙվ ղութին տընես ա, փյտոնըմը տինիս, փայտոնը քըշես թուշ ուրանց թաքավերեն պալատը, ըսես. — Թաքավերն ապրած կենա, էՙս ա քյըեզ յրա մազաղ ընե՞ս, թա խե՞ չըս կըրես քու երգյիրըմըտ կյուղոթունը թաՙրգյ անե՞ս, դե մհենգյ տես, յըես ուրան էլ ըմ կյուղացալ, դե թող մհենգյ էլ տնաՙզ անե։

Էտ պերած թաքավերը տկլոր, հըմընչիլավ ըսես ա. — Դե էլ անիլ չըմ, ինձ պեց թողեցեք, յըես քյինիմ։

Պեց ըն թուղես, քյինիս ա։ Ընդրանա ետը թաքավերը ուրան ախճիգյն էլ ա տաս Մուխանեն, թաքավերոթունեն կեսն էլ ա տաս, օխտը օր, օխտը քըշեր հրսանիքյ ըն ընես։ Ըտրանա ետը Մուխանը ժողովուրթին լաՙվ ա պըհես։

www.naregatsi.org



48. ՔՈՍԱԿ ԱԽՊԵՐԸ

Ընըմ ա, չընո՛ւմ, մին մարթ ա ընո՛ւմ։ Էտ մարթին չինացիք Քոսակ ախպեր ըն ասում։ Էտ մարթը վեր ուրաեն Քոսակ չասին, պիրում ա մին քյեփ սարքըմ։ Մին եզն ա մորթում, լոխճին ղոնաղ ծեն տամ։

Կյամ ըն օտում, քյինելիս լոխ ասում.— Ապրիս, Քոսակ ախպեր, շա՜տ ապրի՛ս, Քոսակ ախպե՛ր։

Քոսակ ախպերը եր ա կենում էշը կաշվավ պեռնում, քյինում վեր տանե ծախե։ Վեր մրթնըմ ա, հանում ա մին շեն, քյինըմ, վեր մին տան ղոնաղ ըղնե, տրեսնում տանը մինակ մին կնեգյ։ Էլ քյինըմ չի, տռանը վրեննն ա կենում։

Շատ ա կենում, թա խրեգյ տեսնում ա մին մարթ ա կյամ պառուգո՛ւն ասում։

Էտ եկողը ասում ա. — Պա խե՞ տռանըն ըս վրեննը կացալ։

Ասում ա. — Տանը մարթ չիկար, քյեցե վեչ։

Էտ մարթն ասում ա. — Ե՛ք քյինինքյ։

Ամմա Քոսակ ախպերը ասում ա. — Կյամ չը՞մ։

Էն մարթը ասում ա. — Խե՞։

Քոսակ ախպերը ասում ա. — Վեր կյամ, էշս էլ բիդի պիրիմ։

Ասում ա. — Պա դե էշն էլ տանինքյ, կյումումը կըկապիս։

Էշը տանը մղակըմը կապըմ ըն, ուրաենք ստոլին նստած հաց օտում։ Մին խիլլա՛ւ ընցնում ա, Քոսակը օզում ա թա՛ շլափկան դուզուցընե, չունքյի վեր շըլըփկումն ա միշտ էշին կյո՛րե տվալ, էշը տեսնում ա թա չէ, զռռամ ա։

www.naregatsi.org

Տնատարը ասում ա. — էշը հի՞նչ ա ասում, տու կըգյիդյա։
Ասում ա.— էշն ասըմ ա. «կրվաթեն տակեն մարթ կա»։
Տնատարը եր ա կենում կացնավը թխում, էտ մարթեն սպանում։
Սպանում ա թա չէ, Քոսակեն ասում ա. — Պա էս հո՞ մց անիմ, վեր մեր շենացեքյ գյիդյան վե՞չ։
Քոսակն ասում ա. — Յըես լավ կըփըռտակիմ։
Տնատարը տրան մին քսակ վրեսկե յա տամ, թա տար փըռտակե։
Քոսակը կյամ ա մին շենու ղրաղե տրեսնում մին կալ ցորեն, կալին մաչին թուփ ըրած, մարթ չկա, տանում ա սպանած մարթը տընում ցորնեն մաչին, էշը անում ցորնեն յրա։ Տարը հռնուցա ուշունց ա տամ, թա՝— էշը ցորնան տեն ըրա։ Տա տեն չի անըմ։ Յորնատարը կյամ ա թխում, սպանված մարթը վեր ա ընգնում։
Քոսակը տուա ա կյամ, ասում. — Խե՞ յըս իմ հնգերս սպանալ։
Յորնատարը ասում ա. — Բալա՛մ, մին խաթա յա, ընգալ ըմ, կա մին քսակ վրեսկե տամ, տար փըռտակե։
Դե համ էլ էն վախտը հրուտեն հետե վրեսկեն հի՞նչ ա։
Յոր ա օնում էտ վրեսկեն էլ պիրում, մեռալը թաղում մին խընդյակում, ինքյը կյամ ուրանց շենումը չավ անում, թա. — Կաշին տարալ ըմ վրեսկավ փոխալ, պերալ։
Շինացեքյ եր ըն կենում ուրանց տվրնեն տանում, մորթում կաշին տանում, թա ծախին, ամմալ չի կյամ։
Կյամ ըն շենը ասում.— Քոսակ ախպեր, քյալագյ ըս եկալ մրեզ։
Քոսակ ախպերը ասըմ ա.— Ծովումը էն ա, լավ թմաշա կա, քյինինքյ։
Շինացեքյ լոխ քյինըմ ըն։ Հղցեն քոսակը պտահում ա մին շորանի, ընդրա նհետ շորերը փոխում ա, ընդրան ըղարկում ծովեն կոշտը, թա էս ա յըս էլ ըմ կյամ։
Շորանը քյնամ ա, թա ծովեն եշի, շինացեքյ կուսիե յըն տամ քցում ծովը։
Քոսակը շուբանեն վրխճըրնեն յոր ա օնըմ, կյամ տոն, թա. — Շեր նանը մղոված, ինձ քցեցեքյ ծովը, ամմա ընդեղ լոխ վեչխար ա, դե քյեցեքյ տուք էլ պերեքյ։
Շինացեքյ լոխ քյինում ըն, նի տեռնում ծովը, ամմա Քոսակը լալ ա ապրում։
Քոսակը վեր մինաչ ա մնում, ասում ա. — Էս հի՞նչ լավ ա, շատ ժողովուրթ ինին, միկա էլ ուրանք օտին, ինձ նհետ ապրին, քան թա մինաչ յըես։
Ըստուծանա իրեք խնձոր վեր ընգնե. մինը՝ ինձ, մինը՝ քյըեզ, մինն էլ՝ էն մարթին, վեր լըսըմ ա։

www.naregatsi.org

49. ՏՎԸՐԱԾԵՆ ՏՂԱՆ

Իլալ ա, չիլալ մին թաքավեր։ Ըտրան իլալ ա մին մադար տղա, մին էլ մին մադար ախճիգյ։

Ժուվ ա անց կենըմ, ժամանակ ա անց կենըմ, էտ թաքավերեն տղան ետ ա տրեռնըմ ուրյան մորը, թա. — Ա՛ մար, պա հես ա տասնօթ-քսան տրեկան տղա չըմ տրեռալ, հալե իմ հոր կայքը տեսալ չը՞մ, մին պլատեն պլենիքյը լոխ ինձ տո, քյնամ տեսնամ՝ հի՞նչ կա, հի՞նչ չիկա։

Մարն ասում ա. — Հի՞նչ կա վե՞ր, կա պլենիքյը, քյնա, քառասուն տյոռնը կա ուրյուր հետա մին-մին պեց, տես քու հոր հիշքան կայք օնե։

Տղան յոր ա օնում պլենիքյը, մին-մին տռնները պեց անում, ամմա լուխճան վերչին տռանը պլենին մարը տված չի ինում։

Տղան մնամ ա զըրմացած, թա. — Ըստեղ հի՞նչ կա, վեր պլենին տվալ չի իմար, հալբաթ մին խալվաթ պեն կա՞։

Քյինամ ա մորը կոշտը, զըրմացած, թա.— Ա՛ մար, ասե տեսնամ, թա հինչո՞ւ հետե չըս վերչին տռանը պլենին տվի՞լ։

Մարը խըրըվխարավ ա կյամ. թա.— Վերթի ջան, քյըզանա հի՞նչ կյեղիմ, քու հաբր քյնալիս ասալ ա, են տանը պլենին վեչ մինին տաս վուչ, յըես էլ չըմ գյուդում, թա ընդեղ հի՞նչ կա։

Տղան պլենին յոր ա օնում, ուրխացած վազ տամ, քյընամ պենըմ։ Նի յա մննում մաչ ղոլը, հի՞նչ տրեսնըմ, ամա՜ն-ամա՜ն։

www.naregatsi.org

Մին հնուրբփաւրի ըխճըկա նկար պատան տված տեսնալըն ըբաւստ ուրաննան քյնամ ա, օշը տանում, վեր ընգնում։

Շատ ա կենըմ, խրեգյ ա կենըմ, օշը կլոխըն ա կյամ, եր ա կենըմ նկարը պատան պուկըմ, պտատըմ, ջուբումը տինում, տունա կյամ, մորը ծեն տամ, թա. — Ա՛ մաւր, ճելլի պադրաստոթուն տես, հրամման տո ծիս թամքին, էքուծ քըշըրհանա քյընննաւկան ըմ ըռնու կյինավ էլ ինի ախճիգյը քթեննամ, պիրիմ։

Մարն ասում ա.— Վերթի ջան, վեր գյիդաս, թա էտ ըխճկանը դաւրդան հիշքան թաքավերոթուննի յըն փչացալ, սկի քյընաւլ չըս նըհախ տեղան։ Քու հաւր էլ ա քյեցալ, մհենգյ հո՞ր ա, հետնը թեփուռը ըրվում չի՞։ Օղում ըս տու վէլ քու հոր մնան կորչի՞ս։ Չէ՛, բա՛լա ջան, քյինում մեր, յըս քյըեզհետե մին լաւվ ախճիգյ կօզիմ։

— Ա՛ մաւր, իմ ասածըս ասած ա, վեր մըեռնիմ էլ, բիդի քյինաւմ, պիրիմ։

Մարը տեսնըմ ա, վեր տղան խոսկեն պենդ ա վեննը կացած, պադրաստոթուն ա տեսնում, պրծնում, հղե տինում։

Էտ տղան շատ ա քյինաւմ, խրեգյ ա քյինաւմ, մին շենըմ մին պառավ կնգա տան ղոնաղ ա ընգնում։

Պառավը հրցնում ա, թա. — Բալա ջան, իտի մինաւկ ըշտե՞ղ ըս քյինաւմ։

Տղան մին-մին դաւրդերը նաղլ ա անըմ։

Պառավն ասըմ ա. — Բա՛լա, մին ծեռքը ծափ չի տալ, տու էլ մին չըլըմսըզ տղա։

Տղան ասըմ ա. — Նանի՛ ջան, պա հի՞նչ անիմ, լաւվ, մին թաւհրը չիկա՞։

Պառավը իստի մին ջողաբ ա տամ, ասըմ. — Բալա ջան, իմ տղաս վեր քյըեզ նհետ ինի, անպայման կործերըտ աչ կինի, հաճող կինի։

— Պա շտե՞ղ ա տղատ, էտ լհա՛ մին լաւվ պեն ա, հնգյեր չօնիմ, թող ինձ նհետ կյա։

— Բա՛լա ջան, պա շտե՞ղ ա, վեր ասիմ կյա, ըստրանա մին քանի օր առաչ մեր շենին քյոխվան մին քյաւսիբ մարթու փռնում ա, շըլլաղավը թակըմ, թա էս սրհաթես խարջըտ տոր։ Տղաս ըսկանում ա քյուխվեն ըրարմունքը, ինքյն էլ իտի փիս պենները սիրըմ չի, հաւվսաւլա չանըմ, եր ա կենըմ, քյնում ինքն էլ քյուխվեն փռնըմ, քու ծղած մին լաւվ տըմբըզըմ, ծեռքը նշանց տամ, հիշքան ասիս։ Աւսում ըմ, ա՛յ բալա՛մ, կործ չօնի՞ս, էլա ինձ եշըմ չի։ Վե՛րթի ջան, ըստեղ ըն ասալ, թա. «Հաւվսաւլան գյանք ա»։ Հաւվսաւլա չըրավ,

www.naregatsi.org

մհենգյ պրիստավը փռնալ ա, ծակը կոխալ։ Վերթի ջան, հալա ջահիլ ըս, ինձ թա անջուվ անիս, վնաս չըս անել։ Հավսալան գյանք ա, հավսալա ըրա, տեսնանք ըզադըմ ըն տղես, մինակ էն կըկարե դարդիտ դարման անե։

— Նա՛նե ջան, տղետ ըզադելը իմ պարթկըս։

— Պա հո՞ւնց կըզադիս, բալա ջան, հոր ա՞, թա իտի մին պեն անի՞ս։

— Կանիմ, կանիմ, արխային կաց, նանե ջան, յըես էս երգյիրին թաքավերեն տղան ըմ, հենց էս սհաթես յըես պրիստավեն հրամման կտամ, պեց կը թողե շան նըման։

Պառավը ուրխընելան նհետ սկսից ըրտասունք թափելը։

— Լաց մի նիլ, նա՛նե, կըզադիմ, ամմա ասե տեսնամ, թա տղատ հի՞նչ կործ օնե քյուխվեն նհետ, վեր թակալ ա։

— Բալա ջան, աթալարը ասալ ա. «Էծը էծին հետե լավ ա, քանց մին սուրսու վեխճարը»։ Պա վեր տըվըրածեն տղան ուրան նման քյասիբ մարթին հրեյին հրսնե վուշ, հո՞ւ բիդի հրսնե՞։ Ընտրա հարը տվարած ա իլալ, ղորմի ընդրան, հալա ուրան գյանքըմը մարթու փիսոթունն չըրա՞լ, լվուրթունա կըմա՞ն, ուրան տղեն էլ իտի յա տաս տվալ, թա քյասիբներեն հրեյին միշտ կհրսնիս։

Էս խոսկեն նհետ խեղճ պառավըն սկսըմ ա լաց ինիլը։

— Լաց մի ինիլ, նա՛նե, մարթիտ թողած խոսկերքը տղատ կըդարալ ա, ափարիմ նա, յըես ընդրան էս սհաթըս կըքյինամ ըզադիմ, ճակատը պաչիմ։

Թաքավերեն տղան քյինամ ա պրիստավեն, քյուխվեն փըռնըմ, կպոտըմ, քցըմ ծակը, պռավեն տղեն էլ ըզադըմ։ Տվըրածեն տղան ընգնում ա ուրան ըզադող տղեն կոլավը, պըշպըշորըմ։

Կյամ ըն տոն։ Թաքավերեն տղան դարդերը նաղլ ա անըմ։

Էքյսը քըշըրհանա տվըրածեն տղան մըն էլ թաքավերեն տղան նստըմ ըն ծիյենը, հղե ինըմ։

Շատ ըն քյինամ, խրեգյ ըն քյինամ, ըռըշնեն էրկու հղե յա կյամ, մինը կարճ կածան, ամմա ծմրկներեն մաչավը։ Էտ կծանըմը թուփ տեռած ըն ինըմ ըշխարքես մըրչեմնեն։ Էն մին հղեն էլ ինում ա էրկան, լեն, տասը օրվա հղե։ Ըստեղ տվըրածեն տղան օգում ա թաքավերեն տղեն քշըռելի, փորցելի հետե մին հարց տա։

Ասըմ ա. — Ախպե՛ր, ասե տեսնամ, վե՞ր հղըցավ քյինանք, վեր էս կըծանավը քյինանք, մին օրըմը տեղ կհասնինքյ, ամմա էս հղեն սաղ միրչեմն ա։ Էն մին հղեն լեն ա, թամուզ, ամմա էրկան, տասը օրվա հղե յա։

www.naregatsi.org

Թաքավերեն տղան ասըմ ա. — Լեն հրաղցավը քյինանք։

— Խե՛, ևք էս մոտե կծանավը մին օրըմը տեղ հըսնինք։

— Չէ, ախպերըս, պա էն մըրչեմնեն էլ ըն սունչ-կենթանի, նահանց էլ ա աստուծ ստեղծալ, վեր ապրին, վեր ինդի քյինանք ծիլանոցը վըններեն տակեն մըլյոնավեր մըրչեմնը կըստակեն, լավ ա էրկան հրաղցավը քյինանք։

Տվըրածեն տղան տեսնալավ, վեր դուզ ա ասըմ, վեր ընդրա խելքը թամամ ա, ծուվըմ ըն լեն հղեն, հղե ընգնըմ։

Մին խիլլա քյեցած, բուրդան մին սաս ըն սկանըմ. «Տվըրածեն տղա, տրվըրածեն տղա»։

Չորս ունդյունին նշըմ ըն, պեն չի ըրվամ։ Էտ վախտը մին թվավուր միրչեմնը տվըրածեն տղեն կուռնեն յրա վեննը կացած ա ինում, լուղու յա օնում, սկսում խոսելը։

Ասըմ ա. — Ցրես մին թաքավեր միրչեմն ըմ, եկալ ըմ ծրեզ մին լվոթուն անիմ, վեր տուք մրեզ խնայալ ըք, ծիակոխ չըք ըրալ. թևաս մինը պուկեցիք, նեղ տեղ ընգած տեղը ծրեզ հարկավեր կկյա։

Տրվըրածեն տղան ասըմ ա.— Հայբաթ դուզ ըս ասըմ, պուք տամ, հարկավեր կրկյա։— Պուկում ա, պըրծընըմ, հղեն շարունակըմ։

Շատ ըն քյինամ, խրեզ ըն քյինամ, եշըմ ըն տեսնըմ մին մեծ ղոչ, ժինջիլը պուզերան կապա՜ծ, ծառան կախ տված։ Տվըրածեն տղան ծիքյ ա տամ, ժինջիլը կըտրըմ, վխճարեն ըղադըմ, վեխճարըն ըստուծանա լուղու յա առնըմ, խոսըմ, ասըմ. — Վեր ինձ էս նեղ տեղան ըղադալ ըք, մզերաս էրկունը պուք տրվեք, յեր կալեքյ, նեղ տեղ ընգած տեղը մաղը մաղեն կըքըսիքյ, յրես ծեր հրեյին հրսնըլական ըմ։

Էրկու մաղ ըն պուկըմ, վեխճարը թողըմ ըտեղ, հղեն շարունակըմ։ Շատ ըն քյինամ, խրեզ ըն քյինամ, տեսնըմ ըն մին պեցուր թումբու կըլխե էրկու մեծ ըրկաթե դըրբըզա, մին մեծ քյիլիդավ քըլլած։

Տվըրածեն տղան ասըմ ա. — Ա՛խպեր, մին տու ըստեղ ծիենը պահե, քյինամ տեսնամ մին էն հի՞նչ դըրբըզա յա էն թումբումը։

Վերչը քյինամ ա տեսնըմ դուզ վեր դըրբըզա յա, ամմա վեչ մին պեն չի ըրվամ։ Միքյ ա տամ, պուկըմ, մհենգյ էլ թուլ անըմ, քցըմ քեռծեն տակը։ Էնքան ծանդրը ա ինըմ, վեր տափան նհետ աշխարքըս տուրուր ա կյամ։

Մին քանի մնուտանը ետը էտ դըրբըզեն տական էնքան սադանեքյ ըն տուս կյամ, վեր ընդեղեքյ լըսնըվում ա։ Սադանեքյը ուրխացած ընգնում ըն տվըրածեն տղեն վըններըն տակը, սկսում

www.naregatsi.org

լուզ տալը։ Լվիթիւնեն տեղը սադանեքյը էրկու մազ ըն տամ, ասըմ. — Նեղ տեղ ընգած տեղը ուրուր կըքըսիքյ, մունք կյըլական ընք քյիմաձյ անիքյ։

Տվըրածեն տղան հրցընըմ ա, ասըմ. — Ծրեզ հո՞ւ վա քըցալ էտ տուրմանե։

Ասըմ ըն. — Կափրիյել հրեշտակը։

Տվըրածեն տղան մազերը յոր ա օնըմ, կյամ ախպորը կոշտը, նստըմ ըն ծիենը, հղե ընգնըմ։

Մին ծամակավ քյընալիս տեսնըմ ըն իրեք հղե, մին պառավ մարթ հղըցումը նստած, չուբուխը պըրանին։

Տվըրածեն տղան ասում ա. — Պարյօր քյըեզ հլիվեր, նստալ ըս ըստեղ հի՞նչ անիս։

— Աստուծու պարին, պարավ եկեքյ, ըստի ըշտեղ ը՞ք քյընամ։

Միանցան վեր ըն կյամ, հլիվերեն քշտին նըստըմ, ուրանց դարդերը նաղլ անըմ։

Հլիվերը էրգան անջուկ ա օնըմ, թառանչ քաշըմ, ասըմ. — Հե՛յ... բալալա՛ը, տըժեր տեղեր ա, ամալ կյալի պեն չի տա՛։ Էտ ախճիգյը հեն ա մին քերծու պտկե շինած պլատըմ։ Պալատըն էլ տունի ղոլան հասար քաշած, պլատան մին վերստ քաշ, ծորումը մին օբա կա, օբեն մաչին մին տոն կա, վեր պենաս, նրանա ետը վրեղեն տակեն մին պալատ ա ըրվըլական, քառասուն տունանե։ Էտ պլատումը օխտը օշափ ա իննյական, ամմեն մինը օխտը կլխանե։ Էտ ուշուփնեն էտ ծեր ասած ըխճըկանը ախպերքյն ըն։ Տուք պիտի քյինյաք էս մաչի հղըցավը։ Էտ հղեն թուշ տրննական ա ընդեղ։ Ուշուփնեն ծրեզ հարցեր ըն տըլական, վեր կարիք պադասխանիքյ, ախճիգյը ծերն ա, վեր կարիք վուչ, ծեր ըլունն ա։

Տղերքյը շունրակալ ըն ինում, մաչի հղեն ընգնըմ։

Քյինյամ ըն քյինյամ, հանըմ ըն հրլունվերեն ասած օբեն կոշտը։

Տվըրածեն տղան ախպորն ասըմ ա. — Միենը ըստեղ ըրըծցըրու, մին յըես պըցրյանամ, նի մրննիմ էտ օբան, տեսնամ հի՞նչ կա, հի՞նչ չիկա։— Տի էլ անըմ ըն։

Քյինյամ ա նի մրննըմ օբան, տեսնըմ օխտը օշափ նստած մին ղզղանու կոխկե, մրես ըն իփըմ։ Էտ ղըզղանը էնքան մեծ ա իննում, վեր ըշխարհքումըս հիշքան կենթանի կա, ամմեն մինան տասը դանա մաչին ա իննում։

Կուճուր ախպերը ետ ա տրեռնըմ, մեծ ախպորը ասըմ. — Ախպեր, էս ղզղանըմը ամմեն կենթանուց կա, ամմա ինսան չիկա,

www.naregatsi.org

էս լհա ինքյը-ինքյը, ուրան վրեննավը եկալ ա, փռնինքյ, քցինքյ ղղղանը, իփինքյ։

Էս խոսկը տվըրածեն տղեն քյեփեն շատ ա նի կյամ։ Կզնըված ասըմ ա. — Դյիդվալ չի, թա հո՞ ղղղանը կընգնե։ Դե վեր ծեր օժեն յրան էտքան դյուվամիշ-դյորմամիշ ըլած ըք, եր կացեք, տեսնամ կըկարիք ծեր ղղղանը վեր տընիք տափեն։

Ուշուփնեն եր ըն կենըմ ամեգյը մին տեղա փռնըմ, թա վեր օնին, կարըմ չըն։ Տվըրածեն տղան մինակ յոր ա օնըմ, հունց տափեն կյամ, վեր աշխարքըս տուրուր ա կյամ։ Թաքավերեն տղան հենա ինըմ ննջալիս, վեր տափը տուրուր ա կյամ, իրեսեն յրա վեր ա ընգյնըմ, քեթը ըռնըմ ա։

Ուշուփնեն մնամ ըն զրմացած, թա տրան հիշքան օժ օնե, վեր մինակ եր կալալ տափեն տրավ։ Տվըրածեն տղան տուս ա կյամ, ծեն տամ ախպորը, վեր ծիենը կապե տռնան, ինքյը կյա օբան։

Նի յրն մրննըմ օբան, մհենգյ տվըրածեն տղան ուշուփներեն ասըմ ա. — Մունք իստի-իստի պենու հետե յրնք եկալ, եկալ ընք ծեր քուրը տանինքյ։

Ուշուփնեն տրեսնըմ ըն, վեր տա զոռի ջանավար տղա յա՞, խուստանըմ ըն վեր տան, ամմա բեդմա ուրանց տված հրցերեն կարին ջողաբ տան։

Առաչի դռնումը ասըմ ըն. — Քառասուն փութ ցորեն, քառասուն փութ կորեկ ընք խառնըելու, վեր կարիք ճոկիքյ, ախճիգյը ծերն ա։

Խառնըմ ըն, պրծընըմ, ասըմ. — Միչև ուրուդյու բիդի ճոկիքյ, թա չէ ծեր ելումըն ա։

Ուրանք քյինամ ըն վրերսի։ Տվըրածեն տղան տես ա մտածըմ, տեն ա մտածըմ, բուրդան մենն ա ընգնըմ սադանեն մազերը։ Յոր ա օնըմ, մազը մազեն քսըմ, ըշխարքես սադանեքյը կյամ ըն, յրա տեռնըմ, ճոկըմ, մին մնուտըմը, մին էլ կորչըմ։

Ուշուփնեն կյամ ըն, մնամ զրմացած։

Երկունջի հարցը էն ա ինըմ, վեր ասըմ ըն. — Մհենգյ էլ քառասուն փութ ցորեն, քառասուն փութ կորեկ, քառասունն էլ կյորե խառնինքյ, բիդի ճոկիքյ։

Տամ ըն ուրանց, էլհա ուրանք քյինամ վրերսի։ Էտ դռնումն էլ տուս ըն օնըմ մըրչեմներեն թևերը, թևը-թևեն քսըմ, ըշխարքես մըրչեմնին հվաքվըմ ըն ըտեղ, մին ըշկըճըպումը ճոկում ըն, ճոկ-ճոկ, պրծընըմ, ուրանք կորչըմ։ Ուշափնեն կյամ ըն, տրեսնըմ ճոկած, հաղըր։

www.naregatsi.org

Իրեքինջի հարցը տամ ըն, ասըմ. — Դե վեր իտի օժավ ը՞ս, մեր կուճուր ախպորը նհետ բիդի ղոչի տաս։

Սա վերչին հարցըն ա, վեր կըդարիս, եխնած ըս։ Տվըրածեն տղան մտածում ա, հի՞նչ անե, ինքյը հո՞ւնց կը կարե, մին կլխավ օխտը կըլխանե օշափեն եխնի։

Մենն ա ընգնըմ վըեխճարեն մազերը։

Ասըմ ա. — Յըես կարալ չըմ ծեր կուճուր ախպորը նհետ ղոչի տամ, ամմա իմ կուճուր ախպերը կըկարե։

Մազը-մազեն ա քսըմ, էն վըեխճարը կյամ ա, սկսըմ ըն կըռվելը։ Վըեխճարը քըմըկ-քամակ քյինաամ ա, մհենգյ էլ վազ տալավ կյամ, հունց պուզերավ թխըմ, ուշափեն օխտը կլոխը նի յա մննըմ փորը, մեռնըմ ա։

Նխնըված ուշուփնեն ասըմ ըն.—Մեր քուրը հեն ա էն խութին պտկե պլատըմը, ընդեղան միչև ըստեղ գյըբաավ կարմունջ բիդի շինիքյ էտ կրմունջավը պիրիքյ։

Ախպերքը մընում ըն մըտըծելիս, թա հի՞նչ անին, վեր գյըբաավ կարմունջ շինին։

Վըեխճարըն ասըմ ա. — Յըես կը կարիմ։

Մազը մազեն ա քսըմ, քսան վըեխճար ըն կյամ։ Վըխճըրնեն մըրթոտըմ ըն, մհենգյ էլ ամմեն վըխճարեն աչի քուղը յոր ըն օնըմ, թող անըմ քցըմ հորը, մնացածը տամ ուշուփներեն, ուրաանք կյամ, քոն ինըմ։

Շատ ըն քոն ինըմ, թա խրեգյ, եր ըն կենըմ, տրեսնըմ մին մեծ ղուզղուն ուրանց շոք ըրած։ Հըրցընըմ ըն, թա. — Հինչո՞ւ հետե յըս մրեզ շոք անըմ։

Ասըմ ա. — Վեր տուք մեր սոված ղուզղուններեն սովա ըզադալ ըք, հինչ պահանջ օնիքյ, ինձ ըսեցեքյ, յըես մին ըշկըճըպումը կըկադարիմ։

Տվըրածեն տղան ասըմ ա. — Վեչ մին պեն հարկավեր չի, մինաակ թա կարիքյ էն պլատան միչև ուշուփներեն օբան մին գյըբե կարմունջ շինիքյ...

Ղուզղուներեն մեծը ասըմ ա. — Իմ աշկես յըրա, միչև էքյուծ քըշրհանա պադրաստ կըտեսնաս։

Ղուզղունը ղուզղուններեն թաքավերը ինիլավ հրամմայըմ ա ըշխարհքես ղուզղուններեն, վեր հըվաքվին, քյինաան փլան թաքավերեն գյիբենեն պիրին։

Քյինաամ ըն պուրնա, թաքավեր ղուզղունը կարմունջը շինըմ ա, պըրծընըմ, կյամ տվըրածեն տղեն կոշտը, ասըմ. — Վեր քյինաաս,

www.naregatsi.org

էն ախճիգը քոն իլած ա իննական։ Պոլան մին տախտակ կըպուկիս, կյողլ կենաս։ Նաղիր-վաղիրը խորաձյնի յըն պըրլական ըխճըկանը հետե։ Տունս կըկյաս օտիս, ըմընեքյը թողիս եխտուտ, նորու նի մընիս տեղրա։ Վեր ասե՝ հո՞ւ վեր վերե յըս, տունս եք, քունն ըմ, տունս չիկյաս։ Հիշքան վեր ուրթունը օտե, էլա տունս չի կյաս, ամմա վեր ախպորըը անավ ուրթում օտե, տունս կըկյաս։

Տվըրածեն տղան գյիբին կրմունջավը քյինամ ա, նի մննում ըխճըկանը տունը, հունց ղուզղունն ասալ ա, ինդի էլ անըմ ա։

Մին էրկու հետ նաղիր-վաղիրը խորաձյ ըն պուրթում, տունս ա կյամ օտըմ, նի մընընըմ պոլեն տակը։ Առաչ ախճիգը կընըվըմ ա նաղիր-վաղիրեն յըրա, թա խե՞ յըն իտի անըմ։ Վերչը կլոխ ա ընգնըմ, վեր ատեղ մարթ կա, հիշքան ուրթում ա օտըմ, տունս չի կյամ, ամմա վեր ախպորըը ընըմավը ուրթում ա օտըմ, տունս ա կյամ։ Ախճիգը ասըմ ա. — Վեր կրեցալ ըս կյաս ըստեղ, յըես քունն ըմ։

Տղան ասըմ ա. — Յըես եկալ ըմ քյըեզ տանիմ իմ ախպոր հետե։

Ճուխտեքան տունս ըն կյամ, գյիբին կրմունջավը քյինամ ուշուփնեներեն պալատը։

Ուշուփնեն ասըմ ըն. — Հալալ ինի ծրեզ, մեր տված հըրցերեն վեչ մին աշատ-բաշատ կըրեցալ չի կըդարե, տուք կըդարալ ըք։ Մունքյ քյինանք վըերս անինքյ, պիրինքյ, ուրխոթուն անինքյ։

Թաքավերեն տղան մնըմ ա ըխճըկանը քշտին։ Օշափնեն նան տվըրածեն տղան քյինամ ըն վըերսե։ Թաքավերեն տղան պլենիքյը յոր ա օնըմ, տրոնները մին-մին պենըմ, քառասունինջի ութաղըմը եշըմ ա, տեսնըմ մին մեծ, օխտը կլխանե օշափ ժինջիլավ կպոտած, քշտեն մին լոգյան ճուր տրած, կարըմ չի խմե։ Էտ օշափն էլ ա էտ ըխճըկանը հետե եկած իլալ, ամմա հըրցերեն կրեցալ չի ջողաբ տա, փրոնալ ըն, կպոտալ։

Օշափը Թաքավերեն տղեն ասըմ ա. — Ա՛յ տղա, էտ ճուրը մուտուցրու մին թիքյա խմիմ, ծարավ մըեռնըմ ըմ։

Ճուրը տնում ա ըռըչին, խմելըն ըբաստ օժը կյամ ա, հը՛ յա անըմ, ժինջիլնեն կտորըմ, տունս կյամ, ախճիգը յոր օնըմ, փախչըմ, կորչըմ։ Թաքավերեն տղան ուրյանան քյինամ ա, վեր ընգնըմ։

Վերսըտեղան կյամ ըն, տրեսնըմ տղեն օշը տարած, օշափն էլ, ախճիգըն էլ կան վուչ։

Տվըրածեն տղան ասըմ ա. — Տուք ըտեղ կացեքյ, յըես քյինամ, տրեսնամ հի՞նչ ըմ անըմ։

Նստում ա ծին, հղե ինում։ Խիլլա քյընում ա, տրեսնըմ մին

www.naregatsi.org

մարթ համ վար ա անըմ, համ էլ ճումերը յոր օնըմ, օտում, համ էլ ասըմ. — Վա՜յ, վա՜յ, ամա՜ն սուված մեռե։

Տվըրածեն տղան ասըմ ա. — Ըստի-ստի օշափ ը՞ս տեսալ։

Ասըմ ա. — Մին պատառ վախտ ար, վեր մին ղաշանգյ ախճիգյ ծեռքեն անց կացավ։

Տվըրածեն տղան ասըմ ա.— Մին չինիքյ, էրկու ինիքյ, եք քյինանք։

Շատ ըն քյընամ, թա խրեգյ, պտահում ըն մին էրկան մարթու կյետավը շըքըռած, մին վեննը կյետեն էս ընգյունին, մինն էլ էն մին ինգյունին, կռանըմ ա, ճուր խմըմ, համ էլ թա. — Վա՜յ, ծարավ եմ ...

Հրցընըմ ըն, թա ըստի-ըստի մարթ չի տեսա՞լ։

Ասըմ ա. — Մին պատառ վախտ առաչ քյինաց մին ախճեգյ ծեռքեն։

Տվըրածեն տղան ասըմ ա. — էրկու չինինքյ, իրեք ինիքյ, քյինանք։

Իրեք հոքավ քյինամ ըն, հրսնըմ համեն էն քաղաքը՝ վերդեղ վեր օշափըն ա։ Եշըմ ըն, տրեսնըմ, էն հրրսանեքյ ա անըմ, հալա օխտը օր, օխտը քշեր բիդի հրսանեքյ անե։

Քյինամ ըն, թա. — Մրեզ ղոնաղ չը՞ք ընթունիլ։

Ասըմ ըն. — Խե՞ չընք ընթունիլ։

էն ճումը օտող մարթը հրրսընքեն հացըն ա լոխ սրփում, օտըմ, ճուր խմող մարթն էլ կյինին։

Օշափեն դուլուղ ըն անըմ, ասըմ. — Հացը, կյինին հերիք չի ընանական, պա հո՞նց ըք անըմ։

Օշափըն ասըմ ա. — Տուք հրսանեքյը ըրեքյ, յըես քյինամ մին օխտը տոննա հաց պիրիմ հրեվան թաքավերոթունան։

Քյինամ ա թա չէ, տվըրածեն տղան հետան ա ընգյնըմ։ Քյինամ ա հղըցումը սպասըմ, էն վախտը, վեր օշափը կյամ ա, ուրան անա անց կենըմ, քմական փռնըմ ա, պըցըրցընըմ, հունց տափեն կյա՜մ, վեր տափը ճըղվըմ ա, ընգնըմ մաշը։

Տասը օր ժամանակ տված ըն ինուն, տասինջի օրը, վեր իրեքյնակը մար մննելիս հասնի վեչ, ախպորը ուշուփնեն կախ ըն տրվական։

Ցոր ա օնում, ախճիգյը տանըմ։ Լհա՜ էն վախտըն ա հրսնըմ, վեր քյանդիրը քըցած թաքավերեն տըղեն պոկը, տաբրետկան տափեն, օզում ըն կախ տան։ Ախպորըն էլ ըզադըմ ա, ուշուփներեն էլ յոր օնում, քյինում ուրանց երգյիրը։

www.naregatsi.org

Օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ըն անըմ։ Տվըրաժեն տղան էլ ըրժընանըմ ա թաքավերեն տղեն քըվորը, թաքավերեն ըխճըկանը, թաքավերեն տղան էլ հուրըփերի ըխճըկանը։

Սրդյինքան իրեք խընձոր ա եր ընգնըմ. մինը՝ ըսողին, մինը՝ կարթացողին, մինն էլ՝ էս հաքյաթը լուս աշխարք քըցողեն։



www.naregatsi.org

50. ԱԽՃԻԳՅ ԹԱՔԱՎԵՐԸ

Ընիս ա, չինիս, մին թաքավեր, ըտրա ընիս ա իրեք տղա։ Էտ թաքավերը պռաված ա ընիս։

Մռնելի վախտը ուրիշն տղորցը, իրեքեն էլ ճոկ-ճոկ ծեն ա տաս, ըսես. — Էն ա մեր բաղեն փլան ծառեն տակեն վըեսկե օնիմ, վեր մեռնիմ կըքյինիս տուս օնիս։

Թաքավերեն մռնելանը ետը, կուժի տղան քյիս ա, ճելլի տուս օնես, տեղը փոխես, տնիս օրիշ ծառե տակե։

Ամմա էն էրկու տղան հաչա խուսես չըն։

Հորը թողելանը ետը, մեծ տղան քյնիս ա, թա տուս օնե, տսնաս ա պեն չիկա։ Կյաս ա բեքյեփ նստես, ըսկսես մտածելը։

Միշնակ տղան էլ ա կյաս քշտեն նստես։

Պիծի տղան կյաս ա, թա. — Ա՛յ ախպերքյ, խե՞ բեքեփ ըք։

Ըտահանք դրդըրնեն ըսես ըն. — Քյեցալ ընք, թա վըեսկեն տուս օնինքյ, տեսալ պեն չի կա՞։

Պիծի տղան ըսես ա. — Պա ինձ էլ ա ասալ վըեսկուն տեղը, դե եկալ ըմ, թաս տուս օնիմ, տեսալ պեն չիկա։

Մեծ ախպերը ըսես ա. — Մեր իրեքեն էլ տեղը ասալ ա, մեր հաչր, ըրեմն էն վըեսկեն էն ա մզանա մինին ծեռքեն։

Ըտրա կուժի ախպերքյը ուրթունը, հավատ ըն ընես, թա սըետ չընք։

Մեծ ախպերը ըսես ա. — Վեր վզավ չըք օնում, եկեք քյնինքյ փլան թաքավերեն կոշտը, կյենգյատ անինքյ։

www.naregatsi.org

Իրեքան համոզվես ըն, քյնիս։

Քյնիս տեղը տահանց առաչըն ա տուս կյաս մին օղտապան, թա.— Օղտս կորալ ա, տեսալ չը՞ք։

Մեծ ախպերը ըսես ա. — Ղղորթ ա, օղտըտ կորալ ա, ամմա սիպտակ օղտ ա իլալ։

Մաշնակ ախպերը ըսես ա. — Դուղ ա, օղտը լավ, սիպտակ օղտ ա իլալ, ամմա պրանեն մաչ տեղեն կեռեքյը կոտրած ա իլալ։

Պիծի ախպերը ըսես ա. — Պեռանը մին հակը եղ ա իլալ, մին հակն էլ մեղրը։

Էն օղտապանը ըտահանց ափաթը օնես ա, թա. — Կյողրս քթալ ըմ, կյողրս տուք ըք, վեր կաք։ Օղտս ինձ տվեքյ։

Ըտահանք մնաս ըն գյունաքար։

Մեծ ախպերը ըսես ա. — Վեր ըտի յա, եկ մըզ նհետ, քնինքյ փլան թաքավերեն կոշտը կյենգաթ։

Էտ օղտապանը ըտահանց նհետ քյինիս ա։

Վեր հանես ըն թաքավերեն կոշտը, թաքավերը հալա օղտապանեն ա ուզիս ճելլի հղե տինի, վեր նահանց պենը ըրխըյին քնես։

Մեծ ախպորը անա հրցնես ա, թա. — Հինչ ը՞ս գյիդաս, թա օղտը սիպտակ ա իլալ։

Մեծ ախպերը ըսես ա. — Հղցավը կյաս տեղեն տեսալ ըմ մին քոլու յըրա միկա սիպտակ պուրթ, ընդրա յըրան էլ ըսես ըմ սիպտակ ա իլալ։

Մաշնակ ախպերն ըսես ա. — Մին քոլում մին չանգյ կանաչ խոտ ա իլալ, վեր օղտը կծալ ա, խոտը չանգալը պուք ա տվալ, մաչ տեղը մին խոտ մնացալ ա ցից կացած, ընդրա դարդան էլ յըես ասալ ըմ, մաչ տեղե կեռեքյը պուք եկած ա։

Պիծի ախպերն ըսես ա. — Վեր եկալ ա ըխպրին կռացալ, թա ճուր խմե, պեռնեն էրկու ղոլան կըթկաթալա մին ընգյունին մղրճանջեր ըն հրվաքվալ, մին ընգյունին էլ մըրչեմնի, յըես ու յըես մտածալ ըմ, տեսալ, վեր պեռանը մին հակը եղ ա իլալ, մին հակը մեղրը։

Թաքավերը օղտապանեն ըսես ա. — Բալամ, քյինի օղտտ քթիր, սահանք կյողչ չըն։

Էտ օղտապանը քոռըփեշմեն հղե յա ինիս, քյնիս։

Թաքավերը մնաս ա ըրմացած էտ տղոցը յըրա, թա էն իմաստունենի յըն, հինչ ըն, եկալ ըն, թա ինձ փորցին, յըես սահանց նհետ կարել չըմ կյամ...

Ինքյը-ինքյը շատ-խրեգյ մտըծելանը ետը, եր ա կնաս, քյնիս

www.naregatsi.org

էտ տղոցը կոշտը, թա. — Բա՛լամ, ծեր կործը միկա ջանջալ ա, քյեֆեքյ էս հինչ թաքավերեն կոշտը, էն էլա միկա իմասկավ ա ինձանա։

էտ խեղճերը եր ըն կնաս, մհենգյ էլ հղե ընգնես բիդի էն մին թաքավերեն պալատը։ Վեր քյնիս ըն, տեղ հանիս, էտ թաքավերը հրցնես ա, տսնաս, վեր ուրյան հրեվան թաքավերեն տղեքյն ըն, հաչլա տահանց մին լավ ղոնաղ ա ընես, թա. — Ետնան կքննիմ, տեսնամ էտ հինչ կործ ա։

Պիրիս ա ստոլ սրքես, ամմեն հինչան վեր տնիս, իրեք-չորս ջուռա-ջուռա մսավ խորագյ, փլավ, ճոտը տակեն տիրած, ախտա ըրած հունի ղարավ, ցորեն փափուկ հաց, վերչը ընես մին ճոկ տանմաչ, թա. — Ըտեղ հաց կերեքյ, դինջացեքյ, ետնան կխոսինքյ։

էտ իրեք ախպերքը քյնիս ըն սուփրեն ղրաղեն նստես, վեչ մինը ծեռքը մկնես չի բիդի հացը։ Թաքավերը ուրյան նազիր-վեզիրներան մինին ըղրկես ա, թա քյնի թաքուն անգուճ կալ, տես էն տղեքյը հինչ ըն խուսես, եք ինճ ասե։

էտ մարթը կյաս ա, տռանը քմակեն նստես, անգուճ օնես։

Պիծի ախպերն ըսես ա. — Խե՛, հացը քցալ ըն իրեսեն թըմաշա ընելի հետե՛, կերեքյ, օտինքյ։

Մեծ ախպերը ըսես ա.— էն հացը մռնու ղրաղա յա, կյրեզման քանդած տեղը արտ վարած հաց ա, ըտրա դաբդան էլ յըես օտես չըմ։

Մաշնակ ախպերն ըսես ա. — Ղղորթ ա, հացը մռնու ղրաղա յա, էն վրեխճարը, վեր մորթալ ըն, էն խորագյնեն իփալ, շան լակուտ ա, շան կաթնը կերած ա։

Պիծի ախպերն էլ ըսես ա. — Ղղորթ ա, հացը մռնու ղրաղա յա, վրեխճարն էլ շան կաթնը կրերած ա, ամմա մեր թաքավերն էլ աչխիգյ ա։

Թաքավերեն նազիր-վեզիրը տռանը քմակեն ըն ինիս, ըսկանաս ըն, եր կընաս, քյնիս թաքավերեն խաբար տաս, ըսես. — Հաց չըն պըրընձներումը տրալ, էն ըն ըստի պեներ խուսես։

Թաքավերը մնաս ա ըրմացած, թա. — Սահանք իմաստունն յը՞ն, հի՞նչ ը՞ն, էս վեր եկալ ըն կոշտս։ Տահանց ծեն ա տաս, թա վեր տուք գյիդացալ ըք իմ ամմեն մին սեկրետըս, փանդըփիլըս, վեր էս ա էսքան տարի յա յըես թաքավեր ըմ, վեչ մինը գյիդացալ չի, թա յըես աչխիգյ ըմ, յըես թախտաս վեր կըկյամ, տուք կնստիքյ տըեղս։

Պիծի ախպորը ըսես ա.— Վեր գյդացալ ըս, թա յըես աղճիգյ ըմ, էն ա վրեսկեն էլ քու ծեռքետ, տեղը ասե, քու ախպերքյ քյնին տուս ընին։

www.naregatsi.org

Պիծի ախպերը ուրխացած, տեղը ըսես ա, թա. — Ախճիգյ թաքավերը լավ գյիդացց, էն ա փլան տանձուն տակեն թաղած, քյեցեքյ տուս կալիքյ, ըպրեցեքյ։

Ինքյն էլ փսկվես ա էտ ախճիգյ թաքավերեն յըրա, ինքյը թաքավերը տըռնաս։ Օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ըն ընես, ըտրանա ետը ըրխըյին ուրանց երգյիրը կառավարես։



www.naregatsi.org

51. ՄԻՆ ԿՆԳԱՆ ՄԻՆ ՏՂԱ ՅԱ ԸՆՈՒՄ...

Ընում ա, չի ընում մին կնեգյ ա ընում։ Էտ կնեգյը շատ քյաւիր ա ընում։ Էտ կնգանը տղան վեր մծանում ա, որանց մին եղն ա ընում։ Էտ տղան շատ ա մտածում, խրեգյ ա մտածում, որոշում ա, վեր ուրաւն մարը էտ եզանը նհետ լծե, վար անե, վեր ուրանց քյաւսիբոթունը անին։

Էտ վեղըմը մին թաքավեր ա ընում։ Ըտրան ընում ա մին ախճիգյ։ Էտ ախճիգյը նղանում ա տրեղան տըմբըհան ինի, տրեղան եր կենա, քյնա մին տեղ, քյնա հաց յոր օնե, օտե։ Տրա մուհալ ընելին դաւրդան հաւրը էտ ըխճըկանը համար պադրաստել ա տամ մին էրգյան փեդե կոռնը, վեր տրեղան ծեռքը մեկնե, հացը յոր օնե, օտե։ Ջոլը քյնաւլի հետե էլ պադրաստել ա տամ մին ծակ դաւշակ, տակեն գարշոկ։ Էտ ախճիգյը մըծանում ա, մարթի տալի տեռնում։

Մեհետ թաքավերը տունա ա կյամ, ուրան հանդերը շոռ կյալի։ Կյամ ա տեսնում էտ տղան ուրան մարը եզանը նըհետ լծած վար ա անում։

Թաքավերը էտ տղեն ասում ա. — Էս հինչ ծմակըմը մին պել կյումաշ կա, քյինի փռնե, պեր էտ եզանը նըհետ լծե, վար ըրա, քու մար մեկ ա։

Էտ տղան մին օր մին թուռնու հաց ա յոր օնըմ, քյնում ծմակը։ Տեսնում ա մին քյաք կյումաշ ըտեղ ըրածելիս։ Էտ տղեն վեր էտ կյումաշը տեսնում ա, հետան ա պրծնում, թա պուղըհարե։ Էտ տղան փախչում ա, պրծնում էտ կյումաշան։ Կյամ ա տանը շատ քընենքյ

www.naregatsi.org

անըմ։ Վերչը կյամ ա էն մթկեն, վեր ուրան մարը յոր օնե, քյնա ծմակը, մին տեղ տոն շինի, ընդեղ ապրին։ Տի էլ անում ա։ Մորը յոր ա օնըմ, քյնում ծմակը, մին պուճուր, նեղ տոն շինում։ Տոնը վեր պըրծընում ա, ընդրա էքսի օրը քյնամ ա ծմակը, տեսնում էտ կյումաշը ըտեղ ըրածում ա։ Լհա վեր կյումաշին աշկավն ա ընգնում էտ տղա՞ն, կյումաշը էտ տղեն հետան ա ընգնում, վեր պուզըհարե։ Տղան վազ տալով քյնամ ա էտ շինած տոնը նի մննում, ակուշկավը տուս կյամ, էտ կյումաշն էլ նի յա մննում էտ տղեն հետան էտ տոնը, էլ կարըմ չի էտ ակուշկավը տուս կյա։ Մնում ա էտ տանը։ Տղան ուրուդյունը կյամ ա ուրանց տոնը, մին քանե օր կենում, վեր կյումաշը խղճանա։ Մին քանե օրանը հետը քյնամ ա տեսնում կյումաշը էնքան տուզնացալ ա, վեր թուլացալ ա, վեր էլ էտ տղեն հշում չի։

Էտ տղան քյանդիրը յոր ա օնըմ, էտ կյումաշը կապում, կյամ տոն։ Էքսի օրը կյումաշը լծում ա եզանը նրհետ, վար անում։

Մին փարա վախտ ընցնելանը հետը էտ թաքավերը մին էլ ա կյամ ուրան վեղը — շոռ կյամ։ Ասում ա. — Մին քյնիմ տեսնամ, էն տղան կարի՞ց էն պել կյումաշը փռնե, թա չէ։

Կյամ ա տեսնում, վեր էտ տղան, էտ կյումաշը փռնալ ա, վար ա անում։

Թաքավերը քննքյ ա անըմ, վեր տա խելունք տղա յա, վեր կըրեցալ ա էտ պել կյումաշը սվըրցնե, վար անե։

Էտ թաքավերը որոշում ա ուրան մուհալ աղճիգյը տա էտ տղեն։

Թաքավերը էտ տղեն ասում ա.— Ցրես էս վղերեն թաքավերն ըմ, վեր տի խելունք տղա յըս, յըես իմ ախճիգյս քյըեզ ըմ տլականե։

Տղան գյուդում ա, թա թաքավերը տնազ ա անում։ Սուվթա ասելավը սուս ա անում։ Թաքավերը մին էլ ա ասում։

Էտ տղան ասում ա. — Վեր տու տամ ըս, յըես հի՞նչ պիտի ասիմ։

Վերչը էտ թաքավերը պադրաստոթուն ա տեսնում, վեր ըխճկանը հըրսանեքյ անե։ Պադրաստոթունը տեսնալանը հետը, հըրսանեքյ ա անում, էտ մուհալ ըխճկանը տամ ա էտ տղեն։ Էքյսը եր կըենալի վախտը, էտ ախճիգյը մուհալոթուն ա անում, վեր քյնի տոնը, եր կենա հացը ստոլան յոր էնե, օտե։

Փսրկվելի վախտը մարը մտան քըցալ ար, վեր էտ ըխճկանը ծակ դոշակ նան գարշոկը, մին էլ էրգյան ճպատը տնի պեժինքյըմը։

Ախճիգյը էքյսը մին տղա յա ղարկում հարանց տոն, էտ պեները պիրին։ Էտ տղան քյնում ա պերում։ Տղան տեսնում ա, վեր

www.naregatsi.org

էտ ախճիգյը շատ մուհալ ա, ամմա կարիլ չի տունս քըցի, քանի վեր թաքավերի ախճիգյ ա, որոշում ա մին պեն անի։

Էքյսի օրը եր ա կենում, քյնում վար անե։ Վեր վարան կյամ ա, մին խրեգյ հաց ա տընում մորը քըշտեն, վեր օտե, մին խրեգյ հաց էլ ինքյն ա օտում, էտ ըխճկանն էլ հաց չի տամ, ասում ա. — Մըեզ մոտ հու աշխադում ա, նա հաց ա օտում, հու աշխադում չի, օտըմ չի։

Մի քանի օր ախճիգյը մնամ ա առանց հաց, վեր շատ ա սուվուծանում, մին օր էլ եր ա կենում, սկսում կարավաթեն առաչը սըրփփլը, տոնը. սըրփփլը։ Տղան հանդեն վեր կյամ ա, մարը խաբար ա տամ, վեր ըսօր հարթնը տոնը սըրփալ ա։ Էտ ուրուգյունը մին խրեգյ հաց ըն տամ հարթնանը։ Հարթնն էլ ա ուրխանում, տղան էլ, մարն էլ, վեր հարթնը սկսալ ա կործ անելը։

Էքյսի օրը հարթնը եր ա կենում, տոնը սրփում, կոժը լցնում, տեղերը հրվաքում, օրիշ պեներ անում։ Տղան էտ ուրուգյունը վեր հանդեն կյամ ա, մին կուտուր հաց ա տամ։

Էտ ծեվավը էտ տղան, էտ մուհալ ըխճըկանը կործ անելը սվրցնում ա, սկսում ըն լավ ապրելը։

Թաքավերն ասում ա.—Քյինիմ տեսնամ, ախճիգյս հի՞նչ տեռավ, մեռա՞վ, թա սաղ ա։

Կյամ ա տղեն տոնը, տեսնում, վեր էտ օրը ախճիգյը ակուշկումը նստած թիլ ա կծկում, վեր նի յա մննում տոն, ղըրմանում ա, շատ ա ուրխանում, վեր ախճիգյը կործ ա անում։

Ախճիգյը թաքավերեն ասում ա. — Ա՛ հաբ, տու էլ թիլերը փռնե, յըես կծկիմ, վեր քյըեզ էլ հաց տան օտիս, ըստանց օրենքյը ճոկ ա, հու աշխադում ա, նա էլ օտում ա։

Հաբը թիլերը փռնում ա, ըսկսում ըն թիլը կծկելը։

Ուրուգյունը տղան հանդեն կյամ ա տոն, տըեսնըմ թաքավերը եկած, ըխճըկանը նհետ թիլ ա կծկում։

Տղան կնգանն ասում ա. — Խե՛ թողում ըս, վեր քու հաբ թիլը փռնե։

Թաքավերն ասում ա. — Վեչինչ։

Սկսում ա զրուց անիլը։ Թաքավերը տըեսնում ա, վեր էտ տղան տի շատ խելունք տղա յա, ինքյն ուրյան որոշում ա, վեր թաքավերոթունը կես անի էտ տղէն նհետ։ Թաքավերը կանչում ա էտ տղէն ուրյան տոնը, թաքավերոթունին կեսը տամ էտ տղէն։ Թաքավերեն մռնելանը ետը, թաքավերոթունն անց ա կենում էտ տղեն։ Էտ տղան

www.naregatsi.org

կնդանը, մորը նըհետ սկսում ըն լավ ապրելը, երգչիրն էլ լավ կառավարելը։

Էն գաշանդյ երգչինքան իրեք խնճոր ա եր ընգնում. մինը՝ ասողնն, մինը՝ լսողնն, մինն էլ՝ էս հաքյաթը լուս աշխարք քըցողնն։



www.naregatsi.org

52. ՔՅԸՆԱՅՈՂԸ ԵՏ ՉԻ ԵԿՈՂ ՍԱՐԸ

Ընում ա, չնում մին մարթ, մին կնեգյ։ Տահանց ընում ա քառասուն տղա։

Մին օր էտ տղորանցանը մեծը ասում ա. — Ջյնանք, աշխարքը շոռ կյանք, մզեռե հարուստոթուն ծեռք պիրինք։

Էտ պայմանը կպես վախտը քառասունինջի ախպերը տանը չի ընում։

Առանց տրան ընցնում ըն, քյունում։ Էտ քառասունինջի ախպերը կյամ ա, տեսնում ախպերքը տանը չըն։

Հրցնում ա. — Ա՛ մար, պա ախպերքս հո՞ր ըն։

Մարն ասում ա. — Գյուդում չըմ։

Եշում ա, տեսնում ախպերքը կյամ չըն։

Էքյսը էս կուճուր ախպերը լաց ա ընում, ասում. — Ցրես առանց ախպերքս կարում չըմ կենամ, ա՛ մար, տեղն ասե։

Վերչը մարը էտ խոխեն ծեռքեն ջանա յա կյամ, ասում ա. — Բա՛լա, դե քու ախպերքս աշխարքս շոռ կյալու չըն քյեցալ, ապրուստ ճարեն, քյըեզ էլ տարալ չըն ընդրա հետե, վեր շատ ըս պիծի, կարել չըս ընդրանց նհետ շոռ կյաս։

Էտ պիծի թաղվածը եր ա կենում տրանց հետան քյունում։

Հաերը տրան մին սոր ա տամ, ասըմ. — Քշերը էս սորը կը տինիս կլխըտակետ։ Թա քշերը էտ սորեն կեսը տունս կյա, ըռաշկետ աջալ կա, վեր էրկունջի քշերը լոխ տունս կյա, ըտրանա էլ իվիլ աջալ կա, վեր իրեքինջի քշերը տունս կյա, տափըմը խրվե, ըտրանց անա

www.naregatsi.org

էլ իվիլ աջալ կա։ էտ կուճի տղան էտ սորը յոր ա օնում, քյընում։

Շատ ա քյընում, խրեգյ ա քյընում, տեսնում ա մին ավերակ ճեղաց։ Տեսնում ա ճեղացումը ուրան ախպերքը քոն իլած, էտ սորը տնըմ ա կլխըտակեն, քոն ինում։

Քշերը մին վախտ եր ա կենում, տեսնում սորեն կեսը կլխըտական տուս եկած։ Եր ա կենում թողում ախպերքը քոն իլած, սորը յոր օնում, քյընում։

Շատ ա քյընում, խրեգյ ա քյընում, տեսնում ա շատ փիս թող ա անում։ Մուտանում ա տեսնում մին մեծ կլխանի օշափ։ Էտ տղան օշափեն կլխան շատ ա վախըմ։

Օշափն ասում ա. — Ամեգյը մին զարկ օնինքյ. առաչ յըես, հետավ տու։

Տղան համոզվում ա։

Առաչ օշափն ա զարկում։ Էտ տըղեն ծին պըցրանում ա երգյինքյը, տղան ազատվում ա։ Հերթը հըսնում ա էտ տղին։ Տղան զարկում ա, օշափի կլոխը կես ա տեռնում։ Էտ տղան յոր ա օնում օշափին կլոխը կտրում, քցում խուրջինին մաչը, ետ քյընում ախպորցը կոշտը։ Տրանց վեչ մին պեն ասում չի։ Սուսըփուս քոն ա ինում։

Քշերավ էտ ախպերքը եր ըն կենում, տեսնում պուճուր ախպերը քոն իլած։

Մեծ ախպերն ասում ա.— Մին քացի տվեք, եր կենա։

Եր ըն կցընում, քյընում։

Շատ ըն քյընում, խրեգյ ըն քյընում, մին ավերակի յըն պտահում։ Էտ ավերակումը քոն ըն ինում։ Էտ քշեր պիծի տղին սորը սաղ տուս ա կյամ։ Տղան եր ա կենում, քյընում տեսնում էլհա թող ա պըցրանում։ Էս դոնըմ տղան շատ փիս վախըմ ա։ Մուտանում ա, տեսնում էրկու կլխանի օշափ։

Օշափն ասում ա. — Ամեգյը մին զարկ օնինք։ Առաչ՝ յըես, ետավ՝ տու։

Օշափը զարկում ա։ Էտ տղեն ծին երգյինքյ ա պըցրանում։ Տղան ազատվում ա։ Ետնան տըղան ա զարկում, օշափին էրկու կլոխը կտրում։ Էտ տղան ուրխացած կլոխնին յոր ա օնըմ, քյընում, էլա սուսըփուս կյամ, քոն ինում։

Առավոտը ախպերքը եր ըն կենում ասում.— Մին էտ լակուտին եր կցրեքյ, հաչլա խբար պիրողին յշեցեք։

Էտ կուճի տղին եր ըն կցնում, էլհա ճընապարվում։

Էս դոնում մին ավերակ եխծե յա պտահում։ Քշերը ըտեղ քոն ըն ինում։ Քշերը սորը տուս ա կյամ, տափը խրվում։ Տղան եր ա

www.naregatsi.org

կենում, քյնում տեսնում իրեքինչի ախպերը՝ իրեք կլխանի օշափը թուլ ինելավ կյամ ա։

Տղան էս դռնում վախըմ չի, սրտըպնդված ա ընում, մուտանում ա օշափին։

Օշափն ասում ա. — Իմ ախպորցս կլոխը հալբաթ կերալ ըս, վեր ըստեղ չըն։ Ջա՛հիլ տղա, ամեգյս մին զարկ օնինք, առաչ՝ յըես, ետավ՝ տու։

Օշափը զարկում ա, ծին պըցրանում ա երգյինքյը, տղան էլհա ազատվում ա, օշափին էրկու կլոխը կտրում ա, մինը յարալու անըմ, ետ քյնում։ Տղան թաքուն քյնում ա օշափեն հետան տեսնում ա օշափը նի յա մննում մին վերի մաչ։

Մին պատառ սպասում ա, ետավ ընդրա հետան նի մննում էտ վերը։ Տեսնում ա մին ըխճկա գյուրգյում քոն իլած։

Ախչիգյը վեր էտ տըղին տեսնում ա, ասում ա. — Ետ քյնա, օշափը փիս կզնվածա, քյըեզ պըտըռ-պատառ կանի։

Տղան ասում ա. — Տու սուս ըրա, յըես տրան դիվանը ընելու յըմ։

Մին դռնըմ վեր թխում ա, օշափը մնում ա ըխճկանը գյուրգյումը։ Տղան քյընում ա էն մին օթախը, տեսնում ընդեղ քառասուն ախճիգյ։ Տրանց անա, ամման մինան մին մուտանա յա հանում, տանում հըսցնում ուրեն ախպորցը, մուտանեքյը հաքցնում ախպորցը մաննըրը։

Ախպերքը քոն իլած տեղան հալա զուրթնանում չըն։ Պուճուր տղան քոն ա ընում։ Ուտուբանան եր ըն կենում, տեսնում նա քոն իլած։ Ըտրանք սկսում ըն իրեսնին լվանալը, տեսնում լոխճին մաննըրումը մուտանա կա։ Կուճուր ախպերը զուրթնում ա, տեսնում ախպերքը զարմացած։

Ախպորցը յոր ա օնըմ, քյընում էտ ախճկորանցը կոշտը։ Ամեգյը մինը յոր ըն օնըմ, ճրնապար ընգնում։ Քյնալիս վախտը մին կյետ ա պըտահում։

Էտ կյետավը ընցնելի վախտը կյետան մին մարթ ա տուն կյամ, պիծի ախպորը ծիան փռնում, կըղնըցնում, ասում. — Քյըեզ նհետ պեն օնիմ։ Մին պահանջ օնիմ։

Տղան ասում ա. — Տու ասի, յըես կադարիմ, մինակ ինձ պեց թող։

Էտ մարթը պեց չի թողում, տրան եր ա պերում ծիյին անա, քցում ճրին մաչը կուրցնում։ Ճրին մին ղոլան քցում ա, էն մին ղոլան տրղան տուն ա կյամ, ախպորցը թափշուր անում ուրեն կընեգյը, ինքյը էտ մարթին քշտեն մնում։

www.naregatsi.org

էտ մարթը էտ պիծի ախպորը յոր ա օնում, քյնում ուրյան բուբիկան։ Ըտեղ էտ տղին ասում ա.— Քյինա՛, ինձ հետի Գյեղյանգյալմազ սարան Ռուստամ թաքավերին ախճիգյը պեր։

Տղան համոզվում ա։ Էրկուսավ քյընում ըն կյետին կոշտը, էտ պուճուր մարթը տղին մին ջիլավ ա տամ, ասում. — Քցի ճըրին մաչը, մին սիպտակ ծի յա տունա կյալու, նստի, քյընա՛։

Տղան ջլավը քցում ա ճուրը, մին սիպտակ ծի յա տունա կյամ։ Մին նստում ա, քյնում կյետին էն մին ղոլը, ծին պեց թողում, ջլավը յոր օնում, քյընում էտ կյետին մոտերքումը նստում։

Տեսնում ա մին պառավ ա կյամ։ Հըրցնում ա պըռավան, ասում. — Թաքավերին ախճիգյը ըշտեղ ա ընում։

Պառավը պատմում ա, ասում. — Թաքավերին ըխճկանը հարն օզում ա մարթի տա, քյնում չի, ասում ա՝ հավան չըմ տղին։ Էն ա հըրսանիքը փռնած, վեչխարը մորթած, ամմա ախճիգյը համոզ չի՛։

Տղան ասում ա. — Քյնա՛ պեր ծեր տոն, յըես ընդրան համոզցընիմ, ինձ մհար յոր օնիմ։

Պառավն ասում ա. — Լա՛վ։

Քյնում ա ըխճկանն ասում։ Նա հորը կանչում ա ուրյան կոշտը, ասում. — Ա՛ հարր, թող քյնա՛մ մին խըրեգյ ման կյամ, կյետին քշտերքը, էլհա կյամ։

Հարրը ուրխանում ա, ըխճկանն ասում ա.— Քյնա՛, ախճիգյս, քյնա՛ էս օրերը ման եք, սերտա հինչ օզում ա, ըրա, քյնա՛։

Հարրը ուրխանում ա ընդրա հետի, վեր ախճիգյը խոսելիս չի իլա՛լ, մհենգյ խոսում ա։

Ախճիգյը էտ պառավին նըհետ կյալիս ա, տեսնում մին սիրուն տղա կյետին քշտին կաղնած։ Սիրահարվում ա էտ տղին յրա, ասում. — Յըես քյըզանից պուք չըմ կյալ։

Տղան ասում ա. — Դե վեր իտի յա, քյնա՛նք։

Ջլավը քցում ա ճուրը, ծին հանում, ախճիգյը յոր օնըմ, քյընում։ Պերում ա հըսցնում էն մին կյեղ սըտանին, էն պուճուր մարթին։

Ախճիգյը տեսնում ա էտ մարթը մին կյեղ ա, մըրոքը՝ էրկու կյեղ։ Ըտրանա վախում ա։ Էտ տըղան ասած ա ինում, վեր «Քյըեզ հուրու տամ, կըքյինիս, ետնան քյըեզ ազադելու յըմ ըտըղան, վախիս վեչ»։ Էտ տըղան ախճիգյը տամ ա էտ մին կյեղ մարթին, ինքյը քյընում։ Քյունում ա, կյողլը կենում մին քոլու քըմակե, մընում ընդեղ։ Էքյսը էտ մին կյեղ մարթը էտ ըխճըկանը թողըմ ա բուբիկումը, ինքյը քյընում վըերսի, միչև ուրուգյունը վըերս անըմ, կյամ, էտ ըխճըկանը նըհետ զրուց անըմ։

www.naregatsi.org

էտ տըղան ըխճըկանը սըվըրցնում ա, վըեր էտ մարթը կյա, հըրցնի, տեսնա ընդրա հոքին ըշտե՞ղ ա։ Ախճիգյը վիզա՛վ ա օնըմ, ասում ա. — Իմ հոքուս պարթկը ինի, հըրցնիմ, գյիդա՛մ։

Էտ մին կյեղ մարթը, վեր վըրսըտեղա կյամ ա, ըխճըկանան հրցնում ա, ասում. — Հը, քյեփտ հո՞ւնց ա։

Ախճիգյն ասում ա. — Քյեփս փիս ա, հո՞ւնց պիտի ինի, սաղ օրը մինը-մինա՛կ, ինձ թողըմ ըս, քյընում, կոնյա հոքուտ տեղն էլ ա, ասըմ չըս, վեր նըրհետը գնըրնուց անիմ։

Ասըմ ա. — Հոքիս էն ա էվլին մաչին։

Էքյսը էտ տըղան կյամ ա էվուլը էրում, ամա հա՛լա ըրխայինանում չի։ Ըխճկանն ասում ա. — Բա՛լքյա խափա՛լ ա, հա՛լա ըսօր էլ մնանք, էլհա հըրցրու։

Էտ մին կյեղ մարթը վեր կյամ ա, էտ ըխճկանը անա հրցնում ա, ասըմ. — Քյեփտ հո՞ւնց ա։

Ասում ա. — Հո՞ւնց պիտի ինի, սաղ օրը մինա՛կ, սըերտս տըխուր, օշըս-մեթկըս քյըեզ յրա, հոքուտ տեղըն էլ դնուզ չըս ասըմ, վեր կոնյա նըրհետը գնըրնուց անիմ, վախտը անց կըենա, միշև քու կյալըտ։

Մարթն ասըմ ա. — Իմ հոքիս շատ տըժեր տեղ ա։ Ընդրա նըրհետ կարիլ չըս խոսիս։

Ախճիգյն ասում ա. — Կոնյա տեղը ասի, գյիդա՛մ։

Վեր շատ ա ասում, էտ մին կյեղ մարթը ասըմ ա. — Հոքիս էն ա Գյեղան-գյա՛լմազ սարումը մին ա՛ռուծ կա, ընդրա հա՛քյվին մաչին մին բոթուլ կա, բուբուլին մաչին իրեք ծետ կա, իմ հոքին էտ իրեք ծետն ա։

Էտ տըղան էքյսի օրը լոխ գյունդում ա էտ ըխճըկանան, ջիլա՛վը քցում ա ճուրը, դա՛ստի էն սիպտա՛կ ծին կյամ ա, էտ տըղան ծիյին նստում ա, պըցրա՛նում երգյինքը, մին էլ քըշանում սորավը մին հենց թխում ա՛ռուծին, վեր ա՛ռուծը սատկում ա։ Էտ տըղան ա՛ռուծին հա՛քյին ճըղում ա, բոթուլը տուս օնում, կոտրում, մաչան իրեք ծետ հանում, մինը սպանում, էրկուսը ծեռքին պահըմ։

Վեր տըղան ծետին մինը սպանում ա, էտ մին կյեղ մարթը ջա՛հտ ա անըմ, ուրա՛ն տոն քըցում, էտ ըխճկանը ասում. — Ինձ տար ճիրին կո՛շտը, ծըտին մինը սատկալ ա, յըես առանց ճիրի կարիլ չըմ կենամ։

Վեր էն տըղան ծըտերին մինն էլ ա սպանում, էն մին կյեղ մարթը էտ ըխճըկանը ասում ա. — Ինձ ճիրին մաչը կոխի, էլհա տուս կալ։

Էտ ախճիգյը ընդրան փոնում ա, քցում ճուրը հանում, քցում

www.naregatsi.org

ճուրը, հանում։ Վեր տղան կյամ ա ըխճկանը կոշտը, ախճիգյն ասում ա. — Շունտ ըրա էն մին ծետն էլ սպանի։

Տղան էն մին ծետն էլ ա սպանում, վեր սպանում ա, էտ մին կյեղ մարթը դաստի մրեռնում ա։ Աշխարքըս ազադվըմ ա, լոխ՝ թա մարթ, թա հեյվան ազադվըմ ըն։ Ժողովուրթը ուրխանըմ ըն, քյեփեր սարքում։

Ռոստամ թաքավերը քառասուն վեչխար ա մորթում, մեչան շախկա տամ, քյեփ սարքում, ուրիշն ժողովուրթին քըշտին էտ տղին թաւրիփ անըմ։ Ասում ա. — Վեչ մին ամժաշա իտի ղոչչաղոթուն չի ըրալ օխտանասուն տարվա մաչի։ Էտ օխտանասուն տարումը օխտը հազար մարթ ա քյնացալ Գյեդան-գյալմազ սարը, էլ ետ չի տրեռալ։ Ետ ա տրեռնում էտ տղին ասում. — Իմ ախճիգյս շատ լավ ըս ըրալ, վեր կյուղացալ ըս։

Պերում ըն օխտը օր, օխտը քըշեր հրսանիք անըմ։ Տղին նըստըցնում ըն թաքավերական թախտին։

Հրամմայում ըն վեր էն սիպտակ օշափը, վեր ախպորըը թափշուր ար ըրալ, պերիլ տան կոշտը։ Իտի էլ անըմ ըն։ Էտ ըխճըկանն էլ փսակըմ ըն լոխճան մեծ վեզիրին տղին նըհետ։ Էլհա օխտը օր, օխտը քըշեր հրսանիքյ ըն անըմ։

Էտ քառասուն ախպորըը մաչին, կուճի ախպերը լոխճան ղոչչաղ ա տունս կյամ, համ ուրիշն քառասուն ախպորըը հետե լավ-լավ ըխճըկերք ա ճարում, համ օշափներին ա կըտորում, համ էն մին կյեղ, մրոքը էրկու կյեղ կախարթ մարթին ա փըչըրցնում, Գյեդան-գյալմազ սարին կըպըքըշկոռը ետ անում, ժողովուրթին արխայինցնում, համ էլ Ռոստամ էրկունչի թաքավերը տրեռնում։ Իտի տղերք թող մրեզ շատ ինին, խեղճ ընք, մեխկ ընք, աստուծ իտի տղորըը շատ պահի, կուռանը ղվաթ տա, մեշկը դալար պահի։



www.naregatsi.org

53. ԾՈՒԿՆԸ ՓԸՌՆՈՂԻՆ ՏԸՂԱՆ

Ինըմ ա, չինըմ մին ծուկըն փըռնող ա ինըմ։ Էտ ծուկըն փըռնողին ինըմ ա մին կընեգյ, մին տըղա։ Ըտրանք ախկադ ին ապրըմ։ Հաըրը տըղին նըհետ ամմեն օր ծուկըն ըն փըռնըմ, մին թաՀրաւ ապրըմ։

Մին օր հաըրը հիվընդանըմ ա։ Տըղան մինաակ ա քյինըմ ծուկնը փըռնըմ։ Դըբրուգյունը թոռը քըցըմ ա կյեսը մին վըեսկե ծուկըն ա տուս կյամ։

Էտ ծուկնը լուզու յա առնըմ, խոսըմ, ասըմ ա. — Ա՛յ տըղա, ջահիլ տըղա, ինձ էլհա ճուրը քըցի, քյըեզ մին լավոթուն կանիմ ինձ ազադի, ինձ պեց թող, քյինիմ։

Էտ տըղան ուրաան մըթկըմը ասըմ ա. «Ըստրանա ինձ հի՞նչ լավոթուն անող կինի՞, վեր անի, լհա պեց թողիմ քյինի, կուզի ուրուգյունըս սուաած մընանք»։

Իտի էլ անըմ ա։ Տեռտակ ետ ա տըեռնըմ։

Հաըրը յրան կըզնըվըմ ա, ասըմ. — Ա՛ շան տըղա, պա մարթ ծուկնը կը փըռնի, մին էլ պեց թողի՞, էտ ըշտըղի ասած ա, աթադան-անադան իտի պեն չիլաւ, թազա ճըտեր ըն տուս եկալ, արկաթի ծուվանք ըն ածըմ, վեչ մուհա՛լ, ախեր հի՞նչ մուհալ անիմ, կըլոխըս կըկյա։

Էտ տըղան հորը անգուճ չօնըմ։ Ամմեն օր ուրաան հացին փայը պերըմ ա, քըցըմ ծովը, ծուկնը կյամ ա, յոր օնըմ, օտըմ։

Մին օր էլ հաըրը դուսմիշ ա ինըմ, ուշունց տալավ ընդրան տա-

www.naregatsi.org

նան տունս ա քրցըմ, ասըմ. — Ա՛ էշի քոռա՛կ, բա յըս ամմեն օր չըրշարվիմ, ջափա քաշիմ, քըրթնունք թափիմ, հաց ըշխադիմ, տու տանիս ծունկնին տա՞ս, դե կըլնխա ղըրփիլ մի, տունս եք տանան ոադ իլ, էլ աշկըս քյըեզ տեսնա վեչ, ըշտեղ օղըմ ըս, քյինի, էս էլ իմ բախտըս, լհա ասըմ ըն «տըղա ինի, տըղա ինի», էս էլ քյըեզ տըղա, տեսնամ դաՙրդիս հի՞նչ դաՙրմանն ա։ Ախճիգյը հազարապատիկ ըստրանա լավ ա։

Էտ տըղան լաց իննելավ եր ա կըենըմ, կըլնխ յոր օնըմ, քյինըմ։

Քյինըմ ա, քյինըմ, ընգնըմ ա օտար երգյիրնի, ճընապարին մին պառավ մարթ ա ջրհուս, ասըմ. — Ա՛ բալա, էտ ըշտե՞ղ ըս քյինըմ, իտի միննը-մինա՛կ։

— Ա՛պեր, քյինըմ ըմ աշխադանքի, վեր մին թաՙհրաՙվ կըլնխըս պահիմ։

Էտ պառավ մարթըն ասըմ ա. — Ա՛ ղարիբ բալա, յըես էլ ըմ աշխադանքի քյինըմ, եք մինտեղ քյինինքյ աշխադինք, մին տեղ էլ ապրինք։ Հինչ էլ աշխադինք, հալալ մեչան կես անինք։

Էտ տըղան ոազի յա կըենըմ։

Քյինըմ ըն, քյինըմ, շատ ըն քյինըմ, թա խրեգյ ըն քյինըմ, շատ նան խրեգյը ուՙրաՙնք ըն գյուղումն, վերչը հըսնըմ ըն մին մրեծ, հարուստ քաղաքի։

Քյինըմ ըն ըտըղին թաքավերին մեծին կոշտը, ղաչանք անըմ, վեր ուՙրանց աշխադանքի յոր օնի։

Էտ մրեծը ըտրանց գյաՙդա յա յոր օնըմ։

Էտ թաքավերին մին մարալ-ջեյրան ախճիգյ ա ինըմ։ Մին դոՙնըմ էտ ըխճըկանը լուՙզունն լալկվըմ ա։

Թաքավերը հիշքան դոխտուրնի յա կանչըմ, պեն չի տունս կյամ, վեչ մինը կարըմ չըն լըվըցնին։

Մին օր էտ պառավ մարթը, մին ճըպատ ծեռքին, քյինըմ ա թաքավերին կոշտը, ասըմ. — Թաքավերը ապրած կըենա, եկալ ըմ ախճիգյըտ լիվըցնիմ։

Թաքավերը կըզնըվըմ ա, ասըմ. — Ա՛ պառավ, պըլը-մել խոսիլ մի, պըլը-կատար չըս, էտ ա մեծ մարթ ըս, պըլըհունշտրի չըս, պադեվըտ պահի՞, տու լալեգյ լիվըցնող չը՞ս, քյինի պենիտ։

Ամմա էտ մարթը ծեռք չի քաշըմ, ասըմ ա. — Չէ՛ վեր չէ՛, յըես կըլիվըցնիմ։

Թաքավերըն ասըմ ա.— Դե վեր իտի յա, իմ ախճիգյըս լափ առուի տեն ընգածը իրեք հետ խուսուցըրու, թա կարիս խուսուցընիս,

www.naregatsi.org

համ ախճիգյըս քյըեզ կտամ, համ էլ թաքավերոթունիս կեսը կտամ քյըեզ։

Էտ պառավ մարթըն ասըմ ա. — Թաքավերըն ապրած կենա։ Առաչի դռնըմը քու ըխճըկանըտ լհա էս ուրուգյունն կը խուսըցնիմ։ Ըխճըկանըտ տիր մին օթախի քյունջուն, յա պուճախըմ, մին փռոդա էլ քաշի, վեր իրեսը ըրվա վեչ, վեզիրներատ մինին էլ կանչի, վեր տեսնա, կյա քյըեզ ասի։

Թաքավերը իտի էլ անըմ ա։

Ուրուգյունը վեզիրը կյամ ա, էտ պառավ մարթին նըրհետ քյինըմըն էն օթախը ըշտեղ էտ ախճիգյըն ա։

Ըսկսըմ ըն վեզիր նան էտ մարթը խիլլա զուրուց անիլը։

Վերչը էտ պառավ մարթը ասըմ ա. — Վեզիր, ախեր մունք շատ զրուց ըրինք, մըհեգյ էլ թող էս ճըպատը զուրուց անի։

Ասըմ ա, պըրծընըմ, ճըպատը թող անըմ, քըցըմ օթախին մեջտեղը։

Ճըպատը ասըմ ա. — Թաքավերի ախճիգյ, լավ լըսի հա՛, վերչըմը բեդմա ջողաք տաս։

Վեզիրը շըշկըլվաճ մընացալ ար տեղը մեխվաճ։

Ճըպատը ասըմ ա.— Իլա՛լ ա, չիլա՛լ մին մարթ։ Էտ մարթին իրեք տըղա յա իլա՛լ։ Մին օր էտ մարթին ախպորը մադար ախճիգյը ծանդըր հիվանդանըմ ա։ Քըշերավը էտ մարթին մեծ տըղան քյինըմ ա ուրան ղորփուրը ըխճըկանը զիրավ ընցնի։

Մին խիլլա կընալանը եսը ղորփերըն ասըմ ա. «Թա կարիս մին հենց ուստոթուն սըվերիս, մին փեշակ սըվերիս, վեր օրը հաւրուր մանեթ փող աշխադիս, ախճիգյըս վեր լիվանա, քյըեզ կըտամ»։ Տըղան բեքյեփ քյինըմ ա ուրանց տոն։ Քյըսօրին միշնակ տըղան ա կյամ ուրան ղորփուրը ըխճըկանը զիրավ ընցնի։ Մին պատառ խոսելանը եսը, ղորփերը էլհա իտի յա ասըմ։

Իրեք ախպերքըն էլ ուրուր պեն չըն ասըմ, ուրանց զաւրդը-ղեյիդը թաքուն ըն պահըմ։ Վերչը մին օր ուրուր ասըմ ըն ուրանց սըրտինը։ Էքյսը իրեք ախպերքըն էլ ուրանց հորը մընանք պարով ըն ասըմ, ճընապար ընգնըմ, քյինին ամեգյը մին փեշակ սըվերին։ Մեծ ախպերը տրեռնըմ ա խմաստուն, միշնակ ախպերը՝ լավ վազ տըվող, պուճուր ախպերը՝ հաքյիմ։ Տրանց անա ամմեն մինը օրը հաւրուր մանեթ ա ախշադըմ։ Մին օր մեծ ախպերը ասըմ ա. — Մեր ղորփորը ախճիգյը էն ա մըռնելի յրա, հարկավեր ա շուտ նի հըսնիլ։

Պուճուր ախպերը ասըմ ա. — Յրես ինդի մին ճար օնիմ, վեր խըմի, դաստի լիվընալու յա, թա վեր շուտ հըսցնող ինի։

www.naregatsi.org

Միշնաւկ ախպերըն ասըմ ա. — Ցրես շունտ, վազ տալավ կըհրացնիմ։ Ասըմ ա, պըրծընըմ, ճարը յոր օնըմ, վազ տամ, մին մունուտըմը հրացընըմ։ Հիվանդը ճարը խըմըմ ա, լիվանըմ։ Վերչը էտ իրեք ախպերը կյամ ըն յրա հրանըմ։ էտ ախճիգյը մըհեկ էտ իրեք ախպորցան հո՞ւր բեդմա տան։ Մըհեկ թաքավերի ախճիգյ, տինինք թա տու վրս սուդյան, ախճիգյը հո՞ւր կըտաս։

Փաւդին քըմական թաքավերին ախճիգյը ասըմ ա. — Պուճուր ախպորը։

Վեզիրը համ շատ ուրխանըմ ա, վեր թաքավերին ախճիգյը խոսից, համ էլ առուի քար կըտրըմ։

Ճըպատըն ասըմ ա. — Խե՞ պուճուր ախպորը։

Թաքավերին ախճիգյը ասըմ ա. — Շատ պարզ։ Մեծ ախպորը իմաստոթունը ընդրա ծեռքան ինք օնող չի ինելու, կյալու չըն կըլնիը պուք տան, խելքը մեչան հանին։ Միշնաւկ ախպերը լավ վազ տըվող ա, էտ վազ տալը կյալու չըն ինքյ օնին ծեռքան։ Պուճուր ախպորը հրնարած, քյիթաւծը լհա էն ճարըն ա, վեր էն ախճիգյը խըմալ ա, լիվացալ, սըղացալ։ էտ ճարը խըլալ ըն ընդրա ծեռքան, թողալ տեռտակ։

Ճըպատը ասից. — Շատ դունդ ըս ասըմ, թաքավերի ախճի՛կ։

Վեզիրը վազ ա տամ թաքավերին կոշտը լոխ նաղլ անըմ։ Թաքավերը ընգուշներին հրվատամ չի, ամմա դե վեր վեզիրը ասըմ ա, շատ ա ուրխանըմ։ էն մին օրը էտ պառավ մարթը թաքուհուն նըհետ ա քյինում էտ ըխճըկանը օթախը։

Ըտրանք մին խիլլա զունդունց ընելանը ետը, էտ պառավ մարթը ճըպատը թող ա անըմ, քըցըմ, օթախին մեշտեղը, ասըմ. — Մունք շատ խոսեցինք, մըհեկ էլ թող ճըպատը խոսի։ Թաքավերին կընեգյը մընըմ ա մաթ մընացած։

Ճըպատըն ասըմ ա. — Թաքավերի ախճիգյ, լավ լըսի, պադասխան ըս տալու։ Ինըմ ա, չինըմ մին մարթ ա ինըմ։ էտ մարթին ինըմ ա իրեք տըղա։ Տա ունրան տըղորցը ղըրկըմ ա կարթելի։ Իրեք ախպերքըն էլ լավ ըն կարթըմ, էն պեցունր շկուլըն էլ ըն ավարտըմ։ էտ իրեքին լավ կըրթելի հետի բադարկեքյ ըն տամ։ Մեծին տամ ըն մին հիլի, միշնաւկին՝ մին մոտացիկըլ, պուճուրին՝ մին կյարմունր խընձոր։ Ըտրանք ետ ըն տրեռնըմ, թա կյան տոն։

Ճընապարին մեծ ախպերը եշըմ ա հիլուն, ասըմ. — Գյուդում ը՞ք հի՛նչ կա, մըզանա շատ հեռու կա մին կյեղեցիկ ախճիգյ։ Նա շատ ծանդըր հիվանդ ա, շատ ապրի շատ, հենգյ մունուտ։

www.naregatsi.org

Պուճուր ախպերըն ասըմ ա.— Թա էս խընձորան օտի, դաստի կըլիվանա։

Միշնակ ախպերըն ասըմ ա. — Ցրես էտ խընձորը դաստի ընդրան կը հըսցնիմ։

Նա մուտացիկըլ ա նըստըմ, հենգյ մունուտումը խընձորը հըսցընըմ էն ըխճըկանը։ Ախճիգյը խընձորը օտըմ ա, դաստի լիվանըմ։ Մըհեկ ախճիգյը պիտի փըսակվի ըտրանց անա մինին նըհետ։ Վեր ուրուր քյեփի նի չի կյան, կործը սուդի յըն տամ։ Թաքավերի ախճիգյ, տինինք թա սուդյան տու վրա, ախճիգյը հո՞ւր կըտաս։

Թաքավերին ախճիգյը ասըմ ա. — Ախճիգյը կտամ պուճուր տըղին։

Մարը՝ թաքուհին վեր լըսըմ ա ախճիգյը խոսըմ ա, ուրխոթունան տեղան եր ա թըռչըմ, ծըվծըվըմ։

Ճըպատը ասըմ ա. — Խե՞ բեդմա պուճուր տըղին տա՞ս։

Թաքավերին ախճիգյըն ասըմ ա. — Շատ պարզ։ Ընդրանք իրեքըն էլ լավ կարթալ ըն, բադարկեք յ ստացալ, էրկուսին բադարկան էն ա ուրանց ծեռքին, էն պուճուրին բադարկան էն ախճիգյը կերալ ա, մըհեկ պուճուրին ծեռքին բադարկա չի կա, ալլազը էն ախճիգյը բեդմա պուճուր ախպորը տան։

Ճըպատըն ասըմ ա. — Թաքավերին ախճիգյը ապրած կենա, լոխ դուզ ա։

Թաքուհին վազ ա տամ թաքավերին կոշտը, լոխ ասըմ։ Իրեքինջի օրը ուրուգյունը էտ պառավ մարթը քյինըմ ա էտ թաքավերին նըհետ, վեր ընդրա քըշտին ըխճըկանը խուսըցնի։ Էրկուսավ՝ թաքավերը նան էտ պառավ մարթը խիլլա զըրուց ըն անըմ։

Ըտրանա ետը էտ պառավ մարթը ճըպատը թող ա անըմ, քըցըմ օթախին մաչ տեղը։

Ճըպատըն ասըմ ա. — Թաքավերի ախճիգյ, լավ լըսի, վեր վերչըմը իմ հարցիս դուզ ջողաբ տաս, վեր յըես էլ քյըզանա շունրակալ ինիմ։ Ինըմ ա, չինըմ մին դուլգյար, մին դարզի, մին իմաստուն։ Ըտրանք հընգյերանըմ ըն, քյինըմ մոտիկ քաղաքը։ Ճընապարին մըթնըմ ա։ Ըտահանք քըշերը մընըմ ըն մին ծըմակըմ։ Խոսկը մին ըն անըմ, վեր հերթավ քըշերը ղարավուլ քաշին։ Առաչ ղարավուլ ա քաշըմ դուլգյարը։ Իմաստունը նան դառզին քոն ըն ինըմ։ Դուլգյարը վեր մըրսի վեչ, մին ծառ ա կըտրըմ, ըտրանա ըսկըսըմ մին կյեղեցիկ ախճիգյ շինըմ։ Կոզի շատ ա չըրչարվըմ, ամմա շատ ղաշանգյ ա տուս կյամ էտ ախճիգյը։ Մըհեկ էլ նորաթը կյամ ա դառզուն, վեր ղարավուլ քաշի։ Դառզին հալա գյուղում ա, թա ուրան

www.naregatsi.org

անա մին տասը շագ հեռու մին ղուրուլթու կա, տա կյող ա։ Յավաշ-յավաշ մուտանըմ ա, տրեսնըմ փեդից շինած ախճիգյ ա, կլխի յա ընգնըմ, վեր էտ էն դունլգյյորին պեններըն ա։ Էտ դաուզին էլ ըտրա հետի շորեր ա կարըմ, վեր վախտը անց կրենա, միչև իմաստունին նորաթը կյալը։ Ըտրանա ետը իմաստունն ա ղարավուլ քաշըմ։ Իմաստունին աշկավըն ա ընգնըմ էտ կյերպարանքը, յավաշ-յավաշ մուտանըմ ա, եշըմ, կըլոխ ընգնըմ, թա պենը հինչումըն ա, ինքըն էլ ուրյան իմաստոթունըն ա պինըցնըմ, էտ անսունչ փեդի ըխճըկանը, ուրյան սունչան սունչ ա տամ։ Քըշերավը դունլգյյորը, դաուզին եր ըն կրենըմ, տեսնըմ մին լյավ ախճիգյ ըտեղ կաղնած։ Ըտրանց անա ամմեն մինը օզըմ ա էտ ըխճըկանը նհետ փըսակվի։ Ըտրանք ուրուր նըհետ հոջաթ ըն տամ։ Ըտրա հետի էլ, կործը տամ ըն սուդին։—Թաքավերի ախճիգյ, տինինք, թա սուդյան տու վըս, հո՞ւր կըտաս էտ ախճիգյը։

Թաքավերին ախճիգյը ասըմ ա. — Յըես ախճիգյը կտամ իմաստունին։

Թաքավերը, վեր լըսըմ ա ըխճըկանը խոսիլը, օզըմ ա, թա օշը տանի։

Ճըպատըն ասըմ ա.—Խե՞, խե՞ կըտաս էն ախճիգյը իմաստունին։

— Ընդրա հետե, վեր դունլգյյորը կարող ա իտի շատ փեդի ըխճըկերք շինի, դաուզին էլ կարող ա ինդի շատ շորեր կարի, ամմա իմաստունը կարող չի էլհա մինին հոգի տա, քանի վեր առանց էն էլ ուրյան հոգվեն կեսը տրվալ ա։ Վեր ընդրա կորած հոգվին կեսը տեղը կյա, ըտրա հետի ախճիգյը պիտի իմաստունին տան։

Ճըպատըն ասըմ ա. — Լոխ դունլ ըսեցիր, թաքավերի ախճիգյ։

Թաքավերը էտ լոխ վեր լըսըմ ա, շատ ա ուրխանըմ, էտ պառավ մարթին ասըմ ա. — Դե վեր տու իմ ախչիգյըս խուսըցրալ ըս, իմ խոսկըս էլ խոսկ ա, ախճիգյըս էլ ա քունը, թաքավերոթունիս կեսըն էլ։

Էտ պառավ մարթըն ասըմ ա. — Թաքավերը ապրած կրենա, մըեզ ճընապար տիր դիբի մեր հայրենիքը։ Հըրսանիքյը ընդեղ ընք անելու։

Թաքավերը ռազի յա կրենըմ։ Օխտը օղտ ա վրեսկավ պեռնըմ, էտ պառավ մարթին, ուրյան ըխճըկանը, մին էլ էն ջահիլ տըղին ճընապար տինըմ։

Ըտրանք հըսնըմ ըն ընդեղ, ըշտեղ ուրուր պըտահալ ըն։ Էտ պառավ մարթը օրախ-օրախ էտ տըղին ասըմ ա.—Հեսէ՞ ըստեղ՝ մունք ուրուր պըտրհեցինք, ըստեղ էլ ուրուր անա կըպըժանվինք։

www.naregatsi.org

էտ ջահիլ ախճիգյը ինձ հարկավոր չի, քյրեզ ըմ տամ, ըտրա նըհետ էլ էս օխտը օղտի պեռնը վրեսկենս։ Յրես էն ծունկնըն ըմ, վեր տու ազադեցիր, հալա հաց էլ տըվիր։

Ասըմ ա պըռծընըմ, ծունկնը տրեռնըմ, ընգնըմ մոտի կյետը։ Ախշիգյը նան տըղան ուրուր խըտտըմ ըն, պըչպըչորըմ, ուրանց ճընապան ընգնըմ, կյամ հըսնըմ ուրանց երգյիրը, կյամ ուրանց տոն։ Կյամ ըն տոն, տրեսնըմ ուրանց հարը նան մարը հիվանդ, հոգյի տալիս։ Վեր ուրանց տղին տրեսնըմ ըն, թևքյ ընգած տեղան լոք ըն տամ, եր կրենըմ, լիվանըմ։ Ուրանց տըղին հետի մին լավ հըրսանիք ըն անըմ, լոխ մին տոն տրեռած օրախ ապրըմ։ Ըտրանք հասին ուրանց մուրազին, մունք էլ հասնինք մեր մուրազին։

www.naregatsi.org

54. ԷՇԻՆ ԱՆԳՈՒՃԻՆ ՎԸԷՍԿԵՆ

Ինըմ ա, չինըմ իրեք ախպեր, մին հաբր ըն ինըմ։ Ըտրանց մին արտ ա ինըմ, էտ արտավրն էլ մին թաշհրաւ ապրըմ ըն, յոլա յըն քյինըմ։

Ամմեն դաննըմ արտը վեր կրնանչըմ ա, մին ղըրըլթու կյամ ա, կոխ տամ, քյինըմ։

Հաբրը քընենքյ ա անըմ, քընենքյ, վերչը էն մթկեն ա կյամ, վեր տըղորցը մինին ղարկի արտը, քըշերը ղարավուլ քաշին, տեսնան էտ հո՞ւ վա կյամ, արտը կոխ տամ։

Առաչի քըշերը մեծ տըղան ա քյինըմ։

Տա քըշերը քոն ա ինըմ, էլ գյուդում չի, թա հու վա արտը էլհա կոխ տրվալ։

Էրկունջի քըշերը միշնակ ախպերըն ա քյինըմ, միչև կես քըշեր զերթուն կենըմ, ամմա ետավ քոնը տանըմ ա։ Քըշերավը եր ա կենըմ, տեսնըմ արտը կոխ տվածե։

Իրեքինջի քըշերը պուճուր ախպերըն ա քյինըմ ղարավուլ քաշըմ։ Միչև կես քըշեր քոն չի ինըմ, ամմա կես քըշերանը տենը քոնը տանըմ ա։

Տա մաննը կտրըմ ա, յրան աղ ածըմ, էլ ցավան նան հեռան քոնը տանըմ չի։ Տեսնըմ ա դիբիլնուսին երգյինքան մին ծիյավեր եկավ, արտը սկսից կոխ տալը։

Տըղան մուտացավ էտ ծիյավերին ասից. — Տու հո՞ւ վրս, վեր մեր արտը, մեր ապրուստը իտի վրեննիտ տակըն ըս տամ, փըչըցնըմ։

www.naregatsi.org

էտ ծիյավերը ասից. — Լավ, վեր իտի յըս ասըմ, վեր ապրուստ չընիք, յրես քյըեզ մին սուփրա տամ, վեր պենաս, հինչ օտելի պեն օղըմ ըս, յրան ինի։

Էքյսը էտ ծիյավերը էտ սուփրան պերըմ ա, տամ էտ տըղին։ Ամմեն դընըմ էտ տըղան պեց ա անըմ, աշխարքիս իրեսին հինչ օտելի պեն կա, տունա ա կյամ սուփրին յրան, ըտրանք օտըմ ըն, քըշտանըմ։

Մին դընըմ էտ շենին քյոխվան կյամ ա, թա.—Պարթկըս տու։

Օղըմ ա, թա էտ սուփրան յոր օնի։ Տրանք տամ չը՞ն։ Ամմա քյոխվան զոռավ յոր ա օնըմ։ Էլհա ըտահանք սկսըմ ըն փիս ապրիլը։

Պուճուր ախպերը էլա քյինից քըշերը արտըմը կացավ, տեսավ էն ծիյավերը կյամ ա, ասից.—Ա՛յ ախպեր ծիյավեր, բա ասիլ չը՞ս, քյոխվան սուփրան զոռավ տարավ, պարթկի տեղ։

Էս դընըմըս ծիյավերը ըտրան մին էշ տըվավ։ Էշին անգուճան օրը իրեք մանեթ փող ար եր ընգնըմ։

Էտ ընդանիքը իտի ապրըմ ին։ Մին դընըմ էշը տարին նալբանդին կոշտը, վեր նալին։ Էտ դռրըմը էշին անգուճան իրեք մանեթ ա եր ընգնըմ։ Նալբանդը վեր տա տեսնըմ ա, կոռծը կեսատ ա թողըմ, քյինըմ էտ էշին մընան մին օրիշ էշ պերըմ, նըրհետը փոխըմ։

Էտ խըեղճ մարթը էշը տոն ա պերըմ, քըցըմ թաղլյան, ամմա էշը ուրանցը չար, էշին անգուճան իրեք մանեթ չար եր ընգնըմ։

Պուճուր ախպերը կյամ ա ղաչանք անըմ, վեր էշը տան, ամմա ամմալ չի կյամ։

Իրեքինջի դընըմը էլհա պուճուր տըղան քըշերը քյինըմ ա արտը, էտ ծիյավերին տեսնըմ, ըտրան ամմեն հինչը նաղլ անըմ։

Էտ ծիյավերը էտ տըղին մին կացին ա տամ, անըմը Թոխմախ։ Էխ Թոխմախը էնքան թակող ա ինըմ, էնքան թակող, վեր միչև տաըրըն ասըմ չի «Թակիլ մի», թակիլը թաըրգյ չի անըմ։

Պուճուր ախպերը Թոխմախը յոր ա օնըմ, կյամ տոն, ընդըղան էլ կյամ ա քյոխվին տոնը, ասըմ. — Ա՛ քյոխվա, էշըս էլ ճարի տու, սուփրաս էլ տու։

Քյոխվան տամ չի։

Էտ պուճուր տըղան ասըմ ա. — Թոխմախ, քյըեզ տեսնամ հա՛յ։ Թոխմախը սկսըմ ա էտ քյոխվին մին լավ թակիլը։ Էնքան թակըմ ա, վեր քյոխվան օզըմ ա, թա մըեռնի։

Ասըմ ա. — Ա՛ բալա, սուփրատ էն ա սանդուղումըս, քյինի եր կալ, մինաակ ինձ պեց թողւ։

Էտ տըղան սուփրան յոր ա օնըմ, ըտրղան քյինըմ նալբանդին կոշտը, ըտրան էլ ըտեղ էն Թոխմախավը մին լավ կյոսըմ։

www.naregatsi.org

Նալբանդըն ասըմ ա.—Թակել մի՝ էշըտ էն ա կյումումը, քյինա եր կալ, մինուկ ինձ ազադի, ինձ քյըզանա ջամբար ըրա, մեխկ ըմ, խեղճ ըմ, խուխատար ըմ։

Էտ տըղան էշը նան սուփրան յոր ա օնըմ, կյամ տոն։ Ըտրանա ետը իրեք ախպերավ, ուրինց հորը նան մորը քըշտին օրախ ապրըմ ըն, Հաչլա միչև օրըս էտ էշը անգուճան օրը իրեք մանեթ ա վեր քըցում ըտրանց հետի, սուփրան էլ ամմեն հինչը, ամմեն ուտելի պեն։

www.naregatsi.org

55. ՍՈՒՂՈՒՄՈՒՆ ԻՄԱՍՏՈՒՆԸ

Սուղումուն իմաստուն թաքավերը մին ա՛րաղ ա տրեսնըմ, վեր գյվա՛քիս երգյինքան մին աղվեսի հա՛քյու յա կախ ընգած։

Էն մին օրը ժողովուրթին ասըմ ա. — Հու վեր կարի իմ ա՛րաղըս ասի, թա հի՞նչ ա կադարվելու, քըշռութունավը մին վրեսկե յըմ տալու, հու վեր կարի վեչ, կըլո՛խը կըտրիլ ըմ տալու։

Շատ մարթ ա կյամ, ամմա կարըմ չի գյիդա՛ ա՛րաղը պարին, թա չարը կըկադարի։ Ըտրանց կըլո՛խը կըտրիլ ա տամ։

Մին շենացի մարթ էլ ըն տանըմ, թա ասի, էտ ա՛րաղը հի՞նչ ա կադարելու։

Ճըննապարին էտ մարթին մին օց ա ջըհում, ասըմ. — Թո՞ րըն ըս քյինում, ա՛ մարթ, քյինըմ ըս թաքավերին հի՞նչ ասիս, տու հի՞նչ ըս գյուդում վեր հի՞նչ ասիս։

Կյուղացին ասըմ ա. — Յըես պեն չըմ գյո՛ւդում, յըես հունցու մին ուզուն ախմախ։

Օցը ասըմ ա. — Վախիլ միր, յըես քյըեզ կըսվըցնիմ, մինա՛կ տու հինչու ստանաս, բեդմա ինձ նըհետ կես անիս։

Կյուղացին ռազի յա կըենըմ։

Օցըն ասըմ ա. — Էտ ա՛րաղը խափեփայութի՛ւն ա, խորամանգութուն, սուտ խոսիլ ա, վեր Սուղումուն իմաստունին երգյիրը լիգյըն ա։

Կյուղացին քյընըմ ա Սուղումուն իմաստունին կոշտը, ասըմ. — Թաքավերը ապրած կենա, իստի, իստի, իստի պեներ։

www.naregatsi.org

Սուղումուն իմաստունը տրեսնըմ ա վեր դռւզ ա ասըմ, ըտրա քըշըռոթունավը մին վրեսկե յա տամ։

Վրեսկեն յոր ա օնըմ, կյամ, ինքյը ուրաին ասըմ. «Օցին հինչի՞ն ա հարկավեր վրեսկեն, հի՞նչ ա անելու, լավն էն ա, տանիմ մրեր տոն»։

Սողոմոն իմաստունը մին էլ ա ուրաղ տրեսնըմ։ Տրեսնըմ ա վեր գյվաքյիս թա երգյինքան մին թոր ա կախ ընգած։

Էքյսը կանչըմ ա համին էտ գյուղացուն, հըրցընըմ, թա ուրաղը հի՞նչ ա կադարելու։

Էտ կյուղացին մընըմ ա դոնգլի տրեռած, մըթկըմը ասըմ ա. «Քյինիմ էն օցին ասիմ, բալքյաս գյիդաս»։

Քյինըմ ա օցին պուննին առաչին կաղնըմ։

Օցը տրեսնըմ ա ըտրան, ասըմ. — Ա՛ սրվիրես, էլհա եկալ ը՞ս, ասի տեսնաս հի՞նչ ըս ասըմ։

Կյուղացին լոխ նաղլ ա անըմ, համ էլ ասըմ, — էս դոնըմ հինչու տա, քյըեզ նըհետ կես ըմ ըննական։

Օցըն ասըմ ա. — Քյինի ասի, վեր էտ ուրաղը ուրունհեղոթուն ա, կըռև ա, մարթասպանոթուն ա, կտորած ա։

Կյուղացին քյինըմ ա Սուղումուն իմաստունին կոշտը, ասըմ, թա ուրաղը հի՞նչ ա կադարելու։ Վրեսկեն յոր ա օնըմ, կյամ։ Ճընապարին մըտածըմ ա, վեր էս դոնըմ էլ խափի օցին, յա քյինի օցին սպանի, լոխ վրեսկեն ինքյը յոր օնի։

Քյընըմ ա օցին պուննին առաչին կաղնըմ, տեսնըմ, վեր օցը նի յա մընընըմ ուրաին պունը։

Տա թըրավ թըխըմ ա, օցին հաքյուն կտրըմ, ինքյը տոն քյինըմ։

Օցը էտ մարթին հետան թաքուն քյինըմ ա, միչև ուրանց տոն։

Կյուղացին նի յա մընընըմ տոն, տոռնը կապըմ։ Մին էրկու սրհաթանը ետը էտ մարթին մեծ տըղան տունա ա կյամ տոռնը, գյուդում չի, թա օցը հեն ա ըտեղ, օցը ըտրա վրեննան կըծըմ ա, ինքյը ետ տրեռնըմ, կյամ ուրաին պունը։

Էտ տըղան աղուլամիշ ա ինըմ, մրեռնըմ։

Մին խիլլա վախտանը ետը Սուղումուն իմաստունը մին ուրաղ էլ ա տրեսնըմ։ Գյվաքյիս թա երգյինքան մին ըլըբըստրակի կըլոխ ա կախ իլած։

Էքյսը հրամման ա տամ, վեր հու վեր էտ ուրաղը գյիդա, թա հինչ ա կադարելու, վրեսկե կը ստանա։ Հու վեր գյիդա վեչ, կըլոխը կըտրել ա տալու։ Էտ կյուղացին մին էլ ա օզըմ քյինի, ամմա տրեսնըմ ա, վեր շատին կըլոխը կըտրըմ ըն, չգյիդալի հետ։ Տա

www.naregatsi.org

օղըմ ա մին էլ քյինի օցին կոշտը, նըհետը հաշտվի, վեր էլհա օցը ուրան սըվըրցնի։

Քյինըմ ա օցին պոնինի քըշտին կաղնըմ։

Օցը պոնյան տոնա ա կյամ, ասըմ. — Հը՛, ա սըվիրես, մըհեկ հինչի՞ յըս եկալ, մեթիկըտ հի՞նչ ա, ասի տեսնամ։

Կյուղացին ուրան մեթիկը ասըմ ա, համ էլ ուրթում օտըմ, վեր էս դոնըմըս ուրան փայը տալու վա։

Օցը ըրաղը հինչ բիդի կադարի, ասըմ ա։

Կյուղացին քյինըմ ա Սուղումուն իմաստունին կոշտը, ասըմ. — Թաքավերըն ապրած կենա, էտ ըրաղըտ հաղաղոթուն ա, պարեկամոթուն ա, հաշտոթուն ա։

Կյուղացին վըեսկեն ստանըմ ա, կյամ տոն, էն տանը վըեսկեն էլ յոր օնըմ, քյինըմ օցին կոշտը, ասըմ. — Օց ախպեր, տոնս եք, հեսե լոխ վըեսկեն պերալ ըմ քյըեզ նըհետ կես անիմ։ Օցըն ասըմ ա.

— Մըհեկանց տենը ինձ պեն չի հարկավեր, տար աշկըտ կոխի, լհա տըղիտ էլ նըհախ տեղը բադի տըվիր, տար հինչ անըմ ըս, ըրա, ամմա էլ իտի պեն չանիս հա՛... Խըփը-խափի անիլը փիս պեն ա, մարթի ումիդ տինիլը, մին էլ խափիլը շատ փիս պեն ա։ Իտի չըն անիլ, ախեր տիմացըտ կաղնածըն էլ ա՛ մարթ, հոքյի օնի՛, խելք օնի՛, հավատ օնի՛, բա՛... Խափիլը շատ փիս պեն ա, էլ անիս վեչ՛։

Կյուղացին շունրակալ ա ինըմ, վըեսկեն յոր օնըմ, օրախ-օրախ կյամ ուրանց տոն։

www.naregatsi.org

56. ՀՈՒ ՎԵՐ ՄԻՆ ՊԵՆԻ ՀԵՏԱՆ ԸՆԳՆԻ, ԿՀԱՍՆԻ

Մին դռնըմ Սուղումուն իմաստունը ման կյալ տեղա ետ տըռնաչիս տեսնըմ ա մին լալ բախչա։ Ըտեղ, մին կաղնու տակի, տեսնըմ ա մին մարթ դալուն կաղնի ծառին տեմ ըրած մին պեն ա կյիրըմ։ Կյրածըն էն ա ինըմ, վեր Սուղումուն իմաստունը բեդմա ուրեն Ղարաղուշ ընըմավեր սև մորթավ գյաղին տա ուրեն ղաշանգյ ախճիգյը։

Սուղումուն իմաստունը շատ ա ստիբըմ էն մարթին, վեր կյըրածը ճընչի, ամմա էտ մարթը ասըմ ա. — Կյիրածը ճընչվիլ չի, ամմա մարթ հինչի օզի կըհասնի. կըռվավ ա, դավավ ա, սերավ ա, կըհասնի։

Սուղումուն իմաստունը բեքյեփ կյամ ա ուրեն պալատը։

Կընեգյըն ասըմ ա. — Էտ հի՞նչ ա պըտահալ, վըեր ըրփըթավուր, սև օթի յըս տեռալ։

Տա լոխ կընգանը նաղլ ա անըմ։

Կընեգյըն ասըմ ա. — Քյեփտ քյոք պահի, յըես կըգյիդամ, թա հինչ կանիմ։

Մարթըկընեգյ ուրուր նըհետ խորուրթ ըն անըմ, կանչըմ էն մորթին սև Ղարաղուշ ընըմավեր գյաղին, մին կանվերթ տամ, ղըրկըմ բախտ պիժանողին կոշտը։

Ըտրա մանին Ղարաղուշը գյուտում ար, ամմա դե հինչ ա՞նի, ուրեն տարը հունցու ասըմ ա, ինդի բեդմա անի։ Տա հըղե յա ընգնըմ, քյինըմ։

www.naregatsi.org

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրեգյ, շատ նան խըրեգյը աստուծ ա գյուդնում, հըղեցը պըտահըմ ա մին թաքավերի։

Էտ թաքավերը հըրցընըմ ա.— Ըշտեղ ըս քյինըմ, այ Ղարաղուշ։

Ղարաղուշըն ասըմ ա. — Քյինըմ ըմ բախտ պիժանողին կոշտը։

Էտ թաքավերըն ասըմ ա. — Ցըես էլ մին պեն օնիմ փըսպըրելի բախտ պիժանողին։ Հինչ օղըմ ըս, քյըեզ կըտամ, մինաւկ էտ բախտ պիժանողին ասի, վեր էս հինչ երգյիրըմը մին թաքավեր կա, վեր ուրան հետի մին պալատ ա շինըմ, դաչ քյինելի հետի, ամմա շունտ պարան ա կյամ, թա խե՞ յա պարան կյամ, գյիդվըմ չի։

Ղարաղուշը ճընապար ա ընգնըմ, քյինըմ։

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խրեգյ ա քյինըմ, պըտահըմ ա մին ծովի։ Մտածըմ ա, թա հունց անց կենա։ Էտ մունուտին ծովան մին ղաշանգյ ծովկըն ա տուս կյամ։ Ծովկնը հրըցնըմ ա. — Թո՞րն ըս քյինըմ, ա՛յ Ղարաղուշ։

Ղարաղուշըն ասըմ ա. — Բախտ պիժանողին կոշտը։

Ծովկնը ասըմ ա. — Ցըես քյըեզ ծովավը անց կըկըցնիմ, մինաւկ յըես մին խընթիրք օնիմ բախտ պիժանողին անա։ Վեր քյինիս, կասիս էս հինչ ծովըմը մին ծովկըն կա, ընդրա կըլոխը շատ փիս ցավըմ ա։ Էտ ցավան վեր սաս ա հանըմ, ծովին ծովկնները լոխ կըտորվըմ ըն։ Թա էտ խե՞ յա իտի՞, գյուդվըմ չի՞։

Էտ ծովկնը Ղարաղուշին անց ա կըցընըմ ծովին էն մին ղուլը, Ղարաղուշը ընգնըմ ա ուրան հրդեն, քյինըմ։ Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրեգյ, շատ նան խըրեգյը աստուծ ա գյուդնում, հրսնըմ ա մին վանքի։ Նի յա մընընըմ մաչը, տեսնըմ մին ծուրունի մեչին աղոթկ ա անըմ։

Ղարաղուշը մին էլ տուս ա կյամ, տուսումը սպասըմ, մինչև էտ ծուրունին աղոթկը կը պըրծնի։

Ծուրունին վեր տուս ա կյամ, ըտրան տեսնըմ, հրըցընըմ ա. — Ա՛ վերթի, հի՞նչ խընթիրք օնիս։

Ղարաղուշը օղըմ ա, թա նաղլ անի, ամմա էտ ծուրունին ասըմ ա. — Հաւլա քյինի ընդեղ մին ախպուր կա, էտ ըխպըրըմը իրեսըտ լվաց, ետավ եք ասի, թա հի՞նչ ըս օղըմ։

Ղարաղուշը քյինըմ ա, ծրեռքերը լվանըմ, տեսնըմ ծրեռքերըն էլ ա սիպտակալ, իրեսըն էլ ա սիպտակալ։ Վեր նովին ճիրըմը ուրան տեսնըմ ա, մընըմ ա մաթալ։

Նտ ա տրեռնըմ կյամ, թա էտ ծուրունունն պատմի, ծուրունին ասըմ ա. — Քյինաւ սաղ ջանըտ լվաց, ետավ եք ասի։

Քյինըմ ա լըղանըմ, սաղ ջանը սիպտակըմ ա։

www.naregatsi.org

Կյամ ա էտ ծրեր մարթին կոշտը, լոխ նաղլ անըմ, կանվերթըն էլ տամ, էն օրիշ թաքավերին խընթիրըն էլ ասըմ, էն կլոխը ցավըմ ծունկնին խընթիրըն էլ ասըմ, պըրծընըմ։

Էտ ծրեր մարթը ասըմ ա. — Քյըեզ էլհա դարդ օնի՞ս, թա չէ։

Ասըմ ա. — Չէ, մինակ լհա էն թաքավերին նան ծունկնինըն ա։

Էտ ծունրունին ասըմ ա. — Կը քյինխս, ճընապարին, ծովին ղրաղին էն ծունկնին կասխս, հալա-լըգյա քյըեզ ծովին էն մին ղուլը անց կըցընի։ Վեր անց կըկըցնի, մին խիլլա էլ տենը կըքյինխս, թա-զադան ասխս. «Ա՛ ծուկնը, քու կըլխըմըտ մին մեծ պըռլյանդ կա»։ Համ կասխս, համ էլ մին լավ կըլխին կըթըխխս։ Էտ ծունկնը սաբր ա կյալու, սաբրին նըհետ ըտրա պըրանան մին մեծ պըռլյանդ ա եր ընգնելու, յոր կօնխս, տինխս ջուբումըտ, քյինխս։ Քյինաչխս կասխս. «Ա՛ ծուկնը լհա էտ ա քու կըլխիտ ցավին մանին, մըհեգյանց տենը էլ կըլախըտ ցըվիլու չի»։— Ետավ էտ ծրեր մարթը ասըմ ա. — Կը քյինխս համին էն թաքավերին ասխս, վեր ուրան էն պալատին պատը, վեր հիշքան շինըմ ըն, էլհա պարան ա կյամ, համին էն պատին տակի բընովրըմը էն ա վրեսկե կա, Թընգյակին քարեր կա, քանի վեր ամառնը տաք ա ինըմ, ըտրանք Թըքանըմ ըն, տրուզվըմ, լենանըմ, պատը պարան տամ։ Էտ ըսելանը եատը, էտ թաքավերան հինչ վեր օգխս տալու յա։

Ղարաղուշը կյամ ա, ետ տրեռնըմ, կյամ հըսնըմ էտ թաքավերին կոշտը, լոխ նաղլ անըմ։

Էտ թաքավերըն ասըմ ա.— Հիշքա՞ն վրեսկե չրս օղըմ, քյըեզ տամ, քու էտ ջափիտ հետի։

Ղարաղուշըն ասըմ ա. — Յրես քյըզանա վրեսկե չըմ օղըմ, յրես քյըզանա օղըմ ըմ քառասուն տըղա, քառասուն ախճիգյ, քառասուն տըղամարթ, քառասուն կընեգյ, մին էտքան էլ ծիյանք, ուրանց սարքերավը։

Թաքավերը էտ լոխ տամ ա։

Ղարաղուշը էտքանը եր կալած ճընապարվըմ ա դիբի Սուղումուն իմաստունին երգյիրը։

Տասը վերստի չրա նըստըմ ըն դինջանան։ Էտ պըռլյանդնին վեր Ղարաղուշին վիղավըն ար քըցած, սաղ ճընապարին լուս ա տամ։ Էտ լուսին շոխկը ընգնըմ ա Սուղումուն իմաստուն թաքավերին պալատին չրան։ Էտ լուսին դաշդան վեզիրը կյամ ա, թա տրեսնա հի՞նչ ա։

Վեր վեզիրը կյամ ա, տրեսնըմ ըտրանց մեծին, ուրան մըթկըմը

www.naregatsi.org

տինըմ ա, վեր թաքավերին ախճիգյը տա ըտրա։ Էտ մրեթկը կյամ ա թաքավերին ասըմ. — Պեր ախճիգյըտ տանք էն տըղին։

Թաքավերըն ասըմ ա. — Բալքյաս էն տըղան օզըմ չի՞։

Վեզիրըն ասըմ ա. — Յըես կըքյինիմ, ասիմ, ամաչ կըպերիմ։

Վեզիրը քյինըմ ա Ղարաղուշին ասըմ։ Դե վեզիրը հու ճընանչըմ չի ընդրան, աչքըը վեր սիպտակալ ար։

Ղարաղուշըն ասըմ ա. — Թող ինքյը կյա, ասի, էն վախտը կօզիմ էտ ըխճըկան։

Վեզիրը քյինըմ ա թաքավերին, թաքուհուն, ուրանց ըխճըկանը յոր օնըմ, կյամ։

Տըղան ռազի յա կըենըմ, էտ ախճիգյըն էլ ա ռազի կըենըմ։ Վոխ մինտեղ կյամ ըն Սուղումուն իմաստուն թաքավերին պալատը։

Ըտրանա ետը տասնըմինինջի օրը հըրսանեքյը ըսկսելի վախտը ձղաթ կար, վեր առաչ թաքավերը նան թաքուհին ծրեռք տան փրեսին, նոր նըստին։

Էտ վախտը փրեսան ասըմ ա. — Առաչ թող թաքավերըն նան թաքուհին նըստին ետավ ծառան։

Ըտրա ասածան պեն չըն կըլխու ընգնըմ։ Հըրսանիքին էն թուննդ վախտը փրեսան ուրան ջուբան հանըմ ա էն կանվերթը, տամ Սուղումուն իմաստունին։

Սուղումուն իմաստունը մընըմ ա մաթ մընացած, հրամմայըմ ա՝ հենգյ մունուտ հըրսանիքը կաղնի։

Ետավ էտ կանվերթը ծեռքին լոխճին ասըմ ա. — Հու վեր մին պենի հետա ընգնի, կըհասնի։

Հըրսանիքը էլհա սկըսըմ ըն, օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ, Ղարաղուշըն էլ ուրան հետի լավ բախտավեր ապրըմ ա։ Սուղումուն իմաստունան էլ իմաստութուն ա սըվերըմ, ընդրա մրունեվանը ետը ինքյը նստըմ կահին։

www.naregatsi.org



57. ՄԱԽՈՐԿԵՆ ՅԱՇԻԳՅԸ

Իլալ ա, չիլալ մին մարթ, մին կնեգյ։ Ըտահանց խոխա չիլալ։ Էտ մարթը եր ա կացալ թա. — Քյինում ըմ ըստուծու կոշտը, տեսնամ, խե՞ մըեզ խոխա չինում։

Քյինում ա, քյինում մին դեր ա չիհում։

Դերն ասում ա. — Հշտե՞ղ ըս քյինում։

Թա. — Քյինում ըմ ըստուծու կոշտը։

Դերըն ասում ա.— Աստուծը լհա յըես ըմ, հինչու օզում ըս, ասե։

Էտ մարթը ասում չի, քյինում ա։

Էտ դերը մին էլ ա շոռ տամ, կյամ առաշկը, թա. — Աստուծը յըես ըմ, հինչու օզում ըս, ասե։

Էտ մարթը ասում չի, քյինում ա։ Իրեքինչի դինումը վեր էտ դերը էլհա տունա ա կյամ առաշկը, էտ մարթն ասում ա. «Դե մին ասիմ լհի՛, բայլի լհա աստուծը էս ա»։ Ասում ա. — Դե մըեզ խոխա չինում, ասե, տեսնամ խե՞ իտի անարթար ըս մըեզ հետե։

Էտ դերը տունա ա օնում, մին խընձոր տամ, թա տար մաշան հալալ կես ըրա, կեսը տու կեր, կեսը տոք կնգանտ։

Էտ մարթը տանում ա, շատ անգյունը ինքյը յոր օնում, օտում, խրեգյը տամ կնգանը։ Դերը ասած ա ինում, վեր էրկու խոխա յա իննաչկան, մինը ինձ, մինը ծրեզ։ Էտ կընեգյը խընձորը վեր օտում ա, էրկու տղա յա ինում, մինը՝ լավ, մինը՝ փիս։ Էտ խոխենքյը օրը տիրեկան ըն տեռնում։ Վեր վաղան թամամում ա, դերը կյամ ա, թա

www.naregatsi.org

խուխեն մինը տանե։ էտ մարթը էն լավ խոխան տանում ա, տինում կյունմաշեն մաշկեն։

Դերը վեր կյամ ա, ասում. — Պա խուխեն մինը հո՞ր ա,

էտ մարթն ասում ա. — Լհա՛ էտ ա իլա՛լ, էլ կա վեչ։

էտ խոխան կյունմաշէն մաշկան ըսկանում ա, ծեն տամ, թա. — էնըմ ըստեղ։

Դերը էտ լավ խոխան յոր ա օնում, քյնում։ Քյինում ա մին կյիրք եր կալած, մին քեռծու պտկե նստում։

Քառասուն օր, քառասուն քշեր էտ կյիրը ըտեղ կարթում ա, քեռծը ճղվում ա։

Դերը խուխեն ասում ա. — Նի մոտ էտ քեռծը, էն ա մաչին վեսկե, պեն կա, ծեռք չի տաս, մինաւկ մին մախորկու աման կա ընդեղ, իրեք գնովկա էլ յրան, է՛տ յոր կօնիս։

էտ խոխան նի յա մննում, մախորկեն աման յոր օնում, պրծնում, ըսկսում վրեսկե, պեն հվաքելը։ Քեռծը հոփ ա կյամ, էտ խոխան մնում ա ըտեղ։ Շատ վեր կենում ա, եշում ա, տեսնում, մին ըսեղու ծակավ իշեղ ա կյամ։ Քանդում ա, քանդում, տուս կյամ լուս աշխարք։ Թուլացած, ճինչի-պոմբի ընելավ, քյինում ա մին չոբանու չիհում վխճրնեն պհեյիս։

էտ չոբանեն ասում ա.— Ըք էս կուճի արխավը ինձ անց կըցրու։

Չոբանը գյուդում ա, թա՛ մազաղ ա անում, քյնում ա մին կուճի սիլլա՛ տամ, էտ խոխան վեր ա ընդյնում։ Չոբանը տեսնում ա, վեր էտ խոխան օժա ընգած ա, արխավը անց ա կըցնում, տանում լավ հաց տամ, ուտուցնում, պրծնում, քշտեն պահում։

Շատ վեր կենում ա, հաբանց տոնը մեննն ա ընգնում, ասում ա. — Քյինում ըմ տոն։

էտ չուբըննեն լավ հաց, պեն ըն թխում, տամ էտ խուխեն, յոր ա օնում, քյինում։

Քյինում ա, քյինում, հղեննի էտ խոխան եշում ա, տեսնում մին մարթ մին հանգիստի մհակավ թկեյիս։

էտ խոխան ասում ա. — Խե՛ թակում ըս էտ հանգիստին։

էտ մարթն ասում ա. — Էն ինձ տասը մաննեթ ա տալի, տվալ չի։

էտ խոխան տասը մաննեթ ա տամ էն մարթին, թա՛ թակել մեր։

Քյինա՛մ ա, քյինա՛մ հրղեցը մին օշափ ա ջրհում։

էտ օշափն ասում ա. — Մունք քրշերս ըստեղ բեդմա կենանք։

էտ խոխան ասում ա. — Չէ՛, յրես քյինիլ բեդիմ։

Օշափն ասում ա. — Չէ՛, քյիննա՛կան չրս, յա տու քոն իլ, յրես ղարավուլ քաշիմ, յա յրես քոն ինիմ, տու ղարավուլ քաշի։

www.naregatsi.org

Էտ խոխան ասում ա. — Տու քոն իլ, յըես ղարավուլ քաշիմ։

Օշափին ասում ա. — Չէ՛, տու քոն իլ, յըես ղարավուլ քաշիմ, վեր յըես քոն ինիմ, քյըեզ մին պեն կպտահե, տու կրլական չըս ինձ եր կցնիս։

Էտ խոխան ոազի չի կենըմ, վախում ա, թա ինքյը քոն ինի, օշափը ուրրան ըսպանե։

Օշափն ասում ա. — Դե վեր տու վըս ղարավուլ քաշում, վեր մին պեն պտահե, կրակ կանիս, ժինջիլը կյիրմըրցնիս, քցիս պկավս, հանցու եր կենամ։

Օշափը քոն ա ինում, տղան ղարավուլ ա քաշում։ Էն համան դերը, վեր էտ խուխետ տարալ ա ուրրան նհետ, կյամ ա մախորկեն ամանը խլում, յոր օնում, քյինում։

Էտ խոխան կրակ ա անում, ժինջիլը կյրմըրցնում, քցում օշափեն վիզավը, եր կցնում։

Օշափը եր ա կենում թա.

— Հի՞նչ ա պտահալ։

Թա.— Իստի յա իլա, դերը եկալ ա մախորկեն ամանը խիլա, տարալ։

Օշափը էտ խուխեն մաշկեն նստցնում ա, քյինում։

Քյինում ա էն դերին տոռնը, մախորկեն ամանը ինքյ օնում, տամ էտ տըղեն մըն էլ մաշկեն նստըցնում, տանում համան տեղը, հիշտեղ վեր քըշերեն քոն ըն իլա։

Օշափն ասում ա. — Բա՛լա, էս լիվոթունը, վեր մախորկետ ամանը ինքյ ըմ կալա քյըեզ տվալ, քու ըրած լվոթունետ ավշեն ա։

Էտ խոխան ասում ա. — Յըես քյըեզ լվոթուն չըմ ըրալ։

Օշափն ասում ա. — Յըես էն հնգյիստին մաշին մարթն ըմ, վեր էն ար մին մարթ ինձ թկեցիս, տու տասը մանեթ տվեր, ինձ ըզըդեցեր։

Էտ խոխան մախորկեն ամանը յոր ա օնում, քյինում։ Հըղեն նի մտածում ա, ասում. — Էս մախորկեն ըմանեն դաուդան շատ ըրըվեցե, իսկի գյիդում չըմ, էս հի՞նչ պեն ա։

Ըտրա մաշի գունուվիկեքյան առաչինը վեր հոփ ա տամ, ամմեն հինչավը լիգյը, սարքած սուփրա յա տուս կյամ, էրկունջինը վեր հոփ ա տամ, հրսանեքյ ա ինում, իրեքինջինը վեր հոփ ա տամ, ղչըղնե չըն տուս կյամ, ղիմենեն ծրոքըրնում։ Էտ տղան վեր իտի յա անում, էն ըն ինում թաքավերեն ըխճկանը փայտոնավը համամ տնեցիս։

Թաքավերեն ախճիգյը տեսնում ա, էլ քյինում չի համամ, ետ

www.naregatsi.org

ա տեռնում, քյինում տոն, հորը, թա. — Ա՛ հայր, էն ա իլալ մին խուխու ծեռքե մին մախորկու աման, հիշտեղա վերե յա, էն խոխան պիրիլ տվեք, էն ամանը ինքյ օնինքյ։

Թաքավերը ըխճկանը ասում ա. — Պա համոթ չի՞, մունք թաքավեր ինիլավ քյինինքյ էն խուխեն ծեռքան պեն ինք օնի՞նքյ։

Ախճիգյն ասում ա.— Հինչ թայհրը օզում ա ինի, քթիքյ, պերեքյ։

Էն խուխեն պիրիլ ըն տամ, մախուրկեն ամանը ինքյ օնում։

Թաքավերեն ախճիգյը հորն ասում ա.— Ժողովուրթեն լոխճին ղոնաղ ծեն տոք։

Հայրն ասում ա. — Պա էտքան հաց-պեն հիշտե՞ղա կինի։

Ախճիգյն ասում ա. — Քու պենտ չի, տու լհայ ծեն տո, թող կյան։

Հայրը ծեն ա տամ, մարթիք ըն կյամ, լոխ նստոտում։ Էտ ղոնաղնեն տեռնում ըն, վեչ կրակ կա, վեչ խորագյ, վեչ պեն։

Թաքավերեն ծեն ըն տամ, ասում. — Թաքավերն ապրած կենա, պա տուզնը կուտրվեցենքյ, խե՞ հաց չըք տամ։

Թաքավերն ասում ա. — Դե իմ ախճիգյս ա ծրեզ ղոնաղ ծեն տվալ։

Թաքավերեն ախճիգյը ասում ա. — Մին իրեք րոպեյանը ետը լոխ պադրաստ ա իննայկան։

Ասում ա պրծնում, քյինում իրեքինջի գնուիկան հուպ տամ։

Ղըչըղնեն ղմենեն եր կալած տուս ըն տեռնում, ըսկսում լոխճին կտորելը։ Լոխ փախչում ըն։

Թաքավերեն ախճիգյը մըն էլ ա հուպ տամ, ղչղնեն նի յըն տեռնում։ Թաքավերեն ըխճկանը սուդի յըն տամ։ Թաքավերեն ախճիգյը ջառ կանչիլ ա տամ։

— Մախորկու աման ա կորալ, հու վեր կուրցուրալ ա, կյա տանե։

Մինը կյամ ա, թա յըես ըմ կուրցըրալ։

Թաքավերին ախճիգյն ասում ա. — Հի՞նչ կա մաչին։

Թ.— Էրկու պայպրոս։

Մինը՝ թա.— Օթ պայպրոս։

Մինը թա.— Չորս պայպրոս։— վեչ մինին էլ տամ չի թաքավերին ախճիգյը։

Մախորկեն տայրը, էն խոխան կյամ ա, թ. — Յըես ըմ կուրցըրալ։

Թաքավերին ախճիգյը ասում ա. — Մաչին հի՞նչ կա։

Թ.— Իրեք կնուիկա։

Մախորկեն ամանը տամ ըն էտ խուխեն, թա եր կալ կորե, էլ ըրվաս վեչ։

www.naregatsi.org

Էտ խոխան մախորկեն ամանը յոր ա օնում, թա.— Ցիշեցեքյ, յիշեցեքյ։

Ծշում ըն, տեսնում առաչին կնոփկան վեր հոփ ա տամ, սուփրա յա պենվում, էրկունջի կնոփկան վեր հոփ ա տամ, հրսանեքյ, իրեքինջինը՝ ղչղնե։

Թաքավերն ասում ա.— Պա՛հ, ախճիգյս սխալվալ ա՛։ Առաչինին տեղը իրեքինջինն ա հոփ տվալ։

Էտ խոխան մախորկեն ամանը յոր ա օնում, քյինում, տեսնում ուրեն ախպերը կարտ խաղ ըրած, իլեծեն, չիլեծեն տանել տված, քյեսիբ հեր էլ մին հավու պունում։

Առաչին կնոփկան հոփ ա տամ, լավ կերակուրնի, ջուտաբաջուտա բար-նուբարավ լիգյը սուփրա յա պենվում։ Էտ տըղան էտ կնոփկեն խնթրում ա, վեր ուրեն հորը, մորը ջիհլցնե։ Սկըսում ըն լավ ապրելը։

Դերը կյամ ա, թա. — Մախորկես ամանըս ինձ տոք։

Խոխան ասում ա. — Իրեքինջի կնոփկան հոփ տանք, ղչղնեն տուս կյան, հուրը վեր սպանին վեչ, էն յոր օնե։

Ըտի էլ անում ըն։ Ղչղնեն տուս ըն կյամ, դերին սպանում, մախորկեն ամանը մնում ա խուխեն։

Ջարը՝ ընդեղ, պարին՝ ըստեղ։

www.naregatsi.org



58. ՂՈՒԳՅԱՆԸ՝ ՆԱՆ ՍՈՒՔՅԱՆԸ

Ընում ա, չընում մին թաքավեր։ Էտ թաքավերը քսան տարե յար, հինչ փըսակվալ ար, ամմա խոխա չօներ։ Էրգյան մըտրծելանը ետը թաքավերը ղե՞յա տամ ուրիշ գիդնականներեն, վար նահանք գյիդաին, թա՞ մանին հի՞նչ ա, վար թաքավերեն խոխա չի ընում։ Թաքավերեն գիդնականնեն կըրեցին վեչ գյիդաին, կոզի շատ քնենքյի մեչ ընգյան։

Մին օր էլ թաքավերեն պալատն ա կյամ մին օզող աշըղ, թաքավերեն անա փայ ա օզում։

Թաքավերն ասում ա. — Փայ չըմ տա՞լ, թա գյիդաիս վեչ, խե՞ ինձ խոխա չի ընում։

Աշըղը շատ թա խրեգյ մըտրծելանը ետը ասըմ ա.— Թաքավերն ապրած կենա, թա մանին ասեմ, ինձ հի՞նչ փեշքյեշ կտաս։

Թաքավերն ասում ա. — Թա դուզն ըսեցեր, թաքավերոթունես կեսը քյըրեզ կտամ։

Աշըղը ըստի յա ասում. — Իրեք օր ինձ վախտ տաք, իրեք օրանը ետը քյըրեզ մանին կասիմ։

Աշըղը ծանոթ ար շատ տըղերե։ Նա մին խնձորի ծառի տեղ ար գյուդում, հու նրանա օտում ար, խոխա յար ընում։ Էտ ծառը հեն ար մին կյետի քըշտե։ Աշըղը քյընամ ա ծառը պըցրանում, մին խնձոր պուկում, քըցում ծոցը, էրկունջինը պուկելիս բուրդան ծեռքան վեր ա ընգյում, ընգյում կյետեն մաշը։ Ճարը կտրած աշըղը մին խնձոր ա յոր օնըմ, կյամ թաքավերեն կոշտը։

www.naregatsi.org

Խնձորը տամ ա թաքավերեն, ասում. — էտ խնձորը կես կանես, կեսը տու կոտես, կեսը կընեգյա։ Մին տարե ընցած վեչ, ծեզ խոխա յա ըննական։

Թող խնձորը թաքավերն նան թաքուհին օտեն, մունք խոսենքյ էն մին խնձորին անա, վար պուկելիս աշըղեն ձեռքան ընգյալ ար կյետը։

Խնձորը քյընամ ա մին ճըղացե թըվքատանը մընամ։ Ճաղացը վենն ա կենում։ Ճըղացպանը կնգանը ղարկում ա, վար գյիդա, թա ճաղացը խե՞ յա վենը կացալ։ Կնեգյը քյընամ ա, տեսնում մին ղաշնագյ խնձոր ընգյալ ա ճըղացեն թըվքատոնը, թողում չի վար ճուրը կյա։

Էտ կընեգյը յոր ա օնում խնձորը տանում մարթեն կոշտը, ասում. — Ա՛ մարթ, մին խնձոր ըմ քըթալ ճըղացեն թըվքատանը։

Ճըղացպանն ասում ա. — Ա՛ կնեգյ, դե տընական կես ըրա, օտենքյ, վար տա մեր ճաղացը էնքան վենն ա կըցըրալ։

Ճըղըցպանեն կնեգյը ըրեսուն տարե յա, հինչ փըսակվալ ար, ամմա խոխա չօնար։ Խնձորեն կերած օրան վար ընցնում ա իննը ամես, իննը օր, իննը ահաթ, իննը մունուտ, ճըղըցպանեն ընում ա մին տղա։ Նա շատ ա ուրխանում, վար վածցուն տըրեկան ա, ուրան խոխա ըլավ։ Տղեն անումը տընում ա Ղուգյաս։ Ճըղըցպանեն տղան տարավ ար մըծանում, օրավ ար մըծանում։

Թող ճըղըցպանեն տղան օրերավ մըծանա, խաբար տանք թաքավերեն անա։

Խնձորը կերած օրան հիբը ընցնում ա իննը ամես, իննը ահաթ, իննը մունուտ, թաքավերեն կնգանն ընում ա մին շատ ղաշնագյ տղա։

Թաքավերը աշըղեն ղե՞ յա տամ, էն գիդնականներեն էլա ղե՞ տամ, նահանց աշըղեն քըշտեն հըմընչըցնում ա, ղարկում ուրանց տները։

Աշըղեն մեծ փեշքյեշ էլ ա տամ, ուրան պալատումը պահում։

Թաքավերը տղեն անումը տընում ա Սուքյաս։ Թաքավերեն տղա Սուքյասն էլ ա օրերավ մըծանում, վեշ թա տարավ։ Հիբը տաունում ա օխտը տըրեկան, թաքավերը ուրան մադար տղեն ղարկում ա շկոլ։

Ճըղըցպանեն տղան էլ ա մըծանում, հիբը տաունում ա օխտը տըրեկան, ճըղացպանը տղեն ղարկում ա շկոլ։ Շկոլումը Ղուգյասն նան Սուքյասը ուրուր էնքան նման ըն ընում, թա իրեսավ, թա մըզերավ, վար հենց ըն գյուդում մին խնձոր ա, մեչան կես ըրած։

www.naregatsi.org

Ղուգյասը տըսնալավ, վար Սուքյասը լավ հնգեր ա, մընգյել հավադարիմ ա, Սուքյասեն ասում ա.— Ըք ըխպը՛րանանք։

Սուքյասը ռազի յա կենում։ Տհենց էլ էրկու խոխերքյը տաոնում ըն հալալ ախպերքյ։

Օրերան մին օր թաքավերեն տղա Սուքյասը ճըղըցպանեն տղա Ղուգյասեն ղե՛ յա տամ ուրանց տոն։ Ղուգյասը ռազի յա ընում։

Տիսերանը ետը էրկուսավ քյընում ըն թաքավերեն պալատը։ Թաքավերեն կնեգյը բըլկոնումը նստած, սըերտը թմփթմփալավ, համփերոթունը կուրցրած սպասում ար ուրան մադար տղեն՝ Սուքյասեն կյալին։ Բուրդան տեսնում ա, վար Սուքյասը կյամ ա, ամմա էրկուսավ, էրկուսն էնքան նման ըն ընում, վար թաքավերեն կնեգյը գյուդում չի, թա վե՞րն ա ուրան տղան։

Վար էլ ըն մուտանում, նա հըրցընում ա. — Սուքյաս ջան, մինակ ըս կյամ, թա հընգեր օնիս։

Սուքյասը ջողաբ ա տամ, ասում. — Ջէ՛, այ մար, իմ ախպեր Ղուգյասն էլ ա ինձ նըհետ։

Մարը ուրխանում ա, վար ուրան տղան ուրան նման ախպեր ա քըթալ։ Սիրավ նահանց ընթունում ա։

Ճաշանը ետը տըղերքյը քյընամ ըն մին պատառ շոռ կյան, ուրանց հետե ասին, խոսին։ Ետնան Ղուգյասը քյընում ա ուրանց տոն։

Մին օր էլ Ղուգյասը Սուքյասեն ղե՛ յա տամ ուրանց տոն։ Սուքյասը ռազի յա կենում։

Նահանք կյամ ըն ճըղըցպանեն տոնը։ Ճըղըցպանեն կնեգյը տղորցը լավ ղոնաղ ա անում, ետան տղերքյը քյընում ըն շոռ կյալի։

Նահանք տեսնում ըն, վար մին պառավ կընեգյ կոժավը ըխպըրան ճուր ա տանում։

Սուքյասն ասում ա. — Ղուգյաս, յըես էս քարը շպրտիմ, թա քյընա պըռավեն կոժը ծակե, էն մին ընգյունավը տուս կյա, գյիդա վար սաղ-սալամաթ մեր տոն ըմ քյընական, թա ծակե վեչ, մեր տոն չըմ հըսնըլական։

Ղուգյասը Սուքյասեն ասում ա, վար տհենց պան չանե, համոթ ա։ Սուքյասը ըսկանում չի՛, քարը յրա յա անում, պըռավեն կոժը ծակում, էն մին ընգյունավը տուս պիրըմ։

Պառավը Սուքյասեն անեծք ա տամ, ասըմ. — Աշկտ մնա Նոյեմզար խանումեն յըրա։

Էտ օրանը ետը Սուքյասը խըրեգյ-խրեգյ մաշվում ա։ Սուքյասը մին քըշեր ըրազումը տեսնում ա, վար մին ախճիգյ ուրան մին նկար

www.naregatsi.org

տվավ, քյինից։ Սուքյասը զուրթնանում ա, տեսնում մին նկար կա քըշտեն, ամմա ախճիգյը չիկա։ Վար լուսանում ա, Սուքյասը քյընում ա Ղուգյասեն կոշտը, ծրաղը նաղլ անում։

Ղուգյասն ասում ա.—Դե վար տհենց ա, եք ըրկու-սավ քյընանք, էտ ըխճըկանը շոռ կյանք, քըթանանք։

Սուքյասը ռազի յա կենըմ։

Ղուգյասը ասում ա. — Վըհննավ կարիլ չընք քյինանք։

Սուքյասըն ասում ա.— Խե՞ վըհննավ, իմ հար թաքավեր ա, կասինքյ էրկու լավ ծի կտա, կըքյընանք։

Սհենց պայման կապած քյընամ ըն թաքավերեն կոշտը, թաքավերեն պատմում ուրանց պայմանը։ Թաքավերը ռազի չի կենու՞մ, քընենքյ ա անում, վար ուրան մադար տղան էլ կըքյընա՞, էլ ետ չի կյա՞լ, էլլա կմնա առանց ժառանգյ։ Սուքյասը վերքան հորը ղաշանք ա անըմ, տառնում չի՞։

Ղուգյասն ասում ա. — Քյընանք իմ հոր ասինքյ, կոզի ճղացպան ա, ամմա մըհզ քյոմաքյ կանե։

Սուքյասը ռազի յա կենում։

Քյընամ ըն ըրկուսավ ճըղրցպանեն կոշտը, ուրանց պայմանը, մընգյ էլ թաքավերեն ատկազն ասում։ Ճըղացպանը դաստի ճաղացը ծախում ա, էրկու լավ ծի ինքյ օնում, տղորցը տամ։

Էրկու ախպերք՝ Սուքյասն նան Ղուգյասը հրդե յըն ընում, թա վը՞րդեղ ըն քյընամ, ուրանք էլ չըն գյուտում։ Օրը մըթնում ա, մին կանանչ տեղ եր ըն կյամ։

Սուքյասն ասում ա.— Ղուգյաս ջան, տու ստեղ կաց, յըես քյընամ մին պան վըերս անեմ, պիրիմ օտինքյ։

Ղուգյասն ասում ա.— Չէ՛, յըես ըմ քյընական։

Վերչը Ղուգյասը վըերսի յա քյընամ։ Սուքյասը քոն իլած վախտը կյուլերը կյամ ըն, ընրան օտում, վըսկռնեն շաղ տամ։ Ղուգյասը վար տեսնում ա Սուքյասը էլ կա վեչ, շատ մըտրծելանը ետը, քյընամ ա, մին ծառնե տակե նստում, սկսում լաց ինելը։ Լաց ինելիս նենջը կյամ ա, տրհենց էլ կես քոն, կես զաբթում, բուրդան տեսնում ա ծառնեն յրա մին ղուշ, ուրան ճըտերավը ծըլվըլում ա։

Նա անգուճ ա օնում, սկանում, վար ղուշեն ճոտերը ուրանց մորն անա հըրցնում ըն. — Էս հո՞ւվ ա, էս տղան, վար սրհենց մինակ ծառնեն տակեն քոն ա ըլած։

Ղուշն ասում ա. — Սա ճըղրցպանեն տղան ա, ընդրան հընգերին կյուլերը կերալ ըն, ինքյըն էլ մինակ ա մընացալ, գյուտում չի, թա հի՞նչ անե։

www.naregatsi.org

Ճոտերն ասում ըն. — Խե՞ մին հընար չիկա՞ Սուքյասին նորու սըղըցնին։

Ղուշն ասում ա. — Խե՞ կա վեչ, վար էս տղան զարթունն ընի, իմ ասածնեն ըսկանա, հինչ ասիմ, նըհենց անե, կըրլական ա Սուքյասեն սըղըցընե, հըսնեն ուրանց նպատակեն։

Ճոտերն ասում ըն. — Էտ տղան հի՞նչ պիտի անե։

Ղուշն ասում ա. — Ցրես մըհենգյ իմ թեփուռներաս վեր կըքըցիմ, պետմա յոր օնե քյընա՜ օխտը սարան էլ տենը մին մեծ սար կա, ընդեղ ապրում ըն օխտը դև։ Նահանք ախպերք ըն, նահանց բաղեն անմահական ճուրը պիրի, Սուքյասեն վեսկեռքը ուրուր հըվաքե, էտ անմահական ճուրն էլ ածե յրան, իմ թըփուռներավըս քըսե, դա՜ստի Սուքյասը կըսղանա, կըզարթնի նահանք ուրանց հըղեն կըքյընա՜ն, կը հասնին ուրանց մուրազեն։

Ճըտերը նորու մորն անա հըրցնում ըն.—Էտ դևերին անա հո՞ նց անմահական ճուրը պիրի։

Մարն ասում ա. — Պիտի քյընա՜, ցիրեկավ հըսնե ընդեղ, էն սարեն քըշտեն մին ախպուր կա, ընդեղա էլ յոր օնե։

Ղուգյասը օրախ-օրախ եր ա կենում։ Էտ վախտը ղուշը թռչում ա, հըռանում։

Ղուգյասը հունցու ղուշն ասալ ա, նհենց էլ անում ա։ Սուքյասը նորու սըղանում ա։ Ետնան էրկու ախպեր հըղե յըն ընգնում։

Շատ ըն քյնա՜մ, թա խրեգյ, ուրանք ըն գյուդում, հըսնում ըն մին ղալին քոլ, տեսնում ըն կրակի ծուխ ա եր ընում։

Սուքյասն ասում ա. — Հա՜յբաթ դևերը ըստեղ ըն ապրում։

Ղուգյասն ասում ա. — Վեչինչ, քյընանք նահանց կոշտը։

Ըրկուսավ քյընում ըն դևերին տանը կըտրեն վեննը կենում։ Ղուգյասը վեննավը կտրեն թըխում ա, կտորը թըմփթըմփում ա։

Դևերեն կլխավերը տուս ա կյամ, վար տեսնում ա նահանց, ասում ա. — Լա՜վ ա, շատ վախտ ա մարթու մրես չընք կերալ, մարթու մրես էլ կօտինքյ։

Նահանց տոն ըն տանում։ Վար Սուքյասն նան Ղուգյասը տոն ըն նի մննում, դևերեն կլխավերը քառասուն դևերի մհար կերակուրեն ղրզղանը նշանց ա տամ, վար խուրագյավ լիգյը ղրզղանը յոր օնե, ասում ա. — Թա՜ էրկու ախպորավ կըրեցեքյ էս ղրզղանը պըցըրցընեքյ, գյիդացեք, վար ըստեղան սաղ սալամաթ քյընական ըք, թա չէ ծրեզ էրկուսեն էլ ուտլական ընք։

Ղուգյասը շատ թա խրեգյ մըտրծելանը ետը ասում ա. — Յոր էլ կօնինքյ, հա՜լա՜ վեր էլ կըտինինքյ, ետնան էլ տուք ըք պըցըրցնելու։

www.naregatsi.org

Դևը ոազի յա կենում։

Ղուգյասը մինակ ղազանը յոր ա օնում, նըհենց տափավը կյամ, վար ղազանը մինչև կեսը վրեղեն մեչն ա խրվում։ Դևերը հիշքան չըրչարվում ըն, կարում չըն ղազանը վրեղան հանին։

Նահանք ղաչանք ըն անում Ղուգյասեն, Ղուգյասը ղազանը հանում ա յավաշ տինում վրեղեն յըրա։ Ընդեղան Սուքյաս նան Ղուգյասը տուն ըն կյամ, ուրաննց հրղեն քյընում։

Շատ ըն քյընամ, թա խըրեգյ, հըսնում ըն իրեք հրղըցու։ Ըտեղ տեսնում ըն մին պառավ մարթ կա նստած, պարով ըն տամ, պարով ինքյ օնում։

Ղուգյասը էտ պառավ մարթան հըրցընում ա, թա. — Պապե, էս իրեք հրղըցնեն վը՞րդեղ ըն քյընամ։

Պառավ մարթն ասում ա. — Էս մինը քյընամ ա Նոյեմզար խանումեն պալատը, ստրանավ քյընացողը ետ չի կյամ։ Էս մինավը քյընացողը իցցուն տարանը ետն ա ետ տառնում, էս իրեքինչինավն քյընացողն էլ կանոխ ա ետ տառնում։

Սուքյասը վեր սկանում ա Նոյեմզար խանումեն անումը, ուրախացած Ղուգյասեն ասում ա. — Քյընանք Նոյեմզար խանումեն պալատեն թուշավը։

Վար հրղե յըն ընում, էտ պառավ մարթը ետ ա կանչում նահանց, ասում. — Վը՞րդեղ ըք քյընամ, ա՛ չըհըլնե։

Սուքյասն ասում ա. — Քյընամ ընք Նոյեմզար խանումեն հետան։

Էտ պառավ մարթն ասում ա. — Ընրա կոշտը քյընացողը էրկու հոքավ չըպիդի քյընա, էրկուհազար հոքավ պիդի քյընա։

Սուքյասն ասում ա. — Խե՞ մունք կարալ չը՞նք ընրա կոշտը հրանինքյ։

— Չէ։

Ղուգյասը կըզնըվում ա, ասում. — Ա՛ պառավ, թա գյուղում ըս հունց ամաչ կըկյա ընրա կոշտը քյընալ, ասե, թա չէ կլինխտ կըտըրլական ըմ։

Պառավը վրխելան նհետ ասում ա.— Ա՛ ղուգի, ինձ սպանել մեքյ, լավ, կասեմ։ Շատ քյընաք, թա խրեգյ, ծեր առաչը մին մըեծ պալատ ա ընանական, տա հենց ընդրա պալատն ա։ Պըլատեն չորս անգյունը մեծ պատ ա քաշած։ Սուքյասը ծին կտա Ղուգյասէն, Ղուգյասը հրռուցանա ծին կըքշի, բըրդան էտ պատը պարան կըկյա։ Նի կըմննե պալատը։ Էտ պըլատեն ըռաչեն էրկու ծառ կա՝ մինը խնձորե, մինը տանձի։ Էտ ծըռներան կը պուկե իրեք խնձոր, իրեք

www.naregatsi.org

տանձ, կը պըցրանա Նոյեմզար խանումեն կոշտը։ Իրեք խնձոր նան իրեք տանձը ընրան կտա, յետնան կասե. «Ջո՛ռ»։ Թա կըրացեր վեչ ասես «չռռռ», դաստի տեղտ քար ըս կըտըրլական։ Քյընացեքյ, ամմա սայաղ կացեքյ, վեր էրկուստ էլ քար չըտառնաք։

Սուքյասը նան Ղուգյասը քյընում ըն։ Հինչ վար պառավն ասալ ար, կըդարըմ ըն։

Նոյեմզար խանումն ասըմ ա. — Ա՛յ տղա, խե՞ կանոխ չըս եկալ։ Էսքան ըսպասալ ըմ, օրուքշեր տանջվալ, յըես ջահիլ-ջիվան, բա տու հըշտե՞ղ ըս իլալ։ Բա հընգերտ հո՞ր ա։

— Հընգերս էն ա ըստեղերքյ, քյնամ ղե տամ, կյա։

Էրկուսավ կյամ ըն, իրեք օր, իրեք քըշեր ընդեղ մնամ ըն։ Ետավ հըղե յըն ընդունում Ղուգյասեն հըրթնացուն քըթընալու հետե։

Կյամ ըն էլլա էն պառավ մարթեն կոշտը։ Էրգյան հարցըփորց ընելանը ետը, պառավը նշանց ա տամ Անթառամ խանումեն պալատը։ Ըտեղ էլ իրեք օր, իրեք քըշեր մընալանը ետը, հըղե յըն ընդունում բըղա ուրանց երգյիրը։

Թաքավերը ըսկանում ա ուրան տղեն կյալը, դաստի քյնամ ա ընդրան առաչը, ամմա տղան հորը նհետ խոսում չի, քյընամ ա ճըղըցպանեն կոշտը։

Ճըղացպանը օխտը օր, օխտը քըշեր Սուքյասեն նան Ղուգյասեն հետե հրատանեքյ ա անում։

Սուքյասը ուրան թաքավեր հորը ժողովուրթեն փիս պհելեն դաղդան ընրան թախտան եր ա քըցում, Ղուգյասեն հորը՝ ճըղըցպանեն թաքավեր տինում։ Տհենց էլ ապրում ըն՝ ճըղացպանը հունցու թաքավեր, Սուքյասն նան Ղուգյասը հունցու ընրա տղերքյը։

Ընրանք հասեն ուրանց մուրազեն, տուք էլ հասնիքյ ծեր մուրազեն։

Էն ղաշանգյ կյապուտ երգյինքան, էն ըլըվալավ անում ըրևեն քըշտան, վեր սաղ աշխարքես լուս ա տամ, ուտուլեղան ա տամ, քըշտըցընում, մրեզ հետե կընընչ-կյարմուր խնձորնե վեր տառնա, վեր լոխ ժողովուրթը օտե-օտե, մին լա՞վ քըշտանա՞։

www.naregatsi.org

59. ԲԱԽՏԱՎԵՐ ՉՈՐԱՆԸ

Իլալ ա, չիլալ մին մարթ, մին կընեգյ ա իլալ։ Նահանք շատ քյաւսիբ ըն իլալ ըպրեւիս, ամմա սիրավ, ուրուր նհետ հաշտ ըն իլալ։ Նահանց խոխա չի իլալ։

Մին օր էլ մարթը կընգանը ասալ ա. — Ա՛ կընեգյ, քշերես մին ւարազ ըմ տեսալ։ Էտ ւարազը իմ գյիդալավրս հըրըստոթուն ա, հղե յըմ ըննական, քյինամ հըրըստոթունե շոռ կյամ։

Կնեգյը ղաչանք ա անըմ, պղատանք ա անըմ մարթեն, թա հի՞նչ ւարազ ա տեսալ։ Մարթն օզըմ չի ասե, ամմա էրգյան քընենքյ ընելանը եսը ասըմ ա. — Քըշերես ըրազումս վընիերես մաչին էրկու տղա յըմ տեսալ։ Տա հըրըստոթուն ա, բիդի հըղե ընիմ հըրըստոթունե շոռ կյամ։

Էն մին քըշըրհանը կնեգյը մարթին հըղե յա քըցում։ Մարթը շատ թա խրեգյ քյնալանը եսը մին չորանե յա պըտահում։ Չորանը ըտեղ պահում ար օխտը հըզեր վեխճար։ Էտ օխտը հըզեր վըխճարեն նհետ օխտը շոն էլ օներ։

Նահանց զահմանը վեշ մինը կարըմ չար ընցնե։ Չորանը էտ մարթին տըսնելավ մընամ ա քար կտրած։

Վազ ա տամ բըդա նա, հըրցընում. — Ա՛ մարթ, հինչի՞ հետե, վըրդե՞ղ ըս քյինամ։

Էտ մարթը վեշ մին չողաբ չի տամ, հըղե ընգած քյինամ ա։ Չորանը վեր շատ զոռ ա անում, ասում ա. — Քյընամ ըմ հըրըստոթուն քթենամ, ւարազ ըմ տեսալ։

www.naregatsi.org

Չորանն ասում ա. — Հրզեր վեխճար տամ քյրեզ, մինակ թող քու տեղ յրես քյրնամ։

Էտ մարթը ոազի չի ինում։

Անջախ վար չորանն ասում ա. — Վրխճըրներեն սաղ սուրուն, մընգէլ օխտը շոնը քյրեզ ըմ տամ, մինակ թա յրես քյրնամ, էտ մարթը ասում ա՝ «հա»։

Օխտը հրզեր վեխճարը շներեն նհետ յոր ա օնըմ, օրախ-օրախ ետ տաունում տոն։ Տհենց էլ մարթըկնեգյ ըսկսում ըն լալ ապրելը։

Չորանը հրզե յա ինում վար էն մարթեն ըրազըմը տեսած հըրըստոթունը ինքյը յոր օնե։

Շատ ա քյրնում, թա խրեգյ ա քյրնում, շատ նան խրեգյը ինքյը կգյիդա, նի յա մննում մին խրնձորի բաղ։ Տրեսնում ա մին ջահիլ մին խրնձորի ծառնեն տակեն պարանց ընգյած, ծին քըշտան կապած։ Չորանը ամեն հինչ դաստի կըլոխ ա ընննում, ծին տանում ա օրիշ ծառնա կապում, ինքյը քըշտեն պարանց ընննում։

Կես քըշերը անցկացած չորանը տեսնում ա թաքավերեն ախճիգյը, մին խուրջին վրեսկե եր կալած կյամ ա չորանեն կոշտը, առանց ընրան ճրնընչելու ասըմ ա. — Կանոխ ըրա, հրզե ընննինքյ թաքավերեն վրեղան, կանոխ անց կենանք։

Չորանը խուրջինը քըցում ա ծիյավը, ուրանք էլ նստում ըն ծիյին յրա, բեջիթ քըշում, վար ըտեղան կանոխ անց կենան։

Ախճիգյը իմաստուն ա ընում։ Կրսըհրզե դաստի կլոխ ա ընում, վար տա ուրան մարթը չի, չորան ա։ Ետնան հինչ վար ըսելի յա ընում, «չորան» ա ասում, «չորան» ա ղե տամ։

Չորանը մընգյէլ թաքավերեն իմաստուն ախճիգյը շատ թա խրեգյ քյրնալանը ետը, հրսնում ըն մին օրիշ թաքավրոթուն։ Նահանք մրսըրհաթ ըն անում մրնան ըտեղ։ Տհենց էլ անում ըն։ Մրնում ըն ըտեղ հունցվար մարթըկնեգյ։

Ուրանց սեփական տոն չի ըլալ։

Կնեգյը մարթին ասում ա. — Չորան, քյրնա թաքավերեն կոշտը, ասե. «Թաքավերը ապրած կենա, քու պալատներան մինը մրեզ տո, վար մրեչին ապրինքյ»։

Կնեգյը վախտին մարթին դուլուղ ա անում, վար թա թաքավերը ամեսը չորս վրեսկե քըրեհավ տա, ղաբուլ կը կենաս, թա չէ, չէ՛։ Թաքավերը տհենց էլ պըրհանչում ա։

Մեհետ կնեգյը չորանեն ղարկում ա, վար թաքավերեն ղոնաղ կանչի։ Չորանը քյնամ ա թաքավերեն կոշտը։

www.naregatsi.org

Թաքավերն ասըմ ա.— Յըս ծեր տոնն ըմ կյըլյական էն վախտը, հիբը իմ օթախան չըրու ծեր տոնը գյաբա քցիքյ։

Չոբանը ետ ա տաոնում կնգանը ասում թաքավերեն պահանջը։ Կնեգյըն ասում ա. — Բեքեփանա միլ, տա էլ կլոխ կըպիրինքյ։

Ախրը վերչը նահանք ուրանց տանան չելը թաքավերեն օթախը գյաբա յըն քցում։ Կնեգյը չոբանեն դուրուղ ա անում, վար թա թաքավերը կյա, տու մին վրենները կանոխ նի կմննես տոն։

Թաքավերեն նհետ կյալիս չոբանը մննան քցում ա կնգանը ասածը, վար ասալ ա, թա մին վրենները կանոխ նի կմննես տոն։ Չոբանը նան թաքավերը մինտեղ նի յըն մննում տոն, տեսնում կնեգյը մազերը սանդրում ա։

Թաքավերը վար տեսնում ա չոբանեն կնգանը, սիրահարվում ա, իշտահը խարաբ ա ընում, վեշ մին պաին օտում չի, մտածում ա, հունց անե, վար չոբանեն խափի, ինքյը փսակվե ընրա կնգանը նհետ։

Թաքավերը քյընում ա ուրաին պալատը, չոբանեն ղե յա տամ ուրաին կոշտը ասըմ. — Չո՛բան, անջուկ ըրա, յըս հիվանդ ըմ, տու բիդի քյընաս, ընցնես երկու ուրուր նի եկող սըրերեն ղաթավը, վար ըսկի ղուշն ուրաին թևավը, օցն ուրաին պոռտավը կարըմ չի ընցնե էն սըրերեն քամակը, ընդեղ հենա մին քյահրիզ կա, էտ քյահրիզին կոխկի ծըղրդյներան բիդի պիրիս, վար յըս վրետ քաշիմ, լիվանամ։

Չոբանը բեքյեփ կնգանը կոշտն ա կյամ, թաքավերեն խոսկը ասում։

Կնեգյն ասում ա. — Բեքյեփանա միլ, չոբան, քյընաս թաքավերեն կոշտը ասե. «Թաքավերն ապրած կենա, ինձ էրկու փութ պաամբաակ տո, մընգյ էլ մին ծի, վար քյընամ ծըղրդյնե պիրիմ»։

Չոբանը քյընամ ա թաքավերեն կոշտը էլ լոխ ասում, հինչ վար կնեգյը թափշուր ա ըրալ ուրաին։ Թաքավերը մթկումը տինում ա, հենց անե, վար չոբանը էլ ետ չըտաոնաս։

Չոբանը էրկու փութ պաամբաակ, մընգյ էլ մին լավ ծի յա յոր օնըմ, հըղե ընում։

Շատ ա քյընամ, թաս խրեգյ, հըսնում ա ուրուր նի եկող սըրերեն։ Պաամբաակեն կեսը թող անում բըդաս ծախ, կեսը բըդաս աչ, տըհենց էլ սարերը ուրուր անա հըռանում ըն, չոբանը ընցնում ա սըրերեն քամակը։ Սըրերեն քամակը ընցնելավ, տեսնում ա մին ցորցորտ քյահրիզ, չորս անգյունը ծըղրդյնե փըսած։ Չոբանը պըցըրնալավ տեսնում ա ընդեղ, վըրդեղ քյահրիզն սկսվում ա, մին ախճիգյ արկաթե ժինջիլավ կապած։

www.naregatsi.org

Ախճիգյը չոբանեն տրսնալավ ղե յա տամ, ասում. — Մըղափուն ըս, ա՛յ ջահիլ, բեչիթ ըրա ըտեղա հըռաց, թա չէ դևը կըկյա քյըեզ պըտըռ-պատառ կանե։ Էն քյըեզ նման շըտերեն ա կոլ տըվալ։

Չոբանն ասում ա. — Յա յըես մեռնել պիտիմ, յա քյըեզ ըզադիլ պիտիմ։

Չոբանը կյողլ ա կենում ճըրին մեչին։ Դևը կյալավ դաստի գյուդում ա, վար ուրան սըրհադան մարթ ա ընցալ, սկսում ա կյըռկյոռալ ըխճըկանը յըրա։ Հըրցնում ա, թա հո՞ւ վա նի մտալ ուրան սարհադը, ամմա ախճիգյը վեշ մին պան ասըմ չի։

Դևը կյըռկյոռալավ տեսնում ա, վար վեշ մինը կա վեչ, քոն ա ընում։

Չոբանը ճըրան տուս ա կյամ, օխտը կըլխանի դևեն մաչի կըլխեն նըրհենց ա թըխում, վար դևը մեչան էրկու կես ա ընում։

Դևը վերքան կյոռռում ա, ասըմ. — Մին էլ թըխե, մին էլ։

Ամմա չոբանը ասում ա. — Յըես իմ մորան մե հետ ըմ ծնվալ։

Դևեն սպընելանը ետը ախճիգյը ուրան ժինջիլներեն պընաչիքներեն տեղն ասում ա։ Պընաչլին դևեն մրքեն տակեն ա ընում։

Ըխճըկանը ժինջիլնեն պընաչլավ, ախճիգյը նան չոբանը նստում ըն չոբանեն ծիյին վրա, քյընամ չոբանեն կնգանը կոշտը։

Տոն կյալավ չոբանը ծաղեգյը տանում ա թաքավերեն տամ։

Թաքավերը տրսնալավ չոբանեն պիրած ծաղեգյը, հըվատում չի, կըզնըվելավ ասում ա. — Ռադ իլ, աշկես ըրևաս վեչ, իմ ասած ծըղրգյներեն հետի քյընացողը ետ չի տանում։

Չոբանն ասում ա. — Վեչ թա մինակ ծաղեգյն ըմ պիրա՛լ, էտ ծաղեգյը վարող ըխճըկանն էլ ըմ պիրալ։

Թաքավերը ծաղեգյը վարող ըխճըկանը տրսնալավ սիրահարվում ա ընրա յրա, օգում ա չոբանեն մին էլ ղարկե հենց տըեղ, վըրդըղա ետ չըն կյամ։ Մըհենգյ էը թաքավերը չոբանեն հրամայում ա, վար քյընա մին խոր քոլա հըրեղան ծիյին կաթնը պիրի։ Չոբանը մըհենգյ էլ հունց վար առաչ, բեյքեփ կյամ ա տոն, կնգանն ասում թաքավերեն խոսկերքը։

Կընեգյն ասում ա. — Չոբան, բեքյեփանա միլ, քյընա թաքավերեն կոշտը, ասե. «Թաքավերն ապրած կենա, ինձ քառասուն վեդրա արաղ տո, քառասուն փութ պամբակ, քառասուն փահլա, մին քառասուն էլ ծի»։

Չոբանը թաքավերին անա լոխ յոր ա օնում, հըղե ընընում։

Շատ ա քյընամ, թա խրեգյ ա քյընամ, շատ նան խրեգյը աստուծ կգյիդա, հըսնում ա մին խոր քոլում էն քյահրիզին, վըրդը-

www.naregatsi.org

ղան հըրեղան ծին ճուր ա խմում։ Չոբանը փահլոցը հրամման ա տալ, վար փոս կտրեն, քառասուն վեդրա արաղ ածեն մեչը, ուրիշնք էլ ետ քյընան ուրիշնց տները։ Ետնան ինքյը կյողլ ա կենում մոտի տեղ։ Չոբանը տհենց կյողլը կացած, պատառ կենում ա, տեսնում ա ծին եկու, արաղը խմից, հարփից, վեր ընգավ։

Չոբանը ջլավը քըցում ա ծիյին բողազը, ինքյը յրան նստում, ետ տառնում տոն, տանում ա ուրիշնց կյումումը կապում։

Էն մին քըշըրհանա թաքավերեն հետի կաթն ա տանում։ Թաքավերը մըհենգ էլ տըսնալավ չոբանեն ջըլիս կըղնըվում ա, ասում ա.— էտ կաթնը իմ աւած ծիյին կաթնան չի։

Չոբանն ասում ա. — Վեշ թա մինաւկ կաթնն ըմ պիրալ, կաթնը տվող հըրեղան ծին էլ ըմ պիրալ։

Թաքավերը մըհենգ էլ մթկումը ասում ա. «Էրկու դաւրդս իրեքը տառավ»։ Օզըմ ա չոբանեն ջիլիս փիս տեղ ղարկե։

Էն մին օրը ղե յա տամ չոբանեն, ասում. — Անգուճ ըրա, չոբան,— ուրիան սանդողնեն նշանց ա տամ թաքավերը ասըմ ա.— տեսնո՞մ ըս, էս սանդողնեն, իմ թըռնգյակին պաներ հենա ըտեղ, ամմա տահանց պըռնելիքյնեն մնացալ ա մորըս քըշտեն, մարըս էլ մըեռալ ա, քյընա առանց մին խոսկի էն մին ըշխարքան պըռնելիքյնեն պեր։

Չոբանը մըհենգ էլ ա կյամ տոն, բեքյեփ նըստում։ Կընանեքյը հըրցընում ըն, թա հի՞նչ ա պըտահալ։

Չոբանը նահանց ասում ա թաքավերեն ըռաջարկը։

Կնանեքյը ումեդ ըն տամ չոբանեն ասում. — Բեքյեփանա միլ, չոբան, քյընա թաքավերեն կոշտը ասե. «Թաքավերն ապրած կենա, ինձ քառասուն սաժեն փադ, մընգյել քառասուն փութ նոթ տո, վար քյընամ»։

Չոբանը թաքավերան լոխ յոր ա օնըմ, փադը տառսում ա փընջըրին ըռաչին, քառասուն փութ նոթը շաղ տամ, ինքյը չոբանը յրան վենը կենում, վար էրվի, մեռնե, վար քյընա էն մին աշխարքը։ Հիբը վեր տվերան փադը նի յրն կըցընում, էրկու կնանեքյը չոբանեն մագնիսավ ուրիանց փանջարավը քաշում ըն տոն, տըրհենց էլ մին քանի վախտ կյողլը կըցրած պահում ըն։

Բազի վախտ էլ կնանեքյը քյընամ ըն թաքավերին կոշտը ասում. — Ա՜խ, խե՞ չոբանը եկու վեչ։

Թաքավերն ուրխանում ա, վար չոբանը կա վեչ, ամմա կնանոցը գինջըցընելի հետի ասում ա. — Վեչինչ, հեսա կըկյա։

Տհենց էլ էրգյան վախտ չոբանը կյողլը կացած ա մնամ։

www.naregatsi.org

Մին քրշըրհան ծաղեգյ վարող ախճիգյն ասում ա. — Զոբան, ջուբումս տհենց մին պընեվիքյ կա, տար սանդողը պաց ըրա, շորերը հանե, տո ուրան։

Ախճիգյը մին էլ ասում ա,— Պան ա, թա թաքավերը հըրցընե, թա իմ հար, իմ մար հո՞ւնց ըն ապրում, կասես, վար քյամիբ ըն ապրում, քյըզանա էլ շատ ըն տիժրոթուն անում, ասում ըն, վար մեր վերթին էնքան հըրըստոթուն օնե, ամմա մունք սհենց քյամիբ ընք ապրում։

Զոբանը քյընամ ա թաքավերեն կոշտը, պընաւիքյը տամ ա ընրան։

Թաքավերը նրանա հըրցընում ա ուրան հորը, մորը անա։ Զոբանը կընգանը ասածը, հաւյա մին պատառ էլ յրան տընիլավ թաքավերեն նաղլ ա անում։ Թաքավերը տա սկընալավ, օգում ա ինքյն էլ քյընա ուրան ծնողներեն տեսնա։

Թաքավերը հրամմայում ա քառասուն սաժեն փայդ տաբսին ուրուր յրա, մընգյ էլ քառասուն փութ նոթ յրան շաղ տան։ Թաքավերեն ծառանեն տըհենց էլ անում ըն։ Թաքավերը յրան վրեննն ա կենում, հրամմայում, վար նի կըցընին։ Հիբը վար նի յրն կըցընում, թաքավերը փայդեն նհետ էրվում ա, մոխեր տաոնում։

Տըրանա ետը թաքավերեն տոնը, տեղը մնամ ա չորանին։ Զոբանն ուրան էրկու կընգանը նհետ ըտեղ ապրում ա։

Մեհետ էլ առաչին կնեգյը հըրցընում ա չորանեն անա. — Տու հո՞ւնց եկար ինձ քրթաբ։

Զոբանը ուրան կըլխավն ընցածը լոխ նաղլ ա անըմ։

Կնեգյն ասում ա. — Դե վար տըհենց ա, քյընա էն մարթն նան կնեգյն պեր։ Մարթը մըզ հետի հար տաոնա, կնեգյը մար։

Զոբանը քյընամ ա նահանց պիրում թաքավերեն պալատը։ Տհենց էլ նահանք հաշտ ապրում ըն ընդեղ։ Ժողովուրթեն լավ պահում, ըզըդոթուն ըն տամ լոխճին։



www.naregatsi.org

60. ԴԵՎԸ

Ընում ա, չընում մին մարթ, մին կընեգյ։ Ընդրանց ընում ա իրեք ախճիգյ։

Էդ ըխճըկերքը օզում ըն քյինաեն մոշ քաղեն։ Կուճուր քերը շատ ա լաց ընում։ Յոր ըն օնում ընդրան մին վրեղե պուլիգյ տամ, տական ծակ։

Իրեքալ քյընաեմ ըն մոշ քըղելի։ Ուրաենց ըմբոնեն լըցած տոն ըն կյամ, ամմա կուճուր քըվերը ըմանեն մեչին մոշ չի ընում։ Սաբաեբը վեր քաղած մոշը ծակավը վեր ար տեռալ։

Քըվերքը վար տոն ըն հըսնում, մթենը վեր ար կոխում, ամմա կուճուր քերը մնացալ ար հաենդումը։ Լաց ար ընում։

Ընդրա առաչը մին դև ա տուս կյամ։

Դևն ասըմ ա, — Քյըեզ ուտլական ըմ։

Ախճիգյը տանում ա տինում փըշերեն տակեն, ինքյը քյընաեմ ա կրակ պիրի, նի կըցնե փըշերը, ըխճըկանը խրավե, ետնան օտե։

Նա վար քյինամ ա, ախճիգյը լաց ա ընում, ասըմ. — Ա՛յ ասթխեր, ա՛յ լուսնընգյա, ա՛յ քոլեր, ա՛յ սարեր, ինձ էտ դևան ազատ ըրեքյ, ըզըդեցեքյ։

Չելը դևեն կյալը ախճիգյը տուս ա կյամ, մին թաշհրաեվ էտ փըշերեն տական, փախչում շենը։ Դևը կյամ ա, վար ըխճըկանը օտե, տեսնում ա ախճիգյը կա վեչ։

Շատ ա կըզնվում, մթկումն ասում ա. «Յա ընդրան պիտի քը-

www.naregatsi.org

թենամ օտեմ, յա օրըս օր չի ընելու, վըրդեղան վերե յա, պիտի քըթենամ»։

Ուրերան մին օր էտ ըխճըկանը տոնը մին ղոնաղ ա կյամ։ Կուճուր ախճիգյը ընրան դաստի ճնանչում ա։ Դևն ա ընում։

Դևը էտ օրը օզում ա ղոնաղ մընա։ Կուճուր ախճիգյը մորն ասում ա. — Ա՛ մար, էտ մարթին ղոնաղ մե՛լ ընթունել։

Հաերը լըսում ա, յրան կըզնըվում, ասում. — Կանուխ պիտիր մըծացած, վար մըեր տանը ղունուղներեն ետ տաս։

Ախճիգյը վեշ մինին ասում չի, թա նա հու վա՞։

Վար մըթնում ա, լոխ հաց ըն օտում, քոն ընում, էտ ղոնաղեն քըշտեն աղու տեղ ա ընում, էտ տեղավը լոխճին քընավ ա անում, թողում մինակ կուճուր ըխճըկանը։

Էտ դևը տուս ա կյամ տոռնը, ուջաղեն յրա տինում մին մեծ ղազան, մին խիլլա եղ ա նի ածում մեչը, ղազանեն տակը նի կըցընում։

Վար եղը սկսում ա ճըլճըլալը, եր ա կըցընում ըխճըկանը՝ ասում. — Շոռերըտ հանե, վար ղըզանումը քյըեզ պիդի տըպակեմ։

Ախճիգյը ըղաչանք-պըղատանք ա անում դևեն, ասում. — Դե՞ ինձ ուտլականը-ուտլական ըս, լհա թող քյընամ մին կոլա ճուր պիրիմ, մըեր ախպուրը մին էլ տըեսնամ, ետնան կեր։

Դևը «հա» յա ասում։

Էտ ախճիգյը ճըրին յրա սոքյ ա ասում, ետնան էն ղաշանգյ Ղարաբաղեն սըրերեն յիշիլավ ասում ա. — Ա՛յ սարեր, ա՛յ կընընշկյիրմիրին տվող հանդեր, քոլեր, ա՛յ նախշուն ասթխեր, ինձ ըղըդեցեքյ դևին անա։

Տըյերան մին յըղոնիգյ մին թեփուռ ա վեր քըցում, ասում. — Ա՛յ աղճիգյ, ա՛յ սըվաբախտ, էս թեփուռը եր կալ, տար քու մոր, քու հոր աշկերը քըսի, վար զուրբնանան, քյըեզ ըզադեն։

Ախճիգյը կոլան նան յըղոնիգյեն թեփուռը յոր ա օնում, կյամ տոն, ամմա թեփուռը կյեղում ա։

Էտ դևն ասում ա. — Բեջիթ ըրա, կը լուսանա։

Էտ աղճիգյն ասում ա. — Գյուդում ըմ, վար ինձ ուտլական ըս, թող քյընամ ծընողներես պաշխ, ետնան կեր։

Դևն ասում ա. — Քյինա։ Մինակ կանուխ եք։

Ախճիգյը մորը, հորը իրեսան պաչում ա, թեփուռը նահանց աշկերն ա քըսում։ Հաերը, մարը բիրդան աշկերնեին պեց ըն անում։

Ախճիգյն ասում ա. — Եր կացաք, տեսաք չոլումը հի՞նչ ա կըդարվում։

www.naregatsi.org

Նահանք եր ըն կենում, տեսնում մեծ ղազանը կրակեն տըրած, եղը մեչին ճըլթճըլթում ա։

Հաՙրը էտ դևին նհետ կռև ա անում, ընրա կլոխը կտրում, քցում ղըզղանեն մեչը, ետնան ասում. — Տու ուզելիս ըս ըլալ օրիշին տհենց անիս, տու դըղվեցեր։

Ջարր՝ ընդեղ, պարին՝ ըստեղ։

www.naregatsi.org



61. ԱՌՈՒԾԵՆ ՏՂԱՆ

Մրհետե էրկու ախպեր թաքավեր ըն ըլալ։ Նահանք ճոկ-ճոկ երգյիրներում ըն ըլալ թաքավրրոթուն ընելիս։

Կուճուր ախպերը լոխան հարուստ ա ըլալ։ Էտ էրկուսեն էլ խոխա չի ըլալ։ Ընցնում ա մին քանե տարե, շատ թա խրեգյ, էն օրն էլ եկու, հիբը նահանց ըրկուքանեն կնանեքյն էլ խոխա պիրան։ Էտ ուրերեն էրկու ախպերքյը մրեծ ուրխոթուն ըն սարքում ուրանց պըրըկամներեն նան ժողովուրթեն ըռաչեն։

Խոխեքյը մրծանում ըն, տառնում իրեք տըրեկան։ Մրեծ ախպորը՝ ախճիգյ ար, կուճուրինը՝ տղա։

Ուրերան մին լավ օր, կուճուր ախպերը նստած ուրան կահեն յրա քնենքյ ա անում, թա խե՞ բիդի ուրանց թաքավերոթունը ուրուշու ճանգյ ընգնե, լավ կինի, վեր ուրան ախպորը նհետ խնամի տառնա, էրկու թաքավերոթունն էլ միանան։

Էտ մրթկավը ղե յա տամ մրեծ ախպորը, վար մրեծ ախպերը կյա։ Մրեծ ախպերը կյամ ա։ Նահանք ուրուր նհետ մրսըրհաթ ըն անում, հետևան կյամ ըն էն մրթկեն, վար մրեծ ախպորը ախճիգյը կուճուր ախպերը յոր օնե, ուրան քըշտեն պահե, ուրան տղեն նհետ սրվըրցրնե, հուսումնարան քըցե, ուրան աշկեն ըռաչեն ինի՞։ Մրեծ ախպերը էտ պանը գյիդալավ, էտ խաբարը սկընալավ ռազի յա ընում։

Ընդհետանը մրեծ ախպերը ուրան ղողունավը ուրան ըխճըկանը ղարկում ա կուճուր ախպորը կոշտը էն պըյմանավը, վար խոխեքյը տասնըհենգյ տըրեկանը թըմամած փսակեն։

www.naregatsi.org

խոխերքյը օր կանց օր մըծանում ըն։ Նահանք ուրուր անա շատ աորուն ըն ընում, ուրուր էլ շատ ըն սիրում, գյվաքի գյուդում չըն, վար քուր ու ախպեր չըն, մին մորա ծընվածե։

Նահանք շկոլ ըն քյընաամ ուրուր նհետ, երք ըսելավ, սերավ՝ հունցը վար քեր-ախպեր։

Նահանք արտեն տասնըհենգյ տըրեկան հասակն ըն հըսալ։

Մին օր թաքավերը ուրան ըմըրաթեն վրեսկե բըլկոնան, եղում ա, տեսնում նահանք ուրուր նրհետ ուրանց բաղըմը շոռ կյալիս, ամմա հունցու քեր-ախպեր, մին օրիշ պան տեսնում չի։

Մին օր էլ թաքավերը ղե յա տամ էրկուսին էլ ուրան կոշտը, ասում. — Վե՛րթիքյ, ինձ անգուճ կալեքյ, մըհեկանց տենը գյիդացեքյ վար տուք վեչ թա քեր-ախպեր ըք, այլ ղորփոր խոխեքյ ըք։ Ետնան տուս ա օնըմ թոխտը, վար մեչին կյրած ա, թա վար տասնըհենգյ տըրեկան տառնան, պիդի փըսակվեն։ Պիդի հըրսանեքյ անեն։

— Ամմա յըես օզում ըմ ծրեզ մին տարավ ղարկեմ մըեծ ախպորըս կոշտը, վեր համ սըվերիքյ էլհա, համ էլ մըեծ ախպերս ծեր կարոտն առնե։

Մըեծ ախպերը տըսնալավ, վար ուրանց խոխեքյը մըծացալ ըն, վեզիրնե յա ղարկում կուճուր ախպորը կոշտը, ասում, վար նահանց փըսրկվելի վախտըն ա, թող կյա փըսակեն։

Վեզիրնեն խաբըրը տանըմ ըն կուճուր ախպորը։ Կուճուր ախպերը մըեծ հըրըստոթունավ, վրեսկե փեշքեշներավ հըղե յա ընում դըբա մըեծ ախպորը թաքավերոթունը։ Իրեք ամես հղե քյընալանը ետը հըսնում ա ախպորը ըմարաթը։

Ամմա ըխճըկանը հորը վեզիրնեն օզում չըն, վար թաքավերը ուրան ախճիգյը տա ախպորը տղեն։ Ամմա գյուդում ըն, վար հալա խոխեքյը իրեք տըրեկան ըն իլալ, վար ուրանց թաքավերը խոսկ ա տըվալ, տըված խոսկն էլ ետ օտիլը ամալ չի կյա՛լ։

Ըտրա հետե էլ սուս ըն անում։

Կուճուր ախպորը եկած օրն էլ ըտահանց փըսակում ըն։

Քառասուն օր, քառասուն քըշեր հրսանեքյ ըն անում։ Քառասուն օրանը ետը ըխճըկանը յոր ըն օնում հըղե ընընում բըդա տղեն հորը թաքավերոթունը։ Ըտեղ էլ ըն քառասուն օր, քառասուն քշեր հրըսանեքյ անում։

Մին ուրուգյունն ախճիգյը տղեն ղե յա տամ, վար մըսլըհաթ անե ընրա նհետ։ Տղան նի յա մըննում ընրա օթախը, ծեռքան փրո-

www.naregatsi.org

նում, նստած զրուց ին անում։ Ռուրդան երգչինքյը ըրոտաց, կեծակը փըլըստրատեն տըվավ, էտ վախտը մին պան էտ տըղեն թխեց։

Տըղան ախ ընելավ տափեն վեր ընգյավ, ասեց. — Ինձ մըննաս քըցիս վեչ, ամու ախճիգյ։

Խաբարը հըսավ թաքավերեն, վար տըղան մեռալ ա։ Թաքավերը քար ար կտրալ, սկի կարըմ չար խոսե։ Մըռնելու օրանը ետը օթ օր ընցավ, ամմա ախճիգյը թողում չար թաղեն։ Նա հրամմայեց վար վըեսկե ղուբի շինին, տղեն հետե։ Թաքավերը վըեսկե ղուբի շինիլ տըվավ, օզում ին, թա թաղեն, ամմա ախճիգյը թողում չար։

Մըռնելու օրանը ետը ընցավ մին ամիս։ Ախճիգյը հրամմայեց, վար մին ճոկ տեղ վըեսկե տոն շինին ղուբուն հետե։

Թաքավերը տոնը շինիլ տըվավ։ Ախճիգյը տղեն մեյիդին նհետ ապրում ար էտ տանը, օր կանց օր մաշվում։ Մին օր էլ մեյիդին չորս անգյունը վըեսկե ճըրաքյնե յար վառալ, շարալ, ինքյն էլ կոխկեն նստալ։ Մընգյ էլ երգչինքյը ըրոտաց, տանը տափը ճաքեց, մին սրեվ ձեռք եր կալավ ղուբեն, քյընաց։ Մընգյ էլ երգինքյը դինջացավ։

Էտ ախճիգյը զըրմանալան գյուդում չար, թա հի՞նչ անե. — Ղուբեն տանան վը՞րտեղ տարան, հի՞նչ քաշկու պան ա սա։

Քըղաքանը տուն իրեք հըղե յա պըժանվում ուրուր անա։ Ախճիգյը ուրան ամուն՝ թաքավերեն խնթրում ա, վար էտ պըժանման տեղը իրեք վըեսկե պալատ սարքե։ Ամեն մին պըլատեն հետե հազար վըեսկե աման ուրան քըթընևերավը շինել տա, վար ուրան մարթեն բադարաքյըն անե։ Ետնան էլ ասեց, վար էտ պըլատումը հաց օտողնեն պիտի ուրանց կերած ըմըննեն նան քըթընեն յոր օնեն ուրանց նհետ։

Թաքավերը հարթնեն կարքադրոթունը լըսելավ ուրան երգչիրին սաղ հըրըստոթունավը պըղրաստեց պալատը, ըմըննեն, լոխ տըվավ ըխճըկանը։

Ախճիգյը ըշխադողներեն, մընգյ էլ խորագյ սըրքողներեն կարքադրեց, վար խորագյը պըլըտներումը ճոկ-ճոկ տեսակ ընին։

Տըհենց էլ սկսեց ժողովուրթեն պադվիլը։

Հըղըցավը ընցնողներեն ուտունց հաց տալու, պաց չար թողում, պադվում ար, թա քյասիբեն, թա մեղավերեն, թա անմեղեն։

Էտ թաքավերոթունան հետե մին շենում էրկու քյասիբ ախպեր ըն ընում։ Նահանց մինը քոռ ար, մինը՝ սաղ։ Էրկուսն էլ նախրչի յըն ընում։ Նահանց կործը էն ար, վար ամեն քըշերհանա քոռ ախպերը տանան տուն ար կյամ էսու-էնան էրկու-իրեք կապեգյ օզում։

www.naregatsi.org

էն մին ախպերն էլ կովերըն ար պահում։ Ընդրանց մին կտոր հաց ին տամ, օտում ին։

Մին քշշըրհանա քոռը էլլա քյընաւմ ա կըպըգյնե օղե։ Մուտանըմ ա մին առուտուրականի, ղորմոթուն օղում։

Առուտուրականը կըղնըվածե ասում ա. — Ա՛յ ղամմազնի, քըրըքանդ ինիքյ տու՞ք, մըեզ էլ ըք ծրեզ նման ըրա՞յ, ծրեր օրը քըցա՞յ։ Օրիշնեն քյընաւմ ըն օտում, խըմում, վրեսկե աման նան քըթնըը յոր օնըմ, կյամ, տուք ըշխարքաս բեխաբար, ըստուր-ընդուր անա կապեգյ ըք օղում։

Քոռը էտ խաբարը ըսկընալավ ետ ա տաւնում տոն։ Ուրուդյունը ախպորը կյալանը ետը նաղլ ա անում առուտուրականեն ասածը։ Նահանք հրվաքած հացեն կըտորնեն յոր ըն օնում հղե ընդյնում բըդա էն պալատը, վըրդեղ ճաշ, մընդյ էլ վրեսկե յըն պըժանում։ Հըղըցումը էրկուան էլ նըղանում ըն, մին ամես ար հըղե յին քյընաւմ։

Քոռը նախրչի ախպորն ասում ա. — Ըք էս քըշեր ըստեղ մընանք, էքյուծ քըշըրհանա էլհա կըքյընանք, շատ ըմ նըղացալ։

Էրկուան էլ էդ քըշեր մընաւմ ըն մին վիրի հանդում։ Ընդրանք ուրուր նհետ խոսում ին։

Նախրչի ախպերը ասում ա. — Մունք հըղեն գյուդում չընք, հո՞ւնց ընք քըթենում վրեսկե պալատը, համ էլ, մըն էլ ասե տեսնաւմ, էն առուտուրականը հո՞ւնց ա ասալ, հի՞նչ ա ասալ.

— Առուտուրականն ասեց, վար պալատնեն վրեսկե յըն, նհանցա պեցուր պըլըտնե վեշ մին տեղ կա վեչ։ Նահանք քըշեր-ցիրեկ ճըրաքի նման էրվում ըն, մըեզ լուս կըտան։

Ըտրանա ետը քոռը նախրչի ախպորն ասեց.— Ծըրավալ ըմ, եր կաց ինձ հետե ճուր քըթեր խմենքյ, հղե ընինինքյ։

Նախրչի ախպերը ըստեղ-ընդեղ շոռ ա կյամ, ճուր քըթանում։

Տեսնում ա հեռե հըղըցին յըրա էրկու պեցուր ծառնը կա, ասում ա. — Ա՛յ ախպեր, ճըրեցե վե՞չ, ամմա հրեռե հըղըցեն յըրա էրկու ծառն ա ըրևում։ Ընդեղ ախպուր կինի, քյընանք ընդեղան խմե։

Նահանք հըսան ընդեղ, վըրդեղ մին կյեղեցիկ բաղ կար, բաղեն մաչին, չորս պուլլըրքը վրեսկե, մին պարզ ախպուր ար քըլքըլում, ասես լհա պուլյանդ ինի։ Վրեսկե բուլբուլ, ծըղրդյնե՞... էտ բաղը քոռ ախպորը շատ ա տուր կյամ, սաբաբը վեր օթը շատ լավ ար։ Քոռ ախպերը խընթրից ըտեղ նստին, մին պատառ դինջանան, քըշերը ըտեղ մնան, քըշըրհանը էլլա հղե կընին։

Նախրչի ախպերը տեսնում ա էտ բաղը, վրեսկե ախպուրը,

www.naregatsi.org

ասում. — Ա՛յ ախպեր, էս բաղը անդար չի ընիլ, տարը կկյա մըեզ մին պան կանե, եք մեր հրղեն շարունակենքյ։

Քոռ ախպերը շատ պընդեց ուրան ասածը։ Մնացին։ Ըխպըրան տենը էրկու պեցուր ծառնը կար, տակռեն փոչ։ Նահանք նի մըտան էտ փոչ տեղը, քոն ըլան։ Քըշըրհանը արևը հալա նոր ար շոխկը քըցալ էն հեռու սըրերեն, բուլբուլը հալա նոր ար սկսալ երք ասելը, բուրդան օթին մեչին մին հրեշ ըրևաց։ Ընրա մեշկեն նըստած ին իրեք յըղոնեգյ։ Յըղոնեգյնեն ըխպըրին քըշտեն վեր եկեն։ Ըտրանա ետը երգյինքյը նորու հընդարդվեց։ Հըրեշը պըցրացավ, յալեն յըրա պարանց ընգյավ, ըրևեն տակեն թըքանա։ Յըղոնեգյնեն ըխպըրին քըշտեն ուրանց թեփուտնեն հընեցին, տառան նախշուտ ըխճըկերքյ, հերթավ նի մտան ըխպըրին մեչը լըղացան։

Լըղանալանը ետը էտ ըխճըկերքը հրամմայեցին էն հըրեշին, վար ծրոներեն յրա վրեսկե ղութին վեր օնե, տինի տափեն։ Հըրեշը տեղան վեր թռչեց, սև ծրեռքը մեկնեց, ծառնեն կլխան ղութին եր կալավ, տիրաւ ըխճըկորանցը քըշտեն, ինքյը էլլա քյընաց հեռ տեղ պարանց ընգյավ։ Ըխճըկերքը հերթավ ամեգյը մին քար եր կալան։ Ըռաչի ախճիգյը մին էրգյան պան կարթից, առանց թըխտե, ետնան քարավ ղութուն թըխեց։ Ղութուն ղափաղը պացվեց։ Էն մին ախճիգյն էլհա իտի կըրթելանը ետը սընդողեն թըխեց։

Մեյիդը սըղացավ։ Իրեքինջի ախճիգյն էլհա իտի առանց թըխտե կարթից, քարավ թըխեց։ Պարանց ընգյած մեյիդը վեր կացավ, ըխճըկորցը նհետ սկսից խոսելը։

Ըխճըկերքյը ընդրան ըսեցեն. — Ա՛յ տղա, ղաշանգյ տղա, խե՞ մըեր ծեռքեն տանջվում ըս, մըզանա նախշուն ախճիգյ չի կա՞, միննը-մինիս օզե, ամուտ ըխճըկանան ծրեռք քաշե, մունք քյընեզ կըզադենքյ։

Տղան նահանց ջողաբ տըվավ, թա. — Յրես ընդրան վեշ մին վախտ մընանաս քըցիլ չըմ, ծրզ նմաններեն ինձ հարկավեր չըն։

Էտ ջողաբը տալան ետը, ըխճըկերքյը կըզնվում ըն, էլլա հերթավ կարթում ըն, քարավ սընդողեն թըխում, ետնան էն հըրեշին հրամմայում, վար ղութին պըցըրցնե ծառնը։ Հըրեշը մընգյ էլ ուրան սրև ծեռքավը ղութին եր կալավ, տըրաւ ծառնեն յըրա։ Ըխճըկերքյը ուրանց թեփուտնեն կյեցեն, տառան յըղոնեգյնե, նըստեցեն հըրեշեն մեշկեն։ Մընգյ էլ երգյինքյը ըրոտաց, մընեց, հըրեշը ըխճըկորանցը եր կալավ, երգյինքյը թռչից։

Քոռը նան նախըրչի ախպերը, առանց մին խոսկ ըսելու հղե ընգյան։ Շատ քյընացեն, թա խրեգյ, քըշերվա կեսեն նախըրչի

www.naregatsi.org

ախպերը հրոուցանա տեսավ մին ըրեքյնակու նըման պայն ա ըրևում, ըտրա տակեն էլ սաղ քաղաքը ըրևում ա։

Նախըրչին քոռեն ասեց.—Մուտացալ ընք, պըլըտնեն ըրևում ընք։

Շատ քյընացեն թա խրեզ, հըսան էն պըլըտներեն, վըրդեղ ճաշ, մընդյ էլ վրեսկե չըն պըժանում։

Թաքավերեն ախճիդյը տահանց տեսավ, գյիդաց վար էրգյան հըղե չըն ընդալ, կարող ա պայն տեսած ընին։ Ղըրավաշներեն հրամմայից տահանց խորագյ տան։ Ուտելանը ետը ախճիդյը նահանց տարավ մին ճոկ տոն, քըշերը մնալի հետե։ Քըշերը ըտեղ մընացին։ Քըշըրհանա թաքավերեն ախճիդյը քոռեն մընդյ էլ նախրչուն ղե տվավ ուրայն կոշտը, խնթրեց նահանց, վար ուրանց օմրումը տեսած պայները նաղլ անեն։

Նախըրչի ախպերն ասեց. — Թաքուհին ապրած կենա, մունք հի՞նչ պայն ընք տեսալ շենըմը, վեր նաղլ աննենք, իմ կործս կըվերը պահելն ա ըլալ, քոռ ախպերս էլ էս ու էն առուտուրականան փող ա հըվաքալ։

Էտ վախտը քոռ ախպերը կուփի յա տամ նախըրչի ախպորը, թաքուն փըսփըսում, թա. «Պա խե՛ հըղըցեն տեսածտ նաղլը չըս անում»։ Մեհետ, էրկու հետ վեր իտի յա անում, ախրը-վերչը թաքուհին սկանում ա ըտրանց փըսփըսոցը, խընթրում, վար մին պայն պատմեն, վար քըշերը անքոնութուն օնե, լալ անց կենա։

Սըհենց էլ նախըրչի ախպերը սկսեց նաղլ անելը թաքուհուն, լոխ, հինչ վար հըղըցումը տըեսալ ընի։ Թաքուհին մեծ պատվավ էտ էրկու ախպորցը հըղըցու տիրաձ, շատ վրեսկե տվավ, մըն էլ խընթրից, վար են բաղը նահանք նշանց տան, վըրդեղ նահանք վրեսկե ղութին տեսալ ընի։

Քըշըրհանը թաքուհին նան էրկու ախպերը հղե ընգյան բըդա բաղը։

Շատ քյնացեն, թա խրեզ, հըսեն էտ բաղեն, վըրդեղ քոռ նան նախըրչի ախպերը ըլալ ընի։

Ըստեղ էլ ա թաքուհին նահանց հըղըցու տընում բըդա ուրանց երգյիրը, ինքյը մնամ բաղումը։ Վար մթնեց, թաքուհին նի մըտավ ծառնեն փըշակը, քըշերը միչև լուս ընդեղ մնաց։

Քըշըրհանը, հալա արևը նոր ար տուս կյամ, մին էլ տըեսավ երգյինքյը մթնեց, ըրոտաց, երգյիրը թոխպավ պատեց։ Ուրդան թաքուհին տըեսավ, վար մին հըրեղ երգյինքան թըռչից ըխպըրեն կոշտը, ընրա յրան իրեք յըղոնեգյնե նստած։ Յըղոնեգյնեն մնացին ըխպըրեն քըշտեն, հըրեշն էլ քյընաց յալեն յրա պարանց ընգավ։

www.naregatsi.org

Ցղոնեգյնեն թեփուռնեն հրնեցեն, տաւռան նախշուն ըխճըկերքյ, հերթաւ լըղացեն ըխպըրին ճըրռումը, ետնան հրեշին հրամմայեցին, վար ղուբին ծառնան յոր օնե։ Հըրեշը տեղան եր թըռչից, սըև ծրեռքը մեկնեց, ծառնան ղուբին եր կալաւ, տըրաւ ըխճըկորանցը քըշտին, ինքյը էլլա մըխրե հրռացաւ։ Էտ ըխճըկերքյը հերթաւ հինչ վար մին պան կըրթեցին, հերթաւ ղուբուն քարաւ թըխեցին, ղուբուն մաչան մին մարթ եր կացաւ։

Էտ ըխճըկերքյը էտ տղեն տնջիլաւ հրրցըրեն։ — Ա՛ ղաշանգյ տղա, խե՞ յըս տհենց տանջվում մըեր ծեռքեն, էնա տու էլ ըս պըռըվանում, օրերտ սըև ըն ընցնում, եք, մըղանա նախշուտ էլ ախճիգյ չի ըննական, մինը եր կալ, քու ամու ըխճըկանան ծրերքյ քաշի։

Տղան ռազի չի կացաւ։ Էտ ըխճըկերքյը կըզնվեցեն, էլլա հերթաւ ղուբուն թըխեցեն, էն հրրեշեն կընչեցեն վար ղուբին յոր օնե, տինի ուրան տըեղը։ Հըրեշը ղուբին եր կալաւ, ուրան սըև ծեռքավը, տարաւ, տիրաւ ծառնեն յըրա։ Ըխճըկերքյը մընգյ էլ ուրանց թեփուռնեն կյեցեն, յըղոնեգյնե տաւռան, նըստեցեն հրրեշեն յրան, երգյինքյը թըռչեցեն։

Էտ լոխ թաքուհին տեսաւ, ետնան կուճուր-կուճուր պըըրրացաւ, ղուբին ծառնան մին թաւրաւ վեր կալաւ, տըրաւ ըխպըրեն քըշտեն, հինչ վար էն յըղոնեգյնին ըրաւ ին, ինքյըն էլ ըրաւ, հինչ վար կարթալ ին, ինքյը կարթից, քարաւ ղուբուն թըխեց։ Էտ վախտը ղուբին պացվեց, ամուն տղան ղուբան եր կացաւ։ Նահանք ուրուր խոտեցեն։ Նահանց հետե շատ մեծ ուրխոթուն ար։

Ախճիգյն ասեց, վար. — էք փախճինքյ։

Ամմա ամուն տղան ռազի չըլաւ, հրրեշեն անա շատ ար վախում։ Մըն էլ գյուղում ար, վար վըրդեղ էլ քյինի, հրրեշը ուրան քըթըննական ա, տանջի։

Տրանեկու սըհաթ ուրուր քըշտե կացան քըշերաւ։ Տղան ըխճըկանան խընթրից, վար ուրան էլլա կախարթե, քանի հաւլա հրրեշը եկալ չի։

Ախճիգյը կյիժու նման տղեն կախարթից, ղուբին եր կալաւ, տըրաւ ծառնեն յրա, ծառնեն փըշակումը նստեց։

Քըշերհանա էլլա երգյինքը դրղըրդաց, ըրոտաց, մըթնեց, երգյիրը թոխպաւ պատեց։

Հըրեշն ուրան կախարթական յըղոնեգյներաւը եկու, յըղոնեգյնեն ըխպըրին քըշտեն վեր եկեն, հրնվեցեն թըեփուռներան, ըխպըրին մեչին լըղացան, ետնան հրամմայեցեն հրրեշեն, վար ղուբին պիրի։ Հըրեշը ղուբին պիրաւ, ըխճըկերքը պացան, տըեսան,

www.naregatsi.org

վար տհենց չի ծասկած, հունց վար ունրանք ըն ծասկալ, կըզնըվեցեն, ղուբին ծըսկեցեն, հըրեշեն հրամմայեցեն, վար ղուբին տանե էն պեցունր սարեն քամակը, ընդեղ, վըրդեղ կախարթներեն թաքավերն ա կենում։

Հըրեշը ղուբին եր կալավ, թըուշից երգյինքը, վըրդեղ քյընաց, վեշ մինը քյընաց վեչ։

Ախճիգյը մինակ տրեսավ, վար մին մըթեն, խոր քոլավ ընցավ։ Ճարը կըտրած ախճիգյը վեր կացավ, քյընաց համմեն էտ քոլավը, վըրդըղավ հըրեշը թուչալ ար։ Տըհենց դունգ մին տարե էտ քոլումը տանջվեց, կյեցեն շորերը ճըրղոտվեց, ինքյն էլ ըրևան սըվացավ, գաւրդաեն մաշվեց, ծառներեն քըչըվավն ար սընվում։

Եկու էն օրը, հիբը վար ընրաեն մին տղա խոխա իլավ քոլեն մեչին։ Նա պաեն չար ճարում, վար խուխեն տա։ Մին օր էլ ծառնեն տակեն նստած, խոխան խոտած, քոլումը մին պեցունր սաս ըսկացավ։ Նա վըխելան նհետ խոխան թողեց ծառնեն տակեն, ինքյը ծառնը պըցրացավ։ Քոլան մին առուծ տունս եկու։ էտ ասուծը նոր ար ծրնալ, տունս ար եկալ օտելի պաեն ճարե, ըտրա հետե շոռ ար կյամ ըդեղերքյ։

Ասուծը մուտացավ, խոխան չըրըքթաթ տալավ ըրդա ասուծը քյընաց, սկսեց ասուծեն կաթնը ծծել։ Տհենց էլ ասուծը ամեն օր էտ համմեն վախտը կյալիս ար, էտ խուխեն ծրեծ տալիս։ Մարը էտ համմեն վախտը գյըդալավ ծառըն ար պըցրանում։

Խոխան կանոխ մըծացավ։ Առողճ ար, շատ օժավ ար, ամմա մըխրեգյ մըզմազոտ ար, ընդրա հետե, վար վիրի հեյվանու կաթնը ար ծրծալ։ Մընգյ էլ լունգու չար գյուդում, մարը լալ չար սըվըրցըրալ, կարում չար։ Նա տասը տըրեկան ար տաւռալ, ամմա ունրան օժավը, ունրան ծրոքերավը վիրի հեյվաննե ար վերսում, ընդրանավ էտ քոլումը մորը նհետ օտում ին։ Մարը օզում ար լունգու սըվըրցնե, ամմա էլհա լալ չար տունս կյամ։

Նահանք քոլումը երգյան մընացեն։ Մարը շատ ար մաշվալ, վար վիրի յըն ապրում։

Նահանք մին օր քոլավը քյընամ ին, բունդրան մարը մին ըխպըրի հըսավ, վըրդըղա վրեսկե քարեր ին վեր տաւռնում։ Մարը գյիդաց տա հինչ ա։ Տղեն անա խընթրեց, վար էտ քըրերան հրվաքե։ Տղան գյուդունմ չար, թա ըտրանք հինչ ըն, տեսած չար։ Մարը տղեն անա ըրեսուն հատ եր կալավ, տըրալ ծըմերեն ղաթումը։

Մարը տղեն անումը տիրալ ար «Ասուծի տղա», վար նա ասուծի կաթնավ ար մըծացալ, շատ օժավ ար։ Մարը նան տղան էրգյան

www.naregatsi.org

շոռ կյալանը ետը, թուղեցեն էտ ղալին քոլերը, հըսան մին լեն, կանանչ հանդ։ Մարը հրոնըցե տըեսավ, վար հանդումը չոբըննե կան։ Նա հրսկըցրուց Առնւծեն տըղեն, վար քյընա չոբաններեն անա մին յափունջի օզե, կյնալու հետե, կյեցեն շոր չիկա։ Առնւծեն տղան գյանքումը մարթ տեսած չար։ Տրա հետե էլ նա մնաց մաթա, վար նահանց տեսավ շարքավ նստած զրնւց աննելիս։

Առնւծին տղան մուտացավ չոբաններեն, վար նստած ին մին պեցնւր ծառնեն տակեն։ Նա ծըմակեն գազաններեն նման յրա տըվավ, ծառնը կոտրեց, խրեզյ մնաց, վար չոբաններեն կտորե։ Չոբաննեն ղե տվին, ուրանց նհետ հաց օտե։ Առնւծին տղան գյուղում չար, վար հացը օտելի հետե յա։ Նա մին պատառ պերանը քըցից, տեսավ շատ համավ ա, հացը մընզյ էլ մնացած օտելի պանները եր կալավ սկսեց օտելը։

Չոբաննեն վըխելան նհետ վեշմին խոսկ չասեցեն։ Օտելանը ետը Առնւծեն տղան ծրեռքավ նշանց ըրավ՝ մին յափունջի տան։ Նահանք դաստի հրսկացան, վար օզում ա յափունջիներան մինը յոր օնե։ Չոբաննեն մին քանե շենու հաց տըվեն, մին էրկու յափունջի տըվեն, մըեծ պատվավ հրղե քյընցեցեն։ Առնւծեն տըղան քյընաց մորը կոշտը։ Մարը, վար էրզյան տարեքյ հացու իրես չար տըեսալ, ըստուծեն փառք տալավ հացը կերավ, յափունջիներան մինը կյեցավ, մինն էլ տղեն տըվավ, վար յրան քըցի։

Ըտրանա ետը քյընացին չոբաններեն կոշտը։ Էս դաննումըս չոբաննեն շատ վըխեցան, Առնւծեն տղեն մորը զաչանք ըրեն, վար ուրան տղեն ասի, վար մարթ չի սպանե։

Առնւծեն տղան օրանց օր սըվերում ար մարթու լուզնւ, նահանց օրենքյնեն։

Մին քանե ամես չոբաններեն քըշտեն կրենում ըն։ Մարը տեսնում ա, վար չոբաններեն ապրուստը պըրծընում ա։ Մեհետ նահանց խընթըրում ա, վար Առնւծեն տղեն ուրանց նհետ տանեն քաղաք մազերը եր անեն, քանի վեր մըզմազոտ ար, համ էլ օտելի պանները առնեն։ Ըտրա հետե էլ մին վըեսկե հանեց ծըմերեն մեչան, տըվավ էտ չոբաններան մինին, վերը ուրան տղեն նհետ մընացածներան շատ ար մոտիկ։

Քաղաքը էնքան էլ հեռու չար։ Քյընացին, Առյնւծեն տղեն տարան մազերը եր արին, իրեք սրհաթ զոռավ պըրծին խեղճ դալլաքնին։ Չոբանը փողը տըվավ, ամմա Առնւծին տղան ըտրա ավազը դալլաքեն անջուվը պուվեց։ Ետնան բազար քյընացին, ամեն հինչան առեն, էլլհա ետ տաոան ուրանց բինան, չոբաններեն կոշտը։

www.naregatsi.org

Հրդեցը էլ սաղ մարթ չի մնաց Առուծեն տղան մինին անջուկն ար պուկում, մինին՝ ծրեռքը, մինին՝ վրեննը։

Չոբաննեն էտ լոխ մորը նաղլ ըրեն։ Մարը յավաշ-յավաշ լոխ կըլխու քյըցեց ուրան տըղեն։ Տըղան խելունք մարթ ար տառնում, պարեկամ նան թըշնամի ար ճրնանչում։

Էտ խաբաները հրսալ ար թաքավերեն անջուկը, վար մին օժավ տըղա կա քըղաքեն քըշտերքեն, վար մինին առանց կըլախ ա թողում, մինին՝ առանց վրննը-ծրեռք։

Թաքավերը հրամման ա տամ, վեր Առուծեն տղան էտ ուրուդյունը քյրնա կոշտը, ամմա Առուծեն տղան քյրնամ չի՞։

Էս դոնում էլ թաքավերը ուրան վեզիրներան ըրկունեն ղարկեց, մինդյ էլ մին դաստա սալդաթ, վար օժավ էլա Առուծէն տըղեն պիրին ուրան կոշտը։ Վեզիրնեն սալդաթներեն նհետ քյրնացեն Առուծեն տըղեն կոշտը, լոխ նաղլ ըրեն, հինչ վար թաքավերը հրամմայալ ար։ Առուծեն տըղան կըղնըվեց նահանց յրա, կեսեն կըտորեց, մին քանիսն էլ փախեն թաքավերեն կոշտը հրսան։

Նահանք ըլածը պըտմեցեն թաքավերեն, ըսեցեն.— Նա նհենց օժավ տըղա յա, վար ընդրա մըննանը քու երգյիրումըտ կա վեչ։

Մըննդյ էլ ըսեցեն, վար. — Առուծեն տըղեն անա կըման, ընդեղ մին չոբան էլ կա։ Էտ չոբանը կարող ա Առուծեն տըղեն մին թաւրուվ քու կոշտըտ պիրի, վար պիրի վեչ, կըլախը կտրե։

Խաբաները չոբաննեն հրսավ, չոբանը ընդյավ քընենքյի մեչ, ընդրա հետե, վար ինքյը կարալ չի զոռ անե Առուծեն տըղեն։ Մին հըղե յար մնացալ, վար քյրնա մորը կոշտը, մորն ասե, բաւլքյաս մարը մին ճար անե, տանե թաքավերեն կոշտը։

Մարը տըղեն նաղլ ըրավ, թաւ հու վա՞ թաքավերը, հո՞ւնց պիտի ընրա նհետ խոսե։ Առուծեն տըղան լոխ հրսկացավ, թաքավերեն կոշտը քյրնալի հետե ռազի ըլավ։

Նա չոբաննեն նհետ հըղե ըլավ քաղաքը։ Հրսեն թաքավերեն պալատը, հունց վար մարըն ար ասալ թաքավերեն նհետ խոսեց։ Թաքավերեն քախցր լունդուն ուրան տուր եկու։ Թաքավերը ընրան լավ պատիվ տրվավ։ Ընդրանա ետը չոբաննեն ղարկեց, վար մորըն էլ պիրի։ Չոբանը քյրնաց մարն էլ պիրավ թաքավերեն կոշտը։

Թաքավերը տրեսավ, վար Առուծեն տըղեն մարը թաքավերական գյանք քաշած կնեգյ ա ըրվում։

Ընրան ճոկ կրնալու տրեղ տրվավ։

Թաքավերը Առուծեն տըղեն ուտուցունում ար ուրան փաւհըվաններեն մրնան։

www.naregatsi.org

Թաքավերը քառասուն փիհլըվան օներ ընդի օժավ, վեր մին տըեղ նահանց մընան կար վեչ։ Թաքավերը Առուծեն տըղեն նհետ կանդրախտ ար կապալ, վար նա ուրան փիհլըվաններեն նհետ պիտի կոխը կենա մին ամսանը ետը։ Առուծեն տըղան շատ ար օրախ, վար պիտի կոխը կըենար փիհլըվաններեն նհետ։

Թաքավերը խոսկ ար տըվալ, վար թի հաղթե ընդրանց ուրան ախճիգը տալու ա Առուծեն տըղեն։ Ախճիգըն էլ սիրահարվալ ար Առուծեն տըղեն յըրան։ Մին ամսանը ետը Առուծեն տըղան կոխը կացավ թաքավերեն փիհլըվաններեն նհետ։

Ամեն մինին նհետ հենգյ մունուտան էվել կոխը չար կըենում, դիաստի սըտկըցընում ար, թող անում քյըցնում տըենը։ Թաքավերը գյուդում չար, թի հի՞նչ անե։

Առուծեն տըղան թաքավերեն ախճիգը պահանջից։

Թաքավերըն ասեց. — Թի տու քառասունինչի փիհլըվանին էլ հախթես, էն վախտը ախճիգըս քունն ա։

Առուծեն տըղան ռազի կացավ։ Վերչի օրը նա կոխ կացավ էտ փիհլըվաննեն նհետ, վար վեչ մինը հալի ընրան հախտած կար վեչ։ Առուծեն տըղան խիլլի նըղացալ ար, քանի վար էն փիհլըվանն էլ ար օժավ։ Ամմա վերչում էտ փիհլըվանեն կլոխըն էլ պուկից, թող ըրավ։ Թաքավերը էլ կարում չի մին պիան ասե, ընգյնում ա մըտրծունքե մեչ։

Էրգյան մըտրծելանը ետը Առուծեն տըղեն ասում ա. — Առուծե տըղա, ախճիգըս քունն ա, մինակ տու էս պայմանը կըդարե։ Ինձ հետի էնքան լալ նան մարջան պեր, վար նրանա վըեսկե խոնչանե պըդրաստես քու հըրսընքետ հետե։

Առուծեն տըղան բեյքեփ քյընում ա մորը կոշտը։

Մարը գյիդից, թի խե՞ յա բեյքեփ, ասեց. — Առուծի տըղա, տու քյընի թաքավերան մին ծի, մընգյ էլ էրկու փութ վըեսկե օզե, ետնան էլ լոխ միչև քըղաքան տուս կյալը ժողովուրթեն պըժանե, լալերն էլ, վար վըեսկուն անա թանգյ ա, կպիրիս էն ըխպըրան, վար մունք տըեսալ ընք։

Առուծին տըղան էտ պայմանավը թաքավերեն կոշտը եկու, թաքավերեն անա վըեսկեն եր կալով, հըղե ընգյավ։

Հըղեցը վըեսկեն լոխ պըժանից ժողովուրթեն, ետնան քյընից հըսավ ընդեղ, վըրդըղա իրեքյ հըղե յըն պըժանվում։ Նա էտ հըղըցումը մին պառավ մարթու պըտահեց։

Պառավ մարթը հըրցըրուց Առուծեն տըղեն. — Վերթի, վըրդեղ ըս քյընում էս հըղեցն հենց հըղե յա՞, վար քյընացողը ետ չի

www.naregatsi.org

տաՌնում։ Անգուճ ըրա, հինչ վար յըես ասիմ։ Տու կըքյընաա էս հըղըցավը, կըհասնես մին ղալին քուլե, վար էրկու սըրերեն ղաթումն ա։ Ընդեղ մին ախպէուր կա, վըրդըղա վրեսկե քարեր, մընգյ էլ լալեր ա վեր տաՌնում։ Վրեսկեն յոր ունելանը եաը, հիբը հըղե ըննիս, երգյինքյը տուղտուղլական ա, մըթնըլական ա էտ ըխպէուրին եշող հըրեշեն օժան, ամմա տու ետ եշիս վեշ, էտ էրկու սարերը բեջիթ ծըսկվըլական ըն, վար կարաս տէուս կյաս, ըղըդվըլական ըս, թա չէ, ղաթումն ըս մընննական։

Առէուծեն տըղան ասում ա. — Պապե, շունրակալ ըմ, դե յըես քյընաամ։

Ասում ա, հըղե ընէում։

Շատ ա քյնաամ, խրեգյ ա քյընաամ, հըսնում ա էն ըխպէուրեն, վըրդըղա վրեսկե, մընգյ էլ լալ ար վեր տաՌնէում։

Առէուծեն տըղան վրեսկեն նան լալը հըվաքում ա, ծին նստում հըղե ընննէում բըդա տոն։ Քոլան հաալա տէուս եկած վեշ, երգյինքյը տըղտողաց, երգիրը մըթնեց, սարերը էուրէուր թըխեցեն, ամմա Առէուծեն տըղան քոլան շուտ տէուս եկավ։ Նա վար պըլատան մուտացավ, թաքավերեն վեղիրնեն, մընգյ էլ թաքավերը ընրա հետե յին մտածում, վար Առէուծեն տղան ետ ա եկալ, մըեռալ չի՞, բա հո՞նց կինի՞ ըխճըկանը հարցը։ Առէուծեն տըղան մըեծ հաճողթունավ տէուս եկու թաքավերեն առաչը։

Թաքավերը մին պայման էլ օներ։ Նա ղե տվավ Առէուծեն տըղեն, ասեց.— Ա՛ վերթի, ախճիգյս քունն ա, մինաակ էս պայմանն էլ կըդարես։ Քյըեղ հետե օզում ըմ մին պալատ շինիլ տամ, քյընաա վրեսկե սէուններ պեր, վար շատ պեցէուր ինի, վար լաավ շափաղ տա, վար իտի պալատ վեշ մին երգյիրում ինի վեշ։

Առէուծեն տըղան ասեց. — Լաավ, կը պիրիմ, ըտ էլ կըգըդարեմ։

Նա քյընաց էուրաան մորը կոշտը, բեյքեփ ընրան եշից։ Մարը մընգյ էլ գյիդաց ընրա դաՌդը, ասեց. — Ա՛ վերթի, մընգյ էլ թաքավերեն անա օզե էնքան վրեսկե, վերքան ըորչի դաննումն ըս օզալ։ Էլհա առաչվա հըղըցավը քյընաա, էլհա էտ էրկու փուԹ վրեսկեն ժողովուրթեն տո, ամմա էս դաննում տըժեր ա ընննական, սայաղ կաց։

Առէուծեն տըղան լոխ թաքավերեն անա եր կալավ, վրեսկեն ժողովուրթեն պըժանից, հըղե ընգյավ։

Էս դաննում էլհա էն պառավ մարթեն պըտահեց։ Նա Առէուծեն տըղեն անա հըրցըրուց.—Վե՛րթի, էս դաննում վը՞րդեղ ըս քյընաամ։

Առէուծին տըղան ասեց. — Պա՛պե, յըես քյընաամ ըմ թաքավերեն հրամմանավը քառասուն վրեսկե ծառներ պիրիմ, վար սէուն,

www.naregatsi.org

սուլթունն շինել տա մին ինդի պլատու հետե, վար սաղ ըշխարքումս կա վեչ։

— Վերթի, էտ հրդըցավը վար քյընաս, էլ ետ չըս տրոնըլական։ Տա շատ տրժար պան ա, ամմա յրես էլլա քյոմաձյ կանեմ։ Ընդրղա, վըրդրղա էն վրեսկեն նան լալը պիրալ ըս, ընդրանա իրեք անքամ շատ հեռե յա, վար հրսնես էն քոլեն, վըրդեղ քըշեր-ցիրեկ ծառները լուս ըն տամ։ Միտ կըթողես մըխըրե հետե, տու յըվըշյավաշ կմոտանաս հրրեշներեն պըլատեն, վըրդեղ հարուր հրրեշ ըն կենում։ Նահանց մրեծին օխտը կլոխ օնե։ Ընրա վեննը մին փեդ ա ծակալ, հեսա տրսնըրհենգյ տարե յա, տուս չի կյա՞մ։ Տու թաքուն կը մուտանաս, ծիքյ կտաս, փեդը վրեննան կըհանես, ինքյտ էլ կյողլը կը կենաս, վար քյըեզ տեսնա վեչ, թա չէ, վերչը փիս ա ըննական։ Ամմա մին պան էլ ասեմ, վե՛րթի, վար տու գյուղում չըս։ Սըրանա տրսնըրհենգյ տարե առաչ քու հար հալե նոր ար փըսակվալ, քու հոր էտ հրրեշեն ըխճըկերքյը կյուղացալ ըն, տարա՛լ։ Քու հար հեն ա մին վրեսկե ղուրեում, մին սարե պըտկե։ Վար փեդը տուս օնես հրրեշեն վրեննան, նա դինջանա, քոն ա ըննական օխտը օր, օխտը քըշեր։

Մինչև քոն ընիլը նա ըսըլական ա. «Ո՛վ պարի մարթ, վար էս լըվոթունը ըրալ ըս, մեյդան տուս եք»։ Ամմա տու տուս չիկյաս, մինչև երթումնը չօտե ուրան ջադու ըխճըկորցը անումավը։ Ըտրանա ետը տուս կկյաս, ընրանա օզիս քառասուն վրեսկե ծառ, մընդյ էլ քու հոր վրեսկե ղուրեեն էտ հրրեղան ըխճըկորցը նհետ։

Առուծեն տըղան ասում ա. — Շունրակալ ըմ, պապե՛։— Ասում ա, հրղե ընգյնում։

Նա դուզ իրեք ամես հրղե յա քյընում. մրթեն քոլերավ, պեցուր սըրերավ։ Խրեգյ ար մընացալ վար հրսնե։ Քոլեն վրեսկե շափաղը ընգալ ար ընդուր ծիյին յըրան, հրռուցանա նա հրրեշեն կյուռկռուցը սկացավ, վար տրսնըրհենգյ տարե յա, տանջվում ար։

Առուծեն տըղան շատ վախեց. քոլը հենց ար մին կախարթական աշխարք ինի։ Նա ծին քոլան պատառ հրեռե կապեց, մուտացավ էն ծորեն վըրդրղան կյուռկռոց ար կյամ։ Մուտացավ հրեշեն, ամմա հրրեշը ընրան տեսնում չար, շատ ար տանջվում ցավան նհետ։ Առուծեն տըղան վրեղը քանդեց, կյողլը կընալի հետե, պըդրաստվեց, վար փեդը հրրեշեն վրեննան հանե։ Նա փեդը տուս կալավ, հրրեշը մին հենց կյոռռաց, վար երգյինքյը տըղտողաց, աշխարքը մրթնեց, ամեն մին ծառնեն տական մին կաղան տուս եկու, վար քրթանա էն մարթեն, վար ծրեռք ա տրվալ ուրանց թաքավերեն։

www.naregatsi.org

Հըրեշը դինչ քոն ըլաւ, մընացածնեն էլ ուրանց տեղերը չքըվեցեն։

Օխտը օր օխտը քըշերանը ետը հըրեշը զարթնեց, կյոռաց թա. — Հու վը՞ս, տունս եք, մարթ ըս, թա վիրի հեյվան, լավ փեշքյեշ ըս ստննական, տունս եք լունս աշխարք, հինչ վար օղիս, եր կալ ինձանա։

Ամմա Առուծեն տըղան էն պառավ մարթեն ասածը մննան քյըցալ չա՞ր։

Վար իրեքինչի դննումը հըրեշը ղե տվավ. — Հո՞ւվըս, տունս եք մեյդան, ինձանա քու օզած փեշքյեշտ եր կալ, իմ իրեք ըխճըկանըս արևն ըմ ասըմ, ընդրանց անըմավը օրթում ըմ օտըմ։

Առուծեն տըղան տունս եկու, հըրեշեն քըշտեն վրեննը կացավ։

Հըրեշը ընրա սուրուն, ջահիլ իրեսը տըսնալավ ասեց. — Առուծե տըղա, միչև օրըս նհենց մարթ չի ըլալ, վար իմ վրեղումս վրեննը տինի։ Տու առաչի մարթն ըս, վար եկեր ստեղ, ինձ էլ լըվոթուն արեր, հինչ վար օղում ըս, ասե, քյըեզ կբախշեմ, հալա, իմ ըխճըկորանցն էլ։

Առուծեն տըղան ասեց. — Գյանքտ է՛լ էվիլ ընի՛, յըես պիտի տանեմ քառասուն վրեսկե ծառներ, մընգյ էլ իմ հոր վրեսկե ղուրթին, վար քու ըխճըկերքտ կախարթալ ըն, պիրալ, տըսնըրհենգյ տարե առաչ։

Հըրեշը պեցուր կյուռալավ հըվաքեց ուրան ղարավուլչիներեն, վար վրեսկե բաղը պահում ին, նհանցա քըռըսունեն հրամմայեց, վար վրեսկե ծառները պիրեն, էն մինին էլ ղարկեց, վար ըխճըկորցը ղե տա։ Ընդրա ասածնեն լոխ արին։

Հըրեշը ուրան ղարավաշներեն կարքատրեց, վար Առուծեն տըղեն մին սհաթումը քառասուն վրեսկե ծրոններեն նհետ հըսցընեն ուրան երգյիրը, հալա իրեք ախճիգյն էլ նհետը։ Ըխճըկերքը կըզնըվեցեն, ամմա հորը հրամման ար, բեդմա ընին։

Քըշրհանը Առուծեն տըղան մեծ փեշքյեշներավ, քառասուն գյաղա հըրեշների, քառասուն վրեսկե ծառնի, իրեք ըխճըկա նհետ հըղե իլավ բըզա թաքավերեն պալատը։ Հալա մին սհաթը թամամ չար, վար տեղ հըսան։ Թաքավերը հըռուցանա տեսալ ար, վար կյամ ըն, հրամմայալ ար, վար տըռնները ծասկեն։ Առուծեն տըղան տըսնալավ, վար տըռնները ծասկած ա, օժավ կոտրից, նի մտավ քաղաքը։ Թաքավերը վրխելան նհետ պըլատան տունս չար կյամ։

Վրեսկե ծրոններեն շափաղը ընգյալ ար սաղ քաղաքը։ Իրեք օր քըղաքումը տուրուր կյըվող չիկար։

Առուծեն տղան թաքավերեն ասեց. — Ամմա՞ն մին հըրեշեն նհետ մին կյումաշ տիր, վար նահանց ղարկենքյ ուրանց տեղը։

www.naregatsi.org

Թաքավերը լոխ ըրավ, հինչ վար Առուծեն տղան օզալ ար։ Հըրեշներեն հըղե քյցից ուրանց երգիրը։

Մարը գյուղում չար, վար ուրան տըղան հորը ղուբին պիրալ ա՛։

Առուծեն տըղան սաղ քըղաքեն օժավ ուտեքյը նան փիհլըվանեն հըվաքեց, մին շերեթ չի քաշած պալատը շինեց։ Նհենց մին պալատ, վար հալա ըշխարքումս իլալ չար։ Էտ պալատը լուս ար տամ, հունցու արևը։

Առուծեն տըղան քյընամ ա թաքավերեն կոշտը։ Թաքավերը էս գոնում ռազի ըլավ, վար ուրան ախճիգյը Առուծեն տըղեն տա։ Առուծեն տըղան ետնան քյընաց մորը կոշտը, լոխ նաղլ ըրավ։

Մարը շատ բեքյըփացավ, հըրցրուց. — Ա՛յ վերթի, տու ամեն հինչ արեր, կըդըրեցիր, հի՞նչ կինի իմ խնթիրքս էլ կըդարես։

Առուծեն տըղան ասեց. — Ա՛ մար, ասե, յըես պադրաստ ըմ քու հրամմանեն։

Մարը լոխ, հինչ վար ուրան կըլխավըն անց ար կացալ, նաղլ ըրավ։

Առուծեն տըղան ասեց. — Ա՛ մար, լավ, մինչև մին սհաթը կը կըդարիմ։ Ամմա իմ հար սըղանալ չի՞։

Առուծեն տըղան եկու պալատը, հրամմայեց էն կախարթ ըխճըկորցը, վար ղուբին պիրին պըլատեն մեչը։ Ղուբին պիրան։ Առուծեն տըղան ղե տվավ մորը, մարը եկավ, տեսավ վըռսկե ղուբին, մըեսը քըցից էն խոսկը, վար ասալ ար մարթը, մըռնելիս վախտը։

Ղե տվավ. — Ա՛խ ղորփոր տըղա, յըես քյըեզ մննաս քըցալ չըմ, — ետնան օշան քյընաց, վեր ընգյավ։

Առուծեն տըղան հրամմայեց մորը ետ պիրին, մարը օշը կլոխը հըվաքեց։ Ետնան էն իրեք ախճիգյը հերթավ կըրթեցեն առանց թըխտի, ղուբուն թըխեցեն, ղուբին պաց ըլալ, հարը զուրթնացավ, օշը կլոխը հըվաքեց։ Աշխարքը լուսացավ, լոխ ուրխացեն։

Սկսեցեն հըրսանեքյ անելը։ Առուծեն տըղեն փըսըրկեցան թաքավերեն ըխճըկանը նհետ, մար նան հարն էլ ուրուր նհետ։ Քառասուն օր, քառասուն քըշեր հըրսանեքյ ըրեն։

Էն իրեք կախարթ ըխճըկերքն էլ կորան, քյեցեն ուրանց տըեղը, միչև օրս էլ կան վեչ։

Ըրգյինքան իրեք խնճոր վեր ընգավ. մինը՝ ասողին, մինը՝ կյըրողին, մինն էլ՝ կարթողին։



www.naregatsi.org

62. ՓԻՍ ԴԱՅԻՆ

Ընում ա, չընում մին մարթ, մին կնեգյ ա ընում։ Տահանց ընում ա մին ախճիգյ։

Մին քանի վախտանը ետը հաըը մեռնում ա, մարը ըխճըկանը պահում ա չըրու տասնըհենգյ տըրեկանը։ Ետնան մարը ազատամիշ ա ընում, մեռնում։ Մարը մահու յրա թափշուր ա անում ուրան ախպորը, վար ըխճըկանը լալ պահե։ Ախճիգյը մըծանում ա։

Դայուն կնեգյը մահու յրա թափշուր ա անում մարթին, վար ուրան մըռնելանը ետը նըհենց կնեգյ պիրի, վար լոխճան կյեղեցիկը ընի։ Էտ մարթը էրգյան վախտ ման ա կյամ, ամմա կնգանը ըսածին նմանը ճարում չի՞։ Քվորը ախճիգյըն էլ մըծացալ ար, նհենց նըխշունացա՞լ, վար նմանը կար վեչ։ Էտ մարթը մտածում ա քվորը ըխճըկանը յոր օնե, ամմա ախճիգյը օզում չի, քընեքյ ա անում մին ճար, մին հնար քըթենա տըրանա ըզադվե։

Ճարը կըտրած նա քյընամ ա մին ջադու պռավե կոշտ, լոխ ընդրան նաղլ անում։

Ջադու պառավը ըխճըկանը սըվըրցնում ա, վար. — Քյընա դայուտ ասե, վար քյըեզ հետե երգյընքյի ռանգյի մին շոր ինքյ օնե, ետնան կյենաս։

Ախճիգյը տըհենց էլ անում ա։

Դային շորը ինքյ ա օնում, էտ ախճիգյը կյենում ա, էտ շորեն մեչին չիլիս ա նըխշունանում։ Մընգյ էլ ա էտ ախճիգյը քյինում ջադվեն կոշտը։

www.naregatsi.org

Ջադուն ասում ա. — Քյինա՛ ասե դայուտ, վար քյըեզ հետե նհենց շո՛ր ինքյ օնե, վար ըրևեն ռանգյին ընի, վար կյենաս լոխճին աշկերը ծկոտե։

Ախճիգյը մընգյ էլ ա քյնա՛մ դայուն կոշտը, ասում. — Ինձ հետե նհենց մին շո՛ր ինքյ կա՛լ, հունցու վար արևն ա։

Դային մընգյ էլ ա կըդարում ըխճըկանը ասածը։ Ախճիգյը կյենում ա շո՛րը քյընամ ջադվեն կոշտը։ Նա էնքան նախշուտ ա՛ր, վար դայուն խելքը քյընա՛մ ար, կոզի պըռավալ ար։

Դային լոխ էտ շո՛րերը ինքյ ա կալալ վրեսկե փողավ։ Օրական էրկու-իրեք վրեսկե յար յոր օնում։

Ջադուն ըխճըկանն ասում ա. — Քյինա՛ դայուտ ասե, վար էշը մորթե, մորթեն եր կալ կյեց։

Ախճիգյը քյընա՛մ ա ասում։ Դային էշը մորթում ա, մաշկում, ախճիգյը կաշին կյենում ա, մընգյէլ քյինա՛մ ջադվեն կոշտը։

Ջադուն ասում ա.— Բոլ ա, էտ մաշկը կոտրած դայուտ անա հրռաց, էս երգյիրան տո՛ւս եք, վար դայիտ քյըեզ տեսնա վեչ։ Շո՛րերտ տիր մին սընդողե մեչի, տիր մին տեղ։ Քյըեզ մին ճըպատ ըմ տամ։ էտ ճըպատը ծեռքատ վեր չըքըցիս։ Վըրդեղ էլ քյընա՛ս, առանց սընդողե քյընա՛, հիբը ճըպատավը տափեն թըխես, սանդուղը տո՛ւս ա կյըլականե։

Ախճիգյը էշին կաշին կյեցած տո՛ւս ա կյամ ուրա՛նց երգյիրան քյընա՛մ մին օրիշ երգյիր։ Իրեսն էլ սըվըցնում ա, վար գյիդա՛ն վեչ թա՛ նախշուն ա։

Դային օզում ա հետան հրսնե, վար փրռնե, ամմա ջադուն նըհենց ա կըլըկապ անում, վար վեչ մին վախտ էտ ըխճըկանը քրթա՛նում չը՛ն։

էտ ախճիգյը քյընա՛մ ա թաքավերեն տանը ծառա նի մննում։ Մին քանի վախտ ընցնելանը ետը, էտ ախճիգյը փորցում ա ճըպատավը տափեն թխե։ Հենց վար թխում ա, սանդողը տո՛ւս ա կյամ։ Ախճիգյը կաշին հանում ա, իրեսը սըրփում ետնան կյենում ա երգյընքյի ռանգի շո՛րը։ էտ վախտը թաքավերեն տղան տեսնում ա ըխճըկանը, ընդրա սիրունութունավը տարվում ա, հիվընդանու՛մ։

Թաքավերեն տղան մորը թխվասկ ա թխել տամ։ Մարն օզում ա խմորը հունցե, էտ ախճիգյը ասում ա. — Թող յըես հունցեմ։

Հինչքան մարը թողում չի՛, ախճիգյը էլլա յա ըղաչում։ Վերչը թխվասկը ինքյն ա հունցում։ Հունցելիս վախտը մըտանան մննում ա խմորեն մեչին։ Թխվասկը թըխելանը ետը էտ տղան օշափեն նման օտում ա։

www.naregatsi.org

Մըտանան մընում ա բողազըմը։ Մըտանան մին թաՀրաւ հանում ա, տինում պաՀրցին տակեն, սկսում լիվանալը։

Լիվընալանը ետը մորն ասում ա.— էտ մըտանան հուր մաննե լալ ընի, ընդրան էլ ուղըլական ըմ։

Էտ օրը քըղաքեն ըխճըկոցը լոխճին ղե յըն տամ, ամմա մըտանան վեչ մինին մաննեն կյամ չի։ Վերչումը ղե յըն տամ էն ըխճըկանը, վերեն կյեցեն էշու կաշի յա՞։ Տրա հետե ընդրան տնազ ին անում։

Մարն ասում ա. — էտ ար պակա՞ս, վար յըես քյինամ էտ ղարավաշեն օղիմ, պիրիմ, դե էլ հինչ դաուդ օնիմ, հինչ ցավ օնիմ, դե ասի սաղ ըշխարքումս մին մաննը մեղր ըմ տըռնըլական իլի՞... Հու վեր եր կենա մեզ ա տնազ տըլական։

Ամմա տըղան ասում ա. — Չէ՛, ա՛ մար, թող ընդրա մաննեն էլ փորցենք։

Տղան փորցելի վախտը տեսնում ա, վար մըտանան դաստի էտ ըխճըկանը մաննեն կյամ ա։

Ախճիգյը ճըպատավը թըխում ա տափեն։ Սանդողը տունա կյամ։ Էտ ախճիգյը կյենում ա լոխճան նախշուն շորը, ըրևեն ռանգյի, տաունում հուրի-փաըրի, վար ըրևին ասում ա. «Տու տունա մի կյալ, յըես ըմ տունա կյըլական», լուանընգյին ասում ա. «Տունա մի կյալ, յըես ըմ տունա կյըլական»։

Էտ ըխճըկանը օղում ըն թաքավերեն տղեն հետե։ Օխտը օր, օխտը քըշեր հըրսանեք յ ըն անում։

Չարը՝ ընդեղ, պարին՝ ըստեղ։



www.naregatsi.org

63. ԹՐԵՎԱՎԵՐ ԿԸՆԵԳՅԸ

Ընըմ ա, չընըմ մին մարթ, մին կնեգյ։

Էտ կնեգյը թրեվավեր ա ընըմ։ Ամման ցիրեկ տանան թռչըմ ա։ Էտ մարթը մին հետ եր ա կենում կնգյանը թրեվները կյաղում, վար կարա վուչ ծմրկնեն թռչի, մնա տանը։

Քշրհանա կնեգյը եր ա կենում, վար ամման օրվա նման թռչի, քյնա ծմակը, տեսնում ա վար թրեվները տեղը չի։

Մարթին ասում ա. — Պա յրես քյրեզ ըսեցի հո՞ւչ, թա տհենց պա՛ն չանես, յրես գյուդում ըմ լհա՛ տրհենց ըս ըրալ, վար մընամ տանը, ինձ տեսնաս, ամմա լա՛վ չըս ըրալ։ Մհենգյ տու շատ նեղութունն յըս քըշլա՛կան։

Ընցնում ա մի քանե վախտ։ Էս կնեգյը հունցը տան կնեգյ, ճո՛ւրն ա քյնա՛մ, կյամ, տես-տեն ա քյընա՛մ։ Լոխ տըեսնում ըն, վար շատ ղա՛շանգյ կնեգյ ա։

Խա՛քըրը հրսնում ա էս երգյիրին թաքավերեն, վար. — Պա ասել չը՞ս, թաքավերն ապրած կենա, էս հի՛նչ շենումը, էս հի՛նչ մարթին տանը մին լա՛վ, սո՛ւրո՛ւն, շարմաղ կնեգյ կա, ամմա ընդրան սզական չի՛։ Նա թաքավերեն կսազի, խե՛ յըս թողում նա ընդրան ծեռքեն կենա։

Թաքավերը ծեն ա տամ էս մարթին, ասում. — Տո՛ւ քա՛նի կլխանի յըս, վար իմ երգյիրումս տհենց գյոզա՛լ ըս պահում, առանց ինձ դույուղ ընելե։ Դե մըհենգյ հի՛նչ ըս ասում, քյընա՛ կնեգյըտ պեր ըստեղ։

www.naregatsi.org

էս մարթը հակառակվում ա, ասում ա. — Հինչ վար օդում ըս, տամ, ամմա կնեգյըս կարալ չըմ տամ, վար օդում ա հինչ ընում ա, ինի։

Թաքավերը մտածում ա, թա հի՞նչ փանդ սարքե, վար էս մարթին կընեգյը ինքյ օնե։ Մին քանի շատ ժժար տեղեր ա ղարկում, համ էլ վախտ տընում, վար. — Ասած վախտս եկեր, եկեր, թա չէ կլինխտ կտրլական ըմ։

Քանի տեղ ղարկում ա, ասած վախտան էլ կանուխ ա կյամ։

Վերչը թաքավերը կանչում ա էս մարթին, ասում. — Քյըեզ մին պան ըմ ասում, թա էտ էլ կդարես ազադ ըս, թա չէ, չէ՛։

Մարթն ասում ա. — Թաքավերն ապրած կենա, հինչու ասես պատրաստ ըմ։

Թաքավերն ասում ա.— Քու առաչիտ մին պայման ըմ տընում։ Քյնա ընդեղ, գյուդում չըմ վը՞րդեղ, պեր էն պանը, գյուդում չըմ հի՞նչ ա, թա կըդարես, կընեգյըտ քյըեզ հալալ ա։

Թաքավերն օդում ար, վար տրան հենց տեղ ըղարկե, վար էլ ետ չի տանա, ինքյն էլ ընրա կնեգյը յըր օնե։

Մարթը կյամ ա նստում տանը, բեքյեփ, սկսում մտածելը։

Կնեգյը ետ ա տանում հըրցնում. — Հը, խե՞ բեքյեփ ըս, հի՞նչ ա պրտահալ։

Մարթը ասում ա. — Դե թաքավերը ինձ սրհենց պայման ա ասալ, մընգյել գյուդում չըմ, թա հի՞նչ անեմ։ Ասում ա. «Քյընա ընդեղ, գյուդում չըմ վը՞րդեղ, պեր էն պանը, գյուդում չըմ հի՞նչ ա»։

Կնեգյն ասում ա. — Տեսա՞ր, վար քյըեզ ըսեցե... Քել էս յայլուխըս, վեր տըժեր ընգնիս, քեթըտ կսըրփիս, վեչ մին պան էլ ա ընանական չի՞։

Ասում ա, մին լավ նախշուն յայլուխ, վար նրա նմանն էլ ըշխարհքումս ըլալ չի, տանա օնում, տամ ընդրան ասում. — Դե քյընա, պարի ճընապար։

Մարթը քյընամ ա քյընամ, առաչը մին պալատ ա կյամ։ Նի յա մընում հսարեն մաչը, մարթ չի կա, փալաքյանանվը եր ա ընում, նի մընում տընները, վեչ մին մարթ, վեչ մին պան չի կա, ամմա տընները լավ սարքած ա ընում։ Վերչը քյինում ա տեսնում մին ութաղում մին իրեք կլխանե օշափ քոն ըլած։ Ըտեղ մըխրե կենում ա։

Օշափը եր ա կենում, ասում. — Էս հի՞նչ մաղա յա եկալ, ըսօր էլ տրանավ յոլա կըքյնանքյ։

Օդում ա, թա օտե, էտ մարթը կնգանը տված յայլուխը մետրն ա քըցում, տանա օնում քեթը սրփում, օշափը տեսնում ա յայլուխը, ճընանչում։

www.naregatsi.org

Ասում ա. — Պա էս յայլուխը քյըեզ տըվողը մեր կուճուր քերն ա՞, էս ա վերքան վախտ ա, նրանա խաբար չօնեենքյ, տու հո՞ւ վըս, վար քյըեզ ա տըվալ։

Նա ասում ա. — Դե յըես ընդրա մարթն ըմ, քյընամ ըմ տըհենց պանու հետա...

Օշափն ասում ա. — Դե էս ըշխարքըմըս հիշքան թըռչող կենթանի կա, նահանց թաքավերն ըմ, կանչիմ կյան, թա նահանք գյըդացեն, գյըդացեն, թա չէ, չէ։

Կանչում ա հիշքան թըռչող ղուշ կա, նահանց անա հըրցնում, ամմա վեչ մինը գյուդում չի, թա վըրդեղ ա, հինչ պան ա՞։

Էտ օշափը ասում ա.— Դե քյնա, առաչըտ մին մեծ պալատ ա կյլական։ Ընդեղ մին հենգյ կլխանի օշափ կա, ըն էլ ինձանա մեծ քերն ա, քյնա ընդրա կոշտը, հըրցրու։

Էտ մարթըտ շատ ա քյունում, խրեգյ ա քյունում, առաչը մին մեծ պալատ ա կյամ։ Քյունում ա, նի մըննում պալատը, տեսնում մին հենգյ կլխանե օշափ ա կյամ սկսում ա ճոր հետ ածելը, վար էտ մարթեն իփի, օտե։ Էտ մարթը տոնա ա օնում յայլուխը քեթը սրփում։ Օշափը տեսնում ա, ճնանչում, վար տա ուրան քվերը յայլուխն ա, էլ վեչ մին պան չի անում։

Հրցնում ա, թա. — Պա թո՞ռն ըս քյունո՞ւմ։

Մարթն ասում ա. — Դե սրհենց-սրհենց պանու հետա յըմ քյունում, հղեցը ծեր քվորը պըտահալ ըմ, ծեն ա տվալ, լոխ թռչող ղուշերը, ծըմակեն չանավարնեն եկալ ըն, հըրցրալ ա վեչ մինը գյըդացալ չի՞, մընգյել լհա քյունում ըմ տեսնամ վըրդեղ ըմ հըսնում։

Էս օշափըս ասում ա. — Դե յըես էլ ըշխարքումս հինչքան ցմաքումը ապրող հեյվան կա, նահանց թաքավերն ըմ, կանչիմ կյան, հըրցընիմ, տեսնամ նահանք կըգյիդա՞ն, թա՞ չէ։

Կանչում ա ցմաքումը ապրող հինչ հեյվան կա, թա մեծ, թա կուճուր, կյամ ըն, հրցնում ա, ամմա սահանք գյուդում չըն, թա ըտա հի՞նչ պան ա։

Օշափը ըստեղաս էս մարթիս հըղե յա քցում, համ էլ ասում.

— Դե քյնա, մեր մեծ քերը էնա ըռաչիտ մին պլատում։ Քյնա ընրա կոշտը, բալքյաս նա գյիդա։

Ըստեղաս էլ էս մարթըս հըղե յա ընում։

Շատ ա քյընամ, խրեգյ ա քյընամ, տեսնում ա մին մեծ պալատ ենկու առաչը։

Պատ ա տամ հըսարավը, դըրբըզան քրթանում, նի մընում,

www.naregatsi.org

քյունում եր ինում, ամման օթաղ նի մննում, տեսնում վեչ մին մարթ չի կա՞։

Մին խիլլա վար կենում ա, մին զորբա ըրոտուց, ղըռղըռոց ա լըսում։ Տուս ա կյամ եշում, տեսնում մին օշափ ա կյամ։ Էտ օշափը հենց բեջիթ ա կյամ, վար սաղ աշխարքըս ըրոտում ա, համ էլ թոզան երգյինքյը թուխպալ ա։ Էս օշափը կյամ ա, կյամ, հըսնում պալատը, տեսնում ըստեղ մին մարթ, օղում ա վար էտ օխտը կլխանե օշափը էտ մարթին կոլ տա, ամմա էս մարթըս կնգանը տուվածֆյայլուխը տուս ա օնում, քեթը սըրփում, օշափը տեսնում ա, ճնանչում։

Ընրան պչպչորում ա, ղոնաղ անում, վերչումը հրցնում ա, թա պա. — Թո՞ն ըս քյընամ, հի՞նչու վրս շոռ կյամ։

Էս մարթըս ասում ա, վար դե սրհենց պանու յըմ քյնամ, թաքավերը իմ ըռաչիս սրհենց պան ա տըրալ, լհա յըես էլ չըմ գյուդնում, թա Թոռն ըմ քյընամ, հրղեցը քուվորցտ պըտահալ ըմ նահանք էլ չըն գյուդնում։

Օշափըն ասում ա. — Դե յըես էլ աշխարքումս հիշքան ճըրնումը ապրող հըյվննի կա, նահանց թաքավերն ըմ։ Մեն տամ, լոխճան հըրցնեմ, տեսնամ, թա տհենց պան ընի, նահանք պտի գյիդան, ասեն։ Կանչում ա։ Հինչքան վար ճըրնում ապրող հեյվան կա, կյամ ըն, լոխճան հըրցնում ա, վեչ մինը գյուդում չի։

Օշափը հրցնում ա, թա. — Լոխըտ ըք եկա՞լ, թա՞ չէ։

Ասում ըն.—Լոխ ընք եկալ, մնացալ ա մին կյեռթնուվ, էնա ընրա վրեննը կաղլեգյ, կըրացալ չի կյա։

Ասում ա. — Քյընացեք յ ընդրան էլ պիրաք ըստեղ։

Քյունում ըն պիրում։ Օխտը կըլխանե օշափը ըտրանա հրցնում ա։

Նա ասում ա. — Ըստեղավ քյըեցաք, ծմակեն մեչ տեղը մին պաց տեղ ա ըննաչկան։ Էն պաց տեղեն կոխկումը էնա մին տոն կա, էս տանը մին ղրաղումը՝ մին թուրուն։ Կըքյընաս, կըքյընաս նի մըննես էն թուրունը, տրանա տեղը տու վրս գյուդնում։

Էս մարթը քյնամ ա, քյնամ, հըսնում ա էտ տոնը, թուրունը քյըթանում, նի մըննում մաչը։

Ըստեղ վար մին խիլլա կենում ա, տեսնում ա մին օշափ եկու նի մտավ էտ օթաղըտ, ստոլեն քըշտեն մին տաբրետկու յրա նստից, ասից. — Ա՛ Ջրհան, սուփրան քցե։

Հինչ ուտելի, խմելի կա, կյամ ա ստոլեն իրեսը ուրան սարքավը լըցնում։

Ստում ա, քուշտանում, մեհետ էլ ասում. — Ա՛ Ջրհան, սուփ-

www.naregatsi.org

րան հրվաքե։— Հինչ վար մնացալ ար ստոլեն, ինքյը-ինքյը հրվաքվում ա, կորչում։

Վար մի քանի հետ տհենց տեսնում ա, մին օր էլ վար օշափը կյամ ա, օտում, քյունում, նրանա ետը, ինքյը քյունում ա էն տաբրետկեն նստում, ասում.

— Ա՛ Ջրհան, դե կոզի յրես քյրեզ տեսնում չըմ, եր կալ մին ստաքան արաղ տու, մինն էլ յրես, մին կյենաց խմինք։

Ջրհանը եր ա օնում ստաքանը, համ էլ ասում.— Էս ա յրես հարուր տարե յա էս օշափես քշտեն ուրյան սրհենց ծառայում ըմ, հալյա նա մին դյունում էլ չի ասալ, թա էտ մին ստաքանտ էլ տու խըմե։ Դե վար տու մին դյունում ըս եկալ, ինձ համեցեք յս անում, էլ յրես ըստեղ կենալ չը՞մ։ Յրես քյրեզ նրհետ կկյամ, քյրեզ կծառայիմ։

Էս մարթըս համաձայնվում ա, Ջրհանեն յոր օնե, ամմա ասում ա.— Պա տինինքյ թա տու ինձ նրհետ կյամ ըս, յրես հի՞նչ գյիդյամ, թա ինձ նրհետ ը՞ս, թա չէ, ախեր տու ըրևում չըս։

Ջրհանը ծծյաղում ա, համ էլ ասում.— Արխային կաց։ Յրես առաչ կընգնիմ, տու վէլ հետաս եկ, ինձանա փռնած։

Սահանք մին օր եր ըն կենում, հրղե ըյնում։ Շատ ըն կյամ, խրեգյ ըն կյամ, կյամ ըն տեսնում մին տեղ օխտը մարթ ամեն մինին բոյը կես մետր։ Սահանց քշտեն էլ մին օրիշ մարթ բոյը չորսըհենգյ մետր։

Սահանք հրրցնում ըն էս օխտը մարթին անա, թա.— Էտ խե՞ ծեր բոյը էտքան ա, ամմա էն մինինը՝ էնքան։

Էս օխտը մարթն ասում ըն.— Մունք հինչա ծնվալ ընք, էս մարթիս հետի յընք աշխադում։ Տեսնում ըք էսչանք փայդրս, լոխ մունք ընք կըտորում։ Օրական մունք ամեգյը հարուր սաջեն փայդ ընք կըտորում։ Մրեզ էնքան թակալ ըն, պինըցրալ, մնացալ ընք սրհենց։

Էս մարթըս ասում ա.— Մրեզ ինձ նրհետ տանեմ, կկյա՞ք։

Նահանք էլ ասում ըն.— Հա, կկյանք, թաքյի մրեզ կոշտ պահես։

Էս մարթն ասում ա.— Ա՛ Ջրհան, մին սուփրան քցե։

Սուփրան ամեն հինչավ լսնվում ա։

Ասում ա.— Դե կերեք։

Օտում ըն քշտանում, ամեգյը ուրյանց կացենը յոր օնում, սահանց նրհետ հրղե ընում։ Վըրդեղ սովածանում ըն, Ջրհանը տահանց հաց ա տամ։

www.naregatsi.org

Կյամ ըն, կյամ, տեսնում ըն մին տեղ մին մարթ, կարկաժ ա ծախում։ Հըրցնում ըն, թա տեսնաս կըրկաժին մինը հի՞նչու վա։

Ծախողը ասում ա. — Մինը տասը հըզեր մանեթ ա։

Ասում ա. — Ա՛յ մարթ, մին կարկաժը հի՞նչ ա, վար էտքան թանգ ըս ծախում։

Կարկաժ ծախողն ասում ա. — Սա կարկաժ չի, սրա մեչը լիդյը զորք ա, ուրան թուփավը, թուվանգյավը։

Ասում ա. — Հը՛, դե նշանց տու։

Նշանց ա տամ։ Մին կուճուր ծակավ սկսում ըն մըրչեմնի տուն տաունալը, ետնան զորք ըն տաունում, փըչադավեր, թուփավ, թվանգյավ։ Մըհնգյ էլ հրամման ա տաս, կյամ ըն էլհա մրչեմնի տաունում, նի տաունում էն կըրկաժեն մեչը։

Էս մարթըս հախը տամ ա, էս կարկաժը ինքյ օնում։

Ինքյը, Ջրհանը, էն օխտը մարթը, կարկաժը յոր ըն օնում, կյամ։

Կյամ ըն ուրանց շենան մուտանում։ Խաբարը կյամ ա, վար էս ըրուդյունըս թաքավերը էտ մարթին նշանածը տանում ա։

Կյամ ըն շենին ղըրաղեն հրամման տամ, կըրկաժեն մաչան ամեն տեսակ զորք ըն տուն կյամ, շենավը պատ ընցնում։ Էն օխտը մարթըն էլ ամեգյը հաբուրուճ տեղակ, էրկու հաբուր սաջեն մին օրումը փադ ըն կտըրում, սաղ շենին չորս անգյունը պատ քըցում։ Զորքըն էլ ընդրա քըմակավը։

Պատ ըն քցում, պըրծնում, փաղը նի կցնում։ Խաբարը հըսնում ա թաքավերին, վար սաղ շենին չըրսըպուլլիրը կրակ ըն տուվալ։ Էս վախտըս էլ էս մարթը, մընգյ էլ Ջրհանը կյամ ըն շենը, ուրանց տոն, տեսնում թաքավերը օզում ա, վար ուրան կընեգյը տանե։

Ասում ա. — Թաքավերն ապրած կենա, ասածդ կըդարալ ըմ, ամմա տու տըմացալ չըս, վար կյամ։

Ասում ա. — Բա հո՞ր ա էն պանը, վար պիրալ ըս։

Էս ըսելին նըրհետը, Ջրհանը մին էրկու չըմփալախ ա տամ, համ էլ ասում. — Հատե էտա ըստեղ։

Ջրհանը թաքավերեն ըսպանում ա, ինքյը էտ մարթին կնեգյը տաունում։ Ջրհանը հենց էտ մարթին թևավուր կնեգյն ար, քթավ։ Կնեգյը տեռնում ա, թաքուհի, մարթը՝ թաքավեր, էս օխտը մարթըս թաքավերեն ծառանին, կարկաժըն էլ պահում ըն հունցու զորք։

Ուստուծանա իրեք խընձոր վեր ըննի. մինը՝ ինձ, մինը՝ քյըեզ, մինն էլ, վըրդեղ մին դուզ մարթ կա, ընդրան։

www.naregatsi.org

64. ՂԼԵԳՅԶԻՆ

Ընում ա, չընում մին ղլեգյզի։ Էտ ղլեգյզին օրը ըշխադում ա, օրը՝ օտում։

Մին դյնում կործ չի ինում, վեր անե։ Նըղացած փոքսը սկսում ա փչել, կրակեն յրա յա տնում մին պղնձե ջամ։ Փոքսըն էնքան փչում ա, վար ջամը սկսում ա կյըրմրելը։

Էտ վախտդ մին տղա կյայլիս ա ասում. — Ուստա՛, էտ ջամը խե՞ յրս տհենց անում, մղափուն չի՞։

Ուստան ասում ա. — Ա՛ բալա, վեչ մին պեն չիկա, վեր գիրաչ ինիմ։

Էտ տղան ասում ա. — Դե վեր տհենց ա, տու փոքստ փչի, յրես քյըեզ հետե պյան ըմ ճըրլական։

Ղլեգյզուն էտ փոքսը փչիլ ա տամ, վար ջամը ըսկսում ա կյըրմըրելը, էտ տղան ասում ա. — Ուստա՛, տու աշկերտ հոփ կյալ։

Ուստան աշկերը հոփ ա օնըմ, բռնըդյան էդ տղան ջուբան մին պյան ա հանում, ջամը քցում, ասում ա. — Դե ուստա, ջամտ վեր կալ։

Ուստան ջամը վ'եր ա օնում, սուչցնում մին քանե մունուտանը ետը տեսնում ա ջամը վրեսկե յա տեռալ։

Ուստան եր ա կենում էտ տղեն կլխավը շոռ տամ, կյամ կոխկեն նստում։

Էտ տղան ասում ա. — Ուստա՛, տար վրեսկե ջամը բզարումը խաըրչի, պեր օտենքյ, ետավ էլա վրեսկե ջամ կշինինքյ։

Ուստան տանում ա էտ վրեսկե ջամը բըզարումը խարչում,

www.naregatsi.org

օտելի պաներ առնում, պիրում, օտում ըն։ Սկսում ըն էտ տղան նան ուստան ուրուր նհետ ապրելը։ Ամմա ուստեն մին մար ա ընում։ էտ մարը շատ փիս կնեգյ ա ընում։

էտ տղան ուստեն ասում ա. — Քու մար փիս կնեգյ ա, պեր տղրնես փոխինքյ։

էտ տղան նան ուստան քյինում ըն շենին ղրաղեն մին տոն ճարում, մեչին ապրում, ըստեղ էլ աշխադում։ էտ տղան նան ղլեգյչին շատ հարուստոթուն ըն կյունում։ Ղլեգյչին էտ տղենան թաքուն ուրան օղտերեն վրեսկավ պեռնում ա, փախչում։

Ուստան վար քյինում ա, ինքյն էլ եր ա կենում հետան քյինում հրսնում, ասում. — Ուստա, ինձ հի՞նչ կտաս, վար ասեմ վրեսկեն վըրդեղ ա յըմ պիրալ։

Ղլեգյչին ասում ա. — Ասի։

էտ տղան ասում ա. — Դե վար տհենց ա տու ասի, տեսնամ խե՞ յըս ինձանա փախչում։

էտ վախտը ղլեգյչին ասում ա. — Քշերս ըրաղումս տեսնում ըմ իմ մար հրիշտրակ տաուած եկալ ա քու պկեդ չոքալ, ասում ա. «Խե՞ յըս իմ տղան ինձանա հանալ», ասում ի. «Յըես փախչիմ, կյամ քյըեզ ազադիմ»։ Դե ասի, տեսնամ վրեսկեն վըրդե՞ղա յըս պիրալ։

Տղան ասում ա. — Դե մին պան խոսկ տոր, վար ասեմ։

Ուստան ասում ա. — էս օղտերը պեռնած քյըեզ կ'տամ, թաքյ ասիս վրեսկուն տեղը,— համ ասում ա, համ էլ տղին վռազցնում, ասում, — դե ասե, շունտ ըրա։

Տղան ասում ա. — Քյըեզ մատաղ, մին պատառ սպասի ըսըլական ըմ։— Ասում ա.— Ուստա, վախըմ ըմ ասիմ, ամմա էտ պանները ինձ չիտաս։

էտ վախտը ղլեգյչին հրիշտրակ ա տաուռնում, էտ տղեն պկեն չոքում, տղան վերչին շունչումը ասում ա. — Կացի ասիմ։ Ասում ա, թաք հիշտե՞ղա յա վրեսկին ատացալ։

Քշերեն փիս վախտն ա ինում, տղեն թողում ա ըտեղ, ինքյը քյինում։

Շատ ա քյինում, թա խրեգյ, էտ ղլեգյչուն ուրան կործն ա։ Քյինալիս հղըցումը տեսնում ա, մին քաղ։ էտ քաղը քյինալիս վախտը մին ըրախա յա քաղան վեր ընգնում։

էտ վախտը ուստան քյինում ա էտ ըրախան վեր օնում, ասում. — Լաց մի ընիլ, ինձ նհետ եք քյինանք։

Շատ ըն քյինամ, թաք խրեգյ, հասնում ըն ընդեղ, վրդեղ վար

www.naregatsi.org

վրեսկե կա։ Տեսնում ըն վեսկեն մին պեցուր սարի կլխե յա, էնքան պեցիր ա, վար էդ վախտը ուստան կլոխը պցրցնում ա, վար դիբի պեցիր եշի, փափաղը կլխան վեր ա ընգնում, ետ ա տաւնում փափախը յոր օնի, էտ վախտը ընդրա հետան տուս ա կյալիս օխտը կլխանի մին դև։

Դևն ասում ա. — Տու հի՞նչ օնես ըստեղ, ասի տեսնամ, տու յի՞ր, վար իմ ախպոր տղան խեխտեցիր, քշերեն կեսումը, հղցումը թաղեցիր։

Օխտը կլխանե դևը սպանում ա ղլեգչուն, համ էլ ասում. — Տու քյինա՛ իմ ախպոր կոշտը, թող նա կյա։

Ըտրանա ետը դևը քյինում ա, ըտրա ախպոր տղան կյալիս ա։

Էտ վախտը էտ տըղան մին օղտ ա մորթում, կաշին հանում, կարում, մեշուվ շինում, էն խոխան մեչին տինում ըռեխը կապում։

Էն խոխեն ասում ա. — Յրես ճուճու յըմ ըննաական, ղուշերը կյալական ըն քյըեզ տանին էն քերծեն պտոկը։ Վեր քյըեզ տանեն ընդեղ հասցնեն, թուղլական ըն քարեն պտկեն։ Էն վախտը տու կկտկըտըցնես օղտին մորթեն, ղուշերը քյըեզ կհանեն։

Միչև էն վախտը, վար խոխան քերծեն կլոխը չար պցըրացած, քերծեն չորս ղոլին ճուր չիկար։ Էդ տղան վար պցրացավ քերծեն պտոկը, ընդրա չորս ղոլը ճուր տաւռավ։

Տրանից մին խրեգյ ետը տեսնում ա, վար էդ ճրերեն տեղը կըտրած կլխանեքյ, մարթիքյ, մեյիդնի յըն եր տաւռած։

Վախտին էտ տղան էտ խուխեն ասել ա, վար էտ քերծին հասնես, ուրաան կանչի։

Էտ վախտը էտ րախան ծեն ա տալիս էն տըղեն։

Էտ տըղան տական պադասխանում ա. — Հե՛յ,— ասում ա,— ըտեղին վրեսկան վեր ածե։

Էտ խոխան էնքան վրեսկե յա վեր ածում, վար էտ տըղան մտածում ա, թաւ հո՞նց բիդի տանի։ Վրեսկեն օղտերը պեռնում ա, էտ խոխին թողում սարին պտկեն, ինքյը հղե ինում, քյինում։

Էտ խոխան մին խրեգյ սպասում ա, ետավ ետ ա տաւնում կանչում։

Տեսնում ա վեչ մին սաս չի կյալիս, շատ ա վախում, աշկերը հոփ ա օնում, ճուրը ընգնում, լըղընալավ տուս ա կյալիս ցամաքը, տեսնում էտ տըղան կա վե՞չ։ Շատ ա վախում, լաց ա ինում, ծվում, ծկլթում, կլոխ յոր օնում մին ղոլի յրա քյինում։

Շատ ա քյինում, թաւ խրեգյ, մին էլ տեսնում ա մին շենի ղըրաղե մին իշեղ ա ըրևում։ Էտ լուսին յրա քյինում ա, տեսնում մին

www.naregatsi.org

տոն։ Ընդեղ ապրում ին թաքավերին օխտը ըխճկերքը, էտ տանը տիոնը թակում ա, տիոնը պեց ըն անում։

Էտ տըղան ասում ա. — Կարելի՞ յա։

Ըխճկերքյը ասում ըն.—Կարելի յա, տու կինիս մեզ ախպեր։

Էտ ըխճըկերքյը էտ տղեն սիրում ըն ուրաննց հալալ ախպոր նման։

Էտ ըխճկերքյը սկսում ըն պատմելը, թա — Մեր հայր Հայաստանեն թաքավերն ա, էս սհաթես թաթարներեն նհետ կռիվ ա անում, ամման էրկու ամսանը մին ուրան զորքերը ըղարկում ա, մըեզ տեսնում ըն, մըզանա խաբար տանում հորս։ Ասում ըն հենց մհեկ վախտն ա, էս էրկու օրը կյլնկան ըն, մըեզ էլ տննական ըն հորս կոշտը։

Հենց էտ խուսելիս վախտը զորքերը կյալիս ըն, տռանը պըրնոտվում։ Զորքերան մին զինվեր կյալիս ա, ասում. — Ըխճկե՛րքյ, պդրստվեցեքյ, վար էքյուծ քյննական ընք ծեր հոր կոշտը։

Էտ վախտը մեծ ախճիգյըն ասում ա. — Լավ կինի, դե քյինի, հի՞նչ ը՞ս կաղնալ, իմ հայր կլսի, քյըեզ կսպանե։

Էտ վախտը էտ զինվերը տուն չի կյալիս, ասում ա. — Յըես քյըեզ մատաղ, թողեր ծեր կուճուր ըխճկանը մոտ մնամ, մեռնում ըմ ընդրան հետե։

Էտ մեծ քերը շատ ա նղանում, ուշուննց ա տամ, ասում.—Կորի, շոն, շան տղա, քու ռեխտ հի՞նչ ա, վար թաքավերեն ըխճկանը նհետ զրուց անես, էդ ասել ըս, էլ ասես վե՞չ։

Ամմա էտ տղան շատ ա ղաչանք անում, վեր էն կուճուր ըխճկանը նհետ մնա։ Էտ վախտը, էտ կուճուր ախճիգյը տանան տուս ա կյալիս, տեսնում էտ տղան ղաչանք անում։ Էտ կուճուր ըխճկանը մթկումն էլ ա ինուս, վեր էտ տղեն նհետ ման կյա։ Էտ կուճուր ախճիգյը էդ վախտը քյինուս ա էտ տղեն վզովը փըթաթվում, պըշպըշորում։ Ըտրա մեծ քերը ռազի յա կըենում, վեր ուրուր քըշտի մնան։

Էտ վախտը մեծ քերը տրանց տանում ա երեսունըիննինջի օթախը, ասում. — Ըտեղ մնացեքյ։

Ըտրանք ըտեղ են մնում, ամմա մնացած ըխճկերքյը քյինուս ըն ուրանց ախպորը կոշտը, զրուց անում ուրանց անցյալին մասին։

Էտ կուճուր ախճիգյը նան զինվերը վեր քնած ըն ընուս, քշեր վախտը էտ տղան եր ա կենում, ասում.— Ախճի, հի՞նչ ըս անում էս վախտ իմ քշտես, տու թաքավերի ախճիգյ, յըես մին զինվեր, վեր քու հայր գյիդա, հի՞նչ կասե։

Էտ տղան տկլոր եր ա կենում, փախչում, քյինամ թաքավերեն

www.naregatsi.org

կոշտը, ասում.— Թաքավերը ապրած կենա, էս քշեր լոխ զորքերը ըխճկորցըտ նհետ ապրալ ըն։ Ամմա յրես քու հավադարիմ զինվերըտ ինիլավ, քու ըխճկորցըտ անա խաբար ըմ պիրել։ Ամմա մին օց եկավ վետներս ընգավ, վար ասիմ վեչ, ամմա լավ չի, վար ասիմ վեչ, մըհեկ տու յըս գյիդնիմ, հունց օզում ըս ըրա, էտ քու կործըտ ա։

Ըռավոտը զորքերը եր ըն կենում ըխճկորանցը ասում.— Դե սարքվեցեքյ, քյինանք ծեր հոր կոշտը։

Էտ ըխճկերքյը սարքվում ըն, պալատին աշառնին տամ ըն ուրանց ախպորը, ասում.— Էս պալատներեն օթաղնին լոխ կարող ըս քյինաս, քառասունինջի օթաղանը կըմանս։ Ամմա քառասուն օրանը ետը կյլական ընք։

Էտ տղան մնում ա ըդտեղ, էտ պալատեն լոխ օթախնին ա նի մննըմ, օզըմ ա քյինի քառասունինջի օթախը նի մըննի... Ախեր ասում ըն ղգըղա յա՞։ Մին խոսքավ էտ ախպերը քյինում ա քառասունինջի օթախը պաց անում, տեսնում մին օթախ մաչին մին փոս։ Տա նի յա մըննըմ փոսին մաչը, ընդղավ քյինում, տեսնում առաչին մին բախչա յա պաց ինում, մաչին էրկու տեղ ճիրի հովուզ։ Էտ տըղան ըդտեղ նստում ա քնենքյ անըմ, թա էս հի՞նչ լավ բախչա յա։ Էտ վախտը մին էլ ա տեսնում էրկու նախշուն ղուշ թռած եկեն բաղեն ծառերեն յրա նըստեցենս։ Էտ ղուշերը էտ տըղին տեսնում չին, մուտանըմ ըն հովուզեն, շորերը հանում, սկսում լըղանալը։ Էտ վախտը տրանք ըխճկերքյ ըն տաոնում։

Ըխճկերըը մինը մինին ասում ա.— Շուրուրնետ հենց տեղ տիրիքյ, վար կյան վեչ տանին, մըզ էլ տկլոր թողին։

Տրանք էտ տղեն տեսնում չըն, սկսում ըն արխային լղանալը։ Ամմա էտ տղեն տուր ա կյամ կուճուր ախճիգյը, էտ վախտը մեծ ախչիգյը եր ա կենում ուրան շորերը կյենում, թռչում, քյինում։ Կուճուր ախճիգյը օզում ա, թա շորերը կյենա, տեսնում ա շորերը կա վեչ։ Էտ տղան քյինում ա պալատը, հիվանդանում, թեքյ ընգնըմ։

Ըխճկերքը թաքավերեն քըշտան կյամ ըն, տեսնըմ ուրանց ախպերը հիվանդ։

Ասում ըն.— Ախպեր, հի՞նչ ա հիվանդութունըտ։

Ախպերն ասում չի։

Էտ վախտը ընդրանք ասում ըն.— Մունք գյուդնում ընք հի՞նչ ա քու հիվանդութունըտ, օզում ը՞ս ասինք։—Ասում ըն.—Տու քյեցյալ ըս քառասունինջի օթաղը, տրա հետե էլ հիվանդացալ ըս։

www.naregatsi.org

էտ վախտը խրեգյ ա մնամ, թա ախպերը մեռնե։ Օխտը քվերքը օղում ըն, թա ուրանց սպանին։

էտ վախտը ախպերը ասում ա. — Քյինացի քառասունինչի օթախումը էրկու ախճիգյ տեսի, տրանցանա էտ կուճուր ըխճկանը սիրում ըմ։

էտ վախտը քվերտինքը քյինում ըն էտ կուճուր ըխճկանը տեսնալի։ Տեսնում ըն հովուզին մեչին էտ ախչիգյը լղանում ա։

Տրանց վեր տեսնում ա, ասում ա.— Եկալ ըմ լղանամ, ամմա շորերըս տարալ ըն։ Գյուդում չըմ հո՞ւ վա տարալ, տրա հետե էլ կարում չըմ քյինամ։

էտ ըխճկերքյը ասում ըն. — Եք քյինանք մեր տոնը։

Տրանք պուրում ըն ուրանց տոնը, փսակում ուրանց ախպորը նհետ, ուրանք էլ քոչում ուրանց երգյիրը։

Ըտրանք հասեն ուրանց մուրազեն, մունք էլ հասնինք մըեր մուրազեն։



www.naregatsi.org

65. ԿԱԽԱՐԹԸ

Մին հիվանդ մարթ, մին խուրջին օսուքը քըցած կյամ ա մին ախպէուրի քըշտե կաղնում։ Էտ թամմուզ-թաքյուզ ախպէուրը, էտ զիլզիլան ճուրը վեր տեսնում ա, կուժավ ճուր տանող կնանոցն ասում ա. — Ա կնանեքյ, մին պատառ ճուր տվաք, խմիմ։

Կնանեքյն ասում ըն. — Քյուլվիս տո՜ւ, քյինա կորե։

Մին օրիշ կընեգյ ասում ա. — Ախճի, խե՛ ճուր չըք տամ։

Պիրում ա, կուժեն դըբետավը ճուր տամ էտ մարթեն, համ էլ ասում. — Ապեր, մեր տոնը հեն ա երի ընգյունեն, կըկյաս մեր տոնը։

Էտ մարթը ասում ա.— Խե՛ չըմ կյա՜լ, կըկյամ։

Վեր մթնում ա, քյինա՜մ ա ընդահանց տոնը։ Մարթն ասում ա. — Ա՛ կնեգյ, էս հի՞նչ մարթ ա։

Կնեգյն ասում ա.— Մարթ ա իլի՜, ղոնաղ ա՜։

Մարթն ասում ա. — Դե հաց շինի, օտենքյ։

Ղոնաղն ասում ա.— Յըես մինա՛կ խուխե մես ըմ օտում։

Ընահանց էլ մինա՛կ մին տղա խոխա յա ինում, պուրում ըն խոխան մորթում, ուփում, տունում ղունաղեն ըռաշկեն։

Քշըհանը լսում ըն մին խուխե սա՜ս։

Կնեգյն ասում ա. — Ա մարթ, էն հի՞նչ սա՜ս ա։

Մարթն ասում ա.—Դե հի՞նչ գյիդա՜մ, մին խոխա ունինքյ, էն էլ մուրթեցենքյ։

Ըր ըն կենում տեսնում ուրա՜նց խոխան ուրուրուցումը։ Էտ ղոնաղըն էլ կա վեչ։

www.naregatsi.org

Նոր գյուղում ըն, վեր էտ կախարթ ա իլալ։ Խուխին վրսկռնեբան նոր խոխա յա շինա՜լ, ինքյը քյացա՜լ։

Կախարթը ըտաղատ քյինաւմ ա, տեսնում մին մարթ ցաքյ ա պռւրռւմ։

Ասում ա. — Ա՛ մարթ, խե՞ կարում չըս ապրես։

Էտ մարթն ասում ա. — Դե հի՞նչ անիմ, քյասիբ ըմ։

Էտ մարթը էտ ցաքյին տեղը հաղուղի բաղ ա շինում, համ էլ ասում.— Դե, բիչարի, կեր։

Մին էլ քյինում ա, տեսնում մին մարթ փայդը մեշկին քյինաւմ ա, ծմակին մեչավը, համ էլ ասում ա. — Ուխա՜յ, հի՞նչ լավ խընձորի ծառեր ըն է՞։

Էտ մարթը ծմակը խընձորի ծառեր ա շինում, համ էլ ասում. — Դե, քյինա՜ բիչարի, ապրես։

Ըտըղատ էլ քյինաւմ ա, տեսնում մին մարթ քարը շլակին քյինում ա, համ էլ ասում. — Խուվա՜, հի՞նչ լավ վեխճըրնի յըն է՞։

Էտ մարթը սաղ քարերը վեխճըրնի յա շինում, ասում. — Դե տու էլ ըտրանավ ապրես։

Ո՛ւտունց անա վեչ մինը գյուղում չի, վեր էտ մարթը կախարթ ա։ Էտ մարթը քյինաւմ ա մին տարի կենում, հետևան ասում. «Քյինաւմ, տեսնամ ըտահանք հի՞նչ պանի յըն»։

Կյամ ա տեսնում ըտահանցա էն վըշխըրատարը մին վեչխար մորթած քյեփ ա անում։ Էտ մարթն ասում ա. — Մին պատառ ինձ տվաք։

Ասում ըն. — Խե՞, մըղնհետ վեչխար ըս ըշխադա՜լ։

— Լավ ա, լըհա՜ մին թիքյա՜ տվաք։

Էլհա տամ չըն։ Էտ մարթը ծեռքերը տռնրռնր ա տամ, լոխ վեչխարնին քարեր ըն տա՜ռնում։ Ըտաղատ կյամ ա խնձորեն բաղը։ Տեսնում ա խնձորը քաղում ըն։

Ասում ա. — Մին խնձոր տվաք։

Ասում ըն. — Կլխներաս ըռադ իլ, կորես։

Էտ մարթը ծեռքերը տռնրռնր ա տամ, բաղը տա՜ռնում ա էլհա էն հաւմաւն ծմակը։

Ըտաղատ կյամ ա հաղողին բաղը։

Ասում ա. — Մին ճիթ հաղուղ տվաք։

Նռքյարն ասում ա. — Թող քյինաւմ ըղեն անա հրցնիմ։

Քյինաւմ ա, կյամ, ասում.— Տամ չի, ասալ ա, քյինա՜ սրտեն թխե, ասե՝ քյինա՜, կորես։

www.naregatsi.org

Էտ մարթը ծեռքերը տռւրռւր ա տամ, էտ բաղն էլ ա տաւռնում ծմակ։

Մին էլ քյինամ ա, էն խոխան վեր կերալ ա, ընահանց տոնը։ Ասում ա, վեր ինքը ընահանց խոխան օտողն ա։

Ասում ըն. — Բա հո՞ մնց անինքյ, մեր կլխեն մեր աշկեն յրան ըս եկալ, պարով ըս եկալ, պեր վրեննիտ տակը կանանչ-կյաւրմռւր թիլ քըցինք։

Էտ մարթն ասըմ ա. — Վեր ըտհենց ա, ամման քըշեր 400 մանեթ ա կյալու ծեր տոնը, ծեր պերցին տակը. լավ տոն շինեցաք, լավ ապրեցաք։

www.naregatsi.org

66. ԱՇԿԸ ԾԱԿ ՄԱՐԹԸ

Ըլալ ա, չիլալ մին մարթ։ էտ մարթեն իլալ ա մին ախճիգյ, մընգյ էլ մին տղա։ էտ ախճիգյը նան տղան մըծանում ըն, ուրանց հասկեն հանում։ Տահանց հաըը ըխճկանն էլ ա փսակում, տղեն էլ։ Տահանք տնըվերվում ըն։ էրկունեն էլ շատ խոխա յա ընում, էրկունն էլ բախտավեր ըն ընում։ Ուրանց գյանքում լավ քեր-ըխպրոթուն ըն անում։ Քերը առանց ախպորը, ախպերն էլ առանց քվորը թքյա չըն տընում պրըննաերումը։ Մին օր վար մինը մինին տեսնում չար, էտ օրը մթնում չար։

Ղորթ ա տահանք էնչանք սերավ ին, ամմա ախպորը մին քանի խըսյթնեն քվորը տուր չար կյամ։ Տա նա յար, վար ախպերը շատ ուրուշու խոսկավ ընող ար, կանոխ հվատող ար, ըստուծապաշտ ար, համ էլ քըշկերեն հվատում ար։ Տրա հետե էլ քերը միշտ նասյաթ ար տամ ախպորը, վար. — Ա՛յ ախպեր ջան, դուղ ա էնչաք մծացալ ըս, ամմա հալա խելքտ հետատ հրսալ չի, տրա դարդան էլ գյանքումտ շատ վախտ ըրածըտ ճուրն ա տանում, ամմագյտ կւետն ա տանըմ, տու էլ շատ կփուշմանես, ամմա ետե կինի, ընցածը էլ կարալ չըս ետ պիրիս։ Տրա հետե, եք քու էտ կանուխ հվատալտ, ըրաղին հվատալտ թարգյ ըրա։

Ախպերը քվորը վըզալ ա օնում, վար. — Լավ ըս ասում, ա քեր, իմ էս կարճ խելքըս էլա տհենց ասում, ամմա անդար անիմ է՛, էտ աթադան, բաբադան մնացած խոսյաթնեն, կարում չըմ վիրըցնեմ, յըես էլ ըմ գյուդում, վար էտ հվատալը իմ կլոխըս մին քյալագյ

www.naregatsi.org

ա պիրըլական, ամմա վար հվատում չըմ, գյուդում ըմ, թա էն սհաթը տրքվըլական ըմ, ասում ըմ վար կանոխ չըմեռնեմ, մին քանի տարե էվել ապրիմ, ասում ըմ ըրզներեն հվատամ, վար կանուխ չի տրաքվիմ։

Էրգյան ըպրելի հուլյսավ էտ մարթը միշտ հվատում ար ըրզներեն, ուրան գյանքըմ էլ դաստ ար անում կըդարե։ Մին դռնում ըրազի տեսնում ա, վար ուրան քաշկերը դինջոթուն չըն տամ, ըստեղընդեղ սդիբում ըն, վար քյնա էս հինչ ծրան տանը պատը քանդի, էն ա մին վրեսկու պուլիգյ կա, եր կալ։ Էտ մարթը քյնամ ա ըրազումը տեսած ծրան տանը պատը քանդում, վրեսկու պուլիգյ չի քթենում։ Սաղ օրը չըշարվում ա, օրը մթնցընում, տարած հացը կլխցնում, շորերը ճըրղոտում, քրթնունք թափում, ուրուգյունը նղացած տաորտակ քյնամ տոն։ Ամմա ուրան էտ չըշրմունքեն անա տանը վեչ մին պան էլա ասում չար։ Մին քանե օր վեչ մին տեղավ էլա քյնամ չար, ուրթունն ար օտում, վար էլ ըրազուն, մրազուն հվտլական չի։ Ամմա թազա մին արաղ ար տեսնում, վրդեղ ուրան բիյաբուռ ըն անում, թա. — Հի՞նչ անխելք մարթ ըս, մունք քյըեզ վը՞րդեղ ընք նշանց տվալ, տու էլ վը՞ր դեղ ըս քյնացալ քանդալ։ Յըես ասալ ըմ, վար աչի պատը քանդիս, տու քյնացալ ըս ծախինը քանդալ։ Քյնա աչի պատը քանդի, տես վեսկավ լիգյը պուլիգյը տունս ա կյամ, թա չէ։

Էտ մարթը ուրան նախատում ա, ասում ա. — Ա՛ կարկած, խոսքը վար ասեն է՞, միչև վերչը կսկանան, տու լհա ըսկացալ ըս պա՛տ, ը՛ռ ըրալ, քյնացալ, թա վե՞ր պատ ա, թա վե՞ր պատատակ, տրանա խաբար չըս իլալ, քյընացալ ըս օրերավ չըրշարվալ, օժտ կուրցըրալ, լանթերըտ ճըղոտալ, տաորտակ եկալ տոն, էտ հալա քյըեզ խըրեգյ ա, էլ տու ինիս, տու, հալա մին պանին տակ նան կյլեխը գյիդալու, կյլեխտ քամուն չի տաս։

Էտ մարթը էլհա եր ա կենում շալաքունալան հրվաքում, հղե ինում բիդի ծրան տները։ Քյնամ ա համին ընդեղ, վրդեղ մին քանի օր առաչ քնդըքանդի յա ըրալ պատերը։ Էս դռնում էնքան ուրխացած, վար ասես լհա վրեսկուն պուլիգյնեն ճոխտ-ճոխտ ա տունս կյլականն, էլ վեչ ալուն ա եշում, վեչ վալուն, կլեխն ա պատեն նի կյամ, վեջան չի՛, ծեռքն ա քարեն նի կյամ, վեջան չի, էնքան, չաշմիշ ըլած, թայդի, պատը քանդում ա, տակը պաց անում, պատեն տակը վար փչանում ա, պատը ղռռալի վեր ա կյամ։ Մին զեռ քար ընունում ա էտ մարթին վրետանը, վրեննը փշրում։ Էտ մարթը մնում ա մըլըլըմիշ կյալիս, կարում չի, թա տեղան տունրուր կյա։ Մին քանի օր սոված, ծարավ մնում ա էտ պատեն տակեն վեր ընգած։ Ուրանց

www.naregatsi.org

տնեցնքյ էլ հետան շոռ ըն կյամ, վերչը կյամ ըն էտ պատին տակեն տրան քթանում, տեսնում վրեննը փշրած, ռանգյը ռուշը փոխած, սաստ ծվանգյած։ Տրան իրեսեն խուսելավ, թռհմաթ տալավ, տանում ըն ուրանց տոն։ Վրետանը դարդան մին քանե ամես կարում չի, թա տեղան տուրուր կյա։

էտ մարթեն վրեննը, վար լվանում ա, էլհա սկսում ա ըստեղ-ընդեղ քյնալը։ էտ խոյաթը, վերչանք ասում ա բաթմիշ անե, ամմա կարում չի՞։ Ինքյն էլ վեչ մին պանի պկսոթուն չար քաշում, վերերը դանավ ար լիդյը, տոնը հյվանավ ար լիդյը, ամմա էլհա էտ մարթին աշկը ուրան իլաֆավը քուշտանում չար, ասում ար հունց օզըմ ա ինի՞, օրիշ տեղա մին պան պիրի։ Վար վեսկուն անումը ըսկանում ար, վենը-ձեռքը տափան կտրում ար։

էտ մարթը մին քշեր ըրազի տեսնում ա, վար մարթիք ասում ըն. — էս հի՞նչ ծմակումը, էս հինչ ծառեն տակեն էն ա վրեսկե կա, քյնաս տուս կալ, պեր լավ ապրե։

էտ մարթը մին օզում ա քյինա, մին էլ սերտը տամ չի։

Քյնամ ա ուրան քվորը մեծ տղեն նհետ նաղլը անում. — Ա՛ քըվոր տըղա ըրազի խոտի պան ըմ տեսալ, եք քյնանք հանինք։— Հա-լա էտ տըղան հվատում չի, ամմա վրեսկուն վրետը տրան էլ ա տուրուր տամ։

Ուրկոքան եր ըն կենում, հաջաթ-մաջաթ յոր օնում ու քյնում բիդի ծմակը։ Հըղըցեն կեսումը էտ տղեն մետը հի՞նչ ա ընգնըմ, դայուն թողում ա մինաք, ինքյը ետ տաոնում։

էտ մարթը մըթկումն ասում ա. «Հաղըր քվորս տղան ետ ա տեռալ, մին յրես կանուխ քյնամ տեսնամ»։

Շատ ա քյնամ, խրեգյ ա քյնամ, քյնամ ա մննում ծմակեն խոր-խոր տեղերը, լոխ ուրուր նման ծառեր, գյուդում չի, թա վեր ծառեն հետի յրն ասալ։

Շատ տես ու տեն խըլըշկոտում ա, ամմա խելքը ճուր չի խոմում, տա ասում ա. «Հայլրաթ ուրան տեսած ծառըն ըստեղ չի»։

Տա էլհա հրդե յա ընգնըմ, ծմակեն մաշավը, քյնում ա հանում մին խոր ծոր, մտնում ա էտ ծորը վար քյնա, ըրազումը տեսած ծառը քյթանա։ Մին էլ ա տեսնում էն յալան մին պան բիդի ուրան թուլ ինիլավ կյամ ա։ Տա կլոխ ա ընում, վար տա արչ ա կյամ, օրիշ պան չի ինիլ, սկսում ա ծորավը փախչիլ։

Մընչանք փախչում ա, վար հանում ա ընդեղ, վրդեղ քվորը տղան ետ ա տառալ, վրեննները թուլացած, ծեռքերը բուշացած,

www.naregatsi.org

հաւլը կտրած նստում ա ըտեղ, աշկը քըցըմ հըղեն նյեր վար էս ա քվորը տղան կկյա։ Քվորը տղան էլ կյամ չի։

Քշերը յրա յա հանում, էտ մարթին վննըծեռքը հաւլա թունէլ ա, կարում չի տեղան տունրունր կյա, մնամ ա տեղ պըրանվածե։ Քշերվա էն տաւռնը վախտը, էտ մարթեն ընջուկավը սաս ա ընգյնունմ։ Հաւլա տա մին վախում ա, ետնան տեսնալավ, վար մրթասաս ա, մխրե ըրխյնանում ա։ Ինքյն էլ ա սաս-սունս անում։ Էտ մարթիքյը վար կյամ ըն մուտանում, տահանց ծիյանը մնում ըն հղըցումը վրենը կացածե, վերքան չըրչարվում ըն էտ մարթիքյը, ծիանքը տեղան տունրունր չըն կյամ։

Տահանք ասում ըն, վար ծին խելունք ապրանք ա, հաւլըաթ մին պան կա, վար քյնում չըն։ Տհանցան մին քանենը, վեր ըն կյամ ծիանցան, ըտեղեքյ շոռ կյամ։ Վերչը քյնամ ըն էտ մարթին քթաննըմ։

Տրան փռնում, կպոտում, տուր ու թակ ընելավ պիրունմ, հաւլա օզըմ ըն, թա սպանին, ասում ըն. — Տու հինչ իլաթ-միլաթ ըս, վար քշերվա էս վախտըս ըստեղ ըս։ Հաւլըաթ տու փիս մարթ ըս, ըստեղ կյողլ ըս կացալ, վար մրեզ մին ղսրաթ անիս։

Էտ մարթը հինչքան ղանչանք ա անում, վար հվտցնե, վար հղըցու յրա մարթ ա, օզում ա քշերը ըտեղ ընցցնե, էքյսը հղե ինի։ Էտ մարթիքյ տըրան հվատում ըն, սպանում չըն։ Լունսանում ա, էտ մարթիքյ քյնամ ըն ունրանց կործենն, նա էլ մնում ա ըտեղ։

Էքյսը քվորը տղան կյամ ա։ Էտ մարթը դինջացածե ընունմ։ Էրկու հոքավ եր ըն կենում, հղե ընգնըմ։ Շատ ըն քյնամ, խրեգյ ըն քյնամ, քյնամ ըն հանում ծմակեն էն ղալին տըեղը։ Ըսկսում ըն աշկ ածել, թա էն վե՞ր ծառը կինի, վար ըրազի տեսալ ա։

Տահանց պտահում ա մին ախպունր, ընդրա քշտեն մին մեծ հճարե յա ընում։ Տահանք սկսում ըն հճարեն տակը քանդիլը։ Շատ ըն քանդում, խրեգյ ըն քանդում, քանդելիս փոսան մին չեչուտ քար ա տունս կյամ։ Էտ երկու մարթը մին հանգավ էտ քարը պուկում ըն։ Միչև պուկիլը էտ մարթիքյ էն մթկեն ին, վար քարը պուկեն, տական վրեսկե յա տունս կյլյական։ Ամմա վար քարը պուկում ըն, տեսնում ըն քարեն տակը վերթնավ լիգյը։ Էտ վերթները ընգնում ըն էտ մարթկանցը ջանավը, էտ մարթիքյ տունս ըն տաւռնում, ըսկսում փախչիլը, կոզի փախչում ըն, ամմա էտ վըրթներան կարում չըն պրծնին, վերթները տահանց ծառն ա եր հանում։ Քյնամ ըն տահանք շունրունեն հանում, թափ տամ, վերթները թիմզցնում, շունրունեն կյեննում ըն, թուշ քյընում տոն։

Տանը տահանց մին լավ թուքու-թոհմաթ ըն տամ. — Արա,

www.naregatsi.org

ա շան տղեքյ, խե՞ ծեր տներումը վեր չըք տաՌնում, ծեր կործն անեք, ծեր կործը թողած քյնաՄ ըք ստեղ-ընդեղ տանջվում, տաՌտաՀ, ճինշի-պոմբի ընելավ կյամ։ Ետ վար տուք էք, մին դռնըմ էլ իսկի ճինշի-պոմբի ընելավ էլ չըք կյլլական, քյննաՀական ըք վրեննավ, ծեռքավ տաք մին կրակու մեչի։ Խլքնետ կլխներետ ժաժ ըրեք, ծեր տներումը վեր տաՌաք, ծեր կործն ըրեք, ծեր ըլաԾչլաԾը բոլ ա ծրեզ։

Էտ մարթը ասըմ ա. — Հա, լավ ըս ասըմ։

Ամմա վար ԱրաՀզ ար տեսնում, ջանը էլհա մղմող ար ընննում։

Մեհետ էլ տեսնում ա, վար ուրաՀն թքուրթՀմաՀթ ըն տամ, վար. — Ա՛ կյիժ մարթ, տու խե՞ ասածն սկանում չը՞ս, քու կլխատ տուս պաՀներ ըս անո՞ւմ, տրա դաՀրդաՀն էլ կործտ աջող չի ընցնում։

Էտ մարթը մնում ա ըրմացած։ Ասում ա. — Էս հի՞նչ ա, քոն իլաԾ վրխտես տրեսած արազը կդարըմ ըմ, վեչ մին տեղի չըմ հանում, հաՀլա տրանա ետն էլ իրեսս էսքան թըքըմոր ա կյամ, յրես հո՞ մեց անիմ, վար էլ իրեսըս թըքըմոր չի կյա՞։

Մեհետ էլ վար արազ տեսնամ, դաՀստի եր չըմ կրննական, մինչև վերչը կրննական ըմ, տեսնամ հի՞նչ ա տաՌնում, նոր ընդրա հետան քյնաՄ, ըրազեն տեսածը կդարիմ, տեսնամ էս դռնումը հի՞նչ ա տեռնում։

Մեհետ էլ էտ մարթը ըրազի տեսնում ա, վար ուրաՀն բիշտի-բիշտի յրն անում, վար. — Ա՛ մարթ, խե՞ քու ըպրեվի տաՌնտ գյուդունմ չը՞ս, քյրեզ հինչու ասում ըն, տու է՛ն ըրա, վեչ թաՀ ասածը թողե, քյինաՀ կլխատ տուս պաՀներ ըրա, մունք քյրեզ ըսեցինքյ, վար, էս հինչ ծմակեն, էս հինչ ծառնեն տակեն, էս հինչ տեղը, մին վրեսկու կարաս կա, տու քյնաՄ ըս էտ նշանց տված տեղը թողում, էն մին ընդյունաՀն քանդրմ, տրա դաՀրդաՀն էլ վրեսկեն տեղը վերթն ա տուս կյամ, ջանավտ ընցնում։

Ետ մարթը ճելլի եր ա կենում, քյրնամ քվորը տղեն կոշտը, թա. — Արա՛, պա ասի՞լ չը՞ս, թաՀ մունք սխալ ընք քանդալ, էս քշեր ըրազում ինձ ըսեցեն, վար պիտի էն ծառեն ծաՀխի անդյունը քանդիքյ, վեր վրեսկե տուս կյա, ամմա մունք քյնացաՀլ ընք աչի անդյունը քանդալ, տրա դաՀրդաՀն էլ վրեսկու տեղակ վերթն ա տուս եկալ։

Քվորը տղան ասում ա. — ՔյնաՀ կործիտ, կլխատ ծեռք ը՞ս եր կաՀլալ, թորը քյնամ ըս քյնա, յրես ջան չօնիմ բադա տալի, իմ ըլաԾ-չիլաԾըս ինձ բոլ ա, փորս չի սոված, վրեննս չի պաՀց, հի՞նչ օնիմ ըստեղ-ընդեղ չըրչըրվիլիս, թաՀ հա՞յ մին տեղ վրեսկու կարաս քթաՀ-

www.naregatsi.org

նամ, հա՛յ պուլիգյ քթանամ, յրես կյամ չըմ, տու թորը քյնամ ըս քյընա։

Ամմա էտ մարթը հմողում ա էտ տղեն, վար. — Ա՛ տնաքանդ, միշև մհենդյի ըրաղը կեսատ ըմ ըլալ սկնալիս, ամմա մհենդյ մինչև վերչն ըմ ըսկացալ, մհենդյ դուզ ա ընեական, հենց ա իսկի ըրաղ չինի, լհա ասես ըրըկյանճի յա, լհա ասես քըշտան ըմ կյա՛մ։ Էս դանումըն էլ վար սոտ ինի, էլ վեչ յրես, վեչ տու, ինձ նհետ էլ վեչ կխոսիս, վեչ պարյօր կտաս, վեչ էլ մրթատեղ կըտինիս։

Էն տղան ասում ա. — Ա հանց ա էս դանումը ղորթ ինի՛, մին քյինամ տեսնամ վար ղորթ ինի, նրա քյալլան թափ ըմ տլական, տաըտանկ թողիմ, լոխ յրես յոր օնիմ, վար սոտ ինի, տրան մին լալ ծեռքըս ըմ ունեական, շան նհետ կապիմ։

Էտ մարթ նան տղան եր ըն կենում հացավ քսակնեն լցնում, քսակնեն յոր օնում, վար վրեսկեն ածին մաչը, քյնամ։ Քյնամ ըն, քյնամ, շատ ըն քյնամ, խրեդյ ըն քյնամ, հրանըմ ըն համին ծմակը, համին ծառեն տակը, մհենդյ էլ սկսում ըն ծառեն ծամխի անգյունը քանդում։ Քանդում ըն, քանդում, քյընամ մին սալ քարու տեմ ընենում, էտ քարը կարում չըն վեչ կոտրին, վեչ էլ պիցիրցընին։ Էտ մարթը քվորը տղեն ղարկում ա տոն, վար համ հաց պերի, համ էլ գուփուն, ամմա ինքյը մնում ա էտ փոսեն քշտեն նստած։

Էն տղան քյնամ ա տոն, հաց յոր օնում, գուփուն յոր օնում, կյամ, էտ սալ քարը կուտրատում, էն էխշավը վար վրեսկեն քարեն տակեն ա իննեական։ Ամմա քարը կտրելանը ետը պարզվում ա, վար մին քարե նավ ա, մաչը վրսկոներավ լիդյը։ Էտ վրսկոներեն ղաթը շոռ ըն կյամ, վեչ վրեսկե յա ինում, վեչ էլ մին պաե։ Էտ մարթը նան էտ տղան ուրուր իրեսե խոսում ըն, ուրուր պակաս-պռատ ասում, նղացած հղե ինում տոն։ Ինքյն էլ վեչ մին տեղ ըն քյնամ, վեչ էլ մին հրդրցավ մինը ըռաշկեն ա քյնամ, մինը դրեսե։ Վերչը էտ մարթիքյը հանըմ ըն տոն, էլ իրիսատեղ չի ընում, վար տանը խոսեն։

Քվորը տղան ասում ա.— Էլ յրես ինիմ, յրես, էտ մարթին նհետ վրեննը փոխեմ, ջանես կեսը մշվրցրե ըտրա նհետ էնքան տես ու տեն քյնացե, խուտուրու տեղան։

Էտ մարթըն էլհա ուրան մթկումը ասում ա. «Ձրես էլ ըրաղնի հվտլական չը՛մ, գյանքիս կեսը տհենց տեղը փըշրցրե, բոլ ա՛, հերիքյ ա՛, հի՞նչս ա պակա՛ս, վար խուտուրու չըրշարվում ըմ, խուտուրու էտ ծմկներումը տանջվում ըմ»։

Ամմա էտ մարթը էրկու մթկանե յա ինըմ։ Համ տհենց ա ասում, համ թա՛, վար. «Էն վերան տներան վրեսկեն պուլիգյավ տուս կյար,

www.naregatsi.org

էն ծառեն տական վրեսկե կարասը տունա կյար, հո՞ւ գյունդում ըս յրես հի՞նչ մարթ կը տեռնի»։ Վրեսկեն վար մետն ար ընգնում, աշկերը չըռում ար, աշկերը չորս անըմ։ Մին խիլլա վախտ էտ մարթը ա՛րա՛զ չի տեսնում, վեններըը, ծեռքերը միխրե դինջանում ա, ուրան հալալ կործեն ա կենում։ Համ էլ քնենքյ ար անըմ, վար. —«էս հենց ա աստված ինձանա խոսված ինի՞, էլ ա՛րա՛զ չըմ տեսնըմ, չինի թա՛ աստված ինձ մին ղսրաթ անե»։ Մեղա յա կյամ, վար հինչ ա՛րա՛ջ տեսնամ կըդրվլական ա, ա՛րա՛զը ըստուծու պա՛նն ա, աստված ամեն մարթու ա՛րա՛զ տեսնալ չի տա՞մ, ա՛րա՛զը նրա յա տեսնալ տամ, հու վեր ըստուծու հղրցումն ա, հու վեր արթար ա, պա յրես հո՞ւնց տունա կյամ ըստուծու հրղրցան, վար տունա կյամ, աստված ինձ ղսրաթ կանե, պատիժ էլ կտա, ըսկի օր ու պերի չըմ տեսնալ։

Տրանա հետը էտ մարթը քնենքյ ա անում. «Վար մհրնգյ էլ ա՛րա՛զ տեսնամ մին մարթու էլ ըսլական չըմ։ Բա՛լի լիհա՛ մարթու ասում ըմ, տրա հետե չի վրեսկե տունա կյամ, աստուծու պա՛նն ա լի՞, հո՞ւ վա գյունդում, մեհետ վրեսկեն վերթնը կշինի, մեհետ էլ վեսկեռք կշինի՞»։

Էտ մտածմունքներավը էտ մարթը մնում ա տրկրկլնխ ընելիս. «Պա վեր մինա՛կ քյնա՛մ, յրես հո՞ւնց կանիմ...»

Վերչը կյամ ա էն համոզման, վար. «Աստվա՛ծ-ա՛ստված մրնգյ էլ վար ա՛րա՛զ տեսնամ տազ ըրած եր ըմ կննական հղե ինիմ, վեչ մարթու վըմ ըսլական, վեչ էլ մեր տանը»։ Մրնգյ էլ ասում ա. «Ջէ, քա բալաս տեղս գյիդա՛ վեչ՞, վար հետաս կյա, բա՛լքյաս մին պեն ա ջրհունմ»։

Էտ մարթը վճռում ա, վար մին էլ ա՛րա՛զ տեսնա, կենդու ուրան կուճուր ըխճկանը ասե, նորու քյինա ըրազումը տեսածեն հետան։

Շատ ա ընցնում, խրեգյ ա ընցնում, էտ մարթը մին ա՛րա՛զ ա տեսնըմ. վար գուվաքյի մին քերծում, մին քարու տակե, մին փոս կա, վրեսկավ լիգյը։

Էտ մարթը մնում ա մտածելիս, մինա՛կ քյնա՛, թա՛ հնգերավ քյնա՛։ Մինգ էլ սրերտ չի անում, ասում ա հրնգերավ քյինա, վախում ա, թա՛ էլհա փոչ տունա կյա։

Վերչը օզըմ ա մինա՛կ քյնա՛։

Էտ մարթը եր ա կենում մին օրան պրիպասը յոր օնում, քըսակ-մըսակ յոր օնում, վար վրեսկեն ածե մաչը, հջիթնեն շլա՛կում, հղե ինում։ Էտ մարթը քյնա՛մ ա, քյնա՛մ, հսնում չի ըրա՛զումը տեսած տեղը։ Հղցումը հացը կլխում ա, հջթնեն թողում ա հրղցեն ղրաղեն, ինքյը ետ տա՛ռնում տոն, մինգ էլ էրկու օրվա հաց ա յոր օնում, հղե վնում, քյնա՛մ ա, քյնա՛մ, վերչը հսնում ա ըրա՛զումը տեսած տեղը։

www.naregatsi.org

Քյնաամ ա շոռ կյամ, շոռ, դե էտ քերծումն էլ հըզեր քար կա, վ՚ե՞րեն տակը պըտռե, վար քիթենա, վերչը մին քարու տակ քանդում ա, մին հանգավ էն քարը պուվում, տեսնում տակեն վեչ մին պեն էլա, կա վուշ, քոռը-փնշմեն մնամ ա տեղը նստած՝ էնքան բզաըրած ա ինձում, վար կարում չի թա քյնա տոն՝ Սոված ծարավ մնում ա տեղը նստած՝ էքյսը էտ մարթը հղե յա ընձում տոն հենց առաչին քշերը, նորու ա՛րաղ ա տեսնում, վար էչհա ուրան նախատինք ըն տամ, վար նշանց տված քարեն տակը չի քանդալ, քյնացալ ա քնդելի քարեն տակը թողալ, օրիշ քարու տակ քանդալ՝

Ըրաղումը նրան ասում ըն. — Վար էն քարը թողալ ըս վրեսկեն տակեն, օրիշ քարու տակ քանդալ, դե մհենդ քյինա էն քարեն անա տենը մին մեծ քար կա, ընրա տակը քանդի, տըես վրեսկե կա՞, թա վեչ՝

Էտ մարթը եր ա կենում իրեք օրվա հաց յոր օնում հջենեն շլակում, հղե ինձում՝ Քյնաամ ա հսնում համին քերծը, շոռ ա կյամ էն քարը քթանում, վերին տակեն վրեսկե պիտի ինի՝ Ուրխանում ա, ասում. «Էս ա վրեսկեն տուս կկյա, քսկնես կլցնիմ շելակըս թմամիմ հղե ինիմ տոն՝ Դե ընդրղանը ետը հո՞ւ կկարե, իմ հետաս հըսնե, ըրածըս անե, լավ ա լհա՛ օրիշ մարթու ըսեցե վեչ»՝ Էտ մարթը սկսում ա ծանդր ըշխատանքը՝

Էտ քարը մեծ քար ա ընձում, էտ մարթին աշկը վախում ա տըրանա՝ Ասում ա. «Էս հի՞ր բիդի քանդիմ, իշտա՛ս վերչանք վրեսկե կա տակե՞նա՝

Էտ մարթը սկսում ա քարեն չորս ա՛նգյունը քանդիլը, ամմա էտ քարն էլ հենց քար ա, վար վեչ ճոնդն ա ըրեվում, վեչ պուճախը՝ Քանդում ա, քանդում, կարում չի, թա՛ տակը պեց անե՝ Օրը մթնում ա, ինքյն էլ շատ չըշրվելանը ետը, էտ քարեն քշտեն հաց ա օտում, պրծնում, քոն ինում, վար էքյսը եր կենա աշխատանքը շարունակե՝ Հետե տեղա եկա՞ծ, սաղ օրը չըշարված, վստակա՞ծ, էլ կարում չի, լհա՛ քնավ ա ընցնում, հենց պենդ քոն ա ինձում, վար ունջուկումը թոփ էլ տրքցնիս, եր չի կենալ՝ էտ մարթը ըրա՛ղի տեսնում ա, վար վրեսկեն փոսը պա՛ց ա ըրալ, ամմա էտ փոսը խոր ա, ծեռքըն օզում ա թա՛ մեկնե, հսնում չի՝ Մըններեն պտռկնեն էլ վար նի յա հսնում վրեսկուն, վրեսկուն վար նիյա կյամ, ցրտոթունը գյուդնում ա, մաննները ցրցուրտանում ա, էտ մարթը շատ զոռ ա անում, վար կռանա վրեսկեն հափռե, ամմա ծեռքը նի չար հսնում՝ Մխրե էլ էլ զոռ ա անում, վար ծեռքը նի հսնե — բո՛ւրդան օզում ա թա՛ կլխեն յրա իննի վերը՝

Էտ մարթը լոք ա տամ, եր կենում՝ Տու մի ասիլ էտ քերծումը

www.naregatsi.org

մին արշ ա ինում ըպրեվիս, կյամ ա, պտահում էտ մարթին, ըսկսում թանթուլվը խաղ անելը։ Վերչն էլ սկսում ա թուլուլ տալը։

Հենց էտ վախտը, էտ մարթը զուրթնանում ա, եր կենում, տեսնում իրեսը չընգռտած, ըռնփալալ, եր ա կենում, թա փախչի, արչը խտտում ա թուլ ըննում, տանում ներքե ծորումը էտ մարթին ծեվծեվ անում։ Օրեր ա ընցնում, էտ մարթը տոն չի կյամ։ Տնացեքյ շոռ կյալավ կյամ ըն հետը քթանում, տեսնում էն վրեսկե օզող մարթը արչու փայ ա տանալ։

— Տհենց ա ինում հա՞, հու վար ուրան իլածավը պավական չի ընում, բավարարվում չի՞, ըշկըծկոթուն ա անո՞ւմ, ըսկի մին տեղ չի հանում, էտ մարթին նման արչու փայ ա տանում։

Մարթը հիշքան կարա, աշկը կոշտ կպահե։ Հիշքան ըշկծկոթուն անե, կյլոխը տարտակ կմնա, փորը սոված, մուրազեն էլ հասնել չի, ամմա էն մարթը, վար ուրան աշխադանքավը ապրե, օրիշի աշխադանքեն յրա չինի աշկը, բախտը տհենց մարթեն վրեննները կփթաթե։ Ամմա աշկը ծակ մարթեն վրեննները, բախտի տեղ, արչը կփթաթե։

www.naregatsi.org

67. ՀԱԹԵՐՔԻՆ ՀԻԼԻՆ

Ղարաբաղի Հաթերք շենումը հիլի տեսած չըն ինում։ Մին օր էտ շենն ա կյամ մին ղըլըցե։ էտ Շուշի-Ղալա շըհաբան եկածը էքյսը քըշերավը իրեսը լվանալիս, մազերը սանդրելիս, ջուբան մին հիլի յա տուա օնում, մեչին եշում։ Ետավ հունց ա ինում, էտ օրը ուրան կործերը էտ շենումը պըռծնելանը ետը, էտ հրեռու շենին կործերը քննելանը ետը, էտ շուշի-ղըլըցե մարթը քըշերը կենում ա, վեր էքյսը ետ տրեռնա, կյա Շուշի-Ղալան։

Էտ քըշեր լինվին ծրեռքան տրեղումը էնքան շրռտըշռռտի յա անում, էնքան պըրրն-պարան ա անում, յորղան-դոշակ ծրռըցընում, տափին եր քըցնում, մին էլ ճոնդան ծիքյ տամ, էլհա քըցնում յրան, վեր կաստնումեն պենջակը, վեր էն ար կոխկի տաբըրետկին տիրած, եր ա ընգնում, ծոցին հիլին էլ ընգնում թախտին տակը։

Էտ մարթը էքյսը եր ա կենում, շորերը կյենում, պինջակը յոր օնըմ, թափ տամ, կյենում, ետ տրեռնում կյամ Շուշի-Ղալան, էն մին քըշերը համին էտ թախտին տնատարն ա քոն ինում։ Ուռռութանա, վեր արևը տամ ա էտ թախտին քըշտի ակուշկավը, էտ տնատարն էլ օզում ա թա եր կրենա, ըտրա աշկըն ա ընգնում թախտին տակին մին պըծրպածին ընելիս պեն։ Յոր ա օնըմ եշում, տեստեն շոռ տամ, ծրնդըր-թիթև անում, ընգուճին տրնում, էլհա մին լավ եշում-տեսնում ուրան հորը պատկերըն ա...

Տու մի ասիլ, հիլի տրեսած չի, էտ վեր ուրան տեսնում ա,

www.naregatsi.org

ինքյըն էլ շատ նման ա ինձում ուրյան հորը, գյուդում ա թե հորը պատկերն ա։

Յոր ա օնում պաչում, պըչպըչորում, թե.—Ա՛ հաբր, բա խե՞ մրեռեր, բա քյըեզ հո՞ւ ասից մրեռե, էշիտ հո՞ւ չու ասից, հո՞ւ ասից տեղտ ծոխ ա, եր էն ղոլին նստե, վեր տու մրեռեր։

Իտի մին խրեզյ դըրդըհյան ա ինում, ետնան էտ հիլին տինում դոշակին տակեն, կյեղում։ Իտի ամման ուռուբթանա հանում ա, պըչպըչորում էլհա կյեղում։

Մին օր էլ կընեգյը դուլմիշ ա ինում, ասում ա. — էտ հի՞նչ ա, մին ինձ տո տեսնամ, վեր իտի պըչպըչորում ըս։ Մարթը տամ չի, էլհա կյեղում ա։

Վեր մարթը քյինում ա հյանդը, էտ կնեգյը դոշակին տակը պըտրռում ա, հիլին հանում, յեշում, տրեսնում մին կընգա պատկեր ա, չունքի ուրյան պատկերը հիլումը տրսնալավ, գյուդում ա, թե մին օրիշ կընգա պատկեր ա.

Ասում ա. — Հալբաթ տոն կըկյաս, ա մարթ, յըես քու դիվանըտ կանիմ, մհենգյ էլ սիրական ը՞ս պահում։

Էտ կնեգյը սաղ օրը տեղը-տեղ չի տամ, թե նստե։

Ուրուգյունը մարթը նղացած հյանդան կյամ ա, կնեգյը յրա յա տամ, կըռեվ քցում, թե.— Մըգամ տու սիրական օնի՞ ս...

Մարթը ուրթունն ա օտում, չըքըչոք անում, ասում.—Յըես խաբար չըմ իտի պենի, յըես սիրական չօնիմ...

Կնեգյը թե.— Չէ, վեր չէ սիրական օնիս հալա խոսում էլ ը՞մ, օղում ը՞ս հըստադիմ։

Էտ կնեգյը քյնում ա թախտին դիշակին տական հիլին հանում, մարթին ըռաշկեն տինում։

Մարթն ասում ա. —

— Տնաքանդի կնե՞գյ, էս հու իմ հոր պատկերն ա, բեղավեր, մրքավեր։ Պա քու ըստինտ-ընդինտ, պա նհախ տեղան տոնը խե՞ կըռեվ ըս քցում։

Կընեգյը թե. — Չէ՛, վեր չէ՛, տա կընգա պատկեր ա, դե վեր էտքան ասում ը՞ս, ինձ տո մին էլ եշիմ։

Վեր մին էլ ա եշում, լափ հավան կլխին ա տամ, ըսկսում ա ճըղճըղալը, բըղբըղալը թե. — Քու սիրականետ պատկերն ա։

Սկսվում ա տուրուբթակը։

Վերչը քյնում ըն շենին տերտերին կոշտը, կանչում տոն, վեր կյա կործը քննե, տեսնա հո՞ւ վա դուզը, հո՞ւ վա սոտը։

www.naregatsi.org

Տերտերը լոխ ըսկանում ա, ասում. — Ա՛ վերթի՛, էտ զատը ինձ տո տեսնամ հոնր պատկեր ա։

Հիլին յոր օնըմ, եշում, տեսնում մին մըրքավեր տերտերի պատկեր։

Նմնցընում ա Շուշի-Ղալին առաչնորթարանումը նստած վարթաբեդին, ասում. — Ա՛ վերթիք, քյընեցիք ծըեր տանը դինջ կացիք, սա հու մըեր վարթաբեդին պատկերն ա։

Ըտեղ էտ տերտերը իրեսին խըչըկընքում ա, էտ պատկերան պաշում, տանում ժամումը տինում, ամման ուտութանա ժամ ասելիս եշում, իրեսին խըչըկընքում, դերացուն էլ առաչին խունգ ա ծըխում...

www.naregatsi.org

68. ՀԱԹԵՐՔԻՆ ԻՐԵՔ ԴԵՐԸ

Ինիս ա, չինիս, մին շեն անըմը Հաթերք։ էտ շենին ժողովուրթը էնքան խավար ըն ինիս, վեր ուրանց շենին ըլած-չըլած իրեք դերին նըհախ տեղան կուտուրես ըն։ Դե տես, հո՞ւնց ա ինիս։

էտ շենացեքյ ըսես ըն, վեր պերեքյ տանիքյ աղ վարինքյ, հանցու վեր ամմեն դռնում քյինինքյ վեչ Նախճըվանան չըրչըրվելավ աղ պիրինքյ։ Տընես ըն մին խամ տեղ աղ շաղ տաս, վըրես։ էտ արտում տեղեն զիզ ա փըսնես։ Ըտահանք գյիդաս ըն, թա լըհա աղը էտ ա։ Քյիս ըն տըսնաս էտ տեղեն զիզուն յըրան պըրթպըրթոտ ճանջեր ըն նըստալ։ Տահանք գյիդաս ըն, թա էտ ճանջերը աղեն արտը փըչըցնիս ըն։ Ը՛ր ըն կընաս թորավ-թըրփանգյավ քյիս, թա հանցու վեր ճանջերը կըտորին։

Քյիս ըն, նի տռնաս արտը, կոխ տաս, ճանջերեն թըվես, փըխչըցընես։ Բիրդան մին ճանջ քյիս ա մեծ դերեն դոշին վեր կյաս։ Դերըն ուրան ախպորը ծեռքավ իմըցնես ա, վեր թըրփանգյըն յըրա անե, ճանջեն ըսպանե։ Ախպերըն էլ թըրփանգյը թուշ ա ընես, ախպորը սըրտան տաս, հանցու վեր ճանջեն ըսպանե, ամմա ուրան ախպորը՝ մեծ դերին ա ըսպընես։

էտ պըտրհմունքանը ետը ընցնես ա մին խիլլա վախտ։ Ը՛րգինքյը թուխպես ա, իրիքյնակը ըրվաս չի՞։ Շենացեքյ մըսլհաթ ըն ընես, վեր քյինին շոռ կյան, իրիքյնակը քըթենան։

Քյիս ըն, շատ շոռ կյաս, խրեգյ շոռ կյաս, ըտ էլ աստուծ ա գյի-

www.naregatsi.org

դաս։ Մին էլ քյիս ըն մին քըրըտակու յիշիս, տըսնաս, ըտեղ մին պեն ա պըծըպածի ընես։

Գյիդաս ըն, թա էտ իրիքյնակըն ա։

Պիրիս ըն մաշնակ դերին վըննեըան փըռնես կլոխը նի քըցիս, հանցու վեր իրիքյնակը փըռնե, տուս օնե։ Տու մեր ասել, էտ պըծըպածե անողը կյուլու աշկեր ա։ Կյուլը բուրդան դերեն կլոխը քըցիս ա ըռնխը։ Տուակյուսին մարթիքյը վըննեըան փըռես ըն, ծիքյ տաս։ Բուրդան կլոխը պուք ա կյաս։ Դերին տուս ըն օնես, տըսնաս կլոխը յըրան չի՞։ Տըրանք գյիդաս ըն, թա դերը տանան առանց կըլոխ ա տուս եկալ։

Քյիս ըն դերըկընդանան հըրցընես. — Ա՛ դըրաչեն, դերը վեր տանան տուս ա եկալ, կըլոխը յրան ա իլա՞լ, թա չէ՞։

Դըրաչենըն ըսես ա. — Յրես գյիդաս չըմ կըլոխը յրան ա իլալ թա չէ, մինակ փըռթուշ օտելիս տեղը մըրոքը տըմբտըմբացալ ա։

Տանան վեր տըսնաս ըն դերը առանց կլխե մըռնիս ա, տընես ըն թըղես։

Հաթերքըմը թոխալ օրեր շատ ա ինիս։ Գյիդաս ըն, թա էտ արտերեն վնաս կտա։ Ժողովուրթեն հըվըքես ըն, ամմեն մինը մին պեն ա յոր ունես, վեր քյինին սարեն յըրա վըեննը կացած թուխպեն թըկելալ ետ տան։ Էտ կուճի դերը մին ծակ մաս ա յոր օնես, քյիս։ Ժողովուրթը գյիդաս ա, թա վեր մասը ծակ ըլած չի ինի, թոխպը ետ կըտեռնա։ Գյիդաս ըն, թա թոխպը լոխ էտ ծակավըն ա եկալ։ Էտ կուճի դերին էլ ըն սպընես։

Մըհենգյ ուրանց կյիժոթունան էտ իրեք դերին էլ կուտուրես ըն։

Դե ետնան տըսնաս ըն, վեր ուրանց վարած արտերը վեչ մին պեն չի տըվալ, էնքան կոխ ըն տըվալ, վըննատակ ըրալ, ըսես ըն. —Դե մըեր բախտն էլ իստի յա իլի՞, Ճարտարը հացավ լիգյը, Գիշին կյինավ լիգյը, մունք էլ իստի ծըռքըռնես տեռտակ, դաղարգյունե։

www.naregatsi.org

69. ԱԺԴԱՀԱԿԸ

Ինձում ա, ինձում չի մին կնեգյ, մին մարթ ա ինձում։ Էս կնեգյ նան մարթը մինը մինու նհետ փըսակվում ըն։

Շատ տարե յա ընցնըմ, էս կնգան նան մարթեն խոխա չի ինձում։ Վերչը շատ վախտ ա ընցնըմ, տահանց մին խոխա յա ինըմ։ Էն էլ մին տղա խոխա։ Հնգեր, հրևան, պարիկամնի, ծանոթնի, հրվաքվում ըն, վեր ըշկըլնւսիքյ տան էտ կնգան նան մարթին։

Կյուվուղնեն հի՞նչ ըն տեսնըմ, վեչ թա խոխա յա, լափ մին պատիժ, հրաշկ պեն, վեր ինդի պեն հալա ուրանց օրումը էն ա վեր տեսնըմ ըն։ Կյուվուղնեն՝ հնգեր հրևան, պարիկամ, ծանոթ, քշըռում ըն, տեսնըմ խոխան հենգյ փուբանոց ա։

Տատմարըն ասըմ ա. — Ստի խոխա հալա ես տեսալ չը՞մ։ Էս ա հարնւր քռասուն տարե յա, վեր տրտմրրոթուն ըմ անըմ, հալա յըես մորան իլած սրհաթաս չուրու մրհենգյ հենգյ փուբանոց խոխա չըմ տեսա՞լ։ Ըստրան անըմը բեդմա մին հենց անըմ տինինքյ, վեր իստի պատիժ պեն ա, վերչումը ստրանա լալվ տղամարթ տունա կրկյա։

Ստի պենի ըշկըլնւսիքյ կյուվուղնեն ըրմանում ըն։ Սահանց նհետ մին մեծ պառավ մարթ ա ինձում, Սամսոն ընումավ։

Սամսոնըն ասըմ ա. — Ա՛ ժողովուրթ, յըես իմ օրումըս ստի պեն տեսալ չըմ, ամմա ճարըն էս ա, վեր սա հիբը օզում ա ինի՞, վերչումը ածդահակ յա տունա կյըլական, յըես ըտրա անումը տնձում ըմ Աժդահակ։

www.naregatsi.org

Կյուվուղներան մին օրիշըն ասըմ ա.— Պա վեր Թամամեն հենգյ փութանոց մին խոխա յա իլնալ, կաթն ա՞ իննական՞, վեր ծեծ տա։

Թամամ բաջին ասըմ ա. — Իմ տոնըս, տեղըս մատաղ իմ քլես, վեր աշկես սըվը-սիսպտակն ա։ Վեչ թա՛ մինակ ծեծըս, իմ ջանըս էլ ա մատաղ, թաքյ կենա, խոխաս մըծանա։

Թամամեն հետե շատ տիժեր ար։ Ինքյը միշև խոխան պիրիլը ըշխըդելիս ա իլնալ հարուստ Միրզին հետե։

Իրեք օրանը հետ Միրզան ծեն ա տամ Թամամեն նան Թամամեն մարթեն, վեր քյինան ըշխադին. Թամամը քըղըհան անե, ուրան մարթըն էլ վըղապեն անե ուրան մհար։ Ստի տնջվիլավ, չըրչըրվիլավ Թամամ բաջին շելնակն կապում Աժդահակեն, քյընամ քըղըհան, կյամ։ Մին թահրալ Աժդահակին պահում ա, մծըցնըմ։

Էտ վախտը շկոլումը կընդ-կընդ հարուստներեն խոխենքյըն ին թողում կաթրթին, մին պեն գյիդան։

Խեղճ Թամամ բաջուն խոխան թողում չըն կաթրթի։

Ասըմ ըն. — Հանի ծըծա հետ չըս ըրալ։

Հարուստնեն ստի մհանա փունելավ, թողում չըն, թա խեղճ քյանիր Թամամ բաջուն տղա Աժդահակը կաթրթի։

Աժդահակը քառասուն տարի ծեծ կերավ, քառասուն տարանը հետ Թամամ բաջին ծըծա հետ ըրավ, տվավ շկոլ, վեր կյիրըճանանչ տեռնա։

Աժդահակը նի մտավ շկոլ, ըշտեղ սվերըմ ին դովլաթատարերեն, հարուստներեն խոխենքյը։

Մունթերը տնազ ին անում, ասում, թա. — Համութ չի՞, վեր քառասուն տրեկան, եկալ ըս մինինջի մունթը տեռալ, օխտը տրեկան, օթ տրեկան խըխոցու հնգյեր ընգա՞լ։

Էնքան տնազանը հետ Աժդահակը կյամ ա ուրան ապորը կոշտը, ասըմ. — Ա՛պա, խոխենքյը, էն շկոլեն մունթերը ինձ տնազ ըն անըմ, թա խե՞ եկալ ըս օխտը-օթ տրեկան խըխոցու հնգյեր տեռալ։

Հայրըն ասըմ ա. — Բալա, ապան քե մատա՞ղ, նահանք հի՞նչ մունթեր ըն, հի՞նչ խոխեքյ ըն, վեր քյըեզ տնազ ըն անըմ։ Հու վեր քյըեզ տնազ անե՞, մին սիլլա տո ուրխեն, էլ տնազ չանել։

Էքյսը քյունանամ ա շկոլ, էտ խըխոցան մին քանե հոքյի տնազ ըն անըմ։ Վեր տնազ ըն անըմ, Աժդահակը սիլլա յա տամ, տահանց կլինանեն պուք ա կյամ։ Ստի մին քանե մունթու կլինա պուք ա տամ, մինակ մեհետ սիլլա տալավ։ Ծեն ըն տամ քյուխվենե։

Քյոխվան կյամ ա, թա փըռնե Աժդահակեն, թա. — Խե՞ խըխոցու թխալ ըս, ապանա՞լ։

www.naregatsi.org

Աժդահակը թխում ա, քյուխվեն կլոխըն էլ պուք տամ։ Ծեն ըն տամ պրիստավեն, գարադավոյեն, դըրղեն, վեր մին ճար անին, էլ քյոխվա չի թողալ, էլ հարուստու մունե չի թողա՛լ, էլ դարդա չի թողալ, լոխճին կտորալ ա՛։

Պրիստավըն օղում ա մին հնար քթենա, առանց Աժդահակեն նհետը խուսելու, ընդրա կլոխը բադու տա։

Նի յա մըննըմ շկափին մեչը ծեն տամ, կակուղ լռնզվավ ասըմ. — է՛յ, քյըհղ ղարկինքյ քյընա ծմական միկա փադ, ճեխ պեր բաքմաղ խփիլի հետե։

Պրիստավըն օղում ա, վեր ղարկի մին հանց ծմակ, վեր ասլաննեն օտին, թողին վեչ, թա սաղ-սըլըմաե կյա տոն։

Պռնրում ըն մին ըրբա, մին ճոխտ կյումաշ տամ, վեչ ցակատ ըն տամ, վեչ կացեն։ Աժդահակը ըրբան լծըմ ա, քյընամ։

Շատ ա քյընամ, խրեգյ ա քյընամ, հանում ա մին քաղաք, անըմը Շուշի։ Էտ քաղաքան անց ա կենըմ, հրանըմ մին ծմակ։ Էտ ծմակը մին հանց ծմակ ա ինում, վեր ընդեղ քյընողը էլ ետ չի կյամ։ Հինչ մարթ քյընամ ա, ըսլընննեն օտում ըն։

Էս Աժդահակը քյընամ ա էտ ծմակը, ըրբան ըտեղ տունա ա օնում, պըրծընում, սկսում ա փադ անելը, էն էլ ծեռքավ։ Քառասուն-իցծուն կյեղ հասե փըղերեն ծեռքավ շըրըմփըցընում ա, կյերանկյերան փադերը նի տամ ըրբան, կպոտում, պրծընում, ինքյը քոն ինըմ։ Հենգյ քշեր-ցիրեկ քոն ա ինըմ։ Ջռնրենանըմ չի։ Սաղ ժողովուրթը գյուդում ըն, թա ըսլընննեն կերալ ըն։ Հենգյ օրանը ետ Աժդահակը քունա զըրթնանում ա, տեսնըմ կյումաշ չիկա։ Կյումըշներեն ըսլընննեն կերալ ըն, ծմակումը մին թալա տեղ նստոտալ։ Էս Աժդահակը ըսլընններեն փըռնոտում ա, ըրբան լծըմ, պիրում քաղաքը։ Ժողովուրթը զրմանում ա, վեր Աժդահակը ըսլընննուն պերալ ա քաղաք։ Էս պենը տարածվում ա սաղ ըշխարքումըս։ Սա թողինքյ ըստեղ, խոսինք պրիստավան։

Պրիստավը տեսնում ա, վեր Աժդահակը էլհա ծմական ետ ա եկալ, էլ օրիշ հնար չի քթենում ընդրան պըտժելի։ Պրիստավը վերչումը կյամ ա էն մթկեն, վեր կարքադրե թամամ բաջուն, վեր Աժդահակեն փսակե։

Տա կանչըմ ա, ասըմ.—Թա՛մամ, հե՛ թա՛մամ, տու օղում ըս աշխարքըս քանդի՞ս, խե՞ տղետ փսակում չը՞ս, վեր մին խելքու կյա, էլ քյոխվա չի մնաց, էլ հարուստ չի մնաց, էլ դարդա չի մնաց, ախեր լոխճին էլ կտորի՞ց։

Թամամ բաջին քյինամ ա պրիստավին կոշտը, ասըմ. — Պրիս-

www.naregatsi.org

տալ աղա, յըես հո՞ւնց անիմ է՞, մին պառավ կնեգյ ըմ, յըես էլ էտ ըմ օղում, վեր իմ խոխաս փսակվե, ինձ պահող չիկա՞։

Թամամ բաջին կանչում ա ուրյան Աժդահակեն ասում. — Բալաս, մաման քե մատաղ, պա յըես պռավալ ըմ, քու հայր պռավալ ա, մրեզ պահող չիկա, պեր քյըեզ փսակինքյ, քյըեզ մըհար մին ախճիգյ օղիմ, վեր ինձ պահե։

Բեդմա ասիմ, վեր Աժդահակը մին շատ պարի մարթ ար դրի ուրյան հայրը, մարը, ծընողներեն սիրում ար։

Ասըմ ա. — Ա՛ մար, բա տու խե՞ բիդիս ինձ փսակիլ, յըես ինքյս ինձ լավ կըփսակիմ։

Էս խոսկերքըն ասում ա, պըրծնում, քյընամ մին ըրկաթե քսան փութանոց մհակ զակազ տամ, մին գյորդա, վեր պրուժինավեր ա ընում, հիշքան պեց ա թողում, էնքան էլ էրկընանում ա։ Մին էլ զակազ ա տամ մին քյանդիր, հենգյ հայրուր մետր էրկընոթունավ։ Յոր ա օնում էս կործիքնեն, ճընապա ընգնըմ, քյընամ, վեր ախճիգյ օղի։

Շատ ա քյինամ, խրեգյ ա քյինամ, ախրը տուս ա կյամ հղեն քյինամ։ Տեսնըմ ա մին մարթ էնքան հունարու, վեր ղենգյնավ փոկ ա քաշում։

Աժդահակն ասում ա. — Ա՛խպեր տղա, էտ հի՞նչ մեծ հունար օնիս, վեր ղենգյավըտ փոկ ըս քաշում։

— Պա տու էտ ը՞ս ասում, ախպեր տղա, Աժդահակը ըսըննեն պերալ ա քաղաք։

— Էտ լհա՛ յըես ըմ, մին չինինքյ, էրկու ինինքյ, քյընանք ախճիգյ օղիլ։

Էս էրկուսավ քյինամ ըն։ Շատ ըն քյինամ, խրեգյ ըն քյինամ, մին էլ տեսնում ըն մին մարթ հղեցը ղրաղեն նստած, կյումաշու կաշվա, էն էլ էն թաշհրը կաշվա, հստոթունը տասը սանդիմետր, տրեխ ա անում։

Աժդահակը ուրյան հնգյերավը պարով ա տամ, ասում.— Ա՛յ մարթ, հի՞նչ մեծ հունար օնիս, վեր առանց բիզ, առանց տենակ, տրեխ ըս անում էտ թաշհրի կաշվա։

— Տու էտ ը՞ս ասում, ախպեր տղա, Աժդահակը ըսըննեն պերալ ա քաղաք։

— Էտ հենց յըես ըմ,— բադասխանում ա Աժդահակը.— էրկու չինինքյ, իրեք ինինքյ, քյինանք, ախճիգյ օղինքյ։

Իրեքավ շատ ըն քյինամ, խրեգյ ըն քյինամ, մին էլ տեսնըմ ըն

www.naregatsi.org

մին մարթ հղըցավը փախճում ա, մին ճղացու քար մին վեննը քցած, մինն էլ էն մին վեննը քցած։

Հետան ծեն ըն տամ. — Արա հե՛յ, էտ հո՞ւ վը՞ս, թո՞ըրն ը՞ս փախչում, վեննը կա՞ց, տեսնանք հի՞նչ մարթ ըս, վեր իտի ժաղահա յըս։

Մարթը վեննա կենում, բաղասխանում.— Արա՛, պա տու էտ ը՞ս ասում, Աժդահակը ըսլըննեն պերալ ա քաղաք։

— Էտ հենց յըես ըմ,— բաղասխանում ա Աժդահակը,— իրեք չինինքյ չորս ինինքյ, քյընանքյ ախճիգյ օղինքյ։

Չորսավ շատ ըն քյինանմ, խրեգյ ըն քյինանմ, մին էլ ըն տեսնում մին մարթ նստած հղըցեն ղրաղեն, Մռավ սարեն նման մին սար մին ծեռքեն, Քյիրս սարեն նման մին սար էլ էն մին ծեռքեն գյրվանքեքյ ա շինում։

— Էտ հի՞նչ ըս շինում.— հըրցընում ըն ընդրանա։

— Գյրվանքեքյ ըմ շինում, մինը մին խրեգյ պակաս ա։

— Էտ հի՞նչ օժավ ըս, վեր էտ հսկա սըրերան գյրվանքյա յըս շինում։

— Պա, տու է՞տ ըս ասում, ախպեր տղա, Աժդահակը ըսլըննեն պերալ ա քաղաք։

Աժդահակըն ասըմ ա. — Էտ հենց յըես ըմ, չորս չինինքյ, հենգյ ինինքյ, քյինանք ախճիգյ օղինքյ։

Հենգյ աժդահա շատ ըն քյինանմ, խրեգյ ըն քյընանմ, քառասուն սուրկա հղե յըն քյինանմ։ Տրանց մեծը Աժդահակն ա ինում։ Սրանք հենգյ հոգի, էնքան քյինանմ ըն, հրսնում ըն մին տեղ, եշըմ ըն, տեսնում, մին երգյիր, վեչ մարթ կա, վեչ սաս-սեմանր, մինակ շատ հեռ ըրվամ ա մին պանչանր սիպտակ պեն, տափեն վեր ընգած։ Էտ պանչանր պենը շատ պիծի յա ըրվամ։ Քանե քյինանմ ըն, էնքան մուտունալավ էն սիպտակ պենը մըծանում ա։ Քառասուն սուրկա քյինանչանը ետը հրսնում ըն էն սիպտակ պենին կոշտը, տեսնում հի՞նչ, մին կալի չանք պանչանր քար, վեր ընգած։ Տեսնըմ ըն էս քարեն մեշ տեղան ծակ ա, էն ծական քըլքըլալի ծոխ ա տանա կյամ։

Էս հենգյ աժդահեքյը, մնամ ըն մաթանչ, ցմաքվածծ.

— Բա էս հի՞նչ պեն կինի, քընենքյ ըն անըմ, մին-մին եշում, վեչ մին պեն կարում չըն գյիդան, ճոկին, թա ստեղ հի՞նչ կինի՞։

Ստահանք լոխ եշում ըն Աժդահակին, թա տեսնան նա հի՞նչ կասե։

Աժդահակըն ասում ա. — Տղեք, ծրեզ տեսնամ, ղուվաթավ էս քարը բեդմա յոր օնինքյ, տեսնանք ըստրա տակեն հի՞նչ կա։

www.naregatsi.org

Չորս ղվաթլու ամդամհեքյը մնամ ըն մաթաձլ, օղում ա թա սահանց լղեն ճաքե, սահանց սըրտերնին օղում ա, թա ընգնե հետե տեղ Ամդահակեն էս խոսկերքեն յրան։

Մնամ ըն մըտըծնելիս, թա հո՞ւ կըկարե էս ղբնե քարը պիցիրցնե։ Ախըը շատ ըն մաթաձլ մնում, խրեզյ ըն մաթաձլ մնում, տեսնում ըն մին խրեզյ ունրանց անա հետե վրինի քռասուն կյումաշ ա ըրվամ։ Սահանք փռնոտում ըն էս քռասուն կյումաշին կտորում, օտում։ Էտքան մնը մին սհաթումը օտում ըն, ուժուվանում։

Ամդահակըն ինքյը ունրան ասում ա. «Հարկավեր ա սահանց լոխճին օժը փորցած ճոկ-ճոկ»։

Պունրում ա ունրան էն սուվթա հունաորու հնգյերը, վեր առանց տենակ, առանց մին սկեն, ղեյնավը փոկ էր քաշում, ասում. — Ախպեր փոկ քաշող, մին էս քարըս պըցըրցրու, տեսնանք ըստրա տակեն հի՞նչ կա։

Փոկ քաշող ամդահան փորցում ա, կարըմ չի էս քարը պըցըրցընե։

Երկուինջի հնգյերին էլ ա ասըմ, էն էլ չի կարըմ պըցըրցնե։ Իրեքինջինը՝ ճղացեն քարերը վեննները քցող ամդահան էլ չի կարում պըցըրցընե։

Չորսինջի՝ սարերը գյըրվանքյա շինող ամդահեն էլ ա ասում. — Ախպե՛ր տղա՛, էս քարը մին հանց եր կալ շպրտե, վեր էլ ըտեղեքյ ըրվա վուշ։

Սա էլ փորցում ա, մին խրեզյ տեղան տունրունր ա տամ քարը, էլհա կարըմ չի պըցըրցնե։ Հերթը հըսնում ա ունրան, քառասուն տարե ծեծ օտող, հարուստներեն մին սիլլամ կտորող, ըսըննեն քաղաքը պիրող Ամդահակեն։

Էս մարթը էն ջուտա ամդահա ար, վեր մին դռնում նամփասը քաշից բիդի փորը, մին ծեռքըն էլ տիրամ քարեն տակեն, միշև նամփասը տունա ածելը, էս քարը մին ծեռքավ հանց թող ըրավ, վեր էս քարը ունրանց անա քռասուն վերստ հետե ընգավ։ Հի՞նչ ըն տեսնում, տեսնում ըն մին վեր, մաշան ծոխ ա տունա կյամ։ Էս վերեն ծակը շատ ա սահանց զըրմըցնում։

Ամդահակըն ասում ա. — Բեդմա նի մըննինքյ էս վերը, տեսնանք տափեն տակեն հի՞նչ կա, վեր ստի ծոխ ա տունա կյամ։

Չորս ամդահքյը էլհա վախըմ ըն։ Հի՞նչ անին, բեդմա Ամդահակեն ասածը կդարին։ Էլհա ընդի, հունցու վեր քարեն յրա յա սահանց օժը փորցալ, օղում ա ստեղ էլ փորցի։

Պիրում ըն փոկ քաշող հունաորուվեն կըռնըտըկերան կապում,

www.naregatsi.org

քյինդիրավ կախ տամ էս վերեն մաչընըվեր։ Տա պատառ թըքանըմ ա, վեր քյինաամ ա փոսեն մաչընըվեր, սկսում ա ճըղճըղալը. — Վա՛յ էրից, վա՛յ էրից, վա՛յ էրից։

Էս խոսկերեն դաւդաւն ըստրան տուս ըն օնում։ Պիրում ըն էրկունչինը կախ տամ՝ տրեխ քաշող ամժաւհեն, վեր քյընա տեսնա տափեն տակեն հի՞նչ կա։

Շատ ա քյինաամ, խրեգյ ա քյինաամ, մին էլ ըն տեսնում էլհա ճղղաց. — Վա՛յ էրից, վա՛յ էրից, վայ՛ էրից։

Ըստրան էլ ըն տուս օնում։ Ճղացեն քարերը վրենները քըցող ամժաւհեն ըն կախ տամ, սա էլ նահանց նման կարում չի քյինա, էլհա տուս ըն օնում։ Հերթը հըսնում ա սարերը գյրվանքյա շինողեն։ Ըստրան էլ ըն կախ տամ, սա էլ չի կարում տիմանա, շատ ա ճըղճըղամ.

— Վա՛յ էրից, վա՛յ էրից, վա՛յ էրից, էլհա տուս ըն օնում։

Հերթը կյամ ա հակա ամժահա Ամժահակեն։

Էս մարթը ուրաւն հնգյերունցը ասում ա. — Իմ կռնըտրկերաս կապեցեք, կախ տվեք, հիշքան ասիմ. «Վա՛յ էրից, վա՛յ էրից», ինձ տուս չօնիք, կախ տվեք քյինաամ, մին տեսնամ վրեղեն տակեն էս հի՞նչ երգյիր ա, վեր ըստի ծոխ ա տուս կյամ։

Ամժահակը յոր ա օնում ուրաւն քսան փութանոց ըրկաթե մհակը, գյորդաւն, կախ ընգնում, քյինաամ։

Շատ ա քյինաամ, խրեգյ ա քյինաամ, հըսնում ա տափեն տակեն մին երգյիր, տեսնում ինքյը վեննը կացած ա վեց տուան ըռաշկե։ Ամժաւհակը քընեննքյ ա անըմ, թաւ. «Ցրես հի՞նչ անիմ, հո՞ւնց անիմ, վեր նի մընննիմ էս տուները, տեսնամ ըստեղ հի՞նչ կա»։

Ամժահակեն հնգյերունքը հաւլա եշըմ ըն, տեսնան, թաւ էն հի՞նչ խաւբաւր ա պերում։

Առաչին տըռնավը նի յա մընննում, տեսնում մին զարմանալի պեն։ Մին օշափ կլխը տիրած մին պառավ կնգա ծընգան, օխտը օրվան քոն նի մտած, մին ղոլեն էլ ստոլեն յրան մին սերուն ախճիգյ։

Ամժահակը ինքյըն ուրաւն ասըմ ա. «Մունք հենց ախճիգյ օզելի յընք եկալ, էս լաւվ տեռավ»։ Էտ դաւրըմը տեսնում ա պատան կախ տված գյիբին յըրա կյիրած քյոհնաւ հայ լուզվավ, վեր էտ սերուն ախճիգյը մեծն ա՝ ուրաւնց քղաքումը, հորը պըլըտներան մին օթախըմ նստած, օշափըն էլ ուրաւն պառավ կընգանավը ընդրա յրան պահակ ա տիրած։

Ամժահակը սազ ա անում ուրաւն քսան փութանոց մհակը, վեր օշափեն կլխեն թխե, սըտկըցնե։

www.naregatsi.org

Պառավը Աժդահակեն ասում ա. — Ա՛յ աստուծու ղոնաղ, տու հիշտեղա՞ն ըս ընգալ ըստեղ, սուսըփուս տուս եք, թա չէ օշափը եր ա կընննական քյըեզ մեհեստան կոլ տա, քյըեզ մըեհման անե։

Աժդահակը եշից վուշ պռավենն խոսկերեն, հանից քսան փութանոց մհակը, մին հետ ինդի շըրըխկըրալ, օշափեն կլխեն, վեր սաղ պատառը մնաց կեռեքյը։ Պըլատեն պռավեն էլ սպանից, ախճիգյը տուս կալալ էն ծակսեն ռեխը, հիշտեղ չորս ամժահեքյը քյանդիրը կախ ըրած պահում ըն, թա տեսնան Աժդահակը հի՞նչ ա ասըմ ուրանց։

Սերուն ախճիգյը թողում ա ըտեղ, էրկունջի տոռնըն ա օզում պեց անի տեսնա ըտեղ հի՞նչ կա։ Թըխում ա, տոռնը կոտրում, նի մըննում պալատը, տեսնում ընդրա նման մին սերուն ախճիգյ, ամմա օշափը իրեք օր ա մնացալ, վեր քունուտեղա եր կենա։

Պառավ պըլըտականը նստած ա օշափեն կոխկեն, վըխցընում ա Աժդահակեն, թա. — Օշափը էս ահաթեն եր ա կընննական, քյըեզ կոլ տա։

Աժդահակը վախըմ չի։ Թխում ա։ Մին թխելավը սպանում օշափեն, պըլըտական պռավեն։ Սերուն ըխճըկանը տուս օնում, պուրում առաչին ըխճըկանը կոշտը, վըխցընում ա, վեր միչև ուրան կյալը վեչ մինը տեղան տուրուր չի կյա։

Ետնան նի յա մըննում իրեքինջի տոռնը։ Էլհա ինդի տեսնում ա նահանց անա մին սերուն ախճիգյ։ Իրեքինջի օշափը քոն իլած, խրեգյ ա մնացալ, վեր եր կենա, պառավն էլ կոխկեն, վըխցընում ա Աժդահակեն։

Աժդահակը եշում չի, սըտկըցնում ա օշափեն էլ, պռավեն էլ։ Սերուն ախճիգյը պուրում էն էրկու ըխճըկանը կոշտը։

Աժդահակը չորսինջի տոռնավը նի յա մննում, տեսնըմ էլհա մին սերուն ախճիգյ։ Էլհա մին օշափ քոն, մին պառավ քըշտեն։ Էտ ըխճըկանը դոռդոն կտորում ա էտ օշափեն էլ, պռավեն էլ, ախճիգյը էլհա պուրում էն իրեք ըխճըկանը կոշտը։

Աժդահակը նի յա մըննում հենգյինջի օթախը, ըստեղ մին ախճիգյ ա տեսնըմ։ Էս ախճիգյը լուսնինգյին տեղը իշեղ ա տամ, ըրիքյնակեն տեղ լուս ա տամ, սերունօթունը մարթու ջան ա էրում։ Էլհա մին լոխճան մեծ օշափ քոն իլած, մին պըռավու կոխկե։ Աժդահակը սպանում ա օշափեն նան պռավեն, էս ախճիգյը ուրան հետե յա յոր օնում։ Վեր պուրում ա էն չորս ըխճըկանը կոշտը, էս ըխճըկերքը մնամ ըն մաթ մնացած, վեր ստի կեղեցկոթուն կա աշխարքումըս, բա էլ ուրանք հինչացու յը՞ն։

www.naregatsi.org

Մհենգյ խոսինքյ չորս ամդաշհաներան։ Ըստրանք սկսում ըն քյանդիրավ էս սերուն ըխճըկորանցը տունս պիրիլը։

Հերթը հանում ա հենգյինջի ըխճըկանը, վեր տունս կյա, էտ վերան։

Էս ախճիգյը օզում ա, վեր առաչ Աժդահակին տունս օնին, քանի վեր ուրյան կյեղեցկոթունավը տարվելու չըն էտ չորս ամդաշհեքյը։ Աժդահակեն էտ վերան տունս չըն ուննական։

Էս ախճիգյըն ասում ա. — Սիրելի Աժդահակ, ինձ վեր տունս օնին, յոր ըն ուննական փախչին, քյըեզ թողին ըստեղ, տու եք, տունս եք, ինձ էլ տունս կալ, եր կալ քյընանք։

Աժդահակը հվատում չի՞, ասում ա. — Տու տունս եք, ինձ իմ հնգյերունքըս տունս ըն ուննական։

Հենգյինջի ախճիգյըն ասում ա. — Սիրելի Աժդահակ, ինձ վեր տունս օնին, քյըեզ տունս չըն ուննական, յըես վեր տունս կյամ, ըստեղավ կըքյինաս, ըռաշկետ մին տոռն ա իննաական, նի կը մննիս ընդեղ, մին կալ ա իննաական, էրկու վեչխար լծած, կամները քըշելիս, ջահտ կանիս սիպտակ վչխարեն յրան նստիս, վեր քյըեզ լունս աշխարհք հանե, թա չէ, վեր ընգնիս սև վչխարեն յրա, քյըեզ հանելու յա սև երգյիր։

Ըխճըկանըն ասած էս խոսկերքը կադարվում ա։ Ըխճըկանը չորս ամդաշհեքյը տունս ըն օնում, յոր օնում, փախչում, Աժդահակին թողում ըտեղ, վերեն մաչին։

Խոսինքյ Աժդահակին նեստա։ Էտ չորս ամդաշհեքյը եր կալին էտ սերուն ըխճըկորանցը փախեն։

Աժդահակը մնաց էտ վերին մաչեն։ Քյինաց բիդի վեցինջի օթաղը։ Էն օթաղումը էրկու վեխճար, մինը սև, մինը՝ սիպտակ լծած կամնին, կալ ըն թակում։

Աժդահակը օզում ա, թա սիպտակ վխճարեն յրա նստե, բունդան ընգնում ա սևեն յրան։ Սևըն ընդրան տունս ա պունդում սև երգյիր։

Էտ սև երգյիրումը Աժդահակը քյինամ ա մին պառավ կընգա տոն։ Ընդեղ ծրավում ա, ճունր ա օզում, պառավը քյընամ ա կյուզում, պիրում տամ Աժդահակին, ընդրան հետե, վեր ճունր չի կար էտ ըշխարքումը։

Մին ճունր կար, մաչին մին գյուրզա օխծ, վեր ժողովուրթը քանե հետե ճունր ա յոր օնում, մին մարթ ըն քիցում ըռեխը, ետնան ճունր յոր օնում։ Էս վախտը թաքավերեն ըխճըկանը հերթն ա ընում, վեր բեդմա ըռեխը քցին, ճունր յոր օնին։

Աժդահակը կյամ ա թաքավերեն ըխճըկանը հետե պադրաստած

www.naregatsi.org

տեսը-տենը օտում, ուրյան գորդանը յոր օնում, լենքին պահում, ընգնում էտ ճիրին մաչին գյուրզին ըռեխը։ Գյուրզին կտորում ա ըտեղ, մին տասը սաջին փայդու չանք թուի անում։

Ըտրանա հետը քյինամ ա թաքավերեն կոշտը, ասում. — Ինձ լուս աշխարհք տուս կալ, ինձ մին նպատակ օնիմ։

Թաքավերն ասում ա. — Ցրես կարալ չըմ, մինակ մին պայման կա, թա կարիս անիս, տու տուս կկյաս լուս աշխարհքը։ Էտ պայմանն էն ա, վեր մեր էս երգյիրումը կա մին Ծովինար-ղուշ։ Նա մին էրգյան չինարու յրա պուն ա տիրալ, ճոտեր ըրալ, թառ իլալ։ Մին մեծ գյուրզա օխծ կա, միշտ կյամ ա էտ ղուշին ճոտերը օտում։ Էտ տարե էլ վեր օտե, էլ Ծովինար-ղուշը մարթ չի տուս ուննական լուս աշխարհք։

Աժդահակը քյինամ ա, էտ օխծը սպանում, տասը սաջեն փադու չանք թուի անըմ, ետնան չինարուն տակեն քոն ինում։

Ծովինար-ղուշը կյամ ա, վեր էտ մարթեն սպանե, ճոտերը թողում չին, ասում ըն. — Տա յա մըեզ ըզադալ։

Էտ ղուշը կյամ ա Աժդահակեն կոշտը։

Աժդահակը ասում ա. — Ինձ լուս աշխարք տուս կալ։

Ծովինար-ղուշը ոազի յա ինում։ Ասում ա. — Քյընա օխտը փութ վխճարու տիմակ պեր, օխտը տեգյ ճուր, մաշկես կապե, նստե մաշկես, հիշտեղ ծուվվամ-ծրկըլթամ, մին փութ տիմակ, մին տեգյ ճուր պերանըս կըքցիս, վեր կարիմ քյըեզ տուս պիրիմ լուս աշխարհք։ Վեր մին մըսխալ պակաս ինի, կարել չըմ տուս օնիմ։

Աժդահակը քյինամ ա թաքավերեն կոշտը վխճարու տիմակ օզում։

Թաքավերըն ասում ա. — Իմ վխճըրնես քեզ ղուրբան, քյինա, մրթոտե, ճուրն էլ հանե ընդեղ, վեր ըզադալ ըս, երկալ, հիշքան օզըմ ըս։

Աժդահակը քյընամ ա վխճըրնեն մրթոտում, ճուրն էլ յոր օնում, պիրում Ծովինար-ղուշեն մաշկը կապում, մաչին նստում։ Ղուշը հղե յա ընգնում, հղեցը կեսումը խրեգյ ա մնում, վեր տուս պիրի, վերչին մին տեգյ ճուր նան մին փութ տիմակը օզում ա քցի պերանը, մին տրմակ վեր ա ընգնում։ Աժդահակը ջահտ ա անում, ուրյան վեննենը փափուկ մսան կտրում, քցում Ծովինար ղուշեն պերանը։ Ծովինարը կլոխ ա ընգնում, մին թահրալ տուս ա պուրում լուս աշխարհքը։ Լուզվեն տակեն պահում ա էտ մսեն թիքյան։ Ետնան տուս օնում, տրնում Աժդահակին կտրած վետանը յրա, ուրյան թեփուռան մինը պուք տամ, քսում, լիվյանում ա։

www.naregatsi.org

Ետնան Ծովինար-ղուշը ասում ա.— Ինք առ իմ թեփուռներաս էրկունը, ըշտեղ նեղըն ընգնիս ուրուր քըսի, յըես քըշտետ ըմ իննական։

Աժդահակը ուրան քսան փութանոց մհակը յոր ա օնում, էլհա հղե իննում։

Շատ ա քյինում, խրեգյ ա քյինում, մին էլ ա տեսնում ուրան դավաճան հընգյերունքը էն ըն հազարավեր զորքավ ուրան էն հենգյ ղաշանգյ-սուրուն ըխճըկորցը փսակում, վեր տանին։ Աժդահակը ըտրանց լոխճին կտորում ա, էն լոխ վրեսկեն, հարըստոթունը յոր օնըմ, էտ ըխճըկերքը ազադում, պերում ուրանց շենը։ Ջորսին փըսակում ա, հինգինջինն էլ ինքը յոր օնըմ, նհետը փըսակվըմ։

Ըտրանա ետը Աժդահակը բախտավեր կյանք ա քաշում։

Էն ասթխերավ լիքը երգյինքան իրեք խընձոր ա եր ընգնում. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ էս հաքյաթը լուս աշխարք քըցողին։

www.naregatsi.org

70. ՀԱՐՈՒՍՏԸ ՄԸՆ ԷԼ ՔՅԱՍԻԲԸ

Ընում ա, չի ընում մին հարուստ մարթ ա ընում։ Էտ մարթին կնեգյը խոխա չար պուրում։ Էտ հարուստ մարթըտ մին դինում եր կալալ ուրյան ծառանեն, քյինից էրուշ երգյրնե ապրանքնե ինքյ ունելի, ծխելի։

Հըղեցը տահանք մնում ըն մին շենում, մին քյասիբ մարթու տան։ Ըրուդյունը հաց ուտելի վախտը, էտ քյասիբ մարթին պիծի խոխան կյամ ա տահանց կոշտը, սկսում տահանց նըհետ խաղ անելը։

Հարուստը էտ խուխեն շատ ա սիրում, ընդրան հետե, վեր ուրյան խոխա չօնար։

Էտ հարուստըտ էնքան ա սիրում էտ խուխեն, վեր խուխեն մորը, հորը ասում ա. — Էտ խուխեն տեղ վրեսկե տանք, խոխան մրեզ կըտա՞ք։

Մարթ նան կնեգյ մըսլըհաթ ըն անում, ասըմ. — Վեր տանք, վրեսկեն ինքյ օնինքյ, մրեզ էլհա խոխա կինի։

Ըռուբանա խոխան տամ ըն տրանց, վրեսկեն ինքյ օնում։ Հարուստը ուրյան ծառաներեն նըհետ խոխան յոր ա օնում, քյնում ըն ուրյանց հըղեն։

Հըղեցը պտահում ըն մին բխտըյեշու։ Հարուստը բախտեն եշիլ ա տամ։

Բըխտըյեշին ասում ա. — Տու շատ հարուստ մարթ ըս, ամմա կնեգյըտ խոխա չի պիրում։ Մին քանե տըռնանը ետը մին խոխա յա

www.naregatsi.org

իննաւկան, ամմա քու հարուստութունըտ մին քյսիբու փայ ա տունըլական։

Վեր բըխտըյնշին ասըմ ա, պըրծնում, տրանք միկա տեն ըն կենում, էտ խոխան թողում ծմակեն մաչին, մին ծառու փչակում, ուրանք քյինում։

Էտ հարուստը քյինալանը ետը, քյասիբը ուրան կնգանը նհետ մըսըրհաթ ա անում, վեր էտ վրեսկավը տներ շինին։

Քյասիբը մին քանե մարթ ա յոր օնում, քյինըմ ծմակը, վեր փադ կտրե, պիրի։

Ծմակումը նա լսում ա մին խոխու լացու սաս։ Բիդի ինդի քյնում ա, տեսնում ուրան խոխան։ Յոր ա օնում պուրում տոն։

Տահանք էտ փողավը մեծ-մեծ տներ ըն շինում, մաչին ապրում։ Տղան կյամ ա տեռնում տասնոթ-քսան տրեկան։

Հարուստը ուրան առուտուրը օրիշ երգյիրներում պըռծընելանը ետը կյամ ա տոն։ Անց ա կրենըմ մին խիլլա վախտ։ էտ հարուստը մըն էլ ա որոշում, վեր քյինի նորու, տական էլհա առուտուրի։

Քյնամ ա էլհա էն համան շենը, վեր առաչի դռնումը ըլալ ա։ Տեսնում ա էն քյասիբը լավ-լավ տներ շինած, մաչին ապրում ա։ Քյինում ա, նի մննում ընդեղ։ Հարուստը մըն էլ քյասիբը ուրուր նըրհետ զրուց ըն անում, թա էս տները հո՞նց ա շինալ։

Քյասիբը նաղլ ա անըմ, ասըմ. — Մին դռնըմ մին հարուստ եկալ ա, մնացալ մեր տանը, հունցը տուք։ Իմ խոխաս եր ա կալալ, հոքյըվերթի, ետնան էս օյինը տրալ կլխես։

Քյասիբը մանրամասը նաղլ ա անում, հինչ վեր հարուստին ղոլան կըդարվալ ա։

Հարուստն ասում ա։— Պա էտ խոխան հո՞ր ա։

Քյասիբն ասում ա.— Կկյա։

Հարուստեն մեթկը փոխվում ա, օզում ա, վեր էտ տղեն կլխեն մին քյալագյ տինի։ Ասում ա.—Պա, մարթ չինի՞լ ստեղ, վեր ղարկինքյ, քյինի մեր տոնը, թըխտեր ըմ թողալ, պիրի։

Քյասիբն ասում ա.— Պա մեր խոխան հի՞նչ ա, կըքյինի։

Մին խրեգյ կենում ըն, տեսնում խոխան կյամ ա։ էտ հարուստը մին թոխտ ա կյրնում, մաչին կյրնում, վեր. «Ա կնեգյ, էտ խոխան վեր կյա, կտաք ղսաբեն կլոխը կտրե»։ Էտքանանը ետը, էտ տղեն ասում ա.— Կտանիս տաս մեր կնգանը, թըխտերը կտա, ճելլի կպիրիս։

Խոխան թոխտը յոր ա օնում, քյնում տահանց տոնը։ Ըռուբանան տեսնում ա տահանք տանը քոն իլած։ Ինքյն էլ, տրուանը բլկոնեն

www.naregatsi.org

մին կառավաթ ա ընում ակուշկեն տակեն, յրան պարանց ա ընգնում միշև վեր եր կենան։ Տղան քնավ ա ընցնում։ Հարուստեն ախչիգյը եր ա կենում, տեսնում մին տղա, կլխեն մին լավ փափախ, մաչին մին թոխտ, ինքյն էլ քոն իլած։ Ախճիգյը թոխտը յոր ա օնում, տեսնում մաչին կյրած, վեր. «Ա կնեգյ, էտ տղեն տոք ղսաբեն, սպանեք»։

Ախչիգյը էտ թոխտը ճղորտում ա, մին թոխտ կյըրում, տնում փըփաղեն մաչին, վեր. «Ա կնեգյ, էտ տղան վեր կյա ըտեղ, կհվաքիս իմ պարիկամնիս, մին լավ հրսանեքյ անիս, ախչիգյըս տաս ուրյան»։

Կնեգյը ուռուբանան եր ա կենում, տեսնում ըտի պեն։ Մեն ա տամ ուրյան պարիկամներեն լոխճին, մին լավ հրսանեքյ անում, տրան հետե։

Շատ ըն կենում, խրեգյ ըն կենում, էտ ըխճըկանը մին խոխա յա ինում։ Խաբարը պիրում ըն, վեր հարուստը կյամ ա։ Մին պեն, վեր էտ հարուստեն կնեգյը էրկու տղա էլ ա ընում պիրած, մըծըցրած։ Վեր հարուստը կյամ ա տանան մուտանում, փեսան, ախչիգյը՝ խոխան խատեն, ուրյան խոխենքյը, քյնում ըն, թա տեսնան։

Էտ հարուստը, վեր էտ տղեն տեսնում ա, ասում ա.— Պա էս տղան հո՞ւ վա, էս պիծի խոխան հո՞ւ վա։

Կնեգյն ասում ա.— Տա քու փեսատ ա, էս մինն էլ քու թոռնըտ ա։

Կյամ ըն տոն, հարուստը մթկումը որոշում ա, վեր էտ տղեն սպանել տա։

Քյնում ա ուրյանց դամուրչուն կոշտը, ասում.— Մին տղա յըմ ըղրկըլական կոշտտ, վեր կյա, կըքցիս կրակը, էրիս։

Էտ ասում ա, կյամ տոն, ուրյան փսեն, թա.—Բա՛լա, բա՛լա, մին վազ տո, քյինի դամուրչուն ասե խըլեղըս քե տա պեր։

Փեսան տուս ա կյամ, թա քյնի, դըրբըզումը հարուստեն մեծ տղան պտահում ա։

Ասում ա. — Ըշտե՞ղ ըս քյինում։

Ասում ա.—Քյինում ըմ դամուրչուն անա հորըտ խըլեղը պիրիմ։

Տա ասում ա.— Տու քյինի տոն, յըես քյինամ պիրիմ։

Տղան քյընամ ա, փեսան կյամ ա տոն։ Հարուստըն ասում ա. — Պա խըլեղս հո՞ր ա։

Փեսան ասում ա. — Մեր տղան պտահից, ասից, վեր յըես կքյնամ պերիմ։

Հարուստը կըղնըվըմ ա, եր ա կենում վազ տամ, քյինում, տեսնում տղան քցած կրակեն մաչը, էրած։

Հարուստը մին էլ ա պայման կապում ղասաբեն նհետ, վեր տղան ըղարկե, քյինի, հանցու կլոխը կտրե։

www.naregatsi.org

Կյամ ա տոն, փսեն թա. — Բա՛լա, բա՛լա, քյինի քաղաք, զսաբեն ասե էրկու գյրվանքա մես տա, պեր։

Փեսան տուն ա կյամ, դըրբզումը պտահում ա հարուստեն պիծի տղան, թա. — Հշտե՞ղ ըս քյինում։

Ասում ա. — Քյնում ըմ քաղաք, մես պիրիմ։

Հրուստեն տղան ասում ա. — Համոթ ա, տու քյինի տոն, յըես քյինիմ պիրիմ։

Փեսան կյամ ա տոն, հարուստն ասում ա.— Պա մեսը հո՞ր ա։

Ասում ա.— Ծեր տղան պտահից, ասից. Յըես կըքյինիմ պիրիմ»։

Հարուստը շատ կղնվածծ, կըլխեն վայ տալավ եր ա կենում, քյինուում, տեսնուում էտ մին տղեն էլ դասաբը սպանածծ։

Փուշմանածծ կյամ ա տոն, կնգանը ասում. — Ա՛ կնեգյ, մեր էս փեսան սա յա, սա յա, սա յա,— պատմում ա, թա հո՞ւնց իլավ, վեր ընգավ ուրանց տոն։ Բխտըյեշին էլ ասալ ա, վեր քու հարուստոթունիտ պիտի տաիր տրեունա մին քյասիբ տղա։ Տրանա ետը ուրան հինչ հրուստոթուն օնե, տամ ա էտ քյիսիբին տղեն, ինքյը հռանում ուրան իլածան։

www.naregatsi.org



71. ՔՈՒՐԸ ՆԱՆ ԱԽՊԵՐԸ

Իլալ ա, չիլալ մին ախպեր, մին քուր։ Ըտրանք կարում չըն իլալ ապրին։ Քուրն ասում ա. — Ա՛յ ախպեր, քյինանք ամեգյս մին տեղ կլխնես պահինք։

Ախպերն ասում ա. — Հա, քյինանք։

Տրանք քյինում ըն։ Քուրը մնում ա մին պառավի տան, ախպերը քյինում ա, քյինում, մին տան հրսնում, ասում.— Ինձ վեր կալիք, ծեր տանը պըհեցեք։

Նահանք ասում ըն. — Լավ կինի։

Յոր ըն օնում, ուրանց քշտեն պահում։ Տրանց ինում ա էրկու խոխա։ Մարթըկնեգյ մին օր քյնում ըն օրիշ տեղ։

Էտ տղեն ասում ըն. — Խխորցը կլղըցնիս։

Տա յեր ա օնում մին մեծ ղզղան ճուրը իփ ածում, խխոցը նստըցնում մաչին։ Խըխոցան մինը մեռնում ա, մինը մնամ ա սաղ։

Մարթըկնեգյ կյամ ըն, տեսնում էտ խխոցը իտի ըրած։ Սկսում ըն լաց ինիլը։ Վերչը հինչուվերե, էն մին խոխան լըվանում ա։

Խազայինը մին դռնում ասում ա. — Խուխեն տուս կալ տառնը, օթ ծծի։

Տուս ա օնում տառնը, խոխան լաց ա ինում, հարրըն ասում ա. — Վեր մին էլ լաց ինի, կթխիս, սպանիս։

Ըտրա խելքը կտրում ա, հվատում ա։ Վեր մեհետ էլ ա տանում տառնը, վեր խոխան լաց ա ինում, յոր ա օնում խուխեն մաչան էրկու կես անում, տամ շներեն։ Հարը նան մարը մին էլ ըն լաց ինում։

www.naregatsi.org

Ըտրանա ետը մարթըկնեգյ մալըհաթ ըն անում, տրա քշտան քյինին մին հեռու տեղ, կլոխ յոր օնին, կոուչին։ Գյուղում ըն, վեր ուրաննց կլխնեն էլ ա քյալեգյ կյալու, վեր ըտրա շուրշուփը տեսնան վեչ։ Տահանք վեր մալհաթ ըն անում, էտ տղան ըսկանում ա։

Մեհետ եր ըն կենում, թա քյինան։ Բիշի, կթնահունց ըն թխում, վեր յոր օնեն քյինան։ Պադրաստում ըն, տնում միշուկումը, տինում տանը, վեր քյինալիս տանին։ Սա եր ա կենում, նի մննում միշուկեն մաչը։ Էքյսը եր ըն կենում մեշոկը շիլակում, քյինում։

Հղեննի մին շոն ա պտահում մարթըկնեգյ ասում ըն. — Հա՛յ մեր տղան ըստեղ ինի հա՞։

Էտ տըղան միշուկեն մաշան ասում ա.— Յրես էս ըմ ըստեղ։

Տահանք մնում ըն գյունաքար։ Վերչը տղան միշուկեն մաշան տուս ա կյամ, շոնը ըսպանում։

Մարթըկնեգյ օզում ըն տրան կլոխը վարին։ Քյինամ ըն մին ծովու ղրաղե մալհաթ անում, վեր քշերը քցին ծովը։ Էտ տղան կլխու յա ընգնում։ Եր ա կենում, ուրան տեղը փոխում, քյինում կնգանը տեղը։ Քշերը մարթը կնգանը կուփե յա տամ, քցում ծովը, գյուդում ա, թա էն տղան ա։

Մարթն ասում ա. — Ա՛ կնեգյ, դե եր կաց տղան քցալ ընք ծովը։

Էն տղան զուրթնանում ա, թա. — Էս ըմ ըստեղ։

Մարթը տեսնում ա, վեր տղան չի քցալ ծովը, սկսում ա լաց ինիլը կնգանը դարդան։ Էտ մարթը կլոխ ա յոր օնում, էտ տղեն քշտան, քյինում։ Էտ տղան քյինում ա մին չոբանու կոշտը, չոբաննեն խաթերը քթենում, շորերը փոխում, ուրան շորերը տամ ընդրան, վըխճըրնեն էլ ինքյ օնում, կյամ ծովենն կոշտը։

Էտ մարթը կյամ ա, տեսնում, մնում կյիժվածե, թա. — Էտ ըշտըղա՞ յըս պերալ։

Տղան ասում ա. — Ծովենն մաշան ըմ պերալ։

Աղան հարց ա տամ.— Պա ես հո՞ւնց պիրիմ։

Նա ասում ա. — Շորերըտ փոխե, թրչի մեր, ծովին մեչին վըխճըրնեն կյալու յըն իրեսը ընգնին։ Ճելլի չանիս տուս կյաս, կքյինաս տական էլ կպիրիս, ընդեղ էնա ամմեն կենթանուց լիգյը, վախիս վեչ հա՞, կքյինաս։

Աղան շորերը փոխում ա, մին զրեռ մհակ յոր օնում, վեր նի մրննի ծովենն մաչը, ծովենն կոխկեն մին խիլլա նստում ա, մտածում. «Էս ըշտղա՞ յա պերալ, էս շան տըղան, բա ծովենն մաչին վեչխար կինի՞»։ Մին էլ նորու մտածում ա, թա ըշտղա՞ յա պերալ, պա էսքան վըխճըրնեն ստրան հո՞ւ տվավ, վեր ըրալ ա առաչը։ Աստուծ

www.naregatsi.org

ըսելավ, փաղքյ տեր աստված ըսելավ օզըմ ա նի մըննի ծովը, մինը կյամ ա կոշտը։

Տա հրցընում ա, ասում.—Ա՛ մարթ, իստի պեն, ծովեն տակեն վեխճար կինի՞։

Տա ասում ա. — Հա, լոխ վըխճըրնեն ընդեղան ընք պո՛ւրռում։

Վեր իտի յա ասում, տա մհակը յոր ա օնում, ընգյնում ծովեն մաչը։ Ծովեն մաչին մին մեծ փեդ ա ընըմ, փադը նի յա մըննում փորը, մեռնում ա։



www.naregatsi.org

72. ԴԱՆԳԼԱ ԿՆԵԳՅԸ

Ինըմ ա, չընըմ, մին մարթ ա ինըմ։ Ըտրան ինըմ ա մին դանգլա, դոդոշ կնեգյ։ Մեհետ էտ կնեգյը քյնում ա ճուրը։ Կյեռթնուկնեն կոկռամ ըն։

Էտ կընեգյն ասըմ ա. — Հի՞նչ ա, Ջլիհան բիբի, սանդերքը պիրիմ պուռթը կյզի՞ս։

Կյեռթնուկնեն մին էլ ըն կոկռամ։ Էտ կնեգյը գյիդում ա, թա ասըմ ըն՝ «պերա»։

Քյնում ա տոն, պռթի թիլին վրեստերը պիրում ճուրը քցում, վեր կյեռթնուկնեն գյաբա կյործին։

Էն մին օրը կյամ ա ճուրը, կռանում, տեսնում մին պսպղուն պեն։ Էտ կնեգյը էտ փլստրատին տվող պենը յոր ա օնում, քյունում տոն։

Ուրուգյունը մարթը կյամ ա, ասում ա.— Ա՛ մարթ, էրեգյ վրեստերը տարալ ըմ տրվալ Ջլիհան բիբուն վեր գյաբա կյործե, էս պենն էլ գյոլումն ա իլալ, պերալ ըմ, անկյին քար ա։

Մարթը ասըմ ա. — Ա՛ կնեգյ, օրիշ տեղ ասիս վուչ։ Տա անկյին քար ա։

Էքյսը էտ կնեգյը անկյին քարը տամ ա, մին պեռնը ժեվեր ինքյ օնում, տոնը սարքում։

Մարթին կյալի վախտը վազ ա տամ մարթին առաչը, ասըմ. — Ա՛ մարթ, տոնը սարքալ ըմ, մին եք տես, էն պծրպածի ընելիս քարը տվալը ըմ, մին պեռնը ժեվ ինքյ կալալ։

www.naregatsi.org

Մարթը կղնվում ա, կնգանը տանան տունա քցում։

Կնեգյը քյունում ա, տեսնում քյուչումը մին օղտ վրեսկավ պեռնած։ Էտ օղտը քըշըմ ա, կյամ բիդի տոն, ծեն տամ։ Մարթը տոռնը քլլում ա, վեր կնեգյը կարե վուշ նի մննե։

Ասըմ ա. — Ա՛ մարթ, կըռըմեռ պելին ա, եկալ ա, տոռնը պեց ըրա, կյա։

Մարթն ասում ա. — Ա՛ կնեգյ, ոադ չը՞ս իննաակա՞ն կլխաս.— ըսկսում ա ուշունց տալը։

Կնեգյն ասըմ ա. — Ա՛ մարթ համոթ ա, կըռըմեռ պելին կյամ ա, տոռնը պեց։

Մարթը տոռնը պենում ա, տեսնում մին օղտ, վրեսկավ պեռնած։ Մարթն ուրխըննալավ պիրում ա տոն, պեռնը քանդում, տղվարըմ, օղտը մորթում, ածում, կյումըմը մին տեռտակ ցորնի վեր կար, ընդրա մաչը, ինքյը ըռըշկետանը կապըմ, չինը յոր օնըմ, գյվաքյիս թա հոնձ ա քյընըմ։

Ընդետանը կնգանն ասըմ ա. — Ա՛ կնեգյ, օրիշ տեղ ասիս վուշ, հա՞...

Կնեգյը քյունում ա տունը, տեսնում մին թորք օղտեն շոռ ա կյամ։

Էտ կնեգյն ասըմ ա.— Կըռըմեռ պելուն ը՞ս շոռ կյամ, էնա մեր տանը, մեր մարթը վրեսկեն եր ա կալալ, ուրան մորթալ ածալ վերը։

Թորքը կյամ ա մարթին ասում, մարթը վզավ չօնում, ասըմ ա. — Էտ պենը հիբի՞ յա իլա՞լ։

Թորքը ասըմ ա.— Մին էրկու օր ա։

Կնգանան հրցնում ա, կնեգյն ասըմ ա. — Հնձին վըդին ա իլալ։

Վերչը թորքը տեսնըմ ա, վեր ըտրանց անա պեն չի տունա կյամ, սուդի յա քըցում կործը։ Էտ մարթը քյունում ա սուդը։ Կնգանն ասըմ ա, տոռնը կպահիս։ Կնեգյը տեսնում ա, վեր մարթը ետե յա կյամ, տռնները պուք ա տամ, շլյակում, քյունում սուդը, էն վախտն ա տեղ հանում, վեր մարթին խուսուցնում ըն։

Մարթը վեր կնգանը տեսնըմ ա իտի, ասըմ ա. — Տեսնում ը՞ք, ընդրա խելքը կլխե՞ն ա, վեր ըտրա ըսածին եշում ըք։ Վեր խելքը կլխեն ինի, տռնները կշլակե կյա՞, ասալ ըմ տռանը եշի, շլյակալ ա, եկալ։

Էտ մարթիքյ տեսնում ըն, վեր էն կնգանը խելքը կըլխեն չի, մարթին ըզադում ըն։

www.naregatsi.org

73. ՊԱՐՍԵՂԸ ՆԱՆ ԱՐՍԵՆԸ

Իլալ ա, չիլալ մին մարթ։ Էտ մարթը ուրաննց շենին էլին տվարածն ա իլալ, ուրան հալալ ըշխադանքավը տոնը պհելիս։ Էտ մարթին ինում ա մին կնեգյ նան մին պուճուր մադար-գյուդաշր տղա։ Էտ տղին անումը ինում ա Պարսեղ։

Էտ մարթին կնեգյը միշտ մարթին իրեսն յեր խոսում ա, ասըմ. — Խալխերը ուրուր կլխե տներ ըն շինում, հեյվաննե օնին, վըխճըրներեն սուրուն համբարվում չի՞, ծյանուցը իլխին հեսաբ չօնե՞, տու հի՞նչ ըս, շենին տավարը տանում ըս, պահում, պիրում, սոված փորավա տանը վեր ըննում։

Էտ մարթը զահլան տնելան, մին օր հեյվանը տանում ա շատ հեռե տեղ։ Խոխան էլ ուրան նհետ տարած ա ընում։ Հեյվանը խուխեն թափշուր ա անում, ինքյը քյինում։

Շատ ա քյինում, խրեգյ ա քյինում, ընգնում ա մին օրիշ տերոթունի վրեղ։ Էտ վրեղավը էնքան քյինում ա, վեր հանում ա մին ծմակ։

Ծմակն էլ հի՞նչ ծմա՞կ, վեր ծուերեն եշում ըս, փափաղըտ վեր ա ընում, երգյինքըն ըս շոռ կյամ, ասթխեր չըս տեսնում։

Էտ մթեն ծմակավը էտ մարթը մնչանք քյինաւմ ա, վեր հանում ա մին գյուլլուն բաղ, էտ բաղին չորս ընգյունաւվը հասար ա ինում քաշած, ըրկաթե դրբզան յրա ըրած։

Էտ մարթը շատ ա չըրչարվում, վերչը դրբզին կլխավը նի յա մըննըմ բաղեն մաչը։

www.naregatsi.org

էտ մարթը վեր մընում ա բաղը, ըրմանում ա, վեր էլ ըշխարքես տակեն, կլխեն հինչ ծառեր կա, էտ բաղումը ճարվում ա։ Հինչ քախծըր բար-նուբար, ցորտ-ցորտ ըխպըրնի ասիս, էտ բաղումը ճարվում ա։

Էտ բաղավը շատ ա քյինում, խրեգյ ա քյինում, տեսնում ա մին լավ պալատ։ Նի յա մննում էտ պլատեն մաչը։ Էտ պլատումը բաղի օթախ պեց ա ինում, բաղինը քլլած, նի յա մննում մին պեց օթախ, տեսնում իփած մես, օրիշ պեներ. մին տեղ ղզղըննեն խուրագյավ լիգյը, պուժկըննեն կյինավ լիգյը։

Շոռ ա կյամ էտ տները քյիլիդներեն պննելիքյնեն քթենում։ Պենում ա տռները նի մննում, տեսնում մին տան վրեսկե յա վեր ածած, մին տեղ արծաթ ա թեղ տված, էտ ըրծաթեան էլ, վրեսկան էլ մին խիլլա յոր ա օնում, փլավան օտում, կյինան խմում, շելակը լիգյը, փորը կոշտ ըտըղան ետ ա տեռնըմ, կյամ։

Շատ ա կյամ, խրեգյ ա կյամ, հըսնում ա ուրանց շենը։

Էտ պիրած ըրծաթավը, վրեսկավը ուրան հետե պըլըտնե յա շինում, մին քանե տարե խանու նման ըպրելանը ետը, էտ մարթին աշկը ծակվում ա, ասում ա. — Մին էլ քյինամ, էլհա շելակս վրեսկավ, ըրծաթավ լցած կյամ։

Էտ մարթը հղե յա ինում բիդի վրեսկուն մադանը։

Էն պալատը էն վեր վրեսկեն, արծաթը պերալ ար, մին օխտը կլխանի օշափու պալատ ա իլա։ Էտ օշափը հանդան կյամ ա, տեսնում, ուրան կյինան խմած, փլավան կերած, վրեսկան, ըրծաթեան եր կալած, քյնացած։

Տա ասում ա.— Էս մարթը, վեր էս մադանը ճընանչալ ա, մընգ էլ ա կյլական, մին բուսը պահիմ, տեսնամ էտ հի՞նչ իլաթ-միլլաթ ա, վեր ռիսկ ա ըրալ, եկալ ըստեղ։

Էտ մարթը էրկուինջի դննումը, քյինում ա, թա վրեսկե պիրի, օշափը փռնում ա էտ մարթին վեզը կտրում, տինում ղզանումը, իփում, օտում։

Շատ ա ընցնում, խրեգյ ա ընցնում, էտ մարթին տղան մծանում ա, խելքը կտրում ա, մորան հըրցնում ա, թա— Ա՛ մար, ապան հո՞ր ա, թո՞ռն ա քյեցա՞լ, խե՞ չի կյա՞մ։

Մարը խուխեն ըսկցնում ա, վեր պենը հինչումն ա։ Նա ասում ա. — Քու հար մին քյասիբ մարթ ա իլալ, շենին տավարը պհելիս, քյնացալ ա գյուդում չըմ ըշտեղա վրեսկե պերալ, տները շինալ, հեյվաննի ինքյ կալալ, լավ հրուստացալ։ Ամմա վեր ծեռքեն վրեսկեն

www.naregatsi.org

կլխալ ա, քյաճալ ա վեր մընգյ էլ վրեսկե պիրի։ Քյինաճալ ա, էլ ետ չի եկա՜լ։

Էտ կուճուր տղան եր ա կենում հորը հետան քյինաւմ։ Տա սորաղ ընելավ քյինում ա, տուն կյամ օշափեն երգյիրը։

Շոռ կյամ պալատնեն, վրեղերը։ Տա կլխու յա ընում, վեր էտ պալատը օշափու պալատ ա, հաւրն էլ եկալ ա էտ պալատը, տրա հետե էլ օշափը հորը կերալ ա, տրա հետե էլ միշտ ինքյը զենքավ, զրահավ ա շոռ կյամ, սայաղ ա կենում։

Օշափը վեր հանդաւն կյամ ա, տեսնում ա վեր ուրաւն պալատան մրթավետ ա կյամ։ Շոռ ա կյամ ամմեն մին ծակրծուկ, քթենում ա էտ տղեն։ Տահանք կըռև ըն անում։ Օշափըն օզում ա՝ ընդրան օտե, ամմա տղան հախտում ա, ուրաւն թորավը տամ ա, էտ օշափեն օխտը կլոխը անց կցնում, ամմա մաչի կլխան մին ճիլ մնամ ա սաղ, վեզը մնում ա կախ իլած։

Էտ օշափը ղաչանք ա անում, վեր էտ տղան մրնգյ էլ թխե, ամմա էտ տղան թխում չի՜։ Էտ տղան պլատեն պինաւլիքնին յոր ա օնում լոխ օթախնին կրենդ-կրենդ պրավերկա անում, տեսնում մին օթախ վրեսկավ լիդյը, մինը՝ ըրծաթավ, մինը մարթու մեյիդավ լիդյը։ Մրնգյ էլ էտ տները լոխ կրենդ-կրենդ քըլլում ա, տուն կյամ բախչան։

Մրխրե վախտ տղան ըտեղ ապրում ա, խելքը փչում ա, վեր քյինա ուրաւնց ըլած չլածը ծախե, մարը յոր օնե, կյա ըտեղ ապրե։ Էտ մրթկավը ըլած, էտ տղան հղե յա ինում, բիդի ուրաւնց շենը։

Քյինաւմ ա մեթկը մորը նհետ ասում, ամմա մարը ղաբուլ չի ինում։ Տղան ասում ա.— Կյաս, կյաս վեչ, յրես քյիննաւկան ըմ։

Մարը տրեսնըմ ա, վեր տըղան կոխկը տեմ ա ըրալ, ինքյն էլ ա ռազի կենում։ Ուրաւնց տները, հեյվաննին լոխ ծախում ըն, հղե ինում օշափեն աշխարքը։ Մին խիլլա վախտ ըտեղ ապրում ըն, մարը տանը նըստում ա, տղան էլ քյինում ա վրերս անում, պիրում, մարը տանը խորագյ ա իփում, օտրմ ըն։

Մին դաւնըմ էլ տղան վրերսի քյինաւլիս, մարը շատ ա ղանչանք անում, ասում.— Հես ա խիլլա վախտ ա ըստեղ ապրում ընք, ամմա սաղ պալատը ճրնանչըմ չըմ։ Պինաւլիքնին ինձ տո, տեսնամ ըստեղ հի՞նչ կա, հի՞նչ չիկա։

Տղան ռազի չի կենում, ամմա մարը շատ ա ղանչանք անում։ Տղեն յրա աղդում ա, տղան պնաւլիքնին տամ ա մորը, համ էլ ասում.— Ա՛ մար, կարող ըս օթախնին լոխ պ ենաս, կրնդ վերչին օթախան կմանե։

www.naregatsi.org

Մարը լոխ օթախնեն պեց ա անում, էտ տանը իլիծ չիլիծը տեսնում, վերչի օթախը պեց չանում։

Շատ ա մտածում, խրեզյ ա մտածում, ասում ա. — Մին պեց անիմ, տեսնամ հի՞նչ կինի։

Պեց ա անըմ, տեսնում հի՞նչ, լոխ մեյդեր ա, վսկունե, վեր տեռած։ Ամմա ընգուճավը մին սաս ա ընննում։ Տա շոռ ա կյամ, տեսնում էտ օթախին մեչին մին վեր, էտ վերան մին տնքտնքոց ա կյամ։

Մուտանում ա, տեսնում էն օշափն ա, վեր կլխեն մինին մի ճիլը սաղ ար մնացալ։ Տա քշտեն մեյդերը լոխ կերալ ա, ապրալ։ էտ կնեգյը տրան տրսնալալ խեղճըն ա կյամ, հիրը վեր հաց ա օղում, ճուր ա օղում, էտ կնեգյը տանում ա տամ։

էտ օշափը լվանում ա։ Օշափ նան էտ կնեգյը պարիկամանում ըն։

էտ օշափեն անա էտ կնեգյը պատճառավեր ա տեռնում։ Վեր տղան գյիդա վուչ, էտ կնեգյը պիրում ա ուրան շորում պտտորում, վեր լափ մահլում ա տեռնում, էտ տղան հրցնում ա.— Ա մաըր, էտ հի՞նչա յա՞։

Մաըրն ասըմ ա. — Ա՛ բալա, շատ մես ըմ կերալ, նրանա յա։

Տղան միամիտ, աշխարքաս բեխաբար ա ինում, հվատում ա մորը։ Մին օր էլ տղան վեր վըրսատեղ ա ինում, էտ կնեգյը ազադվում ա։ Հո՞ւնց անե, հո՞ւնց չանե, էտ պիճը պուրում ա պաորուր անում, տանում տինում էն կուրմունջեն յրա, ըշտըղավ տըղան կյալու յա։

Տղան վըերսատեղա կյալիս տեսնում ա կրմուջեն մին պաորուրում խոխա յա լաց ինում։

Յոր ա օնում պուրում տոն, տամ մորը, ասում. — Ա՛ մար, աստված ինձ մին ախպեր ա տըվալ։

Մարը վայ-վրուդ ա անըմ, ասում.— Պա էս խոխան հի՞նչավ կպահենք, հի՞նչ կտանք։

Տղան ասում ա.— Աստված թաե էս խոխան տվալ ա մըեզ, քու ծծերըտ էլ կլըցնե, կաթնը կտաս։

Տհենց էլ տեռնում ա, սկսում ա ծեծ տալ խուխեն։ Խոխան օրանց օր մըծանում ա։ էտ տըղեն կնքում ըն, անըմը տրնում Արսեն։ Արսենը շատ ա սիրում Պարսեղին։ Արսենը մեծ ախպորը հետան մեռնում ար։ էն ըշտեղ քյինամ ա, ղանչանք ա անում, վեր ուրան էլ նհետը տանե։ Մեծ ախպերն էլ ընդրա խոսկը կոտրում չի, ընդրան շատ ա սիրում։

Տահանց մաըը լավ պարիկամոթուն ա անում օշափեն նհետ։

Մին դռնում էլ Արսենը լսում ա տահանց զրուցը։

www.naregatsi.org

Հաւրը նան մարը խորուրթ ըն անում, վեր մին հնար քթենան Պարսեղին սպանին։

Էտ խոսկը վեր Արսենը սկանում ա, քյինում ա ախպորը առաչը, ընդրան խաբար տամ, ասըմ. — Մեր ծնողնին խորուրթ ըն ըրալ, վեր քյրեղ սպանին։ Սայաղ կաց, վեր կարան վեչ սպանին։

Օշափը հինչ վեր էլ անըմ ա, կարում չի Պարսեղին սպանե։ Ճարը կտրած կյերպարանքը փոխում ա, վեր թաքուն կարե վնաս տա Պարսեղին։

Մին դռնում, վեր Պարսեղը քյեցալ ար հանդը, նա արչ ար տեռալ, քյեցալ կրմուջեն տակեն կյողլը կացալ, վեր Պարսեղը կյալիս, օտե ընդրան։

Ամմա Արսենը հորան իվիլ ա ինում պիճ։ Քյինում ա էտ կուրմունջեն կոխկին մըչանք կենում, վեր ախպերը կյամ ա, ընդրան խաբար ա տամ, ինքյն էլ նհետը կյամ։ Օշափը վեչ մին պեն կարըմ չի շինի։ Մհհետ էլ էտ օշափը մին օց ա տեռնում, քյինաճ տըռանը կլխեն կյողլը կենում, վեր Պարսեղը տոն նի մըննելիս պկավը տա, խեխախ։

Ամմա Արսենը վազ ա տամ, ախպորը դուլուղ անըմ, վեր պենը հինչումն ա, ինքյն էլ ախպորը օսերին նստում, նի մըննում տոն։ Էս դռնումն էլ չի օշափը կարում ասածը անե։

Մհհետ էլ էլհա օց տեռած քյինաճ ա, նի մըննըմ կյումեն հուճորքը, վեր Պարսեղը ծին տանե կապե, վիղավը տա, խեխախ։ Էս դռնումն էլ Արսենը ախպորը ղանչանք ա անում, վեր ծին ինքյը տանե կյումըմը կապե։ Կուճուր ախպոր փանդերավը Պարսեղը պըրծընում ա ամմեն մին փորցանքա։

Պարսեղը մտածում ա, փսրկվիլի վախտը կյամ ա, ամմա դե էտ ղալի սամթերքումը ախճիգյ չիկար, վեր նհետը փսակվեր։ Մորը նհետ խոսկը մին ըն անում, տա տանան տունա ա կյամ, քյինում մին թաղա թաքավերու աշխարք։

Մինչի հղե ինիլը կուճուր ախպորը նհետ խոսում ա ուրան նպատակին մասին։ Մին պեց տանակ էլ տինում ստոլեն, համ էլ ասում.

— Տանակը վեր նհետ ինի՞, նշան ա, վեր ինձ մին ժըբախտութուն ա պտահալ, հետաս կկյաս։

Տա հղե յա ինում, քյինաճ։ Էտ թաքավերութունան տունա ա կյամ, նի մննում օրիշ թաքավերութուն։ Ընդրա առաչին ինում ա մին մեծ ծմակ։ Էտ ծմակը քյինալիս մին պռանչունց ա ըսկանում, քյինում ա, տեսնում մին փալանգյ, վրեննը մին ղալամ ընգյած, ղալամն էլ

www.naregatsi.org

ասնած։ էտ փալանգյը կարում չի տեղան տուրուր կյա։ Ղաչանք ա անում էտ մարթին, վեր ուրան թրավը թխե, վրենը ազադի, հինչ վեր օզի, կտա։

էտ տղան ասում ա.— Վախըմ ըմ քյըեզ ըզադիմ, ինձ վնաս տաս։

Փալանգյըն ասում ա. — Վրնաս չըմ տալ, հինչ վեր օզիս, նհենց կանիմ։

Պարսեղն ասում ա — Քու ճտերատ էրկունը ինձ կըտաս։

Բըրավ թըխըմ ա, վրեննին վեհրը տուս ա կյամ, վրենը դինջանում։

էտ փալանգյը ուրան ճտերան էրկունը տամ ա Պարսեղեն։ Տա Փլանգյեն ճտերը եր կալած հղեն շարունակում ա։

Շատ ա քյինում, խրեգյ ա քյինում, տեսնում ա ծմակեն մաչին մին ղաշանգյ տեղ, մին լավ տոն շինած։ էտ տղան նի յա մըննըմ էտ տոնը, տըեսնում ա մին լավ, ղաշանգյ ախճիգյ էտ տանը նստած։

էտ ախճիգյը էտ տղեն ասում ա. — Հու կյամ ա էս սամթերքը, պիտի ինձ նհետ կըռեվ անե, մհենգյ տու յա պիտի ինձ նհետ կըռեվ անիս, յա թա չէ վեննըտ վետանըտ առաչին չըս կարալ տինիս։

Տղան համաձայնվում ա կըռեվ անե։

Պարսեղը նան էտ ախճիգյը կըռեվ ըն անում։ Տու մի ասիլ, էտ տանը մին վեր կա կտրած, կլխավը մին գյաբա քըցած, էտ ախճիգյը օզում ա, թա Պարսեղին քցի էտ վերը։ Էն փլանգյին ճոտերը յրա յըն պըրծնում, էտ ըխճկանը յրան, էտ ախճիգյը Պարսեղեն պեց ա թողնում։ Պարսեղը ըզադվում ա։

Պարսեղը ուրան փլանգյին ճոտերը եր կալած հղեն շարունակում ա։ Քյինամ ա, հանում թաքավերեն քաղաքը։ Փլանգյեն ճոտերը ծմակըմը կյեղում ա, ինքյն էլ քյինամ մին պառավ կնգա տոն, ղոնաղ ինում։

Մին օր էտ թաքավերը ազառամիշ ա ընում։ Հաքյիմնեն ասում ըն. — Պիտի մրալու կաթնը խմե, վեր լվանա։

էտ թաքավերին էրկու փեսա յա ընում, մինը՝ գեներալ, մինն էլ՝ իշխան։ Տահանք շատ ըն չըշարվում, խրեգյ ըն չըշարվում, կարըմ չըն մրալու կաթնը ճարին։ Մին փեսան էծու կաթն ա պիրում, մեշնակ փեսան էլ վխճարու կաթն ա պիրում, ամմա տըհանցա մինն էլ թաքավերեն քյամագյ չի անում։ էտ խաբարը Պարսեղը սկանում ա։

Կյամ ա թաքավերեն կոշտը, ասում. — Թաքավերն ապրած կըենա, վեր յըես քյըզհետե մրալու կաթնը պիրիմ, ինձ հի՞նչ կտաս։

Թաքավերն ասում ա.— Թաքավերութունես կեսը քյըեզ կտամ։

էտ Պարսեղը ուրան զենքը-զրահը կապում ա, փլանգյին ճոտերը

www.naregatsi.org

յոր օնում, նի մննում ծմակը։ Ճոտերը սաղ ծմակավը շոռ ըն տամ, էտ ծմակում հինչ ապրանք ընուի ա, լոխ ղալ մեչ անում, մին մարալ փոնում, կթում, պիրում թաքավերեն հետե։

Ամմա թաքավերեն էն էրկու փեսան, էն տղեն հետը պահում ըն, տղան վար կյամ ա քաղաք, ընդրան փոնում ըն, կաթնը խլում, էն տղեն էլ տոն քցում։

Կաթնը պռւրռւմ ըն թաքավերեն հետե։ Թաքավերը խըմում ա, լվանում։ Մին խիլլա վախտանը ետը, էտ թաքավերը էլհա հիվանդանում ա։

Էս դռնում էլհա հաքյիմնեն ասում ըն. — Պիտի մըրալու մես օտե։

Էտ փեսեքյը քյինամ ըն էծու, վխճարու մես պռւրռւմ, ամմա վեչ մինն էլա օքութ չի անում։

Ըտեղ թաքավերը մին պեն ա կըլխու ընգնում։ Ասում ա. — Էտ հո՞ւնց ա, կաթնը պերալ ըք, ամմա մեսը կարըմ չըք պիրիքյ։

Էտ փըեսեքյը քյինաամ ըն, էն տղեն քթանըմ, մեծ ռուշվաթ վըզաւվ օնում, ամմա էլ տղան ասում ա. — Մեր մին պենը էլա հարկավեր չի՛, ինձ մին փեչատ օնիմ, պիրաք ծեր ջանը փիչատիմ, ետնան քյինաամ, մեսը պիրիմ ծրեզ տամ։

Տրհենց էլ անըմ ըն։ Թաքավերը էլհա յա լվանում։ Ամմա էտ թաքավերին պռավածե վախտըն ար, հիվանդութունը նրանա ծեռք չար քաշում։ Թաքավերը մին էլ ա հիվանդանում։ Էս դռնում էլ ծանդր։ Հաքյիմնեն ասում ըն, վեր պիտի մրալու սրերտ ճըղե, սրտին մեչին ըրռւնը խառնե կաթնեն նհետ խմե։ Տա հո՞ւնց ծեռք կպերին, փսոտենքյը մնացալ ին մտրծելիս։ Էլհա քյինաամ ըն էն տղեն կոշտը։

Էն տղան ասում ա. — Կաթնը կպիրիմ ծրեզ տամ, ամմա սրերտը յրես պիտի պիրիմ։

Կաթնը պիրում ա, տամ փսոտանցը, սրերտն էլ ինքյն ա տանըմ, թաքավերեն աշկեն ըռաչին ճղում, խառնում կաթնեն նհետ, թաքավերը խմում ա, լվանում։

Թաքավերը լվանալան ետը ռւրռւն ծառաներան հրցնում ա. — Հի՞նչ մարթ ըս, հո՞ւ վըս, հո՞ւ չըս։

Էտ տղան նաղլ ա անում ռւրռւն անա։ Թաքավերը գյիդալով վեր մրալին կաթնը, մեսը էտ տղան ա պերալ, ամմա փսոտենքյը խաւփալ ըն, թա ռւրռւնք ըն պերալ, փսոտանցը տռւս ա անում պլատան, նահանց վեչ մին պեն էլա տամ չի, ամմա ռւրռւն կուճուր ախճիգյն էլ Պարսեղին նհետ փսակում ա, օխտը օր, օխտը քշեր հրսա-

www.naregatsi.org

նեքյ ա անում, խոսկ տամ, վեր ուրյան մռնելանը ետը թաքավերը Պարսեղեն նշանակին։

Փսկվելան ետը Պարսեղը միշտ վրերսի յա քյինյամ, ամմա միշտ ուրյան առուծեն ճոտերը նհետը տանում ա։

Մին դյնում էլ քյինյամ ա, հսնում ծմակեն էն տեղը, ըշտեղ ինքյը եկալ ա, պտահալ ծմակումը շինած մին պլատու, մեչին էլ մին ղոչչաղ ըխճկան։ էտ ախճիգյը ստիբում ա տղեն, վար կըռեվ անեն, ամմա էն պայմանավը, վեր առուծեն ճոտերը կպոտեն, նոր կըռեվ անեն։ Տհենց էլ անըմ ըն։ էտ ախճիգյը հախտըմ ա տղեն։ Տըղեն քըցըմ ա վերեն մաչը։ Առուծեն ճոտերը վերչանք ծիքյ-ծիքյ ըն անըմ, վեր տըրուչը քյումագյ անին, ամմա կարըմ չըն։ Հենց էտ վախտը փակվում ա էն տյանյակը, վեր ուրյանց տանն ա թողալ, ստոլեն յրան, վեր հիբը վեր փակվե, նեղ տեղ ա, հետան կյան։ Արսենը տըսնալավ վեր տյանյակը փակվալ ա, ախպորը հետան քյինում ա։ Շատ ա քյինում, խրեգյ ա քյինում, հսնում ա էն ծմակը, վրդեղ ախպերը տուս ա կյալյալ առուծեն վետանը փոշը, էրկու ճոտ եր կյալյալ։ Տա տեսնում ա հյամյան առուծեն վետանը ղյալյամը ընգած, ղյալյամըն էլ յռնած։ Առուծը կարում չի տեղան տուրուր կյա։

էտ մարթին ղաչանք ա անըմ, ասում, վար. — Մին դյնում էլ ըս տու ինձ ըզադալ, մհենգյ էլ ըզադե, էրկու ճոտ էլ մհենգյ կտամ։

Արսենը էնքան Պարսեղին նման ա ընում, վեր առուծը գյիդում ա, թա էն առաչվա տղան ա, վեր ուրյան ըզադալ ա։ Արսենը կլոխ ա ընում, վեր Պարսեղը էս հղցավն ա քյացալ, ինքյն էլ էտ առուծեն ա պտահալ։

Արսենը վեր առուծեն վետանը ղյալյամը տուս ա օնում, էրկու ճոտը ինքյ ա օնում, հղեն շարունակում։

Շատ ա քյինում, խրեգյ ա քյինում, հսնում ա թաքավերեն քաղաքը։ Քաղաքեն ժողովուրթը ուրուր անավ ըն ընգալ, վեր թաքավերեն փեսան քյեցալ ա վերսի, էլ եկալ չի։ էս տղեն տըսնալավ ըստեղ ասում ըն, վեր թաքավերեն փեսան եկալ ա, էտ տղան դյստի կլոխ ա ընում, վեր ուրյան ախպերը թաքավերեն փեսան ա տեռալ, ծեռքը տնում ա ճկատեն, վար գյըվանքիս թա ազատու յա, խնթրում ա էտ մարթուցը վեր ուրյան տանին թաքավերեն պալատը, ուրյան օթախը։

Տհենց էլ անում ըն։ Վեչ հաց ա օտում, վեչ ճուր ա խմում, վեչ էլ խոսում ա կնգանը նհետ, կնեգյը մնում ա ըրմացած։ Ուրուգյունը վեր կնեգյը տեղերը շինում ա, վեր քոն ինեն, էտ տղան դյամյան տուս ա օնում, տնում ուրյան նան կնգյանը ղաթավը, վեր սահ-

www.naregatsi.org

մանը հնացնեն վեչ։ Կնեգյը ըրմանում ա, վեր հինչի հետե յա տհենց անում։ Էտ տղան վեր քըշըրհանա եր ա կենում։ Կնգանան հրցնում ա, Թա ինքյը վեր հղցավ ա քյնացալ վըեբսի, օշը կլխեն չիլալ, մըտան ընգալ ա, Թող նշանց տա։ Քյինացած հղեն նշանց ըն տամ։ Էտ տղան եր ա կենում ուրան առուծեն ճոտերը յոր օնում, քյինամ։

Շատ ա քյինում, խրեգյ ա քյինում, հանում ա էն ղոչչաղ ըխճըկանը պալատը, տեսնում մին շատ ղաշանգյ ախճիգյ քշտեն էլ էրկու առուծի ճոտեր։ Էտ տղան կլոխ ա ընում, վեր էտ էրկու առուծեն ճոտերը ուրան ախպորըն ա։ Տա սդիբում ա ըխճկանը, վեր ախպորը տեղը ասե։ Էտ ախճիգյը հալա մին վզալ չօնում, ետնան ասում ա. — Հալա եք մին կըռեվ անինքյ, ետնան կասիմ։

Էտ ախճիգյն ասում ա.— Կըռեվը կըռեվ, ամմա պետք ա առուծեն ճոտերը կապենքյ։

Ամմա տղան ոաղի չի կենում։ Տահանք կըռեվ ըն անում, առուծեն ճոտերը քյոմագյ ըն անում տղեն։ Տղան հախտում ա, վերը պանում, տեսնում վար ախպերը վերումն ա։ Տուա ա օնում, էրկու ախպերը չորս ճոտերավ էտ ըխճկանն էլ յոր ըն օնում, քյինամ թաքավերեն պալատը։ Ըտեղ ամմեն հինչ պարզվում ա։ Էտ ղոչչաղ ըխճըկանն էլ փսակում ըն Արսենին նհետ, մեծ ախպերը ուրան կնգանավը նան թիգյնապահերավը կուճուր ախպորը տանում ա, թողնում ուրանց տանը։ Էրկու ախպորըն էլ մարը թաղացան հրսանեքյ ա անում ուրանց տանը։

Կուճուր ախպերը ուրան կնգանավը մնում ա ուրանց տանը, ամմա մեծ ախպերը ետ ա տեռնըմ թաքավերեն պալատը։ Թաքավերը պռաված ա ընում, կանուխ մեռնում ա։ Պարսեղին նըշանակըմ ըն թաքավեր, ամմա Արսենն էլ ուրանց պալատումն ա տարը տըրնական տեռնում։ Էրկու ախպերն էլ խուխատար ըն տըեռնում։ Ուրանց գյանքեն մեչին էրկու ախպերն էլ լավ պարիկամոթուն ըն անում, կողի հորավ խորթ ըն ինում, մորավ հալալ ըն ընում։ Տրա համար էլ ուրուր հետե թըեվըթիգյունք ըն ընում, մինը վար նեղ տեղ ար ընում, էն մինը նեղ օրեն հանում ա։ Էսքանավըն էլ նաղլը պրծնում ա։



www.naregatsi.org



74. ԼԱՎ ՏԸՆԴԵԳՅՈՒՆԸ

Ինըմ ա, չինըմ մին շենըմ մին քյասիբ մին էլ մին հարուստ տոն ա ինըմ։ Ըտրանց ինըմ ա ուրուր յաշի էրկու տըղա։

Ըտրանց փըսըկվելի վախտը վեր կյամ ա, էրկուսըն էլ նշանվըմ ըն։

Հըրսանիքյին օրը հարուստին տըղան վեր տեսնըմ ա քյասիբին տըղին նշանածին, հորըն ասըմ ա.— Ա՛ հաըր, խե չը՞ս էն ախճիգյը ինձ հետի օղալ։

Հաըրըն ասըմ ա.— Տա անկըտրելի ծըմեռուվ ա, գյիդվալ չի, վըերըն ա լավը, վըերը՝ փիս։ Տըրկյունսիլ մի, հալա վախտ կա՞։

Հըրսանիքյնին պըրծընըմ ա, ամմեն մարթ քյինըմ ա ուրանց տոն։ Քյասիբին հարսը տեսնըմ ա, վեր էտ տանը մին կարք չիկա, լոխ շաղվածք, եր տըեռած, տոնը եխտոտ, տըկըկլոխ իլած, մինը տանըմ ա, մինը պերըմ, էլ գյուդվըմ չի, թա հո՞ւ վա մեծը, հո՞ւ վա պուճուրը, լոխ եր ածած, եր փըռած, աչ ըն թըխըմ, ծախ շըպըռտըմ, ծախ ըն թըխըմ, աչ շըպըռտըմ։

Էտ հարսըն ասըմ ա.— Էս տանը մին մեծ պիտի, իստի ամալ չի կյալ, իստի հիշքան էլ աշխադիք, պեն չի ըրվալ, օջաղըն էլ կըքանդվի...

Սկեսուրըն ասըմ ա.— Տու մեծը իլ, կառավարե, լավ տոն տըեռիքյ։

Հարսը ռազի չի կըենըմ, ասըմ ա.— Քանի վեր ինձանա մեծը կա, խե՞ բեդմա յըես կառավարիմ։

Էրգյան խոսելանը ետը, հարսը ռազի յա կըենըմ, ասըմ.— Դե

www.naregatsi.org

վեր իտի յա, էն վախտը բեդմա ինձ անգուճ օնիքյ, վեչ մինը ծրեռքը տերտակ էս մրղակավրս բեդմա նի չի մրննի, լհա վեր մին լաւ պեն էլ պերի վեչ, մին չուփ ա, մին քար ա, մին տերտակ պեն ա, յոր օնի կյա տոն։

Էտ հարսին ասածնին անըմ ըն։

Մին դռնըմ պատրունը ծրմակ ա քյինըմ, ամմա կացինը տանն ա թողըմ, մըտան քըցըմ ա յոր օնի։

Ասըմ ա. — Ա՛յ հա՛յ, պըռավալ ըմ, մըտաս պեն ա ընգնըմ, աշխարքիս մրթկերին դռնըն ըմ ընգնըմ, շաղվըմ։

Տա ետ ա տրեռնըմ, թա կյա տոն, կացինը յոր օնի, մրետըն ա քըցըմ հարսին ասածը, վեր տերտակ ծրեռքավ տոն չի կյան։ Տա տես ա հշըմ, տեն ա հշըմ, տրեսնըմ ա մին սպանվածօց։

Էտ օցը յոր-օնըմ, քըցըմ էշին յրա, կյամ տոն։ Վեր տանան մուտանըմ ա, մրթկըմը ասըմ ա. «Հարսըս օցան կը վախի, ջահիլ ա բըրդան մին պեն կինի»։

Տա տանըմ ա օցը քցըմ կըտերը, կյամ տոն, հարսին ասըմ. — Մին պեն ըմ պերալ, ամմա էքյուծ նշանց կըտամ։

Էրկունջի օրը հարսը պըցրանըմ ա կըտերը, տեսնըմ մին թընդակին քար, վեր Ջումրուտ ղուշը կըտուցան եր ա քըցալ, թողալ ըտեղ, օցը եր կալալ, տարալ։

Էտ հարսը էտ քարը յոր ա օնըմ, կյամ տոն։ Էքյսը թաքավերին ջառչին ջառ ա կանչըմ, ասըմ.— Ա՛ ժողովուրթ, տուն եկեք, տուն եկեք հա՛, տուն եկեք։

Թաքավերին հրամմանն ա, թաքուհին մին թընդյակին քար ա կուրցրալ, հու վեր ճարալ ա, պերի տա։ Թաքավերը ճարողին իրեք քըսակ վրեսկե յա տալու։ Ա՛յ ժողովուրթ, լաւ ըսկացեքյ, իրեք քըսակ վրեսկե՛։

Էտ վեր լըսըմ ըն, պատրոնը նան հարսը եր ըն կրենըմ, քյինըմ թաքավերին պալատը, էտ անկյին քարը տամ թաքավերին։

Թաքավերը ըտրանց իրեք քսակ վրեսկե յա տամ։ Ըտրանք յոր ըն օնըմ, կյամ տոն։

Էտ վրեսկավը ուրիշնց հետի լաւ-լաւ պալատնի յրն շինըմ, վեր էտ պալատներին շոքը ընգնըմ ա, էն հարուստին տոնը ծասկըմ։

Էտ հարուստ տըղին հաւրը ուրիշն տըղին ասըմ ա. — Վեր քյրեզ ըսեցի անկըտրելի ծրմերուկ ա՞՛, հետե մերը խակ, անհամ ա տուն եկալ, ուրիշնցը քախծըր, կյաւրմուր։

Թող ծրեր պենն էլ միշտ հաճող ինի՛, ա՛ հաքյաթ լըսողնի՛։

www.naregatsi.org



75. ՊԱՐԻ ԿՆԵԳՅԸ

Մին թաքավեր ունէր ընճըկանը նհետ տունա ա կյամ, մանր կյալ։ Հանդրմը մին ջահիլ տղու յըն պըտահըմ, մին մեծ պեռնը ցաքյ շլակեն տընքտընքալավ քյընամ ա։

Թաքավերըն ասըմ ա.— Ախճիգյ ջան, էտ տղան խե՞ յա ինդի փիս ապրում։

Ախճիգյըն ասըմ ա.— Ա՛ հայր, նա մեղավեր չի՞, ընդրան վեր կնեգյ ինի, ինդի չի ապրել, կնեգյըն ա մարթուս գյանքը։

Հայրըն ասըմ ա.—Ապրիս, ախճիգյըս, վեր իտի խելք օնիս։

Ըտեղ թաքավերեն ախճիգյը սիրահարվըմ ա էտ տղեն յրա։

— Ա՛ հայր, վեր օխտը երգյիր փշանա, յրես քյընանական ըմ էտ տղեն։

— Ախճիգյըս, պե՛ղ չը՞ս, կյիժ՛ չը՞ս, տի պեն կինի՞, իսկի տա տեսնված պեն ա՞, վեր ինի, խալխը մըզանավ կրծրծաղին, մազաղ կանին, կասին թաքավերեն ախճիգյը քյինանց մին ախկադ տղու։

— Զարմանալի պեն ըս ասըմ, ա՛ հայր, նա հի՞նչ մեղավեր ա, վեր ախկադ ա։ Ա՛ հայր, թա տրան տվեր, կըքյինամ, տրան չի տվեր, ինձ կըսպանիմ։

Թաքավերը տեսնըմ ա, վեր ախճիգյը դունգ ա ասըմ, համ էլ պենդ ա նեստա կացալ էն տղեն անա, կանչում ա էն տղեն, ասըմ.

— Ա՛ ջահիլ, ախճիգյըս քյըեզ ըմ տամ, քյինա ապրի, իմ վեղըմը ախկադ մարթ չի պիտի ինի։

Տղան շունըրակալ ա ինունմ։

www.naregatsi.org

Ախճիգյըն ասըմ ա։—Ա՛ հայր, վեր քյինաամ ըս, մին քսան մանեթ փող տու։

Հայրը քսան մանեթ փող ա տամ, քյինաամ պալատը։ Թաքավերն ախճիգյը էտ տղեն նհետ քյընաամ ա տըղեն տունը, տեսնըմ մին քյաոիր տուն, մին քանե շորըմոր, օրիշ վեչ մին պեն։

Կնեգյըն ասըմ ա. — Ա՛ մարթ, կա էս տանը մանեթը, քյինաբաղար, առուտուր ըրա, պեր։

Մարթը յոր ա օնըմ տասը մանեթը, քյընաամ։

Հղեննի մին մարթ ա պտահըմ, ասըմ ա. — Ըշտեղ ը՞ս քյընաամ։

Ասըմ ա.— Քյինաամ ըմ էս տասը մանեթին առուտուր անիմ, կյամ։

Էտ մարթն ասըմ ա.— Էտ տասը մանեթը ինձ տու, մին լավ պեն սըվըրցընիմ։

Միամիտ տղան փողը տամ ա ուրան, ասըմ.— Հինչ վեր ա, հալբաթ մին լավ, հարկավըրական պեն կինի՛։

Էտ մարթըն ասըմ ա.— Քշերը քյաոիրվանը ծորում վեննը չանիս, միշտ թումբումը վրեննը կանիս։

Էտ տղան ետ ա տեռնըմ փոխըփեշմանն կյամ տուն։

Ասըմ ա.— Ա՛ կնեգյ, ստի-ստի պեն ա պըտահալ։

Կնեգյըն ասըմ ա.— Վեչինչ, մտածել մեր, երկալ էս տասն էլ, քյընա։

Էտ տըղան նորու քյընաամ ա բաղար։

Էս դռնումն էլ մին մարթ ա պըտահըմ, ասըմ.— Էտ տասը մանեթը ինձ տու, մին լավ պեն սըվըրցնիմ։

Տամ ա ուրան։ Էն մարթըն ասըմ ա.— Հինչու յըրա քյընաս, ռիսկավ կըքյընաս։

Կյամ ա տուն, կընգանը ասըմ.— Ա՛ կնեգյ, իստի-իստի պեն ըմ ըրալ։

Կնեգյըն ասըմ ա.— Վեչինչ, աստված մեծ ա, մտածիս վուչ։

Մին քանի օրան ետը մարթըն ասըմ ա.— Ա՛ կնեգյ, տու տունը պահե, յըս քյինաամ ըշխադանք անիմ։ Պադրաստվում ա, քյընաամ։

Հղըցումը ընգնում ա մին թաւրաքյամու նհետ։

Քյընաամ ըն։ Շատ ըն քյինաամ, թաւ խրեգյ, մին ծորավ քյընալիս պըտահըմ ըն մին օրիշ վեր եկած քյըրվանու։

Քյըրվանեն մեծն ասըմ ա.— Մունք էլ ստեղ վեր կյանք։

Էտ մարթըն ասըմ ա.— Ծորումը լավ չի, անց կենանք էն թումբումը վեր կյանք։

Տի էլ անըմ ըն։ Քշերվա կեսին մին վարար սել ա կյամ, էն ծո-

www.naregatsi.org

րին քյարվանը քըշըմ։ Տահանք ըզադվըմ ըն։ Ստեղ քյարվանեն մեծը տրան մին օղտապեռնը վրեսկե յա տամ։ Ըտըղան հղե յըն ինռւմ։ Մին անճռւր ճրնըպարավ քյընաչլիս շատ ըն ծըրավըմ։ Մին հռվուզ ըն քթենըմ։ Վեչ մինը ռիսկ չանըմ նի մըննի, ճռւր տռւս օնե։ Էտ տղան նի յա մննըմ, մին քանե հետ քյանդիրը կախ ըն տամ, ճռւրը լիգյը կոժը տռւս օնում, մարթուցըն էլ, ըպրանքե էլ բավարարում։

Էտ տըղան օղում ա թա տուս կյա, բռւրդան մին տռնն ա պեն-վում, մին հռւրռւփերի ախճիգյ ա տռւս կյամ։

Էտ ախճիգյըն ասըմ ա.— Տու հի՞նչ մարթ ըս, վեր նի յըս մտալ, ճռւր տռւս կաչալ, խըմալ ըք։ Վեր էտքան ռիսկավ ըս, կա էս էրկու նոռնը, հարկավեր կըկյա։

Էտ տըղան վեր տռւս ա կյամ, էս դռնումը քյըրվանեն մեծը մին օղտապեռնը վրեսկե էլ ա տամ ռւրան։

Քյըրվանեն մարթոցան մինը ետ ար տեռնըմ ռւրանց տոն։ Էտ տըղան նոռնեն մինն էլ, վրեսկեն էլ տամ ա, տանըմ ա կնգանը տամ, միչև ռւրան ետ կյալը, վեր կնեգյը յոլա քյինա։

Կնեգյը ստանըմ ա վրեսկեն էլ, նոռնըն էլ։ Նոռնը պճըղում ա, թա տա սկեսվերը, ինքյն էլ օտի, էտ նոռնեն մաչան էնքան անկյին քար ա վեր տեռնըմ, վեր տոնը լըցնում ա։ Ղոչչաղ կնեգյը էն ղա-րադամեն տեղը, անկյին քարերան ծըխիլա՛վ, մին ինդի պալատ ա շինիլ տամ, վեր ռւրան հորը պալատան պեցռւր ա ինռւմ։

Մարթը ղարիբոթունում շատ ա կենում, թա խրեգյ, վերչապես կյամ ա, տեսնըմ ռւրան ղարադամեն տեղը մին մեծ պալատ։ Մնամ ա զրմացած, թա էս հի՞նչ հրաշկ ա։

Մտածըմ ա, ասըմ.— Հա՛լբա՛թ մին թաքավեր եկալ ա մեր քաղաքը եր կաչալ, իմ տանըս տեղը պալատ շինիլ տվալ։

Ըստրանա-ընդրանա հըրցնըմ ա, թա փլանքյասեն տոնը ըշ-տե՞ղ ա։ Էտ մարթըն էլ էնքան ղարիբոթունում կենըմ ա, վեր հըրը-վաննին ճնանչում չըն։

Ասըմ ըն.— Պա հատե, էտ պալատը ընդրանն ա։ Մարթը վա-խում ա, թա նի մըննե, մին էլ ռիսկ ա անըմ, նի մըննըմ պլատեն դըրբըզավը, տռնը թակըմ, ռւրան կնեգյը տռւս ա կյամ, տեսնըմ ռւրան մարթըն ա, ռւրռւր պըչպըչորըմ ըն, քյընամ մաչ ղոլ։

Մարթըն ասըմ ա.— էս հի՞նչ հրաշկ ա, ա՛ կնեգյ։

Կնեգյըն ասըմ ա. — Քու ղարկած նոռնեն մաչեն իլած անկյին քարան ըմ շինալ։

Մարթըն ուրըխացած ասըմ ա.— Ա՛ կնեգյ, պա ընդրանա մինն էլ ըմ պերալ։

www.naregatsi.org

Պրճըղում ըն, սաղ պալատը անկյին քարավ լըցնըվում ա։ Մին պալատ էլ ըն շինիլ տամ, թաքավերեն կանչըմ ղոնաղ։ Թաքավերը կյամ ա, պալատնեն տեսնըմ, մնըմ քրացած։ Ախճիգյը լավ քյեփ ա նշանց տամ հորը, ետավ էլ ասըմ.— Ա՛ հայր, մետտ ա՞, վեր էս տղեն տեսենքյ, ցաքյը շլակած, ըսեցե նա մեղավեր չի, կնեգյ չօնե, ըսեցե նա կարող ա ըշխադե, հրուստանա, տեսե՞ր վեր յըես դուզ ըմ ասալ...

Թաքավերը խըտըտում ա փսեն, ըխճըկանը, ասըմ.— Մեր ըրըրմունքեն հետե տուք արժան ըք տեռնալ թաքավեր-թաքուհի։ Ծրեղ ըմ տամ իմ թաքավերութունս, վայելեցեքյ։

Էն օրանը տեսը նահանք տեռնըմ ըն թաքավեր-թաքուհի։ Աշխարքը ըպրուստավ լցնըմ, քյըսըբրութունը վերացնըմ։

Մեր էն վերթավ լիգյը բըխչան իրեք փոնջ վարթեր քըղեցե. մին փոնջը՝ ըսողեն, մին փոնջը՝ լըսողեն, մինն էլ՝ էս հաքյաթնին լուս աշխարք քըցողեն։

www.naregatsi.org

76. ԴԵՐ ՏԸԵՌԱԾ ՄԱՐԹԸ

Իլալ ա, չիլալ մին մարթ, մին կընեգյ ա իլալ։ Ըտահանք շատ քյաւսիբ ըն իլալ։ Մին թաւհրաւվ կըլխընին պահըմ ըն իլալ։ Մին հետ շենըմը հըրսանիքյ ա ինում։ Էտ կընգանն էլ ըն ծրեն տամ, տանըմ, նըստըցընըմ սոփըրեն կըլխեն։ Ամմա վըեր քյոխվեն կնեգյը կյամ ա, տընատարըն ասըմ ա.— Ա՛խչի, պատառ տըվըեր կաց, քյոխվակենը նստե։

Էտ կընեգյը պատառ տվըեր ա կըենում, քյոխվակենը նստում ա։

Մըն էլ վըեր դերեն կընեգյըն ա կյամ, ասըմ ըն. — Ա՛խչի, պատառ տվեր կաց դիրաւկենը նըստե։

Պատառ էլ ա տվեր կըենում, դիրաւկենը նստըմ ա։

Ասետ էլամ վըեր հարուստ կընեգյ ա կյամ, ասըմ ըն.— Ա՛խչի, պատառ էլ տվեր կաց։

Իստի տվեր կնալավ, էս կընեգյը ընգնըմ ա առե մըղակը։ Կենըմ չի, եր ա կենըմ, կյամ տոն։

Մարթին ասըմ ա.— Տու վըս, վեր տու վըս, բեդմա դեր տրեռնաս։

Մարթն էլ ճարը կըտրած ասըմ ա.— Ա՛ կնեգյ, լաւվ, հինչու ասըմ ըս, կանիմ, թաւքյ լըհա քու քյեփավըտ ինի։

Էտ մարթը իրեսը վեր չի անըմ չըքյելանը մըրոքը ըրգյընանըմ չի։

Վեր մըրոքը ըրգյընանում ա, տանան տունս ա կյամ, քյընում թա դեր տեռնա, ամմա վեչ փիլոն օնե, վեչ էլ խաչ։

www.naregatsi.org

Շատ ա քյընում, թա խըրեգյ, ախըը տուս ա կյամ մին շեն։ Տու մեր ասիլ, էս շենումը դեր չի ինում։ էս շենացիքյ տեսնում ըն, վրեր էտ մարթին դերու մըննան էրկան մրոք օնե, ամմա դերու շենքըշնորք չօնե, յանի քյի, խաշ, ավետարան, փիլոն չօնե, մուտանըմ ըն, հրցընում.— Ա՛ դեր, հի՞նչ ա պըտահալ, հի՞նչ դազաբու յըս եկալ, էտ հի՞նչ հաղում ըս։

Դերըն ասըմ ա.— Ա՛ վերթիքյ, տուս ըմ եկալ, թա կալերը օրթնիմ, էն դոլավը ընցնելիս տեղը, կյողերը ինձ յրա տեռեն, ինձ թըլընեցեն։ Հըմնչելաս նըհետ մեր շենը չի քյընացե, կըլոխ եր կալե թա կորչիմ, տուս եկե էս շենը։

Շենացիք շատ ըն ուրխանըմ, վրեր ուրանց շենն ա տուս եկալ էտ մարթը։ Տանըմ ըն տնում ուրանց դեր։ էտ դերեն շատ լավ պահում ըն։

Քյընում ըն դերին կնեգյըն էլ պուրում։ էտ կընեգյն էլ ա շատ ուրխանում, վեր դըրակեն տեռավ, վրեր ամմեն տեղ սուփրին կլխեն ըն նրսատըցնում։

էս շենացիքյ մըշանք դոնգի յըն ընում, վեր ըսկի կըլխու չըն ընդնում, թա բա դերը ժամումը հի՞նչ բիդի ասե, հի՞նչ բիդի անե։

Մին օր էլ շենումը մին մարթ ա մեռնում։ էս մարթը քյասիբ ա ընում, ամմա դե չորս ախպեր ա ընում ըտրան։ Վեր տանում ըն թա թաղին, դերը սաբալ ժամ ա ասըմ.

— Ալելույա՛, ալելույա՛՛՛, քյինիմ Ծամծոր՛, կյամ Ծրկոռե՛, ընդղան էլ կյամ Բընաղու՛ր... Ընդըղան ետ տրեռնամ էլհա կյամ Ծկոռե՛, Ալելույա՛՛՛...

Իտի մին քանե հետ ասըմ ա, վերչը էտ մարթին տանըմ ըն թաղում, կյամ տոն։

Շատ ա ընցնում, խրեգյ ա ընցնում, էտ շենին խուջեն տղան մեռնում ա։

Վեր տանըմ ըն, թա թաղին, դերը խուջեն պադեվ ընելե հետե ժամ ասելը պատառ ըրկընցընում ա։

Ասում ա.— Ալելույա՛, ալելույա՛՛՛, քյինիմ Ծամծոր՛, կյամ Ծրկոռե, ընդըղան էլ կյամ Բընաղո՛ւր, ընդըղան էլ կյամ Տըրպըղո՛ն*, ալելույա՛, ալելույա՛՛՛...

Ըստեղ էն քյասիբ մարթին ախպերքյը կըղնվում ըն, թա խե՞

---

* Ծամծորը, Ծրկոռեն, Բնաղուրը գյուղեր են, Տրպողոնն էլ Տրապիզոն քաղաքն է։

www.naregatsi.org

մեր ախպորը հետե քյեցավ վեչ Տըրպըզոն, խոջեն տըղեն հետե քյընեում ա։

Ընդահանք կյամ ըն դերին փռնում, մին լավ թակում, հալա քըցում, խաչը նան ավետարանը ծըեռքան ինքյ օնում, թող անըմ։ Դերը թակվածծ, փշրվածծ կյամ ա տոն։

Կնեգյը ասըմ ա.— էտ հի՞նչ ա պըտահալ։

Դերը լոխ նաղլ ա անըմ, թա՛.—Պա ասել չը՞ս խտի-խտի պեներ ա եկալ կըլոխս։ Կնեգյն ասըմ ա.— Աշկըտ էլ ըն հանալ, ըռխետ հերիք չա՞ր Ծամծոըրը, Ծրկոռե՛ն, Բընաղռո՛ըը, վեր ընդըղան էլ քյեցեր Տըրպըզո՞ն, քյըեզ տեղն ա, առռե լավ ըն ըրալ, վըեր քյըեզ քյուեթըկաթակ ըն տըվալ։

Մրթըկնեգյ եր ըն կենում կյամ ուրանց շենը։ Էլհա էն քյասիբն ըն, էն քյասիբը։

Մարթը բիդի ուրան խելքավը, ուրան քըռթնընքավը ապրե, թա չէ ուրուշու խփիլավ ապրուստ չի ինի՛։

www.naregatsi.org

77. ՂՈՆԱՂԸ

Մին դոնում մին թաղա գյալան բեխաբար մարթ ղոնաղ ա ընգնըմ մին տան։

Էտ տանը ինըմ ըն մին մարթ, մին կընեգյ։ Ըտրանք էտ ղոնաղին պադև ըն տամ, ղազ ըն մորթում, տըպակում, փորը խնձորավ լցնըմ, կյինի-արաղ եր տինում, շայ-պեն ածում, տինում ըռաշկեն, վրեննները լըվանում, քաստամիշ անում, լավ փափուկ, թամուղ, թաղա, ղարաբաղու վեխճարի պըռթա շոլկի յըրղուն-դոշակըմ քընցնում։

Քըշերվա կեսին տնատարը եր ա կենում, տունա կյամ տոռնը։ Հալա մին երգյինքին եշում ա տրեսնում, պա՛րզ, թաղա օթումը էն մոք կյապունա երգյինքըմը ասթխերը փըլըստրատին ըն տամ։

Ասըմ ա.— Մասսաբըտ ճաքե Ղարաբաղի երգյի՛նքյ, էտ հի՞նչ ա քու հալըտ, ասիս լհա յըրես էլ ինիմ երգյինքան կախ ընգած, ասիս լհա վրեննեռս տափին չինի՛...— Պա՛հ, պա՛հ, պա՛հ, փա՛, մին տրես էն սարերան հի՞նչ սարին քամի յա կյամ է՞, լոխ ծաղկի վրետ ա՞։

Էտ մարթը համ ասում ա, համ մին լավ սունչ քաշում, վրետ քաշըմ։ Էլ գյուդունա չի, վեր էտ վախտը միչև ինքյը տեսավ-տնավ ա ընգալ, ղոնաղը եր ա կացալ նի մտալ ունրան կընգանը ծոցը։ Էտ տնատարը իտի մուլի-շուլի ընելավ ետ ա տրեռնում, ծանդրըմըռած կյամ տրվարեն ղալին քըշտավ մին պուճուր բախճա կար, մեչին վարթ, կընանչի, տես-տեն, եշում տեսնում, մին վարթ հենց պը-

www.naregatsi.org

ճըղվալ ա, ասիս օզում ա, թա լհա տրաքվի՞, ճաքվի՞, փոլ կյա՞, ուրան ղաշանգյ ինիլավը մարթի հոքի փառավերի՞։

Ասում ա.— Պա՞հ, քու մըեռալը վա՞յ տամ, հալա մին էս քյափուրին եշի է՞, ասիս լհա մին մարալ-ջեյրան, մեշկը պերաք ախճիգյ ինի, մին տըես հո՞ նց ա ըրորվում, վի՞յ աման ա՞, լհա էն երգյինքին, էն պըլպըլալիս տեղը դինջ չի կենող, էն կյապուտ երգյինքըմը լըղլըղալիս, ծրփծրփալիս լուս աստըխը ինի՞, քըշացած եկած մեր բախշան։

— Հըսս, ուխա՞յ, վըետիտ մատա՞ղ,— ասում ա, պըրծնըմ, մին էլ մին լավ վըետ քաշում, ետ տեռնում տոն։ Էտ վախտը ղոնաղը կընգանը քըշտան տուս ա կյամ, շորերը կյենում, հայդա՞...

Տնատարը ետավ գյուդուս ա, ետավ ա կըլխի ընգնըմ, վեր ղոնաղը եկալ ա ուրան կընգանը կոշտը։ Տեռնըմ ա մին օթի-օրփաթ, մին ուրփրթավուր, ուրան մեչին օռած, տրռռոն տեռած։

Առաչ մին լավ կընգանը փըչեչը քանդում ա, բիչերը ծիքյծիքյ անըմ, ետավ եր կենում, լամբը վառում, կընգանը առաչը քըցուս, ասում.— Դե հա՞, շուտ ըրա քյինինք, էն ղոնաղին կըլխին տես հալա հի՞նչ ըմ տինելու, կաց հալա մին փըռնիմ, ախցան ըմ ընելու։

Ամմա միչև ուրանց հասնիլը, ղոնաղը հասած ա ինում Արազին ղրաղը, մըթեն ա ինում, կարմունջը ճարում չի, ամմա ըտրանց փանաբրին ճրաքյին լուսաւը կարմունջը ճարում ա, անց կենում էն մին թաբրափը։

Էտ տընըտրուչ կընգանը անըմը Հերիքյնազ ա ինում։ Մարթը տեսնում ա, վեր ղոնաղը կարմունջն անց ա կացալ, հավան նստում ա, կըտաղոթունը անց ա կենում, արխայինանում ա, վեր կրավա-դավա պըրծալ ա, ասում ա.— Հերիքյնազ, տեսնաս ղոնաղը մըզանա տազի քյինի՞ց։

Հերիքյնազն ասըմ ա.— Բա խե՞ չի տազի քյինի՞լ...

Աշխանան ղազը,
Տանան Հերիքնազը։
Ճրաքին լուսան Արազը...
Պա հալա տազի չինի՞։

www.naregatsi.org



78. ՃԸԿԸՏԱԿՅԻՐԸ

Ընում ա, չի ընում իրեք մարթ ա ընում, մին աստուծ։ էրկու աստուծ չիկա։ էտ իրեք մարթը ուրուր նհետ հոջաթ ըն տամ, թա ճըկըտակյիրը դուզ ա, թա չէ։

էրկուան ասում ըն՝ դուզ ա, ամմա մինն ասում ա.— Մարթ պենը հունցը փռնի, ինդի էլ կքյինի, հի՞նչ դուզ, հի՞նչ սոտ։

Մին օր էտ անհավատ մարթին տոնը էրկու ղոնաղ ըն կյամ։

Էտ ղոնաղներին քշտին նա էլհա ասում ա. — Մարթ պենը հունցը փռնի, ինդի էլ կքյինի, խաթան երի ղոլան չի կյամ։

Էտ մարթը ամեն դոնում օրիշներին քշտեն հոջաթ ա տամ, ուրան ասածի ար։ Էտ մարթը օզում ա, թա տուս քյինի, մին էլ ա տեսնում էտ վախտը մին մրեծ ղուշ քշանում ա, թևը քցում ըտրա շքռամեչը, պցրանում երե ղոլը։

Շատ ա տանում, թա խրեկ, գյիդվալ չի, մինակ տեսնում ա, վեր տանըմ ա տընում մին տան առաչի։

Էտ տանը չորս ղոլերքը ճուր ա ընում։ Էտ ղուշը ըտրան թողըմ ա ըտրեղ, ինքյը թռչում։

Էտ մարթն ասըմ ա.— Էս ըշտե՞ղ ըմ ընգա՜լ, էտ հի՞նչ ա իմ կըլոխս եկալ։ Տա մտածըմ ա, թա հունցու աստծու ղազաբը եկալ ա, ինդի չել կքյինի։ Մհեգյ ընգալ ա իլի՜ խաթի մեչ։

Տես ա եշում, տեն ա եշում, ետավ ակոշկին մեչ ղոլն ա եշում, տեսնըմ մին շատ կյեղեցիկ ախճիգյ, մին շատ կյեղեցիկ տըղա

www.naregatsi.org

նստած։ Էնքան կյեղեցի՜կ, էնքան կյեղեցի՜կ, վեր ասում ա.— Ա՛յ արև, տու տունս մի կյա՜լ, յրես ըմ տունս կյալու։

Ընդրանք էտ մարթին ասում ըն.— Դայի, հո՞ւնց ընգիր ըստեղ, չորս ղուլը ճրաւվ ծասկված տեղ ա, քյըռեզ հո՞ւնց հասցրին։ Էտ մարթը նաղլ ա անում, թաւ բա ասիլ չը՞ս, իստի, իստի պեններ։

— Լաւվ, դայի, նի մոտ տոն, մեր քշտին կաց։

— Բա տուք հո՞ւնց ըք ընգալ էս չորս ղուլը ճրաւվ լիքը տեղը,— հըրցնում ա էտ մարթը։

Տղան նաղլ ա անում ասըմ.— Իմ ծընողներին խոխա չի ըլալ։ Յրես վեր ծընվալ ըմ, փալչին ասալ ա, թաւ վըռեր էտ տղան հիքը փսակվի, հարսին ծեռքը ծեռքին տինի՜, էն վախտը տըենակավ պիտի մըռնի՜, ըտրա հետի էլ իմ հաւր տիրալ ա էս չորս ղուլը ճրերավ պուլլուրպատիկ տըեղը, վըռեր յրես տենակին իրեսը տըեսնամ վըռե՜։ Իմ կերածս էլ միշտ ըղարկըմ ա Թաւռյան ղուշին մըեշկին տրաւծ։ Եմիշը, ծմերուկը, խյարը, ամեն հինչ յրես օտում ըմ կտորած, պադրաստ։

— Բա էտ աղճիգյը հո՞ւ վա։

— Էս ախճիգյն էլ իմ նշանածն ա, ըսօր ըն պըերալ ինձ մհար։

Ընդրանա ետը տղան համեցեք ա անում էտ մարթին, թաւ եմիշ, ծըմերուկ օտի։

Էտ մարթը հրաժարվում ա, օզում չի՜, ամմա տղան ասըմ ա.— Չէ՛, վըռեր չէ, տու մըեզ նհետ պիտի օտիս։

Էտ մարթը հանըմ ա տենաւկը մին դիլիմ եմիշ կըտորըմ, եմիշին դիլիմը շիլթաւ-շիլթաւ կըտորըմ, օտըմ։

Էտ տղան ասըմ ա.— Հինչ կինի՜, տենակըտ տաս, յրես էլ տըենակավ օտիմ։

Էտ մարթը տամ չի, հրաժարվում ա։ Ամմա էտ տղան շատ ա խնթրում։ Էտ մարթը տամ ա։ Տըենակավը ուտելի վախտը էտ տըղեն հազը փռնըմ ա, սունչը նի քըշելիս տենակը կոլ ա քյընըմ։ Տըղան տեղնուտեղը մահանըմ ա՜։

Էտ մարթը մընըմ ա կրակի մեչ ընգած։ Գյուդռնում չի, թաւ հի՞նչ անի, կլխին տալավ տունս ա կյամ, ասըմ.— Տոնըս քանդվի՜ց, էտ հի՞նչ ղազաբի եկե։

Էտ վախտը էն մըեծ, Թաւռյան ղուշը էլհա կյամ ա, ուրյան թևին յրան ընդրան տանում։

Հսնում ըն։ Տանըմ ա տընում ուրյանց տան շեմքին։ Ըտրեղ ըտրան եր ա տնում, ինքյը էտ թռչում։

www.naregatsi.org

— Տըես՞ հի՞նչ ղազաբի հասի էչ՛,— մըթկըմը ասըմ ա էտ մարթը։

Ղոնաղնին շատ կըենալավ նիգյարան ըն մնըմ։ Ըստեղ էտ մարթը նաղլ ա անում ուրյան կլխին եկածը, ասում վըեր ինքյը ղալաթ ա ըրա՛լ, վըեր գյիդացալ ա, թե մարթը հունց կործը փունի, ինդի էլ կքյնի՛։



www.naregatsi.org



79. ՔԱՋԱԼ ՃՈՏԸ

Ինըմ ա, չինըմ մին տոն։ Էտ տանը նանը միշտ հավ ար թոխսը տինըմ։ Մին դոնըմ էլ հավը թոխս ա տինըմ, ըսպասըմ միչև ճոտերը տուն կյալը։ Վեր ճոտերը տուն ըն կյամ, ըտրանց մեչին մին քաչալ ճոտ ա ինըմ։ Էտ քաչալ ճոտին յրան թևփուռ չի փանըմ, ըտրա հետի էլ քաչալ ըն ասըմ։

Քաչալ ճոտին հընգյերնին մըծանըմ ըն, ամմա ինքյը մին օրիշ թաւուր ա ինըմ, մին օրիշ հանգի, մին օրիշ թահրի, մին օրիշ ջուռա։

Էտ քաչալ ճոտը բըրըշըմ չի հավերին նըրհետ, ամմեն օր էլ էտ տանը մին վընաս ա տամ։

Տընատարը մին չի, էրկու չի, տըմանըմ ա։

Մին օր էլ քաչալ ճոտը կըտկոտըմ ա ուրան մար թուխսըկանին, ըսպանըմ։

Մին քանի օրանը ետըն էլ էն մընացած հավերին ա կըտկոտեվավ ըսպանըմ։

Վերչը տընատարը յոր ա օնըմ, տանըմ բազար, վեր ծախի։ Բըզարըմը լոխ ասըմ ա, կյեղըմ չի քաչալ ճըտին ըրարմունքը։ Էտ բըզարըմը թաքավերին մարթկանցան ինըմ ա։

Ըտրանց անա մինը հընգյերին ասըմ ա.— Ըք էս քաչալ ճոտը առնինք, տանինք տանք թաքավերին՝ ծըծըղցնելի հետի։

Իտի էլ անըմ ըն։

Թաքավերը վեր տրեանըմ ա, մին լավ ծըծաղըմ ա։ Ըտրան տանըմ ըն քըցըմ հավերին պուննը։

www.naregatsi.org

Թաքավերին տոնը ղոնաղ, պեն եկած վախտը տուս ըն օնըմ, ըտրանավ ծրծաղըմ։

Մին հետ էլ թաքավերին գյաղան կյամ ա, կըլոխ տամ, ասըմ.

— Թաքավերը ապրած կրենա, էն քաչալ ճոտը կըտկոտալ ա լոխ հավերին, կըտորալ։

Էտ վեր լըսըմ ա, թաքավերը ըշըղվըմ ա, ասըմ ա.— Տարե՛ք, էտ քաչալ ճըտին ղազերին խառնեցիք, վեր ղազերը ընդրան կըտկոտին, սըտկըցնին։

Գյաղեքյը թաքավերին հրամանը կադարըմ ըն։ Քաչալ ճոտը ըտեղ էլ չի դինջանըմ, մին քըշերվա մեչի լոխ ղազերին կըտորըմ ա, ինքյը մինաւկ դինջըմը քոն ինըմ էտ ղազերին լեշերին յրան։

Էքյսը ղազ պահողնեն վեր պուռնին տոռնը պենըմ ըն, վխվըխելավ մին էլ ետ ըն տրեռնըմ, քյինըմ թաքավերին պալատը, չոքըմ թաքավերին առաչին, ընդրա վրեննները պաչըմ, մին թաւհրաւվ ասըմ քաչալ ճըտին պեններըս։ Թաքավերը ըշըղվըմ ա, հրամմայըմ ա վեր քաչալ ճըտին տանին քըցին ծրմակը, վեր կյուղի, աղվեսի փայ ինի՛։

Ծրմակըմը քաչալ ճոտը մին աղվես ա տրեսնըմ, ասըմ. — Ճընապարաս տենը քյինի՛, թաւ չէ քյրեզ կոլ կրտամ։

Աղվեսը ասըմ ա.— Տու հի՞նչ ըս, հի՞նչ զիբիլ ըս, հինչ օժի տաւր ըս, վեր ինձ կոլ տաս, ըստրան եշի... Քյրեզ մրնան հազար թեփռավեր հավ ըմ կոլ տրվա՛լ, քյրզանա յը՞մ վախելո՛ւ։

Էտ վեր լըսըմ ա, քաչալ ճոտը յրա յա պըրծընըմ, աղվեսին կոլ տամ։ Ընդրանա ետը ուրաւն ճընապան քյինըմ։ Շատ ա քյինըմ, թա խըրեգյ, ճընապարին մին կյուղի յա թուշ ինըմ։

Էտ կյուղին հրամմայըմ ա, ասըմ.— Հեռաց ճընապարաս։

Կյուղըն ասըմ ա.— Քյրեզ մրնան կըզտի-պըզտի պեններին հի՞նչ ծրեռք տամ, նըհախ տեղը թաթերըս յըխտուտցընիմ, էշեր ըմ կերա՛լ, պողավեր-ընգրճավեր հեյվաննի յըմ կերա՛լ, կյումշնի՛, կովե՛ր, ծիյա՛նք, եզներ ըմ կերա՛լ, տու հի՞նչ ըս, հունաւրըտ հի՞նչ ա, վեր հաւլա ինձ յրա էլ ըշըղվըմ ըս։

Էտ վեր լըսըմ ա, քաչալ ճոտը յրա յա պըրծընըմ, կյուղին կոլ տամ, ինքյը ճընապար ընգնըմ, քյինըմ։ Քյինըմ ա, քյինըմ, մին վարար կյետի յա ռուշյահ կյամ։ Էտ կյետին հրամմայըմ ա վեր ցրմաքի, վեր ինքյը ազատ անց կենա։

Ասըմ ա.— Ա՛ կյետ, ըռըհելտ քաշի, վեր յրես անց կենամ։

Կյետը լուզու վա առնըմ, ասըմ.—Է՛ս հի՞նչ տրնաւզ պեն ա, յրես իմ վարար ճիրաւվրս մարթկանց ըմ քըշա՛լ, պողավեր-ընգրճավեր հեյվաննի յըմ քըշա՛լ, կյումուշնի, եզներ, կովեր, ծիյանք,

www.naregatsi.org

էշեր ըմ քըշա՞լ, մըհեկ տու հի՞նչ ըս, վեր ինձ նըհետ հոջաթ ըս տամ։ Վրեղըս կըլխիտ հա՞, կըլոխըտ մոշավ անի՞մ, քյինի ծառին տակին տըմկի՞։

Քաշալ ճոտը վեր էտ լըսըմ ա, թռնդռնմը ըչըղվըմ ա, հու՞ռ վա անըմ, սաղ կյետը նի քաշըմ պոկը ընդըղան էլ փորը, օռչըմ, տըռըղվըմ, անց կրենըմ, քյինըմ։

Քյինըմ ա, քյինըմ, հըսնըմ ա մին օրիշ թաքավերի պալատ։ Էտ պալատին առաչին քըթոթ անելիս, մին վրեսկե յա ճարըմ, ծուղրուղո՞ յա կանչըմ, ասըմ.— Թաքավերըն ապրած կրենա, մին վրեսկե յըմ ճարա՞լ։

Թաքավերը լըսըմ ա, ուրըն գյաղոցը ըղըրկըմ ա, վեր քյինին էտ քաշալ ճոտան վրեսկեն ինքյ առնին, պերին։

Քաշալ ճոտը կանչըմ ա. — Ծուղրուղո՞, թաքավերը ինձանավ ա ապրը՞մ։

Էտ վեր թաքավերը լըսըմ ա, շատ ա հըմանչըմ։

Ասըմ ա.— Վրեսկեն ետ տըվեք, տըվեք էտ քաշալ ճոտին։ Գյաղեքը վրեսկեն ետ ըն տամ։

Քաշալ ճոտը կանչըմ ա, ասըմ.— Ծուղրուղո՞ թաքավերը ինձանա վախըմ ա, վրեսկեն ետ տըվա՞վ։

Թաքավերը էտ վեր լըսըմ ա, թռնդռնմը ըչըղվըմ ա, ասըմ.— Քյինացիք պերիք էտ քաշալ ճըտին, տեսնամ տա հի՞նչ պեն ա, վեր իտի կապը կըտրած ա, իրեսը պեց ա, անաբուռ, անհամանչ ա, իտի իրեսը պըռթըճիրավ լըվացած ա, անիրես շոն ա, թաքավերին առաչը խոսկ կըտանի, մին պոլկ սալդաթի մեչի կըկենա, ախեր ասըմ ը՞ն, վեր օխծին կըլոխը ցավըմ ա, տանըմ ա, տինըմ ճընապարին մեչ տեղը, վեր քյինող-եկող կոխ տան, մըհեկ էտ քաշալ ճոտըն ա։

Գյադեքյը քյինըմ ըն, պերըմ։ Թաքավերը ըտրա յրան կըզնըվըմ ա, հրամմայըմ ա մորթին, կյերակուր իփին, հացին վախտը պերին, օտին։

Իտի էլ անըմ ըն։ Թաքավերը քաշալ ճըտին մըսան օտըմ ա։

Բողազավը քյինելիս, էտ քաշալ ճոտը կանչըմ ա.— Ծուղրուղո՞, թաքավերին բողազին նեղ տեղերավն ըմ քյինըմ։

Վեր թաքավերը կոլ ա տամ, քաշալ ճոտը թաքավերին փորըմը սկսըմ ա կանչիլը։ — Ծուղրուղո՞, թաքավերին փորավըն ըմ քյինըմ։

Թաքավերը լափ ըչըղվըմ ա, լափ հըմանչըմ, իրեսին աբուռը եր ա կյամ էն ղոնաղներին քըշտին։

Նա գյաղա-գյունդին հրամմայըմ ա, ասըմ.— Վեր յրես զախոտ

www.naregatsi.org

քյինիմ, եկեք, էս քաշալ ճըտին ծըեր Թըրերավը Թըխեցիք, ըսպանեցիք։

Գյաղա-գյուղեքյը իտի էլ անըմ ըն։

Քյինըմ ըն զախոտըմը ուրանց սոր-սոր Թըրերավը մին հենց Թըխըմ, վեր Թաքավերին գյավակը կըտրըմ ըն։

Քաշալ ճոտը տուս ա կյամ, կանչըմ.— Ծուղրուղու՛, բա իտի էլ պե՞ն կինի՛, գյավակը կըտրած Թաքավե՞ր կինի՛...

www.naregatsi.org

80. ԷՐԿՈՒ ԱԽՊԵՐ

Ինում ա, չընում էրկու ախպեր։ Մեծ ախպերը փսակված ա ինում, ըստրան ինում ա քսանըչորս ծի, պիծի ախպորը ինում ա տասնըչորս ծի։ Էտ պիծի ախպերը շատ քյալաքյչի յա ինում։

Մեհետ էտ պիծի ախպորը ծիյանցան մինը ըստակում ա։ Տա մաշկում ա, լավ է՞, լավ չուրուցնում տեսնում ա ժեժտու նըման վեր նի յըս կյամ, ճըռճռում ա՜... Պիծի ախպերը կաշին յոր ա օնում, քյնում... Քյինում ա, քյինում, շատ ա քյինում, թա խրեգյ, մըթնում ա։ Լհա հանում ա մին շեն, եշում ա, տեսնում մին ճըրաքյ ա ըրվամ։

Էտ ճըրաքյին յըրա քյինում ա, մին տոն ա տուս կյամ, տոռնը թակում ա.— Ա՛ տնատար, կթողի՞ս քշերս ըտեղ քոն ինիմ, ղարիբ մարթ ըմ։

Էտ կնեգյը թա. — Քյունչիմ քյալլաստ, կորեր ըստղա՞ս, մեր մարթը տանը չի, կկյա, կասիմ կոնդրտ կըկտրե։

Էտ մարթը ետ ա տըեռնըմ, էտ տռանը մին խոտու տեզ ա ինում, ծակում ա, նի մննում, վեր մըրսե վեչ։ Ակուշկավը վեր եշում ա, տեսնում ա մին մարթ ստուխն նստած, բիշի, թաժա հաց, իփած հավ ըռաչին տիրած օտում ա։

Էտ վախտը, էն սիրավ սոհբաթ ընելիս վախտը վեր մարթ գյունդում չի, թա աշխարքս հի՞նչ ա՜, մին թըմփթըմփոց ա կյամ, ըհը՛... էտ կնգանը մարթը կյամ ա, տոռնը, թակում.— Ա՛ կնեգյ, տոռնը պեց։

www.naregatsi.org

էս վեր լսըմ ա, դաստի էն մարթը բիշուն նըհետ նի յա մննում սանդղողը, իփած հավն էլ էտ կնեգյը տինում ա փիչումը....

Տոռնը պենում ըն, մարթը նի յա մննում, ասում. — Պառռնւգյուն, ա կնեգյ, հաց չը՞ս շինալ, պա տուզն ըմ, հաց պեր օտինքյ։

Կրնեգյը մին հաց ա տինում մարթեն ըռաչին, ասում. — էս ա, կեր, քյինի պենետ։

Հինչու իլած ա ինում, էտ կյողլը կացած տղան տեսնում ա։ Ըր ա կենում, կաշին շըլակում, կյամ թա.— Ա՛ տնատար, ղոնաղ չը՞ք պահիլ՞։

Կնեգյը դաստի ջողաբը տամ ա, թա.— Կորեք ըտղատ, քյուլիմ քյալլա։ Մհենգյ էլ ա իլալ եկած։

Մարթն ասում ա.— Ա՛ կնեգյ, իտի մել ասել, մեհետ էլ յրես կինիմ մին ղարիբ տեղ, լավ չինիլ, ղոնաղը ըստուծանա յա, տրունան ետ չըն տալ։

Տղան նի յա մննում, կաշին տինում տակեն, նստում։ Ըսկսում ա ճրուճրուցնելը։

Վեր ըստա ճրուճրուցնում ա, տնատարը ասում ա.— Դե բոլ ա խրեգյ ճրուճրուցրու։ էտ հի՞նչ ա, ըտրա ցավը։

Տղան ասում ա. — Բալամ էս կաշին իմաստուն կաշի յա, մին պեն ա ասում, ամմա դե ասել չը՞մ։

էտ մարթը շատ ա խրնթրում, տղան ասում չի, ամմա վեր շատ նեղում ա, տղան ասում ա.— Գյիդում ը՞ս հի՞նչ կա, կաշին ասում ա, վեր էն ա փիչումը իփած հավ կա, խե՞ տու հացըտ ցամաք ըս օտում, տուս կալ կեր։

Կնեգյն ասում ա.— Քյուլլիմ ըտրա քյալլան, սոտ ա ասում, իփած հավը հշտըղա՞ յա։

Մարթն ասըմ ա — Ա՛ կնեգյ, փիչին տոռնը պեց, վեր սոտ ինի, ըստրան մին թիքյա թողել չըմ ըստեղ վեր կենա։

Կնեգյը փիչին տոռնը պեց ա անըմ, տեսնըմ ա մին տրելքում իփած հավը տիրած։ Ցոր ա օնում, տինում ստոլեն։ էտ տղան մին էլ ա ճռճռցնում։

Մարթը ասըմ ա.— Մըհենգյ հի՞նչ ա ասում։

Ասում ա.— Ասել չըմ, ասել չըմ։

Էլհա վեր շատ զոռ ա անըմ, ասըմ ա.— Գյուղում ըս հի՞նչ ա ասում, ասում ա էն ա սընդողումը էրկու բիշի էլ կա, մին մարթ էլ։

Կնեգյը սկսում ա ուշունց տալը, թա.— Քու ըստինըտ, ինդինըտ, տուս եք տանաս կորեր։

www.naregatsi.org

Մարթն ասում ա.— Ա՛ կնեգյ, սանդողը պեց, վեր մաչին մարթ չինի, դաստի ըտրա կլոխը կըտըրլական ըմ։

Սանդողեն մաչին մարթին վրեննները, ծեռքերը ըսկսում ա սազ ածելը, տըմբլա թակելը, տողտի նման տըղտողալը։ Սանդողը պենում ըն, տեսնըմ մին մարթ մաչին։ Էտ տղան նան տնատարը յըրան ըն տեռնըմ, կոնդը կտրում... Պենան տուս ա կյամ, վեր կնեգյը սիրական ա իլալ պըհեյիս։

Նստում ըն մին լավ օտում, խըմում, տըռզվըմ, տըռզիկ-ճոտիկը տաւնում։

Տնատարը ասըմ ա.— Հինչ տամ, էտ իմաստուն կաշին ինձ տաս։

Տղան տեսնըմ ա, վեր հինչու ասե, էլհա ինքյ ա ուննական, ասըմ ա.— Ծախըմ չըմ։

Էտ մարթը շատ ա սդիբում, էտ տղան ասըմ ա.— Մին փըրգոն վրեսկե տո, քյըեզ տամ։

Էտ մարթը մին փրգոն վրեսկե յա տամ, ըստակած ծիյին կաշին ինքյ օնում։ Տղան մին փրգոն վրեսկեն պուրում ա տոն։

Մեծ ախպերն ասում ա.— Ա՛ պիծի մեռա՜ծ, էտ ըշտղա՞ յա։

Պիծի ախպերը ասում ա. — Բալամ, ինդի պատառ տենը, ըստակած ծիյին կաշուն մին փրգոն վրեսկե ըն տամ։ Մեծ ախպերը ուրան քսանըշորս ծիյան քսանը մորթում ա, կաշին չուրուցնում, տանում մին փրգոն լծում մնացած շորս ծիավը, տանում քաղաք, ծեն տամ. — Այ լա՜վ կաշի՜, այ լա՜վ կաշի՜։

Դե քըղաքըմը վրեննմաններին դուքյանին լիգյը կաշի յա՜, հո՞ւ վա ինքյ ուննական։ Ինքյ օնող չիկա։

Նտ ա պուրում տոն, ասում. — Ա՛ պել մեռած, քըշերս քյըեզ ըսպրննական ըմ, վեր ինձ խափալ ըս։

Վեր քոն ըն ինում, պիծի ախպերը քյնամ ա մորը տեղը, մորը տանում ուրան տեղը, մորը լեչակը քցում ուրան կլխեն, քոն ինում։

Քշերը մեծ ախպերը ղաման յոր ա օնում, թըրախկ մորը կլոխը կըտրում։ Ուտուբանան պիծի ախպերը մորթած մորը մին փրգոնըմ նըստըցնում ա, կլոխը պընդըցնում, քշում բիդի քաղաք։ Տանըմ ա քշերավը մին ստալավոյու տոան փրգոնը վենն անում, զակազ ա տամ, ըրաղ պերին մորը հետե, գվաքիս թաւ մըրսած ա՜։ Ուրաղը պուրում ըն, ասըմ.— Կա՛։— Խոսում չի։

— Կա՛։— Խոսում չի։

Ստալավոյին գյաղան կըզնըվելան վեր ըստաքանը տամ չի մորը կըլխա՜ն, կլոխը կախ ա անըմ, տղան հարայ ա տամ, թաւ իմ մոր սպանեցեն, իմ մոր սպանեցե՜ն...

www.naregatsi.org

Ստալավոյին վարիչը տղեն քաշ ա տամ ստալավոյը, թա. — Հինչու օղիս կըտանք, մինաւկ թա բիյաբուռ չանիս մըեզ։

Վարիչը պիրում ա ուրան փողավը ղուբի շինիլ տամ, տանում թաղում, բադարաքյ անում, մին փրգոն վրեսկե էլ ա տամ, թա տար։ Պիծի ախպերը վրեսկեն եր կալած քյընում ա տոն։

Մեծ ախպերը ասում ա.— Ա՛ պիծի մեռռած, էտ ըշտըղա՞ յա։

Պիծի ախպերն ասում ա.— Ինդի մին խրեգյ տեն, մըեռալը յաման կյին ա քյինու՞մ...

Մեծ ախպերը կնեգյը, չորս խոխան մորթում ա, փրգոնը լըցնում, տանում քաղաք։

Շեն ա տամ.— Այ լա՞վ մըեռալ, այ լա՞վ մըեռալ։

Կյամ ըն ըտրան մին լավ թակում, թա.— Հի՞նչ ա, մունք մըեռալը տանում ընք հի՞նչ անինքյ, սաղ էլ չի, թա պինըցնինքյ։

Քըռուփեշմեն, օնքերը ուրուր տված, կնեգյը, մին էլ չորս խոխան մին փոս ա ածըմ, վըեղավ անըմ, ֆուրգոնը տեռտակ յոր օնըմ, կյամ տոն, ասում. — Ա՛ պիծի մըեռած, քյըեզ էքյուծ տրննական ըմ, քցիմ ծովը։ Բոլ ա հիշքան քյալագյ եկեր։

Պիծի ախպերը օզում ա, թա փախչի, մեծ ախպերը քըցում ա պարկը, ըռեխը պենդ կապում, հայդա, դիբի ծովը։ Մին դուզալ քյինիյիս, վըխճարու սաս ա ըսկանում պիծի ախպերը։

Ասում ա.— Ըստեղ հալբաթ չորան կա։

Կյոռում ա պարկեն մաչան, թա.— Վա՛յ, իմ ախպեր ինձ տանում ա քաղաք, քյընում չը՞մ, օզըմ չը՞մ։

Մին չորան ըսկանում ա, ասում.— Պա ինձ չի՞ տանի՞ն քաղա՞ք։

Ախպերը պարկը քցում ա տափեն։ Ասում ա պատառ դինջանամ։

Քընավ ա ընցնում։ Չորանը կյամ ա թաքուն պարկը պենում, թա.— Կա իմ փափաղըս, շորերըս, մհակըս կյեց, քյինի վըխճըրնեն տար տու պահե, յըես նի մննիմ պարկը, գյիդան, թա տու վըս, տանին քաղաք։ Իտի էլ անում ըն։

Չորանը նի յա մըննըմ պարկը պիծի ախպերը ըռեխը կապում ա, մհակը յոր օնում, քյնում վըխճըրներեն կոշտը։

Մեծ ախպերը եր ա կենում, պարկը շըլակում, քյնում։ Տանում ա քցում ծովը, հետան էլ, թա.

— Դե քյինի՛, էլհա՞ կկյաս ինձ քյալագյ կյաս։

Ետ ա տեռնում, կյամ տոն։

Չորանը ծովումը խեխտվում ա։

Ուրուգյունը պիծի ախպերը վըխճըրնեն եր կալած պուրում ա, թա.— Ա՛յ ախպեր, ղալեն տոռնը պեց, վըխճըրնեն նի անինքյ...

www.naregatsi.org

Մեծ ախպերը խըրեգյ ա մնամ, թա կյիժվի։ Ասում ա. — Ա՛ պել մըեռած, պա քյըեզ քցեցե վո՞ւչ ծովը, էտ վըխճըրնեն ըշտըղա՞ յա։

Պիծի ախպերն ասում ա. — Ա՛յ ախպեր, հաչա խոր տեղերը չըմ ընգա՞լ, վեր խոր տեղն ընգած ինի՞, շատ վեխճար կպիրի։

Մեծ ախպերն ասում ա.— Յըես էլ ըմ քյիննաչկան, ընգնիմ ծովը, առե խոր տեղը, հանցու քյըզանա շատ պիրիմ...

Սաղ շենը էտ մասին ըուկանում ա... Լոխճան առաչ դերը կյամ ա, ասում.— Ա՛ վերթիքյ, թողեցեքյ յըես առաչ նի մննիմ ծովը, հետևան տուք։

Իտի յա ասում հանցու շատը ինքյը յոր օնե։ Վեր ընգնում ա ծովը, շըլաբան մնամ ա ճյիրին իրեսեն։ Ճուրը վեր լըփլըփում ա, շըլաբան տուրուր ա տամ, ժողովուրթը գյուդում ա, թա դերը ասում ա. — Ա՛ ժողովուրթ, էնա վեխճար շատ կա, եկեք յա։

Լոխ ուրուր հետա նի յըն տեռնում ճուրը, կըտորվում։

Ետևան էրկու ախպերը փսակվում ըն, հաշտ ապրում, վըխճըրնեն պահում ըն, հըրուստանում, կնգատար, թուռնատար ըն տեռնըմ, շենը նոր ավադ անում։ Մեծ շեն ա տեռնում։

www.naregatsi.org



81. ԹԱՋԱ ՓԸՍԱԾ ԽԸԽՈՐՅԸ ՀԵՏԵ

Մեհետ մին քանի խոխա մին տեղավ քյնիյիս ըն ինում, ուրանց հետե խաղ ընելավ։ Քյնում ըն մին բախճի պտահում։ Ըտեղ շատ տաննձը-խնձորու ծառեր ա ինում։ Ծըռերան խնձոր, տանձ ըն քաղըմ, օտում, ծըռերին տալերը կուտրատում, թա.— Ըստրա տրեռնը, ըստինը, ընդինը, էս խե՞ մերը չի, ասըմ ըն, փախչում, թա քյինին ուրանց տոնը։

Էտ վախտը տրանց առաչին մին պառավ մարթ հղենի քյնում ա ընում, շատ ծրավածե։

Էտ խոխեքյը վեր քյինում ըն, հանում էտ պռավենն, պառավըն ասում ա.— Ա՛ վերթիքյ, մին վետը կացեքյ, բալքյամ ծեր ծեռքեն ճուր ընի՞, բալքյամ ըստեղաս մոտե ճուր կա, ախեր պերանս չուրացալ ա, կարըմ չըմ քյինիմ։

Էտ խոխոցան մինը ասում ա.— Դա՛յի, նստե։

Նստում ա, ջուբան մին խնձոր ա տուս օնում, տամ էտ պռավենն։ Պառավը օտում ա, համ ծարավոթունն ա քաշում, համ էլ էտ խնձորը ընդրան շատ ա տուր կյամ։ Խնձորը վեր օտում ա, պըրծնում, տափը մաննավ քանդում ա, էտ կորեզը քցում ըտեղ, վրեղավ անում։

Խոխերքը ասում ըն.— Դայի, խե՞ յըս իտի անում։

Դայինն ասում ա.— Բա՛լա, էս խնձորի ծառը վրողեն մատաղ, ղորմի ընդրան, ծրվոթունըս քաշից, էտ մին, էրկունջինն էլ շատ համեղ ար, յըս էլ ըստեղ վարիմ, մին խնձորե փսնե, հանցու մին դնում մըեզ նման մինն էլ կյա ծրավածե օտե, մըեզ ղորմի տա։

www.naregatsi.org

Խոցան մինը ասում ա.— Դա՛յի, պա տու էնքան կննական ը՞ս, վեր էտ սերմը ծառ տեռած տեսնաս։

Դային ասում ա. — Բա՛լա, վարալ ըն կերալ ընք, վարինք, հանցու օտին։ Մունք բիդի մըզանա ետը եկածներեն հետե շատ պեն թողինք, հունցը մեր պապերն ըն մըեզ հետե թողալ, քյեցալ։

Շատ ա ընցնում, թա խրեգյ, էտ խոցան մինը մեծ մարթ տեռած, հիվանդացած ա ընում։ Տանըմ ըն դոխտուր։ Ետ տեռած կյա՛լիս արևը կըծանում ա։ Կյամ ըն հրդրցեն ղրաղեն տեսնում մին խընձոր։ Տակեն նստում ըն, դինջանում։

Պրռավեն խըելքը կլոխն ա կյամ, եր ա կենում տեղը նստում, տեսնում էտ խնձորեն էն ծառն ա, վեր ինքյը խընձոր ա տվալ ճըննապավը քյնացող հլվերեն, էն էլ կորինձը տընգալ ա։

Մեննը ընգելավ ընդրան խոսկերքը, ասում ա.— Պա՜, ղորմի քյըեզ հա՜, ա՛ ծառ վարող, վրսկռնետ լոնս տեռնա։



www.naregatsi.org



82. ԻՐԵՔ ՀԸՐՍԱՆԵՔՅ

Ամմեն ուռուբանա իրիքյնակը տունս կյալը նբաստ թխես ա Կքավա սարեն ճկատեն։

Էտ Կքավա սարը էնքան ղաշանգյ սար ա, վեր ամմեն մին հղե քյնող ընդրա պեցուր քրեքեն, թխպըմը կորած սրեքեն յըշխս ա, ղորթ-ղորթ վեր պըռըշեն ճուրը քյինխս ա՛։

Ամմեն ուռուբանա, հաչա լուսը լավ չտված, չուբուննեն վեր ըսկսես ըն վխճրհավա ածելը, մարթիս հոքյին փառավերվես ա, սըերտը վրեննն ա կընաս։

Մհետ քյոհնա վըխտեն մին պառավ կնեգյ Կքավա սարեն կլխեն մին սորփ ա շինիլ տաս, վեր ժողովուրթը միշտ ըտեղ սորփ քյեցած տեղը ուրան մըննըրնեն քցին։ Ղուրթղորթ վար աստուծ ղորմի էտ պռավեն։ Ըտրա շինած տեղը շատ լավ տեղ տունս եկավ։

Վըրթեվուրը կյալ նբաստ հիլըհիաչ սաղ ժողովուրթը կնընչկյաըրմուր կյեցած ամեգյը ուրանց ազկեն նհետ քյիս ըն ըտեղ, քյեփ ընես, ղուռնա ըծես, պար կյաս, ահետ էլ ըսկսես քյեփ անելը, օտիլխմելը։

Ջահիլ ըխճկեքյն էլ ուրանց հավան կացած հընգերունցը նհետը քյիս ըն ծաղեգյ քըղես ջանգյուլուխմի հետի, ծաղեգյը մին օշնակ ըծես, ճիրավ լըցնես, մեչը ամեն մին ըխճըկանա մին նշան ա քըցիս, էլա երք ըսելավ կյաս ուրանց մըհլին նհետ խոնվես։ Հաճաեն էս ժողովուրթը պարի, շատ հալալ մարթիքյ ըն իլալ։ Ըստրանց բըղերեն տանձը, խնձորը, մհասուրը, պամադորը, վեր վեր էլ տեռնա,

www.naregatsi.org

փթե, էլհա հրեվանը հրվանեն բոստանեն, բաղեն, ծեռքը նի չի տալ։ Ըստրա հետե էլ ընդրանց շենին անըմը տըրաւ ըն «Հալալքյանդ», էս Հալալ քյանդա երե բաղեն եխծուն քշտեն խաչի ընըմավ երեսունըէրկու տըրեկան մին լավ մարթ ա ըլալ ըպրես։ Էս մարթը ուրան կընգանը նհետ էնքան դոստ ա իլալ, վեր միշտ մին հըլավըմ ըն իլալ քոն ինիս, մին ըմանըմ ըն իլալ հաց ուտես։ Մինը վեր չոռ ա իլալ ըսես, մինըն էլ չան ա իլալ ըսես։

Մեհետ էլ խաչին ուրան կընգանը նհետ մին լուսընընգյա քշեր բլկոնեն նստած սկսես ըն ըխշարքես լավ նան փիս պիներան խոսելը։

Ըտրա կնեգյը ափաթը կտրես ա, թա.— խա՛չի, ա՛ մարթ, դուղըն ասե, էտ վեր տի հետաս մտրկմետակ ըս կյաս, ինձ շատ ը՞ս սիրիս, թա՞ խրեգյ։

Խաչին ըսես ա.— Դե ա՛վալ տու ասե, հետան էլ յըես ասիմ։

Կնեգյը ըսես ա. — Յըես քյըեզ էնքան ըմ սիրիս, հինչքան սեմիշկան ըրեվեն։

Խաչին ըսես ա. — Յըես էլ քյըեզ էնքան ըմ սիրիս, հինչքան պիրինձը իրիքյնակեն։ Հինչ կլոխնետ դանգյ անիմ, շատը-խրեգյ խուսելանը ետը ըստահանք ըսկսես ըն ուրուր քշտավը պարանց ընգնելը, քոն ինիլը։

Քշերը շատ ա ընցնես, խրեգյ ա ընցնես, էլ ետքան գյիդա չըմ, խաչին ըսկըսես ա մին զուլում արած տըեսնալը։ Էն տոնաս ա մին չլիս սև օխծ կնգանը ծոցան կլոխը տուս ա ունես հըլըհաւ ուրան սրտան կծես, թա՞ փախչի, խաչին հըլըըհաւ փռնես ա թող ընես։ Թարսու նման քյիս ա, ընգնես ուրան էրկու տղեն կարավաթեն յրա։ Օխծը ըսես ա, թա՞ խխոնցը կծե, բուրդան էրկու ըլըվալավ ընես ըխճըկերքյ ըն տուս կյաս, էտ օխծեն ըսպնես։

Խաչին քնումը սաբավ ըսես ա թա.— էտ ըխճըկերանցը ըրած լավոթունեն հետե կլոխ տա, բուրդան կլոխը նի յա կյաս կնգանը քթեն, կնեգյը լոք ա տաս, «ա՛ մարթ, ա մարթ» ընես, եր կըցնես։

Մարթը թառանչ քշիլավ ըսկսես ա արազը նաղլ անելը։ Զիքերանը արազը պրծնելը, լուսընաս ա՞։

Մըրթըկնեգյ ըսկսես ըն քնենքյ անելը։ Խաչին քյինիս ա բազարը, ուրան էրկու տըղերանցը նըհետ, համ էլ մտրծես ա, ըսես.— Հիբը ինիս ա ինի, իմ կնգանաս ինձ վնաս ա կյլական։ Յըես կլոխ ըմ յոր ունենական քյինիմ մին օխտը տարե ըստեղ-ընդեղ ապրիմ, ետնան էլ կյամ կոշտը, թա՞ ուրան լավ կպահե, էլհա իմ կնեգյս ա, թա՞ փիս կպահե, թող աստուծ պատիժ տա։

www.naregatsi.org

Խաչին քյիս ա տանաս մին պառավ կնեգյ հեն ա բզարեն ղրաղեն նստած, մին ծետ, մին էլ էրկու ծտու ծին ծեռքեն ծխես։

Խոխենքյը տեսնալը նբաստ լաց ըն ինիս, թա.— Ապա, ինքյ կալ, մրեզ տո։

Խաչին էլ մտածես ա, վեր էս ա կլոխ ըմ յոր ունես, քյինիմ, խոխոնցըս քյափեն հո՞ր նի կյա՞մ։

Տրանց հետե էտ էրկու ծուն ունքյ ա ունես թա կյա, պառավըն ըսես ա.— Էտ էրկու ծունն համմեն էտ ծտեննն ա, էս ծետն էլ մեր տանը պատըմն ա միշտ պունն տինիս։ Խոխենքյըս լոխ մեռալ ըն, մինչա մնացալ ա էս ծետը էս իմ հնգյերն ա։ Կլխավըտ շոռ տամ, շատ ըմ խնթրես, վեր մին լալ տեղ պահիս, ճոտեր անի, հու վեր ըխշարքըմ օրիշին բըլենեն կուտուրես ա, աստված էլ ընդրա բըլենեն կուտորե՞։

Խաչին պրիս ա էրկու ծունն տնիս ուրան օթախներեն մինումը, ծետըն էլ թունլ ընես տանը, ինքյը կընգանը ըսես.— Հինչ մարթ էլ կյա՞, թողիս վեչ նի մնենե էս օթախը։ Թող ճոտեր անե։

Խոխենքյըս միշտ թունլ կանիս, հանցու խաղ անին, ինքյը փռնես ա խոխոնցը պըչպըչորես, կնգանըն էլ կոլայվը ընգնես, աղի ըրտասունքնեն շըռռըցնելավ կլոխ յոր ունես, քյիս։ Թա բիդի ըշտեղ ա քյիս, ըտ էլ աստուծ կգյիդա։

Կնեգյը շատ ա լաց ընիս, խրեգյ ա լաց ընիս, էտ աստուծ կգյիդա, ըսկըսես ա ինքյը ուրան խելք տինիլը, ըսես ա.— Աստված իմ աշկերս քուռըցնես ա հինչ տեռնա, մարթս վեր իստի բեյնամուս ա, պա քյիս ա, քյինի, հալա հանցըմ մեկալ օրան ախճիգյը ինիմ։

Իստի յա ըսես վազ տաս բիդի հիլին, թա տեսնա ջահիլ ա՞, թա պառավ։ Մին խիլլա ծռմռոտելանը ետը, ըսես ա.— Խե՞ յըս գյիդաս չը՞մ, վեր ամմեն թոշես մինը հանց ա մղրըճանջու աշկ ինի պըլպըլաս։ Խե՞ գյիդաս չը՞մ, վեր աշկերըս հանց ա փըլստրատին տվող մտանու աշկ ինի։ Վրեղըն իմ կլխե՞ս, լհա ասիս տանն ըմ մրննակա՞ն։

Իստի յա ըսես, պրծնես, հըլբըհալ վազ տաս քյուչան, թամաշա ընելու հետե։ Թարսու մնան մին ախմախ շան տղա թառը ծեռքեն, երք ըսելավ կյամ ա թա ըտրա դըրբզեն քշտավը քյինի՞, էտ բեյնամուս կնեգյը հըլբըհալ սիրահարվես ա ըտրա յրան, սոտ տեղան ճպղես, շրոմփ վեր ընգյնես, թա հանցու վեր էտ երք աստղը կյա, պցրցնե։

Պա լհա տրա մթկավը չի տռնա՞՞՞ս։

Էտ տղան տեսնալըն նըբաստ, հըլբըհալ կյաս ա կուռնան փռնես, յոր օնես։

www.naregatsi.org

էտ բեյնամուսը աշկերը հլբհշալ պըցըհոփ ա ընես, թա.— Տու ինձ սըղըցրալ ըս, ա՛հետ էլ տար մեր տոն։

Տղան տընես ա ըտրան տոն, էտ կնեգյը հացա, զատա շինիս ա, սկսես ըն օտելը։

էտ տղան ըսես ա.— Մարթ օնի՞ս։

էտ բեյնամուսն էլ շիլ ա ընգնես ըսես.—Չէ, քսանըօթ տըրեկան ըմ։

— Դե լավ, վեր քսանըօթ տրեկան ըս, իտի էլ ղաշանգյ, խե՞ չըքրանը մհենգյ մարթու չըս քյեցա՛լ։

Կնեգյը ըսես ա.— Քյեցալ ըմ է՞, խրեգյ ըմ կացալ, էրկու տղա օնիմ։

էրկու տըղեն անըմը տալանը ետը էտ տըղան հլբհշալ ըսես ա, թա տունս կյա, էտ կընեգյն ըսես ա. — Վեննը կաց, մին պեն ասիմ, վեր մեռնիմ էլ, յըես կյաս ըմ քյըեզ։

էտ տղան ըսես ա.— Դե թողե քյինիմ, փող թուփ անիմ, կյամ քյըեզ օզիմ։ էտ տղան քյիս ա եշիլ տաս, տըեսնա էտ պենեն կլոխը հի՞նչ տունս կկյա։

Ցիգանը ըսես ա.—էն կնեգյը շատ ա քյըեզ սիրիս, ամմա հեն ա տանը էրկու ծտու ճոտ կա, քյինի մորթել տո, կեր, քյըեզ հինչ վնաս կյա ընդրանա յա իննաչկան։

Տղան կյաս ա տները շոռ կյաս, վերչին տոնը էտ կնեգյը թուղես չի պենա։

Խիլլա խուսելանը ետը պնա՛ս ա, տըսնաս իրեք ծետ մաչին, ըսես ա.— Ստրանք մորթե, իփի, ուրուգյունը կյամ, օտիմ։

Կնեգյը ըսես ա, թա մազերը քանդի, ըսես ա.— Թող վեխճար մորթիմ, համոթ ա։

Տղան ըսես ա.— Չէ՛։

Վերչը կընեգյը մըրթուտես ա, շինիս, քյիս թա ճունր պիրի, կյաս ա տըսնաս տըղեքյը ըշկոլան եկած, կերած։ Կիճի տղան կըլխընեն ա կոլ տվալ, սկսալ զկռհատ կյալը, հլբըհշալ վրեսկե յա վեր տեռալ, ամմա մեծը, օտելըն նըբաստ հլբհշալ իմաստուն ա տեռալ։

Մարը էտ պենը տեսնալը նբաստ տրանց ըսկսալ ա թակելը, թա.— Տուք խե՞ կերալ ըք։

Խոխեքյը տունս ըն տեռալ բիդի շկոլը փախալ։

Սիրականը եկալ ա, թա.— Պա հի՞նչ տեռավ։

Կնեգյը թա.— Պա իստի իստի պեն։

Սիրականը թա.— Դե վեր իստի յա, ըտանց կտորել տո։

www.naregatsi.org

Մարը քյաթա յա թըխես, ճար ըծես մաչը, վեր կյան օտին, կտորվին։ Համան իմաստուն ախպերը թուղես չի։

Կյալը նըստ հլըրհաղ ըսես ա.— Մաման մատաղ, պա կերեքյ շատ ըք սուածե։

Իմաստունը ըսես ա.— Մամա՛, մեր վարժաբեդը շատ տաս ա տըվալ, մջալ չօնիքյ։

Մըհետ էլ յորղանը ճրես ա, վեր կյան քոն ինին, կտորվին։ Էլհա իմաստուն ախպերը թուղես չի։

Էրկանըկարճ մտածելանը ետը ծեն ա տաս մին մարթու, մին փութ վըռակե տաս, թա.— Տար ծըմակըմը կտորե ըտրանց։

Էտ մարթը ընես ա առաշկը, թա տանե, կտորե։

Հղեցը իմաստունն ըսես ա.— Ապեր, մըեզ ըշտեղ ը՞ս տընես։

Ըսես ա.— Ապերը ծըեզ մատաղ, հի՞նչ կյեղիմ, ծեր մար իստի քյալաթյ ա ուզիս պիրի ծեր կլինքը։

Իմաստունը ախպորըն ըսես ա.— Ախպեր վըռակե վեր ածե։ Կիճի ախպերը վեր զկռհատ ա կյաս, վըռակե յա վեր տըռնաս։

Իմաստունը մաննը կտրես ա, էրկու հլըվնեն ըռնըթաթախ ընես, տաս հունըվուրեն, թա.— Քյինի խբարը տար վեր կտորալ ըս։

Տրանք շատ ըն կյաս, խըրեգյ ըն կյաս, կյաս ըն հանես մին խոր ծմակ, տսնաս էրկու հղե, մինին մեչ տըեղը մին փաղդի յըա կյըրածե, թա. «Ըստեղավ քյինողը ընգնե սուու մաչ»։ Մինին էլ կյիրածե. «Ըստեղավ քյինողն էլ ընգնե օրան հղե»։ Էրկու-իրեք սհաթ ուրուր անա լաց ինիլավ պուչպուչուրես ըն, պժինվես, հանցու վեր ամմեգյը ուրանց ջանը քյինին պահին, ջընըրնեն յաղու ծեռքա ազադին։

Իմաստունը շատ ա քյիս, խրեգյ ա քյիս, տսնաս ա մին տըեղ տափերը լոխ ադրին ա։ Ըռնեն մաչավը քյիս ա, թա ճուր քթենա, խմե, տսնաս ա էնա մին ախպուրու ղրաղե մին պառավ նստածե։

Ըսես ա.— Ա՛ մար, յանի հի՞նչ կինի, վեր թողիս ճուր խմիմե։

Պառավըն ըսես ա.— Բա՛լա, ախեր կըկյան ինձ էլ, քյըեզ էլ մորթին, էս ախպուրը թաքավերեն ախպուրն ա։ Վեչ մինը իրավունք չօնե ըստղան ճուր խմե, պա տսնաս չը՞ս աշխարքս ուրուր կոխածե։

Ըսես ա.— Ազի ջան, էս հի՞նչ ադրին ա է՛, ախե՛ր։

Պառավըն ըսես ա.—էտ էրկու թաքավերը էս ա օխտը տարե յա կուվես մին ըխճկա դաղդա։ Մին թաքավերեն մին ըշկանե տղա օնե, ըսես ա թա էն մին թաքավերեն, վեր մին հունրիփաղրի ախճիգյ օնե, օզե, ախճիգյը քյիս չի, տրա հետե կուռվ ա, տու ըստըղաս քյինի, խըեղճ ըս, քյըեզ մորթիլու յըն։

www.naregatsi.org

Իմաստունը յիշիս չի, հղե յա ինիս։

Պառավը ըսես ա.— Ա՛ բալա, վեր քյիս ըս ըռշկետ էն ա ծմակեն մաչին մին Թըռչկան ծի կա, Թա վեր կաՀրիս էտ ծին յեր ինիս, սաղ ըս մննական, Թա չէ՝ չէ։

Իմաստունը կյաս ա տսնաս ծմակեն խորքումը մին ծի։ Ջլավը ըսես ա Թա կտրե, փախչի։ Կյաս ա Թա փռե, Թուղես չի։ Շատ ա չալմիշ կյաս, խրեգյ ա չալմիշ կյաս, կրես չի։ Ըտրեղ էլ քունավ ա ընցնես։

Ըրաղըմը տսնաս ա, վեր մին ախճիգյ կյաս ա, Թա.— Մղափուն ըս տու, ա՛ ջահիլ տղա՜, վեր եկալ ըս ըստրեղ, քյրեզ ըսպննական ըն։ Եք խոսկես անջուկ կալ, ըզադվե։ Հեն ա ծիյին անա վերը ծառենը փշակումը մին քար կա, քարեն տակեն էլ ծիյին մազան մին մազ։ Քյինի վեր կալ, կտրե, ծիյին օժը պկսլական ա, վեր իլ, հանցու քյրեզ սպանող չինի՜։

Բուրդան էտ տղան լոք ա տաս, տսնաս ըրազ ա։

Եր ա կընաս մթկեն դոնը ընգած քյիս, տըսնաս դուզ։ Մազը կտրես ա, կյաս եր ինիս ծին, ընգնես հղեն։

Քյիս ա, տըսնաս ըռշկեն մին պեցուր հասար քաշած պալատ։ Մին քշիս ա, լոք տաս, նի մննես մաչը, ծին կպես։ Քյիս ա տսնաս մին ախճիգյ հեն ա սև շորեր կյեցած մին կարավաթու յրա նստած։ Հինչքան խուսես ա, ջողաբը տաս չի՜։

Ըռշկեն չուքես ա, ղաչանք ընես, Թա.— Ա՛յ դունյա գյոզալի, խե՜ չըս խուսես, յրես փասանԹես մարթ չը՜մ, ասե տեսնամ դաՀրդըտ հի՞նչ ա, վեր սև ըս կյեցալ, դաՀրդիտ դաՀրման կանիմ։

Ախճիգյը խղճաս ա, ըսես.— Ա՛յ տղա, ինձ հետե իմ հաՀր ուրան զորքավը օխտը տարե յա կռեվ ա ընես, աՀրուն Թփես, ուզիս չի, վեր ինձ տա մին քոռ տղու։ Էտ հավալամիշ իլած տղան էլ էրկու վըրենը տիրալ ա մին չըմըշկում, Թա չէ՜, վեր չէ՜, յրես էտ ախճիգյը բեդմա օզիմ։

Տղան ըսես ա. — Յրես կըքյինիմ քյոմագյ ինիմ։

Թռչկան ծիյին մին շալլըրեղ ա Թխես, Թռչիս։

Քյիս ա, տըսնաս էրկու զորքը ուրուր նհետ կռեվ մտած։ Մինին քայդաղը սև ա, էտ ըխճկանը հաՀրն ա, ուզիս ա ասե, վեր մին ախճիգյ օնիմ ըն էլ օրը սև ա, էն մինին քայդաղն էլ կյաՀրմուր։ Էն մին Թաքավերն էլ ուզիս ա ըտրանավ ասե, վեր աշխարքս վեր խստի կյաՀրմուր աՀրուն անիմ, բիդի տղես սիրածը ունքյ օնիմ։

Թաքավերնին յզիս ըն, տսնաս ծմակեն ըռխեն Թոզը յեր ա ըլալ երգյինքյը, ամմա զորք չի ըրվաս։

www.naregatsi.org

Իմաստունը ծին քշիս ա տղեն հորը զորքեն յրա, մեհետ վեր հռւլլռւրես ա, թաքավերեն կլռխը եր ա ինիս երգյինքյը։ Մըն էլ վեր հռւլլռւրես ա, զորքեն կեսը քյիս ա։

Ըխճըկանը հաըը ըսես ա, թա քյոմագյ ինի, իմաստունը թողես չի, ըսես ա.— Ընդրանք մեղավեր չըն, մեղավերը ըսպանված ա, հինչքան աըռւն ա ըրալ, բոլ ա, քյեցեքյ, ըպրեցեքյ։

Էրկու թրափեն զորքը թաքուն կյաս ըն, թա տրեսնան էտ հի՞նչ աստուծ ա, վեր բռւրդան աըռւնը ճրավ ա լվացալ։

Կյաս ըն, տրսնաս մին ղաշանգյ տղա։ Ըխճկանը հաըը հրամման ա տաս էրկու զորքեն, վեր էս մարթին խաթրու բիդի օխտը օր քյեփ անիքյ։ Օխտը օր, օխտը քշեր քյեփ ըն ընես։ Ըտրանա ետը էրկու թրափեն ժողովուրթը ըսկսես ըն սերավ ապրելը։ Թաքավերեն ախճիգյըն էլ սև շորերը տեն ա քցես։

Էն աստուծը, մին ծեռք շոր աը կյեցալ, վեր ըշխարքըմս հինչ ըռանգյ ասիս, յրան ըլըվալավ ար ընես։ Ինքյն էլ ուրխոթունան հոըշնալ, ալավ-ալավ ար ընես։

Կոզի լոխ ուրխացալ ըն, ամմա ըխճկանը հետե ասիս մին կռեվը պրծալ ա, մինըն էլ թաղա յա ըսկսալ։ Սրտեն մաչը մին կրակ ա ընգալ, սեր կրակը, վեր մարթի խըրավես ա, քյումռւր շինիս։ Ըսես ա թա քարերը, քոլերը, քանդի։

Աշկերը տռնաս ա ամմեն մինը մին խնձոր, ընդրա հետե անքոն անդարար մտրծես ա, ըսես ա.— վեր մեռնիմ էլ, յըես քյիս ըմ էտ տղեն։

Էտ պենը հսնես ա էտ տղեն։ Տղան սուաըփուս կյաս ա ըխճկանը տոնը, ուրաան սրտենը պըտմես, ըսես ա. — Յըես քյըեզ սիրիս ըմ, հունցու վեր մարթին հետե ճռւր նան հացը։ Ամմա ինձ մոհլաթ տո, քյինիմ սրտըմըս մին ցավ կա, առնիմ, կյամ։

Տղան խոսկ ա տաս, հղե ընգնես, թա ըշտեղ ա քյիս, աստուծ կգյիդա, մին էլ ինքյը կգյիդա։ Լավը լհա լավ ա, աստուծ փիս կնգանը, դավաճան սիրածեն, փիս հնգյերեն, չար ըխճկանը մեսը փըթըցնե թափե տափեն յրան, մնա լհա վսկռնեն, մին էլ երեսունըէրկու պատրոնը։

Իմաստունը կյաս ա, հսնես մին նոր աշխարք, տսնաս մին ջահիլ տղա, էն աստուծը, վեր կրակ էլ քցիս, խնձըռնավետը վեր չի ինի՞լ, հեն ա մին բոլռւկ ղազ ըրած առաշկը, պրհես։

Էտ իմաստուն տըղան ըսես ա. — Ախպեր տղա, տու հո՞ւ վըս, հո՞ւր ղզարած ըս։

Ղզարածը ըսեսա. — Քանե վեր ըշխարքումըս կնգանը խափիլը,

www.naregatsi.org

մարթկանց ըշկըկպոթունը կա, էտ ա տու վէլ ըս հվարած տունլական, սուս ըրա, քյինի։

Իմաստունը ըսես ա.— Ա՛խպեր, թա տունդն ըս, միկա հաց տամ, կեր։

Ղզարածը ըսես ա.— Քու հացըտ հարկավեր չի, իմ ըրտուսունքնիս ինձ կքշտըցնե։

Ըստի յա ըսես, ըսկսես լաց ինիլը։ Իմաստունը թուղես ա, կյաս մին տունավ նի մննես, թա.— Բա՛ջի, ինձ ղոնաղ չը՞ս անել։

Մին պառավ ըսես ա.— Ղոնաղ կանիքյ, ամմա շար չօնիքյ։

Ըսես ա.—Վնաս չօնե, թաքյ լհա տռանը չմնամ։

Ուրուգյունը էտ ղզարածը կյաս ա համին էտ տոնը։ Պառավը քյիս ա, թա կվերը կթե։ Էտ իմաստուն տըղան բուրդան տեսնում ա մին շարմաղ-վլլամաղ ախճիգյ եկավ, ասիս լհա մղրհացու կրոյնը ինի։ Պուլլար, ղաշանգյ, աշկերըն էլ ասիս էրկու աշկ ինի երգյինքումը, դոշին էլ վեր եշիս, ամման աստուծ, ասիս ղուշի պերց ինի։

Էտ ախճիգյը ըսես ա.— Ղազերը լոխ պերա՞լ ըս։

Ղզարածը ըսես ա. — Հա, խանըմ ջան։

Ախճիգյը ըսես ա.— Վեր իտի յա, փռնե էս խնձորը կեր, վեր սերտըդ դինջանա, խեղճ ըս։

Տանը խալխը լոխ հըվըրքվես ըն, ըսկսես ըն հաց օտելը։ Ղոնաղըն էլ ա սկսես օտելը։

Հացը օտելանըետը պառավը ըսես ա.— Ղոնաղը շատ պեներ գյիդող կինի, մին պեն ասե, քշերը անջուվ օնիքյ։

Ղոնաղն ըսես ա.— Ցրես իրեք պընգըլ ըմ ըսլական, թա վեր քթիքյ, յըես ըստղաս տունս կըկյամ, թա վեր քթիքյ վեչ, էս ղզարածն էլ, էս ախճիգյն էլ ինձ բեդմա տաք։

Պառավը ուրան շատ գյուղողի տեղ տինիլավ ըսես ա. — Հա, լավ, հի՞նչ կինի՛, աշխարքս ամալ, տու վէլ ջամալ, ասե։ Թա չէ ըռշտոտումըս կյամ ա, ամմա հալա քոն ինիլի վախտ չի՛։

Ղոնաղը ըսես ա.—Էն հի՞նչն ա, վեր մին թառանչը տունս ա կյաս իրեք սրտա, համ էլ մին ցավ ա տուրուր տաս իրեք սրտըմըն էլ։ Էն հի՞նչ ա, վեր էրկու չոր կլոխ հեն ըն մին չոր կրկաժըմ տիրածե։ Էն հի՞նչ ցավ ա, վեր քարըքար ընգած մարթկանցը ծիքյ ա տաս, պիրիս ուրան ուրուրուցեն կոշտը։

Վեչ մին հարցեն էլ պառավը կրես չի բադասխանը տա, ըտրա հետե խնթրես ա, վեր բադասխաննին ասե։

Ղոնաղն ըսես ա.—Էտ էն թառանչն ա, վեր էս սհաթիս բիդի քաշի ախպերը, քթած ախպորը հետե, էտ էն թառանչն ա, վեր թա-

www.naregatsi.org

քուն սիրահարված ախճիգյը, բիդի սերը տա իմ ախպոր, էտ էն թառանչն ա, վեր իմ ախպերը բիդի սիրի, ուրխանա: Էտ հարազատներին ունուր տրեսնալի թառանչն ա, վեր իրիքյնակը սրտըմը կրակ ա ըրալ:

Էրկունջինն էլ էն ա, վեր իմ ըխպրակեն իմ ախպոր հըրփըցրալ ա, ախպերըս սըերտը թափալ ա, ինքյը ծտեն կլխնեն եր ա կալալ կյեղալ, հեն ա մին յիշիգյըմ, հանցու վեր իմ ախպեր օրուշ տեղ չի քյինի քըշտեն կենա:

Իրեքինջինն էլ, վեր մարթին երգյիրը ծիքյ ա տաս, տնես ուրան ծնված տեղը:

Ուրխունալան նհետ օխտը սհաթ ախպերք-ախպերք ուրուր անա պուք չըն կյաս:

Մին լավ քյեփ ընելանը ետը եր ըն կնաս, իմաստուն ախպորը նշանածն էլ քյիս յոր ունես, չուրսեքան քյիս ուրանց ուրուրուցեն կոշտը, ուրանց վըեղը:

Էրկու ախպերը քյիս ըն մին ծանոթ դամուրչու տունը նի մննես, էրկու խանչալ շինիլ տաս, սրքես, պտրստես, կյաս ուրանց ծնող մորը կոշտը հանես, կլինխը տական նհետ կըտրես, տուանը մին մեծ փոս կտրես, կրակ ընես, ծախող մորը ջամդաքը կրակը շըպռտես, իրիս: Միչև օրս էլ հա ծոխ ա ընես:

Ամմեն մին հղենի քյնող զզվես ա, ըսես.— Թու՛, էս ծոխան հի՞նչ փիս վրետ ա կյա՞ս:

Օխտը օր, օխտը քշեր ըսկըսես ըն հրսանեքյ անելը: Լհա հրսընքեն շորերը կյնաս տեղը, ղաբիբ հարն էլ նի յա մննես, տեղնուտեղը հաստըպերաք մրտծելավ կլինխ ընգնես դավաճանեն պեները: Հըրսընքեն կեսը չհրսած, պարի տղերքյը ղաբիբ հորը հետե մին կնգացու յըն քթնես, ետնան էրկու տղեն նաև ուրանց հորը հրսանեքյը մին տեղ ըն ընիս:

Ներակ ընդրան, ա՛ ժողովուրթ, վեր շատ տընջվելանը ետը գյանքին վերչն էլ շատ պարի, շատ բախտավեր կինի՛, շատ լավ, սրտեն օզածը կինի, կըկատարվե:

Աստված դավաճանեն, կեղծեն, հիմարեն, ծուլեն մըզանա հրեռե տանե:

Էրկու տղան նաև մին հարը հսեն ուրանց սրտին մուրազեն: Դե իմ մուրազս տըեղ չի հրսավ, տուք էլ լոխ հանիքյ ծեր մուրազեն:

www.naregatsi.org



83. ԹԱՔԱՎԵՐԻՆ ՊՈՒՃՈՒՐ ՏԸՂԱՆ

Մի թաքավերի իրեք տղա յա ինում։ Էտ թաքավերեն տղերքյը մրծանում ըն։ Թաքավերը մտածում ա, վեր էս իմ թաքավերութունս մին ժամանակավեր պեն ա, փորցիմ տեսնամ տղորանցս վե՞րն ա լավ, ընդրան տամ, յրես էլ պըռավալ ըմ։

Էն մին օրը մրեծ տղին ղարկըմ ա բազար։ Տասը մանեթ փող ա տամ, ասում.—Քյնա՛ բազար, տես-տեն ինքյ կա՛լ պեր։

Մրեծ տղան տեսը-տեն ման ա կյամ, վեչ մին պեն ուրա՛ն տուր չի կյամ։ Կյամ ա տեսնում պատեն տակեն վեքյի յըն խաղ անըմ։

Եշում ա, եշում, ետավ ինքյն էլ ա խաղ անում։

Ասում ա.— Լա՛վ պեն ա, յրես էլ խաղ անիմ։

Խաղ ա անում, փողը լոխ տանել տամ, տերտակըրոշ տոն քյնում։

Թաքավերը էն մին բազար օրը մեշնա՛կ տղան ա ղարկում բազար։ Էլհա տասը մանեթ փող ա տամ։ Էտ տղան քյնում ա բազար, տես ման կյամ, տեն ման կյամ, էլա վեչ մին պեն ուրա՛ն տուր չի կյամ։ Տեսնում ա փայտոնին մաչին գարմոն ածիլավ տես ըն քյնում, տեն ըն քյնում։ Ուրա՛ն տուր ա կյամ, նստում ա, քյեփ անում, փողը խարջում, տերտակըրոշ տոն կյամ։

Թաքավերը ասում ա. — Համ մրեծա՛ ա բեդասըլ, համ էլ մեշնա՛կս, եր կենամ պուճուր տըղիս ղարկիմ։

Ըտրան էլ ա տասը մանեթ փող տամ, ղարկըմ բազար։ Պուճուրը յոր ա օնըմ հըղե ընգնում։ Տես ա ման կյամ, տեն ա ման կյամ, վեչ

www.naregatsi.org

մին պեն ուրան տուր չի կյամ։ Ասում ա քյնաւմ տոն, ինձ վեչ մի պեն հարկավեր չի։

Կյամ ա, կյամ, հրաղրցեն կեսրմը ասում. — Հայրիկիս հետե մին փոնջ մնեշակ քաղիմ։

Նշրմ ա տեսնում կոխկի հանգիստարանումը մին մարթ մին մրեռալ տուս կալած փադավ թակում ա։ Էտ մեռալն էտ մարթին հենգյ մանեթ պարտք ա ինում։ Ըտրա հետե էլ ամեն օր թակում ար։

Էտ մարթը կյամ էր մրռալին ասում.— Փողս տու։

Թաքավերեն պուճուր տղան տեսնում ա, վեր էտ մարթը էտ մրռալին չրշարում ա, ասըմ ա.— Ա՛յ ախպեր, խե՞ յըս թակում։

Ասում ա.— ինձ պարտկ ա, բիդի պարտկս տա։

Էտ տղան ասում ա,— Յրես էտ մարթին պարտկը տամ, էլ կյաս վեչ չրշարիս։

Ասում ա.— Չէ, չրշարել չըմ։

Տուս ա օնըմ հենգյ մանեթ տամ էտ մարթին, էն էլ չրշարում չի էտ մռնին, թողում ա, քյընում։ Էտ տղան մին փոնջ մնեշակ ա քաղըմ, քյնում հորը կոշտը։

Բեքյեփ հաւրը ուրխանում ա, վեր տղան մին փոնջ մնեշակ ա քաղալ ուրան հետե, տերտակ չի եկալ, ամմա հրրցընում ա.— Բա՛լա, խե՞ բեքյեփ ըս։

Տղան ասում ա. — Հայրիկ, քյրեզ ըսեւլի չի՞։ Շատ փիս պեն ըմ ըրալ։

Հաւրը ստիբում ա, ասըմ, ասի տրեսնամ հի՞նչ ըս ըրալ։

Տղան նաղլ ա անում կլխավն ընցածը.— Ա՛ հաւր, ըզըդեցե մեռալը էն մարթեն անա, հենգյ մանեթ տվի։

Թաքավերը շատ ուրխանում ա, վեր ուրան տղան տի խղճմտանքավ ա, ասում ա.— Շատ լավ ըս ըրալ, էտ հացը հիբը ինի ուտլական ըս, տա քյրեզ համար մին կուտուր հաց ա։

Մին էրկու տարի յա անց կենում։

Էտ տղան ասում ա.— Հայրիկ, յրես օղում ըմ օրիշ քաղաք քյընամ, ինձ հետե ըշխադիմ։ Ինձ մի խուրջին փող տուր, քյնիմ օրիշ քաղաքում մագազին պեննամ, առըտուր անիմ։

Մարը եր ա կենըմ, լավ պաշար անըմ տղեն հետե, մին խուրջին էլ վրեսկե յա տամ, մին ծի էլ նհետը։ Տղան քյնաւմ ա։

Շատ ա քյնաւմ, խրեզ ա քյնաւմ, հրաղրեցը մին մարթի յա ուրջահ ընում։ Էտ մարթը համին էն մրռալեն հոքյին ա ինում վեր ինքյը ազադալ ար։ Էտ տղեն քյոմաւգյ ա անում, ամմա էտ տղան գյուղում

www.naregatsi.org

չի, վեր էտ մարթու կերպարանքավը ուրիշն ըզադած մարթին հոքին ա։ Ուրուր նրհետ խոսում ըն։

Էտ մարթը հըրցընում ա.— Ըշտե՞ղ ըս քյընում։

Տղան ասում ա.— Քյընում ըմ փլան քաղաքումը մագազին պեց անիմ, առըտուր անիմ։

Ասում ա.— Ա՛խպեր, ինձ փող չօնիմ, ամմա առըտուրումը կլիխս լավ ա, եք ըխպրանանք, խոսկերնիս մին անինքյ, յըս հինչ ասիմ, իմ խոսկավս քյինի։

Թաքավերին տղան համոզվում ա։ Ասում ա.— Հինչ աշխադինքյ, կես անինքյ։

Խոսկը մին ըն անում, քյընամ։

Քյընում ըն հըսնում մին քաղաքի։ Մագազին պենում, լավ առըտուր անում։ Էտ քաղաքումը մին թագավերի ախճիգյ ա ընում շատ կյեղեցիկ։ Հաըը սըվըրցնում ա, թա քյինի էն տըղորցը կըլխընեն կըտրե։ Ախճիգյը կյամ ա մագազինը, ամմա էն հոքին մարթի կերպարանքավ իմաստուն ա ընում, հըսկանում ա, վեր թաքավերը սվրցրալ ա, թա կլխնին կտրե։ Ըխճըկանը ճընապար ա տնում, ասում՝ էքյուծ կըկյանք։

Ետավ ետ ա տըեռնում թաքավերին տղին ասում.— Ապրանքը ծախինքյ, քյինինքյ, էս քաղաքեն թաքավերը մըեզ նրհետ լավ չի։

Ամմա էս քաղաքեն թաքավերը էքյսի օրը հրամման ա տամ էտ տղորանցը, վեր.— Ըկեք ըխճըկանըս ուզեցեքյ։

Էտ իմաստունը ասըմ ա.— Քյնանք, ամմա ընդրանց խորագյան օտինքյ վեչ։

Տհենց էլ անում ըն։

Էքյսի օրը կյամ ըն տոն, ուրինց սաղ ապրանքը ծախում։ Ծխելանը ետը թագավերին աղճիգյը օզում ըն։ Էտ ըխճըկանը ծոցումը օխծ ա ինում, վեր սուվթա քշերը էտ օխծը կծիլ պիտի էտ տղեն։

Էն մին տղան թաքավերեն տըղեն ասում ա.— Առաչին քշերը յըս ըմ քյննական ըխճըկանը կոշտը։

Թաքավերեն տղեն քյեփին նի յա կյամ։ Ասում ա.— Դե վեր ուրին հետե յա օզում, խե՞ իմ ընըմանե օզից։

Վերչը համոզվում ա։ Էտ տղան քյնամ ա էտ ըխճըկանը կոշտը ասում, վեր շորերը լօխ հանե, կյա կոշտը։ Աղճիգյը տեմ ա կաղնում, շորերը հանում չի։ Էտ տղան խնթիր ա տնում, վեր թա ուրին սիրում ա, շորերը հանե։ Ախճիգյը ստիըվածծ շորերը հանում ա։ Շորերը վեր հանում ա, իրեք օխծ ա վեր ընգնում։ Էտ տղան խանչալը

www.naregatsi.org

քաշըմ ա էտ իրեք օխծեն սպանում։ էտ տղան տրանից ետավ ինքյը դաստի տուն ա կյամ, թաքավերին տղին ղարկում ըխճըկանը կոշտը։ Ախճիգյը տեմ ա քյնում ուրան հոր ասածներին, էտ տղորանց նհետ փախչում ա։ Քյնում ըն հասնում էն տեղը, վեր էտ էրկու հընգերը հընգերացալ ըն։

Էտ հոքին ասում ա.— Մըեր աշխադանքը պետկ ա կես անինքյ։

Թաքավերին տղան համաձայնվում ա։ Կես ըն անում, մնամ ա ախճիգյը, էտ հոքին խանչալը հանում ա, վեր էտ ըխճըկանն էլ կես անե, ամմա էտ ախճիգյը վախըմ ա վախելան նըհետ մին օխծ էլ ա պըրանավը վեր ընգնում։ Էտ տղան խանչալը քաշում ա, էտ օխծը սպանում։ Քյընաչիս բուրդան էտ տղին աշկան վեր ա թռչում էտ հոքին կորչում։

Թաքավերեն տղան մնամ ա մինակ։ Ըտեղ շատ տխրվում ա, վեր ուրան հնգերը աշկեն ըռաչան կորավ։ Շատ մտածելանը ետը, էտ ըխճըկանը նըհետ կյամ ա ուրան հորը տունը։ Հաերը շատ ուրախանում ա, վեր ուրան տղան էտքան հարստոթուն ա պերալ, համ էլ մին ախճիգյ։ Ամմա էտ տղան շատ տխուր ա ինում։

Թաքավերը հըրցնում ա.— Խե՞ յըս տխուր։

Տղան նաղլ ա անըմ։ Հաերը ասում ա, վեր էն հոքին քյըեզ էտքան քյոմագյ ա ըլալ, էն հոքին ա իլալ, վեր ա թռալ։

Հաերը պերում ա տղեն հետե մին լավ հըրսանեքյ անում, տղեն փսակում, թաքավերոթունն էլ տամ էտ տղեն։

www.naregatsi.org



84. ԹԱՔԱՎԵՐԻՆ ՊՈՒՃՈՒՐ ՓԸԵՍԱՆ

Իլալ ա, չիլալ մին թաքավեր։ Էտ թաքավերեն իլալ ա իրեք ախճիգյ։ Կուճուրը քյաւիր տղու վա տվալ, էն էրկունն էլ հըրուստու։

Մին օրուշ թաքավեր եկալ ա էտ թաքավերեն թա։— Յա քառասուն ըտժանեք տունըտ տոք, յա քառասուն տարվա հացամթերքըտ տոք, թա չէ կյամ ըմ քյըրեզ յրա կռեվ։

Թաքավերը համոզվում չի՞։ Կյամ ըն կռեվ։ Կուճի ախճիգյը կյամ ա մարթին ասում.— Աղա, եր է՛, եկալ ըն կռեվ։

Մարթն ասում ա.— Ա՛խչի, անումը տամ մե՞ր, վախումը ը՞մ։

Վեր կռեվը սկսվեց, կնեգյը քյինաց հաւրանց տուն։ Մարթը քմակեն եր ա կենում, վեր սիմին ծիքյ չի տամ, մին թռչկան ծի էլ ա կյամ, մին ծեռք շոր էլ։ Շորերը կյենում ա, ծին եր ինում, քյինում թաքավերեն կոշտը, ասում.— Յա զորքըտ ե՛տ տո, յըես մինաւկ կռեվ անիմ, յա ետ ըմ տեռնըմ։

Տղան կռեվ ա անում, հախտում, զորքը ետ տամ, կյամ նի մընում տեղը։

Կնեգյը կյամ ա տուն, տեսնում տանը, պըլլիր ա անում, թա.— Կայյե՛, կա՛, մըեռնիս տու, հանե՛, տղան էն ա է՛, եկու, հախտից, քյինաց։

Էքյսըն էլ ա կռեվ ինում։ Էլհա էտ տղան սիմին ծիքյ ա տամ, թռչկան ծին կյամ ա, եր ա ինում, քյինում, հախտում, կյամ տուն։

Կնեգյը էլհա կյամ ա, թա.— Դալուտ տափան կենա՞, տեղատ եր է՛ է՛ է՛, տղան նա յա՞, թա տո՞ւ։

www.naregatsi.org

Իրեքինջի դինումը վեր քյինաւմ ա, կռեվը պրծնելու յրա ծեռքան յարալու յա տրեռնըմ։ Թաքավերը յոր ա օնում, ուրաւն նշնվե յըլեխաավը յարալու ծեռքը կապում։ Էտ տըղան կյամ ա, նի մննում տեղը։ Կննեգյը կյամ ա նի մննում տոն, մարթին խաբար տամ, թա։— Ա՛ մարթ, կռեվը պրծալ ա, լհա պրծնելու յրա էն տղեն ծեռքը յարալու տեռավ, ետ քյինաց։

Էս մարթը ծեռքը տեղեն տական տուս ա օնում, կննեգյը յալեխը տեսնում ա, վազ տամ հորը կոշտը։

Հաւրը տեսնում ա, ասում.— Պերեքյ ստեղ։

Տղան կյամ ա։ Թաքավերն ասում ա.— Ա՛յ տղա, վեր էտքան քաջ ըս, հի՞նչս ըս օզում, քյըեզ տամ։

Տղան ասում ա.— Վեչ մին պեն։ Էս քղաքումս էրկու նաքյար օնիմ, օզում ըմ տեսնամ։

Սաղ քաղաքը վրեննն ըն անում, լոխճին եշում, նաքյարնին ըտեղ չըն իննում։

Թաքավերը ծեն ա տամ ուրաւն էրկու փսեն, ասում. — Բա՛ խե՞ տահանք ըՆ։

Ասում ա. — Հա՛, տահանք ըն։

Թաքավերն ասում ա. — Դե վեր իտի յա, տու իմ տեղս նստե, մնա հունց վեր թաքավեր, քու բաջանաղնետ էլ նաքյարնե։ Պնուցուրու, հիշքյան քյեփըտ տամ ա՛։

www.naregatsi.org

85. ՃԼԿԼՏԱԿՅԻՐԸ ՍՈՏ Ա

Իլալ ա, չիլալ մին թաքավեր։ Էտ թաքավերեն մին մադար տղա յա իլալ։

Տղան հորն ասըմ ա.—Ապա, թունլ տո, քու երգյիրըտ շոռ կյամ։

Թաքավերն ասըմ ա.— Հի՞նչ կինի՛, վերթի, քյինա, քյըեզ կհարկին։

Էտ տղան հղե յա ինըմ, քյնամ։ Ըսկսըմ ա շոռ կյալը, քյինըմ ա տեսնըմ մին ծմակու ղրաղե մին կրակ, մին տղա կոխքեն նստած, մին քանե թոխտ քշտեն։ Էրկու թոխտ ա կյիրում, մինը քըցունմ կրակը, մինը տինունմ քշտեն։ Քյնաամ ա էտ տղեն պարով տամ, քշտեն միկա վրեննը կենում, ետնան հըրցընըմ։

Ասըմ ա.— Էտ հի՞նչ ըս անում, ախպեր, կյիրում ըս, կրակ տա՛մ։

Էտ տղան ասում ա.— Յրես մարթկանց ճըկըտակյիրն ըմ կյըրմ։

Ասըմ ա.— Դե պեց ըրա իմ ճըկըտակյիրս տեսնամ։

Էտ տղան պեց ա անըմ, կարթըմ, ասըմ ա.— Քյիննաական ըս, թա՛ մին ախճիգյ օզիս, հըղեցը քյըեզ ըսպննական ըն։

Ասում ա.— Պա յըես մադար տղա յըմ, ումբուրս պատառ էրկընցրու։

Էտ կյրող տղան ասըմ ա.— Կա մին կուտուր հաց, պատառ աղ կեր, հինչ տիժեր տեղ ընգնիս, կասիս՝ «Տու ինիս մեր ըղրհացը»։

www.naregatsi.org

Տղան հղե յա ինում։ Քյնամ ա, քյնամ, տեսնըմ մին քանե վրերս-կաննի յըն կյամ։ Մինին խտտին մին ջեյրան։ Էտ ջեյրանը ըտրան շատ ա տուր կյամ։ Ետ ա տեռնում, կյամ տոն, հորը կոշտը։

Հորն ասըմ ա.— Ա՛ հայր, շատ շոռ եկե, վեչ մին պեն ինձ տուր չի եկավ, մինայ վրերս անիլը ինձ տուր եկավ։ Թող մին հետ քյինիմ վրերսի։

Թաքավերը հրամայըմ ա քըռասուն վրերսկան պադրաստ կյան կոշտը։ Էտ տղեն անավ քառասունըմին հոգի քյինում ըն վրերս։ Էտ տղան քյինալիս մին ջեյրան ա տեսնըմ փըխչիլիս։ Ջեյրանը նի յա մննում ծմակը։

Տղան հրամման ա տաս. — Շրջըպըտեցեք ջեյրանեն, հուր քշտավ փախչի, կարե վուշ փռնե, ըսպննական ընք։

Նի յըն մըննըմ ծմակը չորք անգյունը կտրըմ։ Ջեյրանը կյամ ա թաքավերեն ժռանգչին կլխավը լոք տալավ անց կենում։ Լոխ հրվաքվում ըն, վեր թաքավերեն տղեն սպանին, վեր կըրացալ չի փռնե։

Թաքավերեն տղան ասըմ ա.— Յրես ատկազ չըմ անըմ ծեր խոսկը, մինայ ինձ էրկու օր մոհլաթ տվեք, քյինիմ ջեյրանը սաղ փռնիմ, պիրիմ։

Եր ա ինըմ ծին, քյընըմ։

Քյինում ա, թա փռնե, ջեյրանը կլոխ ա ընգնըմ։ Էրկու օրը թամամըմ ա, կարըմ չի փռնե, ջեյրանը փախչում ա։

Մին ճրայվ անց ա կենըմ, խմըմ, վրեննը կախ ա անըմ, վրեննը փոշ ար նի մըտալ։

Մին թայհրայվ քյինամ ա մին պառավ կնգա կոշտ, ղաչանք անում, թա.— Հետաս կյվող կա, վեննես փոշը տուն կալ, փախչիմ։

Պառավն ասըմ ա.— Քյըեզ կործ չօնիս, փոշը տուն կօնիմ, տու իմ քշտես կաց։ Յրես թողիլ չըմ քյըեզ ծեռք նի կյա։

Տղեն աշկը նի յա ընգնում, քյինում ա թուշ պռավեն կոշտը։

Պառավը կզնվըմ ա, ասըմ ա.— Ա՛ տղա, էտ հի՞շքան ա աշկտ օնքետ կլխան իլած, վեր օզում ըս սաղ ջեյրան փռնի՞ս։

Տղան սվիրես կլոխ ա յոր օնում, քյինում, էլ հնգերունցը իրեսը չի տուն կյամ։

Քյինամ ա մին տոն, ղոնաղ ընգնում, տանը մին ախճիգյ, մին կնեգյ ա ինում։ Լխճըկանը յրան սիրահարվում ա, յոր ա օնում, թա կյա տոն, հըղրցըմը ուրան հնգյերունքը օզում ըն թա սպանին։

Տղան ասըմ ա. — Տուք ինիք մեր կերած ըղրհացը։

Էս վեր ասըմ ա, հընգեր վրերսականնեն ըտրան բրախ ըն տամ, տա քյընըմ ա հանըմ ուրանց տոն։

www.naregatsi.org

86. ՔԱՌԵՐԵՆ ԲԱԽՏԸ

Իլալ ա, չիլալ մին քառ մարթ։ Էտ մարթը ուրանց շենին էծ պահող չոբանն ա իլալ։ Մեհետ էծերը տընես ա ընես մին լենջոտ տեղ, ինքյը կյաս, թա մին խըրեգյ հաց օտե։ Կյաս ա հաց ուտես, քյիս, տրսնաս էծերը կորալ ըն։ Քյիս ա, թա շոռ կյա։

Շատ ա շոռ կյաս, խըրեգյ ա շոռ կյաս, քըթընա չի։ Քյիս ա տրսնաս մին մարթ վար ա ընես։

Իծառածը հըրցընես ա էտ վար ընողան, թա. — Մեր էծերը տրեսալ չը՞ս։

Վար անողը թա. — Ըսօրե ըստըղան տենը, էնքան տեղը վարալ ըմ։

Ըսես ա, ծեռքն էլ մկընես, նըշանց տաս։ Տու մեր ասել, էտ մարթն էլ ա քառ ընիս, վեր իծառածը հըրցնես ա ըծերեն տեղը, ինքյը գյիդա՞ս ա, թա հըրցընես ա, թա ինքյը հինչքա՞ն ա վար ըրալ։ Վեր վար անողը նըշանց ա տաս ծեռքավը, թա հինչքան ա վարալ, իծատարը գյիդա՞ս ա, թա ուրան ըծերեն տեղըն ա նշանց տաս։ Ծեռքը մեկնած թուշավը քյիս ա, էծերը քըթընա։ Պիրիս ա, թա մին էծ տա վար ընողեն, վեր իծերեն տեղը ասալ ա՞։

Թարսու նման էտ էծը, վեր պտի տա վար ընողեն, պոզը կոտրած ա ինիս։

Վար անողը գյիդա՞ս ա, թա չոբանն ըսես ա թա. «Էս էծեն պոզը խե՞ կոտրալ ըս»։ Բաղասխանը տաս ա, վեր ինքյը չի կոտրալ։

Վերչը կըռըեվ ա տրոնաս։ Վեր կըռըեվը թունդիս ա, քյիս ըն,

www.naregatsi.org

թա՛ մին մարթու կյենգյատ անին։ Հըղրեցը մին հարթն ա ջըհիս, խուրջինը օսավը քըցած քյինիս։ Իծատարը, մըն էլ վար անողը էտ հարթնեն ամեգյը ուրանցըն ըն ըսես։ Բախտը կըտըրված, էտ հարթըն էլ ա ինիս քառ, ինքյն էլ մարթա՛ն տուս եկած, քյիս ա ինիս ուրա՛ն հարանց տոն։

Տա էլ գյիդա՛ս ա, թա՛ էտ մարթիքյը ըսես ըն, թա՛. «Ետ տրեռ, քյինի քու պըտրունանց տոնը»։

Տա էլ ըտրանց կյընգյատեն պըդրսխընես ա, թա՛.— Ըեր հի՞նչ կործըն ա, թա յըես մարթիս նըհետ ըպրես ըմ, թա չէ, ընդրանք փիս ըն, յըես վեր մըռնիմ, քյնիլ չըմ ընդահանց կոշտը՞։

Էտ իրեք հուքյին քյիս ըն, թա՛ մին օրիշ մարթու քըշտե նաղլ անին։ Շատ ըն քյիս, խրեգյ ըն քյիս, ըտէլ աստուծ ա գյիդա՛ս, մըթնես ա։ Տահանք ընգես ըն մին մըթեն ծո՛ր։ Քյիս ըն նի մըննես մին օրա՛նալիգյ ճեղաց։ Էն էրկու մարթը նի յըն մննես ճըղացեն նավը, հարթնըն էլ նի յա մննես տողը։ Քշերվա մին վախտ տըսնաս ըն կյողերը մին խիլլա՛ տավար ըն պիրիս, նի ընես էտ ճեղացը, ուրա՛նք էլ տըռանը նստուտես, վեր կես անին։ Տավարը պիժնես ըն, թա քյինին։ Էտ իրեք հոքյին վըխելնան նհետ վեր տուս ըն տըռնաս, կյողերը գյիդա՛ս ըն, թա՛ ըտրանք քաշկեր ըն, վըխելնան նըհետ թուղես ըն լըղաճաք փըխճիս, էն քըշերվան կեսեն, էն քըրերեն մաչավը, վրննըծեռք ըրած, կըլխընեն ճուրղուտելավ, վրննըրնեն ցա՛քյը ծըկուտելավ, մին բա՛շ։

Էտ կյուղացած տավարըն էլ մնաս ա էտ քառ ջըվըրներեն։ Ըտրանք ուրա՛նց մաչին պըժընես ըն, ամեգյը ուրա՛նց պաժինը յեր կալած, քյիս ըն ուրա՛նց տոն։ Էտ հարթնըն էլ ետ ա տըռնաս ուրա՛ն պըտրունանց տոն։

Մարթը վեր տըսնաս ա կընեգյը էտքան տավար ա պերալ, ըսես ա.— Ա՛ կընեգյ, ջանետ մատտաղ է՞, քյըեզ տուս ընողին քյալլա՛ն... մըհենգյանց տեղը քյըեզ տուս չըմ քըցլա՛կան, մըհենգյանց տեղը քյըեզ շատ ըմ սիրլա՛կան, հինչ ասիս ընննական ը՞մ...

www.naregatsi.org

87. ՉՈՒԱՆԵՆ ՍԵՐԸ

Ընում ա, չընում մին մարթ, մին կնեգյ ըն ընում։ Էտ մարթին ընում ա օխտը ախճիգյ։

Մին օր էտ մարթին կնեգյը մըեռնում ա։ Տանը հոքսը ընգնում ա էտ մարթին յըրա։ Էտ մարթը սդիբված ա ընում, վար մին թաղա կնեգյ անե։ Ըտենց էլ անում ա։ Մին թաղա կնեգյ ա պիրում։

Թաղա կնեգյը օզում չի, վար էտ ըխճըկերքը ուրան քըշտեն ապրին։ Նա միշտ սըվըրցնում ա մարթին, վար էտ խոխեքյը ուրան աշկեն ըռաչան հրռըցնե։ Էտ խրեղճ մարթը սդիբված ա ընում կադարե կնգանը պահանջը։

Մին օր էտ մարթը նան կնեգյը պայման ըն կապում, վար հունց անին, վար էտ խոխոցը հրռըցնեն ուրանց անա։

Էտ խարդախ կնեգյը մարթին սըվըրցնում ա, ասըմ ա.— էքյուց կասիս. «Ա՛ խոխեքյ, եկեքյ քյնանք քոլը, փաղ պիրինքյ»։ Կտանիս խոխոցը թողիս մին խոր ծաորում, տու փաղ անիս, կյաս։

Էտ անճար մարթը ռազի յա կենում կնգանը խոսկին։ Ըտրանա ետը տրհենց էլ անում ա։ Քշըրհանը էտ մարթը ամման մին խոխեն հետե յոր ա օնում մին հաց, քյնամ ըն քոլը։

Էտ մարթն ասըմ ա.— Խոխեքյ, գյուղում ը՞ք հինչ կա, յըես ծեր պաժին հացը թուլուլ տամ, քյնացեքյ, ընդըղան պիրեքյ։

Դե խոխեքյն էլ շատ սուված ըն ընում, քյնամ ըն թուլուլ տված հացեն հետան։ Ուրուր հետա էտ մարթը հացերը թուլուլ ա տամ։ Էտ խոխեքյը քյնամ ըն ամեգյը ուրանց հացը քթանում, օտում։

www.naregatsi.org

Մընում ըն էտ ծորումը։ Միշնակ ախճիգյը հացը օտում ա, պըրծընում։ Մին քանե հետ ապա յա կանչում, վար ուրանց ըտեղան տուս օնե, ամմա վեչ մին սաս-սամուր չի կյամ։

Հարը փադ ա անըմ, էշին պեռնում, ուրան քյոհնա պենջակը թողում ծառան կախ տված, ինքյը քյնում տոն, վար խոխեքյը գյիդան, թա ուրանց ապան ընդեղ ա, վախեն վեչ։

Ըխճըկորանցը մեծ քերը ասըմ ա.— Վախում մեքյ, հեն ա ապան յալումը, հնե՞, պենջակը ըրեվում ա, եկեք քյնանք ապուն կոշտը։

Տահանք մին կերպ թումբավը պըցըրանում ըն, քյնամ, տեսնում ապա, պան չիկա, մինակ քյոհնա պինջակն ա ըտեղ քըցած։

Անդար մնացած ըխճըկերքյը սկսում ըն լաց ինիլը։

Խոցը հարը հըսնում ա տոն, ասըմ.— Ա՛ կնեգյ, խոսկավըտ ընգի, տարի իմ ազիզ-պուզուզ խոխեքյս թուղեցե անդար ընդերու են ծմակումը։

Խորթ մարն ասըմ ա.— Հողեմ քու խոցըտ կըլնիը, նահանք հի՞նչ օքութ ին տլական մըեզ, հազըր մունք մինակ լավ կապրինքյ, մեր պիրանին թիքյան հալալ կինի։

Ամմա էտ մարթը միշտ թաքուն խոցը դարդան լաց ա ընում, ամմա կնգանը վեչան չի ընում։ Թողինքյ տահանք ըտեղ, խոսինքյ էն ըխճըկորանցն անա, տեսնանք հի՞նչ տառան։

Հացեն հետան քյնացած ըխճըկերքյը ուրուր ծեն ըն տամ, քթանում, ճընապարհվում ըն բիդա մին շեն։

Քյնամ ըն քյնամ, տեսնըմ ըն մին իշեղ ա ըրեվում։ Մեշնակ ախճիգյը ասըմ ա. — Ա՛ քեր, էն ըրեվող ճրաքյը հենց ա շենու ճրաքյ ինի՞, քյնանք, քըշերը կըմընանք ընդեղ։ Մըեզ կյուլերը օտել չը՞ն։

Քյնամ ըն, հըսնում մին կյումի, վըրդեղ վար թաքավերեն ծիանքն ա ընում կապած, չամիչըն էլ առաչնին ածած։ Էտ ըխճկերքյը քյնամ ըն կյումեն կտերը ուրուր կոխկե սուված նստում։ Լոխճան պուճուր ախճիգյը կլոխը տինում ա մեծ քվորը ծնգին, սկսում ա վրեղը քանդիլը։ Մին չամենչ ա քթանում, ասըմ ա.— Ա՛ քեր, հըսե ըստեղ քընդեցե, մին չամենչ քթա։

Էտ պուճուր ըխճըկանը լոխ էլ եղում ըն, ուրանք էլ մին չուփ ըն յոր օնում, սկսում կյումին ըխպըհարը քանդիլը։ Ըստեղ լոխ էլ չամենչ ըն քթանում, օտում։ Քնդելավ մին ծակ ա պենվում։

Մեծ քերը ասըմ ա. — Հու կըմըտնե էս ծակավը, տեսնա մեչին չամենչ կա՞, տուս օնե, պիրի օտենքյ։

Էլհա պուճուր ախճիգյն ա նի մննում, տեսնում թաքավերեն

www.naregatsi.org

ծիանքը կապած, չամենչըն էլ առաչնին ածած։ Կյոքյը մին լավ չամչավ լըցնում ա, տունա կյամ, պիրում տամ մնացած քվորցը, օտում ըն, ըտեղ էլ ապրում։

Մին օր թաքավերը ուրյան նազիր-վազիրին ասըմ ա.— Միս պեր նըստիմ, քյնամ ըմ կործավ օրիշ տըեղ։

Մին պիրում ըն։ Թաքավերը տեսնում ա լըղարած։

Նազիրին ասըմ ա. — Թա միչև մին էրկու օրը գյըդացեր վեչ, թա հո՞ւ վա ետ չամենչը օտում, քյըեզ կործա հննական ըմ։

Մին քշեր ծիապանը ախոռումը կյողլ ա կենում, տեսնում էն ա մին կուճուր ախչիգյ, կինար մին տաս տրեկան, նի մըտավ կյումը, կյոքյը չամչավ լցավ, օզից վար ծակավը տունա կյա։

Էտ վախտը նազիրը մըտածում ա, ասըմ ա. «Բուրդյան փըռնիմ, կըվախե, պաց թողիմ, ծիչին վնաս ա»։

Որոշում ա, վար դինջ մուտանա, ասե. «Տու հո՞ւ վըս»։

Նազիրը կենում ա, էտ ախճիգյը տունա կյամ կտերը, ինքյն էլ ա տունա կյամ, ասըմ. — Էտ հի՞նչ իլլաթ-միլլաթ ըք, վար առանց հըրցընելե թաքավերեն ծիչին փայը յոր ըք օնում, օտում, ծիչին մըշվըցնում։

Մեծ քվերքը նաղլ ըն անըմ, վար ուրյանք եթիմ խոխեքյ ըն, խորթ մոր դյորդյան ընգալ ըն ըտեղեքյ։

Նազիրըն ասըմ ա.— Մեր թաքավերը լհյա արհեստավերի հետա յա շոռ կյամ, վար կործ տա, պահե։

Ըխճըկերքյը ասըմ ըն. — Վախըմ ընք, թա մըեզ խափխա, տանխա, մըեզ կտորել տաս։

Նազիրը տահանց ըրխըչնըցընում ա, թաքավերեն կոշտը տանըմ, ասըմ.— Թաքավերն ապրած կենա, քըթյալ ըմ ծիչին չամենչը օտողներեն։

Թաքավերը էնքան պարի մարթ ա ընում, վար տահանց մին ցորտ խոսկ էլա ասում չի, անջախ պիրում ա տահանց լավ ուտըցնել տամ, լավ կյենալի շորեր ա տամ տահանց, ամմեն մինին էլ մին կործի յա տընում։ Պտի ասիմ, վար էտ ըխճըկորանցը մեչին պուճուր ախճիգյը լոխան կյեղեցիկըն ա ընում։ Տրան թաքավերը կյըռնարածի կործ ա տամ։

Մին օր էտ ախճիգյը կյառները տանում ա հյանդը, համ էլ իլիգյ ա մանըմ։ Մին օր հյանդին մին չոբան տեսնում ա էտ ըխճըկանը, սկսում ա ընդրա նհետ սեր փշրիլը։

Էտ ախճիգյը ասըմ ա.— Տա իմ պյանը չի, թաքավերան հըրցըրու։

www.naregatsi.org

Չոբանը քյնում ա թաքավերեն կոշտը, ասըմ.— Թաքավերն ապրած կենա, թողեր սերտըս պանիմ քշտետ։

Թաքավերը թռնել ա տամ։ Չոբանը նաղլ ա անըմ, վար ինքյը սիրում ա կյառնը պահող ըխճըկանը։ էն ախճիգյն էլ ուրիշն ա սիրում։

Թաքավերն ասում ա. — Ա՛յ չոբան, թա կարաս կատարիս իմ ըսրծնես, ախճիգյը քյրեզ ինի։ Քյրեզ տամ ըմ էրկու չրվալ ցորեն, թա կարաս մին օրում համ վարիս, համ հրսցրնիս, համ հնձիս, կալսիս, ցորեն շինիս, աղճիգյը քյրեզ ըմ տրլական։

Չոբանը տխուր-տրտում քյնամ ա ջադու պառավեն կոշտը։ Պառավը նրան թաՀրերը լոխ սրվըրցընում ա, համ էլ մին կախարթական մուտանա յա տամ էտ չոբանեն, ասում.— Կըքյնաս մին հանդըմ վրեննը կենաս, սրտիտ օզածը մուտանեն ասիս, նա լոխ կադարիլու յա։

Չոբանը քյնում ա, մին մեծ դուզում վրեննը կենում, ուրիշն սրտին դաՀրդը ասըմ մուտանեն, տա էլ կադարում ա։ Մին օրվա մեչի ցորենը հրվաքում ա, ածում չրվըլնեն, պիրում թաքավերեն տոնը։

Ասում ա. — Թաքավերն ապրած կենա, հրամմանըտ կըդարալ ըմ, ախճիգյը տամ ը՞ս, թա՞ տամ չըս։

Թաքավերն ասում ա.— Հաալա չէ, մին պան կա, վար ըն էլ կադարիս տրլական ըմ։ Ա՛յ չոբան, թա կարիս շվետ ըծելավ վրխճըրներեն պըցըրցընիս ըշտըրակեն կլինը, ախճիգյը քունն ա։

Չոբանը քյնում ա, նըստում թաքավերեն շինիլ տված ըշտարակեն կլխեն, սկսում շվեն ածելը։ Վրխճըրնեն պըցըրանում ըն, պըցրանում, մին կոտրած տեղ ըն հսնում, ընդեղ էլ լՀա ուրուր հետա վեր ըն տանում, սրտկոտում։

Չոբանը երե ղոլան ասում ա.— Ախճիգյը տամ ը՞ս, թա չէ։

Թաքավերն ասում ա.— Վար տու կըրեցալ չըս քու շվետ ըծելավ վրխճըրնեն հրսցրնիս քու կոշտըտ, ախճիգյը քյրեզ չի հրսնիլ։

Չոբանը տրեսնում ա, վար հրսալ վեչ ուրիշն նպատակեն, ուրիշն աշտարական քցում ա տափը, տրհենց էլ մեռնում ա։

www.naregatsi.org

88. ՋԵՅՐԱՆԸ

Իլալ ա, չիլալ մին թաքավեր։ Ուրան գյանքըմը օզալ ա մին ջեյրան սաղ փռնե, կրեցալ չի փռնե։ Մթկըմը տիրալ ա տունս կյա հանդ, հուր կլխավ ջեյրանը լոք տա, ընդրան սպանե։ Ուրան էլ իրեք տղա յա իլալ։ Տղերքյը հանդըմը կըրացալ չըն փռնին։ Կուճի տղան էլ ա էտ խոսկեն ղաբուլ կացալ, ամմա ջեյրանը ամման վախտ ուրան կլխավն ա լոք տվալ։

Էտ կուճի տղատ վազ ա տամ ջեյրանեն հետան, թա փռնե, ջեյրանը նի յա մննում մին դըրբըզա։ Էտ տղան ղըմալ թխըմ ա, կլեխը կտրըմ։ Վըզան մին թիքյա մնամ ա, պիրում ա քվորը տոն, քցում մին վեր։ Հորն անա վրխելան նհետ էտ տղան քըվորը յոր ա օնըմ, ճոկ տեղ ապրըմ։

Ինքյը վրերս ա անում, քուր-ախպեր օտում ըն։ Մեհետ քուրը վերեն քշտավը քյինալիս մին սաս ա ընգուճավը ընգնըմ։

Ասըմ ա.— Ա՛յ ախճիգյ, ծեր տանը փլան յըշիգյըմը էնա ճար կա, քյինա պեր, վեզըս քսի, սղանամ։

Ախճիգյը քյինամ ա պիրում, ճարը քսում վեզը, ջեյրանը լվա-նում ա մին լավ տղա յա տեռնում, ասըմ ա.— Ա՛յ ախճիգյ, յըես քյըեզ օզում ըմ, եք մինտեղ ապրինքյ, քու ախպոր անա թաքուն։

Ապրում ըն, մին խոխա յա ինում։ Քուրը վախըմ ա ախպորը անա, խոխան տանըմ ըն տինում էն հըղըցըմը, վերավը պիտի ախ-պերը կյա։

Ախպերը վըրսըտըեղա կյալիս, ջհում ա էտ պարուրեն։ Պարուրը

www.naregatsi.org

յոր ա օնըմ պիրում տամ քվերը, թա պահե։ Քուրը պահըմ ա, մծըցնըմ։

Էս ջեյրան տղան, կնգանը ափաթը կտրում ա, ասըմ.— Ըք քու ախպոր սպանինքյ, մունք տնստոն ապրինքյ։

Խոխան ըսկանըմ ա։

Ջեյրանն ասըմ ա.— Յրես օց ըմ տռնլական, վեր քու ախպեր կյա, թա մղակավը նի մննե, կըլխան կծլական ըմ։

Առաչի օրը վեր խոխան տեսնըմ ա էտ տըղեն, կյամ ա, վազ ա տամ, ասըմ ա.— Դայի, թող օսերիտ նստիմ։

Նստըմ ա, օցը կծում չի։

Ջեյրանը տեսնըմ ա, վեր խոխան պենու սեռ ա, կնգանն ասըմ ա.— Քու ախպոր անա հրցրու ցիրեկը հի՞շտեղ ա ինում, քյինամ, սպանիմ։

Էլհա խոխան ըսկանըմ ա, ցիրեկը քյինըմ ա հղեն կտրում, հորը սպանում։

Դային ասըմ ա.— Բալա, էտ հի՞նչ ըրում ա։

Խոխան ասըմ ա.— Վեչինչ, ծեռ ըմ սպանալ։

Կյամ ըն տոն, էտ խոխան դայուն քշտեն մորը խայտառակըմ ա, վեր ուրըն ախպորը փորցանքներին մաչ ա քցալ, մորը ըսպանըմ ա, ըտրանա եռը դային նան խոխան մինտեղ ըն կենըմ։

Խոխան մրծանըմ ա։ Ասըմ ա.— Դայի, հիշքան տու ինձ պահալ ըս, էնքան էլ յրես քյրեզ պիտի պահիմ։

Ըտրանք կյամ ըն մին լավ քաղաք։ Քրղաքեն տրուչը կոշտն ա քյինում։

Էտ տղան ասըմ ա.— Մին կործ տոք անիմ։

Թաքավերն ասըմ ա.— Հի՞նչ կործ տամ։

Ասըմ ա.— Քրռասուն ծի, քրռասուն ճորե տոք, ամեն օր քյինիմ փող անիմ։

Քյինամ ա ուրըն հետե էրկու փուրթանոց մին կացեն շինիլ տամ, քյինըմ ծմակը փողու. ճորեքը ծրռերան կապած ա ինըմ։ Քյինամ ա ճորեքը թա պիրի, պեռնե, տեսնըմ ա ճորե չի կա։ Մին բաբռուռ քրռասուն ճորեն կերած, ընդեղ վրեննը։ Փռնըմ ա բաբռուռը պեռնում, ինքյն էլ մին մեծ ծառ շլակում, կյամ քաղաքը։

Թաքավերը լըղըպատառ ա ինըմ։ Ուրըն նոքյարներեն ասըմ ա.— Էս տղեն կլոխը հարկավիր ա կերած, թա չէ ինքյը մեր կլոխը կօտե։

Տղեն կանչըմ ա կոշտը, ասըմ.—Ա՛յ տղա, փլան ծորումը հենգյ դև կա, իրեք տարվա խարջս հալում տվալ չըն, քյինա պեր։

www.naregatsi.org

Տղան ղաբուլ ա կենըմ, ասըմ ա.— Յըես կքյինիմ, ամմա բաբունը լավ պիտի պահիս։

Քյնամ ա տղան տըեսնըմ դեվերը նստոտած։ Մին դև ասում ա.— Հա՛, իմ քյըսօրվա թիքյաս եկավ։

Վեր իտի յա ասըմ, էտ տղան մին սիլլա յա տամ, դևը վեր ա ընգնում։

Տղան ասըմ ա.— Խարջը տվեք։

Դեվերը մնամ ըն շշկլված, ասում ըն.— Խարջը տված ա։

Տղան առաչն ա անում, պիրում թաքավերեն կոշտը։

Կյամ ա տեսնում բաբունը սոված ստակած, ինքյն էլ թաքավերեն, ընդրա ըխճկանը, կնգանը, ըսպնոտըմ ա։ Դային նան ինքյը քաղաքում տըռնըմ ըն թաքավեր, ուրանց հետե ապրըմ։

www.naregatsi.org

89. ԱՐՉԸ ՆԱՆ ԱԽՃԻԳՅԸ

Ընում ա, չընում մին մարթ, մին կնեգյ, որանց մին ախճիգյ ա ընում։ Էտ մարթեն կնեգյը մեռնում ա, քյինում ա մին օրիշ կընեգյ անում։ Նովակենը ուրիշն հետան էրկու ախճիգյ ա պերում։ Խորթ ախճիգյը սերուն ա ընում, ամմա նովակնգանը պերած ըխճըկեքյը կյեղ ըն ընում, սև-սև, իրաներեն եշվում չի՞։

Մարը խորթ ըխճկանը շատ ա պինըցնըմ, թոռնեն մոխերը կտրել ա տամ, ըշտեղ մին եխտոտ պեն կա, էտ ըխճկանն ա անել տամ։ Խորթ մարը ուրիշն ըխճկորանցը թաղա շորեր ա կյըռեց տամ։ Ուրիշյինը ղարկում ման կյալ, ղարկում ղոնախլըղ՝ թաքավերեն պալատը։ Խորթ ախճիգյըն էլ տանը պենն ա անում։

Մին օր էլ էնչանք պեն ա անում, նղանում ա, նստում ա լաց ինում, նղվարվում, քնավ ընցնում։

Արաքին մին կնեգյ ա կյամ, էտ ըխճկանը մարըն ա ընում, ասում ա.— Ա՛ բալա, եր կաց, շատ մել ընչըմիշ ինիլ, կա շորեր տամ, կյըռեց քյինի ղոնախլըղ, ամմա հենց ըրա սհաթի տաներկուսեն կյաս։

Ախճիգյը կյըռնում ա շորերը քյինում թաքավերեն պալատը։

Լհա վեր նի յա մննում, լոխ ընտրան ըն եշում։ Թաքավերեն տըղան տեսնում ա թաա չէ, հավան ա կենում։

Տաներկուսըն ա տեռնում թաա չէ, ախճիգյը քյնում ա տոն։ Էրկու ուրուգյունն կյամ ա, էլհա վախտեն քյինում։

Իրեքինչի ուրուգյունը շաղվում ա, վախտը թամամում ա, թայդի յա ընգնում, չաքմաեն, տուս կյալիս տեղը հանվում ա, մնըմ ընդեղ։

www.naregatsi.org

Թաքավերեն տղան յոր ա օնում, հետան տունս կյամ։ Էտ ախճիգյը կյամ ա տոն, շորերը հանում, ուրյան տեղը նստում։

Թաքավերեն տղան չաքման յոր ա օնում ընգնում տընըստոն տրեսնա՝ վե՞ր ըխճկա վրեննեն կկյա, նրան էլ օզի։ Հերթը կյամ ա էտ ըխճըկանը տոնը։ Խորթ ըխճկեքյը կյենըմ ըն վրեննըրներեն կյամ չի։

Հերթը կյամ ա էտ խորթ ըխճըկանը։ Էս վեր կյենըմ ա, վրեննեն լավ ա մրննում։

Թաքավերեն տղան ասում ա.— Էս ա վեր կա, տրան օղիլ բիդիմ։

Վերչը օզում ա, տանում ուրյանց տոն։

Խորթ մարը օզում ա քյալագյ կյա, կզնվելան տրաքվում ա։

Թաքավերեն տղեն կյենգյատվում ա ըխճկանան, ասում ա.— Տու բախտավեր չըս ընանաան, տունս քցի քյինի հորը տոնը։

Թաքավերեն տղան անգուջ ա օնում, տունս ա քըցում։

Մհենգյ էլ մարթին յախան օնում ա, թա ախճիգյըտ ստեղ կենալ չբիդի, տար չհանդամը քըցի, կուրցուրու։

Մարթը ճարը կըտրած պադրաստոթուն ա տրեսնում, ըխճկանը տանում մին հանց տեղ, վեր խրեգյ չվըրնե կան։ Ըստըեղ մին օրան տան ա թողում, ինքյը կյամ։

Ախճիգյը ուրուգյունը նստում ա, թա հաց օտե, տանը պուճախան մին մոկուն ա տունս կյամ, ասում.— Սե՛րուն ախճիգյ, պեց թող, յըես էլ օտիմ քյըեզ նըհետ։

Ախճիգյը ասում ա.— Օտում ը՞ս, կեր։

Մոկունը համ օտում ա, համ էլ ասում.— Էս ա մին արչ ա կյըլյական զնգյալակը ծեռքեն, ըսլական ա. «Կյամ ը՞ս մին հաղ հաղ անինքյ», կասիս. «Հա»։ Զընգյալակը քյըեզ ա տլյան, յոր կօնիս, ճրաքյըն էլ հընգյըցնյան ա, տու զնգյալակը ծեռքետ վազ ըս տըլյան, թա վեր փռնից, քյըեզ ուտլյան ա, թա չէ, քյըեզ մին ըրբա վրեսկե յա տլյան։

Ասում ա, պրծնում քյնում։

Արչը կյամ ա.— Սե՛րուն ախճիգյ, պեց թող յըես էլ օտիմ իլի՞։

Ախճիգյը թողում ա։

Արչը ասում ա.— Սե՛րուն ախճիգյ, գյուղում ը՞ս հինչ, եք մին հաղ հաղ անինքյ։ Յըես զընգյալակը քյըեզ տամ, ծեռքետ զընգզընգըցնելավ վազ տո, ճրաքյըն էլ հընգյըցնինք, վեր քյըեզ փռնիմ, ուտլյան ըմ, վեր փըռնիմ վեչ, քյըեզ մին ըրբա վրեսկե ըմ տլյան։

Լհա վեր ճրաքյը հընգցնում ըն, մոկունը տունս ա կյամ, զընգյալակը յոր օնում, ինքյը զընգզընգցնելավ վազ տամ, արչը կաբըմ

www.naregatsi.org

չի փռնեն, նղանում ա, ասում ա.— Ոք վրեսկեն քյրեզ տամ, քյինի։

Մին ըրբա վրեսկե յա տամ, ախճիգյը մաչին նստում ա, հղե իննում ուրանց տոն։

Խաբարը հըսնում ա խորթ մորը։

Հըրևաննին կյամ ըն, ասըմ.— Ա՛խչի, պա ասել չը՞ս խորթ ախճիգյըտ մին ըրբա վրեսկե յա պուրում։

Խորթ մարը ասում ա.— Ջըչէմի՞ն, չէ՞, տրեսնաս վսկըռքնեն ա, ըրբան ածած չըխչըխկցնելավ պուրում ըն։

Լհա վեր ըրբան տըռանը վրենն ա կենում, խորթ մարը մարթին ասում ա.— Շտեղ քու ախճիգյըտ ըս տարալ, իմն էլ տար ընդեղ։

Մարթը, կրակ ընգած էտ կընգանը ծեռքեն, եր ա կենում, խորթ ըխճկանը տանում, ընդրեղ թողում։

Ուրուգյունը հացը ուտելիս մոկնը կյամ ա թա.—Սե՛րուն ախճիգյ, մին խրեգյ սպաս տո, թող յրես էլ օտիմ։

Թա.— Կորե՛ր, իսկի կա վեչ, թա ես օտիմ, մնացալ ա քյրեզ տամ։

Մոկունը քյնամ ա։ Արչը կյամ ա, ասում.— Սե՛րուն ախճիգյ, կյամ ը՞ս հաղ անինքյ։

Ախճիգյը ռազի յա կրենում, հաղ ըն անում, մոկունը կյամ չի քյոմաղյ ինի։ Արչը ըխճըկանը փռնում ա, օտում։ Էքյսի օրը վեր հարը քյինում ա, թա պերի, վսկռքնեն ա ածում էն ըրբան, տանում։

Խորթ մարը կյետեն ղրաղեն ա ինում, քյինում ա կյետը ընգնում։ Թաքավերեն տղան շատ ա շոռ կյամ, թա խրեգյ, վերչը կյամ ա ուրան կընգանը տանում, հորըն էլ տանում ուրանց նըհետ պահում։

Ըստուծանա իրեք խնձոր վեր ընգնե, մինը՝ պատմողեն, մինը՝ լըսողեն, մինն էլ՝ էս հաքյաթը լուս աշխարք քըցողեն։

www.naregatsi.org

90. ՊՌԸՎՈՒՑ ԼԱՎ ԱՊՐԵԼԸ

Ինձնէմ ա, չինձնէմ մին թաքավեր ա ինձնէմ։ Էս թաքավերեն ինձնէմ ա մին կնեգյ, էրկու տղա։

Մին քշեր թաքավերեն կնեգյը ամրաղ ա տրեսնում։ Ըրաղձումը մին սիպտակ մըրքավեր մարթ ա կյամ, ըտրան ասում.— Յրես ըստուծանա յըմ ղարկվածծ, քյըեզ մին պեն ըմ ասում։ Օզում ըս մհե՞նգյ լավ ապրիս, թա պռըվուց։

Էս կնեգյը մնում ա քար կտրած։ Ըստրա սիպտակ մազերը, բոյը, բուսաթը տըսնալավ։ Ասում ա.— Դե վեր իտի յա, թող մարթիս նեստան հըրցնիմ, տահամ հի՞նչ ա ասում, ետնան։

Սիպտակ մրքավերը բռնրդան կորչում ա։

Էդ քշեր թաքավերեն կնգանը քոնը տանըմ չի, մտածում ա, թա. «Էս հի՞նչ իլլաթ-միլլաթ ա, վեր ինձ ստի պեն ասիցա»։

Էտ քշերը, թա տուք ընդրա պլատումը քոն ըք իլալ, ինդի էլ ինքյը։

Լռնասնում ա։ Էտ կնեգյը եր ա կենում, քյնամ մարթին ասում, թա.— Պա քշերըս ըստի ամրաղ ըմ տրեսալ, իստի, իստի պեն ա եկալ կլռխս, մհենգյ գյուդում չըմ, հի՞նչ անիմ։

Թաքավերը շատ ա մտածում, խրեգյ ա մտածում, կնգանը ասում ա.— Ա՛ կնեգյ, վեր մին էլ կյա, կասիս վեր մարթս ասալ ա, թա. «Օզում ըմ պռվուց լավ ապրիմա»։

Կնեգյը մին էլ ա ամրաղ տրեսնըմ, էլհա համման էն մարթը մին էլ ա կյամ, էլհա ինդի ասում։

www.naregatsi.org

էս կնեգյը իրեսը խըչըկնքելավ, վխվխելավ ասում ա մարթին ասածը։

Լռնասնում ա թա չէ, զարթնում ա։ Մին քանե օրանը ետը ստահանք սկսում ըն քյսիբանալը։ Վերչը հի՞նչ կլինխտ ցվըցնիմ, էնչանք ըն քյսիբանըմ, վեր մարթն ասում ա.—Ա՛ կնեգյ, դե վեր իստի յա տըռալ, եք էս խոխենքը յոր օնիքյ քյնանք, աստուծ մեծ ա, հալբաթ մըեզ քյոմագյ կանե։

Եր ըն կենում հըղե ընգնում։

Շատ ըն քյնում, խրեգյ ըն քյնում, ըտ էլ աստուծ ա գյիդում, մին ծմակու տեմ ըն ընգնում։ Տըեսնում ըն ծմակումը ծոխ ա եր ինում։

Մարթն ասում ա.— Ա՛ կնեգյ, քյինանք, հինչ կինի՛, կինի՛։

Քյինամ ըն, մուտանըմ, տըեսնըմ ղըչըղնե։ Օզում ըն ետ տեռնան, ստահանք տըեսնում ըն։

Տրանք խփիլավ տանում ըն ուրանց կոշտը, կոշտ հաց տամ ըտահանց, խխոնցը մին լավ քշտըցնում, թա դե քոն իլիքյ։ Քոն ըն ինում։

Էքյսը մարթը, կնեգյը, խոխենքյը եր ըն կենում, թա քյինան, էս փոչ իլածնեն թողում չըն։ Ասում ըն։— Յա իրեք մանեթ փուլ տվեք, յա էլ իրեք տարե կնեգյըտ բեդմա պահինքյ։

Ճարը կտրած, խեղճ մարթը կնեգյը թողում ա, խոխենքյը յոր օնում, քյնում։

Շատ ա քյնում, խրեգյ ա քյնում, հըսնում ա մին կյետու։ Թարսու նման էս կյետն էլ վըրարած ա ինում։ Խուխեն մինը շլակում ա, թա տանե ընցըցնե, ետնան կյա էն մինն էլ տանե։ Լհա կյետեն մաշտեղը շլակենը հարայ ա տամ, թա.— Կյուլերը մեր խուխեն տարեն։

Էտ մարթը ետ ա տեռնում, թա տըեսնա հի՞նչ ա, բուրդան էտ մինն էլ շլական ա վեր ընգնում, ընգնում կյետը։ Խեղճը մնամ ա քըրացած։ Ասում ա.— Էս հի՞նչ խաթա յա, վեր ինձանավ ա ընգալ։ Կնեգյըս ղչղնեն խլեցեն, խոխենքըս էլ ըստեղ ծեռքաս ընգեն, մհենգյ յըես թո՞րը քյինամ, ըշտեղ կլխես վա՛յ տամ։

Ընգնում ա հղեն քյնում։ Քյինամ ա, հանում մին քաղաք, տըեսնում ժողովուրթը թուփ տըեռած, հինչ վեր մին պեն ըն օզում անին։

Հըրցնում ա մարթոցը նեստա, թա.—Էտ հի՞նչ ըք անում, էս հի՞նչ ղլմղալ ա։

Էտ մարթիքյըն ասում ըն։—Թաքավեր ընք ճոկում, մին ղուշ կա, պեց ըն թողում, հունր կըլխե վեր կյա, ընդրան էլ տիննական ընք թաքավեր։

www.naregatsi.org

Ղուշը պեց ըն թողում, անդարըտ կյամ ա թուշ ըտրա կլխեն վեր կյամ։ Մարթիքյը կյամ ըն, տըեսնըմ իտի քյաւսիբ, ճընթռնին կյեցին մարթ։ Ասում ըն. — Ըտրանա թաքավեր կինի՞, նորու ղուշը պեց թողեցեքյ։

Նորու պեց ըն թողում, էլհա կյամ ա ըտրա կլխեն վեր կյամ։ էլհա ինդի յըն ասում, համ էլ էտ մարթին տանում քըցում մին տոն։

Ղուշը նորու պեց ըն թողում, օթումը միկա շոռ ա տամ, կյամ, ակուշկավը նի մննում, էլհա տրա կլխեն վեր կյամ։ Ճըրըննեն կտրած պիրոնմ ըն, տրան տինում թաքավեր։

Մին քանե տարե թաքավեր կենըմ ա, ժողովուրթը տըեսնում ա, վեր տա լավ ա, շատ հավան ըն կենում, խոսած տեղն էլ ըրեվավը ուրթնում ըն օտում։

Հա՛, մհենգյ էլ տըեսնանք էն կնեգյը, էն խոխենքյը հի՞նչ տըեռեն։ էս կնեգյը իրեք տարե մնալանը ետը, պեց ըն թողում, թա քյինա։ Տա հղե յա ընգնում, կյամ, կյամ տուս կյամ էտ քաղաքը։

Քյաւսիբ ջուվար ա իլի՞, ասում ա.— Միկա հաց տվեքյ օտիմ։

Ըտրան ասում ըն.— Լհա՛ մեր թաքավերեն պլատումը մին կնեգյ ա հաջաթ, հանցու կարտոշկա քչվե, առռե լափ տու վրս, վեր կաս։

Տանըմ ըն, էս կնեգյը ըսկում ա ըտրեղ հցըփոր ըշխադելը։ Մին քանե օրանը ետը համին էտ քաղաքըն ըն կյամ էրկու ջահիլ տղա։ Մհենգյ ծզանա մինը կը հըրցնե, թա՛ ըտահանք հո՞ւ վը՞ն։

էտ հաամին էտ մարթին խոխեքյըն ըն, ամման մինը մինան բեյխաբար։

Ըտահանց մինը վեր կյուռլը տարած ա ըլալ, չըբուննեն խըլում ըն, պահում, մըծըցնում, պեց թողում, թա քյինա քյըզետե ապրե։ էն մինն էլ վեր կյետը տարած ա ինում, ճղացպանը ըզադում ա էլհա պահում մին քանե տարե, պեց թողում։

Ըտահանք կյամ ըն մինտեղ տեռնում, մինը մինաան բեյխաբար, կյամ էլհա էդ պլատումը նոքյար ընգնում։

Մին օր նստում ըն, թա՛ դինջանան, սկսում ըն ուրուր կլխավը անցկացածը նաղլ անելը։

Տեսնում ըն վեր լհա՛ ստահանք ախպերքյ ըն, ուրուր կոլալ ըն ընգնում, լաց ինում, ուրխանու՞մ։

Տու մել ասել, էդ խոսկերքյը ըսկանում ա էտ կնեգյը։ Տուս ա կյամ, վեր ըն էլ ստահանց մարն ա։ Վազ տալավ կյամ ա ուրկուքանոց պչպչորում, կոլուքը ընգնում։

Ետ վախտը թաքավերը տրռանը նստած ա ընում։ Աշկըն ա ընգ-

www.naregatsi.org

նում էտ պենը, ծեն ա տամ, պռւրռւմ կոշտը, հըրցնում.— էտ հի՞նչ ա։

Ըստրանք նաղլ ըն անում։

Էս մարթըն ասում ա.— Պա տուք իմ խոխեքյս ըք, սա իմ կնեգյս ա։ Տըեռնում ըն ռւրռւր քթած։

Էդ կնեգյը տըեռնում ա թաքավերեն կնեգյը, խոխենքյն էլ թաքավերեն տղեքյ։ Ըտրանա տենը ըտահանք սկսում ըն լավ ապրելը։

www.naregatsi.org

91. ԷՐԿՈՒ ԳՈԴ ՅՈՐԵՆ

Իլալ ա, չիլալ, մին մարթ, մին էլ մին կնեգյ։ Էտ մարթը շատ վխելիս ա իլալ ուրան կընգանան։ Ամուն օր մարթին թրկըմհակավ ղրկելիս ա իլալ ծմակ, փայդա-մայդա պիրիլ տալիս, ծխելիս, մին քանե կպեկա, պենա դուզուցնելիս, յոլա քյնալիս։

Մին օր կնեգյը մին տասը հաց ա թխում, հինչ հա՞ց, չանըմ, խուխու պլիթնե՞, ըն էլ կյարի քյուլթեր։

Ուրուգյունը չելանը քոն ինիլը մին ճոթ տնում ա մարթին ըռըշկին, ինքյը պըրանում, համ էլ ասում.— Ա՛ մարթ, էքյուծ քշրհանա, չելանը լուսանալը, եր ըս կենում քյինում ծմակը, էլ գյուդում չը՞մ, հունց քյինում ը՞ս, վեր յրես հեն ինիմ քոն իլածե։

Խրեղճ մարթը վըխվխելավ, լուզին կըտըրած լհա մին խոսկ ա ասըմ.— հը, լը, լը... ա՞... ա՞... վ... վ, ա՛յ... կը...ն...ե՞գյ։

Կընեգյը ասում ա, պըրծնում, հիլըհալ լամբը հընգյըցնում, քոն ընում։ Մարթը քըռըքռուի տալավ, մին թահրալ տեղերը քցում ա, մըրափում։ Քըշրհանա մըթըն-մըթեն եր ա կենըմ, թա քյինա, մհենգյ էլ տրեսնըմ ա, վեր հացը խրեգյ ա, մտածում ա, թա հո՞ւնց անե, վեր մին հաց կյուղանա, կընգանան թաքուն։

Հացը տիրած ա ինում շկափեն յրա։ Կուճուր-կուճուր քյընում ա, թա յոր օնե, բուրդան մին աման ա վեր քցում, կոտրում։

Շըրխկոցեն յրան կնեգյը եր ա կենըմ, սկսում ճըղճղալը,— Ա՛ թաղված, կյեղված, էտ հի՞նչ ըս անըմ, հը՞, մհե հո՞ւնց ըս, վեր եր կենամ ջանըտ ախցան անի՞մ։

www.naregatsi.org

Մարթը տունդտունդալավ ասում ա.— Ա՛ կընեգյ, ջանեա մա տա՞ղ, վեշ մին պեն չըմ անըմ, քյինում ըմ ծմակը, ցկատեն ըմ շոռ կյա՞մ։

Կնեգյն ասում ա.— Ա՛ փչանաս տու, ըտեղ ցակատը հի՞նչ ա անըմ։

— Ա՛ կնեգյ, պա յըես քը մատաղ, պա յըես տիրալ ըմ ըստեղ, հվատըմ չը՞ս, հասե եր կալի։

Էտ վախտը բունդրայն շիրեփը ճանգյըն ա ընգնում, գյուդունմ ա, թա ցակատըն ա։ Մթկումը ասում ա. «Ա՛յ աստուծ, էս հինչ աճողութունն ար, վեր ցակատը ստեղ ար»։ Հալա գյիդում չի, թա ծեռքենը շիրեփըն ա։ Մարթը մին թահրավ տունա ա կյամ, մըթեն-մըթեն հղե ինունմ բիդի ծմակը։

Քյինալիս կընդանը յրա կըզնված ինքյը-ինքյը խուսելավ, ասըմ ա. «Ա՛րա, պա իստի էլ օյին կինի՞, վեր յըես ընգալ ըմ էսէս քյուփուրեն ճանգյը՞։ Ասում ա՝ էտ հի՞նչ ըս անըմ։ Ատտա շան ախչիգյ, տըեսնըմ չը՞ս հինչ ըմ անը՞մ, լափ իստի ծրեռքըս մըեկ-նըմ ըմ, չորս հաց յոր օնիմ, տանիմ, հանդին օտիմ»։

Ինքյը-ինքյը խուսելավ քյինալիս մին ծառ ա պտահում, շիրե-փավը թխում ա, թա կըտրե, բունդրայն շիրեփը կոտրում ա։ Ինքյըն էլ գյուդունմ ա, թա ցըկատեն շուղուփին ա տունա եկալ։

Ըսկըսում ա ծեռքերը տափը քըսելը, թա քիթենա։ Տեսնըմ ա վեր քըթենում չի, ուստուծեն ղաչանք ա անըմ.

— Աստուծ-աստուծ ցըկատես շըղուփը քըթիր, քյըեզ էրկու գոդ ցորեն կտամ։

Ասում ա պըրծընում, էլհա ծեռքերավ տըփտըփըմ։ Բունդրայն շիրեփեն կյուշը ծեռքն ա ընգնում։

Մարթը կըզնված ասում ա.— Ա՛ ժողովուրթ, մին տեսեքյ էս աստուծը հիշքան ա չար, հալա ցըկատես շուղուփը քըթընալու, գոդը ղարկալ ա, թա. «էրկու գոդ ցորեն ղարկես»։ Թո՛ւռ՛՛, նահլաթը քյըեզ, չար սըտանա՞։

www.naregatsi.org

92. ՀԱՎԸ

Ընըմ ա, չընըմ մին մարթ, մին կնեգյ։ Ուրուր նհետ շատ ըն ապրալ, խրեգյն ապրալ, կնեգյը խոխա չի պըերալ։ Կնեգյը մարթին ստիբալ ա, թա՛ քյինա մին օրիշ կնեգյ պեր, թաքյի մին խոխա ինի՞։ Ախճկանը մարն էլ ա շատ ստիբալ։

Տղան ասալ ա, թա՛.— Յարաբ բա խոի պե՞ն կինի՞, հալամ կնեգյըս տանը սաղ-սըլըմաթ, քյինիմ մինն էլ պիրիմ։ Ինձ օրիշ կնեգյ չի հաջաթ, իմը իմ կնեգյս ա։ Չէ, ախպեր։

Կնեգյը շատ ա դիլխոր ըրալ, քյեցալ մորն էլ ասալ։

Մարը եկալ ա փսեն ափաթը կտրալ, թա՛.— Քյինա՛ կնեգյ պեր, վըեր խոխա ինի։

Փեսան քյինա՛մ ա բազար մին զա՛մբուլ տես-տեն ինքյ օնում, պիրըմ տոն, մին լավ էլ հավ ա ինքյ օնում, էլհա պիրում տոն։

Մին օր փեսան կնգանն ասըմ ա.— Յըես քյըեզ նհետ քոն չըմ ինում, տեղս տար հավեն քշտեն քցի՛...

Կնեգյը ըրմընալավ տանըմ ա հավեն քըշտեն տեղը քցում։ Էտ մարթը քոն ա ինում։ Մին քանի քըշեր քոն ա ինում, ախըը չէ, տոնը կըռեվ ա տեռնըմ։

Կնեգյն ասըմ ա.— Խե՛, էտ հի՞նչ կարք ա, պա մարթին կնեգյ կինի տանը, տեղը հավեն քշտեն կքցի՛։

Կնեգյը կըռեվ ա անում, զեմքուշն էլ ա կյամ, կըռեվ անըմ։

Մին օր էլ մարթը կյամ ա տոն, ծեն ա տամ կնգանը, զըմքուշին ուրուր քշտե նստըցնըմ. ասըմ.— Պա տուք ինձ ասըմ ըք քյինա՛ կնեգյ պեր, թող խոխա ինի, էտ հալամ հավ ա, վեր կըռեվ ըք անում, վեր կնեգյ ինի՞ հի՞նչ կանիքյ, յըես ղաասիդ ծըեզ փո՛րցալ ըմ։

www.naregatsi.org



93. ԹԸՌԶԸԿԱՆ ՀԱՐՍԸ

Ինըմ ա, չի ինըմ մին թաքավեր ա ինըմ։ Էտ թաքավերին մին տղա յա ինըմ։ Մի քանի վախտանը ետը թաքավերին տղան հորն ասըմ ա.

— Ա՛ հայր, օզուս ըմ ախճիգյ օզիմ։

Հայրը տղեն ասում ա.

— Քյնա հայրո՛ւր մանեթ փող ըշխադե, պեր, քյըեզ հետե հըրասանեքյ անիմ։

Տղան տանան տո՛ւս ա կյամ, քյնայմ մոտիկ քղաքումը մին հարուստի տան նո՛ւքյար նի մննում։ Տարին տասը մանեթ փող ա ըստանում։

Մի քանե վախտ վեր կործ ա անում, հարուստը նո՛ւքյարեն ասում ա.

— Մունք քյննայական ընք քյարվան, պեթկ ա պադրաստո՛թուն տեսնանք, իրեք ամես քյննայական ընք, իրեք ամես ետ ընք կյըլլայական։

Տրանք ճընապար ըն ընգնո՛ւմ։ Ճընապարը կյետեն ղրաղավըն ա ինո՛ւմ։

Շատ ըն քյնայմ, խրեգյ ըն քյնայմ, քյնայմ ըն տո՛ւս կյամ մին մեծ սարու տակ։ Էտ սարը էնքան պեցո՛ւր ա ինո՛ւմ, վեր վեչ մինը կարում չի տական եշի, փափաղը վեր ա ընգնըմ։

Էտ սարեն կլխեն մին մեծ ղուշ ա ինըմ կաղնած։ Հարուստը ետ ա տեռնըմ նո՛ւքյարեն ասում.

— Էն ղուշը տեսնում ը՞ս, էն մըզանա մինին տըննական ա,

www.naregatsi.org

քանի տարալ չի, եք էս եզներան մինը մորթինքյ, մաշկինքյ, մունք էլ կյողլը կենանք, վեր ղուշը կյա, էտ եզանը մեսը յոր օնե, քյինա՜, մունք էլ տունա կկյանք մեր ճրնապարը կշարունակինքյ։

Նոքյարը հոժարվում ա, պիրըմ ըն եզնը մորթում, մաշկում, ճրնապարեն մաչտեղը մեսը վեր քցում։

Հարուստը նոքյարեն ասըմ ա.

— Ոք քյըեզ տինիմ մորթուն մաչին, կյեղվե, թա չէ քյըեզ կտանե։

Պերում ըն տղեն տինում մորթուն մաչին, պենդ-պենդ կապում, վեր քցում, մեսն էլ կյետը քցում, ուրաննք կյողլը կենում։

Ղուշը թռչում ա, կյամ, տես եշում, տեն եշում, տեսնում վեր վեչ մին պեն չիկա, էտ մորթեն յոր օնում, քյինում։

Նտ սարեն կլխեն ղուշը պեց ա անում, տեսնում մին տղա յա։ էտ տղան եր ա կենում, տեսնում էն ա սարեն կլխեն։ Սարեն կլխան կանչում ա.— Հե՛յ, հե՛յ խազայինք, պա ես հո՞ւնց կյամ։

Հարուստն ասում ա.— էտ քարերան վեր ածե, ետավ էլ տու եք։

Նտ տղան քարերան հինչքան կարում ա, վեր ա ածում։ էտ քարերը շատ թանգյանուց քարեր ա իննում։ էտ մարթը էտ քրերավը եզները պեռնում ա, ճրնապար ընգնում, էն տղեն էլ թողըմ ա ընդեղ։

Իրեք օր էտ տղան մնում ա ըտեղ։ Վերչը ըրաղըմը տըեսնըմ ա, վեր մինն ասում ա.— Որ կաց, ըտեղ մին քար կա, պըցըրցրու, տակավը ճրնապար կա, քյինի հըսե սարեն տակը։

Էտ տղան իտի յա անում։ Քարը պըցըրցնում ա, փայլաքյաններավը քշանում, տունա կյամ մին տոն։

Էտ տանը մին պառավ ա իննում նստած։ Ըտրա ներքե պռոշը տափն ա սիրփըմ, երե պռոշը՝ պատալոկը։

Էտ պառավը վեր տըեսնում ա էտ տղեն զարմանըմ ա, հրցնում ա.— Տու հո՞ւնց ըս եկալ ըստեղ։ Վեր տղերքս կյան, քյըեզ կօտին։

Պառավը մտածում ա, թա հո՞ւնց անի, վեր էս տղեն վնաս չի տանե։ Տանում ա էտ տղեն ավլին քամակեն կյեղըմ։ Ուրուդյունը տղերքը վեր կյամ ըն, ասըմ ըն, թա— Ա՛ մար, էս հի՞նչ ա, մըրթ-մըրթավետ ա կյամ։

Մարն ասըմ ա.— Մարթ, պեն չի կա ըստեղ։

Տղերքյը հվատում չըն։

Մարը տըղորցն ասըմ ա.— Ուրթունմը կերեքյ իմ տված կաթնավս, վեր վնաս չըք տալու, ասիմ։

Տղերքյը ուրթունմն ըն օտում։ Մարն ասում ա.— Իմ քվոր տղան ա, եկալ ա։

www.naregatsi.org

Ըտըղան տղան տունա ա կյամ, մին քանի վախտ ըտրանց նհետ ապրըմ։ Ընդրանց տոնը մին քանի օթախ ա ինում։ Էտ տղան ամմեն մին օթախ պեց ա անում, ման կյամ։ Ընդեղ մին տոռն ա ինում, պեց չըն անում, էտ տղան վեր շատ ա խնթրում, պեց ըն անում, տրեսնում, վեր ըտեղ իրեք կյեղեցիկ ախճիգյ ըն նստած։

Տղան էտ պռավեն ասըմ ա.— Յրես պիտի էտ ըխճըկորանցը մինին օղիմ։

Պառավըն ասում ա.— Դե վեր օղում ըս, օղի։ Էքյուց կքյնաս մեր բաղըմը հովուզ կա, ուրաննք քյննաական ըն լղնալի, կքյնաս մինին հալավը կյուղանաս, հինչքան էլ վեր ասե, տաս վեչ։

Էքյսը էտ տղան քյնամ ա բաղը, էտ ըխճըկերքը վեր կյամ ըն լղընալի, մինին հալավը կյուղանում ա։ Էն մնացածը հըլըվնեն կյենում ըն, քյնում, ամմա էտ մինը մընըմ ա տկլոր։ Հինչքան խնթրում ա, վեր հալավը տա, էտ տղան տամ չի, յոր ա օնում էտ ըխճըկանը կյամ տոն։

Ըտեղ էտ տղան տրան նհետ ապրում ա, տրանց մին տղա յա ինում։

Ըտեղ շատ ըն կրենում, խրեգյ ըն կրենում, վերչը էտ տղան ասում ա.— Յրես օղում ըմ քյինիմ իմ հորս աշխարքը, լուս աշխարքը, պառավը հոժարվում ա։

Մեծ տղան նան մեշնակ տղան ասըմ ըն.— Մունք կտանինքյ։

Ամմա մարը ռազի չի ինում, ասում ա.— Տուք տրանց վնաս կտաք։

Վերչը պուճուր տղան տանըմ ա լուս աշխարքը, պեց թողում, ըտեղ տահանք շատ ըն քյնում, խրեգյ ըն քյնում, հանում ըն մին կյուղի։ Ըտեղ սկսում ըն ապրիլը։

Տահանց մի տղա էլ ա ինում։ Ըտեղ մին պելի յըն փռնում։ Մին օր էտ պելուն տղան փսակվում ա, ըտրանց էլ ըն կանչում։ Տրանք ուրանց խոխեքյը յոր ըն օնում, քյնում հըրսանեքյ։ Էտ հըրսընընքումը հու վեր պար ա կյամ, էտ հարսը հավան չի կենում։

Վերչը տրան ստիքում ըն, վեր ինքյն էլ պար կյա, էտ հարսը ետ ա տեռնում, ասում.

— Ինձ մին հալավ օնիմ, հիբ վեր հաքնիմ էն վախտը կյիլյական ըմ, պար կյամ։

Վերչը էտ հալավը կյենում ա պար կյամ։ Մեհետ մին տղան ա յոր օնում, պար կյամ, մեհետ էլ էն մին տղան, վերչումն էլ էրկու տղան խտտում ա, թա պար կյա, թռչում ա, քյնում։ Հետան հինչքան թվանգյ ըն տրքցնում, նի չի կյա՜մ։

www.naregatsi.org

Ըտեղ էտ տղան քոռըփեշմէն, կյամ ա տոն, մտածում, թա՜ հունց անե, վեր էլհա քյինա՜ ընդեղ։

Վերչը ասում ա. «Էլհա քյնամ էն քյո՜հնա՜ հարուստին կոխկը նո՜քյար մննիմ, բա՜լքյա՜ս քյնամ էլհա ընդեղ»։

Շատ ա կյամ, խրեգյ ա կյամ, վերչը էտ հրուստեն քթենում ա, նո՜քյար նի մննում ընդրա տանը։

Էլհա կյամ ա էտ հարուստն ասում.— Մունք պետք ա քյնա՜նքյ քյարվան, վեց ամսվա պադրաստոթուն տես։

Մին օր էլ ճընապար ըն ընգնում։ Վերչը էլհա քյինամ ըն, հանում էտ սարը։ Էլ հա եզն ըն մորթում, տղեն մորթուն մեչին կապում։ Ղուշը կյամ ա, տղեն տանում, պեց անըմ։ Վեր խազայինն ասըմ ա.

— Քարերան վեր քըցի, էտ տըղան ասում ա.

— Էլ ըստեղան քար չըմ վեր քցիլ, էլ էն նո՜քյա՜րը չը՜մ։

Էտ մարթը եզները տերտակ յոր ա օնըմ, կյամ տոն։ Էտ տղան էլհա էտ քարը պըցրըցնում ա, կյամ պռավեն կոշտը, լոխ նաղլ անըմ, հինչ վեր կլխավը ընցալ ա։

Էտ տղան քյնամ ա ընդեղ, հշտեղ վեր ո՜ւրա՜ն կնեգյն ա ապրըմ։ Տեսնում ա, վեր էն մեծ տղան կյիրք ա կարթում։

Տղեն անա հրցնում ա.— Հշտեղ ա քու մոր հալավը։

Տղան նշանց ա տամ, էտ տղան յոր ա օնում, էրում։

Կնեգյը կյամ ա ասում.— Իմ դա՜րդա՜ս քու կըլո՜խտ շատ օյիննի յա կյալու։

Մարթն ասում ա.— Վեչինչ, հինչ օզում ա, թող ինի։

Ըտրանք ետ ըն տեռնում, կյամ լո՜ւս աշխարք, կյամ ըն հըսնըմ էն քաղաքը, հշտեղ վեր ո՜ւրա՜ն հա՜րն ա ապրըմ։

Էտ քըղաքումը տոն ըն փռնում, ապրում։ Խա՜քա՜րը հանում ա թաքավերեն, վեր տղան ըտեղ ա ապրում։ Թաքավերը նղանում ա, վեր տղան եկալ ա, եկալ չի հորը տոնը։

Ո՜ւրո՜ւգյո՜ւնը տղան, ո՜ւրա՜ն կնեգյը խոխեքյը յոր ըն օնըմ, կյամ թաքավերեն տոնը։ Թաքավերը վեր տեսնում ա հարսեն, մըթկումը ասում ա. «Ցրես պիտի տղես սպանիմ, հարսիս նհետ ապրիմ»։

Էն մին ո՜ւրո՜ւգյո՜ւնը հա՜րը տղեն ղոնաղ ա կանչում։

Վեր մարթը օզում ա քյինի, կնեգյը ասում ա.— Ա՛ մարթ, վեր քյնաս քու հոր կոշտը, առաչիտ ճարած խորագյ ըն տննա՜կան։ Վեր ասե, խե՞ քու ըմանատ չըս օտում, կասիս, վեր շատ ա, կարում չըմ օտիմ։

www.naregatsi.org

Տղան քյնաւմ ա հորը տոնը։ Մին խրեգյ խուսելանը ետը հաւրըն ասըմ ա.— Հաց պերեքյ, օտինքյ։

Ծառան պիրում ա հացը քցում։ Էտ վախտը տղան ուրաւն ամանը տինում ա հորը ըռաչին, ինքյը թաքավերին ամանը յոր օնըմ։

Ըտեղ թաքավերը հըրցնում ա.— Խե՞ օտում չըս։

Տղան ասըմ ա.— Յրես տանը կերալ ըմ, ետնան եկալ։

Հացը ուտելան ետը, տղան քյնաւմ ա տոն։

Թաքավերը տեսնում ա, վեր էս ամալը անց չի կացավ, մհենգյ էլ օղում ա մին օրիշ պեն անե։ Պիրըմ ա տանը մղակըմը մին մեծ հոր ա քանդըմ, էրկու մեծ ղղղան իփած ճուր ա հզըրում, հորեն կլոխըն էլ գյաւրաւվ ծասկըմ, վեր տղան կյա, անց կենա, ընգնե հորը, էն ճուրն էլ ածե կլխենե։

Մարթը վեր օղում ա քյնի, կնեգյը ասըմ ա.— Մեր թուլան էլ եր կալ, հշտեղավ թուլան քյնաւ, ընդեղավ էլ տու կքյնաւս։

Իտի էլ անում ըն։ Թուլան հշտեղավ քյնամ ա, տղան էլ ընդեղավ ա քյինամ։ Վեր կյամ ա մղակեն կոխկրն ա հըսնըմ, թուլան լոք ա տամ, տղան էլ ա լոք տամ։ Ընդըղան տղան կյամ ա տոն։

Թաքավերը վեր տեսնըմ ա էս դոնըմ էլ չի պեն տուա եկալ, մհհետ էլ մին օրիշ պեն ա մտածում։

Ուրանց քըղաքան հետու մին ծմակըմ մին փոս ա քանդում, ինքյն էլ խոր, ուրաւն կոթ ընողնեերեն ասում ա.— Էքյուծ քյննաւկան ընք վրերսի։

Էքյսը վեր օղում ըն քյնաւն վրերսի, կնեգյը տղեն ասըմ ա.— Քյինիլ միր, վեր քյինիս քու հաւր կլխետ մին օյին ա պիրլաւկան։

Տղան էլ ասըմ ա.— Վեշ մին պեն չի ինի՞լ։

Կնեգյն ասըմ ա.— Դե վեր լսըմ չըս ինձ, քյըեզ նհետ էլհա թուլան եր կալ։

Էքյսը տղան ծի յա նստում, ուրաւն հորը նհետ ճընապար ընգնում։

Շատ ըն քյնաւմ, խրեգյ ըն քյինաւմ, հաւրն ասում ա.— Եկեք հաց օտինքյ, սոված ըմ։

Պիրըմ ըն հաց օտին։ Հաւրը տանը իրեք հաց աւր թըխել տըվալ ինքյն էլ էնքան աղ ա քըցել տըվալ, վեր կարըմ չըն օտին։

Տղան վեր օտում ա, շատ ա ծրավըմ, հորն ասում ա.— Ծարավ ըմ, ճուր ըմ օղում։

Հաւրն ասըմ ա.— Պեր աշկետ մինը տուա օնիմ, փոսավը մին ճուր տամ։ Իտի էլ անում ըն։ Աշկը տուա ա օնում, փոսավը մին ճուր տամ, վեր աշկը վեր ըն քցում, էտ թուլան յոր ա օնում, տինում լուզվեն տակեն։

www.naregatsi.org

Մին խրեգյ վեր քյինաւմ ըն, էլհա ճուր ա օզում։ Հաւրը պիրում ա էն մին աշկըն էլ տունա օնում, փոսավը մին ճուր տամ։ Վեր քյնամ ըն, հանում փոսեն կոշտը, քամակեն կուփե յըն տամ, քցում փոսը։ Թուլան էլ էն աշկերը տանում ա, փոսեն մաչին կյեղում։

Ուրուգյունը վեր կյամ ըն տոն, մարթը կյամ չի։

Կընեգյը հորն ա հըրցնում.— Տղատ հո՞ր ա։

Հաւրն ասըմ ա.— Պա եկալ ա, տոն չի եկա՞լ։

Կնեգյը գյիդուն ա իլալ մարթը հիշտեղ ա։

Ուրանց հրևան էրկու մարթ ա կանչըմ, Թուլան էլ տինում նհետնեն, ասըմ.— Հիշտեղ Թուլան քյնի, տուք էլ կքյինիք։

Քյնում ըն, վեր հըսնում ըն հորեն կոխկը, Թուլան կնձկոնձում ա։ Ըտեղ կաղնում ըն։ Էտ տղան հալա սաղ ա ինում, պադասխանում ա, ըտըղան տունա ըն օնում, պիրըմ տոն, ետավ կնեգյը ասըմ ա.— քյե՛ցեքյ, Թուլան ծրեզ տննական ա մին փոսու կոխկ, աշկերը հեն ա ընդեղ, յոր կօնիքյ կյաք։ Մին հատ էլ թև ա իննական, էն էլ յոր կօնիքյ։ Իտի էլ անում ըն։

Աշկերը, թևը պիրըմ ըն։ Աշկերը տինում ըն տեղը, թևն էլ քսում, աշկերը լիվըցնում։

Խաբաերը հանում ա հորը, վեր տղատ սըղացալ ա, էն ա տանը։

Թաքավերը մհենգյ էլ մին օրիշ պեն ա մտածում։

Պիրըմ ա մին մինգյանա շինիլ տամ, վեր տըղեն քըցի մաչը։

Թաքավերը տղեն կանչում ա, պիրում տոն, հաց ըն օտում, չայ ըն խմըմ։

Ըտեղ թաքավերն ասըմ ա.— Ցրես քյեզ մին հարստոթուն նշանց տամ, քյինի եր կալ, յըես էս ա պռավալ ըմ, տու վրս թաքավեր տռնըլական, վեր մեր ամմեն պենին տեղը գյիդաս։ Ցրես մին մաշին ըմ շինիլ տվալ, վեր օզիս մարթու պատժիս, մաչը կքցիս, հուի տաս։

Թաքավերը տանըմ ա նշանց տամ, համ էլ ասըմ.— Նի մոտ մաչը, նշանց տամ։

Տղան ասըմ ա.— Ընք տու նի մոտ, քանի վեր յըես պիտի պատժիմ, ես պիտի սըվերիմ։

Իտի էլ անում ըն։ Նի յա մննում։

Տղան վեր մեհետ շոռ ա տամ, թաքավերն ասում ա.— Ցա՜վ ա տամ։

Տղան էլ ասում ա.— Պա վեր տու օզալ ըս ինձ զհաւրավ խորագյ տաս, ինձ ցավ չի տվա՞լ։

www.naregatsi.org

Մեհեան էլ ա շոռ տամ, թաքավերն ասում ա.— Լաւ, բոլ ա, ցա՛վ ա տամ։

Տղան ասում ա.— Պա վեր փոսը կտրալ ըս, ինձ քուռըցրալ, ինձ ցավ չի՛ տվա՛լ։

Հաեղ թաքավերը մեռնում ա։

Տղան քյնաւմ ա ուրաւն կնեգյը, խոխեքյը յոր օնում, քյնաւմ հորը պալատումը լաւ ապրում։ Հորանք հասեն ուրանց մուրազեն, տուք էլ հըսնիք ծեր մուրազեն։

Երգյինքան իրեք խնձոր ա վեր ընգյնում. մինը՝ ասողին, մինը՝ կյիրողին, մինն էլ՝ էն հեռու, շատ հեռու տեղի կարթողին...

www.naregatsi.org

94. ԹԱՔԱՎԵՐ ԾՈՒԿՆԸ

Իլալ ա, չիլալ մին թաքավեր ա իլալ։ Էտ թաքավերը շատ ա կացալ, խրեգյ ա կացալ, հիվանդացալ ա։ Ճար չըն քի թալ, վեր սըղըցնին։ Թաքավերեն տղան քյեցալ ա ճարու։

Մին փալչի ասալ ա.— Էս հինչ ծովումը ծունկների թաքավեր կա, վեր էն օտե, կսըղանա։

Մին ծունկըն փըռնող քյինում ա ծունկներեն թաքավերեն փռնում թա պիրի, թաքավերեն տղան կյամ ա, չիհունա, ասում.— Էտ հինչ ըս տանում։

Էն ծունկնը փըռնողը ասում ա.— Ծունկներեն թաքավերը տանում ընք տանք քա հոր, հանցու օտե, սըղանա։

Թաքավերեն տղան ասում ա.— Էտ ծունկնը տարեք քցեցեք ուրան տեղը, վեր թաքավերը ծըզ յրա յա թաքավեր, էտ ծունկըննէլ ծովեն յրա յա թաքավեր։

Էտ ծունկնը փըռնողը տանում ա ծունկնը քցում ծովը, ճելլի քյինում թաքավերեն ասում.— Տղատ թողալ չի ծունկնը պիրիմ։

Թաքավերը տղեն յրա կզնվում ա, ասում.— Վեր իմ դուշմանս տու վրս, քյինի, էլ աշկըս քյըզ տըեսնա վեչ։

Թաքավերեն տղան հղե յա ընգնում, քյինում։ Հղեցը մին պառավ կնեգյ ա չիհունա։

Էտ կնեգյը հրցնում ա, ասում.— Հիշտե՞ղ ըս քյինում։

Թաքավերեն տղան ասում ա.— Հղես էրկան ա՛։

Պառավն ասում ա.— Ցրես էլ ըմ քյըզ նհետ կյամ։

www.naregatsi.org

Թաքավերեն տղան ասում ա.— Ցրես՝ ջահիլ, տու՝ պառավ. կարել չըմ քյրեզ նհետ կյամ։

Պառավն ասում ա.— Չէ՛, վեր չէ՛։

Վերչը նհետը քյնում ա։

Մին ծմակում էտ պառավն ասում ա.— Մին պայման կապինք, հինչ վեր ծեռք պիրինք, ըշխադինք, մաշան հալալ կես անինքյ։

Թաքավերեն տղան ասում ա.— Դե հինչ ըմ ասում, իտի անինքյ։

Շատ ըն քյինում, խրեզյ ըն քյինում, մին քաղաքու վրն հըսնում։ Թաքավերեն տղան մին վաճառականու ախճիգյ ա տեսնում, ուրյնան քյինում։

Էտ պառավը տրան հետ ա պերում, ասում.— Էտ հինչ ա պտահալ, հինչ ա իլյալ։

Տղան ասում ա.— Դե, էն ախճիգյը օղիլ բեդինքյ ինձ հետե։

Էտ պառավը քյինում ա վաճառականեն ասում։

Վաճառականն ասում ա.— Իմ փսոտենքյս մին քըշեր էլ չըն ապրում։

Թաքավերեն տղան ասում ա.— Օզում ա լհյա մին ժամ ինի՞։

Պիրում ըն լյավ հրսանեքյ անում։ Քշերը վեր էն ախճիգյն նան էն տղան քյինում ըն, թա քոն ինին, էն պառավն էլ ա քյինում, նի մնում ընդրանց տեղը։ Թաքավերեն տղան շատ ա ղանչանք անում, վեր կնդակ էտ քիշերը քոն չինի ուրյանց նհետ, պառավը ըսկանում չի։ Նըհտնուն քոն ա ինում։

Տղան խռավում ա օշը տեն անում, ախճիգյն էլ խռավում ա օշը տեսն անում։ Վեր քունավ ըն ընցնում, էտ ըխճկականը պիրյանան իրեք օխտ ա տուս կյամ, թա թխե, էն տղեն ըսպանե։

Էտ պառավը փռնում ա, քցում միշոկեն մաշը, եր կենում, քյնում օրիշ տեղ քոն ինում։

Վեր լուսանում ա, վաճառականը մարթ ա ըղարկում, վեր քյինին փսեն մեյիդը տանին, թաղին։ Էտ մարթիքյը քյինում ըն տեսնում տղան սաղ, իրեսը լվանայիս։

Քյնում ըն վաճառականեն ասում։ Վաճառականը շատ ա զարմանում, քյինում ա տեսնում ղորթ ա։

Շատ ուրախանում ա, միչև էտ տղեն կյալը երեսունինը փեսա յա իլյալ էտ մարթին, ամեն մինը մին քշեր էլ չի կացալ, լոխճին կլխնեն կտրած, մին տան թուփ ըրած ա իլյալ։

Վաճառականը եր ա կենում շատ հարստոթուն տամ ըխճկանը, հղե տինում։

www.naregatsi.org

Վեր շատ քյնում ըն, էտ պառավն ասում ա. — Պայմանը, պայման ա, հինչ վեր կա, հալալ կես բիդի անինքյ։ Պիրում ըն իրեք ծի ուրեն պեռնավը մին ընգյունի տինում, իրեքն էլ մին ընգյունի տինում, մին ծի ուրեն պեռնավը մնում ա։ Էտ տղան տամ ա պռավենե։

Պառավը յոր չօնում, ասում ա.— Մաչան հալալ կես բեդի անինքյ։ Ասում ա, պրծնում մին ղամա տունս օնում ծին մաչան հալալ կես անում։

Թաքավերեն տղան ասում ա.— Դե պրծալ ընք, քյինինքյ։

Պառավն ասում ա.— Չէ, կնեգյտ էլ բեդմա մաչան կես անինքյ։

Էտ տղան շատ ա հա՛յ-հա՛յ անում, ասում.— Լոխ քյրեզ, մինաք կնեգյս ինձ։

Էն պառավն ասում ա.— Չէ՛։

Ըխճկանը կռներան կապում ա, ծառան կախ տամ, ղամեն տունս օնում թա կես օնե, ախճիգյը ծուվամ ա։ Վեր ծուվվամ, ա պիրանան մին օխծու ճոտ ա տունս կյամ։ Պառավը դաստի ըխճկանը ազադում ա։

Էտ պառավը թաքավերեն տղեն ասում ա։— Էլ ինձ պեն չի հաջաթ, տու ինձ մին լըվոթուն ըս ըրա՛լ, յըես էլ քյրեզ ըմ լըվոթուն ըրա՛լ։

Էտ տղան ասում ա.— Յըես քյրեզ լըվոթուն չըմ ըրա՛լ։

Պառավն ասում ա. — Յըես էն ծունկնըն ըմ, վեր ծովը քցիլ ըս տվալ, թողալ չըս ինձ ըսպանին, տան քա հոր, յըես էլ քյրեզ էն լըվոթունըն ըմ ըրալ, վեր էս ըխճկանը պիրանան տունս եկած օխծերը վեր երեսունըինը տղա յըն ըսպանալ, ըսեցալ ըն, թա էն քշերը քյրեզ էլ սպանի՛ն, յըես ըղադա՛լ ըմ։

Ասում ա, պրծնում, օխծերը տունս օնում, նշանց տամ։ Յետավ սպանում ա էտ լոխ օխծերը, ինքյը աշկա կորչըմ։

www.naregatsi.org



95. ՓԻՍ ԿՆԵԳՅԸ

Ինըմ ա, չինըմ մին մարթ, մին կնեգյ, էտ մարթին անըմը Ղազար ապեր ա ինըմ, ինքյն էլ շատ վխըլկոտ։ Հիքը տունա ա կյամ տոռնը, կնգանը նհետ ա տունա կյամ։

Կնեգյը էզըն մարթին նըհետ կըռև ա անըմ, մարթին ինչի-միշ անըմ, ասըմ.— Հի՞նչ ա, թմբաքլու նման վեր ըս ընգալ տանը, քյինըմ չըս, թա մին շելակ չուփ պիրիս։

Մին օր էլ կնեգյը կըռև ա անում, չաթուն տինըմ ծեռքին, թա քյնի հիշտղա օղում ըս, մին շելակ փաղ պեր։

Ղազար ապերը եր ա կենում, չաթուն յոր օնում, ուտուբանան վխվըխելավ, ճինչի-պոմբի ընելավ տանան տունա կյամ։

Քյինում ա, քյինում մին կյետու պտահըմ։ Կյետեն քշտեն նըստում ա, թա մին թիքյա դինջանա, տըեսնըմ ա մին կյեռթնուվ կյետան լոք տվավ, ընգավ կոխկը։

Ղազար ապերը վխելան տափեն վեր ա ընգնում։ Կյեռթնուվը կյամ ա, ծեռքին յըրան ընգըմ։ Նա վխելան սկի գյիդըմ չի հի՞նչ ա, փռնըմ ա, տինիմ ծոցըմը։

Մին պատառ դինջընալան եաը, եր ա կենում, հղե ընգնում։

Մհենգյ էլ մին կորե յա պըտահում։ Էտ կորեն էլ ա յոր օնըմ, տինըմ ծոցըմը։ Էլհա յա հղեն ընգնում։

Քյինըմ ա, քյինըմ, տեսնըմ ա ծմակըմը մին ծոխ ա եր ինըմ։ Վխվխելավ մուտանըմ ա, տեսնըմ մին տոն, ծակավը յեշըմ ա, տեսնըմ էրկու օշափ նստած։ Ինքն էլ փիս տունզն ա ինըմ։

www.naregatsi.org

Դաբդաձն յանշաղ տեռած, ասըմ ա.— Հի՞նչ անիմ, հի՞նչ չանի՞մ։ Ախրը սրտըվերվում ա, նի մըննըմ։

Նի յա մըննըմ, պարյօր տամ, ասըմ.— Ախպեր չը՞ք յոր օնել ինձ։

Ընդրանք ասըմ ըն.— Խե՞ չընք յոր օնել, էրկու չինինքյ, իրեք ինինքյ։

Պիրըմ ըն ըտրան հաց, չայ տամ, օտըմ ա, քոն ինըմ։ Ըռավետը եր ըն կենըմ, քթեվ անըմ։

Էտ օշափնեն ասըմ ըն.— Ղազըր ապեր, մին տու վէլ շորերտ պըտրռե, տես լու՛, վիչիլ կա՞, թա չէ։

Ղազըր ապերը ծոցան կյեռթնուկը տու՛ս ա օնըմ, թա.—Հսե՛, իմ վիչիլըս էս ա։

Էտ օշափնեն զրմանըմ ըն։ Մհենգյ էլ ծեռքը քցըմ ա, կորեն տու՛ս օնըմ, թա.—Հսե՛, ըս էլ իմ լու՛ս ա՛։ Տրանք մնըմ ըն ըրմացած, մինը մինու իրեսու յիշիլիս։

Մհենգյ էլ ասըմ ըն.— Ղազըր ապեր, դե կուռնուտակատ մին մազ տու՛ս կալ, տեսնանք հո՞ւնց ա։

Ղազըր ապերը ծեռքը քցում ա կուռնուտակեն մազի չաթուն տու՛ս օնըմ։

Էտ օշափնեն վխելան ասըմ ըն. — Մազըտ քաշի՛։

Ղազըր ապերը տեսնըմ ա, վեր էտ ուշուփնեն վախըմ ըն, ինքյն էլ մեծ-մեծ պեներ ա խոսըմ։

Ասըմ ա.— Մին պատառ ճու՛ր տվեք։ Ուշուփնեն, մին մեծ դոլչա յա ինըմ, տամ ըն ուրըն, վեր ճու՛ր խմե։

Ղազըր ապերը տեն ա քըցըմ, թա,— Ստրանավ մարթ կըքուշտանա՞, մին էն լապատկան ինձ տվեք, քյինիմ մին մեծ գյոլ անիմ, յրան ընգնիմ, խմիմ, քուշտանամ։

Ուշուփնեն վեր տըեսնըմ ըն ստրան ստի, ասըմ ըն.— Ստա մեր կլոխը քյալաղյ ա պիրլական։

Վերչը էտ օրն էլ ըն լու՛սուցըրնըմ։ Էքյսը ըռավետը եր ըն կենում, քյինըմ ծմակը փաղու՛։ Էտ էրկու օշափը սկսում ըն փաղ անելը, ամմա Ղազըր ապերը փաղ չի անո՛ւմ։

Էտ օշափնեն ասըմ ըն.— Ղազըր ապեր, խե՞ փաղ չըս անըմ։

Ասըմ ա.— Ստի եշըմ ըմ, թա լհա մի դու՛նումանց էս ծմակը պուք տամ, տանիմ։

Էտ օշափնեն վեր սկանում ըն, ղանչանք ըն անում, ասում. — Լավ ա, լավ, թող կենա ամմեն օր կյանք փաղ անինքյ, տանինքյ, հանցու ցրտումը չի մնանք։

www.naregatsi.org

Վեր իտի ըն ասըմ, Ղազար ապերն էլ ասըմ ա.— Դե, վեր օղըմ չըք, անել չըմ ծեր խաթրու։ Ասըմ ա, նստում։

Էտ ուշուփնեն փաղ ըն անըմ, պըրծնըմ, եր կենում, քյընըմ տոն։ Տանը էտ ուշուփնեն ասըմ ըն.

— Էտ վեր կենա, մըեզ քյալաղյ ա կյիլյական, լավն էն ա, ասինքյ. «ենք ըխպրութունա տունս կյանք»։

Ընդրանք ուրուդյունը ասըմ ըն.— Ղազար ապեր, եք ըխպրութունա տունս կյանք, բոլ ա, հինչքան ըխպրոթուն ընք ըրալ։

Ղազար ապերը՝ թա.— Պա ե՛կեք, հի՞նչ ըմ ասըմ։

Ուշուփնեն թա.— Վեր մին չուվալ վրեսկե տանք, բոլ չի՞։

Ղազար ապերը թա.— Բոլ ա։

Եր ըն կենըմ մին չվալ վրեսկե ածըմ, մին օշափ էլ յոր ա օնըմ, շիլակըմ, կլխավն էլ Ղազար ապորը, թա տանե, ուրանց տանը թողե։

Հըղցեն օշափը ասըմ ա.— Ղա՛զար ապեր, սկյի օժըտ ըրվամ չի՞։

Ասըմ ա.— Ընդրա համար, վեր օժըս յըրատ չըմ քըցա՛լ, ջուբան բիզը հանըմ ա, սկսըմ խըզատակը ծակըմ։

Օշափը թա.— Օժըտ քաշի՛, քաշի՛։ Ղազար ապերը բիզը քաշըմ ա։

Քյինըմ ըն, հանում շենը։ Խոխեքյը զրմացած ծակը ծուկան սկսըմ ըն եշիլը։

Օշափը հրցնում ա, թա.— Ղազար ապեր, խե՞ յըն ստի եշում։

Ղազար ապերը՝ թա.— Ծակ-ծուկ կապըմ ըն, հանցու վեր քյըեզ օտին։ Օշափը վխելան նըհետ վեր ա քցում վրեսկուն չուվալը, փախչում։

Հղեննի ուշափեն մին մարթ ա պտահում, կըղնցնում ա, ուշափեն՝ թա.— Ա՛յ ախպեր, հի՞նչ ա պըտահալ, վեր իտի փախչըմ ըս։ Էս օշափը կլխոր եկածը պատմըմ ա։

Էտ մարթը՝ թա.— Պե՛ղ ը՞ս, կյի՛ժ ը՞ս, պա էն վխլկոտ մարթը հի՞նչ ա, վեր տու ընդրանա փախչըմ ըս։ Եք քյինինքյ վրեսկեն յոր օնինքյ, կես անինքյ։

Էտ օշափը թա.— Չէ, վախըմ ըմ։

Վերչը քյինըմ ըն։ Էտ օշափը էտ մարթին ասըմ ա.— Դե եք մեր վընըրնեն ուրուր անա կապինքյ, հանցու վեր տու փախչիս, ինձ էլ տանիս։

Քյինըմ ըն։ Ղազար ապերը վեր տեսնըմ ա, կնգանը ասում ա.

— Ա՛ կընեգյ, մին էն ճըղըցաքարը ինձ տո, յըրա անիմ էս շան տըղեն սպանիմ։

www.naregatsi.org

էտ վեր օշափը սկանում ա, մին բաշ փախչըմ ա, էտ մարթն էլ հետան քաշ ըրած տանըմ։ էտ մարթը տափերն ա քովում, մեռնում։ Վրեսկեն մնամ ա Ղազար ապորը։ Ընդրանավ լավ-լավ տներ ա շինըմ, էտ տրնեըրըմն էլ օտըմ, խըմըմ, պարանց ընգնըմ, քոն ինըմ։

Ուստուծանա իրեք խնձոր վեր ընգնի. մինը՝ լսողեն, մինը՝ կյիրողեն, մինն էլ՝ էս հաքաթը լուս աշխարք քըցողեն։

www.naregatsi.org



96. ԱՂՎԵՍԸ ՆԱՆ ՓԱԼԱՆԳՅԸ

Մեհետ չանավարնեն հրվըքվեցեն, վեր ուրանց հետե թաքավեր ճոկին։ Հուր ճոկեն, հուր չի ճոկեն, ախեր թաքավերը բիդի ամենազոռավը ինի՞, տրա հետե փալանգյին ճուկեցին թաքավեր։ Փալանգյը ուրան հետե բիդի մին հանցը յոր օնե, վեր ուրան ըսրծնեն, օզրծնեն անե։ Փալանգյը յոր ա օնում ըղվեսեն։

Մեհետ փալանգյը նան աղվեսը նստոտած սոհբաթ ին անում, թա հի՞նչ անին, վեր ուտելի պեն քըթենան։

Ախրը Փալանգյը ըղվեսին ղարկում ա, թա.— Քյինա շոռ եք հյվանա, պենա քթի, մես պեր օտեմ։ Աղվեսը քյինում ա, տեսնըմ մին ծորում մին քանե եղենքյ ըրածըմ ըն։ Տես ա վազ տամ, տեն ա վազ տամ, տեն ա լոք տամ, տես ա լոք տամ, տեսնում ա, վեր վեչ մին պեն չի կըրլական շինի, ետ ա տեռնըմ քոռըփեշմեն կյամ փրլանգյեն կոշտը։

Փալանգյը յրա յա պըրծընում, թա. — Հոր ա՞ պերած պենըտ։

Աղվեսն ասըմ ա.— Թաքավերն ապրած կենա, քյեցե էլ սար, էլ ծոր չըթուղեցե, լոխ շոռ եկե, ամմա վեչ մին պեն չըքըթի, հանե էն ծորումը մին խիլլա եղենքյ ըն ըրածում, դե հի՞նչ անիմ, զոռըս պատից վուչ, ըտրա հետե էլ կրեցե վուչ վեչ մին պեն պիրիմ։

Փալանգյը հուրսոտված եր ա կենըմ, թա.— Պա խոսած տըեղը լհա կասիս օլքյաս տրկտյեր կանեմ, էտ խե՞ մըհենգյ կըրեցեր վո՞ւչ, թա մին մսխալ մես քըթենաս օտես, դե տու ըստեղ կաց, յըես քյինաամ, տըես հի՞նչ ըմ ըննական։

www.naregatsi.org

Փալանգյը քյինամ ա ըղվեսին նշանց տրված ծորը, տրեսնըմ եզենքյը հալա ընդեղ։ Մին եզան մաշկե վեր չանչըմ ա, եզանը մաշկը կոտրըմ ա, եզնը վեր ա ընգյում, Փալանգյը էն վեր ընգյած եզանը շլակում ա, յոր օնըմ, կյամ։

Աղվեսը ասըմ ա.— Թաքավերն ապրած կենա, հունց յըխնեցեր էտ մեծ եզանը։

Փալանգյը գյառլամիշ ա ընում, թա.— Յրես ստրան յըխնեցե իմ չընչուլներես օժավը, իմ չնչուլնես ա վեր ինձ պահըմ ա, ողյումս հինչու ասես, չնչուլներավրս կրեխնեմ։

— Պա հինչը կրկարե քյրեզ եխնե, հինչ հեյվան, յա հինչ պեն քու չնչուլներետ կրեխնե։

Փալանգյն ասըմ ա.— Ողյումըս տի մին պեն չկա, վեր ինձ եխնե, յա մին պեն չկա, վեր յրես կարիմ վուչ իմ չընչուլներավրս ճուբռոտեմ, զիլբա-զիլբա անեմ, օղըմ ըս ժնջիլավ կրպոտե, մին ա կրկըտրիմ, մինակ վիշավ վեր կրպոտես, բալի կարիմ վուչ, ընդրա հետե, վեր պերակ ա, չընչուլնես կրցըվրցնե։

Աղվեսը հըրցըփորց ընելավ գյուդում ա փըլանգյեն յխնելու թահրը։

Շատ ա քընենքյ անըմ, թա հո՞ւնց անե, վեր մըխրե վիշ քթենա։ Ախրը թահրը քթենում ա։

Աղվեսը քյինամ ա մին հըղրցում վեր ընգյնում, յանի քի ստակած ա։ Մին հըղրցավուր կյամ ա, թա քյինա, տեսնըմ ա աղվեսը վեր ընգյած, մտածում ա, թա. «Էս լըհա լավ ա, ինձ մորթե յա հարկավեր։ Ցոր ա օնըմ, տինում ուլախեն պեռնեն մաշ տեղը, ինքյը առաչ ա ընգնում, ուլախը հետան քցում։ Աղվեսը ուլախեն պեռնան մըխրե վիշ ա կյուղանում, լոք տամ, փախչում։

Քյնում ա, տեսնըմ Փալանգյը դոյունջան կերած, մտակվածք, ինքյն էլ քըշտեն տապ ա անում, ըսկսում Փլանգյին չընչուլնեն կպոտելը։ Փալանգյը քնուտեղա եր ա կենըմ, տեսնըմ ուրան կպոտած, աղվեսն էլ ուրան հետե օտըմ ա-խըմում քյեփ անում։ Փալանգյը տես ա զոռ անըմ, տեն ա զոռ անըմ, ամմա կարըմ չի ըզադվե։

Էրկու օր տի սոված վեր ընգած կենում ա, ախր մին մոկուն կյամ ա կծոտում, վիշը կտորում, Փալանգյը ըզադվում ա։ Աղվեսը փախչում ա հաքյին պըցըրցնելավ, ընդեղան Փլանգյին տրնազ անում։

Փալանգյը ծեն ա տամ, հարայ-հըրոցը քցում ընդեղեր, թա.— Եք ըստեղ, պեն ըմ ասըմ, վախել մել, քյրեզ նի չըմ կյլական։

Աղվեսն ասըմ ա.— Ըսելինըտ հարկավեր չի, քյինա՛, ըշտեղ քու չնչուլիտ զոռան նաղլը անիս, լավ գյիդա, վեր թաքավերը մինակ ծեռքու զոռավ կարել չի յոլա քյինա, լավ ա կըլխետ զոռը ինչ շատ, հինչ թա ծեռքետ։

www.naregatsi.org

97. ՍԱՌԱՆ ԿՅԱՄ Ա՛...

Ինըմ ա, չինըմ մին մարթ, մին կընեգյ։ Մարթը խեղճ մարթ ա ինըմ, կընգանը ծրեռքին մին փալաս, մին թռւլըբոշ, մին ասծու ընեծա՛ծը։ Կընեգյը՝ Սառան, ըտրա կըլխին ճուղուպուր ար կոտրըմ, ըտրա կըլխին նստալ ար։

Մին օր էլ, մին փռւսռւնգյռւ օր, ցորտ-ծըմեռնը ըտրանց շենն էլ սարերին յրա՛ն, հինչ ցո՛րտ, ղայսա՛ր, էտ կընեգյը ետ ա տրեռնըմ ռւրրան էտ «թռւնի հարա՛յ» մարթին ասըմ.— Ա՛յ մարթ, հի՛նչ ըս տանը վեր ընգալ, քյինի աշխադանք ըրա։

Մարթըն ասըմ ա.— Ա՛յ կընեգյ, էս ծմըռնեն կրեսին հի՛նչ աշխադանք, հի՛նչ պեն, հինչ զատ կա՛, վեր յրես աշխադանքի քյինիմ։

Սառան ըչըղվըմ ա, մարթին կուփի-կուփի անելավ, յումբրուղլամիշ անելավ, տանան տռւս քըցըմ, համ էլ ասըմ.— Մոխերըս կըլխիտ, թռւլ պենջար, ցեխըս նան վրեղըս կըլխիտ, հունց չի՛ աշխադանք կա, բա հռնձ անելը աշխադանք չի՛, քյինի արտը հընձի։ Վրեննեըս օտիս տու, դըբընննես նըհետը, թա ցորտ ա, հի՛նչ ըս տանը եր ընգալ։

Մարթը տրռնան վրխվրխելավ ասըմ ա.— Ա՛յ ախմախ կընեգյ, ծըմեռնը արտ կինի՛, վեր քյինիմ հընձիմ։

Սառան լափ կըզնըվըմ ա, ասըմ.— Էլհա ըրռնըս պըրտողեցի՛՛ր, ա՛ տաիը նի մըտած, վեչ եր կացա՛ծ։ Բա իստի էլ պեն կինի՛, վեր աա յա իմ կըլռխըս պերում, ինձ էսքան խուսուցընըմ, ծենըս աշխարքը քըցըմ։ Ա՛ հիմմար-անասուն, օրաղըտ եր կալ, քյինի,

www.naregatsi.org

ըստեղ արտ չիկա՞, մին օրիշ երգյիրըմ կինի, էտ երգյիրներըմը մըհեկ ամառն ա, արտերին հընձին լավ վախտըն ա, քյինի ընդեղ հընձ ըրա։

Էտ մարթը վեր էտ խոսկերքը լըսըմ ա, լափ լըղին ճաքըմ ա, ծենը-ծունը կըտրած, ճըպաղած, կոչ յեկած, ասըմ ա.— Ա՛յ կընեգյ, տու ինիս, էն աստուծը, վիրև՝ աստուծ, ներքև՝ տու, յըես էն երգյիրին տեղը գյուղում չըմ, ըշտեղ մըհեկ ամառն ա, հընձին լավ վախտըն ա, ինձ քըրըքար մի քըցիլ։

Սառան մին լավ, իրեքատաժանի ունշունց ա տամ, մին կուտուր չոր հաց, մին էլ օրաղը թող անըմ, քըցըմ հայաթը, ինքյը նի մընընըմ տոն, տոռնը քըլլըմ։ Էս մարթը մընըմ ա հայաթըմը ծունին մեչին շըշկըլված, կաղնած... Ըշտեղ քյինի՛, հի՞նչ անի շատ վեր քընենքյ ա անըմ, ցըրտան տըղտողալավ նի յա մընընըմ ուրանց կյումը, ընդեղ լաց ինըմ։ Էլհա մեթկ ա անըմ, թա հունց անի, վեր էտ լաչառ կընգանը անա ազադվի, ընդրա օվտան կյա։

Օրը ընցալ ար։ Էտ կընեգյը ակուշկավը եշըմ ա, տըեսնըմ էլ մարթը հայաթըմը չի, ասըմ ա հաչըթ քյեցալ ա։ Ըսկըսըմ ա լավ պադրաստոթուն քաշիլը, վեր դըբրունգյուն չախը սիրականը կյալու յա, ուրան յոր օնի քյինին էտ սիրականին տոնը, ընդեղ խալվաթ ա, հըրեվաննին գյիդալ չըն։

Տա ըսկսից օտելի պեներ պադրաստիլը, վեր նհետը տանի։ Հավեր մորթից, քյաթա թըխից, եղածու ըրավ, կինի-արաղ շինից, օրիշ լավ-լավ խորագյնի ինիից, կապից մին մեծ բոխչըմ, ինքյըն էլ սպասից։

Մին էլ տըեսավ սիրականը եկը կըտերը կաղնից, մին քյանդիր կախ տըվավ։ Էտ կընեգյը թըյդը-թայդի բոխչան քյինդիրան կապից, ինքյը կախ իլավ, վեր սիրականն էլ պըցըրցնի։ Էտ լոխ էն մարթը կյումին ակուշկավը տըեսնում ա։

Սիրականը տընքտընքալավ քյանդիրը սկսից հունրթավը պըցըրցնելը, հաչա կըեսը հասած, էտ մարթը կյուման տունա ա կյամ, ասըմ.— Ա՛յ կընեգյ, ա՛յ կընեգյ, Սառա, էտ հո՞ր ըս պըցըրանըմ։

— Ա՛յ մարթ, բա տու հընձի չը՞ս քյեցալ, բա հի՞նչ օնիս ըստեղ։

Մարթըն ասըմ ա. — Ա՛ կընեգյ, լհա հընձա յըմ կյամ, ասի տըեսնամ էտ ըշտեղ ըս քյընըմ։

Կընեգյը ըշըղվըմ ա, ասըմ.— Ջոռ ըմ քյինըմ, ցավ ըմ քյինըմ, խստիբուջաղըն ըմ քյինըմ, ա շոն, շան տըղա, տըեսնըմ չըս հոր ըմ քյինըմ։ Մեր հունրթին քըշտին մին ցիցեռնակի պունն կա, քյընըմ ըմ ճտերին ակը տամ, տըեսնամ...

www.naregatsi.org

— Ա՛յ կընեգյ, բա էտ բոխճան հո՞ր ըս տանըմ։

— Քոռ մընա՜ս, բա տեսնըմ չը՜ս, վեր ցիցեռնակին ճըտեբին հետի յըմ տանըմ,— ճըղղաց կընեգյը։

Մարթը ըղըղվից, ըսկըսից ճըղճըղալը, բըղբըղալը, ընդրա էտ սաւսաւն հըրեվաննին տընեբան տուս եկին։ Էտ կընգանը սիրականը վախելան նըհետ քյանդիրը պեց թողից, փախավ։ Էտ կընեգյը վեր ընգավ, տափան կացած ըսկսից քյոհնա տերման քամիլը, ուշունց տալը, կյըռկյոռալը, հարայ տալը։

Վըեր տըեսնըմ ա հրըեվրննին հըվաքվըմ ըն, էտ կընեգյը ասըմ ա.— Էս տոտոնը կրակ ընգածը, էս ուրուրուցը կյուլ տարածը ինձ ըսպանից, ամանգյունիդը, ինձ էս քյանդիրավը խեխտից, էս խըզռոկը տարածը հոքիս հանից էս խռոկը պըկան կացածը հա՜... Ինձ գյոմփից, ինձ դոմփից, շուտ ըրեք, քյեցեք քյոխվին կընչեցեք կյա՜... Էս կարկուտ տարածը, էս վեչ մխթարածը քյանդիրը պոկըս ա քըցալ, ա հրըըվրննե, հեսե՜ տըեսեք, էս քունձռոտը, էս խըռըզնըհատը, էս կըլոխը մոշավ ըրածը էս, էս, էս...

Սաղ շենը ըտրա ծենան տուս ա կյամ, կյամ ըտեղ, տեսնըմ էտ խեղճ մարթը վախան չուրացալ ա, չըպըռկվալ, մընացալ լուզուն կըտրած, կաղնած։

Էտ կընեգյն էլ ճըղճըղըմ ա, թըվիլ-թաւիլ անըմ, թա՜.— Վա՜յ, վա՜յ, վա՜յ, ա՛ հրըըվրննի, վա՜յ կոխկաճաղըս կոտրալ ա, վա՜յ օմբաս, վա՜յ տուռդիս, վա՜յ մաշկիս հոռը կոտրալ ա՜, վայ ծոնգնըս, վա՜յ վրեննիս ծունկնամեսը վա՜յ, վա՜յ բլակըս, արմունգըս, վա՜յ կըլխիս ղափաղը վա՜յ, վա՜յ, պոռտըս, վա՜յ ճըղմըղընքնիս նան կյըռաղինիս, վայ սըրտիս տախտակըն նան սըեռտըս, վա՜յ...

Լոխ էլ հըվատըմ ըն, վեր մարթը օզացալ ա էն քյանդիրավը կընգանը կախ տա, քյանդիրըն էլ կըտրալ ա, էտ կընեգյը եր ա ընգալ։ Քյոխվան վեր կյամ ա իտի տեսնըմ, էտ մարթին դուսաղ ա անըմ։ Էրկու զոռի տըղամարթ փըռնըմ ըն ըտրա ծեռքերը, վրեննեբը կըպոտըմ, դուսաղխանան ըղըրկըմ։

Էրկու օրանը եռը էտ կընեգյը ուրանց հայաթըմը սաղ-սալամաթ, օրախ-օրախ ման ա կյամ, ուրուգյունննին էլ սիրականին տոն պերըմ։ Հենգյ տարե էտ մարթը դուսաղխանըմը նըստըմ ա, վեր հենգյ տարեն թըմամըմ ա, կյամ ա տոն։ Վեր կյամ ա տոն, ուրանց տոնը ճրնանչըմ չի, սաբաբը վեր տոնը, հայաթը փխսացալ ար, շափարը ծրռվալ, կուտրատալ, հայաթըմը մին ծառ չիկար, կընեգյը լոխ կտորալ ար, ծըմեռնը էրալ, տոնը ծրանա-վերանա ար տեռալ, աշկա ընգալ. դե անտըղամարթ տոնը հի՞նչ կինի՜, էն էլ աննամուս,

www.naregatsi.org

տընաքանդ կընգա ծեռքի, վեր բուչի-բուչի չի անի տոնը շինի, հալա քանդի, հի՞նչ կինի...

Նի յա մընդրմ տոն, տրեսնըմ տանը քյանդիրավ մին ճոժկ քըցած, կընեգյը մեչին թեքյ ընգած, ուրան պուճուր ախճիգյըն էլ ըրօրըմ ա, վեր հանգյիստ, դինջ քոն ինի։

Վեր մարթին տեսնըմ ա, դաստի եր ա թըռչըմ տրեղան, մարթին էն չոր-չոփ տրեռած վիզան կախ ընգըմ, պըչպըչորըմ, ասըմ.— Ա՛ մարթ, քու քյընալանըտ եսը իմ քոնըս առանց քյըեզ քիշերցիրեկ տարալ չի՛, ճարըս կըտրալ ա, քյանդիրա ճոժկ ըմ քըցալ, խոխին էլ ասալ, վեր ինձ ըրօրի, բալքյաս մին խըրեգյ քոն ինիմ, մըեռնիմ վեչ ինքյըս ինձ ուտելան, անքոն մընալան։

Էտ մարթը լոխ կըլոխ ա ընգնըմ, թա ճուրը ըշտըղավ ա քյինըմ, թա ինքյը հինչ բեդմա անի, վեր էտ ասծու կըրական ազադվի, էտ լաչառ կընգանը ծեռքան դուդունը դուբմիշ չինի, թոքը նի չի կըենա էրվի՛։

Մին քանի վախտանը եսը էտ մարթը կըկըղ-կակող կընգանըն ասըմ ա.— Ա՛ կընեգյ, Սառա, բա գյուդունմ ը՞ս հինչ կա՛, բա ասիլ չը՞ս էն վեր ծըմակը փաղդի քյեցի, տեսնամ ընդեղ մին վեր կա, մեչին եշեցի, տեսնամ էն ա մաչին վրեսկե կա, եք ուրունգյունըս քյինիքյ, պերինք, ամմա հընգյեր-հըրեվան գյիդաշն վեչ հա՛։

Կընեգյը ուրխացավ, ռազի կացավ, պարկերը, խուրջինը հըզրից, թաղա քյանդիրը եր կալավ։

Քըշերը մարթը նան կընեգյը եր կացին, շենան տունս եկին, քյեցին ծըմակը։ Ծըմակըմը շունտանց մին խոր վեր կար։

Վեր եկին էտ վերին կողտը, մարթըն ասից.— Ա՛յ կընեգյ, քյանդիրը մեշկաս կապի, ինձ կախ տո, քյինիմ վրեսկին հանիմ։

Էտ կընգանը աշկը ծակ ար, ինքյըն էլ հինչ ինըմ ար համփ արանըմ, ճեպռըմ, բոմփըմ, դիբի ուրան պըերանը։ Մին խոսկավ շատ ըռըխավեր կընեգյ ար։

Վրեր վրեսկուն անըմը լըսըմ ա, ասըմ ա.— Չէ՛, ա՛ մարթ, քյանդիրը տու իմ մեշկաս կապի, յըես քյինիմ վրեսկեն պերիմ։

Մարթը թա՛.— Հի՞նչ կինի՛...

Կընգանը մեշկան քյանդիրը կապըմ ա, քըշըցնըմ վերին մաչը, կեսըմը քյանդիրը պեց թողըմ։ Վեր կընեգյը թըրըմփալի եր ա ընգնըմ, վերին ատակին տակը, էտ մարթը վերին ըռըխին մին մեծ քար ա տինըմ, իրեսին խըչըկընքըմ, դինջացած տոն կյամ։

Էքյսը հըրըվընններին ասըմ ա.— Բա ասիլ չըք, ա հըրըվննե, կընեգյըս տանան փախալ ա, էլ օզըմ չի ինձ նըհետ ապրի։

www.naregatsi.org

էն լոխճան մոտի հըրեվանը, թա.— վո՜ւյ, պոչերըս կըտորիմ, քա իտի պեն կինի՜։

էտ մարթը թա՛.— Բա հի՜նչ։

Անց ա կըենըմ մին տարի, էրկու տարի, էտ մարթը սըերտը դինչ ապրըմ ա։

Մին հետ ինքյը-ինքյը ասըմ ա. «Քյինիմ տեսնամ էս կըենգյը հինչ իլիավ, սաղ ա՜, սըեյրու վա, թա՛ չէ»...

Տա թաքուն քըշերը եր ա կըենըմ, քյանդիրը յոր օնըմ, քյինըմ ծմակը, էտ վերին պերանը պեց անըմ, տըեսնըմ մին պեն ա տուրուր կյամ, տա քյանդիրը կախ ա տամ, ասըմ. «Թա՛ կըենգյըս ինի, հալա՛ վերան տուս չըմ օնելու, հալա՛ ուրթում բեղմա օտի, վեր խելունք կինի, հընաղանդ կինի, տընարար կինի, էլ սիրական չի պահիլ... Թա՛ ուրթունըմը չի օտիլ, էլհա քյանդիրը պեց կըթողիմ, վերը քըցիմ»։

Վերին պըրանին քըշտին տեսնըմ ա մին պըռթպըռթոտ զատ, հեյվանի մընան։

Էտ պըռթպըռթոտ հեյվանը ղաչանք-պըղատանք ա անըմ, ասըմ. — Ա՛յ մարթ, ինձ էս վերան հանի, յըես քու լըվռթունըտ մըտաս քըցիլ չըմ, ինձանա վախիլ մի, յըես քյըեզ վեչ մին պեն չըմ անիլ, մինաակ լհա՛ ինձ վերը չի քըցիս, տուս պերիս։

Էտ մարթը ըտրան տուս ա պերըմ, էլհա վերին ըռեխը ծասկըմ։ Էտ պուղավեր ընդրճավեր, հաքյվավեր, պըռթպըռթոտ հեյվանը ասըմ ա.— Յըես սադանա յըմ, ինքյն էլ սադանուցը թաքավերը։ Էրկու տարի ըստրանա առաչ մին կըենգյ եկավ մեր սադանոցը պուննը ընգավ. էս ա էրկու տարի յա, մըեզ տանջըմ ա գյանք չի տամ օրը-իշեղ չի տամ, մեր օրը սև ա ըրալ, խավար ա ըրալ, մըեզ մաններին յրան պար ա ածալ, հունցու ածալ ա, ինդի էլ պար ընք եկալ, էնքան վեր ջանա յընք եկալ, ախպեր՜, էլ տըմանըմ չընք։ Մըհեկ տու ինձ ազադեցիր, էտ մեծ լըվռթունը ինձ ըրիր, ըտրա ամենաը յըես քյըեզ մին մեծ լըվռթուն կանիմ։ Անջուկըտ ինձ յրա պահի, յըես քյինալու յըմ թաքավերին ըխճըկանը մեչը նի մըննիմ հիվանդցընիմ։ Լոխ հաքյիմնին պերելու յընն, կըրելու չընն թա՛ լըվըցնին։ Քյինելու յընն լոխճան լավ հաքյիմը պերին, էլհա կարելու չի, թա՛ լվըցնի, յըես մեչան տուս չըմ կյալու, միչև տու կյաս վեչ։ Թաքավերը բոլ-բոլ վրեսկե յա տալու, հու վեր լիվըցնի։ Տու շորերըտ կըփոխիս, հաքյիմի շորեր կը կյենաս, կյաս, ասիս. «Թաքավերըն ապրած կըենա, յըես կըպըժըժկիմ»։ Էն վախտը յըես էտ ըխճըկանը մեչան տուս կըկյամ, ախճիգյը կըլվանա, ըտրան ամենաը քյըեզ մին բոլ վրեսկե կըտան։ Էտ էլ ընդրան ամենաը, վեր տու էն լաչառ կըն-

www.naregatsi.org

գանը ծեռքան ինձ ազատեցիր։ Ամմա էն էլ ասիմ քյրեզ, վեր իմ կոր-ծըս մարթկանց հիվընդցնելըն ա, ամմաև վախտ կյաս վեչ, թա փըլանքյաւսին կըլիվըցնիմ հա՞, լհա էս մին դռնըմը կըկյաս, վեր էրկունջի դռնըմըն եկիր, քյրեզ բըթաւրափ կանիմ, հոգիտ կըհանիմ։

Մին քանի օրանը ետը լըսըմ ըն, վեր թաքավերին ախճիգյը հիվանդացալ ա, վեչ մին պըժիժկ ճար չի անըմ։ Էտ մարթը հաքյիմի շոր ա կյենըմ, քյինըմ թաքավերին պալատը, ասում, վեր ինքյը պժիժկ ա, ինքյը կըլիվըցնի։ Թաքավերը ռազի յա կըենըմ։ Էտ սըտանան վեր ըտրան տըեսնըմ ա, էտ ըխճըկանը մեչան տունս ա կյամ, քյինըմ։ Ախճիգյը լըվանըմ ա։

Թաքավերը ուրխանըմ ա, ասըմ.— Համ ախճիգյըս քըյեզ, համ էլ թաքավերոթունիս կեսը։

Էտ մարթը ռազի յա կըենըմ։

Պերըմ ըն քառասուն օր, քառասուն քըշեր հըրսանիք անըմ։ Մին քանի վախտ վեր անց ա կըենըմ բիրդան լըսըմ ըն, թա մին օրիշ թաքավերի տըղա հիվանդացալ ա։ Էտ թաքավերը խընթրալ ա, վեր էս թաքավերին փըեսան, էտ լոխճան ընըմավեր պըժիժկը, քյինի, լըվըցնի էտ տըղին։ Էտ մարթին անցալ կըլինը, ցավի մաչ ա ընգնըմ, ջանը մըղմող ա ընգնըմ, թա բա հո՞նց անի, հո՞նց չանի, վեր ամալ կյա։ Քյինի վա՛յ ա, քյինի վեչ վա՛յ ա։

Վերչը ճարը կտրած քյինըմ ա, հըսնըմ հիվանդին։

Վեր սըտանան ըտրան տեսնըմ ա, ճարը կըտրած տունս ա կյամ, ամմա մըթկըմը ասըմ ա.—Վե՛չինչ, յըես քու ճաշըտ կիփիմ, յըես քե նշանց կըտամ ըշտեղ ա «Դառթունց շանը կըլինը թաղած»...

Հիվանդը լըվանըմ ա, էտ մարթը տըղտաղալավ տունս ա կյամ քյուչյան, տեսնըմ օղտերը վըեսկավ պեռնած ուրան ըն յեշըմ, վեր հըղե ինի տոն, թաքավերին պալատը։

Էտ դռրըմը սըտանան կյամ ա ըտրա պըկան փըռնըմ, ասըմ. — Ա՛րա, ա՛յ ախմախ, բա յըես քյրեզ ասեցի վե՞չ, վեր տու օրիշ հիվանդի կոշտ չի կյաս, խե՞ յըս եկալ, էնքան վըեսկեն, թաքավե-րին ախճիգյը, թաքավերուԹունը քյրեզ հերիք չա՞ր, դե վեր եկալ ըս, մըհեկ էն հիվանդին տեղ, քու հոգիտ ըմ հանելու։

Էտ մարթը տըղտաղալավ ասըմ ա.— Կա՛ց, կա՛ց, եկալ ըմ ըս-տեղ քյրեզ մին պեն ասիմ, վեր էն կընեգյը՝ Սառան վերան տունս ա եկալ, էն ա հետատ ման կյամ.... Սառա՞ն կյամ ա՞։

Էս սըտանան վեր էտ լսում ա, վընն-ծրեռքը տափան կտրվըմ ա, տափը տեղ չի տամ վեր կաղնի, հենց ա տրեռնըմ օթի օրփաթ թռնլյանըմ, խըղճանըմ, ասիս լհա մեշկը կոտրըմ ա՞, ասըմ ա.—

www.naregatsi.org

Ցրես քյրեզ մատա՛ղ, քու ջանիտ մատա՛ղ Սառին մին խըրեգյ զիրավ ըրա, միչև յրես փախչիմ, կոռչիմ էս լռւս ըշխարքաս։

Սրտանան վեր Սառին անըմը լըսըմ ա, էտ մարթին բողազը պեց ա թողըմ, էս լռւս ըշխարքաս չըքվըմ։ Միչև մըհեկ էլ էտ սադանեքյը մարթկանց իրեսը չըն տռւս կյամ։

Էտ խեղճ մարթըն էլ իտի թաքավերի փըեսա յա տըեռնըմ, ռւրաւն հետի օրախ, բախտավեր ապրըմ։

Նա ռւրաւն դաւրդը-ցավան ազադվից, պարով մունք էլ մեր ցավան, դաւրդաւն ազադվինք, մին լաւվ, օրախ ապրինք։

www.naregatsi.org

98. ՄԱՐԹԻՆ ՏԸԵՂԸ ՈՒՐԱՆ ՀՈՔՅԻՆ ՏՎՈՂ ԿՆԵԳՅԸ

Ինիս ա, չինիս մին թաքավեր մին թաքուհի։ Ըտրանց ինիս ա մին մադար-գյուդար տղա։ Թա օրիշներինը տարավ ին մըծընաս, ըտրանց տըղան օրավ ար մըծընաս։

Մին խիլլա ժուկ-ժամանակ ա ընցնես, կյաս ա էտ տըղեն փըսըկելի վախտը։

Հաըն ըսես ա.— Ա՛ բալա, ա աշկես սըվըսիպտակ, քյինի աշխարքըս ման եկ, քյըռեզ հետե մին լավ, մարալ-ջեյրան ախճիգյ օզե, հըրսանեքյ անինքյ։

Էտ տըղեն մարը պադրաստոթուն ա տըսնաս, պաշար ա պըդրըստես, տըղեն հղե տինիս։ Էտ տըղան շատ ա քյինիս, խրեգյ ա քյինիս, հըսնես ա մին հըղրցու խաչմերուկ, մին պառավ մարթ էլ սիպտակ մըրոքը չուրու կյոտկատեղը, էն ա ինիս ընդեղ նստած։

Էտ տըղան պարյօր ա տաս, թա ընցնե, էտ պառավ մարթն ըսես ա.— Ա՛ վերթի, ա՛ թըքըվերե տըղա, էտ իտի թայդի ըշտե՞ղ ըս քյինիս։

Էտ տըղան ըսես ա.— Քյիս ըմ ախճիգյ օզելի։ Համոթ չինի հըրցնելը, բա տու հո՞ւ վըս, պապե՛։

Էտ պառավ մարթն ըսես ա.— Ա՛ վերթի, վեր գյիդիր թա յըես հո՞ւ վըմ, հըրցնել չիր, յըես քու հոքյիտ հանողն ըմ, քու ճակատագյիրտ իտի յա կյիրած, վեր փըսակվելի օրըտ մըեռնիս։

Էտ տըղան վեր լըսես ա, ետ ա տըռնաս քյիս տոն։

www.naregatsi.org

Ծընողնին հըրցնես ըն, ըսես.— Ա՛ վերթի, պա խե՞ ետ ըս եկալ տեռտակըրող։

Տըղան լոխ նաղլ ա ընես։

Թաքավերը նան թաքուհին ըսես ըն.— Լոխ սոտ պեներ ա, հըվատալ մեր, իտի պեն չինիլ, ջադու պըռավու խոսկերք ա, էտ ա փըսըկվելի վախտըտ ընցնես ա, մունք էլ պըռավալ ընք, բեդմա վեր ռազի կենաս։

Էլհա մին խիլլի վախտ ա ընցնես։

Էտ տըղան տըռնաս ա քըռասուն տըրեկան։ Ծընողնին ղաչանք-պըղատանք ըն ընես, վեր փըսակվե։ Էլհա էտ տըղան պըդրըստվես ա, ախճիղյ հավան կընալի։

Էս դինըմ մին օրնուշ ճընապարավ ա քյիս, ամմա էլհա համին էն պառավ մարթին ա ռուջնհ կյաս։

Էտ տըղան պարյոր ա տաս, թա քյինի, էտ մարթը ըտրան կըղնցնես ա ըսես.— Թաքավերի տըղա, էտ ըշտե՞ղ ըս քյինիս իտի թայդի։

Էտ տըղեն ըսես ա.— Քյինիս ըմ ախճիղյ հավան կընալի, վեր փըսակվիմ։ Բա տու հո՞ւ վըս։

Էտ պառավ մարթը ըսես ա.— Յրես քու հոքյիտ հանողն ըմ, վերթի։

Թաքավերին տըղան մետն ա քըցիս հորը նան մորը ասածնին, էլ մըհնալ չի քըցիս ըտրա ըսածեն, ընդնես ա հըղեն, քյիս։

Շատ ա քյիս, թա խրեղյ ա քյիս, հըսնես ա մին քաղաք։ Էտ քաղաքին թաքավերը մին մադար ախճիղյ օնար։ Էտ տըղան հավան ա կընաս, փըսըկվես, մեծ պեժինքյավ ետ տըռնաս ուրան հայրենիքյը։

Ծընողնեն օխտը օր, օխտը քըշեր հըրսանեքյ ըն ընես։ Հըրսընքանը ետը, վեր բեդմա էտ թանզա փըսակվածնին ուրանց սերը վայելին, բուրդան ըտրանց օթախին տոռնը թըկես ըն։ Տու մի ասիլ ըտրանց տըռանը քըշտեն, համին էն հոքյի հանող պառավ մարթն ա, եկալ ա, վեր փըսակեն առաչի քըշերը ուրանց տըղեն հոքյին հանի։

Հաՙրը խնթրես ա, ղաչանք-պըղատանք ընես, ըսես.— Ա՛ ճակատակյիրը կըդարող ծուրունի, շատ ըմ խընթրես, ըտրան ավաղը իմ հոքյիս հանե։

Էտ պառավ մարթը ռազի յա կընաս։ Հորը հոքյին առնելիս, հաՙրը տըմնաս չի ցավեն, փըխչիս ա, ըսես ա.— Հուր հոքյի ըռնելի հետե եկալ ըս, ընդրա հոքյին էլ առ։

Ետնան մարն ա կյաս, ղաչանք-պըղատանք ընես, ըսես.— Ա՛

www.naregatsi.org

հոքյի հանող ծուրումնի, շատ ըմ խնթրես ըտրան ալվազը իմ հոքյիս հանե, մեխկ ա, ջահիլ ա, թող մուրազեն հըսնե։

Էտ պառավ մարթը ռազի յա կընաս։ Լհա ուզիս ա, թա մորը հոքյին հանե, մարը տըմընաս չի՞, փըխչիս ա ուրան օթախը։

Էտ լոխ թազա հարսը տըսնաս ա, հալա ուրան մուրազեն հըսնելու, ըսես ա.— Ա՛ հոքյի հանո՞ղ, ա՛ հոքյի հանո՞ղ, իմ ազիզ, սիրած տղես, իմ թաւլան նըշնածես ալվազը իմ հոքյիս հանե, շատ ըմ խընթրես։

Էտ ծուրումնին տըսնալալ էտ թազա հարսին ազնիվ, պարի, ուրան նըշնածեն հետե ուրան ջանը մըտան քըցող ըխճըկանը, ըսես ա.— Վեր տու իտի ազնավ ըս, վեր տու իտի հավադարիմ ըս, յըես էս տըղես հոքյին քյըեզ ըմ բըխշես, քյե՛ցեքյ ըպրեցե՛քյ օրախ, բախտավեր։— Ըսես ա պըրծընես, ինքյը ըթտըբաթտի տըռնաս։

Ըսես ըն հալա միչև ըսօր էլ մարթըկընեգյ ուրուր նըհետ ըպրես ըն հաշտ, մին խոսկու, էրկու ջան մին հըլավում, էրկուսը մին ջան, մին հոքյի տըեռած, մին պերցի, մինը մինին ըրևավը ուրթում ուտես...

Ծրգյինքան իրեք զամբուլ գյիլլաս կախ տվեն։ Մին զամբուլը՝ ըսողեն, մին զամբուլը՝ կյիրողեն, էն մին զամբուլն էլ՝ էս հաքյաթը լուս աշխարք քըցողեն։

www.naregatsi.org

99. ՓԻՍ ՄԱՐԸ

Իլալ ա, չիլալ մին թաքավեր ա իլալ, ըտրան մին կնեգյ ա իլալ։ Վեր էտ կնեգյը պատճառավեր ա տեռալ, ասալ ա.— Վեր կնեգյըս խոխան պիրի, մուրթուլական ըմ։

Էտ կնեգյը մին տղա յա պիրում պրծնում, օնքերը ուրուր տամ, նստում։ Էտ պուրուրեն տըղան լուզու յա ինում, խոսում։

Ասում ա.— Ա՛ մար, խե՞ օնքերըտ ուրուր ըս տուվա՞լ։

Ասում ա.— Դե քու հայր ինձ ըսպննական ա։

Էտ խոխան ասում ա.— Ինձ տար իմ հոր մղակումը վեր տիր։

Մարը իտի պտատած տանում ա, տինում հորը մղակումը։ Հայրը տուս ա կյամ, տրեսնում մղակումը մին պայրուր։

Ասում ա. — Էս հի՞նչ պայրուր ա։

Էտ խոխան ասում ա.— Ա՛ հայր, յըրես ըմ, ըսկացալ ըմ, վեր իմ մոր ըսպննական ըս, եկալ ըմ ասիմ, վեր իրեք տարե ինձ բախշիս։

Հայրն ասում ա.— Քյըրեզ ըմ բախշում։

Էտ խոխան վեր իրեք տիրեկան ա տեռնում, մարը էլհա օնքերը ուրուր ա տամ։

Խոխան ասում ա.— Օնքերըտ ուրուր մեր տալ, քյիննայական ըմ էլհա քյըրեզ ինձ բախշիլ տամ։

Ասում ա, պրծնում, քյինում հորը՝ թա.— Ա՛ հայր, իրեք տարեն էլ ինձ բախշի։

Հայրը բախշում ա։ Տղան տեռնում ա վեց տրեկան։ Մարը էլհա օնքերը ուրուր ա տամ։

www.naregatsi.org

էտ խոխան քյինում ա հորը թա.— Ա՛ հայր, իրեք տարեն էլ ինձ բախշի։

Հայրն ասում ա.— Ջէ, էլ կարել չըմ, ըսպանել բիդիմ։

էտ խոխան քյինում ա մին լավ ծի ճոկում, եր ինում, մարն էլ եր ա հանում թաղրքեն, քյինում։

Շատ վեր քյինում ըն, տեսնում ըն ծմակումը մին շինոթուն ա ջհհում։ Ըսկսում ըն ըտեղ ապրել։

Տղան քյնում ա վրերս անում, պիրում։ էտ տները լոխ պեց ա ինում, մինակ մինը՝ քլլած։

Տղան ասում ա— Ա՛ մար, էտ քլլած տոնը պենաս վեչ, թող իտի կենա։

Տղան քյնում ա հանդը, մարը եր ա կենում էտ տոնը պենում, տեսնում ըտեղ մին օշափ։ Ըսկսում ա էտ ուշափեն նհետ թաքուն ապրելը։

էտ կնեգյը ուշափեն ասում ա.— Հո՞ւնց անինք, վեր տղես կլոխը վարինքյ, սպանինքյ, յա կուրցնինք։

Ասում ա, պրծնում, սըտրսոտ հիվընդանում։

Տղան ասում ա.— Ա՛ մար, հի՞նչ կօտիս, վեր սղանաս։

Մարն ասում ա.— Առուծու կաթնը կօտիմ, վեր սղանամ։

Տղան եր ա կենում հղեն ընգնում, քյինում։

Քյինում ա, քյնում, մին մարթ ա ջհհում։

էտ մարթն ասում ա.— Բա՛լա, հիշտե՞ղ ըս քյինում։

Թա դե.— Քյինում ըմ առուծու կաթն ճարիմ խմոր[1] հետե։

էտ մարթն ասում ա.— Քու մար լավ հղըցու յրա չի, ամմա վեր օզում ըս տանիս, քյինի փլան ծառու փշակում կյողլը կաց, մին կաղլեգյ առուծ ա կյիլական, էն ա էտ առուծին վրեննը օտած, վեննը կպրծցնիս։ Ըտրանա ետը հինչ օզիս, տալու յա։

էտ տղան քյնում ա, փշակումը կյողլը կենում, տրեսնում մին վրեննը օտած առուծ եկավ պարանց ընգավ, ճոտերը ըսկսեցին ծծելը։

էտ տղան մին չուփավ առուծին վրեննը պրծցնում ա։

Առուծը եր ա կենում, ըսկսում խոսելը.— Տու էտ լվոթունը վեր ըրալ ըս, յըես էլ քյըեզ բեդմա լվոթուն անիմ։ Ասե՝ տրեսնամ հի՞նչու վրս եկալ։

էտ տղան ասում ա.— Ցըես կաթնու վում եկալ, վեր տանիմ, իմար օտե, սղանա, էն ա հիվանդ։

էտ առուծն ասում ա.— Քու մար լավ հղըցու յրա չի, ամմա վեր

---

1 Իմ մոր (Ս. Կ.)

www.naregatsi.org

օղում ըս, քյինի հանեն, ինդի տըվեր առնէծու ճոտեր կան, մինը ըսպանեն, կուպրուն տունս քցի, պեր կաթնավ լցնիմ, քյըեզ տամ։

Էտ տղան քյինում ա, կուպրուն տունս քցում, պիրում, տամ առնէծին։ Առնէծը կաթնավ լցնում ա, էրկու առնէծու ճոտու նհետ ուրյան տամ, թա քյինի։

Էտ տղան կաթնը տանում ա, տամ մորը։ Մարը օտում ա, սղաղնում։ Մարը մըն էլ ա հիվընդանում։

Տղան ասում ա.— Ա՛ մար, հի՞նչ կօտիս։

Մարն ասում ա. Փլան տեղը ասում ըն անմահական խնձոր կա, վեր պիրիս կօտիմ, սղանամ։

Էն տղան ծին եր ա ինում, առնէծին ճոտերն էլ յոր ա օնում, քյինում։

Քյինում ա, հանում մին խնձորու բախճա, նղացած ծին կապում, ինքյը պարանց ընգնում, քոն ինում։ Մին վախտ զուրթնանում ա, տրնանում առնէծնուն պիրիննեն ըռնփալալ։

Ասում ա.— Պա՛հ, շան տղես ընդրնեն ծիս կերալ ըն։

Մին էլ եշում ա, տրեսնում ծին ընդեղ։ Եր ա կենում, թա քյինի, տեսնում օխտը օշափ ըսպնոտած, ընդեղ վեր ածած։ Քյնում ա տրեսնում, ընդեղ մին տոն։ Պենում ա, նի մննում, տրեսնում մաչին մին ախճիգյ։

Էտ ախճիգյն ասում ա.— Պա վեր տու ինձ էտ ուշուփներան ըզադալ ըս, յըես քյըեզ հի՞նչ լվոթունն անի՞մ։

Էտ տղան ասում ա.— Յըես եկալ ըմ խնձոր տանիմ, իմար[1] հիվանդ ա, հանցու օտե, սղանա։

Էտ ախճիգյն ասում ա.— Քու մար լավ հղըցու յրա չի՞։ Դե վեր օղում ա, կտամ, կտանիս, ամմա ասում ըմ ինձ օքնիս, քյինինք իմ հոր թաքավերոթունը, յըես թաքավերու ախճիգյ ըմ։

Էտ տղան ասում ա.— Չէ, խնձորը տանել բեդիմ, իմար օտե սղանա։

Էն ախճիգյը ուրյան մտանան տամ ա էն տղեն, տղան էլ առնէծնեն տնում ա ըխճկանը նհետ, հանցու տանե ուրյան հորը կոշտը, ինքյը խնձորը յոր ա օնում, քյինում։ Տանում ա տամ մորը։ Մարը օտում ա, սղանում։

Մարը տրեսնում ա, վեր կարում չի տղեն հանց տեղ ըղարկե, վեր կյա վեչ, ուշափեն ասում ա.— Ըք ըսպանինք։

Օշափն ասում ա.— Յըես իտի տղեն նի չըմ կյալ։

---

[1] Իմ մայրը

www.naregatsi.org

Մարը տղեն աշկերը տունս ա տամ, թողում քոռ։ Առուծնեն քյընում ըն, կորչում։ Էտ տղան եր ա կենում քյինում-քյինում, տունս կյամ, էն ըխճկանը հոր թաքավերոթունը։ Տունս ա կյամ մին տեղ, տրեսնում ըտղատ ճուրուն քչքչոց ա կյամ։ Գյիդում ա, վեր ըտեղ ախպուր կա։ Ըխճկերքը կյամ ըն, թա ճուր տանին։

Էտ տղան ասում ա.— Էտ ամանը ինձ տըվնք միկա ճուր խմիմ։

Ընդրանք ասում ըն.— Էս ամանը թաքավերեն ըխճկանը ամանն ա, չի կարելի։

Ախրը վեր էտ տղան շատ ղանչանք ա անում, կոլան տամ ըն ուրյան, ճուր ա խմում պրծնում, մուտանան քցում կուլեն մաչը։

Թաքավերեն ախճիգյը ճուրը խմում ա պրծնում, տրեսնում ուրյան մուտանան կուլեն մաչին։ Հրցըփորց ա անում, քյնում ըն էն տղեն ճարում, տրեսնում քոռ։

Յոր ա օնում, կյամ հորը կոշտը, թա.— Ա՛ հայր, էս տղան ինձ ըզադալ ա, հի՞նչ թայհրը օզում ա ինի, տու ըստրա սղըցրու։

Թաքավերը շատ ա չըշարվում, կարում չի, թա սըղըցնե։

Մեհետ էն տղան նան թաքավերեն ախճիգյը զրուց ընեյիս, թաքավերեն ախճիգյը եշում ա, տեսնում էրկու մոկնը տունս եկեն, ուրուր նհետ խաղ ըրեն։ Խաղ ըրեն, մինը թխից մինին աշկը վեր ածից, մըն էլ լոք-լոք ըրեն, լոք-լոք, էն մինը մին խոտ կտրից պերավ քսից էն քոռ աշկը սըղըցրուց։

Թաքավերեն ախճիգյը էտ վեր տրեսնում ա, քյինում ա էտ խոտան մին խիլլա կտրում, պիրում քսում էն տղեն աշկերը, աղցնում։

Թաքավերը էտ տղեն մըն էլ ուրյան ըխճկանը հետե օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ա անում։ Էն տղան քյինում ա առուծներեն քթենում, պրծնում, քյինում մորն էլ քթենում, տրեսնում ուշափեն նհետ փսակվածե։ Մորը մաչան էն հանգին ա հալալ կես անում, վեր մին կաթ այրուն չի կաթում։ Կեսը տամ ա մին առուծին, կեսն էլ էն մին։ Օշափեն էլ նի չի կյամ։

Մեր ռանգյ-ռանգյ, ջուրաբաջուրա ծըղրգյներավ լիգյը բախչան իրեք փոնջ թուփ վարթեր պերեք. մինը՝ ասողին, մինը՝ կյիրողին, մինը՝ կարթողին։

www.naregatsi.org

100. ԱՍԾԱՏՈՒՐԸ ՆԱՆ ՎԱՐԹԻՆ

Իլալ ա, չիլալ մին մարթ, մին կնեգյ։ Տահանց խոխա չի իլալ։ Էտ մարթը շատ ա դաժրդ ըրալ, ինքյն-ինքյը քնենքյ ըրալ, թա. — Բա յըկս էսքան հարուստ, ինձ խոխա չօնիմ, վըեր մռնելանըս ետը հարըստոթունիս տրոթուն անե։

Տի շատ ա կենում, խրեգյ ա կենում, մին պառավ կնեգյ կյամ ա, ասըմ. — Գյուդում ը՞ս հինչ կա, քյինա ծակ կարմունջեն քշտեն մին բուլթկա շինիլ տո, եկող-քյնողին հաց տո։ Կյվողը քու հոր ղորմի կտա, աստուծ էլ մեխկը կկյա, քյըեզ մին խոխա կտա։

Էտ մարթը իտի էլ անըմ ա։ Համին էտ վախտեն մին հարս մին տղի նհետ ման ա կյամ, մին խոխա պիրում, նշանածը թողում ա, փախչըմ։ Հարսը հմնչիլան նհետ խոխան յոր ա օնում, տանում կըրմունջեն քշտեն տինում։ Էտ մարթը կյամ ա յոր օնում, տանում տոն, կնգանն ասում, վեր մին խոխա յա քիթա։ Ըտրա հետե էլ անըմը տնըմ ըն Ասծատուր, Աստուծ տվածե։

Օխտը տռնանը ետը, էտ մարթին կնեգյը մին ախճիգյ, մին տղա յա պիրում, ըխճկանը անըմը տնըմ ըն Վարթի։

Անց ա կըենում մին խիլլա վախտ։ Մին ամեռնը էտ մարթը ասըմ ա ուրան տըղեն.— Տու նան Վարթին տանը կացեքյ, տանը եշեցեքյ, մունք քյինանք սարը։

Ասծատուրը նան Վարթին մնըմ ըն տանը։ Հարը, մարը, տղան քյինում ըն սար։ Մին օր Ասծատուրը տունս ա կյամ տռնը։

Մին պառավ ա ջիհունմ, ասըմ.— Բա՛լա, գյուդում ը՞ս վըեր

www.naregatsi.org

ըտրանք քու հայր, քու մարը չըն, էտ տանատ քյըեզ փայ չօնիս, քյըեզ քթայ ըն, տրա հետե անումտ Աստատուր ա։ Քյըեզ փայ կինի են վախտը, վըեր փսակվիս Վարթուն նհետ։

Տղան կյամ ա տոն, պըլացած։

Թայդի յա ընգյնում, Վարթուն ասըմ.—Յըես քյըեզ ուզլական ըմ։

Վարթին պղնձե դուլյան յրա յա անում, տղեն կլոխը ճղում։ Վըեր կյամ ա հորը նան մորը կյալի վախտը, Աստատուրը վազ ա տամ հորը կոշտը, խաբար տամ, ասըմ.— Ապեր, ջրհըլնեն եկալ ըն Վարթուն պչպչորալ, ջհհայ ըմ, Վարթին դուլյան յրա յա ըրալ կըլոխս ճղալ։

Հայրը ղաման տնըմ ա ուրան տղեն ծեռքեն, ասըմ.—Կա՛, քյինա Վարթուն եր կալ, տար մին քյհհրիզի ղրաղե ծկոտե, առնոտ շորերը պեր ինձ նշանց տո։

Տղան տի յա անում, շորերը եր կալած կյամ ա, թա տա հորը, տեսնում ա հորը հոքյին տունս ա կյամ, դարդան օգըմ ա թա մեռնե։

Վարթին վըեր օշը կլոխն ա հվաքում, տրեսնըմ ա՝ տկլոր ա։ Եր ա կենում հրղեն ինգյնում, քյինամ։

Քյինամ ա, քյինամ ցիրեկը կյողլ ա կենում, քըշերը քյըրնամ, մին օրիշ քյհհրիզու յրա, մին լամ բաղու կոշտ, մին ծառա նհհ ինունմ, կոչ կյամ։ Էտ համին բաղը մին թաքավերի յա ինունմ։ Թաքավերեն տղան ըրաձունմը տրեսնըմ ա մին մարթ կյամ ա կուսիե-կուսիե անըմ, ասըմ՝ «Նշանածըտ էն ա ծեր բաղըմը տկլոր, մին ծեռք շոր տոր, կյենա, եր կալ եքա»։ Էտ քշերը իրեք դոնըմ իտի ամրաձ ա տրեսնըմ էտ տղան։ Ըռութանա եր ա կենում սնդողան մին ծեռք շոր յոր օնում, ծին եր ինունմ, քյունունմ բաղը։ Սաղ բաղերը շոռ ա կյամ, քյըհհրիզին քըշտավը թա անց կենա, ծին անց չի կըենում։

Էտ ախճիգյն ասըմ ա.— Ա՛յ տղա, ճիրին մաշին շոխկա ըրեվում ա, ծին խըրթնալ ա, խե յըս ծիյին թխում, վախըմ ա անց կըենա։ Տղան վըեր ըսկանում ա, կլխըյեր եշըմ ա, տրեսնըմ մին տկլոր ախճիգյ ծառեն նստած։ Վըեր եշում ա, շափաղը ըշկերեն ա տամ, աշկերը ծկոտում։

Տղան ասըմ ա.— Հի՞նչ միլլաթ ըս, էս քըշերեն էտ ծառեն յրա։

Ախճիգյն ասըմ ա.— Մին ծեռք շոր տոք, կյենամ, ծառան եր կյամ, ասիմ, թա յըես հու վըմ։

Տղան դարյան տամ ա ուրան, էտ ախճիգյը կյենըմ ա, եռնան նաղլ անըմ ընցածը։ Թաքավերեն տղան էտ ըխճկանն ուրան հետե կնեգյ ա յոր օնըմ, տանըմ պալատը, ուրան օթախը։

Համին քշրհանան, ծառանեն կյամ ըն տղեն տոռնը տրեսնան

www.naregatsi.org

խե՞ տեղան եր չի կենըմ։ Ախեր տղան ամեն քշրհանա եր ա կացալ նոքյարներեն հրդե քըցալ հանդերը, ծիյենը տղվարալ, մհենգյ քյըսօր ա տրեռալ, հալյամ զուրթնանըմ չի՞։ Վեզիրը կյամ ա տռնեն ծակավը տեսնըմ չորս վրեննն ա ըրևում։ Նախանձան նան չկամոթու-նան ըսկըսըմ ա ուրյան մեսն օտելը։ Ասըմ ա. «Խե՞ ուրյան հետե կնեգյ ա ճարալ, ինձ հետե վուչ»։

Վերչը զուրթնցնըմ ա, տեսնում մին մարալ ախճիգյ պիրած, վեր ըրևեն ասըմ ա. «Տու տոնս մի կյալ, յըես ըմ տոնս կյալու»։ Վեզիրն օղըմ ա, թա տրաքվե։

Շատ ըն ապրում, խրեգյ ըն ապրում, հարսը մին տղա, մին ախճիգյ ա պիրում։ Խոխեքյը տոնս ըն կյամ, թա հայաթըմը հրըվա-նեն խոորցը նհետ խաղ անին, ծառեքը թողըմ չըն։

Էտ հրըվանեն խոխան ետ ա տրեռնըմ ասում.— Բալա, էսա իմ պապունց տանը հրսանիքյ ա իննյական, քյըեզ թուղլական չըմ կյաս, թմաշա անի՞ս, է՞, վըեր թողում չըս քյըզնհետ հաղ անիմ։

Խոխեքը վազ տալավ կյամ ըն մորը համ ասըմ, համ էլ ասըմ.

— Մամա, մեր պապունց տոնը վե՞րն ա, հի՞ր ա հրսանեքյ ինելու, վըեր մունք էլ քյինինքյ, թմաշա անինքյ։

Մարը ըսկսըմ ա լյաց ինիլը։ Մարթը կյամ ա, տրեսնում լյաց ինիլիս։

Ինքյը-ինքյը քնենքյ ա անըմ, ասըմ. «Հայրթ հորը տոնը սերտը օղալ ա»։

Ըր ա կենում էտ տղան քառասուն ծառա, մին վեզիր տինում կընգանը նհետ, փայտոնեն լծըմ, խոցավը հղե տինըմ։ Համ հղե յա տինըմ, համ թափշուր աիրմ, ասըմ.— Ծորըմը փյտոուննեն տոնս չանիք, ամմեն դոնըմ դուզրմը կդինջանաք։

Դե վեզիրն էլ տի մին պենու վա իլալ մաթա՞լ, եր ըն կենում հրդե ինում։

Շատ ըն քյինում, խրեգյ ըն քյինում, վեզիրը պիրըմ ա փյտոուն-նեն մին խոր ծորըմ տոնս օնում, թա դինջանան։

Նոքյարնեն հիշքան հա՛յ-հա՛յ ըն անում, վեզիրը ըսկանում չի՞, կղնվըմ ա, թա՛.— Մեծը յըես ըմ, թա՛ տուք։ Տարեքյ ծիյանքը պհեցեքյ։

Նոքյարնեն տանում ըն ծիյանքը ըրըծցնըմ, մինը վեզիրին բուսը պահըմ ա...

Վեզիրին մեթկը ծոռ ա ինըմ, խոխոցը քունավ ա անըմ, վար-թուն էլ օղըմ ա ծեռք քըցի։

www.naregatsi.org

Վարթին համոզվըմ չի, վեզիրը էրկու խուխեն կլոխը կտրըմ ա, էլլա չի համոզվում։

Վըեր կյամ ա, թա Վարթուն կլոխը կտրե, Վարթին ասըմ ա.— Լավ ա թող քյինամ էն ղոլը, կյամ։

Վեզիրը շատ գյիդաշցած մարթ ա ինձում։ Պիրում ա վրեննան մին քյանդիր կապում, պեց թողում։ Վարթին քյանդիրը կտրըմ ա, փախչըմ։

Վեզիրը հարայ-հուրայ յա անըմ,—եկե՛ք յա, հա՛ եկե՛ք յա, ղըչըղնեն եկեն յրա տվեն խխոցը կուտուրեցեն, Վարթուն տարեն...

Նոքյարներան վեչ մինը հվատում չի։

Էն բուսը պահող նոքյարն ասըմ ա.— Յըես տըեսալ ըմ հու վա խխոցը մորթալ։

Խխոցը ըսպանող, Վարթուն չոլերը քըցող վեզիրը տեղը պնդըցընըմ ա, ասըմ.— Վեչ մինին ասիքյ վուչ, թա չէ կլխընետ կըտրլական ըմ։

Վարթին շատ ա քյինում, խրեգյ ա քյինում, եշըմ ա, տըեսնում մին հանդի մին չոբան վեխճար ա ըրըծցնըմ։

Ծեն ա տամ չոբանեն, ասըմ.— Ա՛յ չոբան, ինձ հետե մին ծեռք շոր ճարե, պեր կյենամ։

Էտ չոբանը սասին յրա ճընանչըմ ա, վեր ուրան խազայինին ախճիգյն ա։

Մին վեխճար ա մորթում, մորթեն շոր շինում, կյեց տամ, Թըփանավըն էլ կլոխը ծասկըմ։ Մեսը խրավում ըն, օտում։ Ախճիգյը չուբանեն ճընանչըմ ա, ըսկըսըմ ա կլխավը անց կացածը նաղլը անելը։ Վըեր մթնըմ ա, քյինամ ըն տոն, չոբանը քյինամ ա խազայինին ասըմ, վըեր ինձ մին հնգեր օնիմ, տղա յա, անումը Քաչալ։ Քաչալը յոր ա օնում պիրըմ տոն։

Խազայինին ասըմ ա.— Դե մեր տոնը էրկու ղոնաղ ա եկալ, կարելի յա՞ ըստեղ քշերս կենան։

Թաքավերին տղան, վեր լոխ գյուդում ա, ըսկսում ա շոռ կյալը։ Կյամ ա ղոնաղ ընգնում էտ տանը։

Վեզիրը կլխու յա ինգյնըմ, վեր Քաչալը Վարթին ա։

Ուրուգյունը նստում ըն, թա հաց օտին։

Քաչալը ասըմ ա.— Խազա՛յին, խնթրըմ ըմ ուրուգյունս էս տանս ղեկավարոթունը ինձ տաս։

Խազայինն ասըմ ա.— Հինչ կինի, լավ կինի՛։

Քաչալը ըսկըսըմ ա կլխավը անց կացածը նաղլ անելը։ Համ նաղլ ա անըմ համ մորթեն կյեցան հանում, լոխ ճընանչում ըն,

www.naregatsi.org

վրեր տա Վարթին ա։ Մար, հա՛ր, ախճիդ խառնվըմ ըն։ Աստատուրն օղըմ ա, թա՛ փախչի, չոբանը թողըմ չի՛, վեզիրին նան Աստատուրին ծիլին հաքյվան ըն տամ, քաշ-քաշ անում, ըսպանում։

Վարթուն թաղաքան օխտը օր, օխտը քշեր հըրսանիքյ ըն անըմ, էն տղեն նհետ։ Ընդրանք էն վըխտանց մինչև ըսօր բախտավեր ապրըմ ըն։ Ընդրանք հասեն ուրանց մուրազեն, մունք էլ հըսնինքյ մեր մուրազեն։

www.naregatsi.org



101. ԿՈՐԱԾ ԵՋՆԸ

Իլալ ա, չիլալ մին մարթ, մին կնեգյ ա իլալ։ Ըտահանց մին կավ ա իլալ։ Շատ ըն կացալ վեչ էտ կավն ա ծնալ, վեչ էլ էտ կնեգյն ա խոխա պերալ։ Վերչը կնեգյը պատճառավեր ա տեռալ, կավն էլ յղե յա տեռալ։ Ամմեն օր էտ մարթը կավը տանում ա իլալ ըրըծըցնում, պիրում։

Մեհեռ էտ կավը նստած օղում ա, թա ծնե, մին ջուվար մշտլեղչի յա կյամ, թա կնեգյըտ մին տղա յա պերալ։ էտ մարթը կավը թողում ա ծնեյիս, ինքյը քյինում տոն։

Մին քանե տարե յա ընցնում, էտ տղան վեր մծանում ա, խելքը կտրում ա, հորն ասում ա.— Ա՛ հայր, պա խե՞ մըեզ մին պեն էլ օնինքյ վեչ։

Հայրն ասում ա.— Մըեզ մին կավ ա իլալ, հանդին ըսեցալ ա, թա ծնե, վեր ըսկացալ ըմ, թա քու մար քյըեզ պերալ ա, կավը թողալ ըմ ծմակումը, յըես եկալ տոն, էլ գյիդում չըմ, թա հի՞նչ ա տըեռալ։

Տղան ասում ա.— Ա՛ հայր, յըես քյիննաական ըմ, մեր կավը քթենամ։

Ըր ա կենում հղեն ընգնում, քյինում։ Վեր շատ ա քյինում, նղանում ա, մին ծառու տակե, պարանց ա ընգնում, քոն ինում։ Քոն իլած տեղը ծրած ա տեսնում։

Ըրած մին ղուշ կյամ ա, ասում. «Վեր եր կենաս աչի կուռան յրա կքյինիս, ընդեղ մին ախպուր ա ջիհլական, էտ ըխպրին քշտեն

www.naregatsi.org

մին քար կա, տակը փոչ, նի կմննիս էտ քարեն տակը։ Կեսօրեն ծեր կավը էրկու աչառ, մնել մին դանա եր կալած կյըլական ա»։

Էտ տղան բռւրդեն զռւրբենեում ա, տրեսնում ա ուրեզ։ Հինչ վեր էտ ղուշը ասալ ա, էտ տղան էլ ինդի յա անում։ Քյինում ա, նի մննում էն քարեն տակը, տրեսնում կավը դնոտանցը նհետ եկավ։ Կավը կյամ ա էտ քարը լռւզ տամ։

Տղեն հաերը ասած ա ինում, վեր կավեն անումը խինա յա։

Էտ տղան ասում ա.— Հա՜ծ, հա՜ծ խինա։

Էտ կվեն լռւզու յա ինում, ըսկսում ա խոսել, ասում ա.— Խե՜ նի՜ յըս մտալ քարեն տակը, տռւս եք։

Տռւս ա կյամ։

Կավն ասում ա.— Յաղուզ եկա՞լ ը՜ս։

Տղան ասում ա.— Եկալ ըմ քյըեզ տանի՜մ։

Կավն ասում ա.— Քա հոր աշկերը սվանա, յըես կյալ չը՜մ, ամմա էս էրկու աչառը տար, ղիրավ վար ըրա։

Էտ ըշուռնուն պոզերը անկյին քարերից ա ինում։

Կավն ասում ա.— Փլազավ պտատե, հանցու օրիշ տրեսնա վե՜չ, էտ պոզերը լռւս ըն տա՜մ։

Էտ տղան իսի յա անում, պրծնում, ըշռնեն յոր օնում, հղե ընգնում։ Մին կյուղ ա ջիհռնում։ Էտ տղան ըտեղ ղոնաղ ա ընգնում։ Հաց ա օտում, պրծնում, տնատարն ասում ա, իշեղը տար ըշռնուն խոտ տոք։

Տղան ասում ա.— Իշեղը հաջաթ չի, ինդի կգյինիմ։

Էտ տղան վեր նի յա մննում կյումը, տնատարը հետան թաքուն քյինում ա, եշում, թա տեսնա հի՞նչ ա անում։ Եշում ա, տեսնում էտ տղան պոզեն պտատանը ետ ա տամ, կյումը լռւսաննում ա։ Ուրուգյունը քոն ըն ինում։

Էքյսը էն տղան եր ա կենում, թա քյինի, տնատարն ասում ա.— Մին պայման կապինքյ, թա օխտը չուվալ կորեկը յղներավըտ կարիս մին օրումը վարիս, եղները քու, թա կարիս վեչ, եղները ինձ։

Էտ տղան քյինում ա յղներեն քշտեն ըսկսում լաց ինիլ։

Եզներն ասում ըն.— Էտ հի՞նչ ա։

Ասում ա.— Դե իսի իսի յա իլալ։

Եզներն ասում ըն.— Լաց մեր ինիլ, քյինի օխտը քոլ կտրող էլ օղի, օխտը սերմող էլ։

Տղան քյինում ա օխտը քոլ կտրող էլ պիրում, օխտը սերմող էլ։ Մինչև մթնելը չորս չուվալ վարում ըն։ Վեր մթնում ա, էտ տղան շատ ա վախում։

www.naregatsi.org

Եզներն ասում ըն.— Վախել մնր, մունք պռնչ-պռանչք ընք ըննական, իրիքյնակը կյիլական ա մնէլ ուրիշ տեղը։

Եզները պռնչ-պռանչ ըն կյամ, իրիքյնակը կյամ ա ուրիշ տեղը, մնացածն է, ըն վաում, կյամ տոն։

Էտ տղան կյամ ա քոն ինում, թա էքյսը եր կենա քյինի, էն մարթն ասում ա.— Ասետ էլ մին օրիշ պայման կապինքյ, թա կրեցեր էն օխտո չվալ կորեկը հվաքիս, եզները՝ քու, թա կարիս վեչ, եզները՝ ինձ

Էտ տղան քյինում ա եզներեն քշտեն ըսկսում լաց ինիլը։ Եզները հրցնում ըն. ասում.— Էտ հի՞նչ ա իլալ։

Տղան նաղլ ա անում, վեր իստի յա իլալ։

Եզներն ասում ըն.— Լաց մեր ինիլ, քյինի մին շալ էլ օղի, օխտը նի հանող էլ։

Տղան քյինում ա մին շալ էլ պիրում, օխտը նի հանող էլ։ Եզները վեր պռանչում ըն, հինչքան ղուշեր կան, լոխ կյամ ըն էտ կորեկը հվաքում, ածում շալեն, նի հանողն էլ նի յա հանում, տանում ըն տամ տնատրեռնը։

Քյինում ա քոն ինում։ Էքյսը եր ա կենում, թա քյինի, տնատարն ասում ա.— Մհենգյ էլ մին օրիշ պայման կապինքյ։ Մին զրեռ ղզղան ճիրավ լցնինք, տնինքյ կրակեն, թողինքյ պլպլթա։ Իտի պլպլթալիս, վեր կարիս նի մննիս մաչին լղանաս, տուս կյաս եզները՝ քու, վեր կարիս վեչ, եզները՝ ինձ։

Էտ տղան քյինում ա յղներին քշտեն լաց ինում, եզները ասում ըն.— Էս հի՞նչ ա։

Ասում ա.— Լաց մեր ինիլ, քյինի շորերտ հանե, կրակեն քշտեն վրեննը կաց, վեր պռանչիմ, նի կմննիս, լղանաս, տուս կյաս։

Էտ տղան քյինում ա, շորերը հանում, կրակեն քշտեն վրեննը կենում, էն մարթն ասում ա.— Խե՞ նի չըս մննում։

Տղան ասում ա.— Ցորտ-ցորտ ա, կենում ըմ կծանա։

Ասում ա.— Չէ՛, էն ա պլպլթալիս, նի մոտ։

Վեր եզնը պռանչում ա, էտ տղան կլխեն յրա տամ ա մաչին, լղանում, տուս կյամ, թա.— Պա վեր ասում ըմ թող կծանա՞։

Էտ մարթը տեսնում ա, վեր կարում չի եզները ինքյ օնե, կնգանն ասում ա.— Տու հաց ըրա, ասե, եք քյումաքյ իլ, վեր կյա, թա քյումաքյ ինի, կուփե տոք, քցի թուրունը, խրավածե ըրա, թուռնեն տուսան կախ տոք, յես էլ քյինիմ քու քվեր հետան, հանցու տենան վեր եշինքյ ըրվա։

Էտ խոսկերքը էն տղան լոխ ըսկանում ա։

www.naregatsi.org

Տնատարը վեր եր ա կենում, քյինում քուվերը հետան, կնեգյը հաց ա անում։ Վեր խումորը հունցում ա, պրծնում, քյինում ա թուրունը, էն տղեն ասում.— Էք քյամաքդ իլ թուրունը նի կըցընինքյ։

Էտ տղան եր ա կենում, քյինում թուրունը, վեր էն կնեգյը ասում ա.— Եք թուռնեն ղրղնեքյը սրփի։

Էն տղան ասում ա.— Դե յըես տղա խոխա յըմ, թուրուն սըրփած չըմ, տու նշանց տոք, յըես էլ սվերիմ, սըրփիմ։

Էտ կնեգյը օվռւլը յոր ա օնում, թա սըրփիլը նշանց տա, էն տղան էտ կնգանը կուփե յա տամ, քցում թուրունը։ Մին լավ խրավաձ անում, թուռնեն տռւսան կախ տամ, ինքյը քյինում տանը հինչքան լավ-լավ պեներ կա, սրփում, յոր օնում յղներեն նհետ քյինում։ Էն մարթը քռւրը եր կալած, ուրխացած կյամ ա, քուվերը ղոնաղ ա պռւրռւմ։ Տենան վեր տռւս ըն կյամ, էն խրավաձ մեսը ըրվամ ա։ Ախպերը գյռանում ա քուվերը քշտեն, ասում ա.— Մին տես կնեգյըս հի՞նչ լավ խրավաձ ա ըրա՛լ, քյիննակ-ն ընք մին լավ ղունախլեղ սարքինքյ։

Մհենգյ կյամ ըն, մուտանում, տրեսնում ուրյան կնգանն ընխրավալ, տոնն էլ սրփալ, եր կալալ, քյեցալ։

Չարը՝ ընդեղ, պարին՝ ըստեղ։

www.naregatsi.org

102. ԹԱՔԱՎԵՐԵՆ ԱԽՃԻԳՅԸ

Իլալ ա, չիլալ մին թաքավեր ա իլալ։ Տղեն փսկվելի վախտը եկալ ա։ Հաերը փսակալ չի, տղան էլ համանչալ ա, թա հորը ասե՝ փսակվում իմ։

Ախրը վեր հորան հույսը կտրալ ա, մին հայբա վրեսկե յա եր կալալ հղե ընգալ քյեցալ։

Քյեցալ ա, քյեցալ, մին կընդակ պռավու տան ղոնաղ ընգալ։ Ուտուբանա վեր էտ տղան եր ա կացալ, թա իրեսը լվանա, տեսալ ա մին շափաղ ընգած ընդղերքեն։

Էտ տղան ասալ ա. — Ա նանի, էս հի՞նչ պեն ա, տըեռ իրիքյնակը տունս կյալու, շափաղը տըվալ ա ըստըղեքյես։

Պառավն ասում ա. — Ջանըս քյը մատաղ, հայբա թաքավերեն ախճիգյը տունս ա եկալ տոնը։

Տղան ասում ա. — Ա՛ նանի, ամա՛լ պեր թաքավերեն ախճիգյը ինձ հետե օղինքյ։

Պառավն ասում ա.— Ջանս քյը մատաղ, թաքավերը ըխճկանը փսակում չի՛, հու վեր կյամ ա, թա օղի, կոնդը կտրում ա։ Էն ա մին տոն կլխավ լցած։

Էտ տղան սուս ա անում։

Ըտեղ մին դամռուրչի յա ինում։

Էն տղան վրեսկե յա տամ, թա.— Ինձետե քսան մեխ շինի, մին կյեղ, էրկան, մաննես մշանք հաստեգյ։

Դամռուրչին մեխերը շինում ա, պիրում տամ էտ տղեն։ Էտ տղան

www.naregatsi.org

տանում ա քշերը մեխերը թաքավերեն պըլատեն, ըխճկանը թըրաշփե պատեն թխում, եր ինում, քյինում թաքավերեն ըխճկանը ծեռքըյալեխը կյուղանում, պուրում։

Էն մին քշերն էլ քյնում ա մուտանան կյուղանում, պուրում։ Իրեքինջի քշերը քյինում ա թաքավերեն ըխճկանը եր կցնում։

Ախճիգյն ասում ա. — Պա տու հո՞ւ վըս, հի՞նչ ըս, վեր եկալ ըս ըստեղ։

Էտ տղան ասում ա.— Ըսկացալ ըմ, թա քու հաըր քյըեզ փսակում չի, իմ հաըր էլ ինձ չի փսակում, եկալ ըմ, թա քյըեզ օղիմ։

Էտ ախճիգյն ասում ա.— Քյինի, էքյուց ուրուգյունը կկյաս։

Թաքավերեն տղան քյինում ա, էքյսը էտ ըխճկանը յոր օնում, քյինում բիդի ուրան հորը տոնը։

Քյինում ըն։ Կըսըհրդե էտ տղեն մենն ա ընգնում, վեր հայըթան վըհսկավ լիգյը թողալ ա պռավեն տանը։

Էտ տղան ասում ա.— Յըես քյինիմ պիրիմ։

Ախճիգյն ասում ա.— Չէ՛, յըես քյինիմ։

Վերչը ախճիգյը թողում ա ըտեղ, ինքյը քյինում, թա հայըթան պիրի։ Մենում ա, էտ ախճիգյը վեր մրսում ա, մին ծառե տակե կոչ ա կյամ։

Մին լոթկաչի կյամ ա, թա.— Ա՛ քուր, ըտեղ խե՞ մրսում ըս, եք լոթկումը նստե դըլըդալու անինքյ, հանցու մրսիս վեչ։

Էտ ախճիգյը քյնում ա լոթկումը նստում, լոթկաչին լոթկան քշում ա ուրանց տոնը։ Էտ լոթկան կապ ա տամ, ուրանք քյինում ըն տոն։

Թաքավերեն ախճիգյը էտ լոթկաչուն ասում ա.— Ըրեզ վեստաց ճրնապարհ չօնի՞քյ։

Լոթկաչին ասում ա. — Էն ա օնինքյ, ամմա քյըեզ կնդակ պեց չըմ թողել, քյըեզ նհետ կկյամ, հանցու փախչիս վեչ։

Էտ լոթկաչին ասում ա, թա նհետը քյինի, ախճիգյն ասում ա. — Վեր վախում ըս, թա կփախչիմ, մին քյինդիրավ վրեննըս կապե։

Պիրում ա քյինդիրավը վրեննան կապում, ճոնդը փռնում։ Էտ ախճիգյը քյանդիրը վրեննան ետ ա անում մին քոլա կապում, ինքյը լոթկան եր ինում քյինում, տուս կյամ էն համան տեղը, հիշտեղ վեր թաքավերեն տղան թողալ ա։ Լոթկան մին կեռա կապ ա տամ ինքյը ընդեղ նստում։

Մին մարթ ա կյամ, մին թվանգյ ծեռքեն, բիդի էտ ախճիգյը։

Կյամ ա մուտանում, թա.— Պա տու հի՞նչ իլլաթ միլլաթ ըս, վեր ըստեղ ըս։

www.naregatsi.org

էտ ախճիգյը իմաստուն ա ինում, գյուդում ա, վեր տա լհա թաքավերն ա, վրերսի յա եկալ։

Ասում ա. — Յրես ըսկացալ ըմ, վեր ծեր թաքավերեն երեսունըինը կնեգյ օնե, յրես էլ եկալ ըմ վեր հանցու քառասունը տեռնանք։

էտ մարթը ասում ա.— Դե եք քյինինքյ։

Ախճիգյը ասում ա. — Ջէ՛, թող թաքավերեն կնանեքյը ուրանց գյիւիմավը, պարիպասավը կյան ըստեղ, օտինքյ, խմինքյ, քյեփ անինքյ, ետնան կյանքյ։

էտ մարթը քյնում ա կնանուցը ըղարկում, ըտեղ օտում ըն, խմում, պրծնում, էտ ախճիգյը ասում ա.— եկեք տանիմ նշանց տամ, տեսեք հի՞շտեղա յըմ եկալ։

Տանում ա էն երեսունինները կնեգյը անում լոթկան, քշում քյինում։ Վեր մթնում ա, լոթկան կապում ա մին կեռա, ուրանք ծմակումը կենում ըն։

Քառասուն օշափ ըն կյամ, թա. — Տուք հո՞ւ վըք։

էն ախճիգյն ասում ա. — Մունք քառասուն հոգի յընք, ըսկացալ ընք, վեր տուք էլ քառասուն օշափ ըք, եկալ ընք ծրեզ կնանեքյ։

Օշափնեն ասում ըն. — Դե քյինինքյ մեր տները։

էն ախճիգյն ասում ա. — Քյեցեքյ կյինի, ապաղ, հաց, տեստեն պերեքյ, օտինքյ, քյեփ անինքյ, ետնան։

էտ օշափնեն ամմեն օր մին մոտե շեն ա ինում, թլանում ըն։ էլհա յըն քյինում նի տեռնում էտ շենը թլանում, յոր օնում, կյամ։

էտ ախճիգյը ընդհանց քմակեն երեսունըիննը կնգանը սվըրցնում ա, թա. —Մըռքըռնումտ մարթը մին քար կտինիքյ, վեր կյինի տան, խմիքյ վեչ, էն ղոլավը վեր կածիքյ։ Մարթը ուրանեն թուշին նստլական ընք, վեր հաբրփին, ղմենեն յոր կօնիքյ, մարթը ծեր թուշին նստածեն ըսպանիքյ։

Ուշուփնեն կյամ ըն, օտում, խմում, ուրուգյունը վեր տեռնում։ էտ կրնանեքյը եր ըն կենում մարթը ուրանց թուշինին ըսպանում։ էն ախճիգյն էլ ուշուփներեն մեծեն ա սպանում։ Ըտահանք ուշուփնուն շորերը կյենում ըն։ էն ախճիգյն էլ ընդրանց մեծեն շորերն ա կյենում, ուշուփներեն մեծեն կլոխը կտրում, յոր օնում քյինում էն համան շենը, վեր ուշուփնեն թլնեյիս ըն իլալ։

Ժողովուրթը գյիդում ա, թա ուշուփնեն ըն, էլհա եկալ ըն։ Լոխ կյողլ ըն կենում, ասում ըն. — էս հի՞նչ պեն ա՞, վեր միշև մհենգյ օրը մեհետ ըն իլալ կյալիս, մհենգյ էլ օրը էրկու հետո ըն կյամ։

էտ կնանեքյը շատ հա՛յ-հա՛յ ըն անում, վեր ուրանք ուշուփնե

www.naregatsi.org

չըն, ուշուփնեն կտորողըն ըն, ընդրանք հվատում չը՞ն։ էրկու պռավե ըղարկում ըն ընդահանց կոշտը։

Պռվնեն վեր տեսնում ըն ուշուփնուն մեծեն կլոխը կտրած, հվատում ըն, վեր ուշուփնուն կտորողնեն ըն։

էտ շենին ժողովուրթը էտ ըխճկանտ թաքավեր ա տինում։

էտ ախճիդյը ուրան հորը տանան կյեցած շորերովը նկարվում ա, տամ դրըզան, քշտեն էլ մին ախպուր տուս օնըմ, մին մարթ տինում ըտեղ, թա.— Հու վըեր կյա էտ նկարեն եշի, կփռնիս, պիրիս։

Մեհետ մին մարթ կյամ ա նկարեն եշում, ուշունց տամ, թա— Տու քյեցեր հերիք չի, լոթկաս էլ տարեր։

էտ մարթը ըտրան փռնում ա, տանում էտ ըխճկանը կոշտը, թա. — Իստի յա ասալ։

էտ ախճիդյը ասում ա.—Տարեք քցեցեք տակե պադվալը, օրը իրեք հետ թկեցեք։

Մին մարթ էլ կյամ ա, թա.— Տու քյեցեր հերիք չի, երեսունըհինը կնեգյս էլ տարեր։ Ըտրան էլհա փռնում ըն, տանում։

էն ախճիդյը ասում ա.— Տարեք քցեցեք մաշի հարկը, օրը էրկու հետ հաց տվեք։

Մին տղա կյամ ա, նկարեն եշում, ուրանան քյինում, վեր ընգնում։ Ընտրա էլ ըն տանում։

էտ ախճիդյն ասում ա. — Քցեցեք երե հարկը, օրը իրեք հետ հաց տվեք։

էն լոթկաչուն, վեր նկարեն ուշունց ա տվալ, թիքյա-թիքյա կտորում ըն։ էն մինն էլ թաքավեր ա տինում, ուրան երեսունըհինը կնեգյը տամ ա ուրան։ էն ուրանան քյինողն էլ, ուրան նշանածն ա տինում, նհետը փսակվում ա։

Ըտրանք հասին ուրանց մուրազին, տուք էլ հասնիք ծեր մուրազին։



www.naregatsi.org

103. ԱՅԱՆ ԾԸԾԸՂԵՍ Ա

Ընիս ա, չընիս մին մարթ, մին կնեգյ։ Ըտրանց ընիս ա էրկու տղա։ Մեծը խոլունք ա ընիս, պիծինը՝ պըել։ Մին տարե սով ա ընգնես։ Էտ մարթը նան ուրիշն կնեգյը մըռնես ըն։ Խոխեքյը մնաս ըն անդար։

Ըտրանց տատը յոր ա ունես, պհես, թա՛. — Էսա մըծացալ ըն, ուրիշնք էլ հսած խոխեքյ ըն, թող քյինին կործ անին, կյան ինձ պահին։

Էտ խոխեքյը ըսկսես ըն կործ ընես, էտ պառավը պհես։ Մեծ տղան լավ ա կործ ընես, պիծի տղան շան ամաքյ էլ չի ընես։ Մին օր, էտ պառավը հիվընդընաս ա։ Մեծ տղան տանը կնաս ա, ըտրան հաց, ճուր տաս, լըղըցնես, վերչը թամուզ պհես։ Ամմա էն պիծի տղան քյինիս ա ծմական փադ ընես, պիրիս։

Մին օր հավան փիս ա ընիս։ Էտ պըելը ետ ա տըռնաս, թա ըսօր էլ թող այան յըես պահիմ, տու քյինի հանդը։ Մեծ ախպերը, վեր քյինիս ա, էտ պիծինը պիրիս ա մին ղըզղան ճուր իփիս, այուն թեշտումը տինիս, ըծես էն հիվանդ պառավին յրա, սաբավ լըղըցնես ա։

Այան մնաս ա թեշտումը, մըռնես ա, մնաս կըռքնեն պեց։

Մեծ ախպերը կյաս ա, թա՛. — Ա՛ մեռա՛ծ, այան հո՞ւնց ա։

Թա՛.— Էն ա ծըծըղես, ըռուբյանան, վեր լըղըցրալ ըմ, էն վըխտանց միչև մհենգյ էն ա ծըծըղես։

Մեծ ախպերը ըսես ա. — Ա՛ մեռած, պա այան հինչու հիվընդացալ ա, կրես չի թա խոսե, էտ հո՞ւնց ա, վեր մհենգյ ծըծըղես ա։

Պիծի ախպերը ըսես ա.— Հըվըտաս չըս, քյինի տըես։

www.naregatsi.org

Մեծ ախպերը քյինիս ա տրանաս այան մըեռա՜ծ։ Ըսես ա.— Ա՛ փուշացած, դե վեր այուն ըսպանալ ըս, տու տանը կաց, յըես քյինիմ մեր պարիկամներեռն ասիմ, կյան, տանինքյ, թաղինքյ։

Մեծ ախպերը վեր քյինիս ա, էտ պիծինը պիրիս ա մին չաթու կպես այուն պկան, քաշ տաս։ Վեր հանես ա մին ճիրճեմնը տեղ, չաթուն կտրվես ա, էտ պըելը ըսես ա.— Պեներս օնգատըն ընգավ, այան թըթըվացալ ա։

Էտ ղաթումը մեծ ախպերը կյաս ա, թա՜.— Ա՛ տափը մտած, ա քիմաամըեռ, էս քաղաքեն մաշին մըեզ խայտառակ ըրեր։

Պրիս ըն լհա՜ ընդի, հըղըցումը մին փոս կըտրես, այուն թըղես պըրծընես, ուրանք քաղաքան տունս կյաս։

Շատ ըն քյինիս, թա՜ խրեզյ, էտ աստուծ կգյիդա՜, մըն էլ ըն տրանաս մին պառավ կնեզյ, մին սուրու վեխճար ըրած առաչը, պըհես ա։ Տահանց վեր տանաս ա, հըղըցըփորց ա ընես, տրանաս վեր անդար ըն, ըսես ա.— Յըես մինա՜կ մին կնեզյ ըմ, եկեքյ յըես ծըեզ պահիմ, տուք էլ կործ կանիքյ, ինձ պահիքյ։

Տահանք քյինիս ըն, ըսկսես ըն էտ պռավեն վըեխճարը պըհես, փա՜ղը պրիս, վերչը տոնը պըհես ըն։

Մին օր տանը հաց չինիս։ Պառավը ըսես ա.— Մատաղ ընիմ ծըեզ, քյեցեքյ հա՜նդը, յըես հաց ըմ թըխլական, յոր օնիմ, կյամ։

Տահանք քյինիս ըն։ Օրը քյաօր ա տունաս, պառավը կյաս չի՜, ուրանք էլ էն ըն ինիս տունըը։

Մեծ ախպերը ըսես ա. — Տու հեյվրննեռեն եշի, յըես քյինիմ մին խա՜բար պիրիմ։

Պիծի ախպերը ըսես ա. — Լա՜վ, քյինի, քյինի՜։

Էտ մեծը վեր քյինիս ա, պիծի ախպերը յեշիս ա կըլխըեր, թա՜ տրեսնա՝ արևը հի՜շտեղ ա, ախպերն էլ ա յըտրնական, թա՜ չէ։ Վեր կլա՜խը պըցըրցնես ա, տրանաս ա մին տա՜նձի ճուռճուփած, ուրխրնաս ա, թա՜ լհա՜ եր ինիմ օտիմ, միչև հացը կյալը կենամ։

Պիծի ախպերը հեյվանը պիրիս ա ծառեն տակեն մաջալ ընես, ինքյը եր ինիս ծառը։ Հեյվրնեռեն ըսես ա. — Յըես շըղըհըրըլական ըմ, վեր մինը կերեքյ, վայը ծըեզ տարալ ա, կյըլական ըմ ծըեր դիվանը անիմ, ծըեր կլա՜խը օյին պիրիմ, ծըեզ մին-մին կտորիմ։ Օտիքյ վուշ, կհըվաքիքյ, թուփ-թուփ անիքյ, յըես վեր ծառան վըեր կյամ, ծեր փայն էլ ըմ տըլական։

Եր ա ընիս մին լա՜վ շըղըհըրես, սաղ ծառեն հիշքան տա՜նձ ա իննիս, վեր ընես, ծառեն տակը լըցնես ա։ Դե հսած տա՜նձ, տունըը, մաջալ տեռած հեյվան, յըրան ըն տրանաս հանց օտե՜ս, վեր մինն

www.naregatsi.org

էլ չըն թուղես տակեն։ Էտ պըեկը ծառան հիշքան ճըղճըղոց ա տաս, փորը ճըղուտես, դե հեյվանը հի՞ բ ա ըսկընաս, թա էն հի՞նչ ա ըսես։

Սուս ըրած ուտես ըն, պըրծնես, ծառեն տակեն պարանց կյաս։ Մին չաթլակ տանձ կյաս ա ընգնես մին սրև էծու պոզի, իտի կընաս։ Էտ պըեկը կըզնըված, ծառան վեր ա կյաս, տըսնաս տակեն պեն չիկա։

Փռնես ա լոխճին կուտուրես, թուղես մինաւկ էն սրև էծը, թա. — Էս ա մինաւկ իմ փայըս պահալ, յըես էլ ուրիշն ըսպանել չը՛մ։

Մեծ ախպերը կյաս ա, տսնաս, հեյվանը լոխ կըտորած, վեր ածած։ Հարայ ա տաս, վա՛յ-վա՛յ ընես, թա խե՞ ըստի յա։

Էտ պըեկ մըեռածըտ լոխ նաղլ ա ընես, հինչու իլալ ա։

Մեծ ախպերը ըսես ա.— Ա՛ կյիժ մըեռա՞ծ, ա՛ տափը մտած, ա՞ պիծի օլաբան, ինձ դաւրդաւտ յանշաղ ըս շինա՞լ, պա մեր վթաւնան մըեզ խայտառակ ըրեր, քուչեցե, եկե ըստեղ, պա մըհենգյ թո՞րը քյինիմ։

Պիծինը ըսես ա. — Վախել մեր, յըես պռավեն ջողաբը տլական ըմ։

Պիրիս ըն էտ հեյվանը լոխ շըլըկես, պըրիս չաւլումը վեր ըծես, ուրիշնք քյինիս տոն, թա հաց օտին։ Պառավը պիրիս ա վեց ծու իփիս, տաս մեծ ախպորը, իրեքը իփիս, տաս պիծի ախպորը։

Էտ պիծինը խըռըվըվես ա, թա.— Խե՞ իմ փայս խրեգյ ա, ուտես չըմ։

Պառավը ըսես ա.— Դե, ջանետ մատաղ, ամմեն օրվա պորցիտ ա ըլի՞, խե խռա՞վալ չըս, մըհենգյ խըռըվես ըս։

Պիծինը ըսես ա.— Խե՞ յըես համ դոնումը հինգը-վեց վեխճար շլաւկիմ, պիրիմ չոլըմը տինիմ, համ էլ փայս խրեգյ ընի՞։

Պառավը ըսես ա.— Խե՞ վեխճարը վեններ չօնե՞, վեր կյա, խե՞ տու վրս շըլըկես։

Էտ պիծի ախպերը տուս ա կյաս, վա՛յ-վա՛յ ընես, հարա՛յ տաս, թա եկալ ըն մեր վեխճարը լոխ չաւլըմը կըտորալ։ Պառավը տուս ա կյաս, տըսնաս ղըրթ-ղորթ սաղ վեխճարը կտորած, ամենին կլաւխը ուրիշն քըշտեն տըրած։

Էտ խոխեքյը լաց ըն ընես, վայ-վայ ընես, թա.— Էս հո՞ւնց կապրինքյ, մըհենգյանց տեղը։

Պառավը գյունաքար-գյունաքար ըսես ա.— Ջէ, բալամ, խե՞ լաց ըք ինիս, տըեռած չպիդար, վեր տըեռալ ա, դե հի՞նչ անինքյ։

Տահանք սուս ըն ընես, քյինիս տոն։

Մեծ ախպերը ըսես ա.— Ա՛ մըեռած, կոզի սաղ վեխճարը կտորեցեր, լհա ինձ խայտառակ տըռնալա ըզըդեցեր։

Պիծի ախպերը ըսես ա.— Պա նըհախ ըն ասալ, թա աստուծ դաւրդը ընդրան տա, հու վեր դաւրմանը գյիդաւս ա։

www.naregatsi.org



104. ԱՐՋԸ

Մին դիներմ մին մարթ քյնում ա քոլը, թա փադ անե։ էտ քոլումբա մին արչու պիտն ա ընում, արչը պիտնան տունս ա կյամ, թա էտ մարթիտ օտե։

էտ մարթը արչին ասում ա. — Էնա օղտերը կյամ ըն, քյրեզ ուտլական ըն։

Արչն ասում ա.— Պա հո՞նց անըմ։

Մարթըն ասում ա.— Նի մոտ չուվալը ծառան կախ տամ, վեր կարին վեչ քյրեզ օտենե։

Արչը նի յա մննում չուվալը, մարթը արչեն կախ ա տամ ծառան, սկսում թակելը, համ էլ ասըմ.— Կրճալածծ, ըրգյընալածծ,— համ ասում ա, համ թակում։

Արչը բուրդեն տափեն վեր ա ընգնում, չուվալան տունս կյամ, փախչում, քյինում շատ արչեր հվաքում, կյամ, վեր էտ մարթեն օտին։ էտ մարթը փադը թողում ա, էշին էլ թողում փադին քշտեն, եր ընում մին ծառ։ Արչերը կյամ ըն ծառեն տակեն պայման անըմ, հունց անին, վեր էտ մարթին օտին։

Ընդրանք ասըմ ըն.— Ուրուր կըլխե վրեննը կենանք, մինակ էտ թակված արչը լոխճան տակեն ինի։ Տհենց շրվելավ քյնանքյ, հասնինքյ էն մարթին։

Տհենց էլ անըմ ըն։ Արչը վեր հրսնում ա էն մարթին, մարթը կըրկնում ա ուրեն խոսկերքը։ — Կրճալածծ, ըրգյընալածծ, մհենգյ էլ սրանք ըն ինձ թակում, ըրգյնալածծ, կրճալածծ։

www.naregatsi.org

Արչը ըսկընալավ էն մարթին խոսկը, վեր ուրաշն թկելիս ասալ ա, գյուղում ա թաշ նահանց թակում ա, տական տունս ա պըրծնում, մեկալն էլ վեր ըն տեռնըմ, կտորվում։ էտ մարթը ծառան վեր ա կյամ։ էտքան ամաչըտ ընդրան ասալ ար մին աղվես։ էտ մարթը էշը պեռնում ա, տոն քյինաշ, հրաղցումը աղվեսին ջհնում ա։

Աղվեսն ասում ա. — Հախս տո։

էտ մարթը մըխրեգյ մտածում ա։ էտ սհաթեն բռնրդաշն փորը ղռղռամ ա։

Աղվեսըն ասում ա.— էտ հի՞նչ ա պըտահալ, մարթ ախպեր։

Մարթըն ասում ա.— Մին տըռնե սով ա իլալ, էտ տըռնեն էրկու շոն ըմ կոլ տվալ, մհենգյ էլ մինն ասում ա. «Ես ըմ տունս կյամ օտիմ էտ աղվեսին», էն մինն էլ ասում ա. «Ցրես ըմ տունս կյամ»։

Աղվեսըն ասում ա.— Դե մին մըխրե քյրեզ պահե, փախչիմ, հռանամ։

էն մարթը սրհենց էլ անըմ ա։ Ետնան էշը պեռնած քյինաշմ ա տոն։



www.naregatsi.org

105. ՀՈՆՁ ԸՆՈՒՂՆԻՆ

Մին ըմբռնե մեր Ավանես ապան, մընգյ էլ ուրյան տըսներկու տրեկան տղան՝ Զախարը քյեցալ ըն հոնձ անել։ Պատառ վեր հոնձ ըն անում, սուվուծանում ըն, նստում ըն հաց օտել։ Հաՙրը տղան, տղան հաՙրյան շատ օտող ըն ընում։

Տղան վեր տեսնում ա հաՙրը մրեծ-մրեծ ա օտում, ինքյն էլ ա մրեծ-մրեծ օտում։

Վերչը վեր մին լաՙվ օտում ըն, տղան ասում ա.— Ա՛պա, տեսնում ը՞ս հինչ լաՙվ կերե՞նքյ, էսքան հաց օտել կինի՞։

Հաՙրըն էլ ասում ա.— Պա դե, յըես մին մրեծ մարթ, ղոչչաղ ասլան, օտող, տու էլ մին մրեծ տղա, ասլան բալասի, ղվաթավ, ինքյըտ էլ օտող։

Սկսում ըն հոնձ անելը։ Հաՙլա՛յ մին պատառ հոնձ ընելու, նղանում ըն, տղան ասում ա.— Ա՛պա նըղացալ ըմ, եք դինջանանք։

Նստում ըն, թաՙ դինջանան, եշում ըն, տրեսնում արտան հաՙլա՛յ մին թիքյա՛յ յըն հընձալ։

— Ա՛պա, բա խե՞ իստի խրեգյ ընք հընձալ։

Հաՙրն ասըմ ա.— Ապան մատաղ, պա դե յըես մին պառավ մարթ, տու մին կուճուր խոխա, հունց շատ հնձի՞նքյ։

www.naregatsi.org

106. ԵՐԳՅԻՆՔԱՆ ՎԵՐ ԸՆԳԱԾ ԽԱՆՉԱԼԸ

Իլալ ա, չիլալ մին կնեգյ, մին տղա։ Էտ կնեգյը շատ քյասիբ ա իլալ։ Էտ կնգանն ըն տվալ ուրանց կյուղին տավարը, վեր տանե ուրան տղեն նհետ պահե։ Մարը նան տղան տավարը ըսկսալ ըն պահիլը։ Մին օր էլ տավարը պըհելիս երգյինքյը մթնալ ա, կըծկեծին ա ըրալ, ըրուտացալ, շըմփշըմփալի թոռը նի կալալ, լհա ասիս էս սհաթես աշխարքը փուլ ա կյլլկան։

Էտ տղան տավարը թողըմ ա դնուզնումը, ինքյը նի մննում մին քարու տակ։ Վեր կըծրկրակ ա անում, մթնվում, երգյինքան մին վրեսկե խանչալ ա եր ընգնում, էտ տղեն կողքեն տնգվում։ Տղան էտ խանչալը յոր ա օնում, տանում տոնը։ Քշերը տրան ըրաղ ըն տամ, վեր. «Էտ խանչալն օնե քըռասուն կյումշի օժ, կկապիս մեշկիտ, հենց կանիս, վեր մին մարթ էլա գյիդա վեչ։ Էտ խանչալը քու մեշկատ վեր եր կալին, տու մեռած ըս»։ Էտ օրանը ետը տղան տրեռնըմ ա մին ջանավար, տա մին կյումաշը մին ծեռքավն ա խղըցնըմ։ Մին օր էտ տղան քնենքյ ա անըմ, ասըմ ա՝ օժը կա, ամմա հարկավեր ա մին փեշակ սվերիլ։

Տավարը տամ ա մորը, վեր պահե, ինքյը եր կենում ուրանց շենան տունս կյամ, թա տրեսնա հի՞շտեղ ա ամալ կյամ մին լավ փեշակ սվերած, լավ էլ ապրած։

Ընգնում ա հղեն քյնում։ Շատ ա քյնում, թա խրեգյ, էտ ինքյն ա գյուդում։ Օխտինջի օրը մին հղըցավ քյնալիս, ուրան նման մին ջահիլ ա ջհնում։ Ըտահանք ուրուր անա հըրցըփորց ըն անըմ, էս

www.naregatsi.org

տղան ասըմ ա, վեր ինքյը մին եթիմ տղա յա, օնե մինուկ մին մար, ուրյան էլ օնե քրտասուն կյումաշու օժ։ Քյնաամ ա, վեր մին լավ տըեղ քթենա, փեշակ ավերե, ապրե։

Էն մինն էլ ասըմ ա, վեր ինքյն էլ ծովումը ասեղ կը քթենա, ինքյն էլ ա օղում իտի մին տըեղ քյնի։ Ասըմ ըն՝ մին չինինքյ, էրկու ինինքյ, մին տըեղ քյնինքյ։ Մհենգյ էլ էրկու հոքավ ընդնըմ ըն հղեն, քյնում։

Շատ ըն քյնում, խրեգյ ըն քյնում, ուրյանք ըն գյուդում, էլհա մին հրղրցում մին տղա յա ջհնում։ Էլհա ըսկսում ըն ամեգյը ուրյանց գյիդացածը ուրուր ասիլը։ Էս նոր տղան էլ ասըմ ա, վեր ինքյը աստխագետ ա, վեր աստխը ծլյամ ա, գյուդում ա հուր աստխ ա, հո՞ւ վա մեռալ։ Ըստահանք ուրուր նաղլ ըն անըմ ուրյանց թաքունաշկարը։ Էտ տղան էլ ասըմ ա, վեր ուրյան մաշկեն մին խանչալ կա, վեր յոր օնին, ինքյը մեռած ա։ Ըտրանք իրեքավ ըխպըրյանում ըն։

Շատ ըն քյնյամ, խրեգյ ըն քյնյամ, հրսնում ըն մին քաղաք, տրեսնըմ ըն, վեր էտ քաղաքը շատ կյեղեցիկ, գյաշանգյ ա, ամմա մաշին մարթ, սյաս, սեմուր չիկա։ Շատ ման կյալանը ետը քյնում ըն նի մըննում մին տոն, տրեսնում մին հուրի-փյարի ախչիգյ։

Էտ ախչիգյը ըտրանց ասըմ ա.— Տուք մղափուն ըք, քյեցեքյ ըստեղան, թյա չէ, էս ահաթըս օշափը կյալու ա ծըեզ գինյար-գինյար անե։

Էտ քրտասուն կյումաշու օժին տյար տղան ասըմ ա.— Տու վախել մեր։

Ուրյան էրկու ախպերը կյողլ ա կցնում, ինքյն էլ ըխճկանը քշտեն նստում, ըսկսում գրուցը։ Մին էլ, ըհը՛, տրեսնում ըն մին ծառ ջնաղեն տրյած օշափը եկու։

Լհա վեր տանը մղակավը նի մտավ, տրեսավ էն տղեն թյա չէ, խիլլյա ուրախացավ, համ էլ թյա.— Էս հի՞նչ լավ պեն ա, հեսա մին սուտկա յա շոռ ըմ կյամ, մին պեն չըմ քթենում, տու մի ասիլ, վրերսը եկած, տանը նստած ա, յըրես էլ բեյխյաբյար։

Վերչը էտ քրտասուն կյումաշու օժի տյար տղան, մին էլ օշափը կոխըլ ըն կենում։ Էտ տղան օշափեն վեր տափեն ա կյամ, ծենը ծունը կտրըմ ա։ Տղան ըտրան տանըմ ա, ռադ անըմ։ Ընդհտանը ախպերքյը տնես ըն կյամ։ Էն ծովըմը ասեղ քթենող տըղեն թողըմ ըն ըխճըկանը քշտեն, ուրյանք քյնում։

Հրսնըմ ըն մին շրհյար, տրեսնում էլհա կարքին-սարքին շրհյար ա, ամմա մեչին մարթ չիկա։ Էլհա քյրնըմ ըն նի մննում, տրեսնում մին տոն, մին ախճիգյ։

www.naregatsi.org

Ախճիգյն ասըմ ա. — Շո՛ւտ արիքյ, քյեցեքյ, թա չէ օշափը կյալու յա, վա՛յ ծրեզ։

Էն քըռասուն կյումաշու օժ տվող տղան ասըմ ա.— Վեչինչ, մրեզ մին պեն չի ինիլ։

Էն ասթխագետ ախպորը կյողլ ա կցնում։ Օշափը կյամ ա։ Ըսկըսում ըն կոխլը կենալը։ Կոխլը կենում վախտը էտ տղան հախտըմ ա, օշափեն տփրկցընըմ, ըսպանըմ։ Ասթխագետ տղեն էլ թողում ա էտ ըխճկան քշտեն, ինքյը քյնաւմ։

Շատ ա քյնաւմ, խրեգյ ա քյնաւմ, հըսնըմ ա մին սուրճուն, ղաշանգյ շհաւրի։ Տրեսնըմ ա մին մարթ էլա կա վեչ, նի յա մննում մին տոն, էլհա մին մինակ ախճիգյ ա պտահըմ։ Էտ ախճիգյը լոխճան ղաշանգյ ա ինըմ, համ էլ խաւլունք։

Էտ տղեն ախճիգյն ասըմ ա.— Տուս եք, թա չէ օշափը կկյա, քյըեզ օտե։

Օշափը կյամ ա, տրեսնում էտ տղան նստած։

Ասըմ ա.— Դէ վեր եկալ ըս ըստեղ, գյիդաւ վեր իմ էրկու ախպորս սպանալ ըս, մհենգյ կոխլ ընք կննական, վեր հխտեցե, քյըեզ ըստրկցընննական ըմ։

Տասնըհենգյ սութկա կոխլ ըն կենում։ Քըռասուն կյումաշու օժի տաւրը հախտըմ ա օշափեն, սպանըմ։ Ետնան էտ ըխճըկանը նհետ փսակվըմ, ուրաւն հետե լաւվ ապրըմ։

Էտ տղեն երգյիրան մին թաքավեր էտքանը գյուղըմ ա։ Օզըմ ա, վեր էտ տղեն կնեգյը տանե ուրաւն հետե ուրաւն թաքավերութունը։

Ասըմ ա.— Հու վեր կարե էտ ըխճկանը պիրի, քաշավը մին վրեսկե յըմ տալու։ Վեչ մինը վեզ չի օնըմ։

Մին պառավ վեզ ա օնըմ։

Պառավը կյամ ա էտ տղեն տոնը ասըմ, վեր թողին ղարավաշութուն անե։ Տղեն կնեգյը օզում չի։

Տղան ասըմ ա.— Յրես իմ մոր մետս ըմ քցում, էս կնգանն ըմ նմընցնըմ, թող կյա։

Էտ պառավը կյամ ա ըսկըսըմ կործ անիլը։

Մին օր պառավն ասըմ ա. Տու մարթիտ սեկրետը գյուդում ը՞ս։

Կնեգյն ասըմ ա.— Չէ՛։

Պառավըն ասըմ ա.— Պա տուք հո՞ւնց մարթըկնեգյ ըք, վեր ուրուր սեկրետ գյուդում չըք։

Կնեգյն ասում ա. — Յրես գյիդաւլ պիտիմ։

Ուրուգյունը, վեր մարթը կյամ ա տոն, կնեգյը օնքերը ուրուր ա տամ։ Մարթը հըրցնում ա պաճառը։

www.naregatsi.org

Կնեգյը հըրցըփորց ա անըմ մարթան, ասըմ ա. — Քու սեկրետըտ գյուղում չըմ. ըտրա հետի էլ ըստի չըմ։

Մարթն ասըմ ա. — Իմ սեկրետըս վեչ մինը գյիդըմ չի՞, մինաւկ չըես ըմ գյունդունմ, դե քյըեզ ասըմ ըմ, հենց ըրա օրիշ գյիդա վեչ։

Ուռուբանան պառավը եր ա կենում էտ կնգանան հըրցընում մարթին սեկրետը։ Ախճիգյն ասում ա, վեր ուրան մարթին մեշկումը մին ղամա կա, տա ընդրա օժն ա։ Հու յոր օնե մեշկան, դաստի տղան մըռնելու յա։

Պառավը քշերը ղամանն հանըմ ա, տանըմ քցըմ ծովը։ Տղան մեռնըմ ա։ Մին էլ մին թիլիսիմ ա սարքում ծովեն ղրաղեն, միչև էն թաքավերեն երգյիրը։

Ետավ կյամ ա տոն, էն կնգանն ասում.— Քյնանք ծովեն ղրաղը։ Հենց էտ վախտ թլիսիմը էտ տղեն կնգանը տանում ա էն թաքավերեն երգյիրը։

Խաբարը տանք ախպորը։

Մին ուրուգյունն ասթխագետ ախպերը ըրաղունմը տեսնում ա, վեր ախպորը ասթխը ծլլաց, վեր ընգավ։ Գյիդաց, վեր ախպերը մեռավ։ Տա քյունըմ ա ծովումը ասեղ քթենող ախպորն ասըմ, վեր խստի պեն կա։ Ըտահանք գյիդունմ ըն, վեր խանչալը եր ըն կալալ, քցալ ծովը։

Ասեղ քթենող ախպերն ասում ա.—Ցրես քյնամ ըմ ծովըմը ման կյամ։ Էրկու սուտկանը ետը վեր տունա եկե, եկե, վեր տունա չեկե, գյիդա վեր պեն ա պտահալ։

Էրկու սուտկանը ետը քթանում ա ղամանն մին ծունկնի մեշկի ղարխ իլած։ Եր ա օնում, պիրում։ Պիրում ա կապում ախպորը մեշկը։

Ախպերը եր ա կենում, ասում.—Պա՛հ, էս հի՞նչ շատ ըմ քոն իլալ։

Ըտահանք նաղլ ըն անում պըտահածան։

Տղան ասըմ ա.— Լավ, տուք քյե՛ցեքյ ծեր տեղերը, չըես քյննական ըմ, կնգանս քթենամ։

Քյունունում ա համանը տեղը, հիշտեղ վեր կնեգյը կյողլ եր կացալ։

Էտ տըղան քյնունում ա մին պըռավու տոն, հըրցնում ըտեղի թաղա խբրնեբեն անա։ Պառավն ասըմ ա, վեր թաքավերը խստի մին կնեգյ ա պերալ։ Կնեգյը օզում չի թաքավերին նհետ ապրե, ըտրա հետե էտ կնգանը դուսաղ ա ըրալ։

Տղան ասըմ ա.— Պառավ, կկարի՞ս էս մուտանան տանիս տաս

www.naregatsi.org

ուրան, համ էլ ասիս, վեր ուրուգյունը սհաթի օխտին կլլական ըմ քյըեզ տանիմ։

Էտ վախտը մին քաշալ ըտեղ ա ինում, էտ լօխ լըսում ա, քյընում ա յոր օնում էտ ըխճկանը, ասըմ.— Մարթտ յըես ըմ, քյնանք քոն ինինքյ։

Քոն ըն ինում։ Քաշալը ըխճկանը կլխը կապում ա ուրան փեշկան, հանցու փախչի վեչ։

Ախճիգյը տեսնում ա, վեր տա ուրան մարթը չի, փեշկը կտրում ա, փախչում, կյամ մին երգյիր, տեսնում թաքավերը մեռած։ Թաքավերեն ղուշը պեց ըն թողում, հուր կլխե վըեննը կենա ընդրան տինին թաքավեր։ Ղուշը կյամ ա էտ ըխճկանը կլխեն կաղնում։ Պուրում ըն էտ ըխճկանը թաքավեր ճոկըմ։ Էտ թաքավերը ուրանց կլխավեր քյուչին յրա մին ախպուր ա շինում, ուրան պատկյերը քաշիլ տամ, տամ ըտեղատ, ղարավուլչոցը ասըմ.— Հու վեր ըտեղավ քյնալիս ախ անի, փոնեցնքյ պիրաք կոշտս։ Մին օր քաշալը կյամ ա պատկերը տըեսնըմ, ըսկսում ուշունց տալը։ Ըտրան փոնում ըն, տանում դուսաղխանան։ Մեհետ էլ մին ջահիլ տղա յա կյամ, պատկերը տըեսնում։ Ըտեղ ըտրա օշը տանում ա։ Ըտրան էլ ըն պիրում թաքավերին կոշտը։ Թաքավերը երկունեն էլ խուսուցընըմ ա, ըտրանց դիվանը անըմ։

Քըչալեն ասըմ ա.— Խե՞ պատկերը տեսնալավ ուշունց ըտ տվա՞լ։

Քաշալն ասըմ ա.— Մեհետ էն ըմ իլա՞լ մըեր քըղաքումը, իստի մին պառավ եկալ ա, էս հա՞յմանն ըխճկանն ասալ, վեր մարթըտ կյալու յա, սհաթի օխտին տունս կկյաս, հանցու մարթըտ կյա, տանե։ Յըես քյացալ ըմ խա՞փա՞լ, պիրալ իմ կոշտս։ Ինքյն էլ ինձ ա խա՞փա՞լ։

Կյամ ա էտ տղեն հըրցնում.— Խե՞ էն պատկերը տեսնալավ օշտ տարալ ա։

Տղան նաղլ ա անըմ ուրան քաշածը, ուրան կլխը եկածը։ Ախճիգյը դա՞ստի գյուդունմ ա, վեր ուրան մարթն ա, ուրան ժողովրթեն իմաց ա տամ, վեր թա՞ թողըմ ըն ուրան մարթը թաքավեր ինի, կենում ա ընդեղ, թա՞ թողում չըն, քյընում ա մարթին նհետ։ Ժողովուրթը ռազի յա կենըմ։ Ըտրանք էրկուսավ տա՞ռնըմ ըն թաքավեր-թաքուհի. ընդրանա ետը ըսկըսում ըն լավ, սերավ ապրիլը։

Ընդրանք հըսին ուրանց մուրազեն, մունք էլ հըսնինք մըեր մուրազեն։

www.naregatsi.org

107. ՕԽԾԸ

Ժուվավ ժամանակավ իլա՛լ ա՛, չիլա՛լ մին մարթ, մին կնեգյ։ Տահանց օխտը ախճիգյ ա իլա՛լ։ Տահանք վեչ մին ըպրուստու տար չըն իլա՛լ։

Էտ մարթը մին ուրուգյունն շատ ա քնեննքյ անըմ, ասըմ ա.—Ա՜խ, աստուծ, հի՞նչ կինի, վեր եր կենամ, տրեսնամ արտըս փսած։

Էքյսի օրը եր ա կենում, տրեսնում արտը փսած։

Կյամ ա տոն, ուրուգյունը, վեր թեքյ ըն ընգնըմ, թա՛ քոն ինին, ասըմ ա.— Ա՜խ աստուծ, հի՞նչ կինի, եր կենամ տրեսնամ արտըս հսած։

Եր ա կենում, տրեսնում արտը հսած։

Մին օր էլ կյամ ա, ասըմ.— Ա՜խ, աստուծ, հի՞նչ կինի, եր կենամ, տրեսնամ արտըս հինձած, թակած, հազըր։

Քշրհանա եր ա կենում, տրեսնում արտը հինձած, փընջած, կա՛լումը թակած, կյուտա՛ծ, մին թե մաչին տընգած, մին շահմար օխծ թիյին կոթավը զիրավ տված։

Էտ մարթը վեր տրեսնըմ ա, օխծը ինսանու լեզվավ խօսում ա. ասըմ ա.— Հի՞նչ կտաս էս ցորնեն մաչան վեր կյամ, տանիս հալալ օտիս։

Մարթն ասըմ ա.— Հինչո՞ւ օզիս։

Օխծն ասըմ ա.— Օխտը ըխճկանատ մինը ինձ տոր։

Հա՛ըը էտ ա տրեռնըմ, կյամ տոն։ Էտ պենը վեր ըխճկորանցը ասըմ ա, վեչ մինը համոզվում չի։

www.naregatsi.org

Լոխճան պուճուր ախճիգյն ասըմ ա.— Ապա, յըես կքյինիմ, թաքյի դաննը քյըեզ տա, տանիքյ օտիքյ։

Օխծը ախճիգյը յոր ա օնում, տանում։

Քյինալիս, օխծը ասըմ ա.— Տու քարեն յրա նստե, յըես կյամ ըմ, վեր տրաքոց ըսկանաս, վախիս վեչ։

Օխծը քյնաամ ա քարեն քմակեն տրաքում, մին լավ տղա տեռնում, կյամ տեսնում ըխճկանը պռոշը ճաքած։

Տղան ասըմ ա.— Պա ըսեցե վո՛ւչ, վախիս վո՛ւչ։

Ախճիգյը տազ ա անըմ։ Մին տարե կենում ըն, մին խոխա յա ինում։

Ախճիգյըն ասըմ ա.— Ինձ տար իմ հաըրանց տոնը, սըերտս իմ հոր, ի մոր, իմ քվորցս օգըմ ա։

Տղան ասըմ ա.— Մին ամսումը թա կարիս մին պոլիգյ ըրտըսունքավ լցնիս, մին ճոխտ ըրկաթե չմոշկ պուք տաս, քյըեզ կտանիմ, թա չէ, տանիլ չը՛մ։

Ախճիգյը լաց ա ինում, լաց, խրեգյ ա մնըմ, աշկերը քռուցնե։

Էտ վախտը մին պառավ կնեգյ տրեսնըմ ա, ասըմ.— Այան մատաղ քյըեզ, խե՛ լաց ըս ինում, եր կալ մին հափուռ աղ քցի պուլիգյին ճրին մաչը, էտ ըրկաթե տրխնետ էլ տիր տռանը տակեն, տոռնը պեցըհոփ ըրա, պուվե։

Ախճիգյը ըտի յա անըմ։ Տղան տանըմ ա հաըրանց տոն։ Քյնաամ ա տրեսնում քվերքը տանը մնացած։ Էքյսը քյունում ըն կյետը լվասկ անին։ Մրեծ քուրը կուճի քըվորը կուպե յա տամ, քցում ճուրը, ընդրա շորերը կյենըմ, խոխան խտտում։ Էտ խոխան շատ ա լաց ինում, ծովեն ղրաղան մին ղարղու յրն կտրում, թուլթագյ շինում։ Վեր ածըմ ըն, խոխան տազ ա անում, վեր կտրում ըն, խոխան ըսկըսըմ ա լաց ինիլը։ Էտ խորթ մարը թուլթագյը քցում ա կրակը, էրում, մոխերը տեն ածում։ Մոխրեն տրեղը մին չինաորի յա փսնում, խոխան վազ ա տամ, քյինում ծառեն տակեն նստում։

Էտ կնեգյը հունց անում ա, ծառը կտրել ա տամ։ Կտրելիս մին տաշեղ լոք ա տամ, ընգյնըմ պռավեն հուրթնը վեր, տեռնըմ մին ախճիգյ, փրդին քմակեն կյողլը կենում։ Վեր պառավը տանան տուս ա կյամ, տաշեղը աղճիգյ ա տրեռնում, պռավեն տոնը սրփում, թիմըզցնում։

Պառավը կյամ ա, ղրմանըմ, հըրըվններան հրցնում, թա.— Էս հի՞նչ պեն ա։

Հըրըվննին ասըմ ըն.— Բուսը պահե։

Մին օր պառավը տանը կյողլ ա կենում, տրեսնում մին տաշեղ

www.naregatsi.org

եկու, տանը մաչին տրաքից, ախճիգյ տըեռավ, տոնը սրփից, թմըզ-ցըրավ։

Եկու, թա կլուվի տաշեղ տըեռնա, պառավը փռնից, ընդետանը հրցրավ, ասից.— Տու հի՞նչ իլլաթ-միլլաթ ըս, վեր եկալ ըս իմ տոնս։

Ախճիգյը ասից.— Յըես փլան տղեն կնեգյն ըմ, կլոխս ըստի օյին ա եկալ։

Մին քանե ամես պառավը էտ ըխճկանըտ պահըմ ա։ Օրերան մին օր էն հաճին տղեն տանը պըռթի միջի յա ինում։ Էտ ախճիգյն էլ ըն տանում։

Տղան կյամ ա մըջըվերեն մաչին վըեննը կենում, ասըմ.— Բա-զար ըմ քյինում, հո՞ւ վա հի՞նչ օզում, առնիմ, պիրիմ, տամ։

Կնանեքյը մինն ասըմ ա ինձ հետե մին մուտանա պեր, մինը թա հիլի պեր, մինը՝ ասեղ։

Վեր նոբաթը կյամ ա էտ ըխճկանը, ասըմ ա.— Յըես խնթրըմ ըմ, վեր ինձ հետե մին մժմաճի, մին դեգյուն, մին նոռնը, մին տենակ պիրիս։

Վեր էտ ախճիգյը տի չի ասըմ, էտ տղեն խոխան կյամ ա, էտ ըխճըկանը գյուրգյումը նստում։ Տղեն հղե յա ինըմ, քյընըմ բազար, ամման հինչան ինքյ օնում, պիրում։ Վեր կյամ ա, լոխ մջիվերնին ուրխանում ըն, պիրըմ ա ամեգյը ուրանց զակազը տեղաց անում, էտ ըխճկանենն էլ տամ ըն ուրան։

Ախճիգյը օթախեն մաչ տեղը նստըմ ա լոխ կըլխավն անց կա-ցածը նաղլ անըմ, ասըմ.— Ա՛ մժմաճի, տու շոռ տո։— Շոռ ա տամ։ — Ա՛ նոռնը, տու ճքճքոտվի։— Ճքճքոտվում ա։

— Ա՛ դեգյուն, տու պար եք։— Պար ա կյամ։

— Ա՛ տենակ, նիմըտ սրերտս։

Վեր տենակը լօք ա տամ, թա նի մննե սրերտը, խոխան կո-թան փռնըմ ա, էն քուրը ասըմ ա.— Ա՛ թաղված, խե՞ թողում չըս, նի մննե սրերտը։

Ըտըեղ լօխ կլոխ ըն ընգյնում, վեր էտ քուրն ա ըտրան կյետը քըցաւլ, համին էտ քուրը։ Էտ քվորը ծիյին հաքյվաւն կապում ըն, քաշ-քաշ անըմ, էտ ախճիգյը տամ էտ տղեն, ուրան նշընածեն։ Խոխան էլ յոր ըն օնում, տանըմ ուրանց տոնը, ուրուր նհետ սերավ ապրըմ։

www.naregatsi.org

108. ԹԱՔԱՎԵՐԻՆ ԱԽՃԻԳՅԸ ՆԱՆ ՈՒՐԱՆՑ ՆՈՔՅԱՐԸ

Ինում ա, չինում շատ քյասիբ մին մարթ։ Էտ մարթին ինում ա հենգյ խոխա։ Էտ մարթը կարում չի խոխեքյը պահի։ Տղորցան մինը տանում ա, վեր քաղաքումը նոքյար տա։ Մին թաքավերի տան էտ տղան նոքյար ա տրեռնում։ Էտ թաքավերին ինում ա մին ախճիգյ։ Էտ տղան շատ ըտեղ մնալավ, թաքավերեն ախճիգյը սիրում ա էտ տղեն, ամմա հաըը գյուդում չի։ Էտ ախճիգյը վեր մծանում ա, հաըը օզում ա մարթու տա, վերքան հարուստու տղերքյ ըն կյամ, վեր էտ ըխճկանը օզին, վեչ մինին քյինաւմ չի։

Ախճիգյըն ասըմ ա.— Յըես քյինաւմ ըմ մեր նուքյարեն։

Թաքավերը, վեր ըսկանըմ ա, հրամմայում ա, վեր էրկուսին էլ քաղաքան տուա անին։ Մորը մեխկն ա կյամ, ըխճկանը թաքուն իրեք հարուր մանեթ փող ա տամ։

Էտ ախճիգյը նան տղան շատ ըն քյինաւմ, թաւ խրեգյ, վերչը հսնըմ ըն մին շեն։ Էտ շենումը մին տան ապրում ըն։

Մին քանի օրանը ետը ախճիգյը էտ տղեն ասըմ ա.— Խե՞ չըս քյնաւմ ըշխադանք անըմ։

Տղան ասըմ ա.— Փող չիկա, տերտակ ջուբավս շտե՞ղ քյնաւմ։

Ախճիգյը մորը տված փողան հաըուր մանեթ ա տամ, ասում.— Քյնա ըշխադանք ըրա։

Տղան եր ա կենըմ, քյնամ։

Շատ վեր քյնամ ա, նղանըմ ա, հրդըցըմը մին տեղ նստում ա, վեր մին պատառ դինջյանաւ։ Տրեսնում ա, մին մարթ ա կյամ։

www.naregatsi.org

էտ մարթն ասըմ ա.— Թո՞րն ըս քյնամ։

էտ տղան պադասխանում ա, վեր ըշխադանքի յա քյնամ։

էտ մարթն ասում ա.— Հի՞նչ կտաս, վեր մին խոսկ սվըրցնիմ քյըհզ։

էտ տղան ասում ա.— Վհչ մին պեն չօնիմ, մինաւկ հաւրուր մանեթ փող օնիմ։

էտ մարթը փողը յոր ա օնում, ասըմ.— Վեր քյնաս տեսնաս մին տեղ մին տղա ախճիզյ ա օզում, վեր քյզանա հրցնե, թաւ. «Վե՞րն ա լաւվ», կասես, վեր վերը աշկըտ փռնում ա, էն էլ լաւվն ա։

էտ տղան ետ ա տեռնում, կյամ տոն։ Կնեգյը հրցընըմ ա, թաւ.— Խե՞ եկալ ըս.

Տղան պադասխանում ա, վեր հըղրցումը մին խոսկ ա սվերալ եկալ։

Մին քանի օրանը ետը կնեգյը հաւրուր մանեթ էլ ա տամ, ասըմ.— Քյնա աշխադանքի։

էտ մարթը փողը յոր ա օնում, քյնամ։

Վեր նղանըմ ա, հըղրցումը նստում ա, թա դինջանաւ։ Էլհա մին մարթ ա կյամ, հրցնում.— Թո՞րն ըս քյնամ։

էտ տղան ասում ա.— Քյնամ ըմ աշխադանքի։

Մին էլ ա հրցնըմ.—Հի՞նչ կտաս, վեր մին խոսկ սվրցնիմ քյըհզ։

էտ տղան ասըմ ա.— Վհչ մին պեն էլա օնիմ վհչ, մինաւկ հաւրուր մանեթ փող օնիմ։

էտ մարթը փողը յոր ա օնում, ասում.— Վեր քյնաս տըեսնաս մին տեղ մին կռեվ, յա քու տանըտ մին պեն պտահած, կնեգյըտ մինին նհետ խուսեվիս, կասիս. «Համփերոթունը գյանք աս»։

Փողը տալանը ետը էտ տղան կյամ ա տոն։

Կնեգյը հրցընըմ ա.— Մհե՞նգյ խե եկալ ըս։

Մարթն ասում ա.— Հըղրցըմը մին խոսկ ըմ սվերալ, փողը տվալ ըմ, խոսկը առալ, տրա հետի էլ եկալ ըմ։

Էրկու օրանը ետը կնեգյը վերչի հաւրուր մանեթը տամ ա ըտրան, ասըմ.— Էս դինում քյնա՛, տես հի՞նչ ա տըեռնըմ։

Մարթը քյնամ ա, քյնամ, շատ ա քյնամ, թաւ խրեգյ, հըղրցըմը պտահըմ ա մին օղտերի քյաւրվանու։ Քյնամ ա ընդեղ։

Ընդրանցան մինը էտ մարթին ասըմ ա.— Ըստեղ մին վեր կա, հուրը քցըմ ընք, թաւ ճուր հանի, էլ կյամ չի, վեր տու քյնաս, էս կոլան լցնիս, պիրիս, էս օղտը ուրաւն պեռնավը քյըհզ ըմ տըլլականաւ։

էտ տղան կոլան յոր ա օնում նի մննըմ վերը։ Վեր հանում ա

www.naregatsi.org

վերին տակը, տրեսնում ա մաչին էրկու ախճիգյ նստած, մինը մինին անա ղաշանգյ, մին օշափ էլ ընդրանց քշտին քոն իլած։

Էտ ըխճկերքը վեր տրեսնում ըն էտ տղեն, ասում ըն.— Շուտ ըրա կոժըտ լցեր, տունս եք, թա չէ, օշափը վեր եր կացավ, քյըեզ թիքյա-թիքյա յա ընննական։

Տղան լցնըմ ա, թա տունս կյա, օշափը եր ա կենում, ասըմ.— Էս հի՞նչ մրթավետ ա։

Տես ա եշում, տեն հրթոթում, վըտվետում, տրեսնըմ էտ տղեն, ասըմ.— Եք ըստեղ։

Տղան քյնամ ա, օշափը հրցընըմ ա, ասում.— Վեր մին քանի հարց տամ, գյիդյաս, կոլատ ճրյավ լըցընլական ըմ, քյըեզ տամ, թա չէ, քյըեզ ուտլական ըմ։

Օշափը ասըմ ա.— Էս ըխճըկերանցան վե՞րն ա լավ։

Տղան մետըն ա քըցըմ ուրյան սվերած խոսկերքը, ասում.— Վերին աշկըտ փըռնըմ ա, էն էլ կյեղեցիկ ա։

Օշափը կոլան լցնում ա, իրեք հատ էլ նոռնը տամ էտ տղեն, ասըմ.— Տունս եք քյինա, գյիդյացիր։

Էտ տղան վեր տունս ա կյամ, խոջան ընդրան մին օղտ պեռնած կտոր ա տամ։ Էտ տղան կյամ ա տոն, պերըմ ա թողըմ տանը, հանցու մին էլ քյնա աշխադանքի։ Թողում ա, քյնամ։

Շատ ա կենում, թա խրեգյ, վերչը մին օր աշխադանքի տեղան էտ մարթը կյամ ա տոն, վեր կյամ ա, տրեսնըմ ա ուրյանց վրեղե տանը տրեղը մին լավ քարե պալատ շինած։ Հըրցընըմ ա շենին խխոցան, ընդրանք ասըմ ըն, վեր տա ուրյան տոննն ա։ Փլյաքյանյավը վեր պիցրանըմ ա բալկոնը, ակուշկավը տրեսնում ա մին կուճուր խոխա պոլեն յրա խաղ ա անում, ամմա ուրյան կնեգյը էլ մին մարթու նհետ նստած խոսում ա։ Էտ տղան օզում ա ակուշկավը քարավ թխե, էն մարթին սպանե, մին էլ ասըմ ա. «Համփերոթունը գյանք ա»։ Նի յա մննում տոն, կնեգյը մարթին պերած աշխադանքը տղվըրելան ետը կյամ ա տոն, մարթին ծանոթացնում էն մարթին նհետ, թա տա մեր կնքավերն ա, սա էլ մեր խոխան։

Մարթը կնգանը անա հրցնում ա.— Էս տոնը պա հի՞նչավ ըս շինալ։

Էն էլ ասում ա.— Էն վեր իրեք նոռն ըս պերալ, մեչը պուլյանդ, ալմաստ քարեր ա իլալ, ընդրանավ ըմ շինալ։

Վերչը տրանք վեխճար ըն ինքյ օնում, ըխճկանը հորը նան մորը ղոնաղ կանչում։ Փայտոն ըն սարքում, ղարկում ընդրանց հետան։

Ըխճկանը հաըը, մարը եր ըն կենում, կյամ, քյեփ անըմ, քյինամ։ Էտ մարթն էլ ուրյան կնգանը նան խուխեն նհետ ապրում ա բախտավեր, անցավ, անդաըդ։

www.naregatsi.org

ՀԱՎԵԼՎԱԾ

1. ԳՅԱՆՔԻՆ ՕՐԵՐԸ

Շուշվա Ղալին դաշրդի Ալիքսանին տոնը մին ղոնաղ ա կյամ։ Ալիքսանը էտ ուրուդյունը լավ պադրաստոթուն ա քաշըմ, մին քանի ղոնաղ էլ ընդրա կըլխեն կանչըմ, պատեվ տամ։

Էտ ղոնաղին աշկը փըռնըմ ա էտ Ալիքսանին հըրեվանեն կընեգյը։ Ըտրա նըհետ սիլի-բիլի յա անըմ, էտ օրը էտ ղոնաղեն հետե լավ ա անց կըենըմ։

Ղոնաղը չամադանան մին ղալին, հաստ տետրակ ա հանըմ էտ օրը կյիրըմ։

Ալիքսանը տրեսնըմ ա, ասըմ.— էտ հի՞նչ ըս կյիրըմ։

Ղոնաղըն ասըմ ա.— Գյանքիս օրերըն ըմ կյիրըմ։ Էտ ա էտքան զրեու մարթ ըս, գյուդում չը՞ս, վեր մարթիս գյանքըմը լոխ օրերը չի լավ անց կըենըմ։ Իմ գյանքիս լոխճան լավ օրերը քառասունըիրեքըն ա իլալ։ Էս օրըս էլ կըտրեռնա քառասունըչորսը։

Ալիքսանը ճաղար աշկերը չըռած ասըմ ա.— Էտ դուզ ը՞ս ասըմ։

Ղոնաղը թա՛.— Բա հի՞նչ... Մընացած օրերը ուրուր նըման ըն։

— Դե վեր իտի յա՛, իմ գյանքըմըս մինակ մին լավ օր ա իլալ, էն օրը առաչի դռնըմը պա՛չալ ըմ իմ սիրելի Թաղագյուղիս։

Ղոնաղըն ասըմ ա.— Հա՛, Ալիքսան, կյիրի՛, կյիրի՛, վեր էս աշխարքըմըս մին օր ըս ապրա՛լ։

www.naregatsi.org

2. ԽԼԵԶՆԸ

Ինում ա չինում էրկու ախպեր ըն ինում։ Մեծ ախպերը շատ խելունք ա ինում, ամմա պուճուրը՝ պըճլ։ Ըտրանք էրկուսն էլ ուրուր քըշտի յըն ապրում։

Մին քանի տարի ընցնելանը ւոր պըճլ ախպերը մեծ ախպորն ասում ա.

— Էլ յըճս քյըճզ նհետ օզում չըմ ապրիմ։

Մեծ ախպերը ճարը կտրած, տուս ա կյամ, սաղ ըլած-չըլածը ինքյն ա յոր օնում, մինակ մին եզնը պըճլ ախպորըն ա տամ։

Օրերան մին օր էտ կուճի ախպերը յոր ա օնում եզնը, վեր տանի ծախի բըզարումը։ Ծմակեն մաչավը քյնալիս մին խլեզն ա տուս կյամ։ Էտ խլեզնը վրենն ա կենում, եղում էտ մարթին։

Պըճլը մուտանում ա, ընդրան ասըմ.— Էս եզնը ծախում ըմ, կյինը տասը մանեթ ա, առնում չը՞ս։

Խլեզնը կլխավ ա անըմ։

— Ա՛ խլեզնը, տըճս հա՞, օրփաթ օրը կյլական ըմ փողը տանիմ։

Խլեզնը էլհա յա կլխավ անըմ։ Կյիժը հաշվըմ ա եզնը ծախած, թողըմ ա ծմակըմը ետ տաւնում, կյամ տոն։

Օրփաթ օրը քյնամ ա համաւն էն տեղը, վեր եզնը ծախալ ա խլեզնին յրան։ Տըճսնըմ խլեզնը ընդեղ կաղնած, ամմա եզնը կա վեչ։

Փողը օզում ա, խլեզնը տեղան տուրուր չի կյամ։

Կյիժը կզնվում ա, մըհակը եր ա պիրում, թաւ թխի խլեզնին։ Խլեզնը նի յա մըննըմ քարեն տակը։ Կյիժը քարը պցրցնըմ ա, տես-

www.naregatsi.org

նըմ խլեզնին կոխկին մին կարաս վրեսկե։ Պրելը կլխան մին տասը մանեթ ա յոր օնում, ասըմ.—Տե՛ս, ա՛ խլեզնը, իվիլ եր չըմ կա՞լալ հա՞, էքյուց ինձ շառավ չի տա՞ս։—Տասը մանեթը յոր ա օնում, կյամ տոն։

Մեծ ախպերը հըրցնըմ ա, թա՞.— Ցրեզնը հո՞ւր յրա ծըխեցիր։

Պրելը սկսըմ ա նաղլ անիլը։ Խելունքը վեր լսըմ ա մին կարաս վրեսկուն անըմը, խնթրըմ ա կիճի ախպորը, վեր տանի տեղը նշանց տա։ Մեծ նան կիճի ախպերքը եր ըն կենում, քյնո՛ւմ։

Շատ ըն քյընո՛ւմ, խրեզյ ըն քյընո՛ւմ, հըսնըմ ըն համին էն տեղին, շտեղ վեր վրեսկեն ա։ Մեծ ախպերը վրեսկեն ածըմ ա մեշոկին մեչը, շըլա՛կըմ ըն, կյամ։

Ո՛ւրո՛ւգյունը վեր մթնըմ ա, ընդրանք հըսնըմ ըն մին տան։ Ըտեղ եր ըն կյամ, տեսնըմ ղաչաղնի։ Ընդրանք կըռեվ ըն անում։ Պրել ախպերը ընդրանց լոխճին սպանում ա, տանը քա՛նդած տրոռները շըլա՛կում, ճընապար ընգնում։

Մեծ ախպերը վրեսկուն մեշոկը շըլա՛կած, կուժինն էլ տրոռները շըլա՛կած պցրանում ըն մին չինա՛րի ծառ։

Ք֊շերվա կեսին մին քյարվան ա կյամ, էտ չինա՛րուն տակին վեր կյամ։

Մին խրեզյ վեր կենում ըն, էտ կուժի ախպերը ասում ա.— Մեշկս ցավըմ ա, տոռնը տըվեր ըմ քըցըմ։

Մեծ ախպերն ասըմ ա.— Ա՛ պրել, հի՞նչ ըս ասըմ, տրանք յրա կտա՛ռնան մրեզ կըսպանին։

Պրելըն ասըմ ա.— Ջէ՛, վեր չէ՛, վեր ըմ քցըմ։— Տռները ծառին ճղները կուտրատելավ ընգնըմ ա տակին մարթկանցը կլխին։

Ըստրանք էտ հրաշկը վեր տեսնըմ ըն, թողում ըն ո՛ւրա՛նց հարըստոթունը, փախչըմ։

Ախպերը ծառան եր ա կյամ։ Մեծ ախպերը սկսում ա ըտրանց վրեսկեն հվաքելը, ամմա կուժին ըտրանց քյուլքերն ա հըվաքում։ Տանըմ ա տոն, վեր տակը քցի, տեղը տաք ինի։

www.naregatsi.org

3. ԹԱՔԱՎԵՐԸ ՆԱՆ ԽԵԼՈՒՆՔ ԱԽՃԻԳՅԸ

Մին թաքավեր ուրիշն վեզիրին կանչըմ ա, ըտրա երի ատաժը փորցելի հետի, տըեսնալի հետի խելունք ա՞, թա չէ, ասըմ ա.— Քյինի ինձ հետի մին հենց քախծըր պեն պեր, վեր լոխճան քախծըրը ինի։

Վեզիրը քյինըմ ա մին վեխճարի լուզուն ճարըմ, պերըմ տամ թաքավերին։ Թաքավերը սուա ա անըմ, տըեսնըմ ա, վեր դուզ ա վեզիրին ըրածը։

Էրկունջի դռնըմըն էլ թաքավերը կանչըմ ա վեզիրին, ասըմ.— Քյինի ինձ հետի մին կըծո, աղու-լըղի պեն պեր, վեր լոխճան կըծո, աղու ինի։

Էտ վեզիրը էլհա քյինըմ ա, մին վեխճարի լուզուն ճարըմ պերըմ, տամ թաքավերին։

Թաքավերը ըջըղվըմ ա, վրենը տափին կյամ, ասըմ.—Տարեք յ ըտրան էս սրհաթիս կախ տվեք յ։

Վեզիրը չոքըմ ա թաքավերին առաչին, խընթրըմ, ասըմ.— Թաքավերըն ապրած կրենա, իրեգյի քու լուզուտ քախծըր ար, ըսօր կըծո յա։

Թաքավերը վեր էտ խոսկերքը լըսըմ ա, վեզիրին ազադըմ ա։

Անց ա կրենըմ մին խիլլա վախտ, էլհա թաքավերը վեզիրին կանչըմ ա ուրիշն կոշտը, ասըմ.— Քյինի ինձ հետի մին վեխճար

www.naregatsi.org

պեր, վեր ընդրա մին մասը հում մրես ինի, մին մասը խփած, վեխ-ճարըն էլ հրեն ինի քըշտիս ըրածըմ։

Ըտրա բաղասխանին հետի թաքավերը քառասուն օր վախտ ա տամ։

Վեզիրը ճընապար ա ընգնըմ, քյինըմ։

Քյինըմ ա քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրեգյ, ինքյը կը գյիդա, մին մարթի յա ջիհըմ։ Էտ մարթին նըհետ քյինըմ ա, քյինըմ, մին կյետի յա ուջահ կյամ։

Վեզիրը էտ մարթին ասըմ ա.— Ըք էս կյետին մին կարմունջ շինինքյ։ Էտ մարթը թա.— Կյիժ ըս, հի՞նչ ըս, թա կըլխիտ ծի յա քացի տըվալ։

Էլհա քյինըմ ըն, քյինըմ, վեզիրըն ասըմ ա.— Ըք էս ճընապարին մին փալաքյան շինինք։

Էտ մարթը մընըմ ա մաթ մընացած։ Ասըմ ա.— Կըլխիտ դուբմա յա թըխալ, հի՞նչ ա, թա կյիժոթունըտ փըռնալ ա։ Իտի պեն կինի՞։

Էլհա էտ մարթը հըսկանըմ չի, թա էտ վեզիրը հի՞նչ ա ասըմ։ Քյինըմ ըն, քյինըմ, հըսնըմ մին շենի։ Ըտեղ վեզիրը էտ մարթին ասըմ ա.— Հենց ա էս շենըմը ժամ չինի՞, վեր քյինիմ աղոթկ անիմ։

Էտ մարթը ասըմ ա.— Հո՞ւնց թա ժամ չի կա, էնա կա՛։— Տանըմ ա տրեղը նշանց տամ։

Վեզիրը նի յա մընընըմ ժամը, էտ մարթը կյամ ա ուրանց տոն։

Վեր կյամ ա տոն, ուրան ըխճըկանը նաղլ ա անըմ։ Ախճիգյը իմաստուն ա ինըմ, դաստի ասըմ ա.— Ա՛ հաբր, էն վեր ասալ ա. «Ըք էս կյըետավը կարմունջ քըցինք», ըտրանավ օզացալ ա ասի՝ յա յըես շորերըս հանիմ, քյըեզ կյետավը անց կըցնիմ, յա տու շորերըտ հանի ինձ կյըետավը անց կըցըրու։

Հաբրըն ասըմ ա.— Բա էՙն, վեր ասալ ա, թա եք մին փալաքյան շինինք էս ճընապարին։

Ախճիգյը ասըմ ա.— Ա՛ հաբր, ըտրանավ էլ օզացալ ա ասի՝ եք զուրուց անինք։

Հաբրըն ասըմ ա.— Բա էՙն, վեր հըրցըրալ ա, թա ծրեր շենըմը ժամ կա՞, թա չէ։

— Ա՛ հաբր, ըտրանավ էլ օզացալ ա ասի՝ ծրեր շենըմը մինը կա վեչ, վեր ինձ ուրան տոնը ղոնաղ տանի։

Ախճիգյը հորը խընթըրըմ ա, վեր քյինի, էտ մարթին քըթնի, պերի ուրանց տոն։

Հաբրը քյինըմ ա ժաման թուշ պերըմ ուրանց տոն։ Վեր տոն

www.naregatsi.org

ա կյամ, էտ վեզիրը տրեսնըմ ա էտ ըխճըկանը, ասըմ.— Ախսուզ էս տոն, վեր հուրթը ծոռ ա։

Էտ ախճիգյը կըլխի յա ընգնըմ, թա վեզիրը ըտրանավ հի՞նչ ա օզըմ ասի։

Էտ ախճիգյը ասըմ ա.— Ա՛յ ղոնաղ, տու հուրթին ծոռ ինելին մի եշիլ, տու ընդրա ծոխին էշի, վեր դուզ ա եր ինըմ։

Վեզիրը տըսնալավ վեր էտ ախճիգյը շատ պեն ա գյուդում, թաքավերին ասածը ըտրանա հըրցընըմ ա։

Էտ ախճիգյը վեզիրին ասըմ ա.— Քյինի մին ղոչ առ, ծըվանքը, հանի, մինը իփի, մինը հում թող, վեխճարին նըհետ տար թաքավերին առաչին տիր, մին պատառ էլ խոտ տար, վեխճարը խոտը կօտի, ծըվանցը մինը հում մըես կինի, մինն էլ իփած մըես։

Վեզիրը ըտըղան քյինըմ ա թաքավերին կոշտը, վեխճարը տանըմ, մըեսըն էլ նըհետը, իփածը ճոկ, հումը ճոկ, տինըմ թաքավերին առաչին, ասըմ.— Թաքավերը ապրած կըենա, քու ասածըտ պերալ ըմ։

Թաքավերը մաթ ա մընըմ, թա էտ վեզիրը ըշտղան ա էտ լոխ գյուդում։ Ստիքըմ ա, վեր լոխ ասի։

Վեզիրըն ասըմ ա, վեր իստի-իստի մին ախճիգյ ա ասալ։ Թաքավերը մարթ ա յոր օնըմ, քյինըմ էտ ըխճըկանը պերըմ։ Ախճիգյըն էլ հորը ասած ա ինըմ, վեր թաքավերը կյալու յա ուրան հետան, վեր հաըրը տա, տանի։

Թաքավերը էտ ըխճըկանը յոր ա օնըմ, պերըմ ուրան պալատը, ասըմ. — Տրես իմ թաքավերոթունըս քու քըշտիտ ըմ թողըմ, իմ քառասուն կընեգյըս քու քըշտիտ ըմ թողըմ, մին տարանը ետը կյալու յըմ, քյըզանա օզելու յըմ, վեր քյըզանա մին տըղա ինի։

Ասըմ ա, ուրան վեզիրնըերին նըհետ քյինըմ մին յաբանա չոլըմ մին չադիր եր թողըմ, մեչին կրենըմ ըն։

Էտ ախճիգյը տըղամարթի շորեր ա կյենըմ, զենք կապըմ, թաքավերին քառասուն կընգանը, ուրանց ղարավաշներավը կընգա շորեր կյեց տամ, ծիյանք ըն նըստըմ, քյինըմ էտ թաքավերին կոշտը։ Վեր տրեղ ըն հըսնըմ, մին խըրեգյ հրեռու էտ կընանոցը կյողլ ա կրցընըմ, ինքյը քյինըմ թաքավերին խումբը։ Ըտրանց պարիյօր տամ, նըստըմ, թաքավերին նըհետ մաըջավ նարդի հաղ անըմ։ Առաչի դոնըմը հու վեր տանի, բեդմա ուրան լոխ ծիյանքը տա տանողին։ Հաղ ըն անըմ, ախճիգյը տանըմ ա, թաքավերին լոխ ծիյանքը քըշըմ, պերըմ ուրան հընգերունցը կոշտը։

Էրկունչի դոնըմը հաղ ըն անըմ մարթկանցավ, հու վեր տանի,

www.naregatsi.org

հիշքան ընդեղ մարթ կա, ուրիշնն ա։ Հաղ ըն անըմ, էլհա էտ ախճիգը տանըմ ա։ էտ լոխ մարթիքը հրվաքըմ ա, տանըմ։ Իրեքինջի դինըմը հաղ ըն անըմ էտ ըխճըկանավը։ էտ ախճիգը գլիդալավ տանիլ ա տամ։

Թաքավերը ըտրան վրեսկե լենթ ա տամ, համ էլ մըթկըմը ասըմ.

— Թի տըղա պերի էնա ըտրան կօզիմ, թի ախճիգ պերի, ըտրան կը կուրցունիմ։

Ախճիգը թաքավերին քըշտան կյամ ա էտ կընանոցը կոշտը, ծիյանքը նան էտ կընանոցը պերըմ պալատը։ Մին տարանը հետը էտ ախճիգը մին տըղա յա պըերըմ։

Վեր թաքավերին հետ տըռնալի վախտը կյամ ա, հետ ա տրեռնըմ, տրեսնըմ լոխ ծիյանքը վրերց ըն տրեռալ, կընանիքյը՝ տըղամարթ, էտ ախճիգըն էլ մին տըղա յա պըերալ։

Թաքավերը ուրիշն հարուստութունը էտ ըխճըկանն ա տամ, հունցու մին ամմեն հինչ գլիդող իմաստունի։



www.naregatsi.org

4. ՍԸԵՐԸ

Ընում ա, չընում մին մադար տըղա յա ընում։ Էտ մադար տըղան հաւլա փըսակված չի ընում։ Հիշքան հաւրը, մարը ղաչանք ըն անըմ, թա փըսակվի, փըսակվըմ չի, ասըմ ա. «Բար ախճիգյ չի կա՞»։ Անց ա կըճնըմ խիլլա վախտ։

Մին դաննըմ էլ էս տըղան Շուշի քաղաքին մին մըճճ քյուչավ քյինելիս, էն մըճճ-մըճճ տընճերին քյուչի բալկոններին մինին մըճչին մին ղաշանգյ, մարալի նըման ախճիգյ ա տըճսնըմ կաղնած, մին շատ կյեղեցիկ ախճիգյ։

Էտ տըղան ուրաան մըթկըմը ասըմ ա. «Դուզ ա, Շուշի քաղաքին ըխճըկերքը լոխ էլ կյեղեցիկ ըն, ծըռքըճիրավ, տընարար, մաննները վըճսկե՞... Աշխարքիս էն ճընդան կյամ ըն Շուշի-Ղալիցը ախճիգյ օղըմ, տանըմ։ Հու վըճր էլ տանըմ ա, փըշմանըմ չի. տոնը վըճր տըճուտակ էլ ա ինըմ, լըցնըվում ա, ամմա էս իմ տըճսած ախճիգյըն օրիշ պըճն ա՞...»

Կյամ ա տոն, ասըմ.—Ա՛ մար, յըճս մինչև մըրճկ օղացալ չըմ փըսակվիմ, ամմա մըրճգյ օղըմ ըմ։ Էս հինչ տըճղը մին ախճիգյ ըմ տըճսա՛լ, վըճր արևին ասըմ ա. «Տուն մի կյալ, յըճս ըմ տուն կյալու», լուսընընգյին ասըմ ա. «Տուն մի կյալ, յըճս ըմ տուն կյալու»։ Էտ ախճիգյը տուրըս ա եկալ։

Հաւրը նան մարը ուրխանըմ ըն։ Քյինըմ ըն էտ ախճիգյը օղըմ, պըճրըմ ուրաանց տոն, մին լավ հըրսանիք անըմ։

Էն մին քըշճրը, վըճր տըղան թճքյ ա ընգնում էտ ըխճըկանը

www.naregatsi.org

նրհետ, տրղան մուտրնալան առաչ ասըմ ա.— Յրես էրկու պրեն բիդի ասիմ քյրեզ, թա համոզ ը՞ս, իմ կընեգյըս կինիս, թա համոզ չըս, մունք կինինք հունց վըեր քյուր նան ախպեր։

Ախճիգյն ասըմ ա.— Ասի՛, տրեսնամ հի՞նչ ըս ասըմ։

Տրղան ասըմ ա.— Վըեր յրես մրեռնիմ, տու բիդի փըսակվիս վրեչ, թա տու մրեռնիս, ես բիդի փըսակվիմ վրեչ։

Ախճիգյը համոզվում ա։

Քըշերավը լուսը ծըքյծըքյոտրելիս էտ տրղան մրեռնըմ ա։

Ընդրանա ետը էտ ախճիգյը ամուն օր կանուխ քըշերավը քյընում ա երի հանգյիստը, էտ տրղին կյըրեզմանին յրան լաց ինում։ Ինքյն էլ փըսակվում չի՞։

Երի հանգյիստին տակավը մին շոսսե ճընապար ա ինում։

Մին դռնըմ էտ ճընապարավը մին պեխի ախպուրը քյընող փայտոնչի լըսըմ ա էտ ըխճըկանը սոքյը նան շիվանը։

Էտ փայտոնչին ուրրան հընգյերին ասըմ ա.— Տրեսնաս էն հո՞ւ վա ինդի լաց ընում, քյինիմ, տրեսնամ։

Ամմա հընգերն ասըմ ա.— Պրեն չօնի՞ս, հրղետ քյինի՛, հու վըեր լաց ա ինըմ, թող լաց ինի, քյրեզ հի՞նչ։

Էտ տրղան համփերում չի, քյընում ա, տրեսնըմ էտ ըխճըկանը, ըտրա կյեղեցիկ ինելան մաթ ա մընըմ, ետ ա տրեռնըմ հրրցընըմ, թա.—Ա՛յ ախճիգյ, էտ հո՞ւր հետի յրս իտի լաց ինըմ, մարըտ ա՞, թա հարըտ ա, քյո՞ւրըտ, ախպերըտ ա՞, թա՞ սիրածըտ։

Ախճիգյըն ասըմ ա.— Լաց ըմ ինըմ իմ սիրածիս հետի։ Էս ա օխտը տարի յա ամեն ըռավուտ կյամ ըմ ըստրեղ, լաց ինըմ։

Տրղան ասըմ ա.— Նհախ տրեղան ըս լաց ինըմ, տա շունտանց ա վրեղ տրեռալ, իտի մանիլ, թո՛ղ, քյինի մին օրիշ տրղի, մրղափուն ըս, ջահիլ ըս, էտ աշկերիտ լուսը եր մի ածիլ լաց ինելավ... Հալա սոքյ էլ ըս պահրմ սրեվ շորերըմ... Սրեվ գազը կըլխիտ...

Էտ ախճիգյն ասըմ ա.— Յրես մինչև իմ գյանքիս վրերչը իստի սոքյ ըմ պահելու։

Էտ տրղան ասըմ ա.— Սիրածըտ շունտի յա վրեղ տրեռալ, թա հրվատըմ չը՞ս, պրեց անիմ տրես։

Էտ տրղան քյընըմ ա մին թի պըերըմ, վրեղը քանդըմ, վրեսկուռնին պրեց անըմ։ Էտ ախճիգյը տրեսնըմ ա, մընըմ կաղնած։ Ետավ էտ տրղան չոքըմ ա էտ ըխճըկանը առաչին, ասըմ.

— Յրես քյրեզ մատաղ, բոյիտ մատաղ, ջանիտ մատաղ, ցավըտ տանիմ, եք ինձ նրհետ փըսակվի, քյրեզ կըլխիս յրան կպահիմ, քյրեզ

www.naregatsi.org

թողիւ չըմ, վրեր մին մազըտ էլ ծըռվի, մինը քյըհզ խըեթ եշի։ էտ ախճիգյը համոզվըմ ա էտ տըղին նըհետ փըսակվի։ Ամմա հրենց առաչի քըշերը պաչելանը ետը համ ախճիգյըն ա մրեռնըմ, համ տըղան։

Էրկուսին էլ մին տրեղ ըն թաղըմ, էն երի հանգիստըմը։

www.naregatsi.org

5. ԾԸԼԼԱԼԻՍ ԱՍԹԽԵՐԸ

Մին մարթ ասթխերը ծըլլալիս ասըմ ա.— Ա՛յ ասթխեր, դիլակըս տոր, յըես օղըմ ըմ, վըեր հինչ փըռնիմ վըեսկե տըեռնա։

Էս մարթը քյասիբ մարթ ա ինըմ, աշկը օրիշի յրա։ Ըտրա խընթիրքը կադարվըմ ա։

Էն մին օրը տըեննակը յոր ա օնըմ, թա հացը կտրի, հացն էլ, տըեննակըն էլ վըեսկե յըն տըեռնըմ, օղըմ ա թա ճուր խմի, ճուրը վըեսկե յա տըեռնըմ, հինչու օղըմ ա թա օտի, վըեսկե յա տըեռնըմ։

Էտ մարթն ասըմ ա.

— Ջրհար տըեռնա իստի սըրտինըս կադարվի՞լը, ինձ հիբի յա բախտ իլա՛լ, վըեր մըհեգյ ինի՛...

Ծտնան էտ մարթը իտի էլ մընըմ ա սուված, ծարավ, իտի էլ մըեռնըմ ա։

www.naregatsi.org

6. ՊԸՐԿԸՓՈԽԱՆ ԿԸՆԵԳՑԸ

Մին շենացի մարթ՞ա ինըմ։ Շատ ա ըշխադըմ կյաւրի հաց ա օտըմ, խրեգյ ա ըշխադըմ, էլլա յա կյաւրի հաց օտըմ։

Մին օր կընգանան ըտրա պատճառը հըրցընըմ ա։

Կընեգյըն ասըմ ա.— Հենե՛, քու ախպեր Շիրվանըմը, հիբը ընդըղան դիբի Ղարաբաղ փըչըմ ա, մըեր ցորենը կորչըմ ա։

Էտ մարթը եր ա կըենըմ Ղարաբաղան Շիրվան քյինըմ, ախպորը կոշտը, թա՛ ախպորըն անա հըրցնի, գյիդա՛։

Վեր հըանըմ ա Շիրվան, ախպորը լոխ նաղլ ա անըմ։ Էտ ախպերը եր ա կըենըմ կրակ անըմ, Ղազանը երգյինքան կախ տամ։ Էտ Ղարաբաղան եկած ախպերը հըրցընըմ ա, թա՛.— Ա՛յ ախպեր, խե՛ յըս ղազանը էտքան հըեռու տըրա՛լ, ախեր թըքանալ չի՛...

Էն Շիրվանըմը կըենող ախպերը ասըմ ա.— Բա հո՛ւնց կինի՛, վըեր յըես ըստըղան փըչիմ, քու ցորենըտ շաղ կյա, ըտըեղ օրիշ պըեն կա, քյինա՛ ճարի։

Էտ ախպերը ետ ա տըեռնըմ, կյամ տոն, ուրա՛ն նըհետ էլ ուրա՛ն ախպորը տըղին պըերում ա ուրա՛նց տոն։

Էտ ախպորը տըղան, էտ կուճի մըեռածը, գյուդում ար, վըեր ուրա՛ն ամուն կընեգյը սիրական օնի, վըեր հացը նան ցորենը տամ ա ընդրան։

Վըեր շենն ըն հըանըմ, էտ տըղան, էտ կուճի տափը մըտածը, աղվեսթուն ա անըմ։ Ամուն կընեգյը հիբը օզըմ ա սիրականը պըերի ուրա՛ն կոշտը, հավ ա իփըմ, լավ-լավ պեներ ա թըխըմ, կյինի, արաղ

www.naregatsi.org

ա եր տինըմ։ Մին օր սիրականը կյամ ա ըտրանց տանը քոն ինըմ։

Էտ տըղան, էտ կուճի ըզըզամըեռը, յոր ա օնըմ թաղա հալած յեղը ածըմ էտ կընգանը սիրականին պըերանը։ Էտ մարթը մըեռնըմ ա։ Ըտրա մըեյիդը քըշերվա կըեսին քաշ տալավ տանըմ ա ծուրանց տոռնը, տըռնին քըմական ասըմ.— Շուտ ըրիք, տոռնը պըեց ըրիք, թա էչ պինքյս կը սպանիմ։

Տանը լոխ քոն իլած ըն ինըմ, տոռնը պըեց չըն անըմ։ Էտ կուճի գյուեղլա նի եկածը, էտ վեչը-փուչը մեյիդը տանըմ ա, քշա-քաշ ընելավ ղարադամին կըտերը, հուրթավը վըեր քըցըմ մըեչ կուա, ինքյը փախչըմ։

Էտ թըմփոցին յըրան լոխ եր ըն կըենըմ։ Գյուդուա ըն, թա ըղորթ-ըղորթ ինքյն ա ընգալ, մըեռալ։ Ըսկսըմ ըն լաց ինիլը։

Ընդրա սիրած կնեգյըն էլ չոր կաշվի պարկի փոխան ա կյենըմ, վըեր լաց իննելիս ծնգներին թխի, վըեր ծրենը լավ եր ինի, պեցուր ծրեն հանի։

Ամմա հըվաքված կընանիքը լոխ գյուդուա ըն, թա հուր պըեներ ա, հուր փանդըփըլեքյ ա՞, մարթը հո՞ւր խաչավ ա թաղվալ։ Էտ կընանեքյը լաց իննելիս, ծուրանց սաքյ ասելիս վախտը, ասըմ ըն.

— Հո՞ւ ըրա՞վ, հո՞ւ չըրա՞վ, պըրկըփոխան կընեգյն ըրա՞վ... Հու՞ ըրա՞վ, հո՞ւ չըրա՞վ, պըրկըփոխան կընեգյն ըրա՞՞՞վ...

www.naregatsi.org

7. ՋԱՆԱՎԱՐԸ

Ընձում ա, չընձում մին ջանավար։ Էս ջանավարը քյինըմ ա, քյինըմ, հասնըմ մին ծիլի, ասըմ.— Ա՛ ծի, քյըեզ կօտիմ։

Մին ասըմ ա։— Ինձ կարիլ չըս օտիմ՞, յըես կըճղակնի օնիմ, քացի կտա՞մ։

Էտ ջանավարը քյինըմ ա, քյինըմ, հասնըմ մին կյումաշի, ասըմ։ — Ա՛ կյումաշ, յըես քյըեզ կօտիմ։

— Կարիլ չըս օտի՞ս, եխատոտ ըմ, առաչ ինձ լըվաց, ետավ։

Էտ ջանավարը քյինըմ ա, քյինըմ, հասնըմ մին ծըմակ։ Ըտեղ նըստըմ ա, ինքյը ուրյան քընենքյ անըմ, ասըմ. «Ես պըտըհեցի մին ծիլի, ասից՝ դըռնաղնի օնիմ, ամմա մըղափուն լոխ կըերած պիտի, մինյակ դըռնաղնին թողած։ Յըես պըտըհեցի մին կյումաշի, թողած չըպիտի, կըերած պիտի, մինյակ կաշին թողա՞ծ։ Ընդրանա ետը յըես պըտըհեցի մին վըեխճարի ա՞խ, ա՞խ, եշած չպիտի, կըերած պիտի, աշկերս հրետան քյընա՞ց»։

Էտ վախտն էլ չոբանը ուրյան շըներավը էն ար խիլլա հեռու նըստած։ Չոբանը տրեսնըմ ա էտ դըռդոտված կյուլ-ջանավարին, թաքուն-թաքուն կյամ ա, հաքյվյան փըռնըմ, շըներն էլ մին ղոլան ըն յրա պըրծընըմ։

Էտ դաշրըմը կյուլն ասըմ ա.— Ա՛խ, էս հի՞նչ ըրի, տու մի ասիլ, վըեր խոսիլըն էլ ա ղըդըղա, խոսիլըն է՞, խոսիլը՞՞՞, հալա օտիլը չըհաննամը... խոսի՞լը...

www.naregatsi.org

8. ՕԺԱՎԸ

Մին մարթ քյընըմ ա ճռւր խըմի, տըեանըմ ա ճռւրը շատ ա ցորտ-ցորտ։

Ասըմ ա.— Ա ճռւր, էտ հի՞նչ սառնը ըս, էտ հի՞նչ օժավ ըս...

Էտ ճռւրըն ասըմ ա.— Թա օժավ ըմ, խե՞ յա երգյինքյը ինձանա ճռւր քաշըմ։

Էտ մարթն ասըմ ա.— Ա՛ երգյինքյ, էտ հի՞նչ օժավ ըս։

— Թա վրեր օժավ ըմ, խե՞ յա ինձանա թոռ եր տըեռնըմ։

— Ա՛ թոռ, էտ հիշ՞քան օժավ ըս։

— Թա վրեր օժավ ըմ, խե՞ յա ինձանա խոտը կընանչըմ։

— Ա՛ խոտ, էտ հիշքա՞ն օժավ ըս։

— Թա վրեր օժավ ըմ, խե՞ յա վրեխճարը ինձ օտըմ։

— Ա՛ վրեխճար, էտ ի՞նչ օժավ ըս։

— Թա վրեր օժավ ըմ, խե՞ յա ղասաբը ինձ մորթըմ։

— Ա՛ ղասաբ, էտ հի՞նչ օժավ ըս։

— Թա վրեր օժավ ըմ, խե՞ յա մոկնը կընգանըս շիրերը օտըմ։

— Ա՛ մոկնը, էտ հի՞նչ օժավ ըս։

— Թա վրեր օժավ ըմ, խե՞ յա կատուն ինձ օտըմ։

— Ա՛ կատու, էտ հի՞շքան օժավ ըս։

— Հա՛, օժավ ըմ, փափուկ տըեղի տա՞ր ըմ, մըկներին ահըն ըմ։

www.naregatsi.org

9. ԸՌՈՒՍԵՆ ՏԸՂԱՆ

Ինըմ ա, չինըմ մին թաքավեր։ Էտ թաքավերին տըղան հիվանդանըմ ա։ Թաքավերը մարթիքյ ա ղըրկըմ աշխարքիս էն ճընդերը, վեր պժիժկ ճարին, տեղ-դաւրմաեն ճարին, ուրաեն ջահիլ-ջիվան տըղին մին ճար անին։ Ամմա վեչ մինը ճարվըմ չի։

Թաքավերը խոսկ ա տամ համ ուրաեն ալագյոզ ախճիգյը տա, համ թաքավերութունին կեսը, ամմա էլհա ճարը-փիթիգյ անող չի տուա կյամ։

Մին օր թաքավերին կոշտըն ա կյամ մին մարթ, ասըմ.— Թաքավերը ապրած կենա, յըես դեղը գյուդում ըմ, տըեղը գյուդում չըմ։

Թաքավերը մին ուրախանըմ ա, մին կըզնըվըմ, ասըմ.— Դե շուտ ըրա ասի, հո՞ւնց թաւ դեղը գյուդում ըմ, տըեղը գյուդումը չը՞մ։

Էտ մարթըն ասըմ ա.— Դեղը էն ա մին ըռուս տըղի մըտանու մեչի, թա կարիքյ էտ մըտանին պերիք, քըցիք ճիրին մեչը, ընդրանավ էտ տըղին լըղըցնիք, հիվանդութունը անց ա կըենելու, լիվընաւլու յա, թա կարիքյ վեչ, չէ՛։ Էտ ըռուս տըղին հեռու տեղ բեդմա քիթնիք։

Թաքավերը ուրաեն մարթկանցան ղարկըմ ա, ամմա էտ ըռուս տըղին քըթենալը աճողվըմ չի։

Էն վախտը թաքավերին ախճիգյը ասըմ ա.— Ա՛ հաւր, ինձ մըհար մին ճոխտ տըղամարթի չաքյմա կարիլ տո, տըղամարթի շորեր կարիլ տո, զենքը-զըրահ պադրաստիլ տո, մին ծի տո, վեր վեչ մինը նատած չինի, մին էլ մին ղամշի տո, վեր վեչ մինը պընըցը-

www.naregatsi.org

րած չինի, մին էլ մին պուճուր իմաստուն շոն տո, յրես կըքյինիմ պերիմ էտ մըտանին։

Հաւրըն ասըմ ա.— Կարիլ չըս, կըքյինիս կըլնխըտ բադի տաս։

Ախճիգյը կոխկը հըստըցնըմ ա, քյինըմ։

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խրեգյ ա քյինըմ, շատ նան խրեգյը աստուծ կը գյիդա, հըսնըմ ա մին տան։ Էտ տանը տոռնը թակըմ ա։ Տոռնը պեց ա անըմ մին պառավ կընեգյ, մին էլ ընդրա տըղան՝ մին ըռուս տըղա։

Էտ ախճիգյը տըեսնըմ ա, վեր էտ ըռուս տըղան ուրյան շատ ա եշըմ, ուրյան կյեղեցկոթունան հայիլ-մայիլ ա մընացալ, ամմա վեր ծրեռքերին ա եշըմ, ծրեռքերը ըխճըկա յա, շորերին ա եշըմ, շորերը տըղի յա։

Էտ ըռուս տըղան ուրյան մորըն անա հըրցնըմ ա, ասըմ.

— Մամա, նա նըման ա ըխճըկա,
Ծրեռքը նան վրեննը ըխճըկա,
Ասի տրեսնամ, հու՞ վա նա։

Մարըն ասըմ ա.— Ա՛ վերթի, մին մաղ վարթ քաղի, տար դիմացը, վրեննին տակին փըռի, վեր միչև ուտուբանա ճըլլորի, ախճիգյ ա, վեր ճըլլորի թրոմոշկի վեչ, տըղա յա։

Ըռուս տըղան իտի էլ անըմ ա։

Թաքավերին ախճիգյը ուրյան պուճուր, իմաստուն շանն անա հըրցընըմ ա, թա հի՞նչ անի, էտ շոնը մարթու լուզվով ասըմ ա, «Քըշերավ շուտ եր կըկենաս, թրոամած թրոմոշկած վարթերը տեն կածիս, տեղը թաղա վարթեր քաղիս, վրեններիտ տակին փըռիս, ամմա կոխ չի տաս»։ Թաքավերին ախճիգյը իտի էլ անըմ ա։

Քըշերավ մարըտըղա եր ըն կըենըմ, տրեսնըմ վարթերը ճըլլորալ չըն, ուրեմը տըղա յա։

Էտ ըռուս տըղան էլհա հըվատըմ չի, մորըն ասըմ ա.

— Մա՛մա, նա նըման ա ըխճըկա,
Ծրեռքը-վրեննը ըխճըկա,
Ասի տրեսնամ, հո՞ւվա նա...

Մարըն ասըմ ա.— Մին տեղ վրերսի քյինացիք, թա քյըղանա շատ վրերս ըրավ, տըղա յա, թա քյըղանա խըրեգյ վրերս ըրավ, ախճիգյ ա։

Ըտրանք քյինըմ ըն ծըմակը, ըսկըսըմ ըն վրերս անիլը։ Տըղան ըխճըկանան շատ ա վրերս անըմ, ամմա էն պուճուր շոնը թաքուն

www.naregatsi.org

էն տըղին ըրած վըերսը քաշ ա տամ, պերըմ էտ ըխճըկանը վըերսին յրան տինըմ։ Ըխճըկանը վըերսը շըտանըմ ա, տըղինը՝ խրեգյանըմ։ Տըղան տըեսնըմ ա, վեր ուրան վըերսը խրեգյ ա, ըխճըկանը վըերսը՝ շատ, բեքյեփանըմ ա։ Իտի բեքյեփ կյամ ա տոն, մորըն ասըմ.

— Մա՛մա, ախճիգյ ա, ախճիգյ ա,
Վարթ նան ծաղկի փընչիգյ ա,
Ծըեռքը նան վըեննը ըխճըկա,
Մա՛մա, ասի հո՞ւ վա նա...

Մարը մըտածըմ ա մըտածըմ, ասըմ. — Քյընացիք մինտեղ համամ, ընդեղ կը տեսնաս, թա հու վա։

Պուճուր շոնը թաքավերին ըխճըկանը ասըմ ա. «Վեր համամ քյինիքյ, յըես ծիյանքը կըկըռվըցնիմ, տու տունս կըկյաս ծիյին կապը ետ քաշիս, յրան նստիս փախչիս, էլ օրիշ ճար չի կա»։

Էտ ըռուս տըղան ըխճըկանը ասըմ ա.— Քյինինք համամ։

Ախճիգյըն ասում ա.— Հի՞նչ կինի։

Քյինըմ ըն։ Տըղան շորերը հանըմ ա, ըսկսըմ լըղանալը։ Ախճիգյը շորերը հանըմ չի, ամմա ինդի յա նշանց տամ, թա յավաշ-յավաշ վըննամանին հանըմ ա, կոճակնին պեց ա թողըմ։

Էտ ըռուս տըղին մաննին մըտանին ախճիգյը տըեսնըմ ա, ասըմ.

— Ա՛խ, հի՞նչ լավ մըտանի յա։

Էտ ըռուս տըղան մաննան մըտանին հանըմ ա, տամ ուրան։ Ախճիգյը մըտանին մաննըն ա քըցըմ, ասըմ.— Հաալա տըես հինչ-քա՞ն ա սազըմ։

Ըռուս տըղան ասըմ ա.— Թա քյըեզ տուր ա կյամ, քյըեզ ինի։

Էտ վախտը տունումը ծիյանքը կըռեվ ըն անըմ։ Ախճիգյը ասըմ ա. — Դե լավ, քանի վեր հալա իմ շորերըս հանալ չը՛մ, քյինիմ ծիյանցը հաղաղցընիմ։ Թաքավերին ախճիգյը համամատ տունս ա կյամ, ծին նըստըմ, շոնն էլ յոր օնըմ, փախչըմ մին բաշ ուրան հորը պալատը։

Հաալա ճանապարին, խաբարը քյինըմ ա թաքավերին, թա ախճիգյըտ կյամ ա։

Թաքավերը մեծ թանթանավ, մեծ հանդեսավ ընդրա առաչըն ա տունս կյամ։ Տանըմ պալատը։ Մըտանին քըցըմ ըն ճըիրին մեչը, էտ ճիրավը թաքավերին հիվանդ տըղին լըղցնըմ։

Էտ տըղան լավանըմ ա։

Մեծ ուրխոթուն ըն անըմ, ղոնախլըղնի, քյեփեր։

Ըռուս տըղան ուրան մին լավ ավլավը թակած, կյարմուր կը-

www.naregatsi.org

ծրպուղուն տրեռած, համաման տունա ա կյամ, տրեսնըմ ախճիգյը փախալ ա։ Կյամ ա մորը կոշտը ասըմ.

— Մա՛մա, ախճիգյ ա,
Ախճիգյ ա, վարթի փընչիկ ա,
Ծրեռքը-վրեննը ըխճըկա,
Ասի՛, տեսնամ հո՞ւ վա նա։

Մարըտըղա խոսկը մին ըն անըմ, վեր տըղան քյինի էտ ըխճըկանը ճարի։

Էտ ըռուս տըղան ուրյան զենքը, զըրահը կապըմ ա, ծի նըստըմ, հղե ինըմ։

Շատ ա քյինըմ, թա խրեգյ ա քյինըմ, շատը նան խրեգյը աստուծ կըգյիդա, հրսնըմ ա համին էտ թաքավերին պալատը։ Տոռնը թակըմ ա։ Հարուախճիգյ քյինըմ ըն տոռնը պեց անըմ, տրեսնըմ էտ ըռուս տըղան ա։

Ախճիգյըն ասըմ ա.— Ա՛ հար, էս համին էն ըռուս տըղան ա, վեր մըտանին պերալ ըմ։

Թաքավերը քանի վեր խոսկ ար տըվալ, վեր հուվեր ուրյան տըղին լըվըցնի, համ ախճիգյըն ա տալու, համ էլ թաքավերութունին կեսը, իտի էլ անըմ ա, ուրյան խոսկը տափը չի քըցըմ։

Պերըմ ա օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ա անըմ։

Ընդրանք հրսին ուրյանց մուրազին, տուք էլ հրսնիքյ ծեր մուրազին։

Տրգյինքան իրեք կյարմուր, փափուկ, քախծըր խնձոր ա եր ընգնըմ. մինը՝ ասողին, մինը՝ կյրողին, մինն էլ՝ թախտին յրա թեքյ ընգած քոն ինողին։



www.naregatsi.org

10. ԽԵԼՔԻ ՅԸՄ ԵԿԱ՛Լ

Ինըմ ա, չինըմ մին հարուստ մարթ։ էտ հարուստ մարթին հազարներավ տավար-վրեխճար ա ինըմ, ամմա ինքյը շատ սկուպոյ ա ինըմ։

Մին հետ էտ հարուստ մարթը կըլխըցավան ընգնըմ ա։ Տա քյինըմ ա հաքյիմին կոշտը։

Հաքյիմը ըտրան ասըմ ա, վեր օրական երկու-իրեք վրեխճար մորթի, հըղողը օտի։

Էտ մարթը սկըպոյ ինելին դաժրդան ունրան վրեխճարներան մորթում չի, խուրջինը քըցըմ ա ծիյին յրան, ինքյն էլ ծիյին նըստըմ, քյինըմ մոտիկ քաղաքը՝ Շուշի, ընդեղ ղասաբան վրեխճարի կլոխ առնի, պերի տոն, օտի։

Վեր կյամ ա մըես ծախողին կոշտը, հըրցընըմ ա, ասըմ.— Ա՛յ ախպեր, վրեխճարի կըլոխ օնի՞ք ծախու, կյինը հիշքա՞ն ա։

Ղասաբըն ասըմ ա.— Խե՞ չօ՞նինք, կըլոխ էլ օնինք, մըես էլ օնինք, վրեխճարին կըլոխը երեսուն կապեկ ա՛։

Էտ հարուստըն ասըմ ա.— Բո՛, բո՛ բո՛, երեսուն կապե՞կ, էտ հի՞նչ թանգյ ա։

— Թանգյ ա՛, քյինի հըրեվան քաղաքամասը, ընդեղ իժան ա, մին կըլոխը քըսան կապեկ ա։

Քըսան կապեկին անըմը վեր լըսըմ ա, էտ հարուստ մարթը ծին քըշըմ ա բիդի մոտիկ քաղաքամասը, թուշ քյինըմ մըես ծախո-

www.naregatsi.org

ղին կոշտը, տրեանըմ մըեա ծախողը էն ա կըռնեըը եր քաշած, վըեխ-
ճար ա մաշկըմ։

Ասըմ ա.—Պա՛րով, ա՛յ ախպերացու, քանի յըս ծախըմ վըեխ-
ճարին կըլնխը։

Ղասաբըն ասըմ ա.— Ասսծու պարին, ա՛յ ըխպըրացու, վըեխ-
ճարին կըլնխը քըսան կապեկ ա։

Էտ հարուստըն ասըմ ա.— Պա՜, բա՜, բա՜, բա՜, քըսան կապեկ
վըեխճարի կըլնխ կինի, թանգ ա։

Մըեա ծախող ղասաբը ասըմ ա.— Դե վեր թանգ ա, քյինի
մըզանա մոտի քաղաքը, ղասաբխանան, ընդեղ տասը կապեկ ա։

Էտ հարուստ մարթը վեր տասը կապեկին անըմը լըսըմ ա,
ծիյին կըլնխը շոռ ա տամ բիդի էն մին մոտիկ ղասաբխանան։

Վերչը ամաչ ա կյամ, մին վըեխճարի կըլնխ առնի։ Առնըմ ա,
քըցըմ խուրջինը, խուրջինըն էլ քըցըմ ծիյին յրան, «այ դըլեյ-դըլեյ»
անելավ ընգնըմ հըղեն։ Ուրուգյունը կարըմ չի տոն հըսնի, մըթնըմ
ա, մին տան ղոնաղ ա ինըմ, մին հարուստ կընգա տան։

Էտ հարուստ կընեգյը ըտրան տանըմ ա տոն, պենովի-ծալովի
հացին ըստոլին քըշտին նըստըցնըմ, ամմեն ջուռա օտելի պեններ,
խըմելի պեններավ ըստոլը սարքըմ։ Մին քանի մունուտանը ետը
մին ղաշանգյ, ջահիլ տըղա էլ ա կյամ, պարով տամ, էտ ըստոլին
քըշտին նըստըմ։ Էտ կընեգյըն էլ, վեր ըստոլը սարքըմ ա, պըրծը-
նըմ ինքյըն էլ ա կյամ նըստըմ, էտ հարուստ մարթին հըրցնըմ,
թա՞ քաղաքըմը հո՞ւ օնի, հո՞ւ չօնի, հո՞ւ վա՞։

Էտ մարթը ասըմ ա. — Քաղաքըմը պարեկամ օնիմ, քյեցալ
ըմ տրեանամ։

Վեր լոխ նըստըմ ըն, էտ կընեգյը էտ ջահիլ տղին անա հըրցը-
նըմ ա.— Օտինք, թակինք, թա՞ թակինք, օտինք։

Էտ հարուստ մարթին ջանը ահ ա ընգնըմ, գյուդունմ ա, թա՞
ուրան ըն թակելու։

Էտ ջահիլ տըղան ասըմ ա.— Թակինք, ետավ օտինք։— Էտ
վեր իտի ասից, էտ կընեգյը եր կացավ, քյինից էն մին օթախը ըն-
դըղան մին խուրջին պերավ, մին մարթի կըլնխ մեչին, հանից, ինքյ
նան էն ջահիլ տըղան ամեգյը մին փեդ եր կալած, սկսեցին համ թա-
կիլը, համ ուշունց տալը։ Լոխճան շատ էտ կընեգյըն ար թակըմ,
ուշունց տամ։

Վեր թակեցին, պըրծին, կըլնխը էլհա տիրին խուրջինին մեչին,
տարին էն մին օթախը, ուրանք դինջ եկին նըստեցին, հաց կըերին։
Կըերին, խըմեցին, ըստոլը հըվըրքեցին։

www.naregatsi.org

էտ ղոնաղ մարթը հըրցրավ, ասից.— էն հի՞նչ կըլնի ար, վեր տուք թակեցիք։

Կընեգյը ըսկսից նաղլ անիլը։ Ասից.— Տըեսնըմ ըս էս շենքը, էս օթախնին։

Էտ հարուստ ղոնաղը կըլխավ ըրավ, ասից.— Տըեսնըմ ըմ։

Էտ կընեգյը թա՛.— Էս շենքը իմ մարթիս ար պատկանըմ, նա շատ մըեծ հարըստոթուն օներ, տավարի իլխի, վեխճարի սուրու, ամմա ինքյը սկուպոյ ար, մին կապեկի հետի տըղտաղըմ ար։ Հա՛ լավ լըսի, մարթըս միշտ էն ար ինըմ հեյվաններին քըշտին, ամմա յըես, էս տըղան տըեսնըմ ը՞ս, ըստրա նըհետ քյեփ ի անըմ։

Վերչը մարթըս հիվընդացավ, մըեռավ։ Ընդրա մահը ինձ հետի մին ուրխոթուն ար։ Ընդրա մահանը ետը էս հարուստոթունը լոխ ինձ մընաց։ Ցըես իմ էս սիրականիս նըհետ փըսըկվեցի։ Մըհեկ օտըմ ընք, խըմըմ ընդրա հարուստոթունը, ընդրա կըլոխըն էլ կըտրած պահըմ ընք, ամմեն հաց օտելից առաչ մին լավ թակըմ ընք, հենց ընդրա հետի, վեր իմ գյանքըս էլ ուրան նըման սև ար անց կըցնըմ, հենց ընդրա հետի, վեր խե՞ չար շուտ մըեռնըմ, իմ ջանըս էլ ազատ անըմ, քանի վեր մըեռնելի մարթ ար։

Էտ հարուստ մարթը, վեր էտ լըսըմ ա, ուրխանըմ ա, վեր ասալ չի, թա՛ հինչի հետի յա քաղաք քյեցալ, հինչի հետի յա իտի տըռնըտուռնը ընգալ։

Լհա՛ վեր մին խըրեզյ լուսացավ, ծին կյուման տուս քաշից, խուրջինը եր կալավ, քըցից ծիյավը ըտըղան քյինից։

Ճընապարին նա էտ առած վըեխճարի կըլոխը թող ըրավ, տեն քըցից, թա՛.— Գյոռըն չաթտասըն-փըլանքյաս, էլհա սկուպոյութուն կանի՞ս։— Ասից, ծին թուշ տոն քըշից։

Քյինից կանչից ուրան կըլխավեր չոբանին, ասից.— Քյինի էս սրհաթըս վըեխճարին սուրույան իրեք մըեծ ղոչ ճոկի պեր, վեր մորթինքյ։

Վեր չոբանը քյինից պերի, էտ մարթին կընեգյըն ասըմ ա.— Ա՛ մարթ, էտ հի՞նչ ա պըտահալ, բա՛լքյա՛ս կյիժվա՞լ ըս։ Էս ա քանի տարի յա, տու իտի պեն չըս ըրալ, էս ա էսքան տարի յա մունք մինտեղ ապրըմ ընք, տու էլ էտքան հարըստոթունի տա՛ր, մին հետ ասալ չըս մին իտի պե՞ն։ Մեր կըերած մըեսը էն ա իլա՛լ, վեր տու բազարան ամիսը մին հետ, էրկու հետ կես կիլո մըես ըս պերալ, իտի էլ միշև մըհեկ ապրալ ընք։

Մարթըն ասըմ ա.— Ա՛յ կընեգյ, տու ինձ ասըմ ըս կյիժվա՞լ

www.naregatsi.org

ըմ, ամմա կյիժվալ չըմ, լափ լեավ խելքի յըմ եկա՜լ։ Սկուպոյ մարթը շուտ կըմեռնի, մըռնելանը եսըն էլ ուշունց կըտան, կըլոխը թակ կօտի, կասին գյոռըտ խտի-ինդի՜...

Կընեգյը էտ վըեր լըսից, օրախ-օրախ մարթին վիզավը փըթաթվից ասից.— Ա՛ մարթ, յանի դուզ ը՞ս ասըմ, թա՜ սոտ։

— Սոտ ասողին հաըը, մարը... Սոտ ասողին օխտը պորտը... սոտ ասողը խավար-խասխս մընա, սոտ ասողը խըրըվ-խարավ կյա, աշկը պըլթա, ղարաչի տըեռնա, սոտ ասողին խտինը-ինդինը։ Ասըմ ա պըրծընըմ կընգանը խըտտըմ, պըչպըչորըմ։

Կընեգյըն ասըմ ա.— Մըհեկ վեր տըեսնըմ ըմ խելքի յըս եկալ, իմ ջանըս ջիգյարըս, իմ համեղը՞ս, իմ պըռթպըռթոտ շո՞նըս։

www.naregatsi.org

11. ՍԸԵՐՏԸ ՔԱՐ ՄՐԱՔՈՒՐԸ

Մին քանե դար ըստրանա առաջ մին քղաքու թաքավեր ուզիս ա, վեր մին կարմունջ շինի։ Էրկու հետ էտ կարմունջը շինիս ա, լհա՜ վեր կյաս ա, թա պրծնելավ տըեռնա, պարան ա կյաս։

Իրեքինջի դռնումը շինիս տեղը մին դռրվիշ ա կյաս, թա հըղցավը անց կենա, էտ թաքավերը փռնես ա ըտրան, թա.— Ա՛սե, տըեսնամ, շինած կարմունջս խե՞ յա պարան կյաս, հո՞ւնց անիմ, վեր իրեքինջի դռնումն էլ չի պարան կյա։

Էտ դռրվիշը ըսես ա.— Կարմունջը վեր շինիս, հաչլա՜ կըեսըմը պատը քշիս տեղը մին ազա՜փ ախճիգյ կտնիս պատըմը, հեմնիս, պարան չի կյլական։

Թաքավերը ըտրան լավ պադեվ ա ընես, հղե տնիս։

Ըրռնգյռունը կյաս ա, ինքյը ռւրռան ըսես. «Ինձ հո՞ւ ախճիգյ կտա, թա՝ տար պատըմը տիր»։ Ինքյը-ինքյը մտծելան ետը, ըսես ա. «Պիրիմ մին ժողով անիմ, տըեսնամ ժողովուրթը հի՞նչ կասե»։

Պիրիս ա ռւրռան երգյիրեն ժողովուրթը հվըքես, լոխ պըտմես, ետնան ըսես.— Հու վեր ինձ մին ազա՜փ ախճիգյ տա, մին կարաս վրեսկե յըմ տլական ընդրան։

Էն վախտը քղաքումը մին շատ ղաշանգյ ախճիգյ ա ինիս։ Տա եթիմ ա ինիս, ըտրան պհես ա ինիս ռւրռան մրաքուրը։

Էտ վեր թաքավերեն խոսկը ըսկընաս ա, ինքյը ռւրռան ըսես ա. — Բոլ ա հիշքան պահալ ըմ իմ քվոր եթիմը, տանիմ տամ թաքա-

www.naregatsi.org

վերեն, համ ուրան պենը ամաչ կըկյա, համ էլ յըես կըհրուստանամ։ Բոլ ա հիշքան քյասիբ ըմ կացալ։

Էքսը քվորը ախճիգյը յոր ա օնես, տնես տաս թաքավերեն, վրեսկեն յոր օնես, կյաս։

Թաքավերը էտ ըխճըկանը տինիս ա պատըմը։ Ըսկսես ըն պատը հեմնել տալը։ Վեր միչև էտ ըխճըկանը ծոյները հիմնիս ըն, ըտրա մրաքուրը կյաս ա, թա տեսնա հունց ըն ընես, էտ ախճիգյը, վեր տսնաս ա ուրան մրաքվերը, ըսես ա.—Ա՛ մրաքուր, ա՛ մրաքուր շըրեցեն, միչև ծոյներս քըրեցեն, խղճա ինձ, ըզադե եթիմիտ։

Մրաքուրը ըսես ա.— Վեչինչ բալա՛, թող շարի՛ն, միչև ծոյներտ թող քարի՛ն, աստված էնքան էլ անխեղճ չի, եթիմներին կըզադե։

Էտ ախճիգյը սուս ա ընես, միչև կլոխը հիմնես ըն։ Մրաքուրը մին էլ ա կյաս, տըեսնա։ Էտ ախճիգյը, վեր մըրաքվերը տսնաս ա, ըսես ա.— Ա՛ մրաքուր, ա՛ մրաքուր, շրեցեն, միչև կլոխս քրեցեն, օրիշ պեն չըմ ըսես քյըեզ, մինաւկ, հիբը պատը պրծնին, քաշ տեռնաս, կյաս, վեղրտ դբի ինձ մեկնես, ղաչանք անես, յըես էլ տըեսնամ դինջ նի մըննիմ կյրեզման։

Պատը, վեր հիմնիս ըն, պրծնես, կարմունջը էլ պարան չի կյաս։ Էրկու օրանը ետը, վեր թաքավերը ուզիս ա թա ղոնախլըղ սարքե, ուրխոթուն անե, վեր կարմունջը պրծալ ա, սաղ սըլըմաթ, մարթ ա ղրկես, թա.— Քյեցեքյ էն ըխճկանը մըրաքվերն էլ ըսեցեքյ կյաս։

Քյնիս ըն, թա ասին, տսնաս ըն մրաքուրը քաշ տըեռած, թռչից, քյեցավ կրմունջեն պատեն վեր եկավ, սկսից կըրկռալը։ Ըն վխտան միչև մհենգյ էլ, քաշերը հիշտեղ վրեննն ըն կնաս, վըզըրնեն ըրկընցընես ըն, ետնան կռկռաս։

www.naregatsi.org

12. ՄՈՐԸ ԿՈՌՆԸ

Մըհետե ինիս ա, չինիս մին քյասիբ մարթ։

Ըզետ շատ տիժար ա ինիս ըպրես։ Ըտրան միչև քսանըհենգյ տրեկանը խոխա չի ինիս։

Ախրը քսանըվեց տրեկանըմը ըտրա կնեգյը ճոխտակ խոխա յա պիրիս, մինը՝ ջանլու, էն մինը՝ մաշվածե կնեգյը, վեր խոխան պիրիս ա, տասնիրեք օր կնաս ա, մոնես։

Մարթը շատ ա տխրվես, քյիս ա ուրիանց շենան մոտիկ մին խորթ կնեգյ պիրիս։

Էտ կնեգյը խոխոցը նհետ բըրըշիս չի։ Հաըը, վեր տսնաս ա պենին թահրը իտի յա, շատ ա մտածես, թա խոխեքյը հո՞ւնց կանեն։ Էտ հալա վեր իտի յա, ետնան հի՞նչ կինի։

Քյիս ա հընգյիստարան, ուրան մըեռած կնգանը կոռնը թաքուն կտրես, մին մեծ փլասըմ փեթես, կըրես, պիրիս։

Ըտրանա ետը, կնգանը ըսես ա.— Վեր խոխոցը թակիս, համին էս փլասավը կթակիս։

Էտ կնեգյըտ հինչքան խոխոցը թըկես ա, ընդրանք էնքան ըրդամ ըն ընես։

Մին օր մարթան թաքուն էտ կնեգյը շորը յոր ա ունես, տնես տուս, պինաս, տսնաս մին կտրած կոռնը։

Բիրդան մաննը կծես ա։ Ըտրանա ետը, միշտ ուրան ծեռքավն ա թակես։ Խոխերքը վեր տսնաս ըն շատ ա ուրանց ղընամիշ ընես, փախչիս ըն։

www.naregatsi.org

Քյիս ըն, քյիս, քյիս ըն մին մթեն ժամակ ընգնես։ Տրսնաս ըն հեն ա մին հրեռե տեղ մին պեն իշեղ-իշեղ ընես։ Ըտրա բուրջը յոր ըն՝ ունես քյիս։

Քյիս ըն, քյիս, տսնաս մին բաբաթ կրակ ա, ընդրա կոխկեն մարթ չիկա։ Կրակեն կոխկեն նստես ըն։ Հաբը մին էրկու ճաթ տված ա ինիս, մինը թքցնիս ըն, հոռ ընես։ Մինն էլ, վեր ուզիս ըն, թա թըքցրնեն, տրսնաս ըն հեն ա մին լխլխկոց ա կյաս։

Նշիս ըն, տրսնաս հեն ա մին ղուրուլթու յա տուն կյաս։

Նշիս ըն տրսնաս մին մըեծ պեն ա, ամմա աշկերը փլստրատեն ա տաս։

Վեր մուտրնաս ա, տսնաս ըն վեր օշափ ա։

Օշափ, հի՞նչ օշափ, մին զրեռ, մին սար։ Օշափը վեր մուտրնաս ա, աշկերը չռես, խոխերքը հրլվիս ըն։ Մուտրնաս ա էլհա ետ քշվիս, ետնան քյիս էրկու եղնը կես ընիս, պիրիս ըտեղ վեր տինիս։

Ըսես ա.— Յրկե քշերեն մին քյըսիբի տոն ըմ քանդալ։ Հետը պահալ ըմ, վեր եղները տուն ա ըրալ, քյեցալ ըմ, փխցրալ պերալ ճըրղոտալ։ Մհենգյ, թա կարիքյ ինձ նըրհետ բաշա-բաշ օտիքյ, ծրեզ սաղ-սալամաթ թող ըմ ընական, ըշտեղ օզում ըք, քյեցեքյ, թա օտիքյ վեչ, ծրեզ բդի օտիմ։

Էս խոսցը մինը քյունհի յա ինիս, ըսես ա.— Օտիլ բիդիմ։

Բուդեն նեստա յա կնաս, կրես չի մաարաթ անց կըցընե։ Էս մինը, վեր բուդերը յոր ա ունես, թա օտե, թաքուն կլխավը թող ա ընես, քցես դալդան։ Օշափը, վեր տսնաս ա պենին թահրը հինշումն ա, ժուլիգյին թունլ ա ընես։ Քյունհունն յոր ունես, քշտեն պհես, վեր քյունքունցնե, ետնան օտե։ Ժուլիգյը քյիս ա կյողլը կնաս։ Էն մինն էլ խիլլի վախտ կնաս ա, գյիրավան քցես, ճղես։ Քյիս ըն, քյիս, քյիս տսնաս հղենի ավերակ տներ, շինոթունի։

Կյաս ըն, կյաս մին վանք ա պտհես, նի յըն մննես մաչը, տսնաս պատեն մաչան մինն ըսես ա. — Վրեղու ծնունդնի՞, թըքըվերեն ըխճըկերքը կորեն, քյեցեն։ Խե՞ տուրուր չըք կյաս։

Տղերքյը մնաս ըն մաթ մնացած։ Վխելնան նըրհետ տուն ըն կյաս, տսնաս էրկու ղաշնագյ ախճիգյ, վեր լհա ըրեքյնակեն ըսես ըն. — Տեն կաց, մունք ընք լուա տաս։

Ըտրանք վազ ըն տաս ըտրանց հետան, վեր փռնին։ Միչև հրսնելը ըխճկերանցը մինը հրլիս ա, պրզես, ըրվաս չի՞, ըսես ա՝ «Վեչ ըլալ ըմ, վեչ էլ կինիմ»։ Տղերքյը քյիս ըն տսնաս, հեն ա էն մինը ծվծվաս։

www.naregatsi.org

Տղերքանը մինը ըսես ա.—Ա՛ քուր, պա հինչ ա՞ պտահալ, հի՞նչ չի պտահալ։

Ըսես ա.— Դե իմ քուր ընգալ ա վերը։

Էտ վախտտ տըսնաս ա մին օխծ, ամմա վեր օխծ ասիմ մեխկ ա։ Մին կյերան, համ հրկըհակու ընելավ, համ փշըրցնելավ կյաս ա, նի մննես վերը։ Էտ ախճիգյըտ առուե մնաս ա ցմաքված։ Փոխըփեշ-մեն ետ ա տունաս դիբի ուրենց տոն, հորն էլ ըսես չի։ Էտ տըղերքյը քյիս ըն թաքավերեն պալատը ճըրես, նի մննես։

Էտ տըղորցը մինը ըսես ա.— Թաքավերն ապրած կենա, հի՞նչ կտաս ախճիգյըտ ճարիմ։

Թաքավերն ըսես ա.— Թաքավերոթունես կեսը քյըեզ կտամ։

Էտ տղան քյիս ա մին էրկան քյանդիր ինքյ ունես, կյաս վերեն կլոխը, հանցու վեր օխծը տունս կյա, ինքյը նի մըննե, ըխճկանը ըզադե։ Ամմա վխես ա, նի չի մըննես։ Էս մին ախպերը քյանդիրը պորտան կպես ա, նի մննես, ըխճկանը նեստա կպես, էտ վերին քշտի վըխըլկոտ ախպերը տունս ա պիրիս։ Ամմա ուրեն ախպորը տունս չի ունես, վերըմըն ա թուղես։ Թաքավերը մոլհաթ ա ընես, վեր ըխճկանը տա ըտրան։

Ախճիգյը թաքուն կնչես ա ուրեն ծրոռտանցը, վեր քյինին էն տղեն վերան տունս օնին։ Գյադեքյը քյիս ըն տունս ունես, պիրիս։ Թաքավերեն ախճիգյը ընդրան նհետ փսըկվես ա։

Ընդրանա ետը փիս ախպորը դիվանը ընես ըն, ուրենք էլ լավ ըպրես։ Ժողովուրթը ըսես ա. «Լավ թունը վեր կյետն էլ քցիս, կորչել չի»։

www.naregatsi.org

13. ԱՌԱՆՑ ՀՈՐԸ ՆԱՆ ՄՈՐԸ ՊԱՉԱԾ ԱԽՃԻԳՅԸ

Ինիս ա, չինիս մին թաքավեր։ Ըտրան ինիս ա մին տղա, էտ տըղին փըսըրկվելի վայդան ա ինիս։

Հայրը ըսես ա.— Ա՛ բալա, փըսըրկվելի վայդատ ա, եք մին ախճիգյ օզի, փսակվես։

Տղան ըսես ա.— Յըես պիտի հանց ախճիգյ օզիմ, վեր վեչ հայր ինի պաչած, վրեչ մար։— Ըսես ա, եր կընաս, քյինիս։

Քյինիս ա, քյինիս, ուրուդյունը մին պառավ կընգա տան ղոնաղ ընգնես։ Էտ տղան լոխ էտ տանը նաղլ ա ընես։

Էտ կնեգյը ըսես ա.— Էտ պըճնը շատ ժեր աս։ Ուտուբանան եր կը կենաս, քյինիս, հրղեցը քյըեզ ջըհլական ա մին բաղ, մաչին էրկու նոռնի ծառ։ Ամեն մին ծառան մինը կկտրիս։ Քյըեզ ըսըլական ըն. «Մինն էլ կըտրի, մինն էլ, մինն էլ կըտրի», ամմա կտրիս վեչ։ Էտ նոռնը յոր կօնիս քյինիս։ Առաչըտ ճուր ա կյըլական։ Էտ նոռնը վրեր ճուր-ճուր անե, մինը կը կըտրիս, քըցիս ճուրը։

Էտ տղան միկա վրեսկե յա տաս պռավեն, ինքը քյինիս։ Քյինիս ա, քյինիս, պըտրհես մին բաղու։ Երկու նոռն ա կտրես, տինիս ջուբումը էլհա քյինիս։ Տըսնաս ա մին կուճի կյես։ Ըտեղ էտ նոռնը ճուր-ճուր ա ընես։ Էտ տղան նոռնը կտրես ա, քցիս ճուրը։ Ամմա ճուրը ցմըքես աս։ Էրկունջի նոռնը հայլա իտի մնաս ա ջուբումը։ Էտ տղան մըտրծես ա, ըսես ա, թա մնաս ա մին նոռնը, էս հի՞նչ պիտի անիմ։ Տըսնաս ա, վեր էլա մին ըխպըրի ճուր եկավ։ Դաստի էտ նոռնը կտրես ա քցիս ճուրը։ Տըսնաս ա մին կյեռթնուկ տուս

www.naregatsi.org

եկավ։ Վերչը էտ տղեն վրեննը կացած տրեղը էտ կյեռքնուկը մին հուրու փարի ախճիգյ ա տրռնաս։

Ըտեղ ախճիգյը ըսես ա.— Յրես ըստեղ կենամ, տու քյինի սազանդար երկալ եք, ընծելավ քյնինքյ ծեր տոն։

Տղան ըսես ա.— Փախչիս վրեչ հա՞։ Ըտրա հետե ախճիգյը սանդըրը տունս ա ունես, մին չինարի ծառ ա տրռնաս ըխպրեն քշտեն, էտ ախճիգյը վեր ըսես ա՝ քըշաց, քըշընաս ա, պիցիրաց, պիցրընա՛ս ա։

Էտ ախճիգյը՝ վրեր ծառը քըշընաս ա, եր ա ինիս ծառեն էն երի ճրեղնը։ Տղան հղե յա ինիս ուրանց տոն։ Թաքավերեն տանը ծառան, մին կյրեչ ախճիգյ, կյաս ա ճուրը, տրսնաս էտ ըխճկանը շափաղը տված ճիրին։ Դաստի գյիդաս ա, վեր էտ էն ախճիգյն ա։

Էտ ծառան սիրիս ա ինըմ թաքավերեն տրղեն։ Էտ ըխճկանն ըսես ա.— Քըշաց, յրես էլ կյամ կոշտա։

Էտ հրրեղան ախճիգյը ծառը քըշըցնես ա, ծառան էլ ա քինիս կոշտը, ըսես.— Դե մին շորերդ ինձ տո, տրեսնամ ինձ յրա կյաս ա։

Լհա կյընաս ա, պրծնես, էտ հրրեղան ըխճկանը կուփի տաս, քցիս ըխպըրին նուվը։ Էտ ախճիգյը ճրին իրեսեն մին փունջ մընեշագյ ա տրռնաս։ Թաքավերեն տղան զուռնա-ղըվալավ կյաս ա, տրսնաս մին փունջ մընեշագյ ճրին իրեսին, դաստի յոր ունես, տինիս ջուբռամը։

Կյաս ըն էտ չինարուն հինչքան ըսես ըն՝ քըշաց, չինարին քըշընաս չի, թա էտ ախճիգյը եր կյա։ Պիրիս ըն ծառը կտրես։ Թաքավերեն տղեն աղուն կթես ա, գյիդաս ա, վեր ուրան տրեսած ախճիգյը չի՞։ Տրնես ըն տոն։

Մին քանի օրանը ետը էտ առաչվա ծառան, վրեր էտ տրղեն կընեգյըն ա տրեռալ, մարթին ծեռքան մընեշակեն փոնջը ինքյ ա ունես քցիս փիչը։ Էտ մընեշակեն փոնջը մոխեր ա տրռնաս։ Մոխերը կտրես ըն քցիս հայաթը։ Հըյաթռամը մին ճուղպուրե ծառ ա տրռնաս։ Ամեն մին օր թաքավերեն տղան քյինիս ա էտ ճուղուպրեն տակեն դինջընաս։

Տահանց մին խոխա յա ինիս, կնեգյը ստիբիս ա, վրեր մարթը էտ ծառը կտրե, ուրուրուց շինին։ Պիրիս ըն, կըտրես։ Կտրես տեղը մին տաշեղ ընգնես ա մին պառավ կընգա պուժկու մաչ։ Էտ տաշեղը ըտեղ համեն ախճիգյն ա տրռնաս։ Միշտ եր ա կընաս, տոնը հրվըքես, սրփես, շինես։ Պառավը մին հետ կյողլ ա կընաս, փըռնես էտ ըխճըկանը։ Ըտահանք մին տեղ ըպրես ըն։

www.naregatsi.org

էտ ախճիգյը ըսես ա.— Հո՞ւնց անիմ վեր թաքավերեն տղան գյիդա իմ ըստեղ ինիլըս։

էտ պառավ կընեգյը ըսես ա.— Քյինիմ ասիմ, վեր մեր տանը մին խոխու հաղալիք շինող կա, եկ խուխետ հետի հաղալիք շինել տո։

Թաքավերեն տղան կյաս ա, վրեր ուրանց խոխեն հետե հաղալիք շինիլ տա։ Պռավեն տանը ախճիգյը ըսես ա.— Քյինի մին հիլի էլ պեր, մին տենակ էլ, մին նոռն էլ, ընդրանա ետը շինիմ։

Թաքավերեն տղան տահանք պիրիս ա, տաս ուրան, ինքյը փըրդեն քըմակեն կյողլը կընաս։ էտ ախճիգյը նի յա մընենես էն մին փիրդին քամակը, սկսես դաշրդերը մին-մին պատմելը. «Ա՛ տենակ, յըե՞ս պենվամ, թա՞ տու պինվաս։ Ա՛ նոռնը, յըե՞ս պճղվիմ, թա տո՞ւ, ա՛ հիլի, յըե՞ս կոտրվի՞մ, թա՞ տուս։ Նոռնը պճղվես ա, հիլին ճըք-ճըքուտես ա, տենակը պինվաս ա, լհա էտ ախճիգյը ուզիս ա, թա տենակը յոր օնե սըերտը կոխե, էտ լոխ թաքավերեն տղան ըսկընաս ա, քյինիս դաստի տենակը ծըերքան ինքյ ունես, թուղես չի, վեր ուրան վնաս տա, էտ ըխճըկանը յոր ա ունես քյինիս տոն։ Ուրան կընգանը ծիյին հաքյվան կըպես ա, հըյաթավը մին շոռ ըծես, ըսպընես։ Խուխեն էլ տաս ա, վրեր մին ղուլուղչի տանե, պահե։

էտ ըխճըկանը նըհետ էտ տղան փըսկվես ա, հըրսանիքյ ըն ընես, լոխին ըսես։— Հազիր էսա ճարալ ըմ առանց հաբր, առանց մար պաշած ախճիգյը։ Մին լավ քյեփ ըրեքյ։

Ըտեղ լավ ըպրես ըն։ էտ ըխճըկանը աշկին ըրտասունքը ցըմըքես ա։ Լավ-լավ խոսերք ա պիրիս, ուրան խըխորցավ նան մարթավը ուրխընաս ա։

www.naregatsi.org

14. ՄԱՐԶԸ

Ինիս ա, չինիս մին մարթ, մին կնեգյ։ Էս մարթը նան կնեգյը ուրիւր նհետ լավ ըպրես ըն ըլալ։ Մհհետ կնեգյը հիվնդնաս ա սոտ տեղան, հանցու վեր մարթին ղարկե օրիշ տեղ։

Մարթը հրցնես ա.—Ա՛ կնեգյ, հի՞նչ պիրիմ քյըեզ հետե, վեր սղանաս։

Կնեգյը մարթին ըսես ա. — Ա՛ մարթ, աշխարքես տակեն ամենալավ ճուրը պեր, վեր խմիմ, մին րոպեյումը կսղանամ։

Մարթը էրկան մտծես ա, վերչը քթենաս, վեր էտ ճուրը անմահական ճուրն ա, վեր հեռու տեղ ա ինիս։

Մին օր մարթը ճընապար ա ընգնես դրի էտ ճուրը։ Ճընապարեն պտհես ա ծին քըշիս մին մարթ, էտ մարթը հրցնես ա.— Ա՛յ մարթ, շտե՞ղ ըս քյի՛ս։

Էն էլ ըսես ա.— Քյիս ըմ անմահական ճուր պիրիմ, կնեգյըս հիվանդ ա։

Էտ մարթն ըսես ա.— Քու կնեգյըտ խփիս ա, հիվանդ չի, ետ տաու քնինքյ տոն, կնգա խըելքավ մել ընգնե՛լ։

Էտ մարթը ըսես ա.— Իմ կնեգյըս լավ կնեգյ ա, տի պենները փոռնել չի։

Էրգան մտծելանը ետը մարթը ետ ա տըռնաս, մարջ կյաս հըղըցավերեն նհետ էն պյմանավը, վեր թա հըղըցավերեն ասածը դուզ ինի, էտ կնգանը մարթը հըղըցավերեն մին չվալ պրինձ տա, թա ինքյը դուզ ինի, հըղըցավերը ուրան մին չվալ պրինձ տա։ Կրն-

www.naregatsi.org

դանը մարթը մտնես ա ծիավերեն չվալեն մաչը, մինաւկ աշկերը պեց թուղես, վեր ուրանց շենը տեսնա, ուրանց տոնը նշանց տա։

Ճընապարեն էրկան չրչըրվելավ, հանես ըն շենը, շտեղ ըպրես ըն էտ կնեգյը նան էտ մարթը։ Ծիավերը քյիս ա, հանես տոնը, հրցնես. — Ա՛յ կնեգյ, էս իրիգյունըս ղոնաղ կպահի՞ս։

Կնեգյը ըսես ա.— Խե՛ չըմ պահիլ, աշկես յրա, իմ մարթըս ղարկալ ըմ օրիշ տեղ, ըրխըյին ըմ ընդա կողմանի, կռըեվ չանել։

Էտ կնեգյը եր ա կնաս հավերը մըրթուտես, տըպըկես ղոնաղեն հետե։ Մարթը էտ լոխ տըսնաս ա, չվալեն մեչան աշկերը պլզած։

Հըղըցավերը հրցնես ա.— Չվալեն մաչան եշող աշկեր, քու ասածըտ ա դի՞ւղ, թա իմ ասածս։

Մարթը եր ա կնաս, մաըջը տաս, համ էլ էնքան կնգանը յրան կըզնվես ա, ըսես.— Ա՛յ քու հվդարիմ ինիլըտ կլխես տամ, հալա քյըեզ նշանց կտամ, թա հունց կխափին, մարթին քմակեն քյեփ անին։

Ըսես ա, ղամաեն պիրիս, կնգանը սպընես։

www.naregatsi.org

15. ԿՅՈՒԼԻՆ ՄՈՐԹԵՆ

Ինիս ա, չինիս, մին պառավ մարթ նան մին պառավ կնեգյ։ Տըհանց ինիս ա մին տղա։ Էտ տղատ մըծընաս ա, տունաս քսան տրեկան։ Հաՙրը, մարը մըսըրհաթ ըն ընես, վեր ուրՙանց տղեն փսակին։

Մին կրնընչկյաՙրմուր ուտութանա մարը, հաՙրը եր ըն կնաս, քյիս հըրեվանաց ըխճըկանը նշան, հանցու վեր մին տարանը ետը փսակին ուրՙանց տղեն նհետ։ Էտ տղատ քսանըմին տրիկանումը փըսըրկես ըն էտ հըրըվանեն ըխճկանը նհետ, օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ըն ընես։

Մին տարանը ետը էտ ախճիգյը մին տղա յա պիրիս, պատրոնը շատ ա ուրխունաս, հարթնենը հետե մին վրեսկե մեգալյոն ա ինքյ ունես։ Էրգաՙն վախտ տղան նան հարթնը ըպրես ըն։ Մին օր էտ հարթնը ըրաՙզավ ա ընգնես, քաշկերը ընդրա յըրան մին կյուՙլու մորթե յըն քցիս, հանցվեր էտ հարթնը կյուՙլոթուն անե։ Ամեն քշեր շոռ կյա, ուտթանան կյա։

Էրգաՙն վախտ կնա՞ս ըն, կնա՞ս, էտ հարթնը ամմեն քշեր կյուՙլոթուն ա ընես, ամմա հարթնանը սկեսուր նան պատրոնը գյիդաՙս չըն։

Մին քշեր էտ պառավ կնեգյը եր ա կնաս, տսնաս հարթնը տեղումը չի, խոխան ուրուրոցումը լաՙց ա ինիս։ Սկեսուրը եր ա կնաս, տե՛ս հարթնը, տե՛ն հարթնը, ամմա ըրվաս չի։ Պատրոնը քյիս ա ծըմըրկնեն շոռ կյաս, տըսնաս էն ա մին կյում ա շինած, հարթնը կյուՙլու մորթեն շոռ կալած, մըռթմըռթալավ վըսկըռնե յա կըրծկործում, հունցը վեր ծմակեն կյուՙլը։ Պատրոնը էնքան կնաս ա, վեր հարթնը

www.naregatsi.org

քոն ա ինիս, եր ա կնաս մորթեն կըլխըտական տուս ունես, պիրիս քցիս թուրունը, իրիս։ Հարթնը սկսես ա լաց ինիլը վեր մորթեն քցալ ա թուրունը։

Տրանա ետը հարթնը վեչ մին կյո՛ւղոթուն չի ընես, խո՛ղունք ա մնաս, էլ քշեր-ցիրեկ շոռ չի կյաս, ո՛ւրեն խոխան լավ ա պըհես, մըն էլ թա՛զադեն հրսանեքյ ըն ընես, վեր հարթնը խո՛ւղունքացալ ա, էլ ծըմըկնեն չի քյինիս։ Տրանավ էլ քաթը պըրծընես ա։

www.naregatsi.org

16. Ա Ր Ա Զ Ը

Զուր չըն ասում, վեր կնանեքյը մին լուն օղտը շինող ըն։

Սեյդի շենացե Մուլքունց Վանին քշերն ըրաձումը տրեսնում ա, վեր բեղեն տեղը մին թև կնանչի յա փսած։

Ինքյը-ինքյը փիս պենու տեղ ա տինում, փիս նշան ա, գյուդում, վեր մթամ թա քյամբախտոթուն պիտի ինի ուրեն։

Վխելան նհետ եր ա կենում կնգանը՝ Զաունըշանեն նաղլ անում. — Ա՛ կնեգյ, պա ասել չըս, քշերս ըրազըմըս տրեսե բեղես տեղը մին թև կնանչի փսած։

Սա էլ ա մտածմունքու մաչ իյնում։ Կոժը յոր ա օնում, քյինում ճուրը։ Հաչլա հղենի հըրվանեն կնեգյը ջհում ա, տրան նաղլ ա անում, թա.— Ա՛խճի Գյուլգյազ, պա ասել չը՞ս, մեր մարթը քշերես ըրազըմը տեսալ ա, վեր բեղեն տեղը մին փոնջ կնանչի ար փսած։

Էտ Գյուլգյազը քյինում ա, տրեսնում թուռնեն մին խիլլա խոխեքյ, կնանեքյ հվաքվածե Նահանց նաղլ ա անում, ասում.— Բա ասել չը՞ք, Զաունըշանեն մարթը քշերես ըրազըմը տեսնար, վեր բեղերեն տեղը մին փոնջ կնանչի, մին փոնջ կուտեմնը փսածե — Կուտեմնըն էլ ինքյն ա իվիլցնում։

Տահանք լոխ ըրմանում ըն, քյնամ ամեն մինը ուրանց տանը նաղլ անում, ամեն մինը ուրանը գյորա իվիլցնելավե

Նաղլ ըն անում, ասում.— Զաունըշանեն մարթը՝ Վանին, ըրազըմը տեսալ ա վեր բեղեն տեղը մին մին փոնջ կնանչի, կընձմնձուկ, խաշըշ, մին փոնջ կուտեմնը, մին փոնջ սողան, մին փոնջ բեդիսկա,

www.naregatsi.org

մին փոնջ քյաւրավնուզ, մին փոնջ կյինձ, մին փոնջ քավառ, մին փոնջ նաննա, ռեհան, սամիթ, թարխուն փըսած։

Վերչը իտի մինը մինան, մինը մինան խաբար տնելավ, իվիլըցընելավ, տուս ա կյամ, վեր տասներկու փոնջ կընանչի փսած ա տրեսալ իրեսեն։

Մեհետ էլ էտ Վանին հանդան կյալիս տահանց շենացե մին մարթ տրան իրեսեն շատ ա յեշում։

Վանին հըրցնըմ ա.— Խե՞ տի եշում ըս։

Էտ մարթըն էլ տըմմանում չի, ասում ա.— Ա՛ մարթ, պա յըես ըսկացալ ըմ, թա իրեսետ տասներկու փոնջ կնանչի յա փսալ, պա հո՞ր ա։

Վանին տրան հսկըցնում ա, ասում.— Ըրաղըմըս ըմ տրեսալ, էն էլ վեչ թա տասներկու փոնջ ինա՞ր, էնա ասե մին բոստան ա իլալ լիլի՞։

Էտ մարթը մնամ ա ըրմացած, թա էտ մին թև կընանչին հունց ա տասներկու փոնջ տրեռա՞լ։

www.naregatsi.org

17. ԴԵՐՎԻՇԸ ԳՅԻԴԿԱՆ ՉԱՐ, ԱՄՄԱ ԿԼՈՒԽԸ ԵԿԱԾ ԱՐ

Ժուկավ ժամանակավ Ղարաբաղի շնըթկներան մինումը մին դերվիշ ար ապրում։ Մին օր էս դերվիշը ուրան կյիրին եշից, ասից, վեր Ղարաբաղ տասսը տարի ուրուր յրա սով ա իննական։

Մին ամես ար հինչ էդ դերվիշը տանա, կործա ընգած քյուչա-քյուչա ժողովուրթեն ծեն ա տամ, թա.— Ա՛ ժողովուրթ, ծեր թադարեքյը մհենգյանց քշեցեքյ, տասսը տարե սով ա իննական։

Էս խոսկերքը ըսկընալանը ետը ժողովուրթեն վընը-ծրեռքը տափան կտրում ա։ Սաղ օրը քնենքյ ըն անըմ, էլ ծեռքներավը պեն չի կյա՜մ, թա անին։

Խաբարը տամ ըն Վարանդու Մելիքյ Շահնազարին։ Մելիքյը նստած ար Ավետարանոց շենումը։ Մելիքյին ասում ըն, թա էս թավուր մին մարթ ժողովուրթեն մաշը պրավակացիա յա քցալ, մհենգյ ժողովուրթը պենա, կործա ընգած, սաղ օրը մտածում ա։ Մին օր Մելիքյ Շահնազարը մարթիքյ ա ղարկում։ էտ մարթիքը կյամ ըն դերվիշին յոր օնում, տանում Ավետարանոց։

Մելիքյ Շահնազարը խուսուցնըմ ա դերվիշին, ասըմ.— Հի՞նչու հետե յըս իտի պրավակացիա քցալ ժողովրթեն մաշը։ Տու քանի՞ կըլխանե յը՜ս, վեր իմ ժողովրթեն քընենքյի մաշ ըս քըցալ, իմ էն ազրայիլ ժողովուրթես ազադ մըծացած, ազադ կերածխամած ժողովուրթես։

Դերվիշը պադասխանում ա.— Դե Մելիքյ Շահնազարը ապրած

www.naregatsi.org

կենա, կյիրքեն եշալ ըմ, տի յա նշանց տվալ, տի էլ ասալ ըմ, էլ հի՞նչ կը կարիմ ասիմ։

Մելիքյ Շահնազարը դերվիշին պատիժ տալի մհար կանչում ա ուրան իրեք օքնականներեն, հանդամանքը նաղլ անում։

Մհենդյ Մելիքյ Շահնազարը սահանց անա հրցնում ա, թա հի՞նչ ռանդյի, հի՞նչ փորմի պատիժ տա դերվիշին։

Սուլթա խոսկը տամ ա առաչին օքնականեն։

Սա եր ա կենում, ասըմ.— Վեր էս դերվիշը էս թահրի պրավակացիա յա քցալ մեր ազադ, բոլ-բոլ ապրած ժողովուրթեն մաշը, յըկս առաչարկում ըմ էս մարթին տինինք նոր հեմնիյիս պատեն մաշին, պատը հեմնինքյ։

Էս խոսկերքը լսելալ, դերվիշը ետ ա տեռնում թա.— Ասլի հո՛։

Էրկունջի խոսքը Մելիքյ Շահնազարը տամ ա էրկունջի օքնականին։ Սա էլ եր ա կենում խոսում, ետնան առաջարկում ա, վեր դերվիշին ղմալ շախկա տան, ղինաը-ղինաը կտորին։

Էս դոնում էլ դերվիշը էլա ասում ա.— Ասլի հո՛։

Իրեքինջի խոսկը Մելիքյ Շահնազարը տամ ա իրեքինջի օքնականեն։

Սա էս տեսակ ա խոսում.— Մելիքյ Շահնազարը ապրած կենա, մարթ ա իլի՛, բալքյա խելքը մին պեն ա կտրալ, վեր տի յա ասալ, յըկս ռազի չըմ, վեր էտ մարթին սպանին։ Եկեքյ մին հավուր հաշեվ անինքյ, թա էտ մարթը հաստատ դուզ ա ասալ, թա լհա կըլխան ա տուս տրվալ, թա լհա կըլխեն ա զոռ տրվա՛լ։ Էն վեր ռայոնում էս տարե շատ պերք ա կյլական, ընդաղան դանը, պերքը տեղափոխինքյ էտ դերվիշին ասած ռայոնը, պահեստնեն դանալ լցնինքյ, եկող տարեն, թա վեր պերքը կկյա՛, վնաս չի կա, իլածեն կլխեն իվլացածան, իլածան վնաս չօնինքյ, չիլածան վնաս օնինքյ։ Թա վեր պերքը կյալ չի՛, էնա լհա մեր պահեստնեն լիգյը կինի՛, ժողովուրթը նեղութուն չի քաշի՛լ։ Բա բալքյիս սով իլավ, էն չախը հո՛ւնց բիդի անինքյ։ Էս մարթը պառավ, քյասիբ մարթ ա, ըզըդեցեքյ քյնա ուրան քյըսըբութունեն։

Էս խոսքերքը լսելանը ետը, դերվիշը իրեքինջի դոնումը ասում ա.— Ասլի հո՛...

Դերվիշին էս իրեք պադասխանը շատ ա զարմացընըմ Մելիքյ Շահնազարին։ Ընդրա հետե դերվիշին անա հրըցընում ա.— Դե՛րվիշ, էս էրկու մարթը քյըրեզ շատ զոռի ըսպնեցեն, ընդրա մհար ըսեցեր. «Ասլի հո՛», պա էս խեղճ մարթը քյըրեզ ըզադից, բիդի քյըրեզ խոսից, ընդրան խե՞ ըսեցեր. «Ասլի հո՛»։

www.naregatsi.org

Դերվիշը Մելիքյ Շահնազարին պատասխանից.— Մելիքյ Շահնազարն ապրած կենա, խոսկը քունն ա, հինչու օզում ըս ըրա, ամմա յըես մին պեն կասիմ քյըեզ, թա վեր սոտ տունս կյա, գյիդա վեր էն առաչվա ասածըս էլ ա սոտ իննյական։ Տու ինձ ճնանչում չը՞ս։

Մելիքյն ասում ա.— Չէ։

Դերվիշըն ասըմ ա.— Յըես էլ վեչ քյըեզ ըմ ճնանչում, վեչ էտ քու օքնականներետ, վեչ էլ գյանքըմըս Ավետարանոց ընգած ըմ իլյալ։

Մելիքյ Շահնազարը ոազի յա կենըմ, վեր հվատում ա.— Մհենգյ էն առաչվա հնգյերը, վեր ինձ պատեն մաչին տիրյավ հեմնից, նա հայտնի բիննյահու տղա յա։ Ընդրա հյարը ինդի լյավ ուստա յա իլյալ, վեր էտ փշյակավը շատ հրուստացալ ա, տղեն տասներկու տարե կրթցրալ, մհենգյ քյըեզ օքնական ա։ Էն ուրյան ոամբրումը էտ ա տեսալ, տրա հետե էլ ինձ տինում ա պատեն մաչին հեմնում, ուրեմը ուրյան յասլին ա քաշալ։ Տրա հետ էլ ըսեցե «Ասլի հո՞»։ Էն էրկունջի հնգյերը, վեր ինձ տվարու մսի մնան շախկա յա տվալ, հայտնի ղսաբու տղա յա։ Ընդրա հյարը ղսըբութունավ էնչանք հրստացալ ա, վեր տղեն տասներկու տարե կրթցրալ ա, մհենգյ քյըեզ օքնական ա։ Նա գյանքում միշտ արուն ա տեսալ, ըտրա հետե էլ ինձ ղմյալ ա տամ, սպանում։ Էն էլ ուրյան յասլին ա քաշալ, հինչու տեսալ ա, էն ա աշկեն առաչը կալյալ, տրա մհար էլ ըսեցե «Ասլի հո՞»։ Ամմա էս իրեքինջի հնգյերը, վեր ինձ ըզադեց, ըտ էլ հայտնի ռանչպարի տղա յա։ Ընդրա հյարը էնքան լյավ վրղապենու տյար ա իլյալ, էնքան հարուստութուն ա եր կալալ, վրեղան, վեր տղեն տասներկու տարե կրթեցալ ա, վեր ըսօր քու կոխկետ նստած, կարում ա կլյոխ տունս պիրի։ Մհենգյ էտ մարթը գյանքումը արուն տեսած չի։ Տա ըռնու նհետ կործ չօնե, ընդրա հետե էլ ուրյան հնգյերունցը տեմ ա կաղնալ, ինձ ըզադալ։ Էտ էլ ուրյան յասլին ա քաշալ, տրա հետե էլ ըսեցե «Ասլի հո՞»։

Էտքանը Մելիքյ Շահնազարը վեր լըսում ա, ասըմ ա.— Դերվիշին ասածը էտ իրեք մարթին անա լոխ դուզ ա։ Ընդրանա ետը յըես ոազի յըմ իմ իրեքինջի օքնականիս խոսկին, վեր դերվիշին ազադինքյ։

Մելիքյ-Շահնազարը էն մին օրանը ետը սկսից ուրյան պադրաստութունը տրեսնալը։ Ետնան դուզ տունս եկավ դերվիշին ասածը։ Շրջանումը էրգյան վախտը սով իլյավ, ժողովուրթը նեղութուն քաշից։ Ընդրանա ետը, քանի վեր Մելիքյ Շահնազարը ուրյան թադարեքյը շուտվյանից քաշալ ար, ժողովուրթն ազադվից սուլան։

www.naregatsi.org

18. ՎՂԵՍԿԵ ՋԱՄԸ

Ինիս ա, չինիս մին ղորբա տղամարթ ա ինիս։ Էտ տղատ մին օր տանան տուս ա կյաս, քյինիս հանդը։ Կյաս ա տրսնաս տոնը, պենը սաղ Թըլանած, տարած։

— Հա՛յ, հարա՛յ, էս հի՞նչ պեն ա, էս հինչ նաղլ ա, վեր իմ կըլնիս ա եկալ։

Ժողովուրթը թա՛։— Պա ասել չը՞ս, փլան տեղը մին Թարա-քյամա կա, ընդրանք եկեն Թըլընեցեն...

Էտ տղան եր ա կընաս, քյինիս Թուշ բիդի էտ Թարաքյաման։ Էլ մին պեն չըսես, լհա՛ սուվԹա խոսկը պարիյօր ա տաս, ըսես.— Պա ինձ ծրեզ հընդեր չը՞ք յոր օնել։

Ընդրանք էլ ըսես ըն, Թա՛.— Տասնըմին չինինքյ, տասներկունը ինինքյ, մինա՛կ քյինիլ պիտիս մին էրկու վեդրա ճուր պիրիս, ետնան։

Տա ասում ա.— Ճուրը պիրիլը շատ տիժար ա։

Էտ տղան համ իտի յա ըսես, համ էլ յոր ա ունես էրկու վեդրա, քյինիս ճրի։

Լհա՛ ուզիս ա Թա՛ ճուր յոր օնե, տրսնաս ա տրերան մինը Թուշած եկավ, տղեն յախան փռնից, Թա՛.— Հո՞ր ըս տրնես էտ ճուրըտ։

Ըտրեղ կըռեվ ա տրռնաս։

Էտ տղան տրան լհա՛ ուզիս ա, Թա՛ սպանե, մին էլ տրսնաս ա, էլ մարթ չիկա։ Լհա՛ քըշտեն մին վրեսկե ջամ ա վեր ընգած։

Էտ տղան յոր ա ունես, Թա՛ տանե բըզարումը ծախե, մին էլ մին ջուհուդ տուս ա կյաս, շառավ տաս, Թա՛.— Էտ իմ պապու ջամն ա։

www.naregatsi.org

Կործը սուդի յըն տաս։

Սուդը ըսես ա.— Թա վեր կարես էտ ջամեն մընան մի օրիշ ջամ էլ պիրիս, էն վախտը էտ ջուհուդեն կախ ընք տըլական, վեր պիրիս վեչ, էն վախտը քյըեզ ընք կախ տըլական։

Տղան օզի, չօզի պիտի քյինի ճարի։

Եր ա կընաս օխտը տըրնեն մսըրհաթ տըսնաս, քյինիս։

Շատ ա քյինիս, խրեգյ ա քյինիս, մին շենում մին պռավու տան ղոնաղ ա ընգնես։ Տա տըսնաս ա էտ կնեգյը շատ տուխուր։ Հըրցնես ա, թա.— Ա՛ մար, խե տուխո՞ւր ըս, հի՞նչ ա պըտահալ։

Պառավը թա.— Բա՛լաս, պա մեր թաքավերեն տղան մըեռալ ա, էս ա էրկու տարի յա միշտ քըշերը ջահիլ-ջհնուլ չասավոյ ըն կըղնես հերթավ, մինչև ռուբանան։ Մեքյին մինը կյաս ա, լոխճին կուտուրես։ Թա հի՞նչ պեն ա, ըտել չի գյիդվա։

Էտ տղան եր ա կընաս, քյինիս թաքավերեն կոշտը, ըսես.— Թաքավերն ապրած կենա, էս քըշեր էլ յըես ըմ քյիննական չասավոյ կենամ։

Ըտեղ թաքավերը ծըծըղես ա, ըսես.— Լա՛վ կինի։

Տղան ըսես ա.— Ինձ հետե մին փոս էլ կըտրել տվեքյ, մին ճպատ էլ տվեքյ, մինա՛կ վեր էս պենը կըլա՛խ պիրիմ, հինչ վեր օզիմ, պիտի տաք։

Ո՛ւրո՛ւր խոսկ ըն տաս։ Էտ տըղան քըշերը քյինիս ա թաքավերեն տղեն հա՛նգյիստին քշտեն փոսը նի մննես։

Մին էլ ա տըսնաս սհաթի տասներկուսին սաղ աշխարքը տո՛ւրո՛ւր եկավ, մին ծիավեր թուչից, եկավ թո՛ւշ էտ հա՛նգյիստին կոշտը, շալլաղը հանից, մին դո՛նում թխելավը քարը տեն կըցրավ, մին էլ թխեց, վըեղը քա՛շվից, թաքավերին տղան տո՛ւս եկավ, ո՛ւրո՛ւր նըհետ խուսեցեն, ետնան էլհա շըլլաղավ թխից, լոխ ո՛ւրա՛ն տըեղը եկավ։ Մինա՛կ քարը ծոռ վեննը կացավ։

Էտ թևավուրը ուզես ա, թա հլա՛ թուչի, փոսան էտ տղան տո՛ւս ա կյաս, ըտրան յախան փռնես.—Լա՛վ ըմ քթա՛լ, վըեննը կաց։ Տահանք ո՛ւրո՛ւր նհետ կըռըվ ըն ընես։

Էտ տղեն օժը հըխտես ա, լհա՛ ուզիս ա, թա սպանե, գյիրթ տըսնաս ա էլ մարթ չիկա, մինա՛կ շալլաղը քըշտեն վեր ընգյած։

Էտ տղան շալլաղը յոր ա ունես քյինիս թաքավերեն կոշտը, ըսես.— Նք նհաշ տամ, թա հո՞ւնց ա տըղատ սըղանալու։

Սաղ ժողովուրթեն ծեն ա տաս, էտ շալլաղավը թխես, թաքավերեն տըղան եր ա կընաս, սըղընաս։

Էտ տըղան ետ ա տըռնաս թաքավերեն ըսես.— Է՛լ չի քու ջահիլ, ջհնուլիդ նհախ տեղան կըտորիլ տաս։

www.naregatsi.org

Թաքավերը հըրցընես ա.— Պա հի՞նչ տամ, վեր տըղաս սըղցրալ ըս։

Էտ տղան ջամը հընես ա, թա՛.— Իստի մին ջամ տո։

Թաքավերը մնաս ա սառած, թա.— էտ վըեսկե յա, էտ էն ջադու ըխճկորանցը ջամն ա, մըեզ ինիլ չի։ Ուզիս ըս քշըռքավտ մին վըեսկե տամ։

Տղան յոր չունես, եր ա կընաս քյինիս։

Շատ ա քյինիս, խրեգյ ա քյինիս, մին օրիշ շհար ա նի մննես, տըսնաս ժողովուրթը լոխ տունզնը կուտըրվես։

— Էս հի՞նչ ա, հի՞նչ չի։

Թա՛.— Պա ասել չը՞ս, ալյերը ծովեն էն մին ընգյունաե ա կյաս, սաղ թափվես ծովեն մաչը, գյիդաս չընք, թա՛ էս հի՞նչ զորութունե ա։

Էտ տղան քյինիս ա թուշ թաքավերեն կոշտը, ըսես.—Թաքավերը ապրած կենա, էս դունումս էլ յըես ըմ քյննական, ալյերը պիրիմ, վեր պիրիմ, մինակ հինչու օգիմ, ինձ բիդի տաս։

Խոսկ ըն տաս ուրուր։ Էտ տղան քյինիս ա պրախոդ նըստես, հայդա ծովեն էն անգյունը։

Լհա՛ քյինիս ըն պրախոդը ալյերավ լցնես, պիրիս, ծովեն մաչավը տունս ընես տեղը, տըսնաս ա պրախոդը ըսես ա, թա՛ լհա՛ պըրանվե։ Ցիշիս ա, տըսնաս, լհա՛ մինը վըեննավը կուպիե յա տաս, թա՛ լհա՛ տակըն անե։ Էտ տղան կըզնվես ա, թա՛ լհա՛ վեր ընցնե փաղավը տրան սպանե, մին էլ տըսնաս ա էլ մարթ չիկա, մինակ մին մուտանա ընգալ ա պրախոդեն մաչը։ Էտ տղան յոր ա ունես։ Ըսկսես ըն ալյեր պիրիլը։ Ժողովուրթը սովա ըզըրվես ա։

Թաքավերն ըսես ա.— Հի՞նչ տամ։

Տղան թաքավերեն անա մինակ մին ջամ ա ուզիս, ջամն էլ նշանց ա տաս։

Ամմա թաքավերն ըսես ա.— Օնինքյ վեչ։ Օրիշ պեն օզե։

— Պեն չի հարկավեր։ Տղան անց ա կընաս, փոխըփեշմեն քյինիս։ Վեց տարեն թամամ ա ինիս, ուզիս ա քյինի տոն, մին էլ յիշիս ա տըսնաս մին հասար, մաչին լավ-լավ պալատնե։ Դըրբըզան պինաս ա լհա՛ նի մըննես, տըսնաս վեչ մին մարթ չիկա։ Մինակ մին տան մին լավ ստոլ սարքած, ամմա մարթ չիկա։

Տղան ըսես ա.— Հաղբաթ ըստեղ մին պեն կա։

Կյողլ ա կընաս տռանը մղակումը, տըսնաս, ըհը՛, ճըղըվըղը ընգալ։ Տասնըէրկու ախչիգյ եկեն, պար եկեն, ստոլեն չորս ընգյունեն նըստոտեցեն, սկսեցեն կյինի խմելը։ Սունվթաե ստաքանը մին ախճիգյ խմես ա, թա՛. — Յըես կխըմիմ էն քաջ տղեն կյենացը, վեր

www.naregatsi.org

վախ չօնե, սաղ քյարվանը ծարավ կըտորեցե, լհա էտ տղան օղից, թա ինձ սպանե, զոռավ փախե, ըզըդվեցե, մինաք ջամս ծեռքաս ընգավ։

Էրկունջի կյենացը մին օրիշ ախչիգյ խմես ա, թա.— Յրես կխըմիմ էն քաջ տղեն կյենացը, վեր սաղ քաղաքը ուրան թաքավերեն ծեռքավը կուտորել ըմ տվալ, մինաք մին քաջ տղա եկավ, թա լհա ինձ ըսպանե, զոռավ փախե, մինաք շալլաղս ծեռքաս ընգավ։

Իրեքինջի կյենացը մին օրիշ ախչիգյ ա խմես, ըսես.— Յրես էլ կխըմիմ էն քաջ տղեն կյենացը, վեր սաղ քաղաքը տունը կուտուրվես ըն իլալ, լհա մին քաջ տղա օղից, թա պրախոդեն կլխեն ինձ ըսպանե, վխելաս փախե, ծեռքես մուտանան ընգավ պարախոդը։

Խմես ըն, եր կընաս պար կյաս, թա լհա նստին, էտ կյողլ կացած տղան ուզիս ա, թա ճաքվե, տունս ա կյաս ըսես.— Յրես էտ համեն տղան ըմ։

Էտ ըխճկերքյը հրվըտաս չըն, թա.— Սոտ ըս ըսես։

Տղան տունս ա ունես ջամն էլ, շալլաղն էլ, մուտանան էլ լոխ ըտրանց նշանց տաս։ Ըտրանք մընաս ըն շըշկըլված։ Ուզիս ըն, թա էտ տղեն կլխավը շոռ տան։

Հըրցնես ըն.— Պա հո՞ նց ըս եկալ, էտ հի՞նչ պեն ա։

Տղան հանգամանք լոխ պըտմես ա։ Էտ ըխճկերքը, ամմեն մինը տունս ա ունես իրեք ջամ, տաս էտ տըղեն։

Տղան մնաս ա շաշվաձ։ Լհա իրեք ջամ ա յոր ունես, ըսես.— Պա հո՞ նց քյինիմ, ա ըխճկերքյ, ախեր... Վաղանս թամամ ա։

Էտ ըխճկերքըն ըսես ըն.— Մեր ծիավը քյինի, մին էլ եք։

Էտ տղան եր ա ինիս մին կյարմունր ծի, թուչիս, քյինիս ուրան համեն շըհարը։ Տըսնաս ա լհա կախաղանը հազըր, վեր պիտի կախ տան տասնըմին հընգյերունցը։ Տըղան ըտրանց կոշտն ա քյինիս, ջամերը նհաշ տաս։ Էտ վեր տըսնաս ըն, սոտ ըսելի հետե ջուհուդեն կախ ըն տա՞ս։ Տղան ուրան տասնըմին հընգյերունցը յոր ա ունես, քյինիս բիդի էն ըխչկերքը։ Ընդեղ պիծի ախչիգյը ինքյն ա յոր ունես, ամմա մնացածը տաս ուրան տասնըմին հնգյերունցը, ամմեն մինը մինինն նըհետ փըսըկես ըն, մին լավ հըրսանեքյ ընես, ըտրեղ լավ ըպրես։

www.naregatsi.org

19. ՋԱՔՅԻ ԱՊԵՐԸ

Օխտանասունը հենգյ տրեկան Ջաքյի ապերը կոզի պռավածֆինի, ամմա շատ աշխադասեր ա, միշտ ընդրան հանդին կըտեսնաք։ Թա հինձին վախտը, թա բաղեն մաննը կըտրեյիս, թա խոտ հնձեյիս, տանը մին օր կենըմ չի։

Մին դինըմ Ջաքյի ապերը հինձ ա քյինում։ Էշը փլանըմ ա, հայբաշն յրան քըցում, չինը հայբին մաչին տնում, եր ինում էշը, քյինում։

Ջաքյի ապերը վեր ծաքյին հըսնում ա արտը, դաստի սկսում ա հինձը, մինչը քյըսօր։ Քյսօրավախտը ետ ա տրեռնում, փնջաքեն տակեն նստում, կյուշը տուս օնըմ, մածունը ածըմ կյուշին մաչը, հացը նի փրթում, ճիրաշն խառնում նհետը, քթիլը յոր օնում, թա օտե, բուրդաշն տրեսնըմ ա կըռքնեն թողալ ա տանը, մընանան ընգալ ա, թա կըռքնեն տինի պիրանըմը։ Խըեղճ Ջաքյի ապերը եր ա կենըմ փրթուշը թողում ընդեղ, մին խիլլաս տեղ զարը անըմ, շենան մուտանում սկսում կընգանը ծեն տալը։—Հե-հե՛՛ բախճագյուլ, հե՛՛՛ բախճագյուլ։

Շատ ծեն ա տամ, վերչը ուրաշն կնեգյը՝ բախճագյուլը ըսկանըմ ա։— Ադաս Ջաքյի՛, հի՞նչ ա, էտ հի՞նչ ա, ասե ասե՛, էս ըմ ըսկընայիս, ասե տեսնամ հի՞նչ ըս օզում։

Ջաքյի ապերը՝ թա.— Ախչի, կռքնես է՞, կռքնես պե՛ր, պե՛ր, հաց ըմ օտում, ճելլի ըրա է՛՛՛, ճիլլի՛՛՛ եք։

Բախճագյուլը նի յա մընանըմ տոն, թա կըռքընեն պիրի։

www.naregatsi.org

Ջաքյի ապերը քյինուհմ ա, տրեսնըմ փրթուռըը լօխ ղուշերը կերած, մնում ա վա՛յ-վա՛յ ընելիս։ Ետ ա տրեռնըմ, թա քյինի Բախճագյուռլին ծեն տա, հանցու վեր նոր մածուն պիրի, տրեսնըմ Բախճագյուռլը նի ա հսալ, կյամ ա։

Ասըմ ա.— Ադա՛, Ջա՛քյի, էտ հի՞նչ ա պտահալ։

Ասըմ ա.— Ախճի, պա տրեսնըմ չը՞ս, էս շան տղեն ընդրնեն հի՞նչ ըն ըրալ, փուրթուռըը լօխ կերալ ըն։

Բախճագյուռլը ասըմ ա.— Վեչինչ, ա՛ մարթ, ջանըտ ինի սաղ, ըտրա հետե դարդը-ղեյիդ մ՚ անել, կքյինիմ մին էլ պիրիմ, տու լհա՛ լալ հոնձ ըրա, էս կառավարութունեն ջանեն մատաղ, հանց օրենքյ ա քըցալ, հինչու օզըմ ըս, կա ու կա՛, պռավածծ, ծեռքա ընգած ջըվըրներեն էլ ա մհալ քցում, եշըմ ա, պահում ա, հատե՛ պըռավալ ըս, սաղ կոքնետ վեր ա տեռալ, վեր էս օրենքյը չինար, քյըեզ հո՞ւ իտի կոքնե կտա՛ր։ էն պիրիշակ Նիկալայեն վխտեն լհա՛ սաղ-սըլամաթ մարթուցու հափուռը պող ին ածում։ Պրիստավը, քյոխվան մեզ շատ տրնջեցեն, դե մհենգյ տրես մինը-մինին անա վախըմ ը՞ն, լոխ էլ մին ջուտա ջըվըրնե յըն, հալալ քըրթնընքըմ ըն, հալալ օտում, վեչ մինը մինին աշխադանքը օտում չի, հու վեր անըմ ա, էն էլ օտում ա, հու վեր անըմ չի, օտում չի, պըրծավ քյինից։ Դե էլ մտածիս վեչ, մին պատառ էլ հնձի, քյինիմ մեր տանան մին պոլիգյ մածուն պիրիմ, համ էլ ասըմ ըն կոլխոզը պանները պժենըմ ա, քյսօրա ետ քյինիմ ստանամ, էլհա պիրիմ։ Ադա՛, թա նըղացալ ը՞ս, ինձ տո պատառ էլ յըես հնձիմ։

— Ջէ՛, ա կնե՛գյ, տու քյինի մեր հեյվաններեն ուրուն ըրա, լալ պահե, վեր միկա կաթնը տա, էս հունձեն վախտը մածունն ա ինձ պահում, համ էլ ճելլի քյինի, դե մհենգյ էլ կոքնես պերալ ըս, մածուն չիկա, ճելլի ըրա հացրու մին էս արտեն ջանեն ինիմ։

www.naregatsi.org

20. ՄԱՔՅԻ ԱՊՈՒՆ ՄՈՐՈՒՆ ՆԱՂԼԸ

Մեհետ կյարունքը մին բոզ էշ ունինքյ, նստեցե քյնացե, թա Երդյան Գյունյան փադ պիրիմ։ Փադ ըրած կյալիս, մեր շընացե Շամիրը ինձ ջհից, թա.— Մաքյի դայի, մեր եզնը տեսալ չը՞ս։

Ըսեցե.— Չէ՛, քումմատա՛ղ։

Մին էլ պատառ վեր եկե ըտըղան, եշեցե տեսե, ճոխտակ եխծեն դաշումը, կինի տհենց մին քսան վերստը, մին պեն ա կյրմիրի տամ։

Ըսեցե.— էս կա, չիկա, մեր Շամիրին եզնըն ա։

Ըսեցե թա ծեն տա՛մ, մնգ էլ կասիմ, այշի՛, չէ՛, էս ա ընդեղավ ըմ քյննական, յըես կտանիմ։

Քյեցալ ըմ, քյեցալ, մուտացալ էս կյարմուր պենին, տեսալ եզնը չի՛, մին մեծ մորե յա հսած, փըսած, կյրմըրա՛ծ։

Յրան ինգի՛, մին լավ կերե։ Մին խուրջին կար էշիս յրան, կացենս եր կալի էս մորես ճղուրտեցե, ըծեցե խուրջինս, պերե տոն։

Խոխենքյս էտ մորուն կեսը կերեն, կեսն էլ կտուրեցեն չուրըցըրեն, չամենչ շինեցեն։ Հալլա միչև օրս էլ էտ մորեն մննաս քյինուամ չի՛։ Ամմեն տարե քյնամ ըմ ընդեղ տեսնում, էլհա իտի մորե յա ինուամ փըսած... Մին լավ օտում ըմ, էլհա կացենս յոր օնըմ, ճըղորտում էտ մորեն, խուրջինս ածըմ, պերըմ տոն։ Կեսը խոխենքյը օտըմ ըն, կեսն էլ չուրուցընըմ, սաղ ծմեռնը օտըմ։ Ամմեն տարե քյինամ ըմ ընդեղ, տեսնում, էլհա իտի մորե կա՛։

www.naregatsi.org

21. ՄԱՔՅԻ ԱՊԱՆ

Ստեփանակերտա մին օր Մաքյի ապան կյալիս ա ինում։ Կյամ ա Դըշպուլաղա ճղցներան անց կենում, տեսնում մին Նրկյղեցե մարթ ըրբավը կյամ ա, տեղն էլ շատ դուռ ա ինում, ամմա ինքյը եզնեբեն հետում չի, լհա՛ վեր ինքյը եշում ա Մաքյի դայուն, եզնեբը տանում ըն ըրբան պարան տամ քարեբեն յրան։ Կզնված-կզնված ետ ա տեսնում, Մաքյի ապուն յրան ճըղղըմ, ասում.—Ա հի՞նչ ըշկավար ըս, աշկ օնիս է՞ քյըեզ, դայի՛։

Մաքյի ապան ետ ա տեսնում տրան ասում.— Հա՛, աշկ օնիմ, պա քյըեզ մնան քոռ չում, վեր էս դուռ տեղս ըրբան պարան տամ։

www.naregatsi.org

22. ԲԱԳԼՅԱՐ ԹԱՔԱՎԵՐԻՆ ՊՈՋԸ

Իլալ ա, չիլալ մին թաքավեր ա իլալ, անումը Բաղլյար։ Ըտրա կլխեն իլալ ա մին պոզ։ Հինչ դալլաք կյալիս ա ըլալ ըստրա իրեսը, կլոխը վեր ընելիս, էտ դալլաքին կըլոխը կտրել ա իլալ տալիս, մին հոր քցելիս ա իլալ։ Ըտրանց քաղաքումը մըննըմ ա լհա մին դալլաք, էն էլ պիրիլ ա տալիս, վեր իրեսը, կլոխը վեր անի։ Վեր վեր ա անըմ, պրծնում, Բաղլյար թաքավերը ասում ա.—Ցրես քու կլոխըտ պիտի կտրեմ։

Էս դալլաքը ասում ա.— Բալա՛մ, խե՛ պիտի իմ կլոխս կտրես։

Ասում ա.— Վախըմ ըմ քեզ պաց թողեմ, ասես, վար իմ կլխիս պոզ կա։

Էս դալլաքը խոսկ ա տալիս, վար վեչ մին տեղ ասիլ չի՞։

Դալլաքը տոն քյնալիս, հղցեն տրեսնում ա, վար էն ա փորը օռչում ա, օզում ա տրաքե, վար էտ թազա խաբարը ասե վուչ։ Տեսնում ա մին ճրավեր, սա կռանում ա, էս ճըրըվերըմը իրեք դոնըմ ասում.— Բաղլյարը բաշեն պոզ օնի՞։ Բաղլյարը բաշեն պոզ օնի, — վար փորեն օռուցը քաշըմ ա, ինքյը կյալիս ա տոն։

Էս ճըրըվերան մին ղամիշ ա տունա կյալիս։ Մին օր, մին չոբան տեսնում ա, վար էն ա ըտըեղ մին ղամիշ փսած։

Չոբանը կյալիս ա էտ ղամիշը կտրում, մին ծվվան շինում։ Սա փչելիս տեսնում ա էս ծվվանն ասում ա.— Բաղլյարին բաշին պոզ կա՞։ Բաղլյարին բաշին պոզ կա՞...

www.naregatsi.org

Չոբանը էս ծվվանը պերում ա շենումը մարթկանցը, խխոցը հրվաքում, սկսում ծվվան ածելը։

Էս հվաքված մարթիքյ լոխ լսում ըն։

Էտ խաբաները տարածվում ա, հըսնում ա թաքավերենն։ Սա դաստի կլոխ ա ընգնում, վար սա էն դալլաքին պաներն ա։

Մին օր էտ դալլաքին կանչում ա, ասըմ.— Պա տու ըսեցեր վեչ, վար վեչ մինին ասել չըս։

Դալլաքը ուրթում ա օտում, վար ինքը վեչ մինին ասալ չի, մին ճըրըվերա կըման։ Թաքավերը չոբանին կանչում ա, պերում, ասում.— Խե՞ յըս էս խաբաները պաց թողալ։

Չոբանը ասում ա.—Ինձ վեչ մինը ասալ չի, ճըրըվըերան մին ղամիշ ըմ կըտրալ, ծվվան շինալ, ածելիս տհենց ա ասալ։

Թաքավերը մին էլ ա իրեսը, կլոխը վեր անել տալիս, ետնան դալլաքին նան չոբանին կլոխը կտրել ա տալիս։

www.naregatsi.org

23. ՉԱՐ ՊԱՌԱՎԸ

Իլալ ա, չի իլալ, մին չար պառավ ա իլալ։ Էտ պըռավեն էրկու ախչիգ ա իլալ. մինը՝ խորթ, մինը՝ հալալ։ Խորթ ախչիգը շատ խելունք անջուկթիթև ա իլալ, ամմա հալալ ախչիգը թոքի յա իլալ։ Ժուղովուրթը շատ սիրըմ, հարկում ա իլալ խորթ ըխչկանը։ Ըտրա մհար պառավը ուզեցալ ա, վեր խորթ ըխչկանը կուրցընե, հանցու վեր ժուղովուրթը սիրի ուրիշն հալալ ըխչկանը։ Պառավը մին հնարք չի քթալ։ Ըշտեղ ղարկում ար ըխչկանը, ախչիգը վազ տալավ քյընում, կյալիս ար։

Պառավը քնենքյ ա ըրալ քնենքյ, վերչը հնարը քյթալ։ Էրկու հաց ա թխալ՝ մինը՝ լավ, համմա էն մինը՝ շատ աղի։ Մին օր սա ըխչկերանցը վեր ա կըցըրալ, թա քյնում ընք Կըքավա սարը, շամ վառինքյ։ Ըխչկերքյը եր ըն կնաս մորը առաչը ընգնիս, քյինիս։ Շատ ըն քյինիս, խրեգյ ըն քյինիս, ըխչկերքը սուվուծընաս ըն։ Ահետ մարը էն սիրուն հացը տաս ա հալալ ըխչկանը, ամմա աղի հացը տաս ա խորթ ըխչկանը։ Ըխչկերքյը օտում ըն։ Աղի հաց օտող ախչիգը շատ ա ծրավում, ամմա ճուր չի ճարում։

Պառավը պիրըմ ա մին սարի պտոկ, ահետ ըխչկանը ըսես. — Էս չոր հացը թուլ ըմ տալկան։ Ըստուծեն հրամանավը քյննական ա ախպուրը ճարի, կխմիս, ահետ կյաս։

Հացը թուլուլ ա տաս, խորթ ախչիգը քյիս ա, քյիս, վեչ հացն ա ճրիս, վեչ ախպուրը։ Շատ վեր քյիս ա, պառավը մին էլ ուրիշն հալալ ախչիգը փխչիս ըն, կյաս տոն։ Խորթ ախչիգը շատ ա շոռ

www.naregatsi.org

կյաս, համմա վեչ ախպէուրն ա ճրես, վեչ հացը։ Քշերը լաց ինիլավ կյաս ա տոն։

Մարը ըսիս ա.— Յա քյնի հացը ճարի պեր, յա քի կախ ըմ տլական քշերը։

Ախչիգյը ընգիս ա ծմկնեն, լաց ինիլավ շոռ կյաս, վեր հացը ճարի։ Շատ վեր լաց ա ընիս, ըրտսունքները մին կյետ ա տռնայս ըսկսիս քյնալը։ Էտ կյետես ճռւրը հսնիս ա մին չուբանու։ Ջոբանը խմիս ա, տսնայս աղի։ Էտ վեր տսնայս ա, զրմնայս ա։ Եր ա կնայս էտ ճրիտ վայրը յոր ունես քյիս... Շատ ա քյիս, խրեգյ ա քյիս, տսնայս ա մին ախչիգյ նստած մուղուր, մուղուր կյալավ խըրըվխարավ կյալավ լաց ա ինիյս։

Հրցնիս ա.— Ա՛յ ախչիգյ, խե՞ լաց ըս ինիյս։

Ախչիգյը մին-մին պտմիս ա ուրան դռրդը։ Ահետ եր ա կնայս, թա քարնվեր ընգնի։ Ջոբանը թուղես չի, փռնես ա պիրիյս ուրանց շենը։

Ահետ քյիս ըն չար պռավեն ըսիս.— Ա՛ պառավ, պա ասի՞լ չըս, ստի-ստի մին ախչիգյ տրեսալ ըն էն սարըմը կախ իլած։

Պառավը ուրխունայս ա, չուբանեն ըսիս.— Վեր տու տի լավ խբար ըս պիրալ տու կինիս իմ փեսեն։

Ջոբանը տսնայս ա, վեր պառավը ղաւսիդ ա ըրալ, յոր ա ունես պռավեն ալ, ուրան ըխչկանն ալ տնիս էն սարը, ըշտեղան հացը թուլուլ ա տվալ, խորթ ախչիգյը ղարկալ ընդեղ։ Մին մըեծ քերծա քցիս տակը, ըրկոքանեն ալ գյոռբագյոռ ըրիս։

Կյաս ա էն խորթ ըխչկանը հետե ուրան վըխճըրներան մին լավը մուրթես, հրսանեքյ ընես, տնիս ուրան հորը տանը, թուղիս, ինքյը քյիս ուրան պենեն։

Էն օրանը ետը հու վեր հուրու մին փաթուն ա ընիս, ասիս ըն.

— Ա՛խճի, չար պառավն ը՞ս։

www.naregatsi.org

24. ՏՂԱՆ ՀՈՐԸ ՓԵՇԱԿԸՆ Ա ՍԸՎԵՐԸՄ

Ինում ա, չինում մին մարթ մին կընեգյ, ըտհանց ինում ա մին տըղա։ Մարթը շատ լավ վըերա անող ա ինում։ Պըռավըմ ա, կնգանը ասըմ.—Դե յըես ըսօր՝ էքյուց մըռնըլական ըմ, ամմա հանց կանիս խոխան փեշակըս սըվերե վուշ հա՞։ Պեն ա, վեր քյըեզ անջուկ չօնե՞, կասիս, վեր միշտ աչ ղոլի յրա վըերսե քյինի։

Հաըրը մեռնըմ ա։ Կնեգյը, տղան վեր մըծանըմ ա, տանըմ ա, թա փեշակու տա։ Հինչ փեշակու տամ ա՞, տըղան փախճում ա, կյամ, հինչ փեշակու տամ ա, փախճում ա, կյամ։

Վեր մըծանըմ ա, տըղան հոր թվանգյը յոր ա օնըմ, պատրոնդաշը կապում, քյինում։

Քյինում ա միշտ բիդի աչ, վըերս անըմ, կյամ տոն։

Մին օր էլ ասըմ ա. «Բիդի ծեխ ըմ քյինյական»։

Բիդի ծեխ վեր քյունում ա, շատ ա քյունում, թա խրեգյ, մին էլ ա տրեսնըմ մին ալավ ա ըռըշան կյամ։ Թվանգյը թուշ ա օնըմ, յըրա անըմ հանգյում ա, քյինում ա տեսնում մին ղուշ ա վեր ընգած, ամմա հալա սաղ։ Պիրում ա տոն, վեր տանն ա տինում, հանց իշեղ ա տամ, քըշեր-ցիրեկ, վեր լոխ մաթ ըն մընըմ։

Թաքավերը ըտրա սաըս վեր ըսկանում ա, հրամմայում ա, կյամ ըն ըտրա տանան ղուշը տանըմ թաքավերեն պալատը։

Էտ ղուշը լուս ա տամ, ամմա խրեգյ ա լուս տամ։ Թաքավերը հրվաքըմ ա ուրան իմաստուններեն, ժողով ըն անըմ։

Թաքավերը ասըմ ա.— Դե հո՞ մց բիդի անինքյ, վեր ես ղուշը

www.naregatsi.org

լուս տա, մին իմաստուն ասըմ ա.— Թաքավերըն ապրած կենա, վեր փիղու վրսկեռա տոն շինիս, էտ ղուշը մաչին տինիս, սաղ թաքավերոթունիտ լուս կտա։

— Պա հո՞ւ կանե, հո՞ւ չանել։

Մին իմաստուն էն բուրջան ասըմ ա.— Էտ լուսը պիրող տըղան կպիրի։

Թաքավերը ասըմ ա.— Էտ տըղեն ծեն տըվեքյ, կյա ըստեղ։

Ծեն ըն տամ, պիրում թաքավերեն կոշտը։

Թաքավերը ասըմ ա.— Յա քյինի փիղու վրեսկեռ պեր, վեր մին պալատ շինին, յա էլ կըլոխըտ կըտըրլական ըմ։

Էտ տըղան ասըմ ա.— Դե մին օր մոհլաթ տո, մըտածիմ։

Տըղան տուս ա կյամ, բեքյեփ մին հըղըցավ քինիյիս, մին մեծ մարթ ա ջհունմ, ասըմ.— Վերթիս, խե՞ բեքյեփ ըս։

Տըղան նաղլ ա անում, վեր թաքավերը իստի, իստի պեն ա ասըմ։

Էտ պառավ մարթը ասըմ ա.— Դաւրդ մեր անել, քյինի թաքավերան քառասուն օղտապեռնը կյինի օզի, քառասուն օղտապեռնը ըրաղ։ Վեր տա, կըտանիս փիղեն աշխարքը, էն ա ընդեղ մին քյահրիզ կա, ամմեն քյունաղ կյամ ա ճուր խըմըմ։ Քյահրիզը կըկըտրիս, կյինին, ըրաղը ածիս մաչը։ Փիղերը կյըլական ըն խըմի՞ն, հարփին։ Տու կյողլը կկենաս, վեր խըմին վեր տեռնան, կըսկսիս վրսկըռքրհան անելը։ Վրեսկեռը օղտերեն կըպեռնիս, պիրիս։

Էտ տըղան մին խիլլա շնուրհակալ ա տեռնըմ։ Ծոնան կյամ ա, թա՛.— Թաքավերը ապրած կըենա, դե քյինիլը քյինում ըմ, մինակ քառասուն պեռնը կյինի, քառասունն էլ ըրաղ պիդի տաս։

Թաքավերն ասըմ ա.— Աշկես յըրա։

Հըրամմայըմ ա, դաստի պեռնըմ ըն օղտերը, էտ տըղեն տամ։ Օղտերը ուրուր անա կապըմ ա, մինին կապան փըռնում, հայդա քյինում, յա՛ բա՛խտ, հի՞նչ կինի՛, կինի՛։

Քյինում ա, քյինում, հըսնում ա էն քյըհրիզեն։ Ճուրը կըտրում ա։ Վեր կյամ ա քյսօրեն վախտը, կյինին նան ըրաղը ածըմ ա նավը, լըցնում, ինքյը կյողլը կենում։ Տեսնըմ ա ըհը՛ էն ա փիղերը կյամ ըն։ Մին թոզ ա պիցրանըմ, սաղ աշխարքը օնում ա։

Կյամ ըն, հի՞նչ ըն կյա՛մ... Եկեն, եկեն խըմեցեն, վեր տեռեն, խմեցեն, վեր տեռեն...

Էն տըղան ղաման քաշում ա, ջընըրներեն ինում, լոխճին մըրթոտում ա, վրսկըռըհան անըմ, վեսկեռը սարու նըման կյուտում ա։ Վեր լոխ մորթում ա, վրսկռնեն ճոկում, պիրում ա օղտերեն պեռնըմ, կյամ։

www.naregatsi.org

խաբեբան կյամ ա, վեր տըղան վրեսկեռը պիրռնւմ ա։

էտ տըղան պիրռնւմ ա թաքավերեն պըլատեն ըռաչին վեր ածում։ Պիրըմ ըն մին պալատ շինում փիղու վրեսկեռա, էն ղուշը տինռնւմ մաչին, սաղ ուրեն թաքավերոթունը լուսավերը՛մ։

էտ թաքավերը տըղեն ասըմ ա.— Հի՞նչ ըս օզում։

Տըղան ասըմ ա.— Ախճիգյըտ։

Թաքավերը պիրում ա էտ տըղեն փսակում, տինռնւմ ուրեն պըլատըմը, թաքավերոթունեն կեսըն էլ տամ ուրեն։

էտ տըղան ուրեն մարը պիրում ա կոշտը, առոք, փառոք ապրում ըն։

www.naregatsi.org

25. ՍԻՐԱԿԱՆ ՊԱՀՈՂ ԿԸՆԵԳՅԸ

Ինում ա, չի ինում մին մարթ նան մին կնեգյ ըն ինում։ Տրանք ուրուր նհետ լավ ապրելիս ըն ինում։ Կնեգյը սիրական ա պահելիս ինում, ամմա մարթը գյիդալիս չի ինում։ Կնեգյը մտածում ա հո՞ւնց անի, վեր մարթին անա ազադվի, դինջըմը քյեփ քաշի։ Ըտրա հետե սուտ տեղան հիվանդանում ա։

Մարթը կյամ ա, տըեսնում հիվանդ թեքյ ընգած։ Հըրցնում ա.— Խե՞ յըս հիվանդացալ, հի՞նչտ ա ցավում։

Կնեգյն ասում ա.— Մին անմահական խնձոր ինի, օտիմ, կսղանամ։

Մարթը որոշում ա քյինի հշտղա վերե յա անմահական խնձորը ճարե պիրի, կնեգյը օտե, թաքյ լհա սղանա։

Ասըմ ա.— Տու վըս իմ մալըս, մուլքյըս, դովլաթըս, տոնըստեղըս, իլած-չիլածըս, սերըս-սոհբաթըս։

Ըր ա կենում ճրնապար ընգնում, քյնում։

Քյնում ա, քյնում, շատ ա քյնում, թա խրեգյ, շատ նան խրեգյը ինքյն ա գյիդում, մին էլ ա տեսնում մին մարթ մին ծիյապեռնը պիրինձ ծիյին քըցած տես ա կյամ։

Էտ ծիյավերը հրրցնում ա, ասում.— Ա՛յ մարթ, էտ հի՞նչ տեղըս քյնում։

Էտ մարթը սկսում ա նաղլ անելը, ասըմ.— Կնեգյըս հիվանդ թեքյ ընգած ա, քյունում ըմ անմահական խնձոր պիրիմ, վեր կնեգյս օտի, սղանա։

www.naregatsi.org

էտ մարթը դաստի կլոխ ա ընդնում էտ կնգանը պիճոթումը, ասում ա.— Խրեղճ ըս, եք, ետ տրեռ քյինինքյ, քու կնեգյըտ հիվանդ չի։

էտ մարթն ասում ա.— Չէ, կնեգյըս ինձ խափել չի, իմ կնեգյըս հիվանդ ա։ էտ մարթը ասում ա։

— Դե եք ետ տրեռ քյինինքյ, թա վեր քու կնեգյտ էն չինի սիրականին նհետ քյեփ ընելիս, յըես իմ մին ծիյապեռնը պիրինձս քյըեղ կտամ։

էտ մարթը եր ա կենում էտ ծիյավերեն նհետ կյամ տոն, տրեսնում կնեգյը սիրականին նհետ քյեփ ա անում։

Դե էլ հի՞նչ, մընում ա փառթ տրեռած։ Ասըմ ա.— Ա՛ տափ, տու ճըղվի, յըես մըեչը նի մընիմ, վեր իստի խայտառակչոթումը յըես տրեսնամ վեչ։

www.naregatsi.org

26. ԱՇԿԸ ԾԱԿ ԽՈԽԱՆ

— Ա՛ կնեգյ, մի օխտը հատ դոլմա քցի, օտիմ քուշտանա՞մ.— բեղերը հլիր տալավ ասից Համաջիվանանց Համաջիվանը։

Ընդրա աշը ծակ պուճուր տըղան ասում ա.— էշ էլ կօտիմ[1], մամա։

— Ախճի՛, մին լավ խրավածծ ըրա։

Էլհա տըղան ասըմ ա.— էշ էլ կօտիմ։

— Ախճի՛, մին լավ մածուն պեր, փրթուշ անինքյ։

Էտ պուճուր տըղան յրա յա պերում.— էշ էլ կօտիմ։

Իտի հաըը հինչի անըմ տամ ա, տղան քըմական յրա էր պերըմ թա.—էշ էլ կօտիմ։

— Ա՛ կնեգյ, մին էն կյունմեն թըրեքյը սըրփի պեր...

Հաըը խոսկը հալա ասալ չար պըրծա՞լ, վեր տըղան ասից.— էշ էլ կօտիմ...

Լոխ սկսեցին ծըծաղելը։ Էտ տըղան շվարած եշից, թա խե՞ յըն ծըծաղում։

Նոր հաըը կլխու տիրավ ընդրան, թա— էշի քոռա՛կ, թըրեքյը չուրուցնելի հետե յըմ օզում, վեչ թա ուտելի։

---

1 Ես էլ կուտեմ։

www.naregatsi.org

27. ԳՅՈՒՎԱՄԻՇ ԿԵՎԱՆԸ

Մի խիլլա տարե ըստրանա առաչ մեր շենըմը դունյա-դունյա շոռ եկած մին մարթ կար։ Ընդրան ասում ինք չանչախ Կեվանն էս Կեվանը վրդեղ նստում ար, փափաղը վեր կալած ուրան թաղրիփ ար անում, դյուվամիշ ար ընում, թա չըես էս տեսի, էն ըրի, էս մարթեն կըլխեն էս քյալաղյը պիրա, ամմա չըես, հինչ անուրի, ղարիբ տըեղ էլ ընգալ ըմ, վեչ մինը կըրացալ չի՞, թա իմ կլխեն մին կուճուր մաղեն պտտկեն էլա նի կյա՞։

Մին դռնում մեր շենին աղսախկալ մարթիքյը տուս ին եկալ, նխածեն պատեն տակեն վրեննը կացալ, չուբուխ ին քաշում, մսըրհաթ ին անում։ Բուրդան տեսանք, մեր շնացե Ղազարը էշը եր իլած, կլոխը քաշ քցած կյամ ա։ Դուղն ասած, տա մըեզ դաստի տեսավ վեչ։

Մթկեն դոնն ընգած, էշը քշում ար, վար մեր հնգուրունցան մինը դգյասկած ասից։— Պարյօր, Ղազար, էտ կլոխտ կախ քցած, էշըտ թո՞րն ըս չո՞ւ անում, լայաղ չըս անում պարյօր տաս մըեզ, հենց ա քյեփըտ էլ խարաբ ինի՞, մինթեվուր ըս։

Ղազարը բրդան վար տըեսավ մըեզ, էշը վրեննն ըրավ, պարյօր տվավ։ Սկսեցին հարցնիլ Ղազարն, թա.— Թո՞րն ըս քյնամ, վըրդըղա՞ յըս կյա՞մ։

Ղազարը էշը պիհրան կապից, մեր քշտեն նստից, ըսկսից դըրդըհան ինիլը։— Ջփուտանց խաչուն անա մի քանի մանեթ ըմ եր կալալ վրդավ, վադան ընցալ ա, կրեցալ չըմ նիսյան տամ։ Մին

www.naregatsi.org

ամսին մաչին եկալ ա իցցուն մանեթ տռռալ։ Խաչին դիվան դռրա յա սարքալ, պրիստավ ա ղարկալ, թա պարտկս տո, յրես էլ օնիմ վե՞չ, վը՞րդըղա տամ, ըսեցե. «Տմա՛ց, նո՛քյռրո՛թուն, պա՛ն կանիմ, կտա՞մ»։ Պրիստավը եկալ ա խոխա-ըրախա առաչը ըրալ, թա յա պարտքը տո, յա Սիբիր ընք քշո՛ւմ։ Տեսա վար ճար չիկա, ըսեցի Երեմը քյննա՛կան ա Թիփլիզ, յրես էլ նհետը քյնամ Թիփլիզ, օրենքյեն նաղլ անիմ, բա՛լքյամ քյոմա՛գյ անե, մի թա՛հր անե։ Երկրըցա քյնացե մեր ա՛ռզա կյրող Միրզին կոշտը, մին աբասի փող տվե, վրեննան, ծեռքան պչեցե, ըսեցե. «Քյմմատաղ, ա՛ Միրզա՛, ինձ հետե մին ա՛ռզա կյրի»։ Էտ ապրածը խոսկըս տափավը չի տըվավ։ Մին աբասին եր կա՛լավ, մին էրգյան ա՛ռզա կյրից։ Տարա Թիփլիզ, դռրդըս մհե խրեգյ ար, էս Թիփլիզի կինտոնեն էլ մին քյա՛լագյ պիրան կլոխս, վար մննաս ինգյնո՛ւմ չի՞։ Ջբուս մի մանեթ փող կար, ըն էլ հնեցին, տարա՞ն։

Ջանչախ Կեվանը, վար Ղզա՛րեն էս նաղլը ըսկանըմ ա, ըրմանում ա, թա.— Տհենց պա՛ն չնի՞լ։ Օրիշը հի՞նչ ա գյո՛ւդո՛ւմ, թա քու ջըբուամտ հի՞նչ կա, համ էլ հո՞մց ա նի մննում ջուբըտ, վար կլա՛խ չըս ընգնում։

Ղազա՛րն ասում ա.— Դունյումըս տհենց մարթիքյ կան, վար ամեն փա՛նդ գյո՛ւդո՛ւմ ըն։

Ջանչախ Կեվանն ասում ա.—Հես ա քյննա՛կան ըմ Թիփլիզ, տեսնամ էտ հի՞նչ տեսակ մարթիքյ ըն, վար տհենց պա՛ներ ըն անում։ Պա յրես սաղ Ղալա՛ն, Գյա՛նջա՛ն, բիրդա՛ն մինչև Բաղդադ էլ քյնացած ը՞մ, ամմա տհենց մարթիքյ տըեսած չը՞մ։

Մին քանի օրանը ետը Կեվանը հըղըցու հաց ա շինո՛ւմ, մին բութուլ ըրաղու նհետ տնո՛ւմ հա՛յբո՛ւմը, շլակում, քյնա՛մ Թիփլիզ։ Վար հըսնում ա Թիփլիզ, հացը օտում ա, էտ ա՛րաղն էլ լոխ խմում ա, պրծընում, բութուլկան կոտրում, բութուլկեն պըենձիգյնին էլ նի ածում ջուբը, Թիփլիզին մեչավը տեսուտեն քյնա՛մ։

Մին դա՛աստա ջա՛հիլնի, տըեսնում ըն ըտրան ջուբը չկամ ա, գյուդում ըն, թա փուլ ա, խուսուցընում ըն, համ էլ ջուբը ակը տամ։ Վար տըեսնում ըն պենձիկնի յա՛, պա՛ց ըն թողում։ Ամմա էս Գյուվա՛միշ Կեվանը պա՛ն չի կլխու ընգնում։

Տա լհա՛ ուրա՛ն էշն ա քշում, ըշվըծա՛խ ա անում քյուշոցավը, տըեսնում ա ուրա՛ն անա մուտանող չիկա՞, ինքյը մուտանում ա էտ ջա՛հիլնըերին ասում.— Յրես ծրեզ մատա՞ղ, էն օրը մըեր Ղազա՛րը եկալ ա կոշտս նաղլ ընրալ, թա՛ էլ Թիփլիզ չի քյնա՛լ, ընդեղեն մարթիքյը փխս ջա՛հիլնի յրն, լոխ ջուբգյիրնի յը՞ն։ Պա հես ա էսքան

www.naregatsi.org

վաղա յա ըչվըծախ ըմ անում, էս քյուչոցավը ջուբա չխկըցնելավ, վնչ մինը մուտացավ վնչ ինձանա՞։

Էտ խոսկերեն յրան էն ղոլան մինն ասում ա.—Գյուվաշմիշ մի ինի՞ լ, լոխ կինտոնին, լոթիքյը ջուբըտ ըն մտալ, ինքյ կալ կոտրած սախսիքյըտ։

Ջանչախ կեվանը բռնըդան զրմանում ա, թա պա էս հո՞ մնց նի մտան ջուբս, վեր գյիդացե վու՞չ։

www.naregatsi.org

28. ԱՂՎԵՍԸ ՆԱՆ ՃՂԱՑՊԱՆԸ

Ըլալ ա, չիլալ մին ճղացպան։ Սա ճղացումը նստած վախտը մին էլ ա տրեսնում ճղացեն քարը վրեննը կացավ։ Տուս ա կյամ, թա տրեսնա հի՞նչ ա, տրեսնում ա դոնգուզլըղը քար քցած։ Նի յա մննում մեչ ղոլ, տրեսնում հաց չի կա։ Մին վեչ, էրկու վեչ...

Մեհետ էլ, վեր քար ըն քցում, ճղացպանը կյողլ ա կենում, մին էլ ա տրեսնում, ըհը՛, մին աղվես երկու հացը եր կալավ, թա քյնա։ Ճղացպանը թուշին հաքյվան փռնում ա։

Աղվեսն ասում ա.— Ամմա՜ն գյունըդը՜ր, ճղացպան ախպեր, պաց թող, հինչու ասես կանեմ, վրեր ասես քյինա Ղալին քըերծան տակը ընգի, կքյինամ...

Ըտրանք ըտրանա ետը ախպեր ըն տառնում։ Միշտ մինտեղ ըն հաց օտրմ։

Շատ ըն կենում, խրեգյ ըն կենում, մին օր ճղացպանն ասում ա.— Աղվես ախպեր, պա օզում ըմ մին ախճիգյ օզիմ։ Աղվեսն ասում ա.— Ճղացպան ախպեր, տու տազ ըրա, յըես քյըզհետե թաքավերեն ախճիգյն ըմ ունզլական։

Ճղացպանն ասում ա.— Պա կըկյա՞։

Աղվեսն ասում ա.— Քյըեզ կործ չօնես։

Մին օր Աղվեսը թաքավերեն տրոնավը անց կնալիս մին արծաթ ա քըթենում։

Քյնամ տոնան ծեն տամ, ասում.— Թաքավերն ապրած կենա, մին ծեր չափը տոք, տանեմ Ջանչախ թաքավերեն արծաթը չափենք։

www.naregatsi.org

Չափը յոր ա օնըմ, քյնում։ Մըխրե կենում ըն, քըթած արծաթը տընում ա չափեն օբրուջումը պիրում։ Թաքավերեն տանը չափը թափ ըն տամ, արծաթը մաշան վեր ա ընգնում։

Մին օր էլ, էլհա թաքավերեն տունավը անց կնալիս մին վրեսկե յա քրթենում։

Քյնում ա, ասում.— Թաքավերը ապրած կենա, ծեր չափը տոք, տանեմ Չանչախ թաքավերեն վրեսկեն չափինք։

Տանըմ ա, մխրե կենում, վրեսկեն տինում օբրուջումը, պիրում։

Թաքավերն ուրեն գյդենուն ասում ա.— Մին չափը թափ տվեք, էլհա մաշին մնացած կինի՞։

Չափը թափ ըն տամ, մին վրեսկե յա վեր ընգնում։

Թաքավերըն ասում ա.— Էս շան տղես վերքան վրեսկե օնե՞, վեր չափեն տակեն էլ ա մընում։

Մին քանե օրանը ետը աղվեսը քյնամ ա թաքավերեն տոնը, ասում.— Թաքավերն ապրած կենա, եկալ ըմ ախճիգյտ օղիմ Չանչախ թաքավերեն հետե։

Թաքավերը ծեն ա տամ տոն, պադև տամ, ասում.— Լավ ըս ըրալ, շատ լավ կինի՞։

Աղվեսը սկսում ա Չանչախ թաքավերեն թերիփ անելը, թե.— Լավ, լավ տներ օնե, իլխի օնե, շատ պաներ օնե, բաղ օնե, բոստան օնե, հինչ գյիղամ էլ հինչեր օնե՞։

Ըխճըկանը օղում ըն։

Ճղացպանը ասում ա.— Ա՛ղվես ախպեր, պա յըես ալրոտ շորավըս ը՞մ քյննական թաքավերեն տոնը։

Աղվեսն ասում ա.— Տու արխային կաց, յըես ամմեն հինչ պիրլական ըմ։

Աղվեսը տունս ա կյամ թրթամնած քյունում թաքավերեն տոնը, թե.— Պա ասել չը՞ք, Չանչախ թաքավերը կյալիս տեղը թըլանալ ըն, շորերը հանալ, պաց թողալ։ Մին ծեռք շոր տվեքյ, տանիմ կյենա։

Թաքավերը եր ա կենում ուրեն շորան մին ծեռք տամ աղվեսին, սա տանըմ ա ճղրցպանեն շորերը հանում, ածում կյըետը, էն պիրած շորերը կյեց տամ, տրեռնըմ ա մին աբրազովնի տղա, տրան էլ մին լավ պընդրցնըմ ա, վեր ընդրեղ խոսե վեչ, խոսած տեղըն էլ աղվեսեն սուտերը պաց չանե։

Քյինըմ ըն թաքավերեն տոնը, նշան տամ, կյամ։

Ճղացպանը ասըմ ա.— Պա էտ լըհա տըհենց, պա հըրսանեքյ ընք անում, հարսը հի՞նչ տեղ պիրինքյ։

www.naregatsi.org

Աղվեսը ասում ա.— Պա, ճղա՛ցպան ախպեր, յրես մրեռա՞լ ը՛մ, վեր տու մտածում ըս, քյըեզ հետե չորս ատաժանի տներ ըմ թփլակա՛ն, տավար ըմ պիրլակա՛ն, վեր ուզլական էլ չըս, թա՛ քյըզհետե ճո՛ւր ածես, խմես, էտքանը յրես կանեմ, թա՛ վերչումն էլ իմ ղադրըս գյիդա՛ս: Կգյիդա՛ս, թա՛ չէ, էտ էլ տու վրս գյիդո՛ւմ:

Աղվեսը եր ա կենըմ, քյինում, տեսնըմ մին հարուստ մարթ ղըզըննեն կրակեն, խորագյ իփում:

Ասում ա.— Տուք էս տոնը բեդմա թափիքյ, Ջանչախ թաքավերը ծրեզ յըրա հըրսընքավ կոըեվ ա կյըլլական:

Քյինում ա էտ ո՛ւրո՛ւգյո՛ւնը Ջանչախ թաքավերեն հրսանեքյը անում, հարսը յոր օնըմ, կյամ էտ տոնը, նո՛ւքյա՛րներեն էլ պնդըցնում, վեր հնազանդ ինին թա՛ւզա՛ թաքավերեն:

Հրսանեքյը պրծնում ա, լոխ ցըրև ըն կյամ: Մին վախտ, վեր խոսկ-խոսկու վեր ա կյամ, աղվեսն ասում ա.— Ճղա՛ցպան ախպեր, վեր մրեռնեմ, մին լա՛վ պադարագյ կանես, էսքան հարուստոթունը քյըեզ ըմ տվալ:

Ճղացպանն ասում ա. — Արխայինն կաց, պա ըտէլ չըմ ըննակա՛ն:

Մին օր աղվեսը կյամ ա, Ջանչախ թաքավերեն տռանը վեր ընգնում դիգյանցկանց սատկըմ: Թաքավերը կյամ ա վրեննավը քացի տամ, սա տո՛ւրո՛ւր չի կյամ:

Նո՛ւքյա՛րներեն կանչում ա, ասում.— Եկեքյ տրան տարաք տրղվրեցեքյ:

Կյամ ըն ըղվեսեն տանըմ, թա՛ քցին փոսը, սա եր ա կենում, կյամ, թաքավերեն կոշտը, թա՛. —Էտ ա՞ քու բադարագյըտ: Համին էս պենը մին էլա անըմ:

Թաքավերը էլհա բադարագյ չանըմ: Աղվեսը կյամ ա, թա՛ կնգանը քշտեն փոչերը պա՛ց անե, թաքավերը թողում չի, ասում ա. — Վեր մին էլ մրեռնես, բադարագյ կանեմ:

Իրեքինջի դո՛ննըմը աղվեսը ղըրթըղորթ սատկըմ ա: Էս դո՛ննըմ թաքավերը մին լա՛վ բադարագյ ա անըմ, ըղվեսեն թաղըմ: Ամմա ափսոս վեր էս դո՛ննըմ նա գյուդում չի՛:

Էն հարուստոթունը մնամ ա ճղըցպանեն ծեռքեն: Դե տրեսեքյ աղվեսը հինչքան խորամանգյ ա, վրեր ճղացպանը թաքավեր էլ շինից, ընդրա հետե էլ թաքավերու ախճիգյ օղից:

www.naregatsi.org

29. ՔԱՋԱԼ ԱԽՊԵՐԸ

Ընում ա, չի ընում մին թաքավեր։ Տրան ընում ա մին կնեգյ, էրկու տղա։ Տղոցան պուճուրը քաշալ ա ընում։ Էտ կնեգյը շուտ մեռնում ա։ Թաքավերն օղում ա մին թաղա կնեգյ օղի։ Ման ա կյամ տես-տեն, քյինամ ա պատհում մին քյասիբ կնգա։ Ընդրան էլ ընում ա մին քաշալ տղա։ Էտ կնեգյը շատ սիրուն ա ընում, ղաշանգյ, նախշուն։ Թաքավերը տրան յոր ա օնում, տանում ուրան պալատը։

Մին քանե տըրնանը ետը էտ կնեգյն էլ ա մեռնում։ Թաքավերը դաժդ ա անում, թա խե՞ ինքյը էտքան քյամբախտ ա՞։ Ետնան ինքյն էլ ա հիվանդանում։

Մոնելիս տա կանչում ա ուրան էրկու տղոցը ասըմ.— Էս քաշալը հինչպես իմ կնգանս մեխկը, լավ կպահիքյ, վեր տըեսնաք նըհետնիտ բըրշում չի, մին պեն կտաք, ուրան համար քյինա, ապրի։

Թաքավերին մոնելան ետը էտ տղերքյը սկսում ըն կարտի տալ։ Քաշալը տոնը յօլա յա տանում, հեյվանը, նախիրը, տոն-տեղ պահում։

Քաշալը վեր տըեսնում ա տահանք տոնը քանդում ըն, մին դինում կյամ ա տահանց ասըմ.— Բա տըեսնում չը՞ք, վար խալխը մին ղոլան ըն ծեր տոնը թըլանում, տուք էլ մին ղոլան։ Հի՞նչ ըք անում, կարտի տալս վե՞րն ա, փլան-փեշմաքյանս վե՞րն ա, այ աննամուսնի՞, ծեր հոր օջաղը խե՞ քանդում ը՞ք, այ ծեր անըմը կտրվի՞։

www.naregatsi.org

էս մեծ ախպերը ասում ա. — Պա՛հ, տո՛ւ իր մնացալ, ա՛ քաշալ, վեր մըեզ պենըկլխու տինիս, տո՛ւս եկ, կորե մեր տանան։

Էս կուճուր ախպերը ետ ա տըեռնում, ասում.— Ջէ, մեր հաըը ըտրան թափշուր ա ըրալ մըեզ, թող կենա։

Քաշալը քյնում ա ուրաան կործին, տահանք էլ ուրանց կարտի տալին։

Քաշալին հովսալան կտրում ա, կյամ ա ասում.— Ա՛յ ախպերք, իմ փայըս տվեքյ, յըես քյինամ ըմ։

Կուճուր ախպերը հիշելալ ուրան հորը խոսկը, եր ա կենում, մին կյեվաթ վըեսկե տալիս ըտրան, ասում.— Դե, պարի ճընապար, տերը քյըեզ նհետ։

Մհեկ քաշալին թողինքյ ճընապարին, տըեսնանք հի՞նչ տեռեն էն էրկու ախպերքյը։

Էն էրկու ախպերքյը ըտի հաղ անելալ, ըտրանց տոնը, տեղը, իլիծ-չիլիծը փըշանում ա։

Տահանք ասում ըն.— Էս տոնը մըեզ կյալիս չի, էս քաղաքը մըեզ կյալիս չի, մըեր կծեգյը ետ ա տվալ, եք հինչ վեր օնինքյ ծախինքյ, կլոխ յոր օնինքյ, քյինինքյ էս քաղաքաս։

Տրանք ճընապար ըն ընգնում։ Տահանց էլ թողինք հղըցումը։ Մհեկ քաշալ ախպորն անա խաբար տանք։ Քաշալ ախպերը քյինում ա մին քաղաք, վերը վեր չորս ղոլավը պատած ար, էրկու տոռն օներ, մինը՝ մաչը նի մննելի, մինն էլ տուս կյալի։ Էտ նի մննելիք տռանը քշտին շինած ար էրկու ատաժանի մին տոն։ Էտ տանն էլ ապրում ար մին նախշուն հարթնը, կլխեն վըեսկե փուլ տրած, հայավարի, իրեք փեշկանի, շոլկում-շափաղում։ Մհեկ տեսնանք էտ հարթնը հի՞նչ աղաթի, հի՞նչ մաասամբի զատ ա, հի՞նչ ա անում[1]։

Էտ հարթնը միշտ ուրան կալը կկոկե, տուս կկյա բալկոնը, կկաղնի, ղարիբ մարթկանց կկանչի, տանի քյեփավ անի, թըլանի, պեց թողնի։ Իտիյութիունավ ժողովուրթին նա շատ վնաս կտա։ Ինքյն էլ շատ հարուստ կապրի։

Քաղաքին տուս կյալի տռանը քշտին ապրում ար մին հարուստ առուտուրական։

---

[1] Սրան հաջորդում է հետևյալ հատվածը.

«Էտ ղաթըմը ծըծաղեցին հաքյաթ լըսողնեն։ Ասողը թա.

— Դե լավ անջուկ կալիքյ, ճվարանի տակա գլիաս չի վեր տեռնում, խոսկ ա, զարափաթ չիս։ (Բանասացի հավելումն է։ Մ. Կ.)

www.naregatsi.org

Մհենդյ նաղլ անիմ էտ առուտուրականին կադարած պեներան, թա էտ հարուստըն հի՞նչ պենի յա ինում, վեր ըտի հարուստ ա։ էտ առուտուրականին ամմեն տեսակի հեյվաննի յա ինում, ամմեն տեսակ թանդյանոց, իժընանոց ճոթը-կտորնի՛, չիթե՛ր, կնգա զարթարա՛նք... Վեր էտ զարթարանքը մուշտարուն նհաշ ա տալի, էն տեսակ իժան կյին ա ասում, վար մուշտարին մնում ա մաթ մնացած, նոնան էլ մաթ մնալան առնում ա։

Վաճառականը էտ առնողներին տանում ա դուքյանին քամակը, յա թըլանում, յա թա չէ, նահանց սաղ պեց չի թողում, սպանում ա։

Մհենդյ նաղլ անինքյ էտ էրկու ախպորցը անա, թա տահանք հո՞ր քյնացին։ Տահանք ման կյալավ, եկին հըսին էտ քաղաքը։ Հղրցավը խլըշկոտելավ քյինում ըն, ամմեղ տըեղը, տեսնում մին լավ, նախշուն հարթնը մին պալկոնում կաղնած, ուրանց կանչում ա. — Ա՛յ շահիլ տըղերքյ, հի՞նչ ըք օզում, հենց ըք խամ ընիքյ։ Նղացած կինիքյ, եկեքյ մին ստաքան չայ խմեցեքյ, քյնացեքյ։

Տղերքը ասում ըն.— Ա՛ քուր, շատ ընք նղացած, շատ ապրիս։

Տահանք խուրջիննին տինում ըն մղակումը, ուրանք նի մննում տոն, նստում։ Մին ստաքան քախծր չայ ըն խմում։ Էտ կնեգյը էրկունջի դռնումը չային մաչը քընըցնող տեղ ա քըցում, տամ տրանց։ Տրանք խմում ըն, քոն ինում, դե էտ հարթնը գյուղում ա քանի սհաթանը ետը բիդի զուրթնին։

Նա վախտից շուտ զուրթընըցնում ա տահանց, ասում.— Դեհա, եր կացեքյ, հես ա մարթս կկյա՛ կգյիդա՛ թա օրիշ պենի յըք եկալ։

Հա, մուտացե ասիմ, վեր հիբը նահանք քոն իլան, էտ հարթնը նահանց խուրջիններան վրեսկեն թափից, տեղը պենճիկի կտորտանք ածից։

Էտ տղերքը սրտաճաք իլած վեր կացին, խուրջիննին եր կալին, քյինացին։

Հղրցումը կուճուր ախպերը մեծին ասից.— Ա՛յ ախպեր, ախեր խուրջինը թիթվացալ ա։

Էտ մրեծն էլ ասից.— Ա՛յ ախպեր, քոն ընք իլա՛լ, կերա՛լ ընք, դինջացա՛լ ընք, ըտրա մհար էլ թիթև ա ըրվամ, էս ա վեր մին խրեգյ քյնանք, կծընդըրանա՛։

Ըտրանք քյնացին։ Կուճուրը հնվաալա չըրավ, խուրջիննին, պեց ըրավ, տեսավ լոխ պենճիկնի յա, խուտուրու-մուտուրու պաններ ա։ Էտ տղերքը տեռին թափառականնի։

Քաչալը լսից, վեր թաքավերին տղերքյը կլոխ ըն եր կալալ, կորալ։ Էտ վախտը քաչալը ուրան խելունքոթունավը տեռնում ա

www.naregatsi.org

թաքավեր։ Թաքավերեն տղերքյը թափուրղա տըեռած կյալիս ըն էտ թաքավերեն տանը ծառա նի մնում, չգյիդալով, վեր թաքավերն էլ ուրանց քաշալ ախպերն ա, ամմա քաշալը տահանց ճնանչում ա, ամեգյը մին պաշտոն ա տամ, պալատումը ապրում ըն, ուրանք չգյիդալով, թե հու վա էտ թաքավերը։

Մին օր թաքավերը փսակվում ա հըրևան քաղաքին թաքավերին ըխճըկանը նհետ։ Ինքյը հըրսանեքյին վախտը նաղլ ա անում կլխավը եկածը։ Իտի նահանք ճնանչում ըն ուրուր։ Քաշալը տահանց լավ պաշտոննի յա տամ, փըսակում, տընատար-խուխատար շինում։

Երգյիքան իրեք խնձոր վեր ընգնի. մինն՝ աստղին, մինը՝ լուսնին, մինն էլ՝ կյրոցին։

www.naregatsi.org

30. ԱՆԲԱԽՏ ԱԽՃԻԳՅԸ ԲԱԽՏԱՎԵՐՎՈՒՄ Ա

Ինձում ա, չինձում մին մարթ նան մին կնեգյ։ Տահանց ինձում ա մին ախճիգյ։ Հաՙրը նան մարը շատ ըն սիրում ըխճըկանը։

Ասըմ ըն.— Մեր աշկին լուսը, մեր աշկին սըվըսիպտաՙկը, մեր տանը սունը էս ախճիգյն ա։

Մին դաՙնըմ մին բախտու եշող ա կյամ, տահանց շենը։ Օզում ըն ըխճըկանը բախտեն եշիլ տան։ Տանում ըն ընդրա կոշտը։

Բախտին եշում ա, ասում.— Էտ ախճիգյը օխտը տարե մըեռալ ա լըղըցնական։

Հաՙրը նան մարը շատ ըն տխրվում։ Օզում ըն ուրաՙնց աշխարքան տունս օնին, վեր էտ մըեռալը լըղըցնե վեչ։ Հաՙրը նան ախճիգյը ճընապարվում ըն։ Շատ ըն քյնաՙմ, թաՙ խրեգյ ըն քյինաՙմ, տեսնում ըն մին մեծ դունզում մին պալատ կա։

Հաՙրն ասում ա.— Ախճիգյս, քյնաՙնք, տեսնանք հի՞նչ կա էտ պալատումը։

Քյնաՙմ ըն։

Հաՙրը սկսում ա տաՙռնը կուսիե-կուսիե անելը։ Պաՙցվում չի։

Ախճիգյն ասում ա.— Ա՛ հաՙր, թող յըես տեսնամ կարում ը՞մ պաՙնաՙմ։

Ախճիգյը կյամ ա տռանը կուսիե տամ, տաՙռնը պաՙցվում ա։ Ախճիգյը նի յա մննըմ, թաՙ հաՙրն էլ հետան նի մննե, ամմա տաՙռնը էլհա նհետ ա ինձում։ Հաՙրը մնամ ա տռանը։

Հաՙրը ըխճըկանը ասում ա.— Տես հի՞նչ կա էտ տներումը։

www.naregatsi.org

Ախճիգյը նի յա մընդրմ, տները շոռ կյամ, տեսնում ա մին տոն, լիքյը վրեսկե, էն մինը՝ լիքյը պրինձ, շաքյար, շատ պաններ մաչին։ Մին տոռնը էլ պանում ա, տեսնում մին մարթ մըեռած, տիրած ընդեղ։

Կյամ ա տռանը կոշտը, ասում.—Ա՛ հաբր, էն ա ընդեղ մին մըեռալ կա։

Հաբրը շատ ա լաց ինում, ամմա ախճիգյն ասում ա. — Ա՛ հաբր, վեչինչ, հալբաթ ճկատես սհենց ա իլալ կյիրվածե։

Պուրում ա տեսա-տենա տամ հորը։ Հաբրը քյինաբմ ա։ Ախճիգյը մնամ ա էտ տանը։ Ախճիգյը էլհա սկսում ա տները շոռ կյալը։ Մարթ ա մընում, թաբ էս հի՞նչ իլաթ, միլլաթ ա, վար էսքան հարուստ ա իլալ։

Էս ախճիգյը ամմեն օր իրեք դանըմ էտ մռալեն լըղըցնում ա, ինքյն էլ մնում էտ տանը։ Տոռնը պանվում չի՞։

Վար կյամ ա մնում, մին տարե, տոռնը պանվում ա։ Էս ախճիգյը տուս ա կյամ բալկոնը, տես ու տեն եշում, մինաք ինքյն ա ինում, էլ օրիշ մարթ չի ինում։

Շատ վար կենում ա, տուս ա կյամ, տեսնում մին ղարաչու դաստա յա քյինաբմ։ Ընդրանց ծեն ա տամ, պիրում ուրան կոշտը, տըեսնում մին ախճիգյ ըտրանց նըհետ, ասում ա.— Հի՞նչ տամ, վար էս ախճիգյը թողեք իմ քշտես։ Մին լաբգյան վրեսկե կտամ, թաբքյի թողիքյ կենա։ Էս ղարաչիքը ոազի յըն կենըմ։

Էտ ախճիգյը թողնում ըն ըտրա քշտեն, ուրանք քյինում։ Էս ղարաչի ախճիգյը քյնաբմ ա ճուր պիրում, տոնը սրփում, ամմեն հինչ անում, ամմա էն մեծ ախճիգյը էտ մարթին ամեն օր լըղըցնում ա, համ էլ քընենքյ ա անըմ, թաբ. «էտ մրեռալը սղննական ա՞, թաբ չէ»։ Էս էրկու ըխճըկերքյը ապրում ըն ըտեղ։ Հաց օտելիս էս ղարաչի ախճիգյը էն մին ըխճըկանը քշտեն հաց չի օտում, կենում ա, վար էն ախճիգյը տուս ա կյամ, ընդրանա ետն ա հաց օտում։

Էս ախճիգյը ասում ա. «Մին տըեսնամ էս խե՞ իմ քշտեն հաց չի օտում»։ Մին օր տռանը քմական եշում ա, տեսնում, տա կյամ ա աստղան հաց յոր օնըմ, տանըմ տինըմ օթախեն քյունջերըմը, ետավ սըերտը թըկելավ կյամ էտ քյունջերը, ասըմ. «Ա՛ քյունջ, մին պատառ հաց տո իլի՞, ախկադ ընք, սոված ընք»։ Ետավ էն մին անգյունը քյինըմ, էլհա իտի ղաչանք անըմ, էն քյունջումը տիրած հացը յոր օնըմ, օտըմ։

Ըստրանք շատ վար կենում ըն, էտ մռալին լըղըցնում, վար մնամ ա օխտը օր, էտ մըեռալը սկսում ա պրպտալը։

www.naregatsi.org

էտ հային ախճիգյը սկսում ա համանչիլը, ուրյան մըթկըմը ասըմ ա. «էս տըղան վար եր կենա, պա համո՞թ չի, հի՞նչ կասես»։

Վերչը կյամ ա մնում մին օր, էտ մարթին լըղըցնում ա, շորերը պիրում տնում քշտեն, էս հային ախճիգյը հըմընչելան ընցնում ա էն մին օթախը, ամմա ղարաչի ախճիգյը մնամ ա քշտեն վրեննը կացած։ էտ մըեռալը աշկերը պանում ա, տեսնում էտ ղարաչի ախճիգյը քշտեն վեննը կացած։

Էս մըեռալը ուրյան մըթկըմը ասում ա. «կա, թա չիկա, ստա յա ինձ լըղըցնողը»։ Եր ա կենում, շորերը կյենում, էս ղարաչի ախճիգյը ուրյան հետե օղում։

Ամմա վեր էն մին ախճիգյըն էլ ա տուն կյամ, ընդրան էլ ասում ա.— Քըյեզ էլ յոր կօնիմ հումցու ծառա։

Էտ մին ախճիգյն ասըմ ա.— Պա յըես ըմ օխտը տարե քյըեզ պահալ, քյըեզ ամմեն օր լըղըցրալ, էս ա մին տարե յա, վար տա էլ պիրալ ըմ կոշտս ինձ քյամաղյ ինիլի հետե, խե՞ տի յըս անում։

Էս մարթը հվատում չի։

Էս ախճիգյը ասըմ ա.— Նա ղարաչի յա։

Էտ մարթը էլհա չի հվատում։

— Դե վար հվատումը չըս, մին տրան փորցի, տես դուզ ըմ ասը՞մ, թա չէ։

Էս ղարաչի ախճիգյը էլհա տահանց քշտեն հաց չի օտում, կենում ա, վար տահանք տուն ըն կյամ, քմկներեն հաց ա օտում։ Մին օր էս մարթը օղում ա էտ ըխճըկանը փորցի, տըեսնա, խե՞ ուրյանց քշտեն հաց չի օտում։ Տռանը քշտեն վրեննը կացած տըեսնում ա էս ախճիգյը կյամ ա ստոլան հացը յոր ա օնում, տանըմ, տինըմ օթախեն քյունջերըմը, ետավ տոշը թըկելավ ասըմ ա. — Ա՛ քյունջ, մին թիքյա հաց տո, սուված մըեռե։— Ետավ հացը յոր օնըմ, տնում պրանումը, սըերտը թկելավ քյնամ տանը էն անգյունը, կյամ, մընգյ էլ յոր օնում, մընգյ էլ քյնում։

Էս մարթը տըեսնում ա, վար տհենց ա, նի յա մննում ասում.— էլ քյըեզ օղում չում։

Էս ղարաչի ըխճըկանը շինում ըն ուրյանց ծառան, ամմա էն մին ըխճըկանը յոր ա օնում հումցու կնեգյ։

Շատ ա անց կենում, թա խրեգյ ախճիգյը ասում ա.— Քյնալու յըմ իմ հարյանց տոն։

Էս մարթը ոազի յա կենըմ։ Եր ըն կենում տեսա, տենա շինում, յոր օնում, քյնած հարանց տոն։ Տըեսնում հարյանց տոն ըշտըղա՞ յա, վըրդեղ իլալ ա, ընդեղ չի՞։ Մին քանի մարթա հրցնում ըն, ասում

www.naregatsi.org

ըն, վեր հաւրը մեռալ ա, մարը էն ա փլան տեղը։ Տանում ըն մորը տունը նշանց տամ։ Ախճիգյը նի յա մննում։

Սունվթա մարը ճնանչում չի ըխճըկանը, ետնան, որ ասում ա՝ յըես քու ախճիգյըդ ըմ, մորը օշը տանըմ ա, ընգնում տափը։ Ըտրանք զոռավ ետ ըն պերում։ Սկսում են նոր քյըեփ անելը։ Պիրում ըն ուրանց լոխ պարիկամներին կանչում, նորու հրըսանեքյ անում։ Էտ ախճիգյը միչև ուրան գյանքին վերչը ապրում ա շատ լավ, օքնում ա ուրան մորը։ Իտի էլ ամբախտ ախճիգյը բախտավերվում ա, օրախ հարուստ ապրում։

www.naregatsi.org

31. ԱՌՈՒԾԻՆ ՆԱՆ ԿԱՏՎԻՆ ՀԱՔՑԱԹԸ

Մին մարթ ա ինում՝ Շաբո անըմավ։ Էս մարթը ամմեն օր քյնամ ար քոլը մին շելակ փեդ պիրում ծախըմ։ Էտ շելակ փեդավը կլոխ ին պահում։ Մին դոնըմ էլ ծմակ քյինալիս ուրանց կատուն էլ նհետ ը քյինամ ա քոլը։ Էս մարթը մին կաղնե ծառ ա քթանում, սկսում ճղորտիլ։ Էտ ծառըմըտ խուլեր կար, տժար ար ճղվում։ Մարթը սկսում ա չըրչարվելը, վար ճղե։ Կատուն էտ մարթին չորս ընգյունեին շոռ ա կյամ, վար մոկուն յա մին օրիշ պան քթենա, օտե։ Ման կյալիս բուրդան կատվին մին ասուծ ա պտահում։

Ասուծը եշում ա կատվեն կլխեն, վրններեն, ջանեն, հաքյվեն, ետնան հըրցնում կատվեն անա, թա.— Կա՛տու ախպեր, տու հանց ըս մեր ազկան ինի՞։

Կատուն ասըմ ա.— Հա, ծեր ազկան ըմ։

Ասուծը ասըմ ա.— Պա վար մեր ազկան ըս, խե՞ տհենց կուճուր ըս։

Կատուն պադասխանում ա ըսուծեն.— Գյուղում չըմ ըտեղ հի՞նչ կա, ասուծ ախպեր, վար տու վէլ մարթու ճանգյ ընգնիս, տու վէլ կկըրճանաս։

Ասուծը ասըմ ա.— Կա՛տու ախպեր, մարթը էտ հի՞նչ պան ա՞, վար քյըեզ էտքան կուճուրցրալ ա։

Կատուն ասըմ ա.— Օզըմ ը՞ս մարթ տըեսնաս։

Ասուծն ասըմ ա.— Հա՛։

www.naregatsi.org

Կատուն առաչ ա ընգնըմ, ծռուծը ընդրա հետան, թուշին կյամ ըն մարթին կոշտը։

Ծռուծն ասըմ ա.— Պարյօր, մա՛րթ ախպեր։

Մարթն ասըմ ա.— Աստուծու պարին։

Ծռուծը հըրցնում ա.— Մա՛րթ ախպեր, լըսալ ըմ օժավ ըս, եք կոխլը կենանք։

Մարթը ծիծըղելավ պադասխանում ա.— Ըստեղ կոխլը կենամ հի՞նչ տաունա, եք քյնինքյ շենումը կոխլը կենանք, վար մեր շենին մարթիքյը տեսնան։

Մարթը օզում ա վար ծռուծեն շենը տանե, վար սպանե, մհենդյ էլ բուրդեն մտածում ա, վար ստեղ էլ կկարե սպանե։

Ծռուծին ասըմ ա.— Ախպեր, տու օժա՞վ ըս։

Ասըմ ա.— Հա՛։

Մարթն ասըմ ա.— Վար օժավ ըս, մին վրեննըտ տիր էս փայդին ղաթըմը, տեսնամ՝ օժավ ը՞ս.

Ծռուծը գյիդում ա, թա ուրան ամմեն օրվա ծառերն ա, կլխավը լոք տամ էս ղոլը, էն ղոլը, վրեննը տինում ա էն տժար ճղվելիս ծառեն ճեխկեն մաչին։ Մարթը սեպին թխում ա, սեպը տուս ա պրծնում, ծառը ծռուծին վրեննը հոփ ա տամ։ Տես ա ծիքյ տամ, տեն ա ծիքյ տամ, տուս չի կյամ։

Մարթը տեսնում ա, վար ծռուծը վրեննը կարում չի տուս օնե, սկսում ա կացնավը կլոխը թակելը։ Թակելիս վախտը ծռուծը ասում ա.

— Կա՛տու ախպեր, վար քյըեզ մչանք տաունամ, պաց ա թուղլակա՞ն։

Կատուն ասըմ ա.— Քու տոնըտ քանդվի, վըրդեղա յա պաց թուղլական, սպանալ ա, պրծա՛լ։

Տհենց էլ մարթը սպանում ա ծռուծին, մորթեն տոն պիրում. մին քյուլքյ կարում, կյենում։ Էտ օրվանից մի քանե տարե էտ քյսիբ մարթը էլ մրսում չի՞։

www.naregatsi.org

32. ԹԱՔԱՎԵՐԵՆ ԿՈՐԱԾ ԱԽՃԻԳՅԸ

Իլալ ա, չիլալ մին թաքավեր։ Ըտրա փըսըկվելանը ետը ընտրա կնեգյը խոխա չի պիրալ։ Ուրան վեզիրը շատ ա ըղոթըմ, ըստուծեն ղաչանք անըմ, վեր աստուծ թաքավերեն մին ժառանգյ տա։

Պառավ վախտը էտ թաքուհին պատճառավեր ա տըեռնում։ Վեզիրն ուրան կյրքին եշըմ ա, ասըմ.— Թաքավերը ապրած կենա, կնեգյըտ մին ախճիգյ ա պրիլական, կյուղըննական ըն։

Թաքավերն ասըմ ա.— Աստուծ թող ինձ ախճիգյ տա, յըես հանց պահիմ, վեր կյուղանան վեչ։

Թաքավերեն կնեգյը ըզադվըմ ա, մին ախճիգյ ա պիրում։ Թաքավերը որոշում ա ըխճըկանը հետե ծովումը մին տոն շինի, ուրան հարմարոթուններավը, վեր շար ծրեռք չի հըանե։

Էտ ախճիգյը կյամ ա մըծանում։ Մեհետ էլ մին դաւրվիշ ըսկանում ա, վեր իտի մին ախճիգյ կա։

Դաւվրիշը եր ա կենում, քյինում էտ թաքավերեն երգյիրը։ Հնար ա քթենում, էտ ախճիգյը կյուղանըմ։

Քշրհանա թաքավերը ըսկանըմ ա, վեր ախճիգյը կյուղացալ ըն։ Եր ա կենում մարթ ղարկում շոռ կյալ։ Վեչ մին տեղ քթենըմ չըն։ Ճարը կտրած թաքավերը հայտարարոթուն ա կյիրում, ցենտրը քյուչեքան կըպցնըմ, վեր. «Հու իմ ախճիգյս քթենա, ախճիգյս էլ ըմ տամ ուրան, թաքավերոթունես կեսն էլ»։

Հայտարարոթունը մին սալդաթ կարթըմ ա, քյինում թաքա-

www.naregatsi.org

վերեն կոշտը, ասում.— Ցրես քու ըխճըկանըտ կքթանամ, թաքչի հինչ պահանջ ասիմ, տաս։

Թաքավերը ղաբուլ ա կենըմ։

Սալդաթն ասըմ ա.— Տու կտաս ինձ մին պարախոդ, ուրան քշողավը, մծերավը, վեց տարվա պաշարավը, իրեք տարի հղե յըմ քյինննական, իրեք տարե ետ կյամ։

Թաքավերը խոսկ ա տամ՝ իրեք օրոմը էտ լոխ հըզըրե, հղե քցի։ Սալդաթը կյամ ա, իրեք օրանը ետը, պաշարը յոր օնում, պրախոդումը նատըմ, հղե ինում։

Իրեք տարի հղե յա քյինում, հըսնում տեղ, պարախոդան վեր ըն կյամ, քյինում մին ծմակու ղրաղ։

Սալդաթն ասըմ ա.— Մինուքը ղարավուլ քըշեցեքյ, մնացածը քյինանք վրերս։

Իտի էլ անում ըն։ Սալդաթը գյուդըմ ա, վեր դաբվիշը ըտեղ ա կենըմ։ Քյնաքիս թաքավերը մին մուտանա յա տամ սալդաթին, վեր ախճիգյը հիշտեղ տըեսնա ճինանչի։ Սալդաթը շատ ման կյալանը ետը, մին պնալի յա քթենում, ամմա մթեն ա ինում, ետ ա տեռնում կյամ վեշչուն կոշտը։ Վրերսըտեղան հնգերունքը կյամ ըն, տըեսնըմ ղարավուլչին սպանած, խրավածը կերած, քյեցած։

Շատ ըն մտածում հնգերունքը, թա հո՞ւ կինի սպանած, ամմա սալդաթը գյուդում ա, վեր տա դաբվիշին պենն ա։ Թաքուն ա պահում, վեչ մինին ասըմ չի, ասում չի, վեր ըստեղ դաբվիշ կա։

Էքյսը քնուտեղա եր ա կենում, հընգերունցը ասըմ.—Թող մըզանա մինը էլհա ղարավուլ վրենննը կենա, մնացածը քյինինքյ վրերս։

Իտի էլ անըմ ըն։ Շատ ըն շոռ կյամ, խրեգյ ըն շոռ կյամ, քթենում չըն ըխճըկանը տոնը։ Վրերսա ետ ըն կյամ, թա հաց օտին, տըեսնըմ ղարավուլչին էլհա սպանած, հացը կերած, քյեցած։ Սալդաթը գյուդում ա, էլհա ասըմ չի։

Քշերավ վեր ըն կենում, սալդաթը էլհա համին հրամանն ա տամ։

Հնգյերունքը ջողաբ-ջողաբ ըն ինում, ասըմ ըն.— Հի՞նչ ա, մըեզ պիրալ ըս ըստեղ կընդ-կընդ կտորի՞ս, ղարավուլ չընք վրենննը կենում, մընգ էլ տու վրենննը կաց, մունք քյինանք վրերս։

Սալդաթը ճարը կըտրած ղաբուլ ա կենըմ, ասըմ ա.— Լավ կինի, մընգ էլ յըես կկենամ, տուք քյեցեքյ։

Սալդաթը կենըմ ա, խորագյ իփում, պդրաստում, տըեսնըմ ա միչև հնգյերունքը կյալը, մին բեղավուր աժդահա մարթ եկավ

www.naregatsi.org

պարիյօր տվավ, Սալդաթը պարիյօրեն պարիյօր ա տամ. էտ էն դաւրվիշն ա ինըմ։

Դաւրվիշն ասըմ ա.— Խորագյը հազըր չի՞, քցի օտինքյ։

Սալդաթն ասըմ ա.— Հա, պադրաստ ա, հինչ օզիս, կա։

Սալդաթը ըտրան խորաձգյ ա տամ, իմացնըմ, թա հինչ կա ուտելի։ Կյինի էլ ա տամ։ Դաւրվիշը հաւրփըմ ա։ Սալդաթը յոր ա օնում խանչալը, ըտրա կլոխը կտրում, թաղում, վեր հնգյերունքը գյիդան վուշ, թաղդան ըսկսըմ ա խորագյ իփիլը միչև հնգյերունքը կյալը։ Հընգյերունքը հանդին մալահաթ ըն անում, վեր. «Քյիննական ընք տըեսնանք սալդաթըն սպանած։ Պրախոդը յոր կօնինքյ, քյնանքյ»։

Կյամ ըն տըեսնում հի՞նչ, սալդաթը սաղ սըլըմաթ, խորագյ իփած, էնա եշըմ, թա կյան, օտին։

Հնգյերունքը զրմանում ըն, ասըմ ըն.— էտ հի՞նչ պեն ա, վեր սպանալ չը՞ն։

Կյամ ըն օտում, խմըմ, քոն ինըմ։

Քշերավը եր ըն կենում, քյինում վըերա։ Վեր շատ շոռ ըն կյամ, մին ծակ ըն քթենում, էն պնաւլին քցըմ ըն, պենվում ա։ Տեսնըմ ըն ընդեղ մըեծ հարըստոթուն, վըեսկե, մին էլ էրկու պնաւլի։ Ցոր ըն օնում պնաւլիքյը, տուն կյամ, ըսկըսըմ շոռ կյալ ըխճըկանը հետան։ Էլլա մին շինոթուն ըն քթենում։ Ըտեղ ընդրանա շատ հարըստոթուն ա ինում, քանց սուվթունը։

Էլհա յըն շոռ կյամ ըխճըկանը հետան։

Սալդաթը քթենում ա ըխճըկանը տունը։ Էն քըթաւծ պնալավը պենում ա, տըեսնըմ մին դաւրեսկա, յրան նստած մին ախճիգյ, ծրքակործ ա անում։

Ախճիգյն ասըմ ա.— Ա՛յ տղա, յըես դժոխկի մաչի յըմ, տո՞ւ ինխս, տուն եք ըստեղան, դաւրվիշը կկյա, քյըեզ ըսպանե։

Տղան ասում ա.— Ա՛յ ախճիգյ, վախե մել ընդրա կլոխը կնոխե յըմ կտրալ։

Համ ասըմ ա, համ հորը տված մուտանան նշանց տամ։

Ախճիգյը դաւստի գյուղում ա, վեր հաւրն ա ղարկալ էտ տղեն։ Ասըմ ա.— Հարստոթունին տըեղերը, նշանց կտամ, վեր յոր օնինքյ, փախչինքյ։ Ամմա դաւրվիշին էրկու ախպերը կկյան, մըեզ կտորին։

Սալդաթն ասըմ ա.— Տըեղերը գյուղում ըմ։

Ախճիգյը հորը մուտանան յոր ա օնում, ուրաւն մուտանան տամ էտ տղեն, հարստոթունը նի յըն տամ պրախոդը վեր հղե ինին,

www.naregatsi.org

ըխճըկանը մեննն ա ընգյնըմ, վեր մին վըսկըճրած դարյա թողալ ա ընդրեղ։

Ասըմ ա.— Տու ըստըեղ կաց, յըես քյինիմ վըսկըճրած դարյաս պիրիմ։

Տղան ասըմ ա.— Չէ՛, տու կաց, յըես քյինիմ, պիրիմ։

Ախճիգյը ասըմ ա.— Չէ՛, վախըմ ըմ հնգյերունքըդ քյըեզ դըշմընոթուն անին։

Տղան լսըմ չի, ըխճըկանը թողում ա ըտըեղ, քյինում դրյին հրեյին։ Հնգյերունքը ղասիդ տղեն թողում ըն, պրախոդը խոդ տամ, քյինում։

Ախճիգյը պրախոդան հինչքան հարայ ա տամ, պրախոդը վրեննը չըն կցնում։

Քշողը յրա յա պըրծընըմ էտ ըխճըկանը յրա, թա թխե, վըխըցընըմ ա, ասըմ.— Քյնա՛ հորըտ ասե, վեր տու սալդաթ չըս տրեսալ, վեր քյըեզ քըթենողը յըես ըմ, պրախոդ քշողը։

Ախճիգյը վխելան նհետ համաձայնվըմ ա։

Սալդաթը ծովեն ղրաղեն նստում ա, քնենքյ անըմ, թա հի՞նչ անի, հո՞ւնց անի մհենգյանց տեննը։ Եր ա կենըմ ընգյնըմ ծմակը, շոռ կյամ, վրերս քթենըմ, ապրըմ։

Մին ամես տի ապրըմ ա, մին դըրվիշ ա ջիհըմ։ Էն համին դըրվիշին մըեծ ախպերը։

Դըրվիշը օզըմ ա նի կապե սալդաթեն յրան, ըսպանի, սալդաթն ասըմ ա.— Հինչ ասիս, կանիմ, թաքյի ինձ ըսպանիս վուչ։

Դըրվիշն ասըմ ա.— Վեր տի յա, յըես քյըեզ յոր կօնիմ նաքյար։

Տանըմ ա տնեերը նշանց տամ, վեր թմիզցնի, ամմա առանց ուրան նի չի մննի։

Մին տարան վեչ պակաս ըտեղ կենըմ ա, ամմա քշեր, ցիրեկ քնենքյ ա անըմ, ասըմ ա. «Էս հի՞նչ գյանք ա, վեր յըես մաչին ըմ։ Դե մհե վեր կսպանե, թող սպանե»։

Մին հետ էլ յոր ա օնըմ, տըռնը պենում, տեսնում մին սուրուճ լղար ծիյանք։ Վեր տըռնը պենում չի՛, դըրվիշը կյամ ա։ Օզըմ ա սպանե ըտրան։ Սալդաթը ըղաչանք ա անում, վեր էլ պենալ չի։ Վեր շատ ա ըղաչըմ, դըրվիշը մեխկն ա կյամ։ Մեթկը փոխըմ ա, էլ ըսպանըմ չի։

Սալդաթը վեց ամսանը ետը տհենց էլ էն մին տըռնն ա պենըմ տեսնըմ մըեծ կայք, հարըստութուն կա։ Էլհա դըրվիշը կյամ ա, թա թխե, սպանե, սալդաթը մչանք ըղաչանք, պըղատանք ա անըմ,

www.naregatsi.org

վեր դռրվիշը ներըմ ա։ Սալդաթը մին տռնանը ետը պենըմ ա իրեքինջի տռնը, տրեսնըմ քյոհնա պորթվելներավ լիգյը։

Դռրվիշը կյամ ա, թա կլոխը կտրե, տղան էլհա միննաթ ա անում։

Դռրվիշը ասըմ ա.— Դե, վեր տի յա, քյըեզ իմ երգյիրաս տռնա ըմ օնում։

Տղան լաց ա ինում։ Դռրվիշն ասըմ ա.— Հիշտեղ օզըմ ըս տանիմ։

Պիրռում ա ղուլլուղին հախը տամ մին լղար ծի, մին էլ մին ճղած պորտվել։

Սալդաթն ասըմ ա.— Պա ըստրանավ հի՞շտեղ կհասնիմ։

Դռրվիշը ըտրանա իվիլ լղար ծի յա տամ։

Տղան ըղաչանք ա անըմ, ասըմ ա.—Տա փխս ծի յա, մին օրիշը տո։

Դռրվիշը ասըմ ա.— Տա առաչվա ծիյան ճեզլի յա քյինըմ։

Ասըմ ա.— Նստե ծին, աշկերտ հոփ կալ, ծիյին մեհետ թխե, ասե վեր քաղաք ըս օզըմ քյինաս, ծին կես սհաթըմը հըսցնական ա։ Հիշտեղ փող հարկավեր կյա, պորթվելը թափ տո, փող ա վեր տռնըլական։

Սալդաթը յոր ա օնում վըեսկըշափ.աղ դարյան, մուտանան, պորթվելը, ծին եր ինում, քըղաքեն անումը տամ, մեհետ թխում, մինչը կես սհաթը տեղ ա հըսնում։

Քյինաժ ա էլ իվիլ թնգյանուց շորեր ինքյ օնում, կյենըմ, հըրըստանըմ, ապրում։ Էտ քաղաքը թաքավերեն նստած տեղն ա ինում, ըտրեղ մին քանե վախտ կենըմ ա, օրը տասներկու աման խորագյ օտում, մին լավ քյուքանըմ։ Մին քանի օրանը ետը թաքավերեն անա հըռակյիր ըն ստանում, վեր ախճիգյը կյամ ա հըղեցն ա։ Լոխ հըզըրվըմ ըն տռնա կյան թմաշա։ Թաքավերը էտ ստալավոյին տըռնանը ընցնելիս լսում ա, վեր ըտեղ իստի մին մարթ կա, օրը տասներկու աման խորագյ ա օտըմ։

Թաքավերն ասըմ ա.— Պերեքյ տեսնամ։

Պուրում չըն։ Թաքավերը կյամ ա, թա տեսնա, տղան տեղան եր ա կենում, դաբրեսկան տամ թաքավերեն, թաքավերն ասըմ ա.— Ախճիգյըս կյուղացած ըն իլալ, մհենգյ կյամ ա, հըրսանիք ըմ ընննական, կկյաս։

Տղան ուրան ադրեսը տամ ա։ Էրկու օրանը ետը ախճիգյը պիրում ըն։ Սալդաթը մթկըմը ասըմ ա. «Հետաքրքիր ա, քյինամ, տեսնամ ախճիգյը հի՞նչ ա նաղլ անըմ»։

www.naregatsi.org

Ախճիգյը վըխելան նհետ ասըմ ա.— Ինձ պրախոդ քշողն ա քթաւլ։

Սալդաթը կյամ ա տոն։ Էքյսը բիդի հըրսանիքյ ինի։ Էտ ըխճըկանը բիդի տան էն պրախոդը քշողին։ Սալդաթը յոր ա օնում վսկըճրած դարյան, մուտանան քցում մաննը, սարքվըմ, քյնամ հըրսանիքյ։ Ինքյն էլ լավ շորեր ա ինըմ կյեցած։ Հըրսընքըմը լավ տեղ ըն նըստըցընըմ։ Փեսեն, ըխճըկանը ստոլեն պարյօր ա տամ։ Զրնւց ա անում, կյինի յըն խմըմ, ըխճըկանը նան պրախոդ քշողին կյենացըն ըն խմըմ։

Սալդաթը ստոլեն տակեն մաննը ետ ա անում, մուտանան քըցած ծեռքավը ստաքանը յոր ա օնըմ, թա խմե, ըխճըկանը աշկավն ա ընգյնըմ մուտանան։

Ախճիգյը օշը կուրցըրած ճղղում ա.— Վեչ մինը կյենացս խմե վուչ, տա չի ինձ քթաւլ, օզում չըմ ըտրա նհետ փսակվի՛մ։

Դերը հրցընըմ ա.— Հինչ ա պտահալ, էս հի՞նչ ղազաբ ա մեր կլոխը եկալ։

Ախճիգյը օշը կլոխն ա հվաքըմ, ասըմ.—Ըմընեքյը հրամած ա, լոխ փուխեցեքյ, ետավ կասիմ հինչ ա պտահալ։

Ըմընեքյը փոխըմ ըն, թաղաթդան ստոլ ըն պենըմ, ախճիգյը մին-մին նազլ ա անըմ, ասըմ.— Ա՛ հաբր, վեչ թա պրախոդ քշողն ա քթաւլ, էս սալդաթն ա քթաւլ, հեսե իմ նշանածս, մուտանաս փոխալ ըմ մուտրնեն նհետ։ Սալդաթը ետ ա մնացալ, վրեսկե դարյին դաբդան։

Պըտմելանը ետը թաքավերը հրամման ա տամ՝ պրախոդ քշողեն կլոխը կտրին։ Ընդետանը ախճիգյը, թաքավերըթունեն կեսը, հարստոթունեն կեսը տամ ա սլդաթեն։ Ետնան հրսանեքյ ըն անըմ, ուրանց հետի փառավեր ապրըմ։

Ըտրանք հրսեն ուրանց մուրազեն, մունք էլ հրսնինքյ մեր մուրազեն։ Երգինքյան իրեք խնձոր ա եր ընգնըմ. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ տըռանը տական անջուկ տընողեն։

www.naregatsi.org

33. ՄԻՆ ԿՅՈՂՈՒ ՆԱՂԼԸ

Ինում ա, չի ինում մին կյող մարթ ա ինում։ Էս մարթը միշտ կյուղոթուն ա անըմ։ Էնքան կյուղոթուն ար ըրալ, վար լոխ ընդրան կյող ին կանչում։

Մին օր նա մտքումը տինում ա, էլ կյուղոթուն չանե։ Ամմա վար ուրյան ճընանչըմ ին հունցու կյող, որոշում ա ուրյանց արջանան տուս կյա։

Ճընապարվում ա մին օրիշ արջան, համ էլ ուրթումն ա օտում, վեր էտ կործավը էլ զբաղվե վուշ։

Քյինում ա, քյինում, մին տեղ մթնում ա, նի յա մննում մին տոն, ասըմ.— Խնթրըմ ըմ էս քշեր ինձ ղոնաղ պահիքյ։

Տնատարն ասըմ ա.— Հի՞նչ կինի՛, ղոնաղն աստծունն ա՛։

Տա նի յա մննում էտ տոնը։ Տրա համար տնեցիքյ չորս ծու յըն իփում։ Օտում ա, քշերը քոն ինում։ Առավոտը քշերավ եր ա կենում, ճընապարվում։

Բիրդյան ճընապարեն մետն ա քըցում, վեր կերած ծվեն հախկը տվալ չի։ Էտ պենը հաշվի քցելյավ վեր կյուղոթուն ա, ետ ա տեռնում, վեր չորս ծվին հախկը տա։ Վեր շենան մուտանըմ ա, էն տնատարը ուշունց ա տամ, ասըմ.— Էն չորս ծվին հախը խե՞ չըս տվալ։

Էտ մարթն ասըմ ա.— Ա՛յ մարթ, մննաս ընգալ ա, եկալ ըմ վեր տամ, հի՞նչ ըմ տլական, ասե։

Հաշվում ա, ասում.— Չորս ծուն թոխս կը տնի, չորս ճոտ

www.naregatsi.org

տունս կրկյար, ընդրանց էլ կմծցնի, ծու կրծին, մնէլ չորս թուխսուկան կտեռնար։

Էստի հաշիվ ընելավ կտեռնա էրկու հարուր հավ։ Հախկը չորս հարուր մանեթ։

Էտ մարթը զարմանում ա, ասում.— Ա՛ մարթ, չորս ծու յըմ կերալ, ասե չորս ծուվեն հախկը տամ։

— Չէ՛, վեր չէ՛։

Ծուվեն տարը սուդի յա տամ։ Էտ մարթը ճընապարավը մըտըծելավ քյինումա։

Ճընապարեն պտահում ա մին չոբան, տեսնում ա, վեր էս մարթը տխուր ա, հըրցնում ա.— Ախպեր, խե՞ տխուր ը՞ս։

Ասում ա.— Հի՞նչ անի՞մ, վեր տխուր չինիմ։ Հինչու կա, լոխ նաղլ ա անըմ։

Էտ չոբանն ասում ա. — Դիմումեմ մաչին ինձ էլ շհադ կյիրի։ Յըես կործը ատկազ ըմ ըննական։

Էս մարթը իտի յա անըմ։ Սուդը պավեսկա յա ղարկում, վեր էս հինչ օրը ներկայանան սուդեն։ Լոխ ասած օրը ներկայանում ըն սուդեն, համմա չոբանը մին թիքյա ետանըմ ա։

Վեր կյամ ա, սուդյան ասըմ ա.— Հիմմա՞ր, քանի՞ կլխանե յըս, վեր իմ ասած ժամանակին ներկայացալ չըս։

Չոբանն ասըմ ա.— Սուդյան ապրած կենա, լոբի յի իփում, վեր պերիմ ըռաշավտ վարիմ, կանաչ-կյարմուր ծաղիգնի տեռնա։

Սուդյան կզնվում ա, ասում.— Հիմմար անասուն, էփած լոբին կփսնե՞։

Չոբանը ասում ա.— Պա իփած ծուն ճոտ կտեռնա՞՞, վեր էտ մարթը իտի յա հաշիվ անըմ...

Ստրանավ կործը աթկազ ա տրեռնում։

www.naregatsi.org

34. ԷՇԸ ԲԱԴԱ ՏԱԼԸ

Հիլիսեցե չարչի Հարութեդը օզեցալ ա, թա քյինա Աղդամ ռանգյ-մռանգյ, լեղակ-մեղակ, թանակ, ասեղ, սանջեղ, բլափկա, վերչը՝ խուրդավաթ պիրի, շենացուց յրան ծախե։

Էշին նստում ա, հղե ինում։ Վեր հանում ա խոջալլուվեն դռուզը, վագոնեն հղեն հալա նոր քցած ըն ինում, հունց ա պտահում, էտ վագոնը հղեն մաշտեղը վեննա կենում։

Էս Հարութեդը մեթկ ա անում, վեր նստե էտ վագոնը։

Վերչը խուրջինը էշան վեր ա օնում, օսավը քցում, էշին վզոնեն քմական կապում, ինքյըն էլ եր ինում վըզոնումը նստում։ Վագոնը վեր խոդ ա ինում, քյինում, քմական էշը կարում չի հանե, քաշ ա ինում հետան էնչունք տես-տեն քաշ-քաշ ա անում, վեր ստակում ա։ Մհենգյ էլ մին տեղ էս վզոնեն ըռըշկեն պրավոզը պուք ըն տամ, վեր քյնա ճուր յոր օնե, նոր կյա։

Ինքյը վեր ա կյամ, հետան վազ տամ, թա.— Մըեզ թողած փախճում ըք, ա տնըքանդե՞ր, խե՞ թողում ըք ինձ։

Վերչը տըրան մին կյերպ հսկցնում ըն, թա.— էս ա կկյա, քյըեզ տանե, վախել մեր։

Կյամ ա, թա նորու նստե, մենն ա ընգնըմ էշը։ Նորու վեր ա կյամ, քմակեն եշում, տեսնում էշին կլոխն ա մինակ մնացալ կախ իլած։

Ետ ա տըեռնում մեր Հարութեդը, էլ վագոն չի նստում, վեր զվանոկ ա տամ, թա հղե ինի, հետան պըլլոր ա անում, թա.— Հի՞նչ ըս պռանչում, էշս, էշս բեդմա ծնիս, էշըս, կոնյա կաշին էլ չըս ինձ տվալ, թա տըրեխ անիմ, պա իտի մրթոթուն կինի՞...

www.naregatsi.org

35. ՍԱԼԴԱԹԸ

Մեհետ մին սալդաթ ա ինում ուրիշն պոստումը վրեննը կացած։ Թաքավերեն տղան մին ջուվարու նհետ զրուց ընելավ համ կյամ ա, քյինում, համ էլ, թա.— Մին իրեք հազար մանեթս բեդաւր, քյինի վաճառականեն ախճիգյը պիրի։

Էտ սալդաթը ըսկանում ա, թա.— Քու իստինըտ, ինդինըտ, յըես առանց մին կըպեկի էտ ախճիգյը կպիրիմ։

Թաքավերեն տղան քյինում ա հորը, թա.— Յըես իստի ըսեցե, մին սալդաթ իստի ասից։

Թաքավերը ծեն ա տամ էտ սըլդաթեն տանում, թա.—Էն հի՞նչ ա իլաւլ, վեր ինդի յըս ասալ։

Սալդաթն ասում ա.— Պա դե կկարիմ պիրիմ։ Թաքավերին ասում ա.— Մին թոխտ տոք, վեր ամմեն հինչ անելի իրավունք օնիմ, միչև անքամ մարթ ըսպանելի իրավունք օնիմ, համ էլ իրեք տարե սրոկ տոք, պիրիմ։

Թաքավերը ռազի յա կենում։ Ըտրան իտի մին թոխտ ա տամ, համ էլ իրեք տարե սրոկ ա տամ։

Էտ սալդաթը լոխ յոր ա օնում, քյինում։ Քյինիյիս չախը մին գեներալ ա ջիհնում։ Էտ սալդաթը իսկյի մհալ էլ չի տինում, չուբուխը ծիքյ տալավ քյինում ա։ Էտ գեներալը կղնվում ա, ըսկսում ուշնունց տալը։ Սալդաթը թոխտը տուս ա օնում, նշանց տամ, վեր իրավունք օնե ըսպանե։ Գեներալը տուս ա օնում, մին իրեք հազար մանեթ տամ, ազադվում։ Սալդաթը քյինում ա, տըեսնում սլդըթ-

www.naregatsi.org

ներեն մեծը սլդրթնուն հրդրցնում ա։ Սուա ըրած, չուբուխը քշխլավ քյինում ա, քշտուռնավը անց կենում, էտ սլդրթնուն մըեծը ետ ա տրեռնում, ըսկսում ըտրան ուշունց տալը։

Սալդաթը թոխտը տուա ա օնում, նշանց տամ, մին վեց հազար մանեթ էլ ըտրանա ինքյ օնում, քյինում։ Քյինում ա ամենալավ պիներան, ամմեն հինչան զակազ տամ, պիրում, լավ ստոլ սարքում, դրաղեն նստում։ Նշում ա, տեսնում վաճառականեն ախճիգյը մին գեներալու նհետ կյամ ա։

Էտ ախճիգյը վեր էտ սլդաթեն իտի տեսնում ա, գեներալեն ասում ա.— Տու գեներալ ինիլավրտ կարում չըս, թա ինդի պեներ առնիս, ամմա սալդաթն առնում ա։

Վերչը ուրանք էլ ընդեղ ղոնաղ ըն ընգնում, օտում պրծնում։

Էտ ախճիգյը գեներալին ասում ա.— Քյինի էն հինչ տրեղը, ասե էս հինչ վաճառականեն ըխճըկանը զակազ տված սրհաթը տոք։ Փողը տոք, երկալ, էս հինչ ժամեն եք էս հինչ տրեղը։

Էտ վեր էն ախճիգյն ասում ա, սալդաթը լոխ ըսկանում ա, ինքյը եր ա կենում ըռաշկեն քյինում, միկա խվիլ փող տամ, սրհաթը յոր օնում, ասած ժամեն քյինում, քյինդիրավը պիցրանում, քյինում ըխճըկանը կոշտը։ Մթեն ա ինում, էն ախճիգյը ճընանչում չի, գյիդում ա, թա գեներալն ա։

Սալդաթը սրհաթը տամ ա ուրան, պրծնում, թա քյինի, ղասիդան մուտանան վեր ա քրցում, ասում.— Մուտանաս վեր ընգավ։

Էն ախճիգյը ասում ա.— Իմս տու եր կալ, էքյուծ յրես քունը կքթենամ պիրիմ, կփոխինքյ։

Մուտանան յոր ա օնում, պրծնում, թա.— Մննանուցս էլ ա վեր ընգալ։

Էս ախճիգյը էլհա ուրան մննանուցը տամ ա սլդաթեն։ Սալդաթը յոր ա օնում, քյինում։ Վեր լուսանում ա, էտ սալդաթը էլհա քյինում ա ստոլ սարքում, ընդեղ նստում, մուտանան, մննանուցը մանումը, ծեռքը տինում ճկատեն։

Վաճառականեն ախճիգյը կյամ ա, իտի տեսնում, թա.— Յրես օզում ըմ քյրեղ նհետ ծանոթանամ։

Սալդաթն ասում ա.— Յրես մին հասարակ սալդաթ, տու վաճառականու ախճիգյ, հո՞ւնց ծանոթանանք։

Ախճիգյըն ասում ա.— Վնաս չօնե։

Ծանոթանում ըն, թաքուն խոսք տամ, վեր փըսակվին։ Էտ ըխճըկանը հաՙրը գյուդում չի՞։ Ըտրա մին կորած պարախոդ ա ինում, հայտարարում ա, վեր ծախում ա։ Էտ սալդաթը ինքյ ա օնում։

www.naregatsi.org

Պարախոդը վեր քթենում ա, սալդաթը ապրանքը լոխ տռնւս ա տամ, յոր օնում։

Վաճառականը կյամ ա, տեսնում, ասում.— Ըք յըես տու պաբիկամանանք։

Իտի էլ անում ըն, ախճիգյը տամ ա էտ սալդաթենւ Իրեք տարեն վեր թմամում ա, էտ սալդաթը վաճառականեն ախճիգյը յոր ա օնում, քյինում, թա.— Թաքավերն ապրած կենա, վաճառականեն ախճիգյը պերալ ըմ։

Թաքավերը նորու հրսանեքյ ա անում։

www.naregatsi.org

36. ՊՐՈՓԵՍՈՐԵՆ ՔՈՒՐԸ

Ինխա ա, չինխա մին թաքավեր, ըտրա ինխա ա մին տղա։ Էտ տղան վեր մծընաս ա, ուզիս ըն վեր մին գիդոթուն ավըրցնին։

Թաքավերը մսըրհաթ ա ընես, վեր տղան ղարկե օրիշ երգյիր, ընդեղ կրթվե, ըտրա կնեգյը թուղես չի։ Թաքավերը մին պրոփեսոր ա պիրիլ տաս, տանը տղեն կրթըցնելի հետե։

Մին քանե տարանը ետը, էտ տղան ուրյան վարժաբեդին կյըրթերըմը մին նկար ա տըսնաս, յրան հյըլ-մայիլ տունաս, հիվընդնաս։ Իրեք օր տանան տոռնը չի տուս կյաս, վեչ հաց ա ուտես, վեչ ճուր ա խմես։

Թաքավերը նան թաքուհին ուրյանց երգյիրըմը դոխտուր, հաքյիմ, պեն չըն թուղես, լոխճին պիրիս ըն պալատ, ամմա վեչ մինը կըրես չի, թա էտ տղեն ցավը գյիդա։

Վերչը մին պառավ կյաս ա, թա.— Յրես կգյիդամ ըտրա ցավը, թող կացեք կյա իմ կոշտըս, պեն ըմ ըսըլական։

Էտ տըղան կըրես չի քյինա, թուլ ա ինխա։ Էտ տղեն հընգերը վեր կյաս ա պռավեն կոշտը, պառավը ըտրան ըղրկես ա էն տղեն կոշտը, ըն էլ տանան հալա տուս չի եկալ, նկարը տեսած օրան։

Հնգերը վեր քյինխա ա կոշտը էտ տղան ետ ա տըռնաս, թա.—Ա՛ հընգյեր, պա ասե՞լ չը՞ս, էս ա իրեք օր ա սիրահարվաժ, մըեռնըմ, խե կյա՞ս չըս ինձանավ ընցնիս։

Հընգյերը կյաս ա պռավեն ըսես, պառավըն էլ քյինխ ա թաքա-

www.naregatsi.org

վերեն ըսես։ Թաքավերը էն պրոփեսորեն ծեն ա տաս, նկարը տուր օնել տաս, թա.— էտ հո՞ւր նկար ա։

Պրափեսորը ըսես ա.— Իմ քվեր նկարն ա։

Թաքավերը ըսես ա, դե քու քվեր պիտի տղես հետե ծզիմ։

Պրոփեսորը ռազի յա կընաս։

Թաքավերեն պլատըմը վեզիրներան մինն էլ ա ըշկըտրած ինիս, թա ուրան ախճիգյը տա թաքավերեն տըղեն։ էտ պենը վեր ըսկընաս ա, ուզիս ա վեր խընգարե։

Կյաս ա թաքավերեն սըտրսոտ պեներ ա խաբար տաս։

Թաքավերը պրոփեսորեն կըպուտես ա, թա.— Քու քվեր անըմ վեր պեն կա՞, խե՞ ինձ ասալ չըս։

Պրոփեսորը ըսես ա.— Դե տրա ասողը թող մին նշան պիրի, հվատամ։

էտ վեզիրը եր ա կընաս ամմեն հինչան յոր ունես, օղտերը պըռնես, թա տանե ռուշվաթ տա, վեր էն ըխճըկանան մին նշան պիրին։

Պրոփեսորեն քուրը կնաս ա ընիս մին օխտը ըտժանե տան կըլխե։ Օխտը ըտաժումը ըտրա կոշտը քյինիս ա ընիս ուրան ախպերը մին թաքուն, օրիշ մղակավ։

էլ ղուշ, ղասաթ ընդրա կոշտը քյեցած չի հայա։ էտ ախճիգյը մին օր եր ա կընաս, տսնաս ուրան տատը եկած կոշտը։ Ըսես ա.— Հո՞ր ըս եկալ։

Տատը թա.— Եկալ ըմ կլոխըտ լվանամ։

Տու մել ասել էտ վեզիրը պռավեն ռուշվաթ տված կինի մին չվալ վրեսկե, թա.— Թոռանըտ անա մին նշան պե՞ր։

Տատըն էլ կքյինի թոռանը կոշտը, թա.— Եկալ ըմ կլոխըտ լվանամ։

Կլոխը լվանում տեղը մուտանան յոր կօնե, տուս կյա, պիրի տա վեզիրին։ էտ վեզիրն էլ կպիրի թաքավերեն տա։

Թաքավերն էլ ծեն կտա պրոփեսորեն, թա.— Պիտի քյըեզ սպանիմ, վեր ինձ խափալ ըս։

Պրոփեսորը ռազի յա կենըմ։ Դե էլ հի՞նչ անե ընդրանա ետը։

էտ ախճիգյը վեր տսնաս ա մտանան կա վուչ, ուրան պենը գյիդաս ա։ Եր ա կնաս տղու շորեր կյնաս, քյնիս թաքավերեն պալատը, հարցըփորձ ընես, տսնաս լոխ տուս եկած թմաշա, վեր պիտի պրոփեսորեն կախաղան տան։

Վեր տըսնաս ա, հինչու հետե յա, ետնան գյիդալանը ետը, էտ ախճիգյը ուրան շորերը կյնաս ա, քյինիս թաքավերեն կոշտը թա.

www.naregatsi.org

— Մտանիս քու պլատեն մարթիքյը եր ըն կալլալ, ասե ինձ տան։ Հտէլ ուրան օրումը հալա տանան տունս եկած չի, ըտրա դարդան էլ վեչ մինը ճննչիս չի, թա հո՞ւ վա։

Թաքավերը հրցնիս ա.— Հո՞ւվա եր կալլալ։

էտ ախճիգյը էտ վեզիրին նշանց ա տաս, թա.— էն ա եր կալլալ։

Վեզիրը ուրթունն ա ուտես թա.— Ցրես եր չըմ կալլալ, յրես ըսկի ճննչիս էլ չըմ, թա տա հո՞ւ վա, հիշտեղեցե յա՛։

էտ ախճիգյը ըսես ա.— Դե վեր իտի յա, մին թոխտ կյիրի, թաքավերն էլ թող փչատե, վեր տու գյիդաս չըս, թա յրես հու վըմ, ինձ ճննչիս չը՞ս։

Վեզիրը թոխտը կյիրիս ա, թաքավերն էլ փչտես ա, տաս էտ ըխճըկանը։ էտ ախճիգյը թոխտը տաս ա թաքավերեն, թա.— էս վեր ինձ ճննչիս չի, գյիդաս չի յրես հո՞ւ վըմ, պա մուտանաս հուր անավ ա ծեռքը քցալ։

Թաքավերը մնաս ա ըրմացած էտ ըխճկանը խելքեն յրա։ Պիրիս ա կործը քննես, տանաս պենը հինչումն ա։ Ցիրեկվա սհաթի իրեքին պրոփեսորեն կախ տալին տըեղը ուրան վեզիրին ա կախ տաս, պրոփեսորեն ըզըդես։ Պրոփեսորեն քուրը ուզիս ա ուրան տղեն հետե, օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ընես։

www.naregatsi.org

37. ԱՐՋԸ ՆԱՆ ՄԱՐԹԸ

Մին մարթ ա ինում։ Ամմեն վախտ քյնում ա ծմակը փայդ պերի։ Քյնամ ա տըեսնում մին քարու յրա մին արչ կաղնածե։

Վեր եշում ա, տըեսնում մարթը քշտեն, ասում ա.— Հինչ օզիս քյըեզ կտամ, մինյակ վեչ մին տեղ ասիս վուչ պունիս տըեղը։

— Էտ մարթին յոր ա օնում, տանում մին վըեսկու հոր նշանց տամ, ասում.— Ամեն օր կկյաս մին քսակ վըեսկե տանիս։

Էտ մարթը յոր ա օնում վըեսկեն, քյնում տոն։

Կնեգյը ստիբում ա, թա.— Տար էս վըեսկուն տըեղը նշանց տո, տըեղն ասե։

Էտ մարթը ասում ա.— Ուրուդյունը կասիմ։

Վեր կյամ ա քոն ինիլի վախտը, էտ կնեգյը ստիբում ա։ Մարթն ասում ա.— Էս հինչ արչն ա նշանց տվալ։

Էտ վախտը արչը էն ա ինում ակուշկեն տական սկնալիս։ Ասում ա.— Մարթ ախպեր, հաըթա մեհետ էլ կկյաս ծմակը, յըես քյըեզ կասիմ։

Էտ մարթը տասը տարե յա տեռնում, ծմակ չի քյնում։

Մին օր կնեգյն ասում ա.— Յա քյնա փայդ պեր, յա տուն եք։

Էտ մարթը ճարը կտրած, վխվխելավ մին չվալ ա յոր օնում, քյնամ փայդուն։ Ծմակավը վխվխելավ քյնալիս մին աղվես ա տուն կյամ, ասում.— Մա՛րթ ախպեր, խե՞ վախում ըս։

Ասում ա.— Յըես էս հինչ արչան ըմ վախում։

Ասում ա. — Վեր էն արչին սպանիմ, հի՞նչ կտաս։

www.naregatsi.org

Ասում ա.— Հ՞ինչ վեր օգիս։

Էտ աղվեսը էտ մարթին յոր ա օնում, քյնամ մին հղրցու կոխկե կրակ անում, ասում.— ես էս մոխրումը թաւվիլ տա՞մ, թոզ անիմ, էտ վախտը վեր արչը կյա, կասիս. «Արչ ախպեր, եք նի մոտ չվալը — աշկերըտ կքուտանա», էտ վախտը չվալեն ռեխը կկապինքյ, թուլուլ տանք։

Եշում ըն, տրեսնում արչը կյամ ա։ Վեր կյամ ա, մուտանում, աղվեսը սկսում ա թաւվիլ տալ։

Էտ արչեն մարթը ասում ա.— Եք նի մոտ չվալը, աշկերըտ մոխեր կտեռնա։

Արչը նի յա մըննում չվալը, կապում ըն, թուլուլ տամ։

Աղվեսն ասում ա. — Դե մըհենգյ, հինչը օգիմ բեդմա տաս։ Յըես կօգիմ, վեր տու ինձ շլաւկիս։

Մարթը շլաւկում ա, տանում օբեն շներեն կոխկը։ Շները հաչում ըն։

Էտ աղվեսն ասում ա.— Մարթ ախպեր, էտ հի՞նչ պտահից։

Մարթն ասում ա.—Շները քյըեզ ընդեղան տեսալ ըն, հաչում ըն։

Աղվեսն ասում ա. — Մարթ ախպեր, օգում չը՞մ, շներըտ պահե՞, անց կենամ էն սարեն քամակը։

Աղվեսը վեր քյնաւմ ա, մարթը ետ ա տրեռնում, չվալը վրեսկավ լցնում, կյամ տոն։

www.naregatsi.org

38. ԴՈԼՄԱ ԻՓԻԼԸ

Մեհետ մին կնեգյ, քյնամ ա հրըվանեն կոշտը, վեր խորագյ իփիլը սըվըրցնե։

Տա հրցնում ա.— Դոլման հո՞ւնց կիփին։

Հրեվանը տրան ասում ա. — Քյնա մեսը թակե։

Ասում ա.— Գյուդում ըմ։

— Քյնա պրինձը մաչը ածե։

Ասում ա.— Գյուդում ըմ։

— Ալյերը խառնե, աղը, տախտեղը ածե, սողանը, կյինձը, նաննան քըցե, խառնե։

Ասում ա. — Գյուդում ըմ։

— Տիրևըմը փըթաթե, տիր ղզղանումը։

Ասում ա. — Գյուդում ըմ։

— Դե վեր գյուդում ըս, իտի էլ ըրա իլի՛, խե՛ ե՞կալ ըս զահլեա տանում։

— Պա է՛լ պեն բեղմա ինի՛, խե՛ ասում չը՞ս։

Հըրեվանը տեսնում ա, վեր երե ատաժը տերտակ ա, ասում ա. — Քյնա՛ մին պատառ քաքուռ էլ տիր յրան, թող իփի։

Տա ասում ա.— Ըտեղ ըմ գյուդում։

Վերչը քյնամ ա մին մեծ քաքուռ տնում դուլմեն կլխեն, իփում։ Շատ վեր իփում ա, վրեսը ընգնում ա ընդեղեքյ։ Մարթը հանդեան կյամ ա, պիրում ա, թա՛ դոլման տինի ըռաշկեն, վրեսը ընդեղեքյ յոր ա օնըմ։ Մարթը մին լավ ուշումց ա տամ, փռնում մին լավ տըմ-

www.naregatsi.org

բըղում։ Մարթը թակում ա, ինքյը տակեն օղում ա, վեր մարթին քշտեն արթար ինի, ասում ա.—Ա՛ մարթ, հրեվանըս ա սըվըրցըրալ, ես հո՞ւնց անիմ։

Էս մարթը տո՛ւնա ա կյամ հրվանեն ուշունց տամ։ Հրեվանը տո՛ւնա ա կյամ, տրան նաղլ անըմ, ասում.— Կնեգյըտ հիմմար ա, պահում ըս հի՞նչ անիս, դռւմա իփիլը ինքյը գյիդա՛լիս, եկալ ա մեր զա՛հլեն տանում։

— Հա՛յ գյուդո՛ւմ ըմ, հա՛յ գյուդո՛ւմ ըմ. էտ ա՛ գյիդա՛լը։

www.naregatsi.org

39. ԿՅՈՒԼ ՏԵՌԱԾ ԿԸՆԵԳՅԸ

Ընում ա, չընում մին թաքավեր, ըտրան ինում ա՝ մին տղա։ Տանում ըն բխտրեշուն կոշտը։

Բըխտրեշին ասում ա.— Վեր էտ տըղան փըսակվե, կյուլը ուտլական ա։

Թաքավերը մին ծի յա տամ տըղեն, վեր կոնյա ընդրանավ պըշտպանվե։ Մին հետ տղան քյընում ա վըերս, պըտահում ա մին չուբանե։ Տրեսնում ա էրկու շոն օնե, շները օղում ա։

Ջորանը ասում ա.— Միտ ինձ տո, շները քյըեզ տամ։

Մին տամ ա, շները ինքյ օնում։

Քյինամ ա, քյինամ, տրեսնում ա մին կյըետ, մնամ ա վըենը կացած։ Շները քյինամ ըն մին ծիյի յըրա, տղան հետան։ Քյինամ ըն տրեսնըմ մին պառավ նստած, մին կյետու ղրաղե։

Էտ տըղան ասում ա.— Հո՞ւնց անիմ, վեր կյետավը ընցընիմ։

Պառավը տրեսնըմ ա, վեր շատ ա ղաչանք անըմ, ասըմ ա.—Ա՛ բալա, կա մին մաղ տամ, տար քցի կյըետավը, անց կաց, ամմա մաղը ծեռքատ վեր չի տինի՛ս։

Տղան տանըմ ա մաղը քցըմ, կյըետավը անց կենում։

Քյինամ ա, տրեսնըմ մին պալատ, մաչին մի ախճիգյ։ Ասըմ ա.—Ա՛յ ախճիգյ, տու լհա իմ պենըս ըս, իմ փայնդըս ըս, իմ ջանըս ըս։

Ասըմ ա պրծնում, փըսակվըմ, մնամ ըտրեղ։ Հայմայն կյուլը տղեն վրնըհրտերավը կյամ ա, մընում կյետեն ղըրաղեն վըենը կացած։ Էտ տըղեն կնեգյը մաղը տունա ա օնում մարթին ջուբան,

www.naregatsi.org

Թաքուն տանըմ կյըետավը քցում, կյուլը յոր ա օնում կյամ պալատը։

Էտ տըղան, տխուր նըստած, կընգանը ասում ա.— Քշերըս շները սըխ կկապիս, քյինամ ըմ վըերսի։

Կնեգյը կյուլ ա տըեռնըմ, էն մին կյուլին նըհետ քյինում ծամակը, վեր էն տըղեն օտին։ Շները պեց ըն ընգնում, կյամ ըզադըմ էտ տղեն։ Տըղան ետ ա տեռնըմ, կյամ հորը տոնը, ուրյան հետե ազատ ապրում։

www.naregatsi.org



40. ԱՇԸՂԸ

Մեհետ մին աշըղ ռւրրան շիգյիրդներեն նհետ քյնամ ա շեններքը շոռ կյամ։

Մին շենում մին լավ սերռւն հարթեն ա տրեսնում, սկսում մտածելը։ Ասում ա.— Տրեսնաս, վեր ըստա էսքան սերռւն ա՞, ըստրա նշանածը հո՞ւնց կինի՞։

Ռւրռւգյռւնը վեր մթնում ա, հումց ա պտահում, քյինամ ա տահանց տանը ղոնաղ ընգնում։ Տրեսնում ա տահանց տոնը մին ամպետք, շորերը ճղորտած մարթ եկա՞վ, նի մըտա՞վ, պարիօր տվա՞վ, նստի՞ց։ Աշըղը գյիդաց, թա հրևանն ա, եկալ ա զրռւց անին։ Ամմա վար քշերը ըտեղ քոն իլավ, նոր գյիդաց, վեր տա ընդրա նշանածն ա։ Էտ աշըղը էրվից, խրավվից, սազը եր կալավ, ըտեղ մին խաղ կապից, ասից.

Նա սարերեն լավ խոտ ա,
Մաղիգյ-ծաղկունքի վրեհտ ա,
Քոն իլ, եր կաց, բախտ օզե,
Կեղեցկոթունը սոտ ա...

— Էտ հո՞ւնց ա, տու էտքան սերռւն, ղաշանգյ կնեգյ, ամմա քու նշանածտ ըտհենց փիս ա։

Հարթենը ասից.— Աստվածծ, վեր լոխճին բախտ ա պիժենալ, իմ պաժինս էլ էս ա ընգալ, յըես հի՞նչ անիմ։

Էտ աշըղը ըտեղ մնամ ա՞, թա կըլխան ծեռք եր կալածծ հիշտեղ ա քյնա՞մ, միշև մհենգյ էլ գյռւռնում չը՞նք։

www.naregatsi.org

41. ԱՐՉԸ

Ինում ա, չինում մին մարթ ա ինում։ Էտ մարթը մին օր քյնամ ա սարը խոտ հարել։ Վար հարըմ ա, պրծնում, խոտը տանում ա մին տանձի ծառի տակին թուփ անում, ինքյն էլ եր ինում էտ ծառը, տրեղ շինում, նի մննում մաչը։ Մինաւկ կլոխը թողում պաց։ Էտ քշերը մին արչ ա կյամ եր ինում ծառը, սկսում տանձ օտելը։ Լավ էլ լոնանգյա քշեր ա ինում։ Արչը վար տանձը կտրում ա լոանինգյին տեմ օնում, թա տեսնա հասալ ա՞, թա չէ, էտ վախտը ծառեն յրա մարթը աշկերը պանում ա, տրեսնում մին ծեռք տանձը մեկնալ ա դիբի ուրան։

Էտ մարթը ասում ա.— Օզում չը՞մ, օզում չը՞մ։

Արչը վխելան, վեր ա կյամ, փախչում։ Քշերավը էտ մարթը եր ա կենում վխեցած կյամ տոն, էլ ըտեղ չի քյինա՞մ։ Արչը վխելան էլ կյամ չի էտ տանձին տակը։

www.naregatsi.org

42. ԱՇԿԱՎ ՏԱԼԸ

Գյո՛ւղցյազ բիբին քյըեցալ ար մին օրե հրեվան շենը։ Կյալիս ըրտերեն մաշավըն ար կյամ։ Տրեսնում ա մին լավ արտ, հասկերը էրգյան-էրգյան։ Տա՛ուրանց արտըն ա ինում։

Ասում ա.— Պա՛հ, պա՛հ, փա՛հ, էս հի՞նչ լավ արտ ա, տարը մրեռածըտ հո՞ւնց ա փսալ, լհա աստուծ մաշին նստած ինի։

Ո՛ւրանց շնացե մին տղա խոխա նհետը կյալիս ա ինում։ Ասում ա.— Գյո՛ւղցյազ հաւսի, ծեր արտըն ա է՞, խե՞ ուշունց ըս տամ։

Գյո՛ւղցյազ հաւսին իրեսեն խըչըկնքում ա, թա.— Հա՞, յըես էլ ասիմ, խե՞ ստի հասկերը կուճուր-կուճուր ա, փիս ա, ետնան ուրան մըթկըմը ասըմ ա. «Ինստի ասիմ, վեր աշկավ չի տան, վո՞ւյ, մունք աշկ յոր օնող ընք, աստուծ վեչ անի, վեր մրեզ աշկավ տան, փիս աշկը տրաքե, ցըրեվ կյա, եր տեռնա»։

www.naregatsi.org

43. ԽՈՐԹ ՄԱՐԸ

Մեհետ իլալ ա, չիլալ մին մարթ, մին կնեգյ, մին ախճիգյ։ Էտ մարթին կնեգյը մըեռնում ա, էտ ախճիգյը շատ ա ասում. — Ապա, մին կնեգյ օղե։

Հաբը քյինամ ա մին կնեգյ օզում, պիրում։ Ընդրան ինում ա մին ախճիգյ։ Էտ էրկու ախճիգյը ուրուր նհետ բրիշում չըն։

Կնեգյը մարթին ափաթը կտրում ա, ասում.—Յա քու ըխճըկանըտ կլինխը վարե, յա չէ յըես տունա ըմ կյամ քյըզանա։

Քշերավ քշրհանա մարթը եր ա կենում ըրբան լծում, ախճիգյը տինում մաչին, քյունում փաղդու։

Փաղդ ընելիս հաբն ասում ա.— Ապան մատտաղ, տու ըտեղ կաց, յըես քյինամ տիեր։ Ըրած փաղդ կա, յոր օնիմ, կյամ։ Ըխճըկանը խափում ա, ըրբան լծում յոր օնում փաղդը, կյամ տոն։

Էտ ախճիգյը լաց ա ինում։ Վերչը մնամ ա ծմակումը։

Մին պուն ա քթենում, նի մննում պունը, կրակ անում, հաց թխում, թա օտե, մին մոկն ա կյամ, ասում.— Բա՛լա, պատառ հաց տո։

Ախճիգյը տամ ա։ Վեր հացը օտըմ ա, մոկումը էն ըխճըկանն ասում ա.— Էս պունը արչու պուն ա, էս սհաթես կլլնկան ա, ասե. «Պարև քյըեզ»։ Վախես վուչ հա՞... Արչը մին զընգոլակ ա պիրլնկան, ասե. «Ըք խաղ անինքյ»։ Արչը աշկերը կպլնկան ա, քյըեզ ասե. «Ջանգը խաղըցրու, թա կարիմ փռնիմ, քյըեզ ուտլնկան ըմ, թա կարիմ վուչ փռնիմ, մին հայբա վըեսկե կտամ»։

www.naregatsi.org

Արշը կյամ ա, ըխճըկանը մին զնգոլակ տամ, սկսում ըն խաղ անելը։ Ախճիգյը զնգոլակը տամ ա մոկնեն, ինքյը նի մննում պոժ-կան։ Արշը նան մոկնը էնքան վազվազ ըն անում, արշին հոգյին օզում ա, թա տունա կյա։

Արշն ասում ա.— Նղացալ ըմ, տունա եք, ըշկերես շորը ետ ըրա։

Ախճիգյը տունա ա կյամ։ Մոկնը զանգը տամ ա ուրան, արշին աշկերը պեց ըն անում։ Արշը քյնամ ա մին հայբա վրեսկե պիրում, տամ ըխճկանը։ Ախճիգյը յոր ա օնում, քյինում։ Տոն քյինալիս հորը ջհնամ ա, մին տրեղ քյինում ըն տոն։ Խորթ մարը վեր տրեսնում չի՞, պլանում ա՞, մին էլ վեր վրեսկեն տեսնում չի,՞ ուրանան քյինում ա՞։

Մարթին ասում ա.— Իմ ախճիգյս էլ տար ծմակը, հանցու վրեսկե պերի։

Հարը տանում ա, թողում ծմակումը, ինքյը քյինում փաղ անում։ Վերչումը կյամ ա, թա ախճիգյը պիրի, տրեսնում հի՞նչ... Ախճիգյը նի յա մտալ արշին պունը, հաց ուտելիս մոկումը մին թիքյա օզալ ա, տվալ չի։

Արշը նի յա մննում պունը, գյուդում ա, թա համին ախճիգյն ա, ըզնգոլակը տամ ա ըխճըկանը, մին մնուտումը փռնում ա, օտում։

Հարը կյամ ա, թա ախճիգյը տանե, տրեսնում վսկոքնեն վեր տեռաճ։ Նի յա հանում հայբան, տանում։ Խորթ մարը նախանձո-թունան օզում ա, թա մրեռնե, դե հի՞նչ վեր ա կտրալ ուրուշու հետե, ինքյն ա նի ընգալ։

www.naregatsi.org

44. ԹԱՔԱՎԵՐԸ ՆԱՆ ՎԵԶԻՐԸ

Ինըմ ա, չինըմ մին թաքավեր։ Էտ թաքավերը մին օր ուրան վեզիրին ղարկըմ ա, ուրան հըրևան բաղչին անա տասը վրեխճար առնի։

Վեզիրը քյինըմ ա, առնըմ, թա պերի, էտ բաղչը մին թոխտ ա կյիրըմ, տամ էտ վեզիրին, վեր տանե տա թաքավերին։

Թոխտին մաչին կյիրած ա ինըմ. «Ծեր հրամմանավը տասը վրեխճար ա ըղարկած»։ Վեզիրը պերելիս, ճընապարին մին վրեխճար ա մորթըմ, օտըմ։

Մընացածը պերըմ ա, տամ թաքավերին, թոխտըն էլ նըվետը։

Թաքավերը կարթըմ ա, տըեսնըմ տասը վրեխճար ա կյիրած, ամմա վեզիրը իննըն ա պերալ։

Թաքավերը վեզիրին կանչըմ ա ուրան կոշտը, ասըմ.—Վե՛զիր, տու բեզմա տասը վրեխճար ինիս պերած, իննըն ըս պերալ։

Վեզիրըն ասըմ ա.— Թաքավերը ապրած կրենա, դուզ ա, իննը վրեխճար ըմ պերալ։

Թաքավերը կրզնըվըմ ա, ասըմ.— Ա՛յ մարթ, հունց թա դուզ ա, տու բեզմա տասը վրեխճար ինիս պերած, իննըն ըս պերալ։

Վեզիրըն ասըմ ա.— Դուզ ա, թաքավերըն ապրած կենա։

Թաքավերը տըեսնըմ ա, վեր վեզիրը հրսկանըմ չի, կանչըմ ա տասը մարթ, ամեն մին մարթի վրենա մին վրեխճար ա կապըմ։ Թաքուհին էլ ա ինըմ էտ տասը մարթին մեչին։ Թաքուհին մընըմ ա առանց վրեխճար։

www.naregatsi.org

Թաքավերըն ասըմ ա.— Ա՛յ մարթ, տըեսնըմ ը՞ս, վեր մին վըեխճար պըկասըմ ա, դե քյինի վըեխճարը պեր։

Վեզիրը ուրյան հետի դինջ-դինջ, ասիս լհա վեջան չի, ասըմ ա.— Ատա, քու կընեգյըտ էլ, քու վըեխճարնիտ էլ։ Շուտ կյար, մինին վըեննան էլ ինքյը փըռնար, մընար վեչ առանց վըեխճար։

Իտի էլ թաքավերը կարից վեչ հըսկըցնի, վեր պերած պիտեր տասը վըեխճար, վեչ թա իննը։

www.naregatsi.org

45. ԿԸՏԱԿԸ

Ղարաբաղի կյուղերան մինըմը մին կյուղացի, անըմը Ծատուր, մըեռնելիս վախտը դերին կանչըմ ա, կըտակ անըմ։

— Կյիրի՛, հենգյ հազար մանեթ Մանիշակ անըմավեր ըխճըկանըս, իրեք հազար մանեթ Կյավերք անըմավեր տըղես, վեց հազար մանեթ Ջառի անըմավեր կընգանըս, էրկու-էրկու հազար մանեթ էլ էն մընացած քյուլփաթներես, հազար մանեթ էլ քյըեզ։

Դերը մտըածըմ ա, մըտածըմ ասըմ.— Պա չըես քյըեզ լոխճան շատ սիրի՛մ, տու ինձ հազար մանեթ տա՛ս, պա իտի պեն կինի՛։

Ծատուրը մըտածըմ ա, ասըմ.— Ա՛ դեր, լավ, քյըեզ էլ էրկու հազար մանեթ ըմ կըտակըմ։

Տերտերը օռած, փըքվաձ քյինըմ ա տոն, կընգանը ասըմ.— Ա՛ կընեգյ, պա ասել չը՛ս, Ծատին ինձ էրկու հազար մանեթ ա կըտակալ, դե էլ հի՛նչ դաշրդ օնինքյ։

Կընեգյն ասըմ ա.— Պա Ծատին էտքան փողը ըշտըղա կըտա՛։

Դերը մանանը տինըմ ա քունքին, ասըմ.— Ղորթ ըս ասը՛մ, բա ըշտըղան կըտա՛, դե վեր իտի յա, քյինիմ հըրցընիմ, տըեսնամ ըշտըղան կըտա։

Քյինըմ ա նի մընընըմ Ծատուրեն տոնը, ասըմ.— Ա՛ Ծատուր։

Թա.— Հի՛նչ ա՛։

— Ա՛ Ծատուր, բա ըշտըղա՛ն կըտաս էրկուհազար մանեթը։

Ծատին յուրղանեն տական վրեննները հանըմ ա, նշանց տալավ ասըմ.— Վրեններիս տական կըտամ, վրեններիս տական։

www.naregatsi.org

46. ՓԸՌԹԻՒՇԸ

Էրկու ախպեր ըն ինըմ։ Ըտրիանք հինձա կյամ ըն մին շոք, կանանչ ծառի տակե նըստըմ, վեր փըռթուշ օտին։ Մըեծ քըթուլնեն քաշըմ ըն, յրա պըրծընըմ, վեր օտի՞ն։ Ամմա պիծի ախպերը խորամանդյ ա ինըմ. մըթկըմը օզըմ ա մին պաճճառ քըթենա, վեր ինքյը շատ օտի էտ կյեվաթը լիքյը փուռթուշան։

Քըթուլը քաշ ա տինըմ, մըեծ ախպորը ասըմ. — Ա՛յ Պետի, մեր հաբր հո՞ւնց մըեռավ։

Պետին քթուլը քաշ ա տինըմ, համավ, հոտավ, ղարաբաղցուն ըգյուրա նաղլ անըմ։

Միչև նաղլ ա անըմ, պըրծընըմ, տըեսնըմ ա փըռթուշին կյեվաթը տերտակ։ Սուա ա անըմ, եր կենըմ, քյինըմ հինձ։

Մին օր էլ քյըսօրին, հինձաձն ետ տըեռած, փուռթուշ օտելիս էլհա կուծի ախպերը օզըմ ա խաբփի մըեծ ախպորը, ինքյը շատ օտե։ Ասըմ ա.— Ա՛ Պետ, էն օրը լավ չի ըսկացե, ապան հո՞ւնց ա մըեռալ։

Մեծ ախպերըն ասըմ ա.— Հո՞ւնց ա մըեռա՛լ, փո՛ւհ ա ըրալ, մըեռալ, փու՛հ, ետնան էն փադի մեծ քըթուլնեբրան մինը քըշիլավ յրա յա պըրծընըմ փըռթուշին։

www.naregatsi.org

47. ՏԱՓԱԿ ԱՐՏԵՆ ՄՈՍԻՆ

Ինիս ա, չինիս մին խան։ Էտ ըպրես ա ինիս Ստըփնոցեն խուն-Թունը։ Մըհենդ էլ էտ շենին տըեղը մաՀլըմ ա։ Մեր էս Տումա շենան էրկու վերստ հըեռե յա։*

Էտ խանը, հիշքան չըչըրես ա ընիս ժուղովուրթեն, էտ ուչան հերթեն, լոխ էլ իտի յըն ըլալ ընես, ամմա էս մինը շատ փիսն ա իլալ, շատ ա չըչըրես իլալ ժուղովուրթեն։ Ըտրա նհետ մին տեղ, մին թաղա օրենքյ էլ աբ սըվըրեբալ։ Էտ թոռքեն խանը, վեր մինը կնեգյ չի ընե՞ս, սըվթա քշերը ինքյն ա նհետը քոն ընիս։

Համ էլ, գյիդաս ը՞ս հինչ կա, լավ ա մարթըս քըշեր-ցիրեկ չըշաբվե, քըրտընքե, տունզնը մընա, տկլոր մընա, թաքյ լհա չըհի-լին առաչին համավ թըքյան օրունչը հաբամ չանե։ Ըտրանա յըեբը փի՞ս պեն չիկա։ Ղոչչաղ տըղեն մատաղ ըմ է՞, մատաղ ըմ։

Էտ վախտը էտ Տափակ արտըմը ըլած շենըմը Հերիքյնազ ընըմավ մին կնգա մին մադաբ տղա յա ընիս, անըմը Մոսի։ Մոսի, հինչ Մոսի՞, աստուծ ընդբա կուտնեբեն ղուվաթ տա՞։

---

1 Տումի գյուղի խոսվածքում, որով գրի են առնված այս և հաջորդ հեքիաթները, ը հնչյունը գործածությունների ճնշող մեծամասնության մեջ փոխել է իր որակը. նրա արտասանության ժամանակ լեզվի ծայրը բոլորովին չի հպվում առաջաքիմքին և չի թրթռում, այլ փոքր-ինչ բարձրանում է վեր՝ իր և քիմքի միջև ստեղծելով աղատ բացվածք, որի հետևանքով էլ նրա արտասանությունը խիստ թուլացել է։ Ը-ի այդ արտասանությունը գրության մեջ նշել ենք արամյան ը-ով —Խմբ. խմբագրի։

www.naregatsi.org

Մոսին լհա խոխա վրխտանց ա ըռվըցնես իլալ, վեր մըծանա, շատ ղոչչաղ ա իննական։ Ամմա ընդրա մարը Հերիքյնազը, ին էլ ա մին ղոչչաղ կնեգ իլալ։

Վեր Մոսին իլալ ա, հըռվանեն կընեգըն էլ մին ախչիգ ա պերալ։ Ըտահանք հըռևան-հըռևան ուռուռ խոսք ըն տա՞ս, վեր հիբը ըտահանք մըծանան, ուռուռ նհետ փսակին։

Շատ ա ընցնես, խոեգ ա ընցնես, խոխեքյը մըծընաս ըն։ Բիդի հըրսանեքյ անին, ախճիգը հըսած-փըսած ա ինիս, Մոսին էլ տըղամարթ, ամմա Մոսին ուզիս չի, վեր հըրսանեքյ անե։

Մարըն ըսես ա.— Ա՛ բալամ, հինչ ա քյըեզ պըտահալ, խե՞ հըրսանեքյ չըս ընես։

— Ուզիս չըմ, վեր սըվթա՛ քշերը խանը կընեգյս տանե, նըհետը քոն ինի, էլ հոր ը՞մ փըսըկվես։

Մոսի, հի՞նչ Մոսի, ղարաբաղցե... Կոխկը հըստըցընես ա, կոխկեն չի ընգնես, թա Քյիրսը տըեղան տուռուռ կիկյա, Մոսին էլ կոխկեն կընգնե։ Մարը շատ ա մըտըծես, շա՛տ, չափ չիկա՞։ Հընգեր, հըռևան մին անգյունն ըն ընցնես, վեր Մոսուն փըսակին, ամմալ չի կյաս։

Ըխճըկատարըն էլ մին ընգյունան, թա.— Մեր ախճիգը մըծացալ ա, տընես ըք՝ տա՛ռեքյ, տընե՛ս չըք, ուռուշու յընք տաս։

Մոսին լըհա մին կլոխ վրեննն ա կացալ, թա.—Թողեքյ ուռուշու տան, տըեսնամ հո՞ւնց ըն տաս։

Հերիքյնազն էլ թա.— Բա՛լա, հոր ըս էն մարթին ըխճըկանը վրեննը կա՞պալ, ուզիս չըս, թողե ուռուշու տան։

Մոսին էլ, հի՞նչ Մոսի՛, չոբան մարթ ըլի՛, կեռած, խըմած, հանց ա ջանավար։

Մարը քյիս ա խանեն կոշտը, թա.— Ա՛ խան, պա իստի պեն կինի՛, էն տղան էն մարթին ըխճըկանը վրեննը կապալ ա, էս ա՞ ք՛ քանե՛ տարե յա ուռուռ նհետ հըրըվընթուն ընք ընես, աշխարքը գյիդաս ա, վեր մուք էն մարթին ըխճըկանը վրեննը կապալ ընք, վեր հի՞նչ բիդի Մոսին տանե, ամմա մըհենգ էտ տղան վրեննն ա կացալ, թա յըես հըրսանեքյ չըմ ընես, խե՞ հըրսանեքյ անիմ, վեր իմ քախցր թիքյան բիդի խանը օտե։ Պա, մըհենգ հինչ անի՞մ, վեր ճուռըն ընգիմ, հըշտեղ քյինի՞մ, հի՞նչ վրեղ կլխես տամ։

Խանը թա.— Քյինի, ուտուբանա քշերավ ուռան ըղարկե, կյաս։

Մարը քյիս ա տոն, հունցու վեր խանն ա ասալ, ինդի էլ ինքյն ա Մոսուն ըսես, թա.— Խանն ասալ ա, վեր թողե քշերավ, ինքյը կյա իմ կոշտըս։

www.naregatsi.org

Մոսին թա՝ լաւ։

Ուտութանա քշերաւ, Մոսին եր ա կընաս, առանց հաց ուտելու, մին մրհակ յօր ունես, ընգես հրղեն, դե գյիդաս ըք ըլի՞, վեր խիլլա՛ հրղե յա՞, կյետնըյեր, կյետնըյեր քյիս ա դունզ խանեն տոնը։ Ամմա գյիդաս ը՞ս հինչ կա՞, էտ ղուչչաղը հրմընչիս չի, նի յա մընենես տոնը թա չէ, ըսես ա.— խե յը՞ս ինձ ծեն տրվալ, խա՛ն։

— Հաւլըաթ մին պեն կա ըլի՞, վեր ծեն ըմ տրվալ։

— Հինչ կա՞։

— Թայդի մե ընգել, հաւլա դինջաց, յրետնան կաւսիմ։

— Չէ, ունզիս չըմ, մրհենգյ ասե.

— Քըշերըս բիդի քյընիքյ Պուղուս աղեն սպանիքյ, տավարը պիրիքյ, կրկյա՞ս, թա չէ։

— Չէ՛։

— Խե՞։

— Ցրես ունզիս չըմ մաւրթ ըսպանիմ, համ էլ, խե աշկըտ ծա՞կ ա, խա՛ն, պա համոթ չի՞։ Էսքան հարուստ ըս, էսքան շընթկենեն քունն ա, լոխ քյղանա վըխես ըն, լոխճին հրըստոթունը տընես ըս քու տոնըտ, թըլընես ըս, մրհենգյ էլ էն խրեղճեն նհետ հինչ կո՞րծ օնիս, պա մեկը չի՞, հի՞նչ օնե, լհաւ վհատա վեր անումը աղա յա, մրեծ հրըստոթուն օնե, յա քու հրըստոթունըտ խրեգյ ա՞, դե՞... Ամմա, գյիդաս ըս հի՞նչ կա խա՛ն, քյղանա առաչ էլ շատ հարուստ մաւրթիքյ ըն ըլալ, էլհա քյրեզ նըման խոի աշկը ծակ, ըշխարքաս հինչ ըն տա՞ռալ, ըտրանք մրեռալ ըն, ընդրանց տոնը, տրեղը մնացալ ա ունունչունե։ Մրհենգյ տու վըս, մրհենգյանց տեղը շատ ապրիս, մի քանե տարե, խե յը՞ս աշկըտ ծակ պըհես է՛, աշխարքը քյրեզ ունչունց ըն տաս. մինը թա կյառըս տարավ, մինը թա դանաս տարավ, մինը թա լալ ծիս տարավ, մինը թա կյումաշըս տարավ, մինը թա ցոռենըս տարավ, մինը թա թաղա շաւրերըս տարավ, մինը թա բաղըս խլից, մինը թա արխեն ճուռը կտրից, բաղըս չուռացավ, մինը թա շատ խարջ ա ունքյ ունես, մինը թա կընեգյըս տարավ, մինը թա տոնըս քանդից, մինը թա վրեղերըս խըլից...։ Ունաննց էլ հինչ մնա՞ց տակեն, էլ թուղես չըս, թա մասուլը վրհաքին, առաչ քունըն ըս վհաքել տաս, եանան ունաննցը, ին էլ ետ ա ընգնես, լոխ փուչունաս, քյիս։

Խանն ըսես ա.— Գյիդաս ը՞ս հինչ կա, մրհետե քաշը ունաւն ճուտերեն, վեր մրծացալ ըն, ունզիս ա իլալ թըռչըցնե, մաւրը ըսկսալ ա քարոզ տալը, թա գյիդաս ըք, հի՞նչ կա, թա. «Հինչ կա, ա մաւր»։ Թա. «Վեր քյընիքյ, վեր մաւրթ տրեսընաք, հիբը վեր մարթը կըռանա,

www.naregatsi.org

հալբաթ ուզիս ա քար յոր օնե տափան, տուք թըռչեցեքյ, փախեքյ։ Ճօտերն ըսես ըն. «Պա, բալի քարը ջուբումըն ա, իսկյի կըռացավ վեչ, էն վախտը հունց գյի՞դանք»։ Մարը թա. «Տուք ինձանա՞ շատ ըք գյիդաս, քյըեցեքյ»։ Մըհենգյ տու վրս, տու շատ պեն ըս գյիդաս, յըեք օրուշ պեն խոսիքյ, կլոխըտ կտրըլականը՝ կտրըլական ըմ, ամմա հալա տըեսնամ հինչ ըս ըսես։

— Դե տու վրս ծեն տրվալ, ասե, տեսնամ խե՞ յըս ծեն տրվալ։

— Ասի՞մ, խե՞ յըմ ծեն տրվալ։

— Ասե։

— Խե մարթին ախճիգյը տնե՞ս չըս։

Ըստեղ Մոսին մին պատառ սուս ա ընես, յըետևան ըսես.— Խե՞, տու գյիդաս չը՞ս, խան։

— Վեր ասիս կգյիդամ։

— Տանիմ, հի՞նչ անիմ, վեր տանիմ, սրվթա՞ քշերը տու բիդի քոն ինիս նհետը, ընդհանա ետը հի՞նչ ըմ ընես։ Յրես ուրուշու թըքյա լուզողը չը՞մ։

— Կյիժ-կյիժ խոսել մե, քունը տանել չըմ, քյնի էն մարթին ախչիգյը տար, հալամ հըրսըքավըտ էլ ինձ ծեն տո։

— Տըես, խան, վեր իտի մին պեն պտահե, յա յըես բիդի մնամ ըշխարքըմըս, յա տու։

Մոսին ըտի յա ըսես, պրծընես, տունս կյաս, քյիս։

Մին շեբեթ ընցնես ա թա չէ, էտ շենըմը ուրխոթուն ա ընգնես, թա Մոսին հըրսանեքյ ա ընես։ Էտ շենըմըն էլ լոխ սիրիս ըն Մոսուն, ընդհա հըետե, վեր ղոչչաղ ա, վախ չօնե, սըրտավ ա, քանե-քանե հետ ա կյողերան շենին տավարը խիլալ, թուրքերեն ծեռքան հըյերեն ըխճըկերքյը ըղադալ, հալամ ըսես չըմ, վեր հիշքան ա քյիսիբնուն քյումագյ ինիս իլալ։

Մըհենգյ մեր Մոսին, հրվըտացած, վեր խանը խոսկ ա տվալ, վեր կնեգյը տանիլ չի, հըրսանեքյ ա ընես, մին օր, մին քշեր։ Լհա վեր հըրսանեքյը պըրծընես ա, մըն էլ ա տըսնաս, մին յասաղուլ յըեկավ ուրանց տռանը վեր յըեկավ, մին թոխտ ծերքեն։ Թոխտը պեց ըն ընես, տըսնաս, վեր խանն ա կյըալ, թա թազա հարթնեն ըղըրկեցեքյ, կյա։

Հի՞նչ անե, հի՞նչ չանե՞, Մոսին մնաս ա մըտըծե՞ս. «Չէ, յըես կնեգյըս ըղըրկես չըմ», համ էլ մորը, թա. «Տըեսե՞ր, ազի, խանը հինչ օյին պերից կլոխըս»։

Մարն էլ թա.— Բալա, հինչ ա՞նիմ։

www.naregatsi.org

Դե գյիդաս ըք իլի՛, վեր փիս խաբարը ճելլի յըն հսկընաս, լավը՝ յըհտե։

Շենին չհլնեն հրվրքվես ըն, թա. — Մոսի, պա մունք գյիդացալ ընք, թա խանը խոսկ ա տուվալ քու կնեգյըտ տանե վեչ, էտ հունց ա՞ պըտահալ։

Մոսին, թա.— Գյավուր մարթին մհար հի՛նչ...։

Թոխտը ստընաս ըն թա չէ, էտ օրախ մարթիքյ փուխվես ըն։ Մոսին էլ ուրթուխ ա ուտես, ըսես.— Մին ա, յըես ուրան քշտեն խոսկըս ասալ ըմ, հունց վեր ասալ ըմ, օրենքյ ա, վեր յա յըես բիդի մնամ, յա ինքյը, հիբը մըզանա մինս մըեր խոսկը կըդարինքյ վեչ։

Յասաղուլը տուրանը սպսես ա պատասխանեն։ Մոսին, վեր տրեսավ յասաղուլը քյիս չի, քյիս ա ըսես.— Քյինի, կըղարկիմ։

Յասաղուլը քյիս ա, խանեն ըսես, թա.— Ասալ ա՝ կըղարկիմ։

Օրը մըթնես ա... Վախտը մուտընաս ա։ Վեր մըթենը ընգավ, Մոսին եր կացավ ուրան կընգանը փըսակեն շորերը կյըեց՛ավ, կլիխը շորավ փըթաթի՛ց, տակավըն էլ մին լավ խանչալ կապից, քյեցավ խանեն տոնը։ Խանը տեսավ, հի՛նչ տեսավ, մին պեցիր բոյավ, մըեծ-մըեծ ըշկերավ, սերուն կնեգյ ա։

Խանը թա.— Նի մըետ էն օթաղը, կյաս ըմ։

Մոսին, վեր տեղ հըսավ, մըթենն ար։ Նի մտավ օրուշ օթաղ, պարանց ընգավ, փադի կարավաթեն յրա, խանչալը ծեռքեն, սպըսես ա, թա խանը հիբ նի կըմաննե։ Խանը կերած, խմած, քյեփը քյոք, բեղերը սղըլիլավ տոռնը պեց ըրավ, նի մտավ օթաղը, լհա նի մտավ, թա չէ, աշկերը տես-աեն ըրավ, մին լավ հաղից, հունց վեր կերած, խմած ծի ինի, վեր բուրդան տանիս մին օրուշ կյուա, վըխճարեն մաշը, յա վըերցակ ինի՛, վեր բուրդան ծերքան տուս ա պրծընես, թըռչիս, սկսես ա պեցիր կըշկըշալը, կանչիլը։

Ջոխան հընես ա, կախ տաս պատան, փափաղըն էլ մին օրուշ տրեղ ա կախ տաս, վրեններեը հընես, շորերը հընես, թաղաղան պոկը թիմըզցընես, բեղերը սղըլիլավ, յորղանը պըցիրցնես, նի մննես հարթնանը ծոցը։ Լհա ուզիս ա թա հարթնանը նհետ հինչ անե՛... Մոսին շոու ա կյաս, պատրաստ խանչալը մին դանըմ խանեն պըկավը քըշիս։ Խանը վեչ ծեն ա հընես, վեչ մին պեն, հոքյին տաս ա։

Մոսին էլ, յըեր ա կընաս, կընգանը շորերը հընես, ուրան շորերավը տոն կյաս, հանց տուս ա կյաս, վեր վեչ մինը գյիդաս չի՛։ Քյիս ա տոն, ըսես.— Ազի, յըես էս շենան քյիննական ըմ օրուշ շեն։

Մարը՝ թա.— Խե՞։

— Լհա ընդի։

www.naregatsi.org

Մոսին թուղես ա ուրանց շենը, կնեգյը յոր ունես, քյիս ծռուշ տրեղ, կլոխը ղըլմըղալա հրեռե պըհելու մհար։

Էէ՛, շատ վախտ ա ընցալ էս պենան, ամմա ժուղովուրթը միշտ էլ Մոսուն անըմը մրննան քցիս չի։

Հա՛, մրննաս ընգավ ասիմ, խանեն վեր սպնես չի՞ Մոսին, դուղ ա, մին քանե օրանը յրետը թազան ըլավ, ամմա ընդրա մնան փիսը չըլավ։ Համ էլ մին խիլլա վախտ շատ ջհիլնե ուրանց կնանոցը տաորըն իլան, լհա սվթա քշերան, էտ վըխտանը տեսը, էլ խանը վըխեցավ, ղոչչաղ տըղերանց կնանոցը ծեռք չըտըվավ։

Մըհենգյ, բա՛լա ջան, ըշխատքես կործը ըտի յա՛, թա ղոչչաղ ը՞ս, քյզանա կըվախին, թա թուլ ըս, վրեննու տակե քյիննական ը՞ս։

Մեր ժուղովուրթը ըսես ա.— Տու փիսոթուն մե անել սըվթա, ամմա վեր տեսնըմ ըս քյըրեզ ուզիս ըն փիսոթուն անին, ուզիս ըն վրեննատակ քըցին, ճելլ ըրա, տու ուրան քըցի։

—Դե, Վա՛նես ջան, հո՛ ըրա, քշի՛ յրեզները, յրեզանը օսին մատա՛ղ, ղոչչաղ տըղեն խընչալեն մատա՛ղ, փիս մարթեն հաըը շոն տրեռնա՛, մեր ջհիլնեն ուրանց կնանոցը տաըր տրեռնան[1]։

---

[1] Հաջորդող հետևյալ նախադասությունը բանասացի հավելումն է (Մ.Կ.).

— Ա՛ հընգեր վարժուհի, մըհենգյ Մոսուն անա հիշքան խուսեցե, հաըլա մին կյխրի՛, տանը էլհա թազա պեներ կասիմ, կյխրիս։ Էքյուց էլ կըկյաս, օրուշը կասիմ։

www.naregatsi.org

48. ՊԸՌՎԱԼԵՆՋ

Իլալ ա, չիլալ մին պառավ։ Էտ պառավը ըպրես ա իլալ Հաղրուբա ռայոնումը, Տումե շենումը, Գագիկ Թաքավերեն վխտեն։ Գագիկին անըմը էնքան ա իլալ եր իլած, վրեր ինդա ընըմավը էտ շենին լալ ախպուրը «Թքյվերեն ախպուր» ըն ասալ։ Էտ թաքավերը կորեվ ա իլալ ընես թաթար-մոնղոլ զուրքերեն նհետ։ Պառավը միշտ քյիս ա իլալ Մըսմլաբեն ունգյունան Թագա խըբըրնե պիրիս թաքավերեն հրետե։ Ըտրա հրմար թաքավերը շատ ա իլալ հրկես պռավեն։ Պառավը թաքավերեն հրետե պիրիս ա լալ, թա Մըսմանլարը քանե թփանգյ, թուփ, յա ծռուշ պեներ օնե։

Ըտրա մըհար Գագիկ թաքավերը պադրաստութուն ա իլալ տըսնաս, թաթար-մոնղոլնին կըրես չըն իլալ, թա Տումեն յար օնին։

Թաքավերը պռավեն խոսկավը, ըտրա տված տեղեկութունավը միշտ Մըսմլաբեն թրափեն ղշլաղնուն յըխնես ա իլալ։ Պառավը թաքավերեն հետե պերած խըբրնուն դարդան վրեսկե փուլ ա իլալ ըստընաս։

Վեր պառավը շատ քյիս ա Մըսմլաբը, յրետ կյաս, թորքերը կլախ ըն ընգես, վեր ուրանց խբրնեն էտ պառավն ա տնես թաքավերեն տաս։ Կլախ ընգնելան յրետը, պռավեն խուսուցրնես ըն։ Պառավը վրզավ ա ունես ուրան ըրածը։

Մհենգյ էլ թորքերըն ըն պռավեն վրեսկե տաս, վեր քյինի թաքավերեն ունգյունան խաբար պիրի։ Պառավը իտի էլ ընես ա։

Մըսմլաբան խաբար ա պիրիս Տումե, թաքավերեն նրեստան

www.naregatsi.org

փուլ ըստնաս, Տումա խաբաւրը տնես ա Մըսմալար, ընդրղան վրեսկե ըստանաս։

Թաքավերը մընաս ա մաթաւլ մնացած։ Ըսես ա.— Ախեր էս հինչ պե՞ն ա, խե՞ բիդի Մըսմալարը իմ խբըրնուս, զուրքերես տրեղը գյիդա՞։ Մըսմըլաբեն մարթիքյը իմաստուն չըն, ըստեղ մին ասող կա՞։

Թաքավերը ըսկսես ա պռավեն յրա գյուման անելը։

Ըսես ա.— Բալքյա էս պառավըն ա ըսես Մըսմըլաբեն իմ խբրնես։

Թաքավերը ուրոշիս ա պռավեն յրա հրսնե։

Մին օր, վրեր պառավը Տումա տունս ա կյաս, թաքավերը ընդրա հրետան մին ջահիլ տղա յա ղրկես, ըսես.— Թա վեր տու կարիս գյիդաս, վեր իմ խբրնես պառավըն ա տնես Մըսմալարը, էտ վախտը հինչ ասիս, քյըեզ կտամ։

Էտ ջահիլ տղան պռավեն հրետան հրըրքաշ, քուլեբավը քյիս ա, նի մըննես Մըսմալարը պռավեն նհետ։ Ըսկնաս ա, վեր պառավը ըսկըսից պատմելը թաքավերեն թաքուն խոսկերքը։ Ետնան Մըսմըլաբեն ընդրա վրեսկե տվեն։

Ջահիլը կյաս ա հինչու տրեսալ ա, պըտմես թաքավերեն։

Թաքավերը ուրոշիս ա պռավեն, հինչ ունդիս ա ինի, ըսպանե։

Մին օր պառավը քյիս ա Մսմալարը։ Վեր կյաս ա, թաքավերը էրկու մարթ ա ղրկես, վեր պռավեն ըսպանին։

Ջահիլնեն քյիս ըն, կյաւմուր քաբեն կյըետեն էս թաւրափը կտրես։ Էնչանք կնա՞ս ըն, վեր պառավը կյաս ա, թա լենջին տակավը ընցնե, ջրհըլնուն մինը կռնավը թխես ա պռավեն քյիւլին, ըսպնես։

Էքյսը լուսը պնվալանը ետը մին քանե մարթ նան կնեգյ քյիս ըն հանես ընդեղ, պռավեն ընիծիլավ մին փոս քնդիս, մաչին տըղվրես, կյաս տոն։

Էն չըխանց միչև մհենգյ էլ էդ լենջին ըսես ըն «Պռավալենջ»։

www.naregatsi.org

Ներածություններ

www.naregatsi.org



www.naregatsi.org

Ա. Ր Ց Ա Խ

Այս հատորում ընդգրկված են պատմական Արցախ նահանգի Վարանդա, Դյուլիստան, Խաչեն, Դիզակ և Ջրաբերդ գավառների (այժմյան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի՝ Ստեփանակերտի, Շուշու, Մարտակերտի, Մարտունու և Հադրութի շրջանների) հեքիաթները։

Իրենց քանակով և դեղարվեստական ամբողջականությամբ հատորում առաջնակարգ տեղ են գրավում Շուշիի քաղաքի և նրա շրջակա գյուղերի հեքիաթները։

Ներկա հատորի բոլոր հեքիաթները գրի է առել Մարգարիտ Գրիգորյանը (Սպանդարյանը) 1922—1953 թվականների ընթացքում։ Լինելով բնիկ շուշեցի, Մ. Գրիգորյանը իր ծննդավայրում, դեռ վաղ մանկության հասակում սիրում և հրապուրվում է բանահյուսությամբ և դեռևս դպրոցական ուսումնառության տարիներին գրի է առնում մի շարք հեքիաթներ։ Հետագայում բանասիրական հիմնավոր կրթություն ստանալով Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտում, ավարտելով ասպիրանտուրան, պաշտպանելով դիսերտացիա և աշխատելով որպես դասախոս, Մ. Գրիգորյանը երկար տարիների ընթացքում շրջագայել է Լեռնային Ղարաբաղի գյուղերն ու ավանները և առանդուն ջանասիրությամբ ու անձնվեր սիրով հավաքել տեղի ժողովրդական բանահյուսության նյութերը՝ հեքիաթներ, առակներ, ջանգյուլումի երգեր, ժողովրդական ոճեր ու դարձվածքներ և այլն[1]։ Բացի հրատարակվող հեքիաթներից, Մ. Գրիգորյանի նյութերի մեջ կան դեռևս անտիպ մի շարք հեքիաթներ (սույն հատորում ընդգրկված բնակավայրերից ու ասացողներից գրի առնված), որոնք կզետեղվեն հաջորդ հատորում։

---

1. Մ. Գրիգորյանի հավաքած ժողովրդական բանահյուսության անտիպ հարուստ ժառանգությունը պահպանվում է Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

Մ. Գրիգորյանի գրի առած հեքիաթների մեջ պահպանված են տեղական խոսվածքի հնչյունական, քերականական ու շարահյուսական նրբերանգները։ Բանահավաքը բարբառի այդ յուրահատկությունները պահպանելու համար օգտագործել է տառադարձության ընդունված ձևերը։

Հատորում տեղ գտած հեքիաթները իրենց բնույթով ու գեղարվեստական մակարդակով միատարր չեն։ Կան սյուժետային բովանդակությամբ հարուստ ու բազմակողմանի և գեղարվեստական-արտահայտչական ճոխ պատմելաոճով հորինված հեքիաթներ (ինչպես օրինակ, Շուշի քաղաքից Ղումաշ Ավագյանի և Փիրուզա Տեր-Հովհաննիսյանի պատմած հեքիաթները), բայց և կան սյուժետային բովանդակությամբ սխեմատիկ լեզվական ու գեղարվեստական տեսակետից ոչ կատարյալ նյութեր, որոնք արդյունք են նոր ժամանակներում հեքիաթասացների վարպետության նվազման ու նրանց ունկնդրող միջավայրի հետաքրքրության աստիճանական թուլացման։ Մ. Գրիգորյանը հեքիաթները գրի է առել հմտությամբ, պահպանելով ոչ միայն տվյալ շրջանի կամ ենթաշրջանի, այլև տվյալ գյուղի խոսվածքի հնչական-քերականական յուրահատկությունները։

Բանահավաքը անհրաժեշտության դեպքում մանրամասն տեղեկություններ է հաղորդում ասացողի, գրառման հանգամանքների և այլ պարագաների մասին, որոնք գիտական բանասիրական արժեք են ներկայացնում տվյալ հեքիաթի և ընդհանրապես հեքիաթի ժանրի հետազոտության համար։

Սույն հատորի ծանոթագրություններում տրված են՝

1. Տեղեկություններ հրատարակվող սկզբնաղբյուրների մասին.

2. Գրառման հանգամանքների կամ ասացողների մասին բանահավաքի հաղորդած բոլոր վկայությունները և կողմնակի տեղեկությունները.

3. Տվյալ հատորի հեքիաթների սյուժետային խմբավորումն ու դասակարգումը։ Ծանոթագրությունների մեջ համառոտության համար Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվը անվանված է Բանահյուսական արխիվ։

www.naregatsi.org

1. ՎՐԵՍԿԵ ԽՆՁՈՐԸ

(էջ 12)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մարգարիտ Գրիգորյանը (Սպանդարյանը) 1922 թվականի ձմռանը Շուշի քաղաքում։

Հեքիաթի գրառման բնագիրը պահպանվում է բանահյուսական արխիվում (տես Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Բանահավաք Մ. Գրիգորյանը ասացողի մասին թողել է հետևյալ ծանոթագրությունը. «Ասացող Ղումաշ Ավագյանը ծնվել է 1856թ., մահացել է 1928թ.։ Հայրը դերձակ էր։ Երեք եղբայրները Շուշում հասակ առնելուց հետո գնացել են Բաքու և երկար ժամանակ աշխատելուց հետո նորից վերադարձել Շուշի։ Սրբ Ղումաշը արդեն հասակն առած աղջիկ էր, եղբայրները երիտասարդ հասակում մնում են խոլերայից (ողջ է մնում միայն փոքր եղբայրը)։ Ինքն էլ այդ բոլորից հետո չի ամուսնանում, մնում է հոր տանը մինչև իր մահը և ապրում կարիքի մեջ։ Ղումաշ Ավագյանը շատ տաղանդավոր, ընդունակ անձնավորություն էր, հրաշալի հիշողության տեր և լավ լեզու իմացող։

Նա ոչ միայն հեքիաթներ էր պատմում, այլև գիտեր շատ ժողովրդական երգեր ու չանգյուլումներ։ Նա վիճակախաղի երգեր էր սովորեցնում իրենց թաղի աղջիկներին, որոնք գալիս ու խնդրում էին տոնակատարության նախօրյակին։ Այդ աղջիկները պատմում էին նրան իրենց իղձերի, ձգտումների մասին, և Ղ. Ավագյանը հորինում էր նրանց հոգուն մոտ չանգյուլումներ ու խաղիկներ և սովորեցնում նրանց։ Նա մեղմիկ ձայնով երբեմն արտասվելով երգում էր չանգյուլումներից։

Թեկուզ անգրագետ էր Ղումաշը, բայց զարգացած ու նուրբ ճաշակի տեր կին էր. վեհանձն էր, բարեկիրթ, գեղեցիկը սիրող, խելոք ու աղնիվ։

Շուշի քաղաքի թարմ օդը, լեռնային արևը, սարերի հովն ու ծաղիկների բուրմունքը նրա առողջությունն ու գեղեցկությունը պահպանել էին. դեմքը ճերմակ էր, այտերը՝ վարդագույն, աչքերը՝ կապուտակ։ Երբ նա հյուր էր գնում, իր կանաչ գույնի սնդուկից հանում էր թանկ կտորներից կարած իր տոնական զգեստները, գլխին դնում էր կապույտ գույնի «չարղաթ», որի տակից քիչ երևում էր սպիտակախառն մազերի մեջտեղից բացած սանրվածքը։ Նա հագնում էր սրածայր, քսուկով փայլեցրած սև կոշիկներ։ Ամեն տեղ նա վայելում էր հարգանք ու ակնածանք՝ իր զուսպ, ջանդարտ, միևնույն ժամանակ խոհուն ու հպարտ բնավորության համար։

www.naregatsi.org

Նա քթախոտ էր գործածում, բայց այնքան մաքրասեր էր, որ այդ բոլորովին չէր նկատվում։

Ավելի մեծ հասակում նա լուռ ու խոհուն, ծալապատիկ նստում էր իրենց արահում փռած կարպետին, ներքնակի վրա և աչքերը կուշ ածելով, գուլպա էր գործում։ Նա ամենից շատ սիրում էր ժողովրդական երգեր։

Գուլպա գործելիս հազիվ լսելի ձայնով երգում էր.

Բլբուլն ասեց՝ դեն մի գնա, յաղի կա,
Տու ի՞նչ գիտես, որ սրտումս դաղի կա,
Ես մի բլբուլ, սարի սըմբուլ,
Վարթս քաշած, թուրս դարտակ,
Էսօր-էքուց թաղի կա։

Ղումաշը չահել հասակում նշանված է եղել և շատ է սիրել իր նշանածին, բայց հարսանիքի գիշերը նրան ասել են. «Ղումա՛շ, դու շատ սիրուն ես, առանց այն էլ դու մարդու կգնաս, թող քո հորեղբոր տգեղ աղջկանը տանք քո նշանածին»։ Եվ «զանգրոնկը» գցում են նրա հորեղբոր աղջկա գլխին, երեսը ծածկում ու ամուսնացնում։

Դրանից հետո Ղումաշը այլևս չի ամուսնանում։ Հետագա տարիների սովը, ցավը, գաղթը նրա վրա շատ են ազդում։ Նա դարձել էր լուսկյաց ու էլ ավելի հպարտ. նա երբեք չէր տրտնջում, ոչ ոքից ոչինչ չէր խնդրում, թեկուզ կարիքի մեջ էր. ընդհակառակը, ցույց էր տալիս, թե ապահով է, և միշտ նստած էր լինում իր անկողնում։ Նրա վրա շատ էր ազդել իր սիրելի, պաշտած ծննդավայրի՝ Շուշի քաղաքի ավերումն ու կործանումը, իր հայրական օջախի մարումը։ Նա չդիմացավ այդ ցավին ու մահացավ 1928թ.։

Հեքիաթների գրառման հանգամանքների վերաբերյալ բանահավաքը իր ծանոթության մեջ գրել է. «Ղումաշ Ավագյանի ասած հեքիաթները ես լսել եմ ավելի մատաղ հասակում։ Նա ավելի շատ էր սիրում պատմել «Վրեսկե խընձորը», «Պըրանան վիրթ, մանիշակ թափվող ախճիգը», «Մաղկած բախչան» և մի քանի ուրիշ հեքիաթներ, որոնք ես լսել եմ մի քանի անգամ։ Նրա պատմած հեքիաթներից առաջին անգամ գրի եմ առել 1922թ. ձմռանը, Շուշում, առանց մտածելու, որ հետագայում ես ժողովրդական բանահյուսության հավաքող պիտի դառնամ։ Փոքր հասակից սիրել եմ հեքիաթները և ձգտել եմ գրի անցկացնել դրանք, որ չմոռանամ։ Այնուհետև ապրելով Բաքվում, ամառները եղել եմ Ղարաբաղում և ամեն անգամ այցելել եմ Շուշի քաղաքը, ուր ապրում էր Ղումաշը քաղաքի ներքևի մասում, վերանորոգված տանը։ Այսպես, 1922, 1926, 1927 թվականների ընթացքում գրի եմ առել շուրջ տասնհինգ հեքիաթ»։

Ղումաշ Ավագյանի պատմած հեքիաթները զետեղված են սույն հատորի 1—16 համարների տակ։

2. ՍԻՆԱՆ ԹԱՓԱՎԵՐԸ

(էջ 28)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնայինի Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1922թ. ձմռանը Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

www.naregatsi.org

3. ՎՐԵՄԿԵ ՂՈՋԸ

(էջ 36)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1922թ. ձմռանը Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

4. ՊԻՐԱՆԱՆ ՎԱՐԹ, ՄԱՆԻՇԱԿ ԹԱՓՎՈՂ ԱԽՃԻԿԸ

(էջ 41)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1922թ. ձմռանը Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

5. ԿՈՋՆ Ի ՏՂՊԱՆ

(էջ 49)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1926թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

6. ՄԱՐԹ ՕՏՈՂ ԱԽՃԻԿԸ

(էջ 53)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1927թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

7. ԴԼՈՒԻՆՏՎԱԾ ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆԸ

(էջ 59)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1926թ. Շուշի քաղաքում Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

www.naregatsi.org

8. ԷՐԿՈՒ ԱՌՈՒՏՈՒՐԱԿԱՆ

(էջ 64)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1926թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

9. ԱՂՎԵՍԸ

(էջ 72)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1927թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

10. ԾՈՒԿՆԻՆ ԾԵԾԱՂԸ

(էջ 78)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1927թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

11. ԾԱՂԿԱԾ ԲԱԽՉԱՆ

(էջ 83)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1927թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

12. ԽՈՍՈՂ ԾԻՆ

(էջ 100)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1927թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

www.naregatsi.org

13. ՀԱԲԵԴ-ԿԱՐԱԲԵԴԸ

(էջ 106)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1926թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

14. ԼԱՎՈՒՆԻՆ ՏԸԵՂԸ ՓԻՍՈՒՆ

(էջ 113)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1926թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

15. ՊՈՒՃՈՒՐ ՀԱՐՍԸ

(էջ 116)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1927թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

16. ԻՄԱՍՏՈՒՆՆԻՆ

(էջ 120)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1927թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

17. ՎԸԵՐՍԿԱՆ ԱՎԵՏԻՍԸ

(էջ 122)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մարգարիտ Գրիգորյանը 1930թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

Բանահավաք Մ. Գրիգորյանը բանասացի մասին թողել է հետևյալ ծանոթագրությունը. «Ասացող Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը ծնվել է 1876թ. Լեռնային Ղա-

www.naregatsi.org

բաբաղի Շուշի քաղաքում։ Փոքր հասակից սկսած նա սիրել է ուսումը։ Այդ ժամանակ աղջիկների դպրոց չկար, և ընդունված չէր աղջիկներին կրթության տալը։ Այդ էր պատճառը, որ նա զրկվել է կրթությունից։ Հետագայում գրաճանաչ է դարձել այնքան, որքան որ պետք էր իր եղբայրներին նամակ գրելու համար։ Նրան շատ զգայուն, տպավորվող, դիտող, սիրել է գրականություն, ժողովրդական բանահյուսություն։ Ունեցել է լավ հիշողություն։ Նա հեքիաթներ շատ գիտեր, մանավանդ երկար հեքիաթներ։ Շատ հաճախ նրա տունն էին գալիս հարևանները իրենց ընտանիքներով, որպեսզի ձմռան երկար երեկոներին իրենց ժամանակն անցկացնեն, խնդրում էին նրան՝ հեքիաթներ պատմել։

Նա պատմել է Շուշու ենթաբարբառով։ Երբ նա սկսում էր պատմել «համով, հոտով» ինչպես ժողովուրդն էր ասում, բոլորը զմայլված լսում էին, աչքները հառած նրա բերի, ծաղկատար դեմքին։ Նա կարողանում էր գրավել լսողների ուշադրությունը՝ խոսքի ուժի միջոցով։

Ասես հմայում էր։ Շատ հաճախ նրա պատմած հեքիաթները չէին վերջանում նույն երեկոյան և շարունակվում էին մյուս երեկոները։ Պատահում էր, որ սկսած հեքիաթը շարունակվում էր երեք երեկո։

...Նա ասելու ժամանակ ոգևորվում էր, երազկոտ հայացքը դարձնում դեպի երկինք ու երբ տեսնում էր, որ աստղերից մի քանիսը «ծըլլում են», նա մտաբերում էր «Ծըլլալիս աստղերը» հեքիաթը և պատմում։

Պատահում էր նաև, որ նա, տարված իր ծննդավայրի գեղեցկություններով, նայելով մեկը-մյուսի թիկունքից բարձրացող կապույտ սարերին, հիշում էր «Գըմգըմ սարերը» հեքիաթը և պատմում։

Ամեն մի հեքիաթ այսպես նա պատմել է՝ կապելով հարազատ ու գեղեցիկ բնության հետ։

Փիրուզան ամուսնացած էր։ Ամուսինը որմնադիր էր, մահացել է 1909թ.՝ Փիրուզայի խնամքին թողնելով հինգ հոգուց բաղկացած ընտանիքը։ 1917թ. մինչև 1925թ. Փիրուզան աշխատել է որպես հավաքարար։ Հետագայում բնակություն է հաստատում Բաքվում և ապահով ապրում զավակների խնամքի տակ։

Փիրուզան վախճանվել է 1940թ.։ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը ասել է նաև հանելուկներ, շուտասելուկներ, առածներ և այլն։ «Վրերսկան Ավետիսը» հեքիաթի վերջում ասացողը լիրիկական զեղումի է կատարում Շուշի քաղաքի մասին։ Այդ հատվածը զետեղում ենք ստորև.

«Դե ըսօր էլ էն ղաշանգյ, էն աշխարքիս մեչին մին գաննա Շուշի-ղըլին էրիլին քըսան տարին ա, էն արմանք-զարմանք շըհարին, էն լիգյը ծըփծըփըմ շըհարին, էն մըեծ-մըեծ հինգյըվեց ըտըժանի տըներին, վարթ նան մըխագյավ լիգյը՝ բախճոցը, վըեր ըտրանց վըետը աշխարքըս օնըմ ար, վըեր Քյիրսա սարան զով քամեն ար կյամ, էն լիգյը մադազիններին, էն լիգյը պըդվըլներեն, էն ափաթ տարած ըշկոլներին, տիպարաններին էրիլին քըսան տարին ա, ա բալեքյ... Ախեր տըեսած բիդիքյ վըեր գյիդաք, թա հինչ շըհար ա իլալ Շուշի-Ղալան, մին Պարիժ, մին Լոնդոն, էն շարշամբա կալած Լոնդոնը հինչ ա ընդրա քըշտին, մին ճաքված-տըրաքված, մին ղըրղներավը եր տըեռնըմ, լափու տամ, էն պալատ տըներավը, էն լեն քյոնչոցավը, էն մարմար ժամերավը, էն ոնրան գյիդնական, խելունք, սըերտը նան ծըեռքը պըեց լալ, ոնրոնր հըսնող, դարդ գյիդող ժողովուրթավը, վըեր համ ծըեռքերնին ա վըեսկե իլալ, համ կըլխըներնին, ըսօր մընացալ ա տըեղը տըերտակ, մին յաբանի լենչ...

Էն վըեր սաղ Ղարաբաղին պահալ ա, էս սարին կըլխին նըստած, թաքուհու նման, նախշուն, դունյա գյոզալի ա։ Ա՛ բալեքյ, դե ըսօր իմ սըերտըս տխուր ա,

www.naregatsi.org

ծրեղ խրնձոր չըմ տամ, թաթլ լհա տուք օրախ ինիք, ըշտեղ ինիքլ, սաղ ինիքլ, ամմա մոռանաք վրեչ ծրեր տակոին, ծրեր պապական օջաղը, ծրեր թաքավերական լեռդուն, ծրեր էն ղաշնադլ, էն մարալ-չեյրան, էն հունրու-փաթրին, էն դունյա գյոզալի Շուշի-Ղալան, էն վրեսկավ, պրուլյանդավ, կանանչ-կյարմանր զառվաթրաղ, ալափրոանդլի շորերավ, շուկ-ըտլասըմ կորած Շուշի-Ղալան վրեր էն սարին կըլխին, էն պրնցուր քրեռծին կըլխին թաքուհի ար, մըհնդլ էլ ընգած, մըեռած ա, տըեղը դուղ ա, մինակ կյարունքը վրեր կյամ ա, կյըրեզմաննին կըննչըցնըմ ա, լըցնըմ ծաղկավ...»

18. ԱԼԱՄ ԹԱՓԱՎԵՐԸ

(էջ 131)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

19. ԱՐՄԵՆԸ ՆԱՆ ՉԱՐՄԵՆԸ

(էջ 142)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1933թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

20. ԹՐԵՎԱՎԵՐ ԾԻՆ

(էջ 149)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1938թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

21. ԾԻԻՎԻՆ ԾԱՌԸ

(էջ 157)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1933թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

www.naregatsi.org

22. ԴՒՐՎԻՇԸ

(էջ 163)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

23. ՏԱՍՆԷՐԿՈՒ ԾԸՂՈՆԵԳԸ

(էջ 170)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթ ագրության մեջ։

24. ԴՒՐՎԻՇ ԹԱՓԱՎԵՐԸ

(էջ 179)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

25. ԿՑՈՒԹՆՈՒԿ ԱԽՃԻԳԸ

(էջ 188)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1938թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

26. ԳԼՄԳԼՄ ՍԱՐԵՐԸ

(էջ 198)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական ար-

www.naregatsi.org

խիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

27. ԿԼԼՈՒԽԸ ՆԱՆ ՍԸԵՐՑԸ

(էջ 212)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Դրիգորյանը 1930թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

28. ՕՎՉԻ ՓԻՐՈՒՄԸ

(էջ 218)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Դրիգորյանը 1933թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

29. ԽՈՍԿԻՆ ՕԺԸ

(էջ 223)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Դրիգորյանը 1938թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

30. ԿՑԻՐԻՆ ԱՆՈՒՄԸ

(էջ 225)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Դրիգորյանը 1933թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

31. ԾՈՒԿՆԻՆ ԿԼԼՈՒԽԸ

(էջ 228)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Դրիգորյանը 1933թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական ար-

www.naregatsi.org

խիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

32. ԻՐԵՔ ԿԼԻՆԻ

(էջ 232)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

33. ՂԱՐԱԲԱՂԵՆ ԱՐԱՂԸ

(էջ 236)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1938թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

34. ԼՈՒՆ ՆԱՆ ՄԸՆԱԿԸ

(էջ 241)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

35. ԿՑՈՂ ԹԱՓԱՎԵՐԸ

(էջ 244)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1938թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

www.naregatsi.org

36. ԿՐՆԶՄԸՆԶՈՒԿԸ

(էջ 247)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշու շրջանի Քարին տակ գյուղի բնակիչ Արշակ Պետրոսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. ամռանը Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

Բանահավաքը ասացողի մասին հողել է հետևյալ ծանոթությունը. «Ասացող Արշակ Պետրոսյանը ծնվել է Շուշու շրջանի Քարին տակ գյուղում, 1898 թ. գյուղացու ընտանիքում։ Շուրջ 25 տարի աշխատել է Քարին տակ գյուղի մետաքսադործական ֆաբրիկայում։ Այժմ թոշակառու է։

Քարին տակ գյուղը գտնվում է Շուշի քաղաքի ստորոտում։ Շուշի քաղաքի «Քևրծին կլիխա» կոչված բարձրությունը պատանման և ուղղաձիգ իջնում է մինչև ստորոտը. այդտեղ է տանում Քևրծի գլխից սկսվող մի ծուռտումուռ արահետ. ներքևում լսվում է գետի վշշոցը, աքլորների կանչը, մարդկանց բարձր «հե-հե»-ները։ Քարին տակ գյուղի մյուս կողմից բարձրանում է իր կանաչ լանջերով Քիրսը՝ Ղարաբաղի ամենաբարձր լեռնային գագաթը Մռավ սարից հետո, որը միշտ ձյունածածկ է։ Խոր ձորի հովտում է ընկած Քարին տակ գյուղը, հենց իր անունն էլ այդտեղից է առացել։ Գյուղն ունի բաղմաթիվ երկհարկանի, կարմիր ներկած թիթեղյա տանիքներով տներ։ Տները թաղված են թթենու և այլ պտղատու այգիների ու բանջարանոցների մեջ։ Գյուղի միջով անցնում է Կարկառ գետի վերին ճյուղը։ Արշակ Պետրոսյանին ճանաչում եմ 1956 թվից։ Նա շատ հեքիաթներ է պատմել, որոնցից մի քանիսը մտնում են այս հատորի մեջ։

37. ՁԿԱՄ ՀԸՐԵՎԱՆԸ

(էջ 251)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշու շրջանի Քարին տակ գյուղի բնակիչ Արշակ Պետրոսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. ամռանը Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 36 հեքիաթի ծանոթագրության մեջ։

38. ՓՑԱԼԱԳՑԱՁՆԵՆ

(էջ 257)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշու շրջանի Քարին տակ գյուղի բնակիչ Արշակ Պետրոսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. ամռանը Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 36 հեքիաթի ծանոթագրության մեջ։

www.naregatsi.org

39. ԲԱԴԱՐԱՓԸՂ

(էջ 262)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշու շրջանի Քարին տակ գյուղի բնակիչ Արշակ Պետրոսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. ամռանը Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 36 հեքիաթի ծանոթագրության մեջ։

40. ԿՅՈՒՓՅՈՒՆ ՇԱՎՔԱԼԸ

(էջ 265)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշու շրջանի Քարին տակ գյուղի բնակիչ Արշակ Պետրոսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. ամռանը Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի № 36 հեքիաթի ծանոթագրության մեջ։

41. ԱՐՋԻՆ ՏԸՂԱՆ

(էջ 267)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Թամարա Շահրամանյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1956 թ. օգոստոսին, Շուշիքենդ գյուղում։

Բանահավաքը ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկություն չի թողել։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

42. ՄԱԴԱՐ ՏԸՂԵՆ ԲԱԽՏԸ

(էջ 276)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային (Ավագ Պողոսյան), գրի է առել Մ. Գրիգորյանը 1958 թ. հուլիս ամսին, Շուշիքենդ գյուղում։ Ասացողի մասին բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Ավագ դային կոլտնտեսական է. չնայած ծեր հասակին (75 տարեկան), լավ աշխատող է։

Ավագ դային երկար հասակով, նիհար մարդ է, սիրում է զրուցել, զրույցը համեմում է ամաչալներով ու պընգըլներով։ Նրա որդիները բաքվում բանվորներ են։ Դրանցից մեկի երեխաները Ավագ դայու, նրա կնոջ՝ Նախշունի մոտ էին ապրում։ Վերջին տարում կինը՝ Նախշունը մեռավ և Ավագ դային մնաց մենակ։ Շուշիքենդ գյուղն ունի գեղեցիկ դիրք, շրջապատված է ոչ բարձր լեռներով։ Ունի մեծ քանակությամբ թթենու այգիներ և բանջարանոցներ, տեղի կոլտնտեսությունը հարուստ է։

Գյուղը աղբյուրներով առատ է, կլիման մեղմ է ու հով։ Շուշիքենդ գյուղը

www.naregatsi.org

մեծ գյուղ է, ունի պատմական հետաքրքիր անցյալ։ Գյուղում այժմ կան տասնամյա դպրոց, ակումբ, նոր կառուցված փոստ-հեռագրատուն, գրադարան՝ պրոֆեսոր Արսեն Տերտերյանի անվամբ և այլ հիմնարկություններ։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

43. ՔՅԱՍԻԲ ՏՂԱՆ

(էջ 284)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1958 թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում։ Ասացողի մասին տեղեկությունները տե՛ս № 42 հեքիաթի ծանոթագրության մեջ։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

44. ԱՐԱՋԸ

(էջ 289)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1958 թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում։ Ասացողի մասին տեղեկությունները տե՛ս №.42 հեքիաթի ծանոթագրության մեջ։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

45. ՄԱՐԴ ՆԱՆ ՆԱՄԱՐԴ ԱԽՊԵՐՔՅԸ

(էջ 293)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1958 թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում։ Ասացողի մասին տեղեկությունները տե՛ս № 42 հեքիաթի ծանոթագրության մեջ։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

46. ԸՐԱՏԸՏ ԱՌԱՋԸՏ ԿՅԱ

(էջ 296)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում։ Ասացողի մասին տեղեկությունները տե՛ս № 42 հեքիաթի ծանոթագրության մեջ։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

47. ՇԱԳՅԻՐԴ ՄՈՒՀԱՆԸ

(էջ 299)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1958 թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում։ Ասացողի մասին տեղեկությունները տե՛ս № 42 հեքիաթի ծանոթագրության մեջ։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

48. ՔՈՍԱԿ ԱԽՊԵՐԸ

(էջ 304)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1958 թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում։ Ասացողի մասին տեղեկությունները տե՛ս № 42 հեքիաթի ծանոթագրության մեջ։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

49. ՏՎԸՐԱՏԵՆ ՏՂԱՆ

(էջ 306)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Խանաբադ գյուղի բնակիչ Մովսես Խաչատրյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1947 թ. օգոստոսին, Շուշի քաղաքի հանգստյան տանը։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

50. ԱԽՃԻԳՅ ԹԱՔԱՎԵՐԸ

(էջ 316)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Ստեփանակերտի շրջանի Խանաբադ գյուղի բնակիչ Խաչատուր Մատուրյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1948 թ. փետրվարին Ստեփանակերտում։ Ասացողի մասին բանահավաքը հայտնում է միայն, որ տարիքով երիտասարդ է։ Այլ տեղեկություններ չի հաղորդում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

51. ՄԻՆ ԿՆԳԱՆ ՄԻՆ ՏՂԱ ՅԱ ԻՆՉԻՄ

(էջ 320)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Տրոնավարզ գյուղի (այժմ Կարմիր գյուղ) բնակիչ Լուսավարդ Աղաջանյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1947 թ., Տրոնավարզ գյուղում։

www.naregatsi.org

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Տրոնավարդ (կարմիր) գյուղը դտնվում է մի բարձր սարի լանջին։ Հին գյուղ է, ունեցել է պատմական անցյալ։

Տները կառուցված են քաղաքի ձևով. երկհարկ, քարաշեն, թիթեղածածկ և պատշգամբներով։ Գյուղը շրջապատված է թթենու այգիներով ու բանջարանոցներով։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

52. ՔՅԻՆԱՅՈՂԸ ԵՏ ՉԻ ԵԿՈՂ ՍԱՐԸ

(էջ 324)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղուլբուլաղ գյուղի բնակչուհի, ուսուցչուհի Աստղիկ Գրիգորյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1948 թ. ձմռանը, Բաքու քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

53. ՍՈՒԿՆԸ ՓՈՆՈՂԻՆ ՏՐՂԱՆ

(էջ 330)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Քյաթուկ գյուղի բնակչուհի Նուբար Նանեն, գրի է առել Մ. Գրիգորյանը 1946 թ. օգոստոսին Քյաթուկ գյուղում։

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը «Նուբար Նանեն ծեր կին էր, գիտեր շատ հեքիաթներ։

Քյաթուկ գյուղը ունի հարուստ բանջարանոցներ, հայտնի է հատկապես Քյաթուկ գյուղի պղպեղը և այլն»։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

54. ԷՇԻՆ ԱՆԳՈՒՃԻՆ ՎԸԵՍԿԵՆ

(էջ 337)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Քյաթուկ գյուղի բնակիչ Նուբար Նանեն, գրի է առել Մ. Գրիգորյանը 1946 թ. օգոստոսին Քյաթուկ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

55. ՍՈՒՂՈՒՄՈՒՆ ԻՄԱՍՏՈՒՆԸ

(էջ 340)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Քյաթուկ գյուղի բնակիչ Նուբար Նանեն, գրի է առել Մ. Գրիգորյանը 1946 թ. օգոստոսին Քյաթուկ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

56. ՀՈՒ ՎԵՐ ՄԻՆ ՊԵՆԻ ՀԵՏԱՆ ԸՆԳՆԻ ԿԸՀԱՍՆԻ

(էջ 343)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Քյաթուկ գյուղի բնակիչ Նուբար Նանեն, գրի է առել Մ. Գրիգորյանը 1946 թ. օգոստոս-Քյաթուկ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

57. ՄԱՀՈՐԿԵՆ ՑԱՇԻԳԸ

(էջ 347)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Սարուշեն գյուղի բնակիչ, ուսուցչուհի Նվգենյա Պետրոսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1951 թ. օգոստոսին, Սարուշեն գյուղում։ Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Սարուշեն գյուղը գտնվում է մի բարձրադիր լեռնալանջի, տներն իրար թիկունքի բարձրանում են սարնիվեր և մեկի բակը մյուսի կտուրն է, հեռվից թվում է, թե ծիծեռնակի մի մեծ բուն է լեռան լանջին կպած։

Սարուշեն գյուղն ունի պատմական անցյալ։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

58. ՂՈՒԳՅԱՍԸ ՆԱՆ ՍՈՒՔՅԱՍԸ

(էջ 352)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղի բնակիչ Մայկո Բաղդասարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930 թ. հոկտեմբերին Բաքու քաղաքում։

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Մայկո Բաղդասարյանը ծնվել է 1899 թ. Մոխրաթաղ գյուղում։ Երիտասարդ հասակում ամուսնացել է Շուշեցու հետ, բնակություն է հաստատել Բաքվում։

Ընտանիքը բազմամարդ էր ու տնային աշխատանքը շատ, դրա համար էլ ոչ մի տեղ չի աշխատել։ Մյուս կողմից էլ անգրագետ լինելն է խանգարել։

www.naregatsi.org

Նա պատմում էր, որ չքավոր գյուղացու աղջիկ է եղել, դրա համար էլ անուսում է մնացել։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

59. ԲԱԽՏԱՎԵՐ ՁՈՐԱՆԸ

(էջ 359)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղի բնակիչ Մայկո Բաղդասարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930 թ. Բաքվում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

60. ԴԵՎԸ

(էջ 365)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Մոխրաթաղ գյուղի բնակիչ Մայկո Բաղդասարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930 թ. Բաքվում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

61. ԱՌՈՒԾԵՆ ՏՂԱՆ

(էջ 368)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղի բնակիչ Սիրանուշ Սարգսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1958 թ. օգոստոսին, Ներքին Հոռաթաղ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

62. ՓԻՍ ԴԱՅԻՆ

(էջ 383)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղի բնակիչ Սիրանուշ Սարգսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1958 թ. օգոստոսին Ներքին Հոռաթաղ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

63. ԹՐԵՎԱՎԵՐ ԿՐՆԳՅԸ

(էջ 386)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Ջափար գյուղի բնակիչ Գյուլի Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950 թ. օգոստոսին, Ջափար գյուղում։ Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Գյուլի Ավագյանը բարձրահասակ ու գեղեցիկ դեմքով կին է, հագնվում է գյուղական տարազով։ Քաղցրախոս է, խոսքով գերում է ունկնդիրներին և ստիպում լսել իրեն։ Աշխատում է կոլտնտեսության մեջ։

Ջափար գյուղը գտնվում է Մարդակերտի լեռնոտ վայրում»։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

64. ՂՐԼԵԳՅԶԻՆ

(էջ 392)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Ջափար գյուղի բնակիչ Գյուլի Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950 թ. օգոստոսին, Ջափար գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

65. ԿԱԽԱՐԹԸ

(էջ 398)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Ջափար գյուղի բնակիչ Գյուլի Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950 թ. օգոստոսին, Ջափար գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

66. ԱՇԿԸ ՄԱԿ ՄԱՐԹԸ

(էջ 401)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Մարդակերտ գյուղի բնակիչ Խաչատուր Կարապետյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950 թ. ամառը, Մարդակերտ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

67. ՀԱԹԵՐՔԻՆ ՀԻԼԻՆ

(էջ 408)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Հաթերք գյուղի բնակիչ Շամիր Ղազարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950 թ. ամառը, Շուշի քաղաքի հանգստյան տանը։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

68. ՀԱԹԵՐՔԻՆ ԻՐԵՔ ԴԵՐԸ

(էջ 411)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի բնակիչ Շամիր Դաշտոյանը, գրի է առել Մ. Դրիգորյանը 1950 թ. ամառը, Շուշի քաղաքի հանգստյան տանը։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)

69. ԱԺԴԱՀԱԿԸ

(էջ 413)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ջանախչի (Ավետարանոց) գյուղի բնակիչ Մարիամ Ջաքարյանը (Մինա բաջին), գրի է առել Մ. Դրիգորյանը 1928 թ. հուլիսին, Ջանախչի գյուղում։ Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Մինա բաջին (Մարիամը) 62 տարեկան է, առույգ ու աշխույժ։ Մինա բաջին ոչ ոք չունենալով շրջագայում էր գյուղից գյուղ, կամ բնակվում էր Շուշի քաղաքում։ Ջանախչի (Ավետարանոց) գյուղը հին գյուղ է, շենքերը իրենց վրա կրում են հնության հետքեր»։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)։

70. ՀԱՐՈՒՍՏԸ ՄԸՆ ԷԼ ՔՅԱՒՍԻՐԸ

(էջ 426)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ջանախչի գյուղի բնակիչ Մարիամ Ջաքարյանը (Մինա բաջին), գրի է առել Մ. Դրիգորյանը 1928 թ. հուլիսին, Ջանախչի (Ավետարանոց) գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)։

71. ՔՒՐԸ ՆԱՆ ԱԽՊԵՐԸ

(էջ 430)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ջանախչի գյուղի բնակիչ Մարիամ Ջաքարյանը (Մինա բաջին), գրի է առել Մ. Դրիգորյանը 1928 թ. հուլիսին, Ջանախչի գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)։

72. ԴԱՆԳԼԱ ԿՆԵԳԸ

(էջ 433)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ջանախչի (Ավետարանոց) գյուղի բնակիչ Մարիամ Ջաքարյանը (Մինա բաջին), գրի է առել Մ. Դրիգորյանը 1928 թ. հուլիսին, Ջանախչի (Ավետարանոց) գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

73. ՊԱՐՍԵՂԸ ՆԱՆ ԱՐՍԵՆԸ

(էջ 435)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում։

Ըստ բանահավաքի հաղորդման, ասացող Ա. Աթայանը երիտասարդ ուսուցիչ է։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

74. ԼԱՎ ՏԸՆԴԵԳՅՈՒՆԸ

(էջ 444)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

75. ՊԱՐԻ ԿՆԵԳԸ

(էջ 446)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

76. ԴԵՐ ՏԸԵՒԱԾ ՄԱՐԹԸ

(էջ 450)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

77. ՂՈՆԱՂԸ

(էջ 453)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

78. ՃԸԿԸՏԱԿՅԻՐԸ

(էջ 455)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

79. ՔԱՋԱԼ ՃՈՏԸ

(էջ 458)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տես՝ Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

80. ԷՐԿՈՒ ԱԽՊԵՐ

(էջ 462)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին Թաղավարթ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

81. ԹԱՋԱ ՓԸՍԱՏ ԽՈՀՈՐԾԸ ՀԵՏԵ

(էջ 467)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Թաղավարթ գյուղի բնակիչ Արտաշես Աթայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Թաղավարթ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

82. ԻՐԵՔ ՀԸՐՍԱՆԵՔՅ

(էջ 469)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Շեխեր գյուղի բնակիչ Նղսան բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1937 թ. օգոստոսին, Շեխեր գյուղում։ Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Նղսան բաջին 60 տարեկան կոլտնտեսուհի է։ Ամուսինը եղել է չքավոր գյուղացի, ապրում է միահարկ, հին տանը։ Նղսան բաջին հաղնում է լայն բազմավոր հագուստ, գլխին կապում է թաշկինակ։ Բնավորությամբ մեղմ և բարի կին է։ Անգրագետ է։

Շեխեր գյուղը բաղկացած է երկու մասից, մի մասը լեռնալանջի թեքվածքի

www.naregatsi.org

վրա է, մյուս մասը ավելի հարթ տարածության վրա։ Տները դեռևս հին, պապենական ձևի են, շատերը միահարկ, կան նոր կառուցումներ ևս։

Գյուղն ունի վարար ու չինչ աղբյուրներ։ Գյուղից ներքև՝ բավական հեռու գտնվում են թթենու այգիները, բանջարանոցները, բայց ամենից առաջ ցորենի արտերն են։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

83. ԹԱՔԱՎԵՐԻՆ ՊՈՒՃՈՒՐ ՏԸՂԱՆ

(էջ 478)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Շեխեր գյուղի բնակիչ Եղսան բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1937 թ. օգոստոսին, Շեխեր գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

84. ԹԱՔԱՎԵՐԻՆ ՊՈՒՃՈՒՐ ՓԸՆՍԱՆ

(էջ 482)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Շեխեր գյուղի բնակիչ Եղսան բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1937 թ. օգոստոսին, Շեխեր գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

85. ՃԸԿԸՏԱԿՑԻՐԸ ՍՈՏ Ա

(էջ 484)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Շեխեր գյուղի բնակիչ Եղսան բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1937 թ. օգոստոսին, Շեխեր գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

86. ՔԱՌԵՐԵՆ ԲԱԽՏԸ

(էջ 486)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Շեխեր գյուղի բնակիչ Եղսան բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1937 թ. օգոստոսին, Շեխեր գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

87. ՋՈՒԱՆՆԵՆ ՍԵՐԸ

(էջ 488)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ներքին Սղնախ գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Ներքին Սղնախ գյուղում։ Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Մարգարիտ բաջին ծնվել է 1891 թ.։ Նա ջահել հասակում զբրկվելով ամուսնուց, որը զոհ էր դնացել 1918—1920 թթ. կռիվներում, ձեռքի աշխատանքով պահում էր իր որբերին։ Սրա-նրա համար հաց էր թխում, թել էր մանում, դորդ, կարպետ, դուլպա գործում։ Ներքին Սղնախ գյուղը գտնվում է մի բարձրադիր սարահարթի վրա։ Տները պարսպապատ են, լայն, կամարաձև դարբասներ ունեն։ Գյուղի բնակչությունը զբաղվում է բանջարաբուծությամբ, մանավանդ՝ լոբու։ Տղամարդկանց մեծ մասը դերձակներ են, կան և ոսկերիչներ։ Զբաղվում են նաև առևտրով»։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

88. ՋԵՅՐԱՆԸ

(էջ 492)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ներքին Սղնախ գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

89. ԱՐՋԸ ՆԱՆ ԱԽՃԻԳԸ

(էջ 495)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ներքին Սղնախ գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Ներքին Սղնախ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

90. ՊՈՒՐՎՈՒՑ ԼԱՎ ԱՊՐԵԼԸ

(էջ 498)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ներքին Սղնախ գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Ներքին Սղնախ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

91. ԷՐԿՈՒ ԳՈԴ ՅՈՐԵՆ

(էջ 502)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

92. ՀԱՎԸ

(էջ 504)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

93. ԹՐՈՋԿԱՆ ՀԱՐՍԸ

(էջ 505)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի բնակիչ Հեղինե Բաղդասարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1949 թ. օգոստոսին, Սխտորաշեն գյուղում։ Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Հեղինե Բաղդասարյանը 64 տարեկան կոլտնտեսուհի է։ Նա քաղցրախոս ու զրուցասեր կին է։ Հագնում է լայն, գյուղական ձևի «դեյրա» գլխին կապում է թաշկինակ։ Դեմքը նիհար է, կեռ քթով։ Սխտորաշեն գյուղը մեծ գյուղ է, ունի ցորենի արտեր, գյուղացիները զբաղվում են անասնապահությամբ։ Տները երկհարկանի են, երկար ու լայն ներքևի հարկը շտեմարանն է, բակում՝ անասունների գոմը։ Տները շրջապատված են քարուվրի պատերով կամ ցանկապատով»։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

94. ԹԱՔԱՎԵՐ ՅՈՒԿՆԸ

(էջ 512)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի բնակիչ Հեղինե Բաղդասարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1949 թ. օգոստոսին, Սխտորաշեն գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

95. ՓԻՍ ԿՆԵԳԸ

(էջ 515)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի բնակիչ Հեղինե Բաղդասարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1949 թ. օգոստոսին, Սխտորաշեն գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

96. ԱՂՎԵՍԸ ՆԱՆ ՓԱԼԱՆԳԸ

(էջ 519)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղի բնակիչ Հեղինե Բաղդասարյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1949 թ. օգոստոսին, Սխտորաշեն գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

97. ՍԱՌԱՆ ԿՅԱՄ Ա՛...

(էջ 521)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քերթ գյուղի բնակիչ Սարգիս Թավաքալյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1948 թ. օգոստոսին, Շուշի քաղաքի հանգստյան տանը։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

98. ՄԱՐԹԻՆ ՏԸՆՂԸ ՈՒՐՈՒՆ ՀՈՔՅԻՆ ՏՎՈՂ ԿՆԵԳԸ

(էջ 528)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Հարավ գյուղի բնակիչ Ազիզբեկ Հակոբյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1951 թ. հունվարին, Բաքու քաղաքում։ Բանահավաքը հայտնում է, որ ասացողը երիտասարդ ուսուցիչ է։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

99. ՓԻՍ ՄԱՐԸ

(էջ 531)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Հերհեր գյուղի բնակիչ Մանիշակ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Հերհեր գյուղում։ Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Մանիշակ բաջին ծեր կին է, հագնում է «հայավարի» շոր, այսինքն երեք փեշից

www.naregatsi.org

բաղկացած, գլխին դնում է արծաթե դրամներից շինած «պալխ», գլուխը կապում է դարձյալ «հայավարիկ» կոչված ձևով։ Հերհեր գյուղի եկեղեցու մոտ կա հինավուրց մի ծառ, որի բնի մեջ կա մի մեծ փչակ, այդտեղ կարելի է տեղավորել սեղան, աթոռներ։ Հին ժամանակ այդտեղ մոմեր էին վառում, որպես սրբատեղի։ Հերհեր գյուղն այժմ հայտնի է իր հարուստ այգիներով ու բանջարանոցներով, խոշոր կոլտնտեսությամբ։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

100. ԱՍՏԱՏՈՒԲԸ ՆԱՆ ՎԱՐԹԻՆ

(էջ 535)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Հերհեր գյուղի բնակիչ Մանիշակ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Հերհեր գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

101. ԿՈՐԱՏ ԵՂՆԸ

(էջ 540)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Հերհեր գյուղի բնակիչ Մանիշակ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Հերհեր գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տես՛ Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

192. ԹԱՔԱՎԵՐԵՆ ԱԽՃԻԳԸ

(էջ 544)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Հերհեր գյուղի բնակիչ Մանիշակ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Հերհեր գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տես Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

103. ԱՅԱՆ ԾԸԾՂԵՍ Ա

(էջ 548)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քերթ գյուղի բնակիչ Ղուլյան Գարեգինը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1948 թ. օգոստոսին, Շուշի քաղաքի հանգստյան տանը։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

104. ԱՐՁԸ

(էջ 551)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քերթ գյուղի բնակիչ Ղուլյան Գարեգինը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1948 թ. օգոստոսին, Շուշի քաղաքի հանգստյան տանը։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

105. ՀՈՆԶ ԸՆՈՒՂՆԻՆ

(էջ 554)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Քերթ գյուղի բնակիչ Ղուլյան Գարեգինը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1948 թ. օգոստոսին, Շուշի քաղաքի հանգստյան տանը։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

106. ԵՐԳՅԻՆՔԱՆ ՎԵՐ ԸՆԳԱԾ ԽԱՆՋԱԼԸ

(էջ 554)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Գիշի գյուղի բնակիչ Վոլոդյա Անտոնյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1956 թ. հուլիսին, Գիշի գյուղում։ Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Գիշի գյուղը գտնվում է մի լեռնալանջի վրա, որի հողային շերտը հեղեղների, քամիների պատճառով հետզհետե իջնում է, բացում ժառերի արմատները։

Գյուղի տները կառուցված են քաղաքի տների պես։ Գիշին հարուստ գյուղ է, ունի առատ խաղողի և թթենու այգիներ։ Խաղողը առաջնակարգ տեղ է գրավում, հայտնի է «Գիշիհ» անվամբ գինի։ Գյուղի աղբյուրներից նշանավոր է Ոսկեխաչ աղբյուրը։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

107. ՕԽԸ

(էջ 559)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Գիշի գյուղի բնակիչ Վոլոդյա Անտոնյանը 1956 թ. հուլիսին, Գիշի գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

108. ԹԱՔԱՎԵՐԻՆ ԱԽՃԻԳՅԸ ՆԱՆ ՈՒՐՈՒՑՑ ՆՈՔՅՈՒՐԸ

(էջ 562)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Վանք գյուղի բնակիչ Արծվիկ Ավետիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1952 թ. ամռանը, Վանք գյուղում։ Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Վանք

www.naregatsi.org

գյուղը գտնվում է Հադրութից ոչ հեռու մի բարձրության վրա։ Ունի շատ գեղեցիկ դիրք։ Գյուղի հետ կապված են մի շարք ավանդություններ»։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

1. ԳՅԱՆՔԻՆ ՕՐԵՐԸ

(էջ 565)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Ղումաշ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1927 թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրի № 1 հեքիաթի ծանոթագրության մեջ։

2. ԽԼԵՉՆԸ

(էջ 566)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթը ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղշլաղ գյուղի բնակիչ Բեգլար Բաբայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

3. ԹԱՔԱՎԵՐԸ ՆԱՆ ԽԵԼՈՒՆՔ ԱԽՃԻԳԸ

(էջ 568)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1938 թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

4. Ս Ե Ր Ը

(էջ 572)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930 թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյու-

www.naregatsi.org

սական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

5. ՄԸԼԼԱԼԻՍ ԱՍՔԱՆԸՐԸ

(էջ 575)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1930 թ. Շուշի քաղաքում։ Ասացողի և հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ

6. ՊԸՐԿԸ ՓՈՒԱՆ ԿԸՆԵԳՅԸ

(էջ 576)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

7. ՋԱՆԱՎԱՐԸ

(էջ 578)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

8. Օ Ծ Ա Վ Ը

(էջ 579)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ։

9. ԸՌՈՒՍԵՆ ՏԸՂԱՆ

(էջ 580)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի բնակիչ Փիրուզա Տեր-Հովհաննիսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1933 թ. Շուշի քաղաքում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի № 17 հեքիաթի ծանոթագրության մեջ

10. ԽԵԼՔԻ ՅԸՄ ԵԿԱՀ

(էջ 584)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Շուշու շրջանի Սղնախ գյուղի բնակիչ Ավագ Հակոբյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը Սղնախ գյուղում, 1948 թ. ամռանը։

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Սղնախ գյուղը գտնվում է Քիրսի լանջին, քարին տակ գյուղից ոչ հեռու։ Ունի գեղեցիկ տեսք, առողջարար օդ։ Տները մեծ մասամբ երկհարկ են և կարմիր ներկված թիթեղյա տանիքներով։ Գլխավոր զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է»։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

11. ՍԸՆՏԸ ՔԱՐ ՄՐԱՔՈՒԸ

(էջ 588)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի № 42 հեքիաթի ծանոթագրության մեջ։

12. ՄՈՐԸ ԿՈՌՆԸ

(էջ 590)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրի-

www.naregatsi.org

գորյանը 1957 թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի № 42 ծանոթագրության մեջ։

13. ԱՌԱՆՑ ՀՈՐԸ ՆԱՆ ՄՈՐԸ ՊԱՋԱՏ ԱԽՃԻԳՑԸ

(էջ 593)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի № 42 հեքիաթի ծանոթագրության մեջ։

14. ՄԱՐՋԸ

(էջ 596)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի № 42 հեքիաթի ծանոթագրության մեջ։

15. ԿՅՈՒԼԻՆ ՄՈՐԹԵՆ

(էջ 598)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Ավագ դային, գրի է առել Մ. Գրիգորյանը 1957 թ. հուլիսին, Շուշիքենդ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկությունները տե՛ս սույն հատորի հիմնական բնագրերի № 42 հեքիաթի ծանոթագրության մեջ։

16. ԱՐԱՋԸ

(էջ 600)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Թամարա Շահրամանյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1956 թ. օգոստոսին, Շուշիքենդ գյուղում։

www.naregatsi.org

Ասացողի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին բանահավաքը տեղեկություններ չի թողել։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

17. ԴԵՐՎԻՇԸ ԳՅԻԴԿԱՆ ՋԱՐ, ԱՄՄԱ ԿԼՈՆԸ ԵԿԱԾ ԱՐ

(էջ 602)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Շուշիքենդ գյուղի բնակիչ Թամարա Մելքումյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1953 թ. օգոստոսին, Շուշիքենդ գյուղում։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։ Բանահավաքը ասացողի մասին հայտնել է, որ «նա ուսուցչուհի է Շուշիքենդ գյուղի դպրոցում, տարիքով՝ երիտասարդ է»։ Այս հեքիաթը կիսով չափ զրույց-ավանդություն է՝ հյուսված Ղարաբաղի նշանավոր Մելիք-Շահնազարի մասին։

18. ՎՐԵՍԿԵ ՋԱՄԸ

(էջ 605)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Սարուշեն գյուղի բնակիչ, ուսուցչուհի Նվգենյա Պետրոսյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1951 թ. ամռանը, Սարուշեն գյուղում։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

19. ՋՈՒՔՅԻ ԱՊԵՐԸ

(էջ 609)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ասկերան գյուղի բնակիչ Միքայել Բալայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1940 թ. հունիսին, Ասկերան գյուղում։ Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Ասկերան գյուղը գտնվում է համանուն բերդի մոտ, որը Լեռնային Ղարաբաղի դարպասն է, նրա լայն ու ամուր պարիսպի շարունակության մեջ։ Այդ բերդն ու պարիսպը հին կառուցվածք են՝ թշնամիներից պաշտպանվելու համար։ Ասկերան գյուղն ունի առատ այգիներ, գտնվում է Ստեփանակերտ տանող ճանապարհի վրա»։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

20. ՄԱՔՅԻ ԱՊՈՒՆ ՄՈՐՈՒՆ ՆԱՂԼԸ

(էջ 611)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ասկերան գյուղի բնակիչ Միքայել Բալայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1940 թ. հունիսին, Ասկերան գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

21. ՄԱՔՅԻ ԱՊԱՆ

(էջ 612)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ասկերան գյուղի բնակիչ Միքայել Բալայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1940 թ. հունիսին, Ասկերան գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

22. ԲԱՑԱՎԵՐԻՆ ՊՈՉԸ

(էջ 613)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղարաբուլաղ գյուղի բնակիչ Աշոտ Ադամյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950 թ. օգոստոսին։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

23. ՁԱՐ ՊԱՌԱՎԸ

(էջ 615)

Տպագրվում է առաջին անգամ։ Հեքիաթն ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղարաբուլաղ գյուղի բնակիչ Արաքսյա Համբարձումյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1949 թ. օգոստոսին, Ղարաբուլաղ գյուղում։

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Ղուլբուլաղ գյուղը գտնվում է մի սարահարթի վրա, ներքևում՝ խոր ձորում հոսում է հորդառատ գետը, գետի վրա շրաղաց կա»։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

24. ՏՂԱՆ ՀՈՐԸ ՓԵՇԱԿԸՆ Ա ՍԸՎԵՐԸՄ

(էջ 617)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղարաբուլաղ գյուղի բնակիչ Արաքսյա Համբարձումյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1949 թ. օգոստոսին, Ղարաբուլաղ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

25. ՍԻՐԱԿԱՆ ՊԱՀՈՂ ԿԸՆԵԳԸ

(էջ 620)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղարաբուլաղ գյուղի բնակիչ Արաքսյա Համբարձումյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1949 թ. օգոստոսին, Ղարաբուլաղ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

26. ԱՇԿԸ ԾԱԿ ԽՈԽԱՆ

(էջ 622)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ղարաբուլաղ գյուղի բնակիչ Արաքսյա Համբարձումյանը, գրի է առել Մ. Դրիգորյանը 1949 թ. օգոստոսին, Ղարաբուլաղ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)։

27. ԳՅՈՒՎԱՄԻՇ ԿԵՎԱՆԸ

(էջ 623)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Ջափար գյուղի բնակիչ Գյուլի Ավագյանը, գրի է առել Մ. Դրիգորյանը 1950 թ. օգոստոսին, Ջափար գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)։

28. ԱՂՎԵՍԸ ՆԱՆ ՃՂԱՅՊԱՆԸ

(էջ 626)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Ջափար գյուղի բնակիչ Գյուլի Ավագյանը, գրի է առել Մ. Դրիգորյանը 1950 թ. օգոստոսին, Ջափար գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)։

29. ՔԱՋԱԼ ԱԽՊԵՐԸ

(էջ 629)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Ջափար գյուղի բնակիչ Գյուլի Ավագյանը, գրի է առել Մ. Դրիգորյանը 1950 թ. օգոստոսին, Ջափար գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)։

30. ԱՆԲԱԽՏ ԱԽՃԻԳՑԸ ԲԱԽՏԱՎԵՐՎՈՒՄ Ա

(էջ 633)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Մարդակերտ գյուղի բնակիչ Սեդրակ Ավագյանը, գրի է առել Մ. Դրիգորյանը 1950 թ. օգոստոսին, Մարդակերտ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Դրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

31. ԱՌՈՒՏԻՆ ՆԱՆ ԿԱՏՎԻՆ ՀԱՋՅԱԲԸ

(էջ 637)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մարտակերտ գյուղի բնակիչ Սեդրակ Ավագյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950 թ. օգոստոսին, Մարտակերտ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

32. ԹԱՔԱՎԵՐԵՆ ԿՈՐԱԾ ԱԽՃԻԿՅԸ

(էջ 639)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Աշան գյուղի բնակիչ Վարդան Բալայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1951 թ. հունիսին, Շուշի քաղաքի հանգստյան տանը։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

33. ՄԻՆ ԿՅՈՂՈՒ ՆԱՂԸ

(էջ 645)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ջանախչի գյուղի բնակիչ Մարիամ Ջաքարյանը (Մինա բաջին), գրի է առել Մ. Գրիգորյանը 1928 թ. հուլիսին, Ջանախչի (Ավետարանոց) գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

34. ԷՇԻՆ ԲԱԴԱ ՏԱԼԸ

(էջ 647)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ջանախչի (Ավետարանոց) գյուղի բնակիչ Մարիամ Ջաքարյանը (Մինա բաջին), գրի է առել Մ. Գրիգորյանը 1928 թ. հուլիսին, Ջանախչի գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

35. ՍԱԼԴԱԹԸ

(էջ 648)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Հերհեր գյուղի բնակիչ Մանիշակ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Հերհեր գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

36. ՊՐՈՖԵՍՈՐԵՆ ՔՈՒՐԸ

(էջ 651)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

37. ԱՐՋԸ ՆԱՆ ՄԱՐԹԸ

(էջ 654)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

38. ԴՈԼՄԱ ԻՓԻԼԸ

(էջ 656)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

39. ԿՅՈՒԼ ՏԸԲՌԱՏ ԿՐՆԵԳԸ

(էջ 658)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

40. ԱՇԸՂԸ

(էջ 660)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Ներքին Սզնեք գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

41. ԱՐՋԸ

(էջ 661)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ներքին Սղնախ գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Ներքին Սղնախ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

42. ԱՇԿԱՎ ՏԱԼԸ

(էջ 662)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ներքին Սղնախ գյուղի բնակիչ Մարգարիտ բաջին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1929 թ. հունիսին, Ներքին Սղնախ գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

43. ԽՈՐԹ ՄԱՐԸ

(էջ 663)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Սոս գյուղի բնակիչ Նաայ Նաայանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1955 թ. հուլիսին, Սոս գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

44. ԹԱՔԱՎԵՐԸ ՆԱՆ ՎԵԶԻՐԸ

(էջ 665)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղի բնակիչ Էդիկ Մելքումյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950 թ. հուլիսին, Մյուրիշեն գյուղում։ Ըստ բանահավաքի հաղորդման, ասացողը երիտասարդ է։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

45. ԿԸՏԱԿԸ

(էջ 667)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղի բնակիչ Էդիկ Մելքումյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950 թ. հուլիսին, Մյուրիշեն գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

46. ՓԸՌՔԻՇԸ

(էջ 668)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղի բնակիչ էդիկ Մելքումյանը, գրի է առել Մ. Գրիգորյանը 1950 թ. հուլիսին, Մյուրիշեն գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

47. ՏԱՓԱԿ ԱՐՏԵՆ ՄՈՍԻՆ

(էջ 669)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Տումի գյուղի բնակիչ Աղաջան դայիին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1953 թ. ամռանը, Տումի գյուղում։

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Աղաջան դային հասակավոր, հողագործ կոլտնտեսական էր։ Տումի գյուղը գտնվում է մի գեղեցիկ լեռնալանջի վրա. մեծ գյուղ է։ Գյուղի հետ կապված կան մի շարք ավանդություններ։ Այստեղ կա մի քանդված եկեղեցի, որ կոչում են Գագիկ Թագավորի աղջկա եկեղեցի։ Գյուղի աղբյուրներից մեկը կոչվում է Թագավորի աղբյուր (Թիքյըվերեն ախպէրը)։ Գյուղից վերև բարձրանում է Տզափատը, որի ստորոտը անտառապատ և գագաթը միգամած սար է։ Գյուղից ոչ հեռու կա մի բարձրություն, որ կոչվում է Ղլեն խութ։ Դրա հետ կապվում են մի շարք ավանդություններ»։

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

48. ՊԸՌՎԱԼԵՆ Ջ

(էջ 675)

Տպագրվում է առաջին անգամ։ Ասել է Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Տումի գյուղի բնակիչ Աղաջան դայիին, գրի է առել Մ. Գրիգորյանը 1953 թ. ամռանը, Տումի գյուղում։ Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է բանահյուսական արխիվում (տե՛ս Մ. Գրիգորյանի ֆոնդ)։

www.naregatsi.org

Բաղարանը

Յանկերը



www.naregatsi.org

www.naregatsi.org

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ա.

Աբասի — քսան կոպեկ
Արուռ — ամոթ
Ադըմ — քայլ
Ադըմ-բաստըմ անել — գործը կատարել արագ, բայց անորակ
Ազադվել — ծննդաբերել
Ազափ — ամուրի
Ալղի — 1. տատ, 2. մայր
Ալղ-ալվլաղ — աղգուտակ
Աթադան-բաբադան — հնուց սկսած, պապերից սկսած
Աթկազ — մերժում
Ալաճուկ — վրան
Ալամ աշխարք — ողջ աշխարհ
Ալամաթ — շատ լավ, հիանալի
Ալավ — բոց
Ալափռանգլի— ֆրանսիացու, եվրոպացու ձևով
Ալլաղ-սալլաղ ինիլ — հրաժարվել, ձեռք վերցնել
Ալլահյեթաար — թափթփված, անշնորհք
Ալլեր (ալլեր) — ալյուր
Ալլու — վեգի բարձր կողմը
Ալլու ա գաղնալ վեքյը — գործերը հաջող են ընթանում
Ախեր — ախր
Ախմախ — հիմար
Ախրը վերչը — վերջապես, վերջիվերջո
Ախցան — աղցան
Ախցան անել — խիստ ծեծել, ջարդել
Ածեգյ — ածիկ
Ածել — նվագել
Ակուշկա — պատուհան
Ահետ — այնուհետև
Աղաք — առաջ
Աղվեսթուն — խորամանկություն
Ամանգյ — երախտիք
Ամալ կյալ — 1. հնարավոր լինել, հաջողվել, 2. աճել
Ամալ պիրիլ — 1. հնարավոր դարձնել, հաջողացնել, 2. աճեցնել
Ամանաթ — ավանդ, պահ տված բան
Ամանգյունիդը — վատ օրում եմ, խղճա
Ամարաթ — պալատ, ապարանք
Ամբար — պահեստ, շտեմարան
Ամի — հորեղբայր
Ամմա — բայց, միայն թե
Այա — տատ
Այազ— սառնամանիք, խիստ ցուրտ
Այբեջաւ — տգեղ, անշնորհք

www.naregatsi.org

Ային-օյին — 1. աննշան, անկարևոր, 2. թեթև կերպով
Այշի (այ քիշի) — այ մարդ
Անաբուռ — անամոթ
Անդար — անտեր
Անդար-ընդերու — բոլորովին անտեր, անտեր-անտիրական
Անդըր-(ընդունր) — դրա համար
Անըմ — անուն
Անթեղնը անել — կրակը մոխրով ծածկել, որ չհանգչի
Անկյին (անգյին) — 1. թանկարժեք, անգին, 2. կնոջ անուն
Անջախ — հազիվ-հազ
Անջուկ — ականջ
Անուրի — անօրեն
Աշխանա — ճաշարան
Աշկ — 1. աչք, 2. մատանու ակ, 3. պահարանի դարակ
Աշկա ընգնել — աչքից ընկնել
Աշկա կորչիլ — աչքին չերևալ
Աշկաթող անել — անուշադրության մատնել
Աշկավ տալ — աչքով տալ
Աշկերը ուրծն կալած — կատաղած, խիստ բարկացած
Աշկերը ծիլի-վիլի արած — հարբած
Աշկը ծակ — ագահ
Աշկը յրան — դեռ չկշտացած, չհագեցած
Աշկը-ունքը յրա պիրիլ — մռայլվել
Աշկը ունքին կըլխան իլած — կատաղի, ինքնահավան
Աշկը օրիշի յրա — չքավոր, չունեցող
Աշկին սըվըսխպտակը — մինուճար
Աշպազ — խոհարար
Աչառ — բանալի
Աչեռ — տե՛ս աչառ
Աջալ — վերջ, վախճան
Աջալը ծըրավել — վերջը, վախճանը հասնել
Ասըլ — խելոք
Ասթըխ — աստղ
Ասթըխը փռնել — դուր գալ, սիրվել,
Ասլան — առյուծ
Ասլան բալասի — առյուծի ձագ, ուժեղ
Ավ՚ել — անցյալում
Ատաժ — հարկ
Արխալին — հանգիստ
Արշի՚ կյալ — 1. ծնվել, դոյանալ, 2. աճել, հասունանալ
Ափաթ — ժամանակի
Ափաթ տանել — ժամանակն ազդելով ոչնչացնել՝ մեռցնել
Ափաթը կտրել — ստիպել
Ափաշկարա — բացեիբաց
Ափարիմ — կեցցես

Բ

Բաբ — համապատասխան
Բաբաթ — միջակ
Բաբռնե — առյուծ
Բադյ — բեկ
Բադա տալ — իզուր տեղը կորցնել
Բադամ — նուշ
Բադան — գառնատեղ
Բադարաքյ — պատարագ
Բադարկա — նվեր
Բազար — շուկա
Բազի — որևէ
Բաթմիշ անել — կորցնել
Բալամ — որդիս (կոչական)
Բալի — գուցե
Բալկոն — պատշգամբ
Բալքյաս — գուցե
Բախշիլ — նվիրել
Բախշա (բախճա) — փոքր այգի
Բախրա — եղջերու
Բայդաղ — դրոշ
Բաննաճ — որմնադիր
Բաշ — գլուխ
Բաշաբաշ — հավասար
Բաշիր չանիլ — անկարող լինել
Բաշի — քույր

www.naregatsi.org

Բաստաճմիշ անել — պահել, պահպանել, պատվել
Բեդմա — պիտի
Բեխաբար — անտեղյակ
Բեննամուս — աննամուս
Բեչիթ — շուտ
Բեքյեի— տխուր, տրամադրությունը վատ
Բըհնամ կյալ — առաջանալ, դոյանալ, աճել
Բըղբըղալ — բղբղոցի ձայն հանել (կովի, եղան մասին, այլև նմանությամբ՝ մարդու մասին)
Բընովրա — հիմք
Բըռնոթի — քթախոտ
Բըրըշիլ — հաշտվել
Բխբի — մորաքույր
Բխդի — պիտի
Բխդի — դեպի
Բխըբխըլ — 1. հրել, հըրհրել, 2. հրահրըել, գրգռել
Բիժի-բիժի — կովին, հորթին կանչելու ձայնարկություն
Բիշի — գաթայի տեսակ
Բիշտի-բիշտի անել — 1. բոթել, բոթ-բըթել, 2. հրահրել, գրգռել
Բիչեր — կնոջ չսանրած մազեր
Բիչուրիլ — խնամել, աճեցնել
Բիրուդի — միանգամից
Բիրդան — միանգամից, հանկարծ
Բոզ — մոխրագույն
Բոզ — վարքը վատ
Բոթուլ — շիշ
Բոլ — 1. հերիք, բավական, 2. շատ, առատ
Բոլթա թակել, բոլթա թխել — 1. քայլելով անընդհատ ետ ու առաջ գնալ, 2. թրև գալ, անգործ ման գալ
Բոլլըղ — առատ
Բոլնիկ — երամակ, խումբ
Բոխչա — կապոց
Բողազ — կոկորդ
Բոշ — թուլլ
Բուդ — աղդր
Բուդուր-բուդուր կյալ — տանջվել հոգեկան կամ մարմնական ցավից
Բուբա— 1. ժապավեն, 2. թանկագին, հյուսվածքների գործերի առանձին նախշ
Բուբկա — կրպակ
Բունլունդ — հախճապակե մեծ ու տափակ ափսե
Բունչան ալիլիա — սրանից առաջ
Բուչի-բուչի անիլ — մատները մաշելով՝ դժվարությամբ տուն դնել
Բուլը պահիլ — ծածուկ հետևել
Բուրախ տալ — բաց թողնել
Բուրդան — տե՛ս բիրդան
Բուրչ կամ քյունչ — անկյուն

Գ

Գյաբա — գորգ
Գյադա — ծառա
Գյամի — նավ
Գյավակ (դյավակ) — գավակ
Գյդենն, գյդռտենքյ, գյադեք — ծառաներ, սպասավորներ
Գյիդալ — գիտենալ
Գյիլա — հատիկ
Գյիլաս — կեռաս
Գյիրաշդի — կիրակի
Գյիրթ — հանկարծ
Գյոզալ — գեղեցիկ
Գյոլ — լիճ, լճակ
Գյոմփիլ-դոմփիլ — շատ ծեծել
Գյոռ — գերեզման (դռեհկաբանություն)
Գյոռն չաթռասըն — քաջի հասցեին արվող դուխասանական արտահայտություն
Գյրվանքա — գրվանքա
Գյունլրա — գուլպա
Գյունլլա — հրազենի գնդակ
Գյունլլաս — նույնն է՝ գյիլաս
Գյունլլոն բաղ — պտուղներով ծանրաբեռնված այգի
Գյունլոնլ—կլոր սխտորի չափ հատիկ

www.naregatsi.org

Գյուման անել — մեկի վրա կասկածել
Գյունաքար մընալ — զարմանքից ապշել, փոշման մնալ
Գյուվամիշ — ինքն իրեն գլուխը դովող
Գյուրգյ — դոդ
Գոդ — կոտ

Դ

Դաբրա տալ — վատություն, թշնամություն անել
Դադարգյուն — թափառական, տնից-տեղից հեռացած
Դալաշ — առևտրի միջնորդ
Դալդա — 1. թաքուն, 2. թաքուն տեղ
Դալի — գիժ
Դալլաք — վարսավիր
Դալու — թիկունք
Դաղ — 1. սար, 2. վերք
Դաղվել — այրվել, խորովվել
Դամքաշ (դամը պահիլ) — փողահարի նվագի ձայնը պահել
Դայամիշ ինիլ — հոգնել, նեղանալ
Դայի — քեռի
Դան — հացահատիկ
Դանա — հորթ
Դանա — 1. հատ, 2. հատիկ (Մին դանա յա — աշխարհումս մի հատ է)
Դանգլա — հիմար, ապուշ
Դանգյ անել — գլուխը ցավեցնել, անհանգստացնել
Դաստա — փունջ
Դաստի — խակույն, շուտափույթ
Դավա — ուղտ
Դավերյա — վատահություն
Դավի տալ — վիճել
Դարա — 1. կողմ, սահման, 2. կիրճ. էտ (էս, էն) դարըմը — այդ (այս, այն) ժամանակ
Դարանդաղ — տարանտաս, մեծ սայլ, ֆուրգոն
Դարբազա — դարպաս
Դարդ — վիշտ
Դարյա (դերյա) — կանացի զգեստ, շոր
Դարվիշ — դերվիշ
Դեգյոն — խաղատիկնիկ
Դեհա — շուտ
Դեհա հա դեհա — շուտ-շուտ
Դեր — տերտեր
Դըբետ—ետ։ Դըբետ կաղնիլ—ետ կանգնել
Դըբըրեթկա (տաբուրետկա) — աթոռ
Դըբրոնգյոն— իրիկնամուտ
Դըբրուգյունա չախը— իրիկնամուտին
Դընոտեննքյ — հորթեր
Դրոդոռանչ — խարույկ. տյառն ընդ առաջ կրոնական տոնի անվանման աղավաղված ձևն է
Դրոնաղ, դըռաղն — սմբակ
Դըրդըհան ինիլ — դարդերը պատմել, դարդերից թեթևանալ

Ե

Եթիմ — որբ
Եխնել — հաղթել
Եխնվել — հաղթվել
Եմիշ — սեխ
Եշիլ — նայել
Ետալ — հետո
Ետ կյալ — 1. ուշքի գալ, 2. նյութականը փոքր-ինչ բարելավել, 3. առողջանալ
Ետնան — հետո
Ետ տըեռնալ, ետ տոռնայ — վերադառնալ
Եր (յըեր) ածել — թափել
Երի — վերևի

www.naregatsi.org

Զ

Զախոտ — արտաքնոց
Զակաղ — պատվեր
Զանհլիա տանել (զանհլիքնուշ անել) — ձանձրացնել
Զահմ — ահ, վախ
Զահման — սահման
Զամբռնել — զամբյուղ
Զանդյ — զանգ
Զանդյոն — ասպանդակ
Զապխանա — գրություն
Զառ — ոսկեթել, ոսկեգույն
Զառվարած — ոսկեջրած
Զատ — բան, իր, խոսք
Զեմքուճ — զոքանչ
Զրեռ — մեծ
Զընգոլակ — փոքր զանգակ
Զըրթարված — զարդարված
Զիբիլ — աղբ
Զիզի — դեղին գույնի վայրի բույս
Զիլ — բարձրաձայն
Զիլզիլան — հովասուն, հով (քամու մասին)
Զինքյը — իրեն
Զինքյը օտել — խիստ անհանգիստ լինել, ինքն իրեն ուտել
Զիրավ անիլ — զբաղեցնել, իրենով անել
Զիրավ յոլա քյինիլ—մի բանով մի կերպ ապրել
Զիրավ տալ — փաթաթել մի բանի վրայով (թել, գոտի, թոկ և այլն)
Զոլ — շերտ
Զոնթիկ — հովանոց
Զոննի քյինիլ — ուղիղ և արագ գնալ
Զոռի — ուժեղ
Զորբա — մեծ, ուժեղ
Զվանոկ — զանգ, զանգի ձայն
Զուլմամ — սարսափ
Զումբրուտ — 1. թանկագին քար՝ կանաչ գույնի, 2. կնոջ անուն, 3. թռչունի անուն
Զուռնա-ղավալ— երաժիշտներ՝ զուռնա նվագող, թմբուկ խփող և դամ պահող
Զուրթնանալ — արթնանալ
Զուրուց — զրույց

Է

Էլհա — նորից
Էխշ— ոգևորություն
Էխշը հավաս — շնորհք
Էն բաշտան — էն դլխից, սկզբից, վաղ
Էն հանգին — այն ձևով
Էս հի՞նչ իլլաթ-միլլաթ ա — այս ո՞վ է, այս ինչ մարդ է
Էվռիլ (ավիլ) — ավել
Էրգյան — երկար
Էրիլ — այրիլ
Էրկու — երկու
Էրկուինչի (էրկունչի) — երկրորդ
Էրկու վըեննը մին շմշկում տինիլ — համառել, իր ասածին լինել
Էրկուվըննանե — մարդ
Էքսը — մյուս օրը
Էքուց — վաղը

Ը

Ըբաստ — ևեթ
Ըզետ — այդ
Ըղըզամըռ — սիրելին մառած (անեծք է)
Ըթոըբաթոի ինիլ — կորչել
Ըլըբաստրակ — նապաստակ
Ըխպըհար — աղբանոց
Ըխպըրնե — աղբյուրներ
Ըղորթ — ճիշտ
Ըմբրնե — ամբարներ
Ընգուճումը խոսել — ծածուկ խոսել

www.naregatsi.org

Ընդհատանը — դրանից հետո
Ընդի — այնպես
Ընդրա — նրա
Ընդՙուր — դրա համար
Ընըմավեր — անունով, նշանավոր
Ընչանք — այնքան
Ընչըլՙուՙսանք — շնորհավորանք
Ընչըճեպ — ակնթարթ
Ընշտափել — ուշաթափվել
Ընշտեղ — որտեղ
Ընչրնե — բանալիներ
Ընչըղվիլ — բարկանալ, հակառակվել
Ընըշկեն (ընաշկեն) — առաջը
Ընըշկետան — գոգնոց
Ընըշտոտալ — հորանջել
Ընռնել — աճել (սածիլի, պատվաստի մասին)
Ընռընթաթախ — արյունաթաթախ
Ընռըփալալ — արյան մեջ ողողված
Ընռնիլ — արյուն գնալ
Ընռութանա — առավոտյան
Ընսս ըս թուղես կամ ասըմ ըս թողըմ — ասում ես թողնում
Ընկի — բոլորովին
Ընկուտուր — կեսուր
Ընտըեղ — այստեղ
Ընտեղերք — այս տեղերը
Ընտըկցնիլ — սատկեցնել
Ընտուծանա — աստծուց
Ընտուր — սրան
Ընտեղերք — այդ տեղերը
Ընըշՙավ ընգնիլ — երազ տեսնել
Ընբա (ընրաբա) — սայլ
Ընեսուն — երեսուն
Ընըղնե — երազներ
Ընըկյՙճի — իրականում
Ընիքյնակ — արեգակ
Ընխյին — հանգիստ
Ընկնցնել — երկարացնել
Ընկոքան — երկուսով
Ընկուհՙնքյիս — հղի
Ընվաց — երեսց
Ընփըվերի — այրի

Թ

Թադարեքյ (Թադարեք) — պատրաստություն
Թՙազՙա — նոր
Թՙազՙադան — նորից
Թՙազՙա գյՙլՙան բեխաբար — անտեղյակ, անփորձ (ծաղր)
Թալակ — թակարդ, որոգայթ
Թալան — ավար
Թախկուՙմ — սանրելուց հետո մնացած մազեր
Թախտ — 1. գահ, 2. նստելու համար տախտակյա երկար կահույք
Թամահ — 1. մի բան ձեռք բերելու ձգտում, 2. ագահություն
Թՙամՙՙնՙզ կամ Թՙամՙՙնՙզ-Թՙաքյՙՙնՙզ — մաքուր
Թայդի — շտապ
Թայըթուշ — ընկեր, համապատասխան (մարդու մասին)
Թանավ — սպաս
Թՙանթՙՙնՙլ — գազանի թաթ
Թՙաո — արևելյան երաժշտական գործիք
Թաոանչ — հառաչանք
Թաուլան — շահել, գնդեցիկ, աշխույժ
Թաո ինիլ — թաո լինել
Թՙավիլ (Թՙավՙՙնՙլ) տալ — գլորվել, գլոր-գլոր լինել
Թավլա — գոմ
Թՙասՙՙկ — գիշերային գլխարկ
Թՙարՙՙփ — կողմ
Թՙարՙՙքյամա — քոչ
Թՙարգյը տալ — վերջ տալ
Թՙարիփ — գովք
Թՙարս — հակառակ
Թՙարսին ծին եր ինիլ — հակառակվել
Թՙափՙՙ — կողմ, լանջ, գագաթ
Թափան — փորոտիք
Թՙափՙՙնչՙՙ — ատրճանակ
Թափշուր անել — 1. պահ տալ, 2. հանձնարարել
Թափուր — դատարկ

www.naregatsi.org

Թեգյունք — թիկունք
Թեյնը տալ — թիկն տալ
Թեշտ — լվացքի թիթեղյա տաշտ
Թեփուր — փետուր
Թեք ընդնիլ — 1. պառկել, 2. անկողնային հիվանդ դառնալ
Թըլընես կամ Թըլանըմ ըն — թալանում են
Թըխել կամ Թխիլ — հարվածել, խփել
Թըկըմհակ — կռիվ, ծեծ
Թըմամել — լրանալ
Թըմաշա — հանդես, հանդեսի նայելը
Թըմըզվել կամ Թամըզվիլ — մաքրվել
ԹըռԹըռալ — կենսուրախ լինել
Թըռմռշկել — թառամել
Թըվանդյ — հրացան
Թըվըլ-Թավիլ ինիլ — թավալվել, գալարվել
Թըվքատոն — ջաղացի մի մասը
Թըփանդյ — հրացան
Թըքըմոր տալ — ամոթանք տալ, թուքոումուր տալ
Թիքյա — կտոր, պատառ
Թոզ — փոշի
Թոթ — թուԹ
Թոխակա — գոտի
Թոխմախ — թուԹ թափելու փայտ, հաստ ձեռնափայտ
Թոխպ — ամպ, թուխպ
Թոխս — թուխս
Թոխտ — թուղթ
Թոշ — թուշ, այտ
Թոռ — անձրև
Թոռչի — ձկնորս
Թոր — թուր
Թո՞րն ըս քյինամ — ո՞ւր ես գնում
Թորնըսքյինամ, Թորըզքյընամ — անգրագետ և անկիրթ (ծաղր)
Թուի — թնդանոթ
Թուխազ — թանկագին քար
Թուխալ — հաստ և կարճ
Թոքը նի կենալ — 1. խիստ ծարավել, 2. խիստ բարկանալ
Թուրուն — խումբ, բոլորը
Թուլ ինիլ — գլորվել
Թունլ պենջար — թույլ կազմվածք ունեցող
Թումբ — բլուր
Թունդյի — գինու չափ, գինու աման
Թունդ — ուժեղ
Թունի — խեղճ ու կրակ
Թունի հարայ — ծաղր, ուղղված խեղճ ու կրակ, ծույլ, իրեն կորցրած մարդուն
Թուշ — ուղիղ, դիմացը
Թուշ ինիլ — հանդիպել
Թուրուն, Թուրեն — Թոնիր
Թուփ անել — հավաքել
Թուփ տըեռնալ — հավաքվել
Թունքյ — շան, կատվի մազ

Ժ

Ժամ — եկեղեցի
Ժամ ասել — ժամերգություն անել
Ժանգյալ (Ժենգյալ) — կանաչի
Ժեժո — թիթեղ
Ժեվ — ուլունք
Ժինջիլ — շղթա
Ժունլիգյ — 1. խարեբա, խարդախ, 2. խորամանկ
Ժունլիգյվաչի — 1. խարեբայությամբ, կեղծիքով, 2. խորամանկորեն
Ժուվ — ժամանակ

Ի

Իժան — էժան
Իժընանոց — էժանագին
Իլալ — եղել
Իլած-չիլած — եղածը, ողջ ունեցվածքը
Իլաջ — հնար, միջոց
Իլլաքյըմ — մանավանդ
Իծարած — այծ պահող
Ինադ անել — կողքի ընկնել, համառել

www.naregatsi.org

Ինդի — այնպես
Ինիլ — լինել
Ինիս ա, չինիս — լինում է, չի լինում
Ինչիմիշ — նեղություն
Ինսան — մարդ
Ինքյ օնիլ (առնիլ) — դնել
Ինքյն ուրան հրվաքիլ — ինքն իր վրա իշխել, ղգաստանալ
Իշեղ — շող, լույս
Իշկյար թա կյար — երանի թե գար, գուցե գար
Իշտահ — ախորժակ
Իստի — այսպես
Իստիբուշաղ — դժոխք (անեծք)
Իտի — այդպես
Իրես — երես
Իրեսեն ճըրաւիը — չօգտագործած, ձեռք չտված
Իրեսը պեց — համարձակ
Իրեսը պըրթըճիրավ լվացած — անամոթ
Իրեսը տինել վրեննի տակին — խոնարհվել
Իրեք — երեք
Իրեքտակ — եռապատիկ
Իրիքյնակ կամ ըրեքնակ — արեգակ

Լ

Լաքյան — պղնձի լայնաբերան աման
Լաքյաթ — հաճույք, բավականություն
Լաքյաթին — համով, հաճույքով
Լակ — 1. Փշացած, հոտած (ձվի մասին), 2. դատարկագլուխ
Լամբ — նավթե ճրագ
Լայըղ անել — բարեհաճել
Լանթ — ցնցոտի, կեղտոտ՝ մաշված փալաս
Լանթ ա — ծանրաշարժ է
Լանթ-լանթ անել — կոպիտ պատասխաններ տալ
Լանթըմիթել — մաշված, պատառոտված ու կեղտոտ անկողին
Լաչյակ — կանացի եռանկյունի գլխաշոր
Լաչյառ — սանձարձակ
Լապաթկա — բահ
Լաց — լաց
Լափ — բոլորովին, ամբլի
Լափ առռէ (լափ առռի) — միանգամայն, բոլորովին
Լափու տալ — ալիքները ափին հարվածել, լափին տալ
Լեն — լայն
Լենթ — ժապավեն
Լենջ — լանջ
Լեշ — սատկած անասունի մարմին
Լըղ տալ — լող տալ
Լըղար — մաշված, նիհար
Լըղն, լըղի — լեղի
Լըղեն ճաքել — վախենալ
Լընգլընգալ — աջ ու ձախ օրորվել
Լրվասկ — լվացք
Լուզու — լեզու
Լուզուն փյալթանգյ — կակաղ

Խ

Խաբար — լուր, տեղեկություն
Խաղալ — 1. փայտը ռանդայով տաշելուց առաջացած խոպոպաձև մնացորդները, 2. տերևաթափի չորացած տերևները
Խաղնա — 1. գանձ, 2. հեքսություն
Խաթա — վտանգ, փորձանք
Խաթաբալա — անհաջողություն, փորձանք
Խալ — նշան մարմնի վրա
Խալաթ — 1. նվեր, 2. տնային լայն հագուստ
Խալաստոյ — ամուրի

www.naregatsi.org

Խալխա — զուտ, մաքուր
Խալխ — ժողովուրդ
Խալլար — եփելու ու տապակելու բույս, սխտորի համով
Խալվաթ — առանձին, թաքուն
Խամ — անփորձ
Խային — 1. նախանձ, 2. անուղղամիտ
Խանըմ — անվանի տիկին, հարուստ կին
Խանձող — կիսաայրված փայտ
Խաշիլ — տեղական հատուկ կերակուր՝ ձավարից, յուղից ու չորթանի թանից պատրաստած
Խասիլ — խսիր
Խասյաթ — բնավորություն
Խարաբա — ավերակ
Խե՞ — ինչո՞ւ
Խեր — օգուտ
Խըմելն ըրնաստ հնարփիլ — խմելուց անմիջապես հարբել
Խընձըռ(ն)ավըռնտ — այրված շորի հոտ, այրվածքի հոտ
Խընջլող — եփելու բույս
Խռռավիլ — խռռվել
Խռռըզնըհատ ինիլ — անհնձք
Խռռնըշփոթ — խառնաշփոթ
Խըտետ — գիրկ
Խըտտել — գրկել
Խըրտաված — խորոված
Խըրեդյ (խրեկ) — քիչ
Խըփըխափի անել (անիլ) — շատ անգամ խաբել
Խյար — վարունգ
Խնձունք (խելունք) — խելոք
Խոխա — երեխա
Խոխա բախա (խոխա ըրախա) — երեխաներ
Խոնչա — 1. երկար, քիչ խորավուն փայտյա իր՝ խմորի գնդեր և հաց տեղափոխելու համար, 2. նշանի հարսանիքի խոնչա՝ կլոր պղնձե սինի՝ հարսի նվերներով։
Խոշկյաքաբ — չոր մրգեղեն
Խոսկը շըքյաբավ կտրիլ — խոսքը ընդհատել մեջմ ձևով
Խոսկը տափը քըցիլ — խոսքը չկատարել, մերժել
Խորաղյ — կերակուր
Խուխատար — երեխաներ
Խուտուրու — չնչին, անկարևոր
Խուրջին — երկու իրար միացած պարկ է, բրդե թելից նախշերով գործած՝ ուսին գցելու համար

Ծ

Ծախ — ձախ
Ծակ — անցք
Ծանդըր — ծանր
Ծասկել — ծածկել
Ծասկի-սատկի անիլ — թաքցնել
Ծեխ — ձախ
Ծեն — ձայն
Ծեն-ծպուտ — հազիվ լսելի ձայն
Ծեն տալ — կանչել
Ծերան — ծիրան
Ծեքյ — ծեգ, արևածագ
Ծեքյը տալ — արևը ծագել
Ծըզանա — ձեզանից
Ծըեռք — ձեռք
Ծըծըղատեղ ինիլ — ծաղրի առարկա լինել
Ծըմակ — անտառ
Ծըմերուվ — ձմերուկ
Ծըմըռնըհան ինիլ — ձեռքը անցկացնել, հասնել գարնան
Ծընդըրթիթև անել — 1. ձեռքով մի բանի ծանրությունը որոշել, 2. կշռադատել
Ծընեփակ — ուտելու վայրի բույս
Ծընըթկան — ծննդամայր
Ծըռտոենքյ — ծառաներ
Ծըռքաճուրը լյավ ինիլ — որակյալ արհեստավոր լինել
Ծըեռքըլյալեխ — թաշկինակ
Ծըվալ — բղավել
Ծըվանգյը կտրած — թուլլ, ձայնը կտրած
Ծըվվան — շվի, սրինգ

www.naregatsi.org

Մըքյծըքյոտել—արևը դեռ նոր դուրս գալ, դեռ միայն շողերը երևալ
Մի — ձի
Միյավեր — ձիավոր
Միքյ տալ — ձգել
Մոր — ձոր
Մոլ — ծուլ
Մոնկնամընս — մարդու ոտների մկանները
Մոնկնը (ծուկուն) — ձուկ
Մում պահել — ոչինչ չուտել ըստ կրոնական հին սովորության
Մոնն — ձյուն
Մոնրոննի — ծերունի

Ն

Կազան — գազան
Կախ տալ — 1. կախել, 2. կախաղան բարձրացնել
Կածան — նեղ ճանապարհ
Կահ — գահ
Կաղլեգյ (կաղլիկ) — կաղ
Կամնը — կալսելու գործիք, կամ
Կայք — կարողություն
Կանդրախդ —(կոնտր ակտ) պայման
Կանոխ — շուտ, վաղ
Կանվերթ — ծրար
Կապան փըռնած — կապից բռնած
Կապեկ — կոպեկ
Կապը կտրած — սանձարձակ
Կավ — կով
Կավազան — ձեռնափայտ, գավազան
Կարավաթ — մահճակալ
Կարկաժ — 1. դդում, 2. գանգ, գլուխ
Կարտ— խաղաթուղթ
Կարտի տալ — խաղաթղթով զբաղվել
Կեթ — կիթ
Կըեռնքյ (կըեռիքյ) — ատամ
Կըդարիլ — կատարել
Կըղնվիլ — բարկանալ
Կըղտի-պզտի — մանր-մունր, փոքր
Կըթնահունց — կաթով հունցած խմորեղեն
Կըլըկնապին անել — խաբելով ստիպել
Կըլխա տանիլ — դրավել, դեպի իրեն քաշել
Կըլխան ռադ անել — իրենից հեռացնել
Կըլխըկոնձի տալ — գլխի վրա գլորվել
Կըլխըյեր — վեր, դեպի վեր
Կըլխըվեր — ներքև, դեպի ներքև
Կըլխին զոռ տալ— 1. իզուր մտածել, 2. ավել-պակաս խոսել
Կըլխին ծի քացե տալ —անկարելի գործ բռնել, անձը վտանգի ենթարկել
Կըլխին յրան տնգվիլ — մեկին նվիրված ծառայել
Կըլոխ — գլուխ
Կըլոխ ընգնիլ — հասկանալ
Կըլոխ տալ — բարևել, խոնարհվել
Կըլոխը բադի տալ — վտանգի ենթարկվել իզուր տեղը
Կըլոխը թակ օտիլ — ծեծվել
Կըլոխը կըլխի տինիլ — ամուսնանալ
Կըլոխը մոշավ անել — գլխին մոշ ցանել (անմեղ աննծք է)
Կըլոխը յոր օնիլ կորչիլ — հեռանալ
Կըլոխը յոր չօնիլ — գլուխը չվերցնել
Կըլոխը շոռ տալ — գլուխը պտտվել
Կըլոխը պահիլ — մի կերպ ապրել
Կըլոխը պուք տալ — գլուխը պոկվել, սպանվել
Կըլոխը վարել — խաբել
Կըլոխը օռչիլ — շատ մտածել, մտածելուց հոգնել
Կըլոխը օտիլ — սպանվել
Կըծըկրակ — 1. կայծակ, 2. բնավորությունը խիստ
Կըծուխուր — կծոխուրն կոչվող թռչի պտուղը՝ մանր կարմիր, թթվաշ
Կընանչի — կանաչի
Կընդ — կենտ
Կընդ-կընդ — մեկ-մեկ
Կընձըմունձուկ — վայրի կանաչի
Կըշկըշալ — լիաթոք ծիծաղել

www.naregatsi.org

Կրոբզնոտ — գանգուր
Կրոբմեռ — ոլորապտույտ
Կրոբմնիզնիկ — դառն համով, վայրի, ուտելու բույս
Կրոնատակ — թևի տակ
Կրտրզ — փոքր
Կրրճալած-ըրգչնալած — կարճանալ-երկարանալ ծեծելու ժամանակ
Կիճի — փոքր
Կյալ — գալ
Կյամրմնիր — կարմիր
Կյարումնք — գարուն
Կյարումնքացան — գարնանացան
Կյնղ — գազ, երկարուքյան չափ
Կյնղել — թաքցնել
Կյննալի շորեր — հագնելու շորեր
Կյեռքնոսկ — գորտ
Կյեվաթ — գավաթ
Կյերի — գերի
Կյըետ — գետ
Կյըռկյոռալ — գոռգոռալ
Կյիզիլ — գղել
Կյին — գին
Կյիշըկյըռղ — շատ տգեղ
Կյիվռղ — եկող
Կյիր — գիր
Կյիրաղենքյ — հաստ աղիք
Կյիրին եշիլ տալ — գրքացի մոտ գնալ
Կյիրին սըեվը-սիպտակը գյիդալ — գրել ու կարդալ իմանալ
Կյից — բուռ
Կյնազնխ — ուտելու վայրի բույս
Կյող — գող
Կյողլը կենալ — թաքնվել
Կյոռալ — գոռալ
Կյոռե (կյոռիկ) — գոտի
Կյոռկատեղ — գոռկատեղ
Կյործել — գործել, հյուսել
Կյունքյան — գուբան
Կյունլ — գայլ
Կյունղ — գյուղ
Կյուղանալ — գողանալ
Կյում — գոմ
Կյումաշ — գոմեշ
Կյունշ — փայտե խոր աման
Կյնւտ-կյնւտ — կուլտերով
Կունթռուճ — տե՛ս քունթռուճ

Հ

Հնայքա — փոքր խուրջին
Հնաչնթ — գործիք
Հնաչնթ ա — պետք է
Հասար — քարուվրից ցանկապատ
Հասրաթ — կարոտ
Հավա — 1. եղանակ, 2. պարելու եղանակ
Հավալամիշ ինել — կատաղել
Հավան նստիլ — կատաղությունն անցնել, հանգստանալ
Հնավանալնա — համբերություն
Հատե — ա՛յ
Հարամ — վատ, պիղծ
Հարամ կենակեր — վատ մարդ, պիղծ մարդ
Հարամզադեքյ — վատ մարդկանց վատ զավակներ
Հարամի — թշնամի
Հարթնը —հարս
Հաց թըխցնել (հաց թըքցնել) — հնացած հացը կրակի վրա տաքացնել
Հափուռ — բուռ
Հնաքյիմ — բժիշկ
Հեյվան — անասուն
Հենգյ — հինգ
Հեսաբ — հաշիվ
Հեռե — հեռու
Հետան — ետևից
Հետի — համար
Հերս — բարկություն
Հըեռ — ցավ
Հըզեր — հազար
Հըթհռթիլ — հռռոռել
Հըլըրհնալ — խոկալն
Հըլլնրիլ — ոլորել
Հըղե — ճանապարհ

www.naregatsi.org

Հըղեցը — ճանապարհին
Հըղըցավեր — ճանապարհորդ
Հըճարե — հաճարի ծառ
Հըմանչիլ — ամաչել
Հըմբարիլ — հաշվել
Հընդհանուն — ընկերներ
Հընդըստան — Հնդկաստան
Հընդրել — ընտրել
Հըռնուցանա — հեռվից
Հըռշնիլ — կարմրել
Հըրթննքատուն — հարսանքատուն
Հըրսանեքյ — հարսանիք
Հըրսոտված — չղայնացած, բարկացած
Հիբ — երբ
Հիլի — հայելի
Հիմնիլ — հիմնել
Հինար — հնար
Հինարռու — ուժեղ, շատ ուժեղ
Հինչ — ինչ
Հիշքան — ինչքան
Հոշաթ — վեճ
Հոռ — ողնաշար
Հոռ անել — ուժ՝ չանք գործ դնել մի բան անելու համար
Հովսալա — համբերություն
Հովուզ — չրհոր
Հոր — որտեղ
Հուի տալ — սեղմել, նեղը գցել
Հոքյարք — հոգևարք
Հրաշկ — հրաշք
Հու — ով
Հունի շալվթալի — հուլի կոշված դեղձ
Հունլլոր-պունլլոր անիլ — կլորացնել
Հունլունմալագյ — չտեսնված գեղեցկուհի
Հուլունք—ուլունք
Հունար — ուժ, հնարք
Հունց — ոնց
Հունցու — ինչպես
Հունշըրներան քյինիլ — ուշաթափվել
Հու վա — ով է
Հուր — ում
Հուրթ — երթիկ, ծխնելույզ
Հուրի-փուրի—փերի, հավերժահարս, գեղեցկուհի
Հուքյըվըրթի — հոգևորդի, որդեգիր
Հուքյի — հոգի
Հուքյին տալ — շունչը փչել, մեռնել

Ղ

Ղաբ — բարձի աստառ
Ղաբուլ — համաձայնություն
Ղադիր — պատիվ, արժանապատվություն
Ղազ — սագ
Ղազաբ — ցավ
Ղազաբի կյալ — հիվանդանալ, ցավի գալ
Ղազան — կաթսա
Ղաթ — արանք
Ղալ — չորս կողմը պատնեշած՝ անասուններ պահելու տեղ
Ղաչը — 1. ծույլ, 2. կեղծ
Ղալիբ — կաղապար
Ղամա — սուր
Ղամիշ — եղեգ
Ղամշի — մտրակ
Ղայմաղ — կաթի սեր
Ղայսար — ցուրտ, սառնամանիք
Ղանչըղ շոն — էգ շուն
Ղաշանգյ — գեղեցիկ
Ղաչաղ — ավազակ
Ղաչանք — աղաչանք
Ղաչանք, միննաթ անիլ — շատ խնդրել
Ղառի — ծեր թուրք կին
Ղասաբ — մսագործ
Ղասաբխանա — միս ծախելու տեղ, մսի խանութ
Ղասիդ — դիտմամբ
Ղարաբաղու ճըրան խմել — Ղարաբաղի օղուց խմել
Ղարաչի — գնչու, բոշա
Ղարավաշ — աղախին
Ղարավուլ — պահակ
Ղարիբ — օտարական
Ղարկիլ — ուղարկել
Ղափաղա — վանդակ

www.naregatsi.org

Ղափաղ — կափարիչ
Ղափան — քաղաք բերած մթերքների վաճառման հարկ վերցնելու տեղը
Ղև տալ — կանչել
Ղեյնը — եղունգ
Ղըդըղա — արդելք
Ղըլեդյչի — ամանաներ կլայեկող
Ղըլմըղալ — աղմուկ, իրարանցում
Ղըմեննե — սրեր, թրեր
Ղընամիշ անիլ — մեղադրել
Ղըռըխմիշ ինիլ — տխրել
Ղըսմաթ — արժան, արժանի
Ղըրաղ — առանձին տեղ
Ղըրդըղուլի — խարդախ, նենգորեն գործող
Ղըրըլթու — սիլուետ
Ղորթ — ճշմարիտ
Ղըրկել — ուղարկել
Ղըրղնե կամ ղըրղընեքյ — ափեր, եղրեր
Ղինար-ղինար կըտորիլ — կտոր-կտոր անել
Ղոլ — կողմ
Ղոնախլըղ — հյուրասիրություն, ճաշկերույթ
Ղոնաղ — հյուր
Ղոշուն — զորք
Ղոչի — կովարար, կատաղի անձնավորություն
Ղոչի տալ — ճակատ ճակատի խփել (ոչխարների մասին)
Ղոչչաղ — քաջ, աշխատասեր
Ղորմի — ողորմի
Ղորփեր — հորեղբայր
Ղուզի — գառ, բալիկ
Ղուղղուն — արծիվ
Ղութի (ղոթի) — դագաղ
Ղուլ — ծառա
Ղումաշ — 1. նուրբ, 2. կնոջ անուն
Ղումար — մոլի խաղ (փողով)
Ղուշ — թռչուն
Ղուրբան — մատաղ
Ղուրուղ — արգելված արոտավայր
Ղուփուլ — կափարիչ

ճ

ճաթ — կորեկ հաց
ճակատը կյումաշու կաշի — պնդաճակատ
ճաղ — պողպատե բարակ ձող՝ դուլպա գործելու համար
ճաշ — ճաշ
ճապկե — վայրի ծառի մի տեսակ
ճար — 1. դեղ, 2. թույն
ճար տալ — 1. թունավորել, 2. բուժիչ դեղ տալ
ճարել — գտնել
ճարը կըտրած — ստիպված
ճարը փիթիկյ անիլ — դեղ ու դարման անել
ճելլի — շուտ, արագ
ճեխ — ցախ
ճեխակ — արանք
ճեպռել — 1. չանգռտել, 2. ծառի պտուղը տերևախառն ու արագ պոկել
ճըլըմկոտալ — հորանջելով մարմինը կոտրատել, ձգվել
ճըլլՈրել — թառամել
ճըկըճոկե անել — մի աչքով չնայել, անհավասար վերաբերվել
ճըկըտակյիր — ճակատագիր
ճըղղալ — բղավել
ճըղմաղենքյ — աղիք
ճընապար — ճանապարհ
ճընապարը թեքյ տըվավ — ճանապարհից թեքվեց, շրջվեց
ճընթըռնի — ցնցոտիներ
ճըպաղել — ճապաղել
ճըպատ — ճիպոտ
ճըպռըպորիլ — ավելի շատ չանգռտել
ճըպռոտիլ — չանգռտել
ճըռաքյիլ— ուժեղ լույս արձակել
ճըռճըռոկ — ջրաչի բույս. օգտագործում են կոտապի համար
ճըռճռուփել — շատ պտուղ վերցնել
ճըվարան — կողով
ճըրավեր — ջրհոր

www.naregatsi.org

ճըրըկուտեմնը — ջրերի ափին աճող կոտեմ
ճըքճըքոտել — ճաքճքել
ճիթ — ողկույզ
ճինճի պումբի անել — որորվելով քայլել
ճինճի — ճոճ, ճոճանակ
ճինչիլ — ջնջել
ճիտ — վիզ
ճիտ անել — գրկախառնվել
ճիրաքյ կամ ճըրաքյ — ճրագ
ճոթ — 1. կտորեղեն, 2. կտոր (քու ճոթըտ ա — քեզ նման է, քո կտորն է, քո ընկերն է)
ճոթ անել, անիլ — բաժին անել, բաժանբաժան անել
ճոխտ — ջուխտ, զույգ
ճոկ — առանձին
ճոկ պըճն — առանձնահատուկ բան, չտեսնված բան
ճողնը — ճյուղ
ճոնդ — ծայր
ճոռե — ջորի
ճոռեքյ (ճոռոտենքյ) — ջորիներ
ճուխտեքան — երկուսը միասին
ճուղուպուր — ընկույզ
ճռնճռնել անել — հավերին կանչել
ճում — հողի կոշտ, գունդ
ճռուր — ջուր
ճռուր տըեռնալ — քրտնել
ճռուրն ա տըեռալ աշխադանքը — աշխատանքը իզուր է անցել

Մ

Մագազին — խանութ
Մադալյոն — մեդալյոն
Մադան — հանք
Մադար — մինուճար
Մազաղ — ծաղր
Մազաղ անել — ծաղրել
Մազերան ճըլոլանք իլած — զարմացած
Մազերը բիզ-բիզ կաղնել — սարսափել, վախենալ
Մազը ծըռվե վըեչ — վնաս չհասնի
Մաթ մընալ — զարմանալ
Մաթաթ մնալ — զարմանալ
Մախմուր — թավիշ
Մահլըմ անիլ — երևալ, նկատելի դառնալ
Մաղըռան ա իլալ — իզուր կորել է, իզուր փշացել է, իզուր մեռել է
Մայա — մակարդ (մածնի, պանրի)
Մայա տինիլ — որևէ գործ ձեռնարկելիս կանխիկ փող դնել
Մայիլ ինիլ — հիանալ, զմայլվել
Մանդղիլ — որոշ տարածություն
Մանդյանա — ճնշիչ մեքենա
Մաննե — ռուբլի
Մանի — պատճառ
Մաննը կըծել — գլխի ընկնել, հասկանալ գաղտնիքը
Մաշկ (մեշկ) — մեջք
Մաշկել — մորթին հանել (կենդանու)
Մաշկիտ հոռը կոտրի — (անեծք է) մեջդ կոտրի, ծանր վիճակի մեջ ընկնես
Մաշնակ — միջնակ
Մաչ — մեջ
Մաչնըվեր — միջով
Մաջալ կամ մըջալ — ժամանակ
Մաջալ տալ — մի փոքր դադար տալ
Մար տալ — 1. գառը, հորթը մորը ծծել տալ, 2. կոճկել
Մարալ — 1. եղջերու, 2. գեղեցիկ
Մարդ — նամուսով, ազնիվ, արդար
Մարթաբոյի — մարդու հասակի չափ
Մարիփաթ — շնորհք
Մարջ — գրազ
Մարջ կյալ — գրազ մտնել
Մարջան — կարմիր դույնի թանկ ուլունք
Մարքարիդ — 1. մարգարիտ, 2. կանացի հատուկ անուն
Մեզար — մազե կամ բրդե թելից գործած մեծ սփռոց, որի վրա շարում են խմորի գնդեր, ինչպես և տաք հացերը՝ հովացնելու համար
Մելիք — 1. իշխան, 2. տղամարդու հատուկ անուն

www.naregatsi.org

Մնկալ — մյուս
Մնկալ օրը — անցած օրը, մյուս օրը
Մնկալնին — մյուսները
Մհհետ — մի անգամ
Մեյդան — հրապարակ
Մեյմուն — կապիկ
Մեյվա — միրգ
Մեշնակ (միշնակ) — միջնեկ
Մեշուկ — մեծ տոպրակ
Մըդյամ — ուրեմն
Մըթիկ — միտք
Մընծ — մեծ
Մըռռուն — մեռոն
Մըռր — մեր
Մըզոված — նզոված, անիծված
Մըզոնկ — ավելուկից, շեպից պատրաստած աղցան
Մըթնն — մութ
Մըթննը եր ա կոխալ — մթնել է
Մըթըն-մըթնն — մութ ժամանակը, մութով
Մըթնըգըշեր — մութ գիշեր
Մըժմնհի — սինի, մեծ, տափակ պղնձե աման
Մըլուքուր — մոլի քոր, կատաղի քոր
Մըհալ տինիլ — ուշադրություն դարձնել
Մըհակ — ձեռնափայտ
Մըհանա-շըհանա — պատրվակ
Մըհասուր — մասուր
Մըհենգյ (մըհեկ) — հիմա
Մըհենգյանց տրենը — այսուհետև
Մըհենգյիս — այժմ, հենց նոր
Մըհետե — մի անգամ
Մըղակ — 1. դուռ, 2. շեմ
Մըղայիթ կենալ — պահպանել, ղգաստ լինել
Մըղնփուն — ափսոս
Մըղմող — ցեց
Մընան — նման
Մընաս բըղըրյար — մնաս փոշման
Մընգյ էլ — մեկ էլ
Մընեշնկ կամ մննիշնկ — 1. մանուշակ, 2. կնոջ անուն
Մըննաթ աննլ — խնդրել, աղաչել
Մըշանք — այնչափ, որքան
Մըշալ չօնիմ — ժամանակ չունեմ
Մըռթոտիլ — մորթոտել
Մըռնու — մեռելի
Մըսըրհաթ — խորհուրդ
Մըրզիլ — մզել
Մըրթաբա — պղնձե ափսե
Մըրթութուն — մարդավարություն
Մըրչեմնը — մրջյուն
Մըտան քըցիլ — մոռանալ
Միթամ թա — կարծես թե, իբրև թե
Մին — մեկ
Մինանկ — մեննակ
Մինտեղ — միասին
Մին բաշ — միանգամից
Մին դընըմ — մի անգամ
Մին թեավուր — մի տեսակ, փոխված
Մին թիքյա — մի կտոր
Մին թիքյա խըմել — մի քիչ խմել
Մին լավ կյոսուիլ — մի լավ ծեծել
Մին լավ տըմբըզել — մի լավ ծեծել
Մին լավ քյոթակ տալ — մի լավ ծեծել
Մին խրեգյ (մըխրե) — մի քիչ
Մին հավուր ըսպասել — մի քիչ սպասել
Մին հետ — մի անգամ
Մին հետան (միհետան) — միանգամից
Մին չըվար — մի մարդ
Մին ջուռա — մի տեսակ
Մին տոպ — մի կաթ
Մին փանդ — մի միջոց, մի հնար
Մինը մինին — մեկը մեկին
Միչիր — կոլեկտիվ կերպով որևէ գործ կատարելը (բուրդ գզելը, գորգ գործելը)
Մոկուն — մոտ
Մոհլաթ տալ — ժամանակ տալ
Մոհքյամ — մեծ, ընդարձակ
Մոռ — ոխ
Մոռը պահիլ — ոխ պահել
Մորան ինիլ — ծնվել
Մոք — մուգ (գույն)
Մոնբետա — ձրի
Մունչգյ — ունեցվածք, հարստություն
Մուկուն — մոտ
Մունթ — մոնթ
Մունուտ — րոպե
Մուշտարի — գնորդ
Մուշտուլուղ (մըշտըլեղ) — լավ լուր հաղորդողին տրվող նվեր
Մուրազ — նպատակ

www.naregatsi.org

Ցա — կամ
Ցաբանա—1. ամայի, 2. լայնարձակ դաշտ
Ցադ — օտար
Ցալ — բարձունք
Ցախա (յըխա) — օձիք
Ցախու — հատուկ բաղադրությամբ (ձվից, ալյուրից, յուղից պատրաստված) սպեղանի հատկապես ոսկորների ջարդվածքը բուժելու ժամար
Ցաղի — թշնամի
Ցաղուզ — ինչու
Ցաման — շատ ուժեղ
Ցան — կողմ
Ցան-յան անել — որոնել, տարբեր կողմեր փնտրել
Ցաշ — տարիք
Ցաշիդյ — արկղ
Ցաշիլ (եշիլ) — նայել
Ցասավուլ — ոստիկան
Ցավաշ —կամաց
Ցարա — վերք
Ցարալամիշ ինիլ — վիրավորվել
Ցարալու — վիրավոր
Ցըխնիլ — հաղթել
Ցըխտոտ — կեղտոտ
Ցըղ — յուղ
Ցըղածու (յըղըծու) — ձվածեղ
Ցըտվակեն — հետո բերած կին, երկրորդ կին
Ցըր տըեռած — թափված, անկանոն, չհավաքված, խառը
Ցըղըթաթախ — 1. յուղոտ, 2. չաղ
Ցղոնեդյ (յըղոնիկ) — աղավնի
Ցոլա քյինալ — մի կերպ ապրել
Ցոնջա — առվույտ
Ցոր օնել — վերցնել
Ցորղան — վերմակ
Ցորղան-դոշակ — անկողին
Ցրա հըսնել—վրա հասնել, օգնել
Ցրա պըրծնել—հարձակվել
Ցրան թըքանալ—1. սիրահարվել, 2. լավ տրամադրվել մեկի, մի բանի նկատմամբ
Ցրան հայիլ-մայիլ կտրել — զմայլվել, սիրահարվել
Ցումբրուղ — բռունցք
Ցումբրուղլամիշ անել— բռունցքով ծեծել

Նաղիր-վաղիր — պալատական պետական բարձր պաշտոնյաներ
Նալ — պայտ
Նալբանդ — պայտագործ
Նախշուն — սիրուն, գեղեցիկ
Նահանց — նրանց
Նաղդ — կանխիկ
Նաղլ անել — պատմել
Նամ — խոնավ
Նամարդ — տմարդի, դավաճան
Նան — և
Նանա — մայր
Նանա — դաղձի մի տեսակը
Նաշար — մեղավոր
Նառ — քարավանի առաջատար ուղտը
Նարդի տալ — նարդի խաղալ
Նափաս — շունչ
Նեղ տեղն ընդնել — դժվարության և կարիքի մեջ ընկնել
Ննջ — նինջ
Նրհախ — իզուր
Նրհետ — միասին, հետը
Նրհրտնուն կամ նրհետնին — նրանց հետ միասին
Նի — ներս
Նի կապել,— 1. երեխային օրորոցում կապել, 2. խփել
Նի կենալ — այրվել, վառվել
Նի կըցնել — վառել
Նի քըցիլ — 1. ներս գցել, 2. ափսեն կեբակուր լցնել
Նիգյարան — անհանգիստ
Նիհ ինիլ — բարձրանալ (ձի, ծառ)
Նիսյա յոր օնել — ապառիկով գնել

www.naregatsi.org

Նհախ տըեղը — իզուր տեղը
Նշան տինիլ — նշանել
Նշանտիրիքյ (նշընտիրիքյ) — նշանադրություն, նշանդրեք
Նշընվե — նշանավոր
Նորաթ — հերթ
Նոթ — նավթ
Նոխատ — սանձ
Նոխուդ — սիսեռ
Նոռնը — նուռ
Նով — աղբյուրի առաջ քարից պատրաստած հարմարանք, որտեղից անասունները ջուր են խմում, նավ
Նորու — նորից
Նոքյար — ծառա
Նուբար անել — առաջին անգամ հաշակել

Շ

Շապկերդ — աշակերտ
Շադդաղ անել — ուրախություն անել
Շալաքյալա — ունեցած-չունեցած
Շալլեղ — մտրակ
Շալվար — անդրավարտիք
Շահի — հինգ կոպեկ
Շահմար օխծը — օձի թունավոր տեսակներից մեկը
Շաղ տալ — ցրել
Շաղված — խառնված, ցրված, շփոթված
Շամ — մոմ
Շամդան — մոմակալ
Շամփուր — մետաղի (երբեմն փայտի) հատուկ ձող, որին հագցնում են միսը խորովելու համար
Շամփուր-քըշեռք—աստղային համակարգություն է, շամփուրի և կշեռքի ձևով դասավորված
Շան նըհետ կապել — անարդել, երեսին խիստ խոսել
Շաշ — հիմար
Շառավ տալ — սուտ տեղը մեղադրել
Շավթալի — դեղձ
Շափաղ — փայլ, շող
Շեբեթ — շաբաթ
Շելակ — շալակ
Շեպ — ավելուկի պես բույս է, ավելի դառն համի, հյուսում ու չորացնում են ձմեռը եփելու համար
Շեվ — շիվ
Շեփտանը եղը — շաբաթից հետո
Շըլափկա — տղամարդու գլխարկ
Շրհանց տալ — ցույց տալ
Շըհար — քաղաք
Շըղրհարիլ (շըղարել) — թափահարել (հատկապես ծառը)
Շըղլըմաղլի — շաղված, խառը, խառնաշփոթ
Շըմբալուխ — շագանակ
Շըմփշըմփալ — առատ անձրև գալ
Շընըթկնե — գյուղեր
Շընըհավեր անել — շնորհավորել
Շընըմուտտատ անել — փշացնել, հարամ անել
Շըշկըլվել — սխալվել, շփոթվել, իրեն կորցնել
Շըտըմուտտի անել — պտտվել, դես ու դեն գնալ
Շըքըռել — երկու ոտը իրարից հեռու դնել
Շիթիլ — սածիլ
Շիլ ընգնել — սխալվել
Շիլդի — աչքը շիլ
Շիլթա — սեխի կամ ձմերուկի կտրվածք
Շինացեքյ — դյուղացիք
Շիվան — սուգ, լաց ու կոծ
Շկոլ — դպրոց
Շոլկ — մետաքս
Շոխկ — ատվեր
Շոռ ածիլ — տանել զբոսանքի, ման ածել
Շոռ տալ — շրջել, շուռ տալ
Շոռ օնիլ — վրան ծածկել
Շորերըտ կյնց — հագնվիր
Շոռք — տաք
Շոռք — ատվեր
Շոռքավոր ինիլ — հովանավորող լինել, պաշտպանող լինել
Շուլի-մուլի անիլ — ժամանակ վատնել դիտավորյալ կերպով

www.naregatsi.org

Շուղումքուր — շղոքորթ
Շունրակալ — շնորհակալ
Շնիշա — ապակի
Շնիշան — շուշան

Շուրշուփը նի կյալ — մեկի որոշ օժանդակությամբ, միջամտությամբ մի գործ կատարվել, մի բան լինել

Ջ

Ջադքը (չադիր) — վրան
Ջադրա — չադրա
Ջաթլակ — զույգ պտուղ, իրար կպած պտուղ
Ջաթաւ — կարճ թոկ
Ջալա — փոս
Ջալթուկ — կեղևը չհանած բրինձ
Ջախ — ժամանակ
Ջախմախ — հրացանի հրահան, կայծհան
Ջամենչ, չամիչ — չամիչ
Ջայ — թեյ
Ջայնիկ — թեյաման
Ջանա — ծնոտ
Ջանգյ — բուռ, թաթ
Ջանգյալ — պատառաքաղ
Ջանգյալ — Ղարաբաղի տարազի գլխաշարքն ամրացնող ոսկի կամ արծաթե զարդ
Ջանչուլ — գազանի թաթ
Ջանք (մչանք) — չափ
Ջարուզ — ընդեղեն (պնդուկ, չամիչ, աղանձ, արևածաղիկի սերմ և այլն) իբրև թեթև ուտելիք
Ջարխ — անիվ
Ջափար — ցանկապատ
Ջաքյամա — կոշիկ (կարճ ճտքերով)
Ջաքյունճ — մուրճ
Ջեթվեր — մեծ շիշ
Ջելը — մինչև
Ջէ չէ մին — ոչ մի դեպքում

Ջըդյիդալը տինիլ — չիմացության տալ
Ջըլըմսըզ — նիհար
Ջըխարակ — ճախարակ
Ջըկամ — լավը չկամեցող
Ջըղըցնել — չաղացնել
Ջըմփալախ (սիլլա) — ապտակ
Ջընդըլհադի — առանց վարտիկի, կիսամերկ
Ջըպուկել — չրոզբոջել
Ջըվալ — չվալ
Ջըրու — մինչև
Ջըքյիլանը — մինչև
Ջիմեն — կանաչով ծածկված տարածություն
Ջիքյիլատուն — մետաքսե նուրբ քող, որ ծառայում է իբրև կանացի գլխաշոր
Ջոբան — հովիվ
Ջոլ — ամայի մեծ տարածություն, չոլ
Ջոլը տուա կյալ — արտաքնոց գնալ, դուրս գնալ
Ջոռ — ցավ (անեծք է)
Ջոր չուփ տըեռնալ — նիհարել, մաշվել
Ջորք — չորս
Ջորք թըրուփալը — չորս կողմումը
Ջուխ — շատ բարակ փայտի, ճյուղի կտոր
Ջուբուխ — չիբուխ
Ջունքյի — որովհետև
Ջուռ անիլ — ողջը ուտել, ողջը ցրիվ տալ
Ջուրքըպունլլոր — չորս կողմը, չորս բոլորը

Պ

Պադարկա — նվեր
Պադվալ — ներքնատուն
Պազումք (բազում) — աստղալին համակարգություն՝ բաղկացած յոթ մեծ և շատ այլ մանր աստղերից

Պալկոն — պատշգամբ
Պակաս-պրռատը ասել — հայհոյել, վատաբանել
Պա-հո-վե՜ — ցավակցման, խոր ափսոսանքի բացականչություն

www.naregatsi.org

Պաչիլ — համբուրել
Պապաճըղտ — չվող փոքր թռչուն
Պառնիզյունն — բարի երեկո
Պատալոկ — առաստաղ
Պատան — մեռելը փաթաթելու անլվա սպիտակ կտոր, պատանր
Պատիվ-հուրմաթ անիլ — պատիվ տալ
Պատկեր — նկար
Պատկերը քաշիլ — նկարել
Պատճառավեր — հղի
Պատրոն — սկեսրայր
Պատրոն — փամփուշտ
Պատրոնդաշի — փամփշտակալ
Պարախոդ — նավ
Պարան կյալ — փլվել, թափվել
Պարանց ընդնել — պառկել
Պարյօր — բարի օր, բարև
Պաւրնիր — բարուր
Պեխի կամ պեքյի — դառնահամ բույս է, աղ են դնում
Պեխի — բոխի (ծառի տեսակ)
Պեմբրակ (պէմբրակ) — բամբակ
Պեն — բան
Պենը պենան անց ա կացյալ — որևէ գործ ուղղելն անհնար է, ուշ է, անցել է
Պենձիկ (պեղնիդյ) — կավե ամանի կտոր
Պենջակ — պիջակ
Պենջար — 1. ուտելու վայրի բույս, 2. հարիսայի պես կերակուր է, որը պատրաստում են ոչխարի յուղալի մսից ու ձավարից և հյուսված ու չորացրած բանջարից
Պերակ — բարակ
Պերան — բերան
Պերիլ — բերել
Պըել — գիժ
Պըժանիլ (պիժեննիլ) — բաժանել
Պըլանի — բանալի
Պըլեննիքյ (պըլանիքյ) — բանալին
Պըլթպըլթալ — եռալ
Պըլոկվել — 1. կողոպտվել, 2. կեղևահան լինել, մաշկը պոկվել
Պըծըպածին անել — փայլփլել, հուրհրատին տալ
Պըղոճ — միջատ
Պըճըղվիլ — բացվել, կեղևահան լինել
Պըճըռանք — 1. բրդի կամ բամբակի մանր մնացորդներ, 2. փոքր ոչ փարթամ երեխա
Պընդըլ — հանելուկ
Պրչպրչորել — շատ անգամ համբուրել
Պրռանչիլ — բառաչել
Պրռավու պոռտ — մի տեսակ բույս
Պրռոշ — շրթունք
Պրռտըռտնաւած — շրջած աստառի վրա
Պրտատել — փաթաթել
Պրտոկ — ծայր
Պրտրհան — պատի մեջ փոքր պահարան
Պրտրունանք — սկեսրայրենք
Պրրթպրրթռտ — բրդոտ, մազոտ
Պրրլյանդ — ադամանդ
Պրրկըփոխան — պարկաձև վարտիկ հագած
Պրրուժինավեր կարավաթ — զսպանակավոր մահճակալ
Պրրուտ — բրուտ
Պրրուրնե (պիրրուրնի) — բարուրներ
Պրցրանալ — բարձրանալ
Պիլիթ — բլիթ
Պիծապա — տվաղ հղբայրր (իրրև հորից փոքր հայր)
Պիծի — փոքր
Պիծի օլաբա — փոքր անզգամը, փոքր մեռածը (անեծք է երեխաների հասցեին)
Պիճ — ապօրինի զավակ
Պիճի — փոքր
Պիճոթուն — խարեբայություն
Պիրում — բերում
Պիղ — եղջյուր
Պոժկա — տակառ
Պոլ — հատակ
Պոլիդյ — պուլիկ
Պոլկ — գունդ
Պող — վառվող փայտածուխ
Պողվատ — պողպատ
Պոճախ — պուճախ, անկյուն (սենյակի, տան)
Պոչեր — վրացական տարազի գլխաւար-

www.naregatsi.org

քի կավիքներ՝ այտերի երկու կողմերի խոպոպներ

Պոչերս կըտորիմ — զարմանքի և վշտի արտահայտություն

Պորցի — բաժին

Պրավակացյա — պրովոկացիա

Պրավերկա — ստուգում

Պրիկազչիկ — գործակատար, կառավարիչ

Պուզավներ, ընգուճավներ, հրբյվավներ — եղջյուրներով, ականջներով և պոչով, այսինքն անասուն

Պուժուժ — Ղարաբաղի երեք փենյան տարբի գլխաստարքի ոսկե կամ արծաթե կլոր ուլունքաձև ու գնդեցկաքանդակ զարդ՝ այտերի երկու կողմերում

Պունլլիր — կլոր

Պունլլիրք — թոնրի շուրս կողմը

Պունլլիրպատիկ—կլոր

Պունռքը կլխվիլ — բուրդը դզել

Պունրունմ (պերըմ) — բերում

Պուք տալ — պոկել

Ջ

Ջադու — կախարդ

Ջահրիլ — ջահել

Ջահիլ-ջըհնիլ — երիտասարդներ

Ջահտ ըրա — աշխատիր

Ջահտ ըրա մաշկըտ կոտրին վեչ — աշխատիր քեզ չվնասեն (մեջքդ չկոտրեն)

Ջամ — պղնձե թաս

Ջամբիր խնիլ — ազատվել, հեռանալ

Ջամդաք — լեշ

Ջամը խարջիլ — թասը ծախել

Ջանա կյալ — հոգնել, նեղանալ

Ջանավար — գազան, գայլ

Ջանգյունլունմ — վարդավառի տոնի և համբարձման գիշերի ժողովրդական երգեր, որոնք երգում են վիճակախաղի ժամանակ

Ջանը պահել — ինքն իր նկատմամբ հոգատար լինել

Ջանը ջափի չի տալ — իրեն նեղություն չպատճառել, ինքն իրեն խնայել

Ջանը տող ընգնել — վախենալ (մարմինը դող ընկնել)

Ջանլու — մարմնեղ

Ջառչի — մուննետիկ, մի որևէ հրաման կամ հրահանգ բարձր ձայնով ժողովրդին հայտարարողը

Ջահավիր — թանկագին քար

Ջալան — ջահել

Ջարմա — տուգանք, վնաս

Ջափա — ծանր աշխատանք, նեղություն

Ջափաքեշ— աշխատանքի ծանրությունը, նեղությունը տանող

Ջեյրան — 1. եղջերու, 2. գեղեցիկ

Ջընըրներան ընգնիլ — վատառողջ դառնալ, թուլանալ

Ջիհիլ — հանդիպել, պատահել

Ջհանդամը գյոռը — անեծք է (դժոխք ու գերեզման)

Ջողար — պատասխան

Ջուր — գրպան

Ջուհուդ — հրեա

Ջուռաբաջուռա — տնսակ-տեսակ

Ռ

Ռադ իլ— կորիր, հեռացիր

Ռադի կլենալ — համաձայն լինել

Ռամնուղ — դեմքի միմիկա, տրամադրություն

Ռանդյ — դույն

Ռանդյռուշ — դեմքի գույն

Ռասչոտ— վերջնահաշիվ

Ռաստ կյալ — պատահական կերպով հանդիպել

Ռեդիկյունլ — կանացի ձեռքի պայուսակ

www.naregatsi.org

Ռնդիսկա — ամսաբողկ
Ռիսկ անել — համարձակ և ինքնավստահ որևէ գործ բռնել
Ռուշվաթ — կաշառք
Ռուշտ ինիլ — պատահել

U

Սաբար — պատճառ, միջնորդ
Սաբիր կյալ — փոշտալ
Սաղ — աշուղի նվագելու հատուկ գործիք
Սաղ անիլ — հարմարեցնել
Սաղանդար — նվագախումբ
Սաղիլ — սաղել
Սաթաշմիշ ինիլ — մեկին հետևել գըրկելու համար
Սաժին — երկարության հին չափ, սաժեն (երեք արշին)
Սալ — տափակ քար
Սալդաթ — զինվոր
Սաղ — ողջ
Սաղ սալամաթ — ողջ և առողջ
Սաղ սեյրու — ողջ և լավ
Սամթ — 1. կողմ, 2. հարմարություն
Սամթին կործը փըռնիլ — հարմար ձևով գործ կատարել
Սանդալ — ատնամանի տեսակ
Սանդըր — սանր
Սանջեխ — քորոց
Սաչ — կլոր, տափակ չուգունե հարմարանք հաց թխելու, հատիկ բովելու համար
Սաս — ձայն
Սաս-սեմուր — ձայն-ծպտուն
Սարի արծիվ — քաջ, հպարտ, վեհ, ուժեղ, տղամարդ
Սարի պըտոկ — սարի գագաթի ամենավերին ծայրը
Սարին — հով, զով
Սարին հով — զեփյուռ, թարմ ու դուրեկան հով
Սաքլի թա — իբրև թե
Սեզնը — սզնի ծառի պտուղը
Սեկրետ — գաղտնիք
Սըեպ — սեպ
Սըեպերը տուն ա եկել — առտամները դուրս են եկել
Սըերտ — սիրտ
Սըերտ տալ — հորդորել, քաջալերել, սիրտ տալ
Սըերտը դաղվիլ, էրվիլ, վառվիլ — շատ տանջանքներ ունենալ
Սըերտըպերակ — զգայուն
Սըհաթ — 1. ժամ, 2. ժամացույց
Սըղըննական ա — առողջանալու է
Սըղըցընիլ — 1. առողջացնել, 2. փողի գումար ամբողջացնել, էժան գնով լավ, թանկագին բան առնել
Սըմավար — ինքնաեռ
Սընդաքար — սանդի քար
Սըվայի — բացի
Սըվաքյիր — սևակիր, անբախտ, առանց ուրախության, միշտ տխուր
Սըվթա — առաջին անգամ
Սըրըսար — սարեսար
Սըրտան տաս չի (սըրտան տամ չի) — չի ուզում
Սըրտեն սուբհանն — միակը
Սըրտըքթիլ — կրծքի վանդակի փսոր
Սըրտըքթուլը նի կենալ — հոգեպես տանջվել
Սըփաթ — դեմք
Սըփաութնիլ — գունատվել
Սիլլա — ապտակ
Սիմ — լար
Սկուպոյ — ժլատ
Սոհրաթ — զրույց
Սողան — սոխ
Սովդաքյար — վաճառական
Սոր — սուր
Սոր խըղըցնիլ — սրով խաղալ
Սոքյ (սոք) — սուտ
Ստալավոյ — ճաշարան
Ստաքան — բաժակ
Ստոլ — սեղան
Ստոլ պեց անել — սեղան բացել

www.naregatsi.org

Ստրաժնիկ — պահակ
Սուբեհ — ստերջ
Սուդի տալ — դատի տալ
Սուդյա — դատավոր
Սուբկա — օր
Սունթուն — սյուն
Սունրմա — ծարիր
Սունրմա — կոճակ, Ղարաբաղի երեքփեշյա տարազի արծաթի կամ ոսկե կոճակներն են և զարդերից մի երկուսը
Սունրուլ — հոտ
Սունրուն — սիրուն, գեղեցիկ
Սուսիրա — սփռոց

Վ

Վաղա — ժամանակ
Վաղիր — վեղիր
Վաթան — ծննդավայր, հայրենիք
Վահար — թարախ
Վասյաթ — կտակ
Վար — որ
Վարավուրդ անել — տնտղել
Վարցք — վարձք, հատուցում
Վացցուն — վաթսուն
Վեդրա — դույլ
Վեշչի — իրեղեն
Վեչ ելուն ա եշըմ, վեչ Մոսուն — ոչ ոքի չի լսում, ոչ ոքի վրա ուշադրություն չի դարձնում
Վեչյան չի — ուշադրություն չի դարձնում, հոգը չէ
Վեր — որ
Վեր — հոր
Վեր ածել — թափել
Վերստ — երկարության չափ, կիլոմետրից քիչ ավել
Վեքյի — վեգ
Վրեղ — հող
Վրեղս կըլխետ — հողս գլխիս (անեծք)
Վրեղու ծնունդ — հողածին, մարդ արարած
Վրեննը-ծրեռք անել — ջանալ, ձգտել
Վրեննը-ծրեռքը տափան կտրած — վախեցած
Վրեննը կախ անել — քայլերը դանդաղեցնել
Վրեննը կոխած վրեչ — ոտը չդրած
Վրեննը կոխել — ոտը կոխ տալ
Վրեննը հղեցը — վարքը վատ
Վրեննը տունա — բարոյապես ընկած
Վրեննը ունրան վրեղումը տինիլ — վերադառնալ հայրենիք
Վրեննը փոխել — քայլել
Վրեննը փոշ չի մննի — վնաս չի հասնի
Վրեսկեռ — ոսկոր
Վրեստ — իլիկի վրա փաթաթվելուց դիզված թելը, ոստ
Վրետ — հոտ
Վրեր — որ
Վրեր ածած — 1. առատ, 2. ցաքուցրիվ, թափված
Վրերթի — որդի, զավակ
Վրերթնը — որդ
Վրերսկան — որսորդ
Վրղապեն — հողային աշխատանք
Վրսկըզօծ — ոսկեզօծ
Վրսկըշափաղ — ոսկեփայլ
Վրրդրեղ — որտեղ
Վրրըխկալի — վարար, հորդ
Վրրթիվեր (վրրթեվոր) — վարդավառ
Վիյ աման — զարմանքի, վախի, հիացմունքի բացականչություն

Տ

Տաղ — կոնք, լագան (մետաղե)
Տաղ անել — սուս անել
Տալ — ամուսնու քույր
Տալ — ճյուղ
Տալերք — ափսե
Տակռե — արմատ

www.naregatsi.org

Տահանք — դրանք
Տանավ-տեղավ — տնով-տեղով
Տար — տեր
Տարը մըեռածը — տերը մեռած (անեծք)
Տաւի — դետին
Տեգյ — տիկ
Տեմ կենալ — 1. դիմանալ, 2. նեցուկ դառնալ
Տեմատեմ — դիմացը, դեմուդեմ
Տեմ տալ — իրրև հենարան գործածել
Տեմ քյինիլ — դեմ գնալ
Տեննակ — դանակ
Տեսնը — դաղձ
Տեսրտեն քյինիլ — այս ու այն կողմը գնալ
Տերտակ — դատարկ
Տըեղ — տեղ
Տըեղը մեխված — անշարժ, դամված
Տըեղը շըռտըմռռտի անել — այս ու այն կողմը շրջվել
Տըեղը քըցիլ — աննողինը բացել
Տըեռնը — տիրոջ
Տըժըրոթիւն — դժվարություն
Տըկըկըլոխ — տակ ու գլուխ
Տըկլոր — մերկ
Տըհալ — տապակած միս ձմեռվա համար
Տըհենց — այդպես
Տըղամարթըն ուրուն թքածը լուզիլ չի — տղամարդը իր խոսքը չի փոխի
Տըղեն յրա թըքացել ա — տղային սիրում է
Տըղնել — դեղնել
Տըղոթուն անիլ — իրրև տղա լինել
Տըղվարել — տեղավորել
Տըղտողալ — դողալ
Տըման — դմակ
Տըմանալ — դիմանալ
Տըմբըհան ինիլ — տեղից դանդաղ շարժվել
Տըմբլա — թմբուկ
Տըմբտըմբալ — հազիվ շարժվել, հազիվ քայլել
Տըմկել — խոնավությունից փափուկ, ճկուն դառնալ
Տըյեր — վերև
Տընաղ — ծաղր
Տընըստոն — ընտանիքով
Տըպակել — տապակել
Տրառնը ըռաշկեն (տըռառնը առաչին) — դռան առաջ
Տրըզվիլ — փքվել, նեղանալ, խռովել
Տրռռոն — փորը մեծ թռչուն, ասվում է և փորը մեծ մարդու մասին
Տրսերոնը հետը — դասերից հետո
Տրսնա(յ)ս ը՞ս (տրեսնըմ ը՞ս) — տեսնո՞ւմ ես
Տրվերան — ներքևից
Տրրաքվել — պատռվել
Տրրըկյուսիլ — տարակուսել
Տրրխատան (տըրխետան) — հյուսած հատ թել՝ տրեխները կապելու համար
Տրրուշը — տիրոջը
Տրփըկցնիլ — 1. տափակեցնել, 2. խիստ ծեծել, ծեծելով սպանել
Տրփրքրշերե — 1. փոքր մարմնով վայրի կենդանի, 2. կարճահասակ
Տիժեր — դժվար
Տոմբալան — կարտոֆիլի պես բույս է, աճում է այնտեղ, որտեղ ոչխարի հոտ և ուղտեր են նստում. սունկի համ ունի
Տոնը սրփիլ — տունն ավլել
Տոռնը քըլլել — դուռը կողպել
Տոտա — մորաքույր
Տոտա-տոտա անել — մանկան պես հաղիվ քայլել
Տոք (տո) — տուր
Տրախտ — դրախտ
Տուզնը — քաղցած
Տուպլի — կոշիկ
Տուս — դուրս
Տուս օնել ջուբան — դրպանից հանել
Տուր կյալ — դուր գալ
Տուրմա — բանտ
Տուրուքակ — կռիվ, ծեծ
Տուրուր կյալ — շարժվել

www.naregatsi.org

Ց

Ցակատ — փայտ կտրելու մետաղե գործիք
Ցամաք աշխերով նի մննել կյիրեզման — անվիշտ դերեզման մտնել
Ցամաք հաց — միայն հաց
Ցավան նըհետ — ցավից
Ցավան նըհետ գյուդում չի, թա հինչ անի — ցավից գժվում է
Ցավի-ցցի կյալ — հիվանդանալ, գլուխը ցցի վրա հանել (անեծք)
Ցենտր — կենտրոն
Ցենտր քյունչա — կենտրոնական փողոց
Ցըվիք — 1. ժայռի դուրս ցցված մաս, 2. զառիթափի վերևի եզրային մասը

Ու

Ուզուն — երկար
Ուզուն-ախամախ — հիմար
Ուղտապեռնը — ուղտի բեռ
Ումբր — կյանք
Ումիդ — հ-ւյս
Ունգյնավեր — ունկ ունեցող
Ունգյունան — անկյունից
Ուշունց — հայհոյանք
Ուշուփնե (օշափնի) — վիշապներ
Ուռունց — առանց
Ուռուս — վարպետ
Ուտեմ-տիտեմ — հյուրթալի ցածրիկ բույս
Ուտըլեղան — ուտելիք
Ուրան — իրեն
Ուրան ըգյորա — իրեն համապատասխան
Ուրան հալնըը չի — իր ուժից վեր գործ է բռնում
Ուրթնամը — երդում
Ուրթնամը-հավատ — խիստ երդում
Ուրթնամը օտել — երդվել
Ուրոտալ (ըրոտալ) — որոտալ
Ուրուդյուն — երեկո
Ուրուն անել — հովանավորել, պահպանել
Ուրփըթնավուր — տխուր
Ուրփթնախոս — ուրբաթախոս
Ուրուրուց (ըրորոց) — օրորոց
Ուփնել (խփել) — եփել

Փ

Փնդ — փայտ
Փալան — համեմ
Փնալանգյ — առյուս
Փնլնքյան — սանդուղք
Փալչի — գրքաց
Փակետ — ծրար
Փնհ-փնհ — հիացական, հաճելիության բացականչություն
Փնհլա — բանվոր
Փնհլութուն — բանվորություն
Փնհլվան — լարախաղաց
Փահմ — կռահում
Փայ — բաժին
Փայ անել — բաժին-բաժին անել
Փայ հըվաքող — մուրացկան
Փայտոն — կառք
Փայտոնչի — կառապան
Փնննր — լապտեր
Փննդ — հնար, ձև
Փննդըփնել — հնարք
Փննջնրա — 1. լուսամուտ, 2. լուսամուտի երկաթե ցանց
Փանտան — շատրվան
Փառչա-փառչա անել — պատառ-պատառ անել
Փարա — փող

www.naregatsi.org

Փարա — որոշ (մին փարա մարթիք — որոշ մարդիկ, ոմանք)
Փաւրդա — վարագույր
Փարթուխ — դռդնոց
Փաւրի — փերի
Փարչ — դինի կամ ջուր խմելու աման
Փաւփաղ — մորթե գլխարկ
Փաւփաղը ծոռ տինիլ — անհոգ լինել
Փեշակ — արհեստ
Փեշկ — փեշ
Փեշքեշ — նվեր
Փըթըրոկ — ալյուրով եփած կերակուր
Փըլան-փըստան — այսինչ-այնինչ
Փըլանքյաս — ոմն
Փըլատրատին տալ — փայլփլել
Փըլտոննի — կառքեր
Փըշադ (փուշադ) — փշատ
Փըչեչ — խառն, չսանրած մազեր
Փըռթիլ — մանր- մանր կտրտել
Փըռթուշ (փըթուշ) — սառն կերակուր՝ մածնից, հացից, չրից. երբեմն ավելացնում են նաև վարունգ, սամիթ
Փըռչըփարա անել —կտոր-կտոր անել
Փըռակվել — ամուսնանալ
Փըռնել — բռնել
Փըսոտենքյ կամ փըսենքյ — փեսաներ
Փըսպարել — ապսպրել
Փըստ — անհաջողություն ակնարկող բացականչություն
Փըստ ա տըեռալ — անհաջողության է մատնվել
Փըստոն — հրապատիճ
Փիլյակ — կոճակ
Փիլոն — շուրջառ
Փիչ — վառարան
Փխա — վատ
Փխատա — պիստակ
Փոխան — վարտիք
Փոկ — կաշվե բարակ շերտ, որով տրեխներ են գործում
Փոնջ — փունջ
Փոշտ — թոստ
Փոշտալյոն — փոստատար
Փոտ — արատ, պակաս կողմ (ունքամեջը փոտ ընգնիլ—մոայլվել։ Փոտ օնե—պակաս կողմ ունի)
Փուլ — փող
Փուլ (փոլ) կյալ — փլվել
Փունհ ըրավ մըեռավ — շունչը փչեց, մեռավ
Փունտունդյու — բուք, բորան
Փուրգոն — քառանիվ ձիասայլ
Փուրթուղա — 1. թանկագին քար, 2. կանացի հատուկ անուն
Փուրումնա — հոր մահից հետո դեռ չծնված երեխա
Փուրփութ (փրփութ) — եփելու բույս, ունի բուժիչ հատկություն ստամոքսային հիվանդություններին համար

Ք

Քաթ — ըրուց
Քաթ անել — ըրուցել
Քամակ— ետև
Քաշ — ագռավ
Քաշ — կշիռ
Քաշկ — քաչք
Քաշկոտ — քաչկոտ
Քաչալ — ճաղատ
Քառ — խուլ
Քավթառ — պառավ
Քարճիկ — թռչունի ստամոքս
Քափ — կերակրի (հատկապես մսի) եռման ժամանակ գատված փրփուրը
Քափ-քըռթնոնք — քրտինք
Քել — առ, վերցրու
Քեշկյար թա — երանի թե
Քըերծ — ժայռ, ժայռի գլուխ
Քըթեննալ — գտնել
Քըթոթ անել — քչուչ անել
Քըլոլել — գլորել, շարշարել, գզգզել
Քըծծիլ — բուրդը, բամբակը մատներով գզգզել
Քըմըկ-քամակ — ետ-ետ

www.naregatsi.org

Քընար հանել — հասկանալ
Քընննքյ — մտածմունք
Քընըհարամ — քունը խանգարված
Քըշաթոխպ — մեգ, մառախուղ, մշուշ
Քըշեռք — կշեռք
Քըշեր — գիշեր
Քըշըրհանա — վաղ առավոտյան
Քըշտին — մոտը
Քըռըթանթռուշ — մողեսի մի տեսակը
Քըռըքոռի տալ — կույրի պես գնալ, խարխափել
Քըսկարինք — եռոտանի
Քըվերք (քըվերտինք) — քույրեր
Քըրեհ — վարձ
Քըրթննքել — քրտնել
Քիթիլ ա — գտել է
Քյալաթյ — օյին, կազմակերպված վտանգ
Քյալլա — գլուխ, գանգ
Քյալլան թափ տալ — 1. խաբխբել, 2. մեկի գաղտնիքները՝ իմացածը լրիվ պատմել տալ
Քյահրիզ — գմբեթածև ջրամբար, աղբյուր
Քյամբախտ — անբախտ
Քյանդիր — պարան, թոկ
Քյաշի — թաս, խոր աման
Քյասիբ — չքավոր
Քյավգյիր — մետաղե ծակծկոտ շերեփ
Քյար անիլ — ազդել, ազդեցություն ունենալ
Քյարվազ — կամուրջ
Քյարվան — քարավան
Քյարփաթին — աքցան
Քյըեփ — քեֆ, ճաշկերույթ
Քյըեփտ քյոք պահե — տրամադրությունդ բարձր պահիր
Քյըեփտ քյոք պահե, դամաղտ՝ չաղ — ուրախ և առողջ եղիր
Քյըսօր — կեսօր
Քյիլիդ — կողպեք
Քյիմսա — սերունդ
Քյիմսամըեռ — սերունդը մեռնի (անեծք)
Քյիս ա (քյինըմ ա) — գնում է
Քյոթնիվ — կոճղ
Քյոհլյան ծի — արագավազ ձի
Քյոհնա — հին
Քյոհնա տերման մի քամել — հինը մի հիշիր
Քյոմագյ — օգնություն
Քյոմբա — ջաղացի օջախի սալ քարին թխած հաց
Քյոռուղ — պատճառած նեղություն, վնաս
Քյոսա — խաբեբա
Քյոսագյալի — ծաղրածու
Քյոշվան — հանդ, տեղավայր
Քյորփա (քյոլփա) — փոքրիկ (երեխա, հորթ և այլն)
Քյոփադյ — ծեր մարդ
Քյոնբ — թմրած, դանդաղաշարժ, կոնդ
Քյոնլ — մոխիր
Քյոնլվիս տու — մոխրվես դու (անեծք)
Քյոնլփաթ — երեխաներ
Քյոնհի — միամիտ
Քյուքուցնել — շաղացնել
Քոլ — թուխ, թփուտ
Քոծ — աղախին
Քոն — քուն
Քոն իլ — քնիր
Քոն իլած — քնած
Քոշիլ — քոչել
Քոռ — կույր
Քոռակ — քուռակ
Քոռըհեշման ինիլ — փոշմանել
Քոսոտ — 1. քոս հիվանդություն ունեցող, 2. խղճուկ (վիրավորական արտահայտություն)
Քումմատաղ — քեզ մատաղ
Քունթռուճ — 1. մաշված ավել, 2. խրնձորը, տանձը ուտելուց հետո դեն գցելու միջին մասը

O

Օբա — քոչ
Օբրուչ — օղակապ (տակառի)
Ծզդյա (օգյա) — ուրիշ
Ծզդյա բարաթ — մի ուրիշ տեսակ, շատ լավ կամ շատ վատ
Ծզող — ուզող, մուրացկան

www.naregatsi.org

Օթաղ — անկյակ
Օթի Ծրփիւթ — Քրիստոսի խաչման գիշերը, լույս ուրբաթ
Օժ — ուժ
Ծլիմ — մահ
Ծլիմը եկալ ա — մահը մոտեցել է
Օխծ — օձ
Օխտանասուն (ուխտընասուն) — յոթանասուն
Օխտը — յոթ
Օխտը չափել, մին կըտրել — լավ մտածել, հետո կատարել
Օխտը պոռտ — յոթ սերունդ
Օղլըշաղ — կին
Օղտ — ուղտ
Օղտեն անդաճումը քոն — անտեղյակ, անտարբեր
Օմբա — կոնքի ոսկոր
Օյամիշ ինիլ — արթնանալ
Օյին — խաղ, փորձանք
Օնգատը (ունդատը) ընգնել — հաշողվել
Օնգնը — կանթ, բռնելու կոթ
Օնն (օնի) — գնել, ծածկել
Օնինք — ունենք
Օնք — ունք
Օշ — ուշք, ուշադրություն
Օշը կլիխը հըվաքել — խելոք լինել, ուշքի գալ
Օշը տանել — ուշաթափվել
Օշնակ — կավե խոր աման է մածնի, յուղի և այլ բաների համար
Օռնոց — որնոց
Օռչիլ — 1. ուռչել, 2. նեղանալ, խռովել
Օս — ուս
Օսմանլու — Տաճկաստան
Օսուքը քըցիլ — ուսով գցել
Օվ — որս
Օվչի — որսորդ
Ծվնիլ (ևվիլ) — ավել
Օտել — ուտել
Օրախ — ուրախ
Օրաղ — մանգաղ
Ծրևնևե — ավեր, քարուքանդ
Ծրդևկ — բադ
Օրիշ (ծրնիշ) — ուրիշ
Օրիշ թևվնիր — ուրիշ տեսակ
Օրիշ հանգի— ուրիշ ձևով
Օրկանցօր — օրեցօր

www.naregatsi.org

ՀԵՓԻԱԹՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԸՍՏ ՏԵՂԻ ՈՒ ԱՍԱՑՈՂՆԵՐԻ

1. Վրեսկէ խնձորը, *Շուշի,* Դումաշ Ավագյան
2. Սիեան թաղավերը, *Շուշի,* Դումաշ Ավագյան
3. Վրեսկէ դոշը, *Շուշի,* Դումաշ Ավագյան
4. Պիրաձաձ վարթ, մանիշակ թափվող աղիքցը, *Շուշի,* Դումաշ Ավագյան
5. Կոզնի տրղան, *Շուշի,* Դումաշ Ավագյան
6. Մարթ օտող ախնիգյը, *Շուշի,* Դումաշ Ավագյան
7. Դրուդնոված առուտուրականը, *Շուշի,* Դումաշ Ավագյան
8. Էրկու առուտուրական, *Շուշի,* Դումաշ Ավագյան
9. Աղվեսը, *Շուշի,* Դումաշ Ավագյան
10. Մանկանէ ծեծաղը, *Շուշի,* Դումաշ Ավագյան
11. Մաղկած բախճան, *Շուշի,* Դումաշ Ավագյան
12. Խոսող ծին, *Շուշի,* Դումաշ Ավագյան
13. Հարեդ- Կառարեդը, *Շուշի,* Դումաշ Ավագյան
14. Լավոթունին տրեղը փխսոթուն, *Շուշի,* Դումաշ Ավագյան
15. Պուճուր ճարսը, *Շուշի,* Դումաշ Ավագյան
16. Իմաստունին, *Շուշի,* Դումաշ Ավագյան
17. Վրեսկան Ավետիսը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
18. Ալամ թաղավերը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
19. Արմենը նան Ջարմենը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
20. Թրեվավեր ծին, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
21. Մանվին ծառը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
22. Դարվիշը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
23. Տասնէրկու յրդոնեգյը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
24. Դարվիշ թաղավերը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
25. Կյեռքնուկ ախնիգյը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
26. Գրմգրմ սարերը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
27. Կրլոխը նան սրեռը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
28. Օվչի Փիրոմը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
29. Խոսկին օժը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
30. Կյիրին անումը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան

www.naregatsi.org

31. Ծաւկնին կըլլախը, *Շուշի*, Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
32. Իրեք կլախ, *Շուշի*, Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
33. Ղարաբաղին արաղը, *Շուշի*, Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
34. Լուն նան մրեծակը, *Շուշի*, Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
35. Կյող թաւավերը, *Շուշի*, Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
36. Կրնձրմրնձուկը, *Շուշի, Քարին տակ*, Արշակ Պետրոսյան
37. Զրկամ նրբավանը, *Շուշի, Քարին տակ*, Արշակ Պետրոսյան
38. Քալաքցրազնեն, *Շուշի, Քարին տակ*, Արշակ Պետրոսյան
39. Բադարաքյր, *Շուշի, Քարին տակ*, Արշակ Պետրոսյան
40. Կյուվյուն չավքալը, *Շուշի, Քարին տակ*, Արշակ Պետրոսյան
41. Արշին տրղան, *Շուշիքենդ*, Թամարա Նահրամանյան
42. Մադար տրղեն բախտը, *Շուշիքենդ*, Ավագ Պողոսյան
43. Քյասիբ տրղան, *Շուշիքենդ*, Ավագ Պողոսյան
44. Ավրազը, *Շուշիքենդ*, Ավագ Պողոսյան
45. Մարդ նան նամարդ ախպերքյը, *Շուշիքենդ*, Ավագ Պողոսյան
46. Ըրածըտ առաչըտ կյա, *Շուշիքենդ*, Ավագ Պողոսյան
47. Շագյիրդ Մուխանը, *Շուշիքենդ*, Ավագ Պողոսյան
48. Քոսակ ախպերը, *Շուշիքենդ*, Ավագ Պողոսյան
49. Տվրաձեն տրղան, *Ստեփանակերտ, Խանազատ*, Մովսես Խաչատրյան
50. Ախնիգյ բաւավերը, *Ստեփանակերտ, Խանազատ*, Խաչատուր Մատուրյան
51. Մին կնգան մին տղա յա իննում, *Ստեփանակերտ, Տրոնավարդ*, Լուսավարդ Աղավանյան
52. Քյինացողը ետ չի եկող սարը, *Ստեփանակերտ, Ղուլբուլաղ*, Աստղիկ Գրիգորյան
53. Ծաւկնը փոնողին տրղան, *Ստեփանակերտ, Քյութուկ*, Նուբար նան
54. Էշին աճգուհին վրեսկեն, *Ստեփանակերտ, Քյութուկ*, Նուբար նան
55. Սուղումուն իմաստուքը, *Ստեփանակերտ, Քյութուկ*, Նուբար նան
56. Հու վեր մին պեճի նետան ընգնի կրնասնի, *Ստեփանակերտ, Քյութուկ*, Նուբար նան
57. Մախորկեն յաշիգյը, *Ստեփանակերտ, Սարուշեն*, Եվգենյա Պետրոսյան
58. Ղուգյաոր նան Սյուքյաոր, *Մարդակերտ, Մոխրաթաղ*, Մայկո Բաղդասյան
59. Բախտավեր չորանը, *Մարդակերտ, Մոխրաթաղ*, Մայկո Բաղդասյան
60. Դեվը, *Մարդակերտ, Մոխրաթաղ*, Մայկո Բաղդասյան
61. Ասուծեն տղան, *Մարդակերտ, Ներքին Հոռաթաղ*, Սիրանուշ Սարգսյան
62. Փիս դային, *Մարդակերտ, Ներքին Հոռաթաղ*, Սիրանուշ Սարգսյան
63. Թրեվավեր կրնեգյը, *Մարդակերտ, Ջափար*, Գյուլի Ավագյան
64. Ղրլեգյշին, *Մարդակերտ, Ջափար*, Գյուլի Ավագյան
65. Կախարքը, *Մարդակերտ, Ջափար*, Գյուլի Ավագյան
66. Աշկը ծակ մարքը, *Մարդակերտ*, Խաչատուր Կարապետյան
67. Հաթերին նիլին, *Մարդակերտ, Հաթերք*, Շամիր Ղազարյան
68. Հաթերին իրեք դերը, *Մարդակերտ, Հաթերք*, Շամիր Ղազարյան
69. Աժդահակը, *Մարտունի, Ջանախչի*, Մարիամ Ջաֆարյան
70. Հարուստը մրն էլ հյասիքը, *Մարտունի, Ջանախչի*, Մարիամ Ջաֆարյան
71. Քուրը նան ախպերը, *Մարտունի, Ջանախչի*, Մարիամ Ջաֆարյան
72. Դանգլա կնեգյը, *Ջանախչի*, Մարիամ Ջաֆարյան
73. Պարսեղը նան Արսենը, *Մարտունի, Թաղավարթ*, Արտաշես Աբայան

www.naregatsi.org

74. Լավ տրնդեցյուները, *Մարտունի, Թաղավարթ,* Առաքել Աբայան
75. Պարի կրնեցյը, *Մարտունի, Թաղավարթ,* Առաքել Աբայան
76. Դեր տրեռած մարքը, *Մարտունի, Թաղավարթ,* Առաքել Աբայան
77. Ղռնաղը, *Մարտունի, Թաղավարթ,* Առաքել Աբայան
78. Ճրկրտակչիրը, *Մարտունի, Թաղավարթ,* Առաքել Աբայան
79. Քաշալ ճռտը, *Մարտունի, Թաղավարթ,* Առաքել Աբայան
80. Էրկու ախպեր, *Մարտունի, Թաղավարթ,* Առաքել Աբայան
81. Թ՚ազ՚ փըսած խրխռոցը ճեսե, *Մարտունի, Թաղավարթ,* Առաքել Աբայան
82. Իրեք հըրսաճեչ, *Մարտունի, Շեխեր,* Եղսաե Բաջի
83. Թահավերին պուճուր տըղաե, *Մարտունի, Շեխեր,* Եղսաե Բաջի
84. Թահավերին պուճուր փըեսաե, *Մարտունի, Շեխեր,* Եղսաե Բաջի
85. Ճրկրտակչիրը սատ ա, *Մարտունի, Շեխեր,* Եղսաե Բաջի
86. Քառերեն բախտը, *Մարտունի, Շեխեր,* Եղսաե Բաջի
87. Ջորաեեն սերը, *Մարտունի, Ներքին Սզնեք,* Մարգարիտ Բաջի
88. Ջեյրաեը, *Մարտունի, Ներքին Սզնեք,* Մարգարիտ Բաջի
89. Արչը ճաե ախեիգյը, *Մարտունի, Ներքին Սզնեք,* Մարգարիտ բաջի
90. Պոբվուց լ՚ավ ապրելը, *Մարտունի, Ներքին Սզնեք,* Մարգարիտ բաջի
91. Էրկու գոդ ցորեե, *Մարտունի, Ներքին Սզնեք,* Մարգարիտ բաջի
92. Հավը, *Մարտունի, Ներքին Սզնեք,* Մարգարիտ բաջի
93. Բրոչեան ճարաը, *Մարտունի, Սխտորաշեն,* Հեղինե Բադալյան
94. Թահավեր ծ՚ուկեը, *Մարտունի, Սխտորաշեն,* Հեղինե Բադալյան
95. Փիս կենեգյը, *Մարտունի, Սխտորաշեն,* Հեղինե Բադալյան
96. Աղվեսը ճաե փ՚ալ՚անգյը, *Մարտունի, Սխտորաշեն,* Հեղինե Բադալյան
97, Սառաե կյամ ա՞..., *Մարտունի, Քերթ,* Սարգիս Թավմալյան
98. Մարքի տրեղը ուրաե ճոխյին տվող կենեգյը, *Մարտունի, Հարավ,* Ազիզբեկ Հակոբյան
99. Փիս մարը, *Մարտունի, Հերհեր,* Մանիշակ բաջի
100. Ասծատուրը ճաե վարքին, *Հերհեր,* Մանիշակ բաջի
101. Կորած եզնը, *Հերհեր,* Մանիշակ բաջի
102. Թահավերեն ախեիգյը, *Հերհեր,* Մանիշակ բաջի
103. Ալաե ծրծրղես ա, *Մարտունի, Քերթ,* Ղուլյան Գարեգին
104. Արչը, *Մարտունի, Քերթ,* Ղուլյան Գարեգին
105. Հոնե բնուղնին, *Մարտունի, Քերթ,* Ղուլյան Գարեգին
106. Երգչենան վեր բնգած խաճչալը, *Մարտունի, Գիշի,* Վոլոդյա Անտոնյան
107. Օխծը, *Մարտունի, Գիշի,* Վոլոդյա Անտոնյան
108. Թահավերին ախեիգյը ճաե ուրանց ճոխյ՚ուրը, *Հադրութ, Վանք,* Արծվիկ Ավետիսյան

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

1. Գյաճին օրերը, *Շուշի,* Ղումաշ Ավագյան
2. Խլեզեը, *Ստեփանակերտ, Ղշլաղ,* Բեգլար Բաբայան
3. Թահավերը ճաե խրելուճ ախեիգյը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
4. Սերը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
5. Մըլլալիս ասքխերը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
6. Պրեչբփոխաե կրնեգյը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան

www.naregatsi.org

7. Ջանավարը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
8. Օժավը, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
9. Ըռուսեն տըղան, *Շուշի,* Փիրուզա Տեր-Հովհաննիսյան
10. Խելքի յըմ եկալ, *Շուշի, Սըղնախ,* Ավագ Հակոբյան
11. Սրբուտը էար մռաֆուրը, *Ստեփանակերտ, Շուշիքենդ,* Ավագ Դայի
12. Մռրը կռռնը, *Ստեփանակերտ, Շուշիքենդ,* Ավագ դայի
13. Առանց ճոր նան մռրը պաչած աղճիգյը, *Ստեփանակերտ, Շուշիքենդ,* Ավագ դայի
14. Մաշըը, *Ստեփանակերտ, Շուշիքենդ,* Ավագ դայի
15. Կյաւլին մռրքին, *Ստեփանակերտ, Շուշիքենդ,* Ավագ դայի
16. Ըրազը, *Ստեփանակերտ, Շուշիքենդ,* Թամարա Շահրիմանյան
17. Դերվիշը գյիդկան չար, ամմա կլախը եկած ար, *Ստեփանակերտ, Շուշիքենդ,* Թամարա Մելիումյան
18. Վրնսկե չամը, *Ստեփանակերտ, Սարուշեն,* Եվգենյա Պետրոսյան
19. Չաֆյի ապերը, *Ստեփանակերտ, Ասկերան,* Միքայել Բալայան
20. Մաֆյի ապուն մռուն նաղլը, *Ստեփանակերտ, Ասկերան,* Միքայել Բալայան
21. Մաֆյի ապան, *Ստեփանակերտ, Ասկերան,* Միքայել Բալայան
22. Բաղլար բաժվերին պոզը, *Ստեփանակերտ, Ղարաբուլաղ,* Աշոտ Ադամյան
23. Չար պառավը, *Ստեփանակերտ, Ղարաբուլաղ,* Արամյա Համբարձումյան
24. Տրղան ճորը փեշակե ա սըվերում, *Ստեփանակերտ, Ղարաբուլաղ,* Արամյա Համբարձումյան
25. Սիրական պաճող կրնեգյը, *Ստեփանակերտ, Ղարաբուլաղ,* Արամյա Համբարձումյան
26. Աշկը ծակ խոխան, *Ստեփանակերտ, Ղարաբուլաղ,* Արամյա Համբարձումյան
27. Գյուվամիշ Կեվանը, *Մարդակերտ, Ջափար,* Գյուլի Ավագյան
28. Աղվեսը նան նզացպանը, *Մարդակերտ, Ջափար,* Գյուլի Ավագյան
29. Քաշալ ախպերը, *Մարդակերտ, Ջափար,* Գյուլի Ավագյան
30. Անբախտ ախճիգյը բախտավերվում ա, *Մարդակերտ,* Սեդրակ Ավագյան
31. Ոռոծին նան կատվին ճաֆյաքը, *Մարդակերտ,* Սեդրակ Ավագյան
32. Թամավերեն կորած ախճիգյը, *Մարտունի, Աշան,* Վարդան Բալայան
33. Մին կյողու նաղլը, *Մարտունի, Ջանախչի,* Մարիամ Ջամարյան
34. Էշին բադա տալը, *Մարտունի, Ջանախչի,* Մարիամ Ջամարյան
35. Սալդաթը, *Մարտունի, Հերհեր,* Մանիշակ բաջի
36. Պռոփեսորեն ֆաւրը, *Մարտունի, Ներքին Սզնեք,* Մարգարիտ բաջի
37. Արշը նան մարթը, *Մարտունի, Ներքին Սզնեք,* Մարգարիտ բաջի
38. Դոլմա խփիլը, *Մարտունի, Ներքին Սզնեք,* Մարգարիտ բաջի
39. Կյուլ տրէտած կրնեգյը, *Մարտունի, Ներքին Սզնեք,* Մարգարիտ բաջի
40. Աշըղը, *Մարտունի, Ներքին Սզնեք,* Մարգարիտ բաջի
41. Արշը, *Մարտունի, Ներքին Սզնեք,* Մարգարիտ բաջի
42. Աշկավ տալը, *Մարտունի, Ներքին Սզնեք,* Մարգարիտ բաջի
43. Խորթ մարը, *Մարտունի, Սոս,* Նսայ Նսայան
44. Թամավերը նան վեզիրը, *Մարտունի, Մյուրիշեն,* Էդիկ Մելիումյան
45. Կրտակը, *Մարտունի, Մյուրիշեն,* Էդիկ Մելիումյան
46. Փրոբաշըը, *Մարտունի, Մյուրիշեն,* Էդիկ Մելիումյան
47. Տափակ արաեն Մոսին, *Հադրութ, Տումի,* Աղաջան դայի
48. Պրոբվալենկ, *Հադրութ, Տումի,* Աղաջան դայի

www.naregatsi.org



ՀԵՓԻԱԹՆԵՐԻ ԱՑԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

1. Աժդահակը 413
2. Ալամ Թաքավերը 131
3. Ախճիգյ Թաքավերը 316
4. Աղվեսը 72
5. Աղվեսը նան փայլանգյը 519
6. Այան ծրծրղես ա 548
7. Աշկը ծակ մարթը 401
8. Ասուծեն տըղան 368
9. Աստատուրը նան Վարթին 535
10. Արաղը 289
11. Արմենը նան Ջարմենը 142
12. Արչը 551
13. Արչը նան ախճիգյը 495
14. Արչին տըղան 267
15. Բադարաքյը 262
16. Բախտավեր չորանը 359
17. Գըմգըմ սարերը 198
18. Դանգլա կնիգյը 433
19. Դարվիշ Թաքավերը 179
20. Դարվիշը 163
21. Դեր տըեռած մարթը 450
22. Դըռդոտված առուտուրականը 59
23. Դևը 365
24. Երգինքան վեր ընգած խանչալը 555
25. Էշին անգուճին վըեսկին 337
26. Էրկու ախպեր 462
27. Էրկու առուտուրական 64
28. Էրկու գոդ ցորեն 502
29. Ըրածըտ առաչըտ կյա 296
30. Թազա փըսած խըխորցը հետև 467
31. Թաքավեր ծունկնը 512
32. Թաքավերին ախճիգյը 544
33. Թաքավերին ախճիգյը նան ուրանց նոքյարը 562
34. Թաքավերին պուճուր տըղան 478

www.naregatsi.org

35. Թաքավերին պուճուր փըհսան 432
36. Թըռչկան հարսը 505
37. Թըխվավեր ծին 149
38. Թըխվավեր կընեգը 386
39. Իմաստունին 120
40. Իրեք կըլոխ 232
41. Իրեք հըրսանեքը 469
42. Լավ տենդեգյունը 444
43. Լավութուննին տըեղ փխսութուն 113
44. Լոլն նան մըեծակը 241
45. Խոսկին օժը 223
46. Խոսող ծին 100
47. Մաղկած բախչան 83
48. Մոլկնը փռնողին տըղան 330
49. Մոլկնին ծիծաղը 78
50. Մոլկնին կըլոխը 238
51. Մոլվին ծառը 157
52. Կախարթը 398
53. Կընձմընձուկը 247
54. Կըլոխը նան սըերտը 212
55. Կյեռթնուկ ախճիգը 188
56. Կյիրին անումը 225
57. Կյոնքյոլն շավթալը 265
58. Կյող թաքավերը 244
59. Կողնի տըղան 49
60. Կորած եզնը 540
61. Հաբեդ-Կարաբեդը 100
62. Հաթերքին իրեք դերը 411
63. Հաթերքին հիլին 408
64. Հավը 504
65. Հարուստը մըն էլ քյոսիբը 426
66 Հու վեր մին պենի հետան ընգնի կհասնի 343
67 Հոնձ ընուղնին 554
68 Ղարաբաղեն արաղը 236
69 Ղըլնգչին 392
70 Ղուդյաս նան Սուքյոսը 352
71. Ղոնաղը 453
72 Ճըկըտակյիրը 455
73 Ճըկըտակյիրը սատ ա 484
74 Մադար տըղեն բախտը 276
75 Մախորկեն յոշիգը 347
76 Մոռդ նան նամոռդ ախպերքյը 293
77 Մարթ օտող ախճիգը 53
78. Մարթին տըեղը ծնրոն հոքյին տվող կնեգը 528
79. Մին կնգան մին տղա յա ինձմ 320
80. Շաքյիրդ Մուխանը 299

www.naregatsi.org

81. Ջորանեն սերը 488
82. Պարի կնեգյը 446
83. Պարսեղը նան Արսենը 435
84. Պիրանան վարթ, մանիշակ թափվող ախճիգյը 41
85. Պռըվուց լաւ ապրելը 498
86. Պուճուր հարսը 116
87. Ջեյրանը 492
88. Սառան կյամ ա՞ 521
89. Սինան թաքավերը 28
90. Սուղումուն իմաստունը 340
91. Վրեսկէ խնձորը 12
92. Վրեսկէ ղոչը 36
93. Վրերսկան Ավետիսը 122
94. Տասնէրկու յըղոնեգյը 170
95. Տըվըրածեն տղան 306
96. Փիս դային 383
97. Փիս կնեգյը 515
98. Փիս մարը են 531
99. Քաղաքցրաղն 257
100. Քաչալ ճուտը 458
101. Քառերեն բախտը 486
102. Քյասիբ տըղան 284
103. Քյինացող ետ չի եկող սարը 324
104. Քոնըը նան ախպերը 430
105. Քոսակ ախպերը 304
106. Օխծը 559
107. Օվչի Փիրոնմը 218
108. Չկամ հըրեվանը 251

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

1. Աղվեսը նան չղացպանը 626
2. Անբախտ ախճիգյը բախտավորվում ա 633
3. Աշըղը 660
4. Աշկը ծակ խոխան 622
5. Աշկավ տալը 662
6. Առանց հորը նան մորը պաշած ախճիգյը 593
7. Առնէծին նան կատվին հաքյաթը 637
8. Ավրաղը 600
9. Արչը 661
10. Արչը նան մարթը 654
11. Բաղչար թաքավերին պոզը 613
12. Գյանքին օրերը 565
13. Գյուվամիշ կեվանը 623
14. Դերվիշը գիդկան չար, ամմա կլոխը եկած ար 602
15. Դոլմա խփիլը 656

www.naregatsi.org

16. Ձաթյի ապերը 609
17. Էշին բադու տալը 647
18. Ըռուսեն տըղան 580
19. Թաքավերեն կորած ախճիղյը 639
20. Թաքավերը նան խելունք ախճիղյը 568
21. Թաքավերը նան վնդիրը 665
22. Խելքի յըմ եկա՞լ 584
23. Խլեղնը 566
24. Խորթ մարը 663
25. Մըլլալիս ասթխերը 575
26. Կըտակը 667
27. Կյոնլ տըևռած կընեղյը 658
28. Կյոնլին մորթեն 598
29. Ջանավարը 578
30. Մարչը 596
31. Մաթյի ապան 612
32. Մաթյի ապուն մորուն նաղլը 611
33. Մին կյողու նաղլը 645
34. Մորը կոռնը 590
35. Ջար պառավը 615
36. Պրոբվալենչ 675
37. Պրրկըփոխան կնեղյը 576
38. Պրոփեսորեն քուրը 651
39. Սալդաթը 648
40. Սևրը 572
41. Սըևրտը քար մրաքուրը 588
42. Սիրական պահող կնեղյը 620
43. Վրեսկե ջամը 605
44. Տափակ արտեն Մոսին 669
45. Տըղան հորը փնշակըն ա սըվերըմ 617
46. Փըռթնուշը 668
47. Քաշալ ախպերը 629
48. Օժավը 579

www.naregatsi.org

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

ԱՐՑԱԽ

1. Վրեսկե խնձորը 15
2. Սինան թաքավերը 28
3. Վրեսկե ղոչը 36
4. Պիրանան վարթ, մանիշակ թափվող ախճիգյը 41
5. Կոզնի տըղան 49
6. Մարթ օտող ախճիգյը 53
7. Դըռդռոված առուտուրականը 59
8. Էրկու առուտուրական 64
9. Աղվեսը 72
10. Մուկնին ծիծաղը 78
11. Մաղկած բախչան 83
12. Խոսող ծին 100
13. Հաբեդ-Կարաբեդը 106
14. Լավոթունին տըղեղը փիսոթուն 113
15. Պուճուր հարսը 116
16 Իմաստունին 120
17. Վրեսկան Ավետիսը 122
18. Ալամ թաքավերը 131
19. Արմենը նան Ջարմենը 142
20. Թրեվավեր ծին 149
21. Մուվին ծառը 157
22 Դռւրվիշը 163
23 Տասնէրկու յըղոնեգյը 170
24 Դռւրվիշ թաքավերը 179
25 Կյեռթնուվ ախճիգյը 188
26. Գրմգըմ սարերը 198
27. Կըլռխը նան սըերտը 212
28. Օվչի Փիրռիմը 218
29. Խոսկին օժը 223
30. Կյիրին անումը 225

www.naregatsi.org

31. Մոլկին կրլոխը 228
32. Իրեք կրլոխ 232
33. Ղարաբաղն արագը 236
34. Լոլն նան մրեծակը 241
35. Կլող թաքավերը 244
36. Կրնձմրնձուկը 247
37. Չկամ հրրեվանը 251
38. Քալդրաղնեն 257
39. Բադարաքը 262
40. Կյոնքյոնն շավքալը 265
41. Արչին տղան 267
42. Մադար տըղեն բախտը 276
43. Քյոսեր տըղան 284
44. Արաղը 289
45. Մարդ նան նամարդ ախպերքյը 293
46. Ըրածըտ առաչըտ կյա 296
47. Շանգյիրդ Մուխանը 299
48. Քոսակ ախպերը 304
49. Տվըրածեն տղան 306
50. Ախճիկ թաքավերը 316
51. Մին կնգյան մին տղա յա ինձմ 320
52. Քյինացողը ետ չի եկող սարը 324
53. Մոլկնը փոնողին տըղան 330
54. Էշին անդուճին վրեսկին 337
55. Սուղումուն խմասուռնը 340
56. Հու վեր մին պենի հետան ընդնի կհասնի 343
57. Մախորկեն յաշիգյը 347
58. Ղուզյասը նան Սուքյասը 352
59. Բախտավեր չորանը 359
60. Դևը 365
61. Ասոլծեն տըղան 368
62. Փիս գայլին 383
63. Բրեվավեր կընեգյը 386
64. Ղըլեգյչին 392
65. Կախարքը 398
66. Աշկը ծակ մարքը 401
67. Հաքերքին հիլին 408
68. Հաքերքին իրեք դերը 411
69. Աժդահակը 413
70. Հարուստը մըն էլ քյոսերը 426
71. Քոնըը նան ախպերը 430
72. Դանդլա կնեգյը 433
73. Պարսեղը նան Արսենը 435
74. Լավ տընդեգյունը 444
75. Պարի կնեգյը 446
76. Դեր տրեռած մարքը 450

www.naregatsi.org

77. Ղոնաղը 453
78. Ճրկրտակյիրը 455
79. Քաշալ ճոտը 458
80. Էրկու ախպեր 462
81. Թաղա փըսած խրխորդը հետե 467
82. Իրևք հրրսանևքյ 469
83. Թաքավերին պուճուր տրղան 478
84. Թաքավերին պուճուր փրևսան 482
85. Ճրկրտակյիրը սոտ ա 484
86. Քառերևն բախտը 486
87. Ջորանեն սերը 488
88. Ջեյրանը 492
89. Արչը նան ախճիդյը 495
90. Պռըվուց լավ ապրելը 498
91. Էրկու գոդ ցորեն 502
92. Հավը 504
93. Թըռչկան հարսը 505
94. Թաքավեր ծոնկնը 512
95. Փիս կնեգյը 515
96. Աղվեսը նան փիլանդյը 519
97. Սառան կյամ ա՞ 521
98. Մարթին տրևղը ուրան հոգյին տվող կնեգյը 528
99. Փիս մարը 531
100. Ասծատուրը նան վարթին 535
101. Կորած եղնը 540
102. Թաքավերին ախճիդյը 544
103. Այան ծրծըղես ա 548
104. Արչը 551
105. Հոնձ ընուղնին 554
106. Երդյինքյան վեր ընդած խանչալը 555
107. Սխծը 559
108. Թաքավերին ախճիդյը նան ուրանց նորյարը 562

ՀԱՎԵԼՎԱԾ

1. Դյանքին օրերը 565
2. Խլեղնը 566
3. Թաքավերը նան խելունք ախճիդյը 568
4. Սևրը 572
5. Մըլլալիս ասթխերը 575
6. Պըրկըփոխան կնեգյը 576
7. Ջանավարը 578
8. Օժավը 579
9. Ըռուսեն տրղան 580
10. Խելքի չըմ եկա՞լ 584
11. Սրևրտը քար մրաքուրը 588

www.naregatsi.org

12. Մորը կոռնը 590
13. Առանց հորը նան մորը պաշած ախճիդյը 593
14. Մարշը 596
15. Կյուլին մորթին 598
16. Ափոդը 600
17. Դևրվիշը պիդկան չար, ամմա կլոխը կկած ար 602
18. Վրևսկի ջամը 605
19. Ջաթյի ապկրը 609
20. Մաթյի ապուն մորուն նաղլը 611
21. Մաթյի ապան 612
22. Բաղչիր թաթավերին պողը 613
23. Չար պառավը 615
24. Տըղան հորը փեշակըն ա սըվերըմ 617
25. Սիրական պահող կնիկդյը 620
26. Աշկը ծակ խոխան 622
27. Դյուլամիշ կնվանը 623
28. Ադվնսը նան չղացպանը 626
29. Քաչալ ախպերը 629
30. Անբախտ ախճիդյը բախտավկրվում ա 633
31. Ասուծին նան կատվին հաբյաթը 637
32. Թաթավերեն կորած ախճիդյը 639
33. Մին կյողու նաղլը 645
34. Էշին բադա տալը 647
35. Սալդաթը 648
36. Պրոֆեսորեն քուրը 651
37. Արշը նան մարթը 654
38. Դոլմա խփելը 656
39. Կյուլ տրևռած կրնիկդյը 658
40. Աշըղը 660
41. Արշը 661
42. Աշկավ տալը 662
43. Խորթ մարը 663
44. Թաթավերը նան վնդիրը 665
45. Կրտակը 667
46. Փրթծուշը 668
47. Տափակ արտեն Մոսին 669
48. Պրոբվալենչ 675

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 678

ԲԱՌԱՐԱՆ, ՑԱՆԿԵՐ

Բառարան 721
Հերիաթների ցանկը ըստ տեղի և ասացողների 748
Հերիաթների այբբենական ցանկ . . . . . .

www.naregatsi.org

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ
ՀԱՏՈՐ V

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ ճնագիտության
ազգագրության ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ

Հրատ. խմբագիր՝ Ժ. Մ. Ադոնց
Նկարչական ձևավորումը՝ Լ. Ա. Սադոյանի
Տեխ. խմբագիր՝ Է. Ս. Ավետյան
Սրբագրիչներ Փ. Հ. Մադանյան, Լ. Ս. Սարաֆյան

ՎՖ 04730 հրատ. № 2490, ԽՀԽ № 937, պատվեր 1624 տպաքանակ 15 000

Հանձնված է արտադրության 6/VII—1965 թ.:
Ստորագրված է տպագրության 8/X 1966 թ.:
Տպագրական 47,5 մամուլ, հրատարակչական 35,43.
մամուլ, թուղթ № 2, 60×90¹/₁₆: Գինը կազմով 1 ռ. 66 կ.:

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի
պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության
Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91:

www.naregatsi.org

www.naregatsi.org